

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

Ե Ր Կ Ե Ր

ՀԻՆԳ ՀԱՏՈՐՈՎ

Բ

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Ա 205

Ադոնց Ն. Գ.

Ա 205 Երկեր. հատ. Բ., Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ / Հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանց. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2006. - 680 էջ + 1 ներդիր:

Նիկողայոս Ադոնցի երկերի երկրորդ հատորը ընդգրկում է գիտական տարաբնույթ հանդեսներում և ժողովածուներում տպագրված հայ հին և նոր գրականության պատմության հարցերին, ինչպես նաև գրական առանձին հուշարձաններին, դեմքերին ու գրականության խնդիրներին նվիրված հետազոտությունները:

Հասցեագրվում է նախագեհներին և ընթերցող հանրությանը:

Ա $\frac{0503020913}{704(02)06}$ 2006 ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 5-8084-0779-6

© Հովհաննիսյան Պ. Հ., 2006 թ.
© Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006 թ.





FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Խմբագրական հանձնաժողով
Հովհաննիսյան Պ. Հ., Մարտյան Ա. Գ.,
Սահինյան Պ. Գ.

Հատորը հրատարակության պատրաստեց
Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍՏԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՋՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ն. Ադոնցի երկերի երկրորդ հատորում զետեղված են բանասիրության խնդիրներին նվիրված նրա հիմնական աշխատությունները: Ադոնցը գիտության ասպարեզ իջավ իբրև բանասեր: Նրա առաջին հետաքրքրությունները վերաբերում էին հայ հին մատենագրության նշանավոր, միևնույն ժամանակ առեղծվածային դեմքերին՝ Փավստոս Բուզանդ, Անանուն, Կորյուն, եզնիկ Կողբացի, Մովսես Խորենացի, Մովսես Կաղանկատվացի և ուրիշներ: Իրեն հատուկ եղակի աշխատասիրությամբ, տաղանդի ուժով ու լայն հմտությամբ կարողացավ լուծել բազմաթիվ առեղծվածներ, նորովի մեկնաբանել հայ հին մատենագիրներից չատերի անձն ու գործերը և իր թանկագին ու մնայուն նպաստը բերել հայ պատմա-բանասիրական մտքին:

Բանասիրական բնույթի աշխատություններն առանձին՝ հատուկ հատորով, հրատարակելու անհրաժեշտությունը մեզ հուշել է ոչ միայն գրական ժանրը, այլև հանգուցյալ հայագետի կամքը: Դեռևս 1930-ական թվականների վերջերին «Մելգոնյան ֆոնդի» Գործադիր հանձնաժողովի (Փարիզ) կողմից Ադոնցը առաջարկություն էր ստացել հատորներով վերահրատարակելու «Հայրենիք» և այլ ամսագրերում լույս տեսած աշխատությունները: Բազմազբաղ պատմաբանը ձեռնամուխ է լինում ապագա հատորների նյութերը դասակարգելու և դրանք խմբագրելու աշխատանքներին: 1940 թ. ապրիլի 15-ին Գարեգին Հովսեփյանցին ուղղված նամակում Ադոնցը խոստովանում է. «Թեև առանձին տրամադրություն ու ժամանակ չունեի վերստին նայել, ուղղել սխալաչատ գրություններ, բայց ստիպվեցա անել»: Ցավոք, աշխատանքներն ընդհատվեցին: Մանր հիվանդությունը հնարավորություն չտվեց ավարտին հասցնելու ծրագրվածը: Իսկ ծրագրել էր ամբողջ առկա նյութն ամփոփել երեք հատորներում՝

1. *Պատմականք. Հայոց պատմության վերաբերյալ հոդվածներ,*
2. *Բանասիրականք, մատենագրականք,*
3. *Հայ-բյուզանդական դեմքեր*[1]:

---

[1] *Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի դիվան, Գարեգին Հովսեփյանցի ֆոնդ, Հավաքածու № 7, ց. 1, գ. 336, թ. 31:*

Ադոնցի թողոնում առկա է երկրորդ՝ «Բանասիրականք»-ին վերաբերող նյութերի մի անավարտ թղթապանակ: Այն ամփոփում է հետևյալ իննը գրությունները.

ա) Հայ մշակույթի սկզբնավորությունը,

բ) Նշանագիր կարգաց բանից եզնկան երիցու,

գ) Հայր Ն. Ակինյանի պատասխանին պատասխան,

դ) Ղևոնդ և Խորենացի,

ե) Փոքր Սոկրատի հեղինակը,

զ) Մլքեի Ավետարանի գրության տարին,

է) Փղոսկրյա Ավետարանի արվեստը,

ը) Քննական տեղեկագիր պրոֆ. Ն. Ադոնցի: Գարեգին արքեպ. Հովսեփյան, Հոգևոր կեդրոններ և Գլաձորի բարձր դպրոցը,

թ) Նոր Հայերենի քերականություն[1]*:*

Բացառությամբ վերջինիս, մյուսները մաս են կազմում սույն հատորի, ինչպես նաև համաբնույթ 24 այլ աշխատություններ, որոնք վստահ ենք, որ հիմնականում, եթե հանգամանքները չխանգարեին, տեղ պիտի գտնեին այդ թղթապանակում: Նշելի է, որ Երկերի սույն հատորում զետեղված 32 ուսումնասիրություններից 22-ը Մայր Հայրենիքում լույս է տեսնում առաջին անգամ:

Բանասիրության խնդիրներին նվիրված Ն. Ադոնցի աշխատությունները կարևոր ներդրում են հայագիտության ասպարեզում:

Գ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

---

[1] *Համազգայինի Բեյրութի գրական պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գզրոց Բ, թղթածրար 4:*

ՄԱՇՏՈՑ ԵՎ ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԸՍՏ ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Հայ գրի և գրականության հիմնադիրների կյանքը ծանոթ չէ այն չափով, որքան արժանի էին նրանք հիշողության իրենց մեծ գործով: Լրիվ չեն տեղեկությունները մանավանդ այն նշանավոր մարդու մասին, որ առաջինն է զգացել սեփական գիր ունենալու պահանջը և հիմը ձգել ազգային դպրության:

Զարմանալին այն չէ, որ հետինները՝ ժամանակի խրամատով անջատված, չգիտեին սքանչելի գյուտի և նրա մեծ վաստակավորի պատմությունը: Նույնիսկ ժամանակակից Կորյունը չի կարող պարծենալ առանձին գիտությամբ: Թեև Մաշթոցի ճեռնասուն աշակերտը և նրա կենսագիրը. նա գրերի մասին շատ քան չգիտե, գոնե շատ քան չի պատմում: Նրան հետաքրքրում է կարծես ոչ այնքան գյուտը, որքան Մաշթոցի քարոզչությունը և այն էլ Հայաստանի ծայրագավառներում և Աղվանից, Վրաց աշխարհներում: Այս հանգամանքն ընդունակ է իրավամբ կասկածներ հարուցանելու: Սակայն մեր նպատակը չէ Կորյունի գործը քննել:

Հույն և լատին հին հիշատակարաններում կան քանի մի ակնարկներ և տեղեկություններ, որոնք, որքան և դիպվածական և հատուկտոր, բայց և այնպես անսպասելի լույս են ցողում Մաշթոցի և յուրայինների կյանքի մի կարևոր շերտի վրա: Գուցե և նրանք թույլ տան բարձրացնելու այն քողը, որ թվում է թե ճգված է Կորյունի երկի մեջ ոչ միայն Մաշթոցի այլ և իր՝ Կորյունի որոշ գործունեության վերա:

Հույն եկեղեցու պարծանք Փոտ պատրիարքը, հայտնի է, քաղաքակիրթ աշխարհի առաջ մեծ երախտիք ունի շնորհիվ իր հռչակավոր «Գրադարանի»: Նրա փառքին մասնակից ենք, ի դեպ է ասել, հայերս, քանի որ Փոտի երակների մեջ վազում էր առատորեն հայի արյուն, որովհետև Արշավիր պատրիկի քեռորդին էր: Ընթերցասեր պատրիարքը կազմել էր հին հեղինակների՝ ճոխ ժողովածու, որի շնորհիվ նորա տունը կիրթ հասարակության կենտրոն էր: Նա սովորություն ուներ կարդացած գրքերի մասին հաշիվ գրել, նշանակելով նրանց բովանդակությունը երբեմն համառոտ, հաճախ մանրամասն: Այս կերպով կազմվել է նրա «Գրադարան» աշխատությունը (1), որն ամփոփում է մոտ 300 հեղինակություն: Կան գործեր, որ

կորել են, գոնե մինչև այժմ չեն հայտնվել. նրանց թիվը քիչ չէ և շատերի մասին գաղափար ունենք միմիայն լուսամիտ պատրիարքի աշխատության շնորհիվ:

Ահա այդ Գրադարանումն է, որ Փոտը հիշում է Թեոդորոս Մոպսուեստացու կամ Մամուեստացու, ինչպես մերոնք էին ասում, մի գործը հետևյալ խոսքերով, որ բերում ենք ամբողջապես, բնագրի հետ տալով և բառացի թարգմանությունը:

Bib. Photii (**Migne**, Patrologia Graeca, t. 103, col. 281)

Θεοδώρου πρεσβυτέρου

περὶ τῆς ἐν Περσίδι μαγικῆς ἐν λόγοις γ'.

Ἀνεγνώσθη βιβλιδάριον Θεοδώρου περὶ τῆς ἐν Περσίδι μαγικῆς καὶ τίς ἡ τῆς εὐσεβείας διαφορὰ ἐν λόγοις τρισί.

Προσφωνεῖ δὲ αὐτοὺς πρὸς Μαστούβιον ἐξ Ἀρμενίας ὁρμώμενον, χωρεπίσκοπον δὲ τυγχάνοντα.

Καὶ ἐν μὲν τῷ πρώτῳ λόγῳ προστίθεται τὸ μιαρὸν Περσῶν δόγμα ὃ Ζαράδης εἰσηγήσατο, ἤτοι περὶ τοῦ Ζουρουάμ, ὃν ἀρχηγὸν πάντων εἰσάγει, ὃν καὶ Τύχην καλεῖ καὶ ὅτι σπένδων, ἵνα τέκῃ Ὡρμίσδαν, ἔτεκεν ἐκεῖνον καὶ τὸν Σατανᾶν. Καὶ περὶ αὐτῶν αἱμαμιξίας.

Καὶ ἁπλῶς τὸ δυσσεβὲς καὶ ὑπέραισχρον δόγμα κατὰ λέξιν ἐκθεὶς ἀνασκευάζει ἐν τῷ πρώτῳ λόγῳ.

Ἐν δὲ τοῖς λοιποῖς δυσὶ λόγοις τὰ περὶ τῆς εὐσεβοῦς διέρχεται πίστεως, ἀπὸ τῆς κοσμογονίας ἀρξάμενος, καὶ περὶ αὐτῆς τῆς χάριτος ὁμοίως καὶ ἐπιτροχάδην διελθών.

Թեոդորոս Երէցի

Ծաղկաց որ ի Պարսս մոգութեան, ի մասն երկո.

Կարդացել եմ Թեոդորոսի գիրքը «Ծաղկաց որ ի Պարսս մոգութեան եւ զինչ է բարեպաշտ հաւատոյ զանազանութիւն յերկոս մասս»:

Ուղղված են նրանք առ Մաստուբիոս ծագումով Հայաստանից և իջևն քորեպիսկոպոս:

Առաջին մասում խոսում է պարսից պիղծ կրոնի մասին, որ ավանդել է Զարադը, այն է Զրվանի մասին, որին ամեն բանի սկզբնապատճառ է դնում և որին անվանում է նաև բախտ: Եվ թե ինչպես զոհում էր, որ ծնի Որմզդին, բայց ծնում է նրան և սատանային: Նաև նրանց արենապղծության մասին:

Մի խոսքով ամբարիշտ և գարշելի կրոնը մեջ բերելով բառացիորեն հերքում է առաջին մասում:

Իսկ մնացյալ երկու մասերում մեկնում է բարեպաշտ հավատի էությունը, սկսելով աշխարհի արարչությունից, խոսելով նույն կերպ, թեև անցողակի նաև շնորհի մասին:

Οἵτος ὁ Θεόδωρος ὁ Μοψουεστίας εἶναι δοκεῖ τὴν δὲ γὰρ Νεστορίου αἵρεσιν καὶ μάλιστα ἐν τῷ τρίτῳ λόγῳ κρατύνων προαναφωνεῖ ἀλλὰ καὶ τὴν τῶν ἁμαρτωλῶν ἀποκατάστασιν τερατεύεται.

Այս Թեոդորոսը թվում է որ Մոպսուեստացին է, որովհետև Նեստորի աղանդի մասին մանավանդ երրորդ ճառում հաստատապես նախաբարոզ է լինում, այլև մեղավորների վերականգնման մասին է բանդագուշում:

Այս տողերը խիստ բանկարծեք են հայ գրականության համար: Կարևոր է Թեոդորոսի երկի ոչ միայն բովանդակությունը ինքն ըստ ինքյան, այլ և նորա հասցեն: Բովանդակությանը կդառնանք ուրիշ առթիվ մի այլ հոդվածում[1]: Այժմ կանգ առնենք երկրորդ կետի գրության հասցեի վրա:

Արդ հույն պատրիարքը վկայում է, որ Թեոդորոսի գիրքը գրված է եղել մի հայ քորեպիսկոպոսի համար և բարեբախտաբար չի մոռացել նշանակել նրա անունը: Արդյոք ո՞վ է այդ հայ եկեղեցականը, որի անունը հնչում է **Mastoubios**: Հիշենք, որ Թեոդորոս Մամուեստացին մեռել է 428 թվին և եպիսկոպոս էր սկսված 392 թ. մերձավորապես: Հայ դպրության ծաղոք անձը բնավ չի վարանիր **Mastoubios**-ին նույնացնելու Մաշթոցի, Թեոդորոսի ժամանակակից հայ իրականության ամենացայտուն դեմքի հետ: Հետևապես *Μαστούβιος* ուղղելու է *Μαστούζιος* կամ *Μαστούτζιος*: Անանուն հույնի *καθολικοὶ τῆς Μεγάλης Ἀρμενίας* հոդվածում Մաշթոցի անունը հնչում է *Μαστίζτη* և *Μαστή(ν)τζη* (**Migne**, Patrologia Graeca, t. 132):

Հույի ունենալով հայ գրականության հոր կրկնակի անունը, թերևս ոմանք գայթակղվին կարդալու ***Μαστούβιος***, այսինքն՝ Մեսրոբ: Սակայն, որքան հավաստի է Մաշթոց անունը, նույնքան երկբայելի է Մեսրոբ, ավելի ճիշտ Մեսրոպ: Հին մատենագիրները, Կորյուն և Ղազար, գիտեն միայն Մաշթոց անունը, մինչդեռ Խորենացին է առաջինը, որ Մաշթոցի տեղ գործ է ածում Մեսրոպ: Ի՞նչ հիմ ուներ մեր Պատմահայրը, անհայտ է. մինչև խնդրի պարզելը գերադասելի է անպայման Մաշթոցը:

Նկատենք, որ թուղթ **Պրոկղեայ եպիսկոպոսի** ունի Մաժդոց ընթերցումը, որը կարծես ավելի հին և ստույգ ձևն է և կարող է թելադրել բառի ստուգաբանական ծագումը: Եթե ընդունենք, որ Մաժդոցի նախնական հնչյունը Մազդ-ոց է, ինչ որ անհավանական չէ, իրավամբ կարող ենք նույնացնել իրանական **mazd-ak** անվան հետ, հայերեն -ոց հայտնի մասնիկի հավելումով[2]:

---

[1] **«Քննական նշմարներ եզնիկի մասին»**, Լ. Մարիեսի աշխատության առթիվ (պատրաստ է տպագրության) (2):

[2] **Մաժդոցը** հետագայում փոխվում է **Մաշթոցի**, ինչպես Պրոկղի պատասխանում, «Գիրք թղթոց», էջ 9. Աբրահամ կաթողիկոսի «Թուղթ առ Կիւրիոն», անդ 180. Օձնեցու «Սահակ

Մաստուրիոսի քորեպիսկոպոս կոչումը չպետք է շփոթեցնե մեզ: Թե Մաշթոցն իրոք ինչ աստիճան ուներ, հայտնի չէ, գուցե իսկապես քորեպիսկոպոս էր: Այսպես էին կոչվում այն եպիսկոպոսները, որ օրինական աթոռ չունեին և աթոռակալ եպիսկոպոսի օգնական կամ փոխանորդ էին: Բառի կազմը, ինչպես և հասկանանք *ἐπίσκοπος τῆς χώρας*, քե *ὁ ἐν χώρᾳ ἐπίσκοπος ὤν*, իմաստը մնում է գրեթե նույնը և պատշաճավոր Մաշթոցի շրջիկ գործունեության[1]: Կորյունը չէ հիշում իր ուսուցչի աստիճանը. իսկ ակումիտ տիտղոսը, ստացած Կ. Պոլսում, *ἀκοίμητος*, միայն նոր կասկածների առիթ կարող է տալ:

Եթե ճիշտ է մեր նույնացումը, առաջին անգամն է, որ երևան է գալիս հայ լուսավորության հոր անունը ընդհանուր գրականության մեջ (3):

Հնչական հարակցությունը չէ միայն, որ մեզ պատրում է: Կան և լուրջ պատմական հիմքեր, որ գալիս են հաստատելու մեր ենթադրությունը:

Թեոդորոսի և Մաշթոցի ժամանակակից ամենախոշոր երևույթը ընդհանուր եկեղեցական կյանքում Եփեսոսի ժողովն է: Մամուռեստի եպիսկոպոսը քեև քողել էր այս աշխարհը ժողովից երեք տարի առաջ, բայց իր անվան կշիռով և մտավոր ժառանգությամբ կենդանի մասնակից էր գալոց վեճերին երկար ժամանակ:

Եփեսոսի ժողովի շուրջը ծագած հուզումներն արձագանք գտան և Հայաստանում: Պայքարող կողմերն առանձին արժեք էին տալիս հայերի բռնելիք դիրքին և աշխատում էին գրավել նրանց համակրությունը: Ընդհանուր իրարանցումի ժամանակ կար վայրկյան, երբ հայերը կարծես քե համրական ուշադրության կենտրոնն էին: Ազգային հիշողությունը պահել է միայն խուլ շշուկներ եղելությանց, որոնց մասին որոշակի ճառում են օտար աղբյուրները:

Եփեսոսի ժողովը փակեց իր նիստերը 431 թվի հունիսի 26-ին Նեստորի դատապարտումով և աքսորով: Չի կարելի ասել, սակայն, որ սուրբ հայրերի հավաքական որոշումը սանձահարեց կրքերը և նրանք վերադարձան իրենց տեղերը խաղաղության ճիթենիով: Տարիներ էին պետք, մինչև որ բորբոքված ոտեղները հովանային ընդհանուր խաղաղության տենչով: Կովող

ժողովոց», անդ, 220. Գազիկի «Թուղթ առ Ռոմանոս կայսր», անդ, 296:

Սույն անունը կրում է և Ներսես կաթողիկոսի ժամանակակից հայ եպիսկոպոսներից մինը՝ «Մաշտոց Խորխոռուհնաց եպիսկոպոս», անդ, 70, 73 և այլն:

Մաշտոց, դառնում է Մաշթոց, դ > թ, շ-ի ազդեցությամբ: Ոց մասնիկը ծանոթ է և այլուստ, ինչպես Տիր-ոց, Քար-ոց: Մաշթոցի խնամությունը Mazdak-ի հետ ավելի քան հավանական է Մաշդ-ոց և Մածդ-ոց և Մազդ-ոց ձևերի հաջորդական ձայնափոխությամբ:

[1] Հայտնի է Ղազար Փարպեցու գանգատը, որ նրան «այլ ևս քորեպիսկոպոս ոք չարար» քող քե «ձկտեցուցանել յեպիսկոպոսութիւն». տե՛ս «Պատմութիւն և Թուղթ Ղազարայ», Վենետիկ, 1873, էջ 587:

ուղղությանց պարագլուխները՝ Կյուրեղ Աղեքսանդրացին և Հովհաննես Անտիոքացին մեծ ճիգերից հետո համոզվեցին հաշտության գալ փոխադարձ զիջումների գնով: Հաշտությունը կայացավ 433 թվին մարտ ամսին: Այս կարևոր դեպքն իսկ չզսպեց հուզումները: Անհաշտ տարրերը շարունակեցին հակառակությունները, կազմելով երկու կողմերի ծայրահեղ թևերը: Նրանց ոգին էր կյուրեղյաննների բանակում Մելիտինի եպիսկոպոս Ակակիոսը և Եդեսիայի եպիսկոպոս Ռաբուլասը: Անտիոքյաննների խմբում համառողներն էին Կիլիկիայի եպիսկոպոսները, որոնք ժողով գումարեցին Անավարզայում և բողոքեցին կայացած միության դեմ[1]: Ակակիոսն և Ռաբուլասը ևս, իբր հավատարիմ կյուրեղականներ, վրդովված էին, որ իրենց պետը զիջանելով մատնել է ճշմարտության դատը[2]:

Նեստորի անկումով հալածելի են հայտարարվում ոչ միայն նրա անձը, այլև գրվածները: Հակառակորդները սկսում են տարածել Դիոդորոս Տարսոնացու և Թեոդորոս Մամուեստացու գրությունները: Սրանք էին բանաղրված վարդապետության բուն հեղինակները: Նեստորի հետևորդների համար սա միևնույն ժամանակ մի կողմնակի միջոց էր ցույց տալու, որ անարդարություն է գործված իրենց ուսուցչի դեմ, քանի որ նա այլ բան չէ քարոզել, քան ինչ որ դավանել են հիշյալ հայրերը:

Երևում է, որ Թեոդորոսը առանձին հռչակ էր վայելում հայերի մոտ, այս առթիվ է, որ թշնամանող կողմերը հարկավոր են համարում դիմել հայերին: Ակակիոս և Ռաբուլաս զգուշացնում են, որ Թեոդորոսի գրվածները խորշելի են և աղանդավոր, իսկ Կիլիկիայի եպիսկոպոսները հայտարարում են, որ Ռաբուլաս անձնական ոխ ունի Թեոդորոսի դեմ:

Այդ հակասական քայլերը դժվար կացություն են ստեղծում հայերի համար: Հայ եպիսկոպոսները ժողով են գումարում և ճշմարտությունը պարզելու նպատակով որոշում են դիմել Կ. Պոլսի պատրիարքին: Երկու երեց, Վևոնդեոս և Աբերիոս հանձնարարական նամակով մեկնում են Պրոկղ [պատրիարքի] մոտ: Նրանք տանում են իրենց հետ նաև Թեոդորոսի գրվածներից քաղվածո կտորներ: Հայերն ուզում են իմանալ պատրիարքի կարծիքը, թե ով է արդար, Ակակիոսն ու Ռաբուլասը, թե կիլիկեցիք:

Պրոկղ ընդունելով հայ դեսպանությունը, քննում է ուշադրությամբ նրանց թղթերը և պատրաստում պատասխան: Միևնույն ժամանակ հարկավոր է նկատում դիմել Աղեքսանդրիայի և Անտիոքի պատրիարքներին և խնդրում, որ նրանք ևս ստորագրեն հայերին ղրկելիք պատասխանը: Պրոկղի դիմումը հատուկ նամակով տանում է Անտիոք Թեոդորոս անունով մի սարկավագ:

---

[1] **Mansi**, Sacrorum Conciliorum nova et amplissima collectio, t. V, 891.

[2] Անդ, t. V, 860 և 998, Ակակիոսի նամակը Կյուրեղին՝ կրկնակի լատին թարգմանությամբ:

Հովհաննես պատրիարքն իր եպիսկոպոսների հավանությամբ ստորագրում է թուղթը:

Մի այլ սարկավագ Վասիլ անունով նույն հանճնարարականով ուղարկվում է Աղեքսանդրիա և բերում է Կյուրեղի պատասխանը:

Մինչ այն պատրիարքն արդեն ղրկած է լինում իր դավանաբանական թուղթը հայերին: Ինչպես երևում է, Պրոկղը բավականանալով Անտիոքի վերաբերումով ամապարում է հասցնել թուղթը հայերին, առանց սպասելու Կյուրեղի կարծիքին: Բայց, անտարակույս, զգուշության համար ձեռնպահ է մնում որևէ ակնարկ անել Թեոդորոսի հասցեին:

Այս անցուդարձին վերաբերյալ վավերագրերը, դժբախտաբար, կորած են մեծ մասով: Մնացել են միմիայն Պրոկղի թուղթը հայերին՝ հույն, հայ և ասորի լեզուներով. մնացել են նաև Ակակիոսի թղթերը հայոց և նրանց պատասխանները միմիայն հայերեն:

Լատին մատենագիր Լիբերատուսը, ինչպես երևում է, ունեցել է իր տրամադրության տակ կորած վավերագրերից շատերը և չի զլացել հակիրճ, բայց բովանդակալից հաշիվ տալ իր երկի մեջ: Շնորհապարտ պիտի լինենք հետավոր Կարթագենի եկեղեցականին, որ անտես չի արել և հայոց հարցը: Սարկավագ Լիբերատուսը հիշյալ եկեղեցու կողմից մասնակցել է իր ժամանակվա շատ ժողովների և ներկա է եղել նաև 553 թ. տիեզերական Ե ժողովին: Թեոդորոս Մամուեստացու, ինչպես և Թեոդորետոսի և Իբասի խնդիրը նույն ժողովի քննության և ապա դատապարտության առարկա եղավ: Երեք անձերը, կամ ինչպես ասվում է «Եկեղեցական պատմության» մեջ, երեք գլուխները, դատվում էին առ Նեստոր ունեցած հարաբերության տեսակետից: Քնականորեն ժողովը աչքի պիտի անցներ նրանց վերաբերյալ գրություններն ու թղթերը Եփեսոսյան վեճերի ժամանակից: Հետագայում նրանցից շատերը կորստյան են մատնվել և մանավանդ այն թղթերը, որ նայում էին հայերիս: Լիբերատուսը օգտվել է նրանցից և տեղ տվել իր երկի մեջ, որ ամփոփում է եկեղեցական անցքերի պատմությունը 428-553 թթ.: Վերև հիշեցինք, ինչ որ նա պատմում է հայոց մասին: Պիտանի ենք համարում մեջ բերել և նրա բուն խոսքերը բնագրով և թարգմանությամբ:

Liberati diaconi Breviarium, **Migne**, Patrologia Latina, t. 68, col. 963

Nestorii sectatores... aiebant non sapuisse nova Nestorium, sed antiquorum patrum prosecutum fuisse doctrinam et in eo tantum studii gesserunt, ut ipsa eorum volumina malitiose in Syrorum linguam et in Armenorum atque Persarum transferrent.

«Նեստորի աղանդակիցները... ասում էին, որ Նեստոր նոր բան չէ քարոզել, այլ հին հայրերի վարդապետությանն է հետևել: Եվ այնքան եռանդ թափեցին, որ մինչև անգամ նրանց իսկ գրվածները չարամտորեն թարգմանեցին ասորի, հայ և պարսիկ լեզուներով:

Sed haec ubi agnoverunt Acacius Melitenensits et Rabula Edessae civitatis episcopus... scripserunt Armeniae episcopis, ne Theodori Mopsuesteni libros susciperent tanquam haeretici et auctoris dogmatis Nestoriani, insimulantibus episcopis Ciliciae Rabulam, et Acacium, quod hoc non ex charitate, sed ex emulatione atque contentione fecissent.

Congregati sunt ergo in unam venerabiles Armeniae episcopi et miserunt duos presbyteros Leontium et Aberium ad Proclum Constantinopolitarum episcopum, secundum morem, cum libellis suis, et uno volumine Theodori Mopsuesteni, scire volentes utrum doctrina Theodori an Rabulae et Acacii vera esse probaretur.

Itaque Proclus accipiens Armeniae episcoporum libellos et illud Theodori volumen, diligentius utraque examinans, tomum Armeniis scripsit et destinavit, in quo posuit, ad interimendas Nestorianorum versutias, qui duas in Christo inducunt personas, «unum de trinitate incarnatum», quem et direxit Joanni Antiocheno per Theodorum diaconum suum, continentem subter capitula ab haereticis prolata; expetens ab eo, pro communi fide servanda, ut cum suo concilio eum susciperet et subscriberet.

Բայց երբ այս իմացան Ակակիոս Մելիտինացին և Եդեսիայի [քաղաքի] եպիսկոպոս Ռաբուլասը... գրեցին հայոց եպիսկոպոսներին, որ չընդունեն Թեոդորոս Մամուեստացու գրքերը, իբր հերձվածողի և նեստորյան վարդապետության հեղինակի: Մինչդեռ Կիլիկիայի եպիսկոպոսները ամբաստանում էին Ռաբուլասին և Ակակիոսին, որ նրանք այդպես են վարվել ոչ սիրուց, այլ նախանձից և չարությունից դրդված:

Արդ՝ ժողով են գումարում հայոց պատվարժան եպիսկոպոսները և երկու երեց են ուղարկում Վևոնդեոս և Արբիոս, Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի՝ Պրոկղի մոտ, ըստ սովորության, իրենց թղթով և Թեոդորոս Մամուեստացու գրվածով, կամենալով վերահասու լինել, արդյոք ո՞րն է ընդունելի, իբր ճշմարիտ, Թեոդորոսի, թե Ռաբուլասի և Ակակիոսի ուսմունքը:

Այսպես Պրոկղը ստանալով հայ եպիսկոպոսների թուղթը և Թեոդորոսի գրվածը, ուշի ուշով քննեց երկուսն էլ, և հետո ամփոփ գրեց հայերին, որի մեջ ի ջնջումն նեստորականների նենգությունների, որոնք «զերկուս ի Քրիստոս մուծանին անձինս», դրոշմում է՝ «միոն յերորդութենէ մարմնացեալ»: Պրոկղը նամակն ուղարկում է Հովհաննես Անտիոքացուն իր Թեոդորոս[1] սարկավագի ձեռքով, որը պարունակում էր նաև քաղվածքներ հերետիկոսներից, և խընդրում էր նորանից, որ հանուն ընդհանուր հավատի պահպանության նա իր եկեղեցու հետ պաշտպան կանգնի և ստորագրի:

[1] Հովհաննես Անտիոքացին Պրոկղին գրած նամակում անվանում է սարկավագին Թեոդոսիոս (diacono Theodosio), P. G., 65, col. 877:

Joannes autem et qui cum eo erant congregati episcopi, legentes tomum et ejus laudantes compositionem, subscipserunt in eo et Proclo transmiserunt...

Sed Basilius quidam diaconus sumens tomum Procli quem Armeniis scripserat, Alexandriam venit et Armenorum libellos suis libellis annectens, obtulit Cyrillo ejusdem urbi antistiti...

Itaque Basilius diaconus Constantinopolim veniens libellos composuit et archiepiscopo Proclo porrexit, associans cuncta quae ante hac Cyrillo archiepiscopo obtulerat.

Proclus vero iam destinaverat tomum suum Armeniis, in quo tomo nullam facit de Theodoro reprehensionis mentionem.

Quod cognoscens Basilius scripsit libellum in quo docuit libros Theodori vitandos, sicut Arii et Eunomii blasphemias...

Post haec autem occasione accepta surrexerunt quidam monachi ab Armenia Apollinaris sectatores duo vel tres (sicut refert Joannes Antiochenus in epistola sua) portantes excerpta capitula, ut dicebant, de libris Theodori Mopsuesteni, vel aliorum sanctorum patrum, qui in illo tempore, sicut diximus, contra Apollinarem scripserant: et intrantes regiam civitaten et multorum sordidantes auditum calliditate sua omnia perturbabant.

Deinde circumeuntes totius Orientis civitates et universa monasteria, damnanda esse cum auctoribus clamabant accusantes ea Nestoriam sensu fuisse conscripta: «quia si Nestorius juste damnatus est, damnentur et ista, dicebant, cum suis auctoribus».

Հովհաննեսն իր ժողովական եպիսկոպոսների հետ միասին կարդալով Պրոկղի ճամակը հավանեցին նրա շարադրվածը, ստորագրեցին և դարձրին Պրոկղին:

Բայց ոմն Վասիլ (Բարսեղ) սարկավագ, վերցնելով Պրոկղի ճամակը, որ գրված էր հայոց, մեկնեց Աղեքսանդրիա և հայոց թուղթն իր գրության հետ ներկայացրեց Կյուրեղին, նույն քաղաքի առաջնորդին:

Վասիլ սարկավագը վերադառնալով Կոստանդնուպոլիս, կազմեց մի թուղթ և հանձնեց Պրոկղ արքեպիսկոպոսին, կցելով նրան այն ամենը, ինչ որ դրանից առաջ ստացել էր Կյուրեղից:

Սակայն Պրոկղն արդեն դրկել էր իր թուղթը հայերին, որի մեջ Թեոդորոսի վերաբերյալ ոչ մի հանդիմանական հիշատակություն չէր արած:

Այս բանը իմանալով Վասիլը մի թուղթ գրեց, որով հորդորում էր խորշել Թեոդորոսի գրերից այնպես, որպես Արիոսի և Եվնոմիոսի ամբարշտություններից...

Այնուհետև առիթից օգտվելով ելան Հայաստանից քանի մի վանականներ, Ապողինարի հետևորդ, երկու թե երեք հոգի (ինչպես հաղորդում է Հովհաննես Անտիոքացին իր ճամակում) և առնելով իրենց հետ քաղվածներ, ինչպես իրենք էին հավատացնում, Թեոդորոս Մամուեստացուց և կամ այլ սրբազան հայրերից, որոնք այս ժամանակ, որպես հիշեցինք, գրել էին Ապողինարի դեմ և մտնելով թագավորանիստ քաղաքը և շատերի ունկնդրությունը ապակառնելով իրենց նենգությամբ խռովեցին ամեն ինչ:

Ապա շրջելով ամբողջ Արևելքի քաղաքները և բոլոր մենաստանները պահանջում էին, որ դատապարտվեին այն քաղվածները իրենց հեղինակների հետ միասին, հանդիմանելով, որ նրանք գրված են նեստորական ոգով «թե Նեստորը արդարացի է դատապարտված, քան դատապարտվին և սրանք պնդում էին նրանք, իրենց հեղինակներով»:

Հիմք չկա բնավ կասկածելու լատին սարկավագի ճշմարտախոսությանը ոչ մի կետում, ոչ մի տողում: Ազգային աղբյուրները, որքան և պակասավոր, հաստատում կռվան են տալիս ստուգելու և լուսաբանելու օտարի տեղեկությունները:

Մելիտինի եպիսկոպոս Ակակիոսն իր թղթում գրում է՝ «Զահի հարեալ թէ գուցէ և ի ձեր եկեղեցիսդ արատ գտեալ ճարակեսցի, լաւ համարեցաք ազդել առ ձեզ զհասարակաց աւգտւտն խորհելով». խոսքը նեստորականության մասին է: Թղթի վերջում պարզում է Ակակիոսն իր քայլի իսկական շարժառիթը:

«Բայց մեզ երկիւղ է, թէ գուցէ ի Թէոդորեա Մամուեստեայ ոխմանէն աշակերտեալ ոք գտցի եւ ի չար ժանգէն Նեստորի ի միամի՛տ անճինս ազդիցէ: Զի զնորա մնացեալ գրեանն իրրեւ խնդիրս այս յայտնեցաւ, եւ մանաւանդ որ վասն մարմնախառնին գրեալ էր, վճիռ հրամանի ետուն սուրբ աշխարհաժողով եպիսկոպոսացն, որ յԵփեսացւոց քաղաքին եղեւ. ի մի վայր ժողովել զրնաւ գրեանն եւ այրել: Արդ փոյթ լիցի ձեզ առանց պղտորութեան զհաւատսն պահել, զի կատարեալ զարդարութիւնն անապական ընկալջիք»[1]:

Պրոկղ պատրիարքի հայոց համար գրած թղթի հայերեն օրինակը խրատական է: Նա ցույց է տալիս, թե ինչպես էին այլայլվում պատմական վավերագրերը, դավանաբանական վեճերի տաքացած մթնոլորտում:

Պրոկղի ճամակի հունարեն բնագիրը, որ տպված է **Mansi**, 9-րդ հատորում և արտատպված **Migne**, P. G., 65, 856, հաշվում է Ա-ԺԵ գլուխ: Հայերեն թարգմանությունը, որ գետեղված է «Գիրք թղթոց» հիշատակարանում, տասնևհինգ գլուխներից պահել է միայն Թ-ԺԵ: Ասորի թարգմանությունը պահվել է Զաքարիա Հռետորի «Եկեղեցական պատմության» մեջ[2]: Սա ևս մեզ հետաքրքրող կետերում զանազանվում է հունարենից, բայց չի մոտենում էապես հային: Մեր նյութը պահանջում է կանգ առնել մի վայրկյան այս կարևոր թղթերի քննության վրա:

Հույն բնագիրը վերջին ԺԵ գլխում ասում է. *ταῦτα δὲ πρὸς τὴν ὑμετέραν ἐπεστείλαμεν ἀγάπην ἐκ τῶν ὑμετέρων προτραπέντες λιβέλλων, ὧν πρὸς ἡμᾶς διεπέμψασθε, φήσαντες λυμεῶνάς τινας καὶ τερατολόγους ἀνθρώπους ἑαυτοὺς ἐπειφρῆσαι τῇ ὑμετέρα χώρᾳ βουλομένους διὰ πονηρῶν γραμμάτων καὶ τῶν ἀντισθέσεων τῆς ψευδωνύμου γνώσεως διαστρέφειν τὸ ἁπλοῦν καὶ ἀμαγγάνευτον τῆς ὀρθοδόξου πίστεως κάλλος.*

[1] «Գիրք թղթոց», էջ 14-15:

[2] «Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rhetor», ed. Ahrens u. G. Krüger, 1899, Teubner-ի շարքում: Անգլերեն թարգմ.՝ «The Syriac Chronicle of Zacharia of Mytilene», ed. Hamilton and Brooks, 1899.

Հայը թարգմանում է «Եւ զայս ամենայն զի գրեցաք. առ ձեր սէր այդր, զի լու եղեւ մեզ եթէ արք ոմանք ժանդախաւսք, ցնորախաւսք անկան |ի| յաշխարհ այդր եւ կամին ժանդաժուտ[1] իմն գրովք, հակառակութեամբ ստաբան |խ|խտախորհուրդ գիտութեան[2] խոտորել զպարզամտութիւն, զանպաճոյճ զանմեքենայ, զուղղափառ գեղն հաւատոյն»[3]:

Քնագրի ընդգծված տողերը, որ նշանակում են. «գրում ենք դրդված ձեր թղթից, որ ղրկել էիք մեզ», թողնված են հայ թարգմանության մեջ: Հուշարենից երևում է, որ պատրիարքի գրությունը մի պատասխան է այն դիմումին, որ արել են հայերը: Մինչդեռ հայն այնպես է ձևացնում, իբր պատրիարքից է ծագում նախաձեռնությունը, որը լսելով՝ «լու եղեւ մեզ», հավատին սպառնացող վտանգը, հարկ է տեսել զգուշացնել թղթով հայերին:

Ասորի թարգմանությունը ևս ճգած է հիշյալ տողերը, բայց չի փոխարինել ուրիշ բանով: Ասորին նայում է թղթի վերա իբրև մի կարևոր դավաճարանական գրության և հանել է այն տողերը, որպեսզի թղթին ընդհանուր բնավորություն տա և ոչ լոկ հայկական: Երևի, նույն նպատակով է, որ մի կողմ է նետել և սկզբի ներածական խոսքերը.

1. *Οὐ μετρίως ἀδελφοί, συνέχειν ἡμῶν τὴν ψυχὴν καὶ τὸν λογισμὸν τυράννῳ λύπῃ καὶ ἔτρωσεν ἡ ψήμη τῶν νεαρῶν τῆς ἀπάτης ζιζανίων, ἅπερ ἔναγχος τῇ ὑμετέρᾳ πανούργως ἐπέσπειρε χώρᾳ ὁ κοινὸς τῆς φύσεως ἐχθρός.*

Հայերենի մեջ ևս պակասում են այս խոսքերը, ինչպես և հետևյալ ութ գլուխները և նրանց փոխարեն գտնում ենք հայ ինքնասիրությունը շոյող առաջարան: Թվում է, որ և այս կետում օտար ձեռք է սահել Պրոկղի թղթի վերայից:

Թարեբախտաբար **«Կնիք հաւատոյ»** կարևոր գործը, որ վերջերս լույս տեսավ Էջմիածին, լրացնում է թերի գլուխներից Գ-Թ և պարզում է առաջարանի ծագումը: Սակայն պիտի խոստովանենք, մեր կասկածները դեռ չեն փարատվում ողջովին:

Նոր ստանալով շնորհակալությամբ Մեսրոպ արքեպիսկոպոսից **«Կնիք հաւատոյ»** [գիրքը] (4) և ծանոթանալով ի. Ա. Վարդանյանի հոդվածին («Հանդես ամսօրյա», 1921 թ.) շնորհիվ հայր Համազասպ Ոսկյանին, չենք կարող անպայման հարիլ այն կարծիքին, որ պաշտպանում է Կարապետ եպիսկոպոսն իր ներածության մեջ և որին համամիտ է ի. Վարդանյանը (5):

---

[1] Ցօրիճ. ժանդաժող =πονηρός, զոր ե[այր] Ա. Վարդանյան ուղղել է ժանդաժուտ, «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes», 1913, էջ 422 և «Հանդես ամսօրյա», 1920:

[2] Ցօրիճ. գիտութեամբ, ուղղելի է գիտութեան = γνώσεως:

[3] Զուղղափառ ὀρθόδοξον, թե պետք է կարդալ հաւատոյն դեղն:

Վերջինս ընդունում է, որ Եզնիկի **«Առ Սուրբ Սահակ Հայոց հայրապետ** եւ առ Սուրբ Մաժդոց մեղայականը» թղթերի անկումով կամ ետևառաջությամբ խառնվել են Պրոկղի թղթին և կազմել մեկ ամբողջություն ու Եզնիկ անունն էլ տեղի է տված Պրոկղի: Միանգամայն հնարավոր է:

Սակայն խնդիրն այն է, որ Եզնիկի թուղթը գրված է **միմիայն** Մաշթոցին, ինչպես վկայում է **«Կնիքը»** («զոր գրեաց ի Կ. Պոլիս առ երանելին Մաշդոց», էջ 130) և հաստատում է թղթի ոճը, ուր խոսում է եզակի դեմքով («աղաւթից **քոց** [իմա աղաւթիւք քոյ] տեառն սրբութեան» ընթերցումը գերադասելի է քան «աղաւթիւք **ձեր**», տե՛ս «Կնիք», էջ 130): Հետևապես, քանի որ Պրոկղի խառնակված թուղթը սկսվում է Եզնիկի Առաջաբանով, պետք էր սպասել, որ վերնագիրը ևս լիներ Եզնիկ առ Մաշտոց:

Մյուս կողմից Եզնիկի թուղթը հասարակ մեղայական չի եղել: **«Կնիքի»** մեջ նորա անունով մի դավանաբանական հատված կա (էջ 51), որ հավանորեն առնված է նույն առ Մաշթոց թղթից: Երևում է, որ նրա թուղթը անդրանիկ հաշիվ է այն խնդիրների, որոնց համար հայերը սպասում էին Պրոկղի գրության: Գուցե և Եզնիկն է վերջնիս բերողը և թարգմանիչը (ուրիշ տեղ նկատել ենք թղթի «այլ թժարեր» նախադասության նմանությունը **«Ընդդեմ ադանդոցի»** սկզբի «զաղտն եւ զբիժն» և այլն):

Եզնիկի և Պրոկղի թղթերը սերտորեն կապված են միմյանց և բնավ արհամարհելի ենթադրություն չէ, որ մեկի առաջաբանը կամավ կցվեր մյուսին մի ամբողջություն կազմելու և Պրոկղի բերանը դնելով Եզնիկի խոսքերը Սահակի և Մաշթոցի եղինակությունը բարձրացնելու համար: Ավելորդ կասկածամտություն չէ, քանի որ օտար միջամտության հետքերը Պրոկղի թղթում անուրանալի են: Ուշագրավ է այս տեսակետից և նրա վերջաբանության մի կտորը, որ չկա հունարենում, և ուր հիշվում են **Նեստորիոսն** և **Թեոդորոսը** («եւ մի ի նզով ի դժոխս կործանեսցի»): Այս խորթ հավելումը արդյոք նույն եզնկյան թղթից չէ՞ առնված: Ինչ և լինի նրա ծագումը, անպայման, միտումնավոր հավելված է[1], որ նպատակ ուներ ընդառաջ գնալ Սահակի և Մաշթոցի պատասխան-թղթի մի կարևոր կետին:

Սրանք իրենց պատասխանում նախ հավատացնում են, որ միջոցներ են ձեռք առնված մոլորության դեմ. «թղթոյդ տրտամակից եղեալ... յամենայն տեղիս որ շուրջ զմեզ բնակեալ էին յղեցաք, մեծ եւ պատուհասալից պատուիրանաւ մի՛ լսել բնաւ ամենեւին զայդպիսի բարբարոսս (երևի

[1] Ն. **Ջնդրյան**, որ ըստ հ[այր] Վարդանյանի (ՀԱ, 1921), հրատարակել է Պրոկղի թուղթը 1890 թվին **«Պատկեր»** թերթում, կարծում է, որ հավելվածը պատկանում է Լիբերատուսի մոտ հիշված Բարսեղ սարկավագին: Բարսեղը հայ շրջաններին մոտ մարդ է. նորա ազդեցությամբ կարող էր Եզնիկ հիշել այն անունները, որից այնպես խուսափում էր զգուշավոր Պրոկղը, եթե ընդունենք, որ հավելվածը Եզնիկից է առնված: Այս մտքով իրավացի է Ջնդրյանի կարծիքը:

քորբորիտս), մի ընդունել ամենևին զվնասաբեր կորստական մոլորական հերեսիութեանն վարդապետութիւնն»[1]:

Իսկ թղթի վերջում հայտարարում են. «Եւ որ Թէոդորեայ Մամուեստացւոյ աշակերտեալք իցեն առ ժամանակս ի շնորհացն Աստուծոյ այնպիսի ինչ աստ չեւ է յայտնեալ, ապա թէ իցէ ծածկեալ ի ժանգոյ աղտեղութեան, ի հարկէ ջան լիցի մեզ խլել զխոչն, եւ զգայթակղութիւնն զայն ի միջոյ ի բաց կորուսանել»[2]:

Օտարոտի են Թեոդորոսի հասցեին ուղղված խոսքերը: Երևում է, որ որոշ հարցի պատասխան է: Սակայն Պրոկղի թղթում այդպիսի հարց չկա, և Թեոդորոսի անունը չի հիշվում: Ակամայից կասկած է ծագում պատասխանի հարազատության դեմ: Ավելի ճիշտ ասած, թվում է թե ուրիշ թղթի պատասխան է, հարմարեցրած Պրոկղի թղթին:

Եվ հիրավի: Մելիտինի եպիսկոպոս Ակակիոսի «Թուղթ առ սուրբ Սահակ հայոց հայրապետ» գրության մեջ, կարդում ենք.

«Բայց մեզ երկիւղ է, թէ գուցէ ի Թէոդորեա<յ> Մամուեստեայ ուսմանէն (յօրինն. ոխմանէն) աշակերտեալ ոք գտցի եւ ի չար ժանգէն Նեստորի ի միամի՛տ անճիւնս ազդիցէ. զի զնորա մնացեալ գրեանն, իբրեւ խնդիրս այս յայտնեցաւ, եւ մանաւանդ որ վասն մարմնախառնիւն գրեալ էր, վճիռ հրամանի եառաւ սուրբ աշխարհաժողով եպիսկոպոսացն, որ յԵփեսացւոց քաղաքին եղեւ ի մի վայր ժողովել զընաւ գրեանն եւ այրել»[3]:

Անտարակույս, Ակակիոսի այս երկյուղն է այն խնդրելի կետը, որ պարտավորեցրել է հիշյալ վիճելի պատասխանը: Ուրեմն Պրոկղի թղթի պատասխանը նկատի ուներ Ակակիոսն և ոչ Պրոկղի թուղթը:

Մեզ հասած է, սակայն, և Ակակիոսի թղթի պատասխանը: Խնդիրն այն է, որ այդ պատասխանը ոչնչով չի զանազանվում այն թղթից, որ կրում է «Պատասխան թղթոյն Պրոկղի» վերնագիրը: Միևնույն գրության կրկնակի պատճեններ են ըստ էության: Տարբերությունն այն է, որ Պրոկղի պատասխանի մեջ մուծված է մի հատված, բաղկացած գլխավորապես հավատո հանգանակից: Բացի դրանից Թեոդորոսին վերաբերյալ կետը Ակակիոսի պատասխանում համառոտ է և առանց անվան հիշատակության, այսպես. «Այլ յաղագս որ գրեցէր գարշե՛լ, առ ժամանակս ի շնորհս Աստուծոյ, այսպիսի ինչ չեւ է հասեալ. ապա եթէ իցէ ինչ ծածկեալ ի ժանգոյ անտի, ի հարկէ ջան լիցի խլել զխոչն ի միջոյ»[4]:

Կարելի էր կարծել, որ միևնույն թղթի օրինակներն, որքան և անպատեհ,

---

[1] «Գիրք թղթոց», էջ 10:

[2] Անդ, էջ 13:

[3] Անդ, էջ 15:

[4] Անդ, էջ 18:

ղրկված են և՛ Պրոկղին, և՛ Ակակիոսին: Բայց քանի որ վերև պարզեցինք, որ Պրոկղի թուղթն հետևանք էր հայոց դիմումի և իրր դավանաբանական ճառ հավատո մասին, *περὶ πίστεως*, թերևս պատասխանի պետք չուներ, մնում է ենթադրել, որ թուղթը սկզբնապես միայն Ակակիոսի համար է եղել պատրաստված: Հետագայում նույն օտար ձեռքը, որ Պրոկղի թղթին այն ձևն է տալիս, իբր թե նա է առաջին գրողը և հայերը՝ նրան պատասխանողը, նույն ձեռքը հարկադրվում է կազմել կեղծ պատասխան առ Ակակիոս թղթի հետևությամբ:

Այս տեղի է ունեցել Կոմիտաս [կաթողիկոսից] առաջ, քանի որ «**Կնիք հաւատոյ**» - ն արդեն ծանոթ է Սահակի և Մաշթոցի պատասխան թղթին[1]: Արդյոք այս միջոցո՞ւն է մուծված և վերոհիշյալ հավելվածը Պրոկղի թղթի վերջաբանության մեջ, որպեսզի արդարացվին Սահակի և Մաշթոցի պատասխանի ակնարկները Թեոդորոսի հասցեին: Եզնիկի և Պրոկղի թղթերի խառնումը պատահական, թե դիտավոր Կոմիտասից հետո է: Եթե ընդունենք, որ դիտավորյալ է, հավելվածը պիտի վերագրել այն ձեռքին, որ խառնել է հիշյալ թղթերը, վերցնելով այն Եզնիկից[2]:

Թեոդորոսի անվան հանդեպ որոշ զրպանկատությունը հասկանալի պիտի լինի, մանավանդ եթե չմոռանանք նրա մերձավոր ծանոթությունը Մաշթոցի հետ:

Մեզ հետաքրքրող թղթերի վերա նկատելի է VI դարի դավանաբանական վեճերի հեռավոր ստվերը: Հայտնի է, որ Եփեսոսի ժողովի գործերը ևս զերծ չեն Ե տիեզերական ժողովի շնչից: Վեցերորդ դարի առաջին կիսում, երբ Հայ եկեղեցին մարտնչում էր նեստորականության դեմ, բնավ ցանկալի չէր ցույց տալ, որ Նեստորի ուսմունքը հայտնի էր հայերին՝ տակավին հայ դպրության արշալույսին: Միանգամայն խոտելի պիտի թվեր Մաշթոցի և կամ Սահակի ծանոթությունը Նեստորի ուսուցիչ Թեոդորոսի հետ:

Ակակիոսի և Պրոկղի պատասխան թղթերում մեղմացրած են այն տեղերը, ուր խոսքը Թեոդորի և Նեստորի մասին է: Ինչպես վերև բերած կտորներից կարելի է տեսնել, միանգամ խոստովանում են նեստորականների գործունեությունը, ասելով, որ ամեն կողմ մարդ է ուղարկված «մեծ եւ պատուհասալից պատուիրանաւ մի լսել բնաւ ամենեւին զայդպիսի բարբարոսս»: Իսկ մյուս անգամ կարծես ժխտում է. «ի շնորհացն Աստուծոյ

---

[1] «Կնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914, էջ 129:

[2] Հ[այր] Ա. Վարդանյան իր ընտիր սրբագրության մեջ հանում է բնագրից միանգամայն «Թեանց եւ Մարեաննեաց» կամ «Մաբեայ եւ Մարաթովգայ» առեղծվածային անունները: Թվում է թե վաղաժամ է: Երկու անգամ կրկնվող անունները կարող են, եթե պարզվեն, թերևս ժամանակագրական նշանակություն ունենալ: Մարաթոնը Նիկոմեդացի եպիսկոպոս էր և Մակեդոնի հետևորդ, ուստի և երբեմն նորա անունով է կոչվում Մակեդոնի աղանդը, ինչպես վկայում է Սոկրատես, «Եկեղեցական պատմություն», II, 45: Διὰ καὶ Μαραδωναιανοὺς καλοῦσιν αὐτούς Հիշում է նաև Հովհան Ոսկեբերան. Ἄριος, Εὐνόμιος, Μαραδώνιος, Migne, P. G., t. 59, col. 569.

այնպիսի ինչ աստ չեւ է յայտնեալ», ավելացնելով զգուշությամբ «ապա թէ իցէ ծածկեալ ի ժանգոյ աղտեղութեանց»:

Ակակիոսի երկրորդ թուղթն, ուղղված հայ նախարարներին, վկայում է, որ արդարև նեստորական քարոզը մուտ էր գործել Հայաստան: «Աղաչեմք, մի ոք զձեզ խաբեսցէ, - գրում է Մելիտինի եպիսկոպոսը, - մի՛ պատուականութիւն երեսաց, մի՛ բազմութիւն, մի՛ թողացուսցուք զճշմարիտ հարցն կրաւնս եւ զհաւատ որով հաւատացայքն, որով ապրեցայքն, զայս հարկեցայ գրել առ սէր ձեր. զի ի գալ առ մեզ սիրելեաց մերոց երիցանց Հոնայ, Զոքայ, Աննանայ, պատմել մեզ զքարի գործսն զոր գործիցէք, զի զգրեալսն **Դիոդորի** կապեցէք, կնքեցէք: Արդ մի ոք հաւանեցուսցէ զձեզ տալ անդրէն զայնոսիկ, որք փութով եւ ախորժալով ստանան զայն ի կործանումն ստացաւղաց նոցա եւ լսաւղաց. զի եթէ Նեստորիոս վերացաւ յամենայն եկեղեցեաց, զիա՞րդ **Դիոդոր<ի>ն** գիրքն եւ **ուսումն** (յօրին. **խուսմն**) ընդունելի իցէ, որք զնոյն միտս եւ վնասակարութիւն ունին»[1]:

Դիոդորոս Թեոդորոսի ուսուցիչն է. վերջերը նրան ևս հայտարարեցին եկեղեցական հայրերը մեղապարտ նեստորականության համար: Սակայն Ակակիոսի ժամանակ կասկածի տակ էր բռնված Թեոդորոսը: Սորա մասին էին գրել հայերին, թե՛ Ակակիոսը և թե՛ Եդեսիայի եպիսկոպոս Ռաբուլասը: Այս երևում է ոչ միայն Ակակիոսի քանիցս եղած թղթից, այլ և Լիբերատուսի վկայությունից, որ բերեցինք վերև: Թեոդորոսի տեղ Դիոդորոսի հիշատակությունը արժանի է ուշադրության:

Դառնանք այժմ Կորյունին, Մաշթոցի կենսագրին: Կորյունին քաջ հայտնի է Թեոդորոս Մամուեստացու անվան շուրջը հարուցած աղմուկը: «Ցայն<մ> ժամանակի, - պատմում է Կորյունը, - բերեալ երևեցան Հայաստան աշխարհին գիրք սուտապատումք, ընդունայնախաւս աւանդութիւնք առն ուրումն Հոռոմի, որում Թէոդ<որ>իոս անուն: Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետաց եկեղեցեացն սրբոց նշանակեալ ազգ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ եւ Մաշթոցի: Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ աշխարհահալած արտաքոյ իւրեանց մերժեցին, զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ»[2]:

«Այր ոմն Հոռոմ Թէոդիոս անուն», որ իրավամբ ուղղելի է Թեոդորոս (թերևս ճնռագրի Թէոդրոս սխալ ընթերցմամբ Թէոդիոս) ոչ այլ ոք է եթե ոչ Մամուեստա հայտնի եպիսկոպոսը:

Այս մասին կասկած լինել չի կարող: Օտար աղբյուրներից հայտնի

---

[1] «Գիրք թղթոց», էջ 21:

[2] **Կորյուն**, Պատմութիւն վարուց և մահուան Սրբոյ Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, Վենետիկ, 1894, էջ 40-41:

փաստերը, որոնց վերա ծանրացանք վերև, հաստատում են Կորյունի խոսքերը, այլ և նոր լույս են սփռում հայ հեղինակի կցկտուր տեղեկության վերա: Մյուս կողմից Մաշթոցի աշակերտի և կենսագրի կարծես ակամա խոստովանությունը Թեոդորոսի մասին նշանակալից է և վկայում է հօգուտ *Μαστούβιος* -ի առաջարկածս սրբագրության:

Կորյունի երկը քննության պետք ունի, որ թողնելու է ուրիշ անգամվա, որպեսզի չշեղվենք մեր անմիջական խնդրից: Նկատենք, սակայն, որ Մաշթոցի կենսագիրը շատ հեռու է բավարարելու այն պահանջներին, որոնք կարելի է առաջադրել մի աշակերտի, որ գրում է իր ուսուցչի կյանքը: Կորյունը, որքան ճոռոմաբան, նույնքան սակավագետ է: Գուցե և ավելի գիտե, քան հայտնում է մեզ: Խոստմնալից Առաջաբանը, ուր ուզում է նավել «զհամատարած ալեօքն վարդապետական ծովուն», նման է շքեղ մուտքի, որ տանում է մի խեղճ տնակ: Ուստի և վերջաբանությունը, ուր հայտարարում է, որ «ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ» մատենագրում է, այլ «որոց մեր իսկ ականատես եղեալ», թողնում է բոլորովին հակառակ տպավորություն:

Ականատեսից շատ ավելի կարելի էր սպասել, մանավանդ, այնպիսի խնդրում, ինչպես է հայ գրի և դպրության ծագումը: Մաշթոցն ավելի քան արժանի էր, որ երախտապարտ սերունդը գիտենար նրա կյանքը և նշանավոր հաղթական մանրամասնությունները:

Դժբախտաբար, Կորյունի պատմությունից հետո էլ գրերի գյուտը մնում է գաղտնի: Մաշթոցին տանում է Կորյունը ասորական քաղաքները, Ամիդ և այնտեղից Եդեսիա, և ուրիշ բան չէ ասում նրա ճանապարհորդության և կամ նրա ելքի մասին, քան այն, որ Եդեսիայում երկար տքնությունից հետո նրան «պարգեւէր վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի սուրբ աջովն իւրով նշանագիրս հայերեն լեզուին»:

Եդեսիայից գնում է Մաշթոց Սամոսատ, որպեսզի Հռոփանոս ոմն հմուտ գրիչի օգնությամբ «զամենայն ընտրութիւնս նշանագրոցն... յօրինեալ, եւ յանկուցեալ» ի թարգմանություն դառնա:

Սամոսատից գալիս է նորեն Եդեսիա և տեղվույն եպիսկոպոսի թղթով իր նորագյուտ տառերով վերադառնում Հայաստան «ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց»: Ղազար Փարպեցու գիտելով, Վռամշապուհ գահ էր բարձրացել պարսից Շապուհ [III] թագավորի օրով (383-388). Կորյուն, աներկբա, այլ կարծիք ունի հիշյալ թագավորի ժամանակի մասին, քանի որ պարզ հայտնում է. «դպրութիւն հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն»: Հազկերտն թագավորել է 399 թվին (պարսկական տարին սկսում էր օգոստոսի 14-ին). ուրեմն, ութերորդ տարին գալիս է 406 թ. օգոստոսի - 407 թ. օգոստոսի:

Սակայն և այս քվի արժեքը ևսեմաճում է և գրեթե ոչնչաճում, երբ Կորյունը հավատացնում է, որ Մաշթոցը «երթեալ հասանէր ի կողմանս Արամի ի քաղաքս երկուց ասորոց, որոց առաջինն Եդեսիա կոչի եւ երկրորդն Ամիդ անուն, ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբիլաս անուն եւ երկրորդին Ակակիոս»:

Արդարև, արտաքին աղբյուրներից քաջահայտ է, որ Ակակիոսը Ամիդի եպիսկոպոսն էր մոտավորապես սկսած 419/ 420 թվականից: 420 թվին իրրև նույն քաղաքի եպիսկոպոս ներկա էր Եահրալահի ժողովին[1]: Թեոդոսիոս կայսեր և Վռամ թագավորի զինական բախումների ժամանակ Ակակիոսը հանդիսանում է նաև իրրև քաղաքական գործիչ և 422 թվին կայսեր կողմից Վռամի մոտ ղրկվում և թերևս որոշ դեր ունենում խաղաղության դաշինք կնքելու նույն թվին (**Սոկրատ**, Եկեղեցական պատմություն, Է, 21):

Ինչ վերաբերում է Բաբիլասին, սա ոչ այլ ոք է եթե ոչ Եդեսիայի հռչակավոր Ռաբուլ(աս) եպիսկոպոսը. և ուրեմն՝ Բաբիլաս ուղղելի է Ռաբիլաս:

Սա եպիսկոպոսական աթոռի վերա էր 412-435[2]: Եփեսոսի ժողովի մասնակից էր. սկզբում Հովհաննես պատրիարքի, այսինքն՝ նեստորականների բանակում, բայց հետո՝ 431-432 թվին անցավ Կյուրեղ Աղեքսանդրացու կողմը, ինչպես պատմեցինք վերև:

Եթե Մաշթոց Ամիդում ներկայացել է Ակակիոսին և Եդեսիայում Ռաբուլասին, այդ կարող էր լինել 420 թվից ոչ առաջ և ոչ ուշ, քան 435 թիվը: Եվ եթե իրավ այդ ճանապարհորդության հետ է կապված տառերի գյուտը, ակներև է, որ նա չէր կարող տեղի ունենալ Հազկերտի ութերորդ տարին - ժամանակական անհեթեթություն:

Դարձյալ Կորյունը պատմում է, որ Մաշթոցը ցանկանալով նոր գյուտի բարիքը տարածել և Հայաստանի հունական բաժնում, ստիպված է լինել գնալ կայսեր մոտ թույլտվություն խնդրելու: Եվ զարմանալի է, որ հետը առնում տանում է «զբազմութիւն աշակերտացն ի քաղաքն Մելիտինացւոց եւ յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոսն կոչէին. եւ գլխաւոր աշակերտացն թողոյր զայն, որում Ղեւոնդէոսն կոչէին»: Իսկ ինքը Դերջանա Գնիթ եպիսկոպոսի հետ ուղևորվում է մայրաքաղաք և «մտեալ առաջի պատուական աթոռոյն յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն եւ հայրապետին սրբոյ կաթուղիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատտիկոս կոչէին»:

[1] **Chabot**, Synodicon Orientale, p. 276. հմմտ. **Labourt**, Le Christianisme dans l'empire perse, p. 101.

[2] Ըստ «Ժամանակագրութեան Եդեսիոյ», Ռաբուլաս աթոռ է նստել 723 թվին Սելևկյան = 412 և մնկնել է 746 թ. 8 օգոստոս - 435 թ. 8 օգոստոս, «Chronique d'Edesse», Texte und Untersuchungen. Harnack, IX, 1.

Մելիտինի եպիսկոպոս Ականիոսը նույն անձն է, որի մասին խոսեցինք վերև, ջերմ կյուրեղական և անվեհեր պայքարող Եփեսոսյան վեճերի ժամանակ Անտիոքյան կուսակցության դեմ: Հիշեցինք նրա թղթերը հայերին: Այն գիտնականները, որոնք ամեն կերպ աշխատում են Կյուրեղին քարշել դեպի քաղկեդոնականություն, չեն վարանում Ականիոսին իր անհողդողդ հետևողականության համար անվանել միաբնակ:

Հները ամենայն դեպքում այլ կարծիք ունեին նրա շիտակ գործունեության մասին. և նրա ուղղամտության փայլուն վկայականն այն է, որ թե՛ հույն և թե՛ լատին եկեղեցին տոնում են նրա հիշատակը սրբերի շարքում, առաջինը՝ ապրիլի 17-ին *Τοῦ ἐν ἁγίοις πατρὸς ἡμῶν Ἀκακίου, ἀρχιεπισκόπου Μελιτηνῆς, τοῦ θαυματουργοῦ*, իսկ երկրորդը՝ մարտ ամսի 31-ին, նաև սեպտեմբերի 15-ին:

Կ. Պոլսի պատրիարք Ատտիկոսը մեռած է 10 հոկտեմբերի 425 թ.: Ասել է թե Մաշթոցը այնտեղ պետք է եղած լինի 425 թվից առաջ, և ուրեմն առաջին այցը Ամիդ և Եդեսիա ընկնում է ոչ միայն 435 թվից, այլ և 425 թվից առաջ: Ի միջոցի 420-425 տարիների Մաշթոց դառնում է Հայաստան և «հասեալ ի նոր քաղաքն յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ եւ թագաւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին»:

Այնուհետև «երկու երանելիները», Մաշթոց և Սահակ սկսում են պարապել թարգմանությամբ «ըստ յառաջագոյն սովորութեան»՝ «որոց դարձեալ դէպ լինէր, - պատմում է Կորյուն, - եղբարս երկուս յաշակերտացն յուղարկել ի կողմանս ասորոց ի քաղաքն Եդեսացւոց, զՅովսէփ եւ երկրորդն Եզնիկ յԱյրարատեան գաւառէն ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուսցեն: Իսկ թարգմանչացն հասեալ ուր առաքեցան և կատարեալ զհրամանսն եւ **առ պատուական հարսն** առաքեալ գնային ի կողմանս յունաց, ուր եւ ուսեալք եւ տեղեկացեալք թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին:

Ապա **յետ ժամանակի** ինչ ընդ մէջ անցելոյ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս դիմել իջանել ի կողմանս յունաց որ եւ **Վետոնիոս** առաջնոյն անուն էր եւ երկրորդին **Կորիւնս** եւ մատուցեալ յարէին յԵզնիկն իբրև առ ընտանեգոյն սննդակից ի Կոստանդնուպոլական քաղաքին եւ անդ միաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն զխնդիրն վճարէին: Որոց յետ այնորիկ հաստատուն աւրինակաւք աստուածատուր գրոցն եւ բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք եւ Նիկիական եւ Եփեսոսական կանոնաւք գային երեւելով յաշխարհին Հայոց եւ առաջին դնէին հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ»[1]:

[1] **Կորյուն**, էջ 33:

«Ցետ այնորիկ» և «յետ ժամանակի» անորոշ դարձումները ցույց են տալիս, որ կամ պատմիչն անգետ է և կամ չի ուզում ճշգրիտ լինել որևէ դիտավորությամբ:

Վևոնդի և Կորյունի երթը Կ. Պոլիս կայացած պիտի լինի Եփեսոսի ժողովից հետո. և ոչ շատ ուշ, քանի որ նորա որոշումները տակավին չէին հասել հայերին և Վևոնդն ու Կորյունն էին, որ բերեցին: Տեսանք, որ Լիբերատուսը հիշատակում է երկու հայի առաքումն ի Կ. Պոլիս Պրոկղ պատրիարքի մոտ, որոնց անուններն են Վևոնդեոս ու Aberium. վերջինս անունն, անշուշտ, աղավաղված է: Հայր Մ. Չամչյանն ուղղում է «Աբրահամ» առանց որևէ հիմքի[1]: Մեզ թվում է, որ Լիբերատուսի հայտնի դեսպանությունը նույնն է, ինչ որ հիշում է Կորյունը և որին մասնակցել է ինքը: Ոչ միայն ժամանակը, այլ մանավանդ Վևոնդի անունը երաշխավորում են մեր վարկածի հավանականությունը:

Վևոնդը Վարդանանց պատերազմի հռչակավոր երեցն և նահատակն է: Պատգամավորության երկրորդ անձը, որ ըստ Կորյունի, ինքն է, հետևաբար, նույնանում է Լիբերատուսի Aberium-ի հետ: Ինչպես մեկնել Կորյուն և Aberium անվանց հարաբերությունը, դժվար է գուշակել: Լիբերատուսի աղբյուրը Եփեսոսի ժողովի արձանագրություններն են և Կյուրեղի նամակները՝ հիշատակարանները, որոնք գրված են եղել հունարեն: Արդ Կորյուն գրված *καυριον* նախընթաց *και* շաղկապի ազդեցությամբ *λεοντιον και κ|αυριον* կարող էր դիպվածով կորցնել սկզբի հնչյունը, dittographie թվելով գրչին: Հնագրության տեսակետից անհնար չէ նաև. սկզբի ko կամ kau-ի իբր *αυε* բյուր ընթերցումը: Լատինն ուրեմն, կարդացել է abe փոխանակ ave<kau:

Թերևս առարկվի, որ Կորյունի ասելով նրա և Վևոնդի հանձնարարական էր հոգալ հոգևոր պիտոյից խնդիրն և «աստուածատուր գրոց հաստատուն օրինակ»-ը, մինչդեռ Լիբերատուսի հիշատակած դեսպանությունը դավանաբանական լուրջ հարցի համար էր. Կորյուն, եթե մասնակից էր, չէր կարող անգիտանալ և ուրեմն ավելի ստույգ տեղեկություն պիտի սպասեինք նրանից:

Արդյամբ իրավունք ունինք կասկածելու Կորյունի ճշմարտախոսությունը, ավելի ճիշտ ծածկամտությունը: Եզնիկ և Հովսեփ Եղեսիայից անցել էին Կ. Պոլիս և դեռ այնտեղ էին, երբ եկան Վևոնդ և Կորյուն: Ի՞նչ պետք կար նոր մարդ ղրկելու հեռավոր մայրաքաղաքը Սուրբ Գրքի ստույգ օրինակը բերելու համար: Բավական էր պատվեր ուղարկել Հովսեփին և Եզնիկին, մանավանդ որ ուրիշ նպատակ էլ չունեին սրանք, եթե ոչ

[1] Միքայել Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 527:

թարգմանական գործունեություն: Ակնհայտնի է, որ նոր դեսպանությունը մի այլ առաքելություն պիտի ունեցած լինի: Եզնիկին հարելը և «միաբանութեամբ հոգեւոր պիտոյից զխնդիրն վճարել»-ը գուցե խուլ ակնարկ է և ընդհանուր բնորոշում այն հանճարարարության, որի մասին խոսել ի լուր աշխարհի անպատեհ է համարում մեր պատմիչը:

Կորյունը հասարակ կենսագիր չէ, նա և եկեղեցական գործիչ է և իբր այդպիսին պետք է իր գրիչը համակերպեր հետեփետսյան տրամադրության: Հայոց կապերը Ասորիքի հետ այժմ պիտի խորշելի թվեր: Մենք տեսանք, որ Եփեսոսի ընդդիմադիր ուժերը կենտրոնացան Անտիոքի աթոռի շրջանում, գլուխ ունենալով պատրիարքին: Հայերը որոշակի բռնել էին Կյուրեղի կողմը: Մելիտինի եպիսկոպոս Ակակիոսը, որ երևում է և ծագումով մոտ էր հայերին, վճռական դեր ունեցավ և այս խնդրում՝ հավատ ներշնչելով իր հայրենակիցներին, նա նպաստեց մեծապես Կյուրեղյան հոսանքի հաղթանակին: Հայ եկեղեցու Եփեսոսյան դավանանքի հիմը դրվեցավ, որ այնուհետև մնաց անսասան դարերի ընթացքում: Ոչ միայն Կյուրեղին նրա անմիջական մասնակցության, այլ և Մելիտինի նշանավոր եկեղեցականին և նրա ջանքներին է պարտական Հայ եկեղեցին իր դավանաբանական խարիսխը:

Թեթևամտություն կլիներ կարծել Լիբերատուսի հետ միասին, թե անգիտություն էր պատճառը, որ հայերը դիմեցին Պրոկղին: Տարածայնությունները անխուսափելի էին նաև հայոց մոտ նույն Եփեսոսյան վեճերի շուրջը: Հայաստանի հարավային մասերը, շնորհիվ խառն ազգաբնակության, ունեին նաև ասորի եպիսկոպոսներ, այսինքն՝ հպատակվում էին Տիգրոնի եկեղեցուն: Աղճնից, Մոկաց աշխարհների կողմից հիշվում են ներկայացուցիչներ Ասորի եկեղեցու սկզբնական ժողովներին. այսպես 420 և 424 թվականների գումարումներին ներկա էին Դանիել եպիսկոպոս Աղճնյաց աշխարհից, Ատտիկոսը՝ Մոկաց և նույնիսկ Հայաստանից՝ ոմն Արտաշահր եպիսկոպոս (**Chabot**, Synodicon Orient.): Այս աթոռները վարչապես կապված էին այն եկեղեցու հետ, որ հետո նեստորականության միակ ապաստարանը դարձավ: Սրանց ազդեցությունը բավական էր, որ ուներ որոշ տրամադրություն ընդդեմ Եփեսոսի: Թվում է, որ կար և ուրիշ հանգամանք՝ նույն տրամադրությունը զորացնելու համար:

Ռաբուլաս և Ակակիոս, Լիբերատուսի ասելով, զգուշացնում էին հայ եպիսկոպոսներին, որ չընդունեն Թեոդորոսի գրվածները: Ի՞նչ գրվածների մասին է խոսքը: Կորյունը հաստատում է, որ իրավ Թեոդորոսի «գիրք առաւապատում բերեալ երեւեցան Հայաստան աշխարհի»:

Երբ Նեստորիոսի գրքերը արգելվեցան կայսերական հրամանով imperiali lege prohibitum, ըստ նույն լատին պատմիչի, նրա հետևորդները սկսեցին

տարածել Թեոդորոսի և Դիոդորոսի գրվածները, թարգմանելով ասորի, հայ և պարսիկ լեզուներով: Կայսերական օրենքը հրատարակվեցավ ի հյուպատոսության Թեոդորոսի XV և Վալենտիանոսի IV data III non. august. ըստ cod. Theod. և III calend. august. ըստ cod. Just., որ է 435 թ., 30 հուլիս. Պրոկղի թուղթը հայերին կրում է նույն տարեթիվը՝ 435 թ. (consul. Theod. XV et Val. IV): Ենթադրենք, որ պատրիարքական թուղթը նույն տարվա վերջին ամսին է գրկված: Օգոստոսից-դեկտեմբեր, քանի մի ամսվա ընթացքում անհնար էր թարգմանել Թեոդորոսի գրքերը, դրկել հայերին, որպեսզի այդ հետևանքով Ռաբուլաս և Ակակիոս գրով զգուշացնեին աղանդամիտ գրքերից, և հետո հայերը ժողով գումարեին և դիմեին Պրոկղին և պատասխան ստանային:

Պարզ է, որ խնդիրը նեստորականների նորաթարգման գրքերի մասին չէ: Պետք է ենթադրել, որ Թեոդորոսի գրվածները հայտնի էին հայերին մինչև Եփեսոսի վեճերը, և հայտնի էին այնպիսի պայմաններում, որ նպաստավոր էին նրա հեղինակության և անհանգստացուցիչ Եփեսոսյան հավատի պաշտպանների համար, որպիսիք էին Ռաբուլաս և Ակակիոս:

Արդ ով, եթե ոչ Ռաբուլաս և Ակակիոս, պետք է գիտենայինն, որ Թեոդորոս գրագրություն է ունեցել հայ լուսավորության հոր հռչակավոր Մաշթոցի հետ: Թեոդորոսը մեռած է 428 թվին և եպիսկոպոս էր 392 թվից, նա ժամանակակից է քառի բուն մտքով Մաշթոցին: Ազգային գիր և գրականություն ստեղծելու մեծ մտքով հափշտակված հայ վարդապետը, որ իր երազների համար շրջել էր Մելիտինե, Ամիդ, Եդեսիա, Սամոսատ, այցելել ծանոթացել էր և Ակակիոսին, Ռաբուլասին, մյուս Ակակիոսին, Մելիտինեի եպիսկոպոսի, այլ և Սամոսատի եպիսկոպոսին, մի խոսքով Հայաստանի սահմանակից նշանավոր հոգևոր գործիչներին, նա չէր կարող զանց առնել նույն շրջանի ամենից հեղինակավոր և գիտնական եկեղեցական հոր Թեոդորոս Մամուեստացուն: Իր ճոխ գիտության համար նա արժանացել էր Polyhistor = Բազմավեպ հնչման: Անակնկալելի չէ թնավ, որ Թեոդորոսի ծանոթ հայազգ եպիսկոպոս Մաստուրիոսը լինի Մաշթոցը:

Մի բան, սակայն, վրիպելու չէ ուշադրությունից: Թեոդորոսը գրել է Մաստուրիոսին իր քահանայության ժամանակ. *Θεοδώρου πρεσβυτέρου* է ասված խորագրում: Բարեբախտաբար Թեոդորոսի կյանքը բավականին ծանոթ է: Թեոդորետոսի ասելով («Եկեղեցական պատմություն», Ե, 39), Թեոդորոս մեռել է 78 տարեկան հասակում, և եպիսկոպոս էր 36 տարի, այն է սկսած 392 թվից: Իսկ քահանա է ձեռնադրված 383 թվին. 392 թվին Դիոդորոսի աջակցությամբ ստանում է Կիլիկիայի Մամուեստա քաղաքի եպիսկոպոսական աթոռը: Այսպիսով նրա երեցությունը ընկնում է 383-392 տարեշրջանը: Հետևապես այս տասնամյա միջոցին պետք է գրած լինի Մաշթոցին:

Թեոդորոսի աշակերտն էր Ռուփին(ոս) անունով քահանա, որ 399 թվին Հռոմ մեկնեց և այստեղ ծանոթանալով Պելագիոս քահանայինն, նորա միջոցով պելագիական կոչված վարդապետության իսկական հիմնադիրն եղավ: Պելագիականները շեշտում էին իրենց հոգևոր կապը Թեոդորոսի հետ:

Մեզ թվում է, որ այս Ռուփինոսը ուրիշ անձն չէ, եթե ոչ այն գրիչ Հռուփինոսը, որը հիշվում է գրերի գյուտի պատմության մեջ: Եթե Թեոդորոսի աշակերտը իրոև սոսկ գրիչ մասնակցում է գյուտին, հարկավ, նրա ուսուցիչն ավելի շոշափելի նպաստ պիտի բերած լիներ նույն խնդրին:

Թեոդորոսի քահանայությունն անցել է Անտիոքում, իր ծննդավայրում: Նրա դասընկերն էր և մտերիմը հռչակավոր Հովհան Ոսկեբերանը, որ քահանա էր միևնույն Անտիոքում: Խորենացու հիշած գանգատը հույների կողմից, թե ինչու հայերը Ոսկեբերանին չեն դիմել, գուցե և ղողանջ է այն իրողության, որ Թեոդորոսի և Ոսկեբերանի շրջանումն է, որ Մաշթոց հաջողել է հայ գրերի գյուտը և հետագայում, ոմանք Թեոդորոսին էին վերագրում, ուրիշները՝ Ոսկեբերանին այդ մեծ շնորհը:

Սրանով ընդգծվում է գրերի գյուտի համար որոշ և դրական տարեթիվ՝ 383-392 տարիների տասնամյա միջոցը: Տեղը չէ կանգ առնել մեր այս ենթադրության վերա և նրա հավանականության հիմերը մեջ բերել: Հայ գրերի ծագումը մութ է և ոչ ոք հանկարծակի չպիտի գա մեր ենթադրության հանդեպ (6):

Մեր անմիջական նպատակի համար բավական է նկատել, որ Թեոդորոսի սկզբնական ծանոթությունը Մաշթոցի հետ կարող էր տեղի ունեցած լինել վերջնիս տքուն որոնումների ճանապարհի վերա:

Թեոդորոսը հայտնի էր իր բեղմնավոր գրչով: Մի շարք գրվածներ, ուղղված են եղել հերձվածների դեմ. Որոգինես, Արիոս, Եվնոմիոս, Մակեդոն, Ապողինար, հրեա և հեթանոս ուսմունքները բոլորն էլ առիթ են տվել նրան բանակռվի ասպարեզ իջնելու:

Այս տեսակ գրութեանց կարգին է պատկանում և այն, որ ուղղված է եղել Մաստուրիոս հայ քորեպիսկոպոսին: Երկու ճառը նվիրված է եղել հավատո խնդիրներին *τὰ περὶ τῆς εὐσεβοῦς πίστεως*: Նեստորական ոգի է շնչելիս եղել մանավանդ վերջին ճառը, ինչպես շեշտում է Փոտը:

Նույն Փոտը ծանոթ է մի ուրիշ գրության, ուր Թեոդորոսը *τὸ Νεστορίου δόγμα εἰ καὶ πρὸ Νεστορίου ὑπῆρχεν ὑπερευγόμενος*, այսինքն՝ «Նեստորիոսի դավանանքն էր ործկում, թեև նրանից առաջ էր ապրել»[1]:

Եկեղեցու հայրերը իրավունք ունեին կասկածելու, որ հայերը կարող էին վարակված լինել Թեոդոր[յան]-Նեստորյան խմորով:

Թեոդորոսը լավ ծանոթ էր Ռաբուլասին: Սկզբում նիզակակից էին:

[1] **Photii Bib.**, 38. Θεοδώρου Ἀντιοχέως «ἑρμηνεία τῆς κτίσεως» P. G., t. 102, col. 70.

Մամուեստայի եպիսկոպոսը թեև մեռած, մասնակից էր Եփեսոսի վեճերին: Ռաբուլասը լքեց քեռդորականների դասը 431 թվի ձմեռը և անցավ հակառակ բանակը: Նա էր, որ մերկացրեց Թեոդորոսի այսպես ասած նեստորականությունը:

Բնական էր սպասել, որ Ռաբուլասը պետք է հորդորեր և հայերին խորշել Թեոդորոսից և նրա գրքերից: Անտարակույս գիտեր, որ անգոսնելի այրը, որ տակավին երեկ խոշոր դեմք էր, որոշ հռչակ և հեղինակություն ունի հայերի մոտ, Մաշթոցի հետ ունեցած գրությամբ և նրա դեռ թարմ հիշողությամբ:

Հաջորդ անցքերը ցույց տվին, որ իրոք դյուրին չէր վարկաբեկ անել Թեոդորոսին: Հայ եպիսկոպոսները փոխանակ խոնարհելու տիեզերական ժողովի որոշման առաջ, հարկավոր են համարում հավաքական խորհրդածությամբ մարդ ուղարկել Կ. Պոլիս և տեղը իրազեկ լինել ճշմարտության:

Պրոկղ իր պատասխանում քաշվում է տալ Թեոդորոսի անունը. նրա փափկանկատ լռությունը, որ շեշտում է հարցի ցավոտ կողմը, հարկավ կրքերը մեղմացնելու համար էր: Հայ տարածայնությանց և վեճերի վախճանը մոտեն հայտնի չէ: Գիտենք միայն, շնորհիվ նույն Լիբերատուսի, որ 2 թե 3 հայ վարդապետ կատաղի քարոզ սկսեցին ընդդեմ Թեոդորոսի: Նրանք շրջում էին ամենուրեք Թեոդորոսի գրքերից քաղվածներ ձեռքերնին և պահանջում էին դատապարտություն: Լիբերատուսը նրանց անվանում է Ապողինարի հետևորդներ, սակայն, լատին եկեղեցականի բերանում և ե ժողովից հետո, այդ համազոր է ջերմ կյուրեղականի: Մոլեռանդ հակաքեռդորական վարդապետները, բացահայտ է, որ այն հոսանքի ներկայացուցիչներն են, որ հաղթող է հանդիսացել Հայաստանում:

Ոչ միայն Պրոկղի, այլ և Վասիլ սարկավագի թուղթն ընդդեմ Թեոդորոսի, ուղղված հայերին, աննշանակ չեն անցել հայ վեճերի հետևանքի համար:

Եփեսոսյան դավանանքը հաղթանակեց: Այս առթիվ հայերը վերստին պատգամավորություն են ուղարկում մայրաքաղաք առանձին հանձնարարականով Պրոկղ պատրիարքին, ինչպես և գրում են Աղեքսանդրիո Կյուրեղ եպիսկոպոսին: Լիբերատուսի թերի հաղորդագրությունն այս անցքերի մասին լրացնում է մի կարևոր հիշատակարան, որ դիպվածով պահվել է ե տիեզերական ժողովի արձանագրությունների մեջ:

Այս ժողովի հինգերորդ նիստում կարդում են Կյուրեղի և Թեոդորոսի քաղվածներին կից և մի հատված՝ «Ex libellis porrectis a presbyteris et diaconis qui transmissi sunt ab episcopis et clericis et monachis et caeteris Magnae Armeniae et Persidis et aliis gentibus»[1]:

[1] Mansi, IX, col. 240.

Հանճնարարական նամակի հետ պատգամավորությունն ուներ impia capitula Թեոդորոսի, որ ներկայացրին Պրոկղին, ինչպես պատմվում է նույն հիշատակարանում՝ «porrecta sunt autem et impia capitula ex Theodori codicibus sanctae memoriae Proclo ab Armeniis»: Խոսքն այն քաղվածի մասին է, որը հիշում է և Լիբերատուսը excerpta capitula կոչելով:

Migne արտատպելով հիշյալ վավերագրերը Mansi-ի IX հատորից զետեղել է Պրոկղի «Առ Հայս» թղթից առաջ[1] ինչպես երևում է շփոթելով երկրորդ դեսպանության թուղթը առաջին դեսպանության թղթի հետ: Տեսանք, որ Վևոնդի և Արերիում-Կորյունի դեսպանությունը ևս ուներ libellum պատրիարք Պրոկղին ներկայացնելու: Այդ թուղթը մեզ չի հասել: Ե տիեզերական ժողովի արձանագրությունների մեջ պահված հիշատակարանը պատկանում է երկրորդ դեսպանության: Արդարև Լիբերատուսի մի կոչումը, որ գտնում ենք այս հիշատակարանում, հաստատում է մեր կարծիքը, որ կարևոր է անցքերի հաջորդականությունը ըմբռնելու համար:

Լիբերատուս վկայում է, որ 2-3 հայ վարդապետները շրջելով ամբողջ Արևելքը պահանջում էին, որ նեստորամիտ հայրերը, նման Թեոդորոսի և մյուսների, նզովվին, և բերում է նրանց խոսքը:

«Quia si Nestorius iuste damnatus est, damnentur et ista, dicebant, cum suis auctoribus». Այս կոչումը նայում է ex libellis porrectis հատվածի հետևյալ տողերին՝

«Et sicut domino placuit condemnari manifeste et nominatim in Epheso ab universali Synodo sacrilegium Nestorium, **si per vos etiam antea condemnatum sine nomine**, sacrilegiorem in varia impietate Theodorum nominatim condemnari et eos qui secundum impiissimam eius expositionem hactenus in Syria et Cilicia sapiant et docent».

Լիբերատուսը, կրկնում ենք, ի նկատի ունի այս տողերը: Ստորագծած բառերը, որ մի պարզ ակնարկ է Պրոկղի հայոց գրած դավաբանական թղթին, ուր հերքվում է Թեոդորոսյան տեսությունները առանց անունը տալու, ինքն ըստ ինքյան բավական են հաստատելու, որ հիշյալ թուղթը ծագում է երկրորդ դեսպանությունից: Կյուրեղ-Թեոդորոսյան վեճերը վերջացնելուց հետո հայերը լայն քարոզչություն են սկսում Եփեսոսյան դավանանքի օգտին, և Լիբերատուսը չի չափազանցնում, երբ ասում է, որ հայ վարդապետները աղմկում են ամբողջ Արևելքը: Նախքան Կ. Պոլիս գնալը հայերը դիմել էին անձամբ, թե գրով Աղեքսանդրիո Կյուրեղ եպիսկոպոսին, ինչպես վկայում են իրենք՝

«Sicut in nostris contra Theodorum et scripta eius libellis ad Alexandrinum episcopum Cyrillum diximus et in his quae ad vestram dicimus beatitudinem».

---

[1] **Migne**, P. G., 65, col. 855.

Հայերը, ինչպես և Եփեսոսի ժողովի մյուս կողմնակիցներն, իրենց հակաքեողորյան քարոզով այնքան հեռու էին գնացել, որ նույնիսկ նրանց պարագլուխը, Կյուրեղ եպիսկոպոսը ստիպված եղավ սաստել նրանց և ծայրահեղության առաջն առնել: Անտիոքի Հովհաննես պատրիարքին ուղղած նամակում բացարձակ ընդդիմանում է, որ Թեոդորոսը և կամ որևէ ուրիշը, որ մեռած է, անեծքի և կամ բանադրանքի առարկա դառնա («neque autem de Theodoro, neque de alio quoquam qui iam defuncti sunt, scripsi tibi aut ut anathematizetur aut ut abdicetur»)[1]:

Հետեփեսոսյան իրադարձումներին հայերի այնքան սերտ գործակցությունն ապացուցանում է, որ իրենց հայրենի շրջանում խնդիրն անցել է կուսակցական պայքարի բովից: Պետք է կարծել, որ ընդդիմադիր ուժերն աննշան չեն եղել և հաղթանակ դյուրությամբ չէ տված: Այլապես դժվար թե կարիք զգացվեր դիմել օտար եկեղեցիներին և միահամուռ գործունեությամբ տապալել ընդմիշտ ոսոխին և ամրապնդել հաղթանակը:

Լիբերատուսի ցուցումը, որ քարոզիչ վարդապետները «երկու թե երեք» (duo vel tres) հոգի էին՝ թելադրում է մի միտք, արդյոք և այս անգամ դեսպանությունը բաղկացած չէր նույն «երկու թե երեք» անձերից, որի մասին խոսում է Կորյունը: Տեսանք Կ. Պոլիս ուղարկվեցան Ղևոնդ և ինքը՝ Կորյունը և սրանց այնտեղ հարեց նաև Եզնիկը, որ Եդեսիայից մեկնել էր Կ. Պոլիս Հովսեփի ընկերակցությամբ: Ուշագրավ է, որ Ղևոնդն ու Կորյունը «մատուցեալ յարէին յԵզնիկն», պատմիչը չէ հիշում այստեղ Հովսեփին:

Թվում է, որ երկուսը պատվեր ունեին գործել Եզնիկի հետ: Չի կարելի չհամեմատել այս երկու- երեք հոգուն Լիբերատուսի 2 կամ 3 անձերի հետ, որ այնքան ճշտորեն է որոշում դեսպանության կազմը:

Եփեսոսյան անցուդարձի վերա կանգ առանք ոչ միայն այն պատճառով, որ մի նոր և բանկագին էջ է բացվում Հայ եկեղեցու պատմության մեջ նրա դավանաբանական ավանդի ծագման տեսակետից, այլ և որ այդ անցուդարձը նոր լույս է ցողում Մաշթոցի և նրա կյանքի վերա: 420-435 թվերին Մաշթոցի այցը Ամիդ, Սամոսատ և Մելիտինե որևէ աղերս չունեին և չեն կարող ունենալ գրերի գյուտի հետ: Մանկությունից հելլեն դպրության վարժ, նա պետք չուներ նաև կրթության: Եվ ոչ բարգմանչական գործը գոնե նրա համար առանձին ճանապարհորդության շարժառիթ կարող է նկատվել: Եթե գրերի առթիվ նա այցելել է հիշյալ քաղաքները և մանավանդ Եդեսիա, ժամանակակից լուսավորության կենտրոնը, հայտնի իր աստվածաբանական բարձր դպրոցով, համենայն դեպս այցը եղել է 420 թվականից շատ առաջ, 406 թ. գրերը ադեն պատրաստ էին և նրանց հոգսը

[1] Migne, P. G., 65, col. 879.

վերջացած: Հավանական է, որ գրի որոնումների շրջանին նա ծանոթացել է ոչ միայն Ռաբուլասի, այլ և ավելի հոչակավոր Թեոդորոս Մամուեստացու հետ: Աննճնական ծանոթության հետևանքով է գրված և Թեոդորոսի մեզ հետաքրքրող գործը, Մաշթոցի, *Մատենագրիչ*-ի հասցեին: Գրությունը տեղի ունեցած պիտի լինի մինչև 406 թիվը, հավանորեն, Թեոդորոսի քահանայության առեննով, ինչպես հիշեցինք:

Հավանական է, որ Մաշթոցի այցը ասորի եպիսկոպոսներին, որի մասին պատմում է Կորյուն, կապ ուներ հավատո խնդրի հետ և մոտ է 430 թվականներին: Այդի է ընկնում մի հանգամանք: Եդեսիայից Մաշթոց իջնում է Սամոսատ, «յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցւոյն մեծարեալ լինէր»: Զարմանալի է, որ եպիսկոպոսի անունը չի տալիս, մինչդեռ հիշում է Ամիդի, Եդեսիայի և Մելիտինեի եպիսկոպոսներին հանվանե:

Սամոսատի գրչի անունը, որ է Հռոփանոս, նմանապես արձանագրել է Կորյուն: Սամոսատի եպիսկոպոսական աթոռի վերա նստած էր այն ժամանակ Անդրեաս: Սա խառն էր Եփեսոսյան աղմուկներին և գտնվում էր Հովհաննես Անտիոքացու բանակում: Աննշան ոմն չէր նեստորականների շարքերում: Համարվում էր թշնամի Ռաբուլասին, վերջինիս դասալքումից հետո. և պատմում ես, որ հանդիմանական նամակ է գրել Ռաբուլասին նրա՝ Թեոդորետոսի, կանոնավոր Նեստորականի և Կյուրեղի քաջանուն ախոյանի դեմ ելնելու համար:

Արդյոք դավանաբանական նկատումները չե՞ն, որ ծածկել են Սամոսատի եպիսկոպոսի անունը: Ռաբուլաս և Ակակիոս Կյուրեղյան հավատի սյուներ էին, և որքան ցանկալի է սրանց ծանոթությունը, նույնքան խորշելի պիտի համարվեր Անդրեաս Սամոսացին, իբր նեստորամիտ հերձվածող: Հնարավոր է, ուրեմն, որ Անդրեասի անունը կամավ է թողած:

Կորյունը գրել է Մաշթոցի վարքը նրա մահից հետո, որ դիպավ Հազկերտ [II-ի] ըստ Ղազար Փարպեցու՝ երկրորդ տարին, մեհեկանի 13, որ է 439 թ. մարտի 17 կամ 440 թ. մարտի 18: Գրել է Հովսեփի պատվերով, որ նահատակվեց նույն Հազկերտի 16-րդ տարին, հրոտից 25, այն է 454 թ., հուլիս 25: Եվ որովհետև Կորյունը չի հիշվում V դարի շարժումներին, հավանական է, որ մեռած է մինչև Արտաշատի ժողովը, Հազկերտի երկոտասաներորդ տարին՝ 439-440 թթ.: Սորանից հիմնում է, որ Մաշթոցի կյանքը գրած պիտի լինի 440-450 տասնամյակի ընթացքում:

Սակայն չի կարելի անուշադիր թողնել, որ Կորյուն Սյունյաց Վասակի իշխանին գովելով, մեծարում է նրան այնպիսի մակդիրով, որ կասկածանքի դուռ է բաց անում: Սիսական Վասակը ոչ միայն «խորհրդական եւ հանճարեղ» այլ և «յառաջիմաց շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ»: Արդյոք ակնարկ չէ հետագա եղելությունների և Վասակի վարմունքի վրա:

Պետք չէ՞ ենթադրել, որ Կորյուն համախոհ է եղել վատաբախտ մարզպանին և նրա կուսակցության և ուստի անհաղորդ է մնացել շարժման: Վասակին հառաջիմացության շնորհ վերագրելով հասկացնել է տալիս, որ ապստամբության ծանր հետևանքները հեռատեսորեն կշռելով, հակառակ է հանդիսացել շարժման: Այս դեպքում Կորյունի նկատառությունը կհնչի իբր խուլ ղողանջ արդարության ձայնի, այն ձայնին, որ այնպես խեղդել են Մամիկոնյան պատմիչները՝ Եղիշե և Ղազար:

Կորյունը գիտե Վահան Ամատունուն հազարապետի պաշտոնում, գիտե և նրա մահը. «յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր»: Եղիշեն պատմում է, ի թիվս այն անցքերի, որ տեղի ունեցան Հազկերտի 12-րդ տարին նաև հազարապետի պաշտոնանկ լինելը. «հանեալ ի գործոյն փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն»: Եթե խոսքը նույն Վահանի մասին է, նշանակում է, նրա մահը պատահել է 439-440 թթ. հետո: Հետևաբար և Կորյունի գործը ընկնում է նույն թվից հետո: Այլև Կորյունը հիշում է հայրապետական աթոռի տեղապահներ, Սահակի և Մաշթոցի վախճանից հետո, Հովսեփին «եւ այլ աշակերտ Ցովնան անուն, այր իսկ սուրբ վարդապետասէր եւ ճշմարտապաշտաւմ»: Սա շատ չարչարանքների է ենթարկվում Տիգրոն քաղաքում հավատի համար և արժանանում է խոստովանող կոչման, և հետո «ի նոյն վերակացութիւն դառնայր յերկիրն Հայոց»:

Ո՞վ է այս Հովհանը, որ անծանոթ է Եղիշեին և Ղազարին: Հայտնի է Աբրահամ Խոստովանողը, որ տասներկու տարվո գերությունից հետո, ազատ արձակվեցավ աքսորից: Չենք ուզում թեական մեկնությունների մեջ մտնել[1]: Ով որ էլ լինի անծանոթ Հովնանը, նրա դարձը չի կարելի առաջ դնել քան Աբրահամի և նախարարների արձակումը Պերոզի հինգերորդ տարին, այսինքն՝ 462 թ.: Կան նշաններ, ուրեմն, որ Կորյունը քևակոխել է V դարի երկրորդ կեսը:

Ռաբուլասի մահից հետո Եդեսիայում զորանում է նեստորականների ազդեցությունը, նրա հաջորդ Իբասի օրով: Սորա մահը 457 թվին առաջ է բերում զորեղ ընդդիմություն և բոլոր նեստորական վարդապետները հալածվում են Եդեսիայից՝ Պարսից հողը: Վերջնական հարվածը դրվում է նրանց Եդեսիայի հռչակավոր, պարսկական կոչված դպրոցի, նեստորականության այդ դղյակի փակմամբ 489 թվին: Որքան թուլանում են հունական հողերում Նեստորիոսի կողմնակիցները, այնքան զորանում են նրանք պարսից իշխանության տակ, վայելելով մանավանդ Պերոզ թագավորի հովանավորությունը (457-484):

[1] Այս հարցի քննության համար հիշելու է, որ «Նախադրութիւն ընդդեմ Եղիշեի խաչին» անվավեր գրության համաձայն, Վարդանա պատերազմից հետո հայրապետությունը թաժանվում է երկուսի. «Ցոհան Մանդակունի ի պարսից կողմն կաթողիկոս և Գիւտ ի կողմանս յունաց»:

Եռանդուն Բարձուման կարողանում է ներշնչել Պերոզին այն միտքը, որ քրիստոնյաները երբեք սրտով չեն կպչի պարսից իշխանության և այք չեն դարձնի կայսրերից, մինչև որ դավանանքի խրամատը չանջրպետե նրանց: Պետք է, ուրեմն առաջ տանել, խրախուսել նեստորականությունը այլադավան քրիստոնյաներին բռնի ուժով պարտավորել հարել նեստորական, իբր պետական եկեղեցու:

Պերոզի հաջորդը Վաղարշ (484-488), ինչպես Կավատ սկզբներում (488-496) բարեկամ լինելով կայսրերին դադարեցրին հալածանքը ոչ նեստորական քրիստոնյաների: Սրանց համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցան մանավանդ Զենոն և Անաստասիոս հակաքաղկեդոնական կայսրերի օրով:

Դժբախտաբար, V դարի երկրորդ կեսի դավանաբանական ելևէջների համապատասխան արձագանքը հայ եկեղեցական կյանքում թվում է թե անհետ կորած է: Պետական իշխանության ճնշման տակ թերևս նեստորականությունն ևս աջող օրեր ունեցած լինի: Բաբկեն կաթողիկոսին ապավինող ասորի եկեղեցականները հավատացնում էին, որ նեստորականները լուրեր են տարածում, թե հայերը նրանց հավատակից են. «Եւ այդպէս ասեն, թէ հռոմք, եւ հայք եւ վիրք և աղուանք զնոյն կանոն եւ զհաւատ ունին զոր մեքս ունիմք»[1]:

Այս խոսքերին, որ քարոզչական նպատակով չափազանցրած են, հարկավ հավատ չի կարելի ընծայել: Բայց և չի կարելի ժխտել, որ ճշմարտության նշույլ կա այն մտքով, որ մասնակի կղզիներ են եղել: Հիրավի, ոչ միայն 424 թվի, այլ և 486 թվի նեստորական ժողովներին ներկա եկեղեցականների թվում պատահում են ներկայացուցիչներ և Հայաստանից. առաջնում՝ ոմն Արտաշահր եպիսկոպոս, երկրորդում՝ Մովսես եպիսկոպոս (Synodicon orientale): Նեստորականների ներկայությունը, քարոզը, մրցումն ու նվաճումներն առավել ևս պիտի լարեին տեղական ուժերը նոցա ընդդիմության և ամրակռեին այն տրամադրությունը, որ անցել էր Եփեսոսյան մաքառումների հնոցով:

Կորյունը հավատարիմ է այդ տրամադրության: Նրա գործը հակասորական կնիք, նեստորական խորշանք ունի: Ասորական նպաստը գրերի գյուտում դիտմամբ սքողված է նրա գրչի տակ: Սուրբ Գրքի թարգմանությունը համարում է հունական բնագրից թե՛ նախնականը և թե՛ սրբագրածը Եզնիկի բերած հույն վավեր օրինակի վերա:

Ինչպես և մեկնելու լինենք Կորյունի դիրքը և հարակից խնդիրները, մի բան է հաստատում, որ Հայ եկեղեցու դավանաբանության կյուրեղյան

[1] «Գիրք թղթոց», էջ 46:

խաչիսխը ավանդ է Եփեսոսի ժողովից: Մաշթոց և նրա աշակերտները Ղևոնդ և թեարար Կորյուն երևան գալով ընդհանուր եկեղեցական ասպարիզում անմիջական մասնակցություն են ունեցել ճշմարտության որոնումներին և հիմնարկել են հայ դավանաբանական շենքը: Սերունդների միշտ արթուն զգացումը, միանգամ ստացած ժառանգությունը պահելու անդրդվելի կորովը բացատրելու է և՛ նորանով, որ նա սրբագործված է եղել հայ լուսավորության ամոլների սրբազան աջով:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մշակույթն իր բարձր իմաստով սկսվում է իրապես գրի և գրակա-նության շրջանից: Հայ գրի ծագումը հայտնի է և հայտնի թերևս, ավելի լայն չափով, քան հարևան ազգերի գրի պատմությունը, բայց և այնպես խոստովանելու է, որ շատ քիչ տակավին մութ է և շփոթ:

Անորոշ է նախ և առաջ տառերի գյուտի իսկական տարին: Կարիք չկա տնտղելու հարցի պատմականը և թվելու միառմի բանասերների կար-ծիքներն ու մեկնությունները: Ավելի շահեկան է քննել այն հիմնական աղբյուրը, որից քխում են եղած ենթադրությունները:

Հիմնական և միակ աղբյուրն են այն ժամանակագրական տեղեկությու-նները, որոնք գտնում ենք Կորյունի երկի վերջում: Ավելորդ չի լինի բերել ամբողջական այդ հատվածը.

«Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն (այսինքն՝ Մաշտոցի) ամք քառասուն եւ հինգ, եւ ի դպրութենէն Հայոց մինչեւ ցվախճան Սրբոյն ամք երեսուն եւ հինգ, որք համարին այսպէս. թագաւորեալ Կրմանայ Պարսից արքայի ամս վեց, եւ Ցազկերտի ամս քսան եւ մի, եւ յառաջնումն ամի երկրորդ Ցազկերտի որդւոյ Վռամայ վախճանեցաւ երանելին:

Եւ արդ առնու համար սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն Կրման արքայի մինչեւ յառաջին ամէն երկրորդ Ցազկերտի որդւոյ Վռամայ, եւ դպրութեանն Հայոց յութերորդ ամէ Ցազկերտի առեալ սկիզբն»[1]:

Հաշիվը պարզ է: Մաշտոցի կրոնավորության տարուց մինչև իր մահը հաշվում է 45 տարի և տառերի գյուտից մինչև դարձյալ նրա մահը՝ 35 տարի: Այլ և 45 տարին ճգվում է Կրմանի չորրորդ տարուց մինչև Հազկերտ II-ի առաջին տարին, իսկ 35 տարին բռնում է Հազկերտ I-ի ութերորդ տարուց մինչև Հազկերտ II-ի առաջին տարին:

Դժբախտաբար, պարսից թագավորների գահակալության տարիները հայտնի չեն ցանկալի ստուգությամբ, այլ միայն մերձավոր: Հազկերտ II-ի առաջին տարին համարվում է 438-439 թթ., հավանորեն սկսած պարս-կական նոր տարուց մինչև նոր տարի ըստ շարժական տոմարի: Մաշթոց մեռել է մեհեկանի 13-ին, որ ընկնում է 439 թվի մարտ ամսին: Եթե Մաշթոց կրոնավորել է 45 տարի առաջ իր մահվանից, ասել է, թե կրոնավորել է

[1] Կորյուն, Վենետիկ, 1894, էջ 48:

(438/439-45) = 393/394 թթ.: Տառերի գյուտը 35 տարի առաջ՝ կգա (438/439-35) = 403/404 թ.: Կարելի է հավանական համարել 393 և 403 թվերը, քանի որ հետևյալ 394 և 404 տարիներ հաշվում են մինչև մարտ:

Կորյունի մյուս վկայությամբ 393 թիվը համապատասխանում է Վռամ արքայի չորրորդ տարուն: Ասել է, թե Կրմանի առաջին տարին 389 թիվն է: Կորյուն, հետևապես, մի տարի ուշ է դնում նրա գահակալությունը:

Կրոնավորության 45 տարիները ընդգրկում են Դիսմոնի վեց տարին և Հազկերտի 21, այլ և Վռամի 18, որ պակասում է բնագրում: Նախ Դիսմոնայ անունը ուղղելու է Կրմանայ, որ սխալ ընթերցման արդյունք է: Քանասերներից շատերը սխալ են ըմբռնում Կորյունի բնագիրը, կարծելով, որ նա Կրմանին տալիս է 6 տարի թագավորություն: Մինչդեռ վեց տարին միայն այն տարիներն են, որ մտնում են կրոնավորության շրջանը: Իսկ որովհետև վերջինս սկսվում է նրա թագավորության չորրորդ տարուց, ասել է, թե Կորյուն համարում է (4-6) 10 տարի թագավորություն. իրականին Վռամ թագավորել է 11 տարի: Այս սխալն է պատճառը, որ Կորյուն Վռամի չորրորդ տարին հաշվում է 393 թ., այն ինչ ուղիղն է 392 թ.:

Բացի Կրման-Դիսմոնի 6 տարուց, կրոնավորության շրջանն ընդգրկում է Հազկերտի 21 տարին և Վռամի 18, որովհետև ստացվում է (6+21+18=) 45 տարի: Կրկնում ենք, Կորյունի բնագրում բաց է թողած Վռամի անունը և տարիները: Վռամ գահակալել է Հազկերտ I-ից հետո՝ 420-438 թթ. և թողել է գահը Հազկերտ II-ին:

Կորյուն, այսպիսով, մի տարի պակաս է հաշվվում: Եթե ստույգ է, որ Մաշթոց կրոնավորել է Կրմանի չորրորդ տարին, ապա կրոնավորության տևողությունը պետք է համարել 46 տարի և ոչ 45՝ 392-438 թթ.:

Իսկ եթե ավելի արժանահավատ է 45 թիվը, ապա կրոնավորության սկիզբը դնելու է Կրմանի հինգերորդ տարին և ոչ չորրորդ:

Ինչ վերաբերում է տառերի գյուտի տարեթվին, երկու տեղեկությունները միմյանց չեն բռնում: Եթե իրավ է, որ գյուտը տեղի է ունեցել 35 տարի նախքան Մաշթոցի մահը, այսինքն՝ 403 թվին, ապա սխալ է մյուս վկայությունը, թե՛ գյուտը դիպավ Հազկերտի ութերորդ տարուն: Հազկերտի գահակալության առաջին տարին և 400 թվականը, որով ութերորդ տարին կգա 407 թվականին և ոչ սպասելի 403 թվին: Հակասությունը հարթելու համար մի քանի բանասերներ այն միտքն են հայտնել, թե Կորյուն Հազկերտի թագավորությունը սկսված է համարում 396 թվից և որպես թե հույն մատենագիր Ագաթիաս համերաշխ է այս կետում Կորյունի հետ[1]: Կամայական ենթադրություն է, և Ագաթիասի կոչումը անհիմն է: Ուրիշ մի բանասեր

[1] **Է. Դյուլորիե և Մա. Մալխասյանց,** տե՛ս Ասողիկի ծանոթագրությունը (Ասողիկ, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 339, ծան. 65):

վերջերս աշխատել է կնճիռը քավել, կարծելով, որ Կորյուն Կրմանին տալիս է 6 տարի քագավորություն մինչև 396 թիվը, և մնացած տարիները հաշվում է որպես թե Հազկերտի վրա[1]: Այս կարծիքը հիմնված է ընագրի թյուր հասկացողության վրա: Տեսանք, որ Կորյուն Կրմանին հատկացնում է ոչ թե վեց տարի, ինչպես անփորձ ընթերցողը կարող է կարծել, այլ 4-6 տարի: Դժվար է հաշտեցնել անհաշտելին, այլապես քան ժխտելով երկու վկայություններից մեկն ու մեկը: Հավանորեն «ութերորդ» տարին սխալ ընթերցումն է:

2

Այսպես Մաշթոցի քահանայությունը վերաբերում է 392 թ., իսկ տառերի գյուտը 403 թ., համաձայն այն ժամանակագրական հատվածի շիտակ հասկացողության, որ զետեղված է Կորյունի երկի վերջը:

Արդյոք կարելի՞ է հավատ ընծայել այս թվերին. ահա մի կարևոր հարց, որ ներկա հոդվածի բուն նյութն է:

Արդեն առիթ եմ ունեցել քննելու այն թանկագին տեղեկությունը, որ պահել է մեզ Փոտ հռչակավոր պատրիարքը: Իր «Գրադարանում» [ևս] հիշում է հակիրճ բովանդակությունն այն թղթի, որ ուղղված է եղել Թեոդորոս Մոպսուեստացու կողմից մի հայ քորեպիսկոպոսի, որի անունը կարդացվում է Մաստուբիոս: Այս խորհ անունը սրբագրել ենք Մաստոց, ընդունելով, որ խոսքը մեր Մաշթոցի մասին է: Ինչպես կարելի է տեսնել թղթի վերնագրից, Թեոդորոս Մոպսուեստացին գրել է այն ժամանակ, երբ ինքը տակավին ե-րեց էր, և Մաշթոցը՝ քորեպիսկոպոս[2]:

Այդ Թեոդորոսի քահանայությունն ընկնում է 383-392 տարիները: Այս միջոցին է գրված թուղթը, ուր Մաշթոցն քորեպիսկոպոս է կոչվում: Հետևապես Կորյունի հատվածի վկայությունը, թե Մաշթոց կրոնավորեց 392 թ. չի արդարանում:

Թեոդորոսի թուղթը մի հայտնություն է, որ նոր լույս է սփռում Մաշթոցի կյանքի վերա, խախտելով թերևս մեր հավատը դեպի այն, ինչ որ ասում է ազգային ավանդությունը Կորյունի բերանով:

Մեզ թվում է, որ մեզ զբաղեցնող ժամանակագրական կտորը Կորյունի երկի հարազատ մասը չի կազմում, այլ հետո է ավելացրած (1): Հազկերտը կոչվում է այդ հատվածում Երկրորդ, որ մի ամբաստանություն է հատվածի դեմ: Կորյուն չէր կարող գործ ածել նման արտահայտություն, որովհետև V դարում բնավ ընդունված չէր որակել նույնանուն թագավորներին դասական

[1] **Կորյուն**, Վարք Մաշթոցի ուղղեալ և լուսաբանեալ ի Գառնիկ Ֆնտգլեանէ, Երուսաղեմ, 1930՝ Գ. Ֆնտգլյանի մեկնությունները, էջ 75 և հտ.:

[2] Մանրամասնությունը տե՛ս Ն. **Ադոնց**, Մաշթոց և իր աշակերտները ըստ օտար աղբյուրների, Վիեննա, 1925:

թվականներով, անվանելով՝ առաջին, երկրորդ և այլն: Այս սովորությունը VII դարուց կանուխ չէ: Որ արդարև Կորյունին խորթ է այս ասությունը, երևում է նրանից, որ իր բուն երկի մեջ հիշատակում է նույն Հազկերտին Ս. Սահակի մահվան առթիվ, սակայն առանց անվանելու նրան Երկրորդ Հազկերտ. «**յառաջնումն ամի Յազկերտի** որդւոյ Վռամայ»[1]: Կորյուն գրերի գյուտի ժամանակը նշանակում է Վռամշապուհի տարիներով: Դանիելյան գրերը երևան եկան Վռամշապուհի հինգերորդ տարին, և Մաշթոց վերադարձավ Ասորիքից Հռոփանոսի կերտած տառերով նույն թագավորի վեցերորդ տարին: Ոչ մի տեղ չի հիշում պարսից թագավորներին: Խնդրական է դարձյալ, ինչո՞ւ Կորյուն այնքան կարևոր ժամանակագրական տեղեկությունը պետք է վերապահեր զետեղելու իր երկի վերջը, և այն էլ իր իսկական վերջաբանությունից հետո: Այս հակառակ է գրքի կառուցվածքին և տված տեղեկությունը համերաշխ չէ այն ժամանակագրական վկայության, որ գտնում ենք նրա երկի մեջ: Վռամշապուհի հինգերորդ թե վեցերորդ տարին, երբ գիրը գտնվեց բնավ չի համապատասխանում ո՛չ Հազկերտի (399-420) ութերորդ տարուն, և ո՛չ էլ 403 թվին, ինչպես ասված է վիճելի հատվածի մեջ: Այլուստ գիտենք, որ Վռամշապուհ գահ է բարձրացել Շապուհ [III] պարսից արքայի օրով[2], որ թագավորել է (383-388):

Կորյուն հավատացնում է, որ Դանիելյան գրերը հայտնվեցին Վռամշապուհի հինգերորդ տարին: Երկու տարվա փորձը վեր հանեց նրանց թերությունը: Այնուհետև Մաշթոց ուղի ընկավ Ասորիք, այցելեց Եդեսիայի եպիսկոպոսին՝ Բաբիլասին, Ամիդի եպիսկոպոսին՝ Ակակիոսին, անցավ Սամոսատ և Հռոփանոսի օգնությամբ ձևակերպելով տառերը, վերադարձավ Նոր քաղաք՝ Վռամշապուհի վեցերորդ տարին: Դեռևս Մ. Չամչյանը նկատել է, որ անհետևողականություն կա տարեթվերի մեջ և առաջարկել է ուղղել վեցերորդ տարին տասնվեցերորդ: Սակայն խնդիրը այդ չէ:

---

[1] **Կորյուն**, էջ 41: Ղազար Փարպեցին, որ հիշում է Կորյունին, ունի համապատասխան տեղում՝ «ի սկզբան **ամին երկրորդի Յազկերտի**, որդւոյ Վռամայ» (նույնը կրկնում է և Մովսես Խորենացին՝ Գիրք Գ, գլ. 67՝ «Մինչև ցսկիզբն **ամին երկրորդի Յազկերտին**»): Փարպեցին կարծես թե հասկանում է «ամին երկրորդի» և ոչ թե «երկրորդի Յազկերտի»: Ամեն պարագային երևում է, որ Փարպեցին ծանոթ է վիճելի հատվածին. զարմանալի է, որ անտեսել է Կորյունի «**յառաջնումն ամի Յազկերտի**» հարազատ թվականը: Այս կլիներ մի զորեղ փաստ մեր կարծիքի դեմ, այսինքն՝ որ վիճելի կտորը հետամուտ չէ, այլ պատկանում է բուն երկին և այսպես է եղել Փարպեցու օրինակում: Կորյունի դրությունը սրանով ավելի վատթարանում է և ոչ թե բարվոքում, որովհետև վերջին կտորը անհարազատ համարելով ուզում էինք փրկել մեր հեղինակին հակասությունից: Սակայն պետք է հիշել, որ Փարպեցու առաջին դրվագը վիրավոր տեղեր շատ ունի և կարոտ է առանձնակի քննության:

[2] **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 13:

Թաբիլասը Եդեսիայի հայտնի եպիսկոպոս Ռաբուլաս կամ Ռաբիլասն է: Սա վարել է իր աթոռը 412-435 թթ., Ամիդի եպիսկոպոս Ակակիոսը աթոռի վրա էր 420 թ.[1]: Եթե Մաշթոց իրոք այցելել է այս հայրերին, ապա նրա ճանապարհորդությունը և հետևաբար նշանագրերի գյուտը չէր կարող տեղի ունենալ առաջ, քան 412-420 թվականները, մինչդեռ տեսանք, որ նույն Կորյունը այն հատվածում, որի հարազատությունը ժխտելի ենք համարում, գրերի գյուտը դնում է 403 թվին:

Արդ՝ ի՞նչ են նշանակում այս անհարթությունները: Գրերի գյուտի պատմությունը եղծված է դիտավորյալ կերպով, թերևս նույն Կորյունի ձեռքով: Երբեք չենք կարողացել ըմբռնել այն կցկտուր խոսքերը, որոնք Կորյունը ուղղում է Դանիելյան կոչված գրերի հասցեին: Հայ գիր է եղել, հետո մոռացության տրվել և պատահաբար պահվել ոմն ասորի եպիսկոպոսի մոտ: Ավելի քան տարօրինակ երևույթ է և անհավատալի: Ինչպե՞ս է պատահել, որ գործածության մեջ եղած գրից և ոչ մի ձեռագիր չէր մնացել ընդարձակ Հայաստանում և մի ասորի եպիսկոպոսի էր վիճակվել կորուստից փրկել այդ բանկագին գանձը:

3

Թվում է, որ իսկական որոնումները գրերի շուրջը սկսվում են Դանիելյան գրերից: Իրական գյուտն այդ է և շատ կանուխ, քան Կորյունն է փորձում ներկայացնել: Մաշթոց այդ գյուտն արել է Թեոդորոս Մոպսուեստացու քահանայության տարիները՝ 383-392 թթ. ժամանակ, երբ Հայաստանը տակավին բաժանված չէր երկու պետությունների մեջ: Մաշթոցի գլխավոր աշխատակիցները ծագում են Եկեղեաց, Պաղին, Խորձեան և Տարոն գավառներից, այն հողերից, որոնք Բյուզանդիային անցան բաժանումից հետո:

Թեոդորոսի փայլուն անունը ապագայում նսեմանում է շնորհիվ Եփեսոսյան դավանաբանական վեճերի: Եկեղեցու հայրերը գտնում են, որ Թեոդորոսի ուսմունքը Նեստորական երանգ ունի: Այս գաղտնիքը մերկացնողը ոչ այլ ոք է, եթե ոչ նույն Ռաբուլասը, Եդեսիայի եպիսկոպոսը: Նա է, որ առաջին անգամ ձայն է բարձրացնում Թեոդորոսի դեմ և հայտարարում, որ Նեստորի քուն ուսուցիչը նա է՝ Թեոդորոսը:

Մոպսուեստացի եպիսկոպոսը այլևս հրապույր չուներ հայերի համար: Մինչև իսկ խորշելի էր որպես կասկածելի վարդապետ, որպես հերձվածող: Պետք էր մոռանալ, սքողել այն ցպաստը, որ նա բերել էր գրերի գյուտին և նրա բարեկամությունն ու թղթակցությունը Մաշթոցի հետ: Եվ ահա ոչ միայն

[1] Տե՛ս վերև հիշած աշխատությունս:

հետ է մղվում նրա անունը, այլև գործը վերագրվում է Ռաբուլաս և Ակակիոս ուղղադավան հայրերին և ոչ նեստորամիտ Թեոդորոսին:

Այսպես հասարակաց կարծիքի ազդեցության տակ հեղեղվում է պատմությունը: Տուժում է քննականորեն ստույգ ժամանակագրությունը՝ տեղի տալով հակասությունների:

Թաղված ճշմարտության հետքերը մնացել են Կորյունի երկի մեջ. «Ցայնմ ժամանակի բերեալ երեւեցաւ Հայաստան աշխարհին գիրք սուտապատումք, ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրեմն Հոռոմի որում Թէոդիոս անուն (կարդա՛ Թէոդորոս): Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետացն եկեղեցեացն սրբոց նշանակեալ ազգ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշթոցի: Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ դարձեալ աշխարհահալած արտաքոյ իւրեանց մերժեցին, զի մի ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ»[1]:

Օրվա ցավը Նեստորիոսն էր և «սատանայական ծուխը» նրանից էր ծավալվում: Բայց և այնպես նրա մասին խոսք չկա, այլ Թեոդորոսի: Ակներև է, որ Թեոդորոսի մոտ ծանոթ է եղել հայ շրջանակներում և վայելել հատուկ հեղինակություն և նրա «սուտապատում» գրքերն էլ տարածված են եղել: Ինչո՞վ է բացատրելու այս գերակշիռ մեծարանքը: Անշուշտ նրանով, որ Մաշթոցին նպաստել է իր գրական ջանքերի մեջ: Թեոդորոսի անունը ջնջել գրերի պատմությունից, նշանակում է չորացնել կենդանի ծառը: Արդարև, գրի պատմությունը այնպես, ինչպես ավանդում է Կորյուն, խիստ անբավարար է: Երկը վերաբերում է առավել Մաշթոցի քարոզչության պատմության, քան սքանչելի գյուտին: Ճարտասանական մանվածապատ մի նախադասություն կա միայն, որ նայում է իսկական նյութին, բայց այն էլ դժբախտաբար թաղում է իր խրթնության մեջ գյուտի էությունը:

Եդեսիայում, ուրեմն, Ռաբուլասի քաղաքում, Մաշթոց անճնատուր է լինում «աղօթքի, տքնութեան և արտասուալից պաղատանքի»: Հետևանքը՝ նշանագրերի հայտնությունը. «Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծննեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիւք և կապօք»[2]:

Այնուհետև իջնում է Սամոսատ և Հռոփանոս ոմն դպիր «զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնրբագոյնսն զկարճն և զերկայնն, զառանձինն և զրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի քարգմանութիւն դառնային...»[3]:

---

[1] Կորյուն, էջ 40-41:
[2] Անդ, էջ 19-20:
[3] Անդ, էջ 20:

Ահա այս երկու նախադասությունն է, որ կլանում է իր մեջ գյուտի գաղտնիքը, մթին նախադասություն ոչ միայն մեզ համար, այլ հավանորեն և իրեն՝ հեղինակի:

Փարպեցին բնավ չի հիշատակում Մաշթոցի ճանապարհորդությունը և որոնումները: Նա բավականանում է միմիայն դանիելյան գրերով: Նա Մաշթոցին հատուկ ուշադրություն չի ընծայում և գրերի գյուտը նրան չի վերագրում: Ս. Գրքի թարգմանությունն էլ համարում է գործ Ս. Սահակի և ոչ Մաշթոցի, որի տկարությունը հունարենում չի թագցնում[1]:

Ի՞նչ էին ներկայացնում դանիելյան գրերը:

Մինչև վերջին ժամանակներս ընդունված էր գիտության մեջ, որ այն այբուբենը, որով հասած է մեզ Իրանի սրբազան գիրքը՝ Ավեստան, մշակված է Քրիստոսի VI դարում: Ներկայումս մասնագետները եկել են այն եզրակացության, որ Ավեստայի գրերն ավելի հին են, և հորինված Շապուհ Երկայնակյացի [309-379] օրով՝ IV դարու կեսերին:

Ավեստայի այբուբենը շատ ճոխ է հնչյուններով և համապատասխան գրերով: Նա ամփոփում է գրեթե բոլոր մեր տառերը, բացի երեք գրից, որ են՝ **ծ, ճ, ց**: Հետևապես նոր գյուտի պետք չկար, եթե հարևան ազգերը ցանկանային ազգային գիր ունենալ: Բավական էր ընդօրինակել Ավեստայի գրերը: Արդարև, հայ գրերը կրում են Ավեստայի այբուբենի զգալի ազդեցությունը:

Ավեստայի այբուբենը մշակված է պահլավիկ գրերից: Այս գրերը թվով քիչ էին և միևնույն տառը քանի մի հնչյուն ուներ: Գրության ձևն էլ շատ բարդ էր, խառն ասորականի: Դանիելի մոտ գտնված գրերը կարող էին լինել կամ պահլավիկ գրերը և կամ նորամշակ ավեստական տառերը: Մաշթոցի ջանքը ուրիշ բան չէր, քան հայացնել օտար տառերը, ազգային տարազ տալ: Հռոփանոսը, որպես քաջ դպիր, հանճն է առել այդ գործը և ճևակերպել է հայ տառերը ըստ կաղապարի Ավեստայի այբուբենի: Դանիել Ասորի եպիսկոպոսը կարող էր իր մոտ ունենալ, ծանոթ լինել Ավեստայի այբուբենին: Նույնը կարելի է ասել և Թեոդորոս Մոպսուեստացու նկատմամբ:

Այն թուղթը, որ Թեոդորոսը գրել է Մաշթոցին պարունակում է իմիջիայլոց Զրադաշտի ուսմունքը, կամ նրա հերքումը: Հավանական է, որ այդ թուղթը օգտագործած լինի Եզնիկ իր «Եղծ աղանդոց» երկի համապատասխան բաժնում: Ամեն պարագային կասկածել չի կարելի, որ Մոպսուեստացի եպիսկոպոսը տեղյակ էր իրանական գործերին, և անշուշտ, ծանոթ նաև Ավեստայի նոր հրատարակության: Նրա թուղթը 383-392 ժամանա-

[1] Այդ իսկ պատճառով Փարպեցու կոչումը Կորյունին կասկած է հարուցում: Արդյո՞ք իր գրչին է պատկանում, թե հետամուտ միջարկություն է:

կամիջոցից է, ինչպես վերև հիշեցինք: Հավանական է հայ գրերի մշակումը ևս դնել այդ շրջանում:

Հայ գրերի ծագումը մեր լուսաբանությամբ այնքան դժվարին չէր, որպեսզի Վերին աջի միջամտությունը տեսնվեր: Այն ինչ որ կազմում է Ս. Մաշթոցի և Ս. Սահակի փառքը, Սուրբ Գրքի թարգմանությունն է, որով հիմը դրվեց՝ և հաստատուն և փայլուն հիմ, հայ լուսավորության, հայ գրականության: Գիրը կարող էր ավելի առաջ գոյություն ունենալ: Թարգմանիչների մերձավոր սերունդը շատ լավ է հասկացել Ս. Գրքի թարգմանության արժեքը և նրա հետ է կապել նաև տառերի գյուտը:

Հետազոտությունս քնավ նպատակ չունի լուծել այսքան կնճռոտ խնդիրներ, նպատակն ավելի համեստ է՝ վեր հանել դժվարությունները, և գծել ուսումնասիրության շավիղը:

ՀԱՅԱՑԱԾ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հայացած Աստվածաշունչը, որուն հազար հինգհարյուրամյակը կտոնենք (1), տարեկից է լատին թարգմանության, որ ծանոթ է **Վուլկաթա** անունով: Արդարև՝ 392 թվին է, որ Ս. Հերոնիմոս որոշեց լատիներենի թարգմանել Հին Կտակարանի եբրայեցերեն բնագիրը և իր այդ աշխատությունն ավարտեց 405 թվին: Ճիշտ նույն միջոցին է, որ Ս. Սահակ և Ս. Մաշթոց կատարեցին իրենց անմահ գործը: Մաշթոցի հետազոտությունները՝ հայ այբուբենն ստեղծելու համար, 392 թվին սկսված, ավարտեցան 405 թվին. այս թվականին, ոչ միայն տառերը պատրաստ էին, այլև Սուրբ Գիրքը, գեթ մասամբ, թարգմանված էր արդեն:

Անոնք, որ Աստվածաշունչը հայացնելու ազնիվ աշխատանքն ստանձնած էին, չէին կրնար երևակայել, որ իրենց գործին տարեդարձը օր մը պիտի տոնվեր պանդխտության մեջ, լատին մշակույթի հեռավոր հողին վրա, ուր առաջին հայ մը եկած է այն դարուն, իսկ երբ լատին թարգմանությունը կկատարվեր, **Arbandus** (Երվանդ) անունով մեկը, որ իբր նահանգապետ Գալլիան կառավարեց 464-են-469 թիվը: Ջմահամ դիպվածը՝ այսպես մեզ կդնե տարեդարձներու եռյակի մը առջև՝ տարեդարձը հայ Աստվածաշունչին, լատին Աստվածաշունչին և հայոցս այս երկրին մեջ բնակիլ սկսելուն:

Վուլկաթան լատին երկիրներուն համար չունեցավ այն կարևորությունը, զոր հայ Աստվածաշունչն ունեցավ հայ ժողովուրդին համար: Լատին գրականությունը շատոնց ի վեր գոյություն ուներ, երբ Վուլկաթան երևցավ, մինչդեռ հայ Աստվածաշունչը սկզբնավորությունը եղավ հայ գրականության, սկզբնավորությունը նոր թվականի մը, ուր հայ ժողովուրդը, առաջին անգամ ըլլալով՝ գրիչ ի ձեռին իր տեղը կուգա գրավել լուսավորյալ մարդկության մեջ:

Հայ Աստվածաշունչը ազատեց հայությունը իրանական աշխարհին մեջ ձուլվելու վտանգեն: Ամրացուց քրիստոնեությունը Հայաստանի մեջ, և խաչին ճառագայթները հակադրեց հարձակողական մազդեզականության կրակին: Հայաստան վերջնականապես փոխվեցավ էականորեն քրիստոնյա դաշտի մը և այլևս այդպես մնաց դարերու ընթացքին:

Երկրին բարոյական ու մտավորական վերականգնումը բնականաբար

արթնցուց ճշմարիտ ազգային գիտակցությունը: Պետք չէ մոռնալ, թե հայ Աստվածաշունչը երևցավ Բյուզանդիոնի և Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանումեն անմիջապես հետո, որուն հետևեցավ քիչ հետո Հայաստանի թագավորության անդարմանելի կործանումը: Այնուհետև գոյություն ունեցան երկու Հայաստաններ, մին՝ բյուզանդական, մյուսը՝ պարսկական, ազգային մարմնի մը երկու հատվածները, որոնց յուրաքանչյուրը դեպ ի տարբեր ճակատագիր մը կդիմեր:

Հայոց պատմական կյանքը պարզվեցավ երկու տարամետ ուղղություններով, զոր կարելի է կերպով մը նկատել իբր աստվածաշնչական ոգվույն երկու այլազան արտահայտություններ:

Կ'ուզեի քանի մը խոսքով անդրադառնալ այս կրկնակ հոսանքին վրա, հաճելե առաջ ատկից հետևություն մը, որ կրնա մեզի օգտակար ըլլալ: Պարսկական Հայաստանը եղավ վառարանը ազգային մշակույթին: Նորածին գրականության հիմնադիրները սքանչելի կերպով անոր ծառայեցին: Թարգմանությանը, այն գրական ու պատմական հրաշակերտին, որ է Սուրբ Գիրքը, հետևեցավ կամ ընկերացավ հայացումը դարուն նշանավոր արտադրություններեն ամբողջ շարքի մը, ինչպես Հովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացիի, Եփրեմի, Ափրահադի (Ջգոն) գործերու, Եվսեբիոսի «Քրոնիկոնին» և «Եկեղեցական պատմության»:

Եվ ահա՛ նախախայրիքը ինքնուրույն ստեղծագործության մը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի վարքը, Հայաստանի քրիստոնյա թագավորներու պատմությունը, հայ դպրության հոր՝ Մաշթոցի վարքը, կամքի ազատության մասին հնարամիտ տեսություն մը, որուն կ'ընկերանա հերքումը քրիստոնեական վարդապետության հակառակ այլասեռ աղանդներու: Այս այնքան հուզիչ մտավորական զարթումը պիտի ընդմիշտ պահե, ինչպես երջանիկ մանկություն մը, իր հրապույրն ու թարմությունը գրական առաջին ներշնչման, և հաջորդ սերունդին կողմե պիտի համարվի իբր ոսկեդարը հայ դպրությանց:

Հոգեկան այսպիսի ծաղկափթթումի մը հանդեպ, պարսիկ իշխանությունները պետք էր ընտրություն մը ընեին երկու քաղաքականության միջև, զոր կը թելադրեին բանիմաց խորհրդականներ՝ կա՛մ բռնադատել քրիստոնեությունը և կա՛մ զայն բյուզանդական քաղաքականությունեն հեռու պահել, ինչ որ փորձվեցավ:

Հայերը ատկից օգտվեցան՝ ընդմիշտ ապահովելու համար Հայ Եկեղեցվո բացարձակ անկախությունը և անոր ազգային նկարագիրը վարչական և վարդապետական (**dogmatique**) տեսակետով:

Եկեղեցին այդ թվականին ոչ միայն պահապանն էր կրոնական գիտակցության, այլև կընդգրկեր մարդկային մտքի բոլոր արտահայ-

տությունները: Ազգային եկեղեցի մը ունենալ կնշանակեր ունենալ սեփական մշակույթ, ինքնահատուկ լեզու, գրականություն, արվեստ, մեկ խոսքով՝ ամեն ինչ, որ կրնորոշէ ազգի մը հոգեկան կյանքը:

Հայաստանյայց Եկեղեցիին ազգային գիծը՝ իր ավատական կառուցվածքին մեջ կկայանա: Երբեմնի Հայաստանը կներկայացներ երկիր մը՝ մեծ ու պզտիկ քանի մը տասնյակ տանուտերությանց ցանցով մը ծածկված:

Եկեղեցին կազմակերպվեցավ քաղաքական քարտեսին հարմարվելով, հոգեկան իշխանությունը կտոր-կտոր եղավ ու գլխավոր նախարարությանց միջև բաժնվեցավ: Ամեն մեկ իշխան կհավակներ ունենալ եպիսկոպոս մը, հոգևոր պետ մը՝ իր կալվածին համար. բոլոր եպիսկոպոսները բացահայտորեն ստորադասված էին Եկեղեցվո գերագույն պետին, ինչպես և իշխաններն իրենք իսկ կճանաչեին գերագահությունը հայ, պարսիկ կամ արաբ քագավորներուն: Հայաստանին անծանոթ մնացած է նվիրապետական համրիչը մետրոպոլիտներու, ինքնավար կամ ինքնագլուխ արքեպիսկոպոսներու:

Եկեղեցին, ավատական ռեժիմին հետ նույնացած, անոր առավելությունները ու պակասությունները կյուրացներ: Այսուհանդերձ՝ աշխարհական և հոգևոր իշխանությանց միջև ընդհարումները հաճախադեպ չէին, ոչ ալ ծանր: Համերաշխությունը կհայտնվեր մանավանդ արտաքին վտանգի պահուն: Նախարարները եկեղեցական ժողովներուն կմասնակցեին նույնքան իրավունքով, որքան եպիսկոպոսները, և այս վերջիններս նախարարներուն կողքին կկենային քաղաքական խռովությանց միջոցին:

Ատոնք երկու սատարներ են, որ կանգուն պահած են պատիվն այդ երկրին, հմայքն այդ ժողովուրդին, որ, նույնիսկ այն շրջաններուն ուր կեղեքված էր, երբեք չէ կորսնցուցած իր արժանապատվության գիտակցությունը և պատրաստ էր՝ իր քաջարի պետերու առաջին կոչին՝ կռվի երթալու: Պետք է կարդալ հայ պատմագիրները, գաղափար կազմելու համար այն վստահության վրա, զոր կներշնչվեին իր իշխանները, այն հիացման վրա, զոր առաջ կբերեր անոնց քաջությունը:

Արքայական գահուն անկումեն հետո, Հայաստան կունենա շրջաններ խռովությանց և հեղափոխությանց, որ հաջորդաբար կպայթին, քանի մը տասնյակ տարիներով իրարմե զատված, մինչև այն վայրկյանն ուր օտար լուծը թոթափվեցավ:

IX դարու վերջերեն իսկ սկսյալ, կտեսնվին շարք մը իշխանապետություններ, որ մեկը մյուսին ետևեն ոտքի կկանգնին, և որոնց ոմանք քագավորություն անունը կկրեն: X դարուն, ատոնց թիվը տասներկուքի չափ էր, և ատոնք ինքզինքնին այնքան անկախ կզգային, որ առանձին հա-

բարերությունններ կհաստատեին Բյուզանդիոնի հետ: Կոստանդին Ծիրանածին, հայազգի Վասիլի թոռը, ատոնց անուններն ու տիտղոսները մեզի պահած է՝ ըստ «Կայսերական արքունիքի դիվանագրքին»:

Հայ եկեղեցին ալ ունեցավ իր ծեղության օրերը: Հույն ուղղափառությունը՝ կայսրության ուժերուն վրա կրթնած, որևէ առիթ չէր փախցներ վերսկսելու համար իր հարձակումները Հայ եկեղեցիի անկախության դեմ:

Այս վերջինը ուժգնորեն պաշտպանեց ինքզինքը և պահպանեց իր ավանդությունները, վարդապետությունները (dogme), ծեսերը և ամեն ինչ որ ազգային անհատականությունը կկազմեն: Մեկե ավելի անգամներ, իր հմուտ վարդապետներն ու համբավավոր աստվածաբանները մայրաքաղաք կանչվեցան, ու հոն կայսերական ժողովին առջև հայկական դատը պաշտպանեցին: Ո՛չ հրապուրիչ առաջարկներ, ո՛չ սպառնալիքներ կարող եղան անոնց համոզումը խախտել կամ անոնց քաջությունը թուլցնել:

Հայ եկեղեցիին պարծանքն է՝ ամեն տեսակ հալածանք կրած ըլլալը պաշտպանելու համար ինչ որ կնկատեր իր հայրերեն իրեն թողված ճվիրական և անթռնաբարելի ժառանգություն մը:

Այդպիսի դիմացկունության մը և անոր պարտադրած զոհաբերության արդյունքը եղավ ծաղկումը, եկեղեցիին ծոցին մեջ, գրականության մը և արվեստի մը, որ հայոց կվերապահեն պատվավոր տեղ մը քաղաքակիրթ Արևելքին մեջ. ճոխ ու այլազան գրականությունը, պատմական, աստվածաբանական, վարդապետական, իմաստասիրական, և արվեստը, մանավանդ ճարտարապետությունը, կազմության մեջ ինքնատիպ և գործադրության մեջ ազնիվ:

Մեկ խոսքով, Հայաստան իր ճիգերը պսակեց քաղաքականությամբ մը որ ծաղկեցավ վերոհիշյալ տասներկու իշխանապետության մեջ և որ կրնա Բագրատունյաց կոչվիլ՝ կարևորագույն թագավորության անունով: Անի քաղաքը, վառարան այդ քաղաքակրթության, իր վեհափառ ավերակներով այդ շիջած քաղաքակրթության շքեղությունը կվայելե:

Այսպես եղավ ընթացքը արևելյան կամ պարսկա-արաբական Հայաստանին: Բայց Բյուզանդական Հայաստանը ի՞նչ կներկայացներ նույն ժամանակաշրջանին:

Աստվածաշունչի թարգմանության միջոցին, Բյուզանդական Հայաստանը մասնակցեցավ այդ գրական շարժման. Մաշթոցի գլխավոր աշխատակիցները Բյուզանդական Հայաստանեն էին, այսինքն՝ Եկեղեաց գավառեն, Դերջանեն, Խորձեանեն, Պաղինականերն և Տարոնեն. Մաշթոց ինքն իսկ Տարոնեն էր: Հունարենը հայտնապես ավելի ընտանի էր այդ շրջաններուն մեջ, Հայաստանի բաժանումեն իսկ առաջ, բյուզանդական

երկիրներու դրացնության պատճառով: Այդ տեղվանքի թարգմանիչներն ուրեմն ավելի լավ պատրաստված պիտի գտնվեին:

Ատեն մը ետքը, Բյուզանդական Հայաստանը կթվի այլևս չհետաքրքրվիլ սահմանին մյուս կողմն անցած-դարձածով: Անիկա հոգածու չերևար ազգային հարցերուն հանդեպ, ինչ ալ ըլլան անոնք: Ան ոչ մեկ հեղինակ տվավ հայ գրականության, ոչ ալ որևէ կրոնավոր՝ կաթողիկոսական աթոռը գրավելու արժանի:

Բյուզանդիոն, Հուստինիանոս [I-ի] օրերեն իսկ, կձգտեր Հայաստանի այդ մասն իրեն կապելու և հայերը կայսրության կյանքին ու շահերուն շրջանակին մեջ միախառնելու: Ավատական կազմակերպությունը կամաց-կամաց կործանեցավ և երկրին իշխաններուն հրավեր եղավ իրենց կալվածները փոխանակելու արքունիքին և պետության մեջ պատվակալ պաշտոններու հետ: Գաղթականական հոսանք մը ատկից ծայր տվավ դեպի Բյուզանդիոն, մեկ դարեն մյուսը ավելի ներուժ դառնալով: Ինչ ալ ըլլային այն պատճառները որ հայերը դեպի Բյուզանդիոն կմղեին, պետք է հաշվի դնել հրապույրը զոր կընծայեր Բյուզանդիոնն այդ թվականին, իբր կայսրություն մը տիեզերական նկարագիր զգեցած և աշխարհաքաղաքագիտական իդեալով մը ոգևորված:

Նոր Հռոմի մեծ հիմնադրին երազը լավ թարգմանված է իր բարեկամին՝ Կեսարիո հմուտ եպիսկոպոսին, ճեռքով (2): Հեթանոս աշխարհը, ըստ իրեն, ենթարկված էր զանազան իշխանությանց. ատկից առաջ կուգային թշնամությունը, սարկությունը, ամեն կերպ ցավեր: Պատմաբանները ջանացած են ատոր պատճառները գտնել: Ստույգ է՝ վերջապես, թե այս բոլորը արդյունքն է բազմաստվածության մոլոր ոգիին: Անմիջապես որ Քրիստոսի հավատքը հաղթանակե, այդ բոլոր ախտերը, դիվային արտաշնչումները, պետք է անհետանան, ու միևնույն ատեն կառավարության բաժանումը զանազան վեհապետներուն միջև վերջ պիտի գտնե:

«Հիմա, որ միակ Աստված մը հռչակված է,- ըսավ ան,- միակ կայսրություն մը պետք է աշխարհը կառավարե՝ Հռոմեացվոց կառավարությունը: Քրիստոնեական հավատքը և Հռոմեական կայսրությունը կկազմեն երկու ընծյուղ միևնույն ատեն բուսած՝ կարծես երկնային հրաշքով մը՝ մարդկությունը հովանավորելու համար: Գոյություն ունեցող բոլոր տերությունները՝ Սուրիո, Ասիո, Մակեդոնիո, Եգիպտոսի, Արաբիո, Պաղեստինի մեջ, այսուհետև միակ միության մը պիտի կազմեն: Բովանդակ աշխարհը միակ ազգ մը պիտի դառնա, մարդկությունը պիտի համախմբվի իբր միակ ընտանիք մը՝ միակ մակարի մը տակ, հելլեններու և բարբարոսներու միջև առանց որևէ խտրության»:

Ասիկա բորբոքյալ հոգիով վանականի մը երազը չէր: Նոր կայսրությունը

այդպիսի առաքելության մը կհավակներ արդարև ու կխորհեր զայն իրականացնել՝ քրիստոնեության հիմունքին վրա աշխարհաքաղաքացիական տերություն մը ստեղծելով: Բյուզանդիոնը ո՛չ Հռոմեական կայսրություն մը պիտի ըլլա, ո՛չ Հունական կայսրություն մը: Ան պիտի ձևացնե լայն կազմակերպություն մը համաշխարհային բնույթով, զանազան ցեղերու և լեզուներու պատկանող ժողովուրդներու համագործակցության վրա հիմնված, առանց ազգային նախապաշարման:

Բյուզանդական Հայաստանը մին եղավ այն երկիրներեն, որոնք ինքզինքնին ի սպաս դրին այդ քրիստոնյա կայսրության: Փոքր Ասիո ժողովուրդներու մեջ, որոնցմե կայսրությունը պիտի քաղեր իր կենդանի ուժերը, ոչ մեկը ավելի կամ նվազ որոշապես սահմանված ազգային մարմին մը կներկայացներ, կամ ինչ-ինչ ավանդություններով ոգևորված կերևար, Կապպադովկիա, Լյուդիա, Փռյուգիա, Գաղատիա, Պափլագոնիա, Պիսիդիա, Իսավրիա և ուրիշ շրջաններ շատոնց կորսնցուցած էին իրենց ազգային դիմագծությունը:

Այդ անվերապահ և կրավորական զանգվածին վրա կկանգներ գործուն ու ճեռներեց մտքով հույն տարրը: Հպարտ՝ անցյալով մը, որ մեկհատիկ է մարդկային պատմության մեջ, զինված լեզվով մը և մշակույթով մը, որ համաշխարհային դարձած էին հելլենիստական ժամանակաշրջանեն միասին ի վեր, հույները ունեին բոլոր առավելությունները կայսրության մեջ առաջին կարգն անցնելու համար:

Բայց բան մը կպակսեր իրենց՝ որպեսզի բոլորովին տեր դառնային Բյուզանդիոնին: Շատոնց ի վեր քաղաքաբնակ դարձած, ճարտարվեստական կյանքին վարժված, հույները կերևա, թե կորսնցուցած էին գենքի սերը: Ամեն պարագայի մեջ, իրենց զինվորական կարողությունները չէին հավասարիր այն համբավին զոր ունեին գործունեության մյուս ճյուղերուն մեջ:

Արդեն իսկ, Հուստինիանոսի օրով, հոռի զինվորները պարսավելու համար, զանոնք «հույն» կկոչեին, որպես թե ոչ մեկ քաջ բան. ինչպես կըսե ժամանակին պատմիչը (3), կարենար ելլել այդ ցեղեն:

Հայերը պիտի լրացնեին ինչ որ կպակսեր հույներուն՝ տոկուն լեռնականներ, զորեղ ու հուժկու, օժտված տպավորիչ ֆիզիկականով մը, զենքերու գործածության մեջ քաջավարժ, անոնք ունեին հարկ եղած հատկությունները բանակը վարելու և զայն հաղթանակի առաջնորդելու համար: Իրոք ալ, Բյուզանդիոնի զինվորական հանճարը ծնունդով ու ծագմամբ հայ զորավարներով է ներկայացված:

Զինվորական կարողությունն է դարձյալ, որ գահուն բախտը կվճռեր, երբ ան խախտած էր: Ուստի և կտեսնենք, որ հայ ռազմիկները կփառասիրեն

կայսերական թագին տիրանալ ու կհաստին առաջ և մեկե ավելի անգամ տևական հարստություններ (**dynastie**) կհիմնեն:

Հիմա գիտենք, թե Հերակլիոս [610-641], Բյուզանդիոնի ամենեն նշանավոր կայսրերեն մին, հայ էր, ծնած Թեոդոսուպոլիս, որ մեր օրով Էրզրում կկոչվի: Հարստությունը զոր ան հիմնեց, պետք է ուրեմն առաջին հայ հարստությունը նկատվի:

Մեծանուն արևելագետ Ա. Սեն-Մարթենը կկարծեր, թե Իսավրյան հարստության հիմնադիրը, Լևոն [III]-ը, նույնպես հայ էր ծագմամբ: Թեոփանես ժամանակագիրը շփոթած ըլլալու էր Գերմանիկեն, այժմ Մարաշ, որ Լևոնի ծննդավայրն է, Գերմանիկոպոլսո հետ, այժմ Էրմենեք, Իսավրիո մեջ, և սխալմամբ անոր տված ըլլալու էր Իսավրացի մականունը: Լևոն սկսավ պատկերամարտ քաղաքականությունը, իր փեսան էր Արտավազդ Հայը, և իր զարմիկը կկրեր Սիսինաքիոս անունը, որ ո՛չ հունական է, ո՛չ սուրիական. ասոնք իրողություններ են, որ ուժ կուտան Սեն-Մարթենի հայտնած կարծիքին:

Իսավրացիներեն հետո, հայերն են միշտ, որ գերագույն իշխանությունը իրենց ձեռքը կպահեն: Միքայել [II] Թվլատ, աննշան ծագումով մարդ մը, սպանեց Լևոն [V] Հայազգին, բայց հայերը իր կողմը քաշելու համար՝ խնամություն հաստատեց հզոր ընտանիքին հետ Մարինոսի, որ Մամիկոնյանց տոհմեն պատրիկ մըն էր: Մարինոսի դուստրը, գեղեցիկ Թեոդորան, գահուն վրա է, անոր շուրջ՝ իր հորեղբայրը Մանուել, ժամանակին առաջին զորավարը, իր երկու եղբայրները՝ Բարդաս (Վարդ) Կեսար և Պետրոնաս, իր փեսան՝ Կեսար Ալեքսիոս-Մուսելես (Մուշեղ), իր երկու քույրերուն ամուսինները, Արսաբեր (Արշավիր) և Կոստանդին Բաբուցիկ, բոլորն ալ կկազմեն այն փայլուն դեմքերը, որ կայսրության ճակատագիրը կվարեն:

Վերջապես կերևա Վասիլ, հիմնադիրը ամենեն փառավոր հարստության, որ Մակեդոնական կ'անվանվի և իրապես հայկական է, և որու տևողության միջոցին կայսրությունն իր զինվորական ու մշակութային մեծության գագաթնակետը բարձրացավ:

[Ֆրանսիացի պատմաբան Ալֆրեդ] Ռամբո, անվիճելի հեղինակություն, Վասիլի հարստության նվիրած իր մենագրության մեջ հաստատեց, թե հայերը X դարուն տեր դարձած էին կայսրության, թե ամեն տեղ հայեր միայն կտեսնվեին: Վասիլի հետ իրենց երևումն ընդհանրացնող այն հզոր հայ ընտանիքները, ինչպես Լեկապենոս, Գուրգուաս (Գուրգեն) կամ Չմշկիկ, Փոկաս, Սկլիռոս, որոնք իրենց հերոսական ժեսթերով ստեղծեցին մեծ դյուցազներգությունը, հավիտենական փառքը Բյուզանդիոնի:

Հոս տեղը չէ պարզելու երկար ու շարունակական շղթան հայ դեմքերուն,

որ իրենց փայլով կլեցնեն կայսրության պատմությունը VI դարեն XII դարը, ոչ ալ գնահատելու այն անսահման ծառայությունները, զոր հայերը մատուցած են պետության՝ հանրային կյանքի բոլոր մարզերուն մեջ: Հիշեցնենք միայն, որ նույնիսկ IX դարու հելլենական գիտությանց և հելլեն մշակույթի վերածնունդը հայոց գործն է: Վարդաս Կեսար Հայն է, որ հիմնեց առաջին համալսարանը Կոստանդնուպոլսի մեջ և զայն դրավ ղեկավարությանը տակ Լևոն Իմաստասերի, որ ինք ալ հայ մըն էր, հռչակավոր, թե՛ իբր մաթեմատիկոս և թե՛ իբր հելլենագետ:

Լևոն եղբորորդին էր Հովհաննես Քերական պատկերամարտ պատրիարքին, ուսումնական անձ մը, որուն աստղաբաշխ Բագրատի, ուրեմն հայու մը:

Պատրիարքը ուներ եղբայր մը, որ կկոչվեր Արսաբեր (Արշավիր), որուն քաղաքամերձ պալատը ժամադրավայր եղավ գրական աշխարհին: Անշուշտ, այդ սալոնին մեջ է, որ կազմված է, ի միջի այլոց, համբավավոր Փոտը՝ Կ. Պոլսո պատրիարք և պարծանք օրթոդոքս եկեղեցվո: Ան հայ էր իր մորը կողմե, որ էր Իրինե, քույրը Արսաբեր հայազգի բարձր պաշտոնատարին, Թեոդորա կայսրուհվոյն քեռայրին:

Վերջապես VI դարեն XI դար, մինչև հայ հարստության վախճանը, հայերը փառավորապես ծառայած են կայսրության և զայն դարձուցած են քրիստոնեական քաղաքակրթության ախոյանն ընդդեմ մահմետականության:

«Առանց հայազգի Վասիլիոն,- կըսե հայտնի բյուզանդագետ մը (4),- իսլամությունը Եվրոպայի վրայեն պիտի անցներ, քարուքանդ ընելով ամեն ինչ որ զայն այսօր Եղլադայի և Հռոմի դուստրը կկացուցանե»:

«Առանց հայ զորավարներու, Բյուզանդիոն պիտի կործանվեր քարբարոսներու հարվածներուն տակ: Ծանր րոպեներուն, հանկարծ երևան կուգար Հերակլ մը, Վասիլ մը, Ցմշկիկ մը, Փոկաս մը, որ այդ հոգնած քաղաքակրթության նոր քարմություն մը կուտար, և այն ատեն կայսրությունը, այդ ծեր կինը,- ըստ բյուզանդացի պատմագրի մը բացատրության,- կերևար ինչպես մանկամարդ աղջիկ մը ոսկիով ու թանկագին քարերով զարդարված» (5):

XI դարուն մեջտեղը, մեծ փոփոխություն մը առաջ եկավ: Հայկական հարստությունը կշիջանի և բուռն հակազդեցություն մը կշղթայազերծվի հայերու դեմ: Ատիկա արդյունքն էր հույն ազգայնամոլության, գեշ նշանի մը տակ արթնցած և, որ պիտի խաթարեր դարավոր բարի ավանդությունները և պիտի դղրդեր կայսրության շենքը: Այդ այնքան հրաշալիորեն պտղաբեր գործակցության անխուսափելի խզումը չուշացավ իր անդրադարձումն ունենալու կայսրության ճակատագրին վրա: Կայսրերը, որ իրարու

հաջորդեցին այն ատեն, անկարող և անարժան՝ Վասիլի ժառանգության, փոխանակ ջանալու դարմանումը գտնել հույներու և հայերու միջև ծագած աղետաբեր պառակտումին, բազմավնաս այդ ուղղությունն ընդգրկեցին, առանց գիտակցությունն ունենալու իրենց քաղաքականության ծանրակշիռ հետևանքներուն: Բյուզանդական իշխանությունները սկսան բուռն հարձակումներ գործել Հայ եկեղեցվո դեմ և անխղճորեն աշխատեցան կործանել հայ իշխանությունները՝ այն միջոցին, երբ սելճուքյան հրոսակները Հայկական բարձրավանդակն կմագլցեին:

Ատիկա ստիպեց հայերը Բյուզանդիոնին կռնակ դարձնելու, իրենք իրենց մեջ ամփոփվելու: Իրենց ճիգերը համախմբեցին՝ սեփական քաղաքական վառարան մը ստեղծելու համար:

Քաջ Փիլարտոսը, կյուրապաղատ, բարձր պաշտոնատար արքունիքին և նախկին սպասավոր սքոլներու, այսինքն՝ ընդհանուր հրամանատար բյուզանդական բանակի, քիչ ժամանակի մեջ աջողեցավ իրեն համար կազմել ընդարձակ պետություն մը, որ Մելիտինեեն կտարածվեր մինչև Անտիոք:

Ուրիշ հայ մը, որ նույնպես կայսրության ծառայողներեն էր, Ռուբեն զորավարը, միևնույն ատեն քաշվեցավ Կիլիկիա, և Տավրոսի լեռներուն մեջ հիմնեց ավելի ամուր իշխանապետություն մը և հայկական մշակույթի նոր վառարան մը:

Հայերու խուժումը դեպի մայրաքաղաքը դադրեցավ: Բյուզանդիոն այլևս չտեսավ ժայթքիլն այդ աղբյուրին, որմե իր մեջ հոսած էին այնքա՜ն կենսական ուժեր և զոր ինքն իսկ ցամքեցուցած էր: Կայսրության ծոցին մեջ հայ-հույն համերաշխության խզումը, կնշանակե այն թվականը, ուր Բյուզանդիոն սկսավ սահիլ դեպի անկում:

Կ. Պոլսո մեջ՝ Թոռնիկ հայազգի ընտանիքին վերջին անդամներեն մին, Թեոդորոս Թոռնիկ, արդեն 1261 թվին կնախատեսեր, որ թուրքերը օր մը պիտի տիրանային Կ. Պոլսին և ամբողջ կայսրության:

Այս հակիրճ ընդհանուր տեսությունը կրնա ամփոփվիլ սապես. հայկական անցյալին որոշ մեկ ժամանակաշրջանին, ժամանակաշրջան, որ մեկն ավելի տեսակետներով նշանավոր է, կրկին հոսանք մը կտրեց անցավ հայկական պատմությունը, մին ազգային հողի վրա, մյուսը աշխարհաքաղաքացի ոստանին մեջ, մարդկության ծառայելու որոշ եղանակներով՝ ազգային շրջանակի մեջ կամ անկից դուրս: Հետո կտեսնվի, որ այդ հոսանքներեն մին, աշխարհաքաղաքացիությունը, ձախողվածի մը կենքարկվի կամ հույն ազգայնամոլության ճնշով կայլասերի: Հայերը, երկար ատեն ու լայնորեն շոայլելե հետո իրենց լավագույն ուժերն ի սպաս աշխարհաքաղաքացի պետության, զիրենք ստիպված զգացին ազգային եղքիքը դառնալու:

Արդ, այս հանդիսավոր օրվան մեջ հավաքված ենք, նախ՝ կատարելու համար պարտականություն մը, այն է մեծարանքի հարկ մատուցանել հիշատակին անոնց, որ 1500 տարի առաջ քարոյական հիմը դրին մեր պատմական գոյության: Հետո իմնի կթվի, թե այս հանդեսը կրնա գործնական որոշ օգտակարություն մըն ալ ունենալ, պայմանով որ պատրաստ ըլլանք անցյալին փորձառությունը գնահատելու: Մենք ի հայտ բերինք գոյակցությունը երկու հոսանքներու, որոնք իրր հիմ ունին երկու հակընդդեմ սկզբունքներ: Այժմ ալ, այդ երկու սկզբունքները իրարու դեմ կռվի մեջ են, մեկ կամ մյուս կերպով, երբեմն՝ ծայրահեղության մղված ձևերով, քաղաքակիրթ աշխարհին մեջ:

Անցյալի փորձառությունը, որուն կակնարկենք, պետք է մեզի օգնե, պետք է օգնե մանավանդ մեր երիտասարդության, որ մասամբ որբ է, իր բախտին ձգված և բոլոր վտանգներուն ենթարկված. այդ այնքա՜ն հրահանգիչ փորձառությունը պետք է, որ անոր, թույլ տա հաստատակամ ու գիտակից ընտրություն մը ընելու երկու ուղղություններու միջև, որպեսզի ազգային շրջանակին հարի և հաստատ պահպանե ինչ որ կխորհրդանշե մեր ազգությունը՝ լեզու, կրոնք, ծես, ավանդություններ:

Թող այսօրվան հանդեսը և Սահակի ու Մաշթոցի հիշատակը մեզ բոցավառեն նոր եռանդով մը՝ հավատարիմ մնալու համար այն ժառանգության, զոր անոնք մեզի թողած են: Այդ ժառանգությունը նկատենք իրր տապան մը այս ալեկոծ օտար ծովերուն վրա, այն դժնդակ պայմաններուն մեջ, ուր կոգորի մեր ազգային կյանքը, և **հուսանք (6), որ օր մը այդ տապանը, հարության առած, արդարության շունչեն մղվելով, պիտի իջնե Արարատ լերան վրա և մեզի թույլ պիտի տա վերականգնել ավերակները մեր հայրենիքին, որ լքված է այսօր, բայց ոչ մոռացված**[1]:

---

[1] Այս ճառին արտասանուած օրը, վերջին պարբերությունը ունկնդիրներեն ոմանց այնպես կարծել տվեր էր, թե բովանդակ հայ ժողովուրդի այժմյան ազգային կյանքն է, որ հոն «դժնդակ» ածականով կորակվեր և, թե «լքված, բայց ոչ մոռացված հայրենիքի ավերակներու ապագա վերականգնման» մասին հայտնված հույսը կվերաբերեր Խորհրդային Հայաստանին: Այդ մեկնությունը անհիշդ է, ինչպես հեղինակն ալ՝ երբ իրեն հաղորդեցինք այդ կարծիքը՝ ըսավ մեզի: Հայրենիքեն հեռու օտար երկիրներու ցրված Հայոց կյանքն է, որ ան կգտնե դժնդակ, և երբ կճշդե, թե «վերականգնացած արդարության տապանը օր մը Արարատին,- այժմ թուրքերու ձեռք անցած Արարատին,- վրա է, որ պիտի իջնե», հայտնի է, որ չի կրնար ակնարկել մեր այժմյան Հայաստանի Հանրապետության, որ լքված ըլլալե հեռու, մեկ միլիոն կենդանի, աշխատող, արտադրող հայերու բույնն է, այլ հայերն ու հայ կյանքն բոլորովին պարպված, բայց վտարանդի հայերն երբեք չմոռացված այն հայկական նահանգներուն, որ մնացին կամ տասնհինգ տարի առաջ ձորեն անցան թուրք լուծի տակ:

ԿՈՐՅՈՒՆԻ ՄԱՍԻՆ

(Պարոն Գ. Ֆնտգլյանի նկատողությունների առթիվ)

Ա

Անկարող ստանալ ներկայումս և կանոնավորապես հետևել «Հանդես ամսօրյա»-ին, ուրեմն միայն հնարավորություն ունեցա թերթելու տարվա թվերը և իմիջիայլոց ծանոթացա պ. Ֆնտգլյանի գրության («Հանդես ամսօրյա», 1926, թ. 5-6) (1):

Ավելորդ չեմ համարում նախ քանի մի խոսք ասել հարգելի պարոնի այն հայտարարության առթիվ, թե Մաշթոց անվան ստուգաբանությունը առաջարկել է ինքը տարիներ առաջ դեռ 1905 թվին և ուրեմն առաջնության պատիվն իրեն է պատկանում (2):

Ցավում եմ, որ պարոնի ակնարկած ուսումնասիրության ցայժմ անգետ մնալով, ակամայից տհաճություն եմ պատճառել ոչ միայն նրան, այլև ինձ, որովհետև անգիտությունն այսպիսի դեպքերում անախորժ է ամենից առաջ անտեղյակ բանասերին, բայց ավելի ևս ցավում եմ, որ պատվական պարոնը իր առաջնությունը պաշտպանելով չէ կարողացել մնալ վայելչության սահմանների մեջ:

Պ[արոն] Ֆնտգլյան իրեն ներելի է համարում՝ կրկտել հիշողությունս և այնտեղից վեր հանել իր գյուտի «վերհիշումը» այն հիմամբ, որ նվաստս ստանում էր «Անահիտ» հանդեսը, ինչպես նեղություն է քաշել ստուգելու և հետևապես հետևում իր գիտական աշխատանքներին, և ապշեցնող կետ է համարում, որ ես քերում եմ նույն երկու օրինակները Տիրոց և Բարոց «նույնությամբ ոչ ավել և ոչ պակաս»:

Ասել է, թե 1905 թվին բախտ եմ ունեցել կարդալու պ. Ֆնտգլյանի ուսումնասիրությունը, պահել եմ հիշողությանս ծալքերում նրա գյուտը, որպեսզի 1926 թվին հռչակեմ և որ վշտալին է՝ կորզեմ պարոնի փառքը: Ապշեցնող է համարում պարոնը օրինակների զուգադիպումը: Կարծեմ, հայ բանասերին, անգամ ամենախորնարհին հայտնի պիտի լինի, որ հայոց մատենագրության մեջ ուրիշ անուն չկա, **-ոց** վերջավորությամբ, բացի երկուսից **Տիրոց** և **Բարոց**: Չհիշել այս, նշանակում է անբարեմիտ լինել և անտեղյակ ընթերցողին մոլորեցնել: Երկու իշխանական անուններն էլ ծանոթ են ամեն մի դպրոցականի Վարդանանց և Վահանանց

պատմությունից և հազիվ թե պետք կա ուսանելու պ. Ֆնտգլյանից: Այս միևնույն է, եթե մի քերական հավակներ, որ մյուսներն իրենից են քաղել, ասենք, **փլուզանեմ** և **կորուստանեմ** և կամ նման օրինակները:

Բ

Այս ակամա տողերից հետո դառնանք խնդրի էության, որ ավելի կարևոր է, և կտեսնենք, որ զուգադիպումն իսկ լոկ ձևական է:

Պ[արոն] Ֆնտգլյան իր ասելով համեմատել է Մաշքոց Մազդակի հետ, որովհետև *mazd* փոխվում է *mašt*-ի ինչպես *yazd*-ը՝ *yašt*-ի: Եթե այս է նրա հիմը, համեմատությունը սխալ է:

Պարսկերեն *yazd*-ը երբեք չի կարող փոխվել *yašt*-ի: Առաջինը ծագում է *yazata* ձևից, որ է ապառնի դերբայ կրավորականի, իսկ *yašt* է անցյալ դերբայ կրավորականի *yaz*-բայից: Երկուսն էլ արմատակից են, բայց հնչական փոխանցման կապ չկա մեջտեղ:

Ուրիշ է ծագումով և կազմով *mazd*-ը < *mand-dha*, առաջինը՝ *ma^{n}d*.- նույն է հուն. *μαθ-εῖν*, սլավոն. *мyд -p*, երկրորդը՝ *dha*-«դնել» արմատը: *d* փոխվում է *z* հաջորդ *dh*-ից առաջ և այս փոփոխությունն այլ կարգի է, քան **յազդ** և **յաշտ** և *mazd*- անցնել *mašt*-ի չէ կարող:

Ինչ վերաբերում է մեր համեմատության, ելակետս և մերձավոր առիթը **Մաժդ**-ոց ընթերցումն է, որ հիշեցնում է անմիջապես **Մազդ**- բառը առանց որևէ ճիգի: «Գիրք բղթոց» պահել է և **Մաժդ**-ոց ձևը: Մյուս հիշատակարաններում ընդունված ընթերցումն է **Մաշտ**-ոց և **Մաշք**-ոց: Ստուգաբանական փորձերից առաջ պետք է բանասիրական ճշտումն տարբեր գրությանց փոխադարձ հարաբերության: Նայելով թե, որ ձևը կհամարվի հնագույն ըստ այնմ և ուղղելու է ստուգաբանական որոնումները:

Սկզբնական ձևը թվում է, թե **Մաժդոց** է, որ գտնում ենք Պրոկղի թղթի մեջ, որ մատենագրության անդրանիկ վավերագիրներից է: Պրոկղի թղթի պատասխանի մեջ կարդացվում է **Մաշդոց**: Նույն ընթերցումը պահում է և «Կնիք հավատոյ» հին և կարևոր հիշատակարանը, ինչպես և մյուսները, որ օգտվել են Պրոկղի և Սահակի թղթերից (Աբրահամ կաթողիկոս, Գագիկ թագավոր և այլ): Համեմատաբար ուշ ժամանակ են երևան գալիս **Մաշտոց** և **Մաշքոց** գրություններ:

Եթե առաջնությունը տալու լինենք **Մաժդ**-ոցին, իսկույն աչքի է ընկնում նրա հնչական մերձավորությունը **Մազդ**-ի: Սակայն իրանական գետնի վերա **Մազդ** չէ կարող տալ **Մաժդ**, որովհետև պակասում են հարկավոր պայմանները, օրինակ *i* կամ *r* հնչյունը նախընթաց վանկում, որպիսի գրությամբ *z* փոխվում է *ž*:

Մնում է մեկնել հայերեն, թերևս, **-ոց** մասնիկի -ց հնչյունի ազդեցությամբ: Մի ենթադրություն, որ կմնա այդպիսին, մինչև որ ուրիշ օրինակով չհաստատվի այս հնչական անցումը:

Բայց կարող է պատահել, որ **Մաշտոց** և **Մաշթոց** սովորական գրությունը լինի և՛ հին և՛ հարազատ ձևը, և սրանից առաջացած **Մաշդոց** և **Մաժդոց** արևմտյան արտասանության ազդեցության տակ: Մեր լեզվի արևմտյան բարբառի առանձնահատկությունը շատ ավելի հին է, քան ենթադրվում է:

Այս դեպքում պետք է հրաժարել հիշած ստուգաբանություններից և համեմատել **Մաշտոցը** մի ուրիշ անվան հետ, որ դարձյալ իրանական է և հին:

Հերոդոտոսը (VII, 79) հիշում է *Μάσιστος* անունը, որ կրում էր Քսերքսեսի զորականներից մեկը, նա որ առաջնորդում էր Սապիր (հայ Սպեր) ցեղի բանակը: Ասել է, թե Հայաստանի սահմանների մեջ հայտնի է եղել այդ անունը: *Masistus* գերադրական աստիճան է *mas-*, հունարեն *μαχ-ρός* «երկար» բառի, ուրեմն *masišta-* «ամենից երկարագույն»: Կարող է լինել գերադրական և *maz-* «մեծ» բառի, *mazišta* «ամենամեծ»: Երկու դեպքում էլ հայերենում սպասելի է Մաշտ- համաձայն իրանականի:

Իրրև ստուգաբանություն նույնչափ հավանական է, որքան առաջինը: Խնդիրն այն է, թե ո՞ր ընթերցումն է հնագույնը **Մաժդոց/Մաշդոց**, թե **Մաշտոց/ Մաշթոց**:

Հավանականությունը առաջնի կողմն է, դատելով ըստ հիշատակարանի: Նրա վրա հիմնած ստուգաբանություններն այն առավելությունն ունի, որ անվան տալիս է Theophore՝ «աստվածակիր» ծագում, որ այնքան բնորոշ է իրանական անվանակոչության:

Ինչ վերաբերում է **-ոց** վերջավորության, ծագումը մութ է, ինչպես և նրա կապը **-ոց** մասնիկի հետ: Հատուկ անունների մեջ բացի Մաշթոցից նույն մասնիկը ունին **Տիրոց** և **Բարոց**: Առաջին Բագրատունի իշխանի անուն էր, որ Վասակ [Սյունեցու] համախոհներիցն էր, իսկ երկրորդը՝ Վահանի ընկերներից և Պապի որդի: Պապ և Բար նույն անուններն են, մեկը պարթև ձևն է, մյուսը՝ սասանական: Հայրը հին անունն է կրում, որդին՝ նոր: Ինձ հայտնի է և մի երրորդ անուն **Ափոց**, որ սակայն դեռ ստուգելի է ընթերցումը, թեև հավանական է, որ Չափիկ Մոկաց եպիսկոպոս անվան ուրիշ ձևն է: Պ[արոն] Ֆնտգյանի նկատողությունը իմ բերած օրինակների վերաբերյալ անպատեհ է, քանի որ խոսք չի կարող լինել «ավել պակաս»-ի մասին: Իրեն և ընթերցողներին եմ թողնում դատել «զուգադիպումի» արժեքը լեզվագիտական և բանասիրական տեսակետներից:

Գ

Հարգելի պարոնը բարի ցանկություն է ունեցել՝ ցրելու իմ «շվարումս» Մեսրոպ անվան հանդեպ: Ինչո՞ւ հայ լուսավորության հայրը կրկնակի անուն է կրում և ինչո՞ւ նրա ճեռնասուն աշակերտը Կորյունը չի հիշում **Մեսրոպ** անունը, ինչպես և Փարպեցին: Արդյոք մեկը աշխարհական անունն է, մյուսը՝ հոգևոր թե մի ուրիշ գաղտնիք կա, այս հարցերը սպասում են դեռ լուսաբանության, եթե երբևիցե լուսաբանելու հույս կա (3): Պ[արոն] Ֆնտգյան կարծում է, որ այս կնճիռը արդեն լուծել է և լուծել շատ հեշտությամբ: **Մեսրոպ** անունը շինծու և արհեստական է համարում և Խորենացու հնարածը: Լավ է ասած, մարդու աչքը դուրս գա, անունը դուրս չգա: Որպես թե Խորենացին կամենալով Մաշթոցին համեմատել Սերովբի հետ, ստեղծել է Մար-Սերովբ, որից Մեսրովբ: Մեղք է Պատմահորը վերագրել այսպիսի անհեթեթություն: Մաշթոցին «Սրովբէատես» կոչողը գիտենալու էր արդեն Մեսրոպ անունը: Բառախաղը **Մեսրոպ**-ից է ծագել և ոչ հակառակը:

Իր ենթադրությունը արդարացնելու հույսով պ. Ֆնտգյան հիշում է, որ Խորենացին ճարտար է անուններ հերյուրելու մեջ, որի մի ապացույցն է Անուշավան, որ աղավաղումն է Անուշռվանի: Այս առթիվ քար նետել Պատմահոր երեսին անտեղի է: Խորենացին, որի մոտ կարդալու է Անուշռուան փոխանակ Անուշավանի (որ գրչագիրների սխալն է Արտավան և մյուս-ւան, -ուան հանգող անունների ազդեցությամբ) առել է այդ խորհրդավոր անունը Արայի զրույցներից որ Ադոնիսյան տիպի հայ աստվածության պատկեր է մեռնելու և հառնելու հատկությամբ, ինչպես ցույց ենք տվել ուրիշ տեղ (4):

Խորենացուն գողանալ տալով Խոսրով Նուշիրվանի մականունը պարոնը տեսնում է նոր ապացույց, որ Խորենացու Պատմությունը խմբագրված է VI դարում: Ներկայումս արդեն փաստ է, որ Խորենացու Պատմությունը գրված է 680 թվականից հետո և VI դարի մասին խոսք անգամ չի կարող լինել: Դառնալով Մեսրոպ անվան, պետք է ճեռնպահ մնալ նոր մեղքեր բարդել Պատմահոր առանց այն էլ ծանրաբեռնված ուսերին: Խորենացին հեղինակ չէ «Պատմութիւն վասն Սրբոյն Սահակայ եւ Մեսրովբայ» գրության և ոչ հեղինակ ողորմելի բառախաղին:

Մաշթոցի երկրորդ անվան իսկական հնչումը նմանապես անորոշ է, ինչպես և առաջին անվան: Խորենացու Պատմության մեջ Մեսրոպ է և մենք գոնե տրամաղիր էինք առաջնությունը տալու այս գրության: Սակայն, «Կնիք հաւատոյ» ունի Մեսրոբ՝ Պրոկղի թղթի պատասխանում այնտեղ, ուր «Գիրք թղթոց» ունի Մաշդոց: Ի նկատի առնելով «Կնիք հաւատոյ» կարևոր

ժողովածուի պատկառելի հնությունը հավանական է թերևս, Մեսրոբ համարել ավելի հին, քան Մեսրոպ:

Այս պայմանով հնարավոր եմ գտնում առաջարկել հետևյալ ստուգաբանական փորձը:

Մեսրոբ *Mesrob* հաղորդ է իրանական մեծ աստվածության անվան, որ է Միտր: Նա բաղկացած է երկու տարրից **Meh-srob*, ուր առաջին մասը՝ **Meh* ձևափոխումն է Միտրի անվան: Հայտնի է, որ հին *Mitra* տալիս է *Midra, Mihr, Meh, Mer, Mel-*, որտեղից և հայերենում **Միհր, Մեհ** (մեհյան), **Մեր** (Մերշապուհ), **Մեհր, Մլեհ** (<պրս. *Milād* հին *Mihrdat*-ից), ***Μελίας*** (բյուզանդական հայ գործիչ):

Երկրորդ տարրը -**սրոբ** նույնն է ինչ որ տեսնում ենք Խոսրով անվան մեջ, պարսկերեն *χosrōb,*< **hu srāva; srava-* պահված է հայերեն փոխառյալ *դ*-**սրով** բառի մեջ, համապատասխանում է հունարեն *κλέος*, սլավ. **слово** և նշանակում է իսկապես «խոսք, գովք» (հմմտ. ռուս. **слово** «խոսք» և **слава** «փառք»): Հայերեն ***խո***-սրով, *դ*-սրով ավելի հին է քան իրանական ***χο-srōb,*** բայց վերջինս պատահում է նաև Ավեստայում, *dura-srōb* «վատախոս» բառի մեջ, որ հակազրադաշտական և հերձվածող կարապ կամ կարապան դևի մակդիրն է:

Այս վերլուծումով **Մեսրոբ**< *Meʰ-srōb* նշանակում է «Միհր գովող, փառաբանող» կամ «գովեալ ի Միհրէն»: Հունական և սլավոն հատուկ անուններիի մեջ ևս ընդունված է այս բառը, ինչպես *Θεμιστο-κλής, Vladislav*, ուր *κλής*< *κλέης*, **kleues*, և *-slav* հավասար են *-srob* , -սրոբին:

Եվ վերջապես *Meʰ-srōb* -ի *Mesrōb* փոխանցման, այսինքն՝ *-h* հնչյունի կորուստի օրինակ կարող է ծառայել պարսկերեն *Mihrāb* անունը, որ հայերեն հնչվում է Մեհրաբ և Մերաբ: *Mehrāb* ևս կազմված է նույն *Mihr* և *āb* բառերից, *āb*, սանսկր. *ābha* նշանակում է «փայլ», որով *Mehrab* «Միհրափայլ» իմաստի կողմից մոտենում է Մեսրոբին «Միհրափառ»:

Առաջարկիս ստուգաբանության թերիքն այն է, որ համապատասխան անունը չենք գտնում իրանական լեզուներում: Բայց այս թերիքը առանձին կարևորություն չունի: Հայերենում կան շատ բառեր, որ իրենց կազմով իրանական են անկասկած, թեև չեն մնացել կամ միայն նրանց հազիվ նշմարելի հետքերն են մնացել Իրանում:

Ամեն պարագայիկ Մեսրոբ իրանական տեսք ունի և մեր փորձը ապացույց է, որ հնարավոր է պատշաճ ստուգաբանություն գտնել: Հատուկ անունների մեկնությունն ինքնին դժվար է, մանավանդ, երբ եզակի օրինակներ են ինչպես Մաշթոց և Մեսրոպ: Նրանց կապը Արամազդ և Միհր մեծ աստվածների հետ հավանական է, բայց փաստ դառնալու համար պետք է որ վստահ լինենք, որ Մաժդոց և Մեսրոբ հնագույն ձևերն են:

Գ

Չէինք ուզենալ անուշադիր թողնել և պ. Ֆնտգլյանի բանասիրական նկատողությունները մեր աշխատության առթիվ, ուր գովական ջանք է անում մոլորյալիս սխալներն ուղղելու: Մաշթոցի գործունեության մասին խոսելիս ինչ-ինչ դիտողություններ էի արել Կորյունի երկի նկատմամբ, կասկած էի հայտնել, որ երկը գրված է քերևս Վահան [Ամատունու] մահից հետո:

Հարգելի բանասերը փորձում է այլ կերպ բարգմանել և մեկնել Վահանին նայող հատվածը:

Օգնության է կանչում Փոքր Կորյունին և Ագաթանգեղոսին և կրկնակի հանցանք է գործում իրեն մեղսակից անելով անմեղ հեղինակներին:

«Իսկ բարեցապարտին Վահանայ յանկարծահաս կենաց ամենեցուն լիներ, որ աշխարհածնին հայրենեացն սեպհական որդի գտեալ, շնորհաւքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ մերձաւոր կենակից վայելէր եւ զի ըստ օրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան»...[1]:

Ահա ինչպես է հասկանում այս հատվածը պ. Ֆնտգլյան. «Եթե լավ միտ դրվի, այս հատվածը ոչ թե Վահանի մահը կնշանակե, այլ ապրիլն և բարվոք ապրիլը իբր օգնական, պաշտպան, ընտանի ամեն անուն որոնք Մաշթոցի և Սահակա ավետարանական ընթացքով Ս. Գիրքը խոսեցնել տալով վերստին ծնան ամբողջ Հայաստան աշխարհը, Սահակ ու Մաշթոց հայրերուն սեպհական որդի գտնվեցան և հանճին Վահան Ամատունիի հանկարծ ուրեմն կվայելեին բարերար, պաշտպան, ընտանի, «մերձավոր» «կենակից» հոգևոր ծոր ծնունդին բերմամբ»:

Ասել է, թե պ. Ֆնտգլյանը կամայականորեն, հակառակ քերականական կանոնների, ընդգծված, որ որդի «լիներ» հատկացնում է «ամենեցուն» և ոչ Վահանին: Թողնում է «բարեցապարտին» սեռական հոլովը առանց բացատրության: Թարգմանության փոխարեն առաջարկվում է մի մեկնություն բոլորովին կեղծ և անհարիր, ինչպես կտեսնենք:

Վահանի պաշտպանության և հովանավորության պետքն էլ ավելի զգալի էր, շարունակում է պ. Ֆնտգլյան, զի հայրերը վախճանվել էին: Այսպես է ուզում կապել վերջին նախադասությունը նախընթացի հետ: Պարոնը հավատացնում է, որ իրեն պես են հասկացել հիշյալ հատվածը նաև Փոքր Կորյունը և Ագաթանգեղոս, այն է «հանկարծահաս»-ով մահ չեն հասկանալ այլ հասնիլ, պաշտպանել:

Թող բողոքե ինքը՝ Փոքր Կորյունը այս ամբաստանության դեմ.

«Իսկ բարեցապարտան Վահան յանկարծահաս կենաց ասպնջական ցանկալի ամենայն որոց լիներ որ աշխարհածնունդ հայրենեացն սեպհական որդի գտեալ՝ շնորհաւքն Քրիստոսի մերձաւոր կենացն յափտենից լիներ»:

[1] Կորյուն, էջ 47:

Իմաստը անհրկրայելի է և հակառակ պ. Ֆնտգլյանին, որ անտես է արել **սրբոց և յաւիտենից** բառերը: Ասպնջական ծագում է ասպինջ-ից, որ թվում է թե նշանակում է «կայարան, ճիահանգիստ»: Ինչպես հնում, այնպես այժմ կայարանները կամ կարվանսարայները միաժամանակ և հյուրանոց են, իջևան: Այստեղից ասպնջական նշանակում է «հյուր, անցորդ» և «հյուրընկալ, հյուրանոց»: «Ասպնջական լինել». կարող է ունենալ երկու իմաստ՝ «ընդունարան լինել, հովանավորել» և «անցորդ կամ հյուր լինել»: Փոքր Կորյունը գործ է ածում երկրորդ մտքով թեև թվում է, որ քաղված է Մեծ Կորյունից, որ նույն դարձվածքը կիր է առած առաջին իմաստով իբր հյուրընկալող (Խուրս իշխանի համար ասված է «ասպնջական եղեալ» Մեսրոպա[1], ինչպես և Պողոս Առաքյալի բարեկամների նկատմամբ՝ «զբրիստոսամենծար ասպնջականիցն իւրոց»[2]: Հատվածի իմաստն այն է, որ Վահանը՝ մահը հասած, ցանկալի հյուր է լինում բոլոր սրբերին և Քրիստոսի շնորհով մերձավոր դառնում հավիտենական կյանքին: Ուրիշ խոսքով Վահանը մեռնում է և արժանանում սրբերի հավասար հավիտենական կյանքի:

Հետաքրքրական է, որ Մեծ Կորյունի մոտ հայրերի մահը ամփոփող վերջին նախադասությունը Փոքր Կորյունը կապում է հաջորդ պարբերության հետ և այսպիսով զրկում է պ. Ֆնտգլյանին այն նեցուկից, որ որոնում է նա սույն նախադասության մեջ ի նպաստ իր ըմբռնումին: «**Եւ այդ ըստ աւրինակի գրեցոյս առ ի մէջ** զերանելեաց սուրբ **հարցն** զվարս եւ զվախճան փոքր ինչ պատմելով **ի կատարումն** զրանս **ածից**, ոչ եթէ ի հին համբաւուց զրուցաց տեղեկացեալ...» և այլն: Այստեղ «ի կատարումն», թեև առնված է իր բնագրից, բայց ուրիշ կիրառություն ունի, քան այնտեղ, նման «ասպնջական եղեալ» դարձվածքին, որին տված է ուրիշ նշանակություն, քան Մեծ Կորյունի մոտ է: Իմաստն այն է, թե որովհետև հայրերը մեռել էին, որպես ինքն արդեն գրել է, ուստի թող ոչ ոք չկարծե, որ ուրիշի բերանից է քաղված կամ զրույցներից: Ոչ, ինքն ականատես է եղել հայրերի և՛ կերպարանքին, և՛ գործերին: Այս ուրիշ բան է, քան ենթադրում է պ. Ֆնտգլյան, որի կարծիքով, Վահանը բարի ժամին է հասնում, որովհետև սուրբ հայրերը վախճանել էին և տեղը բաց էր մնացել:

Ագաթանգեղոս ևս հռուսալի բարեխոս չէ պատվական հակառակորդիս համար: Բավական է ասել, որ վիճելի բառը՝ «յանկարծահաս» Ագաթանգեղոս փոխել է «յանկարծակամ»-ի, հետևապես վերացրել է միջից վճռի առիթը: Ագաթանգեղոս քննելի հատվածը շրջում է Տրդատի վերա և արտագրում է հավանորեն Փոքր Կորյունից առանց ջանալու հասկանալ էությունը, բավականանալով հիշյալ բառի թեթև, բայց կարևոր փո-

[1] **Կորյուն**, Վարք Մաշթոցի, Գ. Ֆնտգլյանի հրատ., էջ 45:

[2] Անդ, էջ 10:

փոխությամբ: Հակառակ Փոքր Կորյունին, Ագաթանգեղոսին և նոր բանասերների պ. Ֆնտգյան ուզում է այլ կերպ հասկանալ Վահանի հատվածը և կարծեմ, մոլորվում է ուրիշների «մոլորությունը» ուղղելու առաքինի ջանքի մեջ:

Հարգելի պարոնի առաջարկած իմաստն անընդունելի է: Վահանի մասին Կորյունը պատմում է, որ հազարապետ էր, որ սուրբ հայրերի աշակերտն Հմայակ Մամիկոնյանի հետ, և որ Մեսրոպի մահից հետո նա է, որ հոգածու է եղել հանդիսավոր թաղելու և խորան կանգնելու: Այս բոլորից հետո Կորյունին վերագրել այն, որ նա կարող էր ասել, թե Վահանը **հանկարծ** հրապարակ եկավ իբր հովանավոր վերածնյալ երկրին և փոխարինեց մեռած սուրբ հայրերին, անհաջող և անհիմն ենթադրություն է: Կորյունն այնքան մեծ համարում ունի Ս. Սահակի և Մեսրոպի մասին, որ երբեք չէր ներել իրեն կարծելու, որ Վահանը մի սոսկ իշխան՝ կարող էր նրանց տեղը բռնել: Կարիք չկար այսպիսի արտասովոր շողոքորթության: Վահանից ավելի արժանի մարդիկ կային: Եվ սուրբ հայրերի փոխարեն արդեն «ի նոյն վերակացութիւն դառնայր Յովնան»-ը, որ կապանքների մեջ արժանացել էր սրբության և՝ «խոստովանողական անուն ժառանգեաց»: Եվ միթե միայն Հովհանն էր: Իսկ Հովսեփը, որ տեղակալ էր և որի հրամանով գրում է Կորյունը, ո՞ւր էր, և ո՞ւր էին այն սրբազան եպիսկոպոսները, այն փայլուն կաճառը սուրբ հայրերի, որ Մեսրոպի մահից քանի մի տարի հետո պիտի ժողովվեին Արտաշատում ճակատ դնելու պարսից բռնության ի պաշտպանություն եկեղեցու: Պակաս չէին և քրիստոսասեր իշխանազունք, Վարդան և Վասակ իրենց համախոհներով այն ժամանակ տակավին սև և սպիտակ ոչխարների չէին բաժանված և կազմում էին մի հավատարիմ հոտ: Քանի մի տասնյակ լուսավոր անուններ շարքին Վահանն այնպիսի մի բացառիկ դեմք չէր, որ Կորյունը նրան պարգևեր քրիստոնեից հովանավորի, Սահակի և Մեսրոպի փոխանորդի նախանձելի պատիվը: Ո՛չ, Վահանը երևան է գալիս Կորյունի մոտ, համեստ դերում, եթե միայն չաղավաղենք նորա խոսքերը:

«Իսկ բարեացապարտին Վահանայ յանկարծահաս կենաց ամենեցուն լիներ...» նշանակում է «բարեացապարտին Վահանայ հաս կենաց յանկարծ լիներ ամենեցուն», այսինքն՝ Վահանի կյանքի վերջը անսպասելի էր բոլորի համար: Կորյունը սիրում է ճարտասանական ոլորուն դարձվածներ: Հանկարծահաս՝ ածական չէ, այլ գոյականի իմաստ ունի և կախված է «բարեացապարտին Վահանայ» սեռական հոլովից: «Ամենեցուն»՝ չի վերաբերում «կենաց»-ի, այլ ենթարկու է «հանկարծ»-ի, որ միացել է «հաս»-ի հետ: Նույնպիսի եղանակով Կորյունը գրում է՝ «հայրենակատար մեծարեալ պայմանաւ», այսինքն՝ մեծարյալ կատարմամբ պայմանի հայրենյաց (կամ

հարց)։ «Հաս կենաց» նույնն է ինչ որ օր-հաս մոտավորապես, և նույնանիշ է մահվան։

Հետևյալ նախադասությունը վերաբերում է Վահանին և ոչ ամենեցուն՝ «որ աշխարհածնիւն հայրենեացն սեպհական որդի գտեալ, շնորհաւքն Քրիստոսի մերձաւոր կենակից վայելէր»։ Սրա իմաստը պարզելու համար պետք է ուշադիր լինել «բարեացապարտ» բառին։ Ի՞նչ է նշանակում «բարեացապարտ» և ինչո՞ւ է Վահանը այդպես կոչվում։

Բարյացապարտը նա է, որ ուրիշից բարիք է տեսել և ուրեմն պարտք մնացել, անհատույց եղել։ Վահանի ստացած բարիքը մեկնվում է հետևյալ նախադասության մեջ, որ է գրական ծննդյամբ որդի է ճանաչվել հայրերի կողմեն, ուրիշ խոսքով աշակերտել է Ս. Սահակին և Մեսրոպին։ Արդարև վերև Կորյուն արդեն հիշում է, որ «գլխավոր աշակերտների» թվում գտնվում էր Վահան Ամատունին և Հմայակ Մամիկոնյան։ Ասել է, թե Վահանը երախտապարտ է, որ սուրբ հայրերը վարդապետել են նրան և որդեգրել որպես մտավոր, գրագետ զավակ։ Դարձյալ երախտապարտ է Վահանը, որ Քրիստոսի շնորհով արժանացել է «մերձավոր, կենակից» լինելու պատվին։ «Մերձավոր և կենակից» հոմանիշ են և նշանակում են մոտիկություն։ Եթե հաջորդ նախադասությունը՝ «եւ զի ըստ օրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան» շարունակություն համարենք Վահանի նայող հատվածին, ինչպես տպագրության մեջ է, որին համամիտ է և պ. Ֆնտգյան, այն ատեն Վահանի վայելած մերձավորությունը պիտի տեղափոխենք անանց աշխարհը։ «Շնորհաւքն Քրիստոսի» դարձվածն ավելի հավանական է դարձնում այս ըմբռնումը նույնիսկ անկախ վերջին նախադասության կցումից։ Վահանը կենդանությանը որդի էր սեպհական հայրերի, իսկ մեռնելուց հետո Քրիստոսի շնորհով դառնում է կենակից հայրերին և այն աշխարհում, քանի որ հայրերը ևս արդեն վախճանած էին։ Փոքր Կորյունը ճիշտ այսպես է հասկացել, ասելով «մերձաւոր կենացս յաւիտենից լինէր»։

Սակայն ավելի հավանական է, որ հայրերի մահվան վերաբերող նախադասությունը կապված է հաջորդ տողերին՝ «ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ եւ մատենագրեալ զայս կարդացուք...» կապն այնպես է հասկանալու, որ հայրերը քանի որ մեռած էին, կարող էր կասկած ծագել, որ համբավներից է քաղած հեղինակն իր պատմությունը։ Այս կասկածը վանել է ուզում հավատացնելով, որ ինքը գրում է որպես «ականատես եղեալ կերպարանացն եւ լսող շնորհապատում վարդապետութեանն»։ Կտեսնենք, որ հեղինակի երկյուղը խորհրդավոր է։

Ե

Պ[արոն] Ֆնտգյանի նորալուր մեկնությունը, կարծեք, չի արդարանում բնագրի ստույգ վերլուծումով։ Խոսքը իսկապես Վահանի մահվան մասին է։

Հատվածի իմաստը արգո պարոնը փորձում է գտնել անգամ Եղիշեի մոտ: Իրրև թե նրա խոսքերը՝ «որ հազարապետ աշխարհին էր իրրեւ զհայ վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից» շոշափում են Կորյունի հատվածը Վահանի մասին, համաձայն իր մեկնության: Հազիվ թե: Հազարապետությունը մի պաշտոնավարություն էր, որ շատ մոտ էր կանգնած շինականության, ինչպես պարզել ենք ուրիշ տեղ: Արշակ թագավորի ժամանակ հազարապետությունը գտնվում էր Գնունյանց ձեռքին և Փավստոսը անվանում է նրանց «շինականաշէն», նրանց պաշտոնը՝ «աշխարհատես խնամակալութիւն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութիւն»: Այն «աշխարհը», որ տեսնում, խնամում, շինում, տածում են շինականությունն է, աշխարհիկ ժողովուրդը, որ Եղիշեն կոչում է «աշխարհականք քրիստոնեայք»: Փավստոսի նման Եղիշեն ևս կարծում է, որ հազարապետը հայր է, խնամակալ ժողովրդյան: Եղիշեի խոսքերը հազարապետի անձի մասին չէ, այլ հազարապետության որպես պաշտոնեության կամ, ինչպես Փավստոսն է ասում, գործակալության: Արդեն հազարապետի անունն անգամ չի հիշում և գանգատվում է, որ Ատրորմիզդը հեռացնում է հայ հազարապետին, խլում է հայերի ձեռքից այդ կարևոր պաշտոնը և հանձնում ոմն պարսիկի: Ուրիշ առթիվ Եղիշեն հիշում է հակառակ Վահան Ամատունուն, բայց առանց գովեստի, առանց ակնարկի, որ նա որևէ առավելություն ունի մյուս իշխանների հանդեպ, նա, որին Սուրբ Սահակի և Մաշտոցի տեղը բռնելու մեծ արժանավորությունն է ուզում արտոնել պ. Ֆնտգյան: Որքան և՛ կարող և՛ արժանավոր անձն լիներ Վահան, նա սուրբ հայրերի վերաբերմամբ միայն բարյացապարտ է, որովհետև գիր է սովորել, որդի ճանաչվել և նրանց կենակցությունը վայելելու արժանացել այս, թե այն աշխարհում: Այլ կերպ մտածել էլ չէր կարող Կորյունը, այնքան մեծ և բարձր էին նրա աչքում սուրբ հայրերը:

Արդ Վահանի մահվան հիշատակությունը, ինչպես և մի քանի ուրիշ դիտողություններ կասկածելի էին դարձրել մեզ համար Կորյունի գրության, ավանդաբար ընդունված, ժամանակը: Վահանը գերված նախարարների թվումն էր, ուրեմն Կորյունի գործը չէր կարող առաջ երևալ, քան գերիների դարձը:

Այս մոլորությունը վանելու բարի նպատակով է, որ պ. Ֆնտգյանը փորձում է նորապես լուսաբանել վտանգավոր հատվածը: Կարծելով, որ կասկածս իր սաղմի մեջ արդեն խեղդել է իր մեկնությամբ, հայտարարում է մի շարք պատգամներ, որոնց վերա կանգ առնել հարկադրված ենք:

Արգո պարոնը կարելի չէ գտնում, որ Կորյուն ապրած լինի մինչև 450 թվի աղետավոր անցքերը, և ոչ «տրամաբանական, որ Վահան Ամատունի 442 թվին հանդիսավորապես Մաշտոցի գիրը կազմելե հետո... ութ տարիներ ևս

անցուցած ըլլա առանց ավարտելու մտահնիկը»: Տարաբախտաբար տրամաբան պարոնը զլանում է ծանուցանել, թե որտեղից գիտե, որ Մաշթոցի գիրը կազմվել է 442 թվին: Թվում է, թե վեճի նյութը հենց այս է, որ ենթակա է քննության:

Դարձյալ՝ Շահապիվանի ժողովի 444-445 թթ. կանոնների մեջ պ. Ֆրնտգըլյան գտել է ինչ-ինչ կետեր, որ առնված կրվին Կորյունի գրքեն, ուրեմն Մաշթոցի Վարքը առաջ է այդ ժողովից: Սակայն որքան և քննելի լինի Կորյունի գործը, համենայն դեպս նա շատ ավելի վավերական է, քան Շահապիվանի ժողովի կանոնները, որոնք միայն պ. Ֆնտգլյանի համար հորինված կկարծվին 444-445 թվին:

Այնուհետև վկա է կոչվում Ագաթանգեղոսը, որ գիտե և օգտվե Կորյունեն և որ «Ե դարի կիսեն ետք չի կրնար գրված ըլլալ, քանի որ Փարպեցին իր առաջին գիրք պատմության կհիշե զայն»:

Երջանիկ է այսպես մտածողը, որ հեշտությամբ վճռել է պարզել այն կնճռոտ խնդիրները, որոնց առաջ կանգնած է անզոր հայ բանասիրությունը: Փարպեցու Առաջաբանը խառնակ է և կասկածի տակ: Վրայից կարծես օտար ձեռք է անցել: Հիմք կա անվստահելու, որ Ագաթանգեղոսն առաջին գիրք համարվեր Փարպեցու օրով: Նրանից քիչ հետո ապրած հույն հեղինակից գիտենք, որ VI դարի առաջին կիսում Փավստոսի գործը այլ վիճակի մեջ էր, քան այժմ և ամփոփում էր նաև Հայոց սկզբնական պատմությունը, որ է Անանուն, Կեղծ-Մարաբաս և կամ Կեղծ-Ագաթանգեղոս: Հարցը քննված է մեր կողմե դեռ 1901 թվին և հույն վկայության ճշմարիտ իմաստը լուսաբանված: Շատ տարիներ անցած ուրիշներն էլ են նույն հարցով զբաղվել և եկել նույն հետևության, առանց պատշաճ հարկը տալու հետազոտությանս: Դափնեպսակս վտանգված չեմ համարել, այլ կարծել և կարծում եմ, որ ինձնից անկախ են հանգել նույն եզրակացության: Գոհ եմ մնացել տեսնելով, որ ուրիշներն ևս նույնն են մտածում, ուրեմն, հայացքս ճշմարիտ է և հաստատուն (5):

Արդ, եթե VI դ. առաջին կիսում Անանունի պատմությունը դեռ անջատված չէր Փավստոսից, որ թափառե անտեր անտիրական և վերջը Ագաթանգեղոսի անունով ծպտյալ հյուրընկալվի Սերեոսի կողմից, ապա ուրեմն Փարպեցին առաջին պատմագրի պատիվը պետք է տար Փավստոսին և ոչ Ագաթանգեղոսին: Փարպեցու Առաջաբանի շփոթը ծագել է թերևս նրանից, որ փորձել են սրբագրել և հարմարել Առաջաբանը նոր գրության, որ ստեղծվել էր Անանունի անջատումով և առաջնությունը անցել Ագաթանգեղոսին: Եվ զարմանալու չէ, քանի որ գիտենք, որ անգամ նորերս 1793 թվի հրատարակիչը հնարավոր էր համարել աղավաղել Փարպեցու գործը, ներս առնելով Խորենացուց մի հատված Մաշթոցի վերաբերյալ (6):

Թողնենք սակայն այս հարցը և ընդունենք, որ Առաջաբանը հասել է մեզ հարազատորեն, իր սկզբնական վիճակի մեջ: Ո՞վ կարող է հավաստել և կամ ի՞նչ գրավական, որ Ղազար Փարպեցու առաջ դրված Ագաթանգեղոսը ճիշտ այն Ագաթանգեղոսն էր, որ այսօր տրամադրելի է, խճողած Կորյունից քաղած փոխառություններով:

Հայաքնին բանասիրությունն այլ կարծիք ունի, քան պ. Ֆնտգյան Ագաթանգեղոսի մասին: Պրոֆ. Ն. Մառը, որ հրատարակել է արաբական թարգմանությունն և ուսումնասիրել, եկել է այն արդյունքին, թե այժմյան Ագաթանգեղոսի խմբագրությունը իջեցնելու է մինչև ութերորդ դարը (7):

Մի ուրիշ և վերջին առարկությամբ պ. Ֆնտգյան «իր տկարամտության անհավատալի» է համարում, որ Կորյունի պես ջերմ կրոնավորը գովեր Վասակին 450 թվից հետո, երբ Վասակ հանեց իր դիմակը և հայտնվեց որպես «եկեղեցականներու դեմ ոգորող, մոգպետի աջակից, կրակատուն կանգնելու օգնական»: Իսկ ինչ է նշանակում Կորյունի զարմանալի և բարձր գովեստը, որ Սյունյաց իշխան Վասակը «քաջ էր, պարգեւեալ յԱստուծոյ, այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ»: Այստեղ արդեն «իր տկարամտութեան», ընդհակառակը, հավատալի է համարում, որ Կորյունի խոսքերը նախագուշակումն են, որ Վասակը պիտի խորագիտությամբ քնացներ պարսից կասկածները, վստահություն գրավեր երկրում, մարզպան դառնար, որպեսզի հետո կրակապաշտության ախոյան հանդիսանա և ազգային կրոնը ոտնակոխ անե իր քաղաքական հայացքների նպաստին:

Ասել է թե Վասակը, այդ «պարգեւեալն յԱստուծոյ», ավելի քիչ հասկացողություն ուներ քրիստոնեության արժեքի մասին, ինչպես և կրակապաշտության թերիքի, քան պ. Ֆնտգյանը: Դժվար է հաշտվել այս չարատանջ մտքի հետ: Կորյունն ինքը համաձայն չէ և այլ տեղեկություն ունի Վասակի աստվածապաշտության վրա: Նա վկայում է, որ Սյունյաց իշխանը «բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեան, իբրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ եւ ծառայեալ ըստ Աւետարանին վայելչութեան, **մինչ ի վախճան** զհրամայեալսն ի գործ բերէր»[1]:

Սրա պատասխանն էլ պատրաստ է պ. Ֆնտգյանի կողմեն: «Քաջահայտ է,- ասում է հարգելի պարոնը,- թե Վասակ չպահեց այդ հին հպատակությունը 449 թվեն ետքը, ուրեմն Կորյունի գիտցած **մինչ ի վախճան** հպատակությունը կեզրափակի 449 թվականին, իբրև ծայրագույն եզր: Ուրեմն Կորյունը գրած է իր մատենիկը այդ թվականեն առաջ»:

[1] Կորյուն, էջ 25:

Այս հասկացողությամբ ոչ միայն Վասակը, այլև պատվական Կորյունը տկարամիտ են դուրս գալիս: Արդարև, որ խելքը գլխին մարդը կարող է տակավին կենդանի, գործունյա և անգամ «երիտասարդ», ինչպես որոշում է տարիքը սլ. Ֆնտգլյան, անձի մասին ասել, թե նա **մինչև վերջը** հավատարիմ մնաց: Եթե հնարավոր լիներ **մինչև ի վախճան** դարձվածքին ժամանակագրական իմաստ տալ, լավագույն ապացույցը կունենայինք, որ Կորյունին հայտնի է Վասակի վախճանը: Սակայն անհարթության պատճառ ինքը Ֆնտգլյանն է, որ կամ բավականին հմուտ չէ գրաբարին և կամ հապճեպ մտածող: «Մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր» նշանակում է հրամանները կատարում էր, գլուխ էր բերում **ամբողջովին, սկզբնե մինչև վերջ, անթերի**: Որքան է տևել և երբևիցե ընդհատվել է, չգիտենք և վիճելի է: Պ[արոն] Ֆնտգլյանի պատմագիտությունը, որ Եղիշեի վարդապետությունից այն կողմը չի անցնում, չի կարող ամեն պարագայիև լույսի ցնցուղ համարվել: Կարելի չէ մտածել, որ Վասակ 410 թվից մինչև 450 թիվը, ինչպես ինքն է որոշում, ուրեմն 40 ձիգ տարիներ, գործադրած լիներ միայն այն նպատակին, որ խաբեր, նենգեր պարսիկներին և իր հայրենակիցներին, որպեսզի մի օր զորավիգ լինի մոգերին: Կարելի չէ, որ նա, որ ճգտում էր հայոց թագին, հայոց անկախության, ինչպես իր հակառակորդներն են խոստովանում, պետք ունենար ուսանելու պ. Ֆնտգլյանից, թե ի՞նչ էր «հայ ժողովրդի ինքնության պահպանման խորունկ բնազդը»: Դժվար է հավատալ, որ Մաշթոցի աջակցի սրտում քառասուն տարի ծխեր պարսից մոխրոցի մուխը, փոխանակ հայրենի սրբության սրբազան կնդրուկը: Այդքան տարվա լուսավոր աչքը չէր կարող մի ակնթարթում խավարել կրակարանների բոցից (8): Ժամանակն է մաքրել մեր անցյալը և ներկան եսատես կրքերի անառողջ ողողումներից: Այսօր իսկ մեր հասարակական պատասխանատու ուժերը այլևերպ չեն որակում միմյանց, քան դավաճան, ազգուրաց, օտարամոլ, շահասեր և ստրուկ օտար շահերի: Ուտած կրքերը չարաշունչ հողմեր են, որ սպառնում են հանգցնել այն ճրագները, որ լուսավորում են մեր խավար ուղին: Պատմագիտությունը պիտի կարողանա անաչառ լինել տալով **cuique suum**:

Զ

Պ[արոն] Ֆնտգլյան չի կարող տրտնջալ, որ ուշադրության պակասություն ցույց տվինք իր հանդեպ: Բոլոր փաստարկությունները քննեցինք և ցավում ենք, որ ոչ մի դրական ցուցում չգտանք, որ փարատեր կասկածներս Կորյունի մասին:

Հայտնի է, որ Կորյունի լեզուն ևս եզակի է իր հատկություններով անդրանիկ մատենագիրների շարքին: Արհեստական և շինծու ոճ է, ճապաղ և

ծանր, որպես ճնշող սայլ և չունի մյուս ժամանակակիցների ոճի ճեմական թեթև և սահուն ընթացքը:

Տարակուսելի է Մաշթոցի ակումիտ տիտղոսը: Թեոդոսիոս կայսրը լսելով հայ գրագետի հռչակը իրրև թե հրամայում է կոչել «վայելուչ մեծարանօք զսուրբն ակումիտ»: Ակումիտ, հունարեն ἀκοίμητος, նշանակում է «անքուն»: Այսպես էին կոչվում այն վանականները, որ պարտավոր էին հերթով աղոթք անել ևս գիշերներն առանց ննջելու: Ճշմարիտ է, որ անքունների վանական կարգը երևան եկավ Թեոդոսիոսի օրով և հիմնադիրն էր ոմն Ալեքսանդր, որ հետո Ասորիքից տեղափոխվեց Կ. Պոլիս և այնտեղ հիմնեց նոր վանք: Բայց անքունները հռչակ ստացան միայն [V] դարու երկրորդ կեսից, երբ Ստուդիոս կրոնավորը հիմնարկեց Ստուդիոն կոչված նշանավոր մենաստանը 463 թվին: Այս թվից հետո միայն ակումիտ անունը կարող էր «վայելուչ մեծարանք» նկատվել: Վահանի մահը նմանապես 462 թվից հետո է: «Ճշմարտապատում եւ վարդապետասէր» Հովնանը, որ Տիզբոնում չարչարանք կրելուց հետո դարձավ «ի վերակացութիւն յերկիրն Հայոց», եթե վերակացություն բառով կաթուղիկոսություն հասկանանք և ոչ եպիսկոպոսություն կամ սովորական հովվություն, կարող է լինել Հովհան Մանդակունին:

Ահա կետեր, որ կասկած են հարուցանում և Կորյունի վերջաբանությունը մանավանդ ընդունակ է զորացնելու կասկածամտություն:

Կորյունը հարկավոր է գտնում հավատացնել, որ ինքը համբավներից և զրույցներից չէ քաղում իր պատմությունը՝ Մաշթոցի վարքը, այլ անձամբ ականատես է եղել հայրերի գործերին և անգամ գործակից: Նա «ականատես է կերպարանացն եւ առընթերակաց հոգեւորական գործոց եւ լսող շնորհապատում վարդապետութեանն եւ նոցին արբանեակ»: Սկզբում արդեն հեղինակն իրեն հանճարարում է որպես աշակերտ Մաշթոցի՝ «մասնաւոր աշակերտութեամբ վիճակ առեալ» և գրում է մյուս աշակերտի՝ Հովսեփի հրամանով: Ի՞նչ կարիք նորին շեշտելու, որ ինքը **«տեսել է** հայրերին, **ներկա է** եղել հոգևոր գործունեության, **լսել է** շնորհապատում վարդապետությունը և վերջապես նրանց **աշխատակիցն է»**: Ո՛րտեղից է հեղինակի այս զգուշավոր ջանքը առաջուց փարատելու հնարավոր կասկածները, որ գրողը ժամանակակից չէ հայրերին:

Հեղինակի կանխատեսությունն ավելի հեռուն է գնում և ավելի կասկածելի դառնում: Զգում է, որ ժամանակակից գրողից ավելի բան կարելի էր պահանջել, աշակերտը պետք է որ քիչ ավել ճոխ տեղեկություն ունենար իր ուսուցչի և հոր կյանքի վերաբերյալ: Ուստի փորձում է արդարանալ, որ շատ բան գիտե, բայց թողնում է՝ («զամախագոյնն թողես») չի ուզում բոլորը գրի առնել («չէաք իսկ հանդուրժող զամենայն արարեալսն կատակաւ

զիւրաքանչիւրսն «նշանակել»»), այլ միայն այն ինչ որ արժանի պատմելու («առ ի մանրակրկիտ առնելոյ զկարեւորագոյնս պատմելոյ»): Եվ հանկարծ խոստովանում է, որ «ի նշանա<ւոր> գիտակացն (տպ. դիմակացն) քաղելով (տպ. քակելով) **զհամառաւտսն** (տպ. զհամատուրսն) կարգեցաք, որ(ք) ոչ միայն մեզ, այլ եւ որ զ(մ)ատեանսն ընթեռնուն, յայտնի է»[1]:

Մի ակամա *lapsus,* որ մոտ է ճշմարտության: Հեղինակը ուրեմն օգտվել է նշանավոր գիտակներից, և որովհետև մատյան կարդացողները գիտեն այդ, ասել է, թե գիտակները՝ գրավոր աղբյուրներ են: Հարկավ խոսքը Սուրբ Գրքի և Առաքելոց թղթերի մասին չէ, որոնց վկայություններից օգտվում է գրքի սկզբում: Մեր կասկածները զորանում են և ստանում որոշ ձևակերպում: Արդյոք վերջաբանությունը չի պատկանում այն ձեռքին, որ հարկ է տեսել վերստին խմբագրելու Կորյունի գործը: Մաշքոցի Վարքը, անշուշտ, գրել է նրա ձեռնասուն աշակերտը Կորյունը և գրել է պարզ անպաճույճ ոճով, ինչպես կարելի է ենթադրել Ղազար Փարպեցու քաղվածներից: Հետագայում մի ուրիշը Կորյունի գործը վեր է ածել ավելի բարձր ոճի, ինչ-ինչ հավելումներով և հապավումներով:

Գիտենք, որ մեզ հասած Կորյունը ենթարկվել է նորեն կրճատումի, որ հայտնի է Փոքր Կորյուն անունով: Սա հասարակ կրճատում չէ, այլ գրեթե նոր խմբագրություն: Շատ բան զեղջած է, ինչպես ձիգ Առաջաբանը: Կան նաև հավելումներ, որոնց մեջ և Խորենացուց առած հատվածը: Ճիշտ նման ձևով և Մեծ Կորյունը կարող էր լինել վերամշակում Կորյունի հարազատ գործի: Միայն տարբեր նպատակով: Մի դեպքում պետք է զգացված բարձրացնել ոճը և հասցնել ներբողի ճարտասանական քոհչքի, մյուս դեպքում, ընդհակառակը, պարզել և մատչելի անել ընթերցումը:

Այս ենթադրությամբ Կորյունի Վերջաբանը իր անսպասելի մերկացումով հասկանալի կդառնա: Նորա իսկական հեղինակը Կորյունը չէ, այլ նրա խմբագրողը: Եվ նա իրոք ճշմարտախոս է, նշանավոր գիտակը, որից օգտվել է, Կորյունի սկզբնագիրն է: Վերջաբանի երկյուղը և հավաստիացումը, որ պատմությունը ականատեսի գործ է, նորա խոստովանությունը, որ շատը կրճատել է ի նպաստ կարևորի համաձայն կանոնի *non multa sed multum,* այս բոլոր ասված է *bona fide:* Հետևապես, այն կետերը, որոնք կասկածելի են և կամ այդպես են թվում, կարելի է համարել վերամշակողի, այսինքն՝ երկրորդ ձեռքի ակամա ստվեր:

Հազիվ թե կարիք կա հիշելու, որ արծարծածս մտքերը տակավին թեական կառուցումներ են որոշ դիտողությանց հիման վերա, որոշ դժվարություններ հարթելու համար: Դրական վճիռներ չեն: Կորյունը երևում

---

[1] **Կորյուն**, էջ 47:

է, որ Փավստոսի, Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու նման կրել է օտար նորոգիչ ձեռքի ազդեցությունը և նրանց հետ միասին պիտի գտնե լուծում:

է

Պարոն Ֆնտգլյանը, անշուշտ, կներե ինձ, որ պատեհ առթից օգտվելով քանի մի խոսք էլ ասեմ նրա լեզվագիտական խուզումների նկատմամբ:

Հայերեն **խաչ** բառը պարոնը փորձում է հանել ասորական **խուդշ**-ից: Կարծեմ, կարելի է լռությամբ անցնել այսպիսի համեմատությանց մոտեն և բնավ չհիշել, մոռանալ: Կան մտքեր, որ անհավատարիմ թռչունի նման դուրս են գալիս հանկարծ մտքի վանդակից, որպեսզի այլևս չվերադառնան:

Անցնենք «Պահլավերեն փոխառյալ բառեր» հոդվածին[1]: Երեք բառ, երեք գյուտ՝ զուար[ափակ], [վատ] չուէր և նուէր: Ագաթանգեղոսի զուար[ափակ քաղաքորմի] բառը համեմատում է *zbar* բառի հետ: Որպես թե *zbar* նշանակում է «ափ, եզր», ուրեմն զուարափակ ասել է «եզրափակ»:

Մխիթարյան հայրերը կարծել են, որ զուարափակի մեջ զուար-ակ բառն է, ուրեմն քաղաքորմը զուարակներ փակելու համար էր: Ցայժմ էլ ժողովուրդը օտար բառով դալա (արմատակից քաղաք-ին) է կոչում բնական, թե արհեստական շրջափակ կայանները, որոնք հատկացրած են կենդանիների հանգստյան և բացօթյա գիշերելուն: Հնում սա կոչվում էր քաղաքորմ:

Պարոն Ֆնտգլյանը չէ հավանում այս մեկնությունը, գուցե և իրավամբ: Կարող է պատահել, որ **զուար** կապ չունենա զուարակի հետ: Ուզում է տեսնել այստեղ իրանական *zbar*: Տարաբախտաբար ինքը՝ *zbar* պետք ունի լուսաբանության պվելի, քան զուարը: Ջակսոն Վենդիդադի 19, 4 հիշած *zbar* թարգմանում է «եզր» ենթադրությամբ, որովհետև խոսքը գետի մասին է: Բառի նշանակությունը և ստուգաբանությունը անհայտ է: Լեզվական խնդիրներում ավելի մեծ հեղինակություն, քան ամերիկացի պատկառելի գիտնականը, գերմանացի Բարթոլոմե կարծում է, որ *zbarah* նշանակում է **լուր, բարձրավանդակ**: Վենդիդադի պահլավ թարգմանությունը ոչ մի ցպաստ չի բերում բառի լուծման, *zbarah*- թողնելով անփոփոխ *zbar*. սանսկրիտ թարգմանությունը *zbarah*-ի դեմ ունի *padah*- «տեղ», երևի, ստորոտի մտքով:

Ջակսոնի և Բարթոլոմեի պայմանական, և տարբեր ըմբռնումները «ափ» և «լուր» կարելի էր հաշտեցնել, ինչպես կարծում եմ անձամբ, հիշելով գերմանա *Berg* «լեռն», որ անցել է սլավ լեզուներով, որպես *brēg* «ափ», սկզբնապես «ստորոտ» հետո «ափ»: Մեկնությունս հնարավոր է, եթե *zbarah*-ի ստուգաբանական իմաստը որևէ նեցուկ տար հիշյալ ենթադրական

[1] «Հանդես ամսօրյա», 1926, № 9-10:

քարգմանություններին: Նույն Քարքոլոմն համեմատում է *zbar-* սանսկրիտ *hvarah-* «կորություն» բառի հետ: Ավեստայում *zbar-* նշանակում է «ծռտռումուռ գնալ» և գործ է ածվում դևերի քայլվածքը բնորոշելու համար, մինչ բարի ոգիներին է վերապահում սովորական *tak-* «գնալ, վազել» բայը: Եթե հնարավոր է «կորության, ծռության» գաղափարից հանել «վեռ, բլուր» նշանակությունը, կարելի է ընդունելի համարել տված ստուգաբանությունը:

Համենայն դեպս *zbar* մնում է բավականին մութ: Հայերեն **զուար** ևս մութ է, գոնե պ. Ֆնտգլյանի համար: Պարզ է, որ երկու կույրեր չեն կարող առաջնորդել դեպի լույս: Մանավանդ որ ավեստ. *zbafah*, որ պահլավերենում մնում է *zbar* հայերենում ի դեպ փոխառության պիտի հնչեր ևս ***զբար**:

Նպատակից դուրս է որևէ ստուգաբանություն առաջարկել: Կուզեի միայն ակնարկել, որ զուարթափակը մեկնություն է քաղաքորմ-ի, և ուրեմն վերջինս սովորական **դալա** չէր ցած պատնեշով, այլ խոտամբար՝ բարձրապատ: Ներելի է զուար-ի մեջ տեսնել պարթև *vār*. ավեստ. *vāra* և պարսկ. *bār* բառը, որ նշանակում է «պատ»: Հայերեն՝ պատվար ունի իր վերջին մասում նույն *vār* < **pati-vāra* (*pʿrati*). սկզբի զ- թվում է նախդիրի մնացորդ է, հավանորեն, *uz-*, որ նկատվում է զգույշ բառում <ավեստ. *uz-gauš*, «ականջները ցից», այլև ավեստ. *uz-vaēδa-*: Զուար < **uz-vāra*, ուրեմն նշանակելու է «պատ„ վեր բարձրացող», զուարթափակ՝ որմափակ: Կրկնում եմ, ենթադրություն է այս լոկ:

Անհաջող է և պ. Ֆնտգլյանի երկրորդ համեմատությունը: Հայերեն **-շուէր** չի կարող համաձայնել օտար՝ ոչ իրանական *svat* (*)-ին: **Վատաշուէր** ամբողջովին փոխառություն է և ենթադրում է պարթև **vatišver:* Անտեղի է **գէշ** օրինակը, որպես թե **գա(ր)շ**-ից: Պրոֆ. Մառը շատոնց արած է այս համեմատությունը, հանելով **գէշ**-ը, ***գայշ**-ի միջնորդ ձև **գէշ**-ի և **գարշ**-ի: Բնավ չեմ կարծում այստեղ «վերհուշումի» հետքեր որոնել, այլ հասարակ զուգաղիպում, որ հնարավոր է, չնայելով որ անճամբ **գէշ - գարշի** նույնացումը համոզիչ չեմ գտնում:

Երրորդ գյուտը ավելի հանդիսավոր է: Պարոն Ֆնտգլյան պետք է տեսել հայտնել այդ մասին ամերիկացի իրանագետի, պրոֆ. Ջակսոնին, «որին շատ գոհունակություն է պատճառեր»: Արդ չնայելով Ջակսոնի հավանության «պահլավիկ *nvar* չէ կարող նույնանալ **նուէր**-ին հետ: Բարեբախտաբար նվեր այն փոխառություններից է, որի ստուգաբանությունը վաղուց և ճշգրտորեն հայտնի է: **Նուէր** ծագում է պարթև *niveda*, պարսկ. *nuvēd* ق س, ավեստ. *ni-vaēδa-* (*ni-vaedayemi* բայի մեջ): *nvar* տեղ չունի այս շարքի մեջ:

Կասկածելի ենք համարում անգամ *nvar* գոյությունը. Դենկարտի՝

aspānvar-i Visašpu- մեջ *aspānvar* վերլուծել՝ *aspā-nvar* անհեթեթություն է, *aspā*-ի երկար *ā* կմնա առեղծվածային: Հասկանալի է, ինչո՞ւ Վեստը կարդում է *aspān-pur*, կամ *aspāχur*, որպեսզի *aspā*-ի *ā* անուշադիր չթողնե:

Պահելավ գրերը ազատություն են տալիս այլևայլ կերպ կարդալու: Եթե մեկը ուզում է *-n* տառը տեսնել և կարդալ *aspānvar*, ինչպես պ. Ֆնտգլյանը, այն ժամանակ պիտի բառը լուծել *aspān* և *var* և ոչ երբեք *aspā* և *nvar* (*aspān* սեռական հոլովն է հոգնակի, իսկ *aspā* կլինի անհասկանալի ձև): *Aspāxur* քերականորեն ճիշտ ընթերցում է *aspā* + *āxur* = *aspāxuri*, նույնպես քերականորեն ճիշտ *aspān -pur* «ձիոց քաղաք», բայց *aspā-nvar* անհեթեթ է քերականորեն:

Պարոն Ֆնտգլյանին գայթակղել է իմաստը: «Ասպանուէր» կարդալով, կարելի է «ձիազոհ» հասկանալ և ուրեմն պարզել մութ պարբերությունը այն մտքով, որ Զրադաշտին հանդիպելիս Վշտասպ ձիու զոհ էր մատուցանում: Արգո պարոնը այս միտքը շնջացել է գիտնական Ջակսոնին և սա «հայտնել է իր գոհունակությունը այս լուծումին»: Այսպես է, որ չար մտքերը պատրում են երբեմն առաքինի մարդկանց:

«Դենկարտ» պահլավ գիրքը հորինված է Ք. հ. IX դարում և այլ նպատակ չունի, քան մեկնել բացատրել Ավեստայի սրբազան գիրքը: Ավեստայում և ոչ մի նշան ձիազոհի, ինքը՝ ձին գրեթե պաշտելի է, մանավանդ սպիտակ ձին, որը ինչպես լուսո արտահայտություն կապակից է աստվածներին: Հավանական չէ, որ «Դենկարտը» հանկարծ մտաբերեր դարերով մոռացված, վերացված ձիազոհը, և հիշեր հակառակ Ավեստայի և այն էլ մի անգամ որպես *ἅπαξ λεγόμενα.*

ԴԱՐՁՅԱԼ ԿՈՐՅՈՒՆԻ ՇՈՒՐՋԸ

«Հանդես Ամսօրյա»-ի մեջ (1927, թիվ 9), պ. Ֆնտգլյան հաճել է պատասխան գրել մեր դիտողությունների առթիվ, տպված նույն հանդեսում (1):

Պ[արոն] Ֆնտգլյան մի գյուտ է արել, Կորյունի մի հատվածի մի նոր մեկնություն: Որպես ապացույց, որ ինքը ճիշտ է հասկանում հիշյալ հատվածը, կոչ էր արել Փոքր-Կորյունի և Ագաթանգեղոսին, որ սրանք ևս իրեն իբրև թե համամիտ են: Ահա՛ իր հայտարարությունը. «Փոքր-Կորյուն և Ագաթանգեղոս հանկարծահասով մահ չեն հասկանար»:

Արդ, մենք ցույց տվինք, որ այս կոչումը հանիրավի է, ո՛չ Փոքր-Կորյուն և ո՛չ Ագաթանգեղոս պ. Ֆնտգլյանի գործին վկաներ չեն: Կարծեմ, պարզ է խնդիրը:

Բայց տեսեք, ինչպես է թյուրում հարցը պ. Ֆնտգլյան ասելով, որ մենք զբաղվում ենք Կեղծ-Կորյունով, փոխանակ հարազատի, «իբր ուղիղը գերադասելով», այլև ուզում ենք որպես թե «Կեղծ-Կորյունով ուղղել հարազատը»: Մտքի այս խոտորումը ներելի չէ բնավին մինչև անգամ պ. Ֆնտգլյանի նման բանասերին: Հակառակորդին հասկանալը և իր ասածը հիշելը առաջին և տարրական պահանջն է ամեն մի վեճի, առանց որի վեճն իսկ դառնում է ժամավաճառություն: Սրանով պ. Ֆնտգլյան կրկնակի մեղանչում է, զրպարտելով նախ Կեղծ-Կորյունին և Ագաթանգեղոսին և հետո մեզ: Խնդիրը բնավ այն չէ, թե ինչպես է վերաբերում Փոքր-Կորյունը հարազատին: Ավելին կասենք, նրա վերաբերումը մեզ համար բոլորովին պարտադիր չէ: Հարցն այն մասին է, թե Կեղծ-Կորյունը իրավ կողմնակի՞ց է պ. Ֆնտգլյանի ըմբռնումին, ինչպես վերջինս հավատացնում է, թե սա սխալվում է իր կոչումով: Ցույց տվինք, որ սխալվում է: Ուրիշ ոչինչ: Նկատել էինք, որ Փոքր-Կորյունի մեջ կան խոսքեր, որ գուցե սպրդել են պ. Ֆնտգլյանի ուշադրությունից, խոսքեր, որ վկայում են, որ «յանկարծահաս»-ով Վահանի մահն է հասկանում: Պ[արոն] Ֆնտգլյան առարկում է, որ այս խոսքերը Փոքր-Կորյունի «ընդմիջարկություն» են, մոռանալով, որ կարևորն հենց այդ է, որ պարզում է մեզ Փոքր-Կորյունի ըմբռնումը: Այդ ըմբռնումը ընդդեմ է պ. Ֆնտգլյանին և ուրեմն, անարդար գործ է կատարում պ. Ֆնտգլյան, երբ հայտարարում է, որ Կեղծ-Կորյունը նման է մտածում: Մենք չենք, որ դիմում ենք Փոքր-Կորյունին մեր ասածը հաստատելու համար, այլ ինքը՝ պ. Ֆնտգլյան և մենք Փոքր-Կորյունը քննելով, չենք ուզում հարազատ

Կորյունը ուղղել, այլ ուղղել պ. Ֆնտգլյանի սխալ կոչումը: Առանձին ընթերցում չէ հարկավոր, որ հասկացվի այս պարզ ճշմարտությունը:

Սակայն պ. Ֆնտգլյան թյուրելով հարցը, զարմանում է, որ մենք Վահանին սուրբ ենք համարում: Դարձյալ, նախ մենք չենք սուրբ համարողը, այլ Փոքր-Կորյուն: Եվ երկրորդ՝ ինչո՞ւ է պ. Ֆնտգլյան զարմանում, որովհետև Վահան «աշխարհիկ հոգեորով և կրքերով զգածյալ մարդ էր»: Հարազատ Կորյունը համարում է Վահանին «այր պատուական եւ երկիւղած» և ուրեմն հնարավոր էր, որ մահից հետո սրբանար, քանի որ այդ ուղին բաց է ամեն մի բարեպաշտ քրիստոնեի համար: Կեղծ-Կորյունը, որքան և տգետ և խեղճ պ. Ֆնտգլյանի աչքին, կարող է իր կողմեն հարցնել պ. Ֆնտգլյանին, ինչպե՞ս է որ մեղսալից Վահանը, «որմն սրբության բույր այնքան քիչ կբուրեր» հանդիսանում է քրիստոնյա աշխարհի հովանավոր, Սահակ և Մաշթոց Սուրբ հայրերին փոխարինող: Փոքր-Կորյուն իրավամբ կարող է նախատել պ. Ֆնտգլյանին, որ իր աչքի գերանը ուզում է ուրիշի աչքը խոթել:

Նման սխալ էր գործել նույն բանասերը և Ագաթանգեղոսի նկատմամբ, սրան ևս սուտ վկայության կոչելով: Ագաթանգեղոս հարմարեցրել է Վահանի հատվածը Տրդատին, **յանկարծահաս** բառը փոխարինելով **յանկարծակամ**-ով: Գիտակցական փոփոխություն է, համաձայն իմաստին:

Պարոն Ֆնտգլյան հայտարարում է, որ այդպիսի բառ չկա և որ գրչագրական սխալ է փոխան **հանկարծահաս**-ի: Անհիմն ենթադրություն: Նախ այդպիսի բառ կա: Ագաթանգեղոսն իսկ ուրիշ տեղ գործ է ածում նույն բառը՝ «ուրախութիւն եղեւ եւ լինի ընդ **անկարծակամ** դարձ կենացն»[1]: Երկրորդ՝ Ագաթանգեղոսի բազմաթիվ ձեռագիրներից և ոչ միևը հիմք չեն տալիս այդպիսի սրբագրության: Էջմիածնի գիտական հրատարակությունը պահել է **հանկարծակամ** ընթերցվածը և իրավամբ: Խուսափելու է ինքնակոչ ուղղումներից: Սրբագրությունն ևս իր հիմքերն ունի և բավական չէ մատը ճակատին դնել և կամայականության դաշտ բաց անել: Անցնենք այժմ հարազատ Կորյունին:

* * *

Ասել էինք, որ պ. Ֆնտգլյանի մեկնությունը Վահանի հատվածի անտես է անում ինչ-ինչ քերականական անհարթություններ: Պ[արոն] Ֆնտգլյան մեզ պատասխանում է, որ մեր նկատողություններն այլ բան չեն եթե ոչ «բյուր հայերենագիտության փունջ»: Եվ այս քաջ հայագետը փորձում է ցրել մեր սխալները, կարելի է ասել, թերավարժ մտրուկի կայտառությամբ:

Նախ՝ նկատել էինք, որ պ. Ֆնտգլյանի մեկնությամբ «բարեա-

[1] **Ագաթանգեղոս**, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 243:

ցապարտին Վահանայ» սեռական հոլովը դառնում է անուն բայի, որ քերականական անհեթեթություն է:

Տեսեք, ինչ է պատասխանում պ. Ֆնտգլյան. «մեր միտքը չէ եղած բնավ ավելորդ դասախոսություն ընել՝ գիտնականներու ընթերցման ենթարկված հոդվածի մեջ մատնանիշ անել օրինակներ նույն ինքն Կորյունե և ցույց տալ, թե սովոր է **«այլ, իսկ» շաղկապներն անմիջապես եզրը սեռական հոլովով դնել անունը»**:

Բայց տեսնելով, որ անգետի հետ գործ ունի, «հարկադրված է մեջ բերել իբր ապացույց սա օրինակները. «իսկ Պաւղոս[ի] (իր ուղղումն է) ի մտի եդեալ էր» և «այլ սրբոյն Պաւղոսի չորեքտասաներեքումբք թղթովք պատմէ»:

Որքան և մեղմ լինել կամենանք, բայց ստիպված ենք ասել, որ քերականական խակություն է կարծել, որ որևէ շաղկապ կարող է անուն բայիս փոխել սեռական հոլովի: Կարելի էր լռությամբ անցնել այս պարագան, որպես մի անզգույշ սայթաքում, մի տեսակ **lapsus amatoris**:

Բայց ստիպված ենք հիշեցնել, որ նրա մատնանշած սեռական հոլովները բնավ կապ չունեն նախընթաց շաղկապի հետ, այլ կախված են անցյալ դերբայից համաձայն որոշ քերականական երևույթի, որ հայտնի պիտի լինի նաև պ. Ֆնտգլյանին: Երբ ստորոգյալը արտահայտվում է անցյալ դերբայով կամ աներևույթ եղանակով՝ ենթական կարող է գրվել սեռական հոլովով, կամ պահել ուղղականը: Կորյուն հավատարիմ է այս կանոնին: Այսպես Կորյուն գրում է. «վասն որոյ **երանելոյն հայեցեալ**..., դառնայ»: «Զայս աւճառ **ընկալեալ** ի տեառնէ երանելի **առաքելոցն** իսկ **Հարկին** զայն **լուեալ**, փութանակի հասանէր»: «Իսկ աշակերտասէր **վարդապետին** զտարեալս ընդ իւր յերկուս **բաժանեալ** կարգէր» և այլն, գրեթե ամեն մի էջում պատահում են նման դարձվածներ: Միևնույն ժամանակ պահում է երբեմն ուղղական ձևը՝ «իսկ ցանկալի տեառն եղբայրն **Յակոբոս** զհամարէն իսկ զգունդն սրբոց հանդերձ սրբասէր տերամբն յաւրինակ **առեալ** ի թղթի իւրում ասէ», և այլն:

Պ[արոն] Ֆնտգլյան բերում է երկու օրինակ, մեկը նախապես սրբագրելով առանց որևէ անհրաժեշտության: Տպագիրն ունի՝ «իսկ Պաւղոս ի մտի **եդեալ** էր», Ֆնտգլյան ուղղում է «Պաւղոսի»: Մեկը թե մյուսը «իսկ»-ի հետ կապ չունին և կախված են «եդեալ էր» բայից:

Երկրորդ օրինակն է՝ «Այլ սրբոյն Պաւղոսի չորեքտասաներեքումբք թղթովք **պատմէ** զիւր առաքելակիցս եւ նիզակակիցս եւ ուրախակիցս իւր առնէ»: Պ[արոն] Ֆնտգլյան, որ սրբագրության առանձին տենդ ունի, հուլանում է նկատել, որ այս նախադասության մեջ երկու դիմորոշ բայերից մեկը պետք է անցյալ դերբայ լինի, համաձայն լեզվի կանոնավորության և Կորյունի սովորության: Այսինքն՝ **պատմէ** սխալ ընթերցված է փոխանակ **պատմեալ**

(երևի պատմել գրությունից սխալ արտագրված): «Այլ Պաւղոսի **պատմեալ** ... առնէ», կանոնավոր ձև է, որ պատահում է Կորյունի գրեթե յուրաքանչյուր էջում: Ուրեմն, ի՞նչ մնաց պ. Ֆնտգլյանի «դասախոսությունից», որ առաջին անգամ զլացել էր անել և միայն հետո հարկադրված անում է:

«Քարեացապարտ» բառն ևս մի առիթ է պ. Ֆնտգլյանի համար փայլելու յուրովի հատկությամբ:

Դուրս է գալիս, որ այս բառը «անտրամաբանական» կերտված է, որ ունի իր «գաղտնիքը» և արգո բանասերը փորձում է լուծել առեղծվածը, կուժ ու կուլան կոտրելով այս անգամ ևս Կորյունի գլխին:

Պարոն Ֆնտգլյան գիտե, որ Մակաբայեցվոց գրքի թարգմանիչը Կորյունն է, գիտե, որ այս գիրքը թարգմանելիս Կորյուն կազմել է **չարչացապարտ** «վայելուչ» բառը, «զամենայն **չարեացապարտ** զՄենեղաւոս արձակել ի պարտեաց»: Հետո, երբ սկսել է Մաշթոցի կյանքը գրել, Կորյուն թխել է **բարյացապարտ** «անհաջող և անտրամաբանական» բառը, **չարչացապարտ**-ի կաղապարին վրա ձևելով: Ասել է, թե Կորյուն, որին քաջ հայկաբան է անվանում պ. Ֆնտգլյան, վսեմ ոճով, ավելի տկար էր հայերենի մեջ, քան պ. Ֆնտգլյան:

Չէ, այս բոլորը սին ենթադրություններ են, անհիմն և անտեղի: Պ[արոն] Ֆնտգլյան, որ չի հապաղում սրբագրելու Պաւղոս՝ Պաւղոսի, անտեղի և սխալ, հուլանում է նկատել, որ **չարչացապարտ** բառն ինքն բյուր ընթերցվածի արդյունք է: «Զամենայն **չարեացապարտ** զՄենեղաւոս» ուղղելու է «զամենայն **չարեաց պարտ** զՄենեղաւոս», «զամենայն **չարեացապարտ**» լեզվական անհեթեթություն է, որ չի արտահայտում այն, ինչ որ ուզում է ասել: Անշուշտ, մի բյուրիմացություն չկա: Հույն բնագիրն ունի՝ *τῆς ὅλης κακίας αἴτιον*, այսինքն՝ «ամենայն չարյաց պարտ»: Ակներև է, որ **չարեացապարտ** բյուր ընթերցված է, փոխան **չարեաց պարտ** ձևի: Որ մեր ենթադրությունը ճշմարիտ է, հաստատում է նույն Մակաբայեցվոց գիրքը, ուր հանդիպում ենք մի ուրիշ և ստույգ արտահայտության՝ «եւ կամ **զպարտ այլոց չարեաց** ընկենուլ»[1]: Մյուս կողմից Եզնիկն ասում է՝ «որ **բազաւորեցոյց զչարն է պարտ չարեաց**»: Այս դասական վկայությունը միանգամայն վավերացնում է մեր ուղղումը:

Սրբագրական մեթոդի պահանջները, կարծում ենք, լիովին հարգված են և իրավունք ունենք ասելու, որ Ս. Գրքում **չարչացապարտ** բառը գոյություն չունի: Հետևապես պ. Ֆնտգլյանի խորիմաստ պատկերները պարապ զբոսանք են: Կորյուն էլ անպարտ է այն «անտրամաբանական» կերտվածների համար, որ մնում է միայն պ. Ֆնտգլյանի սեփականություն:

[1] **Մակաբ.**, գլ. 13, 6:

Կորյուն ինքն է կազմել **բարեացապարտ** բառը առանց ուրիշի ազդեցության, մի բարդություն, որ հատուկ է Կորյունյան լեզվական ճաշակին. ի՞նչ է նշանակում:

Պետք չկա ծանրաբանալու մահապարտ, մեղապարտ, վրիժապարտ և նման բառերի վերա և կամ ցույց տալու, որ սրանց նախագաղափարը երանական *tanu-pərəta*, պահլ. *tanapuhr*, այլև *pərəto-tanu*, կամ *peŝo-tanu*, պարսկ. *paŝotan*, որ նշանակում է անձնապարտ, ինքնապարտ, պետք չկա պրպտելու այս բարդության սկզբնական իմաստը: Մեր նպատակի համար բավական է հիշել **բարյացակամ, բարյացապաշտ** բառերը, որոնց դասական ձևն է **բարեկամ, բարեպաշտ**: Վիճելի **բարյացապարտի** ավելի ստույգ ձևն է, ուրեմն բարեպարտ: Սրա իմաստը հասկանալու համար, մտաբերելու է՝ երախտապարտ, շնորհապարտ կազմությունները: Երախտապարտը նա է, որ պարտ է երախտիք, շնորհապարտը նա, որ պարտ է շնորհ: Հետևապես և բարյացապարտը կամ բարեպարտը նա է, որ պարտ է բարիք: Երախտիք ասածդ այլ բան չէ, քան բարիք. Ս. Գրքում երախտիք համապատասխանում է հույն *ἀγαθά* «բարիք» բառի, որով բարյացապարտ համազոր է երախտապարտի կամ երախտագետի:

Կորյուն այսպես է անվանում Վահան Ամատունի իշխանին: Արդյոք անպատեհություն կա՞: Ամենևին ոչ: Վահանը Սահակի և Մաշթոցի մոտ ուսել էր գիր և դպրություն, աշակերտել սուրբ հայրերին: Մաշթոցի մահից հետո Վահանը հոգ է տանում վայելուչ հուղարկավորությամբ թաղելու նրա մարմինը Օշականում, երեք տարուց հետո կանգնում է խորան նրա նշխարների վերա. այս արտահայտություն է երախտագիտական զգացումի հանդեպ իր և համայն աշխարհի գրական ծնողի: Վահանը երախտագետ անձն էր, և Կորյուն իրավունք ուներ այդպես անվանելու:

Պ[արոն] Ֆնտգլյան մեծ եռանդով ընդդիմանում է մեր մեկնության, ուղեցույց ունենալով, երևի, «Հայկազնյան բառագիրքը»: Բառագիրքը ասում է, որ **բարյացապարտ**-ը նա է, «որ ի ձեռն բարերարութեանց պարտական առնէ զբարերարեալն»: Անհիմն բացատրություն:

Պ[արոն] Ֆնտգլյան զգալով այս բացատրության տկարությունը, աշխատել է այլ կերպ հիմնավորել նույն իմաստը, պատմելով այն հեքիաթը, որ ճգտում էր, **չարյացապարտ**-ի թյուրիմաց զավակը համարել բարյացապարտը:

Պ[արոն] Ֆնտգլյան գտնում է, որ մեր մեկնությունը չի պատշաճում այն գործածության, որ նկատվում է հեղինակների մոտ: Այսպես Ագաթագեղոս անվանում է Տրդատին **բարյացապարտ**: Պարոն Ֆնտգլյան հարցնում է, արդյոք Տրդա՞տն ևս երախտապարտ էր: Անպայման երախտապարտ էր և ավելի, քան Վահանը: Տրդատը խոզ էր և մարդ դարձավ, երբ «հանկար-

ծակամ» քրիստոնեություն ընդգրկեց և այս բանի համար նա հավետ **բարյացապարտ** էր:

«Հայկազնեան բառագրքից» քաղում է պ. Ֆնտգլյան և Խորենացու, Հովհաննես Կաթողիկոսի և Թովմա Արծրունու անունները, որ նույն բառը գործ են ածել իրրև քե ուրիշ իմաստով, քան մեր մեկնությունը: Այս նկատողությունը ևս ստույգ չէ:

Կորյունից հետո **բարյացապարտ** բառը կիրառում է Ղևոնդ Երեց և հետո Խորենացի: Թովմա Արծրունին արտագրում է Ղևոնդից և Հովհաննես Կաթողիկոսը, հավանորեն, Խորենացուց, եթե ոչ Կորյունից: Հաշվի առնելու է միայն երկու առաջին հեղինակները:

Խորենացին նույն բառը գործ է ածում Թեոդոսիոս կայսրի նկատմամբ: Նախ պետք է նկատել, որ Խորենացու ձեռագիրները տալիս են երեք ընթերցված՝ **բարյացապաշտ, չարյաց անպարտ, բարեպաշտ**: Այս ընթերցվածները հաշտեցնել կարելի է միայն, ենթադրելով որ սկզբնական ընթերցվածն եղել է **բարյացապաշտ**: Թեոդոսիոսի սովորական մակդիրն է **բարեպաշտ**: Սակայն, ընդունենք, որ ստույգ ընթերցվածն է **բարյացապարտ**: Ի՞նչ անպատեհություն: Թեոդոսիոս, որպես քրիստոնյա թագավոր պարտավոր է բարիք գործել: **Բարյացապարտ**-ը նա է, որ պարտական է բարիք անել, լինի ի տրիտուր ստացած բարիքի, լինի ի հետևանս իր կոչումի, լինի ստիպված որևէ հանգամանքից: Հովհան[նես Դրասխանակերտցի] Կաթողիկոս նույն միտքը արտահայտելու համար, հարկ է տեսել ավելացնել «ի բարիս բարեացապարտ», խոսելով բյուզանդական Կոստանդին [VII Ծիրանածին] կայսրի մասին[1]:

Ղևոնդ Երեցը պատմում է, որ Օմար խալիֆը ստանալով Լևոն [III] կայսեր հաջող պատասխանը ամաչեց և «առաւել եւս յաւելոյր զբարեխառնութիւն եւ զբարեմտութիւն առ ազգ քրիստոնէից եւ **ամենայն ստակք բարեացապարտ զինքն ցուցանէր**»[2]: Ասել է, թե Օմար աշխատում էր ամեն կերպ ցույց տալ, որ ինքը պարտավոր է բարիք գործել: Այստեղից առնում է և Թովմա Արծրունին:

Կարծում ենք, որ մեր տված մեկնությունն իր տեղին է բոլոր դեպքերում և կարիք չկա հակատրամաբանական ենթադրությունների:

Ի պետս զարգացելոց քերականության մեջ պ. Ֆնտգլյան կարդացել է, որ «որ» հարաբերական դերանունը «երբեմն բազմաբար վարի»: Այստեղից հետևեցրել է, որ կուզե **որ** գործ կածե, կուզե **որք**:

Ո՛չ, պ. Ֆնտգլյան: Լեզվի մեջ տարականոն երևույթներն ևս իրենց հիմքն ունին և բանասիրության գործն է մեկնել երևույթները և ոչ թե զարտուղին

[1] Հովհաննես Կաթողիկոս, էջ 148:

[2] Ղևոնդ, էջ 99:

ընդհանրացնել քմհաճ ծավալումով: Քարի է, որ [Արսեն] Բագրատունին զրի է առել որի բազմաթար կիրառությունը (2): Գուցե ավելորդ չէ, որ պ. Ֆնտգլյան սերտել է նրա գրածը: Բայց որպեսզի պ. Ֆնտգլյան իրավունք ունենա դասախոսություն կարդալ այս մասին, պետք է որ մի քան ավելի գիտենա, քան ինչ որ գրված է երեք քառորդ դար առաջ: Այսպես Ֆնտգլյանի սերտած քերականները բերում են որպես օրինակ որի հոգնաթար գործածության Ս. Գրքի այս տունը՝ «յամենայն ծառոց որ է ի դրախտիդ»: Ակներև անհեթեթություն, որ ուղղելու է «յամենայն ծառոյ որ է ի դրախտիդ»: Արդարև, բավական է համեմատել հույն բնագրի՝ *ἀπὸ παντὸς ξύλου τοῦ ἐν τῷ παραδείσῳ*, որպեսզի համոզվենք, որ սրբագրությունը ուղիղ է: Սակայն հետուները չգնանք, մնանք Կորյունի գրքույկի սահմաններում, ուր տեսնում ենք որի բազմաթար գործածության դեպքեր: Մոտիկ քննությունը ցույց է տալիս, որ այս դեպքերի մի մասը կարոտ է սրբագրության: Օրինակ, Կորյուն ունի՝ «աւրինակ առէք չարչարանաց եւ (յ)երկայնամտութեան զմարգարէսն, որ խաւսեցան յանուն տեառն»: Սխալ գրչություն է: Հակ[որոսի թուղթ կաթուղիկեայ]Դ [գլխում] կարդացվում է՝ «աւրինակ առէք, եղբարք, չարչարանաց եւ երկայնմտութեան զմարգարէսն, որք խաւսեցան յանուն տեառն»:

Ուրիշ դեպք: Կորյուն ասում է՝ «մի՛ անփոյթ առներ շնորհացդդ որ ի քեզ են... եւ զանձն ապրեցուսցես եւ զայնոսիկ որ քեզ լսիցեն»: Այստեղ երկու բնորոշ գործածություն կա. հույնն ունի՝ *μὴ ἀμελεῖ τοῦ ἐν σοὶ χαρίσματος ὁ ἐδόθη σοι.* «շնորհք» նշանակող հույն բառը եզակի թիվ ունի, ուստի և հարաբերականն է եզակի: Մինչդեռ հայը նյութական թարգմանությամբ *χάρισμα-* ի դեմ գրած է «շնորհք», և հույն *ὁ* թարգմանել է ճշտիվ որ, մոռանալով, որ «շնորհք» հոգնակի է:

Միևնույն օրինակում տեսնում ենք՝ «զայնոսիկ որ քեզն լսիցեն», Ս. Գրքի թարգմանիչները անգամ սիրում են հույն անցյալ և ներկա դերբայները արտահայտել հարաբերական նախադասությամբ հայ լեզվի ոգու համաձայն: Այս դեպքերում գրեթե ընդունված կանոն է որ գործածել եզակի և թե հոգնակի մտքով: Այսպես հույն *τοὺς ἀκούοντας* = «զլսողս», հայը թարգմանում է «որ լսիցեն» (հայի օրինակում եղել է, անշուշտ, *τοὺς ἀκούσαντας*): Ուրիշ խոսքով հայ դարձվածները՝ «որ լսեն, որ լսիցեն, որ լուսել են» համապատասխանում են հույն դերբայներին: Ավետարանն ունի՝ երանի որ քաղցյալ և ծարավի իցեն = *οἱ πεινῶντες καὶ διψῶντες* և այլն: Նույն ոգով գերադաս է ասել «որ իմաստունք են» փոխան հույն «իմաստունք»: Հաշվի է առնելու նաև **pluralia tantum** բառերի եզարար համաձայնությունը, որ հայտնի է ուրիշ լեզուներում:

Այսպիսով որի բազմաթար վարումը կամայականության խաղ չէ և ոչ քերականական բթության ծնունդ: Եթե թողնենք սխալ գրչությունները, մեծ

մասամբ աշխարհիկ լեզվի ազդեցության տակ, մյուս դեպքերն իրենց բանավոր հիմն ու բացատրությունն ունին:

Արդ պ. Ֆնտգլյան պնդում է, որ Վահանի հատվածում՝ «Վահանայ կենաց **ամենեցուն** լիներ, **որ** աշխարհածնիս վայելէր», գծածս իրար կապակից են: Չենք կարծում, որովհետև կարելի է ասել «ամենեցուն, որ», բայց անհեթեթություն էր «ամենեցուն լիներ, որ վայելէր», սպասելու էր՝ վայելեին: Պ[արոն] Ֆնտգլյան նկատում է ներողամտաբար, որ մենք **որի** բազմաբար վարումին անգետ որպես թե բնագրի՝ «զհամառաւտն **որ** ոչ միայն մեզ յայտնի է» սրբագրել ենք **որք**, և չի ուզում ծանրանալ այս ձախող ձեռնարկի վերա:

Ափսոս, որ արգո բանասերը չի ծանրացել, այլապես պիտի տեսներ, որ բնագրի **որքը** ուղղում ենք **որի** և ոչ թե, ինչպես պ. Ֆնտգլյանն է կարծում, **որը՝ որքի**:

Հանկարծահաս բառի առթիվ պ. Ֆնտգլյան մի բան է միայն ապացուցանում հաջողությամբ, որ «հասանել» նշանակում է «հասնել», և «յանկարծահաս» նշանակում է «հանկարծահաս»: Բայց բառիս դիրքը նախադասության մեջ մնում է մութ մինչդեռ այս է վճճի նյութը: Չի կարելի ասել «Վահանայ ... յանկարծահաս լիներ», չի կարելի ասել «ամենեցուն, որ վայելէր»: Սրանով տապալվում է և պարոնի մեկնությունը հատվածի, որպես հակաքերականական ոտնձգություն:

Մեր տված բացատրությունը ևս անընդունելի է համարում, գուցե և իրավամբ: Մեր կողմից մի փորձ էր հիմնավորել քերականորեն նախադասության հինավուրց իմաստը, ենթադրելով, որ բնագիրը անաղարտ է: Փոքըր-Կորյունից սկսած մինչև նորագույն բանասերները մահվան իմաստով են ըմբռնել քննելի հատվածը: Վահանը «հայրենյաց որդի է», այն հայրենյաց, որ մեռած են, և միևնույն ժամանակ Վահան նրանց «կենակից»: Ակներև է, որ կենակցություն չի կարող այս աշխարհում լիներ մեռած մարդկանց հետ:

Թերևս, մեր միտքը ավելի ճշգրտած կլինենինք, եթե ավելացնեինք, որ «հանկարծահաս»-ի ենթադրյալ գոյականի իմաստը բխում է նրանից, որ զեղչած է «կատարումն» կամ «կէտ» բառը, որպես մի տեսակ **ellipsis**, փոխանակ լրիվ «յանկարծահաս (կէտ) կենաց» ձևի: «Օրհաս» բառի մեջ ևս օր հասկացվում է որպես օր մահվան: Բնավ հավակնություն չունինք պնդելու մեր մեկնության վերա, այն պարզ պատճառով, որ ուր բարգմանությունը ստիպված է տեղի տալ մեկնաբանության, հետևանքը միշտ կլինի թեական: Ստույգն այն է, որ նախադասությունն իր ներկա վիճակում քերականորեն անհարիր է: Հավանական է, որ աղավաղված է: Ագաթանգեղոս և Փոքր-Կորյուն ունին «ասպնջական ցանկալի» բառերը, որ

պակասում են Կորյունի հատվածում: Կասկածելի է, մանավանդ, երբ ի նկատի առնենք, որ Կորյունի վերջաբանությունը բարվոք վիճակի մեջ չէ:

Դարձյալ նույն երկու հեղինակներն ունեն՝ «բարյացապարտն Վահան», «բարյացապարտն Տրդատ», փոխանակ Կորյունի սեռական հոլովի, որ ուշադրության արժանի է: Վիճելի հատվածը հավանորեն կարոտ է սրբագրության:

* * *

Ասած էինք, որ Կորյունի Վերջաբանը կասկածի տեղիք է տալիս: Մաշքոցի աշակերտը, որ գրում է իր ուսուցչի կյանքը, կարիք չպիտի ունենար հավատացնելու, որ ինքը գրում է «ոչ ի հին համբաւուց», այլ որպես «ականատես»: Հակառակ իր հայտարարության նույն հեղինակը ստորև խոստովանում է, որ քաղել է «ի նշանաւոր գիտակաց» սակավը: Մի հանգամանք, որ մթության է շաղում Կորյունի երկի շուրջը:

Պ[արոն] Ֆնտզլյան գտնում է, որ պետք է հավատալ, քանի որ Կորյուն «բարդ ի բարդ կրվե հավատարիմ վկայի իր հանգամանքը»: Իսկ գիտակներից բանաքաղությո՞ւնը: Սրա պատասխանն էլ ունի պ. Ֆնտզլյան: **Գիտակ** ասածդ, որպես թե գիտուն չէ նշանակում, ինչպես հայտնի է ամեն մի տղայի, այլ **գիտցված**, և օրինակ է բերում երևակ բառը, որ իրրև նման բնույթ ունի և նշանակում է երևույթ:

Ո՛չ, պ. Ֆնտզլյան, գիտակ նշանակում է գիտցող, և երևակ՝ երևցող: Ուրիշ ոչինչ: Խնայելու է լեզուն և միտքը բռնազբոսիկ և ապարդյուն ճիգերից:

Կորյուն ասում է, որ չուզեց «զամենայն արարեալս **կտակաւ** զիւրաքանչիւրսն [նշանակել]» (հավելումը մերն է Ն. Ա.): Պ[արոն] Ֆնտզլյան շտապում է **կտակաւ** ուղղել **գտակաւ** և զարմանում է, որ մենք չգիտենք այս գյուտը: Այլև, նայելով «Հայկազյան բառարան»-ը ավետում է, որ բառի ամբողջական ձևն է «ճշդիւ գտակաւ»:

Այստեղ ևս պ. Ֆնտզլյանի անխոհեմությունը գալիս է բախելու մեր զգուշության: Արդյոք բավարար հիմ կա՞ առաջարկված սրբագրության: Կորյունի ձեռագիրները կարդում են **կտակաւ**: Ագաթանգեղոսի մոտ համապատասխան հատվածում երկու հին ձեռագիրներից մեկը և հնագույնը՝ գրված 1261 թվին ունի **կտակաւ**, մյուսը՝ գրված է 1293 թվին՝ **գտակաւ**: Թվում է, թե սրբագրությունը գոնե վաղաժամ է: Այլև պ. Ֆնտզլյան ինքը պիտի ձեռնպահ մնար իր սրբագրությունից, իմաստի տեսակետից: **Ճշդիւ գտակաւ** նշանակում է ճշտիվ, խուզիվ **գտակ** ծագելով գտանել բառից: Ականատես գրողը պետք ունի՞ այս եղանակով վարվելու: Հարկավ, չէ: Կամ գրողը ականատես չէ, կամ **գտակաւ** բառը իր տեղը չէ:

Կորյուն ասում է «ի նշանաւոր գիտակաց քաղելով զհամառաւտս կարգեցաք, որ(ք) (մենք ենք զեղչում Ն. Ա.) ոչ միայն մեզ, այլեւ որ **զմատեանսն ընթեռնուն, յայտնի է**»: Ագաթանգեղոսի մոտ վերջին նախա-

դասությունն է՝ «որք ոչ միայն մեզ, ով քաղաւոր, այլ յորժամ քո առաջի զմատեանդ ընթեռնուցուն, յայտնի է»: Պ[արոն] Ֆնտգլյան կամենում է Կորյունը սրբագրել ըստ Ագաթանգեղոսի: Մենք ձեռնպահ ենք մնացել և մնում ենք և այժմ այսօրինակ ուղղումներից, ոչ անգիտությամբ, այլ այն պարզ պատճառով, որ ուր բնագիրը տարբեր իմաստ է տալիս, չի կարելի մեկը մյուսով ուղղել: Կորյուն ասում է իր գրածը հայտնի է ոչ միայն իրեն այլև որոնք մատյաններ են կարդում, այսինքն՝ գրագետներին: Ագաթանգեղոսի միտքը ուրիշ է, որ իր գրածը հայտնի է ոչ միայն իրեն, այլև հայտնի կլինի թագավորին, երբ նրա գրածը կարդան նրա առաջ: Կորյուն և Ագաթանգեղոս մի ուրիշ խրատական օրինակ են տալիս նույն ուղղությամբ: Կորյուն ունի՝ «Եւ զի ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան»: Ագաթանգեղոս նույն բառերից հյուսում է միտք. «քանզի ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ ի կատարումն դարձուցաք»: Արդյոք թոյլատրելի՞ է մեկը մյուսով ուղղել: Ոչ երբեք. որովհետև տարբեր իմաստ են արտահայտում, և չի կարելի ասել, տարբերությունը աղավաղմա՞ն հետևանք է, թե ոչ բնագիր է:

Կորյունի Վերջաբանի մեջ մի կարևոր կետ անհասկանալի է մնացել պ. Ֆնտգլյանին, մի կետ, որ միանգամայն նոր լույս է սփռում ամբողջ Առաջաբանի կերտվածի վերա: Քերենք նախ այդ մասը ուղիղ ընթերցումով:

«Քանզի չէաք իսկ հանդուրժողք՝ զամենայն արարեալսն կտակաւ զիւրաքանչիւրսն՝ [նշանակել][1], այլ ի դիւրագոյն եւ ի հեշտագոյն(ս) յառաքելական անդր զանձինս պատսպարեցաք, որոյ անցեալ զրազմախուռն արգասեաց սրբոցն առ ի մանրակրկիտ առնելոյ զկարեւորագոյնսն պատմեաց (փոխ. տպագրի պատմելոյ). [ուստի եւ մեր առեալ] հանգոյնս (և ո՛չ զհամանդամս որպես տպ. ունի) ասացաք, ոչ ի պատիւ սրբոցն Աստուծոյ որք ամենապարծ եւ կենդանատուր խաչիւն ծանուցեալք յարգեցան, այլ յաւրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւրեանց, եւ որք նոքաւք աշակերտելոց իցեն յազգս ազգաց»[2]:

Տեսեք ինչպես է հասկանում Կորյունի այս տողերը պ. Ֆնտգլյանը. «քանզի անբավական էր ամեն ըրածները ճշդիվ գտակավ ամեն մեկը նշանակել, դյուրագույնին անոր առաքելական գործունեության պատմությամբ զբաղեցավ, գաղափար մը տվավ կարևորագույնին վրա»:

Կորյուն շատ խելոք մարդ չէ դուրս գալիս պ. Ֆնտգլյանի բացատրությամբ: Նա, որ ձեռնարկել է գրելու գրի պատմությունը, այժմ խոստովանում է, որ «դյուրագույնին անոր առաքելական գործունեության

[1] [ ] Մեր հավելումներն են, իսկ ( )՝ հապավումները (Ն. Ա.):

[2] Կորյուն, էջ 47-48:

պատմությամբ զբաղեցավ» և այն էլ «կարևորագույնին վրա գաղափար տալու համար»: Ավելի անմիտ քան չէր կարելի վերագրել մի մատենագրի:

Ո՛չ, պ. Ֆնտգլյան, «առաքելական» չի նշանակում առաքելական գործունեություն: Կորյուն ինքը զինքը արդարացնելու նպատակով, որ շատ քան չէ պատմել իր ուսուցչի և տաոների գյուտի առթիվ, կոչ է անում առաքելական օրինակին, որ է Ղուկաս Ավետարանիչը:

Ինչպես որ Ղուկասը զանց է անում պատմելու մանրակրկտորեն Առաքյալների բազմախոտոր գործունեությունը, և արձանագրում է միայն կարևորագույնը, այնպես վարվում է և հայ հեղինակը: Առաքյալին հետևելով, թողնում է շատը և բավականանում է քչով և կարևորով:

Ղուկասի հիշատակությունը խորհրդավոր է: Նրան հետևել է հայ մատենագիրը ոչ միայն այս կետում: Ավետարանչի նախաբանը օրինակ է ծառայել և մեզ զբաղեցնող Վերջաբանին: Ղուկասը գրում է. «Քանզի **բազումք** յաւժարեցին **վերստին կարգել զպատմութիւն** վասն իրաց հաստատելոց ի մեզ, որպէս աւանդեցին մեզ որ ի սկզբանէ **ականատեսք**] եւ **սպասաւորք** եղեն բանին: Կամ եղեւ [եւ] ինձ որ ի սկզբանէ **զհետ երթեալ էի** ամենայնի ճշմարտութեամբ **կարգաւ գրել քեզ, քաջդ Թէոփիլէ, զի ծանիցես** զբանիցն, որոց աշակերտեցար, զճշմարտութիւն»[1]:

Դժվար չէ նկատել, որ կանգնած ենք այն ծառի մոտ, որտեղից քաղված են Վերջաբանի պտուղները: Գրական կերտվածը և բառացի մթերքը մատնում են նախաբանի խնամությունը Կորյունի Վերջաբանի հետ: Նախաբանի լույսի տակ այլ կերպ է ներկայանում ցայժմ ընդունված կարծիքը, որ Վերջաբանը Կորյունից է անցել Ագաթանգեղոսին: Առաջնությունը գոնե այս կետում թվում է թե զիջանելու է Ագաթանգեղոսին: Սա ավելի մոտ է իր կառուցումով Ղուկասի նախաբանին: Ագաթանգեղոսի՝ «ով քաղաւոր» կոչականը համապատասխանում է Ղուկասի՝ «ով Թէոփիլէ» դիմումին: Նրա խոսքը՝ «յորժամ քո առաջի զմատեանդ ընթեռնուցուն, յայտնի է (sc. լիցի)», համաձայնում է նախաբանի՝ «զի ծանիցես զբանիցն, որոց աշակերտեցար, զճշմարտութիւն»:

Կորյուն չունի «ով քաղաւոր» կամ փոխարինող կոչական, ընդդեմ Ղուկասի՝ «ով Թէոփիլէ»-ի: Հետևապես Կորյուն չէր կարող կաղապար ծառայել Ագաթանգեղոսի: Կորյուն զեղչելով կոչականը, ստիպված փոխում է նախադասության կազմը ի վնաս իմաստին: Ղուկաս գրում է, որ գիտենա Թէոփիլը, Ագաթանգեղոսը կրկնում է նույնը, որ իր գրածը, «երբ կարդան քաղավորի առաջ, հայտնի լինի նրան», իսկ Կորյուն ի՞նչ է ասում. որ իր գրածը հայտնի է ով որ մատյաններ է կարդում և կամ եթե ուղենք ըստ Ագաթանգեղոսի, ով որ իր մատյանն է կարդում: Առաջին երկու հեղի-

[1] «Ավետարան ըստ Ղուկասու», գլ. Ա, 1-5:

նակների ասածը հասկանալի է, որպես դիմում որոշ անձանց, իսկ Կորյունի բերանում նույն խոսքը կորցնում է իր **raison d'être**-ը, քանի որ առիթավոր անձը չկա մեջ տեղը:

Ղուկասը հիշում է, որ իրենից առաջ շատերն են գրել ականատեսների ավանդության հիման վերա, ինչ որ ինքն ևս ուզում է գրել որպես ոմն, որ «զհետ երթեալ է ամենայնի», ասել է թե ևս ականատես է: Վերջաբանի հեղինակին ծանոթ են գիտակներ, որոնցից քաղում է, թեև ինքն ականատես է: Արդ Ագաթանգեղոս խմբագրական գործ է, և այս խոսքերը նրա նկատմամբ ճշմարտություն է: Իսկ Կորյունի համար ո՞վ են այս գիտակները, արդյոք Ս. Գրքի հեղինակները, որոնցից առաջբերումներ ունի և որոնց թվում է, թե առանձին կարևորություն է տալիս, որպես իր գիտնականության վկաներ. իսկ եթե չէ, հարկադրված ենք ընդունելու, որ Վերջաբանը պատկանում է Ագաթանգեղոսին և հարմարեցրած հետո կամ միաժամանակ Մաշթոցի կյանքին: Պետք է խոստովանել, որ շատերն այն հատվածներից, որ անցած են համարվում Կորյունից Ագաթանգեղոսի «դարձ փրկութեան» մասը, ավելի իր տեղն են Ագաթանգեղոսի մոտ, քան Կորյունի:

Ամեն պարագային երկու երկերը, եթե անգամ ելած են միևնույն գրչից, տակավին կնճռոտ են իրենց փոխադարձ հարաբերության մեջ: Վաղաժամ է պնդել Մաշթոցի Վարքի առաջնության վերա ամեն կետում:

Գուցե ավելորդ չէ նկատել, որ Ղուկասի «**կարգաւ** գրել» կարող է թելադրել, որ Վերջաբանի երկու ընթերցվածները **կտակաւ** թե **գտակաւ**, թերևս, ծագում են սկզբնական **կարգաւ**-ից: Ուրիշ անգամ չեն պատահում այս բառերը Ագաթանգեղոս-Կորյունի մոտ, որ սիրում են կրկնություններ, մինչդեռ **կարգաւ** պատահում է (օր. «զայս ամենայն **կարգաւ** պատմեցից»)[1]:

Վերջաբանի ակնարկը Ղուկասին կրկնվում է Ագաթանգեղոսի մոտ, Վարդապետության ԾԹ գլխի մեջ: Այստեղ ևս հեղինակը ծրագրում է իր անելիքը Ղուկասին հետևելով: Սա պատմում է Քրիստոսի կյանքը հարությունից հետո շատ համառոտակի, ուստի նորեն դառնում է նույն խնդրին Գործքի մեջ: «**Ակն արկեալ մեզ այսուհետեւ ի վախճան ասացեալսս.** ճառս ի մէջ առնուլ Մանաւանդ զի առընթեր եւս ունիցիմք զդիւրահասոյց քաջալերիչն զերանելի Ղուկաս, որ իրագէտ եւ միջամուխ քրիստոսագործ իրացն կատարելոց ճանաչի Եւ քանզի **համառատ բանիւք** առ ի կատարած Աւետարանին իւրոյ զերկնաշրջու ճանապարհն Քրիստոսի նշանակեաց, առնու դարձեալ յառաքելանշան յերկրորդ մատենին զորպիսութիւն իրաց կարգալ ...»[2]: Մեջ է բերում Ղուկասի նախաբանը, որով հաստատվում է մեր համեմատությունը Վերջաբանի հետ:

---

[1] **Ագաթանգեղոս**, Էջմիածնի հրատ., էջ 130:

[2] Անդ, էջ 246-247:

Սկզբի ընդգծած նախադասությունը նույն միտքն է արտահայտում, ինչ որ վերջաբանի «եւ քանզի ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ ի կատարումն դարձուցաք»: Կորյունի մոտ սույն նախադասությունը կարդացվում է՝ «եւ զի ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կատարումն դարձան»: Հնարավո՞ր է արդյոք սրբագրել Կորյունը Ագաթանգեղոսի կրկնակի արտահայտած իմաստի հիման վերա: Որքան և հավանական, քայց և այնպես ձեռնպահ մնալու է, քանի որ ձեռագրական կռվան չկա:

* * *

Գալով Կորյունի գրության ժամանակին, մնում ենք նույն կարծիքին: Պ[արոն] Ֆնտգյանի ուղղությունները չեն որ պիտի փարատեն մեր կասկածները: Նրանք ոչինչ նորություն չեն պարունակում: Ինչ որ նոր է, շատ հին է, օր. որ Ագաթանգեղոս գրված է 452-456 թվերին: Հայ բանասիրությունը երջանիկ կլիներ, եթե կարողանար այսպիսի ճշգրտությամբ որոշել որևէ մատենագրի, անգամ Ս. Գրքի թարգմանության տարեթիվը: Հայ գրի անդրանիկ երկերի հաջորդական կապը որոշելու փորձերն իսկ բախում են դժվարությանց:

Կորյունի մերձավորությունը Ագաթանգեղոսի, Եվթաղի և Մակաբայեցվոց գրքին, հայտնի է: Սակայն սրանց փոխադարձ հարաբերությունը մնում է խորհրդավոր: Ավելի քան կասկածելի է, որ միևնույն գրչից ելած լինին:

Ուրիշ անգամ այն միտքն ենք հայտնել, որ Լուսավորչի կյանքը գրի առնելու նախաձեռնությունը պատկանում է, թերևս, իրեն Մաշթոցին: Կորյուն շարունակել է իր ուսուցչի գործը, լրացրել և իր անձնական կնիքը դրել նրա վերա: Ագաթանգեղոս խմբագրական ձեռնարկ է և խմբագրողի ձեռքի հետքերը նշմարելի են: Դժվար չէ նաև զատել հինը նոր հավելումներից:

Ինչ վերաբերում է Եվթաղին և Մակաբայեցվոց գրքին, բավարար հիմք չկա սրանց թարգմանությունը Կորյունին վերագրելու: Թվում է, թե լեզվական և ոճային խնամությունը բացատրելու է նրանով, որ Կորյունն է կրում նրանց ազդեցությունը: Առնենք նախ Եվթաղի նախադրությունները: Կան նմանություններ, որոնք վկայում են ավելի այն մասին, որ Կորյուն բանաքաղ է, քան թարգմանիչ:

Կորյուն. «թէպէտ եւ էի **կրտսերագոյն** եւ **առաւել քան զկար մեր գրաւեալ** անաչառ **հրամանին** հասելոյ»...

Համեմատել. «Գործք. Առաք.», Յառաջ. «զի անտի զմեզ հայրենի **հրամանն** յանդգնել **առնի քան զկար** մեր **գրաւեաց**»...[1]

[1] «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց»: Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յոհաննու Զոհրապեան վարդապետի, Վենետիկ, 1805, էջ 723:

Կորյուն. «զի կամարագոյնս **ճաչիցեմք զհամառարած** ալեաւքն վարդապետական ծովուն»...

Համեմ. Կթղ. Ցառաջ, «զոր աւրինակ եթէ փոքր ճաւակաւ ոք կարծից է **զհամառարած** զծովն հատնել անցանել»...[1]

Կորյուն. «տրտմական հոգւովք պաշարեալ եւ **թակարդապատեալ կայ»**...

Համեմ. «Գործք. Առաք.», Ցառաջ., «զանուանակիր աստուածեղէն պատգամացն զմիջամուխ իմաստութեան որ շուրջ զբեւ **թակարդապատեալ**»...[2]

Կորյուն. «ոչ ի մէնջ **արուեստախառնեալ** մերոյն կարծեաւք վիճաբանելով»...

Համեմ. Պաւղ. թղթ., «զդիւրացոյցն զգիւտս իսկ **արուեստախառնեալ**»...[3]

Կորյուն. «ամի ամի գումարելովք ի ճոյն ամսեանն զճոյն **յիշատակն տուճախմբեն**»...

Համեմ. Պաւղ. թղթ., «**ամի ամի զաւր յիշատակի** ճորա **տուճախմբեն**»[4].

Նմանությունն այնքան ակնհայտնի է, որ երկու ենթադրություն կարող է լինել, կամ Կորյուն է փոխառու, կամ ինքն է թարգմանել Եվթաղի գործքը և այնուհետև նույն դարձվածները կիրարկել Մաշթոցի կյանքին մեջ: Կորյունի ոճը, որքան որ կարելի է դատել ըստ Մաշթոցի կյանքի իրավունք չէ տալիս երկրորդ ենթադրության: Կորյուն չէ Եվթաղի թարգմանը: Նմանությունը արդյունք է բանաքաղության: Կորյուն ծանոթ է երևում ոչ միայն Եվթաղի, այլև ընդհանրապես Ս. Գրքի նախադրության: Մի շարք բնորոշ բառեր մատնում են նրա ծանոթությունը «անուանակիր, միջամուխ, աստուածամերձ, արդիւնական, թեքել (ի հրէից անտի, էջ 809), հրապարակախոս»:

Նույնը կարելի է ասել և Մակաբայեցվոց գրքի մասին, որ դժվար թե Կորյունի գործ լինի: Ո՛չ Եվթաղ, և ո՛չ Մակաբ[այեցվոց] գիրքը հասակակից չեն Ս. Գրքի մյուս մասերի թարգմանության: Նրանք պատկանում են V դարի երկրորդ կեսին:

Ֆ. Կոնիբերը կարծիք էր հայտնել, որ Եվթաղ թարգմանված է 448 թվին (3), նրա հիմը շարժական տոմարի հաշիվներն են: Հ[այր Ա.] Վարդանյան, որ ներկայումս զբաղված է Եվթաղի քննական հրատարակությամբ (4), թվում է, թե համամիտ է հանգուցյալ հայագետին: Պողոս Առաքյալի մահուն ամսաթիվը ինչ ինչ անհարթություններ է ներկայացնում և ասորամա-

---

[1] «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանաց», էջ 750:
[2] Անդ, էջ 723:
[3] Անդ, էջ 765:
[4] Անդ, էջ 764:

կեդրոնական տոմարի համապատասխան թիվը տակավին պետք ունի քննության: Հայ ամսաթիվը մերձավոր կապ ունի ասորամակեդոնականի, ուստի և ստույգ ընթերցումը դեռ խնդրական է, և տոմարական հաշիվները վաղաժամ և կարոտ վերաքննության:

Նույն շարժական տոմարը, սակայն, ավելի հաստատ կռվան է տալիս որոշելու Մակաբայեցվոց գրքի թարգմանության ժամանակը: Մակաբ. Երկրորդ [գրքում] երիցս հիշում է ահեկան ամիսը, «մինչեւ յերեսուն ահեկանի ամսեան» (ԺՔ, 30)[1] և «յամսեանն ահեկանի, որ աւր հնգետասան էր»: (ԺԱ, 33)[2] հույն բնագիրն ունի՝ *μέχρι τριακάδος ξανθικοῦ* և *ξανθικοῦ πέμπτῃ καὶ δεκάτῃ*, այսինքն՝ 30 քսանթիկ ամսի և 15 քսանթիկ ամսի: Քսանթիկ ասորամակեդոնական տոմարով տարվա յոթերորդ ամիսն է: Ասորամակեդոնական տարին սկսվում է հոկտեմբերի մեկից, ուրեմն քսանթիկի 15-ը գալիս է ապրիլի 15-ին և քսանթիկի 30-ը ապրիլի 30-ին (ավելի ստույգ հաշվով ապրիլի 13-ին և 28-ին): Ասորամակեդոնական տարին հաշվում է 12 ամիս, ամիսը 30 օր և հինգ ավելեաց, տարվա սկզբից մինչև յոթերորդ ամսվա 15-րդ օրը անում է 195 օր, հաշվելով հոկտեմբերի մեկից, 195-երորդ օրը կգա ապրիլի 13-ին, և սույն հաշվով 30 քսանթիկի հավասար է ապրիլի 28-ին: Արդ եթե հայ ահեկանի 15-ը համապատասխանում է քսանթիկի 15-ին և ապրիլի 13-ին, և ահեկանի երեսունը քսանթիկի 30-ին և ապրիլի 28-ին, ճավասարդը, նշանակում է սկսվում էր օգոստոսի 1-ին: Իսկ ճավասարդը ընկնում է շարժական տոմարով օգոստոսի մեկին՝ 468 թվին: Հաշվելով, որ քսանթիկի 15-ը հավասար է ապրիլի 15-ին (և ոչ 13-ին), ուրեմն և ահեկանի 15-ը հավասար նույն ապրիլի 15-ին, կստանանք, որ ճավասարդը ընկնում է օգոստոսի 3-ին, որ տեղի ունենալ կարող էր 460 թվին: Ասել է, թե Մակաբայեցվոց գիրքը թարգմանված է 460-468 թվին: Եթե ընդունենք Կոնիբերի դիտողությունը Պողոս Առաքյալի մահվան օրաթիվի վերաբերյալ, կգանք նույն թվին: Եվթաղի Առաջաբանում ասված է, որ Պողոս նահատակվեց «յառաջ քան զերիս կաղանդացն յուլեայ», որ է հունիսի 29: Հայ բնագիրը տարբեր ընթերցվածներ է տալիս և, ինչպես ասացի, հավանական են համարում «որ է մարգաց» ընթերցվածը: Եթե ահեկանի 15-ը հավասար է ապրիլի 15-ին, հունիսի 29 կգա ուղիղ մարգաց 30-ին: Ասել է թե Եվթաղի թարգմանությունը ևս տեղի է ունեցել 460-464 թառամյակին:

---

[1] **Մակաբ.**, ԺՔ, 30:

[2] Անդ, ԺԱ, 33:

Ինչպես և բացատրելու լինենք Կորյունի, Եվթաղի, Մակաբայեցվոց գրքի, նաև Ագաթանգեղոսի փոխադարձ հարաբերությունը, գաղտնիքը որոնելու է 460 թվից հետո: Տրամադիր չենք չափազանցելու տոմարական վկայության արժեքը, բայց ուրանալը ևս անկարելի է, մանավանդ երբ գալիս են հաստատելու բանասիրական-պատմական քննության կասկածները:

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԻՉ[1]

Փավստոս Բուզանդը՝ հայ պատմագրության հնագույն հուշարձանը, շարադրում է IV դարի իրադարձությունները՝ առավելապես կանգ առնելով Հայաստանի մեծ լուսավորիչներ Գրիգորի և Տրդատի գործունեության վրա: Նրա աշխատանքը սկզբնական տեսքով մեզ չի հասել, ինչպես որ այն դեռևս VI դարում եղել է Հուստինիանոսի նշանավոր պատմագիր Պրոկոպիոս Կեսարացու ձեռքին[2]: Բայց և ներկա խմբագրությունն էլ բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում և ունի այնպիսի յուրահատկություններ, որոնք այն առանձնացնում են մյուս պատմական հուշարձաններից:

Փավստոսը ազատ է մյուս հայ պատմիչներին առավել կամ պակաս հատուկ իմաստակությունից: Նա վավերագրերից չի օգտվել[3], և դեպքերի իր իրազեկության համար պարտական է գլխավորապես կենդանի հիշողություններին ու ավանդություններին: Փավստոսի գլխավոր առավելությունը մյուս պատմիչների համեմատությամբ՝ երկրի իրական կյանքը մոտիկից ճանաչելու մեջ է:

Փավստոսի՝ իրեն ժամանակակից նախարարական Հայաստանի միջավայրից վերցրած արժեքավոր իրողություններով հարուստ աշխատանքի նշանակությունը մասնագետների կողմից այժմ բավարար չափով ընդունված ու գնահատված է: Բայց համեմատաբար քիչ ուշադրություն է նվիրվել նույն նրա մոտ եղած Հայաստանի արտաքին պատմությանը: Հայաստանի նկատմամբ բյուզանդա-պարսկական հարաբերությունների վերաբերող քաղաքական իրադարձությունների մասին վկայությունները

---

[1] Ներկա ակնարկը գրված է վաղուց, և այժմ տպագրվող մասը դեռևս 1906 թ. զեկուցվել է «Հնագիտական ընկերության արևելյան բաժանմունք»-ի նիստում՝ **«Հռոմեա-պարսկական հարաբերությունները IV դարի առաջին կեսում և հայկական ավանդությունները նրանց մասին»** (տե՛ս "Записки Восточного отделения императорского русского археологического общества", СПб., 1906, т. 17, стр. XLII-XLIII): Այս հոդվածը մի մասն է այն ժամանակ ծրագրված մեծ աշխատանքի, որի հեղինակը նպատակ ուներ հավաքել հին դասական հեղինակների մոտ ցրված (բնագրերով և ռուսերեն թարգմանությամբ) ամենակարևոր նյութերը հայերի պատմության վերաբերյալ:

[2] Տե՛ս «Հայոց նախնական պատմությունը» աշխատությունը՝ "Византийский Временник", 1901, том VIII, 1-2:

[3] Գրավոր աղբյուրների ազդեցությունը երևում է այն մասերում, որոնք վերաբերում են Ներսես կաթողիկոսի կյանքին: Բայց շատ կասկածելի է, որ այդ մասերը եղած լինեին Փավստոսի աշխատանքի սկզբնական խմբագրության մեջ:

առասպելական բնույթ են կրում և այդ պատճառով էլ դյուրին չէ ճշգրիտ գնահատել իրենց պատմական վավերականությունն ու հավաստիությունը: Մենք կցանկանայինք Փավստոսին մոտենալ առայժմ հենց այդ կողմից և պարզել, թե որքանով են պատմական նրա առասպելական պատմությունները, և նրանց մեջ կա՞ն արդյոք պատմության համար պիտանի հավաստի տվյալներ:

II

Բյուզանդիայի (1) ու Պարսկաստանի միջև Հայաստանի համար անվերջանալի պայքարի շրջապտույտներում ճշում են երկու կարևոր պահեր՝ 298 և 363 թթ.: Այդ պահերի հանգամանքները բավականչափ հայտնի են արևմտյան աղբյուրներից և պարզորոշ գաղափար են տալիս վեճի առարկայի՝ Հայաստանի ճակատմամբ երկու հակառակորդների գրաված դիրքի մասին: Իսկ ինչ վերաբերում է 298 և 363 թթ. միջև տեղի ունեցած իրադարձություններին, ապա արևմտյան պատմագիրների մոտ նրանց մասին տեղեկությունները չափազանց աղքատիկ են: Հայ Փավստոսը ունի ինչ-որ ավանդազրույցներ, որոնք վերաբերում են հիշյալ ժամանակաշրջանին, և որոնց պատմական հիմքը բացահայտվում է արևմտյան հեղինակների ներկայացրած հանգամանքներին մոտիկից ծանոթանալու դեպքում:

III դարի վերջին Հայաստանը ճանաչում էր հռոմեացիների գերագույն հովանավորությունը: 294 թ. պարսից գահ բարձրացավ Ներսեհ թագավորը: Իր հոր՝ Շապուհ [I-ի] օրինակով և նրան նմանակելու ակներև ցանկությունից դրդված, ինչպես ասում է Լակտանտիոսը[1], նա պատերազմի մեծ նախապատրաստություն տեսավ և հաջորդ՝ 295 թ., ներխուժեց Հայաստան և գրավեց այն: «Narseus primus, - վկայում է Ամմիանոսը.-Armeniam Romano juri obnoxiam occuparat»[2]:

Պարսիկների դեմ Հայաստանի պաշտպանության գործը վստահվեց Դիոկղետիանոսի փեսա և թագակից Գալերիոս Մաքսիմիանոսին: Դիոկղետիանոսը Աքիլլեվսի ապստամբությունը ճնշելու համար Եգիպտոս շարժվելով՝ Գալերիոս Կեսարին, որ այն ժամանակ կառավարում էր Իլլիրիան, հրամայեց անհապաղ մեկնել պարսից թագավորի դեմ: Անփորձ և վառվռուն Կեսարը խիզախեց Միջագետքում, Կալլինիկումի և Խառանի

---

[1] **Lactantius**, De mortibus persecutorum, p. 9.

[2] **Ammian. Marc.**, XXIII, 5. հմմտ. **Eutrop.**, XXII. Narseus Orienti bellum inferret, ինչպես նաև՝ **Aur. Vict.**, XXXIX: Eodem tempore Orientem Persae quatiebant.

միջև կռվի բռնվել թշնամու գերազանց ուժերի դեմ և սարսափելի պարտություն կրեց: Պարտված զորավարին Դիոկղետիանոսի ցույց տված արհամարհական ընդունելությունը նրա մեջ վճռականություն առաջացրեց մի անգամ ևս բախտը փորձել պատերազմում: Գալերիոսը պատերազմական գործողությունները Միջագետքի հարթավայրերից փոխադրեց Հայաստանի բարձունքները, որը համարվում էր «ferme sola seu facilior vincendi via»: Հայաստանի լեռներում նոր մարտը հռոմեացիների համար պսակվեց փայլուն հաջողությամբ, և անարգված Կեսարի անունը պսակվեց բարձրագոչ փառքով:

Գալերիոսի պատերազմները նկարագրված են IV դարի ժամանակակից պատմագիրների՝ Ավրելիոս Վիկտորի, Եվտրոպիոսի և Ռուֆոս Փեստոսի կողմից: Ինձ թվում է, որ Գալերիոսի և Ներսեհի վերջին ճակատամարտի մասին հիշողություն է պահպանվել նաև հայկական Փավստոսի մոտ: Նախքան Փավստոսի, իմ կարծիքով այս դեպքին առնչվող զրույցը մեջբերելը, ծանոթանանք պատերազմի հանգամանքներին ըստ հիշյալ պատմագիրների տվյալների:

Ավրելիոս Վիկտորը 360 թ. գրած իր աշխատանքի մեջ ասում է. «Այն ժամանակ, երբ Հովիոսը (Դիոկղետիանոսը) ուղևորվեց Ալեքսանդրիա (ինքնակոչ Աքիլեվսի դեմ)՝ նա Մաքսիմիանոս Կեսարին հրաման տվեց թողնել իր սահմանները (այսինքն՝ Իլլիրիան) և շարժվել Միջագետք պարսիկների գրոհը ետ մղելու համար: Սկզբում նա ծանր պարտություն կրեց, բայց վետերաններից ու նորակոչիկներից շուտափույթ նոր բանակ կազմելով՝ նա հարձակվեց թշնամու վրա Հայաստանի վրայով, որը համարվում է վստահելի հենակետ և հաղթանակի հասնելու հեշտ ճանապարհ: Վերջապես հենց այնտեղ էլ Գալերիոսը ջարդ տվեց Ներսեհին, գերի վերցրեց նրա երեխաներին, կանանց ու ամբողջ թագավորական արքունիքը: Հաղթանակը այնքան փայլուն էր, որ եթե Վալերիոսը (Դիոկղետիանոսը), որի հրամանով հենց կատարվեց այս ամենը, չդիմադրեր, (հայտնի չէ՝ ինչ պատճառով), ապա հռոմեական իշխանությունը կտարածվեր նոր պրովինցիայի վրա: Այնուամենայնիվ, մեզ համար շատ կարևոր հողեր ձեռք բերվեցին, և քանի որ կորցրածը պարսիկները համառորեն ետ էին պահանջում, ուստի նորից բռնկվեց ծանր ու անչափ կործանարար պատերազմ. Interim, Jovio Alexandriam profecto, provincia credita Maximiano Caesari, uti relictis finibus in Mesopotamiam progrederetur, ad arcedos Persarum impetus. A quis primo graviter vexatus, contracto confestim exercitu e veteranis ac tironibus, per Armeniam in hostes contendit - quae ferme sola seu facilior vincendi via est. Denique ibidem Narseum regem in ditionem subegit, simul liberos coniugesque et aulam regiam. Adeo victor, ut ni Valerius, cujus nutu omnia gere-

bantur, incertum qua causa abnuisset. Romani fasces in provinciam novam ferrentur. Verum pars tamen nobis utilior quaesita, quae quum acrius reposcuntur, bellum recens susceptum est, grave admodum perniciosumque[1].

Եվտրոպիոսի հաղորդումն ավելի հանգամանալից է. «Գալերիոս Մաքսիմիանոսը, Ներսեհի հետ հանդիպելով Կալլինիկումի ու Խառանի միջև, սկզբում շատ անհաջող ճակատամարտ ունեցավ, քանի որ նա կռվում էր ավելի շուտ անկշռադատորեն, քան փոքրոգությամբ: Իր փոքրաթիվ զոհատով նա մարտի բռնվեց բազմաքանակ թշնամու հետ: Փախուստի դիմելով՝ Գալերիոսը ուղևորվեց Դիոկղետիանոսի մոտ և հասնելով նրան դեպի Եգիպտոս տանող ճանապարհին՝ ընդունվեց նրա կողմից այնպիսի ամբարտավանությամբ, որ, ինչպես պատմում են, ծիրանին հագած՝ մի քանի հազար քայլ վազեց նրա մարտակառքիետևից:

Սակայն շուտով Իլլիրիայում՝ Միզիայում, զորք հավաքելով՝ Գալերիոսը Մեծ Հայքում Որմիզդի ու Շապուհի պապ Նարսեհի դեմ երկրորդ անգամ ճակատամարտ տվեց և շնորհիվ նախամտածված ծրագրի, ինչպես և խիզախության շատ մեծ հաջողություն ունեցավ: Ընդ որում նա իր վրա վերցրեց նույնիսկ հետախույզի պարտականությունը՝ երկու կամ երեք ձիավորների հետ: Նարսեհին ետ շպրտելով՝ Գալերիոսը գրավեց ու ավերեց նրա ճամբարը, գերի վերցրեց նրա կանանց, քույրերին, երեխաներին և դրանցից բացի՝ պարսկական ազնվականության բազմաթիվ անձանց, ինչպես նաև ձեռք ձգեց պարսկական հարուստ գանձարանը: Ինքը (Նարսեհը) փախավ իր պետության հեռավոր անապատները: Այդ պատճառով էլ, երբ Գալերիոսը հաղթանակով ներկայացավ Դիոկղետիանոսին, որն այն ժամանակ իր զորքերով գտնվում էր Միջագետքում, ընդունվեց արտակարգ պատվով».

Galerius Maximianus primo adversus Narseum minime secundum proelium habuit inter Callinicum Carrasque congressus, cum inconsulte magis, quam ignave dimicasset. Admodum enim parva manu cum copiosissimo hoste commisit. Pulsus igitur et ad Diocletianum profectus cum ei in itinere occurrisset, tanta insolentia a Diocletiano fertur exceptus, ut per aliquot passuum milia purpuratus tradatur ad vehiculum cucurrisse.

Mox tamen per Illyricum Moesiamque contractis copiis rursus cum Narseo, Hormisdae et Saporis avo, in Armenia Majori pugnavit successu ingenti, nec minore consilio simulque fortitudine, quippe qui etiam speculatoris munus cum

[1]Aurelii Victoris Liber de Caesaribus, XXXIX.

altero ac tertio equite susceperit. Pulso Narseo castra ejus diripuit. Uxores, sorores, liberos cepit, infinitam extrinsecus Persarum nobilitatem, gazam Persicam copiosissimam. Ipsum in ultimas regni solitudines egit. Quare ad Diocletianum in Mesopotamia cum praesidiis tum morantem ovans regressus ingenti honore susceptus est[1].

Երրորդ պատմագիրը՝ Ռուֆոս Փեստոսը, այդ նույն իրադարձությունների մասին պատմում է հետևյալը. «Դիոկղետիանոս կայսեր օրոք պարսիկների նկատմամբ ձեռք բերվեց փայլուն հաղթանակ: Մաքսիմիանոս Կեսարը անհամար հրոսակների դեմ աննշան ուժերով ճակատամարտելիս առաջին ճակատամարտում պարտված նահանջեց: Նա Դիոկղետիանոսի կողմից ընդունվեց այնպիսի սրտմտությամբ, որ նա մարտակառքի առջևից ծիրանին հագած վազեց մի քանի հազար քայլ, իսկ երբ նա դժվարությամբ թույլտվություն ստացավ Դակիայի սահմաններից զորք հավաքել և նորից բախտը փորձել պատերազմում, այն ժամանակ Մեծ Հայքում ինքը՝ Կեսարը, անձամբ երկու ձիավորի հետ իր վրա վերցրեց հետախուզությունը և 25 հազարանոց զորքի գլուխն անցած՝ հասավ թշնամու ճամբարը, հանկարծակի հարձակվեց պարսիկների անհամար ջոկատների վրա և սրի քաշեց նրանց: Պարսից թագավոր Նարսեհը փախավ. նրա կինն ու աղջիկները գերի ընկան, բայց հոգատարությամբ պահպանվեց նրանց ամոթխածությունը: Այդ վերաբերմունքից հիացած՝ պարսիկները խոստովանեցին, որ հռոմեացիները ոչ միայն զենքով, այլև բարքով իրենցից բարձր են: Միջագետքը անդրտիգրիսյան 5 գավառների հետ նրանք ետ վերադարձրին: Կնքվեց խաղաղություն, և այն շարունակվում է մինչև այժմ ի բարօրություն կայսրության».

Sud Diocletiano principe, pompa victoriae nota de Persis est. Maximianus Caesar prima congressione, quum contra innumeram multitudinem cum paucis acriter dimicasset, pulsus recessit: ac tanta indignatione a Diocletiano susceptus est, ut ante carpentum ejus per aliquot millia passuum cucurrerit purpuratus: et quum vix impetrasset, ut reparato de limitaneis Daciae exercitu eventum Martis repeteret, in Armenia Majore ipse Imperator cum duobus equitibus exploravit hostes: et cum viginti quinque millibus militum superveniens castris hostilibus, subito innumera Persarum agmina adgressus, ad internecionem cecidit. Rex Parsarum Narseus effugit; uxor ejus et filiae captae sunt, et cum maxima pudicitiae custodia resevatae. Pro qua admiratione Persae non modo armis, sed etiam moribus, superiores esse Romanos confessi sunt; ac Mesopotamiam cum

[1] Eutropii Breviarium historiae Romanae, I, IX, p. 24-25.

Transtigritanis quinque regionibus reddiderunt. Pax facta, usque ad nostram memoriam Reipublicae utilis perduravit[1].

Ինչպես կարելի է տեսնել, երեք պատմիչների շարադրանքները շատ մոտ են միմյանց, և նույնիսկ առանձին արտահայտությունների համընկնումներ են պարունակում: Հնարավոր է, որ նրանք օգտվել են մեզ չհասած մի ընդհանուր աղբյուրից[2]: Համենայն դեպս, նրանց հաղորդումների արժանահավատությունը ոչ մի կասկածի ենթակա չէ:

Նկարագրված իրադարձությունների արձագանքը, ինչպես ինձ թվում է, լսվում է և հայ հին գրականության մեջ՝ հատկապես Փավստոսի երկում: Հզոր արքայից արքայի ընտանիքի գերի ընկնելն այնպիսի արտակարգ երևույթ էր, որ չէր կարող ջնջվել այդ ամբոխանքի վայր հանդիսացող երկրի հիշողությունից և որևէ հետք չթողնել:

Փավստոսը պատմում է մի հետաքրքրական դեպքի մասին, որը նա հարմարեցնում է Տիրան թագավորի ժամանակներին, բայց իրականում նրա մեջ գտնում ենք մեզ հետաքրքրող իրադարձությունների արտացոլումը:

Հայոց Տիրան թագավորն ուներ մի արտակարգ ազնվացեղ ձի՝ «ամբողջովին պուտերով պատած, որոնք լույսի տակ փայլում էին տարբեր երանգներով, չափազանց կայտառ, ազնվատոհմ, գեղեցիկ կազմվածքով, անսովոր հասակի ու երկարության», մի խոսքով, նա իր հմայիչ գեղեցկությամբ ընդհանուր հիացմունքի ու զմայլանքի առարկա էր դարձել: Այդ ձիու պատճառով Տիրան թագավորի ու պարսից Ատրպատականի կառավարիչ Վարազ-Շապուհի միջև հարաբերությունները սրվել էին: Վերջինս պահանջել էր հռչակավոր ձին, բայց նրա տերը՝ Տիրանը, ափսոսում էր նրանից բաժանվել: Եվ Տիրանը նրա փոխարեն, Վարազի պահանջով, ուղարկեց գույնով ու արտաքինով նման մի ուրիշ ձի: Խաբված Վարազը կատաղեց: Նա զայրույթից ավելի բռնկվեց, երբ նրան սկսեցին փսփսալ, թե այդ մարդը, որ ափսոսում է զիջել ինչ-որ կաշի (խոսքը ձիու մասին է), հույսը դնելով կայսրի ու նրա ուժի վրա, մտքին դրել է Սասանյան տոհմից խլել պարսկական թագավորությունը, ասելով՝ «Դա առաջ պատկանել է մեզ և մեր նախնիներին»:

Վարազը հավատաց ամբաստանության և զեկուցեց պարսից թագավոր Նարսեհին, որը հրամայեց վերացնել անբարեհույս Տիրան թագավորին: Այդ նպատակով Ատրպատականի կառավարիչը ներկայացավ (Տիրանին) Հայաստանում, իբր թե բյուրիմացությունը հարթելու

[1] Rufi Festi Breviarum, XXV, հմմտ. նաև 20-րդ գլուխը, որտեղ այդ նույնը բերվում է ավելի սեղմ:

[2] Martin Schanz, Geschichte der röm. Literatur, München, 1904, p. 67, 76.

համար: Դյուրահավատ թագավորը նրան ընդունեց բարեհաճությամբ, ամեն տեսակ պատիվների արժանացրեց, ի միջի այլոց նաև հրավիրեց որսի: Խարդախ հյուրը, հարմար պահ ընտրելով, բռնեց Տիրանին և շիկացած երկաթով աչքերը կուրացրեց և շղթայակապ ուղարկեց պարսից թագավորին: Ուխտադրուժ կառավարիչի հաշվեհարդարը Տիրանի հետ երկրում պարսիկների դեմ առաջ բերեց հզոր շարժում: Երկրի ազդեցիկ նախարարները հավաքվեցին խորհրդակցության և որոշեցին դիմել հունական կայսրին և օգնություն խնդրել՝ վրեժխնդիր լինելու հարազատ թագավորի դժբախտության համար: Դեսպաններ ընտրվեցին Սյունյաց իշխան Անդովկը և Արշարունյաց իշխան Արշավիր Կամսարականը: Նրանք ժամանեցին մայրաքաղաք և նվերների հետ կայսրին ներկայացրին նաև խնդրագիրը: Այդ ժամանակ էր, որ պարսից թագավոր Նարսեհը մեծ ուժերի գլուխ անցած՝ արշավեց Հայաստան և սկսեց ամայացնել երկիրը: Լուր առնելով այդ մասին՝ կայսրը զորքով շարժվեց պարսիկների դեմ: Նա ճամբար խփեց Սատաղ քաղաքից ոչ հեռու: Կայսրը հայերից ընտրելով երկու՝ Արշավիր ու Անդովկ ազնվատոհմ մարդկանց, հենց այն նույն ազնվականներին, որոնք նրա մոտ դեսպանության էին եկել, և ինքն էլ նրանց հետ հագնելով գյուղացու հագուստ, իրրև կաղամբի վաճառականներ, մտնում է թշնամու ճամբարը: Պարսիկները բանակել էին Քասեն գավառի Ոսխա գյուղում: Հետախույզները հայտնվեցին նրանց մոտ, զննեցին ամեն ինչ, պարզեցին ուժերի քանակն ու դասավորությունը և ետ դարձան իրենց ճամբարը: Դրանից հետո հունական զորքը տարբեր կողմերից ներխուժեց պարսիկների վրա և գլխովին ջախջախեց նրանց: Ջարդը սարսափելի էր, թագավորին հազիվ հաջողվեց միայն մի հեծյալի ուղեկցությամբ փախչել և ազատվել: Հույները գրավեցին պարսկական ճամբարը: Շատերի հետ նրանք գերի վերցրին թագավորի կանանոցը՝ ինչպես և Տիկնոց Տիկնոջը՝ իր ճաժիշտներով: Հաղթանակած կայսրը Անդովկ և Արշավիր իշխաններին նշանակեց Հայաստանի կառավարիչներ և նրանց և մյուս իշխաններին առատ նվերներ տալով՝ վերադարձավ իր մայրաքաղաքը:

Պարսից թագավոր Նարսեհը հավաքեց իր մերձավորներին՝ պարզելու իրեն հասած դժբախտության պատճառները: Այստեղ բացահայտվում է Ատրպատականի կառավարիչ Վարազ-Շապուհ ամբաստանության բուն պատճառը, որը մի ծիու համար իր տիրակալին պատերազմի մեջ քաշեց կայսեր հետ և դարձավ չլսված պարտության պատճառը: Սաստիկ զայրացած թագավորը հրամայում է անհապաղ մահապատժի ենթարկել Վարազին: Այնուհետև կարգադրում է դեսպաններ ուղարկել կայսեր մոտ խաղաղության առաջարկությամբ և խնդրանքով՝ գերությունից ազատել գոնե իր կանանոցը:

Ի պատասխան դրան, Վալենտիանոս կայսրը հատուկ հրովարտակով պահանջեց, որպեսզի նախ և առաջ պարսիկներն ազատեն Հայաստանից տարած գերիներին՝ ամենից առաջ Հայոց Տիրան թագավորին՝ խոստանալով դրանից հետո կատարել պարսից թագավորի խնդրանքը: Վերջինս համաձայնեց և անմիջապես Տիրանին ազատեց կալանքից: Եվ քանի որ նա զրկված էր տեսողությունից, ապա նրա խնդրանքով ժառանգորդ նշանակվեց իր Արշակ որդին: Դրանից հետո գերությունից ազատվեցին և Պարսկաստան վերադարձվեցին թագավորի ընտանիքն ու մյուս գերիները[1]:

Փավստոսի պատմությունը կրում է փոքր-ինչ հեքիաթային բնույթ: Նրա մեջ հյուսված են տարբեր ժամանակների իրադարձությունները՝ 293-302 թթ. կառավարող պարսից Նարսեհ թագավորը ներկայացվում է Հայաստանում IV դարի 40-ական թթ. կառավարած՝ Տիրանի ժամանակակից, և նրանք երկուսն էլ գործ են ունենում Վալենտոս կայսեր հետ, որը գահը զբաղեցրել է 364-378 թթ.: Այնուամենայնիվ, այստեղ չի կարելի ժխտել պատմական ճշմարիտ իրադարձությունների, հատկապես 298 թ. պատերազմի արձագանքը, որը դժբախտ ելք ունեցավ՝ պարսից թագավորի ընտանիքի գերեվարությունը: Կայսրի հետախուզության հանգամանքների մասին Փավստոսի հաղորդումը բավական է, որպեսզի նրա պատմությունը վերագրենք Գալերիոսին: Վերը մենք տեսանք, որ արևմտյան պատմագիրներին էլ հայտնի է երկու ծիավորների ուղեկցությամբ կայսեր՝ թշնամու ճամբար հետախուզության գնալը: Սինեսիոսի ճառից իմանում ենք, որ Գալերիոսը իրեն ներկայացրել է որպես կայսեր կողմից պարսիկների մոտ բանակցությունների համար նշանակված դեսպան.

Ἕτερον δὲ τούτου νεώτερον ἀκούεις, οἶμαι καὶ γὰρ οὐδὲ εἰκὸς ἀνήκοόν τινα εἶναι βασιλέως ἑαυτὸν ἐπιδόντος εἶσω τῆς πολεμίας γενέσθαι ἐν χρείᾳ κατασκούσης μιμησαμένου σχῆμα πρεσβείας[2].

Ըստ Փավստոսի երկում պահպանված հայ ավանդության, կայսրը նույն նպատակով պարսկական ճամբար է մուտք գործել կաղամբ վաճառող գյուղացու հագուստով: Նրան ուղեկցող ծիավորները, ըստ Փավստոսի, եղել են հայ իշխաններ Անդովկն ու Արշավիրը, այն նույն անճանաչորությունները, որոնք կարևոր առաքելությամբ ուղարկվել էին կայսեր մոտ: Մեր պատմիչի մոտ նշվում է նաև այն վայրը Հայաստանում, որտեղ տեղի է ունեցել ճակատամարտը՝ այն է Բասեն գավառի Ոսխա գյուղում:

---

[1] **Փավստոս Բուզանդ**, Գիրք Գ, գլ. 21:

[2] **Syn.**, X.

Ինչպես նշեցինք, Փավստոսի պատմությունը տառապում է ժամանակավրեպությամբ: Այդ հանգամանքը նկատել է դեռևս Մովսես Խորենացին: Վերջինիս վկայությամբ Տիրան թագավորի օրոք Պարսկաստանում կառավարել է ոչ թե Նարսեհը, այլ Շապուհ [II Երկարակյացը]: Որպեսզի հարթի Փավստոսի տվյալների ժամանակավրեպությունները, Խորենացին պատրաստ է Փավստոսի Նարսեհին պարսից թագավորից դարձնելու նրա եղբայրը և հայկական թագի հավակնորդ. «Պարսից Շապուհ թագավորը,- ասում է Խորենացին,- լսելով Խոսրովի մահվան մասին և այն մասին, որ նրա որդի Տիրանը ուղևորվել է կայսեր մոտ, մեծ զորք է հավաքում իր եղբայր Նարսեհի իշխանության տակ, իբր թե մտածելով նրան ետ ետեցնել հայկական գահին և ուղարկում է մեր երկիրը՝ կարծելով թե անտեր է: Բայց նրա դեմ դուրս է գալիս փառապանծ Արշավիր Կամսարականը հայոց զորքի գլուխն անցած և Մոուղի դաշտում ճակատամարտ է տալիս: Թեև կռվի մեջ շատ հայ իշխան-նախարարներ ընկան, բայց և այնպես հայերը հաղթեցին, պարսկական զորքերին հալածեցին և պաշտպանեցին երկիրը մինչև Տիրանի վերադառնալը »[1]:

Արշավիր Կամսարականի անունը, այսինքն՝ այն անճնավորության, որը համաձայն Փավստոսի ու Խորենացու ուղարկվել էր կայսեր մոտ, ճշմարիտ գրավական է այն բանի, որ խոսքը գնում է այն իրադարձությունների մասին, որոնց մասին մանրամասն պատմում է Փավստոսը: Խորենացուն հայտնի է նաև Տիրանի հրաշալի ձիու մասին, բայց Փավստոսի ժամանակավրեպությունը հարթելու համար այդ դրվագը նա վերագրում է ավելի հին ժամանակների՝ ենթադրելով, թե եղել է մի ուրիշ Տիրան՝ Արտաշես [I-ի] որդիներից ու հաջորդներից մեկը: Այդ Տիրանը, ըստ Խորենացու, ունեցել է «երկու ձի՝ անչափ թեթև արագավազ, քան Պեգասը, թվում է, թե նրանք ոտք չեն դրել գետնի վրա, այլ սավառնել են օդում: Մի անգամ ոմն իշխան Բզնունի՝ Դատաբե, թույլտվություն է խնդրում հեծնել նրանց և պարծենում է, թե ինքը թագավորից ավելի մեծաշուք է»[2]:

Առաջին Տիրանը՝ ձիերի տերը՝ Փավստոսի Տիրանի գրական-արհեստական զարմից է: Դա երևում է նաև նրանից, որ Դատաբեն, որն ըստ Խորենացու[3], իբր թե ապրել է առաջին Տիրանի օրոք, իրականում ոչ այլ ոք է, եթե ոչ հայտնի իշխան Բզնունին՝ Տիրանի հոր՝ Խոսրովի, զորավարը: Ըստ

---

[1] **Մովսես Խորենացի**, Գ, 10:

[2] Անդ, Բ, 62:

[3] **Փավստոս Բուզանդ**, Գ, 8:

Փավստոսի պատմության, Դատաբեն Խոսրովին դավաճանելու համար մահված է դատապարտվել[1]:

Ինչո՞վ բացատրել Փավստոսի ժամանակավրեպությունը, ինչո՞ւ են 298 թ. իրադարձությունները վերագրված Տիրանի ժամանակներին: Առաջադրված հարցին պատասխանելու և դրանով, ինչպես կտեսնենք, քննարկվող հարցերի վերաբերյալ մեր դատողությունների իրավացիությունը ապացուցելու համար, մենք պետք է կանգ առնենք 298 թ. պայմանագրի վրա և հետևենք հետագա իրադարձություններին մինչև Արշակ [II-ի] թագավորությունը:

Գալերիոսի ու Նարսեհի միջև տեղի ունեցած պատերազմի արդյունքների մասին Փավստոսը լրիվ իրազեկ չէ: Այդ մասին արժեքավոր տեղեկություններ կան VI դարի [բյուզանդական] պատմագիր և դիվանագետ Պետրոս Պատրիկիոսի մոտ: Նրա կորած պատմական աշխատության բեկորների մեջ պահպանվել է 298 թ. պայմանագրին վերաբերող մի հատված:

Պարտությունից հետո պարսից թագավորը խաղաղություն կնքելու համար դիվանագիտական հարաբերությունների մեջ մտավ կայսեր հետ: Կազմվեց դեսպանություն, որի գլուխ էր կանգնած Աֆֆարբանեսը՝ թագավորի սիրելին: Պատրիկիոսը մեջ է բերում այն ճառը, որ պարսից դեսպանը արտասանել է Գալերիոսի առջև. «Ամբողջ մարդկությանը պարզ է, որ հռոմեական ու պարսկական պետությունները նման են երկու լուսատուների, և նրանցից յուրաքանչյուրը աչքերի նման պետք է գեղեցկությամբ փայլի մյուսի փայլով և ոչ ամեն կերպ մոլեգնի փոխադարձ բնաջնջման համար: Դա փառք չի կոչվում, այլ ավելի շուտ թեթևամտություն և թուլություն: Քանի որ, կարծելով թե սերունդները չեն կարող միմյանց օգնել, նրանք շտապում են հաշիվները մաքրել իրենց թշնամիների հետ: Եվ սակայն

---

[1] Փավստոսի Տիրանը, ըստ Խորենացու, գահ է բարձրացել Կոստանդիանոսի 17-րդ տարում (Գ, 11): Ը գլխի նախաբանում Սեբեոսի մոտ (էջ 16) ասվում է. Տիրանի 12 տարում, պարսից թագավոր Նարսեհի 7 տարում և բարեպաշտ Կոստանդիանոսի որդիներ Կոստանդի ու Կոստաս առաջին տարում՝ «եկն ի վերայ նորա ի Բասենաց գավառի ի գետւն Ցոսխա»: Գնաց(?) նրա վրա Բասենի Ոսխա գյուղը, մինչև որ նա մյուս բոլոր գերիների հետ Տիրան թագավորին չի վերադարձրել և նրա որդուն՝ Արշակին թագավոր չի կարգել և թույլ չի տվել վերադառնալ Հայաստան: Թեև այդ արտահայտությունից չի երևում, ով է ում վրա գնացել, բայց դժվար չի գուշակել, որ Ոսխայի ճակատամարտի տակ հասկացվում են 297 թ. իրադարձությունները: Սեբեոսի մոտ, ըստ Փավստոսի, Տիրանը մի կողմից համարվում է Նարսեհի ժամանակակիցը, իսկ մյուս դեպքում, ըստ Խորենացու, նա ժամանակով մոտ է Կոստանդին և ոչ Վալենտոսին, ինչպես Փավստոսի մոտ է:

միաժամանակ կարիք չկա մտածել, թե Նարսեսը թույլ է բոլոր մյուս թագավորներից, իսկ Գալերիոսը մյուս թագավորներին այնքան է գերազանցում, որ միայն նրա կողմից է Նարսեսը արժանիորեն պարտության մատնվել, թեև նա էլ իր առաքինությամբ բոլորովին չի զիջում իր նախնիներին:

Դրանից հետո Աֆֆարրպանեսն ասաց, որ թագավորից հանճարարություն ունի հայտնելու, որ նա արդար է համարում իր թագավորության բախտը վստահելու հռոմեացիների մարդասիրությանը և այդ պատճառով էլ նա չի վիճարկում այն պայմանները, որոնց հիման վրա պետք է կայանա հաշտությունը, և ամեն ինչ թողնում է կայսեր հայեցողությանը: Նա միայն մի խնդրանք ունի՝ վերադարձնել կանանց ու երեխաներին, և հավաստիացնում է, որ նրանց վերադարձնելու դեպքում ինքը դա կհաշվի շատ ավելի մեծ բարիք, քան եթե նա հաղթանակ տաներ զենքով: Եվ այժմ նա չի կարող ըստ արժանվույն երախտահատույց լինել այն բանի համար, որ, նրանք գերության մեջ լինելով, որևէ վիրավորանքի չեն ենթարկվել, և նրանց հետ վարվել են այնպես, որպես այն մարդկանց հետ, որոնք պետք է վերադառնային իրենց (արքայական) վիճակին: Նա ավելորդ չհամարեց հիշեցնել նաև մարդկային ճակատագրի փոփոխականության մասին:

Այդ խոսքերը լսելով կայսրը հավանաբար զայրացավ և ամբողջ մարմնով դողալով՝ ասաց, որ պարսիկներին վայել չէ ուրիշներին հիշեցնել ճակատագրի փոփոխականության մասին, քանի դեռ իրենք, օգտվելով բարեպատեհ առիթից, չդադարեն դժբախտության մեջ գտնվող մարդկանց անարգելուց. «Վալենտիանոսի օրոք հաղթության մեջ դուք լա՛վ պահպանեցիք չափավորությունը. դո՛ւք, որ նենգորեն խաբելով՝ նրան գերեցիք և չազատեցիք մինչև խոր ծերությունը և անփառունակ մահը: Նույնիսկ մահից հետո էլ ինչ-որ ձևով ամոթալիորեն պահպանել եք նրա մաշկը և մահկանացուի մարմինը ենթարկել ձեզ համար անմահ նողկալիության»:

Այդպես առարկեց կայսրը: Նա ասաց, որ ինքը զիջում է, բայց ոչ այն պատճառով, որ պարսիկներն իրենց դեսպանության միջոցով հիշեցնում են, որ պետք է հաշվի նստել մարդկային ճակատագրի փոփոխականության հետ (այդ դեպքում պետք էր ավելի սրտմտել, երբ որ հաշվի առնեն պարսիկների բոլոր արածները), այլ հետևելով սեփական նախնիներին, որոնց մոտ սկզբունք է եղել՝ խնայել պարտվողներին և պայքարել անհնազանդների դեմ, և հրամայեց դեսպաններին հայտնել թագավորին հռոմեացիների մեծահոգության մասին, որոնց արիությունը իրենք փորձեցին, և հուսադրել, որ շուտով կայսեր հրամանով նրան կհանճնվեն նաև գերիները[1]:

[1] Excerpta Petri Patricii Ad Romanos, c. XII.

Խաղաղության պայմանների մասին նույն պայմանագիրը հայտնում է հետևյալը.

«Երբ Գալերիոսն ու Դիոկղետիանոսը Մծբինում հանդիպեցին, ապա միասին խորհրդակցելով՝ որպես դեսպան Պարսկաստան ուղարկեցին մեծորիայի մագիստրոս Սիկորիոս Պրոբոսին:

Նարսեհը նրան սիրալիր ընդունելություն ցույց տվեց, հույս ունենալով, որ նրանք կկատարեն իրենց խոստումը, բայց ընդունելությունը հետաձգում էր:

Թերևս ցանկանալով հոգնեցնել Սիկորիոսին սպասողականությամբ և դրանով նրան ավելի շուտ համոզվող դարձնել, Նարսեհը Սիկորիոսին իր հետ տարավ (վերջինս գուշակեց, թե բանն ինչ է) մինչև մարական Ասպրոդիա գետը, մինչև որ կհավաքվեին ռազմերթի տարբեր տեղեր ցրված զինվորները: Եվ վերջապես պալատի ներքին սենյակներում, հեռացնելով մյուսներին և բավարարվելով Աֆֆարբանեսի, Արխանետեսի և Վարսավորսի ներկայությամբ, որոնցից մեկը praefectus praetorio էր, իսկ մյուսը՝ Սումիայի իշխանություն ուներ, հրամայեց Պրոբոսին զեկուցել իր առաքելության մասին:

Դեսպանության գլխավոր դրույթները հետևյալն են.

1) Արևելքում հռոմեացիները ստանան Անգելենեն (Անգեղ տուն) Սոֆենեի (Ծովիք) հետ և Արզանենեն (Աղձնիք) Կորդուենեի (Կորդուք) և Զաբդիկենեի (Ծավդեք) հետ:

2) Տիգրիս գետը լինի սահմանագիծ երկու պետությունների միջև:

3) Մարաստանի սահմանի վրա ընկած Զինքա ամրոցը լինի Հայաստանի սահման:

4) Իրերիայի թագավորը իր տիրակալական իշխանության տարբերանշանները ստանա հռոմեացիներից:

5) Առևտրական հարաբերությունների համար կետ ծառայի Տիգրիսի ափին գտնվող Մծբին քաղաքը՝

Ἦν δὲ τὰ κεφάλαια τῆς πρεσβείας ταῦτα, ὥστε κατὰ τὸ ἀνατολικὸν κλίμα τὴν Ἀγγιληνὴν μετὰ Σοφηνῆς καὶ Ἀρζανηνὴν μετὰ Καρδουηνῶν καὶ Ζαβδικηνῆς Ῥωμαίους ἔχειν καὶ τὸν Τίγριν ποταμὸν ἑκατέρας πολιτείας ὁροθέσιον εἶναι, Ἀρμενίαν δὲ Ζίνθα τὸ κάστρον ἐν μεθορίῳ τῆς Μηδικῆς κείμενον ὁρίζειν, τὸν δὲ Τβηρίας βασιλέα τῆς οἰκείας βασιλείας τὰ σύμβολα Ῥωμαίοις ὀφείλειν, εἶναι δὲ τόπον τῶν συναλλαγμάτων Νίσιβιν τήν πόλιν παρακειμένην τῷ Τίγριδι.

Նարսեհն այդ բոլորը լսելով՝ հակառակ իր կամքի պետք է ամեն ինչին համաձայներ: Բայց որպեսզի արտաքուստ ցույց չտար,- շարունակում է

պատմագիրը,- որ ենթարկվում է ստիպված, նա առարկեց այն բանի դեմ, որպեսզի առևտրական կետ համարվի Մծբինը:

Սիկորիոսը պատասխանեց, որ պետք է այդ բանում էլ զիջել, քանի որ դեսպանությունը լիազորված չէ գործել ըստ իր ցանկության, իսկ կայսեր կողմից այդ հարցի վերաբերյալ ոչ մի հրահանգ չկա: Այսպիսով առաջարկություններն ընդունվեցին: Նարսեհին ետ վերադարձվեցին կանայք ու երեխաները[1]:

Բյուզանդական պատմագրի շարադրածը հատկանշական է որպես այն ժամանակվա դիվանագիտական բանակցությունների նմուշ՝ իր ոգով շատ համապատասխան Փավստոսի շարադրանքի ոճին: Մեզ համար նրա մեջ կարևոր են հատկապես խաղաղության պայմանները: Պարսկաստանի ուղղությամբ արևելքում Հայաստանի սահման է առաջարկվում Զինքա ամրոցը: Նրա տեղադրությունը դժբախտաբար հայտնի չէ, բայց այն պետք է որոնել Ուրմիա լճից հարավ, քանի որ Փավստոսի վկայությամբ գրեթե ամբողջ Ատրպատականը՝ Գանձակ մայրաքաղաքով հանդերձ գտնվել է հայ Արշակունիների իշխանության ներքո: Գանձակը համապատասխանում է ներկայիս Թախտ-ի-Սուլեյմանին՝ Մարաղայի և Զինջանի միջև. հետևաբար հայկական տիրույթների սահմանը անցնում էր այդ վայրից հարավ, որտեղ էլ հարկավոր է որոնել Զինքան (2): Բացի դրանից, պայմանագրի համաձայն պարսիկներից անջատվեցին հետևյալ գավառները՝ Անգելենեն Սոֆենեի հետ, Արզանենեն Կորդուենեի հետ և (Ռեհիմենեն) Զաբդիկենեի հետ՝ գավառներ, որոնք ընկած են Հայաստանի սահմաններում Տիգրիսի երկու վտակների վրա: Այդ գավառների, որոնք պարսիկների հետ հետագա պայքարում վերջնականապես հաստատվեցին կայսրության կազմում, ազդեցիկ իշխանները կայսրերից ստացան ինվեստիտուրա, ինչպես 298 թ. պայմանագրով հաստատված էր Իբերիայի թագավորի նկատմամբ: Այդ գավառների տարածքները մտցվեցին հայ Արշակունիների տիրույթների կազմը՝ Արշակունիներ, որոնք ճանաչում էին կայսրերի գերագույն իշխանությունը՝ ինչպես և իրերական թագավորները:

Հայ Արշակունիները տիրում էին նաև Ատրպատականին և այնտեղ Գանձակ քաղաքում պահում էին կայազոր, ինչպես այդ երևում է Փավստոսի բազմաթիվ վկայություններից:

298 թ. հաստատված դրությունը ուժի մեջ մնաց մինչև 363 թ.: Այն ամենը, ինչը Փավստոսի հաղորդումներում չի համապատասխանում կամ ակնհայ-

[1] Excerpta Petri Patricii Ad gentes, p. III.

առքեն հակասում է 298 թ. պայմանագրային դրույթներին, պետք է համարել պատմական ճշմարտությունից զուրկ:

Տիրանի մասին վերը բերված զրույցի մեջ Ատրպատականի տիրակալ է դուրս բերված պարսից թագավորը՝ հանճին Վարազ-Շապուհի, որ Տիրանի դժբախտության պատճառն էր եղել: Հիմք չկա ընդունելու, թե պարսիկները հասցրել էին հայերից խլել Ատրպատականը, քանի որ նրա գրավումը, որպես պայմանագրի բացահայտ խախտում, կայսրերի կողմից հակահարվածի կարժանանար: Ընդ որում, երկու պետությունների հարաբերությունները խաղաղ էին, ինչպես կտեսնենք, համենայն դեպս մինչև Կոստանդիանոս Մեծի մահը: Ճիշտ է, Փավստոսի խոսքերից իմանում ենք, որ Տրդատի որդի և հաջորդ հայոց թագավոր Խոսրովի օրոք պարսիկները փորձեցին Ատրպատականում վերականգնել իրենց իրավունքները, բայց նրանց փորձը հաջողությամբ չպսակվեց: Լեռնական ցեղերի արշավանքը Հայաստան, որ տեղի ունեցավ Խոսրովի թագավորության ժամանակ, հավանաբար պարսիկների կողմից նկատի առնվեց որպես բարենպաստ պահ, և Շապուհը զորքերի գլուխ անցած՝ ներխուժեց Հեր և Զարեվանդ սահմանամերձ գավառները: Նրա դեմ ուղարկված զորքը իշխան Դատաբեն Բզնունու հրամանատարությամբ անցավ թշնամու կողմը: Պարսիկները հաղթականորեն մտան երկրի խորքը, բայց Բզնունյաց ծովի մոտ, այսինքն՝ Վանա լճի ափին պարտություն կրեցին և հեռացան Հայաստանի սահմաններից[1]:

Շուտով, հավանաբար նույն Շապուհի դավերով, հետևեց ծայրամասային Աղձնիք (Արզանենե) գավառի իշխանի ապստամբությունը, բայց նա էլ ճնշվեց և չարդարացրեց հրահրողի ու ոգեշնչողի հույսերը[2]:

Խաղաղ հարաբերություններին սպառնացող այդ դեպքերը սակայն ապարդյուն անցան: Նույնիսկ Փավստոսը դրանց լուրջ նշանակություն չի տալիս և պնդում է, որ Տրդատի ժամանակներից, մինչև Խոսրովի հաջորդ Տիրանը երկիրը հանգիստ վիճակում էր գտնվում[3]:

Փավստոսի հայտարարությունը համընկնում է այն բանին, ինչ մենք գիտենք արևմտյան աղբյուրներից: Նրանց ընդհանուր խոստովանությամբ խաղաղությունը խախտվեց Կոստանդիանոս Մեծի մահից առաջ: Միայն Եվսեբիոսը նրանցից հեռանում է՝ պատերազմը սկսելու Շապուհի առաջին փորձը վերագրելով 333 թվին, երբ պարսկական դեսպանությունը ներկայացավ Կոստանդիանոսին[4]: Շատ հնարավոր է, որ դեսպանության առիթ են

---

[1] Փավստոս Բուզանդ, Գ, 8:

[2] Անդ, Գ, 9:

[3] Անդ, Գ, 15:

[4] Vita Const., IV, 8.

ծառայել Փավստոսի հաղորդած հայ-պարսկական բախումները: Հնարավոր է, որ այդ պահին է վերաբերում Եվսեբիոսի մյուս տեղեկությունը, ըստ որի պարսիկները, ստանալով կայսեր մերժումը Տիգրիսից այն կողմ ընկած հինգ գավառները վերադարձնելու վերաբերյալ, երկրորդ անգամ դեսպաններ ուղարկեցին խաղաղությունը չխախտելու խնդրանքով[1]:

Եթե 298 թ. պայմանագրային դրույթները շարունակվեցին մինչև Կոստանդիանոսի մահը, ապա Փավստոսի հաղորդումը, թե Տիրանի օրոք Ատրպատականում նստում էր պարսից թագավորի կուսակալ Վարազ-Շապուհը, որի պատճառով պատերազմ ծագեց Տիրանի և Շապուհի, իսկ հետո էլ նրա ու կայսեր միջև, պետք է համարել ոչ ճիշտ: Հնարավոր է, որ Ատրպատականում պարսկական տիրակալ Վարազ-Շապուհի առկայությունը պետք է վերագրել Փավստոսի ժամանակավրեպ այն պատմություններին, որոնք վերաբերում են Գալերիանոսի և ոչ Տիրանի ժամանակներին:

Ըստ Պետրոս Պատրիկիոսի, 298 թ. պարսկական դեսպանությունը բաղկացած էր՝ *Ἀφφάρβα καὶ ἀρχαπέτου καὶ Βαρσαβώρσου ὧν ὁ μὲν ὕπαρχος ἦν πραιτωρίων, ὁ δὲ ἕτερος τὴν τοῦ Συμίου εἶχεν ἀρχήν.*

Առաջին անունը՝ *Ἀφφάρβα* ընդունվում է պարսկական Adur farwa իմաստով Atarō frōbag -ից[2], իսկ նրա *ἀρχοπέτης* կոչումը համապատասխանում է argapet -ին[3]: Դեսպանության երկրորդ անդամի անունը՝ *Βαρσαβώρσ-ης* կարող է համեմատվել Վարազ-Շապուհ *βαρ<ασ>-σα-βαρ(σ)ης* -ի հետ: *Σιμίου*-ի տակ գիտնականները տեսնում են հայկական Սյունիք գավառը[4], բայց հավանական է, որ այդ *Συρένου* բառի աղավաղված ձևն է: Այդ դեպքում նա ծագել է Սուրենյանների հայտնի տոհմից: Անունների առաջարկված համեմատությունը, այն ընդունվելու դեպքում, նոր փաստարկ կարող է ծառայել Տիրանի մասին Փավստոսի պատմությունը վերագրելու Գալերիանոսի ժամանակներին:

Առհասարակ այն բոլորը, ինչ որ մեր պատմիչը հաղորդում է Տիրանի մասին, կարող է ստուգման և արևմտյան աղբյուրների լույսի ներքո ճշանակալից չափով կարող է վիճարկվել պատմական քննադատության կողմից:

---

[1] Vita Const., IV, 57.

[2] **Hoffman**, Auszüge, p. 36, not. 306.

[3] **Justi**, Geschichte Irans, Grundriss d. Iran. phil. II, 437-438.

[4] **Rawlinson**, The Seventh Orient monarchy, p. 127, not. 3.

Կոստանդիոսին ուղղված Հուլիանոս կայսեր ճառերի մեջ կան մի քանի արժեքավոր նյութեր, որոնք վերաբերում են այդ ժամանակներին և մինչև այժմ չեն օգտագործվել:

Հռոմեա-պարսկական հարաբերությունների համառոտ տեսությունից հետո հիշատակելով 298 թ. կնքված խաղաղության պայմանագիրը՝ Հուլիանոսն ասում է. «Գիտեմ, թե ինչպես է եղել, որ պարսիկները խախտեցին խաղաղությունը դեռևս քո հոր օրոք և խուսափեցին վրիժառությունից նրա՝ մարտական պատրաստություններ տեսնելիս: Իսկ ավելի ուշ դու պատժեցիր նրանց հանդգնության համար: Քանի որ ես ստիպված կլինեմ հաճախ խոսել պատերազմների մասին, որոնք դրդել ես նրանց դեմ, ապա առայժմ անհրաժեշտ եմ համարում ունկնդրողների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ դու կայսրության երրորդ մասի տիրակալ դարձար այն ժամանակ, երբ թվում էր, թե դու ամենևին պատրաստված չէիր պատերազմին ո՛չ զենքի, ո՛չ մարդկանց և ո՛չ էլ առհասարակ այն միջոցների իմաստով, որոնք անհրաժեշտ է ունենալ առատորեն այդպիսի լուրջ պատերազմի համար: Բացի դրանից ինչ-որ անհասկանալի պատճառներով քո եղբայրներից և ոչ ոք քեզ զորավիգ չեղավ այդ պատերազմում: Սակայն չի գտնվի այն աստիճանի անամոթ ու նախանձոտ բանսարկու մարդ, որը չխոստովաներ, որ դու ես նրանց մեջ գոյություն ունեցող միասնության գլխավոր պատճառը: Կարծում եմ, սկսվում է ինքնըստինքյան ծանր պատերազմ, հեղաշրջման պատճառով զորքերը ապստամբել են և ողրացել քո հոր՝ նախկին տիրակալի մահը՝ բացահայտելով քեզ և եղբայրներիդ ղեկավարելու ցանկությունը, հազար ուրիշ անբարենպաստ ու ծանր հանգամանքներ ամեն կողմից երևան են գալիս և պատերազմի նկատմամբ հույսերը ավելի ու ավելի մոայլ են ներկայացնում:

Հայերը՝ մեր վաղեմի դաշնակիցները, երկպառակտությունից տառապած և նշանակալից չափով պարսիկների կողմն անցած, ավերում են սեփական սահմանները: Այն, ինչ ներկա պայմաններում հանդիսանում է միակ փրկությունը, այսինքն՝ որ դու քո ձեռքը վերցնես իշխանության ղեկը և գործես տիրաբար, չէր կարող տեղի ունենալ եղբայրներիդ հետ Պայոնիայում բանակցելու պատճառով, որ դու քո ներկայությամբ վարում էիր, այնպես, որ առիթ չէիր տալիս կշտամբանքների՝

Ἀρμένιοι παλαιοὶ σύμμαχοι στασιάζοντες καὶ μοῖρα σφῶν οὐ φαύλη Πέρσαις προσθέμενοι, τὴν ὅμορον σφίσι λῃσταῖς κατατρέχοντες καὶ ὅπερ ἐν τοῖς παροῦσιν ἐφαίνετο μόνον σωτήριον, τὸ σὲ τῶν πραγμάτων ἔχεσθαι καὶ βουλεύεσθαι, τέως οὐχ ὑπῆρχε διὰ τὰς πρὸς τοὺς ἀδελφοὺς ἐν Παιονίᾳ συνθήκας, ἃς

αὐτὸς παρὼν οὕτω διῴκησας, ὡς μηδεμίαν ἀφορμὴν ἐκείνοις παρασχεῖν μέμψεως[1].

Այնուհետև նկարագրելով տագնապալից դրությունը, որի մեջ գտավ կայսրությունը Կոստանդիոսը հոր մահից հետո՝ բռնկված պատերազմ, շարունակական ներխուժումներ, դաշնակիցների պառակտում, բանակի բարոյալքում և պետական գործերում ընդհանուր անկարգություն,- այդ նույն հեղինակը շարունակում է.

«Այն բանից հետո, երբ դու ավարտեցիր բանակցությունները եղբայրներիդ հետ, հասավ ցանկալի ժամանակը տրվելու վտանգի մեջ գտնվող պետության գործերին՝ դրանք կարգի բերելու համար: Արագ ընթացքով Պայոնիայից երևացիր Ասորիքում այնպիսի արագությամբ, որ նույնիսկ դժվար է բառերով արտահայտել: Բայց նրանց համար, ով գիտե, բավական է և փորձելը: Ով ի վիճակի է պատմել, թե քո հայտնվելու դեպքում ինչպես բոլորը արագ փոխվեց, բոլորը լավացավ, և դու ոչ միայն մեզ ազատեցիր ճնշող սարսափից, այլև սերմանեցիր լավագույն հույսեր ողջ գալիքի նկատմամբ: Միմիայն քո մոտենալով՝ զորքերն ապաքինվեցին բարոյազրկությունից, և վերականգնվում էր կարգը»:

«Հայերից նրանք, ովքեր անցել էին թշնամու կողմը, վերադարձան անմիջապես, երբ որ դու հալածեցիր այդ երկրի տիրակալ (թագավորի)՝ մեզ մոտ փախչելու պատճառ եղած մեղավորներին և փախածներին ապահովեցիր անվտանգ վերադարձ դեպի իրենց տները: Այդպես մարդասիրաբար վարվեցիր դու նրանց հետ, որոնք մոտ ժամանակներս եկան մեզ մոտ և սիրալիր կերպով հաղորդակցվեցիր նրանց հետ, որոնք փախուստից վերադարձել էին իրենց հետ, որ ոմանք զղջում էին այն բանի համար, որ առաջ նրանք անջատվել են մեզանից, իսկ մյուսները իրենց ներկա բախտը գերադասում էին նախկին դեկավարությունից: Նախկինում փախածները խոստովանում էին, որ գործնապես սովորեցին բարեմտություն, մյուսներն էլ, որ հավատարմության համար ստացան իրենց արժանի վարձատրությունը: Դու աչքի ընկար վերադարձածների նկատմամբ այնպիսի առատաձեռն նվերներով ու պատիվներով, որ նրանք առիթ չունեն վրդովվելու կամ նախանձելու իրենց հակառակորդներին, որոնք բախտավոր ու բարեկեցիկ են և արժանացել են անհրաժեշտ պատիվների:

Ἀρμενίων δὲ οἱ προσθέμενοι τοῖς πολεμίοις εὐθὺς μετέστησαν, σοῦ τοὺς μὲν αἰτίους τῆς φυγῆς τῷ τῆς χώρας ἐκείνης ἄρχοντι παρ' ἡμᾶς ἐξαγαγόντος, τοῖς φεύγουσι δὲ τὴν ἐς τήν οἰκείαν κάθοδον ἀδεᾶ παρασκευάσαντος, οὕτω δὲ φιλανθρώπως τοῖς τε

[1]Jul. Imp. Oratio, I, ed. Teub., p. 21-22.

παρ᾽ ἡμᾶς ἀφικομένοις ἄρτι χρησαμένου καὶ τοῖς ἐκ τῆς φυγῆς μετὰ τοῦ σφῶν ἄρχοντος κατεληλυθόσι πράως ὁμιλοῦντος, οἱ μέν, ὅτι καὶ πρότερον ἀπέστησαν αὐτοὺς ἀπωλοφύραντο οἱ δὲ τὴν παροῦσαν τύχην τῆς πρόσθεν ἡγάπων μᾶλλον δυναστείας. καὶ οἱ μὲν φεύγοντες ἔμπροσθεν ἔργῳ σωφρονεῖν ἔφασαν ἐκμαθεῖν οἱ δὲ τοῦ μὴ μεταστῆναι τῆς ἀμοιβῆς ἀξίας τυγχάνειν. τοσαύτῃ δὲ ἐχρήσω περὶ τοὺς κατελθόντας ὑπερβολῇ δωρεῶν καὶ τιμῆς, ὥστε μηδὲ τοῖς ἐχθίστοις σφῶν εὖ πράττουσι καὶ τὰ εἰκότα τιμωμένοις ἄχθεσθαι μηδέ βασκαίνειν[1].

Հայաստանում ինչ-որ իրադարձությունների մասին Հուլիանոսի ակնարկները լրիվ պարզ չեն: Դրանցից կարելի է եզրակացնել, որ հայերի մոտ կային և՛ պարսկամետ, և՛ հռոմեամետ կուսակցություններ: Պարսկական կուսակցությունը հաղթելով հալածեց հակառակորդներին. վերջիններս թագավորի հետ միասին ապաստան գտան հռոմեական տարածքում: Կոստանդիոս կայսրը հաշտեցրեց կուսակցությունները և խաղաղություն վերականգնեց ի հաճույս երկու կողմերի: Բայց ով էր այդ հայկական թագավորը: Փավստոսին անծանոթ է կայսեր մոտ թագավորի փախչելու դեպքը: Նա պատմում է պարսիկների կողմից Տիրան թագավորին գերելու մասին: Այդ թագավորի օրոք նախարարական տոհմերի միջև տեղի ունեցան խռովություններ ու բախումներ և ըստ ամենայնի այդ ժամանակներին են վերաբերում Հուլիանոսի հիշատակած իրադարձությունները: Հուլիանոսի խոսքերով Հայաստանում խռովությունները ճնշվել են Կոստանդիոսի կողմից, այն բանից հետո, երբ նա «արագ ընթացքով Պայոնիայից [դուրս գալով] երևաց Ասորիքում»: Իսկ Պայոնիայում Կոստանդիոսը եղբայրների հետ գտնվում էր հայրական ժառանգորդությունը բաշխելու գործով:

Կոստանդիանոս Ա Մեծը, ինչպես հայտնի է, կայսրությունը բաժանել էր երեք որդիների և երկու եղբորորդիների միջև, ըստ որում արևելյան տիրույթները բաժին ընկան Կոստանդիոս որդուն և երկու եղբորորդիներին: Կոստանդիանոսի մահից հետո կայսերական գերդաստանի երկրորդ գիծը ջարդի ենթարկվեց, որի ժամանակ զոհվեցին նաև նրա եղբորորդիները՝ Դալմատիոսը և Անհիբալիանոսը[2]: Ահա այդ ժամանակ Կոստանդիանոսի որդիները հավաքվեցին Պայոնիայում՝ կայսրությունը կրկին բաժանելու համար: Ամբողջ արևելքը մնաց Կոստանդիոսին: Կոստանդիանոսի մահից

[1] Jul. Imp. Oratio, I, p. 24-25.

[2] Zosime, p. 98.

հետո այդ կապակցությամբ եղբայրների միջև սկսված բանակցությունները 338 թ. ավարտվեցին: Գոյություն ունի Կոստանդիանոս II-ի և Կոստասի անունով հրովարտակ՝ հրապարակված Սիրմիայում՝ Պայոնիա քաղաքում 338 թ. հուլիս ամսի վերջին (D. VI k. Aug. Sirmi Urso et Polemio conss (338) Impp. Constantinus et Constans AA. ad Catulinum)[1].

Հրովարտակը ստորագրել են երկու եղբայրները: Կոստանդիոսի ստորագրության բացակայությունը կարելի է բացատրել նրանով, որ նա մեկնել էր Արևելք: Իրոք, այդ նույն 338 թ. հոկտեմբերի 11-ին նա գտնվում էր Անտիոքում, ինչպես այդ երևում է նրա՝ նույն ամսվաթվով արձակած հրովարտակից: Հուլիանոսը ընդգծում է այն արագությունը, որով Կոստանդիոսը, գործերը եղբայրների հետ ավարտին հասցնելուց հետ, ռազմերթով կարճ-անցավ Պայոնիայից մինչև Ասորիք տանող ճանապարհը: Հնարավոր է, որ նա Ասորիք դուրս եկավ 338 թ. հուլիսից մի փոքր առաջ, երբ եղբայրները դեռ չէին հասցրել հավաքվել:

Կոստանդիոսը Արևելքում մնում էր նաև հաջորդ տարիները, ինչպես այդ վկայում են Լավոդիկեում 339 թ. և Անտիոքում 341 թ. հրապարակած նրա հրամանագրերը[2]: Կոստանդիոսի՝ Արևելքում հայտնվելու պատճառը պարսիկների կողմից հայտարարված պատերազմն էր: Պարսիկների կողմից թշնամական գործողությունները սկսվել էին դեռևս Կոստանդիանոս Մեծի կենդանության ժամանակ: Եվտրոպիոսի խոսքերով և ըստ Զատկական ժամանակագրության նա ընդունեց թշնամու մարտահրավերը և արշավի դուրս գալով՝ վախճանվեց Նիկոմիդիայի ճանապարհին 337 թ. մայիսի 22-ին Պենտեկոստի օրը[3]:

Օգտվելով բարենպաստ պահից, երբ Կոնստանդիանոսի ժառանգորդ-

---

[1] Cod Just., VIII, 1. **Krüger**, p. 338. Այդ նույն հրատարակության անվանացանկում մեզ հետաքրքրող օրենքը կրում է Constantius անունը (փխ. Constantinus և Constans, p. 449): Հրատարակիչները նկատում են, որ ձեռագրերում հաճախ չփոթվում են երեք եղբայրների անունները, և նրանց կողմից հրատարակված օրենքները վերագրվում են եղբայրներից մեկ մեկին, մեկ մյուսին: Տվյալ դեպքում Constantinus ընթերցումը Constantius-ի փոխարեն նախադասելի է: Գոյություն ունի Կոստանդիանոսի հրովարտակը նույն բովանդակությամբ նույն Կատուլինոսի անունով X, XLVIII, 7 = p. 420:

[2] Cod. Just., VI. X, 9 և XI. LXVI, 1.

[3] **Eutrop.**, X, 8, bellum adversus Parthos moliens qui iam Mesopotamiam fatigabant XXXI anno imperii aetatis sexto et sexagesimo Nicomediae in villa publica obiit. **Chr. Pasch.**, p. 532, Πέρσαι πόλεμον ἐδήλωσαν πρὸς Ῥωμαίους καὶ ἐπιβὰς Κωνσταντῖνος λβ' ἐνιαυτῷ τῆς αὐτοῦ βασιλείας ὁρμήσας ἐπὶ τὴν ἀνατολὴν κατὰ ἐλθὼν ἕως Νικομηδείας ἐνδόξως καὶ εὐσεβῶς μεταλλάττει τὸν βίον ἐν προαστείῳ τῆς αὐτῆς πόλεως. Այստեղից է վերցնում և Թեոփանեսը (էջ 50)՝ 5828 տարվա տակ:

ները զբաղված էին Սիրմիայում, պարսից Շապուհ թագավորն անցավ Տիգրիսը և պաշարեց Մծբինը՝ Միջագետքի սիրտը: Պաշարումը հաջողություն չունեցավ, և պարսիկները ստիպված եղան վերացնել պաշարումը և հեռանալ:

Σαπώρις ὁ Περσῶν βασιλεὺς ἐπῆλθεν τῇ Μεσοποταμίᾳ πορθήσων τὴν Νίσιβιν, καὶ περικαθίσας αὐτὴν ἡμέρας ξγ′ καὶ μὴ κατισχύσας αὐτῆς ἀνεχώρησεν[1]:

Դա Մծբինի առաջին պաշարումն էր և վերագրվում է հավանաբար 338 թվականին: Պարսիկների հաղթանակների հետ կապված են նաև Հայաստանում տեղի ունեցած այն իրադարձությունները, որոնց մասին խոսում է Հուլիանոսը: Երկու հարևան պետությունների բախումների մեջ Հայաստանը կարևոր դեր է խաղացել. շատ դեպքերում նա էլ կովախնճոր է հանդիսացել:

Բնական է, որ սկսելով ռազմական գործողությունները կողմերից յուրաքանչյուրն աշխատում էր նախապես ծեռք բերել Հայաստանի համակրանքը և օգտագործել նրա զինվորական ուժերը: Հնարավոր է, որ հենց այդ ժամանակներին է վերաբերվում Բակուրի ապստամբությունը, որի մասին վկայում է հայ պատմիչը: Պետք է ենթադրել, որ Հայաստանում պարսկամետ կուսակցությունը Շապուհի զորքերի հայտնվելուն պես գերակայեց և հալածեց իր քաղաքական հակառակորդներին՝ կայսրական իշխանության համախոհներին, որոնք իրենց թագավորի հետ անցան հռոմեական տարածքը: Հուլիանոսի խոսքերը կասկածի տեղ չեն թողնում, որ Հայաստանում կուսակցական երկպառակությունները հարթվել են հենց Կոստանդիոսի կողմից այն բանից հետո, երբ նա 338 թ. Սիրմիայից Արևելք եկավ: Արագ կերպով կարգ ու կանոն վերականգնելը և թագավորին երկիր վերադարձնելը, որ Հուլիանոսը վերագրում է միայն Կոստանդիոսի շնորհքին, մասամբ բացատրվում է Մծբինի անհաջող պաշարումից հետո պարսկական զորքերի հեռանալով:

Հուլիանոսը չի նշում հայոց թագավորի անունը, բայց ըստ ժամանակի պայմանների, որքան դրանց մասին կարելի է դատել հայկական տվյալներով, [այդ անճնավորության] մեջ չի կարելի չճանաչել Տիրան թագավորին: Շատ տարօրինակ է, որ Փավստոսը ոչինչ չգիտի Տիրանի ու նրա կուսակիցների հռոմեական տարածք փախչելու մասին: Կարող է պատահել, փախուստի հետ կապված է Տիրանի՝ Ծոփք գավառի հարավային ծայրամասում՝ Բնաբեղ[2] ամրոցում գտնվելը (այժմ փոքրիկ գյուղ Մարդինից ոչ հեռու):

Կոստանդիոսը նրան վերականգնեց գահի վրա: Շուտով պարսիկները

---

[1] Chr. Pasch., p. 533. Այստեղից էլ՝ 5829 տարվա տակ վերցնում է Թեոփանեսը, էջ 52:

[2] **Փավստոս Բուզանդ**, Գ, 12:

ցորից ներխուժեցին երկիր և գերեցին նրան որպես կայսերական իշխանության կողմնակցի: Այսպիսով, գահի վրա նրա վերականգնումը վերաբերում է 338 թ., երբ կայսրը ժամանեց Սիրմիա: Իսկ գերեվարության տարին պարզվում է Սինգարայի կամ Ներսեհական ճակատամարտի հաշվետվությունից:

Այդ ճակատամարտի հանգամանքները մեզ հայտնի են նույն Կոստանդիոսի մասին նույն այդ հուլիանոսյան ճառից. «Ես հիանալի գիտեմ,- ասում է մեր ներբողագիրը,- որ բոլորը հակված են Սինգարայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը համարել որպես բարբարոսների (պարսիկների) հաղթանակ, իսկ ես կարծում եմ, որ այդ ճակատամարտը երկու բանակների համար էլ դժբախտություն եղավ, բայց քո քաջությունը, ինչպես և պետք էր սպասել, առավելություն ունեցավ նրանց բախտի նկատմամբ»:

Οὐκοῦν εὖ οἶδα, ὅτι πάντες ἂν μέγιστον φήσειαν πλεονέκτημα τῶν βαρβάρων τὸν πρὸ τῶν Σιγγάρων πόλεμον. ἐγὼ δὲ ἐκείνην τὴν μάχην ἴσα μέν ἐνεγκεῖν τοῖς στρατοπέδοις τὰ δυστυχήματα, δεῖξαι δὲ τὴν σὴν ἀρετὴν περιγενομένην τῆς ἐκείνων τύχης φαίην ἂν εἰκότως[1].

Հռոմեացիները չէին ցանկանում նախահարձակ լինել «որպեսզի առիթ չտան իրենց մեղադրելու խաղաղությունը խախտելու մեջ» (*οὐχὶ δὲ αὐτοὶ πολέμου μετὰ τὴν εἰρήνην ἄρχοντες*):

Վերջապես պարսից թագավորը հարձակման ազդանշան տվեց, բայց հռոմեացիների մարտական կարգը տեսնելով, վախեցավ և «մտածեց չտապ փախչել, հասկանալով, որ իրեն կարող է փրկել միայն այն, եթե հաջողվի կանխապես անցնել գետը, որ վաղնջական ժամանակներից սահման էր դարձել մեր և նրանց հողերի միջև: Այդպես դատելով՝ թագավորը սկզբում ազդանշան տվեց ետ քաշվել, իսկ հետո աստիճանաբար արագությունն ավելացնելով՝ վերջում իսկական փախուստի դիմեց՝ իր հետ ունենալով մի քանի հեծյալների, իսկ ամբողջ զորքի հրամանատարությունը հանձնելով որդուն ու բարեկամներից ամենահավատարիմին. *φεύγειν ᾤετο χρῆναι διὰ τάχους καὶ τοῦτο μόνον οἱ πρὸς σωτηρίαν ἀρκέσειν εἰ φθήσεται τὸν ποταμὸν διαβῆναι, ὅσπερ ἐστὶ τῆς χώρας ἐκείνης πρὸς τὴν ἡμετέραν ὅρος ἀρχαῖος, ταῦτα διανοηθεὶς ἑκετνος πρῶτον ἐπὶ πόδα σημαίνει τὴν ἀναχώρηιν, καὶ κατ' ὀλίγον προστιθεὶς τῷ τάχει τέλος ἤδη καρτερῶς ἔφευγεν, ἔχων ὀλίγους ἱππέας ἀμφ' αὐτόν, τὴν δύναμιν ἅπασαν τῷ παιδὶ καὶ τῷ πιστοτάτῳ τῶν φίλων ἐπιτρέψας ἄγειν*»[2].

---

[1] **Julianus**, Orat., I, p. 27.

[2] Անդ, էջ 28:

Նկատելով պարսիկների ճահճոջը՝ հռոմեական զորքերը նետվեցին նրանց վրա: «Ճակատամարտն այն հետևանքն ունեցավ, որ մեր կողմից ընկան երեքը կամ չորսը, իսկ պարթևներից (այսինքն՝ պարսիկներից), զոհվեց գերի վերցված թագաժառանգը՝ իր շքախմբից շատերի հետ: Բոլոր այդ իրադարձություններին պարսից թագավորն անգամ երազում չմասնակցեց և փախուստը չդադարեցրեց մինչև որ գետն իր ետևը չթողեց, իսկ դու, ընդհակառակը՝ կիսեցիր բոլոր դժվարություններն ու ծանրությունները [զորքիդ հետ]».

τοῦτο τέλος τῆς μάχης ἐκείνης γέγονε, τρεῖς μὲν ἢ τέτταρας ἀφελομένης τῶν παρ' ἡμῖν, Παρθυαίων δὲ τὸν ἐπί τῇ βασιλείᾳ τρεφόμενον ἀλόντα πρότερον καὶ τῶν ἀμφ' αὐτὸν παμπληθεῖς ξυνδιαφθείρασης. τούτοις δε ἅπασι δρωμένοις ὁ μὲν βαρβάρων ἡγεμὼν οὐδὲ ὄναρ παρῆν. οὐδὲ γὰρ ἐπέσχε τὴν φυγὴν πρὶν ἢ κατὰ νώτου τὸν ποταμόν ἐποιήσατο[1].

Սինգարայի ճակատամարտի մասին հիշատակում է նաև Եվտրոպիոսը: Նրա խոսքերով, պարսիկների դեմ Կոստանդիոսի ռազմական գործունեությունն առհասարակ անհաջող է եղել, բացի Սինգարայի ճակատամարտից՝ nullumque ei contra Saporem prosperum proelium fuit, nisi quod apud Singaram haud dubiam victoriam ferocia militum amisit[2]:

Նրա մասին գիտի նաև Ամմիանոսը: Հայտնի վաճառական Անտոնինոսը, փախչելով Շապուհի մոտ և ցանկանալով նրան գրգռել հռոմեացիների դեմ, ի միջի այլոց հիշեցրեց նաև քառասնական թվականների մասին, երբ ամբողջ շարք պարտություններից հետո, Հիլեայի և Սինգարայի մոտ տրվեց կատաղի ճակատամարտ՝

quadragesimi anni memoriam replicabat, post bellorum adsiduos casus et maxime apud Hileiam et Singaram, ubi accerima illa nocturna concertatione pugnatum est[3].

Արժեքավոր տվյալներ ենք գտնում Ռուփոս Փեստոսի մոտ: Հիլեյան դաշտում՝ Սինգարայի մոտակայքում, տեղի ունեցած ճակատամարտը նրա մոտ կոչվում է Նարսեհյան՝ կռվում զոհված պարսիկների հրամանատար Նարսեհի անունով՝

Narsensi autem bello, ubi Narseus occidit, superiores discssimus. Nocturna vero in agro Eleiensi prope Singaram pugna, ubi praesens Constantius adfuit[4].

---

[1] Julianus, Orat., I, p. 29-30.

[2] Eutrop., X, p. 10.

[3] Ammian. Marc., XVIII, 5.

[4] Rufi Fest., XXVII.

Փեստոսի Նարսեհը հենց պարսից գահաժառանգն է՝ Շապուհի որդին, այն նույնը, որին հայրը հանձնեց հրամանատարությանը մեզ հետաքրքրող ճակատամարտի ժամանակ: Ճակատամարտի ելքը հռոմեացիներն իրենց համար համարում էին համեմատաբար բարեհաջող՝ նկատի ունենալով Նարսեհի գերեվարությունն ու մահը[1]:

Նշված հանգամանքը, ինչպես մեզ է թվում, լուծում է առեղծվածը՝ ինչո՞ւ Փավստոսի վերը բերված պատմության մեջ 298 թ. իրադարձություններն իջեցված են Տիրանի թագավորության ժամանակները: Գալերիանոսի օրոք 298 թ. հռոմեացիների դեմ պատերազմ է մղել պարսից Նարսեհ թագավորը, որի որդին կնոջ և թագավորական տան մյուս անդամների հետ գերի ընկած կայսեր ճեռքը: Իսկ Սինգարայի ճակատամարտում Կոստանդիոսի կողմից գերի վերցվեց նույն այդ Նարսեհ անունը կրող թագաժառանգը: Փավստոսի մոտ պահպանված հայկական ավանդության մեջ պատմության տարբեր շրջաններին վերաբերող դեպքերը միաձուլված են, ընդ որում փորձաքար է ծառայել Նարսեհ անունը և երկու դեպքում էլ պարսկական գահի թագաժառանգների համանման բախտը:

Եթե մեր վերլուծությունը ճիշտ է, իսկ այն կասկածանքի ենթարկելու հիմք չկա, ապա մենք պետք է ընդունենք, որ Սինգարայի ճակատամարտի ժամանակ հայկական գահը զբաղեցնում էր Տիրանը: Այլապես դժվար կլինի բացատրել, թե ինչո՞ւ մեզ հետաքրքրող պատմությունը Փավստոսը համապատասխանեցնում է Տիրանի ժամանակներին: Ճշտելով նշված ճակատամարտի ժամանակը՝ կստանանք կարևոր հենակետ Արշակունյաց թագավորների ժամանակագրության վերաբերյալ:

Այդ ժամանակաշրջանի հռոմեա-պարսկական հարաբերությունների վերաբերյալ պատմագիրների հաղորդած տեղեկություններն առհասարակ հակասական են ու կցկտուր: Ո՛չ Թեոփանեսը, ո՛չ Զատկական ժամանակագրությունը, որոնց տվյալներից սովորաբար օգտվում են ուսումնասիրողները, չեն կարող վճռական համարվել: Հուլիանոսի ճառի մեջ կա որոշակի ցուցում Սինգարայի ճակատամարտի թվականի մասին և այդ ցուցումը պետք է ընդունվի որպես ճիշտ: Պատմելով Մծբինի մի պաշարման մասին, որը տեղի ունեցավ, իր իսկ ցուցումով, Մագնենտիոսի ապստամբության և Կոստաս կայսեր սպանության ժամանակ, այսինքն՝ 350 թվականին՝ Հուլիանոսը նկատում է. «Սինգարայի ճակատամարտը

---

[1] Հաջողությունը ավելի շուտ պարսիկների կողմն էր, և եթե նրանք այնուամենայնիվ ճահանջեցին, ապա այդ հանգամանքը մասամբ բացատրվում է, ինչպես կարծում է Ձաուլինոսը, Նարսեհի թագաժառանգի մահով. Շապուհը ցնցված էր որդու տխուր ճակատագրով, տե՛ս «The Seventh», p. 161:

տեղի ունեցավ Մծբինի պաշարումից մոտ վեց տարի առաջ»: Հետևաբար նշված ճակատամարտը պետք է թվագրել 345 թ.: Այդ թվականին Կոստանդիոսը՝ մասնակցելով մարտին, իրոք գտնվում էր Մծբինում, ինչպես երևում է նրա հրապարակած հրովարտակից՝ Imp. Constantius A. Nemesiano com. larg. a. 345. III, IV id. Mai Nizibi. Amantio et Albino conss[1]:

Կայսրի՝ Մծբինում գտնվելը կապված է պարսից պատերազմի, նախևառաջ Սինգարայի ճակատամարտի հետ: Սինգարան ընկած էր Մծբինից հարավ համանուն լեռներում, որ այժմ արաբական արտասանությամբ կոչվում է Սինջարա: Այդ լեռների հարավային լանջին էլ ընկած էր Կիպերտի կողմից ներկայիս Tepe Hil-ին[2] համապատասխանեցված Հիլեա վայրը: Հաջորդ 346 թ. Կոստանդիոսին մենք տեսնում ենք Մեդիոլանում, ինչպես երևում է դարձյալ նրա այդ նույն թվականի դեկտեմբերի արձակած հրամանագրից[3]: Այդ ժամանակ Սինգարայի մոտակայքում մարտական գործողությունները վերջացել էին, և պարսիկների դեմ պատերազմը առհասարակ վերջացել էր, եթե կայսրը մեկնել էր Մեդիոլան:

Փավստոսի պատմելով՝ հայոց Տիրան թագավորին պարսիկները գերի վերցրին մինչև այն ճակատամարտը, որտեղ զոհվեց Նարսեհը, և միայն խաղաղություն կնքելուց հետո նրա տեղը նշանակվեց Տիրանի Արշակ որդին: Նշանակում է, եթե ոչ Տիրանի անկումը, ապա համենայն դեպս Արշակի գահ բարձրանալը պետք է համարվի 345 թ.: Ավելի հավանական է, որ Տիրանը գահընկեց եղավ նախորդ 344 թ.: Եզրակացությունները, որոնց մենք հանգում ենք, հիմնավորվում են նաև հետագա մի քանի փաստերի վերլուծությամբ:

II

Շուտով պատերազմական գործողությունները վերսկսվեցին: Շապուհը զորքերի գլուխն անցած՝ պաշարեց Մծբինը: Այդ պաշարումը վերագրվում է 350 թվականին: Ժամանակը պարսիկների համար շատ բարենպաստ էր՝ նկատի ունենալով Հռոմեական կայսրությանը ալեկոծող քաղաքական խռովությունները: Կոստաս կայսեր անճնապահանորդ զորքի հրամանատար ոմն Մագնենտիոս Գաղիայում 350 թ. կայսր հռչակվեց, և այդ ինքնակոչի զոհը դարձավ Կոստասը: Մեկ ուրիշ ինքնակոչ գրավեց իշխանությունը Իլլիրիայում: Կայսրության համար այդ դժվար պահին

[1] Cod. Just., X. XIX, 3, p. 403.

[2] R. Kiepert, Kleinasien Nsebin.

[3] Cod. Just., X. IX, p. 30.

պարսիկները Մծբինի պաշարումով սկսեցին պատերազմական գործողությունները: Չնայած Շապուհի նախկինին գերազանցող արտակարգ պատրաստություններին, պարսիկներն այս անգամ էլ հաջողություն չունեցան: Պաշարվածները ետ մղեցին թշնամու գրոհները, և թշնամին 3-4 ամսվա ծանր ջանքերից հետո ստիպված եղավ թողնել պաշարումը և հեռանալ: Պաշարման հանգամանքները նկարագրված են Հուլիանոսի մոտ:

Սինգարայի հիշյալ ճակատամարտի նկարագրությունից հետո մեր ներքողերգուն պատմում է այն մասին, թե ինչպես Կոստանդիոսը «ելնելով բոլորի դեմ՝ ետ մղեց թե՛ բռնակալների ամբոխին, թե՛ բարբարոսների ուժերը. ճմեռն արդեն վերջանալու վրա էր, մոտավորապես վեց տարի անց այն ճակատամարտից, որի մասին խոսք եղավ վերը, երբ լուր ստացվեց, որ Գալատիան (այսինքն՝ Գալլիան) միացել է ինքնակոչին, ապստամբել քո եղբոր դեմ և սպանել նրան»՝

«*ἦν μὲν γὰρ ὁ χειμὼν ἐπ᾽ ἐξόδοις ἤδη ἔκτον που μάλιστα μετὰ τὸν πόλεμον ἔτος οὐ μικρῷ πρόσθεν ἐμνήσθην, ἦκε δὲ ἀγγέλων τις, ὡς Γαλατία μὲν συναφεστῶσα τῷ τυράννῳ ἀδελφῷ ἐβούλευσέ τε καὶ ἐπετέλεσε τὸν φόνον*»[1].

Նույն բանն էր կատարվում նաև Իլլիրիայում՝ մյուս բռնապետի կողմից:

«Իսկ պարսիկները,- շարունակում է Հուլիանոսը,- այն ժամանակից սպասելով բարենպաստ պահի, որպեսզի առաջին իսկ հարձակումով գրավեն Ասորիքը, մեր դեմ էին հանել տարբեր տարիքի, սեռի ու վիճակի մարդկանց: Շարժվեցին մեր դեմ տղամարդիկ ու երեխաներ, ծերունիներ, բազմաթիվ կանայք ու ստրուկներ՝ և ոչ միայն բանակին ծառայություններ մատուցողները, այլ մեծ մասամբ ավելորդ [մարդիկ]. պարսիկները մտածում էին այն մասին, թե ինչպես, գրավելով մեր քաղաքներն ու տիրելով մեր երկրին, մեզ մոտ գաղութներ կհաստատեն».

Πέρσαι δὲ ἐξ ἐκείνου τὸν καιρὸν τοῦτον παραφυλάξαντες, ὡς ἐξ ἐφόδου τὴν Συρίαν ληψόμενοι πᾶσαν ἐξαναστήσαντες ἡλικίαν καὶ φύσιν καὶ τύχην ἐφ᾽ ἡμᾶς ὥρμηντο, ἄνδρες, μειράκια, πρεσβῦ ται καὶ γυναικῶν πλῆθος καὶ θεραπόντων, οὐ μόνον τῶν πρὸς τὸν πόλεμον ὑπουργιων χάριν, ἐκ περιουσίας δὲ πλεῖστον ἑπόμενον, διενοοῦντο γὰρ ὡς καὶ τὰς πόλεις καθέξοντες καὶ τῆς χώρας ἤδη κρατήσαντες κληρούχους ἡμῖ ν ἐπάξουσι[2].

---

[1] Cod. Just., X. IX, p. 32.

[2] Անդ, էջ 33:

Պարսիկներին չհաջողվեց գրավել քաղաքը: Քաղաքի պաշարմանը Հուլիանոսը անդրադառնում է երկրորդ ճառում ևս, բայց ոչինչ նոր բան չի հաղորդում, բացի պաշարման զուտ տեխնիկական մասի վերաբերյալ աննշան մանրուքներից:

Հետաքրքրական են նրա եզրափակիչ խոսքերն այն մասին, որ այն ժամանակից սկսած Շապուհը «պահպանում է խաղաղություն և կարիք չի զգում ո՛չ երդումների, ո՛չ պայմանագրերի, այլ գերադասում է մնալ տանը, եթե հանկարծ կայսրը չցանկանա գնալ նրա վրա և վրեժխնդիր լինել հանդգնության ու անմտության համար»՝ *καὶ ἄγει πρὸς ἡμᾶς εἰρήνην ἐκ τούτου, καὶ οὔτε ὅρκων οὔτε συνθηκῶν ἐδέησεν, ἀγαπᾷ δὲ οἴκοι μένων, εἰ μὴ στρατεύοιτο βασιλεὺς ἐπ᾽ αὐτὸν καὶ δίκην ἀπαιτοίη τοῦ θράσους καὶ τῆς ἀπονοίας*[1].

350 թ. Մծբինի պաշարման մասին հայկական ավանդությունը պահպանել է հիշողություն և նրա մասնակից է դարս բերել Արշակ թագավորին որպես Շապուհի դաշնակից: Փավստոսի ասելով, Արշակը գահ բարձրանալով, կայսեր մոտ ուղարկեց պատվավոր դեսպանություն, «որպեսզի նորոգի հաշտության ու խաղաղության պայմանագիրը»[2]:

Արշակը հոր՝ Տիրանի հետ գտնվում էր պարսիկների գերության մեջ և հաշտությունից հետո, ինչպես կարծում է Փավստոսը, իսկ մեր կարծիքով Սինգարայի անհաջողությունից հետո, Շապուհը հավանաբար կայսեր պնդմամբ համաձայնեց Հայաստանում վերականգնել կարգ ու կանոն և Տիրանի փոխարեն գահի վրա նստեցրեց նրա Արշակ որդուն[3]: Արշակի դեսպանությունը, ըստ երևույթին, առաքելություն ուներ կայսերական իշխանությանը հավաստել, որ թեև հայոց թագավորը հանդիսանում է Շապուհի դրածոն, բայց նա կցանկանար համաձայն 298 թ. պայմանագրի՝ երկու տերությունների հետ էլ խաղաղ ապրել:

Ցավոք, Փավստոսի մոտ Արշակի պատմությունը հյուսված է Ներսես Մեծ կաթողիկոսի առասպելական բնույթի վարքին: Այժմ մեր խնդիրը չէ Ներսեսի վարքի քննությունը, նկատենք միայն, որ այն զրկված չէ գրավոր աղբյուրների հիմքերից. հավանաբար այն գոյություն է ունեցել որպես առանձին պատմություն, բայց հետո մտցվել է Արշակի պատմության մեջ: Դրանով են բացատրվում պատմական իրադրությունն աղավաղող ժամանակավրեպ մի քանի տվյալներ: Ըստ Փավստոսի, Արշակի դես-

---

[1] Julianus, Orat., II, p. 85.

[2] Փավստոս Բուզանդ, Դ, 5:

[3] Անդ, Դ, 1:

պանութեան կազմի մեջ էր մտնում նաև Ներսեսը, նա մայրաքաղաքում ելույթ ունեցավ արիոսականութեան և արիոսամետ Վաղես կայսեր դեմ, որի համար էլ իր վրա բևեռեց նրա զայրույթը՝ բանտարկվեց և հետո աքսորվեց: Փավստոսը հավատացնում է, որ Ներսեսի բանտարկութիւնը պատճառ դարձավ բարեկամական հարաբերութիւնների խզման: Եվ Արշակը, կայսեր վարմունքից դժգոհ, արշավանքներ կազմակերպեց կայսրութեան սահմաններում և վեց տարի շարունակ ամայացնում էր Գամիրքի երկրից (Կապպադովկիա) մինչև Անկյուրիա քաղաքը[1]:

Ներսեսի մասնակցութիւնը արիոսական վիճաբանութիւններին և նրա աքսորը, Հայ եկեղեցու առաջնորդին ուղղափառութեան ջատագով ներկայացնելու միտում ունեցող առասպել է: Ներսեսի արկածները չէին կարող տեղի ունենալ Վաղեսի օրոք, որովհետև այն ժամանակ հայերը նրա դաշնակիցներն էին և կռվում էին պարսիկների դեմ: Այդ առասպելը, եթե միայն այն պատմական ինչ-որ հիմք ուներ, հյուսվել է հավանաբար 346 թ. Սարդիկայի վեհաժողովում արիոսական հարցի շուրջը ծագած վեճերի ժամանակ, երբ արիոսական բարձրաստիճան հոգևորականներից մի քանիսն աքսորվել էին Հայաստան:

Ինչպես էլ որ վերաբերելու լինենք Փավստոսի պատմածին, անտարակույս ճիշտ է, որ Արշակին չհաջողվեց չեզոքութիւն պահպանել և նա գեթ ժամանակավորապես հակվեց դեպի Շապուհը: Փավստոսի խոսքերի իմաստով Արշակը իր քաղաքականութեան մեջ տատանվում էր և չէր կարողանում դիրքորոշվել այս կամ այն կողմը: Շահագրգռված տերութիւնների հորդորող ջանքերը կարող էին նրան թեքել համապատասխան կողմ: Նա սպասում էր, որ նման քայլ կատարվեր կայսեր կողմից, և Մծբինը պարսիկների կողմից պաշարվելուց առաջ Արշակը սպասում էր, թե «նրանցից որը իրեն օգնութեան կկանչի, - ասում է Փավստոսը: - Ինքը՝ Արշակը, հակված էր դեպի հռոմեական կայսրը և հաճույքով նրան օգնութեան կգնար, բայց հույները նրան չխնդրեցին և ուշադրութեան ու պատիվների չարժանացրին»:

Բոլորովին հակառակ էր գործում Շապուհը. նույն պատմիչի հավաստումներով, նա Արշակի մոտ ուղարկեց մարդկանց և ամեն կերպ համոզեց մասնակցելու հույների դեմ արշավանքին: Այն ժամանակ Արշակը զորք հավաքեց և Աղձնիքի վրայով ներխուժեց Արվաստան՝ Միջագետքի հյուսիսը, ճամբար դրեց Մծբինի առջև: Փավստոսի չափազանցված պատկերացմամբ հայերը չէին ցանկացել սպասել մինչև պարսկական ուժերի գալը: Նրանք միայնակ կռվի բռնվեցին և հաղթանակ տարան:

---

[1] **Փավստոս Բուզանդ**, Դ, 11:

Այդպիսի սխրանքի համար որպես երախտագիտություն պարսից Շապուհ թագավորը Արշակին հրավիրեց իր մոտ մայրաքաղաք և նրա հետ դաշինք կնքեց «անխախտ բարեկամություն հավիտյանս հավիտենից»: Նա իր դստերն առաջարկեց Արշակին կնության և նրան ընծայեց մի մեծ գավառ այնպիսի վայրում, որպեսզի Արշակը Հայաստանից Տիգրոն գնալու ժամանակ ճանապարհին ամբողջ ժամանակ գտնվեր սեփական երկրում[1]:

Փավստոսի պատմության մեջ քաքնված է պատմական ճշմարտության որոշ բաժին: Ամմիանոսի մոտ կան, ինչպես կտեսնենք ստորև, Փավստոսի խոսքերը հաստատող տվյալներ: Ամմիանոսը վկայում է, որ Շապուհն ամեն միջոցներով աշխատում էր ձեռք բերել Արշակի բարեկամությունը՝ դիմելով մե՛րթ խարդավանքի ու խաբեության, մե՛րթ էլ խոստումների: Մծբինի ճակատամարտը, որում մասնակցում էր Արշակը, պետք է հասկանալ Մծբինի 350 թ. պաշարումը: Հնարավոր է, որ Շապուհի խոստումները վերաբերում են այն տարածքային զիջումներին, որոնց մասին խոսում է Փավստոսը հեքիաթի եղանակով:

Մի ուրիշ տեղ մեր պատմիչն ավելի որոշակի է մատնանշում Շապուհի խոստացած տարածքը: Խոսքը Ատրպատականի[2] մասին է, որը 298 թ. պայմանագրով պատկանում էր հայոց թագավորին, բայց հետագայում, պատերազմի վերսկսման ժամանակից, այսինքն՝ 337 թ., ըստ երևույթին, պարսիկները ետ էին խլել: Այսպես թե այնպես, Շապուհին հաջողվեց Արշակին հեռացնել կայսեր ազդեցությունից:

Արշակի դաշինքը Շապուհի հետ երկար չշարունակվեց: Նրանց միջև եղած կապերի խզման մասին խոսում է Փավստոսը, ընդ որում գժտության պատճառը, սովորության համաձայն, որոնում է շահագրգիռ հայ ավատատերերի բանսարկությունների ու մրցակցության մեջ:

Բայց Արշակի քաղաքականության մեջ շրջադարձային կետ ծառայեց հավանաբար հատուկ առաքելությամբ քվեստոր Տավրոսի Հայաստան ժամանելը: Ամմիանոսը հաղորդում է, որ Կոստանդիոսի 17-րդ և Գալլոս կեսարի 4-րդ տարում, այսինքն՝ 354 թ. քվեստոր Տավրոսը ուղարկվեց Հայաստան՝ eoque tempore Taurus questor ad Armeniam missus[3]: Ցավոք պատմագիրը քվեստորի գալու նպատակը լռության է մատնում, բայց հետագա իրադարձություններից դժվար չէ գուշակել, որ այն կայանում էր Հայաստանի և կայսրության միջև բարեկամական հարաբերությունները վերականգնելու մեջ: Բանն այն է, որ 350 թ. Մծբինի անհաջող պաշարումից

---

[1] Փավստոս Բուզանդ, Դ, 20:

[2] Անդ, Դ, 16:

[3] Ammian. Marc., XVI, 11.

հետո էլ պատերազմը չդադարեց: Հանգամանքները դասավորվեցին այնպես, որ երկու կողմերին էլ ձեռնտու էր ժամանակավորապես զենքը ցած դնել: Կոստանդիոսին շեղել էր 353 թ. զռհված Մագնենտիոսի ապստամբությունը և ալեմանների դեմ պատերազմը, իսկ Շապուհն իր ուժերը փոխադրեց արևելք՝ կռվելու կայսրության ծայրամասում ռազմատենչ ժողովուրդների դեմ, որոնք մերթ թշնամանում էին պարսիկներին, մերթ դաշնակցելով նրանց հետ՝ հարձակվում էին հռոմեացիների վրա[1]:

Շուտով նորից սկսվեց պարսիկների թշնամական հարձակումը Միջագետքի վրա: Պարսից առաջնորդ Նահոդարը սպառնալից դիրք գրավեց և հարմար պահի էր սպասում, որպեսզի հարվածի առավել խոցելի վայրը՝ Եդեսիայի ուղղությամբ[2]: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ, խոսելով ասպատակությունների և այդ նույն պարսկական առաջնորդների 355 թ. ավերածությունների մասին, Ամմիանոսը ավելացնում է. «nunc et Armeniam», այսինքն՝ սկզբում 353 թ. նրանք ավերել էին Միջագետքը (incursare Mesopotamiam), իսկ 355 թ. իրենց արշավանքներն ուղղեցին նաև դեպի Հայաստան՝

Persici duces vicini fluminibus, rege in ultimis terrarum suarum terminis occupato, per praedatorios globos nostra vexabant, nunc Armeniam, aliquotiens Mesopotamiam confidentius incursantes[3]

«Գետափի երկայնքով կանգնած պարսկական առաջնորդները առանձին ջոկատներով անհանգստացնում էին մեզ այն ժամանակ, երբ իրենց թագավորը պատերազմով էր զբաղված սեփական երկրի ծայրամասերում, իսկ այժմ նրանք հանդգնում են ասպատակել Հայաստանը, մի քանի անգամ նաև Միջագետքը»: Ակնհայտ է, որ կարճ ժամանակահատվածում տեղի են ունեցել այնպիսի իրադարձություններ, որոնք ստիպել են պարսիկներին Հայաստանն էլ ներքաշել պատերազմական գործողությունների ասպարեզ: Գաղտնիքը գտնվում է Արշակի՝ Շապուհի դաշինքից հեռանալու մեջ, որը պետք է համարել քվեստոր Տավրոսի դիվանագիտական հաջողության արդյունքը:

Փավստոսի մոտ պահպանվել է երկու տարեթիվ, որոնք անսպասելիորեն հաստատում են ժամանակագրության վերաբերյալ մեր եզրակացությու-

---

[1] **Ammian. Marc.**, XVI, 3.

[2] Nohodares quidam nomine e numero optimatum incursare Mesopotamiam quotiens copia dederit ordinatus, ibid, XIV, 3.

[3] **Ammian. Marc.**, XV, 13.

ները: Նրա խոսքերով Արշակի և Շապուհի միջև հարաբերությունները խզելուց անցել էին ութ խաղաղ տարիներ[1], որովհետև պարսից թագավորը զբաղված էր կայսեր դեմ պատերազմով և չէր անհանգստացնում Արշակին, բայց հենց որ կայսեր դեմ պատերազմը դադարեց, թշնամությունը վերսկսվեց: Ինչպես հայտնի է, երկու կռվող տերությունների միջև խաղաղություն կնքվեց 363 թ. ամռանը: Եթե Արշակի վեճը Շապուհի հետ տեղի է ունեցել խաղաղությունից 8 տարի առաջ, ապա նշանակում է, որ այն համընկնում է 354 թ., տարեթիվ, որ մենք արտածում ենք՝ ելնելով վերը շարադրված դատողություններից:

Այնուհետև ինքը՝ Փավստոսը հաղորդում է, որ Արշակի թշնամությունը կայսեր հետ շարունակվեց 6 տարի, որի ընթացքում նա ամայացնում էր կայսերական հողերը մինչև Անկյուրա[2]:

Եթե կայսեր հետ հաշտությունը տեղի ունեցավ 354 թ., ապա այդ հաշվով խզումը ընկնում է 348 թ.: Ինչպես մենք տեսանք, Արշակը գահ բարձրացավ 346 թ.: Նույն Փավստոսի ասելով, Արշակի առաջին տարիները ևվիրված էին երկիրը կարգի բերելուն, իսկ հետո արդեն դեսպանություն ուղարկվեց կայսեր մոտ, որն էլ հանգեցրեց հարաբերությունների ցավալի խզմանը: Հետաքրքրական է, որ մեզ արդեն հայտնի Մծբինի պաշարումից բացի, Հերոնիմոսը հիշատակում է պարսիկների դեմ 348 թ. կայսերական զորքերի ևս մի ճակատամարտ: Ճակատամարտը տեղի է ունեցել Սինգարայի մոտ, բայց դա այն ճակատամարտը չէ, որը Հուլիանոսի խոսքերի հիման վրա մենք վերագրում ենք 345 թ.: Ռուֆոս Փեստոսը նույնպես վկայում է, որ Սինգարայի մոտ տեղի ունեցավ երկու ճակատամարտ, նրա հաշիվներով Կոստանդիոսի օրոք կայսերական զորքերը դիմագրավեցին պարսիկների 9 ճակատամարտի, բացի անշուշտ սահմանային ընդհարումներից, որոնցից 7-ը վարում էին նրա զորավարները, իսկ երկուսը տեղի ունեցան Սինգարայի մոտ նրա անձնական հրամանատարությամբ՝

«novies decertatum est; per duces suos septies, ipse praesens bis adfuit veris et gravibus pugnis. Nimirum Singarenae praesente Constantio et iterum Singarenae Constantiensi quoque»[1].

Շատ հավանական է, որ Շապուհի դաշնակցությամբ կայսեր դեմ Արշակն առաջին անգամ դուրս է եկել 348 թ.: Այդպիսով, Փավստոսի ցուցումը հաստատում է մեր եզրակացությունները, որոնց մենք հանգել ենք այլ ճանապարհներով:

---

[1] Փավստոս Բուզանդ, Դ, 21:

[2] Անդ, Դ, 11:

[3] Rufi Fest., XXVII.

Փավստոսին լավ հայտնի է երկու պետությունների միջև 363 թ. կնքված հաշտության պայմանագիրը: Նա մանրամասն պատմում է դրան հաջորդած Արշակի թշնամության և պարսից թագավորի դեմ պատերազմների մասին, բայց ոչինչ չգիտե խաղաղությանը նախորդած իրադարձությունների մասին, չնայած այն բանին, որ դրանց որպես կայսեր դաշնակից գործարար մասնակցություն է ունեցել Արշակը: Հայ պատմիչը հավաստիացնում է, որ խաղաղության դաշինք կնքելուց 8 տարի առաջ Շապուհը թաքցնում էր իր թշնամանքը Արշակի նկատմամբ և նկատի ունենալով կայսեր հետ պատերազմը՝ աշխատում էր սիրալիր վերաբերմունքով Արշակին պահել իր կողմը: Իրականում Արշակն այդ տարիներին գտնվում էր Շապուհի դեմ գործող ճամբարում: Այդ ժամանակների իրադարձությունները նկարագրված են դեպքերի ժամանակակից և նույնիսկ պատերազմական գործողություններին մասնակցած Ամմիանոսի կողմից:

Չնայած այն բանին, որ Շապուհն ինքը զբաղված էր իր կայսրության առանձին ծայրամասերում ապստամբությունները ճնշելով, նրա զորաջոկատները չէին դադարում անհանգստացնել թշնամուն Միջագետքում[1]: Պրետորիանների պրեֆեկտ Մուսոնիանոսը, իմանալով այն մասին, որ պարսից թագավորը պատերազմ է մղում անհնազանդ ցեղերի դեմ և մեծ կորուստներ է կրում, ցանկացավ օգտագործել պահը պարսիկների հետ խաղաղություն կնքելու համար: Այդ նպատակով նա գաղտնի բանակցությունների մեջ մտավ պարսից բանակի հրամանատար Դենշապուհի հետ: Դենշապուհը քարեհաճությամբ վերաբերվեց Մուսոնիանոսի քայլին և այդ բոլորի մասին զեկուցեց այն ժամանակ Խիոնիտների երկրում գտնվող Շապուհին, որը կռվում էր այդ երկրի ցեղերի դեմ: Նամակը Շապուհին է հասել ուշ՝ 358 թ. (Դակիանոսի և Ցերեալիոսի հյուպատոսության շրջանում)[2]: Նա արդեն վերջացրել էր պատերազմական գործողությունները և հաշտություն կնքելով՝ ուզում էր տուն վերադառնալ, երբ ստացավ Դենշապուհի նամակը: Շապուհը խաղաղությանը դեմ չէր, բայց նկատի ունենալով, որ հակառակորդի գործերն էլ այնքան լավ չեն, եթե այն խաղաղության է ձգտում՝ Շապուհը ցանկանում էր օգտագործել հռոմեացիների առաջարկը և դադարեցնել պատերազմն ամենաճեռնտու պայմաններով:

Նա ոմն Նարսեհին ուղարկեց Կոստանդիոսի մոտ նվերներով և չափազանց ամբարտավան եղանակով գրված նամակով հանդերձ.

«Ես, արքայից արքա Շապուհս՝ աստղերին հաղորդակից, արևի ու

---

[1] **Ammian, Marc.**, XVI, 9.

[2] Անդ, XVII, 5, 7:

լուսնի եղբայր, Կոստանդիոս Օգոստոսիդ հղում եմ ջերմ ողջույն: Ես ուրախ եմ և ինձ համելի է տեսնել, որ դու վերջապես ցանկալի ուղի մտար և ենթարկվեցիր արդարության մաքուր ձայնին իր իսկ կյանքից սովորելով, թե երբեմն ինչպիսի դժբախտություններ է ծնում համառ կիրքը ուրիշի սեփականության նկատմամբ: Եվ ահա, քանի որ արդարության խոսքը պետք է լինի անբռնազբոսիկ և ազատ, իսկ բարձր դիրք ունեցող մարդկանց վայել է ասել այն, ինչ նրանք զգում են, ապա իմ առաջարկությունը ես ձևակերպում եմ համառոտ խոսքերով, հիշեցնելով, որ այն բոլորը, ինչ ես պատրաստվում եմ շարադրել, հաճախ շարադրվել է իմ կողմից: Որ մինչև Ստրիմոն գետը և մակեդոնական սահմաններին տիրել են իմ նախնիները, այդ մասին վկայում են նաև ձեր հուշարձանները: Հենց այդ էլ պետք է ես պահանջեմ, ես,- քող դա մեծամտություն չթվա, ինչ որ ես ասում եմ,- մեր նախնի թագավորներին մի շարք նշանակալից քաջագործություններով և շքեղությամբ գերազանցողս: Բայց ինձ համար թանկ է ամենուրեք ուղղամտությունը, որին սովոր եմ փոքր հասակից, ես այնպիսի բան չեմ արել, որի համար պետք լիներ երբևէ զղջալ: Այդ պատճառով ես պետք է **ետ ստանամ իմ պապի օրոք խարեությամբ խլված Հայաստանը Միջագետքի հետ միասին**: Մեզ մոտ երբեք ընդունված չի եղել այն, ինչ դուք պնդում եք հրճվելով, թե պետք է հավանության արժանանա պատերազմական յուրաքանչյուր ելք՝ անկախ այն բանից, թե փառքո՞վ է ձեռք բերվել, թե՞ խարդախություններով: Վերջապես եթե ցանկանաս իմ խորհրդով ճիշտ վարվել, գցիր մշտապես դժբախտություն ու արյունահեղություն բերող աննշան մասը, որպեսզի անվարան ձեռք բերես մյուս մասը, դատիր խելամտորեն. չէ՞ որ հմուտ բժիշկներն էլ երբեմն կտրում են ու այրում, կամ վիրահատում են մարմնի մասերը: Այդ նույնն էլ անում են նաև գազանները, որոնք, հենց որ նկատում են, թե հատկապես ինչի համար են իրենց որսում, հոժարակամ այն թողնում են, որպեսզի հնարավորություն ունենան հետագայում անվտանգության մեջ ապրել: Եվ այն էլ, իհարկե, ես հաստատում եմ, որ եթե իմ դեսպանությունը վերադառնա ձեռնունայն, ապա ծմեռային հանգստի վերջում ամենայն ուժերով զինված և որքան հնարավոր է շտապ հարձակման կանցնեմ՝ բարեհաջող ելքի հույսը դնելով իմ ճակատագրի և առաջադրված՝ պայմանների արդարության վրա»[1]:

---

[1] Ամմիանոսից կատարված մեր հատվածական թարգմանությունները արվել են դեռևս 1901-1902 թվականներին, որից հետո լույս տեսավ պրոֆ. Կուլակովսկու ամբողջական հիանալի թարգմանությունը, ըստ որի էլ ես ուղղել եմ իմ թարգմանությունը՝ հղվածի տպագրության ընթացքում (3):

«Rex regum Sapor, particeps siderum, frater Solis et Lunae, Constantio Caesari fratri meo salutem plurimam dico. Gaudeo tandemque mihi placet ad optimam viam te revertisse et incorruptum aequitatis agnovisse suffragium rebus ipsis expertum, pertinax alieni cupiditas quas aliquotiens ediderit strages. Quia igitur veritatis oratio soluta esse debet et libera et celsiores fortunas idem loqui decet atque sentire propositum meum in pauca conferam, reminiscens haec quae dicturus sum me saepius replicasse. Ad usque Strymona flumen et Macedonicos fines tenuisse maiores meos, antiquitates quoque vestrae testantur: haec me convenit flagitare - ne sit adrogans, quod affirmo - splendore virtutumque insignium serie vetustis regibus antistantem. Sed ubique mihi cordi est recta ratio, cui coalitus ad adulescentia prima nihil umquam paenitendum admisi. Ideoque Armeniam recuperare cum Mesopotamia debeo, avo meo composita fraude praereptam. Illud apud nos numquam in acceptum feretur, quod adseritis vos exultantes nullo discrimine virtutis ac doli prosperos omnes laudari bellorum eventus. Postremo si morem gerere suadenti volueris recte, contemne partem exiguam semper luctificam et cruentam, ut cetera regas securus, prudenter reputans medelarum quoque artifices urere non numquam et secare et partes corporum amputare, ut reliquis uti liceat integris; hocque bestias factitare: quae cum arvertant cur maximo opere capiantur, illud propria sponte amittunt ut vivere deinde possint inpavidae. Id sane pronuntio quod, si haec mea legatio redierit inrita, post tempus hiemalis quietis exemptum, viribus totis accinctus, fortuna condicionumque aequitate spem successus secundi fundante venire, quoad ratio siverit, festinabo».

Շապուհի նամակին Կոստանդիոս կայսրը պատասխանեց հետևյալ տողերով. «Ցամաքում և ծովում հաղթանակած Կոստանդիոսը, հավիտյանս Օգոստոս, հղում եմ իմ թագավոր եղբայր Շապուհին ջերմ ողջույն: Եթե ցանկանում ես, որպես նախկին բարեկամ, ես շնորհավորում եմ քեզ քո բարեկեցության համար, բայց քո մշտապես համառորեն ու առատորեն հորդացող ագահությունը ես խստորեն դատապարտում եմ: Դու պահանջում ես Միջագետքը որպես քո սեփականություն, և բացի այդ նաև Հայաստանը, և խորհուրդ ես տալիս առողջ մարմնից պոկել մի քանի մասեր, որպեսզի նրա առողջությունը հետագայում ավելի ամրապնդվի. այդ բոլորը պետք է ավելի շուտ մերժել, քան ինչ-որ համաձայնությամբ խրախուսել: Դե ուրեմն լսիր, հետին մտքերով չսքողված, այլ պարզ ու դատարկ խոսքերով չվախեցնող ճշմարտությունը: Պրետորիաների իմ պրեֆեկտը, կարծելով, թե սկսում է ընդհանուրի օգտին տանող գործ, առանց իմ գիտության և ինչ-որ անկարևոր մարդկանց միջոցով խաղաղության վերաբերյալ բանակցել է քո զորավարի հետ: Մենք չենք մերժում և չենք վանում

խաղաղությունը, միայն թե այն կնքվի արդարաբար ու պատվավոր և չխլվի մեր պատվից և մեծությունից: Այն ժամանակ, երբ իմ քաջագործությունների [համբավի համար] բացվել են ականջները, որոնք մեր նկատմամբ նախանձից շատ անգամ փակ են եղել, երբ ինքնակոչների ոչնչացումով՝ ամբողջ հռոմեական աշխարհը ենթարկվում է մեզ, անհեթեթություն է և միաժամանակ անվայել զիջել այն, ինչը մենք երկար, դեռևս արևելյան կիրճերի մեջ փակված պահպանել ենք անճեռնմխելիությամբ: Դե վերջ տվեք խնդրում եմ նաև սպառնալիքներին, որ սովորության համաձայն թափվում են մեր վրա, որովհետև չի կարելի կասկածել, որ ոչ թե վախից, այլ համեստությունից ելնելով՝ մենք երբեմն ավելի շատ ընդունել ենք պատերազմի իրավերը, քան մենք ենք այն սկսել: Իսկ երբ որ մեզ մարտահրավեր են նետում, ապա մենք պաշտպանում ենք մեր ունեցվածքը ամեն ինչին պատրաստ ամուր ոգով՝ փորձով ու սովորություններով համոզված լինելով, որ ճակատամարտերում հազվադեպ հռոմեական գործին հաջողություն չլինի, իսկ պատերազմի հետևանքները երբեք նրանց համար վնասով չեն ավարտվել»[1]:

«Victor terra marique Constantius semper Augustus fratri meo Sapori regi salutem plurimam dico:

Sospitati quidem tuae gratulor ut futurus, si velis, amicus, cupiditatem vero semper indeflexam fusius que vagantem vehementer insimulo. Mesopotamiam poscis ut tuam perindeque Armeniam et suades integro corpori adimeri membra quaedam, ut salus ejus deinceps locetur in solido, quod infringendum est potius quam ulla consensione firmandum. accipe igitur veritatem non obtectam praestigiis sed perspicuam nullisque minis inanibus perterrendam. Praefectus praetorio meus opinatus adgredi negotium publicae utilitati conducens eum duce tuo per quosdam ignobiles, me inconsulto, sermones conseruit super pace. Non refutamus hanc nec repellimus: adsit modo cum decore et honestate nihil pudori nostro praereptura vel majestati. Est enim absonum et insipiens cum gestarum rerum ordine placatae sint aurae invidiae, quae nobis multipliciter inluserunt, cum deletis tyrannis totus orbis Romanus nobis obtemperat, ea prodere, quae contrusi in orientales angustias diu servavimus inbibita. Cessent autem quaeso formidines quae nobis intentantur ex more, cum ambigi nequeat non merita nos sed modestia pugnas interdum excepisse potius quam intulisse et nostra, quotiens lacessimur, fortissimo benevolentiae spiritu defensare, id experiendo legendoque scientes in proeliis quibusdam raro rem titubasse Romanam, in summa vero bellorum numquam ad deteriora prolapsam».

[1] Ammian. Marc., XVII, 5, 7.

Իր պատասխան ճամակը, Շապուհին ընծայված նվերներով հանդերձ, Կոստանդիոսն ուղարկեց հատուկ դեսպանության միջոցով, որը կազմված էր կոմիտ Պրոսպերիուսից, տրիբուն և նոտար Սպենտատոսից, համոզող խոսքի վարպետ փիլիսոփա Եվստաթիոսից: Դեսպանությունը հրահանգ է ստացել բոլոր միջոցները գործադրելով, ուշացնել Շապուհի արշավանքը, որպեսզի այդ ժամանակամիջոցում կարողանան ամրացնել հյուսիսային սահմանները:

Դեսպանները ներկայացան Շապուհին Տիզբոնում. մատուցեցին նվերներ և «խնդրեցին խաղաղություն՝ գոյություն ունեցող իրավիճակը անփոփոխ պահպանելու պայմանով: Հիշելով կայսեր հանճարեղությունը՝ դեսպանները բնավ չհրաժարվեցին ո՛չ հռոմեական շահերից, ո՛չ էլ արժանապատվությունից և հաստատ մնացին իրենց տեսակետին, թե խաղաղության պայմանագիրը պետք է կնքվի այնպես, որ ոչ մի ձևով չբարձրացվի Հայաստանի ու Միջագետքի դրության փոփոխության հարցը: Այնտեղ երկար սպասելով, երբ նրանք վերջապես հասկացան, որ ինքնասածի թագավորը համառում է [ցանկանալով] ընդունել խաղաղությունը ոչ այլ կերպ, քան այդ երկրների նկատմամբ իր իշխանությունը հաստատելով, ետ վերադարձան՝ չկատարելով իրենց տրված հանձնարարությունը»՝ poscebantque rebus integris pacem et mandatorum memores nusquam ab utilitate Romanae rei maiestateque discedebant, amicitiae foedus sub hac lege firmari debere adseverantes, ne super turbando Armeniae vel Mesopotamiae statu quidquam noveretur. Diu igitur ibi morati, cum obstinatissimum regem, nisi harum regionum dominio sibi adiucato, obdurescentem ad suscipiendam cernerent pacem, negotio redierunt infecto[1].

Դրանից հետո մի անգամ էլ Կոստանդիոսը փորձեց այլ դեսպանների միջոցով պարսիկների հետ խաղաղություն հաստատել, բայց դարձյալ անհաջող: Շապուհը չէր ուզում հռոմեական իշխանության հետ հաշտվել Հայաստանի ու Միջագետքի տարածքում և վճռեց տիրանալ նրանց բացարձակ զենքի ուժով: «Համակված գերմարդկային կրքով՝ ընդարձակել իր թագավորությունը, - ասում է պատմագիրը, - նա սկսեց զենք կռել, զորք ու պարեն հավաքել. նա աղերսանքով դիմեց ստորգետնյա ոգիներին, հարցմունք արեց բոլոր մոգերին ապագայի վերաբերյալ», որպեսզի գարնան սկզբից թշնամական գործողություններ սկսի: «Consilia tartareis manibus miscens et praestigiatores omnes consulens de futuris»[2]:

Հպանցիկ նկատենք, որ այս խոսքերը ըստ ամենայնի հաստատում են Փավստոսի՝ Շապուհին տված նկարագիրը:

---

[1] Ammian. Marc., XVII, 14.

[2] Անդ, XVIII, 4, 1.

Շապուհի ռազմատենչ բռնկման զորավիգ էր ոմն Անտոնիոս՝ հարուստ վաճառական, որ նախկինում պաշտոնավարել էր Միջագետքի դուքսի գրասենյակի հաշվապահական բաժնում և մի քանի մարդկանց մեղքով պարտքերի տակ ընկնելով՝ ստիպված փախել էր պարսիկների մոտ՝ հնարավորություն չունենալով հաշիվները փակել գանձարանի հետ, ուր հանձնված էր նրա պարտամուրհակները: Նա մանրամասն տեղեկություններ հավաքեց հռոմեացիների ռազմական ուժերի և պարենի պաշարների մասին և այդ բոլորը հայտնեց պարսից հրամանատար Դենշապուհին, որպեսզի դրանով վրեժխնդիր լինի իր հայրենակիցներից իրեն անտեղի հասցրած վիրավորանքի համար: Անտոնիոսը իր ընտանիքով անցավ Պարսկաստան, ներկայացավ թագավորին նրա ձմեռային նստավայրում: Շապուհը նրան ընդունեց շատ սիրալիր և արժանացրեց պատվավոր խույրի, հանգամանք, որը նրան իրավունք էր տալիս մասնակցելու խորհրդակցություններին ու արտահայտելու իր կարծիքը»՝ et apicis nobilitatis auctoritateque honore participantur mensae regales et meritorum apud Persas ad suadendum ferendasque sententias in contionibus ora panduntur[1].

Քինախնդիր Անտոնիոսն ամեն կերպ գրգռում էր Շապուհին իր հայրենիքի դեմ: Լինելով կրթված և տիրապետելով պերճախոսությանը՝ նա կարողանում էր խոսել և տպավորություն գործել: Թագավորական սեղանի շուրջը, «որտեղ նրանց մոտ, ինչպես հին հույների մոտ, քննարկվում էին ռազմական և այլ կարևոր հարցեր», թշնամու կողմն անցած դասալիքը մշտապես զգոն դրդում էր թագավորին զենք վերցնել՝ վստահ լինելով իր ճակատագրի վրա, իսկ ինքն իր կողմից խոստանում էր ամեն ինչում զորավիգ լինել՝ inter epulas sobrius perfuga, ubi de apparatu bellorum et seriis rebus apud eos Graecorum more veterum consultatur[2].

Կայսրությունը պատրաստ չէր պատերազմի. նրա դրությունը այնքան էլ լավ չէր հատկապես Արևելքում: Երկրամասի կառավարիչ, պրայտորիայի պրեֆեկտ Մուսոնիանոսը այլի էր ընկնում իր անհոգությամբ և ծախու մարդու համբավ էր վայելում: 359 թ. պատերազմի նախօրեին նրան փոխարինեց Հերմոգենեսը: Ծնունդով պոնտացի՝ նա գիտեր Արևելքը, բայց զուրկ էր զինվորական ընդունակություններից: Տվյալ պահի համար ամենահարմար մարդը Ուրզիցինոսն էր, բայց նրան էլ հետապնդում էին պալատական բանսարկությունները: 354 թ. նա Մծբինի հնծելազորի պետն էր, հաջորդ տարին նրան փոխադրեցին Գալլիա, որտեղ նա հաջողությամբ

[1] Ammian. Marc., XVIII, 5, 6.

[2] Անդ, 5, 8:

հաշվենիարդար տեսակ ինքնակոչ Սիլվանոսի հետ: 357 թ. հեծելազորի պետի պաշտոնով մեր պատմագիր Ամմիանոսի ուղեկցությամբ նա նորից եկավ Արևելք: Ուրզիցինոսի դեմ հատկապես բանսարկություններ էր անում թագավորական սենեկապետ՝ praepositus cubiculi-ն՝ Եվսեբիոսը: Օգտվելով կայսեր բարեհաճությունից՝ նա հասավ այն բանին, որ Ուրզիցինոսին Արևելքից հեռացրին Իտալիա և նրա տեղը նշանակեցին իր սիրելի Սաբինիանոսին: Ուրզիցինոսի պաշտոնազրկումը Ամմիանոսը համարում է խոշոր սխալ. նրա կարծիքով այդ օրհասական պահին այդպիսի մարտական հրամանատարի անձը, ինչպիսին Ուրզիցինոսն էր, որ հիանալի ծանոթ էր պարսիկների մարտավարությանը, ավելի քան անհրաժեշտ էր: Շապուհի կողմից հավանության արժանացած Անտոնինոսի համարձակ ծրագիրը կառուցված էր Ուրզիցինոսի բացակայության և նրա փոխարինողի անընդունակության վրա: Նա պարսիկներին առաջարկեց ժամանակ և ուժեր չվատնել ամրությունների պաշարման վրա, այլ սրընթաց երթով անցնել Եփրատը և գրավել Ասորիքի՝ Գալլիանոսի ժամանակներից ի վեր պատերազմ չտեսած, ծաղկուն գավառները[1]:

Կոստանդիոս կայսրն անսպասելիորեն չեղյալ հայտարարեց հրամանը, և Ուրզիցինոսը կես ճանապարհից ետ վերադարձավ Միջագետք՝ հետևակի պետի պաշտոնով: Նրա դրությունը բարդ էր, մանավանդ որ բանակը փաստորեն մնաց ուրիշի հրամանատարության տակ:

Ուրզիցինիանոսը շտապեց Մծբին և սկսեց ամրացնել քաղաքը: Շուտով Տիգրիսից այն կողմ Մավրերի ամրոցի և Սիսարայի կողմից երևացին թշնամու առաջապահ ջոկատները: Ուրզիցինոսն ու Ամմիանոսը քաղաքից դուրս եկան, որպեսզի փակեն նրանց ճանապարհը, բայց հարկադրված եղան Ամուդիի և Մեյակարիրի վրայով փախչել Ամիդ:

Ուրզիցինոսի կարգադրությամբ Ամմիանոսը ուղևորվեց Կորդուքի Հովինիանոս սատրապի մոտ, որը գաղտնի համակրանք էր տածում հռոմեացիների նկատմամբ: Ասորիքում պատանդ լինելով՝ նա զբաղվում էր գիտություններով և այժմ այրվում էր հռոմեացիների մոտ վերադառնալու ցանկությամբ: Ամմիանոսի ուղևորությունը հետախուզական նպատակ ուներ: Սատրապի ուղեկցորդը նրան մի բարձր դիտակետ հատկացրեց, որտեղից հորիզոնում երևում էին մոտեցող թշնամական հրոսակները: Նրանց առջևից գնում էր ինքը՝ թագավորը, փառահեղ հանդերձանքով՝ ձախ կողմում ունենալով խիոնիտների Գրումբատես թագավորին, իսկ աջում՝ Աղվանքի թագավորին. նրանց հետևից գնում էին ուրիշ մանր իշխաններ ու հարևան ցեղերի նշանավոր դեմքեր:

---

[1] **Ammian. Marc.**, XVIII, 6.

Ուրզիցիճոսը, որն ուներ ընդամենը 700 հոգուց բաղկացած երկու հեծյալ ջոկատ, և ստիպված եղավ Ամիդից նահանջել Սամոսատ: Պարսից Դենշապուհ և Նահոդար զորավարները 20 հազարանոց զորքի գլուխ անցած՝ փորձեցին կտրել նրա ճանապարհը: Ամիդի մոտ, լեռներում, նրանք հասան Ուրզիցիճոսի ջոկատին, ջախջախեցին այն. Ուրզիցիճոսն ինքը հազիվ փրկություն գտավ Մելիտենեում:

Այդ ընթացքում գլխավոր ուժերը Շապուհի հրամանատարությամբ հասան Մծրինի սահմաններին, իսկ այնտեղից էլ Անտոնիճոսի խորհրդով թեքվեցին հյուսիս և շրջանցելով Bibases, Harren, Maiacarire և Charcha[1] կետերը, հայտնվեցին Ամիդի պարիսպների առջև: Քաղաքի համառ պաշտպանությունը պարսիկների ճնշման տակ կոտրվեց և 73 օր տևող պաշարումից հետո քաղաքն ընկավ: Ամմիանոսը փախավ Մելիտենե, այնտեղից իր հրամանատար՝ Ուրզիցիճոսի հետ գնաց Անտիոք[2]:

Ամիդից Շապուհը սլացավ հարավ դեպի ռազմավարական շատ կարևոր կետ Սինգարա, որպեսզի այն գրավելով ապահովի իր թիկունքը Անտիոքում իր ուժերը կենտրոնացնող թշնամուց: Շապուհը նորից նետվեց հյուսիս և պաշարեց Տիգրիսի վրայի նշանավոր Բեզաբդե ամրությունը՝ հին Փենիկը (Phoenica)[3] այժմյան Ջեզիրե-իբն-Օմարը: Այդ ամրոցն էլ ընկավ: Պարսից հաջողություններն հարկադրեցին Կոստանդիոս կայսրին անձամբ կանգնել բանակի գլուխը: Այդ նույն տարում, երբ հռոմեական ամրոցները մեկը մյուսի ետևից ընկնում էին թշնամու հարվածների տակ, Կոստանդիոսը զորքերով ժամանեց Կեսարիա (Կապպադովկիական), [որը նախկինում անվանվում էր Մազակա]՝ Mazakam antehac nominatam (XX, 9):

Այստեղ նա իմացավ, որ Գալլական լեգիոնները՝ իրենց արևելք փոխադրելու հրամանից դժգոհ, կայսր են հռչակել Հուլիանոսին: Որոշ տատանումներից հետո՝ արդյոք շարունակել ճանապարհը, թե գնալ Հուլիանոսի դեմ, Կոստանդիոսը մարդ ուղարկեց նրա մոտ՝ Կեսարի տիտղոսով բավարարվելու առաջարկությամբ, իսկ ինքը պատրաստվեց արշավանքի:

Լուրեր էին պտտվում, թե պարսիկները բոլոր միջոցները ձեռք են առնում հայոց թագավոր Արշակին ստիպելու հեռանալ հռոմեացիներից և Շապուհի կողմն անցնելու համար: Կոստանդիոսը հիանալի հասկանում էր, որ եթե պարսիկների խարդավանքները Հայաստանում նպատակին հասնեն, ապա հռոմեական զորքը կզրկվեր լուրջ օգնությունից, այդ պատճառով նա ձգտում էր իրեն ապահովել այդ կողմից՝ նախապես ստանալ Արշակի հետ դաշինքի ամրության հավաստիացում:

[1] Այդ կետերը գոյություն ունեն մինչև այժմ և ընկած են Դարայից Ամիդ տանող գլխավոր ճանապարհի վրա:

[2] Ammian. Marc., XIX, 8.

[3] Անդ, 7:

«Կոստանդիոսը,- ասում է Ամմիանոսը,- իր մոտ հրավիրեց հայոց թագավոր Արշակին, ընդունեց նրան արտակարգ սիրալիրությամբ և թախանձագին խնդրեց ու հորդորեց, որպեսզի նա մնա մեզ բարեկամ և հավատարիմ (դաշնակից): Նա լսել է, որ պարսից թագավորը բազմիցս փորձ է արել՝ գործելով մերթ խարեությամբ, մերթ խարդավանքով, որպեսզի Արշակը հեռանալով հռոմեացիների հետ ունեցած դաշինքից՝ անցնի իր կողմը: Արշակը բազմիցս երդվեց, որ նա ավելի շուտ իր կյանքը կտա, քան իրեն թույլ կտա դավաճանել, և, առատ նվերներ ստանալով, ուղեկիցներով, որոնց թերել էր իր հետ, վերադարձավ իր թագավորությունը: Հետագայում նա չհամարձակվեց խախտել տված խոստումը, կապված լինելով Կոստանդիոսի հետ երախտագիտական շատ կապերով, որոնց շարքում ամենակարևորն այն էր, որ կայսրը Արշակին կնության տվեց իր հանգուցյալ եղբայր Կոստասի նախկին հարսնացու՝ Օլիմպիային, որը պրետորիայի պրեֆեկտ Աբլաբիոսի դուստրն էր: Արշակին ճանապարհելով՝ Կոստանդիոսը Կապպադովկիայից դուրս եկավ և Փոքր Հայքի Մելիտենե քաղաքի վրայով անցնելով Եփրատը՝ եկավ Եդեսիա»՝

Constantius aditum Arsacen, Armeniae regem, summaque liberalitate susceptum praemonebat et hortabatur, ut nobis amicus esse perseveraret et fidus. Audiebat enim saepius eum temptatum a rege Persarum fallaciis, et minis, et dolis, ut Romanorum societate posthabita, suis rationibus stringeretur. Qui crebro adjurans animam prius posse amittere, quam sententiam, muneratus cum comitibus, quos duxerat, rediit ad regnum, nihil ausus temerare postea promissorum, obligatus gratiarum multiplici nexu Constantio, inter quas illud potius excellebat, quod Olympiada Ablabii filiam praefecti quondam praetorio, ei copulaverat conjugem, sponsam fratris sui Constantis. Quo dimisso a Cappadocia ipse per Melitinam minoris Armeniae oppidum, et Lacotena, et Samosata, transito Euphrate, Edessam venit[1].

Այստեղ նա առժամանակ կանգ առավ՝ սպասելով համալրման և շարժվեց Ամիդի վրա: Պարսիկների կողմից կործանված քաղաքի տեսքը ծանր տպավորություն թողեց կայսեր վրա: Ամիդից Կոստանդիոսն անցավ Բեզաբդեն և այն գրավելու թույլ ու անհաջող փորձից հետո հեռացավ Անտիոք: Այստեղ նրան հայտնեցին, որ Հուլիանոսն արշավում է դեպի մայրաքաղաք: 360-361 թթ. ամբողջ ծմեռը նա անհրաժեշտ պատրաստություններ էր տեսնում ներքին ու արտաքին թշնամիների դեմ պատերազմ վարելու համար:

[1] **Ammian. Marc.**, XX, 11.

Գարնանը սպասվում էր պարսիկների առաջխաղացում, և կայսրը մի անգամ ևս քայլեր ձեռնարկեց ամրապնդելու դաշինքը հայոց թագավորի և հարևան միապետների հետ: Քանի որ նրանք սարսափում էին պարսիկների գարնանային հարձակումից, ապա այդ նույն պատմագրի խոսքերով «Անդրտիգրիսյան թագավորներին ու սատրապներին առատ նվերներով դեսպաններ ուղարկվեցին, որպեսզի խնդրեն ու հորդորեն նրանց մնալ մեր կողմում և երբեք չմտածել որևէ խարեության կամ խարդավանքի մասին: Ամենից առաջ Հայաստանի և Իբերիայի թագավորներ Արշակին ու Մերիբանեսին աշխատեցին կաշառել փառահեղ հանդերձանքով ու բազմազան նվերներով, որպես մարդկանց, որոնք կարող էին հարված հասցնել հռոմեական գործին, եթե այդ դժվարին պարագաներում անցնեին պարսիկների կողմը՝ «ad Transtigritanos reges et satrapes legati cum muneribus missi sunt amplis, monituri cunctos et hortaturi nostra sentire et nihil fallax temptare vel fraudulentum. Ante omnia tamen Arsaces et Meribanes, Armeniae et Iberiae reges, cultu ambitioso indumentorum emercabantur et multiformibus donis damna negotiis Romanis illaturi, si rebus tum etiam dubiis descivissent ad Persas»[1].

Շուտով Միջագետքում կանգնած հռոմեական զորապետները զեկուցեցին, որ Տիգրիսի երկայնքով ձգված պարսկական զորքերը պատրաստվում են պատերազմական գործողություններ սկսել: Կոստանդիոսը անմիջապես Անտիոքից մեկնեց Եդեսիա՝ թշնամուն ընդառաջ: Սակայն պարսիկները փոշմանեցին և անսպասելիորեն ետ քաշվեցին իրենց սահմանները: Կայսրը վերադարձավ Անտիոք և այդտեղից էլ մեկնեց Կոստանդնուպոլիս, բայց ճանապարհին Տարսոնում հիվանդացավ տենդով և վախճանվեց Մոփսուկրենե իջևանում 361 թ. հոկտեմբերի 5-ին[2]:

Կայսր հռչակվեց Հուլիանոսը: Վճռելով շարունակել պատերազմը պարսիկների դեմ՝ նա 362 թ. հունիս ամսին մեկնեց Անտիոք: Նրա փառքը և նրանից սարսափը տարածվել էր հեռու և հասել մինչև Արևելք: Ամեն կողմից ներկայանում էին խաղաղասիրական դեսպանություններ, «խնդրում էին խաղաղություն նաև անդրտիգրիսյան ժողովուրդներն ու հայերը»՝ Transtigritanis pacem obsecrantibus et Armeniis[3]:

Հուլիանոսը փայփայում էր հսկայական ծրագրեր և մտածում էր մի հարվածով վերջ դնել պարսիկների դարավոր թշնամությանը և ջախջախել հատկապես վերջին 60 տարիներին այնքան դժբախտություններ պատ-

---

[1] Ammian. Marc., XXI, 6.

[2] Անդ, XXI, 15:

[3] Անդ, XXII, 7:

ճառած և բազմիցս հռոմեական զորքը մինչև վերջին մարդը կոտորած պետության հզորությունը[1]:

Ինքնավստահ կայսրը, ճիշտ է, սիրալիր ընդունում էր տարբեր ժողովուրդների՝ նրան օգնության ուղարկելու մասին առաջարկությունները, բայց հպարտությամբ նրանց հասկացնել էր տալիս, որ հռոմեական տերությանը վայել չէ օգտվել արտաքին օգնությունից, և, ընդհակառակը, ինքը պատրաստ է պաշտպանել իր բարեկամներին և դաշնակիցներին, եթե նրանք խնդրանքով դիմեն նրա օգնությանը: «Միայն հայոց թագավոր Արշակին,- շարունակում է պատմագիրը,- պատվիրեց, որպեսզի նա հավաքելով զգալի թվով զորք, գործի այնպես, ինչպես իրեն կհրամայվի. իսկ թե նա ուր պիտի շարժվի, ինչ պիտի անի, շուտով կիմանա»՝ «Solum Arsacem monuerat Armeniae regem ut collectis copiis validis iubenda operiretur, quo tenderet, quid deberet urgere propere cogniturus»[2].

Կողմնակի օգնության ավելորդության մասին մեծամիտ հայտարարությունից հետո հայոց թագավորի նկատմամբ այդպիսի բացառությունը լավագույն ապացույց է ծառայում, թե այն ժամանակ ինչ դեր էր խաղում Հայաստանը և ինչքան քանկ էին գնահատում նրա դիրքը պատերազմող կողմերը:

Հուլիանոսի երկերում պահպանվել է նրա նամակը՝ հասցեագրված Արշակին, որն ասում է.

«Արշակին՝ Հայաստանի սատրապին:

Արշակ, շտապիր մարտի ընդդեմ թշնամու, խոսքից արագ, գենք ա՛ռ ձեռքդ պարսից մոլեգնության դեմ:

Մեր սպառազինությունն ու ջանադրությունը իրենց առաջ խնդիր են դնում երկուսից մեկը, կամ արժանին մատուցել (այսինքն՝ զոհվել)՝ պարթևական հողի վրա կատարելով մեծ սխրագործություններ, և սարսափելի չարիք պատճառել թշնամիներին, կամ էլ աստվածների օգնությամբ հնազանդեցնել նրանց և հաղթանակով վերադառնալ տուն՝ թշնամիների նկատմամբ տարած հաղթանակի հուշարձան կանգնեցնել:

Արդ՝ թոթափի՛ր քո անփութությունը, քո՛ղ քո խաբեությունները: Մոռացիր այն երանելիին, ինչպես և շոայլ ու վատնող Կոստանդիոսի օրոք բարձրաստիճան անձանց կողմից քո և քեզ պես բարբարոսների վրա շռայլված առատ նվերները և այժմ մտածիր իմ՝ գերագույն քուրմի՝ Հուլիանոսի մասին, կեսարի և օգոստոսի, աստվածների ու Մարսի սպասավորի մասին, ֆրանկներին ու բարբարոսներին խորտակողի մասին, գալլերին ու իտալացիներին ազատագրողի մասին: Եթե դու մտքիդ ինչ-որ ուրիշ բան ես

[1] **Ammian. Marc.**, XXII, 12.

[2] Անդ, XXIII, 2:

դրել, ես ես գիտեմ, որ դու խորամանկ ես, վատահամբավ գիվոր ես ու պարծենկոտ, ինչպես այդ ցույց են տալիս ներկա գործերը, քանի որ դու փորձում ես թաքցնել քեզ մատ ընդհանուրի շահի բշնամուն - առայժմ դու հետաձգում ես քո մատնությունը մինչև պատերազմի բախտը պարզվելը: Մեզ բավական է դաշինքը ատավածների հետ բշնամիներին ոչնչացնելու համար: Իսկ երբ ճակատագիրը ինչ-որ ուրիշ բան է վճռել, նրա վճիռը ենթց ատավածների ցանկությունն է - ապա ես այն կրնդունեմ անվախ և քաջությամբ: Դե, իմացիր, որ դու կրնկնես պարսիկների ձեռքով և պայքարում խոպան կկորցնելի քո տանը և հայկական թագավորությունը: Քեզ հետ ճակատագրությունները կրաժանի նաև Մորին քաղաքը, ինչպես այդ մասին վաղուց ի վեր մեզ հայտնել են երկնային ատավածները»:

Արսάκη Ἀρμενίων σατράπῃ.

Ἐπείχθητι πρὸς τὴν τῶν πολεμίων παράταξιν, Ἀρσάκιε, θάττον ἢ λόγος, τὴν δεξιὰν κατὰ τῆς Περσικῆς μανίας ὁπλίσας ἡ γὰρ ἡμετέρα παρασκευή τε καὶ προθυμία δυοῖν θάτερον βεβούλευται, ἢ τὸ χρεὼν ἀποδοῦναι ἐπὶ τῆς Παρθυαίων ἐνορίας τὰ μέγιστα διαπραξαμένους καὶ τὰ δεινότατα διαθεμένους τοὺς ἀντιπάλους, ἢ τούτους χειρωσαμένους, πρυτανευόντων ἡμῖν τῶν θεῶν, καλλινίκους ἐπανελθεῖν ἐπὶ τὴν ἐνεγγυαμένην, τρόπαια κατὰ τῶν πολεμίων ἐγείραντας. πᾶσαν οὖν ῥαστώνην καὶ φενακισμὸν ἀποθέμενος, καὶ τὸν μακαρίστην ἐκεῖνον καὶ τὰς τῶν εὖ γεγονότων περιουσίας τὰς εἰς σέ τε καὶ τοὺς ὁμοτρόπους σοι βαρβάρους ὑπὸ τοῦ ἀβροτάτου καὶ πολυτελοῦς Κωνσταντίου κενωθείσας, νῦν μοι τὸν Ἰουλιανόν, τὸν ἀρχιερέα, τὸν καίσαρα, τὸν αὔγουστον, τὸν θεῶν τε καὶ Ἄρεος θεραπευτὴν ἐννόησον, τὸν Φραγκῶν τε καὶ βαρβάρων ὁλετῆρα, τὸν Γάλλων τε καὶ Ἰταλῶν ἐλευθερωτήν, εἰ δὲ ἕτερον τι βουλεύσαιο πυνθάνομαι γὰρ εἶναι σε πανοῦργον καὶ κακὸν στρατιώτην καὶ ἀλαζόνα, ὡς τὰ παρόντα μοι πράγματα δείκνυσιν. ἐχθρὸν γὰρ τινα τῆς κοινῆς λυσιτελείας λανθάνοντα ἀποκρύπτειν παρὰ σοὶ πειρᾶσθαι τέως μὲν τοῦτο ὑπερῤῥίθεμαι διὰ τὴν τοῦ πολέμου τύχην ἀρκεῖ γὰρ ἡμῖν ἡ τῶν θεῶν συμμαχία πρὸς τὴν τῶν πολεμίων καθαίρεσιν. εἰ δὲ τι τὲ τῆς εἱμαρμένης κρίνειε. θεῶν γὰρ βούλησις ἡ ταύτης ἐξουσία, ἀδεῶς καὶ γενναίως οἴσω τοῦτο. ἴσθι δὲ ὡς σὺ μὲν πάρεργον ἔσῃ τῆς Περσικῆς χειρός, συναφθείσης σοι παγγενεὶ τῆς ἑστίας καὶ τῆς Ἀρμενίων ἀρχῆς. κοινωνήσει δέ σοι τῆς δυστυχίας καὶ ἡ Νισιβίων πόλις τῶν οὐρανίων θεῶν τοῦτο πάλαι ἡμῖν προαγορευσάντων[1].

[1] Juliani opera, vol. I, epistula 66, p. 589-590.

Այս ճամակը թե՛ իր ծևով և թե՛ բովանդակությամբ լուրջ կասկած է հարուցում. անտվոր կոպիտ տոնը անարժան է համարվում Հուլիանոսի գրչին, ինչպես նաև չի համապատասխանում իսկական իրադրությանը: Կայսրը չէր կարող այդպիսի վիրավորական լեզվով խոսել այն տիրակալի հետ, որի օգնությունը նա շատ գնահատում էր, ինչպես այդ երևում է Ամմիանոսի խոսքերից: Նամակի վերջին մասը, որ վերաբերում է Արշակին ու նրա տան և առհասարակ հայկական թագավորության կործանմանը, ավելի շատ մատնանիշ է անում այն, որ այդ վավերագիրը ստեղծվել է Արշակունյաց՝ Հայաստանի արքայատան կործանման կատարված փաստից հետո: Բացի դրանից, նամակում *τῶν μαχαρίστην ἐκεῖνον* «այն երանելի»-ի տակ հասկացվում է հավանաբար Կոստանդիանոս Մեծը, որի օրոք Արշակը չէր կարող գահի վրա լինել: Սա դարձյալ վավերագրի իսկության կասկածելիությունը հաստատող հանգամանք է:

Նամակի տոնի մեջ, անվիճելի է, արտահայտվել է այն զայրույթը, որ կարող էր համակել Հուլիանոսին այն բանից հետո, երբ Արշակը, չնայած իր ամբողջ ցանկությանը, ինչպես պարզվեց հետագայում, չկարողացավ հռոմեացիներին օգնություն ցույց տալ: Երբ Հուլիանոսը ժամանեց Խառան և իմացավ այն մասին, որ թշնամին արդեն անցել է սահմանը, նա առանձնացրեց 30.000 մարդուց բաղկացած ջոկատ և այն հանձնեց Պրոկոպիոսին, հրամայելով զորաշարժ կատարել Տիգրիսի ափերին և աչալուրջ հետևել թշնամու ռազմերթերին: «Նա պատվիրեց հնարավորության դեպքում միանալ Արշակին և նրա հետ միասին արագ երթով Կորդուքի և Մոկքի վրայով անցնելով՝ ավերել Մեդիայի հարուստ գավառը, Խիլիոկոմը և նրա այլ շրջանները և հետո շտապել իր մոտ՝ Ասորիք, իրեն օգնություն ցույց տալու համար, եթե դրա կարիքը լինի»՝ mandabatque eis ut, si fieri potius posset, regi sociarentur Arsaci cumque eo per Corduenam et Moxoenam Chiliocomo uberi Mediae tractu partibusque alliis praestricto cursu vastatis apud Assyrios adhuc agenti sibi concurrerent necessitatum articulis adfuturi[1].

Դրա մեջ էր կայանում Արշակի ռազմական օգնությունը, և դրա վրա են մատնանիշ անում պատմագրի վերը բերված խոսքերը, թե Հուլիանոսը հրամայեց Արշակին պատրաստվել և սպասել իր կարգադրությանը:

Ինքը՝ Հուլիանոսը, գլխավոր ուժերով Տիգրիսի հոսանքով շարժվեց հարավ, դեպի պարսից թագավորության մայրաքաղաքը: Նա հաղթական երթով հասավ Տիգրոն, և չնայած այն բանին, որ Նաարմալխում՝ գլխավոր ճակատամարտում, Ամմիանոսի հավաստիացումներով, Հուլիանոսը ջարդեց պարսիկներին, դրանից հետո այնուամենայնիվ հռոմեական

[1] Ammian. Marc., XXIII, 3.

զորքերը գերադասեցին բռնել վերադարձի ճանապարհը: Ընդ որում որպես Հուլիանոսի վիճակը վատացնող հանգամանքներից մեկը նշվում է այն «ոչ փոքր դժբախտությունը՝ չհայտնվեց այն ջոկատը, որը սպասվում էր՝ Արշակի և մեր զորահրամանատարների հետ, որի ուշացման պատճառը նշված է վերևում»՝ haud exiguum malum, quod nec adminicula, quae praestolabamur cum Arsace et nostris ducibus, adparebant ob causas inpedita praedictas[1].

Ցավոք, Ամմիանոսի ներկա տեքստում Արշակին կասեցնող պատճառների մասին չկան ցուցումներ, որոնք վկայակոչում է հեղինակը: Այդ խոսքերից երևում է նախ և առաջ, թե ինչպիսի մեծ նշանակություն էր տրվում Արշակի օգնությանը, և երկրորդ՝ որ Արշակը բոլորովին էլ մեղավոր չէր այն բանում, որ չի կարողացել Հուլիանոսին օգնության գալ: Հուլիանոսի համարձակ ձեռնարկումը վատ վերջացավ: Նահանջի ճանապարհին 363 թ. հունիսի 26-ին՝ նա ընկավ թշնամու նետից խոցված:

Շարունակությունը հետևում է (4):

[1] Ammian. Marc., XXIV, 7.

ՔՆՆԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵԶՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(Լ. Մարիեսի աշխատության առթիվ)

I

Հին մատենագիրների շարքում Եզնիկ Կողբացին այն բացառիկ դեմքերից է, որ պահել է գոնե ցայժմ իր ավանդական հռչակը ամուր և անբասիր: Այն ինչ ներկայումս անվստահությունն ու կասկածները մթագնել են մեր գրի սկզբնական շրջանի հորիզոնները և քանձր ստվեր ձգել շատ անունների վերա, Եզնիկը մնացել է անխոցելի և ամեն տարակուսանքից վեր: Չէ թե միայն ոճի և բովանդակության կողմից, այլ և հավաստիության տեսակետից Կողբացու փոքրիկ երկը հաշվում է հայ գրականության պարծանք:

Եզնիկին ցվիրված նոր ուսումնասիրությունը, որ պատկանում է մի լատին կրոնավորի (1), չի սպառնում բնավ որևէ կերպ նսեմացնելու նորա դարավոր փառքը: Ընդհակառակը, հայ բանասերների կողմից, գլխավորապես Նորայրի (2) և Հր. Աճառյանի (3), հայտնված քանի մի դիտողություններ, որոնք ակրտում էին բծեր գտնելու Եզնիկի գործի մեջ, Լ. Մարիեսի խոհուն մտքի առաջ ընկրկում են և չքանում:

Հենց սկզբից Եզնիկի նոր քննադատը հայտնում է, որ ավանդական տեսակետը, ստույգ և ընդունելի է համաձայն Ս. Վերերի լուսաբանության (4), և մատենագիր Եզնիկ Կողբացին (սխալմամբ Կողբը Տայքի մեջ է դնում) այն անձն է, որ ներկա էր Արտաշատի ժողովին 449 թվականին և որ իր երկը գրել է 441 թ., ավելի ճիշդ 445-448 թթ. մեջ, ինչպես հաշվում է նույն Վերերը. այստեղից հետևում է այն հայտարարությունը, որ անում է Մարիեսը, որ «Եզնիկի հարց չկա, ինչպես հայ Խորենացու և կամ Ագաթանգեղոսի և ուրիշ նման հարցեր»:

Դժբախտաբար, վաղաժամ ենք համարում այսօրինակ համարձակություններ և ցավում, որ Մարիես, հակառակ իր քննական և զննական ընտիր ձիրքերին, հավատ է ընծայել Վերերի հաշիվներին, որ համոզիչ հիմքեր ունենալուց հեռու են:

Արդարև, Վերերի ելակետը Եզնիկի մի նկատողությունն է պարսից կրոնի մասին, որ «ընդ գրով չեն կրօնքն», այսինքն՝ գրի չեն առնված, ուստի երբեմն այս են ասում, երբեմն այն՝ մարդկանց խաբելու և մոլորեցնելու համար[1]: Այս

[1] Եզնիկ Կողբացի, Բ, 9:

խոսքերը Եզնիկը չէր կարող ասել, ըստ Վեքերի, պարսից հազարապետ Միհրներսեհի դավաճական ճամակից հետո, որ ուղղված էր հայերին Հազկերտ թագավորի հրամանով: Պարսից թուղթը և նրա պատասխանը հայոց կողմից, գրված Արտաշատի ժողովում, ճմանություն ունին Եզնիկի գործին, որը բացատրելու է նրա անմիջական մասնակցությամբ, և ուրեմն, եզրակացնում է Վեքերը, նորա երկը 450 թվից առաջ պիտի գրված լինի:

Նախ հայտնի չէ, Եզնիկի նկատողությունն իրե՞ն է պատկանում, թե քաղած է գրավոր աղբյուրից: Ինչպես կտեսնենք ստորև, պարսից կրոնի վերաբերյալ հիմնական հոդվածը թարգմանածո է: Եվ որ հիշյալ նկատողությունը վերցրած է գրավոր աղբյուրից, դորա կտրական ապացույցն այն է, որ նույն միտքը գտնում ենք նաև Բարսեղ Կեսարացու մոտ, խոսելով *τῶν μαγουσαίων ἔθνος*-ի մասին, նա նկատում է. *οὔτε γὰρ βιβλία ἔστι παρ᾽ αὐτοῖς οὔτε διδάσκαλοι δογμάτων, ἀλλὰ ἔθει ἀλόγῳ συντρέφονται, παῖς παρὰ πατρὸς διαδεχόμενοι τὴν ἀσέβειαν.* որ է՝ «մոգերի (մագուս, հին պարսկ. magus) ժողովուրդը ո՛չ գիրք ունին և ո՛չ կրոնի վարդապետներ, այլ անմիտ սովորությամբ են սնվում հորից որդի ժառանգելով ամբարշտությունը»[1]:

Չենք ուզում ասել, որ Եզնիկը կախումն ունի Բարսեղից: Ստորև կտեսնենք, որ երկու հեղինակների մեջ և ուրիշ նման կետեր կան, այնպիսի հանդիպումներ, որոնք ենթադրել են տալիս ընդհանուր աղբյուրի գոյությունը: Եթե այս աղբյուրից է առած հայ հեղինակը մեզ հետաքրքրող տողերը պարսից կրոնի մասին, ապա ուրեմն Վեքերի դատողությունները կորցնում են իրենց հողը:

Սակայն ընդունենք իսկ մի րոպե, որ նույն տողերն իրեն Եզնիկին է պատկանում: Միամտություն կլիներ կարծել, որ Միհրներսեհին վերագրած թուղթը պատմական իսկություն է և նրա վերա հենվելն այս դեպքում ներելի: Բավական է հիշել, որ երկու ժամանակակից համարված հեղինակ, Եղիշեն և Ղազարը, տարբեր բաներ են պատմում թղթի թե՛ էության և թե՛ հետևանքի մասին: Ճշմարիտ է, Ղազարին ևս անծանոթ չէ, որ Միհրներսեհը «իրենց օրենքը գրել և ղրկել է հայերին», բայց նա ավելացնում է, որ հայերը մինչև իսկ արժանի չհամարեցին բանալ թուղթը և կարդալ: Ահա նորա բուն խոսքերը. «այլ վասն օրինաց ձերոց, զոր գրեալ էր և տուեալ բերել առ մեզ, մեք ձեզ ոչ երբեք լսեմք: Մինչ որ այդր լինիմք ի դրանն և կամ ի մոգուցդ որ ձեր օրէնսուսոյցքդ իմն կոչին, այլն արարեալ արհամարհեմք. քող քէ և գրոց ևս յօժարեցուցանէք զմեզ կարդալ և լսել որ ինչ ոչ է մեզ պիտոյ և

[1] Ad Epiph., 4. Migne, P. G., col. 258.

խնդիր: Այլ յառաւել ևս պատուելոյ զթագաւորութիւնդ ձեր և *բանալ անգամ զգրեալսդ կամ տեսանել ոչ կամեցաք*. զի զօրէնս զոր ճանաչեմք եթէ սուտ են և անմիտ մարդոյ բարբանջմունք, զոր բազում անգամ մեր լուեալ է ի ձեր անուանեալ սուտ վարդապետացդ և տեղեակ եմք իբրև զձեզ, զայն ոչ կարդալ պարտ է և ոչ լսել: Դարձեալ կրկնում է. «զձեր սուտ և զարժանի ծաղու օրէնսդ չհամարեցաք արժանի կարդալոյ և մատուցանելոյ ի մեզ»[1]...

Այսպես է խոսում Փարպեցին, մինչ Եղիշեն բերում է պարսից դավաճական թուղթը և նրա հերքումը: Մտադիր չենք քննավ մեկի խոսքերը մյուսով քննելու և կամ մեկի կարծիքին առավելություն տալու: Երկու պատմագիրն էլ այս դեպքում ճշմարտության դեմ մեղանչում են պատմական տեսակետից:

Այլ է գրականը. Համակագրությունը հին գրականության մեջ ընդունված ձև է, որ հեղինակները հաճախ հորինում են որոշ դիտումներով, այս կամ այն միտքը ավելի ազդու և ցայտուն կերպով ներկայացնելու համար: Հավանական է, որ պարսկական դրան կողմից որևէ գրավոր հրաման եղած լինի: Սորա շուրջը ծագել է գրագրության զրույցը: Մի պատմագիրը հարկավոր է համարել հորինել և՛ թուղթն և՛ պատասխանը և այդպիսով երևան հանել պարսիկների կրոնական տկարամտությունը և հայերի քրիստոնեական ջերմեռանդությունը: Մյուս պատմագիրը նույն նպատակի համար, նամանավանդ պարսիկներին վիրավորելու դիտավորությամբ, գերադասել է այնպես ձևացնել, որ հայերը նույնիսկ պետք չեն տեսել անհավատների թուղթը կարդալու, մոտեն ծանոթ լինելով նրանց ամբարշտության:

Այսօրինակ միտումնավոր գրությունների վերա հիմնել այնպիսի գրական բարդ խնդիր, որպիսին է Եզնիկի հարցը, նշանակում է իրավամբ ավազի վերա տուն շինել:

Դրական ապացույց չունինք նաև Եզնիկի և Արտաշատի ժողովին մասնակից Քագրևանդա եպիսկոպոսի նույնության, ինչպես և հաստատուն կռվան չկա, որ պատմագիր Եղիշեն նույն ժողովի անդամ Ամատունյաց Եղիշե եպիսկոպոսի հետ մի անձն է: Արդյոք Եղիշեի մատյանը, ծանոթ լինելով Փիլոնի հայ թարգմանության, կարո՞ղ է Արտաշատի ժողովին ժամանակակից համարվել:

Չենք ուզո՛ւմ այժմեն իսկ պնդել, որ նույն դրության մեջ է և հռչակավոր «Եղծ աղանդոց»-ը: Ամենայն դեպքում խնդիրն այնքան էլ պարզ չէ, ինչպես թվում է շատերին: Կկամենայի օգտվել դեպքից, հաջող առթից, որ տալիս է Մարիեսի լրջմիտ աշխատությունը, և հրապարակ հանել քանի մի անձնա-

[1] **Ղազար Փարպեցի**, էջ 128-129:

կան դիտողություններ, որ զբաղեցնում են ինձ վաղուց, և որ կարող են անորոշության եթե ոչ անվստահության ամպեր բերել Եզնիկի գործի շուրջը[1]:

II

Լ. Մարիեսի աշխատությունը կոչվում է **«Le *De Deo* d'Eznik de Kolb connu sous le nom de «Contre les sectes»**՝ մի վերնագիր, որ ինքնին բնորոշում է Եզնիկին ցվիրած նոր ուսումնասիրությունը և հայտնում նորա էությունը:

Ասել է, թե քննադատը եկել է այն եզրակացության, որ հանրածանոթ *«Եղծ աղանդոցը»* կոչելու է այսուհետև *«Ցաղագս Աստուծոյ»*:

Անվան խնդիրը, որքան և ձևական, ինքնըստինքյան, արժանի է սակայն ուշադրության, ցորչափ որ մերկացնում է գրական գործի ոգին և կամ նպաստում է հասկանալ նորա կառուցվածքը:

Վերնագրի հարց է ծագում, որովհետև միակ քանկագին ձեռագիրը, որ պահել է մեզ Եզնիկի գանձը, կորցրել է վերնագիրը: Առաջին հրատարակիչը Աբրահամ վարդապետը հայտնում է իր առաջաբանի մեջ, որ ինքն է բաժանել «զերկար ճառակերպ գրեալսն ըստ զանազանից պարբերութեանց իմացուածոյ ի գլուխս 76»:

Վենետիկցիք արտատպելով նույն հրատարակությունը, պահել են բաժանումները չնչին փոփոխությամբ, և այն ոչ միշտ հաջող, վերածելով նաև ամբողջ երկը չորս գրքերի:

Աբրահամ վարդապետը կոչել է իր հրատարակությունը *«Գիրք ընդդիմութեանց»* (5): Արսեն Բագրատունին, Վենետիկի հրատարակության նախաձեռնողը, հարմար է դատել անվանել *«Եղծ աղանդոց»* (6):

Եզնիկն համենայն դեպս անպարտ է այս խնդրում և պատասխանատու չէ ընտրած վերնագիրների համար, քանի որ ձեռագիրը չէ պահել երկի իսկական անունը:

Այս անհայտությունն է պատճառը, որ Մարիեսն ևս իր կողմից մի նոր վերնագիր է առաջարկում՝ *«Ցաղագս Աստուծոյ»:* Նա արդար է, երբ խոսում է արդի բաժանմունքների և վերնագրի դեմ, որոնք չեղել են քննադատների ուշադրությունը և արգելք եղել Եզնիկի գործի ճշմարիտ մեկնության: Մարիեսը կարծում է, որ Եզնիկը միապաղաղ գրություն է և ամենևին կարիք չկա քմահաճ տրոհումների: Ջննելով գրքի բովանդակությունը աչալուրջ ուշադրությամբ, մեր քննադատը առաջարկում է հիշածս նոր վերնագիրը, գտնելով այն միանգամայն համապատասխան երկի ընդհանուր բնավորության:

Պետք է խոստովանել, սակայն, որ Մարիեսի ընտրությունը ևս անհաջող է ու բռնազբոսիկ և ինչ որ զարմանալի է, բնավ չի պատշաճում իր ման-

[1] Եզնիկի գործը մասնավոր դասախոսության նյութ է եղել Ս. Պետերբուրգի համալսարանում՝ 1914-1915 ուսումնական տարիներին:

բակրկիտ և ճշմարիտ վերլուծման: Ամբողջ ութ էջի վերա Մարիեսը ներկայացնում է մեզ բովանդակության տախտակը, որ ընդհանուր առմամբ ուղիղ է: Անսպասելի է միայն նորա եզրակացությունը, որ իբր թե «ամեն ինչ բոլորում է» ճշմարիտ Աստուծո գիտության շուրջը:

Մինչդեռ վերլուծման տախտակից իսկ բացահայտ երևում է, որ խնդիրը Աստուծո մասին չէ, այլ չարի և բարվո մեծ հարցն է, որ զբաղեցնում է հեղինակին: Աստուծո մասին խոսում է այն չափով, որքան հարկավոր է հիշյալ հարցի տեսակետից:

Արդ չարի և բարվո և սրանց տեսակ-տեսակ արտահայտությանց ծագման և մեկնության բանալին համարում է անձնիշխանությունը կամ ժամանակակից խոսքով ազատ կամքը: Հետևապես, եթե ուզենայինք ավելի մոտեն բնորոշել, պետք է ասեինք. խոսքը անձնիշխանության մասին է: Բայց որովհետև հեղինակը կանգ է առնում երկարորեն չարիքների կամ իր խոսքով «անհարթութիւնների» վերա և նպատակ ունի հերքել արմատացած թյուր հասկացողությունները, մանավանդ կրոնական մեծ վարդապետությանց նույն խնդրի վերաբերյալ ունեցած դավանանքը, ուստի անդեպ չէր լինի ասել, որ խոսքը նրանց մասին է՝ աղանդավորների և հերձվածողների:

Մյուս կողմից *«Յաղագս Աստուծոյ»* կոչումը խորշելի պիտի լիներ Եզնիկի համար այն պարզ պատճառով, որ նա իր նախաբանի մեջ հարկ է համարում շեշտել, որ Աստուծո էությունը անհաս է և անքնին: Սեղմ և գրեթե քանդակե նախադասությամբ հայտարարում է հենց սկզբից, որ «առ նորա անքննութիւնն ընծայութիւն անգիտութեան մատուցանելի է և առ էութիւն նորին դաւանութիւն գիտութեան և ոչ քննութեան»: Ուրիշ խոսքով, Աստուծո անքննությունը գիտության և ուրեմն քննության նյութ չէ, այլ միայն անպայման հավատի:

Այս նկատողությունը ուղղված է գնոստիկյան վարդապետության դեմ, որը *հավատին՝ πίστις* հակադրում էր և գերադաս համարում ***գիտությունը՝*** *γνῶσις* և սորանով էր ուզում հիմնավորել և մինչև իսկ փոխարինել հավատը: Գնոստիկյաններից էր հռչակավոր Վալենտինիանոսը, որի ուսման հերքումին է նվիրված Եզնիկի առաջին գիրքը (7):

Ահա ինչու համար դժվար է կարծել, որ գնոստիկյանների դեմ պայքարող մատենագիրը իր գործն անվաներ *«Յաղագս Աստուծոյ»*, մանավանդ որ խոսքը բնավ Աստուծո մասին չէ:

Թվում է, թե Եզնիկի առաջին հրատարակիչ Աբրահամ վարդապետը ավելի մոտ է խնդրական վերնագրին: Միայն թե նույն միտքը պետք էր արտահայտել Եզնիկյան բառերով և նորա ճաշակով: Եղծ բառը հերքման իմաստով նորալուր է և խորթ Եզնիկին, ինչպես արդեն դիտել է հ. Գ. Գալեմքեարյան (8): Ընդդիմության փոխարեն Եզնիկ գործ է ածում *յանդիմա-*

ճութիւն: Այսպես, Ա 28, էջ 111-ում երեք անգամ կրկնվում է «հանդիմանել» բառը. «զարտաքինսն իրօք ճշմարտութեան առանց գրոց *յանդիմանել* և զկարծեալսն ներքինս և ոչ ճշմարտեալս գրովք սրբովք *յանդիմանել:* Զհիւղայն կարծիս, որովք յոյնք մոլորեցան, բաւական համարեսցուք առաջնոցն բանիցն *յանդիմանութեամբ*՝ վճարել»: Դարձյալ՝ Մարկիոնի հասցեին ասում է էջ 196-ում՝ «զորոյ անմահութիւնն ի դէպ ժամանակի *յանդիմանեսցուք*». կամ էջ 192-ում՝ «նախ յիւրեանց իսկ բանիցն *յանդիմանին*». և այլն: Այստեղից հետևում է, որ Եզնիկն իր գործը, իր աննելիքը որոշում է «յանդիմանութիւն» բառով:

Նկատենք, որ նույն գործածութիւն է և Բարսեղ Կեսարացու «*Վեցօրեայք*»-ի մեջ: Այսպես էջ 3՝ «ոչ գիտեմ, ուստի պարտ և պատշաճ իցէ առնել նախ սկիզբն ճառիս, եթէ ի *յանդիմանութենէ* ընդունայնութեան արտաքնոցն»: Նույնպես էջ 4՝ «այլ ես գործ աւելի համարիմ» կալ և դնել ընդ նոսա *յանդիմանութիւն»:* Այլև էջ 48՝ «և յորժամ *յանդիմանին* ի մէնջ». և կամ էջ 61՝ «առ ի *յանդիմանել* զստութիւն նոցա» և այլն: «*Ցաճախապատում*»-ի մեջ ևս ընդունված է նույն իմաստով հանդիմանություն բառը ինչպես էջ 23՝ *յանդիմանութիւն* մոլար մտաց, այլ և էջ 46, 67:

Չմոռանանք հիշել, որ Եպիփանի նշանավոր գործը Խորենացու մոտ կոչվում է նմանապես «*Ցանդիմանութիւն*»:

Հավանական կլիներ կարծել, որ Եպիփանի հետևությամբ Եզնիկն ևս իր գործն անվաներ «*Ցանդիմանութիւն հերձուածոց*» կամ *աղանդոց:* Եզնիկը, կարծես, աղանդ է կոչում հեթանոս կրոնները և կամ փիլիսոփայական վարդապետությունները, իսկ հերձված բառը վերապահում է քրիստոնյա եկեղեցու ծոցում տեղի ունեցած այլամիտ ուսմունքներին:

Մի տեղ Եզնիկն իր գրությունը անվանում է *ճառ.* «որպէս բազում անգամ յոգնագոյն օրինակօք ոչ մոռացաք յառաջին *ճառսն* առնել»[1]: Իրավացի կլիներ կոչել Եզնիկի գործը «*Ճառք յանդիմանութեան*» մի պարզ ու անպաճույճ վերնագիր, որ թե՛ լեզվական և թե՛ իմաստի տեսակետից միանգամայն պարտ ու պատշաճ է մեր հեղինակի ճաշակին:

Վերնագրի խնդիրը շատ կարևոր կետ է. այստեղ է Մարիեսի աշխատության հանգույցը, այստեղ է այն նոր ջահը, որով ուզում է այլ լույս սփռել Եզնիկի գործի վերա: Անտարակույս, Մարիեսն առաջինն է, որ ուղիղ է հասկացել Եզնիկի երկի զանազան բաժինների ներքին սերտ կապը, որի հետևանքով եղած կասկածները բնագրի պակասավորության և կամ խառնակության մասին ընդմիշտ ընկնում են իրր անհիմն ենթադրություններ: Չորս գիրքը իրենց զանազան մասերով կազմում են մի ամբող-

[1] **Եզնիկ Կողբացի,** էջ 144:

ջությունն: Չենք կարող բնավ համաձայնել, որ այդ ամբողջության անունը *«Ծաղագս Աստուծոյ»* է: Մարիեսի վերլուծական տախտակն իսկ բողոքում է այս հասկացողության դեմ:

Անվիճելի փաստ է, որ Եզնիկը կանգնած է պինդ անձնիշխանության սկզբունքի վերա: Նորա բարձրությունից դիտում է կյանքի բացասական երևույթները, այն ինչ որ կոչում ենք չարիք, լինի ժողովրդական սնապաշտության և հավատալիքների աշխարհում, թե օտար վարդապետությունների և աշխարհայեցողությունների մեջ, քննում է և բացատրում է բոլորը նույն անձնիշխանության, անհատական ազատության, սկզբունքով: Եզնիկի ապագա հրատարակչին կարող էինք հանձնարարել *«Ճառք յանդիմանութեան»* գլխագիրը[1] (9):

Եզնիկի քննադատին հաջողվել է գտնել մի քանի նոր աղբյուրներ՝ և այս նորա գլխավոր արժանիքն է: Հին և նոր աղբյուրները միասին կազմում են մոտ 12 հեղինակից բաղկացած մի փունջ: Դժվար թե Եզնիկն անմիջապես այդ հեղինակներից քաղած լինի այն հատվածները, որ նմանություն ունին: Ավելի շուտով զուգադիպումներն են, որ առնված են ընդհանուր աղբյուրից: Արդարև, եթե ձեռքի տակ ունենար Որիգենեսին կամ Դիոդորոսին, մեր մատենագիրը չէր բավականանալ այս կամ այն երկտող օրինակները քաղվածելով. նորանց մոտ իրեն համար պիտանի շատ ավելի նյութեր պիտի գտներ:

Համենայն դեպս Եզնիկի գործը մի գրական գողտրիկ շենք է, թեև տարբեր նյութերից, տարբեր՝ ըստ որակի և ըստ ծագման:

Այստեղ մենք պիտի բաժանվենք առ այժմ Մարիեսից, որպեսզի կանգ առնենք մի հարցի վերա, որ մեր հետաքրքրության նյութ է և որի պատասխանը չենք գտնում Մարիեսի մոտ:

Մարիեսի աչքում ևս Եզնիկը տեսակ- տեսակ քարերից շինած մի գործ է. նա աշխատել է և հաջողել է գտնել այն թելը, որի վերա նրանք շարված են. գտել է այսպես ասած շարադրական գիծը: Բայց ի՞նչ հարաբերություն կա զանազան մասերի, զանազան քարերի մեջ, ինչպես են նրանք քովեքով եկել, նրանց այսպես ասած ծննդական (génétique) կապը, մնացել է առկախ: Քննել այս հարցը, նշանակում է որոշել, արդյոք Եզնիկը խմբագրակա՞ն գործ է, թե՞ սկզբնագիր:

---

[1] Մարկիոնի հանդիմանության առաջաբանում, որ է նախորդ, երրորդ, գրքի վերջին երկու էջը, հեղինակը կարծես թե հարցը շրջում է Աստուծո էության, հայտարարելով, «ապա ցուցցուք թէ ով է Աստուած և զինչ նորա արարածք»: Սակայն և այս հանգամանքը վկայում է միայն մի բան, որ եղծը զանազան երկերի հավաքումն, խմբագրություն է, ինչ որ պիտի տեսնենք: Հավանորեն Մարկիոնի հերքումն այլ տեղից է վերցրած, և անձնիշխանության գծի վերա հարմար, ճնակնորեն պատշաճ տեղ չի գտել:

Առնենք առաջաբանը, այն է առաջին երեք գլուխները, որ Մարիես ևս ներածություն է անվանում: Եթե մի կողմ թողնենք ինչ որ վերցրած է Արիստիդեսից և կամ ինչ որ նմանություն ունի Բարսեղի «Վեցօրեայք»-ին և մնացած մասը համեմատենք իսկական աղբյուրների՝ Ադամանտիոսի և Մեթոդիոսի հետ, առաջաբանը կներկայանա մեզ իր հիմնական և բարմատար մասերով:

Սկզբից ևեթ Եզնիկը շեշտում է Աստուծո անհասությունը, անքննությունը, որպեսզի որոշի հավատի և գիտության սահմանները առաջիկա բարձր նյութի մասին ճառելիս: Նույնը տեսնում ենք և Ադամանտիոսի առաջաբանում, ուր այլ խոսքերով միևնույն միտքն է արտահայտում. «*ἐπί τὴν ἀξιέραστον καὶ ἀξιάγαστον πίστιν τὴν εἰς θεὸν ἀφορῶντες ἐγκρατεῖς τῆς ἀμείνονος καὶ τελειοτάτης δόξης γίνονται*», այսինքն՝ «ով որ ապավեն ունի ամենասիրելի ***հավատն*** առ Աստված, նա և՛ տեր է լավագույն և՛ կատարյալ ***գիտության***» (10):

Մեթոդիոսի ներածության գլխավոր իմաստը ևս պահպանված է Եզնիկի մոտ: Պատարայի եպիսկոպոսը հակադրում է արտաքին բնությունը, նորա տևավոր երևույթների անշեղականությունը մի կողմից և ընկերական կամ մարդկային կյանքի հեղհեղականությունը մյուս կողմ արարչության տեսակետից: «Անցյալ օրը կանգնած ծովափին, - խորհում է Մեթոդիոսը, - դիտում էի բնության հրաշալիքները. խռովահույզ ծովը կուտակում էր ամեհի ալիքները, կարծես, պատրաստ էր ողողելու և լափելու երկիրը: Հանկարծ սարկի հևությամբ հետ են քաշվում ջրերը և հանդարտում իր սահմաններում: Գերագույն և աներևույթ զորության արդյունք: Նույնկերպ և երկնակամարը իր շրջանառությամբ, արևը ծագելով և մայր մտնելով, լուսինը ամսամբ և նվազելով կրում են իրենց վերա անհաս վերին ուժի ներդաշնակ տրնօրինությունը»:

«Դառնալով տուն», Մեթոդիոսը հանդիսատես է լինում այլ պատկերի, հասարակական կենցաղի ներհակ և անհաշտ երևույթների:

Այսպես բնության մեջ թագավորում է անփոփոխ ներդաշնակությունը, իսկ մարդկային կյանքում անկայունություն: Մի տեղ տիրում է մշտնջենական օրենքը, մյուսում՝ հեղհեղուկ ազատությունը:

Նույն հակադրությունը տեսարանների նկատվում է և Եզնիկի առաջաբանում: Խոսելով արեգակի, լուսնի և չորս տարրերի մասին հայ մատենագիրը ընդգծում է, որ որքան և դրանք գեղեցիկ և օգտակար լինին, իրենք այդ չգիտեն և չեն զգում: Անգիտակցությունն է այն մեծ անջրպետը, որ զատում է միմյանցից բանավոր և անբան աշխարհները: Արեգը, ջուրը, հուրը, օդն ու երկիրը «թէ իցեն և թէ չիցեն զայն ոչ գիտեն և զսպասաւորութիւնն, յոր կարգեցաւ անդադար մատուցանեն, վարելով այնր, որ

կազմեաց զնոսա»: Ուրեմն, բնության տարրերը անգիտակցորեն ընթանում են միանգամ ընդմիշտ սահմանված օրենքի համաձայն:

Օրինականության և կամ անհրաժեշտության սկզբունքը արտահայտում է Եզնիկը մի հրաշալի պատկերով, ուր Աստուծուն նմանեցնում է զարմանալի կառապանի, որ վարում է աշխարհը «իբրև զկառս լծեալ ի չորից երիվարաց», այն է չորս տարրերից:

Օրենքի աշխարհին կից տեսնում ենք մարդու ընկերային միջավայրը «չի անհարթություններով», այսինքն՝ բարվո և չարի խառնակ երևույթներով:

Արդ «ուստի են չարիք, ուստի են աշխատությունք, ուստի՞ են ըկանք» ահա այն կնճիռը, որ լուծել է ձգտում հեղինակը:

Ադամանտիոսի մոտ ընդունված ճև է, որ երկու կողմերը նախքան վեճի բռնվիլը պարզում են իրենց տեսակետը. այնուհետև միայն բացվում է տրամախոսությունը:

Այսպես է եղել և Եզնիկի նախակաղապարում: Հավատարիմ նույն սովորության, առաջաբանը հայտարարում է, որ բնության իր ներդաշնակության մեջ անփոփոխ օրենքը, նորա «գեղեցկությունը», ծագում է Աստուծուց, իսկ հասարակական կյանքի չարության և բարության պատճառն է անճնիշխանությունը» (*αὐτεξουσία*) : Ահա ինչո՞ւ «չիք ինչ չար, որ բնութեամբ չար իցէ և ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարեաց»:

Հակառակորդի տեսակետն է, որ բարին «ի բարւոյ արարչէ է», իսկ չարի աղբյուրը հյուլեն է կամ նյութը:

Այսպիսով Եզնիկի ներածությունը իր ներկա ճևով նման է կարծես մի կրկնագրի, որի մեջ նկատելի են հիմնական և բարմատար մասեր: Հիմնականը բաղկացած է եղել երեք եղածներից.

ա. Հավատ և գիտություն, բ. Բնական օրենքներ, որ անհաս են և անճնիշխանության միջավայր, որ քննելի և գիտելի է, գ. Երկու հակառակ տեսակետ քննելի միջավայրի կամ չարի և բարվո ծագման վերաբերյալ: Թարմատար են մնացյալ հավելումները, որ ծանրաբեռնել և սքողել են հիմնականը և տվել նորան արդի կերպարանքը: Կարծես թե հին նյութերը վերստին խմբագրված են:

Սույն բնավորությունն է կրում և Եզնիկի գործի ամբողջությունը, այսինքն՝ այստեղ ևս նշմարելի են երկագրության կամ վերախմբագրության գծերը:

Մարիեսը Եզնիկի երկը բաժանում է երկուսի. առաջին մասը ընդգրկում է Ա, Բ, Գ գրքերը, իսկ երկրորդը՝ վերջին գիրքը: Այլև առաջին մասը վեր է ածում երկու հատվածի:

Թվում է, թե այսպես է վարվել Մարիեսը Ադամանտիոսի տրամախոսության ազդեցության տակ: Ինչպես երևում է, նույն Ադամանտիոսի հե-

անությամբ է, որ ծննդյան է առել Մարիեսի մտքում «*Ծաղագս Աստուծոյ*» վերնագիրը:

Աղամանտիոսի տրամախոսության մեջ առաջին վիճաբանողը ոմն Մեգեթիոս է, որ պաշտպանում է Մարկիոնի վարդապետությունը: Նրան հետևում է Մարկոսը, որ նույնպես կողմնակից է Մարկիոնի ուսմանց: Միջնորդ դատավորը ոմն Եվտրոպիոս երկու կողմերը լսելուց հետո կարդում է իր վճիռը:

Այնուհետև հրապարակ են գալիս հաջորդաբար շարունակելու վեճը Մարինոս, Դրոսերիոս և Վալենտոս, որոնք բոլորեքյան կանգնած են գնոստիկ Վալենտինիանոսի տեսակետի վրա և ջատագով են նրա հայացքների: Վերջը դարձյալ նույն դատավորը արձակում է իր վճիռը:

Քանի որ երկու անգամ է միայն դատավորը որոշում տալիս, տրամախոսությունը բաղկացած պետք է համարել երկու բաժնից, ովիրված երկու· աղանդավորների՝ Մարկիոնի և Վալենտինիանոսի ուսմանց քննության: Այսպես է բաժանված Աղամանտիոսի գործը նորա նոր և քննական հրատարակության մեջ[1]:

Աղամանտիոսի աշխատության կերտվածը խիստ կարևոր է Եզնիկի կազմը և շենքը հասկանալու համար:

Տրամախոսության մեջ վիճաբանությունը սկսվում է Մարկիոնից և կրում է դավանաբանական բնույթ, ինչպես կարելի է տեսնել Աղամանտիոսի credo-ից և դատավորի վճռից: Միանգամայն հասկանալի է, թե ինչո՞ւ համար Աղամանտիոսի գործը կոչվում է *Περὶ τῆς εἰς θεὸν ὀρθῆς πίστεως*, «*Ծաղագս որ յԱստուած ուղիղ հաւատոյ*»:

Այլ կարգ է Եզնիկի մոտ: Այստեղ առաջին տեղը բռնում է Վալենտինիանոսը և վեճը բոլորում է չարի խնդրի շուրջը: Առաջին գրքի սկզբի գլուխները Ա-ԺԴ, ազատ թարգմանություն են Մեթոդիոս Պատարացու (կամ Օլիմպիացու) գրվածքի: Մեթոդիոսից է քաղում նաև Աղամանտիոսը Վալենտինիանոսի վերաբերյալ էջերը:

Հետևյալ ԺԵ-ԻԷ գլուխները կազմում են առանձին հոդված նույն հարցի առթիվ: Սորա սկսվածքը, որ է՝ «արդ յետ այսր ամենի հաւանութեանց յամառեալ զնոյն ի մէջ բերին», արդեն ցույց է տալիս, որ այս հատվածը այլ ծագում ունի, քան նախընթաց գլուխները:

Նույն առաջին գրքի վերջին ԻԸ գլուխը ամփոփումն է վիճաբանության, կարծես թե դատական որոշում, ինչպես Աղամանտիոսի մոտ: Եվ ապա հայտարարվում է, որ վեճը անցնում է պարսից քեշին:

Այս բաժինը բռնում է երկրորդ գրքի Ա-ԻԳ գլուխները: Հետաքրքրական

---

[1] **Dr. W. H. Van de Sande Bakhuyzen**, Περὶ τῆς εἰς θεὸν ὀρθῆς πίστεως, 1901.

է նկատել, որ ԻԳ գլխի վերջին տողերը դարձյալ արձագանք են դատական վճռի. «Եվ յայս ամենայնէ յայտնէ, եթէ ոչ է բնութեամբ չար այլ կամօք» և այլն: Սորանով վերջանում է պարսից կրոնի հերքումը:

Երկրորդ գրքի մնացած մասը սկսված ԻԴ[գլխից] նվիրված է աստեղագետների և նրանց նմանների ուսմունքին:

«Քայց քանզի ի նմին յամառութեան կան, զամենայն ինչ կենդանի և շնչաւոր համարելով, ոչ հեղգասցուք և այնմ ևս առնել պատասխանի», այս խոսքերով հեղինակն անցնում է երրորդ գրքին, որն, ակներև, նույն վիճաբանության շարունակությունն է, միայն թե հեղինակի աղբյուրն է փոխված, կամ ինչպես Աղամանտիոսի մոտ է, մի երկրորդ անձն է առաջ գալիս, նույն դրությունը պաշտպանելու շատ թե քիչ տարբերությամբ:

Սույն վեճը կլանում է ամբողջ երրորդ գիրքը մինչև վերջին գլուխը: Վերջին, այն է՝ ԺԷ գլուխը, նորեն մի տեսակ եզրափակություն է վիճաբանության, դատական վճռի նման, որ նշան է գրույցի ավարտման:

Եզրափակությունը, սակայն, գրավում է միմիայն ԺԷ գլխի առաջին երկու տասնյակի չափ տողերը: Սրան հաջորդում է մի հատված, որը սկսվում է. «և բազում պատճառք էին և այլն», որ ոչ այլ ինչ է եթե ոչ Մեթոդիոսի գրության վերջին մասը: Եվ ապա մի ներածականով, որ նույն ԺԷ գլխի վերջին մասն է սկսած՝ «և արդ ի զուր ջանաս» (էջ 270), հեղինակն անցնում է մարկիոնականության քննության, որին հատկացրած է ամբողջ վերջին, այն է՝ չորրորդ գիրքը[1]:

Ուշադրության արժանի՝ Մեթոդիոսի կտորը, երեք էջ՝ 236-239, նրա իսկական տեղն է Ա գրքի ԺԴ գլխից հետո: Եզնիկն այստեղ, ԺԴ գլխով ընդհատում է Մեթոդիոսի փոխառությունը: Սորանով իսկապես ավարտվում է չարիքի մասին տարած վեճը: Այնուհետև խոսակիցը, ուրեմն Վալենտինիանոսը նորեն դառնում է հյուլեի խնդրին և հարց տալիս. եթե հյուլեն սկզբնակից չէ Աստծուն և առաջ գոյություն չուներ, ինչո՞ւ այժմ գոյություն ունի և ինչո՞ւ համար է Աստված նորան ստեղծել:

Ահա այս հարցի պատասխանն է ամփոփում հիշյալ կտորը:

Արդ ինչպե՞ս է պատահել, որ սա անջատվել է մայր բնագրից և ընկել այնքան հեռու, այսինքն՝ Ա գրքի ԺԴ գլխից ընկել է Գ գրքի ԺԷ գլուխը: Չափազանց կարևոր հարց, որի պատասխանը կարող է հեղաշրջել մեր ավանդական հասկացողությունը Եզնիկի մասին, այլ կերպ ներկայացնելով մեզ նորա գործի ճարտարապետությունը:

---

[1] Այս ներածականը իսկապես պատկանում է հետևյալ գրքին, և նոր հրատարակության մեջ պետք է այդպես էլ գետեղել, ինչպես որ առաջին հրատարակիչն Աբրահամ վարդապետն է արել և ի զուր վեճերիցդ փոխել են:

Անջատումն տեղի է ունեցել, շնորհիվ միջամուխ հոդվածների, որոնք ներս մտնելով սեպի պես ճեղքել և բաժանել են Մեթոդիոսի գրությունը երկուսի: Եթե հանենք հեռացնենք նրանց զատող հոդվածները, Մեթոդիոսի գործը պառակտված կտորի միջոցով անմիջապես կմիանա Գ գրքի, կամ Մարկիոնի ուսմունքին: Կստանանք մի նախակաղապար, բաղկացած միմիայն Վալենտինիանոսի և Մարկիոնի վարդապետությանց նվիրված վիճաբանություններից: Այս եզրակացությունը գայթակղիչ է մանավանդ նրանով, որ ինչպես վերև տեսանք՝ Ադամանտիոսի գործը ևս ճիշտ այդ երկու աղանդավորներով է զբաղված մի ձևական տարբերությամբ, որ այստեղ առաջ Մարկիոնականն է վիճում, հետո Վալենտինականը:

Ի նկատի ունենալով Եզնիկի խնամությունը Ադամանտիոսի հետ, անհիմն չի լինել ենթադրել, որ հայ մատենագրի հույն նախակաղապարը նման կազմ է ունեցել: Պարսից և հույն կրոնների հերքման միջամուտ հավելումով նախակաղապարի ամբողջությունը քակտվել է և Վալենտինիանոսի գիրքը անջատվել Մարկիոնից, և երբեմնյան միության հիշատակը պահել է մեզ Վալենտինիանոսի զրույցի կտոր, որ մնացել է կառչած Մարկիոնի ներածականի սկզբում:

Կարևորը, սակայն, այդպիսի նախակաղապարի գոյությունը չէ, թեև նա հասկանալի կկացուցաներ մեզ, թե Եզնիկի մերձավորությունը Ադամանտիոսին և թե այն շեղումները, որ նկատվում են նորա մոտ Մեթոդիոսի գործի թարգմանության մեջ: Այս բոլորը կարելի էր վերագրել ենթադրյալ նախակաղապարին:

Կարևորը միջամտության փաստն է, այն որ առաջին գրքի ԺԵ գլխից մինչև երրորդ վերջընթեր գլուխը համեմատաբար նորամուտ մասեր են: Չենք ուզում ասել, որ դրանք անհարազատ միջանկներ են (interpolation): Մենք պաշտպանում ենք այն միտքը, որ դրանք այլ աղբյուր, այլ ծագում ունին երկի ճարտարապետության, կառուցումի տեսակետից: Անցնենք դրանց քննության:

Աղանդների հանդիմանությունը լոկ տեսական, այսպես ասած, գիտական հարցասիրության նյութ չէ Եզնիկի համար: Նա ունի և գործնական նպատակներ: Քննելով և տապալելով խոշոր վարդապետական սիստեմները, նա աշխատում է վանել ժողովրդի մեջ արմատացած շրջուն գաղափարներն ու հավատալիքները, մշակված դարերի ընթացքում հակաքրիստոնեական ուսմունքների տակավին մթնոլորտում, աշխատում է հնացած մեռած աշխարհայացքների մնայուն ստվերները վանել քրիստոնեական գիտության լույսով:

Այդպիսի գործնական նշանակություն ունի առաջին գրքի երկրորդ մասը ԺԵ-ԻԷ, այսինքն՝ առաջին մեծ հոդվածը այն բաժնի, որ անվանեցինք

միջամուխ: Ժողովրդական կենդանի միջավայրից առած թանկագին նյութեր են, որ բերում է Եզնիկն ու լուսաբանում, պայքարելով հին տեսության հետ, հայ ժողովրդի հավատալիքների և պաշտամունքների աշխարհին վերաբերյալ հնավանդ տեղեկություններ են, շողում գոհարներ հայ ֆոլկլորի, որ փայլում են Եզնիկի էջերում:

Այդ մասին կխոսինք առանձին հոդվածում (11), ի նկատի ունենալով նյութի կարևորությունը, այլև չուզենալով ծանրաբեռնել ներկա գրությունս: Հիշենք միայն այսքան, որ ԺԵ-ԻԷ միջամուխ գլուխները, մեր կարծիքով, քաղվածո բնավորություն ունին և բացի արդեն հայտնի աղբյուրներից, ինչպես, օրինակ, Հիպպոլիտոսը, Եզնիկն օգտվել է նաև մի հին հիշատակարանից, որ կոչվում է «Հարցումն և պատասխանիք Սրբոյն Գրիգորի Պարթեւի»: Սորան է պարտական Եզնիկը մանավանդ հայ ֆոլկլորի վերաբերյալ թանկարժեք նյութերը:

Այսպիսով Եզնիկի առաջին գիրքը բաղկացած է երկու տարբեր տարրերից. հիմնական կամ բարգմանածո *բնագիր* (Ա-ԺԴ) և երկրորդական կամ թարմատար *հավելում* (ԺԵ-ԻԷ):

Մեզ թվում է, որ երկրորդ գիրքն ևս իր կազմով նման է առաջինին, այն է, ունի հիմնական մաս և հարակից առանձին հարցերի և նրանց մեկնության ընդլայնված հավելում:

Հիմնական են համարելի Ա-ԺԲ գլուխները, ուր քննվում է պարսից քեշը կամ զրվանականությունը և հերքվում:

Հետևյալ մասը զբաղվում է ժողովրդական հավատալիքների հետ կապված մի շարք հարցերով, որոնք պահանջում են նոր լուսաբանություն, քանի որ հին պատասխանները, որ ծագում էին զրվանականությունից, բյուր ու մոլար պիտի ճանաչվեին նույն վարդապետության հերքումով:

Առաջին հարցն է. եթե չարը իբր սկզբունք ինքնուրույն հեղինակ չունի, եթե սատանան ևս ի բնե չար չէ, և մյուս կողմից Աստված անմասն է չարին, ապա որտեղի՞ց է մահը, և կամ արդյոք առաջուց որոշված է կյանքի սահմանը, թե ո՛վ երբ պիտի մեռնի. ուրիշ խոսքով, ճակատագիր կա՞, թե չէ, ինչպես պնդում են աստղագետները: Սրան պատասխանում են ԺԳ, ԺԴ և ԺԵ գլուխները:

Իսկ եթե ճակատագիր չկա, ինչպե՞ս հասկանանք Աստուծո կանխագիտությունն ու կանխահատուցումն: Այս հարցին հատկացրած են ԺԶ և ԺԷ գլուխները:

Անձնիշխանությունն է պատճառ չարության և բարության: Առանց ընտրության իրավունքի մարդիկ կնմանեին անբան և անպատասխանատու անասուններին, որոնք գործում են հիշողությամբ և բնազդով և ոչ գիտակցորեն:

Բայց ինչպե՞ս հաշտեցնել գիտակից արարմունքի հետ բնազդից բղխած թելադրանքները, որոնք հատուկ են մարդուն ինչպես և նախագուշակ երազները:

Հեղինակը իր բացատրության մեջ ստիպված է հաշվի առնել և դևի մասնակցությունը մի քանի դեպքերում, ուստի և խոսքը կնքում է նորեն սատանային դառնալով: Այս հարցը քննում է ԺԸ-ԻԳ գլուխները:

Երկրորդ գրքի սույն երեք հատվածները՝ ճակատագրի, կանխագիտության և բնազդի վերաբերյալ, Եզնիկի գրական շենքի մեջ նույնպիսի քարեր են, որպիսի առաջին գրքի երկրորդ մասը՝ ԺԵ-ԻԷ գլուխները, որ կոչեցինք քարմատար:

Հավանական էր, որ սրանք ևս առնված են մի տեսակ հարցարանից, նման Գրիգորի հարցմունքի: Առաջին՝ ճակատագրի հատվածը, որ սկսվում է ԺԳ գլխից, իրենից անմիջապես առաջ ունի մի հետաքրքրական խոստովանություն. «հրամանացն ևս հարցուածք սովին մտօք լուծանին»: Կարծես, մի ակամա ակնարկ է գրավոր հիշատակարանի՝ *հարցվածք* և *լուծումն* սովորական տիպարի[1]: Ճիշտ է, ճակատագրի և բնազդի վերաբերյալ տեսությունները կրում են, ինչպես կտեսնենք ստորև, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ի ազդեցությունը, բայց այդ կարող էր լինել և Հարցարանում:


Կանխագիտության նայող հատվածը՝ ԺԶ գլուխը, սկսվում է «բայց զայն ևս գիտել պարտ է» բառերով, որ ակնհայտորեն շատ է նոր աղբյուրին: Առաջին գրքում Գրիգորի հարցմունքից քաղած մասերը ընդմիջված են մի հատվածով, որ նմանապես սկսվում է «բայց և զայն ևս պարտիմք գիտել» նախադասությամբ (գլ. ԻԳ): Երկու դեպքում էլ խոսքը ի գրոց է, այսինքն՝ Ս. Գրքի վերա հիմնած: Գուցե սրանք Հարցարանից դուրս են և հեղինակի կողմից գիտական հավելումներ:

Երկրորդ գրքի վերջին հինգ գլուխները ԻԴ-ԻԸ, իսկապես, պատկանում են երրորդ գրքին, ուր հերքվում է հույն իմաստունների հայացքները: Անհավանական չէ թնավ, որ սրանք ուրիշ ծագում ունենան, քան երրորդ գիրքը: Փոխանցման նախադասությունը ԻԴ գլխի վերջին, «բայց քանզի ի նմին յամառութեան զան և այլն» թվում է արդարացնում է մեր ենթադրությունը: Այս դեպքում և հույն կրոնքներին նվիրած մասը կրաժանվի մյուս գրքերի նման երկուսի, հիմնական, որ է երրորդ գիրքը և երկրորդական

[1] Նկատենք, որ էջ 153 տող 9, հետևում է մի հատված՝ «և միանգամայն հրամանացն ևս հարցուածք սովին մտօք լուծանին», որի քննությունը քննում է ԺԳ-ԻԱ գլուխները, և անմիջապես կապված չէ նախընթաց ԺԲ գլխի հետ, ուր խոսած է սատանայի մասին: Թվում է, որ ընդհատված թելը վերստին կանգնում է, սկսած 180-րդ էջ վերջին տողից, ուր նորեն սատանայի մասին է զրույցը՝ «և փորձել այնչափ իշխէ» և այլն:

կամ թարմատար, որ մի տեսակ ներածականի բնույթ ունենալով զետեղված է հիմնականին առաջ, նախընթաց ԻԴ-ԻԸ գլուխները:

Հետազոտության արդյունքը կարող էինք ներկայացնել պատկերորեն հետևյալ տախտակով:



Այսպիսով, Եզնիկի գործի ճարտարապետությունը կազմված է երկու մասից, Վալենտինիանոսի և Մարկիոնի հանդիմանությունները մի կողմից, և՛ պարսից և՛ հույն իմաստասերների հանդիմանություն՝ մյուս կողմից: Այլ և վերջինս ունի հիմնական մասեր, համազոր առաջինի, և երկրորդական կամ թարմատար լրացումներ:

Հիմնականները ծագումով տարբեր են թարմատարներից: Վալենտինիանոսի հանդիմանությունը, ինչպես հայտնի է, Մեթոդիոսի **«Ցաղագս ինքնիշխանութեան»** գրվածքի հայացումն է:

Մարկիոնի հերքումն նմանություն ունի Աղամանտիոսի «Ցաղագս ուղիղ հաւատոյ յԱստուած» տրամախոսության:

Անուրանալի է և նրա խնամությունը Ս. Եփրեմի և Իրինեոսի նման գրություններից, ինչպես ցույց է տալիս Մարիես: Ինչևիցե, աղբյուրը ամեն

---

[1] Գ-բդ գրքի ժէ գլուխը պիտի բաժանել երեք մասի՝ ա) սկզբից մինչև հետևյալ էջ 5 տող. բ) էջ 236, տող 6-240, տող 8. գ) էջ 240, տող 9 - մինչև վերջ:

դեպքում անկասկած է, որ Մարկիոնի մասը ևս օտար բնագրի հայացումն է՝ նման Մեթոդիոսի գրության:

Ավելի քան հավանական ենք համարում, որ հայի հույն կաղապարում Մեթոդիոսի ընդդեմ Վալենտինիանոսի և անհայտ հեղինակի ընդդեմ Մարկիոնի գրվածքները միասին մի գործ են կազմելիս եղել այս կամ այն ձևով, նման Աղամանտիոսի, թե՞ մի այլ կերպ:

Այսպիսի մի դրություն ենք ենթադրում և միջամուտ մասի հիմնական հոդվածների նկատմամբ: Կարծում ենք, որ պարսից քեշի հերքումը, ինչպես և հույն փիլիսոփաների հայացքները, ոչ միայն թարգմանություն են օտար բնագրից, այլև հավանորեն միասին են եղել, մի հատոր են կազմել նույն բնագրում: Կանգ առնենք մի րոպե այս կարևոր հարցի վրա:

Պարսից քեշին նվիրած էջերը շատ մոտ աղերս ունին Թեոդորոս Մոպսուեստացու մի գրության հետ: Վերջինս մեզ չի հասել, բայց նորա բովանդակության մասին հակիրճ հաշիվ է տալիս բազմերախտ Փոտը իր Մատենադարանում: Թեոդորոսի գրությունն այնքան կարևոր է, որ վաղուց իր վերա է հրավիրել իրանագետների ուշադրությունը: Շատերի աչքից չի խուսափել Թեոդորոսի նկատողության նմանությունը Եզնիկին[1]: Բայց Մարիեսն առաջինն է, որ հարց է հարուցանում, արդյոք հայ հեղինակը կախում չունի Թեոդորոսից:

Եզնիկի զրվանականության նվիրած ճառում Մարիես որոշում է երկու շերտ, երկու հերքում և այն կարծիքն է ուզում հայտնել, որ մեկի աղբյուրը կարող է Դիոդորոս Տարսոնացին լինել և մյուս նորա աշակերտ Թեոդորոսը:

Սակայն, եթե երկվության ծագումն շիտակ ըմբռնենք, կարիք չի լինել տարբեր աղբյուրներ որոնել:

Ինչպես հայտնի է, պարսից քեշը մի քանի ճյուղեր ուներ: XII դարի հեղինակ Շահրեստանին որոշում է երեք դավանություն՝ զրադաշտական, գայումարթյան և զրվանական: Առաջինը ուսուցանում էր, որ Որմիզդն ու Ահրիմանը համագոյ են *a principio*, երկրորդը՝ որ Որմիզդն ու Ահրիմանը սկիզբն են առել Զրվանից, այն է ժամանակից[2]:

Դամասկիոսի ասելով, Եվդեմոս Ռոդոսացին, որ Արիստոտելի աշակերտներեն էր, գիտեր, որ կան երկու տեսակ մոգեր, կամ մոգական ուսմունք, մեկը ամեն բանի սկիզբն էր համարում տեղը (իմա՛ *տարածությունը*), մյուսը՝ ժամանակը. *Μάγοι... οἱ μὲν τὸπον οἱ δὲ χρόνον καλοῦσι τὸ νοητὸν ἄπαν*[3]:

---

[1] **Spiegel**, Eran. Altert. II, 184. **Darmesteter**, Ohrmazd et Ahriman, p. 338. **Casartelli**, La philosophie religieuse du mazdéisme, p. 5. **Joh. Mich. Schmid**, Wider die Secten des Eznik von Kolb. p. 90.

[2] **Katt. Pettazoni**, La religione di Zarathustra, p. 189.

[3] **Frag. ph. gr.** III, p. 289. **Darmesteter**, op. cit., p. 335.

Հետաքրքրական է, որ ըստ Ավեստայի (**վենդ**. 19, 13, 16) Ահուրա-Մազդան է, որ ստեղծում է տարածությունը *thwasa* և ժամանակը՝ *zrvan*.

Ժամանակի հասկացությունն, որ կապ ունի շարժուն երկնակամարի հետ, որը համարվում էր և՛ չարի և՛ բարվո տնօրեն, բնականորեն, ստանում է և բախտի նշանակություն, իսկ տարածությունը, երկնային անհուն տարածությունը իր պայծառությամբ նույնանում է լուսո գաղափարի հետ[1]: Այսպիսով *χρόνος* և *τόπος* կամ *zrvan* և *thwasa* զուգորդվում են *baxta* և *farr,* բախտի և փառքի հետ:

Եզնիկն հենց սկզբից հայտնում է, որ Զրվան «բարգմանի բախտ կամ փառք»: Ասել է, թե նա ի նկատի ունի զրվանականության երկու ճյուղերը, որոնցից մեկը ընդունում է զրվան-բախտ և մյուսը զրվան-փառք վարդապետությունը: Հիրավի, առաջին վեց գլուխները նա հատկացնում է զրվան-փառքի քննության և հերքման, իսկ հետևյալ վեցը՝ զրվան-բախտին:

Արդ այս մեկնությամբ ընկնում է տարբեր աղբյուրների ընդունելու անհրաժեշտությունը: Եզնիկը կարող էր միևնույն հեղինակի մոտ գտնել իր երկփեղկ ընդդիմությունը: Եվ այդ հեղինակը, հավանորեն, Թեոդորոս Մոպսուեստացին է: Սրան է պարտական Եզնիկն ոչ միայն պարսից քեշի, այլև հույն իմաստասերների հանդիմանության հիմնական բնագիրները: Թեոդորոսի գրության կազմը հիմք է տալիս մեր կարծիքին:

Փոտի ասելով Մամուեստայի եպիսկոպոսի գրքույկը բաղկացած էր երեք գլխից կամ ճառից: Առաջին ճառը վերաբերում էր մոգական կրոնի քննության, իսկ մնացյալ երկուսը պարզում էին ճշմարիտ հավատի էությունը:

Ահա ինչ է ասում մոգության մասին. «Առաջին ճառում առաջ է բերում պարսից պիղծ հավատը, որ ավանդել է Զարադը, և որը վերաբերում է Զրվանին, որին սկիզբն է համարում ամեն բանի և որին կոչում է նաև բախտ: Եվ թե ինչպես զոհում է, որ ծնի Որմիզդին, բայց ծնում է բախտը և սատանային: Խոսում է նաև նրանց *արհնապղծության* մասին: Մի խոսքով ամբարիշտ և խայտառակ հավատը կետ առ կետ մեջ բերելով, քննում է առաջին ճառում»[2]:

---

[1] **Darmesteter**, op. cit., p. 338. **Casartelli,** op. cit., ավելի պարզ մեկնություն է տալիս, հենվելով Շահնամեի մի տողի վրա, ուր ասում է որ *zaman* ունի իր *zamane*, այսինքն՝ ժամանակն իր դծբախտությունները: *Zrvan* իբր նույնանիշ *zaman*-ի կարող էր սահմանել *zamane*-ի նման բախտի նշանակություն: Եթե ի նկատի ունենանք, որ Աստուծո գաղափարը հնում արտահայտվում էր *dhaga* բառով, որ նշանակում է բաշխիչ (հավանորեն, երկնային լույսի) և որից է և *baxta* բաշխյալ, բնական կլիներ տեսնել հնության արձագանգ, հին Աստուծո հատկությունը վերաբերած բարեկենյան աշխարհից առած (համեմատաբար ցոր) զրվան հասկացողության:

[2] P. G., 103, col. 281. բնագիրը բերած ենք «Մաշքոց և նրա աշակերտները» հոդվածում, տե՛ս «Հանդես Ամսօրյա», 1925: Բերված է նաև Մարիեսի մոտ՝ «Le de Deo d'Eznik de Kolb», Paris, 1924.

Այստեղ հիշված Զարադը հայոցի Զրադաշտն է, Զարադուստրան: Զրվանի ուսմունքը, իսկապես, Զրադաշտին չի պատկանում, ինչպես երևում է վերև հիշած Շահրեստանի վկայությունից: Բայց Թեոդորոսը, ինչպես և Եզնիկը վերագրում են Զրադաշտին:

Արեգապղծության հիշատակությունը ակնարկ է Որմզդի խառնակության իր հարազատ մոր և քրոջ հետ, որպեսզի ծնե արևն և լուսինը: Եզնիկը հիշում է երկու ավանդություն, որից մեկը տալիս է Զրադաշտին. «արդ զմին Զրադաշտ ոմն զեղխագործութեան (փոխ.ի, զեղխագործութիւնէ՞) դնէ, եթէ ի մայրենի և ի քեռական առականաց արեգակն և լուսին արարան»[1]: Նույնը կրկնում է Բ, 3՝ «և ապա մայրենի և քուրական (!) առականօք զարարած լուսաւորացն մուծանէ»: Դարձյալ՝ Բ, 8՝ «արդ եթէ իմաստուն էր, ընդ մօրն մտանէր և արեգակն որդի լինէր և ընդ քեռն անկանէր և լուսին ծնանէր»:

Թեոդորոսի գրությունը զուգադիպում է Եզնիկին և Զրվանի բախտ կոչումով, *Ζουρουάμ... ὃν καὶ Τύχην καλεῖ*. Եթե Զրվան բառը իրոք բախտ նշանակեր, զարմանալի չէր լինի այս զուգադիպումը: Բայց որովհետև երկու բառերը իրար մոտ է բերում և միացնում միայն վարդապետական մեծ կամուրջը, և ուրիշ տեղ չենք գտնում նման հիշատակություն, ուստի պետք է ենթադրել, որ շատ մոտիկ աղերս կա երկու հեղինակների մեջ, աղերս որ նույնանում է փոխառության հետ[2]:

«Երկու մյուս ճառերում Թեոդորոսը բացատրում է, թե ի՞նչ է ճշմարիտ հավատը, սկսելով արարչագործությունից, բացատրում է նաև շնորհի հանգամանքները նույն ոճով, թեև համառոտակի»:

Այս Թեոդորոսը թվում է, թե Մոպսուեստացին է, ավելացնում է Փոտը, «որովհետև Նեստորի աղանդի մասին մանավանդ երրորդ ճառում նախաբարոզ է լինում պարզորեն, այլ և բարբաջում է մեղավորների վերականգնման մասին»:

Բարսեղ Կեսարացին *«Վեցօրեայք»-ի* մեջ հաճախ կոչ է անում հեթանոս, առավելապես, հույն իմաստասերների հայացքներին, մեջ է բերում

---

[1] Եզնիկ Կողբացի, Բ, 9:

[2] Թե որտեղից է առնում ինքն Մոպսուեստացին, այդ խնդիրը մեր անմիջական զբաղմանն նյութ չէ: Սկզբնական աղբյուրն, անշուշտ, պահլավական է, օր. Minok-i-xrat հայոցի հիշատակարանը գիտե, որ Զրվանը նույնանիշ է բախտի կամ այդպես է կոչվում, տե՛ս Darmesteter, Ohrmazd, էջ 318: Եղեսիա իր հռչակավոր դպրոցով վաղ ժամանակվանից գիտության լուսատու ջահ էր և խոշոր անուններ ուներ, որոնք ամեն տեսակ հերետիկոսության դեմ ոգորել են: Կիլիկիա և Ասորիք, Թեոդորոսի գործունեության վայրերը, հեռու չէին Եղեսիայի լուսավոր սրճոլորտից:

նրանց վարդապետությունը, հիշատակում է նաև աստղագետների ուսմունքը, որպեսզի ցույց տա նրանց տկարությունը, հերքե և փոխարենը սերմանե քրիստոնեական հավատից բղխած ճշմարիտ տեսություններ և մեկնություններ:

Շատ կետերում նկատվում է մոտ առնչություն Բարսեղի և Եզնիկի մտքերի մեջ, առնչություն, որ երբեմն նույնանում են և լեզվական դարձվածներով:

Արդ Թեոդորոսի երկրորդ և երրորդ ճառերը կարող էին *«Վեցօրեայք»-ի* հետ ընդհանուր գիծ ունենալ և արարչության հարակից և նրա առթիվ հարուցանելի խնդիրների քննությունն ու լուսաբանությունը պարունակել: Այս դեպքում Թեոդորոսի երկու ճառերը կմոտենային իրենց բնավորությամբ Եզնիկի երրորդ հիմնական բնագրին, ուր քննվում է աստեղագետների և փիլիսոփաների ուսմունքը:

Թեոդորոսը երրորդ ճառում խոսում է շնորհի մասին, այսինքն՝ Քրիստոսի մարդեղության: Եզնիկն ևս ճիշտ համեմատելի մասում (Գ, 16-րդ գլխում), բոլոր կրոնների տեսությունից հետո, կանգ է առնում այն հարցի վրա: Ուշագրավ է մանավանդ, որ մեկնել կամենալով թե «ընդէր յամեաց գալուստն» Քրիստոսի՝ բերում է բժշկի օրինակը[1], որը գտնում ենք Որիգենեսի մոտ, և որը նորանից անցել է մյուս հայրերին, ինչպես ցույց է տալիս Մարիեսը[2]: Նույն քննադատը մատնանիշ է անում և մի ուրիշ օրինակ, որ հավասարապես գտնում ենք Եզնիկի և Որիգենեսի մոտ[3]: Այս կետերը ևս մերձեցնում են Եզնիկին Թեոդորոսին:

Փոտ պատրիարքը դժգոհ է, որ Թեոդորոսը բարբաջում է մեղավորների վերականգնման մասին: Խոսքը *ἀποκατάστασις*-ի մասին է, մի հասկացողություն, որ հեղինակը Որիգենեսն է[4], և որ հետագայում խոտելի համարվեց եկեղեցու կողմից:

Արդ այս հանգամանքը կապում է Թեոդորոսին գաղափարական թելով հռչակավոր Աղեքսանդրացու հետ: Որիգենյան նյութերը, ուրեմն, Թեոդորոսից կարող էին անցնել Եզնիկին: Սրանով մեր ենթադրությունը Եզնիկի և Թեոդորոսի հարաբերության մասին մի նոր ենթուկ է ստանում:

Կա ավելի կարևոր փաստ: Փոտ պատրիարքը վկայում է, որ Թեոդորոսի մեզ զբաղեցնող ճառերը ուղղված են եղել մի հայ քորեպիսկոպոսի, որի

---

[1] **Եզնիկ Կողբացի**, Գ, 16, էջ 233:

[2] **L. Maries**, Le De Deo d'Eznik de Kolb, p. 58.

3 Անդ, էջ 56:

[4] **J. Tixeront**, Histoire des dogmes, I, p. 327.

անունը հնչում է *Μαστώβιος* Մաստուբիոս: Խոսքը, անտարակույս, հայ լուսավորության հայր Մաշթոցի մասին է: *Μαστώβιος*-ը ուղղելու է *Μαστούζιος*: Մեր դիտողություններն այս առթիվ հայտնել ենք առանձին հոդվածում և պարզել այն հիմքերը, որոնք թիկունք են տալիս մեր կարծիքի[1]: Մաշթոցի համար գրված երկը, իհարկե, կարող էր տրամաղրելի լիներ նրա սիրասուն աշակերտին՝ Եզնիկին:

Թեողորոսի գրության մերձավոր առիթը հայտնի չէ: Հայ գրի անխոնջ աշխատավորը կարող էր իր որոնումների ժամանակ հարաբերության մեջ մտած լինել նորա հետ:

Հայաստանը միայն աշխարհակալների քաղաքական տենչանքների մրցարան չէր, այլև կրոնական և գաղափարական մեծ շարժումների, հին և նոր քաղաքակրթությանց նշանավոր հանգույց: Հնարավոր է, որ Մաշթոցը բացի տեսական, հարցասիրական կարիքից, ունենար և որևէ գործնական շարժառիթ, ասենք, մոլար ուսմունքների տարածման իրական թե սպառնացող վտանգի դեմ մաքառումը:

Մաշթոցին մատչելի գրականությունը սեփականություն կարելի է համարել նրա դպրոցի: Եզնիկն, իբր նրանցից մեկը, հնարավորություն ուներ օգտվելու Թեողորոսի առ Մաշթոց գրած գործից այս կամ այն չափով:

Ուշի-ուշով դիտելով Եզնիկի երկը՝ «Եղծ աղանդոց»-ի բնագիրը, իր ներկա կացությամբ, գալիս ենք այն եզրակացության, որ նա հերյուրված է երկու տեսակ նյութից, հիմնական և թարմատար: Մեկը՝ դրա դրական շենքի քարերն են, մյուսը՝ շաղաղ: Դրանք տարբեր են ծագումով և արժեքով:

Արդ դրանց իրար մոտ բերել և շարել կանոնավոր գծերով նուրբ խմբագրական գործ է, մի տեսակ վերագրություն այն մտքով, ինչ որ ասացինք առաջաբանի նկատմամբ: Հիմնական անվանածս մասերը, անկասկած, թարգմանածո են, և ոչ միայն գնոստիկների հանդիմանությունը, որ Մեթոդիոսի հայացումն է, այլև Մարկիոնի, ինչպես և զրվանականության և հույն փիլիսոփաների հայացքների:

Թարմատար հատվածներն ևս, թվում է, գրավոր աղբյուրներից են քաղած. գոնե հայ ժողովրդական մտաշխարհին վերաբերյալ նյութերը, անպայման, առնված են մի գրավոր հիշատակարանից, որ հասել է մեզ:

Բնականորեն ծագում է մի օրհասական հարց. արդյոք միևնույն անձն է, որ հայերենի է վերածել օտար աղբյուրները և հետո նրանց ավելացրել այն՝ ինչ որ գտել է պատրաստի ընթացիկ հայ գրականության մեջ, թարգմանածո թե ինքնուրույն, և այսպիսով շաղկապել մի ամբողջական երկ. թե այլ ոք է,

---

[1] Ն. Ադոնց, Մաշթոց և նրա աշակերտները, «Հանդես ամսօրյա», 1925:

որ թարգմանել է օտարը և այլ՝ որ խմբագրել է, խառնելով օտար և հայ ցյութերը[1]:

Եթե մի ածի գործ է, արդյոք հնարավո՞ր է հայ ֆոլկլորի թանկագին էջերը պարունակող «Հարցմունք Գրիգորի» հիշատակարանը, որ աղբյուր է ծառայել «Եղծ աղանդոց»-ին, տանել և զետեղել հայ դպրության արևածագին (12): Իսկ եթե չէ, եթե հիշատակարանը ավելի ուշ գրություն է, ինչպե՞ս հասկանանք նրա ծուլումն երկի ամբողջության հետ:

Կամ Հիպպոլիտոսի հատվածը, ո՞վ է ներս առել երկի մեջ, գրքի վերջին ճարտարապե՞տը, թե իսկական հեղինակն ինքն՝ Եզնիկը և ուրեմն Հիպպոլիտոսի թարգմանությունը նախքան Եզնիկն է: Դժվար հարցեր են, սերտորեն կապված հայ դպրության ծագման բարդ հարցին:

«Եղծ աղանդոցն» իր ցյութով և բովանդակությամբ իսկ մի ինքնօրինակ երևույթ է ամբողջ հայ գրականության մեջ և նորա բազմիլը գրական նախայրիքների կողքին, նորա այնքան վաղ երևումը, գրեթե առեղծված: Անշուշտ, մի մերձավոր առիթ լինելու էր. պարզել նորա իսկական շարժառիթը, կնշանակեր ձեռք բերել մի վստահելի կռվան, ժամանակագրական հենակետ, ներշնչածս կասկածները որոշ սահմանների մեջ պահելու համար:

Եզնիկի ժամանակ ընդհանուր եկեղեցու կյանքի մեջ ամենախոշոր երևույթը Եփեսոսի ժողովն էր: Եթե ոչ ներկա և մասնակից ժողովի զբաղմունքներին և կամ սոսկ ականատես, 431 թվի մոտերքը այնտեղ լինելով՝ մոտեն ծանոթ էր ժողովի գործունեության:

Ժողովականները նիստերը փակելուց հետո մի նամակ են ուղղում Կելեստին պապին (422-432), ամփոփ հաշիվ ներկայացնելով ժողովի գործունեության մասին: Նամակի վերջում ասում է հետևյալը. «*Ἀναγνωθέντων δὲ ἐν τῇ ἁγίᾳ συνόδῳ τῶν ὑπομνημάτων τῶν πεπραγμένων ἐπὶ τῇ καθαιρέσει τῶν ἀνοσίων Πελαγιανῶν καὶ Κελεστιανῶν, Κελεστίου Πελαγίου, Ἰουλιανοῦ, Περσιδίου, Φλώρου,*

---

[1] Հայ ցյութեր ասելով չենք ուզում հասկանալ այնպիսի մանրուք, ինչպես «խարամանի» մեկնությունը, որ խմբագրի անձնական կարծիքը կարող էր լինել, նմուշ ժողովրդական կոչված սառւգաբանության. խարամանի իբրև թե Արեմնի մականուն է «առ ի յարևէ զարեգակնատեսչիկսն արկանելոյ, ուստի և զանունն իսկ խարամանոյ առ»: Խարաման Աբրիմանի, ուրեմն Արեմնի. մի այլ և ավելի հին հնչումն է, ավելի ուղիղ Հարիման. բայց մեր հեղինակը սխալմամբ կապում է պարսիկ խար: *khvār* բառին, որ արև է նշանակում, և հնարում մի մտացածին բացատրություն:

Μαρκελλίνου, Ὀρεντίου καὶ τῶν τὰ αὐτὰ τούτοις φρονούντων, ἐδικαιώσαμεν καὶ ἡμεῖς ἰσχυρὰ καὶ βέβαια μένειν τὰ ἐπ ἀυτοῖς ὡρισμένα παρὰ τῆς σῆς θεοσεβείας»[1]: («Կարդալով սուրբ ժողովում այն վավերագիրները, որոնք վերաբերում են անարժան Պելագիականների և Կելեստիականների կարգալուծման, այն է Կելեստիոսի, Պելագիոսի, Հուլիանոսի, Պերսիդիոսի, Փլորոսի, Մարկելլինոսի, Օրենտիոսի և մյուս սրանց նման խորհողների, որոշեցինք մենք ևս, որ քոյդ Աստվածապաշտությանդ կողմից տված վճիռը հաստատ և անխախտ մնա»):

Պելագիականությունը բավականին զորեղ շարժում էր, որ արևմուտքից անցավ նաև արևելք և կարող էր ծանր հետևանքներ ունենալ, եթե Ս. Օգոստինոսի ընդդիմությունը չլիներ, որի շնորհիվ նորալուր ուսմունքը խեղդվեց:

Պելագիոս-Օգոստինյան վեճը սերտորեն կապված էր անձնիշխանության հարցին: Առիթը Օգոստինոսի աղոթքն էր. «da quod iubes et iube quod vis»՝ «տուր ինչ որ հրամայում ես, և հրամայիր ինչ որ ուզում ես»[2]: Պելագիոս (Pelagius) կրոնավորը այս մտքի մեջ տեսնում էր մարդուս բանականի իրավունքի ճնշմացումն: Նորա բողոքը շուտով համակրողներ գտավ, որոնց մեջ ամենից մոլեռանդն էին Կելեստիոս (Celestius) և Հուլիանոս:

«Libertas arbitrii, qua a Deo emancipatus homo est, in admittendi peccati et abstinendi a peccato possibilitate consistit»՝ «Անձնիշխանությունը, որով մարդս ազատագրված է Աստուծուց, մեղք գործելու կամ մեղքից հրաժարելու հնարավորությունն է»[3]:

Անձնիշխանություն, հունարեն *αὐτεξουσία*, liberum arbitrium այն է, ինչ որ ճոր ժամանակներ փիլիսոփայության մեջ կոչվում է ազատ կամք: Հույն փիլիսոփաների տեսակետը, որ լավագույն և որոշակի ձևակերպումն ստացավ սոփեստների դպրոցում, մարդու կամքի ազատության խնդրում յուրացրել է քրիստոնեական եկեղեցին: Ընտրության իրավունքը, եկեղեցու հայրերի վարդապետությամբ, հենց այն աստվածային պատկերի արտահայտությունն է մարդու մեջ, որի մասին խոսում է Արարչության գիրքը: Այս կետում բոլոր հայրերը համաձայն են: Տարաձայնությունը սկսվում է, երբ անցնում են առաջին մարդու մեղսագործության, Ադամի անկման:

Առաջին հանցանքը գործելուց հետո շնորհիվ Ադամի պատվիրազանցության, արդյոք մարդու անձնիշխանությունը վտանգվո՞ւմ է, թե՞ մնում է իր զորության մեջ:

---

[1] P. L., 50, col. 522.

[2] Rauze, Freiheitswillen, Realencyclopädie für Prot. Teol. Kirche, հատ. 21, էջ 312.

[3] Pelagii libellus fidei (P. L., 45, col. 1716). J. Tixeront, Hist. des dogmes, II, 438.

Եկեղեցու տեսակետն այն էր, որ մարդը ստեղծված էր անմահ, անցավ և անհաղորդ աշխարհային դառնությանց: Ստանալով ազատ կամք, նա կատարյալ տեր իր բախտի, եթե պատվիրապահ լիներ, կմնար այնպես, ինչպես ստեղծված էր: Բայց նա ընտրեց չարը, պատվիրազանց լինելով, որով և վիճակվեց նորան մահ և՛ ցավ, և՛ վիշտ, և՛ ամեն տեսակ թուլություն:

Արդ նախահոր անկումը ինչպե՞ս է անդրադառնում նորա սերունդների վերա, ի՞նչ վիճակ է պատրաստել մեզ համար. արդյոք բոլորս մեղսակից ենք նորան, նորա անձնական մեղք մեզ է անցել ժառանգաբար, թե Ադամը պատասխանատու էր միմիայն իր համար, և մենք անկախ նորանից հիմնվելով ի բեն մեզ տված ազատ կամքի, անձնիշխանության սկզբունքի վերա, մնում ենք տեր և տնօրեն մեր վիճակի:

Պելագիական ուսումը պատասխանում էր այս հարցին առանց տատամսելու, որ անձնիշխանության սկզբունքը մնում է ինչպես առաջ անկապտելի և ուրեմն մարդ կարող է, հնարավորություն ունի, անմեղ լինելու. «ego dico posse esse hominem sine peccato»:

Այս տեսակետը խորշելի էր եկեղեցուն, քրիստոնեական վարդապետության, իրրև մի հայացք, որ ավելորդ էր կացուցանում աստվածային շնորհը, Քրիստոսի մարդեղությունը, որի նպատակն էր փրկել մարդկությունը սկզբնական մեղքից: Հիրավի, եթե մարդուն տված էր կարողություն անձնիշխանության միջոցով զերծ մնալ մեղքից, ապա իզուր է Քրիստոսի՝ Աստուծու Որդու գալը: Որպեսզի մարդեղությունը իմաստ ունենա, պետք է որ մարդիկ իրոք ճանաչվին մեղապարտ, հանցավոր առաջին մեղքով: Ս. Աթանասն ասում էր, որ Ադամա մեղքը անցել է բոլորիս, *εἰς πάντας ἀνθρώπους ἔφθασεν ἡ ἁμαρτία* և Քրիստոսն է, որ սրբել ազատել է մեզ նորանից[1]:

Դիդիմոս Կույրի կարծիքով նախահոր հանցանքն արյան հետ անցել է սերնդեսերունդ *κατὰ διαδοχήν* ժառանգաբար[2]. շնորհիվ մարմնական կապի. ահա ինչո՞ւ Քրիստոս ծնվելով կուսից անմաս է նախնական մեղքից:

Այս հասկացողությամբ մեղքը բնածին է դառնում մեզ համար: Կյուրեղ Աղեքսանդրացին հետևողական է, երբ որ վկայում է, որ մեր բնությունն ինքն ենթարկվել է մահվան, *ἡ φύσις εὐθὺς θανάτῳ κατεδικάζετο*, մեր բնություն հիվանդացել է նորանով, *νενόσηκεν οὖν ἡ φύσις τὴν ἁμαρτίαν*[3]:

---

[1] Contra Aria., I, 51. Tixeront, անդ, II, 141:

[2] Contra Manich., VIII, 1055. Tixeront, անդ:

[3] Tixeront, III, 210.

Անտիոքի դպրոցը և այս խնդրում սեփական հայացք ուներ և տարբեր դիրք էր բռնում: Թեոդորետոսի տեսակետն է, որ ամեն ոք մեղավոր է ոչ թե նախահոր հանցանքի ժառանգմամբ, այլ իր անձնական մեղսալից կյանքի հետևանքով, *οὐ γὰρ διὰ τὴν τοῦ προπάτορος ἁμαρτίαν, ἀλλὰ διὰ τὴν οἰκείαν*[1].

Այսպես էր մտածում և Թեոդորոս Մոպսուեստացին, որ առանձին կարևորություն ուշի մեզ համար: Բազմերախտ Փոտ պատրիարքը հիշատակում է Թեոդորոսի այս հարցին նվիրած և այժմ կորած մի գործը. *Θεοδώρου Ἀντιοχέως πρὸς τοὺς λέγοντας φύσει καὶ οὐ γνώμῃ πταίειν τοὺς ἀνθρώπους*, «***Թեոդորոսի Անտիոքացւոյ յաղագս այնոցիկ որք բնութեամբ ասեն և ոչ կամօք գործել մեղս գմարդիկ***»[2]:

Անտիոքացի է կոչվում Մոպսուեստացի եպիսկոպոսը իր ծննդավայրի անունով: Թեոդորոսը հայտնում է, որ ոմն հերձվածող արևմուտքից փախել է արևելք և այստեղից աղաղամիտ գրվածքներ է շարադրում և դրկում իր հայրենիքը: Նորա անունը թե մականունը (հաստատ չգիտեմ) Արամ է, ասում է Թեոդորոսը, *Ἀρὰμ δὲ τὸν ἀρχηγὸν αὐτῶν* (*οὐ γὰρ ἔχω σαφῶς εἰπεῖν*) *εἴτε ὀνομάτει εἴτε ἐπονομάτει*. Նրա և իր հետևորդների ուսումն այն է, որ մարդու բնությունը Աղամից հետո փոխվել է դեպի վատը, որի հետևանքով *ἐν τῇ φύσει, καὶ οὐκ ἐν τῇ προαιρέσει κεκτῆσθαι τὴν ἁμαρτίαν*, բնությունից է և ոչ ընտրության իրավունքից մեղքի ծագումը: Այս պատճառով քարոզում են նաև, «որ երեխաները թեև նորածին ազատ չեն մեղքից, «*μηδὲ παιδία, κἂν ἀρτιγέννητα ᾖ, μὴ ἁπηλάχθαι ἁμαρτίας*», և որ Աղամի չնորհիվ նորա ամբողջ սերունդը հանցավոր է. *καὶ εἰς πᾶν τὸ ἐξ ἐκείνου γένος τῆς ἁμαρτωλῆς* (*ὡς ἄν εἴποιεν*) *φύσεως παρατεινομένης*». Փոտը սխալ է գտնում Թեոդորոսի կարծիքը այն մասին, «որ Աղամը հենց սկզբից մահկանացու էր ստեղծված, միայն թե որպեսզի առենք հանցագործությունը՝ Ասված այնպես է ճևացրել իրրև թե մահը սահմանել է, որպես պատիժ հանցագործության համար». «*ἔτι δὲ οὐδὲ τὸ λέγειν αὐτὸν ἀπ' ἀρχῆς μὲν θνητὸν πεπλάσθαι τὸν Ἀδὰμ, ἐνδείξει δὲ μόνον ἵνα μισήσωμεν τὴν ἁμαρτίαν σχηματίσαι οὕτω τὸν θεὸν ὡς διὰ τὴν ἁμαρτίαν ἀντὶ τιμωρίας ἐπιτένειται ὁ θάνατος οὐ μὲν οὖν οὐδὲ τοῦτό μοι δοκοῦν εἰς ὀρθοὺς ἀναφέρειν λογισμούς*».

Բավական է հիշել Պելագիոսի վարդապետության առաջին կետը, որ համոզվինք, թե որքան նա համամիտ է Թեոդորոսին. «Adam mortalem factum, qui sive peccaret, sive non peccaret, moriturus esset. Աղամը մահկանացու

[1] In epist., ad Rom V, 12; Migne, III, 209.

[2] «Bib. Phot.», 177; P. G., 103, col. 513.

էր ստեղծված և ուրեմն մեղ գործեր, թե չգործեր, մեռնելու էր»: Երկրորդ կետը. «quoniam peccatum Adae ipsum solum laeserit et non genus humanum. մեղսագործելով նա միայն իրեն է վնասել և ոչ մարդկային սեռը»:

Երեխաների վերաբերյալ այն միտքն է հայտնում, որ նրանք մինչև անգամ եթե անկնունք են, ժառանգում են հավիտենական կյանք. «infantes, etsi non baptizentur, habere vitam aeternam»[1]:

Պելագիոսի և Թեոդորոսի գաղափարական համերաշխությունը զարմանալի չպիտի թվա, քանի որ հայտնի է, որ Պելագիոսի ուսուցիչը այս խնդրում Ռուփինոս ասորի քահանան էր: Իսկ Ռուփինոսը Թեոդորոսի աշակերտն էր, որ V դարու սկիզբը արևելքից անցավ Հռոմ և նորալուր վարդապետության սերմերը ձգեց:

Պելագիականության իսկական հեղինակը, այսպիսով, հանդիսանում է Մոպսուեստացին: Ով է այն Արամը, որի քարոզության առթիվ և նորա դեմ է դուրս եկել նա, հայտնի չէ: Հավանորեն, Արամ արամեացի, արամեական ծագում ունեցող անձ է նշանակում: Ամանք ակնարկ են համարում Հերոնիմոսի կամ Օգոստինոսի հասցեին: Այս խնդիրները մեր զբաղման շրջանից դուրս են: Դուրս են նաև պելագիականության կապված անցուդարձերը: Կարևորը մեզ համար այն փաստն է, որ խռովահույզ հարցը դառնում է Եփեսոսի ժողովի զբաղման նյութ և այնտեղ է գտնում հեղինակավոր լուծում:

Եփեսոսյան մթնոլորտին այնպես ընտանի Եզնիկը բյուզանդական մայրաքաղաքում եղած ժամանակ, անշուշտ, պիտի առիթ ունենար ծանոթանալու աղմկող հարցին: Թերևս այս պայմաններումն է, որ հղացել է իր մեծ գրական գործի միտքը: Մարդու ազատության՝ անձնիշխանության շուրջը բոլորող վիճաբանությունն և այն՝ ընդհանուր եկեղեցու ծոցում մի ավելի քան պատեհ դեպք էր, որպեսզի հայ եկեղեցականը պարտք զգար նույն հարցը որոճալու և հետևանքը ներկայացնելու իր հայրենի եկեղեցուն ճշմարտության լույսով:

Գուցե առարկեն, որ պելագիականության մասին խոսք չկա Եզնիկի մոտ: Ճիշտ է, Պելագիոսի վարդապետությունը դեռ մի ժամանակ շարունակեց վրդովել արևմտյան եկեղեցին, և որոշ արձագանք ունեցավ և նեստորականության շրջաններում, այնպես որ տակավին վեցերորդ դարու վերջին ասորի կաթողիկոսը նզովք էր կարդում նրանց, որոնք մեղքն ի բեն են համարում[2], սակայն պետք է խոստովանել, որ արևելյան եկեղեցու համար

---

[1] **Tixeront**, Hist. des dogmes, II, 439. **Hefele**, II, էջ 168.

[2] Շաբրիշո կաթողիկոսը (596-604). **Chabot**, Synod., 459.

ճորալուր ուսմունքը միանգամայն անհետևանք անցավ: Մասնավորապես Հայ եկեղեցու համար կարևորն այդ ուսմունքը չէր, այլ նրա հիմը կազմող գաղափարական խմորը: Տակավին քրիստոնեության առաջին ջատագովները Հուստինոս, Թեոփիլոս, Հիպպոլիտոս և մյուսները և նրանց հետևությամբ եկեղեցական գրողները ըստ արժանվույն ուշադրության էին առել անձնիշխանության սկզբունքը: Պելագիոսի դեպքը մի նոր խթան էր առաջ մղելու և վճռական տեսակետ մշակելու մի հարցի վրա, որ քրիստոնեության բարոյականության խարիսխն է կազմում:

Ահա այս պահանջիս հոգատարը Հայ եկեղեցու համար եղավ Եզնիկն իր ճշմարտավոր երկով: Կապելով «Եղծ աղանդոցի» հղացումը Եփեսոսի հետ, բնավ չենք ուզում դորանով կանխորոշել և նրա ծննդյանը: Եզնիկը մոտ է կանգնած Պրոկղի քղթին[1]:

Եթե մյուս հայ հեղինակներն իրենց թերություններով են անվստահելի. Եզնիկն, ընդհակառակ, իր գործի կատարելությամբ է, որ կասկած է հարուցանում: Մեր տպավորությունն այն չէ, որ «Եղծ»-ը՝ իր տեսակում առաջին գործ է: Կազմը շատ բարդ է, թեև պարզ է թվում, նման է մի շքեղ հագուստի, որ սակայն տեսակ-տեսակ կտորներից է կազմված: Արդյոք կտորները նույն հեղինակին են պատկանում, թե նրանցից շատերը գրականության մեջ կանուխ գոյություն ունեին ցանուցիր և հետո են իրար կցվել և մի մարմին կազմել: Հիպպոլիտոսի օրինակը խրատական է: Նրա անունով մեզ հասած մի բեկոր մտած է Եզնիկի շենքի մեջ իբրև քանկագին քար: Ուղիղ այն հարցին է վերաբերում, որը հետաքրքրում է մեր հեղինակին: 1. «Ոմանք ի հարցն անման ասացին զմարդ: 2. Այլք <ոչ> անման ասեն և ոչ մահկանացու, այլ ընդունիչ կամ մահու կամ կենաց: 3. Բայց այլք և վիճեն ևս *երե մահկանացու եղև* և *մեղանչելի*, որպէս թէ Աստուած պարտ իցէ մահու նորա և մեղաց: Եւ զայն ոչ գիտեն եթէ անմիտք Վաղենտիանոսացի են, որք բնութեամբ և ծննդեամբ ասեն զմեղսն. և զնոյն հաստատեալ ասեն *սոքա*, եթէ որ անման ոք է ոչ մեղանչէ, որպէս թէ ասասցեն թէ որ մեղանչելի ոք է, նման չէ մարդ ոչ մեղանչել»[2]:

---

[1] Եզնիկի առաջաբանի՝ «նա և որ ընդ ճառագայթս արեգականն հայել կամիցի, պարտի զպղտորութիւն աչացն՝ զաղտն և զթիժն ի բաց պարզել, զի մի՛ մթարքն՝ որ զբոբոքն շողայցեն արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին», հիշեցնում են Պրոկլի թղթի՝ «զի այք բժարերք զարեգական ճառագայթս սուրբս ընդունել չկարեն և միտք հիւանդացեալ ի հաւատոց բարձրութեան անդր հայել չկարեն»՝ λημῶν γὰρ ὀφθαλμὸς ἡλίου ἀκτῖνας καθαρῶς οὐ δέχεται καὶ ἀσθενοῦσα πίστεως οὐ προσίεται ὕφος. Այս միակ նախադասությունը բավական է, որ Եզնիկի ծանոթությունը Պրոկղի թղթին աներկբա կացուցանն:

[2] Ջեռագիր Պարիսի Ազգային Մատենադարանի, թիվ 116-118, թուղթ 110 v. Հ[այր] Գ. Գալեմքեարյանի հրատարակության մեջ կան անճշտություններ: Անհնար է մեացել ծեռագրում պակաս տողերը սառիին լուսանցքի եղծման հետևանքով:

Հիպպոլիտոսը հերքում է առաջին և երրորդ կարծիքը և ընդունում երկրորդը, կանգ առնելով անմահության հողի վերա, ինչպես Եզնիկը: «Ուղղոց մտաց, այն է քէ արար Աստուած զմարդն ընդունիչ պատուիրանաց և մահու», ահա Հիպպոլիտոսի լուծումը:

Այսպես է մտածում, նկատենք ի դեպ, և Հիպպոլիտոսի ժամանակակից Թեոփիլոս Անտիոքացին. «*οὔτε οὖν ἀθάνατον αὐτὸν ἐποίησεν οὔτε μὴν ὑνητὸν ἀλλὰ δεκτικὸν ἀμφοτέρων*», այսինքն՝ «ո՛չ անմահ զնա արար և ո՛չ մահկանացու, այլ ընդունիչ երկոցունց»[1]:

Երրորդ կարծիքը «եթե *մահկանացու եղև*» հիշեցնում է Պելագիոսի «Adam mortalem factum»: Արդյոք Հիպպոլիտոսի թարգմանության առիթը դարձյալ նոյն Պելագյան վեճերը չեն եղել. ավելի հեղինակավոր հերքում խորք ուսման դժվար թե կարելի լիներ գտնել:

«Եղծ»-ը թվում է, որ խնամության թելերով կապված է նաև Քարսեղ Կեսարացու «*Վեցօրեայք*»-ի հայերեն թարգմանության և Լուսավորչին վերագրած «*Յամառօտապատում*»-ին: Հայ մատենագրության պատմության տեսակետից առանձնապես կարևոր են Եզնիկի հայ աղբյուրները, այն գրական գործերը, որոնք եղել են հնում և հասել են մեզ, որովհետև նրանց միջոցով կարելի կլինի թերևս որոշել Եզնիկի դիրքը մյուս մատենագիրների շարքում: Ուշադրության արժանի են այն ընդհանուր կետերը, որոնք նշմարվում են Եզնիկի և հիշյալ երկերի մեջ, ինչպես կարելի է տեսնել հետևյալ համեմատություններից[2]:

«Վեցօրեայք», Ճառ Ա

Էջ 1. Որպիսի միտք ժամանեսցեն արժանաւոր իրօք ընդ առաջ ելանել այնց ընթերցուածոց զոր լսելոց եմք, քայց եթէ որք սրբեալք և զգաստացեալք իցեն ի կարեաց մարմնաւորաց...:

Հմմտ. Եզնիկի առաջաբան, որի ընդհանուր միտքն է՝ պարտ է զմիտս յստակել և զխորհուրդս սրբել.

Էջ 4. Կէսք ի փիլիսոփայիցն վրիպեցին ասել, թէ միևչև երևելի արարածոցս երևեալ, **փոշի մանրամասն**. Հմմտ. Եզնիկ, էջ 228 **հողամասն**.

Էջ 14. Եւ իրք թեթևք ընդ երեսս բարձրութեան երկնից վերանան և ծանուցքն յերկիր իջանել: Հմմտ. Եզնիկ, 192. որ ինչ թեթև է ի վերին կողմն գնայ և որ ինչ ծանր է ի խոնարհ...

---

[1] **Theophyli**, ad Autolycum, II, 27. P. G., VI, col. 1084.

[2] Հ. Թորոսյանը Եզնիկին վերագրած հողվածում («Բազմավեպ», 1889) ցույց է տալիս, որ Եզնիկը օգտվել է Եպիփանից, և հիշում է անցողակի ձորա աղերսը **«Վեցօրեայք»**-ի հետ և թերում է մի քանի օրինակներ, որոնցից միայն մեկն է հիշատակված Մաբիճոնի մոտ: Ընդհանուր կետերն ավելի են, քան նկատված է ցայժմ:

Էջ 16. Զիարդ թոյլ և ցիր բնութիւն կարող իցէ հաղարտիլ այսչափ ծանրութեան երկրի, որ հաստատեալ կայ ի վերայ նորա.

Հմմտ. Եզնիկ, 192. որչափ ևս առաւել զայնչափ ծանրութիւն երկրի չէ հնար օդոյ ի վեր ունել:

Էջ 17. Եւ յայտ է, որ ինչ ի մէջ երկուց գլխաւորացս գտանի, ընդ նոսին իրրև զնոսա արարեալ և հաստատեալ գտանի:

Հմմտ. Եզնիկ, 194. պարտ է իմանալ, թէ ամենայն ինչ որ ի միջի նոցա գտանի, հարկ է զի ընդ նովին արարեալ իցէ.

Ճառ Բ

Էջ 25. Զհիւէ յայտ առնեն... զի առաջ գոլոյ էր և առաջ կերպարարացս և նմանութեանց... Աստուած... ած զնա ի գոյնս և ի ***կերպարարս*** և ի կարգս...

Հմմտ. Եզնիկ, 25. զոր հիւէ առ ձեռն դնիցեն... որ ***անկերպարան*** և անզարդ տեսանեմք զաշխարհս ի պէսպէս *կերպարանս*...

Էջ 30. Բնութեան չար... այլ ինչ մի չար է, որ ինչ յանձնէ եկաց... պատճառք մահու: Սկիզբն մոլորութեան արկանել յոգիս մարդկան եթէ ***մարկիոնեստայք*** և եթէ ծայդանձիներ և եթէ պղտորեալ ուսմունք կողմանն *Մանեայ*...

Հմմտ. Եզնիկ, հերքելի աղանդները: ***Ծայդ անձինք*** (փոխ. ծայդոնցիք) համապատասխանում է հույն բնագրի ***Վաղենտինյանք***-ին. *οὐχὶ Μαρκιω(νίσ)τες, οὐχὶ Οὐαλεντῖνοι ἐντεῦθεν οὐχὶ ἡ βδελυκτὴ τῶν Μανιχαίων αἵρεσις* II, 4: Ինչպե՞ս բացատրել, որ Վաղենտինյանքի փոխարեն Ծայդոնցիք է: Ծայդոնցիք ևս աղանդավորներ էին, Սիդոնացիք, որոնց մասին հիշում է Դամասկ(իոս)ը. *Σιδώνιοι δὲ κατὰ τὸν αὐτὸν συγγραφέα πρὸ πάντων χρόνον ὑποτίθενται καὶ πόθον καὶ ὀμίχλην*[1].

Էջ 32. Այլ եթէ ոչ ի՛սկ իցէ, ասեն, չարն և ոչ յԱստուծոյ եղև իսկ, ուստի եղև... այլ մեք ասեմք, եթէ առնեն չարիք գործովք և ոչ որպէս նոքայն ասեն թէ կենդանի է չարն ***բնութեամբ:***

Հմմտ. Եզնիկ, հաճախ կրկնված հիմնական միտքը:

Էջ 89. Վնասակար է արիւն գլոյ... մանրագործաւ բազում անգամ բժիշկք քուն ածեն:

Հմմտ. Եզնիկ, 66. եթէ արիւն (գլոյ) ոք ըմպիցէ սատակի... զմանրագործն քնածու լինի քնհատաց...

[1] Damascius, p. 385, ed Kopp.

Մաս Զ

Էջ 133. Եւ գնացք իմն են, ասեն, յաշխարհին Եւրիպեցւոց յովկիանոս, որ երբեմն ցուցանեն յաւելուածս լիութեան իւրեանց, որ երբեմն զիջանէ ի լիութենէ աստի և այն, ասեն, ըստ գնացից լուսնին փոփոխի...

Հմմտ. Եզնիկ, 215. Եւ յԵւրոպն տեղիք ինչ են ծովուց, որոց ջուրն ըստ ածել լուսնին՝ ածէ և ըստ լնուլն՝ ընդ և ըստ պակասելն՝ պակասէ[1]:

Էջ 134. Բայց անհամ և սնոտի պատմութիւն, որ իբրև զբարբանջ ծերութեան զառանցելոյ անկելոյ ի մտաց իցեն, այնչափ ծաղոտ և արհամարանաց արժանի են... շարժելով, ասեն, շարժեն մարդիկ զլուսին և յերկիր իջուցանեն: Ինչ զոր Աստուած հաստատեաց եղ անշարժ ի տեղւոջ իւրում և յօրինեաց եղ զնա ի մշտագնաց, զիարդ կարիցեն դիւթութիւնք կախարդաց շարժել ի տեղւոյ. քաւ մի լիցի ասել մեզ զայս կամ լսել: Եւ որ տեղի բաւական էր ընդունել զայն, որ սահմանեալ կայ ի մեծ աստիճանին զօրութեամբն Աստուծոյ:

Հմմտ. Եզնիկ, 217. Եւ չէ հնար լուսնի յերկիր իջանել, որպէս կախարդաց տեսեալ ի ժամանակի հրամանաւ Աստուծոյ զլուսնոյն արիւնագոյն լինելոյ զկերպարանսն դիւի նմանել լուսնի բարբանջեն, թէ զլուսին իջուցանեն, որում չէն մարթ լինել, թէ որ քան զբազում աշխարհս մեծ է՝ թէ ի կալ մի փոքրիկ ամփոփիցի:

Էջ 187. Զհատ կամ զկորիզ իրիք յորժամ տանի ի ծակն, ընդ մէջ կտրէ և դնէ, զի մի բուսցին ի հիւթոց խոնաւութենէ... և դարձեալ եթէ խոնաւեսցին հատքն, հանէ առեզերբ մրջիւնոցին արկանէ տարածոց և ցամաքեցուցանէ... յորժամ գիտէ թէ արև կայ և պարզ իցեն և ոչ անձրև:

Հմմտ. Եզնիկ, 174. Որպէս և մրջեան յամարանոյն պատրաստելոյ զկերակուր և ընդ երկու զհատն կտրելոյ զի մի բուսանիցի և ի ջեր ժամանակս հանելոյ զկտիկն յորջէ անտի և ցամաքեցուցանելոյ:

Էջ 114. «Եղիցին լուսաւորք ի հաստատութիւն երկնից»...

Եւ դարձեալ ասէ. եթէ եղիցին ի նշանակս և ժամանակս և յաւուրս և ի տարեկանս: Ցոյժ պատշաճ և պիտոյ են աշխարհի և մարդկան նշանք որ լինին ի լուսաւորաց... զի վասն խոնաւոյ ժամանակաց բազում անգամ վարդապետք լինին մեզ *օդոյն պղտորութեան և դառնաշունչ հողմոցն ստանձամանեաց:* Քանզի է ինչ որ երևի *յարեգակնէ* և տէր մեր յայտնեաց մեզ յասելն թէ յորժամ տեսանիցէք զի ամպ արևմտից և ասէք թէ *անձրև լինի* և լինի. և յորժամ *հարաւ շնչիցէ*, ասէք, եթէ *խորշակ* ընթանայ և լինի այդպէս. և յորժամ դարձեալ ընդ երեկս *կարմրանայցեն* երկինք, զպարզոյ յայտ առնեն, և յորժամ ընդ առաւօտս կարմրանան, *զանձրևի նշան* ցուցանեն...

---

[1] Տե՛ս Հ. Թորոսյան, «Բազմավեպ», 1889, էջ 317, ծան.:

Զի յորժամ ընդ ծագել արեգականն մթագոյն ելանիցէ և արեան և կայծական նշանակ ունիցի ճառագայթիւք ըստ փոփոխմանց խստաշունչ օդոցն և եթէ ի նմին կերպարանս կացցէ, օդն պղտորեալ և յուզեալ ոչ յստակեսցի ի գոյնն մթագոյն ոչ լրթասցի և հողմք խստաշունչք և յաւելցին և ամպ ևս քան զևս բազմասցի զերկար խոնաւայուզից և զաստիկ անձրևաց յայտ առնեն:

Եւ յորժամ շուրջ բակ ունիցի լուսինն ամպոց և ունիցի մռայլ զարեգակն ամպոց, ջուրք բազումք յօդոց յերկիր առաքին...

Հմմտ. Եզնիկ, ԻԴ, 185-187. Արար Աստուած զլուսաւորսն մեծամեծս և եղ զնոսա ի հաստատութեան երկնից և այլն մինչև 187[1]:

Էջ 116-120. Աստեղագետների ուսմունքը աստեղատունների և մարդկանց բախտի հարաբերության մասին, հմմտ. Եզնիկ, Բ, 14: Մանավանդ «Վեցօրեայք»՝ 120, Խոյ՝ ճոխ: Բ, 14՝ Եզն՝ գործուն և հնազանդ, կարիճ՝ մարդասպան:

Հմմտ. Եզնիկ, 156. եզն՝ հզօր և բարեճշաւն, խոյն՝ մեծատուն, կարիճ՝ չար...

Էջ 122. Որչափ արդեաւք թագաւորք ծնանին հանապազ... արդ ընդէր ոչ հանապազ ծնանիցին թագաւորք և վասն է՞ր ի հարց առ որդիս կարգի գայ ժառանգութիւն թագաւորաց... մինչև էջ 123՝ Ոզիա ծնաւ զՅովաթամ և այլն...

Հմմտ. Եզնիկ, 160. ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր... որպէս Դաւթայ որդի Սողոմոն ի հօրն աթոռ նստաւ և այլն:

Էջ 123. Ավելորդք են դարձյալ դատաւորք և այլն. - *Հմմտ.* Եզնիկ, 160-162 չէ պարտ ոչ թագաւորաց մահու հրամանս տալ և ոչ դատաւորաց:

Հետաքրքրական են նաև դարձվածների և բառերի գործածությունը երկուսի մոտ. օր. «Վեցօրեայք»՝ 45. ընդարձոյս բնութեամբ *անկեալ* են ի մեզ, հմմտ. Եզնիկ, հաճախ գործ է ածում և ոմանք ուզում են ուղղել *անկեալ* յանարդարի:

Նոյնպես և էջ 17, 49. զլոյծ և զխաղաց բնութիւն ջուրցն, հմմտ. Եզնիկ, 197, լոյծ բնութիւն ջուրցն. խաղացական էջ 211. և Եզնիկի *խաղաց* կարիք չկա ուղղելու *խախաց*:

Այլ և անկերպարանս, անիրանս («Վեցօրեայք», 26, 28), անհամ պատմութիւն (121, 61, 85), Եզնիկ, 196 անհամութիւն: Մարմնապատ («Վեցօրեայք», 54), հողապատ (Եզնիկ, 72), Ծիւրեցին ծնկեցին (Եզնիկ, ծիւրի ծնկի), դանդաջէ («Վեցօրեայք», 62), Եզնիկ 196, բարբաջ ծերութիւն բանդագուշյալ: Ապա եթէ յամառիցի ոք («Վեցօրեայք», 12): Այլ և ամանս լուսնի (113), անիւ լուսնի (112) և այլն:

---

[1] Տե՛ս Հ. Թորոսյան, «Բազմավեպ», 1889, էջ 314, ծան.:

Ի նկատ առնելու է նաև *յատիշտակեցաւ յերրորդ երկինս* («Վեցօրեայք», 48) նախադասությունը, թեև մեկնութիւնը զանազանվում է Եզնիկից:

«Ծանձախապատում»-ի մեջ ուշադրության արժանի են այն կետերը, ուր շեշտվում է անճնիշխանության նշանակությունը, որով մոտենում է և հարում Եզնիկին:

Էջ 17. Եւ անճնիշխան կամօք երկնաւորք և երկրաւորք, մարդիկ և հրեշտակք:

Այլ թէ ասիցէ ոք, որպէս ներեաց Աստուած սատանայի այնքան տարածել զմոլութիւնն զանօրէնութեանս, իմացի՛ր, զի իշխանական կամս է հրեշտակաց և մարդկան որ յաստուածոյ պատուեալ:

Համմտ. Եզնիկ, 76. ընդէր եմոյծ զնոսա ի կռիւս ընդ միմեանս: Այսու զանճնիշխանութիւնն սատանայի և զմարդոյն կամի խափանել և այլն.

Էջ 19. Ճշմարտութիւն հաւատոյ լոյս է աչաց մտացն և այլն:

Համմտ. Եզնիկ, Առաջաբան:

Էջ 25. Է ինչ և ի սողունս իրաց ինչ ի պէտս, որպէս յօձիցն ասէ զքերակէն:

Համմտ. Եզնիկ, 63. զի՞նչ չար քան զօձ կայցէ և ի նմանէ թերիակէ:

Էջ 26. Զի զտարերս ամենայն աստուածս արարին զշնչաւորս և զանշունչս, զջուր և զհուր: Զի ջուրն ի պէտս կենդանանաց արարաւ յաստուածոյ, որ արբուցանեն զերկիր և դարձեալ ապականին նեխելով և նուազելով: Եւ հուր առ ի պէտս մեր արարաւ որ դարմանօք վառի և սպասաւորէ մեզ և ի պակասել կերոյն զիջանի և ապականի: Նոյնպէս և հողմք և ամպք:

Համմտ. Եզնիկ, 15-16. Եւ կամ զհուր, որում և զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս վառիցես և յորժամ կամիցիս խափուցես և այլն... և զներքին և զարտաքին աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք:

Էջ 29. Զի և գազանք ոչ եթէ բնութեամբ եղեն չարք, որպէս ընտելութեամբն ցուցանին առ թովիչսն և առիւծ և ինձ և արջ հնազանդին մարդկան, որպէս եզն և շուն և այլն ամենայն...

Համմտ. Եզնիկ, 148-149՝

Էջ 63. Ապա եթէ ի նոյն ***յամառեալ*** կայցեն ի չարիսն. *Համմտ.* Եզնիկ, 59, 198՝ Աստուած ոչ սատակէ և ոչ բառնայ զյիշատակս սահմանաց և անզգամաց. ոչ կամիմ զմահ մեղաւորի:

Համմտ. Եզնիկ, 76՝ ես ոչ ընդ ձեր մահ կամէի.

Համեմատությունները բավական են ցույց տալու, որ Եզնիկը մեծ միտք չէ, այլ որ նա և կապեր ունի մյուս երկերի հետ, և «Եղծ»-ի խմբագրության հարցը այնպես անկնճիռ չէ, ինչպես թվում է: Խոստովանելու է, որ Փավստոսը, Եղիշեն, «Ծանձախապատումը», Ագաթանգեղոսը, քան Եզնիկն ավելի բախտավոր վիճակի մեջ չէ և գտնվում է նրանց հետ միևնույն ցանցի մեջ:

Դառնանք նորեն Մարիեսին: Մեզ մնում է քննել նրա մի շարք լեզվական և բնագրային ուղղումները, որ նրա աշխատության մեջ մեծ տեղ են բռնում և հեղինակն ևս նրանց առանձին նշանակություն տալու հակամետ է: Երբեմն համեմատում է հունական բնագրի հետ և սխալներ է գտնում, որոնց համար և Եզնիկի հունագիտությունը հարվածում: Հակառակ մեր խորին հարգանքի Եզնիկի նոր քննադատի՝ որ այնպիսի սիրով և ուշադրությամբ նվիրվել է իր գործին և նշանավոր շնորհիք մատուցել հայ գրականության ուսումնասիրության, դժբախտաբար գովեստի խոսքեր չունինք նորա հասցին առաջարկված ուղղումների առթիվ: Նայինք մի առ մի:

Եզնիկի

Էջ 22. «Կէսք անսկզբնակից ինչ ընդ Աստուծոյ ***երկնաց, դնել նոցա*** (i. e. ***չարեաց***) ***արարչի լինել Աստուծոյ*** կամեցաւ դնել. և կէսք ըստ նմանէ նիւթ ինչ...»: Խնդիրը լեզվական թերիքը չէ, որ ներելի է և ուղղելի:

Նույն իսկ իմաստի տեսակետից սխալ է: Նախ Մարիեսը հետևողական լինելու համար, եթե կարծում է, որ հայ և հույն համեմատելի նախադասությունները բնագրորեն կապված են միմյանց, պետք է որ երկրորդ պարբերությունը ևս լրացներ համաձայն հույնի. այսինքն՝ և կէսք ըստ նմանէ նիւթ ինչ, զոր հիւղն անուանեն, թէ ի նմանէ արար զարարածս ***«երկուցեալ չարեաց արարիչ չաստուած ասել»***: *ἐκ τοῦ φοβηθῆναι, τῶν κακῶν ποιητὴν εἰπεῖν τὸν θεὸν.*

Սակայն հավելումների կարիք չկա: Եզնիկի երկու եղածը ամփոփումն է նախընթաց Ե գլխում բացատրած մտքի. «Եւ զի՞ պիտոյ է մեզ բնաւ մի ըստ միոջէ թուել, այլ համառօտ իսկ ասել, թէ ուստի՞ է այս ամենայն և ո՞վ է սկիզբն և գործիչ այնպիսի անպատեհից, բայց ***եթէ իցէ ինչ չար զօրութիւն,*** որ զայն ամենայն անհարթութիւնս տայցէ գործել, և ինքն իսկ արարիչ իցէ նոցա, զի զաստուած արարիչ ասել այնպիսի իրաց անպատշաճ է»[1]: Մյուս եղածը. «վասն որոյ կարծի թէ էր ինչ ընդ նմա, որում հիւղն անուն էր, որ է նիւթ» և այլն[2]:

Մարիես կարծում է, որ Մեթոդիոսի երկու եղածներից մեկը՝ մոնիստական է և մյուսը՝ դուալիստական, մինչդեռ Եզնիկի մոտ երկուսն էլ դուալիստական են: Տարբերությունը սակայն առերևույթ է. ճևական և ոչ էական: Ո՛չ Մեթոդիոսը և ո՛չ Ադամանտիոսը չեն քննում այն եղածը, թե Աստված չարի արարիչ է, ընդհակառակը՝ հենց սկզբից ընդունում են, որ

[1] Եզնիկ Կողբացի, էջ 20:

[2] Անդ, էջ 21:

այդպես մտածել «անպատշաճ է» և այս դրությունը ելակետ ունենալով՝ ոմանք առաջարկում են ընդունել չարը իբրև հիպոստաս, ինքնուրույն գոյացություն (ինչպես մանիքեցիք), մյուսները՝ գերադասում են առաջ մղել հյուլեի գաղափարը և նրանից հանել չարը: Վեճը այս հարցերի շուրջն է և թե այն պարզ և անվիճելի երկուստեք եղածի, որ Աստված չէ չարի սկիզբը:

Հյուլեականներին ջրելուց հետո, Եզնիկը Մեթոդիոսի հետևությամբ անցնում է հիպոստասականներին: Սրանց հերքումը միևնույն ժամանակ հերքումն է հյուլեականներին, որովհետև եթե չարը իբր հասկացողություն հիպոստաս չէ, այլ միայն հատկություն, ուրեմն և հյուլե չկա: «Եւ արդ զհիւղեայն խնդիր թողեալ զոր նիւթն ամենայնի կոչեն, ի չարեացն խնդիր եկեսցուք զոր ի նմանէն իմանան: Զի յորժամ չարիքն յայտ լինիցին թէ չեն անձնաւորք, անտի և հիւղն յանդիմանի թէ ոչ էր երբէք և ոչ բնութիւն անձնաւոր»[1]:

Վերև Եզնիկը զորություն բառով է արտահայտում *ὑπόστασις* գաղափարը, այստեղ նույն իմաստն ունի և ***անձնավոր***[2], կամ ***բնություն անձնավոր*** բառը: Մեթոդիոսի պատճառաբանությունը Եզնիկի մոտ կրճատ և պարզ ձևի է վերածած: Մարիես միշտ ձգտելով հույնի շրջանակի մեջ մտցնել, դժվարանում է հասկանալ և դարձյալ ուղղումներ է առաջարկում. ***անձնաւոր*** կարդում է ***մասնավոր, պատճառն*** ուղղում է ***բազ***(ի) ***չարի***, ընդունում է և Գալեմքեարյանի առաջարկած ընթերցումը ***չար***՝ փոխանակ բնագրի ***արարիչ***:

Եվ այս բոլոր ջանքերը ի զուր են: Եզնիկի դատողության թելը հետևյալն է:

Չարը հիպոստաս, անձնավոր չէ, այսինքն՝ անհատական գոյություն ունեցող ինչ չէ, այլ միայն ***արգասիք անձանց,*** այսինքն՝ հատկություն:

Վերցնենք չարի մի տեսակը, որ բղխում է մարդուց. ասենք սպանություն, շնություն: Մարդը անձնավոր է, իսկ նրա գործած չարիքը իր բարքի արդյունք, «բարքն չանձնավորք», և ոչ անձնավոր ինչ:

Ենթադրենք, սակայն, հակառակը, ինչ որ ընդդիմախոսն է պաշտպանում, որ չարիքը, իրոք, անձնավոր է: Այն ժամանակ ստիպված պիտի լինենք ընդունելու, որ նրա ***պատճառը*** ևս անձնավոր է, որովհետև տեսա-

---

[1] Եզնիկ Կողբացի, էջ 34:

[2] ***Զօրութիւն*** է թարգմանած ὑπόστασις նաև Պրոկղի թղթում. զմարմնացելոյն Աստուծոյ բանին զօրութիւն. «Գիրք թղթոց», էջ 2: Ստեփաննոս Սյունեցու բերած ***«Ծագք Հոռոմոց ի Հայս»*** գրության մեջ Կյուրեղ Աղեքսանդրացու ԺԲ գլուխներն են բերված, ուր ὑπόστασις թարգմանված է ***անձնաւորութիւն***. գլ. Բ, անդ, էջ 361, իսկ ***«Կիրակի առ Նեստոր թղթոյն»***, միևնույն Բ գլխում թարգմանած է ***բնութիւն***, անդ, էջ 404:

ճեղի չարը անտեսանելի չարի մասն է: *Պատճառ* այստեղ ամբողջության իմաստ ունի՝ ինչպես Աստված բարվո լիություն է, այնպես էլ այն, որ չարի *պատճառ* է համարում, չարի ամբողջություն է: Այսպես հասկանալով, պետք չենք տեսնում պատճառ կարդալ *բովանդակ չար*, եթե *բազչար* ասելով, այս է ըմբռնում Մարիեսը:

Սակայն այստեղից ի՞նչ է հետևում. եթե չարի պատճառը անճանաչելի ոմն է, ուրեմն «էր երբէք զի բնաւ չէր ամենևին ինչ արարիչ բովանդակ», այսինքն՝ կար ժամանակ, երբ այդ անճանաչելի ոմն լիակատար *արարիչ* չէր չարի: Ինչո՞ւ համար. որովհետև Աստված դեռ չէր ստեղծել մարդուն, որը «մասանց չարեաց արարիչ» է, որը մասնավոր արարիչ է չարի: Եվ ուրեմն սորա ստեղծվելովը՝ այն անճանաչելի ոմն արարիչ չարի կլրանա, կամբողջանա: Բայց մարդուն Աստված է ստեղծել. հետևապես սորանով Աստված պատճառ է դառնում չարի ամբողջության, ասել է թե «և բաւանդակ իսկ չարեացն արարիչ Աստուած է»: Անհեթեթ եզրակացություն. դատողությունը հասցրեց **ad absurdum**, ուրեմն սխալ է ընդունել, որ չարն անճանաչելի է:

Մարիես, էջ 167. կանգ է առնում նաև հետևյալ պարբերության վերա և ուզում է մոտեցնել Մեթոդիոսին. «Զի ուր երկու ոք ի միասին իցեն, *հարկ է թէ միայն ոք իցէ և ուր երկու ոք զատ իցեն*, հարկ է թէ իցէ որ զատանից ի միջի»:

Քննադատի ջանքերն այնքան հեռուն են գնում, որ ուզում է մինչև անգամ Աղամանտիոսին սրբագրել, որ հաշտեցնի Մեթոդիոսի հետ: Այնինչ Աղամանտիոսի բնագիրն իսկ վկայում է, որ Եզնիկի նախադասությունը պետք չունի փոփոխման և իրար հետ համերաշխ են:

Արդարև, վեճը այն մասին է, թե՝ երկու ոք եթե միասին են, պետք է և մի երրորդը լինի իրր խտրոց, երկուսին բաժանող: Երկուսի մի միություն կազմելու դեպքը Եզնիկը բացեբաց ճգած է, որ լոկ դիալեկտիկական լրացումն է, որ վեճի էության համար արժեք չունի: Պայքարը երկու սկզբունք ընդունելու հարցի շուրջն է և նորա դեմ. *երկուսը նմբռաղում է և մի երրորդը*, որ անջրպետում է՝ ուրեմն անընդունելի է:

Էջ 170. «Արդ հարկ է ի պատճառս չարեացն գալ և ցուցանել թէ ուստի լինին չարիքն և *չէ մարդ ասել թե* չէ պատճառ չարեաց Աստուած այնու զի առընթեր նմա զհիւղն դնեն»: Իմաստի տեսակետից հարկավոր լրացումն է, բայց մեզ թվում է, որ կարելի է խուսափել ուղղումից, կարդալով «*չէ՞ պատճառ չարեաց* և այլն» իրր հարցական, արդյոք Աստված չարյաց պատճառ չէ՞ և այն ժամանակ, երբ նրա քով հյուղեն են դնում:

Էջ 175. «Մթարքն շողայցեն» առաջարկում է կարդալ «մթարքն *շաղախ* **ի**ցեն» ! միանգամայն անտեղի: Մթար այստեղ նշանակում է աչքի ճպուռ, որ սպիտակ լինելով կարող է շողալ, ըստ կազմության մութ + ար(առնել)

ընդհանրապես մթագնող բան է նշանակում և այդպես է անվանում Եզնիկն «զաղտն և զբիծն»[1]:

Էջ 178. «Եւ պահէ կենդանի... և զգայականացն աղջնչից յիւրաքանչիւր կայանի»: Մարիես կարդում է «և զկայական ածն աղջնչից»! Զգայական չի նշանակում *doué de sensibilité*, այլ *sujet à sensibilité*, այսինքն՝ կրավորական մտքով է գործածված: Ուրիշ տեղ նորա փոխարեն գործ է ածում ***զգայումն*** բառը նույն իմաստով, այսպես էջ 96. «որ ինչ ի ***զգայնոցս*** չօշափի կամ զննի կամ ազդի, այն մարմնաւոր է և որ <ի> ***զգայնոց*** ոչ ազդի անմարմին» և այլ: Ամեն ինչ, որ ենթական է մեր զգայարաններին, այն զգայական է: **Անշունչ զգայական** ասելով Եզնիկը հասկանում է երկնի լուսավորները, ինչպես շարունակությունից երևում է, էջ 14. «արդ բարիոք է արեգակն... և այլքն յանշնչոցն արարածոց»:

Մարիես արդար է, երբ անհարթություն է գտնում նախադասության մեջ քերականական տեսակետից, բայց իր ուղղումը չի շտկում գործը, որովհետև «պահէ ***կենդանի***... զկայական ածն» ևս անհարիր է: Քննագիրը պետք է թողնել անփոփոխ, անկանոնությունը հեղինակինն է:

Էջ 179. «Ծովացուլ զկով գործեաց» ուղղել՝ «ծովացուլս կով գործեաց» դժվար թե պետք կա: Եզնիկի խոսքերը որոշ միտք ունին:

Էջ 180. ***Սաղրե*** փոխանակ մաղթե կասկածելի է: ***Խարափ***, հավանորեն, ***խարխափ***, բայց ոչ երբեք ***խարակ***:

Էջ 181. Սակայն իբր ***տակ այն***, ինչպես և երկար մեկնությունները ***եղև***, ***առ***, մանավանդ, ***քանզի*** և ***որպեսզի*** բառերի առթիվ ավելորդ բծախընդրություններ են և հակառակ հայ լեզվի ոգուն: Կենդանի խոսքի ազդեցությունը հաշվի է առնելու այսպիսի դեպքերում (որպեսզի հմմտ. որպես որ):

Էջ 183. ***Անուանս***՝ ուղղել ***անուանումս***, հավանական է. սակայն անհրաժեշտություն չէ. Հմմտ. «Վեցօրեայք», էջ 119. «այս անուն», ասեն, գանգրահեր է և այլն. և մանավանդ «Ցաճախապատում», 34. զի ***յանուանից*** ուսուցանեն մեզ երկնաւորք և այլն:

Էջ 184. ***Որ ընդ անբան ինչ որ ուրեք***, իբրև թե պետք է ուղղել՝ ընդ դեմ ***բան ինչ որ***: Ավելի հավանական է սկզբի ***որ*** կարդալ ***ուր*** համաձայն վերջին ***ուրեք***, որ կրկնություն է և անհարթությունը կվերանա:

Էջ 186. Դիի ***ընծանել*** լուսնի փոխել ***զտհի մանել***, կամայական վարկած է:

Էջ 189. Այլ թէ ցերրորդ երկնի *ἕως τρίτου οὐρανοῦ* ***ասելոյ***՝ Մարիես ուղղում է ***առանց յիմ ասելո***, իբր **sans dire dans lequel**.

Սխալ մեկնություն: Խոսքը հայերեն ***ի*** առոի մասին է, որ համա-

---

[1] Հմմտ. «Վեցօրեայք», էջ 115. ***զծագագործեմ անիցի***:

պատասխանում է ըստ Եզնիկի հույնի *τοῦ* արթերն՝ *ἄρθρον*, այսինքն՝ յողին: Հետևապես կարդալու է առանց - իննն, փոխ. առանձինն, առանց *τοῦ* ի, *-ինն* (թերևս-եննն) = նու, *ն* տառի հին անունն է:

Էջ 190. զՄարկիոնն ուղղել **զմարկիկն**, կասկածելի է: Պարզ հեգնություն է Մարկիոնի հասցեին:

Էջ 104-112. Մարիես փորձում է բացատրել այն տարբերությունը, որ կա Եզնիկի և Մեթոդիոսի մեջ մի կարևոր կետում, այն է՝ Եզնիկ, էջ 44: Դժբախտաբար հոնքը շինելու տեղ բնագրի աչքն է հանում, ավելորդ ենթադրություններով: Մեր կարծիքով Եզնիկի տարածայնության աղբյուրը մի պարզ թյուրիմացություն է. *διδασκαλίας* հայը հասկացել է Ս. Գրքի վարդապետություն, և ոչ սատանայի, ինչպես շիտակ իմաստն է բնագրի.

«Ուստի ոչ ոք կարէ անարար ինչ և անճառար զչարն ցուցանել. և դարձեալ ոչ յարարչէն, այլ յանասատութենէ դիպեալ ստուգանողին և յուրուք **վարդապետութենէ** դրդեալ»: Մինչև այստեղ հարազատ է բնագրին, բայց հետևյալ տողերից սկսվում է թյուրիմացությունը.

1) զի ոչ եթէ այնպիսի ինչ հաստատեալ **բնութեամբ** զմարդն ցուցանել կարէ ոք.	*οὐδὲ γὰρ τοιαύτην φύσιν εἰληφός ὁ ἄνθρωπος,*
2) եթէ այնպիսի ինչ **բնութիւն** մարդոյն առեալ էր.	*εἰ γὰρ οὕτως εἶχεν.*
3) ապա ոչ ի բնութենէ արարածոյ b) և **յառաջացածեղեն զրոց** նմա **վարդապետութիւն** ընծայանար.	b) *οὐκ ἄν αὐτῷ κατὰ διδασκαλίας τοῦτο προσέγενετο, τῆς α) φύσεως αὐτῆς οὕτως ἐχούσης.*
4) որպէս ասէ ուրեք աստուածական բարբառն եթէ ի մանկութենէ մարդիկ ի խնամս չարին միտեալ են:	*λέγει δέ τις Θεία φωνή μεμαθηκέναι τὸν ἄνθρωπον τὰ πονηρά.*

Երկու բնագիրը միանգամայն համերաշխ են ընթանում, միայն երրորդ կետում հայը սխալ է ըմբռնել *κατὰ διδασκαλίαν*, ինչպես ասացինք, ազդվելով, անշուշտ, հաջորդ նախադասությունից, ուր, իրոք, կոչում է արած Ս. Գրքին: Հույնն ասում է. «և ոչ նմա ի վարդապետութենէ այս ընծայանայր, զի բնութիւն նորա այսպէս եղեալ է. (կամ ի բնութենէ այդպէս արարեալ)»: Իմաստը պարզ է. չարը բնածին չէ, այլ ստունգաճողի անհնազանդության հետևանքը: Դրդողը սատանան է, «ուրուք վարդապետութիւն»: Եթե մարդը **բնությամբ** չար ստեղծված լիներ, այն ժամանակ սատանայի վարդապետության **պետք** չէր լինի, քանի որ մարդու բնությունը չար է կամ չար է

ստեղծված: Հույնը Ս. Գրքից վկայություն է բերում, որ ցույց տա, թե մարդը սովորել է, գիտացել է չարը **առաւճայից**: Իսկ հայը միանգամ սխալ հասկանալով հիշածս պարբերությունը, մոլորում է և շփոթում է Ս. Գրքի մեջբերումը, քաղելով ոչ այն, որին ակնարկում է բնագիրը[1], այլ մի ուրիշը, որ ավելի մոտ է իր ըմբռնումին[2], որ է. եթե չարն **ի բնութենե** է, ապա ինչո՞ւ Ս. Գրքի մեջ ասված է, որ մարդը **ի մանկութենէ միտեալ** է դէպի չարը և ոչ թե մարդը ի բնե չար է: Վարդապետության բառի բյուր ըմբռնումը դժվար կացություն է ստեղծում թարգմանողի համար հետևյալ *φύσεως αὐτῆς οὕτως ἔχούσης* նախադասության իսկական իմաստը հասկանալու և նա թարգմանում է՝ ***ի բնութենէ արարածոյ***:

Բնագիրների համեմատությունից բղխած այս պարզ բացատրությամբ ընկնում են Մարիեսի մանվածապատ լեզվական պատյտները, որ տանում են դեպի բնագրի աղճատումը: Այսպես օրինակ՝ ***բնութիւն***, որ ամբողջ դատողության և վեճի հիմնաքարն է, փոխել՝ ***բանութիւն*** նշանակում է, հանցանք գործել: Եզնիկի հունագիտությունը ևս կասկածի ենթարկել, և նորան վերագրել *λέγω* և *πάσχω* բառերի շփոթումը՝ հիմք չկա:

Էջ 207. «Մինչև ևկն Աբրահամու աստուածապաշտութիւնն և աղաւաղեաց զայն»[3], համեմատում է հույնի *ἕως ὅτου συνήφθη τῇ τοῦ Αβραὰμ θεοσεβείᾳ* հետ և պատրաստ է դարձյալ Եզնիկի լեզվական ոգիտությունը հանդիմանելու: Մինչդեռ բերած նախադասությունս իսկապես հակառակորդների եղածն է, որ պիտի հերքե Եզնիկը և հերքումը, իրոք, տեսնում ենք՝ Գ, գլ. ժե, էջ 229-230. «բայց քեպէտ և հեթանոսութիւն եմուտ յաշխարհ, այլ աստուածապաշտութիւնն ոչ ամենևին պակասեաց: Եւ յայտ անտի է, զի գնացեալ Աբրահամ ի հեթանոսացն եկն աստուածապաշտաց **պատահեաց**»: Թվում է, որ այստեղ է *συνήφθη*ի թարգմանությունը ***պատահեաց*** և ոչ թե աղաւաղեաց:

Երրորդ գրքի վերջին գլխի վերջին երկու էջերը (240-241) պատկանում են չորրորդ գրքին և նրա ներածականն են: Շատ տարօրինակ է, որ նախորդ գլուխներում մանրամասնորեն հույն փիլիսոփաներին և նրանց դպրոցները կրկտելուց հետո, վերստին խոսքը շրջում է դեպի հունաց իմաստունները, և սկսում Հեսիոդիոսից ու Հոմերոսից: Այս մի կարևոր պարագա է և ցույց է տալիս, որ Մարկիոնի հերքումը խմբագրական ճեռքով է միացրած մյուս գրքերի հետ, սկզբում՝ Վալենտինիանոսի գործի հետ:

Հայի օտար կաղապարը թվում է թե ավելի ծանրակշիռ ներածություն է

---

[1] Երեմ., 13, 23:

[2] Ծննդ., 8, 21:

[3] Եզնիկ, Եղծ աղանդոց, էջ 207:

ունեցել. և հայը կրճատ և ամփոփ ձև է տվել: Այստեղից է ծագում և այն դժվարությունը, որ հանդիպում են մասնագետները, ներածականի իմաստը և նրա կապը Մարկիոնի գրքի հետ ճշմարտապես ըմբռնելու համար:

Մարիեսն ևս փորձում է իր ուժերը և պետք է խոստովանել, բավականին չարչարում է հայոց լեզուն: Սակայն լեզվական բռնությունները մեղմանում են նորանով, որ ընդհանրապես ճիշդ է մեկնում բնագրի իմաստը:

Հույն փիլիսոփաների հասցեին հայ հեղինակը դիտում է, որ Աստծուն չճանաչողները «զիարդ զԱստուծոյ ճառել մտաբերիցեն: Եւ մանավանդ որ քան զամենեսին իմաստնագոյն համարին զՊղատոն, որ վասն Աստուծոյ և վասն հոգւոց և վասն արարածոց խօսել յօժարեցաւ»:

Գերմաներեն թարգմանությունը ունի, էջ 171՝ und insbesondere derjenige, welcher für den weisesten von allen *gehalten wird,* Plato welcher և այլն. Մարիեսը թարգմանում է. էջ 148՝ Et surtout celui-là qui *est estimé* plus pieux que tous, (plus pieux) que Platon, lequel և այլն:

Մեզ թվում է, որ պետք է թարգմանել. «մանավանդ նա, որի համարում է Պղատոնին ամենից իմաստուն», այսինքն նա, որի աչքում ամենամեծ հեղինակությունը Պղատոնն է: Հետևապես որ... *համարին*, պետք է կարդալ որ *համարէ*-ն. այսինքն՝ ոչ թե որը համարվում է, այլ որը համարում է: Մնացած մասը բնագրի թողնելու է, ինչպես կա: Ակնարկը վերաբերում է Մարկիոնին. հեղինակը առաջիկա հերքման, առարկության ուժ տալու համար, հենց սկզբից հայտարարում է, որ հանդիմանելի վարդապետության, այն է՝ մարկիոնականության աղբյուրը Պղատոնն է, որը չնայելով որ փիլիսոփաներից ամենեն աստվածապաշտն է, բայց էլի տկարամիտ է:

Հասկանալի է, որ նորա վերա հիմնած ուսմունքը ևս թույլ և սխալ պիտի լինի: Արժեքավոր է Մարիեսի համեմատությունը Իրինեոսի՝ quibus religiosior Plato ostenditur մտքի հետ:

Ներածականը նվիրված է, ուրեմն, Պղատոնի հանդիմանության: Նորան վարկաբեկ անելով, բնականորեն կանխապես խախտում է նորա հետևորդի Մարկիոնի ուսման հիմը:

Այսպիսով, բացի մի քանի մանրուքներից, գրեթե բոլոր առաջարկված ուղղումներն անվստահելի են, ասենք մեղմ լեզվով: Սորանով սակայն միտք չունենք նսեմացնելու Մարիեսի աշխատության հարգը: Թերիքները մի կողմ՝ Եզնիկին նվիրած ուսումնասիրությունը այն քանկագին լուման է, որ բերում է հեղինակը հայ գրական-պատմական գանձանակին: Անձնապես շնորհակալ ենք, որ մեզ առիթ տվեց մեր դիտողությունները ևս հայտնելու:

ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՎԻ ՀԱՐՑԱՐԱՆԸ ԵՎ ԵԶՆԻԿ

«Հարցումն եւ պատասխանիք Գրիգորի Պարթեւի» հնավանդ ճշխարը հասել է մեզ կանոնագրքերի մեջ[1]:

Ձեռագիրների մեկի գրիչը ևս վկայում է, որ հանված է այնտեղից:

Նույնն են հաստատում և սկզբի երկու կանոնները, որոնք իսկապես կապ չունին «**Հարցմունքի**» հետ և եթե կցվել են նրան միմիայն շնորհիվ Գրիգորի անվան: Սրանք վերագրվում են Նիկիո ժողովին, որին մասնակցել է ազգային ավանդությամբ Արիստակեսը: Լուսավորիչն, ընդունելով իր որդու բերած առաջին տիեզերական գումարումի որոշումները, հաստատել է և հայ եկեղեցու սեփականություն դարձրել: Այս մտքով Նիկիո ժողովի կանոնները կարող էին Լուսավորչի անվան կառչել:

Հիշատակարանիս կրկնակի վերնագրից մեկը՝ **«Կանոն սրբոյն Գրիգորի»** վերաբերում է միմիայն այս երկու կանոններին, իսկ մնացյալի ճշմարիտ գլխագիրն է **«Հարցումն եւ պատասխանիք»**:

Ձեռագիրն ունի՝ **«Կանոն երկրորդ** երանելոյն Գրիգորի», որ սխալ ընթերցման արդյունք է: Օրինակում, երևի, գրված է եղել՝ **«Կանոն Բ»**, այսինքն՝ **երկու** և ոչ երկրորդ ինչպես գրիչն է կարդացել:

Կանոններիս բախտակցությունը «Հարցմունքին» այն ճշանակությունն ունի, որ իրենց Նիկիական ծագումով, իրական թե ենթադրական, որոշ հնության լույս են ցողում և նրա վրա:

Մեր հիշատակարանը ժամանակով ինքնուրույն կյանք է ունեցել անկախ կանոնագրքից, հետո է միայն մուտ գործել այնտեղ և անջատվելիս պոկել, կորզել է իր հետ հիշյալ երկու կանոնները:

Իրրև զատ և ուրույն գործ արժանի է առանձին ուշադրության:

«Հարցմունք»-իս նմանությունը Եզնիկին բացահայտ է: Այստեղ է կենտրոնացած նրա ճշանակությունն ու հետաքրքրությունը: Նորագյուտ հիշատակարանիս գրական պատմական արժեքը կախված է այն եզակի հարցից, թե արդյոք ի՞նչ հարաբերություն կա նրա և Եզնիկի մեջ:

Համեմատությունը դյուրացնելու համար մեր ընագրին կից զետեղված են Եզնիկի համապատասխան էջերը (1):

---

[1] Այս հոդվածը տպված է նաև ֆրանսական «L'Orient Chrétien» գիտական հանդեսում, 3e série, T. V (XXV), Nos 3 et 4 (1925-1926), pp. 309-357 (ծան. «Հայրենիքը»-ի - Պ. Հ.):

Սրանք չեն ծածկում միմյանց լիովին. կան ավելի և պակաս կետեր: Ինչ և լինի նրանց խտիրը, նմանությունը ավելի շատ է, նմանություն, որ հաստում է գրեթե նույնության և ցույց է տալիս, որ երկուսն էլ մի աղբյուրի ջուր են: Բայց ո՞վ է բանաքաղը, ո՞ւմ է պատկանում առաջնությունը, ահա խնդրի կնճիռը:

Թնական էր կարծել, հենվելով մանավանդ Եզնիկի համբավին, որ հիշատակարանն լիներ մրզված Եզնիկից: Իսկ այն հողվածները, որոնք պակասում են Եզնիկի մոտ, ինչպես Զ և ԺԳ հարցերի որոշ և մեծագույն մասերը, համարելու էր անճնական հավելումներ բանաքաղի կողմեն:

Սակայն իրավացի հարց է ծագում, ի՞նչ սահիպողական պետք կար հոչակավոր մատենագրի հանրածանոթ երկից քաղվածներ անել և վերագրել Գրիգոր Պարթևին:

Կրոնական խնդիրներում, թերևս, հասկանալի լիներ անունների փոխարինումը: Եթե խնդիրը դավանաբանական բնավորություն ունենար, Հայ եկեղեցու հիմնադրին կոչ անելը միտումնավոր իմաստ կունենար: Ժողովրդական այս կամ այն մոլար հավատալիքները հանդիմանելու համար Եզնիկի անունն իրենին բավական ազդու հեղինակություն էր, անկարոտ կողմնակի նեցուկի:

Ավելի հավանական է թվում հակառակ ենթադրությունը: Գրիգորի հարցումը հնության հազվագյուտ բեկոր է, որ իր ժամանակին մտել, կլանվել է գրեթե ամբողջովին Եզնիկի գործի մեջ, բայց դիպվածով պահել է և իր անհատական գոյությունը, քաքնվելով կանոնագրքի ծալքերում:

Մի քանի դիտողություններ, հիմնված մանավանդ բնագիրների համեմատության վրա, գալիս են հաստատելու այս միտքը:

Եզնիկի գործի կառուցվածքը պետք է աչքի առաջ ունենալ, որպեսզի կարելի լինի հասկանալ մեր հիշատակարանի մուտն ու զետեղը ընդհանուր շենքի մեջ: Պարագայորեն խոսած լինելով «**Եղծ աղանդոց**»-ի կազմի մասին[1], բավականանանք միայն հիշել մեր վերլուծության կետերը այնչափ, որքան պետք են ներկա նպատակի համար:

* * *

Եզնիկի երկը կազմված է երկու տեսակ նյութից՝ հիմնական և բարմատար: Հիմնական ենք անվանում այն մասերը, որոնք շենքի իսկական քարերն են և բարգմանածո, հավանորեն հունարենից:

Առաջին գրքի ա-ժդ գլուխները, որ Մեթոդիոս Պատարացու «**Ծաղկաց անճնիշխանության**» գործի հայացումն է, չորրորդ գիրքը՝ նվիրված Մարկիոնականության, այլ և երկրորդ գրքի ա-ժբ և երրորդ գրքի ա-ժգ

[1] «Բազմավեպ», 1925, թիվ հոկտ [№ 7] և հետևյալ ամիսները:

գլուխները՝ հատկացված զրվանականության և հեթանոս փիլիսոփայության՝ սրանք են հիմնական բաժինները: Թարմատար են մնացած մասերը:

Գործի կամ ավելի ճիշտ նյութերի ծագման, ծննդական տեսակետից առաջին գրքի հիմնական բաժինը, այսինքն՝ Մեթոդիոսի գործը, երբեմն միացած է եղել անմիջապես չորրորդ գրքի հետ: Մեթոդիոսի ավարտական կտորը, որ Եզնիկի մոտ ընկել է երրորդ գրքի վերջը և հարում է անմիջապես չորրորդ գրքի առաջաբանին, (որը հրատարակության մեջ կցած է երրորդ գրքին) այլ բան չէ, եթե ոչ հին քակված շղթայի օղակ:

Քակման պատճառը նոր նյութերի սպրտումն է, որպիսիք են առաջին գրքի ժե գլխից սկսված մինչև երրորդ գրքի վերջին գլուխը: Ճարտարապետության տեսակետից սրանք միջամուտ հոդվածներ են: Մի մասը հիմնական է և ներկված զրվանականության և հույն իմաստասիրության: Մնացյալը թարմատար լրացումներ են, որ շաղախի պես միացնում են հիմնական քարերը միմյանց հետ և կազմում մի շենք:

Թարմատար տարրերը զանազանվում են հիմնականից ոչ միայն իրենց բնավորությամբ, այլև գրական ծագումով: Մեզ թվում է, որ նրանք մեծ մասամբ առնված են հայերեն աղբյուրներից:

Առաջին գրքի երկրորդ բաժինը, ինչպես ասացինք, թարմատար ենք համարում: Սրա առաջին գլուխները, այն է **ժզ-իգ**, ընդհանուր կետեր ունին Բարսեղ Կեսարացու և կամ Տիտոս Բոստրացու գրությանց հետ և հավանական ենք համարում, որ նրանց հայերեն թարգմանությունից կամ նման աղբյուրներից ազդված լինեն, ինչպես որ օգտագործված է Հիպպոլիտոսի մի պատառը **ժը** գլխում:

Իդ-իզ գլուխները ևս ուրույն աղյուսներ են ընդհանուր պատի մեջ շարած և զուտ ազգային գույն ունին: Եվ որովհետև այս գլուխներն են, որ նման են մեր հիշատակարանին, ուստի կարող ենք քաղված համարվիլ վերջինիցս: Եզնիկի գործի ընդհանուր կառույցը, ուրեմն, ոչ միայն արգելք չէ, այլ նպաստավոր հանգամանք այս տակավին տեսական վարկածին: Երկուսի համեմատական քննությունը բերում է ավելի դրական արդյունքի:

Գրիգորին վերագրած **«Հարցումն և պատասխանիք»** սովորական հարցարան է, մի տեսակ տրամախոսություն, ուր հարց ու պատասխան մատչելի ձևի տակ լուսաբանվում են զանազան հարցեր, որոնք առօրյա կյանքում ընդհանուր հետաքրքրության նյութ են: Ուրիշ գրականության մեջ, ինչպես օրինակ, հույն, ևս ընդունված է, **eroteseis kai apocriseis**՝ տարածված գրական տեսակ է:

Գրիգորի հարցարանը շոշափում է մի շարք բարձր և նույնժամայն կենսական խնդիրներ ժողովրդական հավատալիքների աշխարհից: Մահ,

մեղք, արքայություն, դժոխք, կախարդներ, դևեր և նրանց ազդեցությունը մարդկանց վրա, պնսպես ոգիներ՝ համբարու, հուշկապարիկ, քաջքեր, վիշապներ և այլ առասպելական էակներ, ինչպես ծովացուլ, խաննդիռն, առլեզ, նահանջ, պայ, սրանց մասնակցությունը կյանքում՝ ահա այն չարատանջ խնդիրները, որոնք ծագում են և պատասխան պահանջում, հենց որ երևում են անհատի մեջ գիտակցության և բարոյական համարատվության առաջին նշույլները:

Այս հարցերից շատերը մշակված դրական լուծումներ ունեին, հեթանոս անցյալից ժառանգած և քրիստոնեական միջավայրում իսկ տակավին ճշիրական և անդրդվելի: Եկեղեցին պարտք էր զգում բյուր և երբեմն կորստաբեր հասկացողությունները վանելու, պիտանի ավանդները սրբագրելու, և ընդհանրապես ժողովրդական մտաշխարհը նոր լույսով վերանորոգելու:

Հարցարանի պատասխանները շատ պարզ են և ազատ որևէ վարդապետական պաճուճանքից: Միակ հեղինակությունը, որ ընդունում է, Ս. Գիրքն է, որին և՛ կոչ է անում, և՛ նրանով հիմնավորում իր ասելիքը: Այսպես, այն հարցին, թե ով է մահվան հայրը, այսինքն՝ որտեղից է ծագում մահը, պատասխանում է՝ ***մախաճը:*** Ինչո՞ւ. որովհետև ասված է թե ***բանսարկուի նախանձից մահը մտավ աշխարհ:***

Ո՞վ է մեղքի մայրը՝ ***Ագահությունը***. որովհետև ասված է, թե բոլոր ***չարիքի արմատը արծաթասիրությունն է:***

Նույն եղանակով գտնում է, որ հավիտենական կյանքի պայմանը հեզությունն է, դժոխքի առիթը՝ լրբությունը: Միշտ միևնույն Ս. Գիրքն է, որի վկայությամբ լուծվում են նման և ավելի բարդ հարցեր:

Արդ ինչպե՞ս է վերաբերում նույն խնդիրներին Եզնիկը:

* * *

Իրավունք ունենինք հուսալու նրանից նաև տեսական լուսաբանություն: Եզնիկի գործը նախ իմաստասիրական բնույթ ունի, և նվիրված է անճնիշխանության սկզբունքի պաշտպանության: Անճնիշխանությունը հույն autexousia բառի թարգմանությունն է և նշանակում է այն, ինչ որ ներկայումս կոչվում է կամքի ազատություն:

Եկեղեցին սկզբից ևեթ որդեգրել է անճնիշխանության գաղափարը և նրա վրա կանգնել քրիստոնեական բարոյականության շենքը: Հեթանոս այլազան ուսմանց հանդեպ եկեղեցին ստիպված է սեփական հայեցակետ մշակելու այն խնդիրների նկատմամբ, որոնց համար ոչ միայն Հին Կտակարանը, այլև Ավետարանն ու Առաքելոց թղթերը թեր և դեմ պատասխաններ ունեին: Ազատ կամքի տեսությունը ուղիղ այն ջահն էր,

որի հետևողական լույսով կարելի էր լուծել հրապարակ հանված գայթակղիչ հարցերը:

Մեթոդիոս եպիսկոպոսի իմաստալից գրության թարգմանությամբ պատրաստ էր միանգամայն հարցի տեսական կողմը: Մնում էր նրա կիրառումը գործնական հողի վրա, որ է մի շարք կենսական երևույթների պարզաբանումը:

Նախքան խնդրին անցնելը Եզնիկը մի անգամ ևս դառնում է չարի գաղափարին: Աստված չարի հետ կապ չունի, նա միայն բարության արարիչ է: Ուրեմն որտեղի՞ց են կյանքի ախտավոր կողմերը, հիվանդություն, ցավ, դիվահարություն, մեղք և նման թերիքներ:

Ահա այս հարցի շուրջն են բոլորում թարմատար անվանածս մասի *ժե-իգ* գլուխները: Հեղինակը ցույց է տալիս, որ չարը հարաբերական գաղափար է և չկա ոչինչ, որ բնությամբ չար լինի: Կանգ է առնում մասնավորապես մահվան վրա, որ չարիքներից դառնագույնն է:

Անճնիշխանականների տեսակետն այն է, որ Աստված չի ստեղծել մահը, այլ նա հետևանք է կամքի ազատության: Ոչ միայն հրեշտակները, այլև մարդիկ ստեղծված են այնպես, որ կարող էին անմահ մնալ: Աստված տվել է նրանց ազատ կամք և եթե նրանք պահեին Աստուծո պատվերը, անմահ կմնային, բայց ընտրեցին պատվիրազանցությունը և նրա հետ ժառանգեցին մահ և ամեն տեսակ ցավեր:

Ով որ մտածում է, որ մարդը սկզբից ևեթ մահկանացու է ստեղծվել, այդպիսիների դեմ Եզնիկը բերում է Հիպպոլիտոսի դատողությունն առանց հիշելու անունը:

Մեզ թվում է, որ հիշած գլուխներում Եզնիկը տրամադրել է երկու աղբյուր, Բարսեղ Կեսարացու մի ճառը, և Հակոբ Սծբնեցու վերագրված մի այլ գրություն:

Ի նկատի ունենք Բարսեղի ճառը՝ Quod deus non est auctor malorum, ուր հարցը այսպես է դրված:

«Որտեղի՞ց են,- ասում են, - հիվանդությունները, որտեղի՞ց տարաժամ մահերը, որտեղի՞ց քաղաքների ավերումը, նավաբեկումը, պատերազմները, սովը»,- ասում են, - այս բոլորը չարիք են և Աստուծո արարք»[1]:

Սրա տեսական պատասխանն է. ինքնիշխանությունն է սկիզբն և արմատը մեր հանցագործության: Հիշվում է նաև այն միտքը, որ «չարիքներից յուրաքանչյուրը իմաստուն և բարի տիրոջ կողմից մեզ ի բարին է», երևի այն մտքով, որ երբեմն ավելի մեծ չարիքների առաջն առնելու համար է:

Այս նույնն է, ինչ որ ասում է Եզնիկը գլ. ի.՝ «Քազում անգամ թերևս

[1] Migne, P. G., 31, col. 330.

չարիք ինչ մեծամեծք առաջի մարդոյն կայցեն, կամ նեղութիւնք, որոց ոչ կարէ ժուժալ» և այլն:

Եկեղեցու հայրերից շատերն են գրել այս խնդիրների մասին: Եթե մենք մատնանիշ ենք անում Բարսեղ Կեսարացուն, պատճառն այն է, որ մեր եկեղեցու սիրված հայրերից մեկն է, մեզ մոտ ոչ միայն հարևանությամբ, գուցե և արյունով: Նրա այս ճառը ևս կարող էին թարգմանած լինել:

Ավելորդ չէ հիշել, որ Սերեոսի հրատարակության Առաջաբանում Միհրդատյանցը վկայում է, որ իր ձեռագրում կար նաև մի ճառ տարաժամ մահվան վերաբերյալ և կրում էր Հակովբ Մծբնա հայրապետի անունը: Դժբախտաբար հնարավորություն չունենք ստուգելու, արդյոք հաջողեց լույս ընծայել նույն ճառը համաճայն իր խոստման: Մծբնա հայրապետի անունը գրավական է, որ հին գործ է: Անշուշտ սույն հայրապետի հետ կապ չունի, բայց առնչություն ունի՞ արդյոք Բարսեղի գրության, դժվար է գուշակել:

Ինչ և լինի, մի բան հաստատ է, որ **ծե-ից** գլուխների ատաղձը կազմում են հայերեն լեզվով եղած նյութեր:

Այնուհետև Եզնիկը թևակոխում է մեր Հարցարանի սահմաններըը: Այնտեղ դրված հարցերին պատասխանում է երբեմն կարևոր հավելումներով և երբեմն արտագրում հավատարմորեն:

Եզնիկը չէ բավականանում ասելով, թե մահվան ծնողը նախանձն է, այլ պետք է տեսնում բերել նաև տեսական հիմ, որպեսզի բացատրվի, թե որտեղից է սատանայի նախանձը: Հիմը նույն անձնիշխանության սկզբունքն է: Սատանան լինելով ազատ կամքի տեր, հոժարությամբ ընտրել է նախանձը. «Զի Աստուած որ աննախանձն արար զնոսա անձնիշխանս, ոչ կամէր թէ որպէս զանասունս ի հարկէ վարիցին. եւ ապա անձնիշխանութիւնն այնուհետեւ չլինէր անձնիշխանութիւն»:

Դարձյալ խոսելով այն մասին, թե սատանան չի համարձակվիլ մարդու մեջ մտնել առանց Աստուծո հրամանի, Եզնիկը ավելացնում է ընդդեմ Հարցարանի, թե «վասն յանդիմանելոյ զանձնիշխանութիւն երկոցուն թուլացոյց ըստ կամաց երկոցունց»: Ուրեմն Աստուծո հրամանն այնպես պիտի հասկանալ, որ առաջուց գիտեր, որ թե՛ սատանան և թե՛ մարդն անձնիշխանությամբ ուզում են թուլանալ, ուստի և Աստված թույլ տվավ:

Նույն բացատրությունն է կրկնում Եզնիկը և այն վտանգավոր հարցի առթիվ, թե Աստված, գիտենալով նախապես, որ մեկը կախարդ պիտի լինի, մյուսը՝ կռապաշտ, ինչո՞ւ արգելք չի լինում նրանց երևալուն: Արգելք չի լինում այն հասարակ պատճառով, «զի նորա բարերարութիւն երեւեսցի եւ նորա յիւրաքանչիւր անձնիշխանութեանն պարտաւորեսցին», նորա համար, «զի նորա բարերարութեամբ երեւեսցին եւ նորա իւրաքանչիւր անձնիշխանութեանն պարտաւորեսցին»:

Հետաքրքրական է, որ մնացյալ կետերում, ուր զուգադիպում է Հարցարանին, Եզնիկն այլևս անճնիշխանության մասին ակնարկ չի անում: Թվում է թե երբեմն նույնիսկ հականճնիշխանական պատասխաններն արտագրելով Հարցարանից լռությամբ է անցնում և կամ թողնում է այն հարցերը, որոնք անճնիշխանության բանալիով չեն լուծվում: Այսպես Եզնիկն անտես է արել Հարցարանի հետևյալ հոդվածները՝ ոչ թե կախարդները, այլ Աստված միայն կարող է փոխել արարածների բնությունը:

Մեղավորներին կախարդները անզոր են որևէ վնաս հասցնել, եթե ոչ Աստուծո թույլտվությամբ:

Կայենի սպանության առթիվ ասում է, որ մահու հրամանն Աստուծուց է:

Կանանց ամլության պատճառը Աստված է:

Դիվահարության, անմեղ երեխաների տանջանքին և մյուս կետերին նայող հոդվածները գտնում ենք նաև Եզնիկի մոտ, սակայն դարձյալ առանց անճնիշխանության մեկնության: Արդյո՞ք պատճառն այն է, որ անճնիշխանությունը տկար է այս հարցերին գոհունակ պատասխանելու, թե վերև բերված բացատրությունը տարածելի է համարել սրանց վրա:

Աստուծո կանխագիտությունը և մարդու ազատությունը, անճնիշխանությունը, երկու հակասող հասկացողություններ են, որ միմյանց հետ հաշտեցնելու համար սքոլաստիկ աստվածաբանությունը հնարել է **ante praevisa merita** բանաձևը:

Վերև հիշած երեք դեպքերում Եզնիկը վարվում է համաձայն այդ բանաձևին, իսկ հետևյալներում ինչո՞ւ չէ օգտվում նույն բանալիից: Բանսարկուի նախանճը, սատանայի մարդու մեջ մտնելը և կախարդների ծնունդը այնպիսի հարցեր են, որոնք հաճախ պատահում են Ծննդոց գրքի մեկնիչների մոտ: Սրանց համար Եզնիկը կարող էր բացի Հարցարանից ուրիշ օժանդակ աղբյուր ունենալ և նրա ազդեցությամբ կիր առնել հիշյալ սկզբունքը: Իսկ այն հարցերում, ուր նա կախված է եղել բացառապես Հարցարանից, մնացել է հարազատ իր աղբյուրին, բարձիթող անելով անճնիշխանության չափը:

Սրանով փոխառության ենթադրությունը հավանական է դառնում և այս կետում:

* * *

Կա և մի երրորդ հանգամանք դարձյալ ոչ ի նպաստ Եզնիկի:

Մեղքերից և տանջանքներից ազատվելու համար մեր գիտուն հեղինակը քանիցս անգամ հանճնարարում է ***«ապաչինել ի սրբոց մարտիրոսացն Քրիստոսի»***, որպեսզի ***«զօրութիւն Աստուծոյ որ ի տապրան է»*** երևան գա և փրկե նրանց:

Վերստին հորդորում է, որ փոխանակ հավատալու կախարդներին, որ իբր թե նրանք կապում են դևերին և դրանցով խեղդում մարդկանց, ***«լաւ էր թէ յայտնէր եւ սրբովք աղաչեցեալ զԱստուած օգնականութիւն գտանէր բաժնոյ ի չարէն»***:

Միաձգամ ևս հիշեցնելով, որ առաքյալների հրաշագործությունների առաջ տեղի էին տալիս կախարդները, հավատացնում է, որ նրանց ***«ձշմարտեցաւ ճշխարք և այժմ ի տուրբ եպիսկոպոսս եւ ի ճշմարիտ վանականս երեւիւն. եւ զայնը զփորձ ոչ միայն քրիստոնեայք, այլ եւ հեթանոսք եւ մոգք գիտեն»***:

Այս խորհրդալից խրատները չկան Հարցարարանում: Մի տեղ միայն հայտնում է, որ «մարդ որ զԱստուած թողու, զսրբութիւն, զպահս, զաղօթս եւ ի դիւթս եւ ի կախարդս ապաւինի, խափանում է Աստուծո յոյսը: Հարցարանիս այս նկատողությունը կրկնվում է Եզնիկի մոտ մի նշանակալից սրբագրությամբ: ***«Զի եթող ոմն Աստուած զսուրբս, զպահս, զաղօթս եւ ի կախարդն, որ եւ անձին չկարեն օգնել, ապաւինեցաւ»***: Սրբութիւն փոխարինված է սուրբս բառով, որով պիտի հասկանալ սրբերի մատուռներ, վանքեր:

Հարկավոր է հիշել ուխտատեղիների նշանակությունը մեր ժողովրդական կյանքում ներկայումս, և Եզնիկի խրատների իմաստը կպարզվի լիովին: Հայտնի է, որ ամեն գյուղ, ամեն տուն և շատ անձինք իրենց սիրած սրբերն ունեն, որոնց տարին մի անգամ ուխտ գնալ անշեղ պարտք է համարվում: Մանավանդ անբույժ հիվանդներն ու ցավագարները երազում են տարիներով սրբերի ոտի տակ դարման գտնելու: Տխուր պատկեր են ներկայացնում ընկնավոր կանայք: Պատարագի միջոցով մատաղ անելուց հետո, երիտասարդ հարսն ու աղջիկներ իրար հետևելով հանկարծ ընկնում են սեղանի առաջ ուշաթափ և սկսում են խոսել բարձրաձայն, **դել տալ**, ինչպես ասում են: Մինչև իսկ անխոս հարսներ, որոնք իրավունք չունեն դեռ խոսելու, այդ վիճակում դեռ են ճգում ամոթխածությունը և լեզվի կապերն արձակում:

Հավատացնում են սթափվելուց հետո, որ այս կամ այն սուրբը, հաճախ Աստվածածինը, երևացել է նրանց և խոստացել բժշկություն, եթե մատաղ տանեն մի որոշ սրբի:

Եզնիկի հրահանգները պարզ ակնարկ են ճմանօրինաւկ սովորությանց: Եթե ընդունելու լինենք, որ Հարցարանը քաղված է Եզնիկից, անհասկանալի կմնար այս կարևոր խրատների հապավումը: Եզնիկից քաղվածներ անելն ուրիշ իմաստ չէր ունենալ, եթե ոչ ավելի մատչելի անել ժողովրդին որոշ հայացքներ և տարօրինակ կլիներ այս դեպքում, որ բանաքաղ կրոնավորը զեղծեր սրբերին ապավինելու և նրանց օգնությունը հայցելու խրատները:

Այս հանգամանքը այնքան ծանրակշիռ է, որ հարկադրում է ընդունել Եզնիկի կախումը Հարցարարանից, եթե միայն հետամուտ տարրեր չեն, ավելացնենք զգուշաբար, խորք սկզբնական բնագրին:

Հարցարանի «Խանդիռն ի յիշոյ եւ Արտանդ ի գետս եւ ի մառանս» չկա Եզնիկի մոտ: Եթե ճեռագրական պակաս չէ, պետք է ընդունել, որ Եզնիկն ինքն է բաց թողել: Խանդիռն և Արվանդ իրենց անունով և էությամբ հին պատկերներ են և չեն կարող հետսամուտ համարվիլ: Այս կետում ևս Հարցարանի և Եզնիկի հարաբերությունը ի նպաստ Եզնիկի չէ ամենևին:

Արտավազդի ավանդությունը ունի մի հավելված Հարցարանում, որ չկա Եզնիկի մոտ, այն է դարբինների զարկելը սալերի վրա: Կարծել, որ հետին լրացումն է, այդ պատճառով անհայտ է մնացել Եզնիկին, անհավանական է: Թացը նույն կարգի երևույթ է, ինչպես հիշածս Խանդիռն ու Արվանդը:

Մյուս կողմից Արտավազդին Եզնիկն համեմատում է Դավթի հետ, որին ակնկալում էին հրեաները, թե պիտի գա և վերականգնի Իսրայելի թագավորությունը: Այս համեմատությունը եկեղեցականի գիտնական հավելումն է և բնական է, որ Հարցարանում չկա: Մինչև այժմ ժողովուրդի մեջ, գոնե մի քանի տեղ, Նավասարդի օրը, երբ դարբինները տալիս են ավանդական զարկը սալին, համարվում է Դավիթ մարգարեի տոն, անշուշտ եկեղեցու ազդեցությամբ: Հեթանոս սովորությունները արմատախիլ անելու ճգտումով, եկեղեցին գերադասել է Արտավազդի հիշատակը ջնջել հօգուտ հրեական Դավթի:

Այս համեմատությունից սակայն չի հետևում քնավ, որ Արտավազդը Եզնիկի մոտ բարի ոգի է տակավին և որ հետո է չարի փոխվել: Դավթի հետ համեմատելը նպատակ ունի միմիայն ակնկալության նաևրությունը ցույց տալու և միմիայն: Արտավազդը, անշուշտ, երբեմն բարի ոգու հռչակ է ունեցել, սակայն հիմք չկա կարծելու, որ Եզնիկի Արտավազդը նման է եգիպտացոց կալանավոր Ալեքսանդրին, որ պիտի ելնե և «մահ խնդրիցէ»:

Ալեքսանդրի զրույցը նմանապես տարբերության նյութ է Հարցարանի և Եզնիկի մեջ: Առաջինը գիտե, որ Ալեքսանդր կապված է Հռոմում. իսկ ըստ Եզնիկի եգիպտացիք են, որ փակել են նրան մի շշի մեջ և լուր տարածել, որ պիտի դուրս գա և նոր կոտորածներ անե:

Դիտելու է, որ Ալեքսանդրի մասին հարց է դրված մեր հիշատակարանում, բայց պատասխանի մեջ անտես է արված նրա մասին խոսել: Արդյոք մեղապարտը գրիչը չէ՞, որ զեղչել է և չի՞ եղել նույն շշի պատմությունը և մեր Հարցարանում:

Կարող է պատահել, որ Եզնիկն ուրիշ տեղից քաղած լինի ինչ- ինչ գծեր, ինչպես օրինակ բասիլիսկոս օձի մասին տված տեղեկությունը:

Համենայն դեպս մոռանալու չէ, որ Հարցարանի նոր օրինակները (2), որ անկասկած հանգչում են տակավին «Կանոնագրք»-ի պես ժողովածուներում, կարող են ավելի լրիվ լինել և հեշտությամբ լուծել մաճի կնճիռները լավագույն ընթերցումներով:

Մի նկատողություն ևս ընդդեմ Եզնիկի: Առաջին գրքի իգ գլխում քննում է Եզնիկը այն հարցը, որ *«հրեշտակք եւ դեւք եւ ոգիք մարդկան անմարմինք են»:* Հոդվածի վերջում նկատում է. «Այս ամենայն ասացաւ, չի ցուցցի», թե ինչ ասել է մարմնավոր և անմարմին: Ամբողջ գլուխը կարևոր կանխաբանություն է դևերի խնդրին անցնելու: Հիրավի վերջին նախադասությունը, որ մի տեսակ ամփոփումն է կամ եզրակացությունը, ունի. **«Եւ արդ քանզի անմարմինք են հրեշտակք եւ դեւք, յայն տակս եւ ծնունդք ոչ գոն ընդա»:**

Սրանից հետո անմիջապես հետևում է. *«Ալ ասեն համբարուաց ծնունդք գոն եւ մեռանին»:* Եվ պատասխանը սկսվում է այսպես. *«Նախ զայն տեսցուք թէ ընաւ գոյցեն այլ ինչ արարածք բանաւորք քան զհրեշտակս եւ զդեւս եւ զմարդիկ. եւ ապա եկեսցուք այնր ի քնին թէ իցե՞ն ի դիւաց կէսք մարմնաւորք կէսք անմարմինք»:*

Արդ քանի որ Եզնիկը նախորդ գլխում մանրամասնորեն արդեն սպառել է նույն հարցի քննությունը, պետք է կարծել, որ ավելորդ է վերստին նույն նյութին դառնալ և որոշել, ով է դևերից մարմնավոր կամ անմարմին: Կրկնությունս բացատրել կարելի է նրանով, որ Եզնիկն այստեղ արտագրում է բառացի Հարցարանից: Դրված հարցի պատասխանը շատ հակիրճ է, մի պարզ հայտարարություն, միանգամայն համապատասխան Հարցարանի ոգուն, որ չէ սիրում երկարաբանություն և բավականանում է ծանրություն ձգելով միշտ Ս. Գրքի վրա: Կարճ պատասխանը կրկնում է Եզնիկը հակառակ իր բծախնդիր սովորության, երևի, հիշելով որ նախընթաց գլխում երկարորեն ճառել է նույն խնդրի վրա:

* * *

Արձանագրած դիտողություններս թվում է, որ նպաստավոր են Հարցարանին ընդհանրապես: Սակայն չի կարելի զանց առնել մի գիծ, որ երկբայական է:

Դիվահարության առթիվ Հարցարանը և Եզնիկը այն միտքն են հայտնում, որ անմեղների պատիժը նրա համար է միայն, որ երկյուղ ազդե իսկական մեղանչողներին և բերում են մտրակի օրինակը. ինչպես որ իշխանի տանը կախված մտրակը նրա համար է, որ տեսնողներին սարսափեցնե, այնպես էլ տղաների լկտիքը այն նպատակով է, որ սթափեցնե մեղավորներին:

Այս համեմատությունը ծագում է օտար աղբյուրից: Անտարակույս սույն օրինակն ունի ի նկատի Բարսեղ Կեսարացին, երբ իր վերև հիշածս ճառում ասում է, որ տեսակ-տեսակ դժբախտությունները ինչ ծագում էլ որ ունենան,

տեղի են ունենում մարդկանց խելքի բերելու համար՝ «համայն չարիքը հրապարակային մտրակով է սաստում Աստված», demosiais mastigi[1]:

Տիտոս Բոստրացին, գրեթե ժամանակակից Բարսեղին, **«Ընդդէմ Մանիքեցւոց»** գրության մեջ ունի հետևյալ խոսքերը.

«Ոչ բարի և ոչ չար կարելի է կոչել նրանց (գազաններին), որ լոկ բնական երկյուղ են ազդում մարդկանց դեպի լավը ուղղելու համար. նրանց անգործությունն իսկ արգելք է մարդկանց պարապության նման մի մտրակի, որ ի ցույց է դրված տանը որպես միջոց սաստելու ընդդիմիններին, արդյոք թերանում են, թե փութաջան են տան գործերում»[2]:

Կարծում ենք, որ մտրակի օրինակը առնված է Սիրաքի իմաստությունից և համապատասխանում է 23, 12՝ kai ouk apostesetai apo tou oikou autou mastix այլ և՝ 23, 2՝ tis epistesei epi tou dianoematos mou mastigas:

Հայն ունի. «Եւ ոչ ի բացեայ լիցին ի տանէ նորա ***հարուածք***». «ո՛ կացուցանէր ի վերայ մտաց իմոց լկանս». Հույնի mastix հայը թարգմանում է հարվածք, իսկ mastigas - լկանս, կամ ինչպես Սիրաքի հին թարգմանության մեջ է, **խրատ սաստից**: Անտարակույս է, որ Եզնիկը և կամ Հարցարանը կախում չունեն Սիրաքի հայերեն թարգմանությունից, քանի որ հունարեն բառը թարգմանում են մտրակ, և ոչ հարվածք: Թեև Հարցարանի «նոյնպէս եւ տղայոցն **լկանսն**» հիշեցնում է Սիրաքի բառը, բայց չենք կարծում, որ մտրակի օրինակը առնված լինի անմիջապես հայերեն թարգմանությունից: Ավելի հավանական է, որ եկեղեցական հայրերի գրությունից է վերցրած: Ասել է, թե այդ հոդվածում պետք է ընդունել օտար աղբյուրի ազդեցությունը:

Արդ՝ մեզ այնպես է թվում, որ Հարցարանը բուսած է հայ հողի վրա և կազմված զուտ հայ նյութերից: Մինչդեռ Եզնիկի մոտ երևում է մեկնեն ավելի օտար աղբյուրների հետքեր: Արդյո՞ք և մտրակի օրինակը նրան չենք պարտական: Սակայն, եթե ընդունենք, որ օտար աղբյուրը հայերեն թարգմանված է եղել և այստեղից է անցել Հարցարանը, այն ժամանակ մեր կասկածը կփարատվի դարձյալ հօգուտ Հարցարանի առաջնության ընդդեմ Եզնիկի:

* * *

Հիշատակարանս մի քանի նոր ընթերցումներ է առաջարկում, որ արժանի են ուշադրության:

«Ոչ երբեք ի մարդկանէ եղեալ պայծ **զորմէ ասեն թէ երեսած է**»,

---

[1] **Migne**, P. G., 31, col. 337.

[2] Անդ, 18, col. 1177:

փոխանակ Եզնիկի «ոչ երբեք ի մարդկանէ եղեալ պայն՝ եթէ առներս արարած իցէ»:

Եթե **երեսածէ** խորք բառը կարդանք տրոհելով **երես ածէ**, այն ժամանակ Նորայրի սրբագրությունը առ երես արածիցէ (փոխանակ արարած իցէ) պետք կլինի ուղղել՝ առ երէս ածիցէ, կամ ավելի ճիշտ վերականգնել ըստ Հարցարանի **երէս ածիցէ**:

«Զտոհմականս անդէոց ծծեն», փոխանակ Եզնիկի «զտոհմականս արդեանց կրեն»:

Առավելություն պիտի տալ Հարցարանի ընթերցման, որ նշանակում է հոտի լավագույն ոչխարներին ծծում էին: Մինչդեռ արդյունքի տոհմականը կրել՝ նվազ պատշաճավոր է. մանավանդ որ «զարդիւնս ի կալոց» կրելու մասին խոսում է հաջորդ նախադասության մեջ:

«Եւ ոչ իշխաս ինչ եղեալ», արդյոք ուղղելու է **«և ոչ ի շահէ ինչ եղեալ»**:

«Քաջաց եւ վիշապաց **տեարք** են ի լերինս բարձունս եւ բնակութիւնք»: Եզնիկն ունի «եւ ոչ **տաճարք** իբրեւ մարդկան են նոցա ի բնակութիւնս»:

Շեշտելու է նաև Հարցարանի **շէզն** ընթերցվածը փոխանակ առլեզն և «կնոջ պէս **ցուլ** անուն» (վրացի **ցոլի**՝ կին, արդյո՞ք սրա ազդեցությամբ է առաջ եկել ցուլ ընթերցումը), ինչպես և երագազգ՝ Եզնիկ՝ երագազանք և ուրիշ նվազ կարևոր տարբերություններ:

Վաղաժամ ենք համարում տարբեր ընթերցվածների մասին կտրուկ որոշումներ տալ: Պետք է սպասել նոր օրինակների: Լիահույս ենք, որ այդպիսիները կան և անուշադիր են մնացել բանասերների կողմից, որովհետև համարվել են Եզնիկից քաղվածներ և ուրեմն անկարևոր:

Հարցարաններն իրենց մատչելի ձևով տարածված են եղել և շատ ընթեռնելի: Կենդանի հիշատակարանները, բնականորեն, ավելի ենթակա են փոփոխության և այլայլման: Զարմանալի չպիտի թվա բնավ, եթե մեր Հարցարանը երևան գա այլազան խմբագրությամբ:

Էջմիածնի թիվ 453 ձեռագրում, գրված 1628 թվին կա Վարդանի **«Հարցմունք եւ պատասխանիք»** վերնագրով մի գործ, որ թվում է, թե կլանել է մեր հիշատակարանը, դատելով այն կտորից, որ բերում է պրոֆ. Ն. Մառը «Ամարայինն ուղևորություն» աշխատության մեջ (3) եւ որը ավելորդ չենք համարում դնել այստեղ ամբողջապես:

«Հց. Ապա զիարդ է, որ բազումք ասեն թէ քաջք պատերազմունս մղեն եւ զորս էրէոց որսան. եւ վիշապք զտոհմականս յանդէոց ծծեն եւ յոլով մարդիկ տեսեալ, զի վիշապք վերանան յերկրէ յերկինս:

Պախ. Այսպիսի յիմարութեամբ լցեալ է երկիր. մի՞թէ արժան է այսպիսի ասացօղսն քրիստոն(ե)այս համարել եւ կամ բնաւին առ մտաւորս: Ոչ քաջ լեալ է եւ ոչ վիշապ: Վիշապդ անուն բառ է, զի որ ինչ երկրի մեծ լինի, վիշապ

ասեն ըստ գրոց թէ **դու փշրեցեր զգլուխ, եւ եատուր,** որ նշան էր զՓարաւոն փշրել ի Կարմիր ծովն. եւ զզենսն եւ զզարդս նոցա յալեաց եզր ծովուն գտեալ եւ ի ձեռն լեղոզդացն ի խորսն անկաւ յաշխարհն Հնդկաց: Նա էր վիշապն, որպէս մարդ մեծանձնեա յաղթանդամ ասի: Եւ թէ ուղիղ է, որ ասեն, ցորեան եւ գինի առեալ դիւաց. սակայն ոչ ուտեն եւ ոչ ըմպեն եւ ոչ ի տեղոյն շարժեն, այլ երեւոյթս իմն տան: Մի՞թէ երեշտակքն զոր մատուցանէին նոցա կերակուր, որպէս Մանուէ(լ) եւ Գեդէոն, կերան: Անմարմնոյ բնութիւն զիարդ կերակրի զմարմնական կերակուր: Դեւք լոկ երեւոյթս տան:

Հրց. Իսկ ընդէ՞ր (ոք) ապա ասեն, տեսեալ ոմանց քաջաց եւ վիշապաց տաճարս ի լերինս բարձուցս եւ բնակութիւնս, ուր եւ զԱղէքսանդր կապեալ ունին ի Հռոմ եւ զԱրտաւազդ Հայոց թագաւոր ի Մասիս եւ զԵրուանդ ի գետս եւ ի մռայլս:

Պատ. Ոչ Աղէքսանդր կայ կենդանի ի կապանս եւ ոչ Արտաւազդ եւ ոչ այլ ոք յառաջնոց անտի, զի յորդոց մարդկան Եւովք եւ Եղիայ միայն կենդանիք են, այլ ամենեցուն զմահ ճաշակեալ է: Քայց մոլորութիւն դիւաց խաբեաց զկռապաշտսն հայոց ի ձեռն քրմաց, որք ասէին թէ Արտաւազդ ոմն վիշապ արգելեալ են կենդանի ի Մասիս լեառն եւ նա (ձեռ. ի նա) ելանելոց է (ձեռ. են) եւ զաշխարհն ունելոց: Եւ ոմն այլմտաց ունէր զիշխանութիւն հայոց, զարհուրեալ հարցանէր զղձապատումս (ձեռ. զղձայս որում) դիւաց եւ զկախարդսն թէ երբ լինի Արտաւազայ ելանելն ի կապանացն:

Եւ նոքա ասեն. թէ ոչ կամիս զելանելն նորա ի կապանաց, հրաման տուր ընդ ամենայն աշխարհիս դարբնոցն որ ի նաւասարդի օրն որ ամենայն դարբինն կորէ կռանաւ ի վերայ սա(յ)լի իւրոյ. եւ երկաթն Արտաւազայ անդրէն հաստատի: Եւ կատարեն զնոյն հրաման այժմ ամենայն դարբինն, որ ի նաւասարդի կռանաւ հարկանեն զսա(յ)լն մինչեւ ցայսօր: Եւ զայս ստութիւնս արձանացոյց սատանայ յաշխարհս:

Նոյնպէս եւ զվիշապ, որ է օձ մեծ առ աջօք ցուցանէ, զի ահագին երեւեալ մարդիկ ի պաշտօն առնուցուն զօձն, որպէս արարին Քարելացիք եւ Ելլադացիք, զվիշապ օձսն պաշտեցին եւ յԱստուծոյ հեռացան»:

Անտարակոյս է, որ այս քանկագին էջերը Վարդանին չեն պատկանում, այսինքն՝ նա չէ հեղինակը: Նա իր ձեռքի տակ է ունեցել մեր Հարցարանի լավագույն և լրիվ խմբագրությունը, որից և արտագրել է հավատարմորեն (4):

Վերև նշանակեցինք, որ մեր Հարցարանում Աղեքսանդրի մասին հարց է դրված, բայց պատասխանը պակասում է: Մեր տարակուսանքը փարատում է Վարդանը, որից երևում է պարզ, որ պատասխանը եղել է իրոք Հարցարանում և գուցե պատահմունքով բաց է թողած:

Հաստատվում է նաև **«զառհմակաւս անդէնց ծծեն»** ընթերցվածը: Ընդհակառակը, կասկածի տակ է դրվում **տեառք** բառը, որի տեղ ունի **տաճարք** համաձայն Եզնիկի:

Ուշագրավ է ի մասայս ընթերցվածը փոխանակ ի մատանս Երվանդի վերաբերյալ:

«Դու փշրեցեր զգլուխ» և «ետուր կերակուր», Սաղմոսի 73, 14 տան հետևյալ «անկաւ յաշխարհն Հնդկաց» խոսքերից երևում է, որ Վարդանը ևս կարդում է «ետուր կերակուր զաւրացն հնդեաց», համաձայն հայերեն թարգմանության: Եզնիկն ունի ջախջախեցեր (փոխ. փշրեցեր) և ժողովրդոցն Եթովպացւոց համաձայն հույն laois tois Aithopsin փոխանակ զաւրացն հնդեաց:

Արդյո՞ք նախնի թարգմանության մեջ այդպես է եղել, որ հետո ուղղել են, թե Եզնիկի անճնական թարգմանությունն է այն օտար, ասենք հույն աղբյուրի, որից օգտվել է իր գործի համար:

Ղ. Ալիշանը ծանոթ է թվում Հարցարանին, ինչպես երևում է այն ակնարկներից և մի քանի տողերից, որ բերում է «Հին հավատք հայոց» աշխատության մեջ, անշուշտ այն ձեռագրական աղբյուրների հիման վրա, որ տրամադրելի են եղել նրան վանքի ժողովածուից: Նրանց հրատարակությունը մեծ կարևորություն ունի մեր հարուցած խնդրի նկատմամբ:

Հիշատակարանիս հնության գրավական է այն փաստը, որ նրա հետքերը նշմարելի են արդեն Հովհան Մանդակունու մոտ: Ճշմարիտ է, սրան վերագրված ճառերի հարազատությունը դեռ վիճելի է, սակայն նրանց հնությունը կասկածից դուրս է. «Վասն հմայից դիւթակապաց եւ անօրէն յուռթողաց» ճառը մատնում է իր ծանոթությունը ինչպես Եզնիկի, այնպես էլ մեր Հարցարանի հետ: Այսպես՝

- Աղէ, ցոյց զոք ի կախարդաց, որ անցաւ եւ անմահ եղեւ. Հովհան Մանդակունի, էջ 185= Հարցարան, Ջ հարցի վերջը և Եզնիկ:

- Սատանայ առանց քոյոց հրամանաց եւ Աստուծոյ թողացուցանելոյ արարածոց Աստուծոյ ոչ իշխէ: Դու իսկ գիտես եթէ ի խոզից՝ երամակ ոչ իշխեաց մտանել, բայց եթէ հրամայեաց եւ զինչս նոցա ոչ իշխեաց կորուսանել, բայց եթէ ի տեառնէ առ հրամանն. էջ 195, հմմտ., Եզնիկ, գլ. իբ:

- Վասն այդորիկ եւ մահ տարաժամք, վասն այդորիկ եւ նեղութիւնք բազումք, վասն այդորիկ եւ անգաւակութիւնք ի ծննդոց եւ կապանն երկանց անկտծանելի, վասն այդորիկ եւ լկումն դիւաց... էջ 199, հմմտ. Հարցարանի՝ որպիս տալ ամրոց եւ զմէջտեղուսն բարիս առնել: Ձեռագիրներից ոչ մեկը չի պահել ստույգ ընթերցումը, որ մենք վերականգնում ենք զմէջ սկզբուսն: Հին բառ է սկզբուն եւ նշանակում է ամուլ[1]:

- Եւ արդ հայեսցուք ի պատուիրանս Աստուծոյ եւ զգրեալս ի նմա արասցուք եւ մի մոլորեսցուք իրրեւ զհեթանոսս ի բախտ եւ ճակատագիր եւ ի

[1] Եւ., 54, 1:

հրամանս: Զի զինչ եւ հրամանքդ տարածեն ընդ ամենայն երկիր եւ բանդագուշեալք խօսեն սուտ եթէ մարդ ընդ հրամանաւ վարի եւ գործէ: Եթէ այդպէս է եւ ընդ հրամանաւ գործէ մարդ, ապա յայտ է եթէ եւ դատի ոչ վասն մեղացն, զի զհրամանն ծորա կատարեմք... էջ 200 = Եզնիկյան դատողություն, հմմտ., ա 15:

- Այլ արարածս ընդ հարկաւ եւ ընդ ծառայութեամբ եւ ըստ հրամանի սորա վարին եւ **ճշմարուկ անգամ յորոգայթ ոչ անկանի առանց հրամանի**, բայց միայն զմարդ տէր եւ ի վեր, քան զհրամանն ստեղծ... էջ 200= Հարցարան, Զ հարցի վերջը:

-Ով յիմար ընթերցող, յամենայն մոլորութեանց չեղեն քեզ բաւական ճշխարք մարտիրոսաց, որ եկեալ եւ դադարեալ են առ քեզ եւ հանապազ խնդրին վասն քո ... էջ 197 = հմմտ., Եզնիկ, **ա 22:**

- Արդ եթէ ոք հաւատովք առ Աստուած անկանի, աղաչանօք ապաւինի ի ճշխարս մարտիրոսաց, ընդունի բժշկութիւն ցաւոց, զհալածումն ախտի եւ զելումն դիւաց. էջ 188՝ հմմտ., Եզնիկ:

Կան և ուրիշ ընդհանուր կետեր և մանավանդ անճմիշխանության սկզբունքն է, շատ որոշ և պարզ ձևակերպված, որով մոտենում է Եզնիկին: Սակայն ամլության վերաբերեալ ակնարկը և ճշմարուկի օրինակը, որ միայն Հարցարանում ենք գտնում, երևան է հանում հեղինակի ծանոթությունը և մեր հիշատակարանի հետ:

Այսպիսով և այս փաստը, որ Հարցարանս երեց է, քան Մանդակունու անունը կրող ճառը, գալիս է ուժ տալու մեր մի շարք դիտողություններին նրա և Եզնիկի փոխհարաբերության նկատմամբ: Դիտողություններս առանձին առանձին առած գուցե և տկար, բայց հատ հատ թելեր են, որ միասին կազմում են առասան, կապելով **«Եղծ աղանդոցը»** Հարցարանիս: Եվ այս կապը համոզիչ է մանավանդ եթե նկատի առնենք Եզնիկի գործի ընդհանուր կազմը, որի վերլուծումն արել ենք «Բազմավեպ»-ում, ինչպես հիշեցինք վերև:

Հիշատակարանիս և Եզնիկի մեզ զբաղեցնող էջերը, անկախ արտահայտածս հայացքից, առաջնակարգ նշանակություն ունին, իբրև ժողովրդական մտաշխարհի թանկագին գոհարներ, արժանի հատուկ ուսումնասիրության (5):

Գրությունս արդեն պատրաստ էր, երբ դիպվածով ծանոթացա **«Patrologia Orientalis»** խմբագրության մեջ **«Հարցմունք Եղիշայի»** կարևոր հիշատակարանին: Տարաբախտաբար չկարողացանք օգտվել մեզնից անկախ պատճառով: Հնարավոր եղավ միայն աչքի անցնել: Վերև հիշած **Վարդանի** հարցմունքի ամփիոփական աղբյուրը այս հիշատակարանն է անպայման (6):

ՆՇԱՆԱԳԻՐ ԿԱՐԳԱՑ ՔԱՆԻՑ ԵՋՆԿԱՆ ԵՐԻՑՈՒ

Պարիսի Ազգային Մատենադարանի հայ ձեռագրական հավաքածուի մեջ կարևորագույններեն մեկն է թիվ 51, ուր ցուցակով թիվ 112, ձեռագիրը, որ պարունակում է **«Ցաճախապատումը» և Ագաթանգեղոս**, և գրված է 1254 թվին Իտալիայում ոմն Վարդանի ձեռքով:

Ձեռագիրն իր նախնական վիճակի մեջ չէ: Երևում է քայքայված դրության մեջ է եղել և մի անհայտ ձեռք նորոգել է, կարկատել, և մի կարևոր փոփոխություն մտցրել: Ներկայումս **«Ցաճախապատումը»** բռնում է թղ. 1-104, որից թղ. 1-58, ուրեմն գրեթե կեսը նոր գրչություն է և պատկանում է նորոգողին: Թղ. 104, 105, 106 և 107 պարապ են, իսկ թղ. 108-րդ սկսվում է Ագաթանգեղոս և հասնում մինչև 292ա: Թղթերի թվագրողը սխալմամբ մի թուղթ չէ համարել, և Ագաթանգեղոսի վերջին թուղթը հաշվել է 291, փոխանակ 292: Գրությունը երկսյուն է և թղ. 292-ի առաջին էջի երկրորդ սյունակի կեսից սկսվում է Եզնկիկ Երեցի **Նշանագիրը**, հետևում է թղ. **293բ «Ժամանակի հայրապետաց հայոց»** պատառիկը և վերջանում թղ. 294 գրչի հիշատակարանով:

Ձեռագրի նորոգողը նշանակել է ստորին լուսանցքներում տետրակների թվահամարը՝ Ա-ԻԶ, ընդամենը ուրեմն 26 տետրակ:

Սակայն բուն ձեռագրում, գրիչ Վարդանի ձեռագրում, առաջին տեղը բռնելիս է եղել **Ագաթանգեղոս** և երկրորդը՝ **«Ցաճախապատումն»**, ինչպես կարելի է տեսնել տետրակների հին թվահամարից, որ տեղ-տեղ պահվել է ստորին և վերին լուսանցքներում, շատ տեղ փոխել է նորոգողը: Այսպես **Ագաթանգեղոսի** առաջին էջի ստորին լուսանցքում պարզ նշմարելի է Ա տառը, առաջին տետրակը, և **«Ցաճախապատումի»** վերջին տետրակը կրում է Զ տառը, որից հետևում է, որ ձեռագիրն իր սկզբնական վիճակի մեջ ունեցել է 27 տետրակ՝ Ա-Զ: Նորոգողն Ա ուղղել է ԺԱ ավելցնելով Ժ տառը հին Ա-ին՝ նոր թանաքով և նոր գրչով: Նմանապես հին Ո ուղղված է Զ, հին Զ ուղղված է Է: Միայն **Ագաթանգեղոսի** բնագիրը բռնել է հնումն 16 տետրակ, իսկ **«Ցաճախապատումը»**՝ 11: Նորոգողն, ինչպես հիշեցինք, արտագրել է նորեն **«Ցաճախապատումի»** գրեթե կեսը, առաջին 14 գլուխները, արտագրել է ավելի սեղմ գրով. ամփոփելով ամբողջ երկը տասն տետրակում, փոխան իր օրինակի 11 տետրակին, ուրեմն մի տետրակ խնայողություն է արել, և որովհետև կարգը փոխել է դնելով **Ագաթանգեղոս**

հետ **«Ցաճախապատում»**, ուստի և Ագաթանգեղոսի առաջին տետրակի Ա դարձրել է ԺԱ-րդ:

Այս փոփոխությունն արժանի է ուշադրության ահա՛ ինչ նկատումով: Եթե բուն ճեռագիրն ունեցել է Ագաթանգեղոս- **«Ցաճախապատում»**, փոխանակ այժմյան **«Ցաճախապատում»**- Ագաթանգեղոսի, պետք էր սպասել, որ գրչի հիշատակարանը զետեղված լիներ **«Ցաճախապատումից»** հետո, ինչպես սովորություն է: Մինչդեռ այստեղ հիշատակարան չկա, այլ քանի մը բաց, չգրված թղթեր: Բնականորեն հարց է ծագում, արդյոք նորոգողը տեղահան չէ արել հիշատակարանը, ուր, նկատենք, գրիչը կոչում է իր գործը **«Աստուածաշունչ տպրք տառ Սրբոյն Գրիգորի»**, որ թերևս ավելի **«Ցաճախապատումին»** է պատշաճում, քան Ագաթանգեղոսին, որի վերնագիրն է ճեռագրում **«Պատմութիւն նահատակութեանն Սրբոյն Գրիգոր Լուսաւորչին» Ագաթանգեղոս**: Եթե գրչի հիշատակարանն իր բուն տեղը չէ, այն ժամանակ հարց է ծագում, արդյոք **«Ժամանակի հայրապետաց»** գրությունը լրի՞վ է և թուղթ չէ՞ պակաս, ուր թերևս շարունակվում էր կաթողիկոսների ցանկը: Վերջին անունը՝ Ստեփ[անոս] ջնջված է: Ինչո՞ւ: Առաջին յոթն անունները գրավում են ամեն մեկը մի տող, մնացածները երկուսը՝ մի տող, բացի վերջին տողից ուր սեղմված են երեք անուն: Վերջընթեր տողը՝ Դավիթ, Տրդատ և Բ (այսինքն՝ Դավիթ երկրորդ) իսկապես երկանուն է, քանի որ Դավիթ երկրորդի անունը զետղված է: Վերջին տողի երկրորդ անունը ջնջված է, որպեսզի այս տողն ևս մյուսների նման երկանուն լինի և թերևս կամեցել է ջնջված Ստեփ[անոս] անունը տեղափոխել հաջորդ թուղթը: Այս կարող է հիմ տալ կասկածելու, որ պակաս թուղթ կա, մինչդեռ հաջորդ թուղթը բռնում է գրչի հիշատակարանը:

Սակայն եթե գրիչը տրամադրել է մի թուղթ ևս ուր ենթադրաբար պիտի գրեր Ստեփանոսի և հաջորդների անունը, այդ պարագային ի՞նչ պետք ուներ սեղմելու իր գրությունը և ամեն տողում երկու երկու անուն զետեղելու, փոխանակ շարունակելու, ինչպես սկսել էր, մի մի տող հատկացնելու անուններին: Տողերի թիվը ևս 27-ից հասցրած է 32-ի, գրության խտացումը մի բան կարող էր նշանակել՝ այն է սպառել անունների ցուցակը մի էջի վերա առանց անցնելու նոր էջի: Մի ուրիշ հանգամանք: Ճեռագրի գրիչը սովորություն չունի թղթե թուղթ անցնելիս նշանակել ստորին լուսանցքի անկյունում հաջորդ էջի սկզբի բառերը թղթերի հաջորդական կարգը պահելու համար, ինչպես ընդունված է հին ճեռագիրներում, երբ էջերը թվագրելու եղանակը տակավին գործածական չէր: Միայն մի բացառություն է արած. վերջընթեր թղթի լուսանցքում, ջնջված Ստեփ[անոսի] անվան ներքո կարդացվում է՝ **փառք ամենա-**, որ է հաջորդող հիշատակարանի սկսվածքը՝ **փառք ամենասուրբ**: Սրանով կարծես թե փարատում են վերև հայտնած կասկածները թե պակաս թուղթ կա **Հիշատակարանից** առաջ:

Ձեռագրի ընդօրինակիչը շատ տեղ ավելացրել է փոխանցագրությունը, անշուշտ քայքայված թղթերի կապը որոշելու համար: Եվ որովհետև ո՛չ հին ձեռագրում և ո՛չ իր վերստին ընդօրինակած մասում չկան փոխանցագրություններ, կարելի է կարծել, որ **փառք ամենա-** ընդօրինակիչի կողմեն է ավելցրած և ոչ թե պատկանում է բուն գրչին: Ձեռագիրը քննել ենք շատ տարիներ առաջ և այն տպավորությունն ենք ունեցել, որ գիրը նման է ձեռագրի գրչության: Թերևս ստուգելու պետք կա: Սակայն այժմ մեր քննության նյութն է Եզնիկի **Նշանագիրը**, որի հետ հարուցած խնդիրն աղերս չունի:

Եզնիկի այս գործը հայտնի է շատոնց և արդեն հրատարակված է 1893 թվին Արշակ Տեր-Միքելյանի ջանքով (1), որ Ս. Էջմիածնի ճեմարանի խոստումնալից սաներիցն էր և մեռավ երիտասարդ հասակում, աշակերտել էր Գերմանիայում նշանավոր Հ. Գելցեր գիտնականին և էր դասընկեր Կարապետ Տեր-Մկրտչյանի՝ հայտնի եկեղեցականի:

Տակավին Ա. Բագրատունին օրինակել է Եզնիկի **Նշանագիրը** Պարիսի ձեռագրից 1823-1824 թվերին և «Հայկազյան բառարանի» հորինողները օգտվել են այդ ընդօրինակությունից (տե՛ս «խառնակ» բառը): Հ. Գաթըրճյան ևս ընդօրինակած է եղել և նորերս հրատարակեց հ. Ն. Ակինյան **«Հանդես ամսօրյայի»** մեջ[1] հանդերձ քննական ուսումնասիրությամբ:

Չգիտենք միայն, ինչո՞ւ **Նշանագիրը** անվանած է **Նկարագիր**. թվում է, թե անուշադիր ընթերցանության վրիպանք է: Հ[այր] Ակինյան կարծում է, որ **Նշանագիրի** հեղինակ Եզնիկ Երեց ոչ այլ ոք է, եթե ոչ նշանավոր Եզնիկ Կողբացին: Նույն կարծիքն հայտնել է նրանից առաջ հ. Բ. Սարգիսյան: Վերջինս տեղեկությունը շփոթ է **Նշանագրի** ձեռագրական դրության նկատմամբ. ուստի ավելորդ չհամարեցինք նորեն հրատարակելու այնպես ինչպես ձեռագրի մեջ է: «Ագաթանգեղոս պատմության վերջը, - գրում է հ. Բ. Սարգիսյան, կա մի ծանոթագրություն, ըստ որում Ագաթանգեղոս համար կսվի թե թարգմանված է Եզնիկ Երիցու ձեռքով ի հայրապետության Կոմիտաս կաթողիկոսի... այս ծանոթագրության կիաջորդե **«Նշանագիր կարգաց** հիշատակարանը»: Ծանոթագրություն ասելով հ. Բ. Սարգիսյան ի նկատի ունի **Նշանագրի** վերջին նախադասությունը «Եղիցի յիշատակ Եզնակն ի թարգմանել զգիրս զայս»: Նրա ենթադրությամբ այս հիշատակագիրը վերաբերում է Ագաթանգեղոսին և սկզբում կցված է եղել նրան և հետո տեղը փոխել է **Նշանագրի** հավելումով: **Նշանագիրը** առանց վերջին կտորի, Հռիփսիմեի վանքի ընդօրինակության, պատկանում է, նույն հ. Բ. Սարգիսյանի կարծիքով, Եզնիկ Կողբացու գրչին և հետևապես պետք է

[1] **«Հանդես ամսօրյա»**, 1937, № 11-12 (2):

ընդունիլ, որ անհարազատ կտորի ներմուծումով հիշատակագիրը միանգամ ևս փոխել է իր տեղը և կարգվել այս կտորի վերջը, ինչպես այժմ է: Եզնիկ Կողբացին որպես թե թարգմանած լինի հունարեն համառոտ բնագրեն Ագաթանգեղոս և նրա ընկերակից Կորյուն թարգմանություն ճոխացրած և ընդարձակած[1]:

Հ[այր] Սուքիաս Պարոնյան, նախկին Մխիթարյան, որ Հասունյան խռովության առթիվ դարձավ մայր եկեղեցու գիրկը և հովիվ կարգվեց Պարիս, տակավին 1867 թվին կազմել է [Փարիզի] Ազգ[ային] Մատենադարանի հայ ձեռագիրների ցուցակը կարևոր դիտողություններով (3), այն միտքն էր հայտնել, որ Եզնիկ Երեցը Կողբացին չէ, այլ Կոմիտասի ժամանակակից ոմն, որ հեղինակել է **Նշանագիրը** և թարգմանել հունարենից **Ագաթանգեղոսը**: Այս կարծիքը հավանություն է գտել և l'abbé Martin-ի [կողմից], որ Պարոնյանի ցուցակը թարգմանել է ֆրանսերեն և լրացրել (4), և հայտնի հայագետ V. Langlois-ի (5) կողմեն:

Հ[այր] Սարգիսյանի և հ. Պարոնյանի ենթադրությունները Ագաթանգեղոսի վերաբերյալ անընդունելի են: Հ[այր] Ակինյան իրավամբ ընդդեմ է արտահայտվում Եզնիկ Երեցը Ագաթանգեղոսին կապելու ճախող մտքին: Եվ այս նրա ուսումնասիրության դրական կետն է: Ինչ վերաբերում է **Նշանագրին**, նա հարում է հ. Սարգիսյանի կարծիքին, և աշխատում է հիմնավորել այն, ինչ որ սոսկ ենթադրություն էր իր նախորդի կողմեն:

Բ. Սարգիսյան անհարազատ էր համարում միայն վերջին մասը՝ Ս. Հռիփսիմեի նորոգության մասը, հ. Ակինյան զեղչում է նաև Ս. Սահակին և Ս. Մեսրովպին նայող հատվածը:

Մենք բոլորովին տարբեր հայացք ունինք խնդրի վերա: Նախ ավելորդ չենք համարում միանգամ ևս վերարտադրել ստորև վավերագիրը ամենայն հարազատությամբ համաձայն ընդօրինակության, որ արել ենք տարիներ առաջ Պարիսի ձեռագրից:

---

[1] **Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հատ. Բ, 1924, էջ 1060: Հմմտ. նաև՝ «Ագաթանգեղոս և յուր բազմադարձյան գաղտնիքն», Վենետիկ, 1890, էջ 315:**

Թ. 292ա Եզնկացւոյն երիցու, թէ ուստի էին կամ որպէս: Զիարդ յաջորդութիւնք թագաւորացն
Տրդատայ, և քահանայապետիցն, ի սրբոյն Գրիգորէ որ կայիմ մինչև առ մեզ: Վարումն փոքր ի շատէ դրոշմեալ վասն գիտութեան ի վերայ հասանելոյ:
Ցետ Տրդատայ թագաւորեաց որդին իւր որ կոչեցաւ Փոքր Խոսրով: Ի սորա աւուրս եկաց քահանայապետ երէց որդին Գրիգորի Վրթանէս:
Ցետ նորա Տիրան որդին Խոսրովու, ի սորա աւուրս
Թ. 292բ Յուսիկ որդի Վրթանիսի եկաց քահանայապետ:
(Ցետ նորին թագաւոր) յաւուրս Տիրանայ:
Ցետ մահուան Յուսկանն կալաւ զքահանայապետութիւն. հայոց Փառներսէհ ոմն, մի յազարակէն մատրանն
Յովհաննու ի Տարաւն գաւառէ ի Մեհենա գեաւղն, որ մայր է եկեղեցեացն հայոց այսինքն նախ ածդ եկեղեցի զառաջին շինեալ:
Ցետ նորա թագաւորէ Արշակ որդին Տիրանայ:
Ի սորա աւուրսն Ներսէս որդի Աբանագինէի եկաց յաթոռն Յուսկանն, քառն Գրիգորի մեծի, զորմէ ասեն համեմատեալ Գրիգորի ի գործս կարգաց վարուց գնացից իւրոց: Չկնի սորա Սահակ: Սա եկաց կաթողիկոս: Եւ ապա Շահակ և Զաւրէն և Ասպուրակ կացին կաթողիկոսք որ էին ի գաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի:
Ցետ նորա Պապ որդին Արշակայ Ցետ նորա Վարազդատ (ի) նմին թագաւորութեանն առհմէ որ ապա աւտարակալութիւն: Ապա Խոսրո(վ) ոմն ի նմին առհմէ թագաւորացն հայոց: Առ սովաւ բաժանեցաւ զերկիրն հայոց ընդ երկու թագաւորս յունաց և թագաւորն պար(սից):
Պարսից կողմանն Խոսրով թագաւորէ, մասինն յունաց աշխարհին Աշակ ոմն ի նմին առհմէ թագաւորէ հրամանաւ յունաց թագաւորին:
Ցետ սորա կոմեսք կալան: Ցետ Վրամշապուհոյ որ կողմանն պարսից թագաւորեաց ապա ամս հարուստս մարզպանք պարսից կալան
մինչև առ մեզ:
Իսկ ապա Արտաշէզ որդի Վրամշապուհոյ թագաւորէ հրամանաւ պարսից արքային: Եւ ապա մար-

19. Վրթպակ. գրիչը կանխել է սխալմամբ գրել ինչ որ հետևում է 14-րդ տառում:
26. Թերևս ի մնենագեաւղէն:
34. Թառ (ի)ն:
45. Աշակ. հետո ավելացրած է ք տողին վերև:

զպանք պարսից կալաւ
մինչև առ մեզ:
Առ որով Ասպուրակէս
կաթուղիկոս: Եւ դարձեալ
առ որով ընտրեցաւ Սա-
հակ աւուն լինել կաթող-
Թ. 293ա իկոս, որ է որդի Ներսեսի
առաքինւոյ թոռն Աթա-
նագինէ թոռն սրբոյն Գ-
րիգորի: Առ սովաւ
դպրութիւնք հայոց յաջ-
որդեալ: Եւ կատարա-
նք եկեղեցւոյ ի սմանէ յառ-
աջ քարգմանեցան և
կարգք գործոցն Գրիգո-
րի նորոգեալ արամբ միով
երանելեաս Տարաւնացւոյ
որում աւուն Մասրովպ
ճանաչէր: Որ էառ զճեռնադրութիւն
երիցութեան
ի նմին Սահակայ կաթող-
իկոսէ: Սա եգիտ նշան-
ագիր դպրութեան հայե-
րեն լեզուին վարելոյ ալա
փետացն հանգամանս
յորում ժամանակի լցան
նորաւք կարգքն յառաջա
դիմութեան:
Եւ նոցուն աշակերտ Վևոնդ
այր սուրբ և ընտրեալ և ճշմա-
րիտ ի գործ մշակութեան
Այ. Արձան և Կորիւն
և Եզնիկ և արբանեակք
նոցուն լուսաւոր հան-
դիսից ճեռնադրեալ
են ի ն(մին) սրբոյ կաթողի-
կոսէ:
Եւ եղև հանումն և նորո-
գումն նոսկերացն սրբոցն
Գայիանեայ և Հռիփսիմեա
և ընկերաց նոցին ի Սահա-
կայ կաթողիկոսէ, զի եղ-
ածովն Գրիգորի կային նո-
քա: Եւ շինեաց զվկայար-
անսն վիմատաշ կոփա-
ծոյ քարամբք ի Վաղարշա-
պատ քաղաքի: Եւ նորո-
գեաց զառն Այ. այսինքն
զսուրբ եկեղեցին:
Զի մեծին Գրիգորի եղեալ
էր զհիմունս զայն, որպէս
և ցուցեալ էր տեսլեանն երև-
եցելոյ: Բազում և այլ տե-
ղիս նորոգեալ է սուրբ և
ճշմարիտ կաթողիկոսն մեծ
Սահակ: Եւ ապա շինե-
ացն զսուրբ
եկեղեցին և զ-
վկայարանս սրբոցն ընդ ա-
մենայն տեղիս Հայոց Մեծաց:
Եւ եղև այս ի յամս Արդլաի
վաճաց երիցու սրբոյ ի Վա-
ղարշապատ քաղաքի: Մինչև
յաւուրս Կոմիտա-
Թ. 293բ սայ սրբոցն Հռիփսիմեա-
նց սպասաւորի որ արժա-
նի եղև աթոռոյն սրբոյն
Գրիգորի որ ցանկացաւ
նորոգել զեկեղեցիսն որ-
ում և շնորհեցաւ մեզ ի Քէ.:
Նախ նորոգել զսուրբ կա-
թողիկէն և ապա զվկա-
յարանսն սրբոյն Հռիփ-
սիմէի որ կայր նովին
տապանաւ սրբոյն Գրիգորի
պատեալ իւրովք ճեռաւք.

---

129. Արդլաի անվան մեջ վերջին ա-ի երրորդ տառերի փոխարեն մի կետ է:

132. «Մինչև յաւուրս» ուզում է ասել՝ **Եւ այսպէս նկատ մնաց մինչև** յաւուրս. ոճաբանական թերություն է անվարժ գրչի:

145 ողջ և անքակ խառնակք
յաւդիցն նովին հանդեր-
ձով: Որ արդեաւք ան-
հաւատալի քուիցի զկը-
նի մեր եկելոց, այլ մեր-
150 ովք իսկ ձեռովք արժա-
նի եղաք շաւշափել յա-
րղիման բազմամբոխ
հրապարակաց զոր
փոխեաց ի հանգիստ ի
155 նոյն յարկս զոր շինեաց
արաստոյ վիմաւք յա-
ուրս Յոհաննկան սրբոյն
կաթողիկէի վանաց երի-
ցու և Կամովէղի նորուն
160 սրբոյն Հռիփսիմէի **վան-**
ից երիցու ի **Վաղարշապա-**
տ քաղաքի:
Քսանևիններորդ ամի **խո-**
րովայ արքայի **ց ամաքա**
164 յի որդւոյ Որմզդի:
Եղիցի **յիշատակ** եզնակն
ի քարգմանել զ գիրս զայս.

162 **ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅՐապետաձն**
ՀԱՅՈՑ:

165 Սրճ. Գրիգոր, **ամս լ.**
Սրճ. Ռստակէս, **ամս է.**
Սրճ. Վրթանէս, **ամս ժէ.**
Սրճ. Գրիգորիս, **ամս ժէ.**
Սրճ. Յուսիկ, **ամս զ.**
170 Սրճ. Ներսէս **ամս գ.**
Տր. Փառներսէս **ամս դ.**
Տր. Շահակ զ. Տր. **զօրէն դ.**
Տր. Ասպուրակէս **ամս է.**
Սրճ. Սահակ խա. **Տր. Գադ ժէ.**
175 Տր. Յոհան Մանդակունի **ծր.**
Տր. Բարգէն Ե. Տր. **Սամուէլ ժ.**
Տր. Մուշէ ը. Տէր Սահակ **ժ.**
Տր. Քրիստափոր զ. Տէր **Վահան դ.**
Տր. Ներսէս ի. Տր. **Յովհաննես ժէ.**
Տր. Մովսէս լ. Տր. **Աբրահամ իգ.**
Տր. Յոհան իզ. Տր. **Կոմիտաս**
Տր. Քրիստափոր Գ. **Եզր ժ.**
Ներսէս ի. Անաստաս զ. իէ. լ
Սահակ իզ. Եղիա ժզ.
185 Դաւիթ ծզ. Տղայտ իգ. **ը. ա**
186 Սիոն իէ. Եսայի ծզ. Ս|տե|փ. **ը.**
փառք ամենա

---

163. Կարդալ՝ արքայից արքայի:

165. Եզնակն փոխ. Եզնկան, նորոգողը սխալվել է և գրել ակ փոխ. կա-ի:

186. Ստեփ. անվան վրան քանի մը շեղ գիծ է քաշած, ջնջել ուզելով, բայց ատրնթիվը ջնջված չէ:

160-186. Նոտրատիպ բառերը գրված են վերջին նորոգողի ձեռքով: Ինչպես երևում է թղթի այդ նեղ շերտը վերևից վայր խոնավությունից, թե այլ պատճառից վնասված է եղել և գրերը դժվարընթեռնելի կամ եղծված: Ուստի նորոգողը թղթի երկայն շերտ է կպցրել վնասված մասի վերա և ինքը վրան գրել անշուշտ ըստ ձեռագրի:

Թ. 294ա Փառք ամենասուրբ երրորդութեանն հաւր և որդւոյ և
սրբոյն հոգւոյն յաւիտեանս յաւիտենից, ամէն:
Շնորհիւն այ. սկսայ և ողորմութեամբ նորին կատարե-
ցաւ **ածաշունչ սր. տառս սրբոյն Գրիգորի** հայոց լու-
սաւորչի ի խնդրոյ երջանիկ առաքելաշնորհ եպիսկո-
պոսին Յովանիսի և սրբասնեալ քահանայից Դանիէլի
և Սիմէոնի, զի բազում յուսով և փափագանաւք ցա-
նգագող եղեն սր. գրոցս ի վասն յիշատակի իւրեանց:
Եւ ես պատճառեցի զանկարութիւն իմ բայց տեսի զյոյս
դոցա և ի յանձն առի, առաւել վասն բազում մեղաց ի-
մոց յուսալով իմ յողորմութիւնն այ. և ի բարեխաւսու-
թիւն սր. հայրապետին Գրիգորի:
Արդ գրեցաւ գիրքս այս ձեռամբ մեղաւոր և անար-
ժան եւ անպիտան կիսամեռ եւ դանդաղ փցուն գրչի Վար···[1]
ի թուականիս հայոց չգ. ի քաղաքիս որ կոչի Անի ընդ
հովանեաւ սր. տաճարիս որոյ յանուն սր. աւետարան-
չացն Յոհաննու և Մատթէոսի և է սա հոգեւոյն հա-
յոց: Եւ ես սուտանունս **Վարդան գրեցի** զգիրքս զայս
եւ եդի զայս յայսմ եկեղեցւոջ ի յիշատակ ինձ և ծնաւ-
ղաց իմոց հաւր և մաւր որ ըստ մարմնոյ և հարազատի
ն իմոյ Ստեփաննոսի քահ. և քեռն իմոյ և որդւոյն Յոհաննիսի
որոց ողորմեսցի տր. ած. և հանգուսցէ ընդ սրս. իւր
աղաչանաւք սրբոյն Գրիգորի Լուս. և ամենայն սրբոց
ընդ նմին ողորմեսցի տր. քս. երջանիկ եպիսկոպոսին
Յովհաննէսի և սրբասնեալ քհից. Դանիէլի և Սիմէոնի
և ծնողաց իւրեանց և բնաւ զարմից ազգանաց. ամէն:
Ողորմեսցի ած. աշխատողաց ի գիրքս և որ հանդիպեցան
յայսմ տեղւոջ և աշխատեցան ի սպասաւորուն. տկարութեանս.
մերոյ ամէն, Պաւղոսակ, Պալաւակ:

Արդ այս երկի առաջին մասը՝ սկզբից մինչև 79-րդ տողը (Առ սովաւ դպրութիւնք) ի. Ակինյան ընծայում է Եզնիկ Կողբացուն:

Հ[այր] Ա[կինյան] ընդունում է, որ գրվածքիս հեղինակը «աչքի առաջ է ունեցած Փավստոսի Պատմությունը» և մատնանշել է քանի մը կետեր, բայց ոչ բոլորը: Խնդրի պարզաբանության համար անհրաժեշտ է նշանակել բոլոր քաղվածները:

Գրության խորագիրն անգամ կրում է Փավստոսի «Խոստաբանութեան»

[1] Վրան կետեր դրած որպես ջնջված նշան:

նշմարելի ազդեցությունը. **«կարգ** անցելոց իրաց, գործք և վարք.... ժամանակագիր արարեալ ի թագաւորութենէն **Խոսրովու որդւոյ Տրդատայ մինչեւ ի միւս վերջին ժամանակն վառաբարելոյ թագաւորացն Հայոց եւ ի քահանայապետութենէն Վրթանայ որդւոյ Գրիգորի** մինչև ցայնոսիկ ի վերջինսն.... **դրոշմեալ** նկարեցի .... առ ի զօգուտ ժառանգել որք միանգամ կամին սրտի մտօք հասու լինել սմին»: Նաև գլ. Ա՝ «եղաք **փոքր ի շատէ** ի կարգի պատմութեանն»:

«Ապա... թագաւորեաց **Խոսրով Կոտակ բռնն Խոսրովու,** որդի քաջի և առաքինւոյն Տրդատայ արքայի: Յաւուրս **որոց եկաց** և եղև **քահանայապետ** յաթոռոն հօրն **երէց որդին Գրիգորի Վրթանէս**» (նույն, Գ, 3):

«Տիրան որդի Խոսրովու առ զթագաւորութիւնն ընդ նմին **Ցուսիկ** յաջորդեաց զհետ **հարցն իւրոյ Վրթանայ**»: (Գ, 12) «ոչ ոք գոյր որ առաջնորդէր նոցա **զքահանայապետութիւն**... համարեցաւ արժանի **զՓառէն ոմն երից ի գաւառէն Տարօնոյ** ի մեծէ **մարգարէանոցէն*** յազարակն մեծի մարգարէանոցի» (Գ, 16):

«Նախ և **զառաջինն** եկեղեցին ի մայր **եկեղեցեացն** ամենայն Հայաստանեաց զի յառաջ նախ անդ էր շինեալ սուրբ եկեղեցին» (Գ, 14). յԱշտիշատ ուր զառաջինն էր շինեալ եկեղեցի» (Գ, 13):

«Թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ» (Դ, 1):

«Ներսէս որդի Աթանագինի զթոռն** քահանայապետին **Ցուսկան որդւոյ Վրթանայ որդւոյն Գրիգորի** մեծի» (Գ, 3):

«Զի վարս **կարգաց զնացից իւրոց նմանեալ հօրն մեծին** Գրիգորի արդարև հայրաբարոյ» (Գ, 4):

«Եւ էր **Ջաւէն** այս անուանի **զաւակ Աղրիանոս եպիսկոպոսի** » (Զ, 2):

«Ապա Շահակ Կորճեայ եկաց գլուխ եպիսկոպոսաց **Աստղուրակ ոմն ի զաւակէ Աղրիանոսի** (Զ, 4 և 15) «թագաւորեցոյց **զՊապ զորդին Արշակայ**» (Ե, 1):

«Ցետ մահուն Պապայ **զՎարազդատ ոմն** ի նմին տոհմէ: Տային զաշխարհն հայոց ի ձեռն Սուրենայ **մարզպանին»** (= օտարակալութիւն՝ **Նշանագրի**) (Ե, 38):

«Ապա գտաներ **ի նմին տոհմէ** մանուկ մի անուն Խոսրով և կապեաց թագ ի գլուխ նորա» (Զ, 1):

---

* **Նշանագրում** մարգարէանոց հին և անգործածական բառը փոխարինված է ավելի ընդհանուր՝ **մատառում** բառով:

** **Նշանագիրն** ունի «յաթոռոն Ցուսկան», որ կարելի էր թերևս սխալագրություն համարել փոխան «թոռին», եթե չլիներ վերև հիշած՝ «եկաց յաթոռոն հարցն»:

«**Թագաւորն Ծուճաց եւ թագաւորն Պարսից** լաւ համարեցաւ զաշխարհն Հայոց նախ **ընդ երկուս** ի մէջ իւրեանց **բաժանել** ընդ երկու զաշխարհն բաժանեցին:

Բաժին **կողմանն Պարսից** էր թագաւորին **Խոսրովու** և բաժին **մասին Ծուճաց** էր թագաւորին Արշակայ» (Ջ, 1):

Ահա այս քաղվածներից են կազմված **Նշանագրի** այն մասը, որի հեղինակն է, ըստ ի. Ակինյանի Եզնիկ Կողբացին: Վռամշապուհի և Արտաշեսի վերաբերող տողերը 60-70, մատնում են այլ աղբյուր: Կանգ առնենք առայժմ Փավստոսից հանած մասի վերա:

Հ[այր] Ակինյան «դասական նկարագիր» է տեսնում խորագրի լեզվի և ոճի մեջ: Թողնենք, որ Եզնիկին վերագրելու համար բավական չէ դասական կոչված տարտամ կնիքը, պետք է Եզնիկյան կնիք, որ ավելի որոշ հասկացողություն է: Հանճնարարված բառերից «նկարագիր» գոյություն չունի, ինչպես տեսանք, այլ «նշանագիր»: Հների մոտ «նշանագիր» նշանակում է «տառ», *στοιχεῖα:* Ագաթանգեղոսն է, որ գործ է ածում «դպրի, գրողի» իմաստով: Իսկ **խորագրում** «նշանագիր» է «գրուածք, գրութիւն»՝ իմաստ որ դասական չէ: «Կարգ» չէ նշանակում պատմություն, այլ միմիայն կարգ, «կարգ բանից», «կարգ գործոց»՝ հաջորդություն բանից, գործոց, և «նշանագիր կարգաց բանից» է, որ շարադրության, պատմվածքի իմաստ ունի: Չէ կարելի անջատել «բանից» բառը, ինչպես ի. Ակինյան է անում, որովհետև «նշանագիր կարգաց» ոչինչ չէ նշանակում, ամեն պարագայից չէ նշանակում «պատմութիւն», «փոքր ի շատէ» ոչ Եզնիկյան է և ոչ սուրբգրենական, իսկ «դրոշմել»՝ սովորական բառ է անկարող որակել որևէ ոճ: «Վասն գիտութեան ի վերայ հասանելոյ»՝ անհաջող նախադասություն ոճի տեսակետից:

Մնում է «վարումն», որ արժանի է ուշադրության: Հ[այր] Ակինյան կարծում է, որ «վարումն» նշանակում է «ամփոփումն, համառօտ առաջերութիւն, համադրութիւն»: Ինչո՞ւ և ինչպե՞ս: «Վարումն» գործողության անուն է «վարել» բայի, վարել զիշխանութիւն, զկեանս, որից և վարումն իշխանութեան, կենաց: Հետևապես «վարումն փոքր ի շատէ դրոշմեալ» այլ միտք չունի քան «վարումն (իմա՛ թագավորության կամ հայրապետության) և կամ ինչ որ մենք այժմ անվանում ենք «վարմունք», նույն անվանի հոգևակից:

Հ[այր] Ա[կինյան] գտել է **նույն** «վարումն» բառը Եփրեմ Ասորու թարգմանության մեջ, բայց ուշադ ևս չի նշանակում «ամփոփումն, համառօտ յառաջերութիւն»:

Եփրեմ Ասորին կոչում է Մնացորդաց գիրքը «Դպրութիւն Իրրամենու» և իր մեկնությունը սկսում է այսպես. «Մատենագիրն Դպրութեան Իրրամենու,

զի է մեկնութիւն նորա Դպրութիւն՝ վարումն առաց թագաւորաց Յուդայ»...

Խոսքն «Իբրամենու» մասին է, որ Մնացորդաց գրքի ասորական անունն է: Բուն եբրայական անունն է **Սեփեր Դիբրէ Հայամիմ**, Sepher Dibhrêy Hayamîm, որ հիշատակվում է Դ. Թագ. մեջ «Մնացորդ բանից գրեալ են ի գիրս բանից առաց թագաւորացն Յուդայ», *ἐπὶ βιβλίῳ λόγων* (կամ *ῥημάτων τῶν ἡμερῶν*[1]: Ուրեմն բուն հին անունն է՝ **Գիրք բանից առաց,** որ Յոթանասունք փոխել են Մնացորդաց-ը:

Եբրայական անունն անցել է ասորերեն նախ որպես **Դիբրեամին**, Dibryamin, հետո խանգարվել դարձել է Իբրեամին, ibryamin, անգամ Բրեամին Bryamin, սկզբի դի, di վանկի զեղչումով, որն ասորի գրիչները շփոթել են իրենց լեզվի համահնչյուն նախդիր-ի հետ: Եփրեմ Ասորին, մեկնության հեղինակը հարկավ գիտեր անունին ծագումը և անպարտ է հետագա աղճատման համար:

Հայ թարգմանության մեջ ևս բառը ներկայանում է արդեն աղճատ ձևով, Իբրամեն փոխանակ Դիբրամեն (ավելի ճիշտ Իբրամին, Դիբրամին): Հավանորեն թարգմանիչը չէ պատասխանատու աղճատումին, այլ այդպես է գտել իր ասորի օրինակում:

Արդ «Դպրութիւն Իբրամենու» համապատասխանում է Sepher dibryamîn, ուր դպրություն նշանակում է sepher «գիրք»: Յաջորդող խոսքերի մեջ՝ «զի է մեկնութիւն նորա դպրութիւն՝ վարումն առաց», պարզ չէ թե ի՞նչ միտք ունի «Դպրութիւն» և ի՞նչ է պաշտոնը կցորդ «վարումն»-ի: Եթե դպրություն այստեղ ևս նույն sepher-ն է և ուրեմն «վարումն» է զուգակշիռ dibhrey-ի, պետք էր սպասել, որ «վարումն» դրված լիներ այս դիրքում սեռական հոլովով և ո՛չ ուղղական: Իսկ ենթադրել, թե այստեղ «դպրութիւնն» է ներկայացնում dibhrêy և «վարումն» է լոկ բացահայտիչ, նշանակում է ընդունիլ, որ միևնույն բառը միևնույն պարբերության մեջ եռակի առումով է գործածված: Այս անհավանական է:

Գերադասելի է առաջին ենթադրությունը: Քերական անհարթությունը կվերանա, եթե «Դպրութիւն» կարդանք «Դպրութեան»: Մատենագիրն «դպրութեան Իբրամինու զի է մեկնութիւն նորա (մատենագրի) դպրութեան՝ վարումն առաց», այսինքն հեղինակի գրքի (անվան) մեկնութիւնն է «վարումն առաց»: Կամ պետք է հաշտվիլ քերական անհարթության հետ և հասկանալ այսպես. «զի է մեկնութիւն նորա (Իբրամինու)՝ դպրութիւն «վարումն առաց»: Այսպես թե այնպես մեզ հետաքրքրող «վարումն» համապատ է dibhrêy բառին և ավարտ՝ yamîn: Յոթանասունք, ինչպես

[1] Դ Թագ., ԻԴ, 19 և 29. ԻԵ հատված:

հիշեցինք, թարգմանել են այս բառը *λόγοι*, մերոնք հավատարմությամբ՝ **«բանք»** Իրրամին = «բանք աւուրց», *λόγοι τῶν ἡμερῶν*: Արդ երբայագետների կարծիքով dibhrey նշանակում է «իրք, գործք», ուրեմն իրք «աւուրց թագաւորաց», թագավորների կյանքը, անցուդարձը: «Վարումն աւուրց» = աւուրք վարեալք, ապրած, քաղած օրեր թագավորների վարքը, վարմունքը: «Վարումն» եզական բառ է և հավանորեն կաղապարված պահլավ «վարիշն» varisn բառի վերա որի -իշն ածանցը հավասարազոր է հայերենի **ումն**-ի որպես կազմիչ բայանունների: **Վարիշն** նշանակում է վարք, կենցաղավարություն: Նիբերգ հայտնի իրանագետը varisn համեմատում է հայերեն «վարք»ի հետ, բայց կազմությամբ ավելի համապատասխան է «վարումն»-ի[1]:

Միանգամայն հավանական է, որ **Նշանագրի** հեղինակ գիտե «վարումն» բառը Եփրեմի թարգմանությունից: Պակաս չեն նման օրինակներ երբ հետնորդները քաղում են հին մատենագիրներից սակավածանոթ բառեր: Ագաթանգեղոսի «զուարափակ»-ը երևան է գալիս Մովսես Կաղանկատվացու մոտ, Եվսեբիոսի «խլվրտյուն»-ը՝ Թովմա Արծրունու մոտ: Այսպիսի բառեր անվանել դասական չէ կարելի, որովհետև դասական լեզվի մեջ ընդունված և հանրածանոթ չեն: Եփրեմի թարգմանությունը պատկանում է հետեզնիկյան շրջանին և «վարումն», որ Եփրեմից է անցել **Նշանագիր**, տանում է մեզ բոլորովին հակառակ եզրակացության, քան հ. Ա[կինյան] այն է, որ **Նշանագրի** հեղինակը հետեզնիկյան շրջանի մարդ է և չէ կարող ինքն եզնիկն լինել:

Այսպիսով՝ Փավստոսից քաղած մասը ոչ մի նկատումով՝ լեզվի թե ոճի, հիմ չեն տալիս եզնիկ Կողբացու վերագրելու:

Ինչ վերաբերում է այն տողերին 60-79, ուր հիշվում է կոմեսների, Վռամշապուհ և Արտաշես թագավորների, այլ և մարզպանների իշխանությունը, նրանք ևս օտար են եզնիկ Կողբացուն: Կոմեսների պաշտոնեությունը տևեց Հայաստանում մինչև 529 թվականը, ինչպես պարզել ենք մեր «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատության մեջ: Հետևապես, եթե հեղինակը ասած լիներ՝ կոմեսք կալան «մինչև առ մեզ», կարելի էր եզրակացնել, որ նա գրել է մինչև 529 թ., քանի որ չի ասում «մինչև առ մեզ», կոմեսների հիշատակությունը ժամանակագրական արժեք չունի, ինչպես չունի Խորենացու մոտ:

Մարզպանների համար ասված է, որ կալան «մինչև առ մեզ» և ասված է երկու անգամ, Վռամշապուհից հետո, և Արտաշեսից: Առաջնից հ. Ա[կինյան] հետևեցնում է, որ **Նշանագիրը** գրված պիտի լինի «հընթացս տասնամյա շրջանի, որ Վռամշապուհի և Արտաշեսի մեջ կ'իյնա, այն է ընդ մեջ 409-420 տարիներին»: Իսկ երկրորդ հիշատակությունը հավելված է

[1] **H. S. Niberg, Hilfbuch des Pehlevi, II, p. 233.**

համարում հեղինակի կամ ուրիշի կողմեն 430-442 տարիների մեջ, «վասնզի իրր 443 թվին մարզպան կարգվեցավ Վասակ, որ պարսիկ մարզպան չէր կրնար նկատվիլ»:

Սխալ հաշիվներ են. ի. Ա[կինյան] մոռացել է, որ Վռամշապուհի և Արտաշեսի մեջ «ոչ հարուստ ամբ» կային և ոչ որևէ մարզպան, բողոքե «մարզպանք»: Վռամշապուհին հաջորդեց Խոսրով երկրորդ անգամ և կարճատև թագավորությամբ և ապա Հազկերտ «թագաւորեցոյց զիւր որդին Շապուհ», ինչպես վկայում է Ղազար, «ի տեղի Արշակունւոյն»: Շապուհ Պարսիկը մարզպան չէր, այլ թագավոր և մեռավ 421 թվին իր հոր հետ միաժամանակ: Ապա թագավորեց Արտաշես, իշխեց վեց տարի: Այնուհետև «մարզպանք կալան», այսինքն՝ սկսվեց մարզպանական շրջանը: Պատմականորեն միայն վերջին հիշատակությունն է ճիշտ. առաջինը՝ գրչի անուշադիր կրկնագրություն է, (ինչպես 19-րդ տողի «յետ նորին թագաւոր», որ սխալ կանխագրություն է 30-րդ տողի): Մարզպանական իշխանությունը վերացավ Սասանյանների կործանումով և ուրեմն մարզպանք կալան «մինչեւ առ մեզ» խոսքը ավելի քան չէ լիազորում կարծել, քան որ հեղինակն ապրում էր մինչև Սասանյանների անկումը VII դարի կեսին:

Կոմեսներից մինչև Սահակ հատված լի բովանդակությունը հայտնի է Ղազարից և Կորյունից, բացի Ասպուրակես, Մասրովպ և Կոմեսք: Փավստոսից առնված կտորի մեջ՝ Ասպուրական է ինչպես Փավստոսի մոտ է: Ասպուրակես ուրիշ աղբյուրից է: Նմանապես Մաշթոցի Մասրովպ անունը, որ թերևս առաջին անգամ այստեղ է պատահում (համմտ. «**Գիրք Կոչեսրաց**», էջ 57 Մեսրովբ և Մասրոպ ընթերցումները): «Նշանագիր» գործ է ածված այստեղ, այլ և այն իմաստով ինչ որ Կորյունի և Ղազարի մոտ՝ տառի նշանակությամբ և ոչ նշանագրության, ինչպես խորագրում: Ապացույց, որ ուրիշ աղբյուրից է օգտվել հեղինակը: Դժբախտաբար Ղազար Փարպեցու առաջին գիրքը խաթարված է, մի ստոր ձեռք վրայից անցել է և չգիտենք, արդյոք կոմեսների և Ասպուրակեսի մասին հիշատակություն չի՛ եղել նախքան բնագրի խանգարումը:

Երկու հատվածների տարբերությունը բացատրում ենք ուրեմն, նրանով որ տարբեր աղբյուրներից են քաղած, մեկը՝ Փավստոսից, մյուսը՝ Ղազար-Կորյունից առավելապես, բայց երկուսի հեղինակը մի անձն է և այն, որ պատմում է Հռիփսիմեի նորոգության պարագան որպես ականատես, այսինքն՝ Եզնիկ Երեցը:

Համամիտ չենք, որ Հռիփսիմեի նորոգության հատվածը «չունի որևէ առնչություն առաջին մասի հետ»: Առնչություն կա և շատ սերտ: Եզնիկ Երեցը Ագաթանգեղոսի գործը ընդօրինակելուց հետո բարի ցանկություն է ունեցել ի շահ իր ընթերցողներին հակիրճ տեղեկություն տալ Տրդատի և Ս. Գրիգորի հաջորդների մասին: Ագաթանգեղոսի նյութը միայն Տրդատի և Ս. Գրիգորի պատմությունը չէ, այլ և Հռիփսիմյանց նահատակությունը:

Ուստի Ս. Սահակի գրական գործունեության հարելով և նորա շինարարությունը հիշում է, որ Լուսավորիչի շինած վկայարանը նորոգվել է նախ Ս. Սահակի և ապա Կոմիտասի ձեռքով: Ս. Սահակի նորոգության համար գրավոր աղբյուր է ունեցել, քանի որ հիշում է վանաց երեցի Արդլայի անունը: Իսկ Կոմիտասի օրով կատարված նորոգությունը և կույսերի տապանի բացումը Եզնիկ պատմում է որպես ականատես: Նորա պատմածը կախում չունի ո՛չ Սերեոսի համանման հատվածից և ո՛չ Վրթանես Քերթողին կորսված գրությունը, ուր որպես թե պատմված էր «վասն շինութեան վկայարանի Հռիփսիմեանց ի Կոմիտաս Կաթողիկոսէ»: Վրթանեսը մեռած էր տարիներ առաջ, երբ Կոմիտաս կաթողիկոսացավ և ապա ուրեմն չէր կարող Կոմիտասի նորոգության մասին բան գրել (6): «Հայկազեան բառագրք»-ի հիշած **Պատմութիւնը**, ինչ և լիներ նրա բովանդակությունը, թյուրիմացությամբ է կրում Վրթանես Քերթողի անունը (7):

Սերեոսի հատվածը Հռիփսիմյանց մասին ևս անկախ է Եզնիկից և պատկանում է Սերեոսին: Այս առթիվ եղած կասկածները ձրի են: Հատվածը զետեղված է Կոմիտասի՝ Մոդեստոսին գրած թղթից հետո, և անտարակույս Սերեոս պարտական է այդ հատվածը այն աղբյուրին, որտեղից հանել է նրա թղթակցությունը Մոդեստոսի հետ: Երևում է, թղթի վերջը հիշատակարանի ձևով պատմված է եղել Կոմիտասի կատարած նորոգությունը Հռիփսիմեի վանքի: Սերեոսի հատվածի հեղինակը ևս ականատես է, բայց տարբեր անձ է, քան Եզնիկ Երեց: Երկուսի հաղորդության մեջ զգալի զանազանություն կա և մինչև անգամ հակասություն: Մեկի ասելով, նորոգությունը տեղի է ունեցել Խոսրովի 29-րդ տարին, այն, ինչ մյուսն ունի 28-րդ տարին: Սերեոսի մոտ Կոմիտաս «ոչ համարձակեցաւ բանալ» Հռիփսիմեի տապանը և միայն կնքեց իր մատանիով, ինչպես արել էին նույնը Ս. Գրիգոր և Ս. Սահակ: Մինչդեռ Եզնիկ Երեցը հավատացնում է, որ Ս. Գրիգորի ձեռքով պատած տապանի մեջ «ոսկր և անքակ» էին մնացել «խառնակք յաւուրցն նովին հանդերձով» և թե ինքը շոշափել է իր «իսկ ձեռամբք» (= ձեռաւք), որից երևում է որ տապանը բաց է արված:

Սերեոս չգիտե, գոնե չէ հիշում, թե ով էր այն ժամանակ Հռիփսիմեի վանահայրը: Եզնիկ գիտե, որ Կամովեղ էր: Կամովեղն հիշեցնում է «Կամ-յեշով» և կարծես ասորական անուն լինի: Բայց հավանական է, որ սխալ գրություն է փոխած Սամուելի, ինչպես արդեն ենթադրել է հ. Գաթրճյան: Արդարև Խոսրովի 17-րդ տարին, Աբրահամ կաթողիկոսի ընտրության, Հռիփսիմեի վանահայրը կոչվում էր Սամուել և կաթողիկեի (և ոչ կաթուղիկեի, ինչպես տպված է) վանահայրը՝ Աբրահամ[1]:

[1] «Գիրք թղթոց», էջ 51:

Հ[այր] Ակինեյան դժվարության է բախում իր տեսության հետ հաշտեցնելու **Նշանագրի** վերջին կարճ հիշատակագիրը՝ «եղիցի Եզնկան ի թարգմանիչ զգիրս զայս»: Եթե խորագրի Եզնիկ Երեցը է Եզնիկ Կողբացին, ո՞վ է այս վերջինը: Հ[այր] Ակինեյանի կարծիքով, հիշատակարանը անհարազատ է, որպես թե ոմն գրիչ իր կողմեն ավելացրել է որպես մաղթանք: Այսպես է մտածում որովհետև թարգմանել բառը գործ է ածված այստեղ «յօրինել» իմաստով, ինչ որ խորք է Կողբացուն: Այո՛, խորք է Կողբացուն, բայց ո՛չ Եզնիկ Երեցին: Կարիք չկա անհող ենթադրության: Յոթներորդ դարու մի համբակ գրիչ որպիսին է Եզնիկ Երեց կարող էր թարգմանել = յորինել բառով որակել իր կարկատած գործը: Արդեն դասական կոչված լեզվում թարգմանել չէ նշանակում միայն թարգմանել, այլև մեկնել: Եփրեմ Ասորու երկերից մեկը կոչվում է **«Թարգմանութիւն Աւետարանին»**[1], որ ամենևին թարգմանական բնույթ չունի, այլ ներշնչված է Քրիստոսի առակավոր խոսքերի բացատրության, մեկնության: Հետագայում՝ կիրարկել նաև «կազմել հորինել» իմաստով օտարոտի պիտի չթվեն:

Հետևելով քայլ առ քայլ հ. Ակինեյանի դիտողություններին և դատողություններին հասանք նրա վերջին և ծանրակշիռ փաստարկության, հիմնված **Նշանագրի** սկզբի «մինչև առ մեզ» խոսքի վերա: Սա է արժանապատիվ բանասերի տեսության ելակետը: Այստեղից է ծագել Եզնիկ Կողբացուն ընծայելու գաղափարը: Արդարև, երբ մեկը խոստանում է դրոշմել Տրդատի և Ս. Գրիգորի հաջորդությունը «մինչև առ մեզ», կարող է կարծել թե, որ խոստացողը ապրում էր վերջին թագավորների՝ Վռամշապուհի և Արտաշեսի օրով: Այդպես էլ հասկացել է հ. Ակինեյան և հետևաբար ստիպված է ժխտել Նշանագրի խոշորագույն մասը, ա՛յլ գրչի գործ համարել ոչ միայն տաճարի նորոգության հատվածը, այլ և այն մասը, ուր հիշվում է Եզնիկ Կողբացու անունը Արծանի և Կորյունի հետ:

Սակայն այս հոշոտումից հետո երկից մնում է միայն մի բեկոր, որ նոր բան չէ տալիս, այլ քաղվածք է Փավստոսից, և ուրեմն անարժան Կողբացու վճիտ անվան և փայլուն հռչակին: Հ[այր] Ա[կինեյան] նոր միտք է հղացել, սրբագրել խորագիրը «Նշանագիր կարգաց ի բանից Եզնկան Երիցու», այս են թե Եզնիկ ավելի մեծ պատմական **«բանք»** է գրած եղել և այնտեղից է հանված **Նշանագրի** առաջին մասը: Սրբագրությունը անհաջող է լեզվական տեսակետից: **«Նշանագիր կարգաց»** - ոչինչ չէ նշանակում, և ենթադրությունը չէ ծառայում պարզելու խնդիրը, այլ ավելի բարդացնում է անգո անհայտով: Երբ բանասիրական լուծումը հանգում է **ad absurdum**, նշանակում է ելակետը սխալ է եղել և ստուգության պետք ունի: Ելակետը խորագրի

[1] **Եփրեմ Ասորի**, հատ. Բ, 261-345:

«մինչև առ մեզ» խոսքն է: Կարծում ենք, հնարավորություն կա այլ կերպ հասկանալու:

Նշանագրի ճիշտ այն մասը, որ վեճիս նյութն է սերտ առնչություն ունի *Διήγησις* կամ «Narratio de rebus Armeniis» հույն գործի հետ: Հույնը թարգմանություն է հայերեն մի բնագրից, որ կորսված է: Թարգմանությունը կատարված է նույն յոթներորդ դարու վերջերին մոտ 692 թվին Սահակ Ձորափորեցի կաթողիկոսի օրով: Բովանդակությունը կրոնական է, ճվիրված Հայ-բյուզանդական եկեղեցական վեճերին: Սկզբի մասը, որ վերաբերում է Տրդատի և Ս. Գրիգորի հաջորդության, հար և նման է մեր **Նշանագրին** և անկասկած առնված է այնտեղից: Մեզ հետաքրքրողն է մասնավորապես խորագիրը, բայց նախ տեսնենք ի՞նչ է պատմվում Տրդատի և Լուսավորչի հաջորդների մասին: Հիշելով, որ Նիկիա ժողովը տեղի է ունեցել Կոստանդին Մեծի ժամանակ, Տրդատի 34-րդ և Ս. Գրիգորի Վիրապեն ելնելու 20-րդ տարին և որ ժողովին ներկա է եղել Արիստակես, շարունակում է այսպես, որ թարգմանում ենք բառացի ի դյուրություն համեմատության:

«Յետ նորա Վրթանէս որդի Գրիգորի, Յուսիկ, Փառներսեհ *τῶν Ἀσπράκων τῆς Ἀστισὰτ χώρας* այսինքն՝ յ-Ասպրակաց (= Վասպուրական) յԱշտիշատ գեղջէ: Ապա սուրբն (*ὁ ὅσιος* = առաքինի?) Ներսէս: Ապա թագաւորք Հայոց՝ Խոսրով, Տիրան, **Աշակ**, Վարազդատ (= Վարազդատ), Աշակ: Յաւուրս սորա բաժանեցաւ ընդ երկուս **Հայք**, յորում ժամանակի շինեցաւ Թէոդոսիուպոլիս ի մեծէն Թէոդոսէ կայսրէ որում հնազանդեցաւ **Աշակ** արքայն Մեծաց Հայոց: Իսկ Խոսրով նկաց ընդ իշխանութեամբ արքային պարսից Շապհոյ - թագաւոր յերկրին Հայոց զոր և յետ ամ. ց չորից ընկէց նոյն Շապուհ: Յամս մեծի Թէոդոսի եղև սուրբ ժողովն ի Կ. Պոլիս հարիւրեւիսուն հարց սրբոց ընդդէմ Մակեդոնի հոգեմարտին և նզովեցին զնա: Ի Հայս սուրբն Ներսէս էր յաւուրս յայնոսիկ: Եւ խոստովանութիւն հաւատոյ մի էր և նոյն զոր ընկալան ի սրբոց հարց առ թագաւորաւն Վռամշապհով և առ որդւով նորա Արտաշէզ -ի և յետ այսորիկ իշխեցին Հայոց **Մարզպանք**»:

Նմանություն, ավելի ճիշտ, նույնությունը Նշանագրի հետ, ակնհայտ է: Հապավումներ կան դիտավորյալ թե պատահական, ինչպես Պապ, Զավեն, Շահակ և Ասպուրակ, բայց կարևորը պակասորդը չէ: Նշանակալից է Արշակի՝ **Աշակ** (*Ἀσάκ*) և Արտաշեսի՝ Արտաշեզ (= *Ἀρταχέτζης*, ուր *χ*=շ, և *τζ*= զ) ընթերցումները, որոնք նույնությամբ գտնում ենք և՛ **Նշանագրի** մեջ: Ներսեսի մակդիրը *ὅσιος* թվում է, թե հայ բնագրի՝ **առաքինի** բառի փոխանակն է: Բաժանեցաւ Հայք (= *οἱ Ἀρμένιοι*) հունարեն սխալ է հասկացված. Հայք = Հայոց երկիր է ոչ Հայք = հայեր: Վճռական է

մանավանդ մարզպանների հիշատակությունը՝ հույնն ունի *ἡ μαρσαπάνη* = որպես թե մարզպանություն, մարզպանական իշխանություն, բայց որովհետև բայը՝ *ἐκράτησαν* = իշխեցին, կալան, հոգնակի է, բացահայտապես ուղղագրական սխալ է *ἡ μαρσαπάνη* փոխանակ *οἱ μαρσ(α)πάνοι*, հետին հունարենում *η* և *οι* միևնույն i հնչյունն ունենալու հետևանքով:

Ուշադրության արժանի է, որ «մինչև առ մեզ» հապաված է հունարենում որովհետև բարգմանության և հորինման միջոցին 692 թվին այլևս մարզպաններ չկային Հայաստանում, մինչդեռ 619 թ., Կոմիտասի օրով տակավին կային:

Դառնանք այժմ խորագրին, որ ոչ պակաս հրահանգիչ է: Դնենք դեմ առ դեմ հույնի և հայի համապատասխան կետերը:

Διήγησις ἀπὸ τοῦ ἁγίου Γρηγορίου μέχρι τοῦ νῦν	Նշանագիր կարգաց բանից ի Սրբոյն Գրիգորէ որ կացին մինչև առ մեզ.
περὶ τῶν ἐν τάξει γενομένων διαδόχων καὶ περὶ τῶν ἐν τάξει γενομένων καὶ βασιλευσάντων	թէ ուստի էին (կամ որպէս զիարդ) յաջորդութիւնք. (յաջորդութիւնք) թագաւորացն.
ἐν ταῖς ἡμέραις αὐτῶν ἔν τε Ῥωμαίοις καὶ Πέρσαις περιγινώσκειν	վասն գիտութեան ի վերայ հասանելոյ.

Հույնի «որք թագաւորեցին յաւուրս ծոցա ի Հռոմս և ի Պարսիկս» չի վերաբերում կայսրերին և պարսից թագավորներին, այլ ակնարկում է հայ վերջին թագավորներին ընդ իշխանությամբ հռոմոց և պարսից:

Հույն թարգմանությունը հատկացրել է առաջին տեղը Ս. Գրիգորի հաջորդներին հասկանալի պատճառով քանի որ հետապնդում է կրոնական նպատակներ: Կարևորն այն է, որ «մինչև առ մեզ» վերաբերում է միմիայն Գրիգորի հաջորդութեանն: Հույնը հայ բնագիրը յուրացրել է, ինչպես տեսանք, Նշանագիր-ը: Խորագրի՝ «թագաւորացն ի Տրդատայ և քահանայապետից ի սրբոյն Գրիգորէ որ կային մինչև առ մեզ» երկդիմի է. «որ կային մինչև առ մեզ» կարելի է վերագրել միմիայն «քահանայապետից» և կամ հավասարապես «թագաւորացն և քահանայապետից»: Հույն թարգմանությունը վերջ է տալիս երկդիմության ի նպաստ առաջնի, քահանայապետների:

Այս ըմբռնումով գայթակղիչ «մինչև առ մեզ» չի տանում աննհրաժեշ-

տաբար V դար մինչև հայ վերջին թագավորները, այլ նայում է Եզնիկ Երեցի և Կոմիտասի ժամանակին: Հարկավ կարելի է առարկել, որ հայրապետների հաջորդությունը չի հասցրած մինչև Կոմիտաս ուղիղ գծով, այլ Սահակից մինչև Կոմիտաս հայրապետների անունները չեն հիշված: Այս առթիվ մտաբերենք նախ, որ խորագրի նախազգուշությունը, «փոքր ի շատէ» ասելով, թերևս ակնարկ է, որ ոչ թե միայն կարճ պիտի խոսի այլև ո՛չ բոլոր հայրապետների մասին ասելիք ունի: Այնուհետև չպիտի մոռանալ, որ «Ժամանակի Հայրապետաց» ցանկի առաջին մասը մինչև Կոմիտաս պատկանում է հավանորեն նույն Եզնիկ Երեցին: Արդարև ավելի քան խորհրդավոր է, որ Կոմիտասի հայրապետության տարիները չեն նշանակված, ասել է թե հեղինակի գրության ժամանակ Կոմիտաս տակավին հայրապետական աթոռի վերա է: Ցանկը ևս քարգմանված է հունարեն Չորափորեցու օրով և երևում է, որ այն ժամանակ արդեն մասն էր կազմում **Նշանագրի**: Հունարենում կոչվում է *Καθολικοὶ τῆς Μεγαλῆς Ἀρμενίας* «Կաթողիկոսք Մեծաց Հայոց»: «Ժամանակք Հայրապետաց»-ի մեջ Սահակ վարել է աթոռը 41 տարի, հունարենում՝ 40 տարի: Այս համերաշխությունը, հակառակ Խորենացու 51 տարվան, վկայում է հայտնորեն, որ հույնը կախում ունի հայից:

Կաթողիկոսական ցանկերի քննության մեր ներկա նյութից դուրս է: Այս կամ այն ճևով «Ժամանակք Հայրապետաց», կարծում ենք, Եզնիկ Երեցի գրչեն է ելած (8): Սրանով կարդարանար նրա խոստումը՝ դրոշմել Գրիգորի հաջորդությունը մինչև իր ժամանակ, այսինքն՝ Կոմիտասի օրերը: Եվ այս այն պարագային, եթե չենք ուզում արժեցնել նրա վերապահությունը արտահայտված «փոքր ի շատէ» բառով: Ինչ և լինի, **Նշանագիրը** պատկանում է ամբողջապես Եզնիկ Երեցին, որ ժամանակակից էր Կոմիտասին և պետք չէ շփոթել Եզնիկ Կողբացու հետ:

Ավելորդ չենք համարում նկատել, նախ քան վերջացնելը, որ **Նշանագրի Զաւրէն** անունը ավելի հին ճևն է **Զաւէն** - ի ինչպես երևում է նույն անվան մի այլ համազորից՝ **Զաւրակ** և ավելի ուշ՝ **Զաւրայ**: Հուսիկ հայ անունը կապ չունի հույն՝ *Ἰσαακ* -ի հետ, ինչպես և **Շահակ** չէ ասորական Ishaq: **Շահակ** պահլավ անուն է, որի հին ճևն է **Շահրակ** (համմտ. Շահրիկ) և Շահրեն Sahrên (ինչպես՝ Արտակ = Արտեն, Մանակ - Մանեն և այլն): Փառներսեհ պահլավ անունը հանել «Փառեն ոմն երեց»-ից հանճարարելի չէ և անհարիր մեր պատվական բարեկամի բարձր և լուրջ գիտնականության (9):

ՀԱՑՐ Ն. ԱԿԻՆՑԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Մխիթարյան արգո բանասերը դժգոհ է մնացել մեր քննական նկատողություններից (1), որ արել էինք իր մի անհաջող ուսումնասիրության առթիվ: Իր սրտմտության թև է տվել մի նոր գրությամբ (2): Ցավալի է, որ փոխանակ խոստովանելու գործած սխալը, ծանրացնում է իր պատասխանատվությունը նորանոր սխալներով և բյուր դատողություններով: Գովական չէ նաև իր հոխորտ լեզուն, որ խորթ է բանասիրական խաղաղավետ որոնումներին և ոչինչ չէ ավելացնում ո՛չ իր գիտության և ո՛չ մեր անգիտության: Մնա՛ք վայելչության սահմաններում, հավատարիմ մեր ճաշակին և հեռու այն ամենից ինչ որ հարում է կոկոզաբանության: Քննե՛ք նրա «Հերքումները», քննե՛ք նյութին պատկան անդորրությամբ:

Հ[այր] Ն. Ակինյան հրատարակել է մատենագրական մի նշխար՝ «Նկատագիր կարգաց ի բանից Եզնկան» վերնագրի տակ[1]: Հոդվածն սկսվում է հետևյալ աներկդիմի հայտարարությամբ. «Այս խորագրի տակ հասած է մեզի գրվածք մը Պարիսի Ազգ[ային] Մատ[ենադարան] թ. 112 ձեռագրիս մեջ»: Արդ մեզ ծանոթ էր, որ գրվածքիս վերնագիրն է՝ «Նշանագիր կարգաց բանից Եզնկան»: Տարբերությունն ակներև է: Հրատարակիչն հիշել էր, որ **բանից**-ի վրա ավելացրել է ի նախդիրը, բայց որ **նշանագիր** -ը դարձրել է **նկատագիր**. այս մասին ո՛չ մի ակնարկ:

Թնական էր կարծել, որ անախորժ վրիպակ է, այլի պատահական սայթաքում: Այժմ ի. Ակինյան հայտնում է, որ թնավ վրիպակ չէ, այլ մի սրբագրություն, միայն թե մոռացել է հիշատակել և հարկ եղած բացատրությունը տալ:

Մեզ թվում է, որ վրիպակը շատ ավելի ներելի կլիներ, քան նման սրբագրություն, որ կատարյալ հանցանք է մեկնն ավելի նկատումով: Նախ պետք չէ խաթարել ձեռագիրը, հետո՝ պետք չէ մոռանալ խաթարումը և վերջապես պետք չէ տեղիք տալ այսօրինակ փորձանքի, մեղանչելով բանասիրական հրատարակության տարրական սկզբունքի դեմ՝ վերարտադրել ձեռագիրը հարազատորեն, իսկ սրբագրությունները, ինչ և լինին նրանց թնավորությունն ու արժեքը, վերապահել ուսումնասիրության մեջ հիշելու: Այս կերպով ձեռագիրը կմնար անեղծ և սրբագրությունը կրոներ իր պատշաճ

[1] Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1937, № 11-12:

տեղը առանց ավելորդ վեճերի առիթ տալու: Պարզ ճշմարտություն:

Քանի որ խոսքը վրիպակի մասին է, հիշենք որ նման զանցառություն թույլ է տվել իրեն հ. Ա[կինյան] նաև իր պատասխան-հոդվածում: Մենք գրել էինք, որ **Նշանագիրը** պատկանում է Եզնիկ Երեցին, որի անունը նշանակված է գրվածքի սկզբում և վերջում և, որ հեղինակը յոթերորդ դարու մարդ է, ականատես 618 թվին կատարված մի իրողության:

Այս առթիվ հ. Ա[կինյան] առարկում է, որ Եզնիկի հիշատակարանը գտնված է երրորդ մասի վերջը, այն է կաթողիկոսների ցանկից հետո, և որովհետև ցանկը հասցրած է մինչև 790 թվականը. ապա ուրեմն Եզնիկը ապրում էր այս թվից հետո և ո՛չ յոթերորդ դարում:

Հ[այր] Ա[կինյան] սխալվում է, զոհ իր անուշադրության: Հիշատակարանը գտնվում է երկրորդ մասի վերջը և ո՛չ թե երրորդ, ուստի և իր դատողությունը միանգամայն անտեղի է: Այս ևս մենք համարում ենք մի տեսակ վրիպում, որպեսզի չասենք զրպարտություն, եթե այստեղ ևս մասն ունի իր գիտակցությունը:

Այժմ դառնանք բուն նյութին:

Մեր տեսակետը պարզ է: Մեր հակառակորդի խրոխտ «հերքումները» կարդալուց հետո ևս մնում ենք հաստատուն: **Նշանագիրը** պատկանում է Եզնիկ Երեցի գրչին, որ ժամանակակից է Կոմիտաս կաթողիկոսին:

Այլ կերպ է մտածում հ. Ա[կինյան], նստած մի շարք ենթադրությունների ավազի վերա: Նա բաժանում է գրվածքը նախ՝ երկու մասի, ապա՝ առաջին մասը ճեղքում երկու կտորի, բոլորը մի կողմ է նետում և թողնում միայն առաջին կտորը, որպեսզի Եզնիկ Երեցի մեջ տեսնե Եզնիկ Կողբացին: Այս բավական չէ, մի քանի սրբագրություններ է անում նույն նպատակով: **Նշանագիրը** փոխում է **նկարագրի**, կարգաց **բանից**՝ շինում է կարգաց **ի բանից:** Այս վերջին սրբագրությունն անում է «իմանալու համար,- բացատրում է մեզ,- թե նկարագիր կարգաց-ը գրած է Եզնիկ Երեց, **լավ ևս**՝ քաղված հանված է Եզնիկ Երիցու մեկ գրվածքեն»:

Ի՞նչ է նշանակում այս **«լավ ևս»**-ը. արդյոք ընդունել հաստատապես, որ գրվածքը Եզնիկի գործը չէ, այլ քաղվածք նրա մի գործից՝ թե տակավին հնարավորություն է մնում Եզնիկի բուն գործ համարելու ի դեպ հարկի: Եթե քաղվածք է, վերնագրից ի՞նչ է պատկանում Եզնիկին և ի՞նչ քաղվածքի անհայտ հեղինակին: Ամեն պարագայի «Նկարագիր կարգաց ի բանից Եզընկան» կարդալու դեպքում, «Նկարագիր կարգաց» չէ կարող պատկանիլ Եզնիկին, այլ քաղված անողին: Ապա ուրեմն ինչո՞ւ է այն ճիգը ցույց տալու, որ «Նկարագիր կարգաց» դասական արտահայտություն է: Արդյո՞ք քաղված անող անձնանոթը ևս դասական շրջանի անձ է: Շփոթ և խառնակ է հ. Ա[կինյանի] միտքը:

«Նշանագրը»-ի այն մասը, որ հ. Ա[կինյան] Եզնիկ Կողբացուն է ուզում վերագրել, այլ բան չէ, քան քաղված Փավստոսից և Ղազարից: Հ[այր] Ա[կինյան] կարծիքով, նախ Եզնիկ Կողբացին է քաղել և կազմել և ապա նրա քաղվածքից մի երկրորդ ձեռք, մի անծանոթ, նոր քաղվածք է արել: Ուրեմն Կողբացու քաղվածքն էր «Քանք Եզնկան», իսկ անծանոթինը՝ **«Նկարագիր կարգաց ի բանից Եզնկան»**: Վերնագրի մնացյալ մասը՝ **«թէ ուստի՞ էին կամ որպէս զիարդ»** և այլն, ո՞ւմ է պատկանում, Կողբացուն, թե անծանոթին, մնում է անորոշ: Հ[այր] Ա[կինյան] փույթը չէ, պետք չէ տեսնում կշռելու «վավ ևս»-ի հետևանքները և շարունակում է գրվածքի վերնագիրն ամբողջապես վերագրել Կողբացուն:

Մենք նկատել էինք և այժմ կրկնում ենք, որ գրվածքը քաղված լինելով Փավստոսից կարող է «դասական» կնիք ունենալ այնչափով, որչափ Փավստոս «դասական» է: Գործը Կողբացու վերագրելու համար պետք է, որ Եզնիկյան կնիք ունենա: Խնդիրը պարզ և հստակ է: Հ[այր] Ա[կինյանը] գտնում է, որ մենք «ընդախնդիր» ենք: Ինչո՞ւ: «Որովհետև լեզվի տեսակետով,- բացատրում է հ. Ա[կինյանը],- դասական նկարագիրն է չափանիշը և ոչ անհատի ոճը»: Սակայն խնդիրը ճիշտ անհատի, Եզնիկի, մասին է և ո՛չ դասական գրողների: «Եթե Ադոնց Եզնիկ Երեցի այս փոքրիկ գրվածքին վրա Եզնիկ Կողբացվո անհատական կնիքը կփնտրես, կարող է գտնել նույնը անաշխատ, ամեն բառ, ամեն նախադասություն Եզնիկյան կնքով է հոն, **որովհետև դասական դրոշմով է**»: Տրամաբան լինենք: Եզնիկ դասական է, բայց ամեն դասական Եզնիկ չէ: Չշփոթենք վեճի նյութը: Մեր բարեկամն ինքն իրեն հանճարարում է որպես մի անճճ, որ շրջել է դասական պարտեզներում, ապրել է այնտեղ, սնել է իր «քիմքը դասական ճաշակով», այնպես որ գիտե զանազանել պարտեզի վարդերը, «հոտավետ, նվազ հոտավետ և առավել հոտավետ»: Արդ կուզենք, որ իր այդ անօրինակ կարողությամբ ցույց տա մեզ Եզնիկ Երեցի գրվածքի մեջ այն վարդը, որ Եզնիկյան լիներ, առանց Փավստոսյան լինելու:

Հայր Ա[կինյանը] փորձում է հանել և ցուցադրել Եզնիկյան ոսկին Փավստոսից առած մետաղի վերա: «Եզնիկ Երեց օգտված է Փավստոսեն,- գրում է հ. Ակինյան,- քաղած հանած է անկե մտքեր, նախադասություններ, բայց աճցուցած է զանոնք իր տեսրակին մեջ ոսկի գրչով, Փավստոսի անփույթ ոճը ուժ, կերպարանք առած է իր գրչին տակ. այստեղ ինքնակաց է Եզնիկ, նույն ջղապինդ, դասական հեղինակը»:

Շատ բարի: Ի՞նչ ապացույց: Ահա և այն օրինակը, որով հ. Ակինյան ուզում է լուսաբանել, հիմնել իր պատասխանատու հայտարարությունը: Փավստոս գրում է. «զի ի վարս կարգաց գնացից իւրոց նմանեաց իւրոյ հօրն

մեծի Գրիգորի»[1], նույն միտքը հայտնում է և մի ուրիշ տեղ. «առաջնոյն Գրիգորի՝ հօրն գործոցն նմանեալ»[2]:

Եզնիկ Երեց փոխ է առել այս տեղիքը: Հ[այր] Ա[կինյան] ընդունում է այս, բայց տե՛ս ի՞նչ է գրում. «Եզնիկ կշրջե իր սքանչելի գրչով այսպես. «զորմն ասեն համեմատե(ա)լ Գրիգորի ի գործս կարգաց վարուց գնացից իւրոց»:

Դժվար չէ տեսնել, որ Եզնիկ այլ բան չէ արել, քան դիզել Փավստոսի երկու նախադասությունները: Եվ մեծ երևակայություն է հարկավոր կամ համառություն՝ որակելու այս խղճուկ կուտակյալ նախադասությունը որպես «ինքնակաց», «ջղապինդ» և նման պինդ մակդիրներով: Վերագրել Եզնիկ Կողբացուն այսպիսի մի բան, նշանակում է ամբաստանել նրան, այն հեղինակին, որի միտքը պայծառ է և խոսքը՝ վճիտ, հեռու բառական ճոռոմ կուտակումներից:

Պետք է խոստովանել, որ բերած օրինակը շատ անհաջող է և դժբախտաբար չէ արդարացնում հ. Ակինյանի՝ իր կողմե հանճարարված դասական հոտառությունը: Նույնչափ ճախորդ են և իր մյուս և գրեթե բոլոր լեզվաբանական արշավանքները ի նպաստ մի մոլար, բայց համառ մտքի: Մի առ մի քննենք, սկսելով իր նշանավոր սրբագրությունից:

Նշանագիր: Ինչպես հիշեցինք, **նշանագիր** հ. Ակինյան սրբագրել է **նկարագիր:** Ի՞նչ իրավունքով: Որովհետև «նշանագիր, այսպես եզակի, գործածություն չուներ դասականաց քով, իսկ նշանագիրք կնշանակեր գիր, տառ»: Ուստի հարկ է համարել «կարդալ երկու գրի փոփոխությամբ նկարագիր տեղույն հարմար իմաստ մը տալու համար»:

Սակայն նախ պետք էր ապացուցանել, որ գրվածքը «դասականաց» կարգին է պատկանում և ապա մտածել սրբագրության մասին: Երբ մի փոքր գրվածքի մեջ երկու անգամ պատահում է միևնույն բառը, ինչպես նշանագիր, անխոհեմություն է ժխտել նրա հարազատությունը:

Հ[այր] Ա[կինյան] սխալվում է, որ նշանագիր եզակի ձևով գոյություն չուներ «դասականաց» քով: Սխալ է, որ նշանագիրք նշանակում է տառ, գիր և ոչ տառեր, գրեր: Սխալ է, որ նշանագիրք միմիայն տառ է նշանակում: Ոչ, մեկեն ավելի նշանակություն ունի նշանագիր բառը, ինչպես պիտի ցույց տանք:

Հ[այր] Ա[կինյան] հիշում է Կորյունից երկու տեղիք ուր կարդացվում է «նշանագրոյ» և շտապում սրբագրել նշանագրոց, իսկ անտես է արել այն տեղիք ուր սրբագրել չի կարելի, ինչպես՝ «զնշանագիրն աստուածատուր»:

---

[1] **Փավստոս Բուզանդ,** Գ, 5:

[2] Անդ:

Սրբագրությունը միանգամայն անհաջող է և սխալ. «Նշանագիր» բառի հոգնակի սեռականը կլինի «նշանագրաց» և ոչ «նշանագրոց»: Դյուրին էր տեսնել իր իսկ քված վկայությունների մեջ, որ ամենուրեք՝ «նշանագրաց», «նշանագրաք» է: Եթե պետք կա սրբագրելու, կանոնավոր ձևն է «նշանագրաց»: Բայց չամապարենք, քննենք նախապես Կորյունի բնագիրը և տեսնենք, ի՞նչ իմաստով և ինչ ձևերով է հոն կիրարկված մեզ հետաքրքրող «նշանագիր» բառը:

Հարկավոր ենք համարում բերել բոլոր տեղիքը:

1. «Ի գիրս նշանագրոյ Հայաստան ազգին»[1]:

2. «Որոյ յանկարծ ուրեմն նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի» (էջ 17):

3. «Նախ ինքն տեղեկացայր ի Դանիէլէ նշանագրոյն» (էջ 17):

4. «Ընկալեալ զնշանագիրսն ի Հարէլէն» (անդ):

5. «Որով զնշանագիրսն մարթասցեն» (անդ):

6. «Նովին նշանագրովք տաներ» (անդ):

7. «Չեն բաւական նշանագիրքն» (էջ 18):

8. «Մանաւանդ զի և նշանագիրքն քաղեալք» (անդ):

9. «Որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ... նշանագիրս հայերէն լեզուին» (էջ 19):

10. «Զամենայն ընտրութիւն նշանագրոյն» (անդ):

11. «Առաջի արկեալ նոցա զնշանագիրն աստուածատուր» (էջ 20):

12. «Առնոյր կարգել նշանագիրս վրացերէն լեզուին» (էջ 25):

13. «Աղուանից առներ ապա նշանագիրս» (էջ 29):

Հակառակ ի. Ակինյանի, երկրորդ կոչումի մեջ, ինչպես և իններորդի, «նշանագիրս» հոգնակի հայցական չէ, այլ եզակի ուղղական ս դիմորոշ հոդով, որպես նշանագիրս այս: Ուղղական այն պարզ պատճառով, որ երկու դեպքում էլ ենթակայի պաշտոն ունի, ուրեմն չի կարող հայցական լինել: Կորյունին հատուկ ս հոդի նման գործածությունը. հմմտ. «որպիսի աւրամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երևեցաւ» (էջ 7), այսինքն՝ շնորհս այս. «եպիսկոպոսս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիաս» (էջ 24): Վեցերորդ կոչումի՝ «նովին նշանագրովք» կարդալու է՝ «նովին նշանագրով» (համաձայն «նշանագրոյ») (եթե ոչ «նշանագրաւ, նշանագրաւք»):

Այսպիսով, Կորյունի մոտ գործածական է «նշանագիր» բառը եզակի և հոգնակի հավասարապես: Չեռագրական տվյալներ չկան, որ արտոնեին

[1] Կորյուն, Պատմութիւն վարուց և ծահութեան Սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, էջ 16:

այս կամ այն սրբագրության: Բայց ունինք՝ հին վկայություն, որ երկու ձևերն էլ օրինական են: Խորենացին օգտվել է Կորյունից և հիշում է «նշանագիր» հինգ անգամ[1]:

1. «Հայկականացաս լեզուաց առնել նշանագիր»:
2. «Եստեղծ զնշանագիրս մեր»:
3. «Թերեալ զնշանագիր մերոյ լեզուիս»:
4. «Առնէ և նոցա (վրաց) նշանագիրս (կամ նշանագիր)»:
5. «Եստեղծ զնշանագիրս կոկորդախօս ... Գարգարացւոց լեզուին»:

Խորենացու ընթերցվածներն իր հերթին կարելի է սառուգել Հովհաննես Կաթողիկոսի քաղվածով, որ արված է Խորենացուց. 1. «բերեալ զնշանագիր մերոյ լեզուի». 2. «ըստ լեզուի նոցա (Վրաց) արարեալ նշանագիր». 3. «եւ նոցա (Աղուանից) ստեղծանէ նշանագիր» (էջ 32)[2]:

Կաթողիկոսը գիտե միայն եզակի ձևը: Այս իրավունք է տալիս Խորենացու՝ «եստեղծ զնշանագիրս մեր» հասկանալ թերևս ոչ հոգնակի, այլ եզակի դիմորոշ հոդով, ինչպես Կորյունի մոտ (հմմտ. զնշանագիրս իմ). և ամեն պարագայի՝ նախընտրել (չորրորդ կոչումի մեջ) նշանագիր ընթերցվածը (փոխանակ նշանագիրս): Կաղանկատվացին ևս քաղում է Խորենացուց. «որ Հայոց և Վրաց ետ նշանագիր», «եստեղծ զնշանագիրս կոկորդախօս... լեզուին Գարգարացւոց»[3]:

Կորյուն Վրաց և Աղվանից համար գործ է ածում «նշանագիրս». Խորենացին ունի «նշանագիրս» Աղվանից համար, և այս ընթերցվածը հաստատում է Կաղանկատվացին:

Այս բոլորից հետևում է, որ Խորենացու ձեռքում եղած Կորյունի ձեռագրում կար նշանագիր՝ եզակի ձևով: Կորյունի մեզ հասած ձեռագրում, եթե անգամ անխոհեմաբար սրբագրենք բոլոր ընթերցվածները, ամեն պարագայի մի ընթերցվածը՝ «զնշանագիրն աստուածատուր» կմնա անխախտ, դիմադրելով ամեն մի սրբագրական փորձի:

Զննենք այժմ հարցը զուտ լեզվագիտական տեսակետից, որպեսզի ըմբռնենք բառի բոլոր նշանակությունները: Ի՞նչ է «նշանագիր»-ը որպես բառ:

---

[1] Մովսես Խորենացի (քննական), գիրք Գ, գլ. 52-54:

[2] Անտես ենք անում Ղազար Փարպեցին, որովհետև բնագիրը խանգարված է և վստահություն չէ ներշնչում: «Կարգել զվաղընջուցն գրեալ չարագիրս առաջին» (Ղազար Փարպեցի, քննական, էջ 16) առնված է Խորենացուց (էջ 326): Այս միայն բավական է, որ հարազատ չհամարենք Մաշթոցի վերաբերյալ հատվածը: Մեր անցյալ հոդվածում («Միսռն», № 6) մի անախորժ տպագրական վրիպակ է «սառր ձեռք» փոխանակ «օտար ձեռք»-ի: Նույնպես «բուղթ» կարդալու «թող թէ»:

[3] Մովսես Կաղանկատվացի, էջ 218:

Նշան, հունարեն *σῆμα*, **լատիներեն signum, հայերենում, ինչպես բոլոր լեզուներում նշանակում է նաև գիր, տառ, որովհետև տառը մի նշան է: Ավետարանի նշանախնդ հայտնի բառը Ոսկեբերանի մեկնության մեջ երևան է գալիս գրախնդ ձևով**[1]: **Կորյունի՝ «մատենանշան ծաղկեցուցանել» սրբագրելու է՝ «մատենանշան», համաձայն ճեռագրական ընթերցվածի և նշանակում է «մատենա-գիր»: Ջենոբ Գլակ գիտե, որ գիր և նշան նույնանիշ են, երբ գրում է. «զայս գրեցին ասորի և հելլենացի գրով (և յոյն) և իսմայէլացի նշանաւ»**[2]:

Սակայն ամեն նշան տառ չէ: Բառիս լայն առումը մասնավորելուն համար կցել են գիր և կազմել նշանագիր նոր բառը, *γράμμα*: Առաջ հույն բառին համապատասխանում էր գիր, որ սակայն գործ չէր ածվում հոգնակի ձևով որպեսզի չշփոթվի գիրք բառի հետ, այլ միշտ եզակի, նշանակելով *γράμμα* և *γράμματα*. «Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա յունարէն և դաղմատերէն և երբայեցերէն գրով»[3] = *ἐπιγραφὴ γεγραμμένη αὐτῷ* ***γράμμασι***. Այստեղ գիր = *γράμματα*. Թրակացու քերականության մեջ՝ *γράμματα ἐστιν* բարգմանված է «գիր է»[4]: Նույն իմաստով և Կորյուն գրում է՝ «Զասբանազեան ազգիս և Հայաստան աշխարհիս զաստուածապարգև գրոյն»[5], և Խորենացին՝ «պարսկականաւն վարէին գրով»: «Նշանագիր» այն առավելությունն ունի, որ կարելի է արտահայտել ոչ միայն եզակի «նշանագիր» = գիր, այլև հոգնակի՝ «նշանագիրք»:

Հայ լեզվի հատկությունն է փոխել բարդ բառերում հոլովական հիմը. «գործ, գործոյ, գործոց», բայց «բարեգործ, բարեգործի, բարեգործաց, գետ, գետոյ, գետոց», բայց «միջագետաց»: Այսպես էլ «գիր, գրոյ», բայց «արձանագիր, արձանագրի, -ագ»: Հետևապես և «նշանագիր» պիտի հոլովեր «նշանագրի, նշանագրաց»: Արդ Կորյուն հոլովում է «նշանագրոյ, -ով», իսկ հոգնակին՝ «նշանագրաց (և ո՛չ նշանագրոց»): Ինչո՞ւ: Մենք չենք սիրում շատախոսությունն սրբագրություններ, այլ միշտ աշխատում ենք հասկանալ, մեկնել այն, ինչ որ թվում է օտարոտի և արտաքո որոշ կանոնի: «Աստուածապարգև գիր»-ն նույնն է ինչ որ **«նշանագիրն** աստուածատուր», այսինքն՝ «նշանագիր» չի նշանակում մի տառ, այլ եզակի ձևում պահում է նույն հավաքական իմաստն ինչ որ ունի **գիր**: Ուստի և հոլովում է որպես «գիր», եզակի թվում, բայց հոգնակի՝ «նշանագիրք» հետևում է ընդհանուր օրենքին.

---

[1] Մեկ. Մատթ., Ա, էջ 243:

[2] Ջենոբ Գլակ, էջ 31,

[3] Նույն., ԻԳ, էջ 38:

[4] Տե՛ս իմ հրատ., էջ 4:

[5] Կորյուն, էջ 7:

«Նշանագիր» նշանակում է նաև նշանագրող: Նշան = գիր, նշանա-գիր = գրագիր: Այս իմաստով կիրարկված է քանիցս անգամ Ագաթանգեղոսի մոտ. 1. «դիպեցաւ անդ նշանագիրք, որ գրեցին զամենայն բանս»[1]. 2. «գրեցին առենակալ դպիրքն նշանագրացն»[2]. 3. «Ոչ կարի ինչ անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրացն»[3]. 4. «կարգել ինձ ի ձեռնարկութենէ նշանագիր ժամանակագրացն»[4]. 5. «և հրամայեցին նշանագրի միում որ եկեալ էր ի Յունաց»[5]:

Հայր Ակինյան սար ու ձոր է ընկնում բացատրելու այս վկայությունները, միշտ կառչած այն մոլար մտքին, թե նշանագիրք այստեղ ևս նշանակում է տառ: Սինչդեռ առաջին և վերջին վկայությունները կասկածի տեղ չեն թողնում, որ նշանագիրն ունի նշանագրողի իմաստ: Երկրորդ վկայությունը ևս նույնն է հաստատում. «դպիրք նշանագրաց» հասկանալու համար պետք է վերհիշել Փավստոսի խոսքը. «և գրեցին զայս **սեմիար**. նոտարաց (տպ. նոտարացի) արքային»[6]: «Սեմիարք» նույնն է, ինչ որ Սեմագիրք Եվսեբիոս Կեսարացու[7]: **Սեմագիր**, *σῆμα* «նշան» և գիր բառերից կազմված զուգակշռում է «նշանագիր»: «Սեմիար» = *σῆμ, -άριος* ածանցով, համիմաստ է սեմագրի: Հինգերորդ վկայությունը, որ այնքան ջինջ է, ի. Ակինյան մոռացության է տվել անարդարաբար: Երրորդ վկայությունը լուսաբանվում է չորրորդով. «ձեռնարկութիւն նշանագրաց» = «ձեռնարկութիւն **նշանագիր ժամանակագրաց**», ուր «ժամանակագիրք» է ժամանակագրողք: Հնարավոր է նաև «նշանագրաց» և «ժամանակագրաց» հասկանալ որպես նշանագրության և ժամանակագրության իմաստով, եթե համեմատելու լինենք «նշանակից» ժամանակագրաց: Ագաթանգեղոսի՝ «պատմագիր մատենից»ի հետ. «մտանել ի պատմագիր մատենիցս խորութիւն»[8]:

«Նշանագիր» ունի արդարև և մի երրորդ նշանակություն, որպես նշանագրություն, գիր, թուղթ, գրվածք: Եվ այս է վեճի բուն առարկան:

Ոսկերերան գրում է. «պարտ և պատշաճ էր մեզ ոչ կարօտանալ ի նշանագիրս գրելոցն օգնականութեան»[9]: Զարմանալի է, որ ի. Ակինյան չի

---

[1] **Ագաթանգեղոս**, էջ 97:

[2] Անդ, էջ 60:

[3] Անդ, էջ 9:

[4] Անդ, էջ 10:

[5] **Հովհան Մամիկոնյան**, էջ 16:

[6] **Փավստոս Բուզանդ**, էջ 118:

[7] **Եվսեբիոս Կեսարացի, Եկեղեցական պատմություն**, էջ 468:

[8] **Ագաթանգեղոս**, էջ 9:

[9] **Մեկ. Մատթ.**, Ա, էջ 1:

ցկատել, որ այստեղ «նշանագիրք» չէ նշանակում տառ և չի կարող նշանակել: Բերում է հույն քնագիրը. *τῆς ἀπὸ τῶν γραμμάτων βοηθείας*, բայց անօգուտ, իմաստը չի հասկացել: *Γράμματα* հոս չի նշանակում տառ, այլ գրվածք, գիրք: Հույն բառը երկու նշանակություն ունի, տառ և դպրություն, գիրք, ինչպես և լատին litterae, հույնի հետևությամբ, և ֆրանս. lettres լատիներենից ժառանգած:

Եթե չգոհանար միայն բառաքաղով, այլ այք ածեր քնագիրը, այս կռպիտ սխալը չէր գործել: «Պարտ և պատշաճ էր մեզ ոչ կարօտանալ ի նշանագիրս գրելոցն օգնականութեան, այլ այնպէս սրբական վարս ընծայեցուցանել որպէսզի շնորհք հոգւոյն փոխանակ ընդ գրոց լինէին մերոց հոգւոց ի պաշտպանութիւն և զոր օրինակ զգրեալսն մելանաւ, նոյնպէս և զմեր սիրտս սուրբ հոգւովն գրել»:

«Գրոց» և «զգրեալս» նույնանիշ է «նշանագիրք»-ի: Հայ թարգմանը շատ ճիշտ է արտահայտել հույն *ἀπὸ τῶν γραμμάτων* = «ի նշանագիրս գրելոցն», ուր գրելոցն տալիս է *ἀπό* -ի իմաստը: Հույնը չէ ասում *τῆς τῶν γραμμάτων βοήθεια*, օգնականություն նշանագրաց, այլ *τῆς ἀπό γραμμάτων βοήθεια*, օգնականություն ի կողմանե նշանագրաց, կամ գրելոց (որ ինչ գրյալ է, ի նշանագիրս):

Նույն բյուրիմացությունը տեսնում ենք և մյուս վկայության նկատմամբ, քաղած Իգնատիոսի թղթերից. «զոր ի ձեռն սակաւ նշանագրացս խնդրեմ ի ձէնջ» = *δι' ὀλίγων γραμμάτων*. նշանագիրք հոս ևս թուղթ, գրություն է նշանակում և ոչ տառ:

Հ[այր] Ա[կինյանը] հիշում է մի վերջին վկայության, քաղելով «Հայկազեան Բառգրքից»՝ «իւր նշանագրաւս՝ ձեռամբ ասէ գրել զողջոյն. Ոսկ., Բ, Թես.» և անհապաղ սրբագրում. «այլ թէ զողջոյնս իմով ձեռամբ գրեմ», որպես թե «համաձայն հանգարեանի և էջմիածնի և Թեհրանի» ձեռագիրների: Բայց և այնպես սրբագրությունն անտեղի է:

Ոսկերերանի խոսքը մեկնություն է Բ Թես. վերջին տան: Բավական էր կարդալ այդ տունը, որ խուսափեր կամայական սրբագրությունից: Ահա այդ տունը. «Ողջոյնս՝ իմոյ ձեռին Պաւղոսի է, որ է նշանակ յամենայն թուղթս, այսպէս գրեմ. շնորհք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին ձեզ»:

Բերենք Եփրեմի մեկնությունը. «եւ քանզի գրեցին նոքա թուղթս յանուն իմ և ընթերցան առաջի ձեր, զողջոյնս զայս ձեռին իմոյ Պաւղոսի գրեալ է. և ամենայն թղթոց իմոց զայս նշանակ դնեմ ես: Եւ արդ այսուհետև զամենայն թուղթս զոր բերեն առ ձեզ, և այս նշանակ չիցէ ի նոսա, աւելորդք և անպէտք համարեալ լիցին ձեզ (Գ, էջ 192-193): Լույսի պես պարզ է:

Առաքյալը զգուշացնում է կեղծիքներից ասելով, որ իր ողջունագիրը թող լինի նշանակ՝ *σημεῖον*, որ թուղթը հարազատ է: Ոսկերերանի մեկնության

մեջ «նշանագիր» բացատրվում է «հաջորդ ձեռամբ» բառով. փոխանակ «նշանակ»-ի գործ է ածում մի բառ՝ «նշանագիր», որ է գիր, ձեռագիր որպես նշան կամ նշանակ. հետևաբար այս բառը կապ չունի մեզ զբաղեցնող «նշանագրի» հետ:

Այս մանրակրկիտ քննությունից հետո դառնանք Եզնիկ Երեցի **նշանագրին**, վեճի բուն առարկային:

Մենք ասել էինք, որ **նշանագիր** «գրուածք» իմաստով դասական չէ. և ուրեմն դասական հեղինակի գրչեն ելած չէ կարող լինել: Հ[այր] Ակինյան. ավելացնում է, որ բառի այս իմաստը «նաև ոչ-դասական չէ»: Ուրեմն բառը գոյություն չունե՞ր թնավ:

Մեր կարծիքի հիմը պարզ էր. «նշանագիրք» իբրև գրվածք հունաբանություն է, ինչպես բացատրեցինք, և հետևապես դասականները, որ իրենք էին այդ նորաբանության հեղինակները, մանավանդ Եզնիկ Կողբացին, եթե նա է Ոսկերերաևի հավանական թարգմանիչը, ինչպես կարծում է հ Ա[կինյան], չէին կարող գործածել «նշանագիր» նույն իմաստով:

Այլ է հետնորդների վերաբերումը: Բառի ծագումը մոռացվում է: Սովորական երևույթ է: Հետագայում «նշանագիրք» հնչում է հայ ականջին (նման բազմաթիվ նույնակազմ բառերի, «արձանագիր, ստվերագիր, նկարագիր, մատենագիր, ճակատագիր, աշխարհագիր» և այլն իրենց հոգնակի ձևերով) իբրև նշանագիր, նշանագիրք: Մովսես Կաղանկատվացին գրում է. «ո՛վ սքանչելի պատմութեանս, զոր հանդերձեալ եմ հնչեցուցանել.... որում ոչ համեմատ է ո՛չ դարուցն առաջնոց **նշանագիրք** ազգի ազգի պատերազմաց և խռովութեանց»[1]: Ընդգծված բառը գիտե մեր պատմագիրը Ագաթանգեղոսից, բայց չենք կարծում, որ նա գիտենար բառի ծագումը: Նրա համար նշանագիրք հոգնակի ձևն է նշանագիր-ի: Ուրիշ օրինակ: «Իսկ ժամանակ ժողովոյն որպէս ի **նշանագիրսն** գտաք ի հիւպատոսութեան Պաւղինայ և Յուլիանոսի»[2]: Այստեղ ի **նշանագիրս** թարգմանություն է բնագրի *ἐν παρασημειώσεσιν*. հայ թարգմանը գիտե այս բառը, բայց դժվար թե գաղափար ունենար նրա ծագման և *γράμματα*-ի հետ ունեցած աղերսի մասին: Հոգնակի ձևը համապատասխանում է հունականին, որ ևս հոգնակի է: Հույն եզակին՝ *παρασημείωσις* կթարգմաներ անտարակույս **նշանագիր**: Եղիշեն ասում է. «ահա նշանագրեցի յայսմ եօթն յեղանակիս» = (կապ չունի Ագաթանգեղոսի «նշանագրել»-ի

---

[1] Մովսես Կաղանկատվացի, էջ 230:

[2] Սոկրատ, Եկեղեցական պատմություն, էջ 38:

հետ. «անցուցանէ զժողովուրդն յանապատ զոր եւ նշանագրեալ վայելեցուցանէ»[1]): Այս բայը ենթադրում է **նշանագիր** բառի գոյությունը (ինչպես «արձանագրել՝ արձանագիր» և այլն). ասել է, թե Եղիշեին ծանոթ էր նշանագիր բառը: Իսկ Եղիշեն հետ-դասական է, ըստ հ. Ա[կինյանի], մինչև անգամ VII դարու հեղինակ:

Ի՞նչ զարմանք, եթե նույն գործածություն գտնվի և՛ Եզնիկ Երեցի մոտ: Եզնիկ Երեց գիտե «նշանագիր» բառը Ագաթանգեղոսից, Կորյունից և նրանց հետևելով գործ է ածում կրկնակի իմաստով՝ գրություն և գիր = տառ: Վերնագրում Եզնիկ Երեց իր գործը անվանում է «նշանագիր», իսկ վերջը, հիշատակարանում՝ «գիր». «ի թարգմանել զգիրս զայս»: Հ[այր] Ա[կինյան] պատրաստ է սրբագրել՝ «ի թարգմանել զրոցս այսոցիկ»: Իզուր, գեթ հիշեր Փարպեցու Պատմության սկիզբը՝ «և ի բաժանելն զթագաւորութիւն Արշակունւոյն». կամ Ագաթանգեղոսի՝ «ի սպանանել զնա Արտաշրի»: Ամեն պարագայիճ՝ «գրոյս այսորիկ» և ոչ «գրոցս այսոցիկ». «զգիրս զայս» հոգնակի հայցական չէ, այլ եզակի դիմորոշ հոդով՝ գիր: Այս «գիր»-ը նույնն է, ինչ որ «նշանագիր»:

Եզնիկ Երեց երկրորդ անգամ կիրարկում է «նշանագիր» տառ = գիր իմաստով: Հ[այր] Ա[կինյան] «տարտամ» է գտնում այս իմաստը: Կորյուն ասում է՝ «նշանագիրս ալփաբետաց հայերէն լեզուի», Եզնիկ՝ «նշանագիր դպրութեան հայերէն լեզուի վարելոյ ալփաբետաց հանգամանս»:

Այսպես որ կողմեն որ մոտենանք «նշանագիր» բառին, բանասիրական, թե լեզվագիտական, հիմ չենք գտնում կասկածելու նրա հարազատությունը:

Նկարագիր: Սակայն հ. Ա[կինյան] չի վարանում ջնջելու «նշանագիր»-ը և տեղը դնելու «նկարագիր»-ը և կարծում է, որ Վարդան գրիչը, որ 1254 թվին ընդօրինակել է մեր ձեռագիրը չի հասկացել «նկարագիր» բառի իմաստը և փոխարինել է «նշանագիր»-ով: «Նկարագիր» սովորական բառ է, մինչդեռ «նշանագիր» ըստ հ. Ա[կինյան], գոյություն չունի ո՛չ դասական և ո՛չ հետ-դասական գրականության մեջ: Ուրեմն ո՞րտեղից է գտել խեղճ Վարդանը: Պետք է խոստովանիլ, որ այս ենթադրությունը մեռյալ ծնունդ է:

Հ[այր] Ա[կինյան] հռչակում է, որ «նկարագիր դասական առումով կնշանակե պատմություն, գրություն»: Բերում է երկու վկայություն Ոսկերերաքի մեկնություններից, և երկու ուրիշ՝ հետ-դասական հեղինակներից: Այս ըմբռնումը ևս սխալ է և ծագում է կոչումների բյուր հասկացողությունից:

Ս. Գիրքը, դասական լեզվի մայրը, չգիտե բառիս Ակինյանական նշանակությունը: Հիշվում է երկու անգամ՝ «նկարագիր տաճ» = *διαγραφή* [2], և

---

[1] **Ագաթանգեղոս**, էջ 159:

[2] **Եզնիկ.**, ԽԳ, 11:

«նկարագիր էութեան» = *χαρακτήρ τῆς ὑποστάσεως*[1]: Այս վերջին իմաստով է, որ գոչում է Ոսկերերաց. «զիա՞րդ կարացից զքեզ ընդ մարդկան հաշուել, յորժամ ոչ տեսանիցեմ ի քեզ նկարագիրս այսպիսի բնութեան[2] = *τῆς τοιαύτης φύσεως τοὺς χαρακτῆρας*[3]: Առաջին իմաստը Ագաթանգեղոսի մոտ «նկարագիր» Հռիփսիմեի[4], Սեվերիանոսի՝ «նկարագիր մարմնոյս»[5] և այլն:

Մի երրորդ նշանակությամբ գործ է ածվում Ս. Գրքի նախադրությունների և Ոսկերերաց մեկնությունների մեջ. «նկարագրաւն ի գործասիրութիւն զարթուցանէ զյոյլսն»[6], «Տեսիլ գազանացն ըստ նկարագրին... զտիրելն Աստուծոյ յայտնէ»[7], «նկարագրաւն զհարուածս եղովմայ յետ դարձին... զհամբառնալն Քրիստոսի մարգարէանայ»[8]:

Այստեղ «նկարագիր» է կոչված Ս. Գրքի բնագրի կտորները, ընթերցվածները: Այսպես են կոչված Ոսկերերաց մոտ Ս. Գրքի այն տեղերը, որ իր մեկնության նյութ են: Եսայի մարգարեի Խ գլխի առաջին տեղերը՝ «Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդս իմ ...» և յատկապես՝ «ամենայն ձորք լցցին և ամենայն լերինք խոնարհեսցին» տունը մեկնելուց հետո, ասում է՝ «եւ տեսանեմք ըստ նկարագրին»[9]: Մատթեոսի «հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն» տաճ առթիվ քանի մի բացատրություն է տալիս, հետո ավելացնում. «եւ եթէ այլ ոք ինչ երեսս կամիցի առնուլ, նման չէ արգել: Բայց նկարագիրս զայս յայտ առնէ. պարտ է գիտել ստոյգ թէ մարդք խոզացեալք դիւրաւ ընդոնին ընդ դիւաց իշխանութեամբ»[10] = *εἰ δέ τις καὶ κατὰ ἀναγωγὴν ταῦτα ἐκλάβοι τὸ κωλύον οὐδέν. Ἡ μὲν γὰρ ἱστορία αὐτή.* [11]:

«Հայկազեան Քառգիրքը» բերում է նաև Ոսկերերաց մի ուրիշ վկայություն առնված Գաղատացվոց թղթի տակավին անտիպ մեկնությունից. «նկարագիրն ոչ միայն զայն զուշակէ որ երևիցն, այլ՝ և այլ ինչ

---

[1] **Եփր.**, Ա, 3:

[2] **Մատթ.**, Ա, էջ 57:

[3] **Migne**, P. G., 57, col. 49.

[4] **Ագաթանգեղոս**, էջ 79:

[5] **Սեվերիանոս**, էջ 116:

[6] Նախ. **Առակաց**, ԺԵ:

[7] Նախ. **Եզեկ.**, Ա:

[8] Նախ. **Եսայ.**, Խէ:

[9] **Մեկ. Եսայ**, 248:

[10] **Մատթ.**, էջ 443:

[11] **Migne**, P. G., 57, col. 355.

բազում»: Գտանք հույն բնագրի համապատասխան տեղը. *ἡ μὲν ἱστορία αὐτὴ οὐ τοῦτο μόνον παραδηλοῖ ὅπερ φαίνεται, ἀλλὰ καὶ ἄλλα τινὰ ἀναγορεύει διὸ καὶ ἀλληγορικὰ κέκληται*[1]:

Հայ թարգմանության՝ **նկարագիր**-ը, ուրեմն, համապատասխանում է հույն *ἱστορία αὐτή*. Եսայի մեկնության հույն բնագիրը հայտնի չէ, բայց հավանորեն այնտեղ ևս *ἱστορία αὐτή* է:

Ահա այստեղից է ի. Ա[կինյանը] հանել, որ «նկարագիր» նշանակում է «դասական առումով պատմութիւն, գրութիւն»: Այստեղ է և գայթակղության քարը:

Հ[այր] Ա[կինյանը] չգիտե, որ *ἡ ἱστορία* կամ *ἡ ἱστορία αὐτή* հատուկ նշանակություն ունի հին մեկնաբանական գրականության մեջ, ընդունված եզր է, մի տեսակ **terminus technicus**, որով կոչվում են Ս. Գրքի բնագրից առած վկայությունները, առանց թե ուներ մանավանդ, երբ ուզում են շեշտել նրանց բառական իմաստը ի հակադրություն այլաբանականի, որ ասվում է *ἀναγωγή* կամ *ἀλληγορία* այլաբանություն: «Ամենայն ծորք լցցին և ամենայն լերինք խոնարհեսցին», այս *ἱστορία* է, այսինքն՝ նշանակում է՝ ձորեր կլցվին և լեռները կխոնարհին: Եվ ուրիշ ոչինչ: Բայց նույն խոսքը կարելի է հասկանալ և այլապես, այն է՝ որ հրեաները պիտի վերադառնան գերությունից առանց արգելքի, և կամ Քրիստոսի տնօրինությամբ ճանապարհները հարթվում են նոր կյանքի համար: Այս արդեն *ἱστορία* չէ, այլ *ἀναγωγή*:

Հայ թարգմանը գովեստի արժանի է, որ ըմբռնել է բառիս մասնավոր երանգը և թարգմանել «նկարագիր», միևչդեռ այլուր ուր նույն բառը նշանակում է իսկապես պատմություն՝ այդպես էլ թարգմանել է, օր. «և երանելի կենացն նոցա պատմութիւն»[2] = *καὶ τῆς μακαρίας ζωῆς αὐτῶν ἱστορία*[3]: Նույնպես «պատմութիւն» է թարգմանած[4] = *διήγησις*[5]:

«Հայկազեան Բառագիրքը» շատ ուղիղ է բացատրել բառիս նշանակությունը, դնելով դնմը *ἱστορία αὐτή* և մեկնելով՝ «բուն պատմութիւն, գրութիւն, ճառ սուրբ գրոց, բնագիր» (իմա՝ Սուրբ գրոց):

Հ[այր] Ա[կինյան] քաղել է իր տեղեկությունները «Հայկազեան Բա-

---

[1] **Migne**, P. G., 61, col. 662.

[2] **Մեկ. Մատթ.**, 58:

[3] **Migne**, P. G., 57, col. 355.

[4] **Մեկ. Մատթ.**, էջ 440:

[5] **Migne**, P. G., 57, col. 352.

ռագիրքից», բայց անտեսել է այնտեղ տված բացատրությունը, «պատմութիւն գրութիւն Սուրբ գրոց» արտագրելով «պատմութիւն, գրութիւն», իսկ հույն բառը հասկացել է սովորական իմաստով: Եթե հ. Ակինյանը նեղություն քաշեր գնալ ստուգելու «Հայկազեան Բառգրքի» կոչումները, անշուշտ չէր շեղվի ճշմարտության ճանապարհից:

Չի ստուգել նաև Եվսեբիոս Կեսարացու մի վկայությունը, բավականացել է արտագրել «Հայկազեան Բառգրքից», առանց փույթ ունենալու ըմբռնել թե ի՞նչ է նշանակում վկայությունը: «Հայկազեան Բառգիրքը» բերում է և այս տեղիքը. «բանք նկարագիրք որպէս և անդ ասացեալ է՝ գրեաց նա»[1]: Հ[այր] Ակինյան արտագրել է նույնությամբ, ավելացնելով, էջ 110: Եվսեբիոսի էջ 110 ահա ի՞նչ է գրած. «եւ իբրև ընթեռնուն զգիրս սուրբս, իմաստնացան հայրենի իմաստութեամբն, և մեկնեն զառակս, որ դրոշմեալ են ի նոսա. զի **բանք որ ասացեալ են՝ նկարագիր** խորհուրդք առակաց համարին թէ դրոշմեալ է ի նոսա»:

Վստահ ենք, որ հ. Ա[կինյան] չի ըմբռնել այս տողերը, եթե ոչ անխոհեմություն չէր ունենար ասելու, թե նկարագիր նշանակում է այստեղ «պատմութիւն, գրութիւն»:

Եվսեբիոս, քանի ի տող հետո, գրում է. «զի օրէնք ամենայն բուին մարդկան այնմիկ եթէ նման են մարդոյ, **և բանք որ ասացեալ են՝ նկարագիր** համեմատել կշռեն զնոսա ի մարմին(:), իսկ զչունչն՝ զծածուկ իմաստութիւնն որ թաղեալ է ի նոսա[2]:

Եվսեբիոս պատմում է, Փիլոն Եբրայեցու վկայությամբ, թե Հռոմում (3) հրեական համայնք կար, ուր Ս. Գիրքը կարդում էին և մեկնում, ըստ հայրենի սովորության, այլաբանորեն: Ուրեմն ի՞նչ է նշանակում ընդգծած «բանք որ ասացեալ են՝ նկարագիր», կպարզե հույն բնագիրը. *ἐπεὶ δὴ σύμβολα τὰ **τῆς ῥητῆς ἑρμηνείας** νομίζουσιν ἀποκεκρυμμένης φύσεως ἐν ὑπονοίαις δηλουμένη*[3]:

Այստ տեղիքը. *καὶ σῶμα μὲν ἔχειν **τὰς ῥητὰς λέξεις**, ψυχὴν δὲ τὸν ἐν ἀποκείμενον ταῖς λέξεσι ἀόρατον νοῦν*[4]:

Արդ *ἡ ῥητὴ ἑρμηνεία*, «բան ասացեալ», և *αἱ ῥηταὶ λέξεις*, «բանք ասացեալք» նշանակում է այն, ինչ որ *ἱστορία αὐτή*, և հայտնի է մանավանդ *τὸ ῥητόν* կարճ ձևով: Հայը ավելացրել է «նկարագիր» բա-

---

[1] Եվսեբիոս, Եկեղեցական պատմություն, գլ. 8, էջ 110:

[2] Անդ, էջ 113:

[3] Migne, P. G., 20, col. 177.

[4] Անդ, col. 181.

ցաւարելու համար «բանք որ ասացեալ են», որ այլ իմաստ չունի, հետևապես, քան Ս. Գրքի ընթերցվածք, տեղիք: Թարգմանի՞չն է ավելացրել «նկարագիր»-ը, թե մի բանիմաց մեկնիչ լուսանցագրությամբ, այդ կարևոր չէ: Վկայության իմաստն այժմ պարզ է: Հռովմի հրեական համայնքը համարում էր Ս. Գրքի ընագիրը մի տեսակ սիմբոլներ, որոնց մեջ թաքնված իմաստը երևան է գալիս այլաբանական մեկնությամբ, կամ, ինչպես ասում էին հները, «առակով», այլաբանությունը բառը տակավին ծանոթ չլինելով: Նրանց աչքում Ս. Գրքի ընթերցվածները նման են մի կենդանի էակի, մի մարդու, որի մարմինն են ընթերցվածները իրենց բառական իմաստով, իսկ հոգին՝ այնտեղ թաղված անտեսանելի միտքը: Այսպես ուրեմն «նկարագիր» չի նշանակում Եվսեբիոսի մոտ «պատմութիւն, գրութիւն»:

Անհաջող են նմանապես ի. Ա[կինյանի] վերջին փաստերը՝ Կոմիտասի «աւետարեր նկարագիր»ը և Եղիշեի «նկարագիր»-ը:

Կոմիտասի նամակը պատասխան է Մոդեստոսի թղթին, որի մեջ հայտնում է Երուսաղեմի ավերումը և վերաշինությունը: Կոմիտաս իր թուղթն ուղղում է «նեղելոց, վշտացելոց» և այժմ «խրատելոց... զգուշելոց, սփոփելոց և սիրեցելոց ի հօրէ»: Թղթի օրագիրն է սա: Ապա հիշում է մարգարեի խոսքը՝ «մխիթարեցէք, մխիթարեցէք զծողովուրդ իմ, քահանայքդ խօսեցարուք ի սիրտ Երուսաղէմի և մխիթարեցէք զդա, զի լի եղև տառապանօք»: Մարգարեն ասում է այնուհետև թե «թողեալ լիցին դմա մեղք իւր, զի ընկալա ի ձեռանէ տեառն զհատուցումն մեղաց իւրոց»:

Կոմիտաս ուզում է ասել, որ Երուսաղեմացիք տառապեցին, բայց խրատվեցին նեղության մեջ և արժանացան նորեն վերին շնորհի: Հիշելով որ այս պարագան մեծ մխիթարություն է նաև հայերի համար, որ կարող են առաջվան պես ուխտի գնալ և սփոփանք գտնել սուրբ վայրերում, ամփոփում է մարգարեի խոսքերի բարոյականը. «իբրև դարձոյց բարձրեալն զերեսս իւր ի մեզ... խոռվեցաք: Այլ յորժամ կամեցաւ... առնել բարերարութեամբ քաղցրութիւն, ընկղմեցաք ի խորութիւն բարձրութեան»: Ապա ասում է. «եւ ի վերայ այսր **աւետարեր նկարագրի**» անդադար... զտէր օրհնեսցուք, զի թէպէտ ահագին էր դատաստան, բայց Աստուած սրբեաց զձեզ», ինչպես Երիքով գնացող մարդը, որ ավազակի ձեռք ընկավ, կողոպտվեց, բայց ողորմած Սամարացին օգնության հասավ և սփոփեց նրան: «Աւետարեր նկարագիր» ասելով Կոմիտաս ի նկատի ունի մարգարեի խոսքը «մխիթարեցէք, մխիթարեցէք», որն իր թղթի բնաբան էր: Այս «նկարագիրն» է մխիթարության աղբյուրը, և ոչ թե Մոդեստոսից ստացած նամակը, ինչպես կարծում է ի. Ա[կինյանը] և որից ենթադրել է, թե «նկարագիր» նշանակում է թուղթ: Բացահայտ սխալ է: Թերևս «աւետարեր» մակդիրն է մոլորեցրել արգո բանասերին: Ահա՛ Ոսկեբերան ևս նույն

«նկարագիր»-ը մեկնելիս, ինչպես վերև հիշեցինք, համարում է այն՝ «աւետիք յաւերակ երկիր Հրէաստանի»[1]: Հավանորեն Կոմիտասի թուղթը գրված է Ոսկեբերանի հիշյալ տեղիքի շնչի տակ և այնտեղից է առել «աւետաբեր նկարագիր», ինչպես և «գգուել», = Ոսկեբերան՝ «փայփայանք են առ այնոսիկ, որ ի պատիժսն էին, զի այսպես իմն պատիժք սովոր են լինել լուծիչ մեղաց»[2]:

Եղիշեի մոտ հիշված «նկարագիր»-ը ևս այն իմաստը չունի ինչ որ կարծում է հ. Ա[կինյան] արտագրելով «Հայկազեան Բառգրքից» «ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն Մակաբայեցւոց ընթեռնոյր ի լսելիս ամենեցուն»: Վկայությունը թերի է: Եղիշեն ասում է. «և ըստ պատերազմական կարգին **զքաջ արանց** զիշատակարանս հանապազ երկրորդէր առաջի նոցա, զի և ինքն իսկ տեղեակ էր ի մանկութենէ իւրմէ սուրբ Կտակարանաց (:) զոր և ի ձեռն առեալ՝ զքաջ նկարագիրն Մակաբայեցւոց ընթեռնոյր ի լսելիս ամենեցուն»[3]:

«Հայկազեան Բառգիրք» հասկացել է նկարագիր նույն իմաստով ինչ որ վերև բացատրեցինք: Սակայն այնտեղ խնդիրը Ս. Գրքի հատ հատ ընթերցվածների և տների մասին է և ոչ ամբողջ գրքի: Եղիշե ասում է, որ Վարդան Ս. Գիրքը ձեռն առած՝ կարդում էր Մակաբայեցիների քաջ նկարագիրը: «Քաջ» բառն արդեն ցույց է տալիս, որ խոսքը բնագրի մասին չէ, այլ Մակաբայեցիների հերոսական պատկերի, քաջ նկարագրի = *χαρατήρ*, թե «որպէս կռուեցան ի վերայ աստուածատուր օրինացն ընդդէմ թագաւորին Անտիոքացւոց. զի թէպետ և ի նմին կատարեցան մահուամբ, սակայն անուն քաջութեան նոցա մինչև ցայսօր ժամանակի»: Ամեն դեպքում հ. Ա]կինյան] հայտարարությունը որ «նկարագիր» դասական հեղինակների մոտ սիրված բառ է՝ պատմություն, շարադրվածք իմաստով, չի հաստատվում և ոչ մի վկայությամբ, այլ հերքվում է իր իսկ հիշած կոչումների ճշգրիտ ըմբռնումով:

Ապա ուրեմն Եզնիկ Երեցի գործը չի կարելի անվանել նկարագիր բառիս և մի իմաստով: Հ[այր] Ակինյանի սրբագրությունն անհիմն է և պետք է թողնել նշանագիր ինչպես կա:

«Նկարագիր կարգաց ի բանից» նմանապես անհիմաստ է, փոխան «Նշանագիր կարգաց բանից»: Հ[այր] Ակինյան ասում է «նախնյաց մատենագրութենեն իրեն անծանոթ է կարգք բանից»: Իսկ «նկարագիր կարգաց» ծանո՞թ է իրեն նախնյաց մատենագրութենեն: Իհարկե, ոչ, որովհետև գոյություն չունի: Ինչ վերաբերում է «կարգք բանից», իրեն ծանոթ

---

[1] Մեկ. Եռայ., էջ 247:

[2] Անդ, էջ 246:

[3] Եղիշե, էջ 182:

չէ, բայց ծանոթ է հայ լեզվի մեծ վարպետին՝ Խորենացուն: Ոլիմպիոդորոսի գրույցին առթիվ գրում է Պատմահայրը. «մատեան լեալ գՔսիսուրբոս, և զորդւոց նորա... յորում, ասեն, կարգ լեալ բանից այսպիսի»[1]: Այստեղ կարգ բանից այն իմաստը չունի ինչ որ Երր., Է, 8, այլ նշանակում է գրոյցք, ինչպես ինքը Խորենացին անվանում է նույն «կարգ բանից» գրույցք, ասելով. «և այսոքիկ գրոյցք սուտ և կամ թէ արդարև լեալ, մեզ փոյթ չէ ինչ»: Ագաթանգեղոս ունի. «զկարգս գրուցաց յիշատակել»[2], որ արդարացնում է Եզնիկի «կարգաց», եթե Հ[այր] Ակինյանի թծախնդիր է բառի հոգնակի ձևին, այնքան ընտանի Կորյունին: «Կարգել զբանս»» սովորական դարձված է, և ուրեմն «կարգ բանից» միանգամ կանոնավոր:

Կարիք կա՞ նկատելու, որ «Նկարագիր կարգաց» նեցուկ չունի և հունարեն *διήγησις* -ի մեջ, հակառակ հ. Ա[կինյանի], աններելի ճիգին: Եզնիկ Երեց ունի՝ հաջորդությունք թագավորացն և քահանայապետիցն: Հույնը կրկնում է՝ հաջորդությունք Գրիգորի՝ *ἐν τάξει γενομένων διαδόχων* և հաջորդությունք թագավորելոց *ἐν τάξει γενομένων καὶ βασιλευσάντων* (= *γενομένων βασιλέων*). հ. Ա[կինյան] կարծում է, որ նկարագիր = *διήγησις*, և *ἐν τάξει γενομένων* = կարգաց: Բայց *ἐν τάξει γενομένων* չի կարելի բաժանել հետևյալ *καὶ βασιλευσάντων* բառից:

Համամիտ չենք հ. Ա[կինյանի] և մյուս լեզվական դիտողություններից: «Նշանագրի» մեջ նա տեսնում է «դասական լեզվի ինքնատիպ լուսացնցող ճառագայթները»: Որպես ապացույց բերում է մի քանի բառեր, շարելով վկայություններ զանազան հեղինակներից բացի Եզնիկից, մինչդեռ նպատակն է ցույց տալ, որ գործը Եզնիկի գրչից է ելած:

Մենք գտնում ենք, որ «որպես զիարդ», զույգ հոմանիշների գործածությունը, հատուկ ճապաղ ոճի հեղինակներին՝ Փավստոսից մինչև Հովհաննես Կաթողիկոս և Թովմա Արծրունի, բոլորովին օտար է Եզնիկին: «Յաջորդութիւն» բառը ծանոթ չէ Ս. Գրքին: Ք Մակ., Դ, 29, *διάδοχος* թարգմանված է «փոխանակ», և Իմ., Է, 30, *διαδέχεται*, «փոխանակէ»: Եթե հ. Ա[կինյանը] ընդունում է, որ Եզնիկ մասնակցել է Ս. Գրքի թարգմանության, ապա պետք է ենթադրել, որ չգիտեր տակավին «յաջորդ» բառը:

«Վարդումն» համեմատել էինք, հ. Ա[կինյանին] հետևելով, Եփրեմի՝ «պղպուրիւն՝ վարումն աւուրց»-ի հետ և փորձել էինք մի ընդհանուր իմաստ հանել: Հ[այր] Ա[կինյան] մեր «բացատրութենեն բան մը չի հասկցել», և տալիս է իր բացատրությունը. «Եզնիկ կթվե հայ թագավորներու և

[1] **Մովսես Խորենացի**, էջ 26:

[2] **Ագաթանգեղոս**, էջ 6:

կաթողիկոսներու յաջորդությունը. «վարէ յառաջ զաճուանս նոցա մինչև առ մեզ». մյուս կողմեն այդ աճուանները կքաղեն կհանեն Փավստոսի պատմութենեն, կմշակեն յուր ծրագրին (!) համաձայն. այս գործողությունները վարումն են (!), զոր ուրիշ բառով կրնանք թարգմանել «ամփոփումն, համառոտ յառաջերութիւն, համադրութիւն»: Ասով կկարծենք, թե բռնազբոսած չենք բառին իմաստը: Ի հարկե ավելի բացահայտ պիտի ըլլար, եթե կարդայինք «վարումն աւուրց կամ ամաց»:

Արդյո՞ք ն. Ա[կինյանը] բան հասկցավ իր այս տողերեն, առանց բռնազբոսելու մտքի հետևողականությունը:

Մենք պարզել էինք, թե ի՛նչ է նշանակում Եփրեմի մոտ «իրրամեն», և ինչպես հասկանալ «դպրութիւն՝ վարումն աւուրց»: Ասել էինք, որ «իրրամեն» սխալ է փոխանակ դիրրամեն և որ այս բառը Թագ. գրքի մեջ թարգմանված է «բանք աւուրց», մինչդեռ ըստ նորագույն գիտնականների՝ է «գործք աւուրց»[1]:

Կարծելով, որ Եզնիկ Երեցի մոտ «վարումն» նույն բառն է ինչ որ Եփրեմի, փորձել էինք երկու իմաստով ըմբռնել, 1) վարումն իշխանության, և 2) վարումն կենաց, պատմություն և վարք (համմտ. վարմունք կրկնակի իմաստով):

Այժմ տեսնում ենք, որ իզուր ենք հավատ ընծայել ն. Ա[կինյանին]: Եզնիկի «վարումն» անկախ է Եփրեմից: «Վարումն դրոշմել» նշանակում է «վարումն բանից դրոշմել», այսինքն «վարել զբանս և դրոշմել», որ ուրիշ բան չէ, քան մեկնություն խորագրի՝ «Նշանագիր կարգաց բանից», որ է նշանագրել «զկարգս բանից» կամ «կարգաւ զբանս»:

Հետևապես «վարումն» չի նշանակում «ամփոփումն, համառոտ յառաջերութիւն» և ոչ «վարումն աւուրց», այլ միմիայն «վարումն բանից» և դրոշմել-ի հետ նշանակում է պատմել:

Վասն գիտութեան ի վերայ հասանելոյ: Ասել էինք և կրկնում ենք, որ անհաջող ոճ է, ճապաղ, նույն կարգի ինչ որ «որպէս զիարդ»: Հ[այր] Ա[կինյանը] առանց ամենափոքր ճիգի հասկանալու հակառակորդի ասածը, սիրում է իսկույն որոնել տգիտություն և մեզ բացատրում է, որ «ի վերայ հասանել» նշանակում է հասկանալ: Սակայն խնդիրը «ի վերայ հասանել»-ի վրա չէ, այլ «ի վերայ հասանել գիտութեան»: Կարելի է ասել հասանել ի վերա իմաստության, ի վերա «իրաց», ի վերա «կաւութեանց», ինչպես իր իսկ բերած օրինակներից կարող էր տեսնել: Վերջապես կարելի է ասել «հասանել ի վերայ **ճշմարիտ** գիտութեան, ի վերայ գիտութեան սուրբ գրոց (և ո՛չ հունաց փիլիսոփայից): Բայց «ի վերայ հասանել գիտութեան»

[1] **E. Dhorme**, L'évolution religieuse d'Israël, t. 1, p. 51.

ճապաղ է: Հ[այր] Ա[կինեան] բերում է Ագաթանգեղոսի «զի ոչ եթէ իւրեանց կարճահաս իմաստութեամբն հասեալք չքնաղ գիտութեանն Աստուծոյ» և շտապում, իր վատ սովորության համաձայն, սրբագրել «ի վերայ չքնաղ գիտութեանն Աստուծոյ»:

Բուն հայկական ոճն է «հասանել գիտության», ինչպես ունի Եզնիկ՝ «մարթի հասանել գիտութեան»[1], «հասանել բանից սրտի իմոյ»[2], «հասանել ի գիտութիւն ճշմարտութեան», ուր «ի գիտութիւն» = *εἰς ἐπίγνωσιν* հունարանություն է փոխանակ «գիտութեան»): Այստեղից և «հասու լինել»: «Ի վերայ հասանել» կրում է հունական *ἐπιγιγνώσκειν* և նման *ἐπὶ* -ով սկսվող բայերի ազդեցությունը. «վերահասու լինել» հետ-դասական է:

Փոքր ի շատէ: Այս բառի առթիվ հ. Ա[կինեան] կարկուտ է թափում մեր գլխին, հանդիմանում որ «դասական հայերէնի մասին վճիռներ կկտրենք, այն ինչ ուշադրությամբ չենք կարդացած Ս. Գիրքը և Եզնիկ»: Անշուշտ, այդ անօրինակ հիշողությունը չունինք, որ Ս. Գրքի բառերը պահենք մեր գլխում, բայց ունինք մեր տրամադրության տակ «Հայկազեան Բառարանը» և Համաբարբառը, որտեղից և մեզ հայտնի էին գիտուն խրատատուիս բերած վկայությունները:

Եզնիկ Երեց, «փոքր ի շատէ» առած է Փավստոսեն: Այս առթիվ նկատել էինք, որ բառը Եզնիկյան չէ և ո՛չ սուրբգրենական: Դասական է «սակաւը, սակաւիկ մի, սակաւ ինչ, փոքր մի, փոքր ինչ»: Հայ լեզվի առաջին գրական թոթովը, այն որ կոչում են դասական լեզու, ուսումնասիրելիս, շատ կարևոր հարց է, թե ի՞նչ տեղ են բռնում այնտեղ հունարանությունները մի կողմից և ռամկորենի տարրերը մյուս կողմից: Մեզ այնպես է թվել, որ «փոքր ի շատէ» ժողովրդական դարձվածք է: Մեր տպավորությունը հիմնված է հետևյալ դիտողության վերա:

Հին Կտակարանում բառս պատահում է միայն մի անգամ ընդդեմ հույն *μικρόν*[3]: Ավետարանները չգիտեն, իսկ Պողոսի թղթերում երևան է գալիս որպես թարգմանություն հույն *ἀπὸ* կամ *ἐκ μέρους* որ նշանակում է «մասամբ, մասամբ իւիք»[4]:

Արդ ուշագրավ երևույթ է, որ Եզնիկ, Ոսկերերաց և Եփրեմ ճան Հաճախապատում[5] գիտեն այս բառը Պողոսի թղթերից, գոնե հիշում են

---

[1] Եզնիկ, էջ 252: Հմմտ. Ծաղ., Ը, 13:

[2] Բ Տիմ., Գ, 7:

[3] Բ Եզր., Թ, 8:

[4] Հռոմ., ԺԱ և ԺԵ: Ա Կորնթ., ԺԳ և Բ Կորնթ., Ա և Բ:

[5] «Ճանճախապատում ճառք», էջ 7-8:

միայն այնտեղից առած կոչումների մեջ, բայց իրենք գործ են ածում «սակաւ մի, փոքր մի»: Եզնիկ բերում է Առաքյալի[1]՝ «փոքր ի շատէ գիտեմ», բայց իր գործածած բան է «սակաւիկ մի»[2], «մանր» («մանր միտ դնել»)[3]: Եփրեմ հիշում է «փոքր ի շատէ»[4]: Բայց նույն տեղը ինքը գործ է ածում՝ «սակաւիկ մի»[5]. հիշում է նույն բառը Ա Կորն. (ԺԳ, 9-10), բայց ինքն ասում է՝ «փոքր մի»[6]. հիշում է Բ Կորն. (Բ, 5), բայց ինքը ավելցնում է որպես բացատրություն «փոքր ի շատէ»՝ ըստ յուրում չափս: Համաբարբառի մեջ՝ «փոքր մի ամբարշտեցաւ, սակաւիկ մի խրատեաց» (էջ 37):

Այստեղից հետևում է, որ «փոքր ի շատէ» տեղ չունի Եզնիկի և ոչ Եփրեմի քարգմանչի անհատական բառարանում, ինչպես օր. «պլաւն», «գործուղի» և նման բառեր մնում են օտար այն թերթերի, որոնք հիշում են այդ բառերը իրենց մեջբերումներում:

Ավելի հետաքրքրական է Ոսկեբերան: Սա ևս հիշում է Առաքյալի՝ «փոքր ի շատէն խափանեսցի»[7], Մատթեոսի մեկնության մեջ (Ա, էջ 247): Բայց Բ Կորն., Բ, 5 և Հռովմ., ԺԱ, 25 կոչումների մեջ «փոքր ի շատէ»-ի փոխարեն գտնում ենք «ի մասնէ». «զի կուրութիւն **ի մասնէ** եղև Իսրայէլի», քանի մի տող ստորև՝ «թէ ոք տրտմեցոյց, ոչ թէ զիս տրտմեցոյց այլ **ի մասնէ** ինչ, որպէսզի մի՛ ծանրացայց ձեզ»[8]:

Ոսկեբերանի մոտ սուրբգրենական կոչումներն ընդհանրապես համաձայն են մեզ հասած Ս. Գրքի բնագրին, բայց կան և շեղումներ, որ շատ նշանակալից են: Տեղը չէ այս խնդրով զբաղիլ: Գաղափար տալու համար բերենք մի օրինակ հենց Ավետարանի սկզբից[9]. «և առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս, որ էին ի Բեթղահէմ և յամենայն սահմանս նորա յերկեմնից և ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն»: Ոսկեբերանի մոտ, «և առաքեալ և կոտորեաց զամենայն **մանկտին զոր եգիտ** ի Բեթղահէմ և յամենայն սահմանս նորա յերկեմնից և ի խոնարհ, ըստ ժամանակին **որպէս** եւ ստուգեաց ի մոգուցն»[10]:

---

[1] **Ա Կորն.**, ԺԳ, 10:

[2] **Եզնիկ**, էջ 254:

[3] **Անդ**, էջ 77:

[4] **Հռով.**, ԺԵ, 25:

[5] **Եզնիկ**, էջ 10:

[6] **Անդ**, էջ 75:

[7] **Ա Կորն.**, ԺԳ, 10:

[8] **Ոսկեբերան**, **Պաւղ.**, Բ, էջ 286:

[9] **Մատթ.**, Բ, 16:

[10] **Ոսկեբերան**, **Մատ.**, Ա, էջ 124:

Եթե Եզնիկն է Ս. Գրքի սրբագրողը և Ոսկեբերանի թարգմանիչը, ան-հասկանալի են այս տարբեր ընթերցումները: Ավելի ակնթախ է Ոսկե-բերանի կոչումը. «ի Յիսուսի ծնանելն ի Բեթղահէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, **առաւօտից** մոգք յարևելից եկին յԵրուսաղէմ, **ասէին**, ուր **իցէ ծնեալն** արքայն հրէից»:

Այս կարգի շեղումները ընդունված բնագրից տանում են այն ենթադ-րության, որ ընդունված բնագիրը, Սահակի և Եզնիկի սրբագրությունից հետո, ենթարկվել է նորեն սրբագրության:

Հանգուցյալ Եղիշե պատրիարքը (Դուրյան) համեմատելով Եզնիկի մի քանի վկայությունները գտել էր, որ նրանք ևս համաձայն չեն Ս. Գրքի այժմյան ընթերցումներին, և այս առթիվ նկատում է նրբորեն, իրա՞վ է, որ Եզնիկ սրբագրած լինի Ս. Գիրքը, և կամ Եզնիկ արդյո՞ք հեղինակ է իր գործին[1]:

Համեմատությունները չէ սպառած ի. Եղիշե: Հիշենք մեր կողմից Եզնիկի մի տեղիքը, ուր բերում է Առաքյալի խոսքը՝ թե «զորս յառաջագոյն ճանաչէր, յառաջագոյն **սահմանեաց** կերպարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ», որ ակնարկ է Հռովմ., Ը, 29. «զորս **յառաջ** ճանաչէր, յառաջագոյն **հրաւիրեաց** կերպարանակից լինել» և այլն:

«Յառաջագոյն սահմանեաց» համաձայն է հույն բնագրի՝ *προώριζε*, մինչդեռ ուղղված է «հրաւիրեաց». երկու «յառաջագոյն»-ներից մեկը՝ շի-նած է «յառաջն», ինչպես վերև՝ «ի Յիսուսի ծնանելն» = *τοῦ Ἰησοῦ γεννηθέντος*, շրջած է «ի ծնանելն Յիսուսի»: Սրբագրությունների նպա-տակն է եղել ավելի հայացնել, ավելի դյուրացնել:

Արդ մեր տպավորություն է եղել, որ այս կարգի սրբագրություն է նաև «փոքր ի շատէ» փոխած «ի մասնէ», որ դիպվածորեն պահվել է Ոսկեբերանի մոտ: Արդարև ինչո՞ւ Ոսկեբերանի թարգմանիչը «փոքր ի շատէ» հիշելուց հետո, պիտի գրեր «ի մասնէ», եթե «ի մասնէ» չկար Ս. Գրքի հայ բնագրում, այլ կար «փոքր ի շատէ»: Հնարավոր է, որ սրբագրությունից հետո է, որ գրիչները մուծել են նոր ընթերցումը Ոսկեբերանի և Եզնիկի կոչումների մեջ: Այս և նման դիտողությունների ազդեցությամբ էր, որ նկատել էինք անցողակի, որ «փոքր ի շատէ» Եզնիկյան չէ և ոչ սուրբգրենական: Մենք դատական վճիռներ չենք տալիս, բանասիրական խոհեր են, որոնց առթիվ, որքան և անհավանական համարին ի. Ա[կինյան] և ուրիշներ, պետք չէ առարկներ կրճտել, այլ ձեռքը ճակատին դնել և աշխատիլ կնճիռները լուծել:

Թարգմանիչ: «Նշանագր»-ի միատող հիշատակարանը՝ «Եղիցի յիշա-

---

[1] Դուրյան Մատենագրաց, թիվ 7, էջ 367 (4):

տակ Եզնկաց ի բարգմանել զգիրս զայս», արգելք է ի. Ա[կինյանի] տեսության: Ուստի և ձգտում է վարկաբեկել և քևին տակ առած՝ ցատկում է յոթներորդ դարից տասներեքերորդ դարը: Կարծում է, որ հիշատակարանը մի մաղթանք է, որ արել է ձեռագրի Վարդան գրիչը 1254 թ. ընդօրինակությունն ավարտելուց հետո: Սակայն հիշատակարանը ձեռագրի վերջում չէ, ինչպես վերև հիշեցինք, այլ կնքում է «Նշանագիր»-ը: Ապա հետևում է «ժամանակք կաթողիկոսաց» և հետո Վարդան գրչի հիշատակարանը: Կաթողիկոսների ցուցակում Կոմիտասի հայրապետության տարեթիվը չէ նշանակված: Այստեղից ուզեցել էինք հետևցնել, որ ցուցակի առաջին մասը թերևս նույն Եզնիկի գործ լինի, որ «Նշանագիր»-ը կազմելուց հետո հանդերձ իր հիշատակարանով, շարել է կաթողիկոսների անունները մինչև իր ժամանակ, շարել է ինքը կամ ժամանակակից մի ընդօրինակող: Մի ուրիշը շարունակել է ցուցակը մինչև Ստեփանոս, ութերորդ դարու վերջը: Նշանակում է այս անծանոթը ապրում էր Ստեփանոսի հաջորդի օրով: Ուրեմն ցուցակը Վարդան գրչի գործը չէ: Այս նպատակով էր, որ ձեռագիրը նկարագրելիս աշխատեցինք պարզել, թե ցուցակը լրի՞վ է արդի ձեռագրում, թե թուղթ է ընկած: Վարդանի գործը չէ ևս առավել ցուցակից առաջ զետեղված՝ Եզնիկի հիշատակարանը:

«Թարգմանել» բառը ևս չի կարող իջեցնել հիշատակարանը մինչև Վարդանի ժամանակը: Հ[այր] Ա[կինյանի] կարծիքով թարգմանել «յօրինել իմաստով առաջին անգամ Հերացին է գործածել 1184 թ., հետո Սմբատ Սպարապետ իր Տարեգրքում 1272 թ.: Գտնում է, որ այս տարիների միջև 1254 թ. Վարդան ընդօրինակած է ձեռագիրը և գործածած նույն բառը նույն իմաստով»: Սխալ է այս կարծիքը իր հիմքերով: Հերացին վկայում է, որ իր գործը քաղել է արաբ, պարսիկ և հույն գրքերից և ուրեմն իրավունք ուներ ասելու «հաւաքեցի և թարգմանեցի ի հայ բարբառ»: Օգտվել է նաև հայ նյութերից և կամեցել այս բոլորից «առնել գիրքս», ուստի և ասում է՝ «թարգմանեցաւ և գրեցաւ գիրքս»: «Թարգմանել» գործ է ածած իր բուն իմաստով, և ոչ թե որպես «յօրինել»:

Սմբատի Տարեգիրքը երեք քառորդ մասով քաղված է Ուռհայեցուց և Գրիգոր Երեցից. մի, և վերջին քառորդն է միայն իրենը: Եզնիկի գործը ևս ունի նույն բնավորությունը. մեծ մասը քաղված է հին աղբյուրներից և իրեն գրչի սեփականություն է գրեթե միայն Հռիփսիմյանց հատվածը: Սմբատ իրեն անվանում է երկիցս «թարգմանող պատմութեանս»: Եզնիկ ևս նույն բառով է որակում իր գործը: Ի՞նչ է բառի իմաստն այս դեպքում:

Հների մոտ թարգմանություն նշանակում է նաև մեկնություն: Թվում է թե այս իմաստը պարզ հետևություն է հունարենի, ուր *ἑρμηνεύω* նշանակում է մեկնել և թարգմանել:

Բյուզանդական շրջանում, ինչպես և նոր հունարենում, *ἑρμηνεία* պահում է միայն «մեկնություն» իմաստը: «Թարգմանել» արտահայտվում է *μεταφράζω* բառով, որ դարձյալ երկու իմաստ ունի՝ paraphraser, և թարգմանել: Հունարան դպրոցը թարգմանել է այս բառը՝ հարասել, որ, սակայն, մեծ ընդունելություն չէ գտել: Կարծում եմ, որ հույն *μεταφράζω* բառի հետևությամբ, «թարգմանել» բառը գործ է ածված նաև paraphraser -ի իմաստով:

Արդ Եզնիկի աշխատությունը մեծ մասով *μετάφρασις*, paraphrase է, և ուրեմն կարող է ասել՝ թարգմանել: Սմբատի Տարեգիրքը ևս *μετάφρασις* է. և ինքը՝ թարգմանող, *μεταφραστής*:

Ջուարփակ: Հ[այր] Ա[կինյանը] կասկածում է, թե Կաղանկատվացին առած լինի այս բառը Ագաթանգեղոսից: Մենք մնում ենք մեր կարծիքին: Ոչ միայն բառեր, այլ ամբողջ նախադասություն է քաղել Ագաթանգեղոսից, ինչպես՝ «ասպնջական ցանկալի սուրբ հաւատոցն լինելով յաշխարհածնունդ հայրենեացն որդի գտանիւր շնորհացն (sic) Աստուծոյ մերձաւոր կենարար կենաւքն լինելով»[1]: «Պարոյկ» որմոյն Կաղանկատվացու մոտ[2] այլ բան չէ, քան Ագաթանգեղոսի «պարկէն»-ը, շփոթած պարոյկի հետ, եթե միայն գրչագրական սխալ չէ:

Փառներսեհ: Հ[այր] Ա[կինյան] համառում է իր անօրինակ սրբագրության վերա. Փառներսեհ անունը որպես թե ծագած է Փառեն ոմն երեց բառերի սխալ ընթերցումից: Ինչո՞ւ Փառեն պիտի Փառներսեհ դառնար հարց է տալիս ի. Ա[կինյան]: Իսկ ինչո՞ւ Կորյունի Մաշթոց դարձել է Եզնիկ Երեցի մոտ Մեսրաւպ: Հ[այր] Ա[կինյան] ավելի հեռու է գնում, երբ պնդում է, որ Փառներսեհ չէ կարող պահլավ անուն լինել, և որ պահլավ բառակազմության օրենքը պահանջում է Ներսեհ-Փառեն: Այդպիսի օրենք չկա: Գեթ հիշեր այնքան զորեղ հիշողության տեր բանասերը Փավստոսի՝ Փառավազ = Սեբեոսի՝ Փառավազ = արևմտյան հեղինակների՝ *Փարνάβαζος*, Փառանձեմ էլ չեմ ասում հույն հեղինակների՝ *Φαρνάσιτης*, *Φαρανδάτης* և ուրիշները, որ դյուրությամբ կարող էր գտնել իր «Iranisches Namensbuch» հայտնի գրքում: Հիշենք նաև Սեբեոսի՝ Խրոխ-Որմիզդ, Խորենացու՝ Խոռոխրուտ ուր խրոխ մի այլ ձևչումն է փառն-ի, կամ Farrux-Sapuh, ուր farrux դարձյալ նույն փառն բառի այլ ձևն է:

Ծուսիկ = Սահակ = Շահակ: Կամակոր մարի մի ուրիշ օրինակ: Երեք հիմնովին տարբեր անուններ նույնացնելն դեմ կարելի է միայն երեք

---

[1] Ագաթանգեղոս, էջ 381:

[2] Մեխես Կաղանկատվացի, էջ 351:

անգամ «չէ» ասել: Հ[այր] Ա[կինյանի] կարծիքով, Սահակ անունը Կորճայքում արտասանվում էր Շահակ ասորական ազդեցության տակ, իսկ «հայ բնիկ ժողովուրդին բերանը սեղմված եղած է Հուսիկ»: Ոչ, որքան կուզեք սեղմեցեք բերանը, Սահակից՝ Հուսիկ չի դուրս գալ: Բերան սեղմելով չի կարելի բառեր մեկնել և ո՛չ էլ բերան լայնելով՝ սխալ մեկնություններ պաշտպանել: Հ[այր] Ա[կինյան] ժամանակ է գտել թերթելու Հյուրշման, ուր տեսել է, որ այս լեզվագետ Շահակ անունը «զգուշորեն» կկապի իրանական շահ բառի հետ, իսկ «մտքեն չի անցներ Շահրիկ, Շահեն անուններու հետ համեմատել»: Իսկ Հյուրշման մտքեն կանցնե՞ Շահակը հանել Սահակ-ից: Այս է խնդիրը: Սահակ անգամ Եփրեմի բարգմանության մեջ մնացել է միշտ Սահակ:

Ինչ կվերաբերի Սահակի ստուգաբանության ահա ի՞նչ է ասում մի ուրիշ հեղինակավոր անձ. "*Shahak* = pers. *Shahak* (etwa zu *Shahpuhr*) oder besser *Shahrak* (Hyponoisticon eines mit *Shahr* = ap. *Shathra* "Herschaft" Zusammengesetzten Namen"[1].

Անտեղի է և իր հեգնոտ նկատողությունը Շահրիկ-ի վերաբերյալ: Շահրիկ նշանակում է կողմնապետ, բայց է և՛ հատուկ անուն[2], ինչպես Շահապ է սատրապ, բայց նաև հատուկ անուն է՝ Փավստոսից հայտնի («եպիսկոպոս Տայոց Կիրակոս, որ Շահապ կոչէր»): Դեհկան ևս կողմնապետ է նշանակում, բայց նաև հատուկ է նույն Փավստոսի մոտ: Ինչ վերաբերում է մեր համեմատության Շահակ և Շահիկ, ահա ինչ է մտածում նշանավոր իրանագետը. Der Name Shahrak scheint eigentlich Kreisvorsteher zu bedeuten und mit Shahrigh gleich zu sein[3] Պարզ է:

Արբանեակ: Եզնիկ Երեց իր գործի ընթացքին հիշատակում է Սահակի և Մեսրոպի աշակերտներից, Ղևոնդ, Արծաց, Կորյուն և **Եզնիկ**, անվանելով նրանց **«արբանեակք նոցուն լուսաւոր հանդիսից»**: Եզնիկի անունը պարզապես աքացում է ի. Ա[կինյանի] մոլար կարծիքի դեմ և ապացուցանում, որ **Նշանագրի** հեղինակ Եզնիկ Երեցը չի կարող նույնը լինել Կողբացու հետ: Հ[այր] Ա[կինյան] փորձում է վերացնել այս խոչընդոտը, հայտարարելով այն անհարազատ. իբր թե «արբանեակ և հանդէսք բառերը գործ են ածված ոչ-դասական առումով»: Այստեղից, կարծեմ, մի բան է հետևում, որ Նշանագրի հեղինակը չէ կարող լինել դասական Կողբացին, և ոչ թե որ հիշյալ խոսքերը անվավերական են: Թողնենք, որ նկատողությունն ինքը սխալ է: Հ[այր] Ա[կինյան] ի չարն է գործ դնում իր «դասական

[1] J. Marquart, Philologus, Bd., 55, p. 240.

[2] Hoffman, Auszüge aus Syrichen Akten, p. 72.

[3] Justi, Iranisches Hamensbuch, p. 277.

քիմք»-ի ներշնչումները: Կորյուն իրեն կոչում է «արբանեակ ըստ աւետարանական հրամանաց» Սահակի և Մաշթոցի[1]: Խեղճ Եզնիկ Երեցը կրկնում է նույնը նաև Կորյունի ընկերակիցների՝ Ղևոնդի, Արծանի և Եզնիկի նկատմամբ և անշուշտ հետևելով Կորյունին: Եզնիկ Երեց համարում է Ղևոնդին «ճշմարիտ ի գործ մշակութեան», որ ոչ այլ ինչ է, եթե ոչ Կորյունի՝ «աստուածագործ մշակութիւն»:

Հ[այր] Ա[կինյան] փորձում է հերքել մեր տեսակետը Հռիփսիմյանց հատվածի վերաբերյալ: Ի հարկե չի հրաժարում այստեղ ևս նորանոր և անհանդուրժելի սրբագրություններ առաջարկելուց: Արդյա ուղղում է Աբրահամ, Կամովեղ՝ Սամուել, որպեսզի նույնացնի 607 թվին հիշված վանաց երեցների հետ: Զանազանություն չէ տեսնում Եզնիկի և Սերեոսի խոսքին հայող պատմվածի մեջ: Սերեոսի՝ 28-րդ տարին Խոսրովի, ուզում է հաշտեցնել Եզնիկի՝ 29-րդ տարու հետ, մեկը՝ շինության սկիզբը համարելով, մյուսը՝ ավարտումը: Եվ այնքան միամիտ է, որ կարծում է, թե Հռիփսիմյանց տաճարի նման մի շենք կարելի է ավարտել «գրեթէ յընթացս մէկ տարւոյ», և այն էլ Երևանի դաշտում ուր տարվան մեջ հազիվ 5-6 ամիս նպաստավոր է շինության համար: Թվերի տարբերությունը այստեղ նույն տեսակի է ինչ որ նկատվում է Սերեոսի և «Գիրք թղթոցի» տվյալների մեջ 607 թվի ժողովի մասին: Ըստ «Գիրք թղթոցի» ժողովը կայացել է Խոսրովի 17-րդ տարին, մինչդեռ Սերեոսի ասելով, Սմբատ, որի հրամանով ժողովը գումարվել էր, վերադարձել է Պարսկաստանից 18-րդ տարին: Թեթև անճշտություններ են: Հարկավ, կարելի է, թերևս, ԺԷ և ԺԸ սրբագրել մեկը մյուսով, բայց դժվար է նույնն անել ԻԸ և ԻԹ նկատմամբ: Վերջապես եթե մեկը հիշում է շինության սկիզբը, մյուսը՝ վերջը, ինչպես կարծում է հ. Ա[կինյան] սրանով վերանում է հակասությունը, բայց ո՛չ աղբյուրների տարբերությունը, քո՛ղ որ հ. Ա[կինյանի] մեկնություններ ինքնին չէ համապատասխանում իրականության:

Եզնիկի՝ «խառնակը յօդից» բնավ նույնանիշ չէ Սերեոսի՝ «յօշնել ի միմեանց»-ի, այլ բոլորովին հակառակը: «Խառնակը» բառի իմաստը պարզելու համար պետք է դիմել սուրբգրենական հետևյալ տեղերին: Պողոս Առաքյալ համեմատում է եկեղեցին մարդկային մարմնի հետ ուր զանազան մասեր ներդաշնակորեն շաղկապված՝ կազմում են մի միություն. «ամենայն մարմին յաւդիւք եւ խառնակեօք տարարերեալ եւ խառնեալ ածէ»[2], ուր խառնեալ = հույն *συμβιβαζόμενον* դարձնել, «ամենայն մարմին յօդեալ և պատշաճեալ ամենայն խառնակեօք տարբերութեան»[3]: Այստեղ

[1] Կորյուն, էջ 47:

[2] Կող., Բ, 19:

[3] Եփ., Դ, 16:

պատշաճյալ = նույն *συμβιβαζόμενον*. Ոսկեբերան իր մեկնության մեջ առաջին դեպքում գործ է ածում՝ «ընդ միմեանս յարեալ»[1], երկրորդ՝ «հաստատեալ»[2]. Եփրեմ ևս ունի **հաստատել**[3]: Նույն իմաստը բառիս տեսնում ենք նաև Ելից, ԻԶ, 11, «և արասցես օղս պղնձիս յիսուն և խառնեսցես զօղսն ընդ ծարմանդոսն և **կցեսցես** զփեղկսն և եղիցին մի»: Ընդգծված բառերը հոմանիշ են և թարգմանություն միևնույն հույն բառի՝ *συνάφεις:* Ասել է, թե «խառնակք յօդից ողջ և անքակ» նշանակում է՝ «խառնումն մարմնոյն յօդիւք կայր ողջ և անքակ». ուրիշ խոսքով, Հռիփսիմեի մարմինը քայքայված չէր, և հանդերձն անգամ չէր փտել:

Սերեոս աչքի առջև ունի Ագաթանգեղոսի՝ «յօշէին զնա անդամ անդամ»[4] և ասում է որ Կոմիտաս «ոչ համարձակեցաւ բանալ» տապանը, այլ բավականացավ «կնքել իւրով մատանեաւ» Ս. Գրիգորի և Ս. Սահակի նման: Մինչդեռ Եզնիկի «նովին հանդերձով» ակնարկ է Ագաթանգեղոսի մի ուրիշ տեղիքի, ուր Ս. Գրիգոր «զմի մի իւրաքանչիւր ի սրբոցն առեալ յիւրաքանչիւր արկեղ դնէր՝ իւրաքանչիւր հանդերձով»[5]: Եզնիկ ոչ միայն տեսել է, այլև շոշափել իր ձեռով, որ մարմինը ողջ և անքակ էր ուստի և ասում է՝ «արդեօք անհաւատալի թուիցի զկնի մեր եկելոց»: Եթե միայն տապանը շոշափած լիներ, ինչպես կարծում է հ. Ակինեան, զարմանալու ի՞նչ կար հետնորդների համար:

Բացի սրանից Սերեոս չգիտե, որ Կոմիտասի օրով Հռիփսիմեի վանահայրն էր Կամովեղ: Հ[այր] Գաթղրճյան ուզեցել է ուղղել Սամուել, երևի, ինչպես նկատել էինք, ենթադրելով, որ 607 թվին ժողովին ներկա Սամուելն է, Հռիփսիմեի վանահայր: Այստեղից հ. Ա[կինեան] նոր եզրակացություններ է հանել, և նոր ավերածո սրբագրություն կատարել Եզնիկի բնագրի մեջ: Սակայն Կամովեղ հաստատապես այլ անձ է, քան Սամուել: Հայտնի է Կոմիտասի արձանագրությունը. «Ես, Կոմիտաս, եկեղեցապան Սրբոյ Հռիփսիմէի, կոչեցայ յաթոռ Սրբոյն Գրէգորի. շինեցի զտաճար սրբոց վկայիցս Քրիստոսի»: Սամուել Կոմիտասից առաջ էր վանահայր Ս. Հռիփսիմեի, 607 թվին, իսկ Կամովեղ նրա հաջորդն է նույն պաշտոնում, 618 թվին: Անունն օտարոտի է: Հավանորեն նույնն է, ինչ որ Ս. Գրքից հայտնի Կամուել կամ Կամիշոյ-ի («յարեաւ Յիսուս») պես մի անուն:

---

[1] **Ոսկեբերան**, էջ 593:

[2] Անդ, էջ 792:

[3] **Եփրեմ**, էջ 148:

[4] **Սերեոս**, էջ 107:

[5] **Ագաթանգեղոս**, էջ 394:

Արդյա անունը ևս ուղղելու չէ Աբրահամ, ինչպես իրեն թույլ է տվել հ. Ա[կինյան]: Ձեռագիրը շատ պարզ է և ոչ մի կասկածի տեղիք չէ տալիս: Վերջին տառի մի ստեղն մաշված է և նորոգող լրացրել է այնպիսի զգուշությամբ, որ ստեղն կետի նման է: Հ[այր] Ա[կինյան] հայ եկեղեցական անունների մեջ չի գտել Արդյա, ուստի և սրբագրելու պետք է տեսել: Այս բնավ բանավոր պատճառ չէ: Արիստողոս անունն ևս չի պատահում ո՛չ եկեղեցական և ո՛չ աշխարհական անունների մեջ: Բայց ահա այդ անունն երևան է գալիս Անիի 622 թվի արձանագրության մեջ, ուրեմն մեր Եզնիկ Երեցի օրով: Արիստողոս սխալմամբ Աբրահամ են կարդացել շատ շատերը և այդպես էլ տեսնում եմ հ. Գարեգին [Հովսեփյանցի] «Քարտեզ հայ հնագրության» աշխատության մեջ, բայց ստույգ ընթերցումն է Արիստողոս: Ուրանա՞նք, ուրեմն, արձանագրությունը և կամ սրբագրե՞նք Աբրահամի: Արդյայի գոյություն հայոց մեջ Ծմուելի և Բրքիշոյի դարում զարմանալի չէ, մանավանդ որ հասարակ անուն չէ: Ասորական Արդյահայի սղումն է. իսկ Արդյահան երեց էր, որ նահատակվեց Արդիշո և Արդա եպիսկոպոսների հետ 374 թվին: Սրանք ընդունված են և մեր «Ցայսմաւուրք»-ներում և մինչև անգամ հին օրացույցներում:

Հ[այր] Ա[կինյան] միայն Արդյա անունը չէ սրբագրել, այլ մի ամբողջ նախադասություն, աղավաղելով բնագիրը:

Եզնիկ Երեց պատմում է Հռիփսիմյանց նշխարների բացումը Ս. Սահակի օրով և կնքում իր խոսքը ասելով. «եւ եղև այս ի յամս Արդյայի վանաց երիցու սրբոյ ի Վաղարշապատ քաղաքի (:) մինչև յաւուրս Կոմիտասայ, Սրբոցն Հռիփսիմեանց սպասաւորի»[1] և այլն: Փակագծի մեջ առած վերջակետին նշանակություն տալով, կարծել էինք, որ նախադասությունն այդտեղ վերջանում է: Այժմ տեսնում ենք, որ վերջակետը ջնջելու է: Պատմածը տեղի է ունեցել նախքան Կոմիտաս, որի օրով պատահած նույնանման դեպքը պիտի պատմե, այն է նշխարների վերստին բացումը տաճարի վերաշինության ժամանակ, երբ Հռհաննիկ վանահայր էր կաթողիկեի և Կամովեղը՝ Հռիփսիմեի:

Ամեն ինչ կանոնավոր է և անկարոտ մեկնության:

Սակայն հ. Ա[կինյան] ուզում է անպատճառ Արդյա կարդալ Աբրահամ որպեսզի նույնացնի նրան 607 թվի Աբրահամի հետ: Այս ճախորդ միտքը տանում է նրան դեպի մի նույնպես ճախորդ բնագրային շեղումի, որպես թե

---

[1] Հ[այր] Ա[կինյան] թերում է Հովհաննես Կաթողիկոսի անունը կրող ցուցակից. «Տէր Կոմիտաս... ի շինուածէ վկայարանի Սրբոյն Հռիփսիմէի»: Զարմանալի է, որ սրբագրությանց այնքան սիրահար բանասերը չէ նկատել, որ շինուած սրբագրելու է շինուել:

«եւ եղեւ այս ի յամս Արդլայի» է սկիզբը Կոմիտասի հատվածը. և հետևապես Արդլա՝ խեղաթյուրված Աբրահամ էր երեց կաթողիկեի՝ Կոմիտասի նորոգության ժամանակ:

Սակայն կասկածից դուրս է, որ «եւ եղև այս»-ը վերաբերում է Սահակի հատվածին և ոչ Կոմիտասի: Վերջինիս օրով կաթողիկեի վանահայրը Հռհանիկ էր և ոչ երևակայական Աբրահամ: Այս իր հակասությունը վերացնելու համար հ. Ա[կինյան] հայտարարում է, որ Աբրահամ մեռել է 618-619 տարիների ընթացքին եկեղեցու շինության ավարտելեն առաջ: Իսկ 616-617 թթ., այսինքն՝ Խոսրովի 28-րդ տարին, ուրեմն Աբրահամը տակավին կենդանի էր, մինչդեռ, ըստ Սեբեոսի, այդ տարին կաթողիկեի վանահայրը Հռհանիկն էր:

Այս կարգի սրբագրությունները հարգել չենք կարող և կարծում ենք, որ ազատություն էլ իր որոշ սահմանն ունի և պիտի ունենա:

Եզնիկ և Սեբեոս քաղել են ըստ հ. Ա[կինյանի] իրենց հաղորդագրությունը Հռիփսիմեի մասին Վրթանես Քերթողի գրվածքից: Եզնիկ պատմում է որպես ականատես և ուրեմն անկախ է որևէ աղբյուրից: Բացի սրանից կասկածով ենք վերաբերում, որ Վրթանես Քերթող այդպիսի մի գործ ունենար, որովհետև Վրթանես մեռած էր Կոմիտասի կաթողիկոսանալուց առաջ: Մեր այս մտքի դեմ խոժռոում է հ. Ա[կինյանը] և ապացույցներ պահանջում: Վրթանես տեղապահ էր Մովսեսի մահվանից հետո և իր ժամանակի ամենակարկառուն դեմքը հայ եկեղեցականության մեջ: Առաջինն է, որ հավաստիորեն կրում է Քերթող՝ այնքան բովանդակալից անունը, որ վկայում է իր բարձր գիտությունը: Անվեհեր ճակատեց քաղկեդոնականների վտանգավոր հորձանքի դեմ, որոնց գլուխն էր փառատենչ և ուխտազանց Կյուրիոն, պաշտպանեց հայրենի ավանդները հայրապետական աթոռի թափրության ժամանակ: Վաստակավոր դեմք էր և միակ արժանավոր թեկնածու Լուսավորչի գահին: Եթե 607 թվին չընտրվեց, պատճառը Սմբատ Բագրատունի իշխանի հաշտարար քաղաքականությունն էր: Անջատականներին մոլորությունից հետ բերելու համար Սմբատ մեկուսացրեց Վրթանեսին, որպես պայքարի մեջ շեշտված հակառակորդների կողմեն անընդունելի անձն, և ընտրել տվեց Աբրահամի պես անգույն եկեղեցական: Վրթանես մնաց իր դիրքում, որպես խորհրդական և՛ Սմբատի և՛ Աբրահամի: Հարկավ, Սմբատի հույսերը չարդարացան, անջատականները, արտաքին ուժերի ազդեցության տակ, ընտրեցին մի այլ կաթողիկոս: Սմբատ Պարսկաստան կոչվեց: Միության գործը ձախողեց: Վրթանես հիշվում է վերջին անգամ Աբրահամի ընտրությունից մի տարի հետո 608 թվին: Այնուհետև ոչ մի լուր: Հովհաննես Մամիկոնյան պատմում է, որ Աբրահամ ուղարկեց Կյուրիոնի մոտ միության գործով Կոմիտասին: Աբրահամ

կաթողիկոսը մեռավ 610-611 թվին երեք թե չորս տարի իշխելուց հետո (ԻԳ տարին ուղղելու է Գ կամ Դ)։ Կոմիտասի երևան գալը մի դերում, որ պատկանում էր տարիներն ի վեր Վրթանեսին, ներշնչում է այն միտքը, որ Վրթանես այլևս չկար, թողել էր այս աշխարհը։ Երուսաղեմի գրավումից հետո 614 թ. պարսկական արքունիքում մեծ ժողով գումարվեց դավաճաթանական խնդրի շուրջ։ Հայոց եկեղեցու կողմից ներկա էին Կոմիտաս և Մատթեոս եպիսկոպոսները։ Դարձյալ Վրթանես չկա, մի լուսավոր գլուխ, որ իր փորձառությամբ և տեսական պատրաստությամբ ամենեն որակյալն էր ներկայացնելու Հայ եկեղեցին միջազգայինն մի կաճառում, որպիսին էր Տիզբոնի ժողովը։ Կասկածը, որ Վրթանես մեռած էր, ևոր ուժ է ստանում։ Վերջապես հայրապետական գահը 610/611 հետո քանի մի տարի թափուր է մնում և Կոմիտաս ընտրվում է մեր հաշվով 616-617 թվին։ Նորեն Վրթանես չկա։ Այս դիտողությունները իրավունք են տալիս մեզ ասելու, որ Վրթանես մեռած էր Կոմիտասի ընտրութենեն տարիներ առաջ (5)։ Կարծեմ ի. Ա[կինյանը] չէ արգիլել մեզ մեկնել երևույթները, ինչպես մենք ենք հասկանում և լուսաբանում առանց սրբագրական ավերումների և այլ կարգի բռնությունների։

Վերջացրինք մեր ասելիքը։ Հ[այր] Ա[կինյանի] «Պատասխան»-ի մեջ դժբախտաբար չգտանք և ոչ մի առողջ կետ, որ մեր միտքը հանգչեր տեսնելով մի բան ճշտված, մի բյուրիմացություն վանած, մի սխալ ուղղված։ Սխալաշատ գրություն, որպիսին արժանի չէր ուշադրության, որ մենք հատկացրինք և հատկացրինք միմիայն հարգելով, ինչպես միշտ, հեղինակի անձը, որ արտակարգ տոկունությամբ և սիրով աշխատում է այն դաշտում, որ մեզ այնքան մոտ է։ Այդ հարգանքն է, որ թելադրում է մեզ և մի վերջին նկատողություն։ Հ[այր] Ա[կինյան] հայտարարում է, որ «դասական լեզվի նկարագիրը նկատելու և անոր առանձնահատկությունները զգալու համար, քաղցրությունն ճաշակելու համար, հարկ է ապրած ըլլալ դասական մատենագրության մեջ, սնուցած ըլլալ **քիմքը** դասական ճաշակով։ Պահանջք մը, առանց որո անկարելի է զանազանություն դնել դասական և ոչ-դասական լեզուներու մեջ և որ Ն. Ադոնց չէ հետաքրքրված դասական լեզվով։ Կա վարդ հոտավետ, նվազ հոտավետ և առավել հոտավետ, տարբերությունը տեսությամբ չենք կրնար դատել, վարդ հոտառությունը միայն կզգա»։

Արդ, մեր կարծիքով, այս հայտարարությունը ամենատխուր հանձնաբարականն է, ցավալի վկայական, որ մի բանասեր կարող է ինքն իրեն տալ։ Սխիքարյան հայկաբանության լուսափայլ աստղերը, սկսած «Հայկազեան Բառգրքի» անմահ հեղինակներից, նույնպես սրած էին իրենց քիմքը, ոչ պակաս, քան ի. Ակինյան, դասական վարդեր հոտոտելով։ Բայց և այնպես Եղիշե, Խորենացի, Փիլոն, անգամ Զենոբ համարում էին V դարու գրիչներ։

Մեր ժամանակ, հայր Հացունի, որ գուցե ավելի, քան ի. Ա[կինյան] սերտել է Ոսկերերաձի և Եփրեմի մեկնությունները, նյութեր քաղելով իր ուսմունքների համար, ահա, լեզվական արգելք չէ տեսնում Խորենացին V դարում թողնելու:

Ավելի լավ է թողնել քիմքը, չվստահանալ հոտառության: Քիմքը աղբյուր է քմահաճության: Ընտրենք այլ ուղեցույցներ, և առաջնորդվինք այլ սկզբունքներով:

ԱՄՊԵԼԻՈՍ՝ ՔԵՐՍՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Հայկական «Գիրք թղթոցի» քննադատության շուրջ)

Հայոց եկեղեցու պատմության վերաբերյալ ճամակային վավերագրերի ժողովածուն, որը կոչվում է «Գիրք թղթոց», հին հայկական դպրության այն հուշարձաններից է, որի նշանակությունը գնահատվեց գիտական աշխարհում նրա տպագրությունից (1) անմիջապես հետո (2): Ճիշտ է, իր բովանդակությամբ այդ հուշարձանը ոչ մի նոր բան չի ներկայացնում, քանզի դրանում ընդգրկված դրվագները, հազվագյուտ բացառությամբ, հայտնի էին ուրիշ ձեռագիր հավաքածուներից, բայց և այնպես այն կարևոր է հենց որպես հավաքական աշխատություն: Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչ վավերագրեր, ինչ երկեր են հայերի կողմից համարվել առավել հեղինակավոր ու վճռորոշ՝ եկեղեցական դավանաբանության բարդ հարցերը մեկնաբանելիս:

Քննադատությունը, թվում էր, պետք է անդրադառնար հիշյալ ժողովածուին ամենից առաջ որպես այդպիսին, անմիջական խնդիր ունենալով որոշել նրա նախնական ծավալը և հետևել նրա հետագա ճակին: Իրական տեսքի պարզաբանումով, կպարզվեին նաև ժողովածուն կազմողի խնդիրը և մերձավորագույն նպատակը, իսկ դա կնպաստեր լավագույնս ըմբռնելու շատ վիճելի դրվագներ կամ նրանց առանձին մասեր: Հայկական դավանաբանությունը, ինչպես նաև եկեղեցական և ընդհանրապես հասարակական մտքի ուրիշ դրսևորումներ, այնպիսի հարթ ու ուղիղ ճանապարհով չի ընթացել, ինչպես որ այն պատկերացնում են հայոց եկեղեցականության հին ու նոր ջատագովները: Այստեղ էլ են տեղի ունեցել ոլորապտույտներ ու բեկումներ, և առավել, քան որևէ մեկ այլ բնագավառում: Հետագա դարերի տրամաղրություններն ու միտումները հաճախ են արտացոլվել վաղուց ի վեր անցած-գնացած ժամանակների իրերի դրության վրա, և հայրենի բարեպաշտության նախանձախնդիրը դիտավորյալ կամ անգիտակցաբար ուղղումներ է մտցրել հնության մեջ, նորովի հասկանալով, ուստի և աղավաղելով հինը:

«Գիրք թղթոցը» չի խուսափել այդ ճակատագրից. այն ոչ միայն ածել է ըստ ծավալի, այլև դրա առանձին հոդվածներ զերծ չեն մնացել կողմնակի ձեռքերի միջամտությունից: Նախնական ծավալի հարցը լուծվում է առանց դժվարության: Կոմիտաս կաթողիկոսի հավատի մասին գրվածքի վերջում

պահպանված գրառումն այն մասին, որ «Գրիգոր Վկայասերի ծեռագիրն ավարտվում է այստեղ»[1] պետք է հասկացվի ոչ թե այն իմաստով, իհարկե, որ հայրենի դպրության նշանավոր երկրպագուն իր տրամադրության տակ ունեցել է «Գիրք թղթոցի» պակասավոր ծեռագիր: Այդ գրառումը նշանակում է, որ Գրիգորի օրոք դեռևս մեր ժողովածուն ազատ է եղել Կոմիտասի նշված գրվածքից հետո եկող բոլոր հետագա հոդվածներից: Ինչ վերաբերում է ժողովածուի սկզբում տեղադրված դրվագներին, ապա դրանցից Սահակի և Պրոկղի գրագրությունը հազիվ թե վերաբերի սկզբնական խմբագրության կազմին. իսկ երկու քրիստոսաբանական կշռադատությունները, որոնք վերաբերում են Մովսեսին և Հովհաննին, անկասկած, ավելի ուշ են մուծվել ժողովածուի մեջ: Նշված մասերը բացառելով, «Գիրք թղթոցում» մնում են վավերագրեր, որոնք վերաբերում են Հայոց եկեղեցու հարաբերություններին երկու հարևան եկեղեցիների՝ ասորականի և վրացականի, հետ: Այդ վավերագրերում քննարկվում են հայկական դավանաբանության զարգացման պատմության մեջ երկու՝ մեկը մյուսին հաջորդող պահ՝ պայքարը նեստորականության դեմ և պայքարը քաղկեդոնականության դեմ:

Կարելի՞ է արդյոք վստահել այդ վավերագրերին: Արդյո՞ք դրանք ժողովական հեղինակություն վայելող վավերական այն սահմանումները են, որոնց հավակնությունը ունեն: Մանրակրկիտ դիտարկումները որոշ դեպքերում հանգեցնում են հուսախաբությունների և հարկադրում են վերաբերվել դրանց հարկ եղած զգուշությամբ:

Հայ-ասորական հարաբերությունների պատմության վերաբերյալ մեր ժողովածուում եղած վավերագրերից շատ կարևոր են երկու ուղերձ: Դրանք երկուսն էլ, առավել հնագույնները, ծագել են Թարկնեն [Ա Ոթմսեցի] կաթողիկոսի օրոք կայացած Դվինի առաջին ժողովից, և երկուսն էլ ուղղված են ասորական կամ, ավելի ճիշտ, պարսից հավատակիցներին: Երկրորդ ուղերձում հիշատակվում է Քերսոն քաղաքի ոմն եպիսկոպոս՝ Ամպելիոս անունով: Այդ եպիսկոպոսի անճնավորությունը առայժմ հայտնի չէ այլ աղբյուրներից: Չգիտես ինչու, հետազոտողները լռելյայն շրջանցում են նրան: Այն աշխատություններում, որտեղ քննարկվում են հայ-ասորական հարաբերությունները ըստ մեր հուշարձանի տվյալների, հիշյալ անճնավորությունը պարզապես անտեսվում է[2]: Մինչդեռ եպիսկոպոսի անճնավո-

[1] «Գիրք թղթոց», էջ 219:

[2] Հարցի վերաբերյալ հատուկ աշխատության հեղինակ Ե. Տեր-Մինասյանը ոչ մի խոսք չի ասում Ամպելիոսի մասին և իր աշխատության հավելվածում, որտեղ տրվում են Թարկնեի առաջին ուղերձի և հետագա գրագրության թարգմանությունները, նա բաց է թողնում երկրորդ մեզ հետաքրքրող ուղերձը («Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts». Leipzig, 1904).

թության բացահայտումը, որի հեղինակությունը վկայակոչում են հայոց հոգևոր պետերը, կարող էր լույս սփռել քննարկվող ուղերձի էության վրա:

Երկրորդ ուղերձը, առաջինի պես, հետևանք է պարսից քրիստոնյաների կողմից հայերին ուղղված դիմումի և գրված է հակոբիկյան երեց Սիմեոնի երկրորդ անգամ հայտնվելու առիթով՝ նույն հակաենստորական առաքելությամբ: Հայոց եկեղեցաժողովը կաթողիկոսի գլխավորությամբ երկրորդ անգամ հանդես է գալիս հակոբիկյանների պաշտպանությամբ ենստորականության դեմ ելած պայքարում, և, դատապարտելով, համաձայն «Նիկեայի ժողովի» որոշման, Ենստորի և նրա հետևորդների սուտ ուսմունքը, դիմում է մեծն Ամպելիոսի հեղինակությանը.

«Եւ փախչիմք ուրացեալ զ'ի Քաղկեդոնին սուտիւն Ենստորի և այլոցն նմանից, զոր գիտեմք կեղծաւորութեամբ փախուցեալ ի հերձաւոսութենէ և ի հրէական մոլութենէ, և զնոյն խոստովանին զհերձաւոսութիւն, միաճգամայն և զերէսութիւն, <ի> պատրել ի մոլորութիւն զմիտս անմեղաց՝ որ է տգիտաց, վրիպեցուցանելով ի ճանապարհէ զկոյրս, որով սահմանեցաւ ի սրբոյ Հոգւոյն մարգարէիւն հատուցումն նոցին, զոր<ս> սուրբ հարքն միաբանութեամբ իւրեանց ի Նիկեա յանդիմանեալ, խզեցին զընթացս չար խորհրդոց նոցա, ի սրբոց գրոց նզովելով զՆեստորիոս և <զ>Արիոս և զԴիոդորոս և զԹեողորետոս և զԵւտիքոս և զՊաւղոս Սամոսատացի, և զնմանս նոցին, որ խաւնակութիւն զանգուածոյ զմարդանալն Քրիստոսի ասել իշխեցին, իբրև զլոկ մարդ, ո՛չ կատարեալ Աստուած ի մարմնի կատարելում:

Զոր և մեծն Ամպեղիս եպիսկոպոս Քերսոն քաղաքի, ճշմարիտ հաւատոյ սիրաւղ և սպասաւոր, գրեաց ճշդիւ ճշմարտապէս, յորում փութացեալ ոչ վերջացաւ: Նմին գրոյ նախանճաւոր լեալ երէցն բարեպաշտ Անատոլիս Կոստանդնուպաւլսի, վկայեալ սրբոյ եպիսկոպոսի Ամպեղի գրոյ, յաւելուած սրբոյ Երրորդութեանն ոչ գիտացեալ՝ զ'ի սրբոյ կուսէն զծնունդն Որդւոյ, այլ զնոյն ինքն Աստուած և Բան մարդացեալ անախտաբար մնաց նոյն, որ յառաջ քան զյաւիտեանս երկրպագի ընդ Հաւր և ընդ սուրբ Հոգւոյն:

[Ճշմարտապէս գրեաց սուրբ քահանայապետն Քերսովնացւոց Ամպեղիս, հանդերձ երկոտասան գլխովք Կիւրղի եպիսկոպոսի երանելոյ. ի նոյն յարելով և զթուղթն Ջենոնի բարեբանելոյ թագաւորին Հոռոմոց, ստուգութեամբ վկայեաց երէցն աստուածասէր Անատոլիս»][1]:

Ուղերձի վերջում կարդում ենք.

«Եվ վասն թղթոյն սրբոյ Ամպեղի եպիսկոպոսի, և Անատոլեայ [երէցու], հրամայեցաք աստ գրել»[2]:

---

[1] «Գիրք թղթոց», էջ 49:

[2] Անդ, էջ 51:

Այդ նշումի իմաստը, ըստ երևույթին, այն է, որ ուղերձին կից հղվում են նաև Ամպելիոս եպիսկոպոսի և Անատոլիոս երեցի նամակների պատճենները:

Սույն վավերագրերով զբաղվող գիտնականները, կրկնում ենք, ուշադրություն չեն դարձրել այստեղ հիշատակվող անձնավորությունների վրա և նեղություն չեն կրել պարզելու նրանց ինքնությունը: Համապատասխան գրականության մեջ մեր փնտրտուքը չհանգեցրեց դրական արդյունքների: Պետք է ենթադրել, որ այդ անձնավորությունները, որոնց վկայակոչում են հայոց հոգևոր պետերը, իրենց հեղինակությամբ հայտնի էին ոչ միայն հայերին, այլև նրանց հակառակորդներին: Նրանք պետք է բարձր հռչակ վայելեին եկեղեցական աշխարհում ընդհանրապես, որպեսզի նրանց վկայակոչումը որևէ կշիռ ունենար այսքան սուր և վիճելի մի հարցում: Եթե Ամպելիոսը և Անատոլիոսը լինեին տեղական գործիչների թվից, ապա կարելի էր ենթադրել նրանց հանրահայտ լինելը գոնե իրենց բնակավայրերում, լինելով անծանոթ լինելով հանդերձ հայրենի սահմաններից դուրս: Բայց Ամպելիոսը անվանվում է Քերսոնի եպիսկոպոս. ուստի, նա գործում էր հայկական աշխարհից հեռու. իսկ եթե հայերը հենվում են նրա հեղինակության վրա, ապա համենայն դեպս հայերը չեն նրա փառքի ստեղծողները և միայն նրանք չեն նրա գիտելիքների գնահատողները: Ակնհայտ է, որ Ամպելիոսը այն անձանցից է, որոնք անուն են հանել ընդհանուր եկեղեցական կյանքի բատերաբեմում: Ո՞վ կարող էր լինել նա:

Քերսոն քաղաքի անունը կարող է ծառայել իբրև մի ընդհանուր կետ, որը հարազատացնում է փնտրվող եպիսկոպոսին Քերսոնի նշանավոր վտարանդու՝ Տիմոթեոսի, հետ: Ականավոր մարտնչող, միաբնակության սյուն Դիոսկորոսի զինակից, վերջինիս մահից հետո նա կանգնեց ի պաշտպանություն նրա ուսմունքի՝ հավատարիմ հետևորդի կրքոտությամբ: Թե կյանքի ինչ փոթորիկներ ու ցնցումներ ապրեց նա իր աննկուն ության պատճառով, քաջ հայտնի է նրա կենսագրությունից: Կոստանդնուպոլսի եկեղեցին տեսնում էր վտանգավոր հակառակորդի և ահեղ թշնամու ի դեմս Տիմոթեոսի և դրա համար զինվեց նրա դեմ պայքարի ու հալածանքների բոլոր միջոցներով, ընդհուպ մինչև նրա՝ կայսեր հրամանով վտարվելը: Գեննադիոս պատրիարքի օրոք նա իր ուսուցչի Դիոսկորոսի նման աքսորվեց Գանգրա[1], բայց թշնամիները չբավարարվեցին դրանով, և, որպեսզի վերջնականապես կասեցնեն նրա ազդեցությունը եկեղեցական կյանքի վրա, Գանգրայից նետեցին հեռավոր Քերսոն, «մի երկրամաս, որ բնակեցված էր բարբարոսներով և անկիրթ մարդկանցով»[2]: Աքսորում Տիմոթեոսը

[1] «The Syriac chronicle known as that of Zachariah of Mitylene», IV, 7, p. 74.

[2] Անդ, IV, 11, էջ 79:

ամբողջապես տրվեց գրական գործունեության. իր աննճական ու գաղափարական հակառակորդների դեմ պայքարի այլ միջոցներ չունենալով, նա հանդես էր գալիս նրանց դեմ գրչով: Նրա աշխատությունններից մեկը և, ըստ երևույթին, գլխավորը, «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի», հնում թարգմանվել էր հայերեն և վերջերս հրատարակվեց շնորհիվ Էջմիածնի միաբանության երկու գիտնական միաբանների ջանքերի[1]:

Թե ինչ նշանակություն ուներ Տիմոթեոսի նշված աշխատությունը հայ եկեղեցական կյանքում, բավարար չափով շեշտված է նրա հրատարակիչների կողմից առաջաբանում: Այդ կատաղի հակաքաղկեդոնականի ազդեցությունը Հայոց եկեղեցու գործիչների ու գրողների վրա պարզաբանելը մի հարց է, որ հատուկ հետազոտություն է պահանջում: Համենայն դեպս, անժխտելի է, որ հայկական ուղղափառության մշակման ժամանակաշրջանում հայոց եկեղեցական միտքը գտնվում էր Տիմոթեոսի գաղափարների ուժեղ ճնշման տակ (3): Նրա աշխատությունը փաստարկների անսպառ աղբյուր է Քաղկեդոնի ժողովի դեմ. այս երկին էին դիմում հայ դավանաբանները վկայակոչելով այս կամ այն եկեղեցական հորը և հաճախ նրանց գիտեին միայն ըստ Տիմոթեոսի: Ահա թե ինչու մեզ թվում է, որ խնդրո առարկա Ամպելիոս եպիսկոպոսի անվան տակ թաքնված է Տիմոթեոսի աննճավորությունը: Հետաքրքիր է, որ Ամպելիոսը ուղերձում անվանված է Մեծ: Ինչպես հայտնի է, Տիմոթեոսն իր գործունեությամբ այնպիսի նշանակություն էր ձեռք բերել ժամանակակիցների աչքում, որ արժանացել էր Մեծ մականվան[2]: Քերսոնացի մակդիրը, ինչպես նաև Անաստոլիոս երեցի անունը մեզ ուղղում են Տիմոթեոսի կողմը՝ Ամպելիոսի աննճավորությունը փնտրելիս: Այստեղ հիշատակվող Անաստոլիոսը, անշուշտ, այն երեցն է, որը Տիմոթեոսի հետ միասին գտնվում էր Դիոսկորոսի մոտ Եփեսոսի ժողովում, և որի մասին Տիմոթեոսը հետևյալ կերպ է արտահայտվում իր աշխատության մեջ:

«Նոյն աւրինակ և որք առ երկրորդաւն յԵփեսոս ժողովովն, պետաւորելով այսմիկ երիցս երանելւոյ հաւր մերոյ և եպիսկոպոսապետի և խոստովանողի Դիոսկորոսի, ընդ որում առընթեր էաք յայնժամ ես իսկ և երանելի իմ եղբայր Անաստոլիոս երէցն»[3]:

---

[1] «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղէքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի», Կարապետ վ. և Երվանդ վ., Էջմիածին, 1908:

[2] «The Syriac chronicle», IV, 1, 4, pp. 22, 63 և այլն:

[3] «Տիմոթէոսի հակաճառութիւն...», էջ 35:

Այս խոսքերից երևում է, որ Անատոլիոսը ոչ այլ ոք է, եթե ոչ իր՝ Տիմոթեոսի հարազատ եղբայրը: Զաքարիայի մոտ պահպանված իր ճամակներից մեկում նույնպես Տիմոթեոսը հիշատակում է Անատոլիոս երեցին և անվանում է նրան իր եղբայր[1]:

Եվ այդպես, եթե մեծ եպիսկոպոսի տակ պետք է հասկանալ Տիմոթեոսին, ապա ինչո՞ւ է նա կրում Ամպելիոս անվանումը: Ճիշտ է, մեր տեքստը շատ եղծված է, բայց հազիվ թե հնարավոր լինի **սրբագրությամբ** Ամպելիոսը վերածել Տիմոթեոսի: Ըստ երևույթին, այստեղ աղավաղում է տեղի ունեցել թյուրիմացության հողի վրա:

«Գիրք թղթոցում» կա Պետրոս Ալեքսանդրիացու գրագրությունը Ակակիոս Կոստանդնուպոլսեցու հետ: Նամակներից մեկում (Պետրոսից առ Ակակիոս), ի միջի այլոց, խրատներ ենք կարդում այն մասին, որ սուրբ պատարագի ժամանակ ինչ-որ հերետիկոսների փոխարեն հարկ է ուրիշ անուններ հիշատակել:

«Յորժամ առնիցես զպատարագս ընդա, այսինքն Մարկիանոսի և Պողոքերայ ամպարիշտ թագաւորաց և Պեղինեայ և Անտեղիսեայ և Գնաղիսեայ, որ յառաջ քան զքեզ եպիսկոպոսք էին հերետիկոսք, և Շմաւոնի երիցու վանականի... Այսուհետև փոխանակ Պեղինէի եպիսկոպոսի հերետիկոսի մատո զպատարագն քո առաջի Աստուածոյ եթե Դէոսկորոսի հայրապետի որ էր յԱղէքսանդրիա, այն որ վկայեաց յաւուրս Մարկիանոսի թագաւորի հերետիկոսի: Եւ փոխանակ Անտեղիսեայ եպիսկոպոսի հերետիկոսի արա զպատարագն երանելոյն Թէոդոսի եպիսկոպոսի Երուսաղէմի... Եւ փոխանակ Գնաղիսոսի եպիսկոպոսի հերետիկոսի, արա՛ զպատարագն երանելոյն Տիմոթէոսի հաւատարիմ Հաւր մերում հայրապետի Աղէքսանդրացւոյ: Եւ փոխանակ Շմաւոնի վանաց երիցու հերետիկոսի արա զպատարագն երանելի եղբարն Տիմոթէոսի այսինքն Անտեղիս երիցու, այն որ վկայեաց ի Գանգրա յաւուրս Լևոնի արքայի հերետիկոսի»[2]:

---

[1] «The Syriac chronicle», IV, 12, p. 96. V, 4, էջ 111-ում պատմվում է այն մասին, որ Տիմոթեոսը փոխադրել է Դիոսկորոսի և «իր եղբայր Անատոլիոսի» («of Anatolius his brother») աճյուններըը: Զաքարիայի աշխատության անգլերեն թարգմանիչը անճշտական անուններն ցանկում մուծում է «Anatolius, brother of Dioscorus» և վկայակոչում է այդ տեղը: Մինչդեռ էջ 111-ում հիշատակվող Անատոլիոսը միևնույն անձն է նրա հետ, որի մասին խոսվում է էջ 96-ում, և նա Տիմոթեոսի ոչ թե Դիոսկորոսի եղբայրն է: Անատոլիոսի, Տիմոթեոսի եղբոր մասին հիշատակություն կա նաև հայտնի անանուն «Կայսերք Հռովմոց» ժամանակագրության մեջ՝ հրատարակված Վենետիկում՝ «Անանուն ժամանակագրութիւն յօրինեալ յէ դարու», 1904, էջ 66, 67:

[2] «Գիրք թղթոց», էջ 259:

Այդ վավերագիրը հայերեն թարգմանված է ասորերենից, ինչպես պարզ է դառնում հատուկ անունների ընթերցումից և տառադարձումից՝ Պողոքերա Pulcheria, Պեղիս - եայ Flavianus, Անտեղիս - եայ Anatolius, Գնադիս - այ Gennadius, Շմաւոն Simeon. Պետրոս պատրիարքը առաջարկում է թվարկված անճանց փոխարեն մնծարել Դիոսկորոսի՝ Ալեքսանդրիայի պատրիարքի, Թեոդոսիոսի՝ Երուսաղեմի եպիսկոպոսի, Տիմոթեոս Ալեքսանդրիացու և «երանելի եղբարց Տիմոթէոսի, այսինքն՝ Անատոլիոս երիցու, այն որ վկայեաց ի Գանգրա յաւուրս Լևոնի արքայի հերետիկոսի» հիշատակը:

Այստեղ վկայություն ունենք, որ Տիմոթեոսը Անատոլիոս անունով եղբայր ուներ: Մենք տեսնում ենք նաև, որ Անատոլիոս անունը տառադարձվում է ասորերենից հայերեն Անտեղիս ձևով: Վերադառնալով մեզ զբաղեցնող՝ անծանոթ Ամպեղիս անուն պարունակող բնագրին, մենք կարող ենք խնդրո առարկա Ամպեղիսի մեջ տեսնել Անատոլիոս անվան ասորական տառադարձումը: Այնուհետև, հարկ է ենթադրել, որ սկզբնապես տեքստում չի նշվել Քերսոն քաղաքի եպիսկոպոսի անունը, այլ ընթերցվել է «մեծ եպիսկոպոս Քերսոն քաղաքի», որով հասկացվում էր բոլորին հայտնի միաբնակության ջատագով Տիմոթեոսը: Ամպեղիս անունը (Անտեղիս-ից), որը կողմնակի ձեռքով գրառված է լուսանցքում որպես մեկնաբանություն կամ համարժեք Անատոլիս անվան, հետագայում մուծված էր տեքստի մեջ, ընդորում այն սխալմամբ վերագրված է Քերսոնի եպիսկոպոսին, մի սխալ, որն առավել քան հասկանալի է, քանի որ եպիսկոպոսի անունը տեքստում չի եղել և ենթադրվել է, որ պատահաբար բաց թողնված անունը նշվել է լուսանցքում: Քննարկվող հատվածում Ամպեղիսը հանդիպում է մի քանի անգամ, բոլոր դեպքերն էլ միատեսակ կերպով հարազատ չեն, ընդ-միջարկված են: Որ ուղերձի տեքստն ընդհանրապես աղավաղված է, երևում է այն բանից, որ հատվածի Ամպելիոսին վերաբերող վերջին արտահայտությունը՝ «Ճշմարտապէս գրեաց» մինչև «աստուածասէր Անատոլիոս»՝ նախորդի պարզ կրկնությունն է որոշ բացահայտորեն ժամանակավրեպային բնույթի հավելումով: Այդ բառերի իմաստով, Ամպելիոսի նամակին Անատոլիոսը կցել է Զենոն կայսեր հրովարտակը՝ «ի նոյն յարելով և զթուղթն Զենոնի բարեբանելոյ թագաւորին Հռոմոց»:

Բայց Անատոլիոսը ապրել և մահացել է Զենոնի նախորդ Լևոն կայսեր օրոք, իսկ Ամպելիոսը, եթե ճիշտ ենք նրան նույնացնում Տիմոթեոսի հետ, ավելի վաղ, մինչև Զենոնի հրովարտակի դուրս գալը: Մենք ենթադրում ենք, որ եթե ոչ ամբողջ նշված արտահայտությունը, ապա համենայն դեպս Զենոնի հրովարտակին վերաբերող խոսքերը հարկ է համարել ուշ ընդմիջարկում:

Մեր նկատած ժամանակավրեպությունը կարող է ուղղվել մեր դրույթի դեմ. եթե Ամպելիոսը և Անատոլիոսը գիտեն Զենոնի հրովարտակը, ապա մեր կռահումը նրանց նույնության մասին Տիմոթեոսի և Անատոլիոսի հետ, կորցնում է ոտքի տակի հողը, քանի որ այդ անճշտությունները մահացել են մինչև Զենոնը: Բայց բանն այն է, որ քննարկվող ուղերձը ընդհանրապես է կրում Տիմոթեոսի ազդեցությունը, անկախ Ամպելիոսի անճշտության հարցից: Բուն ուղերձում վկայակոչվում են եկեղեցու մի շարք հայրեր, հենց նրանք, ովքեր կազմում են Տիմոթեոսի փաստարկումների և պաշտպանության հիմքը ոչ միայն նրա հրատարակած կոթողային երկում, այլև նրա առանձին ճամակներում, որոնք մեզ են հասել Զաքարիա Միտիլենացու միջոցով: Աքսորից Տիմոթեոսը խիստ շատ էր գրում Քաղկեդոնի ժողովի և Լևոնի տոմարի դեմ և ուղարկում բոլոր կողմերը: Հնարավոր է, որ դրանցից էլ կազմվել է «Հակաճառութիւնը»: Նա հետապնդում էր նեստորականներին, բայց չէր խնայում նաև եվտիքեականներին: Մի ճամակում, որն ուղղված է նրանց դեմ և պահպանվել է Զաքարիայի մոտ, Տիմոթեոսը քաղվածքներ է բերում «Աթանասիոսից, Հուլիոս Հռոմեացուց, Գրիգորիոս Հրաշագործից, Բարսեղ Կեսարացուց, Գրիգոր Նյուսացուց, Գրիգոր Նազիազանցուց, Հովհաննէ Ոսկերերանից, Ամբրոսիոսից, Թեոփիլոս Ալեքսանդրիացուց և Կյուրեղից»[1]: Բոլոր այդ անունները հերթով թվարկվում են նաև մեր վավերագրում՝ Իգնատիոս, Աթանասիոս, Բարսեղ Կապադովկիացի, Գրիգոր Մեծ, երկու մյուս Գրիգորները (Նյուսացին և Նազիազանցին), Հուլիոս, Ամբրոսիոս, Հովհաննէ, Ատտիկոս, Թեոփիլոս, Կյուրեղ, Պրոկղ և Արիստակես:

Տիմոթեոսի հիշյալ ճամակում ի միջի այլոց մի քաղվածք կա Աթանասիոսի էպիկտետոսին հղված թղթից, որում մեկնաբանվում է հենց «յաւելուածի» հարցը: Նեստորական ըմբռնմամբ, այսինքն՝ Քրիստոսի մարմնի Բանի հետ միանման բնություն ունենալը չընդունելով, երրորդության մասին հասկացությունը վերանում է, քանզի եթե Բանի մարմինը խորք է Աստծու բնությանը, դրանով իսկ նա մի տեսակ հավելված է դառնում Երրորդությանը, և դրա հետևանքով ստացվում է ոչ թե Երրորդություն, այլ, մարմնի հավելվածով, չորրորդություն: Բուն այդ հասկացությունը արտահայտում է հայերեն «յաւելուած» բառը, որի դեմ առարկում է մեզ զբաղեցնող վավերագիրը, պնդելով, որ «Ամպելիոսը և Անատոլիոսը Մարիամից ծնված Որդուն չէին համարում հավելված Երրորդությանը, այլ նույն ինքն Աստված և Բան մարդացեալ»:

---

[1] «The Syriac chronicle», IV, p. 85.

Ճի՞շտ է արդյոք, որ քննարկվող թուղթը ներծծված է Տիմոթեոսի ազդեցությամբ, և եթե ճիշտ է, ապա արդյո՞ք այն բխում է Տիմոթեոսի այժմ հրատարակված երկից, թե՞ նրա որևէ մեկ ուրիշ երկասիրությունից, որը եղել է գրաբար թարգմանությամբ: Սրանք հարցեր են, որոնց ճիշտ լուսաբանումը կարևոր է ոչ միայն տվյալ թղթի համար, այլև ունի պատմագրական մեծ հետաքրքրություն: Հայերի ուղարկած թղթին կցված է եղել, ինչպես հռչակում են եզրափակիչ խոսքերը, Ամպելիոսի և Անատոլիոսի նամակը: Եթե այդ նամակի տակ նկատի ունենանք այդ անձանց որևէ մեկ այլ, մեզ չհասած երկասիրություն, ապա մեր հարուցած հարցը նշանակալիորեն կհստակեցվի: Բայց եթե խոսքը գնում է Տիմոթեոսի հայտնի աշխատության որևէ մի գլխի և ընդհանրապես դրա՝ այս կամ այն ձևով ազդելու մասին, ապա այնժամ թղթի՝ Ամպելիոսին և Անատոլիոսին վերաբերող մասերը, եթե ոչ ամբողջ թուղթը, այլևս իրենց նկատմամբ վստահություն չեն ներշնչում: Նրանք չեն կարող ճանաչվել գրական առումով հարազատ, քանի որ Տիմոթեոսի հիշյալ երկասիրության երևան գալը հայերեն թարգմանությամբ վերաբերում է ոչ միայն Բարկեն կաթողիկոսից, այլև Ներսես կաթողիկոսից հետո ընկած ժամանակաշրջանին: Տիմոթեոսի հրատարակիչները ենթադրում են, որ «Հակաճառութիւնը» թարգմանված է հայերեն 555 թվականի Դվինի երկրորդ ժողովի ժամանակ: Էջմիածնի միաբանության անդամ Միաբանը [Գ. Տեր-Մկրտչյան] հնարավոր է գտնում թարգմանությունը հասցնել 486 թվականին: Ամպելիոսի անձնավորության և Բարկենի թղթի վրա Տիմոթեոսի ազդեցության մասին մեր դատողությունները կարծես թե ընդառաջում են Միաբանի տեսակետին և կարող էին ամրապնդել նրա եզրակացությունները: Միաբանի կարծիքը, սակայն, անընդունելի է, և ոչ այն պատճառով, որ հիմնված է մեկ տոմարական տվյալի վրա, ընդորում կասկածելի արժեք ներկայացնող (4), այլ գլխավորապես այն պատճառով, որ այն ոչ լիովին է համապատասխանում այն արդյունքներին, որոնց հասել է գիտական հայագիտությունը վերջին տասնամյակներին հայկական դպրության վաղ շրջանի գրական ուղղությունների ու դպրոցների ուսումնասիրության բնագավառում: Հունարան թարգմանական գրականության արդյունքների մեջ այնպիսի մի բնորոշ աշխատություն, որպիսին է Տիմոթեոսի թարգմանությունը, չէր կարող ելնել ոչ միայն մինչև V դարի վերջը, ինչպես կարծում է Միաբանը, այլև նույնիսկ VI դարի կեսը պետք է ընդունել որպես փոքր ինչ վաղ, հակառակ գիտական հրատարակիչների՝ Կարապետ և Երվանդ վարդապետների պնդման: Մեր կշռադատումներով, որոնց մասին մենք կխոսենք մեկ ուրիշ անգամ, Տիմոթեոսի առկա թարգմանությունը ելնում է VI-VII դարերի սահմանագծում հայկական ուղղափառության նշանավոր պաշտպան

Վրթաճեսի շրջաճակից: Այդ հիմաճ վրա մեճք եճքադրում եճք, որ Ամպելիոսի մասիճ մեզ հետաքրքրող հատվածը թղթի մեջ կարող էր մուծվել ճշված ժամաճակաշրջաճից հետո: Մեզ հասած տեսքով Քարկեճի ոչ միայճ երկրորդ, այլև առաջիճ թուղթը չեճ ճերկայացճում ճախասկզբճական խմբագրության հարազատ բճագիր: Առաջիճ թղթի վերաբերյալ մեճք գիտեճք, որ ժողովին մասճակցում էին ճաև վրաց և աղվաճից եպիսկոպոսճերը. սակայճ առկա խմբագրության մեջ ճրաճց ստորագրությունը չկա: Աբրահամ կաթողիկոսի հստակ վկայությամբ թղթի հայերեճ բճագիրը ոչճչացվել է հայոց 572 թվականի ապստամբության ժամաճակ, և հայերը ստիպված եճ եղել թարգմաճել այճ հուճարեճ պատճեճից, որը գտճվելիս է եղել Ուրհայում: Կյուրիոճին ուղղված ճամակում հիշյալ կաթողիկոսը, առաջարկելով Քարկեճի օրոք տեղի ուճեցած ժողովի ճիստերին մասճակցած և հայերի հետ միասին Քաղկեդոճի ժողովը և Լևոճի տոմարը մերժած վրաց եպիսկոպոսճերի ցուցակը, ավելացճում է. «Եւ զի պայմաճ ճամակ՝ որ հայերէճ գրով էր, յապստամբութեաճճ կորեաւ, և թարգմաճեցաւ այս յՈւրհայ քաղաքի ի հռոմ գրով. քաճզի և ճոքա ուճէին ի մէճջ. և ստոյգ և սուրբ, որպէս արժաճ էր, չկարացին թարգմաճել, զի եճ որ քաջ յայտճի եճ եպիսկոպոսացդ և եպիսկոպոսարաճացճ աճուաճք, և եճ որ կարի ի ծածուկ և այլածկ: Բայց թէ կամիք աճուամբք եպիսկոպոսացճ և յաջորդաւք տեղեացճ և այլածև աճուամբք եպիսկոպոսացդ՝ որպէս գրեալ եճ, կարէք զստոյգ աճուաճս եպիսկոպոսարաճացճ գտաճել. և զայլոցճ ևս, քաճզի և մեք զմերս, այդ տարազու մարթացաք գտաճել, և մաճաւաճդ թէ զպայմաճ ճամակճ իսկ գտաճիցէք գրով ձերով»[1]:

Այդ արտակարգ արժեքավոր հայտճությունը բավական է, որպեսզի համոզվել ճրաճում, որ առաջիճ ժողովի գործուճեությունից պահպաճված փաստաթղթերը չեճ հասճում մինչև ժողովի իսկական արձաճագրական ակտերը, և պատմական արժեք ուճեճ այճքաճով, որքաճով որ բարգմաճություճներ եճ պատճեճից:

Հետաքրքիր է ճշել, որ արդեճ Աբրահամ [կաթողիկոսի] ժամաճակներում, այսինքճ՝ մեկ դար անցած Դվինի ժողովից, ժողովի զբաղմունքի բուճ առարկան արդեճ հասցրել էր մթագճել սերուճդների գիտակցության մեջ, և հակաճեստորականությունը արդեճ հավասարազոր էր դարձել քաղկեդոճական ըմբռճմանը: Աբրահամի կարծիքով, ժողովը մերժել էր Քաղկեդոճի ժողովը և Լևոճի տոմարը, մինչդեռ քաջ հայտճի է, որ ժողովը բացառապես ուղղված էր ճեստորականության դեմ: Աբրահամի օրոք պահի շահագրգռությունը՝ պայքարն էր կայսերական եկեղեցու դեմ. և բճական է,

[1] «Գիրք թղթոց», էջ 183:

որ պայքարի մեջ ընդգրկված մարդիկ իրենց ոչ վաղ նախորդների գործերը դիտում էին ընթացիկ կյանքի պայմանների տեսանկյունից և երանգավորում էին դրանք ժամանակի թելադրած գույներով: Ահա այդ պայմանները, այդ տրամադրություններն էլ կազմեցին այն հողը, որի վրա էլ տեղի ունեցան մեր ենթադրած ընդմիջարկումները Բարկենի թղթում: Ամբողջ թղթի հարազատությունը կասկածի ենթարկելու հիմք չկա: Դավանաբանական առումով մի շատ բնորոշ դարձվածք Բարկենի թղթից քառացիորեն կրկնվում է ասորիներին հղած Ներսես [Ք Բագրևանդեցի] կաթողիկոսի պատասխան թղթում:

«Եւ երկրպագեմք հանդերձ Աստուածութեամբն զմարմնաւորութիւնն, և հանդերձ մարմնաւորութեամբն զԱստուածութիւնն»[1], համեմատիր.

«Երկրպագեմք և փառաւորեմք զԱստուածութիւնն հանդերձ մարմնաւորութեամբն, և զմարմնաւորութիւնն հանդերձ Աստուածութեամբն»[2]:

Այդ դավանաբանական բանաձևը անվիճելիորեն Ներսեսը վերցրել է Բարկենի մեր քննարկած թղթից: Ներսեսը, մեր կարծիքով, իր թղթակցության մեջ երևան չի բերում ծանոթություն Տիմոթեոսի հետ. տեղեկությունն այն մասին, որ նրա օրոք է Տիմոթեոսի գիրքը հայերեն թարգմանվել, արդեն դրանով իսկ վստահության արժանի չէ: Բայց անկախ այդ հարցից, անկախ այն բանից, ծանոթ է եղել Ներսեսը Տիմոթեոսի գրքին, թե ոչ, նա չէր զանց առնի, Բարկենի թղթից օգտվելիս, վկայակոչել Ամպելիոսին և Անատոլիոսին, եթե նրանց անունները լինեին նրա օգտագործած թղթում:

Ամբողջ շարադրանքը մեզ հիմք է տալիս կասկածի տակ առնելու Ամպելիոսի և Անատոլիոսի մասին հաղվածք:

[1] «Գիրք թղթոց», էջ 48-49:

[2] Անդ, էջ 56:

«ՀԱՅՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» ՍԵԲԵՈՍԻ ԵՐԿՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱՂԵՐՄՆԵՐԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՎ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«Հայոց նախնական պատմությունը» կամ այսպես կոչված Անանունի պատմությունը, չնայած դրան նվիրված նշանակալի թվով հետազոտություններին (1), դեռևս շարունակում է առեղծված մնալ հայ բանասիրության համար: Դրա բացահայտումը հիմնական հետաքրքրություն ունի, հատկապես այժմ, Մովսես Խորենացու հարցում Անանունի վճռական նշանակության իմաստով: Գիտնականներին չի հաջողվել իրական լույսի ներքո մեկնաբանել «Նախնական պատմությունը» և որսալ դրա իսկական առնչակցությունը Խորենացու վերաբերմամբ գլխավորապես այն պատճառով, որ նրանք շրջանցել են քննադատության հարցը, որը պետք է նախորդեր ամեն մի այլ քննադատության: Հանգուցյալ Ք. Պատկանովը այնպիսի վճռական եղանակով էր արտահայտվել Անանունի մասին (2), որ էական մասերում նրա կարծիքի ստուգումը երկար ժամանակ ավելորդ էր թվում: Նրա հայացքներն Անանունի պատմության ծավալի և Սեբեոսի նկատմամբ դրա առնչության մասին հաջորդ քննադատներն ընդունեցին անվերապահորեն, դրանցից էին ելնում իրենց աշխատություններում հարցի վերաբերյալ անգամ առավել հանգամանալի և կարևոր աշխատությունների հեղինակները: Բայց Պատկանովի քննադատությունը, իր ամբողջ կտրականությամբ հանդերձ, հետազոտական քայլ է Անանունի պատմության ուսումնասիրության մեջ: Դրա հետևանքով էլ նրա վրա հիմնված հետագա հետազոտությունները անբավարար են:

Ներկա հոդվածում ես փորձում եմ կատարել Սեբեոսի երկում գտնվող «Նախնական պատմություն» քննագրի նոր քննադատությունը և որոշել դրա առնչությունը Խորենացու և Փավստոսի հետ: Քանի որ այն կյանքի է կոչվել Ստ. Մալխասյանցի վերջերս լույս տեսած գրքույկի[1] կապակցությամբ, ուստի ավելորդ չէ մեր քննադատությանը ներկայացնել այդ հետաքրքրական էույուղի վերլուծության հետ կապակցված:

Ստ. Մալխասյանցը պաշտպանում է այն տեսակետը, որի վրա

[1] **Ստ. Մալխասյանց, Սեբեոսի պատմությունը և Մովսես Խորենացի, մատենագրական ուսումնասիրություն, Թիֆլիս, 1899:**

կանգնած էին Անանունի դեռևս առաջին հետազոտողները (Թ. Միհրդատյանցը, Ա. Գարագաշյանը)։ Նրանք պնդում էին, որ «Նախնական պատմությունը» պատկանում է իրեն՝ Սեբեոսին, և որ երկրորդ գլխի վերնագրում հիշատակվող Ստեփանոս պատմիչը ուրիշ, Ասողիկից տարբեր անձնավորություն է, որն ապրել է մինչև VII դարը (3)։ Այդ կարծիքը, որը Պատկանովը մերժել է, Մալխասյանցը պաշտպանում է, ջանալով բոլորապատել այն նոր տվյալներով։ Գրքույկի հեղինակը բաժանում է պ. Խալաթյանցի հիմնական դրույթը Անանունի և Սեբեոսի բառապաշարի և խոսքի կառուցվածքի միջև ապշեցուցիչ նմանության գոյության մասին։ Բայց եզրակացություններում տարբերվելով Խալաթյանցից, նա հարում է Միհրդատյանցին։ Մալխասյանցը ճիշտ է դնում հարցը. եթե վերնագրում նշված պատմիչը մեզ հայտնի Ստեփանոս Տարոնացին է, ապա մենք իրավունք ունենք սպասելու, որ երկրորդ գլխի բովանդակությունը քաղված է կամ Խորենացուց, կամ Ասողիկից, և կամ նրանց երկուսից։ Այնուհետև վերլուծելով գլուխը, Մալխասյանցը գտնում է, որ պարթևական արքաների ցանկը գրեթե տառացիորեն Ասողիկի մոտ էլ կա. Մամիկոնյանների տոհմի ծագման մասին հատվածը երկու-երեք տողով հիշեցնում է Խորենացուն, իսկ մնացյալում այն գրավոր աղբյուր չունի, ըստ իրեն՝ հեղինակի հայտարարության։ Ինչ վերաբերում է երկու համաժամանակացույց աղյուսակներին, ապա դրանք չի կարելի քաղել ո՛չ Խորենացուց, ո՛չ Ստեփանոս Ասողիկից։ Այստեղից եզրակացություն՝ Սեբեոսի Ստեփանոսը չունի ոչ մի ընդհանրություն X դարի հայտնի համանուն պատմիչի հետ, նա ուրիշ Ստեփանոս է, հենց այն, ով գրել է եկեղեցական ժամանակագրությունը, որից պահպանվել և մեզ է հասել միայն մի քանի թերթ[1]։ Հենց այդ հեղինակից է օգտվել Սեբեոսը, Մալխասյանցի կարծիքով, ժամանակագրությունը կազմելիս։ Ենթադրվում է, որ առաջին աղյուսակը նա յուրացրել է Խորենացուց. այնուհետև, մինչև Հուստինիանոս I-ը, այն վերցրել է ժամանակագրության հեղինակից, իսկ մնացյալը, մինչև Սասանյան միապետության անկումը, անձամբ ինքն է կազմել իրեն ժամանակակից։

Այսպիսով Մալխասյանցը կարծում է, որ Խորենացու երկասիրության հետ Սեբեոսի ծանոթության փաստը ապացուցված է. հետևաբար, Խորենացին VII դարում արդեն հավաստի պատմիչի հռչակ ուներ։

Հենվելով Մալխասյանցի քննարկած տեքստին, հեշտությամբ կարելի է մերժել նրա դրույթները։ Մալխասյանցը ճիշտ չէ բացահայտել այն առնչությունը, որ ունի երկրորդ գլխի խորագիրը նրա բուն բովանդակության հետ։

Երկրորդ գլխի տեքստը երկու տեղ վնասված է։ Մամիկոնյանների մասին

[1] «Արարատ», 1868, էջ 104-105՝ արտատպված են Ստ. Մալխասյանցի մոտ։

դրվագը ոչ մի կերպ չի կապվում արքաների ո՛չ նախորդ և ո՛չ էլ հետագա ցուցակի հետ: Ակնհայտ է, որ այն իր տեղում չէ: Նրա իսկական տեղը, իմ կարծիքով, ներքևում՝ 13-րդ էջում է, այնտեղ, որտեղ խոսվում է Կոռնակի մասին[1]: Եթե ուշադրություն դարձնենք հատվածի վերջին բառերի վրա՝ «յայսմանէ այն է սպարապետ», դժվար չէ համոզվել, որ հեղինակը խոսք է բացել Մամիկոնյանների ծագման մասին այդ նույն տոհմից ինչ-որ սպարապետի առիթով: Այս սպարապետը ոչ այլ ոք է, եթե ոչ Կոռնակը՝ Խոսրով արքայի զորավարը, որի մասին խոսք է գնում հենց նոր նշված տեղում (էջ 13): Այստեղ նույնպես բնագիրը պակասավոր է, որը լավագույնն է ապացուցում ենթադրության արդարացիությունը, որ հատվածը սկզբնապես այդ տեղն է գրավել: Հեղինակը հաղորդում է, որ Կոռնակը երկար կյանք էր ապրել, 160 տարի, ընդ որում մինչև մահ պահպանել էր իր օրգանիզմի երիտասարդական ավյունը: Այդ անսովոր երևույթը պատմիչը վերագրում է Կոռնակի օտար, չինական ծագմանը և ի միջի այլոց հաղորդում է այն, ինչ իմացել և լսել է նրա մասին: Այսպիսով, երկու միմյանցից անջատված մասերի միջև տրամաբանական կապ կա, թեև դժվար է դրանք միացնել քերականորեն և վերականգնել բնագիրն իրական տեսքով[2]:

Ներդիր հատվածը իր տեղը փոխադրելուց հետո պարսից Արշակունիների ցանկը կհայտնվի համաժամանակացուցային աղյուսակի կողքին: Ոչ ոք չի ժխտում, որ պարսկական ցանկից անմիջապես հետո նախկինում եղել է հայ Արշակունիների համանման ցանկ: Եթե հեղինակը հայտարարում է «Արդ՝ այսպէս զատուցեալ երևէին երկու ցեղքն թագաւորութեանց Պարսից և Հայոց»[3] և թվարկում է պարսից արքաներին, բնական է, որ նա պետք է բերեր նաև հայոց արքաների անունները: Այդպիսի ցանկ, հիրավի, եղել է նախասկզբնական բնագրում: Նրա մնացուկները երևում են աղյուսակի վերջին մասում, որը տեղակայված է առաջին դպրության ավարտին, սկսած

[1] «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Ս. Պետերբուրգ, 1879, էջ 13:

[2] Շատ հնարավոր է, որ Կոռնակը նա ինքն Կոռնակ՝ երկու նահապետ եղբայրներից մեկն է, որոնց վերաբերում է պատմությունը: Չէ՞ որ նրանք Հայաստան են եկել պարսից Արտավանի և Հայոց Խոսրով Մեծի օրոք: Իսկ Կոռնակը անվանվում է Խոսրովի զորավար և նրա օրոք դուրս է գալիս հռոմեացիների կարոս կայսեր դեմ: Ճիշտ է, փախստական եղբայրները ժամանել էին «կնաւ և որդւովք իւրեանց» (անդ, էջ 13), և Կոռնակը կարող էր այդ որդիներից մեկը լինել, բայց ինձ ավելի հավանական է թվում, որ ի դեմս «Կոռնակի» և «Կոռնակի» ունենք միևնույն անվան երկու տարբերակումներ: Կոռնակ ձևը հեշտությամբ կստացվեր Կոռնակից, զրված լինելով «աւ»-ով: Կաւնակ կամ ու՝ Կունակ (հմմտ. Խորենացի Մամգուն): Եթե այդպես է, ապա նախընտրելի է հատվածի վերջին բառերը կարդալ այսպես՝ «եղեն յազգ մեծ ի Մամիկայ (ոչ Մամիկոնայ, ինչպես տպագրումն է) եւ Կոռնակայ յայսմանէ սպարապետէ», փոխանակ յայսմանէ այն է սպարապետ», անդ («այն է» փոխանակ «անէ», որ նախորդող բառի վերջին վանկի կրկնողությունն է):

[3] Սեբեոս, էջ 13:

Արշամից: Ես ինձ թույլ եմ տալիս կասկածելու սույն աղյուսակի իսկությունը: Ներկա տեսքով այն ներկայացնում է հայոց արքաների սկզբնապես այնտեղ դրված ցանկի խառնուրդ Խորենացու նույնպիսի ցանկի հետ: Որ այն օտար ազդեցության հետքեր է կրում, երևում է թեկուզև հայ առաջին Արշակունու մասին հակասական ցուցումներից: 9-րդ էջում տեսքստը հռչակում է, որ Արշակ Մեծն ուներ չորս որդի, որոնցից մեկը գահակալեց Հայաստանում, իսկ մնացյալ երեքը՝ Թեսալիայում, Պարսկաստանում և Կիլիկիայում: Իսկ աղյուսակում հայոց Արշակը գահակից ունի նաև Վաղարշակին, իր եղբորը: Դրանից ստացվում է, որ Արշակն ունի ոչ թե 4, այլ 5 որդի: Քննադատությունը վաղուց է նշել, որ «եղբարբ իւրով Վաղարշակաւ, զոր թագաւորեցոյց Հայաստան աշխարհիս» արտահայտությունը օտարամուտ տարր է: Իսկությամբ Անանունին է պատկանում միայն աղյուսակի մի մասը՝ մինչև Տիգրանը, այնուհետև Արշամից սկսվող մասը կպցված է սրան երկրորդ դպրությունից՝ արտագրողի անիրազեկության և այն պատճառով, որ թերթերը խառնված են: Հարցախույզ հայացքը դրանում կհամոզվի թեկուզև կրկնությունների հիման վրա, որոնք նկատելի են աղյուսակում: Արշամից առաջ վերջին անունները՝ Արտաշես, Տիրան, Տիգրան, երկրորդաբար նշված են Սանատրուկից հետո: Հատկանշական չէ՞ արդյոք, որ հենց այդտեղ, ոչ վավերական մասում, Արշակին տրվում է գահակալության 7 տարի, հակառակ Խորենացու (նաև երկրորդ դպրության), բայց լիովին համաձայն Ասողիկին: Աղյուսակի այդ մասը այստեղ ընկել է երկրորդ դպրությունից, որտեղ այն բերվում է ըստ Ասողիկի. և վերջինիս հասարակ վրիպակը՝ Է (7) փոխանակ Լ (30)-ի նրանում ուժ է ստացել: Գործ ունենալով վատ պահպանված ձեռագրի հետ, Սերեոսի արտագրողը ակամայից շփոթել է թերթերը: Դժվար է ասել, թե իրականում այդ ինչպես է տեղի ունեցել, բայց հնարավորությունը լիակատար է: Պատկերացնենք, որ նա, արտագրելով հայոց արքաների անունները առաջին դպրության վերջում, հասել է Տիգրանին, որով ենթադրենք, ավարտվել է թերթը: Այն բանի հետևանքով, որ այնուհետև թերթերը պոկված են եղել (ինչպես երևում է տպագիր հրատարակությունից) և ծայրերը քրքրված, նա չի կարողացել կողմնորոշվել դրանցում (4): Տեսնելով թերթերի վրա արքաների մի շարք անուններ և չնկատելով, որ դրանք կազմել են երկրորդ դպրության ցանկի մի մասը, նա հեշտությամբ այն ընդունում է որպես ոչ լրիվ արտագրված աղյուսակի շարունակություն և վերագրում է Տիգրանին, ընդորում թերթերի վնասվածությունը վերստին խանգարում է նրան հասցնելու ցանկը մինչև վերջ, և ընդհատում է այն Պապ թագավորով: Մի անգամ խախտելով կարգը, արտագրողն արդեն այլևս չի կարողացել գլուխ հանել ձեռագրից և արտագրել է ինչպես պատահել է, հայտնապես

քախտաբերի միացնելով Մամիկի և Կոնակի պատմությունը պարսից Արշակունիների ցանկին[1]:

Ի ամրապնդումն մեր կասկածների առաջին դպրության ցանկի վերաբերյալ, մենք ստորև կվկայակոչենք ուրիշ և ավելի ծանրակշիռ փաստարկներ: Բայց այն դեպքում, եթե մեր նկատառումները բավարար համոզիչ չեն թվա, ապա դա, անշուշտ, մազաչափ իսկ չի խախտի հավաստիացումն այն բանում, որ երկրորդ դպրության մեջ նախկինում եղել է հայոց արքաների ցուցակը: Հետևաբար, այդ դպրությունը իր իսկական տեսքով կազմված է եղել երկու ցանկից և երկու համաժամանակացուցային աղյուսակներից, ուր մտել է նաև Մամիկոնյանների պատմությունը: Քննարկելով վերջին աղյուսակները, Մալխասյանցը գտնում է, որ դրանք անհնարին է քաղել Խորենացուց, հավասարապես և Ասողիկից: Դրանք իրենց թվական տվյալներով կտրուկ կերպով շեղվում են Խորենացու և Ասողիկի տեղեկություններից: Բավական է ամենամակերեսային հայացք նետել, որպեսզի համոզվես Մալխասյանցի դիտողությունների արդարացիության մեջ: Բայց ի՞նչ անհրաժեշտություն կա քաղել դրանք հիշյալ պատմիչներից: Դժբախտությունն այն է, որ երկրորդ դպրության խարուսիկ խորագիրը վերաբերում է միայն պարսից և հայոց արքաների առաջին երկու ցանկերին, և հիմք չկա այդ խորագրի տակ խցկելու նաև համաժամանակացուցային աղյուսակները: Բայց չպետք է մոռանալ, որ Սեբեոսի բուն ձեռագրում նրա պատմությունը բաժանված չէ գլուխների, և չկա ոչ մի ցանկ գլխոց[2]: Սեբեոսի հրատարակիչներին հարկ է թվացել խորագիրը վերագրել վերջինիս հետ ոչ մի առնչություն չունեցող աղյուսակներին ևս, բայց նման բաժանման համար ես հիմք չեմ տեսնում: Վերջապես, երբ ծանոթանում ենք դպրության բովանդակությանը, ապա տեսնում ենք, որ նրա մի մասը համապատասխանում է վերնագրին, իսկ մյուս մասը՝ ոչ, ուստի ամենաբնական եզրակացությունն է՝ խորագիրը վերագրել միայն առաջին մասին: Վճռականապես ոչ մի կարիք չկա այստեղ խոսք բացել ինչ որ մեկ ուրիշ Ստեփանոս պատմիչի մասին: Եթե անգամ ընդունելու լինենք պ. Մալխասյանցի բերած պատմական հիշատակարանի հիման վրա, որ գոյություն է ունեցել այդպիսի Ստեփանոս, ապա դրանով մազաչափ իսկ գործին չենք օգնի, քանզի նույն հիշատակության մեջ նա կոչվում է Մեսրոբի աշակերտ, իսկ որպես այդպիսին, ակներևաբար, նա չէր կարողանա ժամանակագրությունը հասցնել մինչև Հուստինիանոսը: Խնդրո առարկա Ստեփանոսը, որի անունը կարդացվում է երկրորդ դպրության խորագրում, անկասկած մեզ հայտնի Ստեփանոս Տարոնացին է, մականվանյալն Ասողիկ: Խորագրի

[1] Նման ձևով շփոթված են «Արշավանքի պատմության» սկզբնական բերդերը մինչև 37-րդ էջը: Դրանք կարգի են բերված Մալխասյանցի գրքույկում, էջ 116:

[2] Տե՛ս Ջ. Պատկանովի հրատարակության Առաջաբանը:

տակ տեղակայված պարսից Արշակունիների ցանկը բառ առ բառ, տառ առ տառ վերցված է Ասողիկից[1]: Ըստ նույն պատմիչի է բերված եղել նաև հայոց արքաների ենթադրյալ, այժմ բացակայող, ցանկը, ինչ որ մատնանշեցինք վերը: Այդ ցանկերը մեկուսի են կանգնած և ոչինչ ընդհանուր բան չունեն ո՛չ նախորդի, ո՛չ էլ հետնորդի հետ: Դրանք ընդմիջարկություններ են, ուշ ժամանակների գրչի գործ, որը, ի նկատի առնելով առաջին դպրության նախորդող երկու աղյուսակներում եղած շեղումները (նշանակալի, հատկապես հայկականում, ինչպես կտեսնենք), հարկ է համարել բերել դրանք նաև «ըստ ճշմարտացի և հավաստի հեղինակների»: Ընդորում փութաջան գրիչը օգտվում է ըստ էության միայն Ասողիկից և այնտեղից էլ արտագրում է. բայց քանի որ նրան քաջ հայտնի է նաև, որ Ասողիկն ինքը քաղում է այն Խորենացու նշանավոր Պատմությունից, ուստի Ասողիկի անվան կողքին դնում է նաև Խորենացու անունը: Ահա, ըստ իս, հարցի ճիշտ լուսաբանումը:

Տեքստից ընդմիջարկման հեռացմամբ ընկնում է նաև քննարկվող գրքույկի հեղինակի ամենաէական դրույթը՝ իբրև թե Սեբեոսը, երկու գրքերի հեղինակը, իմացել է Խորենացուն: Մեր առարկությունները տանում են միանգամայն հակառակ պնդման: Եվ արդյո՞ք տրամաբանական է ենթադրել, որ մի մարդ, որ պատրաստվում է «զանստոյգագրեալ ժամանակ և զնախնի քաջացն ճեռնարկելով դրոշմել վիպասանութիւնս», իմանար Խորենացուն: Այդ դեպքում նրա ինչին է պետք շրջանցել նույն նյութի Խորենացու մոտ եղած անհամեմատ լավագույն մշակումը և շարադրել մի պատմություն, որը, ըստ նույն Խորենացու կարծիքի, «մի նշույլ իսկ ճշմարտություն չի պարունակում և սոսկ թվաբի կակազանք է»: Պարզ է, պրն. Մալխասյանցը մոլորության մեջ է: Բանասիրական բնույթի մյուս կշռադատումները, որոնց միջոցով Մալխասյանցը ջանում է հաստատել իր գլխավոր եզրակացությունը, չափից դուրս երկրորդական են և վճռական նշանակություն չունեն:

Եթե պրն. Մալխասյանցի մտքերը Խորենացու հարցում սնանկ են, ապա Անանունի մասին իր դատողություններում նա հաստատուն գետնի վրա է կանգնած: Մալխասյանցը համոզեցուցիչ հիմքեր չէ գտնում այն բանի համար, որպեսզի երկրորդ գլուխը անջատի առաջինից, իսկ այդ երկուսն էլ Սեբեոսի երկից: Այդ դրույթին ի հաստատումն, նրա բերած փաստարկները կարելի է էլ ավելի ուժեղացնել:

Անանունին վերաբերող բոլոր հետազոտությունները մի տեսակ երկրորդ գրքի համաժամանակային աղյուսակների կողքից են անցել: Մինչդեռ, բանից դուրս է գալիս, «Նախնական պատմության» հարցում վճռական խոսքը դրանց է պատկանելիս եղել:

[1] Ասողիկի համեմատությամբ ավել է Արշակի կյանքի տարիների թիվը՝ «վեցեսուն ամս ՀԼ»: Ցանկերի հեղինակը այդ մատնանշումը վերցնում է առաջին դպրությունից, որը չի հակասում ո՛չ Ասողիկին, ո՛չ էլ Խորենացուն:

Աղյուսակներից առաջինը ներկայացնում է հայոց, պարսից և բյուզանդական արքաների միմյանց միահյուսված ժամանակագրությունը: Առանձնացնելով դրանց, կստանանք արքաների հետևյալ երեք շարքը, իրենց կառավարման տարիներով, որը մենք ստուգել ենք բուն տեքստի ցուցումների հիման վրա՝ նրանց կից դիտողություններով:

ԱՐՔԱՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՑԱՆԿԸ

ՀԱՅՈՑ	ՊԱՐՍԻՑ	ԲԶՈՒՋԱՆԴԱԿԱՆ
1. Խոսրով....50 տ[արի] [32-րդից=20]	1. Արտաշիր.....50	1. Ավթելիանոս.....6 [3-րդ տարուց=] } 4
Միջթագավ. ...11	2. Շապուհ 73	2. Տերենտիանոս.....6 ամիս
2. Տրդատ.....70		
3. Խոսրով.....17	3. Ներսեհ.....9	3. Պռոբոս.....6
4. Տիրան.....12	4. Որմիզդ.....3[2]	4. Կարոս որդիների հետ...7
5. Աբշակ.....49 կամ 48 } 60[1]	5. Շապուհ.....73[3]	5. Դիոկղետիանոս.....22
Միջթագավ. ..11կամ 12 }	6. Արտաշիր.....4	6. Կոստանդին.....9
6. Պապ.....13	7. Վռամ.....11	7. Մաքսիմիանոս և Գալիանոս [Գալերիանոս] } 19[4]
7. Վարազդատ....6	8. Հազկերտ մինչև 2-րդ տարին +225	8. Մաքսիմիլիանոս .....13 [փոխ.Մաքսիմեոսուն]
8. Աբշակ և Վաղարշակ....5		9. Կոստանդիոս.....17
9. Խոսրով.....3		10. Կոստանդինոս..... 32
10. Վռամշապուհ...8		11. Կոստանդիոս և Կոստաս.....24[5]
Մոտավ. + 225 (5) [առանց Խոսրովի 30 տարում = 225]		12. Հուլիանոս.....2
		13. Վալենտինիանոս և Վալենտոս.....13

[1] Ըստ տեքստի Աբշակը գահընկեց է արվել գահակալության 49-րդ տարում = Շապուհի 44-րդ տարում: Եթե 43-րդ տարին կամ 44-րդ տարին վերագրվի միջթագավորությանը, որը տևել է 12 տ., մինչև Շապուհի 56-րդ տարին, ապա Աբշակին կմնա 48 տարի: Իսկ եթե

14. Գրատիաճոս.....17[6]

15. Թեոդոսիոս 19

16. Արկադիոս.....19

17. Հոնորիոս միջև 2-րդ

տարին

+ 225

միջթագավորությունը հաշվենք 11 տարի, ապա այնժամ Արշակին տեղված կլինենք տալ 49 տարի «ի տէրութեան ի վերայ հայոց զերկոտասանեւրորդն» corrigendum՝ «զհօթեւրորդն» կամ «զութերորդն» կախված միջթագավորության տարիների թվից՝ 11 թե 12 տարի (էջ 17), այսինքն՝ (45-51) կամ (44-51) ներառնելով ծայրայինները:

[2] Վրիպակ. ն՝ գ-ի փոխարեն. Արշակի 3-րդ տարուց մինչև 6-րդը, ընդորում 6-րդը = Շապուհի 1-ին տարին (էջ 16):

[3] Հրատարակության մեջ h̄ corrg. hq̄ և ոչ թե 74, ինչպես առաջարկում է Մալխասյանցը: Շապուհի 70-ը = Արկադիոսի 1-ին, իսկ Արկադիոսի 5-րդը կազմում է արդեն Արտաշիրի 1-ին տարին: Հետևաբար 70-ին պետք է ավելացնել Արկադիոսի 2, 3, 4 տարիները:

[4] Տպագրված է 18՝ 19-ի փոխարեն: Նրանց նախորդ Կոստանդինին տրվում է 9 տարի, Արտաշիրի 40-րդ տարուց: Նրա վերջին տարին, հետևաբար, համընկնում է Արտաշիրի 48-րդ տարուն, 49-ն ու 50-ը արդեն ընկնում են Մաքսիմիլիանոսին և Գալիանոսին: Ուստի Շապուհի 1-ին տարին = Մաքսիմիլիանոսի և Գալիանոսի 3-րդին, և ոչ թե 2-րդին, ինչպես տպագրված է: Այնուհետև, Արտաշիրի 49-ը = 18 (և ոչ թե 19, ինչպես տեքստում), քանզի Արտաշիրի 40 = Տրդատի 9-ին: Այստեղ տեքստը կարգին չէ. 49 տարի գահակալել է ոչ թե Շապուհը, այլ Կոստանդինի հաջորդները (էջ 14):

[5] Հրատարակված է ժդ իդ՝ փոխարեն, որը տեքստային առումով ճիշտ է, քանի որ նա կառավարել է Տիրանի վերջին տարուց մինչև Արշակի 24-րդ տարին, ճիշտ է նաև պատմական առումով (337-361):

[6] Այդ եղևում է տեքստից: Նրա տարիները ընդգրկում են Շապուհի 34-51-րդ տարիները: Այստեղ չեն նշվում ուրիշ մանր վրիպակներ, որոնք հասկանալի են ինքնըստինքյան:

ՊԱՐՍԻՑ

8. Հազկերտ ...21
9. Վռամ .....42 [22][1]
10. Հազկերտ 19
11. Վաղարշ 4
12. Պերոզ 48
13. Ջամասպ .....2[2]
14. Կավատ 41
15. Խոսրով 47
16. Որմիզդ 12
17. Խոսրով 37
18. Կավատ 1
(և Խոռյամ)
19. Արտաշիր 3
20. Թրոր 2
21. Հազկերտ .....20[6]

+ 298

ԲԾՈՒՋԱՆԴԱԿԱՆ

17. Հռոմոբիոս 22
18. Թեոդոսիոս .....42 [22][1]
19. Կոստանդիոս 1
20. Վալենտինոս 30
21. Նարկեսոս 6
22. Վռափինոս .....3 (Փլափիո՞ս)
23. Մարկիանոս .....7 (5)[3]
24. Լևոն 11 (13)
25. Անթեմիոս 6
26. Օլիմպրիոս 1
27. Զենոն .....1[4]
28. Զենոն 17
29. Անաստասիոս 27
30. Հուստինիանոս 38
31. Հուստինոս 12
32. Տիբերիոս 3
33. Մորիկ .....21[5]
34. Փոկաս 8
35. Հերակլ 30
36. Հերակլեոն 1
37. Կոստանդին, մինչև 11-րդ տարին

+ 298

[1] Է՛ջ 18 «յամի ի՝ երորդի Թեոդոսի» փոխարեն կարդալ «յամի ի՝ երորդի երկրորդի [կամ «ի՝ երորդի երկրորդի»], նաև «յամի Ցազկերտի թագաւորէ» փոխարեն պետք է «յամի երկրորդի Ցազկերտի» (մանրամասները մեր տեքստում), իսկ մեկ տող ներքև՝ «յամի երկրորդի Ցազկերտի» ուղղել «յամի երրորդի Ցազկերտի»: Վռամ 2-րդ տարին = Թեոդոսիոսի 1 տարուն 22 = 21. հաջորդ Թեոդոսիոսի 22 = Հազկերտի I. Թեոդոսիոսի հաջորդ Կոստանդինոսի 1-ին տարին ընկնում է Հազկերտի 2-րդ տարուն:

[2] Վրիպակ է հրատարակության մեջ՝ ը ի -ի փոխարեն:.

[3] Է՛ջ 19 «Մարկիանոս ամս ե» վատ չէր լինի ուղղել է՛ (450-457) և «Ցամի ի՛ե» յամի իէ՛ կարելի է բաղձալ «Պերոզի»: Անթեմիոսին արվում է 6 տարի, մինչև Պերոզի 44-րդ տարին, առաջին տարին ընկնում է Պերոզի 38-րդ տարուն. հրատարակության մեջ՝ «յամի լ՛», հնարավոր corrigendum լ՛ը: Լևոնի համար ժամանակամիջոց է մնում 27-38-ը կամ 25-38-ը՝ կախված Մարկիանոսի տարիների թվից: Ժամանակագրությունը ամենևին չի տուժում ո՛չ այս

Քննարկելով ներկայացված ցանկերը, նկատում ենք, որ ժամանակագրության ամբողջ խախուտությունը պայմանավորված է միմիայն համաժամանակայնության այն ձևով, ինչ ձևով որ հեղինակը ենթադրում է դրանք: Բյուզանդական թագավորների թվական տվյալները, ինքնըստինքյան վերցրած, համաժամանակային առնչություններից դուրս, ընդհանուր առմամբ, ճիշտ են: Սխալը տեղի է ունեցել աղյուսակները միահյուսելիս, այն բանի հետևանքով, որ կայսրերին, որոնք միաժամանակ կառավարել են Հռոմեական կայսրության երկու կեսերը, և կամ կեսարներին, չտարբերելով նրանց օգոստոսներից, կազմողը տեղադրել է հաջորդականության գծով: Լիովին ճիշտ է, որ Մաքսիմիանոսը և Գալերիանոսը կառավարել են 19 տարի, միայն թե առաջինը՝ Դիոկղետիանոսի հետ միաժամանակ Արևելքում 286-305 թթ., իսկ Գալերիանոսը 292-304 թթ., որպես կեսար Դիոկղետիանոսի օրոք և 305-311 թթ. որպես օգոստոս Արևմուտքում: Նմանակերպ վերցված են արևմտյան տիրակալներից՝ Գրատիանոսը, Հոնորիոսը, երկրորդ ցանկում՝ Կոստանդիոսը, Վալենտիանոսը, Նարկեսոսը, Փլարիոսը, Անթեմիոսը և Օլիմպրիոսը, Մաքսիմիլիանոսը, որին տրվում է 13 տարի, հավանաբար, Գալերիանոսի զարմիկն է, իսկ Կոստանցը՝ Կոստանդիանոս Մեծի հայրը: Առաջինը կեսար էր հորեղբոր օրոք, իսկ երկրորդը՝ Մաքսիմիլիանոսի (292-305), բայց ցանկում նրանք ինքնուրույն տեղեր են զբավում: Կոստանդիանոս Մեծը աղյուսակի մեջ մտցված է երկիցս՝ առաջին անգամ 9 տարվա կառավարմամբ, իսկ երկրորդ անգամ՝ 32, այն դեպքում, երբ վերջինիս մեջ արդեն պարունակվում են առաջին ինը տարիները: Կարծեք թե հեղինակը ինքն է հանել բյուզանդական ժամանակագրության թվերը ինչ որ համաժամանակայինի աղյուսակից:

Մատնանշված վրիպումների հետևանքով Ավրելիանոսից մինչև Հոնորիոսը ստացվել է 225 տարվա ժամանակամիջոց, որը իրականությանը գերազանցում է գրեթե հարյուր տարով: Այդ անճշտությունը անդրադարձել է հայոց և պարսից ժամանակագրության վրա: Դնելով Արտաշիրին և Խոսրով [Մեծին] Ավրելիանոսի օրոք, հեղինակը ժամանակագրությունը տե-

---

և ո՛չ այն դեպքում:

[4] Նա հենց ինքը Լևոն II-ն է՝ 474 թ.:

[5] Էջ 20. «յամի է՝ Մաւրկայ» ուղղել «յամի թ», որպեսզի ստանանք, համաձայն բնագրի, Պերթզի համար 12 տարի, իսկ Մորիկի՝ 21 տարի:

[6] Նույն տեղում. «յամի զ՝ Յազկերտի» փոխանակ «յամի ը՝ Յազկերտի». Հազկերտի 9-րդ տարին համընկնում է Հերակլի որդիների տարում, իսկ 10-ը՝ (և ոչ թե է, ինչպես տպագրված է) = Կոստանդինի 1-ին տարում:

դաշարժել է առաջ ոչ պակաս, քան 50 տարով: Նման հասարակ սխալի պատճառով (թե ինչպես է այն տեղի ունեցել, մենք կտեսնենք), որ ժամանակի նշանակալի շահում է տվել, հեղինակին պետք չի եղել ճգնելու հայոց և պարսից ժամանակագրությունը **pari passu** բյուզանդականին 100 տարով, այլ միայն կիսով չափ (100-50)[1]: Արդյունքում դուրս է եկել, որ պարսից արքաների տարիները ամբողջությամբ վերցրած ավելի քիչ են մեղանչում իրականության հանդեպ:

Տարիների գումարը հարստության հիմնադրից մինչև Հազկերտ հավասարվում է 223-ի, իսկ այս վերջինից մինչև սասանյան միապետության անկումը 278-ի կամ 298-ի, նայած թե Վռամին և Թեոդոսիոսին կտանք 22, թե 42 տարի: Շատ առումներով գերադասելի է երկրորդ ընթերցումը: Տառագրության առումով հասկանալի, այն չի խախտում նաև ժամանակագրությունը. եթե 22-ը պատմականորեն և մոտավորապես ճիշտ է Վռամի վերաբերմամբ (420-439)[2], ապա 42 թիվը կատարելապես է համապատասխանում Թեոդոսիոսին, որը թագավորել է 408 թվականից մինչև 450 թվականը: Ամենագլխավորն այն է, որ խը կարդալիս փոքր ինչ լուսաբանվում են երկրորդ ցանկում եղած սխալները: Այստեղ ժամանակագրությունը, որը խստորեն պահպանված է վերջին մասում, սկզբում սկսած Զենոնից, տառապում է կոպիտ վրիպումներով: Պերոզից հատկացվում է 48 տարի, ճիշտ ու ճիշտ երկու անգամ ավելի[3]: Եթե ընդունենք Վռամի համար էլ 42 տարի, ապա կստացվի չորս տասնյակ պատմականորեն ավելորդ տարի: Դրանք կարելի է պատճառական կապակցության մեջ դնել 40 նույնպես ավելորդ տարիների հետ բյուզանդական մասում, որ տեղի է ունեցել արևմտյան կայսրերին ցանկի մեջ մտցնելու հետևանքով (1 Կոստանդիոս + 30 Վալենտիանոս + 6 Նարկեսոս + 3 Վռափնոս = 40): Մեկը հետևանք է մյուսի: Ավելի հավանական է, որ հեղինակը Պերոզի համար դնելով 48 տարի պատահական գրասխալ թույլ տալով[4] փոխանակ իը [28], ինչպես նաև Վռամին 42- ի զուգահեռ Թեոդոսիոսի տարիներին [համմտ. Խոսրով 50 - Արտաշիր 50, Տրդատ 70 - Շապուհ 73, Հազկերտ 21 - Հոնորիոս 22, նույնպես Թեոդոսիոս Մեծ 19 - Արկադիոս 19] և որպեսզի պահպանի հավասարակշռությունը և հանդիպեցնի Զենոնին Կավատի ու Ջամասպի հետ, մոլորությամբ ցանկի մեջ է խցկել արևմտյան

---

[1] Սասանյանների սկզբնավորումից մինչև Հազկերտ, այսինքն՝ 226 թ. մինչև 399 հավասար է 173, 49-ով պակաս 223-ից:

[2] Ըստ Mordtmann, Chronologie der Sassaniden. ըստ Ռիխտերի 421-442, Մեղիլիոյի՝ 420-440:

[3] Ըստ Մորդտմաննի (նույն տեղում) 457-483 թթ. ըստ Ռիխտերի՝ 461-488, Մեղիլիոյի՝ 457-488, Նյոլդեքեի՝ 457-484:

[4] Տեքստում վրիպակ չէ, այդպես անգկացված է ժամանակագրությունում:

տիրակալներին: Վերջապես, առաջարկվող ընթերցումն այն առավելությունն ունի, որ այդ դեպքում ընդհանուր գումարում ստացվում է 223 + 298 = 521 թիվը, որը հատուկ իմաստ ունի գրական առումով: Սեբեոսը 137-րդ էջում Սասանյան կայսրության տևողականությունը սահմանում է այդ նույն թվով. «Քարճաճ տէրութիւն Պարսից և ազգին Սասանայ, որ կալաւ զթագաւորութիւն ամս չիե (տպագրում չիբ-Ն. Ա.)»[1]: Նման համընկնումը չի կարելի պատահական համարել. եթե 521 թիվը պատմական հիմք ունենար ապա, հասկանալի է, նման համընկնումը ոչ մի նշանակություն չէր ունենա Սեբեոսի և երկրորդ գլխի հեղինակի փոխհարաբերությունները պարզելու համար: Բայց հենց այն պատճառով, որ այն պատմականորեն անհավաստի է և իր ծագմամբ պարտական է սոսկ բացառիկ բնույթի սխալների, այդ համերաշխությունը վճռական տվյալ է հանդիսանում հարցի համար: «Արշավանքի պատմության» բովանդակության ուրիշ ընդհանուր կետերի չփման առկայությունը ևս երկրորդ գլխի հետ, որոնք նշվել են Մալխասյանցի կողմից, 521 թիվը ակներև կերպով ցույց է տալիս, որ ցանկերը պատկանում են Սեբեոսին՝ իրեն:

Նույն երկրորդ գլխի ցուցմամբ հայ Արշակունիների տիրապետությունը շարունակվել է 405 տարի: Փաստորեն այն չի արդարանում, քանզի բերված թագավորների տարիները գումարում տալիս են 232, չհաշված միջթագավորության 23 տարին: Ակնհայտ է, աղյուսակը լրիվ չէ, այն՝ շարունակություն է, ուրիշ աղյուսակի մաս, այն է՝ այնպիսի աղյուսակի, որտեղ նշված են եղել առաջին Արշակունիները մինչև Խոսրով (որտեղից սկսվում է երկրորդ գլխի ցանկը): Այդ պարագան մեզ ուղղում է առաջին գլխի ցանկին և ուղղակի ընդառաջում է ցանկի անհարազատ բնույթի մասին վերը առաջ քաշված կռահմանը: Դրա ճշմարտացիության մասին է խոսում հեղինակի հայտարարությունը. «Ես Ագաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ՝ առեալ ի դիւանէ արքունի»: Եթե չենք ուզում հեղինակի վզին ժամանակագրական անհեթեթություն փաթաթել, ապա պարտավոր ենք ընդունել, որ Ագաթանգեղոսի արձանագրությունը չէր կարող պարունակել Տրդատին հաջորդած թագավորների անունները:

Վիճաբանել կարելի է միայն մի բանի մասին՝ մտնում է արդյո՞ք արձանագրության կազմի մեջ վերջին ցանկը: Ըստ իս, Անանունի քննա-

---

[1] Չիա և չիբ-ում ա և բ տառերը, գրված սկզբնատառով, կարող են հասնել մենք մյուսին, հատկապես ը -ի միջնորդությամբ (համմա. վերը Զամասպ ը փոխանակ բ), եթե միայն դուրս բերված 521 թիվը ճիշտ է և մեզանից չի վրիպել պակասող միավորը: Ուղղելի է նաև երկրորդ գլխի վերջում դրված շլը թիվը:

դատները այնտեղ չեն փնտրում «արձանագրության պատճենը», որտեղ հարկ է: Նախ և առաջ պիտանի չէ ընդունված կարծիքն այն մասին, որ արձանագրությունը վերաբերել է հինգ թագավորների: Այն հիմնված է տեքստի սխալ ընթերցման վրա: Այն բառերը, որոնք առիթ են տալիս նման ըմբռնման, շարահյուսական առումով անհաջող դիրք են գրավում «... բացեալ ցաւերածն վասն սեանցն ըստ դիպաց արձանագրին դրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթևաց յունարէն դպրութեամբ» արտահայտության մեջ: Ճիշտ թարգմանությամբ նշանակում է. «ավերակները բացելիս հանդիպեցին արձանագրության, հունարեն տառերով դրոշմված[1] քարի վրա հայոց և պարթևաց հինգ թագավորների տարիներն ու օրերը»: Բացահայտ անհարիրություն: Այն կարելի է վերացնել, տեքստից հանելով ավելորդ բառերը՝ «զամս և զաւուրս հինգ թագաւորացն»: Դրանք վերցված են գրչի կողմից սկզբնական տողերից՝ «... ցուցից զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելով»: Գրիչը, հավանաբար, այդ արտահայտությունը հասկացել է անմիջապես նրան հարող «անդ հայիով ի մատեան Մարաբայ փիլիսոփայի ...» հետ կապակցված և սխալաբար ենթադրել է, որ Մարաբասի գիրքը պատմում է հինգ թագավորների մասին. իսկ դա հանգեցրել է անտեղի ընդմիջարկության, որը ոչ մի ընդհանուր բան չունի Մարաբասի գրքի հետ, ինչպես և բերված արտահայտությունը հինգ թագավորների մասին[2]:

Կարծում են, նաև, որ արձանագրության ենթադրյալ հինգ թագավորներն են Սելևկոսը, Անտիոքոս Սոտերը, Անտիոքոս Թեոսը, Արշակ Մեծը և Արշակ Փոքրը: Պրոֆ. Մառի արտահայտած և ուրիշների կողմից (Գր. Խալաթյանցի, Ստ. Մալխասյանցի) հավանություն ստացած կարծիքը սնանկ է: Նախ և առաջ, Սելևկյանները ի՞նչ հայոց թագավորներ են և ինչո՞ւ Տրդատը պետք է հավերժացներ նրանց հիշատակը սյուների վրա: Երկրորդ, ինչ որ նրանց մասին պատմվում է, վերցված է Եվսեբիոսի Ժամանակագրությունից և Անանունը միանգամայն ոչ մի շահ չուներ թաքցնելու լիովին հավաստի, բարձր հեղինակությամբ օժտված պատմիչի անունը և հնարելու Ագաթանգեղոսի արձանագրության վերաբերյալ խորհրդավոր պատմությունը: Վիճարկվող կարծիքը ամրապնդվում է նրանով, որ հինգ հիշյալ

[1] Եվ ոչ թե «գծված» (Ն. Մառ, «Նախնական պատմության մասին»), ի նկատի ունենալով օբյեկտը հայցական հոլովով: Վիճելի բառերը անգամ արձանագրության ինքնուրույն խորագրի տեսքով չէին կարող դրված լինել հայցական հոլովով:

[2] Ստ. Մալխասյանցի մեկնաբանությունը (նույն տեղում) միանգամայն անընդունելի է: Ի նկատի ունենալով, որ Սեբեոսը «ժամանակակից» (ժամանակեան) է համարում պատմությունը 34-րդ էջից՝ Խոսրովից, մենք համոզված բյուզանդական փոխարեն կվերցնենք պարսից թագավորներից՝ 1. Որմիզդից, 2. Խոսրով Փարվեզից, 3. Կավատից, 4. Արտաշիրից, 5. Հազկերտից (6):

քագավորների պատմությունը դրվում է 6-րդ էջում հիշատակվող տարեգրի բերանը, որի տակ հասկանում են Ագաթանգեղոսին: Ուշադրությամբ զննելով տեքստը, նկատում ենք պատմողի կողմից ոչ միատեսակ վերաբերմունք դեպի այն նյութը, որը վերագրում են տարեգրին: Այն դեպքում, երբ Մարսյակի մասին պատմությունում նա օգտագործում է անորոշ արտահայտություն՝ «ասեն», Եվսեբիոսից բերված քաղվածքներում գտնում ենք նույն բառը «ասէ» ձևով. «զոր ունէր, ասէ, արքայ ի դրան իւրում քագաւորին» (պետք է կարդալ «թագաւորութեան» հապավանշան պատվով)[1]: Ո՞վ «ասէ» ոչ այլ ոք, քան Եվսեբիոսը, որի մոտ կա նույն արտահայտությունը, բայց, իհարկե, առանց միջանկյալ «ասէ» բառի[2]: Այդ բառի մուծումով Անանունը, ըստ երևույթին, կամեցել է հասկացնել տալ, որ այդտեղ վերջանում են իր օգտագործած ժամանակագրության բառերը, և հետագայում Արշակի մասին պատմության մեջ վերստին անցնում է այլ աղբյուրին, որից և վերցված է Մարսյակի մասին հատվածը: Այստեղ, ինչպես և այնտեղ, պատմությունն արվում է «ասեն» հիմքի վրա. «Որդիք չորք ասեն լեալ Արշակայ»[3]. նրանց միջև սերտ կապ կա ոչ միայն իրենց գրական բնույթով, այլև ըստ բովանդակության: Մարսյակի մասին առասպելական պատմության մեջ լսելի է պատմականորեն հավաստի փաստի արձագանք: Արշակունիների երեք ճյուղ էր տիրակալում Առաջավոր Ասիայում՝ Պարսկաստանում, Հայաստանում, սպիտակ հոների կամ էփտալիտների երկրում: Դրանից առաջացել է երեք եղբայրների՝ Արրահամի ընդոծին Մարսյակի որդիների առասպելը: Նրանցից մեկը՝ Փառոխը, հաստատվել է Հայաստանում և նրա սերունդները խառնվել են Արմենակի տոհմի հետ. մյուս երկուսի ճակատագիրն անհայտ է, հուշարձանի պակասավորության պատճառով, բայց դյուրին է կռահել, թե ուր են նրանք մեկնել՝ Պարսկաստան և էփտալիտների մոտ: Առասպելը մի տեսակ ներածություն է կազմում Արշակ Փոքրի պատմությանը և նպատակ ունի մեկնաբանել Արշակ Մեծի կարգադրությունը: Վերջինս իր որդուն նշանակել է Հայաստանում ոչ թե որպես հաղթող, այլ որպես մերձավորագույն ազգական: Դուրս է գալիս, որ հայերը ընդհանուր ծագում ունեն պարթևների հետ:

Մարսյակի և առաջին Արշակների մասին առասպելական պատմության և դրա հետ կողք-կողքի Հայկյանների մասին ոչ պակաս առասպելական «Վիպասանքների» արանքում Եվսեբիոսի ճշմարտացի խոսքը հնչում է որպես ինչ-որ աններդաշնակություն: Այն համեմատաբար ուշ ժամանակաշրջանի ստավածքաշերտ է:

---

[1] Տե՛ս նաև, էջ 8:

[2] Հրատարակություն Ascher, էջ 299:

[3] Տե՛ս նաև, էջ 9:

Լիակատար հիմք կա մտածելու, որ նախասկզբնական տեքստում այլ կերպ է շարադրված եղել Արշակունիների բարձրացման պատմությունը: Պրոկոպիոս Կեսարացին, ինչպես կտեսնենք ստորև, գիտեր «Հայոց նախնական պատմությունը» նրա հին խմբագրությամբ, որտեղ հստակ դրվում էր պարթևների հայկական ծագումը. կա նաև թափանցիկ ակնարկ այն մասին, որ հենց այնտեղ Արշակունիների սկիզբը հասցվում էր ոչ թե Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո անցած 60 տարուն, այլ փոքր-ինչ ավելի վաղ ժամանակաշրջանի: Դրա համար էլ վստահորեն կարելի է պնդել, որ այժմ «մեր առջև դրված է արձանագրության ոչ հարազատ պատճենը» («զսոյն ճառէ ժամանակագիրն, որպես առաջիկ կայ»): Դրա փոխարեն մենք ունենք ինչ-որ վերապատում՝ երկու աղբյուրներից խառնուրդ՝ «ասենն» (արձանագրություն) և «ասէ» (Եվսեբիոս): Ճշմարտության նախանձախնդիր անհայտ մեկը, որը ծանոթ է եղել Եվսեբիոսին, կերպարանափոխել է նախասկզբնական տեքստը, ընդ որում նրանից թողել է հայերին վերաբերող բեկորը, որի հավաստիությունը նա չէր կարող ստուգել ըստ Եվսեբիոսի, նետել է մի կողմ Արշակունիների երկու ճյուղերի նահապետների պատմությունը, իսկ պարթևների՝ մակեդոնացիների հետ ունեցած ընդհարումները վերամշակել է ժամանակագրության հիման վրա: Եթե ճշմարիտ է, որ տարեգիրը, որի խոսքերից տրվում է Արշակունիների պատմությունը, ըստ տեքստի իմաստի՝ Ագաթանգեղոսն է, ապա նվազ հավանական չէ, որ փոփոխություններ մտցրած գրագետի տեսանկյունից նա ոչ այլ ոք է, եթե ոչ՝ ճշանավոր Եվսեբիոսը (ժամանակագիրն, ն = ille), որին նա վկայակոչում է քաղվածքի վերջում: Ըստ էության տարեգրի անճանավորության հարցը արդեն զուտ ձևական հարց է այն բանից հետո, երբ հաստատված է նրան վերագրվող նյութի տարատեսակությունը:

Ասվածի հետևանքով, մեզ թույլատրելի է, արձանագրությունը փնտրելիս շրջանցել Եվսեբիոսից կատարված մեջբերումները: Տրամադրության տակ մնում է Արշակ Փոքրի պատմությունը, նրան կցված նրա հետնորդների ցանկով, հայկական Արշակունիների պատմությունը, որը հանդիսանում է «արձանագրության» առավել հարմար «պատճենը», որը շարունակում է «հայոց առաջին թագաւորաց տարիները»: Եթե ընդունում ենք ցանկը որպես Ագաթանգեղոսի գործ՝ ելնելով ժամանակագրական կշռադատումներից, մենք դրվում ենք նրանում նստվածքաշերտ, բերովի տարր ընդունելու անհրաժեշտությունը ճանաչելու առջև:

Նման պայմաններում ինքնընտրության միտք է ծագում մի կողմ նետել ցանկի վերջին մասը՝ սկսած Արշամից, մաս, որը նույնիսկ ճևականորեն կապված չէ նախորդի հետ. Արշամը դուրս է կանգնած որևէ ազգակցական կապերից նախորդ Տիգրանի հետ: Այդ մասի հեռացումից հետո կմնա թվով

տասը թագավորների մի շարք՝ մինչև Տիգրանը: Իսկական ցանկում այնուհետև հետևում էր հավանաբար Վաղարշի անունը (Տիգրանի որդու, քան Խորենացու), իսկ ենթադրաբար նաև Սանատրուկի՝ Տիգրանի և Վաղարշի միջև: Հայտնի է, որ Սանատրուկը, Խորենացու հաղորդմամբ իբրև թե Արշամի զարմիկը, պատմական անձնավորություն չէ. առաջին դարում չի եղել ոչ մի Սանատրուկ հայոց թագավոր: Բայց ի նկատի ունենալով այն ժողովրդականությունը, որ վայելում է հայկական վարքագրական գրականության մեջ Թադեոս Առաքյալին նահատակողը, դժվար է հնարավոր համարել, որ նա մտացածին անձնավորություն է: Նրա մասին եղած ավանդազրույցները, ամբողջ առասպելականությամբ հանդերձ, պետք է, որ որևէ իրական հող ունենան: Հայոց Արշակունիների շարքում հավաստի պատմությունը գիտե միայն մեկ Սանատրուկի[1], Վաղարշի հորը և նախորդին. նա թագավորել է II դարի վերջերին և հիրավի ժամանակակից է եղել Եդեսիայի թագավոր Արգար IX-ին[2], այն նույնին, որը քրիստոնեություն էր ընդունել: Այն բանից հետո, երբ հյուսվեց Արգարի մասին նշանավոր առասպելը, որը նրան III դարից փոխադրում է I դար, կամ, ավելի ճիշտ, նրա գործերը վերագրում էր նույնանուն թագավորին՝ Ուխհամային, նույն կերպով և նույն առասպելի ազդեցության տակ հայկական ավանդությունը Սանատրուկին էլ տեղաշարժեց և հարմարեցրեց նրան նույն Արգարի ժամանակներին: Պետք է ինչ-որ պատմական կապեր եղած լինեին նրանց միջև, որ ճակատագիրն այդպես չէր ուզում նրանց բաժանել միմյանցից: Պատմական Սանատրուկի հետքերը պահպանվել են հայոց գրականության մեջ: Փավստոս Բուզանդի մոտ երկիցս հիշատակվում է «Սանատրուկ թագավորը»՝ մեկ անգամ նա անվանվում է առաքելասպան[3], իսկ մյուս անգամ՝ Մծուրք քաղաքի հիմնադիր, որ նա կառուցել էր Եփրատի վերին հոսանքի շրջանում[4]: Նրա աճյունը հանգչում էր Անիում և այն փորել-հանել էր պարսից զորքը (Դ, 24)[5]: Փավստոսը երկու Սանատրուկներին չի պատկերացնում որպես միևնույն անձ. այդ ճիշտ է համենայն դեպս եթե ոչ Փավստոսի, ապա այն աղբյուրի վերաբերմամբ, որտեղից նա փոխառել է այդ տեղեկությունը: Իսկապես, «առաքելասպանը» ապրել և կառավարել է Արևելյան Հայաստանում՝ Շավարշան կամ Արտազ

---

[1] **A. Gutschmid**, Geschichte Irans (7).

[2] **A. Gutschmid**, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroene Abgar IX (179-214/6). «Mémoires de l'académie de St. P.», tome XXXV.

[3] **Փավստոս Բուզանդ**, Վենետիկ, 1832, Դ, 14:

[4] Անդ, Դ, 24:

[5] Դիոն Կասսիոսը պատմում է, որ Կարակալլա կայսրը խնդրել էր պարսից թագավորի դստեր ձեռքը, և ի վրեժխնդրություն մերժման համար՝ արշավել էր Պարսկաստան 217 թվականին, գրավել էր Արբելան և «Τὰ μνημεῖα τὰ βασιλικὰ τῶν Πάρθων ἀνορύξας τὰ ὀστᾶ ἔρριπεν». **ΟΗ. 1. Հրատարակությունը Բեկկերի, էջ 418:**

գավառում: Իսկ մյուս Սանատրուկը հանդիսանում է թագավոր Ճիշտ և Ճիշտ Հայաստանի հակադիր Արևմտյան մասում, որը հարում էր Եփրատին և որի նստավայրն էր Մծուրքը: Նրա գերեզմանը դեռևս երկրում մնում էր հիշողության մեջ, III դարի կեսերին: Հավանաբար այստեղ բանը վերաբերում է ոչ թե անփառունակ առաքելասպան թագավորին, որը վախճանվել էր երեք դար առաջ, այլ արդեն ոչ վաղ անցյալի թագավորներից մեկին: Մեկ դեպքում մեր առջև պատմական անձնավորություն է, իսկ մյուս դեպքում նրա կերպարանափոխությունը, եթե թույլատրելի է այդպես արտահայտվել: Ամբողջ ասվածը դեռևս չի ապացուցում, որ Սանատրուկը նշված է եղել Անանունի մոտ, բայց այն հնարավոր է դարձնում նման ենթադրությունը, որը թույլատրելի է «Նախնական պատմություն» ներածական բառերի իմաստով: Ագաթանգեղոսի արձանագրությունը գտան Սանատրուկ թագավորի պալատի պեղումների ժամանակ: Հետևաբար, ենթադրվում է, որ նա թագավորել է Տրդատից՝ արձանագրության պատճառ հանդիսացողից հետո: Բայց Տրդատից հետո այդպիսի թագավոր չի եղել: Իսկ ինչպե՞ս հասկանալ հեղինակին: Առանձին հարկ չկա, որ Սանատրուկը անպայման ապրեր Տրդատից հետո: Թավարար է, եթե նա արձանագրություն գրել տված Տրդատի մերձավորագույն նախորդներից լիներ: Որպես այդպիսին, Սանատրուկը ի մի է ձուլվում Մծուրքի հիմնադրի հետ: Նա կառուցել է քաղաքը, նրանում կանգնել պալատներ: Նրա մահից հետո ինչպես քաղաքը, այնպես էլ պալատները չեն դադարել հիմնադրի անունը կրելուց: Նրա մերձավոր հաջորդներից մեկի՝ Տրդատի, օրով պալատի սյուներին փորագրվում է արձանագրություն, որը և հայտնաբերվում է հետագայում արդեն ավերակների վերածված պալատը պեղելիս:

Նշված ժամանակագրական անհամապատասխանությունը հարթելու նպատակով այլակերպ փորձեր են արված: Ենթադրել են, որ արձանագրության Տրդատը ոչ մի ընդհանուր բան չունի Գրիգոր Լուսավորչի հայտնի համագործակցի հետ և Անանունն հեղինակը ի նկատի է ունեցել ուրիշ Տրդատի, մոտավորապես առաջին Արշակունիներից մեկին, որը կրել է այդ անունը[1]: Կարծիքը խախուտ է և չի համերաշխվում մեզ զբաղեցնող հուշարձանի իսկական բնույթի հետ: Գրականության այդպիսի արտադրանքները ազուցվում են մեծահռչակ անուններին՝ դրանց ավելի մեծ հավաստիություն տալու նպատակով: Լիովին բնական է, որ անանուն զրույցը շաղկապվեր Հայոց պատմության և հոգևոր կյանքի մեջ ժողովրդականություն վայելող Տրդատին ու Ագաթանգեղոսին և ոչ թե ինչ-որ մի անծանոթ անձնավորության, որին մեզ հաջողվեց հարություն տալ սոսկ XIX դարում, շնորհիվ դրամագիտության: Նա, ով վերագրել է «Նախնական պատմությունը» Ագաթանգեղոսին, հիանալի է իմացել իր գործը: Ագա-

[1] Н. Марр, «О Начальной истории Армении» Анонима. См. «Византийский временник», т. I, вып. 2, 1894.

քանգեղոսը առաջինն էր գրառել երկրի իրադարձությունները և նրան էր վայել, ինչպես ոչ այլ ոքի, լինել հեղինակը այն պատմության, որը շոշափում էր հայրենի անցյալը առավել հեռավոր ժամանակներում և ընդհատվում էր հենց այնտեղ, որտեղ սկսվում էր Ագաթանգեղոսի բուն աշխատությունը: Արձանագրության մասին լեգենդի հեղինակը հիանալի գիտեր, որ Ագաթանգեղոսն է նկարագրել Տրդատի գործերը, բայց որ հենց նույն Ագաթանգեղոսը կարող էր կազմել «զամս և զաւուրս հին թագաւորացն» մինչև Տրդատը՝ դրանում նա ոչ մի անհավանական բան չէր տեսնում: Նա հավատարիմ է իրեն, երբ ստիպում է Ագաթանգեղոսին փորագրել վեմի վրա, դրանով վերջ է տրվում հնարավոր կասկածներին. իսկ ինչո՞ւ Ագաթանգեղոսի աշխատությունը չի պահպանվել «Հայոց դարձի» կողքին: Պատասխանը պարզ է՝ Ագաթանգեղոսը գրել է սյան վրա, իսկ սյունը հայտնագործվել է ուշ և պատահական ձևով: Ամեն ինչ այստեղ մտածված է. Տրդատի անունը չի կարելի վերացնել, այն լույսի ճառագայթ է, որոշելու համար Անանունի ծավալը:

Շարադրված կշռադատումներից ելնելով, մենք անճամբ ավելի, քան հավանական ենք համարում, որ Անանունի ցանկում Սանատրուկը նշված է եղել: Այն տեղը, որ նա գրավել է թագավորների շարքում, կտրուկ կերպով տարամերժվել է ավանդությունից. այս պարագան քիչ մեղսակցություն չունի վերը նշված թերթերի խառնման մեջ, ձեռագիրը վնասվելու հետևանքով: Սանատրուկի հաջորդի և որդու՝ Վաղարշի առաջին գլխի ցանկը և հենց առաջին գլուխը սերտորեն կապակցվում են երկրորդ գլխի համաժամանակային աղյուսակին, որը սկսվում է Վաղարշի որդի Խոսրով Մեծով: Մենք չենք պնդի, որ Անանունի մոտ եղած իսկական ցանկը եղել է ճիշտ առաջարկված ձևով և ոչ թե մի ուրիշ: Հարցը կարևոր է սկզբունքային առումով, որ ցանկը աղավաղված է, և այդ կասկածի ենթակա չէ: Իսկ վերականգնված ցանկի ճշմարտացիությունը զարմանալի է, թե որքան է մեծանում, երբ համադրում ենք Խորենացու հետ:

Գլխավոր և գրեթե միակ տարբերությունը նրանում է, որ Խորենացին հանել է ցանկից Անանունի մոտ եղած երեք թագավորների՝ Արտավանին, Արշավիրին և Արշակին և փոխարինել է նրանց նոր՝ Անանունին անծանոթ անձնավորություններով, որոնց թվում նշված են նաև Եդեսիայի թագավորներ Արշամը և Աբգարը: Այստեղից պարզ է դառնում, որ անանուն նյութը Խորենացին վերամշակել է մի այնպիսի ժամանակ, երբ ազգային ավանդույթը հասցրել էր արդեն հայացնել ասորական կառավարող Աբգար Ուխամային: Այդ նույն ավանդության մեջ հայոց Սանատրուկի ճակատագիրը ագուցվում էր «բարեպաշտ հորեղբոր» պատմությանը, և ահա Խորենացին տեղափոխում է Սանատրուկին՝ դարձնելով նրան Աբգարի հաջորդը: Շնորհիվ կատարված փոփոխությունների, նրա մոտ ստացվել է մի նոր շարք՝ 14 հոգուց, երկուսով ավելի Անանունի մոտ եղածից: Վերջինիս մոտ 12-ական հոգի են թագավորների պարսից և հայոց ճյուղերում: Հավասարակշռությունը չխախտելու համար Խորենացին պետք է երկարացներ նաև

պարսից ճյուղը՝ հայկականի համաչափ: Հայտնի է, թե որքան բարձր է գնահատում նա անդամների թվի հավասարությունը տոհմածառերի մեջ՝ դրանում տեսնելով ծագումնաբանության ճշտության մեծ ապացույց[1]: Պարթևական թագավորների թիվը նա հասցրել է 14-ի հասարակ եղանակով: Առաջին երկու Արշակների համեմատաբար երկարատև գահակալության ժամանակը Խորենացին բաշխել է չորսի միջև. այլ կերպ ասած, երկատել է նրանց՝ Արշակ I-ի փոխարեն հանդես են գալիս Արշակ և Արտաշես, որոնք միասին կառավարում են այնքան, որքան Անանունի մոտ միայն Արշակը: Արշակ II-ի փոխարեն հանդես են գալիս նույնպես երկու անձնավորություններ՝ Արշակը, որը կառավարում է 53 տարի և Արշականը, ընդ որում խիստ հետաքրքիր է, որ վերջինիս հատկացվում է 30 տարի, սպասված 17-ի փոխարեն, որպիսի թիվ մնում է, երբ 70-ից հանում են 53: Խորենացին այդպես է վարվել ժամանակագրությունը որքան հնարավոր է շուտ ցանկալի զուգահեռականության հասցնելու բացառիկ նպատակով: Երկարացնելով Արշականի տարիները, նրա հաջորդ Արշականին Խորենացին դարձրել է Հայոց թագավոր Տիգրանի ժամանակակիցը, որը հայկական ճյուղում գրավում է ճիշտ այնպիսի տեղ, ինչ որ պարսկականում Արշականը: Այնուհետև զուգահեռականությունն ընթանում է հաստատուն հետևողականությամբ:

Ինչ վերաբերում է բուն ժամանակագրությանը, ապա Խորենացին խստորեն հետևում է իր աղբյուրին: Խորենացու մոտ թվական տվյալների մեջ թափանցած սխալները ուղղելուց հետո ավելի հստակ է դրսևորվում պատմիչի մերձավորությունը Անանունին: Պարսկական մասում թվերը համընկնում են ամենուր. նվազեցրել է նա սոսկ Արտաշիրի և Պերոզի տարիները 26-ով և 30-ով = 56 տարով և ավելացրել է Արշականի ժամանակը 13-ով (83՝ 70-ի փոխարեն): Դրա հետևանքով Խորենացու մոտ ստացվում է 56-13 = 43 տարվա պակասորդ Անանունի համեմատությամբ: Իսկ դա բացատրվում է պարսկական ժամանակագրությունը հայկականին հարմարեցնելու Խորենացու ձգտմամբ: Բավական է հպանցիկ հայացք, որպեսզի համոզվես հայկական մասի ժամանակագրության Անանունից կախվածության բնագրային բնույթի մեջ: Արշակունիների զբաղեցրած ժամանակը Խորենացու մոտ մնում է անձեռնմխելի ամբողջ ընթացքում: Ամբողջ տարբերությունը սոսկ նրա բաշխման մեջ է, որում նա տարամերժվում է Անանունից՝ հարմարվելով ցանկի նոր կազմին: Առաջին Արշակունին Անանունի մոտ ունի 42 տարի. պատմիչը դրանցից 20-ը փոխանցում է Արշամին. Արշակի տարիները հատկացվում են Արգարին ամբողջությամբ. Սանատրուկը փոխում է տեղը՝ պահպանելով իր տարիները: Արտավանի և Արշավիրի 24 տարին[1] փոխանցվում է Տիգրանի և Արտավազդի հաշվին, իսկ լրացնելու համար 11-12 տարվա պակասը, համապատասխան թվով տարիներ վերցվում են Տիրանից ու Արտաշեսից, որը կառավարել էր բոլորից

[1] **Մովսես Խորենացի**, Գիրք Ա, 5:

երկար: Մյուս ազդամները, որոնք մնացել են իրենց տեղերում, պահպանել են նաև իրենց թվերը:

Տարիների ընդհանուր գումարը Խորենացու և ենթադրաբար Ագաթանգի մոտ հավասարվում է 328-ի՝ սկզբից մինչև Խոսրովը, և 358-ից մինչև Խոսրովի 30 տարին, այսինքն՝ մինչև Արտավանի մահը (գլ. երկրորդ), իսկ պարսից թագավորների տարիների գումարը համապատասխան ժամանակամիջոցում, այսինքն՝ Արշակ II-ից մինչև Արտավանը, հավասար է (500-57) = 443-ի: Մենք նման թիվ կսպասեինք նաև հայ Արշակունիների համար: Մեր սպասումները, սակայն, այդ առնչությամբ ոչ բոլորովին են հիմնավոր: Նկատենք, որ Ագաթանգի մոտ առաջին թագավորները մինչև Արշավիրը, դուրս են կանգնած ազգակցական իրավունքներից: Իսկ Արշավիրից հետո ազգակցական կապը չի խզվում: Եվ ամբողջ շարքը ներկայացնում է ժառանգաբար իջնող գիծ՝ հորից որդուն կամ եղբորից եղբորը: Այստեղ մենք իրավունք ունենք պահանջելու ժամանակի համապատասխանություն ցանկերում: Եվ հիրավի, որոշ չափով այն առկա է: Խոսրովի տարիները (մինչև 30-ը) համընկնում են Արտավանի ժամանակին, Վաղարշը և Սանատրուկը կանգնած են Վաղարշի հանդիման, Տիգրանը և Տիրանը՝ Պերոզի և այլն: Հարստության առաջին ներկայացուցիչների մեկուսացվածությունը, հավանաբար, պետք է մեկնաբանվի այն իմաստով, որ հեղինակը նրանց միջև ենթադրում է միջթագավորություն, երբ պարսից թագավորները ժամանակավորապես զավթում էին հայոց գահը: Թույլատրելի է, իհարկե, մտածել, որ այդ մասում թվերը, գուցե և անունները, աղավաղված են[2]: Ինչևիցե, բայց ճշմարիտ է, որ հենց այդպիսի անգոհացուցիչ տեսքով է ցանկը դրված եղել Խորենացու առջև: Խորենացին փորձել է համաձայնեցնել երկու ցանկերը. վրիպումները, որոնք նա թույլ է տվել այդ դեպքում, կարելի է բացատրել նրա նախընտրած ձևի՝ զուգահեռականության, օգնությամբ:

Թագավորների շարքում Երվանդը իր տեղով համապատասխանում է Դարեհին ինչպես Խորենացու, այնպես էլ Ագաթանգի մոտ: Նա պետք է համընկնի նրան և ժամանակով, համաձայն Ագաթանգի: Նման համա-

---

[1] Ընդ որում, հասկացե՞լ է արդյոք Խորենացին Ագաթանգին մեր իմաստով (տե՛ս վերի աղյուսակի 6-րդ ծանոթագրությունը), թե՞ օգտվել է ևս մեկ ուրիշ աղբյուրից, որի վերաբերյալ կամ նաև այլ բնույթի տվյալներ. ինչպես կտեսնենք հետո՝ դրանից գործի էությունը չի փոխվում: Ագաթանգի, ինչ-որ կապ կա այդ 12 տարիների և նրանց միջև, որոնք Խորենացին հատկացրել է Տիգրանի ժամանակակից Արշականի գահակալությանը:

[2] «Արտավան» անունը բացառապես պարսկական է, իսկ Արշավիրը կարծես թե միևնույն անձն է, նրան ժամանակակից պարսից նույնանուն թագավորի հետ: Հետաքրքիր է, որ երկրորդ գլխում երկու միջթագավորությունները Խոսրովից և Արշակից հետո սահմանվում են 11-12 տարի: Արդյոք պարսից Արշավիր թագավորը չէ՞ զավթել հայոց գահը 12 տարով: Հավանաբար, Խորենացին ևս թերիավատորեն է վերաբերվել նրանց և մասամբ դրա համար էլ շրջանցել է դրանք:

պատասխանություն դրվում է նաև նրա հաջորդների և նրանց պարսկական երկվորյակների միջև: Քայց երբ ցանկը մշակելիս նա Սանատրուկին երկրորդ մասից փոխադրել է առաջին մաս, ինչպես նաև կրճատել է Արտաշեսի տարիներն այլ նպատակներով, ապա դրանով խախտել է ժամանագրական զուգահեռականությունը՝ նվազեցնելով ժամանակը [30+11+(1)] = 41-2 տարով: Որպեսզի վերականգնի այն, Խորենացին պետք է նույնքան ժամանակ պակասեցներ պարսից ցանկի համապատասխան մասում: Եվ նա կարճացրել է Արտաշիրի և Պերոզի երկարատև գահակալությունները, ընդ որում պահանջվող 42-ի փոխարեն ընտրել է 56-ը՝ ուշադրության առնելով նաև Արշակաձի ավելորդ տարիները: Քայց այդ գործողությունը միաժամանակ պահանջում էր պարսից տիրապետության ժամանակի կրճատում, հավասարակշռության համար պահանջվում էր հայկական տիրապետության հավասար կրճատում, այլ կերպ ասած՝ 2-րդ մասից առաջին մաս փոխանցված 41-42 տարին հարկ էր վերացնել: Խորենացին այդպես էլ վարվել է՝ 41-42 տարով առաջ մղելով հայոց Արշակունիների սկիզբը: Այդ հանգամանքը բացահայտում է Խորենացու և Անանունի տարաձայնությունը առաջին Արշակունու վերաբերյալ: Ըստ Անանունի Արշակը՝ պարթևական առաջին թագավոր Արշակի հարազատ որդին, նշանակվում է նրա իսկ կողմից կյանքի վերջին տարում, իսկ Խորենացու մոտ Վաղարշակը Արշակ Քաջի եղբայրն է և Հայաստան է գալիս նրա օրոք, նրա գահակալության 41-րդ տարում: Ծագումնաբանական առումով Խորենացին հարազատ է բնագրին, քանզի Արշակ Քաջը, որ Խորենացու մոտ ճևականորեն, ինչպես տեսանք, հայտնվել է 3-րդ տեղում, առաջին պարթև Արշակունու որդին է ըստ Անանունի: Տարբերությունը միայն նրանում է, որ Վաղարշակը Հայաստան է ուղարկվում ոչ թե հոր, այլ եղբոր կողմից: Խոտորումը ակամա էր՝ եթե ստիպված էր տեղաշարժել Վաղարշակի նշանակումը, որն այդ դեպքում համընկնում էր Արշակի եղբոր գահակալության ժամանակին: Այդպիսով, նվազեցնելով պարսից թագավորների տարիները և նույնքանով առաջ տանելով հայկական հարստության սկիզբը, Խորենացին շահել է 84 տարի հօգուտ հայկական ժամանակագրության: Քայց ներդաշնակություն հաստատելու այդ ջանքերի հետ մեկտեղ, նա, իր համար աննկատ, իրեն ներքաշել է կոպիտ անհետևողականության մեջ՝ պարթևների տիրապետության ծայրակետը դնելով ըստ Անանունի, դրանով իսկ պարթևների տիրապետության ընդգրկած ժամանակամիջոցը կրճատել է 42 տարով, հակառակ այդ նույն Անանունի: Վրիպումը լիովին բավական է մտքի այնպիսի ուղղության պայմաններում, որում աշխատում էր այն Խորենացու մոտ, որը կլանված էր միմիայն երկու ցանկերի հարաբերակցությամբ:

ԹՂԳԱՎՈՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ
ՊԱՐԲԵՎԱԿԱՆ

ԸՍՏ ԱՆՎԱՆՈՒՆԻ		ԸՍՏ ԽՈՐՆՆԱՑՈՒ
I. Արշակ.....56|57		1. Արշակ Քաջ.....31
		2. Արտաշես.....26
		3. Արշակ Մեծ.....53
II. Արշակ.....70		4. Արշակաւն.....30
III. Աշճաշ.....32		5. Արշաւնակ.....32[5]
IV. Արշեն 22		6. Արշես..... 22
V. Արշավիր.....45		7. Արշավիր .....45[4].
VI. Արտաշես.....34		8. Արտաշես.....34
VII. Դարեհ.....30		9. Դարեհ 30
VIII. Արշակ.....17		10. Արշակ.....17[1]
IX. Արտաշիր.....46		11. Արտաշիր 20
X. Պերոզ 64		12. Պերոզ 34
XI. Վաղարշ.....50		13. Վաղարշ.....50
XII. Արտավան....36 | 33[2]		14. Արտավան.....36 | 33
+502 | 500		+ 459 | 457

ՀԱՑԿԱԿԱՆ

ԸՍՏ ԱՆԱՆՈՒՆԻ		ԸՍՏ ԽՈՐՆՆԱՑՈՒ	
I. Արշակ.....42		1. Վաղարշակ.....22	
II. Արշակ.....13		2. Արշակ 13	
		3. Արտաշես 25	
III. Արտաշես 25		4. Տիգրան..... .....33(34)[5]	} 36
		5. Արտավազդ.....2-3	
IV. Արտավան.....12	6	6. Արշամ 20	
V. Արշավիր.....12	} 12	7. Արգար.....37[4]	
VI. Արշակ.....37		8. Սանատրուկ.....30	
VII. Խրմանդ.....21		9. Խրմանդ.....21[3]	
VIII. Արտաշես 52		10. Արտաշես.....41	
IX. Տիրան.....21|22[7]		11. Արտավազդ	} 21
X. Տիգրան.....42		12. Տիրան	
XI. Սանատրուկ 30		13. Տիգրան.....42	
XII. Վաղարշ.....20		14. Վաղարշ.....20	
	+328		+328

Ծանոթագրություններ. Մեվսես Խորենացու «Հայոց պատմություն» Բ գրքի 68 և 69 -րդ գլուխներում տրվում է պարսից Արշակունիների լրիվ թվարկումը՝ որոնց կառավարման ժամանակի նշումով: Տարօրինակ է, որ հետազոտողները օգտվում են, ըստ երևույթին, բացառապես այդ տեղից, զանց առնելով Խորենացու մոտ եղած ուրիշ ժամանակագրական ակնարկները: Դրա համար էլ որոնք չեն ճշտել այնտեղ տեղադրված սխալները, որոնք հեշտ ուղղելի են մեզի Խորենացու ցուցումների հիման վրա: Այսպես.

1) 69-րդ գլխում Արշակին տրվում է 19 տարի, որը բացահայտ վրիպակ է 17-ի փոխարեն: Ըստ Խորենացու, Արտաշես II-ը թագավորել է 41 տարի (Բ, 60)՝ Դարեհի 29-րդ տարուց (Բ, 47) մինչև Պերոզի 3-րդ տարին (Բ, 62): Նրա ժամանակը, հետևաբար, ընդգրկում էր Դարեհի 2-րդ տարին + 10 Արշակի + 20 Արտաշիրի և ևս Պերոզի 2 տարին: Նրա 3-րդ տարում գահ բարձրացավ Տիրանը, իր եղբոր՝ Արտավազդի մահից հետո, որը կառավարեց մոտ մի քանի օր (յետ սակաւ աւուրց, Բ, 61): Այդպես տարիների թվագրումը = 41-ի միայն այն դեպքում, եթե Արշակին տրվի 17 տարի, լիովին համաձայն Ամամուհու:

2) Ըստ 69-րդ գլխի «Արտաւան ամս 31». կոպիտ վրիպակ է, փոխանակ 36-ի, ինչպես Ամամուհու մոտ է: Խոսրով Մեծը թագավորել է 48 տարի (Բ, 74). եթե Արտավանից հանկացնենք 31 տարի, այնժամ Խոսրովը պետք է Արտավանից ավելի ապրեր (48-31) = 17 տարի, որոնց միաժամանակ գահ բարձրանալու դեպքում, քայց Խոսրովը գահ է բարձրացել Արտավանի 3-րդ տարում (Բ, 65), դրա համար էլ որոնց մահվան միջև ընկած ժամանակամիջոցը մեծանում է ևս 2 տարով = 19 տարի: Խորենացին Խոսրովի մահը որոշակի դնում է 259 թվականին: Նրա սպանությունից հետո վրա հասած միջթագավորությունը՝ 27 տարի (Բ, 77), դադարեց Տրդատի գահ բարձրանալով, որը տեղի ունեցավ Դիոկղետիանոսի 3-րդ տարում (Բ, 82), այսինքն 286 թ. (և ոչ թե 287 թ., ինչպես որ սխալաբար համարում են). ըստ այդմ էլ Խոսրովի մահը ընկնում է (286-27)= 259 թվականին: Իսկ Արտավանը սպանվեց Փիլիպպոսի (244-249) օրոք, որը օգնություն էր ցույց տվել Խոսրովին Արտաշիրի դեմ (Բ, 71-73): Եթե անգամ ենթադրենք, որ Արտավանի մահը համընկնում էր Փիլիպպոսի առաջին տարում, ապա այդ դեպքում էլ չի սպացվի 19-ամյա ժամանակամիջոց մինչև Խոսրովի մահը: Արտավանի համար 36 տարի կարդալու դեպքում ժամանակամիջոցը կրճատվում է մինչև 48-36+ 2=14 տարու և Արտավանի մահը ընկնում է 246 թվականին (հաշվելով նաև 259 թվականը), Խորենացու ցուցմամբ համապատասխան: Մեզ թվում է, սակայն, որ ավելի հավանական է 33 թիվը երկուսի համար էլ՝ և՛ Ամամուհու և՛ Խորենացու: Ըստ Սեբեոսի երկրորդ գլխի, Արտավանը վախճանվել է Խոսրովի 31-րդ տարում, իսկ Խորենացին, ինչպես ասացինք, Խոսրովի գահակալության սկիզբը վերագրում է Արտավանի 3-րդ տարում: Քանի որ երկրորդ գլուխը մենք համարում ենք օրգանապես կապված առաջինին, և որոնց երկուսից էլ Խորենացին օգտվել է, ուստի իրավացիորեն նույնացնում ենք զույգ ցուցումները. եթե Խոսրովի 1-ին տարին = Արտավանի 3-րդ տարում, ապա Խոսրովի 31-րդ տարին կարող է համապատասխանել մոտ Արտավանի 33-րդ տարուն. հետևաբար, նա թագավորել է 33 տարի: Այդ թիվը հաստատում է գանում տեքստում: Արշակունի թագավորների տարիների ընդհանուր գումարը ճշված է 573, հակառակ դրանց առկա գումարի՝ 576. փոխանակ չհաշ ուղղելու և

ձաթճճելու շի՛ գ գերադասելի է լզ՛ կարդալ լզ՛: Այնուհետև, Պրոկոպիոսի վկայությամբ, «Նախնական պատմության» մեջ Արշակունիների միապետությունը հաշվվում է 500 տարի: Եթե առաջին Արշակունու թիվը ուղղենք 56-ից 57-ի համաձայն Խորենացու և նրա հիման վրա, որը ոչ մի չհաստատվածության չի ունենալ` ավյալ դեպքում շեղվելու բնագրից, ապա մեր Ամանունի մոտ էլ կստացվի 500 թիվը, կամ ընդառաջելով Արշակի կյանքի տարիները ևս, 574՝ շե՛ղ, շե՛զ-ի փոխարեն, որն իր հերթին է խոսում հօգուտ լզ՛ -ի վերականգնման. փոքր-ինչ ավելի դժվար է դ՛ -ի (շե՛դ - ում) ազդումը զ՛-ի: Արտավանի մահն այդ հաշվով վերաբերում է (500-251) = 249 թվականին, այսինքն՝ այս դեպքում էլ այն ընկնում է Փիլիպպոսի գահակալությանը, որը չի հակասում Խորենացուն: Միակ դժվարությունն այն է, որ այդ ընթերցման դեպքում Խոսրովի մահը տեղի է ունենում 10 տարի ավել, փոխանակ սպասված 15-ի (48-33): Այդ պարագան հնարավոր է լիովին բացատրել Ագաթանգեղոսի ազդեցությամբ, համաձայն որի էլ, ըստ էության, Խորենացին շարադրում է Խոսրովի պատմությունը (տե՛ս նաև ծանոթագրությունների վերջը):

3) Ըստ Ա, 46-րդ գլխի Երվանդը «կալեալ զթագաւորութիւն ամս 20»: Այդպես է թերվում նաև հետազոտություններում (Մառ, Մալխասյանց և ուրիշներ), բայց ճիշտ չէ, քանզի նա կառավարել է, ըստ Խորենացու իսկ, Դարեհի 8-րդ տարուց (Ա, 37) մինչև 29-րդ տարին, հետևաբար 21 տարի, համաձայն Ամանունի:

4) Ըստ Ա, 68-րդ գլխի Արշավիր «ամս 46»: Խորենացու մոտ նկատելի ճգտումն պայմաններում՝ պահպանել թագավորների տարիները համեմատ Ամանունի, հասկանալի պատճառ չկար մեծացնելու Արշավիրի ժամանակը մեկ տարով: Միավորը միանգամայն ավելորդ է և առաջ է եկել նույնպիսի միավորի ըստվածքով նրան ժամանակակից Արգարի տարիների վրա: Արգարի իսկական թիվը ոչ թե լը՛ է (ինչպես Ա, 33), այլ՝ լէ՛ տարի (ոչ այլ ինչ է, եթե ոչ Արշակի տարիները՝ փոխանցված Արգարին): Այդ երևում է հետևյալից. եթե Արգարին հաշվենք 38 տարի, ապա տարիների գումարը մինչև Խոսրովի մահը = 261 (38+30+21+41+21+42+20+48), իսկ քանի որ Արգարը գահ է բարձրացել Քրիստոսի ծննդից մեկ տարի առաջ (Ա, 36), ապա Խոսրովի սպանությունը ընկնում է 260 թվականին: Խոսրովի մահվան ճիշտ թվականը 259 թվին է (տե՛ս ծանոթ. 2): Մահերեսայինի հաշվի դեպքում, այն է, ընդունելով 287 թվականը Դիոկղետիանոսի 3-րդ տարին, հնչում է սառնում 260 թվականը Խոսրովի համար: Հաշվի ճշտությունից զատ, այդ թիվը չի համերաշխվում Խորենացու ցուցման հետ, ըստ որի Խոսրովի մահվան ժամանակ Վալերիանոսը դեռևս կենդանի էր և վախճանվեց չուտով դրանից հետո (Ա, 76. «ոչ ժամանէ մերոյ աշխարհիս թնարկել Վաղերիանոս, մանաւ ոչ յերկարէ գնեանսն»): Իսկ Վալերիանոսը կառավարել է ասկ մինչև 259 թվականը (այդ թվականին նա չի մահացել, ինչպես կարծում է Խորենացին, այլ գերի է ընկել պարսից թագավորի ձեռքը, զիջելով գահը Գալիենոսին, այլ մահացել է ավելի ուշ՝ 266 թվականին): Դրա համար էլ 259 թվականի վերաբերյալ, որպես Խոսրովի մահվան տարու, կասկած լինել չի կարող. ի շահ դրա, Արգարին պետք է տալ միայն 37 տարի և ոչ թե մեկ տարի պակասեցնել Երվանդից, ինչպես արել են արտագրողները, ամենայն հավանականությամբ, այդ նույն դիտավորությամբ: Երկարացնելով մեկ տարով (պարզ վրիպումով՝ ը՛ փոխանակ է՛) կամ ոչ ճիշտ ընթերցմամբ (թուր փոխանակ նաւթ)] Արգարի կառավարումը, որ տևել է Արշավիրի 20-րդ տարուց (Ա, 26)

մինչև Արտաշեսի 12-րդ տարին (Բ, 36) ցույցաց էլ ավելացրել են Արշավիրի ժամանակը՝ պահպանելու համար ժամանակագրությունը:

5) Բ, 68-րդ գլխում «Արշակ ամս 31. Արշէզ ամս 20»: Տիգրանի, Արշակի և Արտավազդի գահակալությունը ընդգրկում է Արշակաց 19-րդ տարուց (Բ, 14) մինչև Արշեսի կյանքի վերջը (Բ, 24) ընկած ժամանակը: Տիգրանը միայնակ կառավարել է 33 տարի (Բ, 19), և եթե Արշակացիք տանք 31 տարի, իսկ Արշեսին 20 տարի, ապա հազիվ կտացվի Տիգրանի 32-3 տարին: Իսկ Արտավազդի գահակալությունը, թեև կարճատև (պատմականորեն 30-33), Խորենացիին, համենայն դեպս, օրերով չի հաշվում՝ դասելով նրան վերագրվող արշավանքներից: Այն բանից հետո, երբ Խորենացու բոլոր խոտորումները Անանունից շինծու դուրս եկան՝ 31 և 20 թվերը վստահության արժանի չեն: Որ 31-ի փոխարեն Խորենացու մոտ առաջ գրված է եղել 32, երևում է Ասողիկից: Երբ Արտավազդին հատկացվի 2-3 տարի, իրավացիորեն կարող ենք Արշեսի 20 տարին ուղղել և դարձնել 22: Միայն այն պատճառով, որ ամենուր ճշտապահ Խորենացին պատահաբար բաց է թողել ու չի նշել Արտավազդի տարիները, գրիչները վրիպակ են թույլ տվել: Տեքստային և ժամանակագրական բնույթի խոչընդոտներ չկան կարդալու «ի քսաներորդի երկրորդի ի կատարումն աւուրց թագաւորութեան Արշէզի թագաւորի Արշամ», փոխանակ «քսաներորդի» ինչպես հրատարակության մեջ է (Բ, 24):

6) Տեքստում «Արտաւան և Արշաւիր ամս 12», որը երկուսի համար շատ քիչ է: Երբ հաշվածները թարգմանության են հունարենից, ապա հնարավոր է, որ հեղինակը ճիշտ չի հասկացել հունարեն տեքստի *συνδώδεκα* արտահայտությունը: *σύν* նախդիրը բնականի հետ միացության մեջ ունի նաև բաշխիչ նշանակություն՝ *συντρείς* = լատինական terni, *συνδώδεκα* = 12-ական, և ոչ թե միասին 12 տարի. տե՛ս նաև **Kühner**, Ausführl. Gramm. I, 624:

7) Խորենացու համար շահ չկա դնելու 21, երբ Անանունի մոտ եղել է 22, առավել ևս, որ նա ծուծել է նաև Արտավազդին: Երկուսների շարքը (52, 22, 42) կասկած է հարուցում: Հավանականությամբ թույլ ենք տալիս նաև 21 թիվը Անանունի համար:

Այդպիսով տեսնում ենք, որ Խորենացին խոսիվ հետևում է Անանունին: Նրանից տարաձայնվում է միայն Արտաշեսի և Պերոզի ժամանակը նշելիս, որը 56-ով ավագեցրել է Անանունի հաղորդ: Նշանակում է, Խորենացու մոտ տարիների գումարը պետք է հավասարվի 457-ի կամ 459-ի, Անանունի 500-ի կամ 502-ի կապակցությամբ [այսինքն 500-(Աբշակունիների 56-13)= 457-ի]: Հետաքրքիր է, որ Ասողիկը նույնպես Արշակունիների տիրակալությունը հաշվում է 457 տարի՝ ճշտ, ընդորում, նա ներկայացնում է հետևյալ ցանկը (թերում ենք ըստ Մալխասյանցի գրքույկի, ծնորի տակ չունենալով տեքստը):

1. Արշակ .....57 (կամ 26 Արտաշիրի հետ)

(Արտաշիր.....31)

2. Արշակ .....52..... -1

3. Արշակաձ.....30

4. Արշաձակ 32

5. Արտաշես ..... 20..... -2

6. Արշավիր .....46.....+1

7. Արտաշես .....31 ..... -3

8. Դարեհ 30

9. Արշակ .....19 .....+2

10. Արտաշես 20

11. Պերոզ 34

12. Վաղարշակ 50

13. Արտավաձ .....36.....+3

+ ճծէ = 457

Եվ այդպես, տարիների գումարը, հիրավի, հավասարվում է 457-ի: Բայց Խորենացու ճիշտ ցանկի համեմատ թվերում տեղ գտած սխալները ակնհայտ են: Դժվար է թույլ տալ Խորենացու հետ ունեցած ընդհանուր վրիպումներում (Արշես- 20, Արշավիր - 46, Արշակ- 19) այդպիսի խոր հնություն, և մտածել, որ նրանք Ասողիկի մոտ են ընկել Խորենացու բնագրից: Իմ կարծիքով, սկզբնապես Ասողիկի մոտ թվերը դրված են եղել Խորենացուն լիովին համապատասխան և դրանց աղավաղումները կապակցության մեջ են գտնվում այն վրիպումների հետ, որոնք ժամանակի ընթացքում ներթափանցել են Խորենացու երկի մեջ: Տարիների ավելցուկը (6 +) և պակասը (6 -) Խորենացու վերաբերմամբ հավասարակշռում են մեկը մյուսին և դրա համար էլ ճծէ, որը հաստում է միշտ իսկական ցանկը, մնացել է անփոփոխ: Առավել ևս հետաքրքիր է, որ Ասողիկի բոլոր կոպիտ վրիպումները կրկնված են երկրորդ գլխի ցանկերում (անգամ Պերոզի թիվը լգ փոխանակ լդ - ճկատի առնելով գումարը), որը հաստատում է ընդմիջարկված փաստը և ապացուցում է նրա ճշտանպատիրեն ավելի ուշ ծագումը:

Թագավորների քննարկված ցանկերը այնուհետև շարունակվում են անմիջապես (առանց ընդմիջարկման) հաջորդ երկրորդ գլխում: «Նախնական պատմության» հաստատվող կապը այդ գլխի հետ, հասկանալի է, չպետք է ըմբռնել նրանց ընդհանուր ծագման իմաստով, որ նրանք երկուսն էլ տվյալ տեղում պատկանում են մի գրչի՝ Սերեոսի գրչին: Գլխի հենց սկզբում հանդիպում ենք մի դժվարության, տարօրինակ կերպով Արտավանի մահը զուգադիպեցվում է Ավրելիանոսի ժամանակներին: Բայց այդ հանգամանքը ի վիճակի չէ սասանելու պաշտպանվող դրույթը: Թանն այն է, որ III դարի 50-ական թվականներին, որ ժամանակին վերաբերում է Արշակունիների անկումը ըստ Անանունի, Արևմուտքում կառավարում էր Էմիլիանոս կայսրը: Երկրորդ գլխի հեղինակը պարզապես շփոթել է անունները և իր աղբյուրի Էմիլիանոսին ընդունել է առավել հայտնի Ավրելիանոսի տեղ[1]: Որքան էլ որ տարօրինակ է, բայց այդ լիովին վայել է այդքան կոպիտ սխալներ կատարող մի հեղինակի, սխալներ, որ նա թույլ է տվել բյուզանդական կայսրերի ժամանակագրության մեջ:

Վերը մենք մոտիկից ծանոթացանք երկրորդ գլխի աղյուսակներին:

Խոսրովից մինչև հարստության անկումը, հայոց Արշակունիների քննադատորեն ստուգված տարիների գումարը հավասար է 232-ի, չհաշված 23 տարվա միջթագավորությունը: Իսկ առաջին գլխի ցանկի նախորդած թագավորների տարիների գումարը, մինչև Վաղարշը ներառյալ, հավասար է 328-ի: Ընդհանուր գումարով այն կտա 560 թիվը: Երկրորդ գրքում հարստության տիրապետության տևողությունը հաշվվում է ՃԸ տարի: Խոսք չի կարող լինել այդ թվի պիտանիության մասին, որն, անկասկած, աղավաղված է: Ցանկերի հետազոտությունը չուղեկցելով այն որևէ կռահմանի փորձով՝ խախտելու նրանց ժամանակագրությունը հանում ենք թվի, հանգեցրեց միանգամայն գոհացուցիչ արդյունքի: Մենք ամենևին չենք կասկածում ճեռք բերված շԿ թվի ազգակցությանը ՌՃ-ի հետ[2], իսկ դա նոր թելով է կապում երկու գլուխները:

---

[1] Ըստ էության քննադրում ոչ թե Աւրելիանոս է, այլ «Եղիանոս» [=Եմ-եղիանոս]: «Ես (եւ) էր Խոսրով լա՛ ամ: Եղիանոս՝ երրորդն, Արտաշիր զառաջինն» արտահայտութեան մեջ «ամ» բոլորովին ավելորդ է, դատելով այն բանից, որ հետագայում նման դեպքերում ոչ մի տեղ այն չի գրվում: Այսպես, ստորև «Խոսրով լե՛ Արտաշիր ե՛: - Խոսրով խա՛ Արտաշիր ժա՛» և կամ էջ 15. «Ցրդատես լե՛ Շապուհ ժդ՛» և այլն: Ամենայն հավանականությամբ «Ամ»-ը կարված է «Եղիանոսից» = Ամեղիանոս. = համապատասխանաբար՝ Եմ = Եղիանոս:

[2] Գլխատառ Ը-ն հապավանշան պատվի որոշակի դիրքի դեպքում ամանվում է Ն-ի: շԸն ՌՃ միջև ընտրության դեպքում (սկզբից շԿ և ՌԿ կամ շԸ և ՌԸ) ցանկացած գրիչ ավելի շուտ կանգ

Ամփոփված այդ ուսմունքները գրական մեծ հետաքրքրություն են ներկայացնում. որոնք դիպչում են Խորենացու ժամանակագրությանը: Նրանց համադրումից երևան է գալիս ապշեցուցիչ մի փաստ. երկրորդ գլխի տվյալները, իրենց ամբողջ անհնթնթությամբ հանդերձ, ընկել են Խորենացու ժամանակագրության հիմքում: Խոսրովի տարիները (50) + նրա մահից հետո միջթագավորության (11) և Տրդատի տարիները (70) = 131 ըստ երկրորդ գլխի: Ուղիղ այդքան է նաև Խորենացու մոտ. տարբերությունը բաշխման մեջ է՝ Խոսրովին հատկացնում է 48 տարի, միջթագավորությանը՝ 27, իսկ Տրդատին՝ 56 գումարը՝ 131: Մինչև Վռամշապուհը հաջորդ թագավորների տարիների գումարը երկրորդ գլխում հավասար է 124-ի, իսկ Խորենացու մոտ՝ միայն 94-ի, չբացառած նաև Տրդատից հետո երկու տարվա միջթագավորությունը: Տարբերությունը, հետևաբար, (124-94) = 30 տարի է: Այդ ամենը բացատրվում է նրանով, որ Խորենացին երկրորդ գլխի հայկական ժամանակագրությունը մշակելիս հարմարվել է իրեն ավելի լավ հայտնի բյուզանդական ժամանակագրությանը: Խորենացու համար, որն այդպես լայնորեն օգտվել է Եվսեբիոսի ժամանակագրությունից, դժվար չէր նկատել երկրորդ գլխի թացահայտ սխալները, որտեղ ժամանակի Ավրելիանոսից մինչև Կոստանդիանոս Մեծ ավելացված է ավելի, քան 50 տարով: Ուղղելով այդ սխալը, նա ըստ էության պետք է կրճատեր 50 տարով նաև հայկական ժամանակագրության համապատասխան մասը, որն ընդգրկում էր 131 տարի (ըստ երկրորդ գլխի Տրդատը վախճանվել է Կոստանդիանոսի 5-րդ տարում): Բայց նկատի ունենալով մատնանշված ժամանակագրական թռիչքը երկու տասնյակ հավելիով տարի, Խորենացին գիտե, որ 131 տարին կազմում է ըստ էության ժամանակը ոչ թե Ավրելիանոսից, այլ Էմիլիանոսից. այլ կերպ ասած, 131-ից մոտ 23 տարի պետք է գնա լրացնելու բացթողումը: Եթե կրճատենք այդ հաշվով, ապա հարկ էր կրճատել ոչ թե 50 տարով, այլ սոսկ մոտավորապես (50-23) = 27 տարով: Բայց այդ դեպքում կստացվեր, որ Տրդատը մահանում է Կոստանդիանոսի առաջին տարիներին, համաձայն երկրորդ գլխի, որն անհամատեղելի է այն նյութի հետ, որը նրան հայտնի է Ագաթանգեղոսից և ուրիշներից՝ երկու թագավորների փոխադարձ հարաբերությունների մասին:

կառներ երկրորդ թվի վրա, այն բանից հետո, երբ գլուխները ամբողջովին էին ընդմիջարկմամբ: Մեքենայի ճնռոցի մեկ օրինակով գոյության դեպքում, այն էլ խիստ աղավաղված տեսքով, կռահումների սահմանները շատ լայն են:

Դրա համար էլ ճա չի ճվազեցրել 27-ով, որպեսզի այդ տարիների միջոցով դրանք լիովին ծածկի: Հաջորդ կեսում Խոսրով Կոտակից Խորենացին պակասեցրել է ժամանակը 30 տարով արևմտյան կայսրեր Գրատիանոսի 17 և Արկադիոսի 19 [երկրորդ գլ.՝ Արկադիոսի երկրորդ տարին = Հոնորիոսի երկրորդ տարուն] = 36 ավելորդ տարիների փոխարեն,

ՍԱՍԱՆՑԱՆ ՊԱՏՄԱԾՐՋԱՆԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Խոսրով.....48	†259	1. Արտաշիր.....	†285
Միջթագավորություն.....27	259-286	2. Շապուհ.....49	285-334
2. Տրդատ.....56	286-342	3. Ներսեհ.....9	334-343
Միջթագավորություն.....2	342-344		
3. Խոսրով.....9	344-353	4. Որմիզդ.....3	343-346[1]
4. Տիրաճ 11	353-364	5. Շապուհ.....70	346-416
5. Արշակ.....30	364-394		
5. Պապ.....7	394-401		
7. Վարազդատ.....4	401-405[2]		
8. Արշակ (և Վաղարշակ)..5	405-410 } a		
Խոսրովի հետ.....2[1/2]	410-413 }		
9. Խոսրով (միայնակ)...2[1/2]	413-415		
10. Վռամշապուհ.....21	415-436	6. Արտաշիր.....4	416-420[b]
11. Խոսրով (երկրորդ անգամ).....1	436-437	7. Վռամ 10	420-430
Շապուհ պարսիկ.....4	437-441[4]	8. Հազկերտ 11	430-441[4]
Միջթագավորություն.....3	441-444	9. Վռամ.....21	441-462
12. Արտաշես.....6	444-450	10. Հազկերտ միճչև 2-րդ տարին	464[3]

ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Սովսես Խորենացու ժամանակագրությունը ճշտիվ սահմանվում է ըստ հետևյալ ցուցումներով.

[1] Խոսրովը, Տրդատի որդին, գահ է բարձրացել Որմիզդի

ընդ որում, քանի որ Թեոդոսիոսի կառավարումը երկարացրել է երկրորդ գլխի համեմատ (այստեղ 19, Խորենացու մոտ 26. երևի բարեպաշտ կայսեր ողորմածությունը ևսև Արշակի ու Վաղարշակի վրա տարածելու նպատակով), ապա կրճատել է ոչ թե 36-ով, այլ ավելի փոքր թվով: Վերջում Խորենացու մոտ ստացվել է երկրորդ գլխի հետ գրեթե միատեսակ Վռամշապուհի մահվան տարեթիվը [չնայած այն բանին, որ Խորենացին

ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԾՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՄՈՐԳՅՏՄԱՆԻ՝ «CHRONOLOGIE DER SASSANIDEN»

1.		226-240
2.		240-271
3. Թահրամ	1, 2, 3	271-283
5.		283-300
7.		300-309
8.		309-379
9.		379-383
10. Շապհ		383-388
11.		388-399
12.		399-420
13.		420-439
14.		439-457

երկրորդ և Կոստանդիոսի (337-361) ց-րդ տաքում, այսինքն՝

երկարածգել է նրա գահակալությունը 13 տարով երկրորդ գլխի համեմատությամբ]. Բ-րդ գլխում նա մահանում է Հազկերտի երկրորդ տարում, իսկ Խորենացու մոտ՝ 6-րդ տարում: Խորենացին հավատարիմ է մնացել այն հնարին, որը կիրառել է առաջին ցանկը (առաջին գլխի) մշակելիս, այսինքն՝ վերցնում է պատրաստի թիվը և բաշխում ճյուղի անդամների միջև յուրովի, փաստական ճյուղին համապատասխան, որը չգիտես ինչու ուզեցել է վերագրել այս կամ այն թագավորի ժամանակներին:

---

344 թվականին (III, 8):

2. Վարազդատը գահ է բարձրացել Շապուհի 55-րդ տարում (այսինքն՝ 346 + 55 = 401) Թեոդոսիոսի ողորմածությամբ, վերջինիս 20-րդ տարում (III, 40): Թեոդոսիոսը սկսել է կառավարել 379 թվականից, դրա համար էլ 401 թվականին կլինի ոչ թե 20-րդ, այլ 22-րդ տարին հարկ է «ի քսաներորդ ամի» կարդալ «քսաներորդ երկրորդ» (նույն տեղում): Ըստ Խորենացու Թեոդոսիոսը կառավարել է 26 տարուց ավելի. այժմ էլ Խորենացին նրան դնում է Արշակի օրոք (III, 41):

3. Խոսրով վերջինի երրորդ տարուց մինչև Հազկերտ 2-րդի 2-րդ տարին 51 տարվա ժամանակամիջոց է, որը գրավում է Սահակի կաթողիկոսությունը (III, 67), այսինքն՝ 413 թվականից մինչև 464 թվականը:

4. Կառավարիչ Շապուհի մեկնումը Հայաստանից Հազկերտի հիվանդության հետևանքով տեղի է ունեցել հոր մահվան տարում (III, 56):

ա) Ըստ III, 46-րդ գլխի Արշակը հինգ տարի կառավարել է ամբողջ Հայաստանը և 2,5 տարի նրա մի մասը, իսկ Խոսրովը կառավարել է ընդամենը 5 տարի (III, 50): Այս վերջինի մասին Մամիկոնյանցը չգիտի և ժյուրիմացաբար Խոսրովին է վերագրել Արշակի տարիները:

բ) Մամիկոնյանցի մոտ 5 (՞) և նրա հայր Շապուհի առջև հարցական նշան է դրված, երբ 51-րդ գլխում Արտաշիրի մասին պարզ ասված է. «յետ եօթանասուն զթագաւորութիւն հորն կալաւ զտէրութիւն ամս 4»:

Պարսկական ժամանակագրությունը Խորենացին ճևել է ըստ հայկականի: Ներսեհից մինչև Հազկերտ տարիների մեջ Խորենացու և երկրորդ գլխի միջև գրեթե լիակատար համապատասխանություն է, որոնք տարաձայնվում են սոսկ առաջին Սասանյաններ Արտաշիրի և Շապուհի ժամանակը նշելիս: Խորենացին դեմ է նետել 30-35 տարի նույն կշռադատումներով՝ հաղիպեցնելու Հազկերտին Վռամշապուհի հետ:

Թույլ տալ հակառակ հարաբերություն և երկրորդ գլխի թվերը արտածել Խորենացուց՝ բանասերի համար դժվարին գործ է: Երկրորդ գլխի՝ հեղինակի պատմական հիմքից զուրկ տվյալները հասկանալի են դառնում այդ նույն գլխում բյուզանդական կայսրերի արհեստական ժամանակագրության հետ նրանց կապի մեջ: Խորենացու մոտ բյուզանդական ժամանակագրությունը ճիշտ է, իսկ պարսից ու հայոց թագավորների ժամանակագրությունը պատմական քննադատության չի դիմանում: Այն առաջ է ընկնում ընդհանուր առմամբ 20-30 տարով, մանրամասներում բանը նվազ գոհացուցիչ է: Դժվար է ենթադրել ծանոթություն Խորենացու հետ, էլ ավելի դժվար է նրա ազդեցությունը տեսնել այնտեղ, որտեղ առկա են այնքան տարաձայնություններ ու շեղումներ նրանից: Խորենացու հեղինակությունը սովորական հեղինակություններից չէ: Նրա փառքը, բացառապես հիմնված նրա երկասիրության ներքին, անվիճելիորեն երևելի հատկանիշների վրա, հիմնված, փաստերի առատությամբ հաղորդ, լակոնիկորեն սեղմ, բայց տաք զգացմունքով ջերմացած շարադրանքի վրա՝ հռչակվել է «Հայոց պատմության» առաջին իսկ հայտնությամբ: Ոչ մի հայ գրող չէր խիզախի հորինել ժամանակագրություն հակառակ նրա ժամանակագրության, առավել ևս խեղաթյուրել նրա տվյալները. բայց դրա կարիքը ամենևին էլ չկար Խորենացու համակարգի կուտ կառուցվածքի դեպքում: Վերջապես, մեզ հասկանալի է հարձակողական երթը դեպի ճշմարտության կողմը, իսկ հակառակը միտումնավոր դիտավորությունների (որոնց մասին տվյալ դեպքում ոչ մի խոսք չի կարող լինել) բացակայության պայմաններում առավել, քան պրոբլեմատիկ է: Քննարկված ժամանակագրություններում հաջորդականությունը կարելի է սահմանել միայն ի վնաս Խորենացու (8):

Այդ դրույթը ճշմարիտ է նաև Մամիկոնյանների ծագման մասին պատմության վերաբերյալ: Խորենացու մոտ այդ պատմության առավել բարդ և ակնհայտորեն ածանցական բնույթը չի դժվարացնի ոչ մի բանասերի, այն դնելու երկրորդ գլխի ենթակայության տակ: Ամենից առաջ, ճշանակությունից զուրկ չէ, որ Խորենացու մոտ այն տեղադրված է հենց այնտեղ, որտեղ գտնվում է՝ Բ գլխում: Այստեղ պատմվում է Մամիկոնյանների մասին Դիոկղետիանոսի գահ բարձրանալուց առաջ, Կարոսի դեմ 284 թվականին Կռռնակի ճեռնարկած արշավանքի առթիվ: Խո-

բնագիրն այն շարադրում է 285 թվականի տակ, Արտաշիրի մահից առաջ և այդ ժամանակին է վերագրում նախահայրերի ժամանումը հակառակ երկրորդ գլխի, որտեղ այն դրվում է Արտավանի գահակալության ժամանակ: Ճի՛շտ է հասկացել Խորենացին տեքստը վերը առաջադրված ստուգաբանության իմաստով: Էական տարբերությունը նրանում է, որ բնագրի Կոռնակի և Մամիկի փոխարեն Խորենացու մոտ հայտնվում է Մամգոն և Բդդոխ: Առաջինի մեջ հեշտությամբ են իմացվում աղբյուրի երկու անունները. Խորենացին դեն է նետել պահլավական «-ակ» վերջավորությունը և հիմքերը կցել է՝ Մամ (ակ) + Կոն(ակ) = Մամկոն, իսկ հետո՝ Մամգոն նախորդող մ-ի ազդեցության տակ: Համանման կերպով կազմվել է նաև Բդդոխ անունը: Եթե գնալու լինենք Խորենացու որոշ քննադատների հետքերով, դժվար չէ դրա բաղադրամասերը գտնել Սեբեոսի մոտ: Զորագլուխը, որը մեծ խաքանի կողմից ուղարկվում է օգնության հեփթաղներին ընդդեմ Սմբատ Խոսրով Շումի, կրում է «Ճենբուխ» անունը[1]. նույն խաքանի մյուս զորագլխի անունը սեռական հոլովով հնչում է «Ճնպետխոյ»[2]: Ուղղականը կարող է լինել «Ճնպետուխ», որը պետք է ընդունել որպես «Ճենբուխի» աղավաղում: Այդ դեպքում այն միևնույն բաղադրությունն ունի «Ճենբուխի» հետ և նշանակում է «չինական կամ չինացի բուխ», «չինացի բուխ». Խորենացու «Բդդոխը», եթե բուլացնենք ձայնավորը առաջին վանկում շեշտադրությունից առաջ, տարրալուծվում է «բուդ»-ի և «դոխ»-ի, արհեստականորեն կազմված բառ Սեբեոսի մոտ՝ երկու անունների միացման միջոցով: Բուխ + դուխ = բուխդուխ = բխդուխ = բդդոդ (խ= ղ դ-ից առաջ, և ու = 0 շեշտադրության տակ): Այն բանից հետո, երբ Խորենացին միաձուլել է Մամակ և Կոնակ անունները, որպեսզի ավելի ցցուն ցույց տա «Մամիկոնեաց» [բառի] ստուգաբանությունը, նա ստիպված է եղել անուն գտնել նաև մյուս եղբոր համար:

Մամիկոնյանների նախահայրերը ըստ երկրորդ գլխի միայն մայրական կողմից են եղել չինական կայսեր եղբայրները: Խորենացու մոտ նրանք նրա «դայեկորդիք»-ն են, այսինքն՝ «մոր որդիները», որ միևնույնն է: Կայսրը Խորենացու մոտ կոչվում է Արբոկ Ճենբակուր, իսկ երկրորդ գլխում միայն Ճենբակուր: Այս վերջին անունը չպետք է շփոթել իրանական միահնչյուն *παχόριος* -ի հետ: Այն ոչ այլ ինչ է, եթե ոչ հին արաբական հեղինակների «faghfur», baghbur, baghbugh (Խորենացու մոտ՝ բդդոդ = բդդոդ?) տիտղոսի հայացված ձևը, որով նրանք նշում էին չինական կայսրերին[3]: Neumann-ը այն համարում է չինական Tsen-tze-ի պարսկական թարգմանությունը, որը

[1] Սեբեոս, էջ 66:

[2] Անդ, էջ 69:

[3] Richthofen, China, I, p. 523, 3, ևսև Justi, Iranisches Namenbuch.

նշանակում է «երկնքի որդի», bag և fur-ից, ինչպես երևում է, Խորենացու ազդեցության տակ, ըստ որի Ճենըրակուր նշանակում է «ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան» (Բ, 81) (9): Իսկ Խորենացու Արրոկը, հավանաբար Բակորի պարզ գրաշրջությունն է (հմմտ. Գոմեր-Սերոգ, Թիրաս-Սիրաք): Խորենացու զրույցի վերջին վիպական մասը կատարելապես համընկնում է երկրորդ գլխին:

«Ուխտ խաղաղութեան մերոյ, ասէ, հաստատուն կայցէ ի միջի մերում, զի երդուեալ եմ առ նոսա, զի նոքա մի մեզանից, այլ եւս տացեն զնոսա ի մուտս արեւու և յեզր երկրի ի տեղին յայն, որ արեգակն ի մայր մտանէ»:

«Վասն զի երդուեալ էր նմա (Մամգունայ) հօրն իմոյ ի լոյս արեգական. այլ վասն անխոով զքեզ առնելոյ հալածեցի զնա յաշխարհէս յիմմէ յեզր երկրի և ի մուտս արեւու որ հաւասարէ նմա և արդ մի լիցի պատերազմ ընդ իս և ընդ քեզ»:

Սեբեոս, գլ. II, էջ 13 **Խորենացի, Բ, 81**

Մամիկոնյանների չինական ծագման մասին գիտե նաև Փավստոսը: Երևի նրան է ակնարկում երկրորդ գլխի հեղինակը. «Ազգ կայ մի մեծ, զորմէ ասէն եթէ ի ձերմէ աշխարհէն գնացեալ»: Բայց որ Խորենացին վերապատմում է երկրորդ գլխի հիման վրա, պարզորոշ երևում է բերված բառերի համադրումից: Պատմիչը չէր կարող վերցնել դրանք Փավստոսից, եթե թույլ տանք անգամ, որ կորսված գրքերում ինչ-որ նման մի բան շարադրվել է. բնորոշ բառերը պատկանում են երկրորդ գլխի հեղինակին. նա դրանք անճամբ լսել է «յառնէն մեծէ», չինական դեսպանից, և պատմում է նրա իսկ բառերով: Ունեցե՞լ են, արդյոք, որևէ վերաբերություն «Ճենաց գուսանների երգերը» Մամիկոնյաններին, և ա՞յդ է, արդյոք, ի նկատի ունեցել պատմողը, որը հետևցրել է լսողը՝ դա դեռևս հարց է: Բայց ընդհանուր առմամբ պատմվածքի մեջ ոչ մի անհավանական բան չկա:

Դիվանագիտական հարաբերությունները Չինաստանի և Պարսկաստանի միջև ուժեղանում են հատկապես VI դարի երկրորդ կեսից: Հիրկանիայի ժողովրդի երիտասարդ պետությունը, որն առաջացել էր այդ դարում Տիրեթի և Իրանի միջև ընկած տարածքում, այժմյան ռուսական անդրկասպյան մարզերում, սպառնալիք էր Պարսկաստանի և Չինաստանի համար: Դիզաբուլի օրոք, որը հայտնի էր իր հարաբերություններով Հուստինիանոսի հետ, այն սպառնում էր նրանց գոյությանը: Ընդհանուր թշնամու վտանգավոր հարևանությունը միավորել էր երկու կայսրությունները, որոնք այդ ժամանակից սկսեցին համախոհի դեսպանություններ փոխանակել: Հավաստի տեղեկություններ կան մի շարք այդպիսի դեսպանությունների մասին մինչև Հազկերտ [III]-ը՝ վերջին Սասանյանը,

որը 638 թվականին դիմել էր Չինաստանի օգնությանը արաբների դեմ, ինչպես հաղորդում է Տաբարին: Ի՞նչ զարմանալի բան կա, եթե երկրորդ գլխի հեղինակը հանդիպեր մի որևէ չինական դեսպանի Խոսրովի արքունիքում: Դեսպանը նրան ինչ-որ բաներ է պատմել և հեղինակը այն յուրովի է հասկացել՝ ի նկատի ունենալով Մամիկոնյանների մասին ավանդությունը: Այն հախուռն և երբեմն հեղափոխական ոգին, որով այդպես այբի են ընկնում Մամիկոնյանները, սկսած Փավստոս Բուզանդի հերոսներից մինչև մարող տոհմի վերջին փառապանծ ներկայացուցիչը Վևոնդ պատմիչի մոտ, ի հակադրություն տոհմիկ հին իշխանների՝ Թագրատունիների պահպանողականության, անվիճելիորեն վկայում է թարմ, օտար արյան մասին: Եթե չինական ծագումը քիչ է հավանական, ապա այն պարտադիր էլ չէ: Բազմաթիվ ցեղեր ու ժողովուրդներ էին բնակվում հայերի հարևանությամբ արևելքում. երկպառակտչական խռովությունների հետևանքով որևէ մի իշխանական տոհմ կարող էր վանվել Հայաստան:

Երկրորդ գլխից Խորենացու կախվածության փաստը ամրապնդում է պաշտպանվող դրույթը այդ գլխի, և նրա միջոցով նաև «Նախնական պատմության» առաջին գլխի կապը Հերակլի արշավանքի պատմության հետ, և իր հերթին հաստատվում է նրանով: Այդ գլուխներում վճռականապես ոչ մի այնպիսի բան չկա, որը ստվեր ձգեր Մեբեռոսի դեմքին: Լեզվի և ոճի ընդհանության ներքին համերաշխությունը առաջին գլխի և Մեբեռոսի միջև երևան է հանել պրոֆ. Խալաթյանցը: Որքան ավելի խորն ես ընթերցում «Արշավանքի պատմությունը» և համեմատում առաջին գլխի հետ, այնքան ավելի պարզորոշ ես որսում ոճի զուտ Մեբեռոսյան երանգները վերջինիս մեջ: «Արշավանքի պատմության» պարզ ու ուղիղ խոսքը ընդհանուր առմամբ ընթանում է հարթ ու անկաշկանդ. պահ առ պահ ենք միայն նրանում նկատում տատանում՝ մերթ դեպի խոսակցական կառուցվածքի (համմտ. էջ 39-44՝ Մուշեղի մասին), մերթ դեպի ճոռոմաբանության (էջ 35, 104-151) կողմը: Այդ առումով նա իրեն չի դավաճանում նաև առաջին գլխում (համմտ. օրինակ, «շատ ես դու և յերամակէ շանց» ներածության էջ 4-ի հետ, կամ Հայկի ճակատամարտի սեթևեթ նկարագրության հետ՝ «և կանգնէ զկապարճս ի գետնոյ...»): Ոճի հարցը ընդհանրապես շատ փափկանկատ հարց է: Բայց պրոֆ. Խալաթյանցի կատարած երկու համադրություններ[1] այնքան ուժեղ են, որ հաջողությամբ կարելի էր մերձեցնել «Նախնական պատմությունը» Մեբեռոսի երկին, անգամ այն դեպքում, եթե այն մեզ հասներ նրանից անջատ տեսքով:

Երկրորդ գլխում պատմվածք քիչ կա, բայց այդ քչում էլ ճշվում են

[1] Ի նկատի ունենք «քափեցից իսկ այսօր ի քեզ զկապարճս» և Հայաստանի սահմանները առաջին գլխում և Պատմության մեջ, էջ 37:

Սեբեոսի հետ ընդհանուր գծեր (համմտ. էջ 93՝ Մալխասյանցի գրքույկում): Ինչ վերաբերում է համաժամանակ լինելուն (սինխրոնիզմին), ապա այն Սեբեոսի ոգով է, որը «Արշավանքի պատմության» մեջ ուրիշ տոմար չգիտի էլ: Իրադարձությունները միշտ որոշվում են պարսից կամ բյուզանդական այս կամ այն թագավորի տարով: Միայն մեկ անգամ է հիշատակվում մեր թվականությունը՝ «յամի Կենարարին և Փրկչին մերոյ»[1]: Այդ տեղը հետաքրքիր է նաև նրանով, որ երևան է հանում հեղինակի իմացությունը, որ Դիոկղետիանոսը «թագաւորէ երեք ընկերօք»[2], որը չի կարելի համաձայնեցնել համաժամանակային աղյուսակի ցուցման հետ: Դրանում կարելի էր տեսնել լուրջ փաստարկ երկրորդ գլխի Սեբեոսին պատկանելու դեմ: Բայց այդ վկայակոչման ճշգրտությունը երկու դեպքում էլ ցնցում է նրանով, որ նշված տեղը գտնվում է հայ հոգևորականության Կոստանդիանոսին հղված պատասխան թղթում: Սեբեոսը բերում է այդ թղթի պատճենը, որտեղ գործը ամենևին Դիոկղետիանոսին չի վերաբերում, և նա կարող էր այլից փախցնել այդ հանգամանքը:

Սեբեոսի տեքստի հետ չեն կապակցվում Սոկրատից բերված անկապ քաղվածքները: Դրանք բնագրի մեջ թափանցած մեկնություններ են. «Ի սուրբ Կոստանդիանոսէ սկսանի և մինչև ի փոքր Թէոդոս զանսրբոց և զսրբոց գործքն և զհայրապետացն զուղղափառութիւնս» արտագրված է Սեղբեստրոսի վարքից[3], «Ցուլիանոս և Գալիանոս»՝ Փոքր Սոկրատից[4]:

«Հայոց նախնական պատմութեան» հարցը, թվում է, սպառված է և մենք դեմ չենք այն այդպիսին համարելու Սեբեոսի և Խորենացու վերաբերությամբ: Բայց դրանով գործը չի ավարտվում. դիմակը դեռևս հանված չէ «Նախնական պատմության» հեղինակի դեմքից. հարցի կենտրոնն ընկած է «Նախնական պատմության» սքողված առնչություններում Փավստոս Բուզանդի հետ: Հարցը չի կարող սպառված համարվել ավելի վաղ, քան երբ կսահմանվի «Նախնական պատմության» իսկական տեղը նրա կողմից շոշափվող երեք պատմական երկերի միջև և կպարզաբանվեն վերջիններիս փոխհարաբերությունները:

Այն կարծիքը, որ Փավստոսի աշխատանքի կազմի մեջ մտել է ինչ-որ «Նախնական պատմություն», թելադրված այն պակասավոր տեսքով, որով հասել է մեզ նրա երկը, գերազանցապես հիմնված է հեղինակի իր՝ Փավստոսի խոսքերի վրա: Նման հիմնավորման դեպքում այդ կարծիքը դեռևս հեռու է պարտավորեցնելու իր կողմնակիցներին ընդունելու, որ Փավստոսի

[1] Սեբեոս, էջ 130: Չեռագրում տարեթիվը պակասում է:

[2] Անդ:

[3] «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմություն և Պատմութիւն վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ», Վաղարշապատ, 1897, էջ 692:

[4] Անդ, էջ 218:

ենթադրյալ առաջին գիրքը ճիշտ և ճիշտ պարունակել է Մարաբասի «Նախնական պատմությունը», կամ գեթ նրան նման ինչ-որ բան: Դրա համար էլ հարկ եղած դեպքում հետազոտողները շրջանցում են այն և ըստ էության մեզ համար էլ ցանկալի կլիներ որևէ կերպ կռծկել այն մյուսների նման: Սակայն, կա փաստ, որը վերացնում է ամեն մի կասկած այն մասին, որ Փավստոսը իսկապես ունեցել է առաջին գիրք, և որ նրանում շարադրված է եղել Հայաստանի «Նախնական պատմությունը» կատարելապես համանման նրան, որ կա Սեբեոսի մոտ:

Բոլորին հայտնի է, VI դարի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին օգտվել է ինչ-որ «*τῶν Ἀρμενίων ἱστορία*»-ից, որը իրավացիորեն մերձեցնում են մեր Փավստոսի հետ, բայց չգիտես ինչու ոչ ոք այդ հարցը քննարկելիս չի օգտվել այն հանգամանքից, որ այդ նույն Պրոկոպիոսը այդ նույն Հայոց պատմությունից գիտեր հետևյալը.

«Βασιλεὺς μὲν ὁμογενὴς πάλαι τοῖς Ἀρμενίοις καθίστατο, ᾗπερ τοῖς ἀναγραψαμένοις τῶν ἱστοριῶν τὰ ἀρχαιότατα δεδιήγηται. ἐπειδὴ δὲ Ἀλέξανδρος ὁ Μακεδὼν τὸν Περσῶν βασιλέα καθεῖλε, Πέρσαι μὲν δεδουλωμένοι ἡσυχῇ ἔμενον, Πάρθοι δὲ Μακεδόσιν ἐπαναστάντες καὶ τῷ πολέμῳ περιγενόμενοι ἐξήλασάν τε αὐτοὺς ἐνθένδε καὶ τὰ μέχρι ἐς Τίγριν ποταμὸν ἔσχον ὑπ᾽ αὐτοῖς τε τὸ λοιπὸν ἐς ἔτη πεντακόσια ἔκειτο τὰ Περσῶν πράγματα ἕως Ῥωμαίοις ὁ Μαμαίας Ἀλέξανδρος βασιλεὺς γέγονε. καὶ τότε τις τῶν ἐν Πάρθοις βασιλέων τὸν ἀδελφὸν τὸν αὐτοῦ Ἀρμενίοις βασιλέα κατεστήσατο Ἀρσάκην ὄνομα ὥσπερ ἡ τῶν Ἀρμενίων ἱστορία φησί. μὴ γάρ τις Ἀρμενίους τοὺς Ἀρσακίδας οἰέσθω εἶναι. εἰρήνη γοῦν αὐτοῖς ἐς ἔτη τὰ πεντακόσια κατὰ τὸ ξυγγενὲς διαγέγονε. καὶ ὁ μὲν τῶν Ἀρμενίων βασιλεὺς ἐν Ἀρμενίᾳ τῇ μεγάλῃ καλουμένῃ καθῆστο, τῷ Ῥωμαίων αὐτοκράτορι ἐκ παλαιοῦ ὑποχείριος ὤν» և այլն:

«Անցյալում հայերը թագավոր են ունեցել իրենց ցեղից, ինչպես այդ մասին վկայում է հնագույն պատմությունը: Երբ Ալեքսանդր Մակեդոնացին գահընկեց արեց պարսից թագավորին, պարսիկները հնազանդվեցին և հանդարտվեցին. իսկ պարթևները ապստամբեցին մակեդոնացիների դեմ, և հաղթելով կռվում, վռնդեցին նրանց և տիրացան մինչև Տիգրիս գետն ընկած հողերին: Այսուհետև նրանցից էր կախված Պարսկաստանի ճակատագիրը 500 տարվա ընթացքում, ընդհուպ մինչև հռոմեացիների կայսր Մամայայի որդի Ալեքսանդրի գահ բարձրանալը: Այդ նույն ժամանակ պարսկական թագավորներից մեկը Հայաստանում թագավոր կարգեց Արշակ անունով յուր եղբորը, ինչպես այդ մասին պատմվում է «Հայոց պատմության» մեջ: Եվ, սակայն, չպետք է կարծել, որ Արշակունիները սերում են հայերից: 500 տարվա ընթացքում նրանց միջև խաղաղություն էր տիրում շնորհիվ ազգակցության: Հայոց թագավորը նստում էր այսպես կոչված Մեծ Հայքում, հնուց ի վեր գտնվելով հռոմեական կայսրերի հնազանդության ներքո» և այլն:

Procopii de Aedificiis, III, 1, ed. Nieburii, p. 245.

Փավստոսի մասին մեր սուղ գիտելիքների պայմաններում Պրոկոպիոսի այս տողերը արտակարգ կերպով արժեքավոր են: Դրանք վրիպել են հետազոտողների ուշադրությունից, մինչդեռ այնքան կարևոր են, որ ժամանակին միանգամից վերջ կտային Խորենացու մոտ եղած Մարաբասի

գրքի դեմ ուղղված բոլոր կասկածներին: Պրոկոպիոսից բերված ամբողջ քաղվածքը, բացառությամբ բերևս առաջին դարձվածքի[1], ամբողջությամբ վերցված է «Հայոց նախնական պատմությունից»: Ոչ մի տեղ, ոչ մի գրականության մեջ չենք գտնի, որ Արշակունիները թագավորել են 500 տարի: Դա միայն մեզ մոտ է: Պարթևական թագավորի կողմից նշանակվող «Նախնական պատմության» Արշակն է և Խորենացու Վաղարշակը:

μή γάρ τις Ἀρμενίους τοὺς Ἀρσακίδας οἴεσθω εἶναι արժեքավոր նկատողությունը, նեռված «Նախնական պատմության» դեմ, որտեղ, հավանաբար, Արշակունիներին տրվել է հայկական ծագում, փայլուն կերպով արդարացնում է Մարսյակի առասպելի պակասավորության մասին կռահումները[2]: Եթե 500-ամյա տիրակալությունը տևել է մինչև Մամայայի որդի Ալեքսանդրը, այսինքն՝ Ալեքսանդր Սևերոսը (222-235), ապա, նշանակում է, որ քննարկվող հուշարձանում Արշակունիների սկիզբը բարձրացվում էր ավելի վաղ ժամանակների, քան 60 տարին Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո:

Շատ հետաքրքիր է ճշտիվ սահմանել Պրոկոպիոսի «Հայոց պատմության» առնչությունները Փավստոս Բուզանդի հետ: Ինչ եզրակացությունների էլ որ գալու լինենք այդ դեպքում, միևնույնն է, իր հիմքում հարցը մնում է անփոփոխ. *τῶν Ἀρμενίων ἱστορία* Փավստոսի պատմությունն է: Փավստոսի և հատկապես «Նախնական պատմության» ճակատագիրը կրկին մթագնում է: Եթե Խորենացու և Սեբեոսի առնչությունները պարզ են, ապա Սեբեոսի և Փավստոսի կապը ընկղմվում է մշուշի մեջ:

Այն կարելի է ցրել, եթե փոխենք այն տեսակետը, որով դիտել են Սեբեոսի «Նախնական պատմությունը»: Մեր դատողությունները պտտվել են այն սահմաններում, որ գծագրել է հեղինակն ինքը: Իսկ այժմ, հրաժարվելով խոստաբանությունից և հուշարձանի այն պատմությունից, որ ինքն է առաջարկում, վերաբերվենք «զանստորագրեալ ժամանակ»-ի նկարագրություններին պարզապես որպես գրական երկի՝ նրանք ավելի լավ կներկայացնեն մեզ իրենց ծագումն ու պատմությունը:

Խոստաբանությունից հատակորեն չի երևում, ի՞նչ է մտադիր հեղինակը պատմելու, «հայելով ի մատեանս Մարաբայ փիլիսոփայի»: Դատելով

---

[1] Ἀρχαιότατα ἱστορία-ի տակ Պրոկոպիոսը, երևի, նկատի ունի Դիոդորոսին: Այդ ժամանակ ὁμογενὴς βασιλεὺς βαρζάνης թագավորն է, որն ապրել է Ներոնի օրոք. «μετὰ δὲ ταῦτα πολλοῖς πλήθεσιν εἰς τὴν Ἀρμενίαν ἐμβαλὼν.. κατεπλήζατο τοὺς ἐγχορίους, διόπερ ὁ βασιλεὺς αὐτῶν βαρζάνης ὀρῶν ἑαυτόν οὐκ ἀξιόμαχον ὄντα μετὰ πολλῶν δώρων ἀπήντησε». lib. II, cap. 1.

[2] **Н. Марр, «О начальной истории Армении» Анонима.**

առաջին ներածական խոսքերի իմաստից, այնտեղ մտել է նաև Հայկյանների ծագումնաբանությունը, բայց գրքի ընկարագրությունից ստացվում է, որ այն կարծես թե պարունակել է միայն առաջին թագավորների մասին արձանագրությունը[1]: Դատելով երկու հատվածների ընդհանուր բնույթից, մենք իրավունք ունենք միացնելու դրանք: Մարսյակի առասպելը իր բովանդակությամբ այդպես էլ հարում է ծագումնաբանությանը. այն պատույտ է տալիս «հենց նույն բարձրաբերձ լեռների շուրջը»: Լեռները անվանում են ստանում Մարսյակից ճիշտ այնպես, ինչպես Այրարատը՝ Արայից կամ Արմավիրը Արամախից. վերջապես, բովանդակությամբ այն ոչ պակաս է շոշափում «Արամենակի» ազգը, որքան Արշակունյացը: Երկու հատվածը պետք է դիտել որպես միասնական և այն երկուսն էլ մտնում են Մարաբա փիլիսոփայի գրքի մեջ:

Խոսում են Մարաբայի գրքի ասորական ծագման մասին[2]: Այդ կարծիքը, ներշնչված փիլիսոփայի ասորական անունով, քիչ է համոզիչ: Այն աստվածաշնչային գծերը, որոնք մատնանշվում են, վաղուց են դադարել սոսկ ասորական գրականության ստացվածքը լինելուց: Եթե Մարաբասը կամ Կաղմոսը ասորական անուններ են, բայց և այնպես նրանք հունականացված են: Ըստ առասպելի, արձանագրությունը եղել է հունարեն լեզվով: Բայց այդ բոլորը այնքան էլ կարևոր չէ: Հուշարձանն իր ներքին՝ բովանդակային տվյալներով, ավելի շատ հակամետ է դեպի Հյուսիսային Հայաստանը: Ճիշտ է, երկրի բնակեցումը սկսվում է հարավից: Հայկյանների շարժումը, Բաբելոնից ելնելուց հետո, ուղղվում է դեպի Արարադյան սարահարթը և այստեղից Հարքի վրայով անցնում է Այրարատյան մարզ[3]: Բայց դրանում ավելի շուտ պետք է տեսնել մշակույթի հարավից դեպի հյուսիս տեղաշարժման ճշմարտացի արձագանք, քան այդ հիման վրա ավանդությանը հարավային ծագում վերագրել: Ավանդությունում շոշափվող անվանարկումը վերաբերում է Հյուսիսային Հայաստանին: Անգամ Շամիրամին տեսնում ենք Այրարատում, ում-ում, բայց նրան կարելի էր թողնել հարավում, որտեղ նրա անունը ժայռածերպերում պահպանվել է առայսօր: Առավել ևս պակաս հիմնավոր է այդ կարծիքը Արշակունիների պատ-

---

[1] Հետաքրքիր է, թե ինչպես է Խորենացին վերաբերվում «Նախնական պատմության» երկիմաստ տեղերին: Նրա մոտ ևս պարզ չէ, թե Հայկյանների ծագումնաբանությունը նա գրքի՞ց է քաղում, թե արձանագրությունից, որ փոխագրվել է Վաղարշակի հրամանով. «յորմէ (ի ժառեն՞ն թե յարձանէ) մեր հաւատաի» և այլն (Ա, 9):

[2] H. Marr, նշված հոդվածը:

[3] Սեբեոսի մոտ «Նախնական պատմության» մեջ և Խորենացու մոտ խոսարեն տարբերված է Այրարատը Արարադից:

մության վերաբերմամբ: Նրանց նախամայրը ապրում է Ազատ լեռան ստորոտին: Պատմականորեն նրանք, ինչպես գիտենք, կապված են Հյուսիսային Հայաստանին, որտեղ և նրանց նստավայրն էր: Այդ ամենով հանդերձ, ճիշտ է սակայն և այն, որ Արշակն ու Վաղարշակը ըստ «Նախնական պատմության» նստավայր ընտրում են Մծբինը, ակնհայտորեն ասորական մի քաղաք, որը երբեք Արշակունիների իշխանության տակ չի եղել:

«Նախնական պատմությունը» ըստ էության, անվավեր գործ չէ, ինչպես կարծում են[1]: Այն ներկայացնում է ժողովրդի հիշատակների սուղ պատառիկներ երկրի հին ճակատագրի մասին:

Ելնելով Սանատրուկի անունից, որը դեր է խաղացել «Նախնական պատմության» ճակատագրում, պետք է ենթադրել, որ վերջինս սաղմնավորվել և ձևավորվել է Եփրատի ակունքներում, թագավորի՝ «պալատների» տիրոջ փառապանծ մայրաքաղաքում, Դարանաղյաց և Եկեղյաց գավառներում՝ Հայաստանի կենսունակ ու գործունյա մասերում, երբեմնի հարուստ պատմական հուշարձաններով: Այնտեղ էին գտնվում ինչպես թագավորական, այնպես էլ կաթողիկոսական տան դամբարանները: Զարմանահրաշ «պատմությունը» ընկնում է գիտնական Մարաբայի ձեռքը: Ասորի է նա, թե ասորական անունով հայ, միևնույն է: Բայց նա ծնունդով Մծուրքից է[2]: Փիլիսոփան իր հետ արժեքավոր հուշարձանը տանում է Ասորիք, Մծբին: Եթե նա իսկապես փիլիսոփա է, ապա պետք է որ պատկանած լիներ որևէ մի դպրոցի. այդ դեպքում աշակերտների տակ հնարավոր է հասկանալ ընդհանրապես հետևորդների, անգամ ժամանակով միմյանցից հեռու: Մարաբայից հետո նրա աշակերտների շրջանում «Նախնական պատմությունը» կերպարանափոխումներ է կրում: Պատմությանն իրազեկ դպիրները վերացնում են Արշակունիների մասին ավանդազրույցը և որոշ չափով փոխարինում այն Եվսեբիոսի պատմությամբ: Այն, ինչ որ կատարելապես պարզ էր գիտնական ուսուցչի համար, մութ է դառնում նրանց համար, անհասկանալի «Մծուրքը» տեղը զիջում է Մծբինին. այնտեղ են փոխադրվում նաև Սանատրուկի պալատները, մի թագավորի, որը միգուցե աչքով իսկ չէր տեսեր Մծբինը. նրանց անգամ թվում է, որ ուսուցիչը՝ Մարաբան ինքն է գտել պատմությունը, այն էլ պալատի փլատակներում: Հայոց գրականությունը կարդացած լինելը թույլ է տալիս նրանց ավանդազրույցների հավանական և առավել պատշաճ հեղինակ համարել հայոց պատմիչներից հնագույնին՝

---

[1] H. Manp, նշվ. հոդվածը:

[2] Մծուինացի փոխանակ Մծուրնացի ընթերցումը (H. Manp, նշվ. հոդվածը) որքան որ հնարավոր է տառագրորեն, այնքան էլ անթույլատրելի է ըստ բուն կոահման նշանակությամբ: Հավանակա՞ն է, արդյոք, որպեսզի գրիչը հանրահայտ Մծբին քաղաքի փոխարեն դներ Մծուրք, անծանոթ կամ քիչ ծանոթ և վաղուց երկրի երեսից վերացած մի քաղաք:

Ագաթանգեղոսին: Այստեղից արդեն մեկ քայլ է դեպի միառումնավոր արձանագրությունը, ինչպես բացատրեցինք վերը: Եվ ահա թխվում է տխրահռչակ խոստաբանությունը: «Նախնական պատմությունը» առաջին իսկական տարբերակով, որ մենք հաճույքով կանվանենինք Մծուրքի ի տարբերություն երկրորդի՝ Մծրինի, մտել է Փավստոս Բուզանդի առաջին գրքի մեջ: Սերեոսի մոտ եղած արձանագրության պատմությունը, որքանով որ այնտեղ շոշափվում է Ագաթանգեղոսի անունը, Փավստոսին հայտնի չէ: Չէ՞ որ ինքն իսկ ասում է նախաբանում. «Վասն զի է ինչ մեր պատմութիւն՝ որ առաջին է, և է ինչ՝ որ վերջին է. իսկ որ միջին ինչ եղև, այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ»[1]: Միջին պատմություն ասելով Փավստոսը հասկանում է, ինչպես գիտենք նույն նախաբանից, Թադեոսի քարոզչությունը և Գրիգոր Լուսավորչի առաքելությունը, այլ կերպ ասած Լաբուբնայի և Ագաթանգեղոսի երկերը: Պարզ է, որ Փավստոսը դեռևս չգիտի արձանագրության կամ «Նախնական պատմության» հեղինակ Ագաթանգեղոսին: Հասցրե՞լ էր, արդյոք, Փավստոսի օրոք *ὁ ἀγαθάγγελος* վերածվելու Ագաթանգեղոսի անճանաչելիությանը - դա ևս մի հարց է, որին կարելի է միայն ժխտական պատասխան տալ: Այդ հիման վրա հնշտ էր հերքել դեռ ոչ վաղ փորձը՝ համադրելու Սերեոսի մոտ Ագաթանգեղոսի պատմությունը Փավստոսի կորսված գրքի հետ[2]: Իսկ այժմ, երբ այդ փորձը արդարացված է այլ ճանապարհով, «Նախնական պատմության» ճակատագիրը և նրա կապը Փավստոսի հետ այլ լուսաբանում են պահանջում: Փավստոսի առաջին գրքերի երբևէ գոյությունը ժխտող գիտնականները վկայակոչում են այն բանը, որ դեռևս Ղազար Փարպեցին գիտե այն մեզ հասած տեսքով. մի՞թե այդքան վաղ անջատվել ու անհետացել են առաջին գրքերը: Փաստարկը շատ ծանրակշիռ է, բայց նաև դյուրին վերացվող: Փավստոսի պատմության բնագրի մասին վիճաբանությունը պետք է լուծել ոչ հօգուտ հայերեն լեզվի: Փավստոսի երկը գրված է, մեր կարծիքով, հունարեն լեզվով IV և V դարի սահմանագծին, ոչ վաղ մինչև Մեսրոպի կողմից հայոց այբուբենը կատարելագործելը: Իսկ հայերեն թարգմանությունը կատարված է V դարում, ընդ որում, անտեսված են առաջին գրքերը: Այդ հանգամանքը չպետք է մեզ շփոթեցնի. առաջին գիրքը վերաբերում էր հեթանոսական ժամանակաշրջանին, որի մասին հիշողությունները եկեղեցապետությունը խնամքով ջանում էր ոչնչացնել: Իսկ երկրորդ գիրքը, Փավստոսի հավատիացմամբ, սոսկ սեղմ ձևով տալիս էր Թադեոսի և Գրիգորի առաքելությունների պատմությունը, որն ավելորդ էր համարվում թարգմանել՝ գրականության մեջ բնագրերի առկայության պայմաններում: Ոգին, որ

[1] Փավստոս Բուզանդ, էջ 5:

[2] Н. Марр, նշվ. հոդվածը:

նշմարվում է հայկական տեքստում, այնքան անբարյացակամ՝ աշխարհիկ և ջատագովական՝ եկեղեցական իշխանության նկատմամբ, մուծված է բարգմանչի կողմից և նրա, որպես եկեղեցապետության ներկայացուցիչներից մեկի, տրամադրության արտացոլումն է: Հեղինակը՝ Փավստոսը, որն իր Պատմության մեջ հանույքով տեղ է տվել Արշակունի թագավորների մասին ամեն տեսակ զրույցների, չէր կարող այդպես փշոտ վերաբերվել նրանց: Թուրմոտ երանգը ընդհանրապես խորթ է ռոմանտիկական պատմվածքներին. իսկ ռոմանտիկական տարրը Փավստոսի մոտ քիչ չէ: Եկեղեցու շահերի այդպիսի նեղ ըմբռնում ունեցող մարդը, իհարկե, չէր բարգմանի առավել, քան անբարեպաշտ և անարժան թագավորների հեթանոս նախնիների մասին ավանդազրույցները:

Ղազար Փարպեցին օգտվել է հայերեն թարգմանությունից, ուստի և նրա անծանոթ լինելը առաջին գրքերին, որպես փաստարկ նրանց գոյության դեմ, կորցնում է ուժը: Բացատրվում է նաև այն տարօրինակ փաստը, որ հայ գրականության մեջ մինչև Սեբեոսը ոչ մի հիշատակություն չկա «Նախնական պատմության» մասին: Նա չէր կարող այդպես անհետք անցնել, եթե երբևէ եղել էր հայ գրականության սեփականությունը:

Փավստոսից անկախ, դիպվածով ասորական Միջագետք նետված «Նախնական պատմությունը» պահպանվել էր այնտեղ մինչև VII դարը: Այնտեղից այն անցել է Սեբեոսի ձեռքը, որը հասկանալով գտնված հուշարձանի ողջ արժեքը, նախակցեց այն իր պատմական երկին: Խորենացու մոտ Մարաբասի գիրքը ծագումնաբանորեն կապված է Մծբինյան կամ Սեբեոսյան խմբագրության հետ: Արձանագրության մասին, որպես Ագաթանգեղոսի աշխատության, Փավստոսին անծանոթ առասպելը ծանոթ է Խորենացուն: Այն պարզորոշ լսվում է Վաղարշակի կարգադրության մեջ՝ «յարձանի հրամայէ դրոշմել» սերունդների համար: Նա պատմությունից այնքան էր հասկանում, որ կարող էր մերժել Տրդատին և արձանագրությունը վերագրել Վաղարշակին: Խորենացին գիտե նաև Մծբինում Սանատրուկի եննդրյալ, Փավստոսի տեսակետից, պալատների մասին: Մծբին քաղաքի վերակառուցումը, որ նրա մոտ կատարում է Սանատրուկը («քակեաց և վերստին շինեաց պայծառագույն (զՄծբին»)[1], ոչ այլ ինչ է, եթե ոչ խոստաբանությունից ներշնչված ծանոթագրություն Սեբեոսի մոտ թագավորի կառույցների «ավերակների» վերաբերյալ:

Խորենացու մոտ Մարաբայի պատմության ծավալի ճիշտ ըմբռնման դեպքում, նրանում ոչ մի էական բան չի մնա, որը հնարավոր չլիներ քաղել Սեբեոսից: Ընդհանուրի կողմից ընդունված ծավալը հանգչում է մոլորու-

[1] Մեխսե Խորենացի, Գիրք Բ, 36:

թյան վրա: Ըստ Մարաբայի գրքի Խորենացին մտածում է շարադրել ին պատմությունը, «յորմէ ... երկրորդեմք ... ճգելով զրնիկ նախարարութիւնս մեր մինչև զքաղդեացւոց և Սարդանապալայ և ևս մօտագոյն»[1]: Նրա մոտ Սարդանապալը Պարույրի ժամանակակիցն է, իսկ պատմությունը այդ ժամանակաշրջանում ընդգրկում է Հայկյանների ծագումնաբանությունը: Սեբեոսի մոտ այն հասցվում է մինչև Շամիրամ. նույնպես և Խորենացու մոտ: Ա գրքի 19-րդ գլխում՝ «Որ ինչ զկնի մահուանն Շամիրամայ» պատմիչը բաժանվում է Մարաբայից ըստ էության այն բանից հետո, երբ ցուցադրելով իր ճշմարտասիրությունը («ասեմք լինել արդարաբան»), շարադրված պատմության համար ամբողջ պատասխանատվությունը գցում է նրանց վրա, «ըստ որոց հաւաքումն»: Նա չի թաքցնում նաև աննշան խոտորումները, որ թույլ է տվել Մարաբայի համեմատ («զոյզ ինչ կասեալ»)[2]:

Անցնելով Հայկյան թագավորական հարստության պատմությանը, Խորենացին դեռևս աչքը չի կտրում Մարաբայի գրքից: Բայց նա այնտեղ այլ բան չի գտնում, բացի «զհիմունս», որոնք վկայում են նրան ճշմարտությունը այն բանի, որ պատրաստվում է պատմել: «Մեզէն իսկ հիմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաք, - ասում է Խորենացին, - ի չորս հագներգութիւնս, զարգասատրին ի բանս և զհմաստնոյն իսկ և ի մէջ իմաստնոյ իմաստնագունին»[3]: Այս, մինչև այժմ չհասկացված արտահայտության իսկական իմաստը, ինչպես նաև «հագներգութիւն» բառի նշանակությունը հասկանալի են դառնում Սեբեոսի «Նախնական պատմութեան» հետ համեմատելիս: Այստեղ հեղինակը տարբերում է չորս ժամանակաշրջան Հայաստանի պատմության մեջ՝ Շամիրամից մինչև Արշակունիների գալուստը:

1. Զավթիչ Շամիրամի մահից հետո հայերը շարունակում են մնալ ասորեստանցիների իշխանության ներքո մինչև Սենեքերիմ:

2. Սենեքերիմի օրոք Զարեհ Հայկյանը տապալում է նրան, և Զարեհի տոհմը տիրապետում է մինչև Նաբուգոդոնոսոր:

3. Այնուհետև հայերը ենթարկվում են բաբելացիներին և, վերջապես,

4. Վրա է հասնում Մակեդոնական տիրակալությունը մինչև Արշակունիները:

Տվյալ տեղում «Հագներգութիւն» պարզապես նշանակում է «պարբերացում»: Մեր առջև են չորս ժամանակաշրջան, և նրանցում, 2-րդ ժամանակաշրջանում իսկապես «զհիմունս» կան, որոնք կոահում է Խորենացին, թե Հայկյանները «թագաւորութեան հասանին յաստիճան»: Կրկին

---

[1] **Մովսես Խորենացի**, Ա, 9:

[2] Հմմտ. **Սիսական (Գ. Տեր-Մկրտչյան), Խորենացու պատմության ուսումնասիրություն**, Վաղարշապատ, 1896:

[3] **Մովսես Խորենացի**, Ա, 22:

անգամ Խորենացին վերադառնում է Մարաբային Բագրատունիների և Անգեղտան ծագման առիթով, որի մասին նա պարզ իմացնել է տալիս: Հետագա շարադրանքին Մարաբան բոլորովին անմասն է, և Խորենացին լքում է նրան, որպեսզի վերջին անգամ հարևանցի աչք ձեռի իմաստունին Արշակունիների պատմության մեջ: Պատմիչը հավանություն չի տալիս ասորու կարծիքին Արշակունիների նախամոր վերաբերյալ. դժգոհ է նաև բագավորների ցանկից, որը նրա մոտ ուժեղ վերամշակման է ենթարկվում: Ընդորում, Խորենացին հնարավոր է գտնում ըստ Մարաբայի թողնել միայն առաջին երեք անունները, իսկ Արտաշեսից հետո նրանք տարբեր ուղիներով են ընթանում: Իրավացիորեն Խորենացին հավելում է անում՝ «Աստանօր սպառին բանք ծերունւոյն Մար Աբայ Կատինայ»: Հավելման իսկական տեղը Արտաշեսից հետո է, բայց այն հայտնվել է Արշակի մոտ այն բանի հետևանքով, որ Խորենացին մոռեցրել է և Արտաշեսին դարձրել Տիգրանի հայր, որին ծանոթ չէ Մարաբան: Իսկ Տիգրանի և նրա հետ միասին հոր՝ Արտաշեսի գործերը, նա շարադրում է ըստ այլ աղբյուրների[1]:

Այժմ կարելի է չզարմանալ հակասության վրա, որի մեջ Խորենացին ներքաշել է իրեն՝ Վաղարշակի օրոք և շնորհիվ նրա ճեռք բերված գրքում մոցնելով ոչ միայն Վաղարշակի, այլև նրա որդի Արշակի պատմությունը: Չենք զարմանում, որովհետև Խորենացին ճիշտ չէ խոսել ոչ թե այստեղ, այլ րուն գրքի պատմության մեջ, որը նա, իմաստակելով, փաթաթել է Վաղարշակի վզին:

Թեև բերված զուգահեռը չի տանում ժխտման, սակայն ոմանց կարող է թվալ, որ Խորենացին այլ աղբյուր է ունեցել «Նախնական պատմության» համար: Այն մեզ պետք կգա պարզելու համար, թե որտեղից է Խորենացու մոտ ընկել Մարաբայի անունը: Իսկ զուգահեռը, ընդհակառակը, երևան հանելով Խորենացու լիովին բարեխիղճ վերաբերմունքը իր օգտագործած նյութի նկատմամբ, ստիպում է մեզ շատ զգույշ լինել և միայն մտացածին բան չտեսնել այնտեղ, որտեղ չենք կարող կամ մինչև հիմա չենք կարողացել ստուգել Խորենացուն ըստ նրա աղբյուրների: Փոփոխություններ և հերյուրանքներ, իրենց զուտ իմաստով, երևակայամոլության իմաստով, խորթ են Խորենացուն: Վատագույն դեպքում մեր պատմիչը հմուտ գրող է, փորձառու՝ սյուժեներ մշակելու ունակության մեջ: Մենք հեռու կլինենք

[1] Ըստ Խորենացու Անգեղը Հայկազուն է «ի Պասքամայ ումեմնէ». Սերեռոսի մոտ ևս նա Հայկազուն-Բագրատունի է: Խորենացին հիշատակում է բոլոր Հայկազյան թագավորների անունները, որոնք կան Սերեռոսի մոտ, բացառությամբ Սարհանգի: Խորենացու Պասքամը և Մարաբայի Սարհանգը կարելի է համադրել, ենթադրելով, որ Խորենացին ճիշտ չէ միացրել Սարհանգին պա վանկը նախորդող ապա-ից: Ապա, Սարհանգ = Խորենացու մոտ Պասարհանգ = Պասաքհանգ = Պասաքանգ = Պասքա-նգ = Պասքամ:

ճշմարտությունից, եթե մտածենք, որ Հայկյան թագավորների երկար պատմությունը Խորենացին հյուսել է Եվսեբիոսից յուրացրած հենքի վրա: Ճիշտ նույնպես Սեբեոսի «Նախնական պատմության» մեջ պակասող Հայկի տոհմածառը Խորենացու կողմից չի հորինված:

Պետք է ենթադրել, որ Խորենացին իր տրամադրության տակ ունեցել է «Նախնական պատմության» Փավստոսյան խմբագրությունը ևս: Ըստ Պրոկոպիոսի, այլ կերպ ասած ըստ Փավստոսի, առաջին Արշակունին թեկուզ և կոչվում է Արշակ, ինչպես Սեբեոսի մոտ, բայց նա նշանակվում է ոչ թե հոր, այլ եղբոր կողմից, համաձայն Խորենացուն: Այնուհետև, քննադատները նշել են, որ Պրոկոպիոսը Խորենացու հետ միաձգամայն միատեսակ արտահայտություններով է պատմում փյունիկյան արձանագրության մասին[1], և միևնույն արտահայտություններն են երկուսի մոտ էլ նաև Հերոդոտոսի չորրորդ գիրքը վկայակոչելիս[2]: Եթե հարկ է ենթադրել նրանց համար ընդհանուր աղբյուր՝ Գուտշմիդի հետ մեկտեղ[3], ապա այն Փավստոս Բուզանդն է: Ըստ Խորենացու Պատմության իմաստի, Հայաստանի «Նախնական պատմությունից» երկու տեղն էլ Մարաբայի գրքերից են: Հետևաբար, նրանք կարող էին գտնվել Փավստոս Բուզանդի մոտ: **Այդ համձամանքը հանգեցնում է** խիստ զայթակղիչ, բայց նույնքան էլ վտանգավոր մտքի՝ **համադրելու երկու պատմական աշխատությունները՝** Փավստոսի և Խորենացու, իրենց ամբողջության մեջ. այնպես, ինչպես Խորենացու Գ-րդ գիրքը համապատասխանում է Փավստոսի երեք գրքերին և կազմում է նրանց համառոտ բովանդակությունը, այնպես էլ առաջին երկու գրքերը ոչ այլ ինչ են, եթե ոչ լայնորեն ընդարձակված Փավստոսի երկու սկզբնական գլուխները: Դրան չեն խանգարում Խորենացու գրքերի չորությունը, արհեստական և բանաքաղածո բնույթը. բավական է ենթադրել, որ Խորենացու Ա և Բ գրքերը այնպիսի վերաբերության մեջ են գտնվում Փավստոսի կորսված գրքերի նկատմամբ, ինչպիսի վերաբերության մեջ է Գ-րդ գիրքը պահպանվածների հանդեպ, այսինքն որ Խորենացին հեռացնում է Փավստոսի պատմության ամբողջ կենդանի հեքիաթային շիթը և պահպանում է միայն իրադարձությունների չոր կմախքը:

Մի կողմ թողնելով բացահայտորեն մեզ հայտնի մյուս աղբյուրների, գլխավորապես Եվսեբիոսի, ազդեցությանն արձագանքող տարրերը, մնացյալում մենք Խորենացու մոտ քիչ, զուտ Փավստոսյան մոտիվներ չենք գտնի:

Եթե անգամ ենթադրենք, որ կորսված գրքերից երկրորդն ամբողջովին

---

[1] **Procopii Caesariensis**, De bello Vandalico, II, 10. **A. Carrière**, Nouvelles sources.

[2] **Procopii Caesariensis**, De bello Gothico, IV, 6. **A. Gutschmid**, Über Glaubwürdigkeit.

[3] **A. Gutschmid**, նույն տեղում:

զբաղեցնում էին Ագաթանգեղոսը և Լաբուբնան, ապա մի գրքի ծավալը, դատելով մեզ հասած գրքերից, թույլ է տալիս այնտեղ առավել շատ նյութ տեղադրել, քան կա Սերեոսի «Նախնական պատմության» մեջ: Խորենացու մոտ բոլոր այն տեղերը, որոնք վիպական բնույթ են կրում, կարելի է գրանցել Փավստոսի հաշվին: Ինչպես մեզ հասած, այնպես էլ սկզբնական գրքերում, Փավստոսը գրավոր աղբյուրներ չի իմացել: Նա պատմությունը տանում է ժողովրդական կենդանի ավանդությունների ու ավանդազրույցների հիման վրա: Գրական ճաշակով և ընդհանրապես կրթության ոգով Փավստոսը կտրուկ կերպով տարբերվում է Խորենացուց: Ինչ չափով որ լուսավորյալ Բուզանդացին հասկանում և բարձր էր գնահատում բանահյուսական ստեղծագործությունները, համարյա այն չափով Խորենացու համար նրանք մնում էին քիչ կարևոր: Խորենացին իսկական գրքի մարդ է: Նրա աչքում գրավոր խոսքը ինչ-որ հմայք և ուժ ունի: Նա թերահավատորեն է վերաբերվում Փավստոսի բոլոր վիպասանքներին, մի գրողի, որի մոտ Խորենացին չի նկատում ոչ մի խորագիտակություն դպրության մեջ: Նա անսպասելիորեն հանդիպում է մի հուշարձանի՝ «Նախնական պատմության» Սերեոսի մոտ, և հուրախություն իրեն, իմանում է, որ Փավստոսի մոտ որպես ժողովրդական ավանդազրույցներ մատուցվողը հեռու է այդպիսին լինելուց, այլ գալիս է գիտնական Մարաբայից[1]:

Ի դեմս փիլիսոփայի գրքի, նա լիակատար երաշխիք ունի Փավստոսի մոտ եղած համապատասխան նյութի հավաստիության համար: Այդ մասը Խորենացին խնամքով առանձնացնում է որպես հատուկ հոդված, չմոռանալով հարկ եղածին պես հարդարել արժեքավոր հուշարձանի պատմությունը: Այժմ նա կարող է բացեիբաց հայտարարել. «Արդարացուցանէ այս զասացեալ զրոյցս անգիրս». «Զայս արդարացուցանէ... աշխարհիս մերոյ առասպելք զրազմահմուտ ասորին արդարացուցանեն» և այլն: Այդ ի՞նչ առասպելներ են, որոնք արդարացնում են ասորուն կամ արդարացվում են նրանով: Դրանք այն առասպելներն են, որոնք նա գտնում է Փավստոսի մոտ: «Զրոյցք, առասպելք, երգք, վէպք»-ի գոյության մասին Խորենացին գիտե Փավստոսից և մեծին մասամբ դրանք ակնարկներ են Փավստոսի «պատմությունների» մասին: Այդպիսի ընկալմամբ երկարաձիգ վիճաբանությունները այն հարցի վերաբերյալ, թե հայերն ունեցե՞լ են վիպերգեր, թե դրանք հնտորեն հյուսվել են Խորենացու կողմից Աստվածաշնչի «ծուխուրոցից», որոշ չափով վերանում են:

[1] «Կատինա» մակդիրը Խորենացու մոտ դեռևս չի ապացուցում, որ Խորենացին գիտեր Մարաբայի ուրիշ խմբագրություն (ոչ ընդհանրապես «Նախնական պատմության»): Նրա համար դժվար չէր փոխարինել «Փիլիսոփան» Կատինայի, եթե նա հաջողեցրել էր իմանալ, որ «Քանզուր պատիւ թագաւորութեան ասի»:

Գրքային ոգին, գրամոլությունը թույլ չէին տալիս Խորենացուն շարադրանքի ընթացքում մնալու Փավստոսի սահմաններում: Նա թափառում է իրեն հայտնի գրավոր գրականության անկյուններում, փորփրում է Եվսեբիոսը, որպեսզի որևէ կերպ ընկնի հին պատմության կամ պարզ ակնարկների հետքի վրա, որոնցում կգտներ հաստատումն Փավստոսի խոսքերի: Եվսեբիոսի մոտ կարդալով Կյուրոսի և Վարրակեսի պատմությունը, նրա կաղապարով վերածնում է Փավստոսի անբոնազբոսիկ պատմվածքը Պարույրի և Տիգրանի մասին, պատմվածք, որը հավանորեն ծնանվում էր նրան որևէ մի առումով: Ի ծնանություն Եվսեբիոսի Խորենացու հորինած ամբողջ էջերը, իհարկե, հազիվ թե ի վիճակի են համոզելու որևէ մեկին նրանում, որպեսզի դրանք հառնեն միչև ինքնուրույն բնույթի ավանդավեպերը: Բայց մյուս կողմից չէ՞ որ դժվար է ենթադրել, որ Խորենացին, այդքան բծախնդիր վերաբերմունք դրսևորելով դեպի Մարաբայի գիրքը, առանց որևէ հիմքի Հայկազնեան թագավորության հիմնադիր դարձներ Պարույրին՝ Մարաբայի Զարեհի փոխարեն: Եթե նա չէր գնահատում Մարաբասին, ապա ինչո՞ւ էր նրա մոտ «զհիմունս» փնտրում, իսկ եթե նա իսկապես գնահատում է փիլիսոփային, ապա նրանից խոտորումը չի կարելի համարել Խորենացու կողմից քմահաճույքի գործ: Փավստոսի 4-րդ գրքից երևում է, որ նա գիտե Տիգրան թագավորին, որը Պաղեստինից հրեաներ է գաղթեցրել Հայաստան. նրան նա անվանում է «Արշակունի», կարծես թե ի տարբերություն մյուսից, նրան նույնպես հայտնի Հայկազնեան Տիգրանից: Փավստոսից հետու չեն Խորենացու մոտ եղած և՛ առասպելները, և՛ Վահագնի երգը: Արշակունյաց ժամանակաշրջանի վերաբերյալ արդեն կասկած չի կարող լինել, որ Փավստոսի մոտ պատմվում էր ո՛չ միայն առաջին թագավորների մասին: Տիգրանը նրան քաջ հայտնի է, նաև Սանատրուկը. իսկ Արտաշեսի և Սաթենիկի մասին ռոմանտիկական երգը, որից այդպես էլ Փավստոս է բուրում, ամենայն հավանականությամբ պատշաճ տեղ էր գրավում նրա Պատմության մեջ: Արտաշեսի և Սաթենիկ թագուհու մասին մենք գիտենք ոչ միայն Խորենացուց, այլև Սուքիասյանց վարքից:

Դժվար է ասել, թե ինչպիսին է եղել Արշակունիների ընդհանուր ցանկը Փավստոսի մոտ: Տիգրանի, հատկապես «առաքելասպան Սանատրուկի» անունը կարող է հիմք ծառայել մերձեցնելու այն Խորենացու ցանկին: Բայց Փավստոսից չի երևում, թե ինչ Տիգրանի այստեղ ի նկատի ունի. արդյոք առաջի՞նը, որը Մարաբայի մոտ չի եղել, թե Երկարակյացը, որ կա երկու ցանկերում էլ: Ինչ վերաբերում է Սանատրուկին, ապա, կարծում եմ, Փավստոսը կարող էր նրան իմանալ միայն Մծուրքի Սանատրուկի կերպարով. եթե նա ծանոթ է Սանատրուկին որպես առաքելասպանի ևս,

ապա դրանով Փավստոսը պարտական է «Թադեոսի քարոզչությանը», և հազիվ թե նրան տեղ հատկացրած լիներ թագավորների շարքում՝ սեփական պատմության մեջ: Խորենացու մոտ ցանկի վերամշակումը արդյունք է գլխավորապես Արգարի հայացման: Իսկ վերջինս դեռևս չի ենթադրվում նրանում, որ «Սանատրուկը սպանել է Առաքյալին»: Եթե Փավստոսը որևէ տեղեկություն ուներ Արգարի մասին, որպես Հայոց թագավորի, ապա «Խոստաբանութեան» մեջ բարեպաշտ Տրդատի կողքին կդներ նաև առավել բարեպաշտ Արգարի անունը և ոչ թե առաքելասպանի: Բացի այդ, հայտնի է, որ Պրոկոպիոս Կեսարացին հատկապես հետաքրքրվում էր Արգարի՝ Քրիստոսի հետ ունեցած թղթակցության վերաբերյալ ավանդազրույցով[1]: Եթե *τῶν Ἀρμενίων ἱστορία* -ում որևէ բան լիներ առասպելի մասին, առավել ևս նրա հայացման մասին, ևս անպայման կհիշատակեր այդ մասին: Ոչ միայն Փավստոսը, այլև Ղազար Փարպեցին, հնարավոր է նաև Սեբեոսը դեռևս ծանոթ չեն Արգարի հայացմանը: Այն առաջինը կատարվել է, ամենայն հավանականությամբ, «Հայոց պատմության» հեղինակի գրչով և կամ նրա ժամանակ: Թագավորների ցուցակը Փավստոսի մոտ, ըստ բոլոր նշանների, ավելի շատ ընդհանրություններ ուներ Սեբեոսի, եթե միայն կատարելապես չէր համընկնում Մարաբայի ցանկի հետ, քան Խորենացու ցուցակի հետ:

Նման հարցադրման դեպքում Խորենացու «Հայոց պատմությունը» ուրիշ երանգավորում է ստանում իր ծագման մեջ: **Իր գլխավոր հիմքում և ամենից առաջ պատմական սխեմայում այն ոչ այլ ինչ է, եթե ոչ Փավստոս Բուզանդի *τῶν Ἀρμενίων ἱστορία* -ի վերափոխում, արմատական վերամշակում:** Եթե հիշենք Փավստոսի շնորհազուրկ վիճակը հայ գրականության մեջ Ղազար Փարպեցուց սկսած մինչև վերջին ժամանակները[2], ապա հասկանալի կդառնա նաև նման վերամշակման իմաստը: Այն պետք է մաքրազերծեր Փավստոսի մոտ եղած պատմական մաքուր հատիկը որոմներից՝ այն ժամանակ տիրապետող գրական ճաշակի ու ըմբռնումների տեսանկյունից: Հասկանալի է նաև Խորենացու կողմից Փավստոսի անունը լռության մատնելը, որը բացատրվում է ոչ թե պարտակչությամբ, ինչպես կարծում են, այլ դեռևս լուսավորյալ Ղազարի կողմից անվանարկված պատմիչի վատ համբավով:

---

[1] **Procopii Caesariensis, De bello Persico.**

[2] Ս. Չամչյանը նույնպես չէր հասկանում Փավստոսի նշանակությունը, որն առաջին պնդամ ըստ արժանվույն գնահատվեց Հ. Գաթրճյանի կողմից՝ «Տիեզերական պատմութեան» մեջ:

Ինչևէ, բարձրացված հարցը և նրա լուծումը նշանակություն ունի «Հայոց պատմության» քննադատության համար, նրա հեղինակի գրական կերպարը պարզաբանելու համար: Ինչ վերաբերում է հերթական հարցին՝ «Պատմության» ծագման ժամանակի մասին, ապա այստեղ վճռական խոսքը այն փաստինն է, որ նրա հեղինակը օգտագործել է Մարաբայի գիրքը, որի տակ մենք հասկանում ենք «Նախնական պատմությունը» Սերեոսի մոտ: Եթե միայն ճիշտ են նույնացրել Անանունին «Հերակլի արշավանքի պատմության» հեղինակի հետ, ապա «Հայոց պատմությունը» չի կարող ծագած լինել VII դարից առաջ: Խորենացու բացասական քննադատության հետևում պետք է ընդունել կայուն հիմքերի առկայություն: Մեկ բան է խախտուտ այդ քննադատության մեջ, իր ոչ գիտակցությամբ կոպիտ հարցադրումը՝ իբր թե Խորենացին կեղծարար է:

Մովսես Խորենացու առնչությունները «Հայոց պատմության» հետ հարկ է այնպես լուսաբանել, ինչպես ընդունված է ընդհանուր գրականության մեջ բոլոր համանման դեպքերում: Հարկ է հանել Խորենացու անունը «Հայոց պատմության» վրայից և վերջինս դասել Անանուն կամ ավելի ճիշտ գրականության անվավեր երկերի շարքը: Ընդ որում, կենսագրական տեղեկությունները, որոնք մեզ հայտնի են «Պատմությունից», պահպանում են իրենց ուժը Խորենացու համար. նա լուսավորության դարաշրջանի ականավոր ներկայացուցիչներից մեկն է, և հավանաբար այն դժբախտ Մովսես փիլիսոփան, որի մասին դառնությամբ է հիշատակում Ղազար Փարպեցին: Նա մեծ փառք էր վայելում՝ շնորհիվ թարգմանական գրականության ասպարեզում ունեցած գործունեության («այր ծեր եմ պարապեալ թարգմանութեան»): Նրա հանճարեղ անվան տակ հայտնի նպատակներով թողարկվել է «Պատմությունը», կազմված նշանակալիորեն ավելի ուշ՝ մեզ անհայտ, ոչ ավազ գրական ընդունակություններ ունեցող հեղինակի կողմից: Եթե Փավստոս Բուզանդի «Պատմությունը», ըստ Մամիկոնյանների նրանում գրված տեղի, վերաբերում է այդ տան հզորության ժամանակներին, ապա «Հայոց պատմությունը» նրա հեղինակի նկատելի միտումով՝ ետ մղել Մամիկոնյաններին և առաջ քաշել Բագրատունյաց իշխաններին, ընկնում է նրանց առաջնության դարաշրջանին: Այն հայտնվել է Հայաստանում քաղաքական խմորումների ժամանակամիջոցում՝ նոր թագավորական հարստության բարձրացումից առաջ: Հայրենասիրական խոր զգացմունքը, որով ներծծված է «Հայոց պատմությունը» ի հակադրություն Փավստոսի անտարբերության, մեզ վերստին փոխադրում է Բագրատունիների դարաշրջանը, երբ ազգային ինքնագիտակցությունը հասել էր բարձրագույն վերելքի: «Հայոց պատմությունը» որպես խստորեն քաղաքական պատմություն, որ գերազանցապես պատմում է Հայկազնյան

և Արշակունյաց նախկին թագավորությունների ճակատագրի մասին, ընդհանուր առմամբ պտուղ է բարձր տրամադրության ի տես սպասվող քաղաքական ազատության, իսկ մասնավորապես այն յուրատեսակ պսակ է հայոց գահի փառապանծ հավակնորդների անցյալին, որը պետք է սրբագործեր նրանց իրավունքները (10):

ԳՐ. ԽԱԼԱԹՅԱՆՑ, ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ: ՄՈՍԿՎԱ, 1903

Պրոֆ. Գր. Խալաթյանցի ներկա աշխատությունը 1896 թ. նրա հրատարակած հայկական էպոսի մասին ուսումնասիրության հետ կազմում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ամբողջական քննությունը (1):

Խորենացու մասին մինչև օրս հրապարակված աշխատանքները, ինչպես կարծում է հեղինակը, վերաբերել են առանձին հատվածներին կամ գլուխներին: Դրանք հիմնականում կասկածի տակ են առնվել, մերժվել են որպես հետագա ընդմիջարկություններ, ընդունվել են որպես պարականներ, դիտվել են որպես ժամանակավրեպություններ:

Սակայն Խորենացու աշխատանքի ամբողջականությանը, նրա պատմական միջուկի առիթով որևէ ընդհանուր եզրահանգում չի արվել:

Պրոֆ. Խալաթյանցը նպատակ է դրել ուսումնասիրել Խորենացու «Հայոց պատմությունը» իր լրիվ ծավալով, նա աշխատել է «հետազոտել Խորենացուն հաջորդաբար, քայլ առ քայլ, բացահայտել, որքան դա հնարավոր է, նրա բուն աղբյուրները և ցույց տալ Խորենացու վերաբերմունքը դրանց նկատմամբ»: Հեղինակի խնդիրն է եղել նաև նոր տվյալներով ամրապնդել Խորենացու ժամանակի վերաբերյալ Ա. Գուտշմիդի (2) ու Ա. Կարրիերի (3) եզրակացությունները և դրա հետ միասին Խորենացու բոլոր աղբյուրների մանրամասն ուսումնասիրության և մանրակրկիտ ստուգման միջոցով, հնարավորության սահմաններում, պարզել նրա երկի՝ որպես պատմական հուշարձանի, արժանահավատության հարցը:

Պրոֆ. Խալաթյանցն այդ հիանալի խնդրի լուծմանը ձեռնամուխ է եղել կանխակալ տրամադրությամբ: Հափշտակվելով Խորենացու մերժողական քննությունների եզրակացություններով՝ նա դրանք հասցրել է ծայրահեղության և այնպիսի տեսություններ ու վճիռներ է կայացրել, որոնք գիտական տեսակետից հեռու են անբասիր լինելուց:

Քննադատների կողմից վաղուց արդեն մատնանշվել են այն հուշարձանները, որոնց մեջ կան Խորենացու հետ ընդհանուր տեղեր ու կետեր: Ենթադրվել է, որ դրանք ծագել են մեկ ընդհանուր աղբյուրից: Պրոֆ. Խալաթյանցը այլ կերպ է բացատրում նրանց հարաբերությունը և կարծում է, որ Խորենացին է կախված նրանցից: Հենց որ որևէ տեղ կապ է նկատում,

երբեմն բոլորովին հեռավոր, պրոֆ. Խալաթյանցը երկար չմտածելով, այն հայտարարում է Խորենացու կախվածություն: Այնտեղ, որտեղ պետք է կամ կարելի է խոսել գրական զուգահեռների մասին, պրոֆ. Խալաթյանցը դիտում է փոխառության փաստ: Հուշարձանների փոխհարաբերությունների վերաբերյալ ամենաբարդ հարցերը երբեմն լուծվում են չափազանց հեշտությամբ: Համեմատություններն ու մերձեցումները ոչ միշտ են քխեցվում ճիշտ գնահատվող բովանդակության տվյալներից կամ պատմա-գրականական նկատառումներից: Հաճախ դրանք կարծես թե թելադրվում են այն հետին մտքով, թե Խորենացին ապրել է IX դարում: Շատ դատողություններ ու վճիռներ իրենց վերջնական եզրակացություններով հիմնվում են միայն մեկ էական ենթադրության վրա՝ հայ հին գրականությունը, գրավոր թե բանավոր, Խորենացուն մատչելի է եղել այն նույն չափով, ինչ չափով դա հայտնի է այժմ մեզ: Եթե ընդունենք այդ դրույթը, ապա, թերևս, կարելի կլինի համաձայնել պրոֆ. Խալաթյանցի շատ եզրակացությունների հետ: Շնորհիվ այդպիսի մոտեցման, հեղինակին իրոք հաջողվել է «Խորենացու երկի ամբողջականությունը՝ նրա միջուկը ընդհանուր հանրագումարի թերել»: Պետք է խոստովանել, որ եզրակացությունները այլի են ընկնում հիացալի հետևողականությամբ: Բայց դժբախտաբար նրանց հետևողականությունը հենված չէ գիտական ամուր ու հիմնավոր դրույթների վրա:

Չշռշափելով պ. Խալաթյանցի աշխատության դրական կողմերը՝ ես մատնանիշ եմ անում լոկ այն կետերը, որոնք ինձ անընդունելի են թվում:

Աշխատության հենց սկզբում հեղինակը կշտամբում է Խորենացուն այն բանի համար, որ նա հայ Արշակունիներին համարում է Ք. ա. II դարի գործիչներ, մինչդեռ պատմական արժանահավատ տվյալներով նրանք Հայաստանում հաստատվել են միայն Տիգրանից ու Տիգրանյաններից հետո, այսինքն՝ երկու հարյուրամյակ ավելի ուշ[1]:

Պրոֆ. Խալաթյանցը իրավացի է, երբ խոսքը վերաբերում է պատմական արժանահավատությանը: Բայց պակաս իրավացի չէ նաև Խորենացին այն իմաստով, որ նրա տրամադրության տակ եղել են աղբյուրներ, որոնցում փաստերը ներկայացվել է այնպես, ինչպես ինքն է հաղորդում:

Հայկական ավանդություններում թագը Տիգրանյաններից Արշակունիներին աննկատելիորեն անցնելու հետևանքով երկու տոհմերը ձուլվել են և կազմել Արշակունիների հարստությունը, ըստ որում Տիգրանյանների հայկական ծագումը տարածվել է նաև Արշակունիների վրա:

Ձուլված հարստությունը պահպանել է հարստություններից մեկի անունը, իսկ ծագումը՝ մյուսի:

---

[1] Гр. Халатянц, Армянские Аршакиды в "Истории Армении" М. Хоренского, М., 1903, стр. 5.

Անտիոքոսի զորավար Արտաշեսից ծագած Տիգրանյանները սկսեցին թագավորել Հայաստանում Ք. ա. 189 թվից հետո, այդ պատճառով էլ Արշակունիների սկիզբը վերագրվել է այդ ժամանակների ավանդություններին:

Որ հայերի մոտ Արշակունիների հայկական ծագման մասին գոյություն է ունեցել ավանդություն, դա երևում է «Հայաստանի նախնական պատմության» այն խմբագրությունից, որից օգտվել է Պրոկոպիոսը[1]:

Եպիփանի աշխատությունից Ղ. Ալիշանի վերջերս հրատարակած[2] հատվածը հաստատում է Պրոկոպիոսի վկայությունը, Ալեքսանդր Մակեդոնացու մահով, ըստ Եպիփանի, ապստամբում են ոչ թե պարթևները, այլ հայերը, և նրանց մեջ հանդես է գալիս Արշակ Քաջը: Նրա սերունդներից մեկը Հայոց թագավոր Տիգրանն է, որ նվաճում է Մարաստանը, Պարսկաստանը, Հայաստանը, Ասորիքը և Էլամը: Հայ պատմիչ Փավստոս Բուզանդը Տիգրանին նույնպես կոչում է Արշակունի: Փոխանակ այն բանի, որպեսզի, օգտվելով այդ վկայություններից, արդարացնելու կամ լուսաբանելու Խորենացու խոսքերը՝ պ. Խալաթյանցը գերադասում է հավատ ընծայել Ա. Գարագաշյանի մտացածին մեկնաբանությանը, իբր թե Փավստոսի մոտ Տիգրանի Արշակունի անվանումը պետք է հասկացվի թագավորական հարբուստության իմաստով[3]: Արշակը բնավ էլ թագավոր չի նշանակում: Այդպիսի ավանդության գոյության դեպքում հասկանալի է, թե ինչու Խորենացին հայկական Արշակունիների սկիզբը դնում է Ք. ա. II դարում, այսինքն՝ այնպիսի ժամանակի, երբ Հայաստանում թագավորում էին Տիգրանյանները:

Արշակունիների անուններն ու կառավարման տարիները Խորենացին փոխ է առել «Հայաստանի նախնական պատմությունից»: Ըստ պ. Խալաթյանցի, դրանք պատմական ոչ մի քննադատության չեն դիմանում և «Հայաստանի նախնական պատմության» հեղինակի երևակայության արդյունքն են: Գր. Խալաթյանցը նույնիսկ կարծում է, որ պարսկական թագավորների անունները քաղված են Աստվածաշնչից, Եվսեբիոսից և Սեբեոսից: Սակայն նա չի բացատրում, թե այդ դեպքում հեղինակը ինչու է ընտրել հենց այդ անունները և ոչ ուրիշ, որոնք բավական շատ են Եվսեբիոսի ու Սեբեոսի մոտ, կամ թագավորների քանակն ինչու 12-ն է և ոչ ավելի կամ պակաս: «Հայկական էպոսի» մեջ պ. Խալաթյանցը Անանունի

---

[1] Տե՛ս «Византийский Временник», т. VIII, вып. 1-2.

[2] Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 31:

[3] Գր. Խալաթյանց, էջ 5, ծան. 2:

նախնական պատմությունը համարում է ուշ շրջանի՝ VIII-IX դարերի կեղծանուն գրվածք (ապոկրիֆ): Դատելով թռուցիկ արված նշումներից[1], նա այժմ էլ նույն կարծիքին է: Այն բանից հետո, երբ ապացուցվեց, որ «Նախնական պատմությունը» մտնում է Փավստոսի աշխատության մեջ, որ VI դարի կեսին Պրոկոպիոսն իմացել է Փավստոսին հենց այդ խմբագրությունից, պ. Խալաթյանցի կարծիքը Անանունի մասին կորցնում է հենարանը: Անանունը ոչ մի դեպքում չի կարող համարվել VIII-IX դարերի պարականոն: Նույնիսկ իր բովանդակության ակնհայտ առասպելական մասի թվական տվյալներով, այն ծագել է ավելի հին ժամանակներում, քան ենթադրում է պ. Խալաթյանցը՝ այն հենվում է Սասանյան դարաշրջանում Արշակունիների մասին եղած պարսկական ավանդությունների վրա:

Ըստ Անանունի, պարթևական թագավորների տիրապետությունը տևել է 500 տարի: Նրանք թվով 12-ն էին: Համեմատելով այդ թվական տվյալները արևելյան աղբյուրների տվյալների հետ՝ նրանց մեջ գտնում ենք որոշակի համապատասխանություն:

Ըստ ասորական աղբյուրների, պարթևների թագավորության տևողությունը նույնպես հաշվվում է 500 տարի[2]: Ենթադրվում է, և դրա համար Մասուդիի և Միրխոնդի մոտ կան տվյալներ, որ այդպիսի թիվ են նշում նաև պարսկական գրական հուշարձանները[3]: Հետագայում դրանք կրճատվել են համարյա կրկնակի՝ ըստ Bundeheš -ի 280 տարի, իսկ Ագաթիասի օգտագործած պարսկական գրական հուշարձաններում՝ 270 տարի: Այդ քանակը բխում է դավանաբանական-քաղաքական ընդհանումներից, որի մասին պատմում է Մասուդին:

Ըստ պարսկական կրոնական գրքերի, պարսկական պետությունը Զրադաշտից 300 տարի հետո պետք է, որ մեծ հեղաշրջում ապրեր: Հեղաշրջում տեղի է ունեցել Ալեքսանդր Մակեդոնացու օրոք: Հազարամյակի վերջում պետությունը պետք է կործանվեր: Զրադաշտից մինչև Ալեքսանդր Մակեդոնացին պարսիկները հաշվում են 300 տարի, իսկ Ալեքսանդրից մինչև Սասանյանները՝ 500 տարի, հետևաբար մինչև հազարամյակի վերջը մնում է 200 տարի: Սասանյանների հարստության հիմնադիրը ապագա դժբախտությունները կանխելու կամ հետաձգելու նպատակով հրամայեց Ալեքսանդրից հետո եկող ժամանակը կրճատել: Նա այդ ժամանակը կիսեց և ընտրեց կրճատված ժամանակին համապատասխան հենց 12 թագավորների, իսկ մյուսներին դուրս գցեց: Ապա նա իր տերության մեջ ամենուրեք տարածեց, որ Ալեքսանդրից մինչև իր ժամանակն անցել է 270 տարի:

---

[1] Գր. Խալաթյանց, էջ 25:

[2] A. von Gutschmid, Zur Geschichte der Arsakiden. ZMG, Bd. XV.

[3] Ibid.

Այնուհետև պարսկական պատմագիրները, որպեսզի լրացնեն այդ ճեղքը, լրացուցիչ հնարեցին Աշգանյանների առասպելական գիծը, ի տարբերություն Աշկանների առաջին գծի:

Հայկական Անանունը, այնքանով, որքանով նրա մոտ էլ է առկա 500 տարին, ծագել է ասորական գրական հուշարձաններից. մյուս կողմից 12 անուն պարունակող թագավորների ցուցակը ցույց է տալիս նրա կախվածությունը պարսկական աղբյուրներից: Անանունի մոտ գոյություն չունի Արշակունիների ակնհայտորեն առասպելական Աշգանյանների երկրորդ գիծը, իսկ աղբյուրների տարաձայնությունը վերացվում է նրանով, որ 500 տարին բաժանված է 12 թագավորների միջև: Երբեմն դրա հետևանքով են ստացվել առասպելական 70, 60 տարվա թագավորության տարիները: Անանունի անտեղյակությունը պարսկական տարեգրությունների Արշակունիների կողմնակի գծին կարող է բացատրել այն բանով, որ **նա ծագում է ավելի վաղ շրջանից, քան պարսկական գրականության մեջ կողմնակի գծի երևան գալը**: Պարսկական գրականության մեջ այն երևան է եկել պարսկական էպոսի մշակման դարաշրջանում՝ Խոսրով Փարվեզի օրոք՝ VI-VII դարերի սահմանագծում: Հետևաբար Անանունի աշխատանքն այդ պայմանների հետևանքով կազմված է մինչև VII դարը և չի կարող VIII-IX դարերի կեղծանուն գրվածք համարվել:

«Հայաստանի նախնական պատմության» նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքով է բացատրվում մասամբ և այն, որ պ. Խալաթյանցը սխալ է մեկնաբանում Արշակունիների պատմությունից առանձին դրվագներ: Խորենացու պատմածները Արտաշես թագավորի նվաճումների մասին, հակառակ պ. Խալաթյանցի, հիմնված են ճշմարտության վրա: Հարցի էությունն իհարկե, ոչ թե պատմական արժանահավատությունն է մեծ, այլ զուտ գրական: Հայերի մոտ գոյություն է ունեցել նման ավանդություն Արտաշեսի մասին. այդ է վկայում VII դարի Անանուն **Աշխարհացրությունից** պ. Խալաթյանցի բերած հատվածը: Քիչ է հավանական, որ Խորենացին Արտաշեսի վերաբերյալ տեղեկության համար պարտական լինի **Աշխարհացրությանը**, ինչպես կարծում է պ. Խալաթյանցը: «Աշխարհացոյց»-ի մեզ հետաքրքրող հատվածը պարունակում է ավելին, քան տալիս է Խորենացին: Եթե վերջինս ծանոթ լիներ այդ հատվածին, նա կօգտագործեր այն ամբողջությամբ: Բացի դրանից, այդ հատվածը մի քանի ձեռագրերում պակասում է: Հնարավոր է, որ այն ընդմիջարկություն է, և «Աշխարհացոյց»-ի մեջ է մտել ուրիշ աղբյուրից, իսկ դա նշանակում է, որ հայերի մոտ պահպանվել են ավանդություններ հին Արշակունիների մասին դեռևս VII դարի ժամանակաշրջանից ի վեր:

Խորենացին Արտաշեսին է վերագրում նաև Կրետոսի սպանությունը:

Գր. Խալաթյանցը պնդում է, որ Խորենացին դիտավորյալ է հայկականացրել Կյուրոսի և Կրեսոսի ճշանավոր պատմությունը և Կյուրոսի դերը փոխանցել հայ Արտաշեսին (4):

Իրականում Խորենացու սխալն այլ հիմունք ունի: Վերլուծելով Կրեսոսի սպանության վերաբերյալ հարցը՝ հայ պատմիչը հայտարարում է, որ ըստ մի աղբյուրի Կրեսոսին սպանողի անունը Կյուրոս է, իսկ ըստ մի ուրիշի՝ Արտաշես: Նա երկմտում է և ավելի հարմար բացատրություն չի գտնում, քան ընդունել երկու Կրեսոսների գոյությունը՝ մեկը Նեքտանեբոսի օրոք, որին սպանել է Կյուրոսը, մյուսը՝ Արտաշեսի օրոք: Հիմնվելով ժամանակագրական անհամապատասխանության վրա, պատմիչը ճույնիսկ հակված է կարծելու, որ առաջինը բոլորովին էլ գոյություն չի ունեցել: Նա ինչ-որ տեղ գտել է, որ Կրեսոսը ապրել է Նեքտանեբոսից 200 տարի առաջ, իսկ Նեքտանեբոսը՝ Արտաշեսից այդքան տարի առաջ: Բոլոր բյուրիմացությունները Խորենացու մոտ հետևանք են այն բանի, որ նա սխալվել է Արտաշեսի հարցում, որին Կրեսոսի սպանող են համարում հույն պատմիչներ՝ Պոլիկրատեսը, Եվագրոսը, Սկամանդրոսը, Փլեգոնը և նրան Հայոց թագավոր է համարել: Մեր պատմիչը գլխի չի ընկել, թե նշված գրողների մոտ, ո՞ր Արտաշեսի մասին է խոսքը, ո՞վ է այդ կռվազան Արտաշեսը, որն իր սխրագործությամբ գերազանցում է Ալեքսանդր Մակեդոնացուն, Խորենացու մեջ բերած հույն պատմագիրները Արտաշեսի ներքո հասկացել են Կրեսոսին սպանող այն նույն Կյուրոսին: Հույները, ինչպես վկայում է Հովսեպոս Փլավիոսը, Կյուրոսին կոչել են Արտաքսերքսես: Խորենացու բերած հատվածում խոսվում է պարթև Արտաշեսի, այսինքն՝ պարսից թագավորի մասին: Հույն գրողները ոչ միշտ են զգուշավոր արևելյան ժողովուրդների անունները գործածելիս. հաճախ նրանք շփոթում են պարսիկներին պարթևների ու մարերի հետ: Խորենացին էլ հունական պատմագրի կողմից պարթև անունը ոչ ճիշտ օգտագործելու հետևանքով մոլորության մեջ ընկնելով՝ Արտաշեսին ընդունել է համանուն հայ թագավորի տեղը, որի մասին գոյություն է ունեցել ավանդություն, իբր թե նա արշավանքով հասել է մինչև Եվրոպա և սարսափ է տարածել Հելլադայում:

Երկասիրությունը գրելու ընթացքում Խորենացու առաջ բազմիցս խնդիր է առաջացել՝ քննել հակասական տվյալները և դրանք հաշտեցնել: Այսպիսի աշխատանքի դեպքում սխալներն անխուսափելի են, որ և նա իրոք թույլ է տվել բավական հաճախ: Նման դեպքերում որոշակի միտումնավորություն և փաստերի գիտակցական աղավաղում տեսնելն առնվազն անարդարացի է:

Ինչպես ենթադրում է Գուտշմիդը, Պոլիկրատեսի, Եվագրոսի, Սկա-

մաղրոսի և Փլեգոնից քաղած հատվածները Խորենացին ամենայն հավանականությամբ վերցրել է ճարտասանության որևէ դասագրքից:

Պարոն Խալաթյանցը գերմանացի ուսումնասիրողի կարծիքին հավանություն չի տալիս: Այն բոլորը, ինչ որ Խորենացին վերագրում է հիշյալ հույն պատմագիրներին, պ. Խալաթյանցի պնդմամբ, հորինել է ինքը, ըստ որում նրան աղբյուր են ծառայել մի կողմից Կալիսթենեսը, Փիլոնը, Մալալան, ինչպես նաև Փավստոսը, Ագաթիա Շիրակացին, մյուս կողմից՝ Աստվածաշունչը, Եպիփանը, Գրիգոր Նյուսացին: Հույն պատմագիրների պատառիկները Խորենացու մոտ զբաղեցնում են ընդամենը երկու էջ: Երկու խղճուկ էջ կազմելու համար պ. Խալաթյանցը ստիպում է Խորենացուն թերթել այդքան հատորներ: Բանն այն չէ, որ այդ ճանապարհով Խորենացին ներկայացված է ծաղրանկարային տեսքով, այլ որ պ. Խալաթյանցը ցնծմացնում է իր իսկ քրտնաջան աշխատանքը՝ բոլի նույնացումներ կատարելով: Օրինակ, նա հնարավոր է համարում Խորենացու կողմից Եվագրոսին վերագրվող հետևյալ խոսքերը՝ «և ոչ ողխք զգետն ստուարացուցին՝ արբմամբն ի ձմեռնային նուազութիւն իջուցանելով» համադրել Գրիգոր Նյուսացու ներբողում հանդիպող «գետք ձմեռնական ուղխիւք զայրացեալ»[1] մի արտահայտության հետ:

Տիգրանի պատմությունը շարադրելիս Խորենացին օգտվում է Հովսեպոս Փլավիոսից: Ըստ պ. Խալաթյանցի, մեր պատմիչը նրանից վերցնում է նյութը, բայց վերամշակում է այն՝ հայացնելով պարթևա-հրեական հարաբերությունները ու իրադարձությունները: Պարոն Խալաթյանցը մատնանիշ է անում նաև ժամանակավրեպությունը՝ հրեաների Հյուրկանոս քահանայապետը պարթևաց Հրահատին գերի է ընկել Տիգրանի մահից 15 տարի հետո, մինչդեռ, ըստ Խորենացու, հրեական քահանայապետի գերեվարությունը տեղի է ունեցել Տիգրանի օրոք և նրա շնորհիվ:

Խորենացու «անբարեխղճությունը մերկացնելով» մեր ուսումնասիրողը տեղնուտեղը վերապահություն է անում. «Այնուամենայնիվ, իրրև հայ պատմիչի արդարացում, պետք է ասել, որ երևի նրանից շատ առաջ հայերի մոտ գոյություն է ունեցել ավանդություն Տիգրան Մեծի կողմից հրեական քահանայապետ Հյուրականոսի գերեվարության և հսկայական թվով հրեա գերիների հետ նրան Հայաստան բերելու վերաբերյալ: Այդ մասին հաղորդում է Փավստոս Բուզանդը»[2]: Թվում է, թե բանը պարզ է: Խորենացու կողմից պատմվող իրադարձությունների հայացումը տեղի է ունեցել ոչ թե **հայոց պատմության** հեղինակի գրչի տակ, այլ նրանից շատ ավելի վաղ: Պատմաբանը, թերևս կարող է քավարարվել Խորենացու և Հովսեպոս

[1] Գր. Խալաթյանց, էջ 48, 49:

[2] Անդ, էջ 65:

Փլավիոսի խոսքերի համեմատությամբ: Բայց Խորենացու աղբյուրների ուսումնասիրողի համար դա դեռևս բավական չէ: Տիգրանի պատմության մեջ Հովսեպոս Փլավիոսը չի կարող Խորենացու համար գրավոր աղբյուր համարվել:

Սանատրուկի, ինչպես նաև Թադեոս Առաքյալի ու Սանդուխտի նահատակության վերաբերյալ պատմությունը շարադրելիս Խորենացին օգտվել է նրանց նահատակության վերաբերյալ մեզ հասած վարքերից: Այդ մասին վկայում է հենց ինքը՝ Խորենացին: Համեմատելով Խորենացու պատումը այդ վարքերի հետ՝ պ. Խալաթյանցը գտնում է, որ պատմիչը հիշատակում է «որոշ հանգամանքներ, որոնք բացակայում են պահպանված ավանդազրույցներում, այն է՝ ապառաժ քարերի տակից Առաքյալի աշակերտների կողմից մասունքները (Առաքյալի և սուրբ կույսի) հանելը («вынутие»- sic!) և առապար փոխադրելը»[1]: Այդ մանրամասները պրոֆ. Խալաթյանցի կարծիքով մատնանիշ են անում «յոթերորդ դարից ոչ շուտ ժամանակներին վերաբերող զրույցի թարմացման վրա, քանի որ, ըստ Սեբեոսի, Ս. Գրիգոր եկեղեցին առապարում կառուցվել է միայն այդ դարի քառասնական թվականներին, որտեղ և, Խորենացու խոսքերով, փոխադրվել են մասունքները՝ իրադարձություն, որի մասին, սակայն, Սեբեոսի մոտ ոչ մի վկայություն չենք գտնում»[2]:

Պարոն Խալաթյանցի դատողությունները հիմնված են մասամբ բնագիրը ոչ ճիշտ ընկալելու, մասամբ էլ Խորենացու խոսքերը ոչ ստույգ մեկնաբանելու վրա:

Պարոն Խալաթյանցի սխալը բացատրվում է այն բանով, որ նա օգտվել է Խորենացու՝ Սկրտիչ Էմինի կատարած ռուսերեն թարգմանությունից, իսկ այդ թարգմանությունը, պարզվում է, որ մեզ հետաքրքրող մասում բոլորովին էլ ճիշտ չէ:

Խորենացու բնագրի ճիշտ թարգմանությունն ասում է. «Առաքյալի և նրա հետ եղածների նահատակությունը Շավարշան գավառում, որ այժմ Արտազ է կոչվում, և ապառաժ քարի շարժվելը, և աշակերտների հանդիպումը («յիրար գալ» ոչ թե քարի, այլ աշակերտների), առաքյալի մասունքները գտնվելը, այնտեղից վերցնելը և դաշտում թաղելը: Այնուհետև թագավորի դստեր՝ Սանդուխտի նահատակությունը ճանապարհի մոտակայքում և այստեղ նրա մասունքները հայտնաբերվելը և նրանց երկուսի մասունքները առապար տեղափոխվելը»:

---

[1] Գր. Խալաթյանց, էջ 91, 92:

[2] Անդ:

Խորենացի, Գիրք Բ, գլ. 34

Կատարումն առաքելոյն և որք ընդ նմա՝ ի գաւառին Շաւարշան, որ այժմ կոչի Արտազ, և պատառումն քարին և յիրեարս գալ և ընդունել զմարմին Առաքելոյն, և առնուլ անտի աշակերտացն և թաղիլ ի դաշտին. և մարտիրոսանալ թագաւորի դստերն Սանդխտոյ հուպ ի ճանապարհին. և աստ ուրեմն յայտնել ճշխարաց երկոցունց, և փոխել յատապարն:

Մ. Էմինի թարգմանությունը

Мученическая кончина апостола и его спутников в области Шаваршанской, называемой теперь Артазом; разступление камня и вторичное его соединение по принятии тела апостола; вынутие оттуда (тела) учениками его и погребение в поле, мученическая кончина дочери царя Сандухт, близ дороги; явление мощей их обоих и перенесение их на каменистую крутизну[1].

Խորենացու խոսքերն այսպես հասկանալու դեպքում այլևս խոսք չի կարող լինել պ. Խալաթյանցի զրույցի ենթադրած նորացման մասին, համենայն դեպս, որքանով հարցը վերաբերում է «նրա աշակերտների (sic) կողմից ապառաժ քարի տակից Առաքյալի աճյունը «հանելուն» («вынутия»): Այդպիսի «հանելն» իրականում չի եղել, և պատմիչը այդ մասին չի խոսում: Ավելորդ է այստեղ նաև պ. Խալաթյանցի դրած շվարման (sic!) նշանը: Առաքյալի աշակերտների տակ Խորենացին հասկանում է Կիրակոս Ճգնավորին և Սամուել քահանային, որոնք միասին որոնել ու գտել են մասունքները, ինչպես երևում է մասունքները գտնվելու վերաբերյալ զրույցից[2]:

Ինչ վերաբերում է մասունքները առապար տեղափոխելուն, ապա այստեղ, ինչպես ինձ է թվում, Խորենացու քննադատները նույնպես մոլորության մեջ են, և մեր պատմիչը, ըստ էության, ճիշտ է: Առապարի հարցը բարձրացրել է հայր Հ. Տաշյանը: Գր. Խալաթյանցը, ինչպես և Մխիթարյան գիտնականը, ցանկացել են այդ անորոշ արտահայտության ներքո հասկանալ VII դարում կառուցված Զվարթնոց կամ Ս. Գրիգոր եկեղեցին:

Հետագա պատմիչներից ոչ մեկը՝ ո՛չ Սեբեոսը, ո՛չ Ղևոնդը, ո՛չ էլ Հովհաննես Կաթողիկոսը ոչինչ չգիտեն Թադեոսի մասունքները փոխադրելու մասին: Վերջինը հիշատակում է Ս. Գրիգորի մասունքները հիշյալ եկեղեցի փոխադրելը, բայց ոչինչ չի ասում Թադեոսի մասունքների մասին: Ուստի, մասունքների ոչ մի փոխադրություն չի էլ եղել: Այդ դեպքում ի՞նչ են նշանակում Խորենացու խոսքերը և ինչպե՞ս պետք է դրանք հասկանալ:

Բանն այն է, որ Թադեոսի մասունքների գտնելը տեղի է ունեցել, ինչպես երևում է զրույցի արձանագրությունից, Հովհան Մանդակունի կաթողիկոսի

[1] "Истории Армении Моисея Хоренского". Новый перевод Н. О. Эмина, М., 1893, стр. 85.

[2] «Սուիներք Հայկականք», VIII, էջ 88:

և Վահան մարզպանի օրոք, այսինքն՝ V դարի վերջում: Ջրույցի վերջում ասված է, որ կաթողիկոսն ու մարզպանը անհամար բազմության ուղեկցությամբ եկան խոնարհվելու սուրբ մասունքներին, ապա «իրենց հետ վերցրին Թադևոսի, Սանդուխտի և մյուսների մասունքներից, փառք տվին Աստծուն և խնդությամբ ցրվեցին յուրաքանչյուրն իր տեղը»՝ «Առնուին մասն ի նշխարաց Ս. Առաքելոյն Թադէոսի, և Սանդխտոյ և յայլոց վկայից, և տուեալ փառս Աստուծոյ գնացին յիւրաքանչիւր տեղիս խնդութեամբ»: Քանի որ Մանդակունին և Վահանը նստում էին Վաղարշապատում, ապա Խորենացին էլ եզրակացնում է, որ մասունքների մի մասը նրանք տարան այնտեղ, ընդ որում Խորենացին բավական անորոշ ձևով է արտահայտվում՝ մասունքների փոխադրման վայրը անվանելով առապար: Այդ բառը նշանակում է «չմշակված, վայրի» և կարող է պատահել նաև՝ «քարքարոտ» տեղանք: Հների մոտ այդպես է կոչվում Ս. Էջմիածնի եկեղեցիների շրջակայքը՝ Վաղարշապատի մերձակա ամբողջ դաշտը:

Նրանք, ովքեր առապարի տակ ցանկանում են հասկանալ Ս. Գրիգոր եկեղեցին, վկայակոչում են Սեբեոսի մի հատվածը. պատմելով Ներսես [Գ Իշխանեցի] կաթողիկոսի կողմից եկեղեցու կառուցման մասին՝ Սեբեոսը գրում է. «Նա գետից ջուր բերեց և օգտագործման համար պիտանի դարձրեց ամբողջ վայրի («անբերրի») տեղանքը. այգիներ ու ծառեր տնկեց»՝ («ած ջուր և երեր զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս և ծառատունկս»)[1]:

Այդ նույն իմաստով է օգտագործում առապար բառը նաև Փավստոսը, ըստ որում նույն տեղանքի վերաբերյալ. «Երբ տեսան, որ Մուշեղը հարձակվում է իրենց վրա, դուրս եկան քաղաքից՝ Վաղարշապատից և փախան առապար՝ Օշականի ամրոցի կողմը՝ հույսները դնելով անապատային ու քարքարոտ տեղանքի վրա» («Եվ իբրև տեսին զնա յարձակեալ ի վերայ իւրեանց, փախան ելին ի քաղաքէ անտի յառապարն, ի կողմն յՕշական բերդին և զանապատ և զքարուտ տեղիսն ապավէն յուրեանց համարեցան»)[2]:

Ս. Գրիգոր եկեղեցին գտնվում է Էջմիածնից արևելք, Երևանի մայրուղու վրա, իսկ Օշականը՝ դեպի արևմուտք կամ հյուսիս-արևմուտք: Չնայած դրան, պատմիչները նրանց շրջակայքը կոչում են առապար: Ակնհայտ է, որ դրանց տակ հասկացել են ամբողջ շրջանը և ոչ թե հենց միայն այն տեղը, որտեղ կանգնած է եղել Ս. Գրիգոր եկեղեցին: Այս տարածաշրջանում եղել են շատ եկեղեցիներ, նրանցից մնկն էլ, ըստ

---

[1] Սեբեոս, էջ 119:

[2] Փավստոս Բուզանդ, էջ 17: Հմմտ. Խորենացու՝ «Եվ անտի մերձեալ զՕշական առապարաւն» (Գիրք Գ, գլ. 9):

Խորենացու բնագրի իմաստի, կարող էին փոխադրել մասունքները: Խորենացու խոսքերը ճիշտ հասկանալու համար կարիք չկա ենթադրել, թե նա իրր ծանոթ է եղել Ս. Գրիգոր եկեղեցուն: Խորենացու Գ գրքի նախաբանի խոսքերը սխալ մեկնաբանելու հետևանքով պ. Խալաթյանցը ճեռնամուխ է լինում նրա վերլուծությանը այն սխալ ելակետից, թե հայ պատմիչը ժխտում է հայերի մոտ այդ ժամանակի վերաբերյալ որևէ պատմական գրական հուշարձանի գոյությունը: Խորենացուն ուշադիր ընթերցողի համար պարզ է, որ հայերի մոտ պատմական հիշատակարանների բացակայության ենթատեքստում նրա տրտունջը վերաբերում է արդեն իր կողմից ենթարադրած երկու դարաշրջաններին և ոչ թե այն պատմաշրջանին, որ նա պատրաստվում է նկարագրել: Առաջին երկու գրքերի համար նա չի ունեցել մի որոշակի աղբյուր, և պատմիչը ստիպված է եղել նյութեր հավաքել տարբեր աղբյուրներից, իսկ մի մասն էլ գրել իր հիշողությանը վստահելով: Այդ պատճառով էլ նա ներողություն է խնդրում հնարավոր սխալ տեղեկությունների համար և խոստանում հաջորդ դարաշրջանի պատմությունը շարադրել անսխալ, հասկանալի է՝ նկատի ունենալով այդ դարաշրջանի վերաբերյալ հայկական հնագույն պատմական հիշատակարանների տվյալները: Նշելով ազգային պատմագրական հուշարձանների առկայության փաստերը՝ Խորենացին որոշում է դրանց նկատմամբ իր վերաբերմունքը. նա մտածում է դրանք դարձնել հանրամատչելի, «որպեսզի չտարվեն պերճախոսությամբ, այլ թանկ գնահատեն միայն պատմության հավաստիությունը և հաճախ ու անհագ վերընթերցեն մեր հայրենիքի պատմությունը» (Գիրք Գ, գլ. 1):

Հուշարձանը թե **Պատմությունը**, որ Խորենացին պատրաստվում էր վերապատմել հասարակ, հանրամատչելի լեզվով, Փավստոս Բուզանդի աշխատությունն է: Խորենացու հետ Փավստոսի համադրությամբ, պարզվում է Խորենացու խնդիրը. մեր պատմիչը մաքրել է Փավստոսին հերիաթային տարրերից, երբեմն նաև բարոյազուրկ բովանդակության մանրամասներից և պահպանել միայն պատմական իրադարձությունների կմախքը՝ տեղ-տեղ այն լրացնելով այլ աղբյուրներից քաղած նյութերով: Ընդ որում, Խորենացին իրեն թույլ է տվել քիչ թե շատ նշանակալի շեղումներ Փավստոսից: Դրանցից մեկը պ. Խալաթյանցը դնում է պատմիչի անբարեխղճության և միտումնավորության հաշվին: Մյուսների համար նա պատրաստ է ընդունել ուրիշ աղբյուրներ: Եվ այս, և՛ մյուս դեպքերում ենթատվում են վրիպումներ ու անճիշտ լուսաբանություններ:

Խոսրովի և նրա թագավորության բնութագրության կապակցությամբ Խորենացին հեռանում է Փավստոսից: Հակառակ Փավստոսի գովաբանություններին, Խորենացին Խոսրովին կշտամբում է անգործունեության,

թուլության և պարապության համար: Պարոն Խալաթյանցը այդպիսի վերաբերմունքը գտնում է անարդար և կարծում է, որ դրա համար հիմք է ծառայել Խոսրովի **կոտակ** մականունը, որը, իբրև, Խորենացին սխալ է հասկացել՝ «թույլ, թուլակազմ» իմաստով[1]: Թվում է, թե անհարմար է կշտամբել Խորենացուն, որը, հավանորեն, մեզանից վատ չգիտեր հայոց լեզուն և **կոտակ** բառի նշանակությունը: Երկրորդ գրքի 83-րդ գլխում նա ասում է. Աշխենից ծնվեց Խոսրով որդին՝ **«ոչ համեմատ հասակի ծնողաց յորոց»**: Այլ կերպ ասած՝ կարճահասակ, գաճաճ:

Խորենացու հարձակումները Խոսրովի վրա պայմանավորված են Փավստոսի նկատմամբ քննադատական վերաբերմունքով: Ուշադիր հետևելով այն ամենին, ինչ Փավստոսը պատմում է Խոսրովի վերաբերյալ, կարելի է գալ այն եզրակացության, ինչ Խորենացին:

Ահա Խոսրովի թագավորության գլխավոր իրադարձությունները:

1. Երկպառակտչական պատերազմներ, որոնց հետևանքը եղավ Մանավազյանների և Որդունիների՝ երկու նախարարական տոհմերի բնաջնջումը: Խոսրով թագավորի գործունեությունն այստեղ արտահայտվեց այն բանում, որ նա զորքերը ուղարկեց և ոչնչացրեց նրանց:

2. Մազքութների արշավանքը, որոնք լեռնային ցեղերի ուղեկցությամբ հասան մինչև Խոսրովի բուն նստավայրը՝ Վաղարշապատ, և ամբողջ տարվա ընթացքում քանդեցին ու ավերեցին երկիրը: Խոսրովը չկարողացավ նրանց հակահարված տալ, փախավ մայրաքաղաքից և պատսպարվեց Դարոյնք ամրոցում:

3. Դրանից հետո սկսվում են պատերազմներ պարսիկների դեմ: Խոսրովի կողմից հակառակորդի դեմ ուղարկված հայկական զորքերի հրամանատարը դավաճանում է իր թագավորին և 40 հազար զորքով անցնում պարսից կողմը:

4. Այնուհետև գալիս է հարավային նահանգներից մեկի բռնշխ Բակուրի ապստամբությունը: Խոսրովի հրամանով նրա տոհմը նույնպես կոտորվեց: Այսպիսով, իր իսկ՝ Փավստոսի հաղորդած փաստերը չեն ապացուցում, որ «Խոսրովի օրոք Հայաստանում իշխել են օրենքն ու արդարությունը, խաղաղությունն ու համերաշխությունը»:

Եթե Փավստոսը, հակառակ իր ներկայացրած պատերազմի ու գժտությունների պատկերի, գովաբանում է Խոսրովի ժամանակաշրջանը, ապա միայն այն պատճառով, որ նրա օրոք է ապրել Վրթանես կաթողիկոսը: Հայտնի է, թե Փավստոսը ինչպիսի կողմնակալությամբ է վերաբերվում Գրիգոր Լուսավորչի ժառանգներին: Խոսրովի ժամանակվա գովաբանված խաղաղությունն ու բարեկեցությունը Փավստոսի խոսքերի իմաստի

[1] Գր. Խալաթյանց, էջ 199:

համաձայն կապված է Վրթանեսի անվան հետ[1]: Խորենացին հետևում է երկրի գլխավորապես քաղաքական պատմությանը, այդ պատճառով էլ նա կարողացել է տարբերել Վրթանեսի գործունեությունը Խոսրովի անգործությունից: Խոսրովը, իրոք, պատկանում է անփառունակ և թուլամորթ թագավորների թվին: Խորենացին իրավացիորեն է կշտամբում թագավորին, որն այդպիսի պայմաններում հնարավոր է գտնում տրվելու հաճելի ժամանցների: Պատմաբանը չի բաժանում իր պատմիչի կարծիքը և շեշտում, թե «առանձնատների կառուցումը և սերը որսորդության նկատմամբ դեռևս չեն ապացուցում ո՛չ թեթևամտությունը, ո՛չ դատարկապորտությունը, որովհետև որսորդությունը,- ինչպես կարծում է պ. Խալաթյանցը,- եղել է բոլոր ժամանակներում բոլոր թագավորների սիրելի հաճույքներից մեկը»[2]:

Ասում ենք, թե Խորենացին հետապնդում է Մամիկոնյաններին: Այդ տեսակետից պ. Խալաթյանցի կշտամբանքները երբեմն անցնում են արդարության սահմանները[3]:

Հակառակ Փավստոսի, Խորենացին Տրդատի օրոք հայկական զորքերի գերագույն հրամանատար է համարում Արտավազդ Մամիկոնյանին: Տվյալ դեպքում Խորենացին այդպես է վարվում բոլորովին էլ ոչ միտումնավոր մղումներից ելնելով: Չէ՞ որ, ըստ Խորենացու, Մամիկոնյանները Հայաստան էին եկել Շապուհ [I]-ի՝ Արտաշիրի որդու օրոք, նշանակում է Խոսրովի մահից հետո: Դրա համար էլ նրանք չէին կարող Խոսրովի սպարապետներ լինել: Իսկ Մամիկոնյանների հայտնվելը հարմարեցնելով Շապուհի ժամանակներին՝ Խորենացին հետևել է պատմության տվյալներին: Ըստ Սեբեոսի, Մամիկոնյանները նույնպես այդ ժամանակ են հայտնվել Հայաստանում:

Փավստոսի համեմատությամբ Խորենացու շեղումները ու հավելումները պ. Խալաթյանցը բացատրում է մասամբ **Ներսեսի վարքով**: Նա նշում է, որ երկու հուշարձաններում առկա են նման կամ նույնիսկ նույնական տարրեր: Անկասկած, նրանց մեջ կա սերտ կապ: Պարոն Խալաթյանցը դրանք մեկնաբանում է ոչ հօգուտ Խորենացու: Նա զանազանում է Ներսեսի Վարքի մի քանի խմբագրություններ, խոսում Մաղրասում հրատարակվածի մասին, զգուշացնում այն չշփոթել «Սոփերքում» դրված խմբագրության

---

[1] «Յաւուրս սորա եկաց եւ եղեւ քահանայապետ յաթոռն հօրն... Վրթանէս: Խաղաղութիւն և շինութիւն, մարդաշատութիւն և առատութիւն, պաղաքերութիւն և ասպետապաշտութիւն... յաւուրս սոցա աճեալ բազմացաւ: Լուսաւորէր եւ առաջնորդէր նոցա Ս. Վրթանէս... իրավունք եւ արդարութիւն ծաղկեալ էին ի դարուն յայնմ» (**Փավստոս Բուզանդ**, Գիրք Գ, 3):

[2] **Գր. Խալաթյանց**, էջ 201:

[3] Անդ, էջ 130:

հետ: Նա զգուշորեն նկատում է, որ Խորենացին օգտվել է Վարքի ավելի հին խմբագրությունից և հետո անտեսելով իր իսկ դիտողությունները՝ նա Խորենացու բնագիրը համեմատում է Վարքի այն խմբագրության հետ, որը հենց ինքը համարում է ավելի ուշ ժամանակի՝ և այն վերագրում VII-VIII դարերի պարականոն ստեղծագործությունների թվին: Ավելին, պ. Խալաթյանցը պնդում է, թե ըստ Ներսեսի Վարքի կարելի է ստուգել Խորենացուն՝ պարզելու, թե պատմիչն ինչ է վերցրել նրանից և ինչ ավելացրել իր կողմից: Բայց պետք է համաձայնել, որ դժվար է ստուգել հեղինակին ուշ ժամանակի հուշարձանի խմբագրությամբ, երբ նա օգտվել է ավելի հին խմբագրությունից:

Պարոն Խալաթյանցը հակված է կարծելու, որ հայ Արշակունիների ու կաթողիկոսների ժամանակագրությունը Խորենացին վերցրել է Ներսեսի վարքից[1]: Ըստ թագավորների ժամանակագրության, Վարքի մեջ նշվում են միայն Պապի տարիները՝ 7 տարի, ուստի Խորենացին այնտեղից վերցնելու ոչինչ չի ունեցել: Ինչ վերաբերում է կաթողիկոսների ժամանակագրությանը, ապա Խորենացին այն կարող էր վերցնել այլ աղբյուրներից:

Փարիզի Ազգային գրադարանի մի հունարեն ձեռագրում պահպանվել և մեզ է հասել հայ կաթողիկոսների ցուցակը: Այն հրատարակել է Ֆ. Կոմբեֆիսը Auctarium-ում և այնտեղից արտատպել է Migne, t. 132: Ցուցակը պարունակում է հայ կաթողիկոսների անուններն ու տարիները՝ սկսած Գրիգոր Լուսավորիչից ընդհուպ մինչև Սահակ [Գ] Տորոփորեցին: Այն թարգմանված է հայերենից: Նկատի ունենալով, որ ցուցակը հասցված է մինչև VII դարի 70-80-ական թվականները ապրած Սահակը՝ դրա հայերեն բնագիրը պետք է վերագրել Սահակի ժամանակին: Հետաքրքրական է, որ Սահակի տարիները ցուցակում նշված չեն, որից էլ պետք է եզրակացնել, որ այն կազմել է Սահակի ժամանակակիցը նրա կենդանության օրոք:

Այդ հուշարձանի արժանահավատությունը երաշխավորվում է նրանով, որ այն գոյություն ունի նաև վրացերենով: Մի քանի տարի առաջ պ. Ժորդանիան այն հրատարակեց ըստ «Գրագիտության ընկերության» (Общество Грамотности) թանգարանի ձեռագրի: Որ այն ծագում է հայկական բնագրից, երևում է վերնագրից՝ მოთხრობა პატიმოთნისაგან[2]: Երկու՝ վրացերեն ու հունարեն, ցուցակներն իրենց բովանդակությամբ բոլորովին համընկնում են: Վրացերենում չի նշված միայն վերջին՝ Սահակի անունը, և այն ավարտվում է նրա նախորդի՝ Իսրայելի վրա (փոխ. Եղիայի, հայերեն Իլի բառը սխալ կարդալու պատճառով): Վրացի հեղինակը բաց

---

[1] Գր. Խալաթյանց, էջ 211:

[2] ო. ჟორჟანია, ქრონიკები, Թիֆլիս, 1893, էջ 336: Պ[արոն] Ժորդանիայի մատ յուրիմացարար տպագրվել է პატიმოთნისაგან.

է թողել Սահակի անունը հավանաբար այն պատճառով, որ թնագրում նշված չեն եղել նրա աթոռակալության տարիները, ինչպես դա երևում է հունարեն թարգմանությունից:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ VII դարի երկրորդ կեսին հայ մատենագրության մեջ գոյություն են ունեցել կաթողիկոսների ժամանակագրության վերաբերյալ հուշարձաններ: Հիմք կա մտածելու, որ այդպիսի հուշարձաններ եղել են նաև Արշակունյաց թագավորների գահակալության վերաբերյալ: Հայ պատմական գրականությունը հարուստ է **«Գաւազանագիրք»** անունը կրող ժամանակագրական հատուկ ստեղծագործություններով: Բովանդակությամբ նրանցից առավել հնագույնը վերաբերում է X դարին (ՆԺԷ-967 թ.): Այդ հուշարձանի Փարիզի Ազգային գրադարանի թիվ 84 ձեռագրից մեր արտագրած նախաբանի սկզբում ասում է. «Մեր երկրի տիրակալ այրերի Արշակունի **թագավորների ժամանակագրության մասին զրից** հետո ես ուզում եմ հիշատակել նաև հայ պատրիարքների՝ Աստծու սուրբ այրերի տարիները և հայտնել՝ ովքեր են նրանք, որտեղից են և քանի տարի են աթոռակալել: Մեր նախնիներից ոչ ոք չի հոգացել մեզ հաղորդելու կաթողիկոսների գահակալության տարիները. մեծ ջանքերի գնով մենք որոնել և դրանք ներկայացնում ենք ճշտությամբ»: Միանգամայն պարզ է, որ Անանուն հեղինակը կաթողիկոսների ցուցակից առաջ նախ տվել է Արշակունի թագավորների ցուցակը: Հովհաննես [Ե] Կաթողիկոսի Պատմության մեջ կա կաթողիկոսների ու թագավորների պատրաստի ցուցակ: Քանի որ Անանուն հեղինակն իր աշխատանքը համարում է առաջին փորձ, հետևաբար նրա ցուցակն իր նախնական տեսքով պետք է վերագրել Հովհաննես Կաթողիկոսից առաջ եղած ժամանակին:

Փարիզի Ազգային գրադարանում պահպանվող Ագաթանգեղոսի ձեռագրի վերջում, հենց այն ձեռագրի, որից կատարված է Ագաթանգեղոսի վենետիկյան թարգմանությունը, կա ոչ մեծ, բայց ըստ ամենայնի հետաքրքրական փաստաթուղթ՝ «Նշանագիր կարգաց բանից Եզնկաց Երիցու» վերնագրով:

Կոմիտաս կաթողիկոսի ժամանակակից հեղինակ Եզնիկ Երեցը ականատես է եղել Ս. Հռիփսիմե եկեղեցու վերակառուցման ժամանակ Հռիփսիմեի մասունքների հայտնաբերմանը, որ տեղի է ունեցել [պարսից թագավոր] Խոսրովի 29-րդ տարում (619): Նրա աշխատության գլխավոր մասն իրենից ներկայացնում է հայ թագավորների ու կաթողիկոսների պարզ թվարկում՝ Տրդատից ու Գրիգորից հետո մի քանի տվյալների հավելումով: Այդ փաստաթղթին հետևում է կաթողիկոսների ցանկը՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև VIII դարի վերջը ապրած Ստեփանոս [Ա Դվինեցի]՝ նրանց աթոռակալության տարիների նշումով: Ըստ որում, տարօրինակ է,

որ չեն նշված Կոմիտաս կաթողիկոսի տարիները՝ մի հանգամանք, որ կարելի է բացատրել միայն այն բանով, որ ցուցակը իր նախնական տեսքով ավարտվել է Կոմիտասի վրա (5): Այդ դեպքում այն, հավանաբար, պատկանում է նույն այդ Եզնիկ Երեցի գրչին: Հետևաբար VII դարի սկզբին արդեն ճշտված էին կաթողիկոսների տարիները: Այդ նույն ժամանակին է վերաբերում նաև Արշակունիների ժամանակագրությունը կամ ավելի շուտ ժամանակագրության փորձը Սեբեոսի Պատմության Բ գլխում, որի մասին պ. Խալաթյանցն առհասարակ լռում է:

Մեր նպատակի համար առայժմ ասվածներն էլ բավական են: Այսքան հետաքրքրական ու կարևոր տվյալների առկայության պայմաններում առնվազն մեծ համարձակություն է պնդել Խորենացու կախումը Ներսեսի վարքից: Ավելի քան հավանական է ընդունել հակառակը՝ համենայն դեպս ժամանակագրական մասում, անտարակույս, Վարքը կախում ունի Խորենացուց:

Անբավարար է նաև Խորենացու և Սոկրատի փոխհարաբերության հարցի վերաբերյալ պ. Խալաթյանցի տված բացատրությունը: Սոկրատի «Եկեղեցական պատմությունից» Խորենացու փոխառությունը, ըստ պ. Խալաթյանցի, մի փաստ է, որ կասկածի ենթակա չէ: Բայց հայտնի է, որ Խորենացու մոտ առկա է նմանություն ավելի Փոքր Սոկրատին, քան Մեծին, իսկ վերջինս [իմա՝ Փոքր Սոկրատը - Պ. Հ.] համարվում է Սոկրատի բուն աշխատության զուտ հայկական վերամշակումը: Ուստի նմանությունները կարելի է բացատրել փոքր Սոկրատի հեղինակի վրա Խորենացու ազդեցությամբ: Համենայն դեպս, այդ հարցը առայժմ մնում է բաց:

Ավելի լավ չեն գործերը Սեղբեստրոսի Վարքի հետ: Խորենացու՝ Մեսրոպի բնութագրության մեջ ուսումնասիրողները նշում են 15 տողանոց մի ամբողջական հատված, որը բառացիորեն նույն տեսքով գտնվում է 678 թ. հայերեն թարգմանված Ս. Սեղբեստրոսի ընդարձակ վարքում: Դա լուրջ և, կարող է պատահել, միակ էական փաստարկներից մեկն է Մովսես Խորենացու պատմության հին ծագման դեմ: Գր. Խալաթյանցը փոխառության այդ դեպքը համարում է ուշագրավ, թեև այն անհամատեղելի է այն կարծիքին, որը մեր քննադատն ունի Խորենացու հուշարձաններից օգտվելիս կիրառած հնարքների մասին: Պարոն Խալաթյանցի պատկերացմամբ, «աղբյուրները, որոնցից վերցնում է Խորենացին, սովորաբար նրան ծառայում են այն բանի համար, որպեսզի կամայականորեն վերափոխի նրանց քովանդակությունը՝ ընթերցողի առաջ նրա հետքերը ծածկելու նպատակով»[1]: Այս խոսքերից հետո պ. Խալաթյանցը առանց որևէ վերապահության պնդում է, որ ինքնամոռացության մեջ Խորենացին առանց

[1] Գր. Խալաթյանց, էջ 199:

քաշվելու, տատ առ տատ, Սեղբեստրոսի Վարքից արտագրել է մի ամբողջ հատված: Երկուսից մեկը՝ կամ պ. Խալաթյանցի՝ Խորենացուն տված բնութագիրը ճիշտ չէ, կամ Սեղբեստրոսի ամբողջ հատվածը մուծվել է «**Հայոց պատմության**» մեջ Խորենացուց անկախ, որպես ընդմիջարկություն:

Այն հուշարձաններից շատերը, որոնք պ. Խալաթյանցն ընդունում է որպես Խորենացու աղբյուրներ, կարելի է մերժել որպես այդպիսիք՝ ելնելով հենց միայն ընդհանուր բանասիրական նկատառումներից:

Եթե Խորենացին իր տրամադրության տակ ուներ, ասենք, Սոկրատը, Սեբեոսը, Ղևոնդը և այլն, հապա ինչո՞ւ է նա բավարարվել քչով և նրանցից չի քաղել այն ամբողջը, ինչ կկարողանար: Տարօրինակ չէ՞ արդյոք, որ մեր պատմիչն ամեն անգամ քրքրում է հարուստ գրական գանձարաններն այն բանի համար, որ այնտեղից վերցնի աննշան մանրուքներ, երբեմն ինչ-որ արտառոց բառեր կամ առանձին արտահայտություններ: Չեռքի տակ ունենալով իրենց բովանդակությամբ արժեքավոր պատմական հուշարձաններ, նա դիմում է նրանց միայն այն դեպքում, երբ իրեն անհրաժեշտ են ինչ-որ սիրած կամ դիպուկ բառեր ու արտահայտություններ, կամ էլ ամենևին աննշան տեղեկություններ ու դեպքեր: Պարոն Խալաթյանցը այդ հանգամանքը նույնպես համարում է տարօրինակ: «Պարսից պատերազմը նկարագրելիս, որ այնքան կարևոր է Հայաստանի համար, - գրում է պ. Խալաթյանցը, - Խորենացին, որքան էլ տարօրինակ է, չի օգտվել այդ իրադարձությունները բավական մանրամասն հաղորդող պատմական աղբյուրներից, ինչպես, օրինակ, հայերեն թարգմանությամբ իրեն հայտնի այդ նույն Սոկրատից կամ Մալալայից. նրանց գերադասել է Գրիգոր Նազիանզացու հայերեն թարգմանության **ճարտասանական կցկտուր արտահայտությունները**»[1]: Իսկապես, շատ տարօրինակ է: Այդ իմաստով տարօրինակ է նաև թե ինչպես Խորենացին վարվում է Սեբեոսի ու Ղևոնդի նկատմամբ: Չէ՞ որ նրանք էլ են սիրում Բագրատունիներին, շատ են պատմում նրանց մասին, նրանց աշխատություններում կան ոչ քիչ չափազանց հետաքրքրական դրվագներ Բագրատունիների կյանքից, որոնք Խորենացին կարող էր վերամշակել, վերափոխել «մինչև անճանաչելիություն»: Բայց պատմիչը անհասկանալիորեն արհամարհել է դրանց և, ըստ Խալաթյանցի, անհրաժեշտ է գտել մեկ-երկու անգամ միայն բացել Ղևոնդի Պատմությունը, իմանալու Հայաստանում **Գողթն, Նախճավան, Ջուղա, Խրամ, Խոշակունիք** տեղանունների գոյության մասին և իմացություն ձեռք բերելու, թե «Արաքս գետը խստաշունչ ձմռանը սառչում է»[2]: Ես կարծում եմ, որ Ղևոնդին կարելի

---

[1] Գր. Խալաթյանց, էջ 217:

[2] Անդ, էջ 216:

է դուրս հանել Խորենացու օգտագործած աղբյուրների շարքից՝ առանց պ. Խալաթյանցի պաշտպանած գործին որևէ չափով վնասելու:

Բոլոր նման դեպքերում, երբ մենք հաստատում ենք Խորենացու բնագրի և ինչ-որ ստեղծագործության նմանության անկասկածելի փաստ և վերը արված դատողությունների հիման վրա չենք կարողանում պնդել, որ մեր պատմիչը իր տրամադրության տակ ունեցել է դրանք, պետք է ընդունենք **ընդհանուր աղբյուրի** գոյությունը: Ներկա դրույթը ճիշտ է պ. Խալաթյանցի բերած աղբյուրներից շատերի նկատմամբ: **«Հայկական էպոսի»** վերջաբանում Խորենացու աշխատությունը հասցնելով VIII դարի ավարտը և նույնիսկ IX դարի սկիզբը, պ. Խալաթյանցը խոստանում է իր հաջորդ աշխատանքում ավելի ճշգրիտ պարզաբանումներ ներկայացնել **«Հայոց պատմության»** առեղծվածային հեղինակի և ժամանակի վերաբերյալ: Սակայն **«Հայաստանի պատմության»** գրության ճշգրիտ ժամանակը նոր աշխատության մեջ չի տրվում: Հեղինակի վերաբերյալ պ. Խալաթյանցը արդեն նոր բան է հաղորդում. բանից պարզվում է, որ Խորենացու բոլոր կեղծումները ևպատակ են ունեցել «համոզել մեզ այն բանում, որ նա V դարի հեղինակ է և Սուրբ Սահակի ու Մեսրոպի այն աշակերտներից, որը հիշվում է Ղազարի մոտ Մովսես Փիլիսոփա բարձրագոչ անվան ներքո»[1]:

Խորենացու ժամանակի մասին հարցի այդպիսի լուսաբանության դեպքում դեռևս պետք է բացատրել, ինչից է, որ նրանք, որոնք առաջինը ծանոթացան Խորենացուն, այսինքն՝ Հովհաննես Կաթողիկոսը կամ Թովմա Արծրունին, զարմանք չեն հայտնում 22մեցնող հայտնագործության առթիվ: Թափ է տրվում դարավոր փոշին, և հանկարծ հայտնվում է ուշագրավ աշխատությունը, առավել նշանավոր հեղինակի՝ Սահակի աշակերտ Խորենացու աշխատությունը, որի մասին չորս դար ոչ ոք չի իմացել:

Չդիպչելով հարցի էությանը, պ. Խալաթյանցի հեղինակին վերաբերող հարցադրումը ես գտնում եմ բավական կտրուկ: Պետք է ընդունել, որ ոչ թե Խորենացին, այլ ինչ-որ ուրիշ Անանուն հեղինակ կազմել է «Հայոց պատմությունը» և շրջանառության մեջ դրել Խորենացու հայտնի անվան տակ, որ համարվել և եղել է Սահակի աշակերտներից:

Պորփյուրի հայերեն թարգմանված տրակտատներից մեկում մի հետաքրքրական վկայություն կա կեղծանուն ստեղծագործությունների մասին: Դրանք, ի միջի այլոց, լինում են տարբեր բնույթի՝ **«խորթք ասին շարագրածուիցն, որ լինին ի ճեռն պատասխրութեան, այսինքն՝ սնափառութեան: Քանզի ոմանք անփառք և աներևելիք գոլով՝ անուանք**

[1] Գր. Խալաթյանց, էջ 375:

վարդապետութեան կամելով յարգել զիւրեանց շարագրածսն, մանագրեն յիւրեանց շարագրածսն զերևելի ուրուք զանուն վարդապետի»[1]:

Հնարավոր է, որ «Հայոց պատմության» հետ տեղի է ունեցել ինչ-որ նման բան: Համենայն դեպս, Խորենացու ճակատագիրը դեռևս մնում է առավել հիմնավոր վճիռ պահանջող առեղծված: Որպես Խորենացու բացասական քննադատների ներկայացուցիչ, պ. Խալաթյանցն այդ ուղղությամբ կատարել է իր խնդիրը: Իր արդյունքներով նրա հետազոտությունը համարվում է հայ պատմիչի նկատմամբ քննադատության ամենախիստ ու ամենակտրուկ արտահայտությունը: Պարոն Խալաթյանցի աշխատանքի նշանակությունը հենց նրա եզրակացությունների ծայրահեղությունն ու կտրականությունն է: Նրա հետազոտությունն իրենով ավարտում է Խորենացու ուսումնասիրության ժխտականության փուլը և համարվում անհրաժեշտ աստիճան ավելի դրական և համապատասխան ճիշտ (իրական) տեսակետի անցնելու համար: Այն բոլորը, ինչ որ կարելի էր ասել «Հայոց պատմության» դեմ, պ. Խալաթյանցի կողմից ասվել է (6): Խորենացու քննադատների մոտակա խնդիրն է չափավորել հափշտակության մոլուցքը և VI-VII դարերի հայկական գրական հուշարձանների շարքում ճշգրտորեն որոշել «Հայոց պատմության» տեղն ու ժամանակը: Մեր դրսևորած առարկությունները նպատակ ունեն պ. Խալաթյանցի հետազոտությունից լոկ մասնակիորեն վերացնելու այն տարրերը, որոնք որպես հափշտակության սայթաքումներ խախտում են վստահությունը Խորենացու մերժողական քննադատության նկատմամբ (7):

1 Տե՛ս, Մատթէոս Վահունեաց, Պատմիչք Անհաւոք, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 252:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՎՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԹՎԱԿԱՆԻ ՍԱՍԻՆ

(Պարոն Հանս Լեվիի (1) մեկ հոդվածին (2) առթիվ)

Մովսես Խորենացիի բոլոր քննադատներուն մեջ, որոնք բազմաթիվ են, Hans Lewy երևան կուգա իրրև ամենեն ճշգրիտը, բայց նաև ամենեն խիզախը: «*Հայոց Պատմութիւնը*», ըստ իրեն, գրված է, 876 թվականի և 885 թվականի միջև: Ստույգն ըսելով, հարցն այնքան բարդ է, որ կարելի չէ այդքան բացորոշ կերպով վճռել զայն, առանց որևէ երկվանքի:

Ըսե՛նք իսկույն, թե Hans Lewy-ի առաջարկած լուծումը հիմնված է Մովսես Խորենացիի մեկ խոսքին վրա (3), որուն մեջ կկարծեն ան գտնել ակնարկություն մը Վասիլ I-ի գահակալության: Սխալ մըն է այդ: Խնդրո առարկա հարցը բնավ հարաբերություն չունի Սահակի տեսիլքին հետ, որ Արշակունյաց ապագային կհայի: Այդ խոսքը կշոշափե հարց մը, որուն մասին վաղուց գրած ենք մենք (4): Քանի մը բառով ըսենք, թե ի՛նչ բանի վրա է այդ հարցը:

Մովսես Խորենացի գործածած է, ի միջի այլոց, վավերագիր մը՝ որ կկոչվի «**Գահնամակ**» («Ցանկ կարգաց»), ցուցակ մը՝ որուն մեջ իշխանական տոհմեր անվանադասված են համաձայն այն կարգին, որով անոնք, ըստ արժանյաց՝ ճանչցված էին Արշակունի կամ Սասանյան արքունիքին մեջ: Այդ վավերագիրը բարեբախտաբար հասած է մեզի, և կրնանք քննության ենթարկել զայն և հասկնալ Խորենացվո այն էջերը, որոնք անկե ներշնչված են: Ցուցակին մեջ Մամիկոնյանները հինգերորդ կարգը ունին, Կամսարականաց տոհմը՝ տասներեքերորդը, Ամատունյացը՝ տասնվեցերորդը: Հայ պատմիչը դժգոհ է այս կարգավորումեն: Իրեն այնպես կթվի, թե Մամիկոնյանք շատ վեր են դրված, ու մյուսները՝ շատ վար, պատվո այդ աստիճանաշարքին վրա: Այդ անիրավությունը բացատրելու համար, Մովսես ինքզինքին թույլ կուտա ենթադրություն մը, որ կհենու «**Գահնամակին**» առաջաբանին վրա, որուն մեջ հիշված են Սահակ, Վռամ և Արտաշիր: Ըստ այդ պատմության, Մամիկոնյանք հինգերորդ կարգը գրաված են, ոչ թե իրենց արժանիքովը, այլ շնորհիվ միջամտության Սահակ Հայրապետի, որ խնամի էր իրենց: Գալով մյուս երկու տոհմերուն՝ Կամսարականաց և Ամատունյաց, անոնք անավազված էին, պարսից թագավորին հակառակած ըլլալնուն համար՝ ի նպաստ հայ թագավորին: Սահակ թախանձած էր

պարսից Արտաշիր թագավորին, ոչ միայն Մամիկոնյանց այլ նաև Կամսարականաց և Ամատունյաց համար: Թագավորն ընդունած էր Սահակի աղերսը և Մամիկոնյանց տոհմին շնորհած էր հինգերորդ կարգը, մինչ մյուս երկուքը մնացեր էին խոնարհագույն աստիճանի վրա: Սահակ երբ երկրորդ անգամ Կտեսիփոնի արքունիքը կգտնվի, դարձյալ նույն խնդրանքը կնե, այս անգամ Արտաշիրի հաջորդ Վռամ թագավորին: Երկու բան կխնդրե ան. նախ՝ որ թագավորը հրամայե այնուհետև «Գահնամակ»-ը պահել այնպես, ինչպես կարգադրած էր Արտաշիր թագավորը, և հետո՝ որ մարզպանները ըստ կամս չկարենան փոփոխության ենթարկել զայն: Եթե թագավորը, Արշակունյաց դեմ իր ոխովը, մերժե անոնց արեևակից Կամսարականներուն տալ իրենց պատշաճ կարգը, գեթ ստորակա դիրք մը շնորհել անոնց, ինչպես Ամատունյաց ևս, մինչև որ «Աստուած քաղցրասցի դարձուցանել ի կարգ հայրենի ընդ ձեռն *որ ևս է թագաւորին*»:

Hans Lewy կսախալի այստեղ փնտրելով ակնարկություն մը Վասիլ I-ի մասին: Բյուզանդացի կայսրը որևէ գործ չունի խնդրո մը մեջ, որ պարսիկ թագավորին միայն կվերաբերի: Մովսես Խորենացի «որևէ թագաւոր» ըսելով կհասկնա Վռամի հաջորդներեն մին: Անիկա ի նկատի ունի ապահովապես Վահան Մամիկոնյանի և Վաղարշ արքայի ժամանակը: Քաջ Մամիկոնյանը, երկու տարի կռվելե վերջ, հանճճ կառնե վար դնել զենքը՝ կարգ մը պայմաններով: Ի մեջ այլոց կպահանջեր ան, որ դիրք, պատիվ և վարձք բաշխված ատեն մեն մի իշխանի իրական արժանիքին միայն նայվի (= «Յաղագս գահու և պատուոյ շքեղութեան, հայելով յիւրաքանչիւր ուրուք վաստակս») (5): Վահան կխնդրեր նաև որ թագավորը Կամսարականներուն դարձնե իրենց հայրենական կարգը (= «Զի թէ էր եւ հնար էր շնորհել ձեզ զտանուտէրութիւնն Կամսարականին») (6): Ակներև է ուրեմն, թե «որևէ թագաւոր»-ը Վաղարշն է, որ Վահանանց ապստամբական դիմադրութենեն հետո ինքզինքն ստիպված կզգա դարմանալու այն անկարգություններն ու բարոյալքումը, որոնց ենթարկված էր հայ ավատական միջավայրը Պերոզի և Հազկերտ [II-ի] նախընթաց թագավորության ատեն:

Գալով Բագրատունյաց ձգտումներուն, որոնցմով տոգորված է Խորենացվո գործը, անոնք անհրաժեշտորեն չեն հարկադրեր **«Հայոց պատմութեան»** երևումը հապաղեցնել մինչև Աշոտի արքայական գահ ելնելը: Մովսես[Խորենացին] Բագրատունյաց համակրություններուն հետ զույգ կ՝ ընթանա ոչ բարյացակամ զգացում մը հանդեպ Մամիկոնյանց, որ հակառակորդներն էին Բագրատունյաց: Մովսես Խորենացիի՝ Մամիկոնյաններու անունն աղարտելու ձգտումը կ'ապացուցանե միայն, թե Մամիկոնյանները տակավին վերջացուցած չէին իրենց քաղաքական

գործը. դեռ իրենց վերջին բառն ըսած չէին, թեև այնքան տկարացած էին, սակայն որ պատմիչին սրատես աչքը կրնար ընդհշմարել, թե անոնց դատը կորսված էր արդեն, և թե ապագան անոնց խոհական ոսոխներուն՝ Բագրատունի իշխաններուն էր այլևս: Այսքան միայն կարելի է ըսել ուրեմն, թե Մովսես Խորենացիի գործը Մամիկոնյանց ճվազման թվականին միայն կարելի է դնել առ առավելն: Իսկ այդ ճվազումը կուգա 775 թվի եղերական դեպքերեն անմիջապես հետո միայն և կվերջանա Մամիկոնյանց անհետացումով՝ Աշոտ Մսակերի († 826) առաջին հաջողություններուն հետ, որ Բագրատունյաց ճշմարիտ վերածնիչը եղավ:

Դիպվածավ չէ, այլ 775 թվի նույն այդ հեղափոխության հետևանքովն է, որ Մամիկոնյան ճշանավոր տան վերջին ներկայացուցիչները, արաբներեն խույս տալով, գաղթեցին Բյուզանդիոն, և հոն ճշանավոր և փայլուն դիրք ունեցան, IX դարեն սկսյալ: Այդ տոհմին կպատկանեին արդարև Մանուել անվանի զորավարը, Հայկական բանակաթեմին ռազմավարը 813 թվեն ալ առաջ, Վարդաս Կեսար, Պետրոնաս, 863 թվի դյուցազնը, և իրենց քույրը՝ Թեոդորա կայսրուհի:

Այդ ժամանակաշրջանին և նույն այդ պատճառով էր, որ Ամատունի Շապուհ իշխանը և իր որդին Համամ, տասներկու հազար գաղթականներու ի գլուխ, անցան սահմանեն և գացին հաստատվիլ բյուզանդական երկրին մեջ: Մովսես Խորենացի զմայլող մըն է հելլենական մշակույթին, ու չի ծածկեր իր համակրությունները քրիստոնեական այդ մեծ կայսրության վերաբերմամբ, բայց ատոր համար կարելի չէ իր այդ զգացումները, որոնց հաղորդ էին ուրիշ հայեր ևս հարաբերության մեջ դնել Աշոտի քաղաքականության հետ, որ դեպի խալիֆայություն ուղղության կհետևեր, և **«Հայոց պատմութեան»** հորինումը հետաձգել մինչև Աշոտի թագավորությունը: Պետք է ի նկատի ունենալ մանավանդ Աշոտի այդ քաղաքականության հակամամիկոնյան ճգտումը, ինչ որ կպարտավորե մտածել, թե հայ պատմիչը իր գործը գրած պետք է լինի Մամիկոնյանց վերջին հեղափոխական ճիգերուն տպավորության ներքև: Անիկա չի ճանչնար ոչ միայն իշխանապ իշխան Աշոտը, այլ նաև անոր հայրը՝ Սմբատ Խոստովանող, ինչպես նաև (հակառակ Յո. Մարկվարտի կարծյաց) Տարոնցի իշխանաց իշխան Բագարատը: Անիկա չէ տեսած Ղազար Փարպեցիի Պատմության մեջ հետո ներմուծված Սահակի տեսիլքին այժմյան հեղվածն ալ:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՊԱՐՈՆ ԼԵՎԻԻ ՆՈՓԻՆ ՄԱՍԻՆ

Պ[արոն] Լեւի, վերի հոդվածին մեջ (1) հրաժարելով հանդերձ Խորենացվո **Պատմութեան** թվականը Վասիլ I-ի թագավորության առեն դնելու իր տեսութենեն, կշարունակէ մերժել մեր փաստերը և նույն իսկ հակասության ամբաստանություն կենե մեր մասին: Եվ սակայն, Վասիլ I-ի վրա գրած մեր հոդվածին մեջ, ուր առիթ ունեցած էինք քննելու Սահակի **Տեսիլ**-ը, մենք եզրակացուցած էինք թե այդ **Տեսիլ**-ը, իր ներկա ձևին մեջ, մինչև Փոտի ժամանակը կվերաբերա (2): Ըսած էինք նաև, թե մեր այս կարծիքը կրաղխի սա քանի մը դժվարություններուն. Սահակի տեսիլը հիշատակված ըլլալը անանուն հեղինակին *Διήγησις-ի*, որ Սահակ Գ կաթողիկոսի († 704) օրով հայերենեն թարգմանված կտոր մըն է (3). նույն տեսիլին հիշված ըլլալը Մովսես Խորենացիեն, և տեսիլին ժամանակեն մինչև անոր իրականացումը անցած 350 տարիներուն հաշիվը: Փորձած էինք նաև փարատել այդ դժվարությունները, ենթադրելով որ *Διήγησις-ը*, թարգմանված ըլլար Փոտի առեն և Մովսես Խորենացին թերևս **Տեսիլ**-ենե հետո եղած ըլլար, ու նույնպես թելադրություն մը ըրած էինք 350 թիվին մասին: Եվ սակայն մեր քննության շարունակումը մեզի ցույց տվավ, թե մեր ենթադրությունները կամայական եղած էին և ընդունելի չէին կրնար ըլլալ գեթ *Διήγησις-ին* համար, նույնիսկ մեկ կողմ դնելով Մովսես Խորենացին: Այն առեն առաջարկեցինք երկրորդ լուծում մը, որ սա է. Ղազար Փարպեցին կհիշե Սահակի տեսիլ մը՝ վերաբերմամբ Արշակունյաց և Գրիգորիսյանց վախճանին, առանց որևէ ակնարկության՝ ապագային անոնց վերերևումին. այս տեսիլքեն է որ, ժամանակ մը ետքը, մեկը հանած է ներկա տեսիլքը, Վասիլի պարագաներուն հարմարցնելու համար պետք եղած ընդլայնումը տալով անոր: Բայց, այս վարկածով, *Διήγησις-ին* և Մովսես Խորենացիի մասին այլևս խնդիր չի կրնար ըլլալ, վասնզի ոչինչ կ'արացնէ ընդունելու, որ անոնք ճանչցած ըլլան ներկա տեսիլքը և ոչ թե Ղազար Փարպեցիի սկզբնական գրվածքը: Ինչ որ ըսել է, թե կարելի պիտի չըլլա **Տեսիլ**-ենե ոչ մեկ փաստ հանել հայ պատմագրին թվականի մասին:

Պ[արոն] Լեվի դիտել կուտա տակավին, թե ինքը Մովսես Խորենացին Աշոտի (4) դարուն կդնե այն պատճառով, որ հայ պատմագրին մեջ երևցած

կրկնակ զգացումը, այսինքն՝ թե՛ Բագրատունյաց մասին ունեցած համակրությունը, թե՛ նույն ատեն «հելլենասեր» լինելը, Աշոտ թագավորի դարուն համար միայն կրնար հասկնալի ըլլալ, վասնզի Բագրատունյաց շրջանին մեջ Աշոտ է, որ առաջին անգամ սկսավ «հելլենասեր» քաղաքականության, ու հելլենասեր դրանիկ մը պիտի չկարենար տեղ գտնել Աշոտեն առաջագույն Բագրատունյաց արքունիքին մեջ:

Բայց ասոնք բոլորովին անձնական տեսություններ են, որոնք համաձայն ալ չեն պատմական վավերագիրերու: Իրապես, քիչ բան գիտենք Աշոտ թագավորի հելլենասեր քաղաքականության մասին: Ամբողջ իր ասպարեզը արաբական աշխարհայացքով է դրոշմված: Բուղայի ուղեցույցն է ինքը՝ Հայաստանի մեջ անոր ըրած անագորույն արշավանքին միջոցին. պահ մը մյուսլիման կձևացնեն ինքզինքը, և ի վերջո արքունի ապարոշ կկապե, առանց բնավ Բյուզանդիա դարձնելու իր նայվածքը: Ընդհակառակն Բյուզանդիա է, որ Աշոտի բարեկամությունը ջանաց ունենալ, երբ հասկցավ թե իրական ուժ մը կներկայացներ ան: Ու եթե Փոտ օր մը հանկարծ Հայ եկեղեցիի միության խնդիրը հարույց, անձնական փառասիրությամբ էր, որ ըրավ ան այդ քանը, այսինքն՝ առաքելական գործունեության համբավ շինելու համար, ու միայն ասիկա կբավեր, որ Աշոտ իր կռնակը դարձներ Բյուզանդիայի:

Գիտենք մյուս կողմե, և ասիկա հակառակ պ[արոն] Լեվիի հավաստումին, թե շատ ավելի շեշտված հելլենասիրություն մը եղած էր Աշոտ Մսակերի և իր Շապուհ եղբոր օրով, որոնք Դարույնքի (այժմ Պայազիտ) իրենց կալվածը թողուցին՝ Շիրակի մեջ հաստատվելու համար, հաջողելով այսպես իրենց համար հաստատուն կայք մը ստեղծել Տայքի և Սպերի մեջ, որովհետև անոնք պատեհ պարագային համար՝ Բյուզանդիո աջակցության վրա դրած էին իրենց հույսը: Լևոն [V] Հայկազն, որ այդ միջոցին կայսերական գահուն վրա էր, պատվեր էր Կղարջքի իշխան և Մսակերին ազգական և դաշնակից Բագարատը՝ Կյուրապաղատի տիտղոսով և պատրաստ էր օգնության հասնիլ Աշոտի և Շապուհի, Հայաստանի սրտին մեջ և Վանա լճին ափերուն վրա տեղավորված մյուսլիման իշխանությանց դեմ, եթե անոնք կռիվ մղել հարկադրվեին: Նույնպես Թեոփիլոս կայսրը Շապուհի Աշոտ որդին բարձրացուց անտի հյուպատ-պատրիկության, պատվո բացառիկ տիտղոս մը, որ հնարված էր պատվելու համար կեսար Ալեքսիոս Մուսելեսը:

Կտեսնվի ուրեմն, թե «հելլենասեր» ճգտում մը՝ Աշոտ թագավորեն առաջագույն ժամանակի մը մեջ «կարելիություն» մը չէ, այլ իրողություն մը: Ու եթե պ[արոն] Լեվի «հելլենասեր» դրանիկ կ'ուզե փնտրել, դյուրավ պիտի գտնե զայն Մսակերի արքունիքին մեջ: Մեզի համար, հայ պատմագիրը ոչ

դրանիկ մըն է և ոչ ծախված գրիչ: Մտավորական մեծ դեմք մըն է ան, որ ունի իր տեսությունները, իր համոզումները, և որ հայ անցյալը ակռսող երկու հոսանքներեն ազատորեն ընտրած է այն, զոր համաձայն է գտած իր գաղափարներուն, և իրեն համար պարտականություն նկատած է պաշտպանել այդ հոսանքին դրոշակիրը, Բագրատունյաց ընտանիքը:

Ուստի, պ[արոն] Լեվիի առաջ բերած փաստերը չենք գտներ համոզիչ՝ Մովսես Խորենացին Աշոտի թագավորության օրով դնելու համար: Չէ՞ որ ինք Խորենացին կ'ըսե իրեն համար. «Ես արդ առ օտարացն թագաւորութեամբ կնցեալ» (Գիրք Ա, գլ. 22):

ԽՈՐԵՆԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ ՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ ՀԱՑՈՒՆԻ

Միրեկի Չոպանյան,

Ստացա նամակդ: Ցավում եմ, որ գոնե ներկայումս ժամանակ չունեմ ցանկացածդ հոդվածը գրելու: Բայց կհայտնեմ ստորև կարծիքս Ձեզ հետաքրքրող հարցի առթիվ, որքան կներեն նամակի սահմանները (1):

Հայր Ակինյան և հայր Հացունի աշխատում են տարբեր և հակառակ ուղղությամբ և չեմ կարծում, որ նրանց առաջ և հետ խաղացումներից մեծ բան շահեն հայ բանասիրությունը: Միանգամայն ապարդյուն գործ է առաջնորդել Խորենացին դեպի V դար: Խորենացին օգտվել է Սեղբեստրոսի և Սոկրատի հայ թարգմանություններից՝ կատարված 678 և 696 թթ. և ապա ուրեմն ուշ է, քան 696 թիվը: Այս փաստ է, որի դեմ անզոր են առարկությունները և ընդդիմախոսական նկրտումները: Հարցի **terminus a quo** հաստատուն է, մնում է որոշել **terminus ad quem** այստեղ է կայանում այսուհետև Խորենացու կնճիռը: Գիտեք, որ ոմանք տրամադիր են քարշել Խորենացին մինչև IX դարի վերջերը, ինչպես Մարկվարտ և ուրիշները: Նկատի ունենալով Խորենացու հակամամիկոնյան տրամադրությունը, որի դեմ իզուր է վատնում իր պերճախոսությունը հայր Հացունի, ես կարծում եմ, որ Խորենացին գտնվում է ութերորդ դարու խռովությունների, մասնավորապես 775 թվի ապստամբության և նրա ծանր հետևանքների ազդեցության տակ, ուստի և անընդունելի եմ համարում Մարկվարտի տեսությունը: IX դարում Մամիկոնյանները իջել և անհետացել էին հայ պատմության ասպարեզից և ուրեմն տեղիք չկար նրանց հանդեպ հակառակորդի դիրք բռնել:

Գալով Մովսես Կաղանկատվացու խնդրին, ինչ որ Ձեզ առանձնապես հետաքրքրում է, պետք է ասել, որ հայր Հացունիի տեսակետը հիմնավոր չէ: Եվ ահա ինչու: Կաղանկատվացու Պատմությունը բաղկացած է երեք գրքից և ամփոփում է Աղվանքի (իրապես Արցախի) անցյալը՝ սկզբեն մինչև 950-ական թվականները: Մխիթարյանները (ինչպես կտեսնեք Զարպհանալյանի «Հայոց մատենագրության պատմությունից») կարծում են, որ Կաղանկատվացուն են պատկանում միայն Ա և Բ գրքերը, իսկ Գ գիրքը գործ է ուրիշ հեղինակի, որ ուշ ժամանակվա՝ X դարու մարդ է, այն ինչ Կաղանկատ-

վացին ապրում էր VII դարում: Ի՞նչ հիմ ունի այս կարծիքը, կհարցնեք: Ըստ երևույթին՝ լուրջ: Սակայն Բ գրքի մեջ հիշված ամենեն որոշ իրողությունը վերաբերում է 685 թվին, ավելի ստույգ՝ 678-685 յոթն տարիներին: Այդ այն Թուղթն է, որ Հռնաց իշխանը ուղղել է Սահակ Չորփորեցի կաթողիկոսին (678-704) և Գրիգոր իշխանին, որ ընկավ խազարաց դեմ կռվելիս 685 թվին: Ուրեմն, Թուղթը գրված պիտի լինի 678-685 թվերին: Այստեղից հետևում է, որ Կաղանկատվացին ուշ է, քան 678-685 թիվը: Սակայն Բ գրքի 14-րդ գլխի մեջ, ուր հեղինակը պատմում է, թե ինչպես Աղվանից Վիրո կաթողիկոսը գնաց Խազարաց Շաբ իշխանի բանակը և ի՛նչ ընդունելություն գտավ, պատահում է «անդ **տեսաք** զբազմոցս նոցա» և քիչ հետո՝ «բարձեալ (զընծայս) ի բազկաց **մերոց**» առաջին դեմքով դարձվածը: Այս առիթ է տվել Մխիթարյաններին կարծելու, որ պատմողը՝ Կաղանկատվացին, ուղեկցել է Վիրո կաթողիկոսին, ներկա եղել ընդունելության և որովհետև այցը տեղի է ունեցել 628 թվին, ապա ուրեմն Կաղանկատվացին ապրել է յոթներորդ դարում և որպես այդպիսին չէր կարող Գ գրքի հեղինակ համարվել, որ վերաբերում է IX և X դարու անցքերին:

Այս ըմբռնումը հիմնովին սխալ եմ համարում: Զարմանալի է, որ հայր Հացունի շարունակում է կրկնել ինչ որ Զարպհանալեան գրել է գրեթե մի դար առաջ: Նախ, եթե Կաղանկատվացին 628 թվականին՝ արդեն կաթողիկոսին ուղեկցելու հասակն ուներ, պետք է զառամյալ ծերունի լիներ 685 թվեն հետո իր գործը գրելիս: Սակայն կարևորն այս չէ:

Երկրորդ գրքի 14-րդ գլխի շարունակությունն է 15-րդ գլուխ. «Վասն սաստկացեալ սովոյն եւ գերութեանն ի միասին», որպես հետևանք բարբարոսների հրոսակության: Եվ այս գլխի վերջը պահված է մի քանի կագին հիշատակարան. «Ես Վիրոյ՝ Աղուանից եւ Լփնաց եւ Չողայ կաթողիկոս՝ թողում ասել զայլն ամենայն» և այլն: Այս հիշատակարանը վկայում է անստորեն, որ Վիրո կաթողիկոսի այցի նկարագրության բուն հեղինակն ինքը Վիրո կաթողիկոսն է: Իշխանների և ժողովրդի խնդրանքով և նրանց ներկայացուցիչ պատվական անձերի առաջնորդությամբ կաթողիկոսը հանձն է առել գնալ ողոքելու բռնավոր Շաբ իշխանի սիրտը և ազատելու գերիներին: Հաջող առաքելությունից հետո Վիրո գրել է իր ճանապարհորդության պատմությունը, թերևս կցած որևէ ձեռագրի որպես հիշատակարան, և Կաղանկատվացին առել և դրել է իր գործի մեջ: Վիրո պատմել է առաջին դեմքով, և Կաղանկատվացին փոխել է երրորդ դեմքի, միայն մի տեղ թողել է բնագրի «անդ տեսաք», որովհետև իսկապես անհարիր էր գրել՝ «անդ տեսան», քանի որ նկարագրում է, թե ինչպես վայրենի մեծամեծները Շաբ իշխանի՝ ոչ թե մարդավարի նստած էին, այլ ուղտի նման չոգած իրենց տիրոջ առաջ: «Ի բազկաց մերոց» չի նշանակում,

որ Կաղանկատվացին ևս իր բազուկների վերա ուներ ընծաներ Շաթին ներկայացնելու համար: Մի քանի տող ստորև ասում է՝ «եւ փոխեալ ի **նոցանէ** զօժիտն ի բազուկս իւրեանց», այսինքն՝ Շաթի մարդիկ Վիրոյի ուղեկիցների բազուկներից փոխադրեցին ընծաները իրենց բազուկների վերա: «Ի բազկաց **մերոց**» նշանակում է ի բազկաց **«մերայնոց»**, «մերիններու բազուկներեն», ինչպես ասում են արևմտահայք, և **«մերոնց** (մերոց) բազուկներեն»՝ արևելահայք: Ագաթանգեղոս ևս գործ է ածում համախ «մերոց», «մերայնոց» իմաստով, որից և «մերոնց» արդի գործածությունը: Կաղանկատվացու գործը մի ժողովածու է, ուր հավաքել է ինչ որ գտել է իր ժամանակվան մատենագրության մեջ և հավանորեն Աղվանից կաթողիկոսարանում, Աղվանքի վերաբերյալ: Երբեմն պահել է հին հեղինակների անուններից: Այսպես՝ նույն Բ գրքի մեջ, գլ. Զ՝ «Տեսիլ Վեհկի», կա վերջը հիշատակարան՝ «Ես Աղրիանէ որ յիշատակարանս գրեցի», մաղթեմ հիշել և այլն: Նույն գրքի գլ. Լ վերջ՝ հիշվում է. «ընդ որս ես իսկ Յովէլ նուաստ եպիսկոպոս»: Երկրորդ գրքի կարևորագույն էջերից է Իսրայելի քարոզչական առաքելությունը խազարաց մոտ, և այս էջերի հեղինակը նույն ինքն Իսրայելն է: Կան մի շարք վավերական պաշտոնական թղթեր և ժողովական կանոններ, առնված կանոնագրքերից և այլն: Առաջին գրքի մեծագույն մասը բռնում են վկայաբանական անվավեր հատվածներ և մի մասը քաղվածներ են Խորենացուց, Եղիշեից և Ագաթանգեղոսից: Վերջինիս ոճաբանական ազդեցությունը երևում է և երկրորդ գրքում:

Կաղանկատվացու երեք գրքերը կազմում են մի գործ և պատկանում են մի հեղինակի, որի գլխավոր ջանքն է եղել հավաքել ցան և ցրիվ նյութերը անցյալից հասած: Իր գրչին է պատկանում թերևս Գ-րդ գրքի 19-րդ գլխից սկսած մինչև վերջ. «Որ ինչ յերկերիւր թուականութենէն Հայոց եւ այսր գործք լեալ ի սահմանս Աղուանից»:

Մովսես Կաղանկատվացին կազմել է իր Պատմությունը գրեթե նույն ժամանակ, ինչ Հովհաննես Կաթողիկոս և Թովմա Արծրունի, X դարի առաջին կեսին, այսպես ասած՝ հատվածական կամ տեղական հայրենասիրության շրջանին. Հովհաննես Կաթողիկոս գրել է Բագրատունիների պատմությունը, Թովմա՝ Արծրունիների, Կաղանկատվացին, նրանց հետևելով՝ Աղվանից կամ Արցախի իշխանների: Մերձավոր առիթ է հավանորեն Աղվանից իշխանի՝ Սահակ Սևադա զորավոր իշխանի՝ իր որդու Գրիգորի հետ ճակատիլը Սմբատ [I Բագրատունի] և Աշոտ [II] Երկաթի դեմ և կարողանալը պաշտպանել իր անկախությունը, և Գրիգորի որդուն՝ Սևադա II Իշխանիկի արքայական թագ կապելը, թերևս այս առթիվ, կամ վերջինս որդվոյն Հովհաննես Սենեքերիմի, «զոր ընտրեաց աջ բարձրելոյն

կոչելով ի թագաւորութիւն», կոչմանն ընդունվիլը հարևան պետությունններից: Այս առիթներով է, որ նա գրում է իր նախնիքների պատմությունը, առաջ քան 949 թիվը: Առաջին անգամ հիշատակվում է Աղվանից Պատմությունը 949 թվականին, և հիշատակողը՝ Անանիա Մոկացի կաթողիկոսն է (943-965), որ երկիցս 949 և 958 (ավելի ստույգ 956) անճամբ գնաց Աղվանք եկեղեցական տարաձայնությունները հարդարելու և այս առթիվ հիշում է Մովսես Կաղանկատվացին և վկայություն բերում Գ գրքից:

Կարծեմ՝ կարողացա միտքս ամփոփել, առանց բանասիրական մանրամասնության մեջ մտնելու: Երրորդ գիրքը և մինչև անգամ վերջին գլուխը՝ Աղվանից կաթողիկոսների ցանկը (բաց ի թերևս մի քանի հետո ավելցած անունների), առաջին երկու գրքերի հետ միասին, Մովսես Կաղանկատվացու խմբագրածու գործն է: Ցանկի առաջաբանը հար և նման է Ա գրքի 8-րդ գլխի առաջաբանին: Այստեղ հեղինակը գրում է՝ «**Ցայժ ցանկացի էր** ըստ կարգաց գիտել զպատմածս, որ ինչ յԱռաջնոյ նախագահութենէն ցայսօր գործք, բայց **արեւելեացս բազմազգութիւն ամբոխեալ** ցուցանէ զորպէսն եւ կտակարանացն **հրկիզութիւնք**»... համեմատել Ցանկի հետևյալ սկսվածքի հետ. «Սակս հայրապետական անուանց (և՛ ոչ անուանդ, ինչպես տպված է) **պարտ եւ պատշաճ վարկանելի** էր զստոյգն դրոշմել ի գրի, բայց **զի յիսկզբանէ հնոցեան** եւ նախաշաւիղ առաջնորդաց գործք եւ ժամանակք եւ անուանք **հրկէզ եղեալ** յանօրինաց» և այլն:

Այս բոլորեն հետևում է, որ Մովսես Կաղանկատվացին VII դարու հեղինակ չլինելով չի կարող որևէ փաստ ծառայել, որևէ հիմ տալ ի նպաստ Մովսես Խորենացու խնդրին:

Ապա ուրեմն հայր Հացունու փաստարկությունը սխալ է:

Ընդունի՛ր ողջույնս և հարգանքս:

Ն. ԱՂԱՆՅԱՆ

Հ. Գ. Մոռացա հիշել (թեև կրկնում եմ բանասիրական և լեզվական կողմը չեմ շոշափում), որ Զարպհանալյան լեզվի և ոճի տարբերություն է գտնում Ա և Բ գրքերի և Գ գրքի միջև, որի համար և տարբեր հեղինակների գործ է համարել: Առ այս պետք է ասել, որ ոճի և լեզվի տարբերություն կա ոչ միայն գրքից գիրք, այլ հոդվածից հոդված, և տարբերությունը ծագում է սրանից, որ նյութերը տարբեր ժամանակների, այլևայլ գրիչների գործեր են և Մովսես Կաղանկատվացին, որպես միջակ գրող, հետամուտ անգամ չի եղել մի ոճի վերածել, ինչպես Մովսես Խորենացին է արել, այլ հավատարմությամբ ընդօրինակել է ինչպես կա, հապավումներով և անտեսելով հաճախ նույնիսկ ժամանակագրական կարգը:

ՂԵՎՈՆԴ ԵՎ ԽՈՐԵՆԱՑԻ

(Քննություն հայր Ն. Ակինյանի տեսության)

Մեր Պատմահոր բազմաչարչար հարցը դեռ չէ հասել իր վախճանին: Մի քանի է պարզված ընդմիշտ, որ Խորենացու անունով հայտնի երկը գրված է 696 թվից հետո: Այս վեր է ամեն կասկածից: Մնում է որոշել **terminus ad quem:**

Պրոֆ. Գր. Խալաթյանց իր նշանավոր աշխատության մեջ՝ **«Հայ Արշակունիք»**[1], շոշափման կետեր է գտել Խորենացու և Ղևոնդի մեջ և կարծիք հայտնել, որ **Ողբի** վերջին մասի մոայլ նկարագիրը կրում է Ղևոնդի այն էջերի ազդեցությունը, ուր նկարագրվում է արաբական բռնության ստեղծած անելանելի դրությունը: Ասել է, թե Խորենացին ժամանակով ուշ է նաև, քան Ղևոնդ: Հայ պատմության Հայրը այսպիսով տեղափոխվում է V դարից մինչև IX դար:

Հայր Ակինյան բարի միտք է ունեցել մոտեն ուսումնասիրելու Խորենացու և Ղևոնդի աղերսը, հերքական հարց, որ Խալաթյանց միայն ուրվագծել է, բայց չէ վճռել:

Մխիթարյան միաբանության ականավոր անդամը խոհուն և բեղուն քանասեր է, հեղինակ բազմաթիվ կարևոր գործերի: Քանիմաց հասարակությունն իրավունք ունի հուսալու, որ նրա ամեն մի նոր գործը նոր աղյուս բերե հայ անցյալի ավեր շենքի վերակառուցման: Փութկոտությունը սակայն մեծապես վնասել է իր այս աշխատության: Հայ բանասիրությունը այն քաջագոտի ուղևորներից չէ, որ վազն առանց հետ ու առաջ նայելու. նրա ուղին անհարթ է, լի խոչերով և պահանջում է համր և ուշիմ քայլեր: Շտապ գրիչը ծնում է ակամայից անհաճո հակասություններ: Կարծել, որ Թովմաև ծանոթ չէ Ղևոնդի մատյանին[2] և հետո գտնել, որ Թովմաև իր առաջն ունի Ղևոնդի ժամանակագրությունը (էջ 76, այլև 124)՝ անախորժ է: Ենթադրել, որ Հռիփսիմեն հարս է դառել Արծրունյաց 785-են առաջ (էջ 264), և հաջորդ էջում ասել, թե այդ դեպքը տեղի է ունեցել մոտավորապես 800 թվին (էջ 265) ևս հաճելի չէ: Կամ գովել Ղևոնդի լեզուն որպես ընտիր հայկաբանություն,

---

[1] **Гр. Халатянц,** Армянские Аршакиды в "Истории Армении" Моисея Хоренского, ч. II, М., 1903.

[2] **Ն. Ակինյան,** Մովսես Խորենացի և Ղևոնդ Երեց. երկու պատմագիրներու նույնության հարցը, Վիեննա, 1931, էջ 51 (այսուհետև մեջբերումները կտրվեն տեքստում):

այն հակադրել Խորենացու «կեղծ-դասական դանդաղկոտ եւ դժվարընկալ ոճագիտությանն, դարբնված հելլենական դպրոցի հետևողությամբ» (էջ 127) և հետո պնդել, որ Ղևոնդն ու Խորենացին նույն անձն են, առավել ևս անախորժ է:

Հայր Ակինյան անպայման այնքան անփույթ չէ որքան շուտափույթ: Գործի ընթացքին է, որ նոր գյուտեր է անում: Նախ՝ մեկնակետ ունենալով Խալաթյանցի ենթադրությունը, հարգո բանասերը հանգում է այն եզրակացության, որ Մոսկվայի գիտնականը սխալվել է, և որ ոչ թե Խորենացին բանաքաղ է Ղևոնդից, այլ **Ողբի** բուն հեղինակը Ղևոնդն է: Ապա առաջացնալով (ախորժակը սրվում է ոչ միայն ուտելով, այլ գրելով) գալիս է այն հայտնության, որ չէ թե միայն **Ողբը**, այլ ամբողջ պատմությունը պատկանում է Ղևոնդի գրչին և «Խորենացի» նրա կեղծանունն է:

Ընթերցողը թերմտանքի մեջ է: Ի՞նչ կարիք կար այս դեպքում այնքան ջանք թափել **Ողբի** շուրջը ապացուցանելու, որ **Ողբը** սկզբնապես Ղևոնդի մատյանի սեփականությունն է եղել, հետո անցել է Խորենացու գրքին անհայտ ճեռքի միջոցով: Եթե երկու գործերի հեղինակը միևնույն անձն է, իմաստ չկա **Ողբը** տեղահան անելու իր ավանդական վայրից և մի գրքից մյուսը փոխանցելու: Ավելորդ աշխատանք չէ՞:

Եվ ինչ որ զարմանալի է, ի. Ակինյան խրախուսված իր գյուտերից, պետք է տեսել մի նոր հոդվածով վիրավորել մեր Պատմահոր սրբազան հիշատակը: Ավելորդ ելևել, խորք բանասիրության:

Եվ հնարավոր է՞, որ մի մատենագիր, երկու գործ ունենալով, երկգլխանի հրեշ հանդիսանա, մի գլուխը արժանի Որմզդի, մյուսը՝ Ահրիմանի, Ղևոնդը գովելի, Ղևոնդը այպանելի միևնույն ժամանակ:

Կուզեինք սակայն հետևել մեր բանասեր բարեկամին հանգրվանե հանգրվան, ինչպես ինքն է անցել, հետևել նրա մտքի և գրչի հաջորդական զարգացման:

Երեք հանգրվան ունի ի. Ակինյանի գործը: Ղևոնդ Երեց, Ղևոնդ և Խորենացու Ողբը, Ղևոնդ և Խորենացի:

ՂԵՎՈՆԴ ԵՐԵՑ

Ո՞վ է Ղևոնդ և ի՞նչ գիտենք նրա մասին: Ոչինչ, բացի իր մատյանից:

Հայր Ակինյան աշխատել է ոչնչից ինչ ստեղծել: Եսայի [Ա Եղիպատրուշեցի] կաթողիկոսի մահվան առթիվ Ղևոնդ անվանում է նրան «երանելի, սուրբ եւ ուղիղ հաւատով»[1]:

Այս սովորական բառերի մեջ ի. Ակինյան տեսնում է «հիացախառն, բա-

[1] **Ղևոնդ**, Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 169:

ռեպաշտական արտահայտություն» և բացատրում այնու, որ Ղևոնդ հավանորեն աշակերտել է Եսայիին նրա եպիսկոպոսության ժամանակ Գողթնում: Հնարավոր է գտնում նաև, որ Ղևոնդ Գողթնեցի լիներ և հրահանգված նույն կողմերի մենաստանների մեջ, թերևս, Մաքենեաց վանքը (էջ 33):

Հայր Ակինյան մոռացել է հիշել, որ նույն պատմագիրը խոսելով առաջին անգամ Եսայիի մասին, անվանում է նրան «կաթողիկոս որոյ անուն էր Եսայիաս»: Մտերմության արտահայտություն չէ թվավ:

Ղևոնդ տեղ է տվել քաղաքական անցքերի մեջ Տրունի իշխաններին, որ Գողթն գավառից էին: Այս ևս ապացույց համարում պատմագրի Գողթնեցի լինելուն:

Այս դեպքում ինչո՞ւ չի հիշել ավելի կարկառուն անձ՝ Գողթնի Սահակ իշխանին, որ մասնակից էր Պարտավի ժողովին Աշոտ և Սմբատ Բագրատունիների հետ: Կամ ինչո՞ւ չպարծենար Վահան Գողթնեցու մարտիրոսությամբ:

«Երանելի» կոչելը մտերմության առանձին նշան չէ: Սահակ կաթողիկոսին ևս այնպես է անվանում («զմարմին երանելոյ հայրապետին»[1]):

Եսայի հաջորդի՝ Ստեփանոսի մասին Ղևոնդ ասում է, որ կաշառքով գահ բարձրացավ: Սրանով պատմագիրը, ըստ հ[այր] Ա[կինյանի], իբրև թե զգալ է տալիս, որ իր և Եսայիի միջև մտերմական կապ կա:

Արդարությունը պահանջում է չարատավորել Ստեփանոսի հիշատակը: Նրան նվիրված տողերի մեջ այն չկա, ինչ որ ուզում է տեսնել հ. Ակինյան: Արաբ պաշտոնյան եկեղեցական գույքերի մի մասը գրավեց, ըստ պատմագրին, և մյուս մասը հանձնեց «ցաւանդապահս, նորին, մինչեւ **յաջորդել** յաթոռ հայրապետութեանն զՍտեփանոս, որ բազում կաշառօք յաջորդեալ ի հայրապետութեանն յաթոռ վատնեաց զամենայն ինչս եւ ստացուածս, մինչեւ **եղեւ քաղութիւն զիւղից եւ ծառայից եւ պարտուց**»[2]:

Ոչ մի կշտամբանք կաթողիկոսի հասցեին: **«Մինչեւ յաջորդել զՍտեփանոս»** խորք դարձվածը կարծել է տալիս հ. Ակինյանին, որ հրամանատարը ինքը հաջողեցուց հաջորդել տալ հակառակ այլ թեկնածուների: Այս իմաստով հաջորդել բառը գործ է ածել Խորենացին. «յաջորդէ **Խոսրով զՍահակ**»[3]: Իսկ Ղևոնդի մոտ նույն բայը ներգործական է և ոչ անցողական (հետ մահվան Գրիգորի **յաջորդէ զիշխանութիւնն Աշոտ** , գլ. Ե): Ուստի ավելի հավանական է որ խորք դարձվածը պարզ հունաբանություն է, mechri tou Stephanou diadechesthai, և նշանակում է, մինչև որ հաջորդեց Ստեփանոսը: Արաբ

---

[1] **Ղևոնդ**, էջ 30: Ղևոնդ «երանելի» է կոչում և Արծրունի իշխաններին նախքան նրանց մարտիրոսությունը (էջ 164):

[2] Անդ, էջ 170:

[3] **Մեխսես Խորենացի**, Գիրք Գ, գլ. 49:

հրամանատարը ընտրության խառնվելու տեղիք չուներ, նա միայն պահանջել է ընդրկտիր հայրապետից «կաշառք», իր հավանությունը տալու համար: Կաթողիկոսը ստիպված է եղել ոչ միայն իր ընտրության առթիվ «կաշառք», այլև գյուղերի և՛ ծառաների համար փրկանք տալ:

Լոկ ենթադրություն է դարձյալ, թե Եսայիի մահը և Ստեփանոսի անարժան ընտրությունը, եկեղեցու կողոպուտը «ազդած են խորապես Վևոնդի նյարդերու վրա և հարկադրած թողուլ հայրենիքը» և անցնել Բյուզանդիա, Շապուհ Ամատունու գաղթի հետ (էջ 25):

Ո՛չ Ակամսիս և Կող անունների ծանոթությունը և ո՛չ ծովամարտի նկարագրությունը և ո՛չ էլ երկու գրիվ մանանեխի անհեթեթ զրույցը չեն կարող մանանեխի չափ նպաստ բերել այս վարկածին:

Հայր Ակինյան ուզել է Վևոնդին Կ. Պոլիս տեսնել, որպեսզի Լևոն [III կայսրի] և Օմար [II խալիֆի] թղթակցությունները նրա թարգմանություն համարի, կատարված Բյուզանդիայի մայրաքաղաքում: Բայց հետո հրաժարվում է այս մտքից և հետևապես Վևոնդի երթը ևս ավելորդ է համղիսանում:

Ավելի լավ է խոստովանել, որ պատմագրի կյանքը մեզ անծանոթ է, քան մոլար գիտությամբ կնճռոտել խնդիրը:

Վևոնդ մի հիշատակ է թողել, այդ իր մատյանն է, շոշափելի և քննելի:

Ինչպե՞ս է կոչվել այս մատյանը և արդյո՞ք հարազատորեն է հասել մեզ:

Պատմագրիս մի ձեռագրի, ինչպես և Ասողիկի և Կիրակոսի հիշատակության հիման վրա հ. Ակինյան փորձում է վերականգնել սկզբնական վերնագիրը: Բայց իսկույն թողնում է այդ փորձը և կանգ առնում Վևոնդի հիշատակարանի վրա, որ է «Կատարեցաւ վարդապետութիւն(?) Վեւոնդի վասն ժամանակագրաց տանս Թորգոմայ, ի հրամանէ տեառն Շապհոյ Բագրատունւոյ»:

Այս անգրագետ տողերը չեն պատկանում Վևոնդին, այլ որևէ գրչի: Անտեղի է վարդապետություն բառը:

Հայր Ակինյան կարծում է, որ բառս հոս գործ է ածված պատմության իմաստով և մի աններելի սխալ է գործում, վկայության կոչելով Ագաթանգեղոսի «զայս պատմեսցուք... **վարդապետութեամբ** Սրբոյն Գրիգորի», որպես թե ընդգծված բառս նշանակեր հանդերձ պատմությամբ:

Ագաթանգեղոսի խոսքը վերաբերում է Գրիգորի վարդապետության, իր գրքի այն մասին, որ կոչվում է «**Վարդապետութիւն** Սրբոյն Գրիգորի»:

Հիշատակարանը աղավաղված է: Պետք է կարդալ թերևս վարդապետի (և ո՛չ վարդապետություն), **վասն** բառը ևս անտեղի է. ժամանակագիրք, այսինքն՝ (գիրք ժամանակաց) և ո՛չ վասն ժամանակագրաց: Թերևս բուն հիշատակարանում գրիչը կարդացել է՝ «**Վարդապետի Վևոնդի ժամանակագիրք** տանս Թորգոմայ» (1):

Ավելի կարևոր է Ղևոնդի գրքի թերի լինելու խնդիրը:

Հայր Ակինյանի կարծիքով գիրքը կորուստ ունի սկզբից: Որպես թե պակասում է հեղինակի ընծայականը, ուղղված Շապուհ Բագրատունուն: Մխիթար Անեցին, ծանոթ լինելով Ղևոնդին, գիտե անուններ ինչպես Քաղրբ, Եման և Շահրիար, որ չկան այժմյան Ղևոնդի մոտ: Ասողիկի «կարկառուն, սակավախոս բառերի մեջ արտահայտած ծանոթությունը Մահմետի շուրջը»[1] առնված է համարում Ղևոնդեն, ուր սակայն չկան այդ բառերը: Ուրեմն Ղևոնդը թերի է (էջ 50):

Այս երեք փաստերից առաջինը համոզիչ չէ, մյուսները սխալ են, անուշադրության վրիպակներ:

Ասողիկ գրել է իր գործը Սարգիս [Ա Սևանցի] կաթողիկոսի պատվերով և ընծայական չունի, այլ հիշում է Սարգսի պատվերի մասին իր վերջաբան հիշատակարանում: Նույնը կարող էր և Ղևոնդի մոտ լինել, ինչպես կարծել է տալիս գրչի հիշատակարանը:

Մխիթար Անեցու հիշատակած անուններից Շահրիարը կապ չունի Ղևոնդի հետ, իսկ Քաղրբ և Եման (կարդա Եմրան) իզուր է որոնել նրա մոտ: Մխիթարը առել է խորթ անուններն իր հայրենակից Սամուել Անեցուց, որի մոտ նույն անունները հնչում են Քաղրբ կամ Քաղարբ և Ամրան: Սրանք ոչ այլ ոք են, եթե ոչ Մահմետի անդրանիկ զորավարները՝ Խալիդ և Ամր (Օմար): Անունների խորթ տառադարձությունը մատնում է ասորական աղբյուր: Մխիթարի անգետ գրչի տակ նրանք դարձել են Մահմետի նախորդներ, ուստի և հնարավոր է գտել ասել՝ «ի Քաղրբայ մինչեւ յեղանելն էին ամք ԼԸ, որպէս եւ Ղեւոնդ պատմագիրն զսոյն վկայէ»[2]:

Ղևոնդին նայում է միմիայն տարեթիվը՝ ԼԸ, մնացածը քաղված է Սամուել Անեցուց:

Չախորդ է նաև Ասողիկի կոչումը: Նրա «կարկառուն բառերը» (էջ 118) պատկանում են Սեբեոսին[3], և ինչ որ առնված է Սեբեոսից, իրոք կա այժմյան Ղևոնդի մոտ:

Ղևոնդ շարունակել է Սեբեոսի գործը և պետք չուներ անդրադառնալու Մահմետի անձին, ինչ որ արդեն հայտնի էր իր նախորդից: Ղևոնդի գրքի առաջին բառերը սխալ են հասկացված: «Նախ և առաջին որք եւ Ամիր-ալմումնիք անուանեցաւն»՝ վերնագիր է առաջին գլխին: Գերադասելի է կարդալ նախ և առաջինք և համարել մի բառ, քան ուղղել նախիշխանք կամ նախաթոռք, ինչպես անում է հ. Ակինյան:

---

[1] **Ասողիկ,** Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 118:

[2] **Մխիթար Անեցի,** Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1879, էջ 44:

[3] **Սեբեոս,** Պատմութիւն ի Հերակլն, Ս. Պետերբուրգ, 1879, էջ 104:

Պատմագիրը նպատակ ունի պատմելու առաջինների մասին, որոնք կոչվում էին նաև ամիր-ալ-մումինիք:

Գիտենք, որ այդ տիտղոսը ընդունեց առաջին անգամ Օմարը: Վևոնդ ուրեմն իրավունք ունի չխոսելու Մահմետի և Արուբաքրի մասին: Սրանց և երկու հաջորդների՝ Ամրի և Օթմանի իշխանությունը ի մի է ամփոփում ընթացս 38 տարվան, սկսած Հերակլի տասնևմեկերորդ տարուց մինչև Մուավիայի համարձումը: Հերակլ գահ բարձրացավ 610 թվի վերջերը, իսկ Մուավիան 661 թվի սկիզբը: Ուստի Վևոնդ հաշվում է Հերակլի 11-րդ տարին 622 (և ոչ 621) և մինչև 660 գումարում է ուղիղ 38 տարի: «Զի (զի ամ) կալեալ զիշխանութիւնն Մահմետ մեռանի, յետ այնորիկ փոխանորդէ զիշխանութիւն Մահմետի Արուբաքր եւ Ամր եւ Օթման, ամս ԼԸ»[1]:

Փակագծի մեջ առածը հարազատ չենք համարում: Մահմետ քսան տարի չէ իշխել, այլ տասը՝ 622-632: Պատմագիրը չի նշանակում Մահմետի երեք հաջորդների իշխանության տարիներն առանձին առանձին: Կարելի է իրավամբ կասկածել, որ Մահմետին տրված քսան տարին իրեն չեն պատկանում: Գուցե ծագել է սխալ ընթերցումից, սկզբի զի մակբայի պատահական կրկնությունից: Եթե կարդանք՝ «զի կալեալ զիշխանութիւնն Մահմետ մեռանի, յետայնորիկ փոխանորդէ... ամս ԼԸ». և այս երեսուն և ութ տարվան մեջ հաշվենք և Մահմետի իշխանության տարիները, կստանանք ստույգ տեղեկություն:

Վևոնդի բնագրի պատահական կրկնագրությունից առաջացած սխալը հին է և մոլորեցրել է հետագա պատմագիրներին:

Մահմետի և Արուբաքրի վրա խոսել զանց է անում պատմագիրը նաև այն պատճառով, ինչպես ինքն է բացատրում, որ քանի Հերակլ կայսրը կենդանի էր, արաբները չկարողացան սփռել իրենց ասպատակը: Բուն աշխարհակալությունը սկսվեց Օմարի և Օսմանի, առաջին ամիր-ալ-մումինինների օրով, ուստի և սրանց շուրջն է բոլորում իր խոսքը: Պատմում է ինչ որ գիտե Սեբեոսից, ինչ ինչ տարբերությամբ առաջին երեք գլուխներում: Տպագրի այս գլուխները կազմում են Վևոնդի մատյանի առաջին գլուխը և մի տեսակ նախաբանություն է իր իսկական երկի, որ սկսվում է Մուավիայի իշխանությունից, այսինքն՝ այն տեղից, ուր վերջանում է Սեբեոսի պատմությունը:

Այսպիսով Վևոնդի գիրքը կորուստ չունի սկզբից, հակառակ հ. Ակինյանի և ուրիշների կարծիքին (2): Իսկ կազմը արդյո՞ք փոփոխության է ենթարկված: Հայր Ակինյան կարծում է, որ ԺԹ և Ի գլուխներն իրենց տեղը չեն: Ետևառաջության պատճառը որպես թե Լևոնի և Օմարի թղթերն են:

---

[1] Վևոնդ, էջ 3:

Տեսանք, որ հ. Ակինյան Ղևոնդին տարավ Կ. Պոլիս, տարավ, որպեսզի թարգմանել տա նրան այս թղթերը հունարենից հայերեն: Հետո, հրաժարվում է այս ենթադրությունից և ընկնում մի ուրիշ մոլորության մեջ, կարծելով որ թղթերը Ղևոնդի երկի հարազատ մասը չեն կազմում, այլ ներմուծված են մի ուրիշ և անհայտ անձի կողմից: Այս եկամուտ տարրը ներս մտնելով պատճառ է եղել գլուխների սկզբնական դասավորության խանգարման:

Նախ՝ ԺԹ և Ի գլուխները ճիշտ իրենց տեղն են: Ահա ինչու: Այստեղ պատմվում է Օմարի արշավանքը և Կ. Պոլսի պաշարումը: Ղևոնդ օգտվել է միայն վավերական աղբյուրից, ուր պատմական նշանավոր դեպքի լոկ ստվերն է մնացել: Շինծու և անճաշակ նամակները Մսլիմի և կայսեր հորինված են ոչ թե Ղևոնդի կողմից, այլ առնված են նույն պղտոր աղբյուրից, ուր պաշարման տարեթիվը ինչպես և ժամանակակից ամիրապետի անունը արդեն մոռացված են եղել:

Ոչ մի երաշխիք չունինք, որ Ղևոնդ գիտեր, թե իր պատմածը վերաբերում է Օմարի իշխանության: Արշավանքի հերոսը Մսլիմն է, ամիրապետի եղբայրը: Լևոն կայսրը, որի անունը հիշվում է, թագավորել է 717-741, երբ Մսլիմ ասպարեզի վրա էր: Ղևոնդ իրավունք ուներ գետեղելու ԺԹ և Ի գլուխները Մսլիմի վերջին օրերին, քանի որ պատմությունը վերջանում է հետևյալ նշանակալից խոսքերով. «Եւ յետ այսորիկ գնաց ի տուն իւր, եւ ոչ էարկ սուր ընդ մէջ իւր **մինչեւ զօր մահուամ իւրոյ**»[1]:

Խոսքը Մսլիմի մասին է. ուրեմն Կ. Պոլսի անհաջող պաշարումից հետո Մսլիմ այլևս անգործության դատապարտվեց մինչև իր մահը: Բնական է, կարծել, որ այս խոսքերից հետո Ղևոնդ չէր կարող նորեն դառնալ Մսլիմի այն արշավանքներին, որոնց մասին խոսում է ԺԹ գլխում: Պարզ է ուրեմն, որ ԺԹ և Ի գլուխները իրենց պատշաճ տեղն են և հիմ չկա դնելու ԺԸ-ից առաջ հակառակ պատմագրի ունեցած ծանոթության:

Անընդունելի են հ. Ակինյանի առարկությունները Լևոնի և Օմարի թղթակցության դեմ:

Ղևոնդի տեղեկությամբ Օմարը «ազնուականագոյն քան զամենայն արս ազգատոհմին իւրոյ: Սա արար դարձ գերութեանն, զոր գերեաց Մահմետ յաշխարհէս հայոց յետ այրելոյն զնախարարս աշխարհիս»[2]: Հայր Ակինյան գիտե, որ Օմար թշնամի էր քրիստոնեության և շարունակող Կ. Պոլսի պաշարման: Նրա կարծիքով Ղևոնդ չէր կարող գովաբանել այսպիսի մարդու: Այնուհետև Օմարին վերագրվում է գերիների դարձը, մինչդեռ

[1] Ղևոնդ, էջ 112:

[2] Անդ, էջ 42:

Ղևոնդ նախընթաց գլխում Մահմետ զորավարի մասին խոսելիս չի հիշում, որ գերություն է հանել հայ երկրից:

Այստեղից հետևցնում է հ. Ակինյան, որ ո՛չ գովասանական խոսքերը Օմարի հասցեին և ո՛չ նրան վերագրած թուղթը աղերս չունին Ղևոնդի մատյանի հետ և համարելու են անհարազատ հավելումներ: Անհայտ ճեռքը որպես թե խարդախել է Ղևոնդի բուն տողերը, ուր պատմելիս է եղել Օմարի մուսուլման բարեմասնությունների մասին և փոխել նրա «բարի համբավը ի նպաստ քրիստոնեության»:

Դժվար չէ քանդել ենթադրությանց այս բարդ ցանցը: Պետք չկա նկատելու, որ Օմար կարող էր հրեշ լինել ուրիշների նկատմամբ, բայց բարի դեպի հայերը: Ներոնը մեծ ոճրագործ էր, բայց ազնիվ վարմունք ցույց տվեց հայերի հանդեպ, խաղաղացրեց մեր երկիրը և Արշակունյաց հարստության հիմը դրեց Հայաստանում: Ընդհակառակը, Տրայանոս կայսրը հռովմեական ճաճանչավոր փառքերից մեկն է, բայց գարշելի անձն հայ պատմության տեսակետից: Նենգորեն իր մոտ կանչեց հայ թագավորին և սպանել տվեց արտակարգ տմարդությամբ (3):

Նույնը և Օմարի նկատմամբ: Հավանական է, որ ջերմեռանդ մուսուլման Օմարը, ճեռնարկելով խոշոր արշավանք դեպի կայսերական մայրաքաղաքը, խոհեմություն է համարել մեղմ քաղաքականությամբ շահել հայերի տրամադրությունը և ապահովել իր թիկունքը: Սակայն, խնդիրն այս չէ:

Ղևոնդ շատ լավ գիտե, որ Օմար «ցուցանէր եւ առ իւրային ազգն մտերմութիւն լաւագոյն քան զառաջինսն, որ նախ քան զնա իշխանքն էին»:

Ղևոնդ նորեն անդրադառնում է ԺԵ գլխում Օմարի «բարեխառնութեան եւ բարեմտութեան առ ազգս քրիստոնէից», որով ի նկատի ունի առավելապես հայերին, ինչպես ինքը հարում է՝ «որպէս նախ քան զայս պատմեցաք, գերեաց գերադարձ առնէր»[1]:

Հայր Ակինյանի ուշադրությունից սպրդել է այն կարևոր հանգամանքը, որ մեր պատմագիրը Օմարի բարեմտության մասին խոսում է ոչ միայն այն գլուխներում, որ երկբայական են թվում հ. Ակինյանին, այլև ԺԷ գլխում որ կասկածից դուրս է: Հիշամի վրա խոսելիս Ղևոնդ ասում է, որ նոր աշխարհագիր անել տվեց և հարկերը ծանրացուց «որպէս թէ դժուարելով ընդ բարեմտութիւնն Օմարայ, եթէ անհրաւութեամբ ծախեաց զմթերս գանձուցն»[2]:

Դարձյալ հ. Ակինյան ուշադիր չէ եղել, որ Օմարի քաղաքականության մասին նման նպաստավոր տեղեկություն ունինք մի ուրիշ հայ աղբյուրից,

---

[1] Ղևոնդ, էջ 3:

[2] Անդ, էջ 101:

Վահան Գողթնեցու վկայաբանությունից. «Եւ իբրեւ նստաւ Ումար ի գլխաւորութիւն տաճկաց, արկ ի սիրտ նորա աստուած յիշել զանիրաւութիւնն որ առ Հայս հրամանս տայր **ժողովել զգերեզմն մեծաւ** պնդութեամբ եւ ի ժողովելն արձակեաց զամենեսեան»[1]:

Սրանով վերանում է միանգամայն ի. Ակինյանի տարակույսը գերության վերաբերյալ: Վերջապես Ասողիկը գիտե Ղևոնդի մատյանը այն ձևով ինչպես հասել է մեզ և Մսլիմի արշավանքը դնում է Հիշամի օրով, ուրեմն համաձայն Ղևոնդի բնագրի[2]:

Ակներև է, որ Ղևոնդի մոտ գլուխների կարգը խանգարված չէ և Օմարի ու Լևոնի թղթերը պատկանում են բուն բնագրին:

Այլ խնդիր է, թե որքան արժանահավատ են այդ թղթերը պատմականորեն: Անպայման անվավերական գրություններ են: Լևոն և Օմար, ավելի ճիշտ Մսլիմ ունեցել են գրագրություն, բայց քաղաքական և ոչ կրոնական նյութի շուրջ: Ուշագրավ է Լևոնի թղթի այն կետը, ուր խոստովանում է թե՝ «բազում անգամ գրեցաք առ քեզ, արդեօք թէեւ այլ հասանիցէ գրել, այլ վասն աշխարհական իրաց, եւ ոչ վասն աստուածայինն իրողութեանց»[3]:

Եվ այս ստույգ է: Թեոփանեսի վկայությունը, որ Օմար դավանաբանական թուղթ է գրել Լևոն կայսրին ոչինչ չի հաստատում: Թեոփանեսը վանական էր, ժամանակակից Ղևոնդին և ավելի քննական միտք չէր քան հայ պատմագիրը: Նա ևս հավատ է ընծայել իր ժամանակ շրջող լուրերին և թղթին: Լևոնի թուղթը պետք ունի հատուկ քննության, երևան հանելու հնարավոր հավելումներն ընդդեմ Ղևոնդի: Օմարի և Լևոնի թղթերի զուգադրությունը ցույց է տալիս, որ հավելումներ եղել են, մի խնդիր, որ մեր նյութից դուրս է:

Լևոնի թղթի մեջ ասված է, որ Մահմետի երևումից անցել է «հարիւր ամ փոքր ինչ աւելի կամ պակաս»[4]: Ենթադրվում է, որ թուղթը գրված է Կ. Պոլսի պաշարման ժամանակ՝ 717 թվին, ուրեմն իրավ հարյուր տարի հետո Մահմետից, 622 թվից: Մի քանի էջ ստորև նույն թուղթը հաշվում է «ութ հարիւր ամք փոքր ինչ պակաս կամ աւելի, յորմէ հետէ Քրիստոս երեւեցաւ»[5]: Հետևապես թուղթը գրված պիտի լինի ութ հարյուր թվականի շուրջը:

---

[1] «Սուփերք Հայկականք», հատ. 13, էջ 20:

[2] **Առաքել**, էջ 128:

[3] **Ղևոնդ**, էջ 46:

[4] Անդ, էջ 60:

[5] Անդ, էջ 61:

Ղևոնդի պատմությունը ընդգրկած լինելով այդ թուղթը, գրված պետք է լինի ոչ առաջ քան նույն ութ հարյուր թվականը:

Սակայն, Ղևոնդի պատմվածքի թելը կտրվում է 788 թվի մոտերը:

Ե՞րբ է գրել Ղևոնդ իր պատմությունը:

Հայր Ակինյան կարծում է, որ Ղևոնդ շարադրել է իր գործը երկու նվագով: Առաջին անգամ գրել է սկզբեն մինչև ԼԳ գլուխը, հավանորեն 775 թվի ապստամբությունից առաջ: Ապա ավելացրել է վերջին մասը մերձ 790 թվականի: Լեզվի և ոճի տարբերություն կա որպես թե այս երկու մասերի մեջ:

Սակայն, մենք գտնում ենք, որ ԼԳ և ԼԴ գլուխները դժվար է միմյանցից անջատել: Նկարագրելով երկրի ծանր կացությունը, Ղևոնդ ավելացնում է, որ աղետն այնքան մեծ էր, որ անկարող է գրի առնել. «Պատմել ոչ կարեմք զաղէտիցն պատմութիւն»: Սրանով պատմագիրը որպես թե վերջակետ է դնում, գրիչը վայր դնում որ հետո նորեն վեր առնի 15-20 տարի անցնելուց հետո:

Մենք վերջակետ չենք տեսնում, այլ փոխանցում, պատմելու ապստամբական շարժումը որպես անմիջական և անխուսափելի հետևանք անպատմելի բռնության: Ուրիշ հանգամանք: Ղևոնդ սովորաբար նշանակում է ամիրապետի անունը և տարին և ապա արձանագրում անցքերը: Արդյայի անունը և իշխանության քսան և երկու տարին տպագրի մեջ կցած է սխալմամբ ԻԸ գլխին, մինչդեռ պատկանում է հաջորդ ԻԹ. գլխին: Նրա կառավարությունը (754-775) ընդգրկում է ԻԹ գլխից մինչև ԼԷ գլուխը, և ուրեմն ԼԳ և ԼԴ գլուխները գրված են միաժամանակ և 775 թվից հետո:

Սրանով երկնվագ գրության հարցը, ջնջվում է:

Հայր Ակինյան նկատել է այս ծանր պարագան և փոխանակ սթափվելու և հրաժարելու իր ենթադրությունից, շտապում է խոչընդոտը վերացնել մի նոր ենթադրությամբ, այն է, որ Արդյայի քսան և երկու տարին հետո է ավելցրած: Այս արդեն նշանակում է չարարկել կասկածելու իրավունքը: Եվ ինչո՞ւ են այս բռնազբոսումները:

Հայր Ակինյան ճեռնարկել է Ղևոնդի ուսումնասիրության հատուկ նպատակով:

ՂԵՎՈՆԴ ԵՎ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՈՂՔԸ

Քանսարկուն մի օտարոտի միտք է ներշնչել մեր պատվական հոր, թե Խորենացու հռչակավոր **Ողբը** Ղևոնդի գործն է, զետեղված նախապես իր պատմության ԼԳ գլխից հետո, որպես վերջաբանություն առաջին նվագով գրված բաժնին: Հետագայում, 15-20 տարուց, երբ Ղևոնդ երկրորդ նվագով շարունակել է իր գործը մինչև 788 թվականը, պատշաճ է համարել հանել Ողբը իր տեղից և դնել ավելացրած մասի վերջը և նրանով կնքել իր մատյանը (էջ 155-157):

Այնուհետև մի անհայտ անձ, շարունակում է հ. Ակինյան, դատելով որ Ողբը շատ ավելի հարմար է Խորենացու մեծ գործին որպես ավարտաբանություն, գողացել է Ողբը Ղևոնդից և նվեր բերել մեր Քերթողահոր, ոչ առանց ինչ ինչ փոփոխությանց (էջ 158):

Հայր Ակինյանի կարծիքով, Ղևոնդ զգայուն մատենագիր է և չէր կարող գրիչը վայր դնել առանց վերջին հրաժեշտի խոսք ասելու իր ընթերցողներին (էջ 54), իսկ Խորենացին կարող է՞ր: Խորենացու «գեղեցկահյուս պատմության» որպես թե սազ չի գալիս Ողբի նման «ցավագար ավարտաբանություն» (էջ 158):

Սակայն, նման խորհրդածությունները չեն որ պղտորել են մեր քաննասերի միտքը: Նրա հիմնակետը **Ողբի** վերջին կտորն է, ուր ողբերգուին թվում է, թե տարերքն անգամ փոխել է իր բնությունը, գարունը երաշտացել է, ամառը՝ անձրևահույզ, աշունը՝ ձմեռնացել է, ձմեռը՝ սաստկասառույց, մրրկալից. անպակաս՝ հողմեր, կարկուտ, կայծակ, անթերրություն, անաճելություն, սասանմունք, դղրդմունք: Հայր Ակինյան այն կարծիքին է, որ բնության այս նկարագիրը հոետորական չափազանցության արդյունք չէ, այլ համապատասխանում են դառն իրականության: Վկայության է կոչում մի ասորի պատմագիր, որի ասելով 762 թվին մարտ ամսին Տիգրիսը հորդացել է, ջուրը հեղեղել և մեծ վնասներ հասցրել, որ ձմեռը առատ ձյուն է եկել, հովիվներին հանկարծակի բերել: Նաև 772 թվին, ուրեմն տասը տարի հետո, անձրև չի եկել, գարնան ցանքերը վնասվել են, հետևյալ 773 թվին վաղաժամ ձմեռը փչացրել է այգիները, անասուններ և թռչուններ զոհվել են, կարկուտ է եկել՝ հատիկները կայծքարի մեծությամբ:

Մի ուրիշ ասորի հավատացնում է, որ 763 թվին կարկուտ է եկել, «հատիկները ութ լիտր» (Միքայել Ասորու մոտ, նկատենք անցողակի, խոսքը կարկուտի մասին է[1]), և որ Խորասանում երկրաշարժ է եղել 764 թվին: Ղևոնդ իր պատմության ԼԳ գլխում հիշում է, որ «ի վերուստ վկայէր բարկութիւն գոլ բազմութիւն մարախոյն եւ կարկուտք եւ երաշտութիւնք անձրեւաց»[2]: Ըստ հ. Ակինյանի, բնության աղետների մասին Ղևոնդ վերապահել է մանրամասնորեն խոսել **Ողբի** մեջ, որը սկզբնապես ՀԳ գլխից հետո է զետեղված եղել:

Այժմ պարզ է թե ինչո՞ւ հ. Ակինյան այնքան աշխատանք է թափել Ղևոնդի պատմությունը երկուսի բաժանել, ինչո՞ւ Ողբը համարում է վերջաբանություն առաջին մասի և ինչո՞ւ այս մասի գրությունը դնում է 773-774 թվականներին:

---

[1] **Michel le Syrien**, Chronique, par. I.-B. Chabot, t. II, Paris, 1901, p. 524.

[2] **Ղևոնդ**, էջ 136:

Սակայն, ի՞նչ կապ ունի Հայաստանի հետ Խորասանի երկրաշարժը, կամ Միջագետքի ծյունն ու կարկուտը: Գիտենք, որ հայ աշխարհի բնությունը շղթայված չէ իր կամքի մեջ: Հավատում ենք, որ նա ցուցադրած լինի իր քմահաճությունները ոչ միայն 774 թվին, այլև դրանից առաջ և՛ հետո, և՛ հաճախակի: Ո՛չ խոշոր կարկուտը, ո՛չ դեզադեզ ծյունը, ո՛չ հեղեղատաստ անձրև, անգամ երկրաշարժն ու մորեխը, դժբախտաբար, հազվագյուտ երևույթներ չեն հայ հողի վրա:

Բնության նկարագրած արհավիրքները բացառիկ աղետ չեն նաև Միջագետքում: Եթե ի. Ակինյան թերթեր Դիոնիսիոս Տելմահրեցու երկը ամբողջապես, կտեսներ որ նրա էջերը լի են նման արհավիրքների նկարագրությամբ: Բնությունը բարի մայր չէ եղել ոչ միայն 763 և 773 տարիներին, այլև 753, 744, 738, 724, 717-720, 712, 704, թողնենք, VI դարը: Օրինակ՝ 744 թվին տեղի են ունեցել ուժգին սառնամանիք, գետերի հորդումն, ձկները անշնչացած ափերի վրա, անձրևի պակասություն, սով, համաճարակ հիվանդություն, երկրաշարժ, որ լեռները տեղահան արեց, գյուղեր խորտակեց, մեծ ավերումներ գործեց, երկնքի վրա երևեցան բոցավառ ասուպներ, օդը լի փոշիով, աներևակայելի սով, որ չորս հարյուր հազար (հավանորեն չորս հազար) զոհ տարավ, փոթորկալից հողմեր և այլն: Դրությունն ավելի մխիթարական չէր, քան Ակինյանի ընտրած տարիներին:

Բնությունը չհրաժարվեց իր բարկությունը երևան հանելու և հաջորդ IX դարում: Առնենք 839-840 տարին, ուր հիշվում է նաև Հայաստանը: Երկրաշարժ Կարին քաղաքում, որի աշտարակներից ութը փուլ եկան, երկու հարյուր մարդ զոհվեց, երկու ամիս ժողովուրդը մնաց բացօթյա, բոցավառ ամպեր երկնքում (արևի խավարում), անձրևի առատությունից ճմեռը կանուխ սկսվեց, գետերը հեղեղեցին, Տիգրիսը տասն հազար տուն քանդեց. հաջորդ տարին ճմեռը անձրև չեկավ, սերմերը չծլեցին, հետո առատ ձյուն թափեց, ահռելի սառնամանիք. դրամի պակասություն, բանկություն, սով և հիվանդություն, համաճարակ ախտ. ապրիլին սերմերը ծլեցին, բայց կարկուտը վրա եկավ և բոլորը փչացրեց, վերջապես մորեխը հասավ և կերավ մնացած սերմերը, բամբակը և մյուս հունձը. սոսկալի փոթորիկներ արմատախիլ արին ծառերը:

Ծանր էին նաև հասարակական և քաղաքական պայմանները: Խուռամյան աղանդավորները նորեն սկսեցին իրենց բռնությունները Կորդվաց աշխարհում՝ Մուսա առաջնորդի ղեկավարությամբ: Անթիվ մարդկային զոհեր, սղություն. աղի քառասուն տրամը արժեր մի զուզա, պանրի երկու ունկը՝ մի զուզա, ընկույզ՝ հիսուն հատը մի զուզա: Համաճարակը տևեց երկու տարի[1]:

[1] **Michel le Syrien**, t. III, Paris, p. 105-109.

Կարծում ենք, որ այս նկարագիրը ավելի ահավոր է, քան ինչ որ առաջարկում է մեզ ի. Ակինյանը: Եթե նրա դատողության շավղով ընթանաք, իրավունք ունինք **Ողբը** մեխելու 840 թվին:

Սակայն, մենք զգուշանում ենք այսօրինակ փաստարկությունից: Ավելի ընդունելի ենք դատում, որ Ողբի արհավիրալից տողերը ճարտասանության են պատկանում և ոչ իրականության: Բնության զայրույթին նվիրած տողերից հետո Ողբի հեղինակը, նույն հռետորական ավյունով ծառանում է ամբողջ հայ ժողովրդի դեմ սոսկալի բառերով: Հայ իրականության բոլոր ղեկավար ուժերը՝ վարդապետք, կրոնավորք, վիճակավորք, աշակերտք, ժողովականք, զորականք, իշխանք, դատավորք՝ ներկայացրած են որպես բարոյական հրեշներ: Արդյոք այս խավար պատկերը և՞ս համապատասխան է իրականության, այն դրության, որ տիրական էր Հայաստանում 774 թվերին:

Հայր Ակինյան այս դեպքում ևս չի ուզում ճարտասանական չափազանցություն տեսնել:

Սակայն, լույսի պես պարզ է, որ հայ մարդը երբեք այդպիսի այլանդակ պատկեր չի ունեցել և մանավանդ 774 թվականներին: Ձինատյաց անվանել հայ զորականին այն ժամանակ, երբ սուսերամերկ հերոսական պայքար էր մղում արաբական բռնության դեմ, ճշմարտում է անարդար լինել և հօդս բարբառել:

Հայր Ակինյան գուցե և իրավունք ունի նկատելու, որ Խորենացուն վայել չէր ստորագրել այսպիսի հուսահատ տողեր Բագրատունի իշխանի հանդիման: Բայց վայել է գտնում նույնը Ղևոնդի համար, որ նույնպես Բագրատունի իշխանի հետ գործ ուներ, և վերջը պետք է պատշաճ համարի նաև Խորենացուն Ղևոնդի դիմակով:

Հոռետես հատվածը Ողբի աննշան կտորն է կազմում: **Ողբը** իր էական մասով, ի. Ակինյանի աչքում հռետորական շարադրություն է և ողբալու նյութը «անորոշ» (էջ 158): Նրան այնպես է թվում, որ Խորենացին շարժառիթ չուներ հառաչելու այնպիսի բարեզարդ դարագլուխ, որպիսին էր V դարու առաջին կեսը, երբ մեծ ուսուցիչների աշակերտները կանգնում էին, կղերը՝ զարգացած, Հովսեփ քահանան՝ տեղապահ, Վարդանը՝ սպարապետ, վանքերը՝ լի սրբակյաց կրոնավորներով (էջ 129):

Ուզում է վերլուծել **Ողբի** «անորոշ» նյութը և ուրիշ բան չէ գտնում քան երկու կետ. Հայաստանյայց եկեղեցու հովվազուրկ դրությունը և՛ Հովվի և՛ Հովվակցի մահվան առթած թախիծը (էջ 132): Սրանց անունը հեղինակը չի տալիս: Հայր Ակինյան կարծում է, որ Հովիվը Սիոն [Ա Թավոնեցի] կաթողիկոսն է և Հովվակիցը Սիոնի հաջորդ Եսայի [Ա Եղիպատրուշեցի] կաթողիկոսը:

Արդյոք ի՞նչ արժանիքի համար: Հայր Ակինյան ստիպված է խոստովանել, որ չգիտե թե ի՞նչ աղերս է ունեցել Ղևոնդը Սիոնի հետ (էջ 175):

Եսայի կաթողիկոսի մասին էլ մի քան գիտե, որ ուրիշների հետ միասին դիմել է ոստիկանին, հարկերը թեթևացնելու և խնդիրը անհետևանք է մնացել. գուցե և միևնույն նպատակով գնացել է Պարտավ: Այս վերջին քայլը, ի. Ակինյանի կարծիքով, արիասիրտ և հայրենասեր գործ էր և կարող էր Զորաբաբելի դեպքը հիշեցնել (էջ 177):

Այսպիսով Սիոնը ոչինչ քանի և Եսային չնչին քանի համար արժանանում են մեծագույն պատվի՝ լինել **Ողբի** Հովիվը և Հովվակիցը:

Պահանջկոտ չենք, բայց և այնպես կարծում ենք որ երկու կաթողիկոսներն իրենց հայտնի ու անհայտ արժանիքներով արժանի չեն **Ողբի** անգամ երկու տողին:

Զարմանալի է, որ ի. Ակինյան մոռացել է որ Հովվի և Հովվակցի առընթեր կա և թագավոր. «Քարձաւ թագաւոր եւ քահանայ»: Եթե քահանան Սիոնն է, ապա թագավորն ո՞վ է: Հայր Ակինյան պատասխան չունի, որովհետև շեղված է ճշմարտության ճանապարհից:

Ողբը իսկ իր տեղն է և նյութը շատ որոշ է և շատ հստակ ձևակերպված վերնագրում. «**Ողբք վասն քառնաղոյ թագաւորութեանն** Հայոց յազգէն Արշակունեաց, եւ **եպիսկոպոսութեանն** յազգէ սրբոյն Գրիգորի»: Ակներև է, որ թագավորը Արտաշեսն է, Հովիվ և Հովվակիցը՝ Սահակ և Մաշթոց:

Խորենացին քաղաքական պատմիչ է և այլ հայացք ունի իրերի վրա, քան թելադրում է նրան վատորեն ի. Ակինյան: Արշակունի դարավոր թագը հանկարծ տապալվում է, Լուսավորչի տոհմը սպառվում, հայ պատմության զույգ զորավոր սյուները կործանվում են: Մի՞թե ողբալու երևույթ չէ: Եվ արդյոք V դարի դպրությունը կամ Վարդանն ու լուսավոր կղերը խանգարում են ողբալու հայ պետականության անկումը և կամ կարող են փոխարինել ազգային անկախության կորուստը, որպեսզի հայ պատմիչը ծափ ծափի զարկեր և ավելորդ դատեր ավաղելու իր «հէք թագաւորը, ազգաւ ի բաց ընկեցիկը»: Հայ եկեղեցու լուսավոր հիմնադրի տան վերջին ջահը մարում է: Մի՞թե ողբի արժանի չէ:

Ո՛չ և ո՛չ: **Ողբը** կապ չունի Ղևոնդի հետ, որպես գրական գործ այն բարձր է նրա ուժերից, և անքակտելի է Խորենացու պատմությունից: Հայր Ակինյան մոռացել է մի կարևոր հանգամանք: **Ողբը** Պատմահոր միակ ողբը չէ: Նրա պատմության երկրորդ գիրքը կնքվում է մի ուրիշ ողբով, որ նվիրված է Տրդատի հիշատակին և կոչվում է **ողբերգական** մեղադրություն:

Մենք էլ պահենք այս անունը, **Ողբից** զանազանելու համար: Բավական է համեմատել այս երկու գործերը, որպեսզի փարատվի ամեն կասկած և համոզվինք, որ երկուսն էլ միևնույն մտքի և գրչի ծնունդ են: Ահա Ողբերգականի սկսվածքը. «Զսիրոյ եւ զմեծէ եւ զերկրորդ նահատակէ եւ զմերոյ լուսաւորութեան հոգեւոր վերակացուէ ճառերով, զ'ի Քրիստոսէ **հաճութեց** եղելոցս ճշմարիտ թագաւորէ» և այլն:

«**Հանուրց եղելոցս** ճշմարիտ թագաւոր» խոսքերը հիշեցնում են Ողբի «**հանուրց** հիւսիսականաց վեհագոյն» և մատնում միևնույն գրիչը: Ողբերգականի ոճն ու կառուցվածքը հար և նման է Ողբին: Հեղինակը հայտնում է սրտի դառնությունը սուրբ թագավորի թունավորման առթիվ, նրան համարելով ոչ միայն «գործակից» (հմմտ. Ողբի՝ «գործակցաւք» և հավասար Լուսավորչին, այլ անգամ վեր է դասում. «այլ զառաւելութիւն ասեմ աստ թագաւորին»):

Հանդիմանում է մեր ազգի ամբարհավաճությունը, ամաչում է հիշել անօրենությունն ու ամբարշտությունը, որով թունավորեցին այնպիսի թագավորի, որպես աթենացիք Սոկրատին և կամ հրեաները Քրիստոսին:

Այնուհետև խոսքը շրջում է իր անձի վրա իսկ և իսկ որպես **Ողբի** մեջ և դժգոհում է, որ ազգայինք անընդունակ են եղել գնահատելու նրան: «Ո՞վ ոք ի ձէնջ թոչակս յաղագս մեր, ո՞վ ոք վարդապետացս մաղթանս... Ո՞վ ոք յերթալն **մերում** բեռնաբարձս, ո՞վ ոք ի գալն **մերում** հանգիստ, ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց»:

Շարունակելով իր տրտունջը, վշտացած հեղինակն ասում է ի միջի այլոց. «**Ուր շատխօսութեանցն հոսանք իրրեւ յաղերէ դիմեն», որպէս ասաց ոմն ի հնոցն»:** Ո՞վ է այս **ոմն:** Գրիգոր Նազիանզացին, որին է պատկանում արդարև մեջբերած խոսքը, ինչպես ցույց է տվել Գր. Խալաթյանց[1]: Սաղմոսի՝ «մինչեւ յերր էք **ծանրասիրտք»** տանը, որ մեջ է բերում Ողբերգականի հեղինակը, ևս առնված է Նազիանզացուց (հայերեն թարգմանութեան մեջ **«խստասիրտք»** եք):

Արդ՝ հայտնի է որ Խորենացու **Ողբը** կրում է Նազիանզացու խոր ազդեցությունը: Հեղինակը չի թաքցնում և երկու անգամ ակնարկում է նրան. «Որպէս **ոմն** նախ քան **զմեզ իմաստասիրեաց**». «որպէս ասաց **ոմն** ի հարցն», ինչպես Ողբերգականի մեջ: Նազիանզացու ազդեցությունը այսպիսով կապում է սերտորեն Ողբը Ողբերգականի հետ և ապացուցանում, որ երկուսը միևնույն անձի գործ են: Ողբերգականի մասին կասկած չկա, որ Խորենացու երկի անկապտելի մասն է կազմում, ապա ուրեմն և Ողբը նրան է պատկանում:

Մի ուրիշ սխալ դիտողություն, որով ի. Ակինյան կարծում է հաստատել իր միտքը: Ողբի մեջ անհարազատ տարր է գտել, որպիսին համարում է հետևյալ պարբերությունը. «Եւ մինչ **ընդ զմեզն** յուսայինն զդարձ եւ պատուասիրել **իմով** ամենիմաստ արուեստիւս եւ կատարելագոյն յարմարութեամբս, համայն եւ **մեք** փութապէս դիմեալք ի Քիւրակոնդիոյ, յուսայ**ուք** հարսանեաց պարել եւ անվեհեր երագութեամբ կրթեալք... այդ... ողորմելի հառաչեմ... ոչ ժամանեցի աչաց ընդս կափուցման»:

[1]**Гр. Халатянц,** Армянские Аршакиды..., II, стр. 69-70.

Ընդգծված տեղերից երևում է, որ հեղինակը խոսում է մերք եզակի, մերք հոգնակի դեմքով: Հայր Ակինյան վերագրում է այս շփոթը այն «անճաշակ եւ անճարակ ձեռքին», որ **Ողբը** հանել է Վևոնդի Պատմությունից և հարել Խորենացու երկին, անգրագետ փոփոխություններ մտցնելով: Ուստի հ. Ակինյան նոքա ուղղում է **նա**, առանց նկատել ուզելու որ խոսքը հոգևոր ծնողների մասին է, ինչպես հետևում է նախընթաց նախադասությունից. «**Քանզի ծնաւ** զիս եւ **սնուցին**»:

Սխալ է նաև **զմերս** փոխել **զիմն** և մեք-ը՝ **ես**: Սխալ է, որովհետև հեղինակը ի նկատի ունի ոչ միայն իր անձը, այլև իր ընկերակիցներին: Ինչ որ իրեն է վերաբերում, արտահայտված է եզակի դեմքով: «Եւ մինչ նոքա զմերս (այսինքն իրրև իր ընկերների) յուսային դարձ եւ պատուասիրել (ավելի ճիշդ՝ պատվասիրիլ) **իմով** ամենիմաստ արուեստիւս եւ կատարելագոյն յարմարութեամբս համայն, եւ մեք (և ոչ թե՝ համայն եւ մեք) փութապէս դիմեալք ի Քիւզանդիոյ յուսայաք հարսանեաց պարել»: («Պատուասիրիլ» կախում ունի «յուսային» բայից և ոչ «դիմեալք յուսայաք»):

Պատմության հեղինակը մի ուրիշ տեղ ևս ցուցադրում է իր գիտությունը, իր ճանապարհորդության նայող գլխի (Բ, 62) մեջ, ուր ասում է՝ **անցաք, մտաք** և ապա **«յիմն** ասեմ վարդապետէ, որում ոչ անարժան **գտայ** աշակերտ... ինքնացայ», և նորին՝ **անկաք, մնացաք**: Ինչպես այստեղ, այնպես էլ **Ողբի** մեջ ասված է՝ «անհոգող դու այրութեամբդ եւ եղկելիք մեք որ զրկեալք եմք ի հայրենի վերակացութենէն»: Քիչ ստորև՝ «որպէս զախտս հանդուրժեցից... զլեզուս պնդեցից»:

Տարբերությունը հասկանալի է. խոսողը ինքն է միայն, բայց հայրենի վերակացությունից զրկվածը ինքը չէ միայն, այլ և յուրայիններն:

Պատմության մեջ Խորենացին կիրարկում է գրեթե անխտրաբար հոգնակի և եզակի դեմք, երբեմն որոշ տարբերությամբ, բայց ոչ միշտ: Նույնը և **Ողբի** մեջ. (զԾնողն **իմ**, եթէ **զիս**) եւ յետոյ՝ «ով **մեզ** ճառակցէ»:

Եթե հ. Ակինյանի նման մտածենք, պետք է Պատմության շատ և շատ գլուխները եկամուտ համարենք, որովհետև հաջորդում են համազոր նշանակությամբ: Հեռու չգնանք, առնենք առաջին գլուխը. ծանեայ, տեսանեմ և ապա՝ ծանեաք, աշխատասիրեցայց եւ յիշատակեսցուք: Բ գլուխը. զմեզ, գտանեմք, գիտեմք և միևնույն ժամանակ՝ ոչ դանդաղիմ: Գ գլուխ. **ինձ** թվի, ավելորդ է **մեզ**, զարմացեալ **եմ**, **մեզ** խոյզ խնդրոյ և այլն, և այլն:

Այս խնդրում զանազանություն չկա Ողբի և Պատմության մեջ, այլ նույնություն: Հետևապես հ. Ակինյանի առարկությունը ընդունելի չէ:

* * *

Եթե ի. Ակինյան իր կասկածանքը ուղղեր այն հատվածի դեմ, որ իրեն այնքան զբաղեցրել է և գայթակղել, մենք կողջունեինք և ձայնակից կլինեինք:

Ողբի հիվանդ մասը վերջին հատվածն է: Նրանով դատել ամբողջը սխալ է, իսկ ամբողջով այն քննել՝ արդար:

Ողբը բանաստեղծական դրվագ է, որի հարգը չի նսեմանում այնու, որ նմանողություն է Նազիանզացուն: Միևնույն քարերից կանգնում է հաճախ տարբեր ճարտարապետական շենք: Ինչ և լինեն փոխառյալ բառերն ու համեմատությունները, **Ողբը** գեղեցիկ հորինվածք է, ազնվական հյուսվածք:

Արձակ է, բայց չափականի ելևէջն ունի: Համավանկ բառերի հաջորդականությունը ստեղծում է նվագայնություն: Կան զեղում զգացում, բաբախող սիրտ, հորդ հույզեր և ջերմ արտասուք: Մթագին ակնարկությունները շաղում են մի տեսակ խորհրդավորություն: Ուժեղ, շեշտված արտահայտությունները մնում են բանաստեղծական հունի մեջ և տեղի չեն տալիս հռետորական այլանդակությանց:

Հուզիչ, ոչ խռովիչ, լարվածքով, բուռն, ոչ ահաբեկ թախիծով ընթերցողը սահում է ընտիր շարվածքի վրայից, հետզհետե աճող տրամադրությամբ և կանգ է առնում անդ, ուր բանաստեղծը ավարտում է մի վերջին շունչով. «Զարթի՛ր Երեմիաս, զարթի՛ր եւ ողբա՛ հանդերձ մարգարէանալ որ ինչ թշուառացաքս եւ որ ինչ թշուառանալոցս եմք: **Գուշակեա՛ զյառնել հովուաց ազիտաց,** որպէս երբեմն Զաքարիաս յԻսրայէլին»:

Ողբի ընթացքը փոխվում է: Բանաստեղծության հեզաթավալ ալիքները դադարում են, բացվում է մի ջրվեժ, հռետորական հորձանք: Նա, որ ցայժմ ողբում էր լալագին թագավորի և քահանայի մահը և վայում իր մենավոր որբությունը, հեղաշրջվում է, և «տխրական եւ սգաւոր» բարբառը լռում է և առաջ է գալիս մի անհույս հռետես և իր անեզր ամբաստանությամբ մի սև վարագույր է փռում հայ ազգի և հայ բնության վրա:

Հայ ժողովուրդը ներկայանում է մեզ որպես մի հրեշ. իր բոլոր խավերը ախտավոր են: Ամենեն անարգը զորականներն և իշխանները, որակված տասնական ահռելի արատներով: Վիճակավորները, ժողովրդականները և դատավորները յուրաքանչյուրը յոթն ծանր ածականով ծանրաբեռնված: Վարդապետները, կրոնավորները և աշակերտները ևս խնայված չեն:

Հոռի երևակայությունը առաջանալով՝ այլանդակ գծերով է ներկայացնում նաև հայ բնությունը, չորս եղանակները տակն ու վրա են եղել: Քաղաքական կացությունը դժնդակ է. թագավորները խիստ են, վերակացուները՝ անհարբքարար, բշնամիները զորացած, սիրելիները՝ դավա-

ճանած, հավատը՝ վամառված, հենք, հափշտակություն, ավար և ավեր, սով և հիվանդություն և մահ, մի խոսքով կատարյալ դժոխք, «ակնկալութիւն գեհենի», որից երկյուղ կրելով հռոետես գրիչը ավելացնում է «յորմէ պահեսցէ զմեզ Քրիստոս Աստուած» և սրանով փակում իր անլուրջ ճարտասանությունը:

Հետևորդները, հափշտակված այս աշխարհասասան պատկերից, չեն զլացել ավելացնել նորանոր սև գծեր: Քանասերները իրավամբ համարել են նման հավելածուները անհարազատ:

Արդ՝ բնական հարց է ծագում թե Ողբի վերջին հատվածը, որ նրա անձնական մասն է կազմում, և անհարիր է ամբողջության, հարազա՞տ է, թե եկամուտ:

Նշաններ կան թեր և դեմ:

Կասկածելի հատվածը չի պատշաճում **Ողբի** վերնագրին, որի համաձայն Ողբը պետք է վերջացած համարել Երեմիայի խոսքի մեջբերումով: Ինչ որ հետևում է, հակառակ է մեջբերումի իմաստին: Ողբերգուն խնդրում է որ նոր Երեմիան գուշակե «զյառնել հովուաց տգիտաց»: Ասել է թե դեռ չկան տգետ հովիվները, այլ ենթադրվում է, որ պետք է երևան:

Մինչդեռ հաջորդ տողերի մեջ արդեն թվում է, որ «վարդապետք տխմարք, կրօնաւորք կեղծաւորք» և իրենց նմանները արդեն հրապարակի վրա են:

Արդյոք մի ուրիշ ձեռք չէ՞ շարունակել **Ողբը**, շարելով այն աննախանձելի մարգարիտները, որ տեսանք: Նրանք խորթ են Ողբի հեղինակի աշխարհայացքին: Ողբերգականի մեջ նա որոշակի գծել է այն ինչ որ համարում է հայ ժողովրդի թերություն: Խստասրտություն, ամբարհավատություն կամ քարձրահոնություն, կամակորություն և ճշմարտությանը անհարազատ, ահա մեր ազգային պակասությունները: Եվ այս ճշմարիտ է. Խորենացին ինքը, այդ լավագույն հայորդին ունի սույն թերությունները: Ճշմարիտ է, որովհետև մեր նոր սերունդը միշտ անգամ պարծենում է այդ հատկություններով և մեծ առաքինություն համարում: Տրդատի մահվան առթիվ խոստովանում է Խորենացին, որ «ամաչում է ասել ճշմարտությունը, մանավանդ մեր ազգի անօրենությունն ու ամբարշտությունը»:

Արդյոք այսպես մտածողը ընդունա՞կ էր ստորագրել Ողբի այն կտորը, ուր հայ իրականությունը մերկացրած է մարդկային բոլոր արժանիքներից:

Դժվար է պատասխանել, որովհետև կա մի արգելառիթ պարագա: Աշակերտների նկարագիրը Ողբի մեջ, ինչպես վկայում է «Հայկազնյան բառգիրքը», առնված է նույն Գրիգոր Նազիանզացուց (տե՛ս «աստվածաբան» բառը): Այս արդեն մի մածուցիկ նյութ է, որ կապում է քննելի կտորը Ողբին և հանճարարարում է ձեռնպահ մնալ խոհեմաբար, առայժմ վճռական պատասխանից:

Ինչպես և լուծվի այս կնճիռը, մի բան մնում է հաստատուն և աներեր, որ Ողբը անկապտելի մասն է կազմում «Հայոց պատմության», լինի ամբողջությամբ, թե առանց վերջին հատվածի, որ համարելու է հետագրական եռանդի արգասիք և ոչ իրական կյանքի պատճեն (4):

II

Ինը կետ է թվում հ. Ակինյան, ինը ապացույց երկու հեղինակների նույնության: Նրա դիտողությունները ի վիճակի են թերևս ուժ տալու Գրիգոր Խալաթյանցի կարծիքին, բայց անզոր նույնության հարցը լուծելու:

Ասել, թե երկուսն էլ միևնույն նկարագիրն ունին, որովհետև հայ երկրի զավակներ են, Սուրբ Գիրքը սերտած, գործունեության ասպարեզը Հայաստան է, նշանակում է ոչինչ չասել:

Նմանության փաստ չէ, որ երկուսն էլ Բագրատունի իշխանի հրամանով են գրել, քանի որ մեկի հովանավորը Շապուհն է, մյուսի՝ Սահակ:

Վևոնդ, գիտենք, երեց է, բայց որ Մովսես ևս «անտարակույս» երեց է, այդ չգիտենք:

Վևոնդ որպես թե Գողթնեցի, ինչպես և Մովսես: Թուելեաց երգերի առթիվ Խորենացին ասում է՝ «զոր պահեցին, որպէս լսեմ, մմրդիկ կողմանն գինեւէտ գաւառին Գողթան»: Այստեղից հանում է հ. Ակինյան Խորենացու անձնական ծանոթությունը Գողթնի, այն ինչ «որպէս լսեմ» դարձվածը ճիշտ հակառակն է վկայում: Նույն իմաստով Պատմահայրը գործ է ածում «որպէս ասեն», «որպէս լսեմք» (Ա, 16), իսկ իր անձնական ծանոթությունը արտահայտում է որոշակի՝ «որպէս լուաք ականջօք մերովք»:

Խորենացին գիտե Մաքինեաց վանքը, բայց ի՞նչ կապ ունի Վևոնդ նույն վանքի հետ, անհայտ է: Մաքինեաց վանքը շատ հեռու է Գողթնից, որպեսզի Գողթնեցին, և այն էլ ենթադրական, ծանոթ համարվի վանքին: Կան հատուկ անուններ, ինչպես Թորգոմ, Ճենքակուր, Հրունիք, Ամատունիք, Խրամ, Խոշակունի, որոնք պատահում են երկու հեղինակների մոտ: Հ[այր] Ակինյան ընտրել է նաև մոտ հարյուր բառ, ընդհանուր երկուսին:

Արդյո՞ք սրանք կարող են փաստ ծառայել երկուսին նույնության: Չէ՞ որ այս անուններն և բառերը բացառիկ սեփականություն չեն նրանց: Բառերի խոշորագույն մասը սուրբգրենական է և հետևապես մատչելի բոլոր մատենագիրներին: Առնենք ցուցակի առաջին բառը՝ «ազգապետ», ծանոթ է Ս. Գրքից և Ագաթանգեղոսից. «ուղիս, ամրոխ, արհամարհություն, բարեկարգություն» և այլն սուրբգրենական են: Մյուսները հայտնի են Ագաթանգեղոսից, Փավստոսից, Փարպեցուց, Եվսեբիոսի «Եկեղեցական պատմությունից», երկեր, որոնց քաջածանոթ է Խորենացին: Որպես զի կարելի լինել պնդել թե մի ձեռք

է բանաքաղը և ոչ երկու, պետք է հաշվի առնել երկուսի ամբողջական բառարանը, դարձվածները, քերական մտածողությունը և ոճագիտական բնածին շնորհը:

Հ[այր] Ակինյանի բառացուցակը լրիվ չէ: Օրինակ, չէ հիշված Կորյունի վատակազմ բառը՝ «բարեացապարտ», որ ծանոթ է Ղևոնդին և Մովսեսին: Ուղիղ չէ Ղևոնդի՝ **վարչ** բառը սրբագրել **վաղը** և համեմատել Մովսեսի **վաղը**-ի հետ: **Վարչ** հին ձև է **գուրզ** բառին և կապ չունի **վաղրի** հետ:

Որքան էլ ճոխացնենք երկու հեղինակներին հավասարապես հատուկ բառերի ցանկը, կասկած չկա որ երկուսին անջատող բառագանձը անհամեմատ ավելի հարուստ է: Հեռու չգնանք, առնենք Խորենացու առաջին գլուխները. խաղացմունք, անարժանափառ, ծննդաբանել, ազգաբանել, պատկանավոր, հեշտաբար, զակատեալ, նախանձական, փոխարկել, չարած, զրուցատրութիւն, ներբողութիւն, արձանացուցանել, ածու, անսիրելութիւն, անյուսութիւն, մերազնեայ, ուշմագոյն, արդարախօսող, գործառնութիւն, սկզբնատիպ, և այլն, և այլն:

Խորենացու «խրոխտացեալ» բառը ի. Ակինյան տեսել է Ղևոնդի մոտ, բայց անտես է արել, որ նույն բառի կողքին կան՝ գեղապատշաճ, անճնեայ, քաջագանգուր, խայտակն, հաստաբազուկ, վիպական բառերը որ իզուր է որոնել Ղևոնդի մոտ:

Բառերից ավելի կարևոր է, անտարակույս, ոճը, այն արվեստը, որ կերտում է բառերից նախադասություններ: Խիստ մեծ զանազանություն կա երկուսի ոճի մեջ:

Մեր նպատակը չէ բնորոշել ոճը, այլ միայն լուսաբանել մեր միտքը: Առնենք մի օրինակ: Խորենացին գրում է՝ «զանսպառ խաղացմունս ի քեզ աստուածայնոցն շնորհաց(ն) եւ զանդուլ հոգւոյն ի վերայ քոց իմացուածոցդ զշարժմունս ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս»:

Նման շարված խորթ է Ղևոնդին: Ածականների, բացահայտիչների և խնդիր սեռի նախադաս և հեռակաց կիրառումը հատուկ է Խորենացու գրչին և անհարազատ Ղևոնդի պարզ հայախոսության:

Թե արդարև անզգուշություն է բառերի հիման վրա նույնացնել հեղինակներին, պայծառ օրինակ է Ագաթանգեղոսի և Կորյունի փոխհարաբերության կնճիռը: Ագաթանգեղոսի բանաքաղությունը Կորյունից անվիճելի է, բայց ո՞վ կարող է պնդել, որ Ագաթանգեղոս նույն Կորյունն է:

Հ[այր] Ակինյան գտել է նաև մտքերի նմանություն երկու հեղինակների մեջ, արժանի ամենայն ուշադրության: Բայց նմանությունը նույնություն չէ: Ղևոնդ ունի. «Լաւ համարեցաւ զմահ անճանց քան տեսանել զկորուստ

աշխարհիս... քաջութեամբ մեռցո՛ւք ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս եւ մի տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից արանց զսրբարանսն մեր»:

Այս տողերը հիշեցնում են Խորենացու. «Լաւ համարէր զմեռանելն ի վերայ **հայրենեացն** քան թէ տեսանել զորդիս **օտարածնաց** կոխելով զսահմանս **հայրենեացն** եւ **հարազատից** արեան նորա տիրել արանց»:

Նմանության մեջ կա և մեծ տարբերություն: Խորենացին գործ է ածում **հայրենիք** բառը և հակադրում հարազատը **օտարածնին**: Խորենացին առաջինն է, որ արտասանում է հայրենիք, հայրենասեր բառերը: Այս մի հատիկ բառը, հայտարար նոր աշխարհայացքի, բավական է, որ զատենք Խորենացուն Ղևոնդից և իր բոլոր նախորդներից: Ղևոնդի տողերը բնորոշ են վանականի համար, Խորենացին քաղաքացի է և քաղաքական մտածող:

Համաձայն չենք նաև հ. Ակինյանի այն կարծիքին, որպես թե Ղևոնդ և Մովսես Նույնանման վերաբերում ունին դեպի Բագրատունիները: Այստեղ ևս զանազանություն ենք տեսնում:

Հ[այր] Ակինյանի արտահայտությամբ երկուսն էլ Բագրատունիների «կապարճակիրներն» էին: Նախ խորշելի ենք համարում այս բառը: Երկու քաղաքական հոսանքները, որոնց ներկայացուցիչներն էին հնում Բագրատունի և Մամիկոնյան իշխանները, ակոսում են մեր կյանքը նույնիսկ ներկայումս: Նրանց կողմնակիցներին դրոշմել նախատական կամ վիրավորական որակումներով կարիք չկա: Ղևոնդ և մանավանդ Խորենացին գաղափարական հակառակորդներ են Մամիկոնյան մարտական տրամադրության: Քաղաքական ուղղությունները մշակվում են ոչ միայն զենքով, այլ նախ և առաջ խոսքով: Խոսքն է ծնում զենքը:

Հիմ չկա մեկուսացնելու հայ մտավորականությունը կամ չեզոքացնելու նրա նշանակությունը հին կուսակցական խնդիրներում և նվաստացնելու մինչև ծառայական աստիճան: Վարդանակերտի ճակատի նախօրեին հայ զինվորականները դիմեցին մի «սուրբ, ընտրեալ եւ լի հոգեւոր իմաստութեամբ միաբանակեացի, հարցանել զորպիսութիւն գործոյն»[1]: Բագրևանդի և Արծեշի կռիվների գաղափարախոսը «ոմն Մոնազոն» էր[2]: Ուրեմն, չվիրավորենք մեր մատենագիրներին: Խորենացին, այդ արտակարգ ինքնասեր հայը, խոսում է Սահակ Բագրատունի իշխանի հետ, ամեն պարագայում, ոչ որպես «կապարճակիր», այլ ինչպես ուսուցիչ տղա աշակերտի հետ:

Խորենացին համակիր չէ Մամիկոնյան քաղաքականության և կողմնակից Բագրատունյան գծի այն աստիճան, որ ուրանում է Մամիկոնյան

---

[1] **Ղևոնդ**, էջ 23:

[2] Անդ, էջ 141:

կտրիճների քաջագործությունները: Ղևոնդի համակրանքը ևս Բագրատունիների կողմն է, բայց տակավին Մովսիսյան ժխտական շեշտը չունի Մամիկոնյանների հանդեպ: Գրիգոր Մամիկոնյանի մասին Ղևոնդ գրում է. «Այր երկիւղած, եղբայրասէր, դարմանիչ աղքատաց կատարեալ ի հաւատս աստուածպաշտութեան, որ յաւուրս իւրոյ իշխանութեան խաղաղացոյց զաշխարհս Հայոց յամենայն հինից եւ յարձակմանց»: Խորենացին չէր ստորագրիլ նման դրվատիք որևէ Մամիկոնյանի հասցեին:

Սրմենի և Արճեշի հերոսները Մամիկոնյաններն էին: Ղևոնդ պատմում է մեզ նրանց անձնազոհ և անվեհեր հայրենասիրությունը, առնաց մոռնալու, հարկավ, արդարացնել Բագրատունի իշխաններին որ անմասն էին մնացել երկրի պաշտպանության այնպիսի մի ճգնաժամին: Երկու Աշոտներն էլ երկղիմի դիրք էին բռնել ապստամբության հանդեպ: Ղևոնդ գրի է առել անցքերը, երբ խիզախ զորականները ընկել էին կռվի դաշտում և հարկավ հետին ժամու իմաստությամբ է, որ քննադատում է ըմբոստացումը և մարգարեական աչք տալիս Բագրատունի իշխանի իրապես տարտամ և երերուն խոհեմության:

Որքան և աչառու է Ղևոնդ, և կուսակցական, բայց և այնպես պետք է խոստովանել, որ նա ատելություն չունի դեպի Մամիկոնյանները: Հ[այր] Ակինյան թվում է, թե սխալ է մեկնում պատմագրի խոսքը՝ «չար սերմանց չար արդիւնաւորութիւն»: Դավիթ Մամիկոնյան մեռավ անպատիվ մահով «ըստ անհամոյ Աստուծոյ բարուց **ատելութեանն զոր առ ազէին միմեանս.** զի արդարեւ չար սերմանցն չար արդիւնաւորութիւն»[1]:

Չար սերմը Մամիկոնյանները չեն, այլ ատելություն է, որ կար Աշոտ Բագրատունու և Մամիկոնյան Դավթի մեջ և այդ ատելությունն է տվել, ծնել, չար արդյունավորություն:

Ղևոնդ անվանում է Գրիգոր Մամիկոնյանին **չարասեր**[2] և **բարեեղբայր**[3], որովհետև իրոք վատ գործ էր կատարել, պատճառ լինելով Աշոտ իշխանի դժբախտության: Սակայն պատմագիրը արդարամիտ չէ: Աշոտի դեմ էին նաև Սմբատ Բագրատունու որդիները: Սրանց անունները չի տալիս և հիշատակում է այնպես երկղիմի ճևով, որ իր տողերի մեջ նրանք իրենց գործով ծուլվում են կարծես թե Մամիկոնյան եղբայրների հետ:

Հ[այր] Ակինյան, հետևելով Ք. Պատկանյանին, կարծում է, որ Սմբատի որդիքը նույն են, ինչ որ Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները: Մենք արդեն առիթ ենք ունեցել խոսելու այս մասին[4]:

---

[1] **Ղևոնդ**, էջ 120-121:

[2] Անդ, էջ 123:

[3] Անդ, էջ 124:

[4] Ն. **Ադոնց, Բագրատունյաց փառքը, «Հայրենիք»**, 1929, մարտ, էջ 156:

Ղևոնդի բնագիրը բավականին անորոշ է և ընդունակ ծնելու թյուր ըմբռնում: «Վրաց տարեգրք»-ից գիտենք, որ Աշոտի կուրացման հեղինակներն իր եղբորորդիք էին, ամեն պարագայի ոչ միայն Մամիկոնյանները: Ո՞վ են եղբորորդիք: Անտարակույս, Սմբատի որդիները: Այս տեղեկությունը հարկադրում է մեզ զատել Սմբատի որդիներին Մամիկոնյան եղբայրներից և ըստ այմ մեկնել Ղևոնդի երկմիտ տողերը:

Ղևոնդ գրում է. «Իմացեալ **որդւոցն Սմբատայ** զպատիւն Աշոտոյ, զի մեծացաւ անձն նորա յայս Հեշմայ... եւ վաղվաղակի հրամայէ (Մրվան) ունել **զնոսա** եւ առաքէր առ իշխանն Իսմայէլի **զԳրիգոր** եւ **զԴաւիթ**, որք էին ի տոհմէ **Մամիկոնեան»**[1]:

Կարծես թե Սմբատի որդիք նույն են, ինչ որ Գրիգոր և Դավիթ: Սակայն Սմբատ Մամիկոնյան անուն չէ. և եթե որպես բացառիկ երևույթ Սմբատը Մամիկոնյան տանից էր, ինչո՞ւ պատմագիրը չի անվանում նրան Մամիկոնյան, մինչդեռ ենթադրական որդիների՝ Գրիգորի և Դավթի մասին ասում է որոշակի «ի տոհմէ Մամիկոնեան»: Իրավունք ունինք հետևապես Սմբատին և իր որդիներին զատելու Գրիգորից և Դավթից:

Հետո պատմագիրը գրում է՝ «հրամայէր տանել զնոսա յԵմանն»[2] և ապա՝ «յայնժամ զերծեալ որդիքն Սմբատայ ի կալանաւոր պատանդէն»[3]: Ազատվածները գալիս են «ի կողմանս Վասպուրական աշխարհի», բռնություններ են գործում և հարձակվում Աշոտի վրա կամենալով նրան սպանել: Աշոտ մի կերպ փախչում է, գնում է գանգատվելու Մրվանին: Եվ այս ժամանակ ոստիկանը նշանակում է իշխանաց իշխան Գրիգոր Մամիկոնյանին Աշոտի փոխարեն: Մրվանը տեղեկանալով Աշոտից «զամբաստանութիւնն զորդւոցն Սմբատայ եւ զոր ինչ արար ընդ նա Դաւիթ եղբայր Գրիգորի», հրամայում է պատժել Դավթին:

Արդ՝ հարձակվողները Սմբատա որդիներն էին, մինչդեռ ամբաստանող Աշոտը բռնում է միայն Դավթի օձիքից: Դավիթ մենակ չէր, երբ հարձակվեց Աշոտի վրա, եթե իր հետ էր իր եղբայր Գրիգորը, և ուրեմն երկուսն են Սմբատի որդիք, ինչպե՞ս է որ ոստիկանը նշանակեց ոճրագործին իշխանաց իշխան: Եվ ի՞նչ գործ ունեին Մամիկոնյանները Վասպուրականում, որ իրենց կալվածը չէր: Գիտենք, որ այնտեղ իշխում էին, ըստ Ղևոնդի, Սմբատ, որ զոհ գնաց 705 թվի ողբերգության, և որ էր որդի Աշոտի, որ իշխանաց իշխան էր 685-689 թթ. և բնական է, որ նրա որդիները փախել մտել են Վասպուրական, իրենց հայրենի տունը:

---

[1] Ղևոնդ, էջ 112:

[2] Անդ, էջ 113:

[3] Անդ, էջ 118:

Աշոտ ամբաստանողը որդի էր Վասակի: Սմբատը այս Վասակի եղբայրն էր, ինչպես ընդունել էինք վերև հիշյալ հոդվածում: Հ[այր] Ակինյան, որ անծանոթ է մեր հոդվածին, նույն կարծիքն է հայտնում մեզնից անկախ: Ուրեմն Սմբատի որդիք և ամբաստանող Աշոտ երկու եղբարց որդիներ էին: Աշոտը խնայել է իր հորեղբորորդիներին և իրեն հասցրած զրկանքը բարդել է միմիայն Մամիկոնյան Դավթի վրա:

Իսկ թե ի՞նչ հակառակություն ունեին Սմբատի որդիք Աշոտի հետ, հասկանալի է: Սմբատ ավագ որդին էր Վասակի և իր որդիքը օրինական թեկնածուներ էին իշխանաց իշխանի գահին, որ արաբ իշխանությունը զիջել էր Վասակի որդի Աշոտին:

Շնորհիվ Աշոտի ամբաստանության, Դավիթ սպանվեց արաբական դահիճի ձեռքով: Գրիգոր իր եղբոր վրեժը լուծեց, կուրացնելով Աշոտին:

Մամիկոնյան եղբայրների թշնամությունը Աշոտի դեմ հավանորեն քաղաքական հողի վրա էր, ինչպես ցույց են տալիս վերահաս ապստամբական շարժումները: Նրանք միացել էին Սմբատի որդիներին տապալելու Աշոտին, որ ավելի քան բարեկամ էր արաբներին: Գրիգորը վաղուց էր որոճում ընդվզումի ծրագիրը: Երբ իր եղբոր ողբերգական մահից հետո գործի անցավ, կարճատես Ղևոնդը ուրիշ բան չի ուզում տեսնել նրա ճեռնարկի մեջ, քան «խորամանկութիւն վասն հանելոյ զիշխանութիւն յԱշոտոյ»:

Գրիգոր անշուշտ իրավունք ուներ աչք ածելու իշխանաց իշխանի գահին: Գրիգոր, Դավիթ և երրորդ եղբայրը Մուշեղ ծագում էին այն Գրիգորից, որ իշխանաց իշխան էր և ընկավ խազարաց դեմ կռվելիս 685 թվին: Սրա որդիներն էին Դավթի վկայության մեջ հիշված՝ Մուշեղ և Արտավազդ Մամիկոնյանները:

Այս Մուշեղի որդիներ ենք համարում Մամիկոնյան երեք եղբայրներին, Գրիգոր, Դավիթ և Մուշեղ: Իսկ Արտավազդի զավակն է հավանորեն Հմայակ Մամիկոնյան, որի որդին Արտավազդ, առաջին ապստամբության հերոսը, ծանոթ Ղևոնդին[1]:

Գրիգոր թեև իրավունք ուներ թեկնածել իշխանական գահին, բայց այդ չէր նրան Աշոտի դեմ լարողը, այլ քաղաքական տարաձայնությունը: Պատմագիր Ղևոնդ խղճի դեմ է խոսում, երբ «խորամանկութիւն» է որոճում նրա մեջ Աշոտին տապալելու համար: Գրիգոր այնքան խակամիտ չէր, որ կարծեր թե արաբների դեմ խրոխտալով, կարելի էր նրանց աչքը մտնել և իշխանության արժանանալ: Դրա համար հարկավոր էր ոչ թե զենք շարժել, այլ երկրպագության գնալ արաբ ամիրապետին, ինչպես արավ Աշոտ:

---

[1] Ղևոնդ, էջ 138:

Այսպես ուրեմն Մամիկոնյան եղբայրները զատ անձինք են, քան Սմբատի որդիները հակառակ Հ[այր] Ակինյանի և համաձայն վրաց ավանդության: Վերջինս պատասխանատու է համարում Աշոտի դժբախտության համար իր եղբորորդիներին, իմա՛ հորեղբորորդիներին, որ են Սմբատի որդիք: Կուսակցական միակողմանիությամբ Ղևոնդ, ինչպես և ինքն Աշոտ, հանցանքը ձգել են միմիայն Դավիթ Մամիկոնյանի վրա:

Չնայելով այս բոլորին, Ղևոնդ չի ուրանում Մամիկոնյանների սխրագործությունը և նկարագրել է մեզ նրանց խիզախումները, այնպես որ ընթերցողին համակրություն է ներշնչում և ոչ ատելություն:

Մինչդեռ Խորենացին բնավին ջնջում է Մամիկոնյան հիշատակը Հայոց պատմությունից, նրանց փայլուն դրվագները վերագրելով Բագրատունի և այլ իրեն հաճելի իշխանական տների:

Այլևս մի անջրպետ է, որ արգելում է նույնացնել Ղևոնդին և Մովսեսին: Եթե պատմագիրների համակրանքը կապ ունի քաղաքական կշիռի հետ, պետք է հետևցնել, որ Բագրատունյաց թաթը նվազ ծանր էր Ղևոնդի օրով, քան Խորենացու, այսինքն՝ սա ավելի մոտ է ժամանակով Բագրատունիների վերջնական հաղթանակին և ուրեմն ուշ, քան Ղևոնդ:

* * *

Հ[այր] Ակինյան երբեմն մեղանչում է Խորենացու բնագրի դեմ: Պատմահոր սրտառուչ տողերից լավագույնը առիթ է տվել նրան թյուր մեկնաբանության:

Հասցնելով իր Պատմության թելը մինչև այն կետը, ուր Հայկի զավակներն արժանանում են թագի, Խորենացին չի կարողանում զսպել իր ներքին հաճույքը: Հայրենասիրական վերասլացումով ցանկություն է հայտնում, որ ինքն էլ այն ժամանակ ծնված լիներ, և, որպեսզի այս դեպքում զրկված չմնա քրիստոնեական լույսից, ուզում է, որ Քրիստոս էլ այն ատեն աշխարհ եկած լիներ: Եվ ապա հառաչում է. «Այլ վաղ ուրեմն փախեաւ ի մէնջ պատահումն այն, թէ արդեօք եւ վիճակ»[1]:

Հ[այր] Ակինյան կարծում է, որ այս տողերը հասկանալի կլինեն, եթե Խորենացու գրչի տակ տեսնենք Ղևոնդի սիրտը, որովհետև որպես թե միայն Ղևոնդ կարող էր գրել թե «թագաւորութեանն պատահումը փախաւ, երանի թէ նաեւ արդի չարաշուք վիճակը փախչէր», հույս չունենալով, որ 360 տարի առաջ դաղրած թագը պիտի վերանորոգվեր: Սխալ ըմբռնում է:

[1] **Մովսես Խորենացի**, էջ 67:

Խորենացին ափսոսում է, որ «պատահումը փախաւ», ուրեմն չպատահեց կամ չիրագործվեց ոչ թե թագավորությունը որ տեղի ունեցավ, այլ իր երկու խղճերը. ոչ ինքը այն ժամանակ ծնվելու բախտ ունեցավ և ոչ Փրկիչը այն ատեն եկավ: Այսպիսով զրկվեց արեևակից հարազատ թագավորների թևի տակ ապրելու երջանկությունից, ազատ օրվան դառնություններից: Ստիպված է ապրել օտար թագավորների լծի տակ, գոնե դառնությունները չլինեին, «այս վիճակը եւս փախած լիներ»:

Խորենացու միտքը պարզ է և նրա զգայուն տողերը ոչ մի հիմ չեն տալիս ո՛չ Վևոնդի և ո՛չ էլ ժամանակի խնդիր հարուցանելու: Պետք չկա նոր կնճիռ ավելացնելու ծերունու կնճռոտ ճակատին:

Ինչ և լինին մեր քննած դիտողությունները, սխալ կլիներ կարծել, որ նրանք են բերել ի. Ակինյանին իր նորալուր տեսության: Այս դիտողությունները թարմատար հանգամանք են:

Գայթակղության բուն քարը պետք է որոնել այն հետաքրքրական տեղեկության մեջ, որ գտնում ենք ասորի Դիոնիսիոս Տելմահրեցու մոտ:

Այս մասին արդեն խոսել ենք ամսագրիս էջերում[1]:

IX դարու սկզբում երևան եկավ Խուռամյան պարսիկ աղանդը, որ գործում էր բույն դրած Կորդվաց լեռներում: Աղանդավորները մեծ պարտություն կրեցին արաբներից 813-816 թվերին արաբական զորքերից, և նրանց առաջնորդը Մահդի փախավ ապաստանելու Աշոտի որդի Սահակի երկիրը: Սահակը նրան սպանեց, որից զայրացած աղանդավորները գրոհ տվին Սահակի դղյակի վրա և պաշարեցին: Սահակ բացակա էր: Իր կինը, կնոջ եղբայրը, որ վանական էր և մի ուրիշ վանական դիմադրեցին քաջաբար և պաշտպանեցին ամրոցը, ուր փակված էին:

Այս պատմվածքից երևում է, որ 813-816 տարիներին հայ իշխան կար Սահակ անունով, որդի Աշոտի, և սրա դղյակում ապրում էր մի վանական, որ իր կնոջ եղբայրն էր:

Արդ՝ ի. Ակինյան կարծում է, որ այս Սահակ Խորենացու մեկենասն է և վանականը՝ ինքը Խորենացին: Սահակի անձը առեղծված է, որ շատ գլուխներ է հոգնեցրել: Սահակ անունը լսելիս հայ բանասերը բնականորեն միտքն է բերում Խորենացու հովանավորին: Երբ առաջին անգամ ծանոթացանք Դիոնիսիոսի շահեկան տեղեկության, մենք ևս հիշեցինք Խորենացուն և Սահակին, բայց երկար կանգ չառանք այն պարզ հիմամբ, որ Պատմահայրը անձնապես ծանոթ չէր Սահակին, մինչդեռ վանականը նրա կնոջ եղբայրն է, ուրեմն ոչ միայն քաջածանոթ, այլև ազգական: Այլև

[1] Ն. Ադոնց, Բագրատունյաց փառքը, «Հայրենիք», 1928-1929:

հնարավոր չէ հովանավորին որոնել IX դարում, եթե հովանավորյալը իրեն V դարու մարդ է համարում:

Այլապես է վարվել հ. Ակինյան, որ պինդ կառչել է իր առաջին տպավորության և վճռել անորոշ շշունջից նոր երգ հյուսել: Պատմահոր նշանավոր խոսքը՝ «յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգւոյդ ընկալեալ զծանօթութիւն» ենթադրել է տալիս, ըստ հ. Ակինյանի, որ հոգևոր ծանոթության հետևել է և՛ մարմնավորը: Չենք կարծում: Խորենացու խոսքի իմաստն է, թե քեզ չեմ ճանաչում, բայց տեսնում եմ «ի ձեռն գեղեցիկ խնդրոյս», թե որքան խոհական անձ ես:

Այս տողերը գրելիս նա ծանոթ չէր Սահակին, այլապես գեղեցիկ խոսքը կկորցներ իր գեղեցկությունը: Թե հետագայում ծանոթացած լինի, հաստատ փաստ չկա:

Սահակ, անտարակույս, Բագրատունի իշխան էր: Հ[այր] Ակինյան մի հաջող միտք է հայտնել, որ Սահակը որդի է ոչ թե Աշոտ Մսակերի, այլ Աշոտ Սահակյանի: Սրանով լուծվում է Վարդան պատմիչի բնագրի մի հանգույցը, որ հակասական իմաստ ուներ: Սակայն, ինչ- ինչ առարկություններ դեռ մնում են:

Դիոնիսիոս Սահակին կոչում է որդի Աշոտի, քիչ վերև նույն պատմագիրը հիշում է Աշոտ Մսակերին՝ Նանայի և Արիկուրայի վիճաբանության առթիվ: Հավանորեն, այդ Աշոտին ունի ի նկատի որպես հայր Սահակի: Մյուս կողմից Դիոնիսիոս գիտե որ Մսակեր ուներ **որդիներ**. մինչդեռ հ. Ակինյանի վարկածը հարկադրում է Մսակերին տալ միմիայն մի որդի՝ Սմբատ Խոստովանող: Դարձյալ, Վարդան պատմիչից[1] երևում է, որ Զահապի օրով Տարոնը ենթակա էր Աշոտ Մսակերին և ուրեմն այնտեղ իշխում էին իր որդիները և ոչ Աշոտ Սահակյանի:

Մոռանալու չէ նաև, որ Սմբատ Մոկաց իշխեցող հավանորեն նույն Սմբատ Խոստովանողն է[2]: Ոչ միայն Տարոն, այլև հարևան Մոկաց աշխարհը Մսակերի որդիների ձեռքին էր: Աշոտ Սահակյանի մասին շատ բան չգիտենք: Վևոնդ գովում է նրան իր խոհեմության, զգույշ քաղաքականության համար, բայց արդյո՞ք այդ խոհեմություն գնահատվեց արաբների կողմից և նա ստացա՞վ իշխանաց իշխանի գահը և կամ որքան ապրեց, հայտնի չէ:

Չնայելով այս բոլորին, հ. Ակինյանի ենթադրությունը շատ հավանական է:

---

[1] **Վարդան**, էջ 78:

[2] **Թովմա Արծրունի**, էջ 127, 137:

Սահակը իշխում էր, ըստ հ. Ակինյանի, Անձևացյաց երկրում: Մենք գերադասել ենք Մոկաց աշխարհը, ուր տեսնում ենք հետագայում Սմբատ Բագրատունուն: Ըստ Մարկվարտի «Սահակ իշխան էր Քեթ Քարեիլուի (Քոհտան) շրջակայքը», ուստի հավանորեն և Տարոնի մեջ: **Քեթ Քարեիլու** վրիպակ է, ուղղել պետք է՝ **Քեթ-Քարդու**: (Միքայելի հատվածի մեջ **priere աղոթք** բառը շփոթած է հայ թարգմանիչը **pierre քար** բառի հետ) Խորենացին բնակել է տալիս Սմբատ Բյուրատին Տմորիքում, Ալկի ավանում: Հ[այր] Ակինյանի կարծիքով, այս արժագանք է Սահակի օրով տիրող կացության: Անձևացյաց գավառի գլխավոր վայրն է Կանդուստը:

Այստեղ է, որ Սահակի պատվերով Խորենացին գրել է իր Պատմությունը IX դարի սկզբներին, 813-816 թվականներին: Սահակ որպես թե Վաղարշակի նման կամեցել է իմանալ իր բնակության անցյալը: Այդ ժամանակ հրապարակի վրա ուրիշ ավելի կարող մարդ չկար, քան Ղևոնդ, որ արդեն հռչակ էր հանել շնորհիվ իր պատմական մատյանին, գրած մի ուրիշ Բագրատունի իշխանի՝ Շապուհի հրամանով: Ղևոնդն է ուրեմն այն կարիճ վանականը, որ իր քրոջ հետ պաշտպանել է ամրոցը: Նա է, որ գրել է «Հայոց Պատմութիւնը»:

Իսկ ինչո՞ւ է Խորենացու անունը գրքի ճակատին:

Հ[այր] Ակինյանի պատասխանը կտրուկ է ինչպես միշտ: Նա գտնում է, որ Մովսես Խորենացու անունը անհարազատ է և ամբողջ նախադասությունը՝ «Մովսէս Խորենացի յաղագս մերոյս ի սկզբան յայսմ բանիցս Սահակայ Բագրատունւոյ խնդալ», անքերականական շարադասություն է և փորձում է վերականգնել նախնական հարազատ ձևը ջնջելով Մովսեսի անունը:

Այս արդեն ենթադրություն չէ, այլ աններելի մոլորություն: Բավական է, որ թերթեր Խորենացու երկի Գ գրքի 57-րդ գլուխը, որպեսզի հրաժարվեր անտեղի կասկածամտությունից: Այնտեղ կկարդար. «Սահակ եպիսկոպոս Հայոց քաջի զօրավարի Անատոլեայ խնդալ». «ինքնակալ Թէոդոս Աւգուստոս... Մեծի Սահակայ եպիսկոպոսի Հայոց ի տէր խնդալ»:

Անտեղի է **յայսմ** ուղղել **այսր**, քանի որ **յայսմ** վերաբերում է **ի սկզբան** բառին և ոչ հաջորդ խոսքին. ի սկզբան յայսմ, նշանակում է՝ ի սկզբան աստ, ինչպես ուրիշ տեղ ասում է՝ «աստէն իսկ ի սկզբան մերոյ գործառնութեան» (Գիրք Ա, 3):

Խորագիրը կանոնավոր է և Մովսեսի անունը իր պատկանավոր տեղն է:

Ուրեմն, ինչպե՞ս բացատրել, որ Ղևոնդ, եթե իրոք Հայոց պատմության հեղինակն է, Խորենացու անունն է դրել իր աշխատության ճակատին, և ինչ որ աներևակայելի է, գրելով Սահակի պատվերով IX դարում, չի քաշվել իրեն V դարու մարդ համարել:

Հ[այր] Ակինյան կարծում է, որ Ղևոնդ չէ կեղծողը, այլ մի ուրիշ անծանոթ գրիչ, որ Ղևոնդի մահից հետո կեղծել է, խեղաթյուրել և՛ հեղինակի անունը, և՛ ժամանակը, կամենալով ավելի մեծ հեղինակություն տալ «Հայոց պատմության»: Մովսես Խորենացի անուն անճ, ըստ հ. Ակինյանի, գոյություն չի ունեցել: Կեղծողը ընտրել է Մովսես անունը որպես թե աչքի առաջ ունենալով Հնգամատյանի հեղինակ Մովսեսին. իսկ Խորենացի շինծու բառ է, կերտված «որ ընդ խորս եանց» բառերից:

Այս նշանակում է Մովսես Խորենացու դժվարաքակ հանգույցը [լուծել] Ալեքսանդրյան խիզախությամբ և ողբերգական խնդրի մեջ կատակերգական տարր մտցնել ստուգաբանական խաղերով:

Ո՛չ, Խորենացին Ղևոնդ չէ, և հ. Ակինյանի աշխատության արժեքն այդ անհաջող վարկածի մեջ չենք տեսնում:

Հ[այր] Ակինյանի ուսումնասիրությունը, թեև ճեռնարկած սխալ դրված հարցի շուրջ, չի կորցնում իր արժեքը, այլ բերում է մի կարևոր նպաստ Խորենացու և Ղևոնդի փոխհարաբերության խնդրին, պարզելով որ Խորենացին օգտվել է Ղևոնդից:

Ալևոր Պատմահոր երեսից մի խորշոմ ևս հանվում է, բայց երեսը մնում է տակավին կնճռոտ: Խորենացին ավելի ուշ է, քան Ղևոնդ, Գր. Խալաթյանցի այս թեզը լուսաբանված կարելի է համարել հ. Ակինյանի աշխատությամբ (5): Հայ բանասիրությունը կժխտի նրա հիմնական վարկածը, բայց կմնա երախտապարտ իր բերած նպաստին համար:

ՓՈՔՐ ՍՈԿՐԱՏԻ ՀԵՂԻՆԱԿԸ

Ինչպես հայտնի է, Սոկրատի «Եկեղեցական պատմությունը» մեզ հասել է կրկնակի խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ, կամ որպես ընդունված է անվանել՝ Մեծ և Փոքր Սոկրատ: Մեծ Սոկրատը թարգմանված է հունարենից Փիլոն Տիրակացու ձեռքով 696 թվին: Իսկ ի՞նչ է Փոքր Սոկրատը:

Փոքր Սոկրատի և Մովսես Խորենացու Պատմության միջև կան անհամար առնչության կետեր, և այնքան զգալի որ մատնում են մեկի կախումը մյուսից: Նորայր [Բյուզանդացի] կամենալով պաշտպանել Պատմահոր ավանդական դարը, այն կարծիքն էր հայտնել, որ Փոքր Սոկրատը նախնյաց հին թարգմանություն է և Խորենացին օգտվել է նրանից: Այնուհետև նախնիք զգալով, որ Փոքր Սոկրատը խիստ համառոտ է, ձեռնարկել են նորեն թարգմանելու 696 թվին: Այսպես էր կարծում նաև Մխիթարյան հայտնի բանասեր, հանգուցյալ հայր Ք. Սարգիսյան: Երկու Սոկրատների փոխադարձ հարաբերության խնդիրը պետք է պարզվեր առաջ, քան կարելի էր պատասխանել դրականորեն ֆրանսիացի գիտնական Կարրիերի կողմնե հարուցած նոր կասկածներին Խորենացու ժամանակի վերաբերյալ:

Էջմիածնի միաբան Մեսրոպ վարդապետը, այժմ արքեպիսկոպոս[1], հրատարակեց երկու Սոկրատները միասին 1897 թվին և ընդարձակ առաջաբանում քննության առավ օրվան հրատապ խնդիրը, ապացուցանելով, որ Նորայր և հ. Ք. Սարգիսյան սխալ են և որ Մեծ Սոկրատն ավելի հին է, քան Փոքրը: Պարզեց մանավանդ, թե ի՞նչ պայմաններում է ծագել Փոքր Սոկրատը: Փիլոն Տիրակացու թարգմանությունը խիստ բառացի էր, ստրկական հետևություն հույն բնագրին ի վնաս հայ լեզվի ողորկության, որով և դժվար ընթեռնելի էր և շատ տեղ անհասկանալի: Ընթերցող հասարակության մատչելի անելու նպատակով հարկ են տեսել հունախոս թարգմանությունը հայացնել, վերածել ավելի կանոնավոր և ավելի

[1] Չենք կարող հիշել մեր բարեկամի անունը առանց ցավ հայտնելու այն անտեղի և անարդար ցույցերի առթիվ, որոնց զոհ դարձրին Հայ եկեղեցու պատկառելի դեմքերից մեկին, և պատճառ եղան կաշկանդելու նրա գործունեությունը մի այնպիսի ժամանակ, երբ տարագիր հայությունը այնքան պետք ուներ գիտուն և փորձառու հովիվների (1):

հայկաբան խմբագրության: Եվ այս է Փոքր Սոկրատը: Հետևապես ավելի ուշ է, քան Մեծ Սոկրատը, ուշ քան 696 թիվը: Այս ի. Մեսրոպ Մագիստրոսի խոշոր լուման է հայ բանասիրության: Նրա մյուս դատողությունները Խորենացու հարցի շուրջ՝ մերը չեն և արդեն հնացած են, և մեր նպատակից էլ դուրս նրանց վերա կանգ առնել: Ինչ որ մեզ հետաքրքրում է այն հարցն է, թե ե՞րբ է խմբագրվել Փոքր Սոկրատը: Հայր Մեսրոպի կարծիքով նա խմբագրվել է «շատ չանցած» բուն թարգմանությունից, գրեթե միաժամանակ և խմբագրողը կամ համառոտողը հավանորեն ինքը Տիրակացին է եղել[1]: Վերջին ենթադրությունը ամեն պարագային անընդունելի է: Արդարև ի՞նչ կարիք կար թարգմանել բառ առ բառ և հետո նոր աշխատանք հանճն առնել թարգմանածը հայացնելու, փոխանակ սկզբից և եթ կանոնավոր լեզվով թարգմանելու: Տիրակացին անմասն է Փոքր Սոկրատին:

Մեծ և Փոքր Սոկրատի հարաբերության խնդիրը մնում է ցարդ առկախ: Բանասերները երկար և ջերմ վիճաբանությունից հետո իրենց զենքերը վայր դրին, մոռացության տալով հարցը: Եվ ինչ որ զարմանալի է, նոցանից և ոչ մեկը չէր նկատել, որ մատենագրական ստույգ տեղեկություն կա Փոքր Սոկրատի խմբագրության և՛ ժամանակի և՛ հեղինակի մասին: Մխիթար Այրիվանեցին իր Ժամանակագրության մեջ հաղորդում է 641 թվի տակ (թիվը հարկավ ճիշտ չէ, և այս չէ կարևորը)

«Փիլոն Տիրակացի, Ցակոբ Ուռհայեցի արար զնոր թարգմանութիւն»:

Հազիվ թե բացատրության պետք կա: Ժամանակագիրը հայտնում է, որ այս ինչ թվին Փիլոն Տիրակացին թարգմանել է Սոկրատը և հիշում ի դեպ, որ Հակոբ Ուռհայեցի արել է երկրորդ թարգմանությունը, այսինքն՝ Փոքր Սոկրատը: Մնում է պարզել թե ո՞վ է Հակոբ Ուռհայեցին:

Հարցնենք Մատթեոս Ուռհայեցուն, որ պետք է ճանաչե իր քաղաքակիցներին: Արդարև նա գիտե մի Հակոբ գիտնական վարդապետ, որ կնքել է իր մահկանացուն խորին ծերության մեջ, Ուռհայում, Հայոց 534 = 1085 թվին: Նույն պատմիչն ավանդում է, որ Հակոբը, որ կոչվում էր Քարափնեցի և Սանահնեցի, մասնակցել է 1065 թվի դավանաբանական վիճաբանության, որ տեղի ունեցավ մայրաքաղաքում, [Կոստանդին X] Դուկաս (կամ Տուկիծ) կայսրի հրամանով: Հակոբը մեծ դիմադրություն ցույց տվեց հայրենի ավանդները պաշտպանելու համար, բայց «սակաւ մի վասն երկրնութեանն Քրիստոսի ի կողմն Հռոմոց դարձաւ»[2], միաբանության գիր կազմեց և հանճնեց կայսրին: Այն պահուն սլացավ գահազուրկ Գագիկ թագավորը, պատառեց միաբանության թուղթը, պաշտպան հանդիսանալով Հայ եկեղեցու դավանության (2):

[1] Տե՛ս Առաջաբան, էջ 2ա և 3գ:

[2] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 161-162:

Հակոբը աշակերտել էր Դիոսկորոս Սանահնեցուն, որ 1038 թվին կաթողիկոս ընտրվեց: Անշուշտ, աշակերտել է Սանահնի վանքում և 1038 թվականից առաջ: Ծննդյամբ Քարափնեցի, վանական կյանքով՝ Սանահնեցի, Հակոբը կոչվում է նաև Ուռհայեցի, այնտեղ իր կյանքի վերջին տարիները անցնելու պատճառով: Հավանական է, որ 1065 թվից հետո, երբ կասկածի տակ ընկավ դավանաբանական խնդրում, փոխադրվեց Ուռհա և անդ մեռավ: Մատթեոս գովում է նրա խոր գիտությունը և անվանում «այր հզօր կորովի»: Դատելով Մխիթար Այրիվանցու նրա տված Ուռհայեցի կոչումից պետք է կարծել, որ Սոկրատի համառոտումը կատարել է Ուռհայում 1065-1085 տարիների շրջանում:

Հակոբը գիտուն էր և քաջ հայկաբան, կարդացել և սերտել էր հին մատենագրությունը, ինչպես երևում է իր գործից, որ լի է հներից քաղած ոճերով և դարձվածներով և մասնավորապես շահավետած է Խորենացու քառամքերքը:

Դառնանք այժմ Մեծ Սոկրատին: Երուսաղեմի օրինակը պահել է հետևյալ հիշատակարանը, գետեղված ճեռագրի առաջին թղթի վրա:

«Յամի վեցհազարերորդի երկերորդի չորրորդի կենցաղում անցաւորի որպես ունի ժամանակագրութիւն սուրբ Սոփի աւագ եկեղեցի տիեզերական մայրաքաղաքին Կոստանդնուպաւլսի, եւ ***ութ հարիւրերորդի չորրորդի Քրիստոսի գալստեանն*** և ի հարիւր քառասուն և ի չորս թուականին, ի յիններորդումն ընտիքտիոնին, յառաջնում ամի թագաւորութեանն երկրորդ Վեւոնի ինքնակալի Աւգոստոսի թարգմանեաց Փիլոն Տիրակացի ***առաջին ճեռնարկութեամբ*** զգիրս զայս մասնաւոր ծայրաքաղ ի Սոկրատայ եկեղեցական պատմութենէն, քողեալ զինքնախաւսութիւնս և զթուլթս այլոց և զճառս յաղագս նուազութեան քարտի և մագաղաթի եղելոյ յաւտարութեան»:

Մեծ Սոկրատի երկու օրինակներն էլ ունին իրենց վերջը Սեղբեստրոսի վարքը, որի սկզբում կա հետևյալ հիշատակարանը:

«Յառաջ քան զութռւտասն ամի թարգմանելոյ Փիլովնի զգիրսդ զայդ Սո(ս)կրատայ զեկեղեցական պատմութիւն թարգմանեալ էր Սրասուն Գրիգորի Ջորափորեցւոյ թարգմանի ընդ փառաւորս յիշելոյ Ներսեհ իշխանին փեսային Կամսարականաց զգիրս պատմութեան վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսի Հռովմայ և կայր ի քարտիսի: Այժմ պատշաճ համարեցաք առ զմին գրոց գրել ճեռամբ Թովմա դպրի պատրաստ լինելով մագաղաթին»:

Սոկրատի հրատարակիչ կարծում է, որ երկու հիշատակարաններն էլ պատկանում են Փիլոնի գրչին: Մենք համամիտ չենք: Փիլոնի հարազատ գրությունները չեն, այլ նրանց բովանդակությունը ամփոփած մի ուրիշ և հետին գրչով: Նշանները ակներև են:

Նախ խմբագրված են երրորդ դեմքով, որ հատուկ չէ բուն հեղինակներին:

Հետո՝ «առաջին ճեռնարկությունը» մատնում է անծանոթ գրչի ծանոթությունը երկրորդ ճեռնարկության կամ Հակոբի համառոտ խմբագրության: Եվ վերջապես Քրիստոսի գալստյան թվականը գործածական չէր ոչ միայն Փիլոնի ժամանակ, այլ և հետագա դարերում:

Երկրորդ հիշատակարանը ևս երրորդ դեմքով է խոսում: Միայն վերջին նախադասությունը թերևս մոռացմամբ պահել է առաջին դեմքը՝ «այժմ պատեհ համարեցաք»:

Այս նկատողությունները տանում են այն եզրակացության, որ Փիլոնի բուն հիշատակարանները չեն պահված, այլ հետին գրիչներից մեկը ամփոփել է նրանց բովանդակությունը, և իր կողմեն ավելացրել է Քրիստոսի գալստյան թվականը Ալեքսանդրյան տոմարով, հակառակ Փիլոնի գործ ածած Կոստանդնուպոլսի տոմարի: Արդարև ըստ վերջնիս աշխարհի սկզբից մինչև 696 թվականը համարվում է 6204 տարի, որ միանգամայն ստույգ է, 6204-5508 = 696: Ալեքսանդրյան տոմարը հաշվում է 5500 տարի և ո՛չ 5508, ուստի անծանոթ գրիչը Քրիստոսի գալստյան թվականը դրել է 704, որ է 6204 - 5000 = 704, առանց նկատելու, որ սա չի համաձայնում մյուս թվերին՝ իններորդ ինդիկտիոնին = 696 և Լեոնտիոս կայսրի առաջին տարվան = 696. նույն անծանոթ գրչին են պատկանում և *ընտիքտիոն* (փոխառնակ ինդիկտիոն-ի և *զուրուտասն* (փոխ զուր և տասն) ուղղագրությունը: *Քարտ* և *քարտեզ* կրկնակի ձևերը ևս չեն կարող միևնույն գրչեն ելած լինել: Պետք է խոստովանիլ, որ քարտի և մագաղաթի նվազության պատճառով Սոկրատի Պատմության հին հին մասերը չքարգմանելը այնքան պարզ չէ, որովհետև նախ՝ մագաղաթ գտնելուն պես, փոխառնակ պակասը լրացնելու, Յորափորեցու քարգմանություններ է արտագրում, և երկրորդ՝ դժվար էր նախորոշել, թե արդյոք տրամադրելի քարտը պիտի բավեր: Հակառակ դեպքում սպասելի էր գործը վերջեն կիսատ մնար և ոչ թե զանազան հատվածները զեղչելով: Մեզ թվում է Փիլոնը կատարել է իր քարգմանությունը Կոստանդնուպոլսում: Ասողիկից գիտենք, որ Հուստինիանոս [II] կայսրը իր գահակալության չորրորդ տարին Հայաստան արշավեց, շատ իշխաններ իր հետը տարավ որպես պատանդ և նրանց թվում «զկաթողիկոսն Հայոց զՍահակ հանդերձ ե եպիսկոպոսօք արգելեալ առ ինքն»[1], այսինքն՝ տարավ մայրաքաղաք: «De Rebus Armeniis» գրությունը հաստատում է, որ կայսրը կանչեց Սահակ կաթողիկոսին եպիսկոպոսների հետ

[1] Ասողիկ, էջ 101:

միասին մայրաքաղաք, ուր որ կաթողիկոսը ստորագրեց դավանաբանական միության գիրը, բայց մերժեց գիրը Հայաստան վերադառնալուց հետո: Հուստինիանոս գահ բարձրացավ 685 թ. սեպտեմբեր ամսին. չորրորդ տարին կհամապատասխանե 689 թ.: Հիշյալ հույն աղբյուրի համաձայն կայսրը կանչեց կաթողիկոսին իր թագավորության հինգերորդ տարին, ուրեմն 690 թվին: Հավանաբար կաթողիկոսը և հինգ եպիսկոպոսները հրավիրած են եղել մասնակցել Տրուլլի ժողովին 692 թվին: Ժողովի արձանագրությունից երևում է, որ Կարինի և Կեճառիճի եպիսկոպոսները ստորագրել են ժողովի որոշումները: Բայց կաթողիկոսի և այլ հայ եպիսկոպոսների ստորագրություն չկա: Թերևս «De Rebus Armeniis» չափազանցնում է նրանց թեքումը դեպի միաբանությունը: Ժողովի մի քանի որոշումները հայ սովորությանց դեմ, թերևս, բացատրելու է հայ եկեղեցականների ներկայությամբ:

Հավանական ենք համարում, որ Փիլոն Տիրակացին կաթողիկոսի ուղեկիցներեն մին լինի, որ մնացել է Կ. Պոլսում, հունարեն սովորել և թարգմանել Սոկրատը *«աւետարութեան»*: Այս դեպքում հասկանալի կդառնա ոչ միայն *«աւետարութեան»*-ը, այլ Պոլսական տոմարի և ինդիկտիոնի կիրարկությունը առաջին անգամ հայ մատենագրության մեջ:

Քարտի նվազությունը, եթե լոկ պատրվակ չէ, պետք է բացատրել նրանով, որ կաթողիկոսի վերադարձից հետո Փիլոն հնարավորություն չի ունեցել քարտ կամ մագաղաթ հայթայթել: Դպիր Թովմայի պատրաստած մագաղաթը Փիլոնի ձեռքն է հասել իր Հայաստան վերադառնալուց հետո, ուր և ընդօրինակել է Սեղբեստրոսի վարքը և կցել Սոկրատի Պատմության:

Սոկրատի հրատարակիչը մի անհասկանալի սխալ է գործել, Գրիգոր Ձորափորեցու հիշատակարանի «թարգմանի» բառը փոխարինելով «հրամանավ»-ի[1]: Սխալվել է նաև կարծելով, որ Ձորափորեցին թարգմանել է Սեղբեստրոսի վարքը Ներսեհ Կամսարականի հրամանով: Հիշատակարանի Ներսեհը Կամսարական չէ, այլ լոկ «փեսայ Կամսարականաց» և իշխան վրաց. և Գրիգոր Ձորափորեցին նորա թարգմանն է: Այս Ներսեհը ծանոթ է այլուստ: Հովհաննես Կաթողիկոսը նրան հիշում է մուսուլման զորավար Բասարայի հետ ունեցած ընդհարումի առթիվ[2]: Իսրայել [Ա] կաթողիկոսի օրով (668-678): Ներսեհը բուն Վրաստանի իշխան չէր, այլ այն մասի որ վրացիք Սոմխեթի = Հայաստան են անվանում, իսկ հայերը՝ վրաց աշխարհ, այսինքն՝ Գուգարքն, որի մեջ մտնում էր և Ձորափորը, Գրիգոր Թարգմանի ծննդավայրը: Ասել է թե Գրիգորը աշխատել է իր իշխանի համար թարգմանելով Սեղբեստրոսի վարքը, 678 թվին: Ասողիկ չփոթել է,

1 «Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն...», էջ ժէ:

2 **Հովհաննես Կաթողիկոս**, հրատ. Մ. Էմինի, էջ 53:

ուշադրության վրիպումով, Չորափորեցու թարգմանության ժամանակը Փիլոնի հետ. որովհետև վերջնիս թարգմանությունը համարում է կատարված Աճաստաս կաթողիկոսի օրով և սրա վեցամյա գահակալությունը դնում է (Հ. 120 թ. =) 671, մինչև 677, այն ինչ Աճաստաս աթոռի վերա էր 662-668 թվին[1]. և Փիլոն թարգմանել է Սոկրատ 678 թվին, ուրեմն Իսրայելի ժամանակ: Փոքր Սոկրատի հիշատակարանը պարունակում է մի խոշոր թյուրիմացություն, որ պետք ունի մեկնության: Հրատարակիչը փակագծի մեջ է առել հիշատակարանի մեծագույն մասը, ինչպես և վերջընթեր գլուխը՝ ճի: Նա չէ նկատել, որ վերջընթեր գլուխն առնված է ամբողջապես «**Գիրք Կայսերաց**» գործից (էջ 60): Այնտեղից է ծագում նաև **Սոկրատ**, էջ 687, ծանոթության մեջ բերած հատվածը, որ գտնվում է Փոքր Սոկրատի օրինակներից մեկում:

Ինչ վերաբերում է հիշատակարանին, փակագծի մեջ նշանակված մեծ հատվածը ոչ այլ ինչ է եթե ոչ մի ամփոփում Մեծ Սոկրատի Զ գրքի Առաջաբանի (էջ 486-487): Ավելորդ ենք համարում դեմ առ դեմ դնել Մեծ Սոկրատի բնագիրը և Փոքրի նույն բնագրի ամփոփումը: Բավական է միայն հիշել սկզբի ու վերջի նախադասությունը:

Մեծ Սոկրատի Առաջաբան, Գիրք Զ, էջ 486.

«Բայց եղիցի մեզ մի փութալ առ պատմութիւնն, զմտաւ ածեալք որպէս զի քէ փութասցուք ***զեղեցկարանութեան հպել, բերեալ և ի բաց անկանիցիմք ի դիտմանն***»...

Առաջաբանի վերջը, Գիրք Զ, էջ 487.

---

[1] Այս շրջանի կաթողիկոսների ժամանակն որոշելու համար, հավաստի կռված է Գրիգոր Մամիկոնյանի մահվան տարին: Ըստ «**Կայսերաց գրքի**» Գրիգոր ընկավ Խազարաց արշավանքում Հայոց ՃԼԹ թվին, սահմի 10, այսինքն՝ 685 թ. հուլիսի 5-ին: Ասողիկը ասելիս է ՃԼ որ գրչական սխալ է և հրատարակիչը կարող էր ուղղել, քանի որ նույն պատմագիրը Գրիգորի հաջորդի՝ Աշոտ պատրիկի իշխանությունը դնում է ճլե թվին: Գրիգորի մահը տեղի ունեցավ, ըստ Հովհաննես Կաթողիկոսի, Սահակ Չորափորեցու 7-րդ տարին (և ոչ 5-րդ, ինչպես Ասողիկի մոտ է), ուրեմն Սահակ գահակալել է 678 թվին: Իր նախորդն էր Իսրայել (ըստ ոմանց Եղիա, սխալ ընթերցման հետևանքով), որ իշխեց 10 տարի, ուրեմն 668-678: Իսկ սրանից առաջ Աճաստասն էր, որի վեցամյա իշխանությունը ընկնում է 662-668: Սեբեոս իր Պատմությունը հասցրել է մինչև Մուավիայի հաղթանակը, 661 թվին, և չէ հիշում Ներսես կաթողիկոսի մահը: Հավանական է, որ մեռած լինի 662 թվի սկզբում, բաղնելով աթոռը Աճաստասին: Մյուս կողմից Սահակ Չորափորեցին իշխել է 25 տարի կամ 26, ինչպես հաշվում է քանիցս հիշած հույն աղբյուրը, հետևապես մինչև 703 կամ 704 թիվը:Վերջինս ավելի հավանական է և համաձայն է Ղևոնդի տեղեկությանց:

«Զոր եսմ տեսա(՛) շարագրելով, զոր ի տեսողացն կարացի ուսանել ընտրելով զճշմարիտն, յորմէ ոչ փոխելն (զճշմարիտն յորմէ ոչ փոխելն) ըստ պատմութեանցն զպատմողսն զայսոսիկ: Խորհրդարար ինչ ճշմարիտն ծանուցեալ լիներ բազմաց եւ յոլովից պատմելոց եւ որոց առընթերն գոլով ասելոց գործովք, իսկ ոմանց յամենայնէ առաւել արժանաւորելոց գիտել:»

Համեմատեցեք Փոքր Սոկրատ, էջ 688.

«Քայց *մի ոք մեզ մեղադիր լիցի* (հմմտ. Մեծ Սոկրատ Առաջաբան, գլ. Ե, էջ 399, *մի՛ մեղադրել մեզ եթէ*), եւ աղարտեցէ թէ զպատմութիւնս սրբոց հարևանցի պատմեցի և ո՛չ գեղեցկարանութեամբ հպեալ ի գովութիւնս... *թերեւս ի բաց անկանիցիմք ի գիտմանէն*»:

Հատվածի վերջը.

«Զոր ես տեսի և զոր ի տեսողացն կարացի տեսանել. ընտրելով զճշմարիտն շարագրեցի, զոր ոչ փոխեալ ըստ պատմութեանցն զպատմողսն զայսոսիկ խորհրդարար ինձ եւ ճշմարիտ ծանուցեալ լինի բազմաց եւ յոլովից պատմելոց եւ յորոց առընթեր գոլով ասելոյ գործովք, իսկ ոմանց յամենայնէ առաւել արժանաւորելոցն գիտել»[1]:

Փոքր Սոկրատի հիշատակարանից այս փոխառությունները հանելուց հետո կմնա իրեն սեպհական միայն վերջին մասը, ուր խոսքը ուղղում է Ներսեհ Կամսարականին, անվանելով նորան ապիհյուպատ պատրիկ, գովաբանում է և բարեմաղթում «զի և խաղաղութիւն Քրիստոսի բնակեսցի ի

---

[1] Փիլոնի թարգմանությունը անհասկանալի է: Երևում է, որ հույն բնագիրը լավ չէ հասկացել և ստիպված է եղել տալ նյութական թարգմանություն: Առաջին բառը՝ **եղիցի** սխալ է հասկացված. հունարեն բառը նշանակում է՝ **գիացի՛ր**: Իմաստն է.

«Գիտցիր որ մենք փույթ չունենցանք գեղեցկարանության (և ո՛չ թե պատմության), մտածելով որ եթե ուշ դարձնեինք գեղեցկարանության (կամ պերճախոսության) թերևս չեղվեինք մեր դիտավորութենեն»:

«Գրեցի ինչ որ տեսի (տեսա՛, գրչի սխալ չէ, ինչպես կարելի էր կարծել, այդպես էր թարգմանել հեղինակը հունարեն բառը, որ ճևով կրավորական է, բայց իմաստով ներգործական). և ինչ որ կարողացա իմանալ ականատեսներից, ընտրելով ճշմարիտն փոխանակ հետևելու միևնույն բանը զանազանակերպ ավանդողների պատմությանց: Հոգածությամբ (և ո՛չ խորհրդարար) վեր հանեցի ճշմարտությունը, որովհետև բազումք էին որ պատմում էին այլևայլ ճևով, որոնցից ոմանք ասում են, որ ականատես են եղել իրողությանց, իսկ ուրիշները՝ ամենեն արժանահավատ են»:

Ներելի է որ Հակոբ Ուռհայեցին չի կարողացել հաղթահարել թարգմանության դժվարությունը և ըմբռնել իմաստը:

քեզ առատապէս և *յեկեղեցիս քո* և *յաշխարհի.* զի որոց *ցանկացար պատմութեանս թարգմանել*, ընդ նոյն ճանապարհ թագաւորաց գնասցես» (էջ 689-690):

Փոքր Սոկրատի խմբագիրը նույն սխալն է գործել ինչ որ իր նոր հրատարակիչը՝ Մեսրոպ վարդապետը, և հավանորեն խմբագիրն է, որ մոլորեցրել է հրատարակչին: Սակայն անտարակույս է, որ խմբագիրը անուշադիր է եղել և Կամսարականների փեսային ընդունել է որպես Կամսարական, իրենից ավելցրել ապիհյուպատ պատրիկ տիտղոսը: Թյուրիմացությունը բացատրելու է դրանով, որ Ներսեհը, հայ թարգմանի միջոցով հայ թարգմանություններ պատվիրելուն համար, կարծվել է, որ Ներսեհը Կամսարական տոհմից է: Գուգարքի իշխանը հայտնի չէ, թե ի՞նչ ծագում ունե: Եթե վրացի էր արյունով, թերևս հայերեն ևս գիտեր, ուշադրության արժանի է նաև հիշատակարանի խոսքերը՝ «յեկեղեցիս քո եւ յաշխարհի», որից հետևում է, որ հեղինակը հեռու էր ապրում Ներսեհի իշխանության սահմաններից: Այս պատշաճում է միանգամայն Հակոբ Ուռհայեցուն:

Ներսեհը ներկայանում է որպես «ցանկացող պատմութեանս», որով հասկացվում է ոչ միայն Սեղբեստրոսի վարքը, այլ և Սոկրատի Պատմությունը: Հիշատակարանի հեղինակը, Հակոբ Ուռհայեցին, չի հիշում ո՛չ Գրիգոր Չորափորեցու և ո՛չ Փիլոնի անունները, և կարծում է, որ երկուսն էլ կատարել են իրենց աշխատանքը միևնույն անձի՝ Ներսեհ Կամսարականի պատվերով: Նա գիտեր Ասողիկից, որ Գրիգոր Արշարունյաց եպիսկոպոսը գրել է «Ընթերցվածոց մեկնությունը» Ներսեհ Կամսարականի հրամանով: Երևում է, որ Գրիգոր Արշարունյաց եպիսկոպոսին և Գրիգոր Չորափորեցուն նույն անձն է համարել, ուստի և նույնացրել է նմանապես նրանց տերերին՝ Ներսեհ վրաց իշխանին և Ներսեհ Կամսարականին: Ամեն պարագայում Ներսեհ Կամսարականը չէր կարող պատվիրել Փիլոնի գործը, քանի որ 696 թվին նա արդեն մեռած էր և երկրի պետը Սմբատ Բագրատունին էր: Մեսրոպ վարդապետի կարծիքով ևս երկու Գրիգորները նույն անձն են:

Այսպիսով Մեծ և Փոքր Սոկրատների փոխադարձ հարաբերությունները պարզված կարելի է համարել:

Մեծը թարգմանված է Կ. Պոլսում 696 թվին Փիլոնի ձեռքով, Փոքրը խմբագրված է Մեծից Հակոբ Ուռհայեցու աշխատությամբ XII դարում (3):

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱԾՈՒ

[«ԱՂՈՒԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ]

Ա

Վենետիկի [մխիթարյան] բանասեր հայր Վ. Հացունի «Քազմավեպ»*-ի վերջին թվի մեջ հայտարարեց աշխարհին հավակնոտ հոդվածով, որ* **«Կաղանկատվացին կապրեր է դարուն»**[1]*: Հոդվածն ու հայտարարությունն ուղղված է մեր նամակի դեմ, որ գրած էինք պ. Ա. Չոպանյանի խնդրով «Անահիտ»-ի մեջ և ուր ամփոփել էինք քանի մը էջի մեջ մեր կարծիքը Կաղանկատվացու գործի մասին*[2]*:*

Հայր Վ. Հացունի դառնացած է, որ համամիտ չենք իրեն և բարեկամի վայել ազատությամբ հեգնում է և՛ մեր տեսակետը և՛ մեր տկար գիտությունը: Հեգնում է նաև, որ քննադատել ենք իրեն առանց ծանոթ լինելու իր հայացքին, առանց կարդալու իր հոդվածը: Սակայն պատվական հայրը, երևում է մոռացել էր, որ ինքն էր ղրկել անցյալ տարի իր գրքույկը՝ «Մովսես Խորենացին կը դառնա ի հինգերորդ դար»[3] *և խնդրել էր հայտնել կարծիքս այս աշխատության մասին: Դժբախտաբար, ուշադրության արժանի բան չգտանք, տեսանք միայն քեթև վերաբերում Խորենացու հարցին և անկատար ծանոթություն Կաղանկատվացու գործին: Լրջությունից զուրկ գտանք այն կարծիքը, թե Կաղանկատվացին գրել է իր գործը Ջևանշեր իշխանի հրամանով 668 թվականին: Կաղանկատվացու առաջին հրատարակիչը՝ Կ. վարդապետ Շահնազարյանց կարծում է, որ Ղևոնից պատմիչը ապրում էր Վիրո կաթողիկոսի և Ջևանշեր իշխանի ժամանակ*[4]*: Հայր Գ. Զարպհանալյան ընդունել է այս կարծիքը և Կաղանկատվացու գործ համարել միմիայն առաջին և երկրորդ գրքերը, թողնելով Անանուն կամ համանուն շարունակողին երրորդ գիրքը*[5]*:*

---

[1] Տե՛ս «Քազմավեպ», 1938, էջ 268-277:

[2] **Ն. Ադոնց**, Խորենացիական հարցն ու հայր Վ. Հացունի, տե՛ս «Անահիտ», ամսագիր, Փարիզ, 1938, № 1-3, էջ 85-87 (1):

[3] **Հայր Վ. Հացունի**, Մովսես Խորենացին կը դառնա ի հինգերորդ դար, Վենետիկ, 1935:

[4] «Պատմութիւն Աղվանից, արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ», ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կ. Վ. Շահնազարենց, հատ. Ա, Փարիզ, 1860, էջ 83:

[5] **Գ. Զարպհանալյան**, Պատմություն հայ հին դպրության (Դ-ԺԳ դար), Վենետիկ, 1932, էջ 443:

Հայր Վ. Հացունի կուզե սրբագրել վերջին կարծիքը և Կաղանկատվացուն վերագրել ո՛չ թե առաջին երկու գրքերը, այլ միմիայն առաջին գիրքը և երկրորդի մի մասը, մինչև ԻԸ գլուխը: Կ. *վարդապետ Շահնազարյանց Կաղանկատվացու գործ էր համարում գեթ մինչև ԼԲ գլուխը, առանց որոշելու, թե հաջորդ գլուխները ո՞ւմ են պատկանում, Կաղանկատվացուն, թե շարունակողին: Հայր Գ. Զարպհանալյան ավելի հիմ ունի գոնե ճևականորեն Կաղանկատվացուն տալու երկրորդ գիրքն ամբողջովին, իսկ շարունակողին՝ երրորդը:*

Հայր Վ. Հացունու կարծիքը ոչ միայն ընդունության թարմության չունի, այլև զուրկ է իր նախորդների խոհեմությունից և, տարբական սրբագրությունից հետո, կհանգե Գ. Զարպհանալյանի տեսության: Այս իմաստով էլ, առանց մանրամասնության մեջ մտնելու, մեր հիշյալ նամակի մեջ կրկնել էինք, որ հայր Վ. *Հացունի կրկնում է Գ. Զարպհանալյանի կարծիքը:*

Մեր նամակից Վենետիկի բանասերը, թերևս զգացել է, որ ոչ թե անծանոթ ենք իր տեսակետին, այլ հայտնապես արժեք չենք տված: Ուստի պետք է տեսել ընդեն «մխրճվելու» Կաղանկատվացու Պատմության մեջ և այս անգամ մի ուրիշ և ավելի զարմանալի գյուտ արել, որպես թե մեր պատմագիրը, որ հորինած պիտի լիներ իր աշխատությունը Ջևանշերի հրամանով, սկսել է գրել տակավին 628 թվին, երբ Ջևանշեր, նկատենք անցողակի, դեռ հրապարակի վրա չէր, և վերջացրել 668 թվին: Այս մեր հասկացողությունից դուրս է և տողերիս նպատակն է ցրել այս մոլորությունը, ներկայացնելով Աղվանից հեղինակին պատմական և գրական լույսի մեջ:

Նախքան այս, քանի մի խոսք Խորենացու հարցի մասին: Հայր Վ. Հացունու հետաքրքրության բուն նյութը Կաղանկատվացին չէ իսկապես, այլ Խորենացին: Նա կարծում է, որ Կաղանկատվացու մոտ մի զենք է գտել ի նպաստ Խորենացու հնության և այդ զենքն արժեցնելու համար ուխտել է վարկաբեկել այն փաստերը, որ դիզված են Խորենացու դեմ: Ծանր հանճառություն է: Խորենացու քննադատությունը, մեր կարծիքով, հայագիտության փայլուն հաղթանակներից մեկն է և պատիվ է բերում հայ բանասիրական քնին մտքին: Այս իսկ պատճառով թերահավատ ենք այնպիսի հավակնոտ գրություններին, որպեսին է «Մովսես Խորենացին կը դառնա ի հինգերորդ դար»: Իսկ կարդալուց հետո, խոստովանենք, չեն կարող թաքցնել այն ճնշող տպավորությունը, որ թողնում են վայրիվերո դատողությունները: Ահա քանի մի օրինակ:

Հայտնի է, որ մեր Պատմահայրը Արամի գործն է համարում Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերի բաժանումը: Մինչդեռ գիտենք, որ Երրորդ և Չորրորդ Հայք ստեղծված են Հուստինիանոս [I-ի] օրով՝ 536 թվին: Հետևապես Պատմահայրը ուշ է, քան 536 թիվը, և բավականին ուշ, որովհետև

միայն 536 թվից շատ հեռու կանգնած գրողը կարող էր այդպիսի շփոթ հասկացողություն ունենալ 536 թվին պատահած իրողության մասին:

Իսկ հայր Վ. Հացունին ահա ինչպես է դատում. «Առաջին, Երկրորդ, Երրորդ Հայք Հուստինիանոսն չհնարվեցան, ինչպես կսե ի. Ակինյան Ա. Գուտշմիդի հետ, այլ կանխավ այլ կային. և անոնց հետևողությամբ էր, որ կայսրը Ծոփաց նահանգն ևս Չորրորդ Հայք անվանեց: Սակայն իր հրովարտակեն չի հասկացվիր՝ թե այդ կոչումն անծանոթ էր բոլորովին, երբ ինք 536 թվին պաշտոնական ըրավ: Հակառակ պարագային կրնա և հետամուտ լինել Չորրորդը Խորենացվույն մեջ»[1]:

Այստեղ ամեն ինչ շփոթ է և սխալ: Հայր Վ. Հացունին պարզապես հարցին տեղյակ չէ: Ա. Գուդշմիդ և ոչ Ն. Ակինյան չէին կարող ասել, թե Ա և Բ Հայք հնարվեցան Հուստինիանոսն: Խոսքը Ա և Բ Հայքի մասին չէ, այլ Գ և Դ Հայքի, և սրանք են, որ հնարվեցան Հուստինիանոսն: Կայսրի «հրովարտակեն» շատ լավ կհասկացվի, որ Գ և Դ Հայք կոչումն անծանոթ էր բոլորովին մինչև 536 թ.: Ոչ մի հիմք չկա ճեռագրական՝ հետամուտ համարելու ո՛չ Գ և ո՛չ Դ Հայքը:

Կարիք չկա խճողելու ինչ որ լույսի պես հստակ է: Փոքր Հայք բաժանվեց Առաջին (Սեբաստիո շրջան) և Երկրորդ Հայքի (Մալաքիո շրջան) Վաղես կայսեր օրով († 378), ինչպես և հարևան Կապադովկիան: Բասրսեղ Կեսարացին († 379) բողոքեց այդ բաժանման դեմ, նմանեցնելով հեգնորեն բաժանողին այն մարդուն, որ կիսում է իր ձին կամ եզը, կարծելով, որ երկու ձի և երկու եզ կունենա, մինչդեռ զրկվում է և մեկից[2]: *Իսկ Երրորդ և Չորրորդ Հայք գոյություն ունին միմիայն 536 թվից: Մեծ Հայքի բյուզանդական բաժինը բաղկացած էր մինչև Հուստինիանոս երկու մասից. հինգ անկախ սատրապություններ (նախարարություններ)՝ Ծոփք (Շահունյաց), Բալահովիտ, Հաշտյանք, Անձիք և Մեծ Ծոփք, ուր մտնում էր և Անգեղտուն: Մյուս մասը ընդգրկում էր Կարինի և Երզնկայի շրջանները, մեր Քարձր Հայք, որ բյուզանդացիք կոչում էին Ներքին Հայք:*

Արդ, Հուստինիանոս կայսր 536 թվի հրամանագրի մեջ հայտարարում է, որ բոլոր հայ[կական] հողերը՝ Ա և Բ Հայքը, այլև Ներքին Հայք և հինգ անկախ իշխանությունները պետք է նոր բաժանման վերածել: Առաջին Հայք պիտի կոչվի այսուհետև նախկին Ներքին Հայքը՝ ունենալով իր մեջ նոր հողամասերը մինչև Տրապիզոն: Երկրորդ Հայք կկոչվի նախկին Ա Հայքը, այսինքն՝ Սեբաստիո շրջանը: Իսկ նախկին երկրորդ Հայքը, Մալաքիո շրջանը, կկոչվի Գ Հայք: Եվ վերջապես հինգ իշխանությունները կկազմեն

---

[1] **Հայր Վ. Հացունի,** Մովսես Խորենացին կը դառնա ի հինգերորդ դար, էջ 29:

[2] Տե՛ս մեր ռուսերեն գործը՝ «Армения в эпоху Юстиниана», СПб., 1908, стр. 89.

Դ Հայք: Ակներև է, որ 536 թվից առաջ չկար ոչ միայն Դ Հայք, այլև Գ Հայք: Առաջին անգամ Հուստինիանոսն է կնքում այդ անուններով այն հողերը, որ առաջ կոչվում էին Բ Հայք և անկախ սատրապություններ[1]:

Անհերքելի փաստ է, որ Պատմահայրը ուշ է, քան 536 թիվը և հայր Հացունու ճիգերը թերի և թյուր հասկացողության արդյունք [են]:

Ուրիշ օրինակ: Սեղբեստրոսի վարքը թարգմանված է հայերեն 678 թվին: Խորենացին քաղել է այնտեղից ընդարձակ հատված: Սրանից հետևում է, որ Պատմահայրը ուշ է նաև, քան 678 թիվը: Հայր Վ. Հացունին ասելիք չունի այս մասին, բայց համառորեն փորձում է արտասանել քանի մի կցկտուր խոսքեր: Հարկ ենք համարում բերել այստեղ փոխառված հատվածը, որպեսզի ընթերցողի համար պարզ լինին բանաքաղության փաստը և հայր Հացունու դատելու և տրամաբանելու ձևերը:

ՍԵՂԲԵՍՏՐՈՍԻ ՎԱՐՔ, էջ 699	ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Գ, գլ. ԿԷ
Սեղբեստրոս **բարէվայելչացեալ** *քան զբոլոր վիճակաւորսն: Վասն զի ամբարտաւանութիւն և մարդահաճոյութիւն առ ի նորա վարս տեղի գտանել ոչ ուրեք կարացին. այլ հեզ և* **բարի**ական *և բարեխորհուրդ գոլով, և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր. վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, բանիւ* **տրամապայծառացեալ**, *գործով* **սուրբ**, *մարմնով արտափայլեալ, սարսիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր: Այլ վասն զի զբոլորսն նորա զուղղութիւնըս ոչ եմ բաւական ասել,* **առ ի մասնատրակացնն նորա գործեցեալս** *դարձուցից զբանս (2):...*	*Մեսրոպ...* **գերազանցեալ** *քան զամենայն որք զայնու ժամանակաւ էին առաքինիք: Քանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն առ ի նորա վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին, այլ հեզ և* **լուսական** *և բարեխորհուրդ գոլով և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր: Վասն զի գոյ տեսլեամբ հրեշտակական, մտօք ծնընդական, բանիւ* **պայծառ**, *գործովք* **ծուծկուղ**, *մարմնով արտափայլեալ, սարսիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր,* **ուսուցանելով անճառիցդ**: *Այլ վասնզի զբոլոր նորա ուղղութիւնս ոչ եմ բաւական ասել, ի* **հանգիստ նորա ճշխարացն** *դարձուցից զբանս:*

[1] Տե՛ս մեր հիշած գործը, էջ 165, ուր մանրակրկիտ քննության է առնված 536 թվի կարգադրությունը:

Խորենացին բառացի ընդօրինակել է Սեղբեստրոսի վարքից: Կասկածից դուրս է: Սակայն հայր Հացունի նկատել է միայն մի քանի բառերի տարբերությունը. «Սեղբեստրոսի վարուց կտորին մեջ Մովսես կգրե **գերազանցեալ**, *և թարգմանիչը՝ բարեվայելչացեալ. լատինական՝ ու* **բարիաւկամ, պայծառ**՝ *ու* **պատմապայծառացեալ** *և այլն*[1], *ուր ակներև է, թե երկուքեն ոչ մին հետևող է մյուսին. իսկ ավելի հասարակ և ամենուն ծանոթ բառերու մեջ իրարու վրա ազդեցություն փնտռել անտեղի է»*[2]*:*

Հայր Վ. Հացունի անարդար է. անտեղին իր դատողությունն է: Բանաքաղությունը փաստ է և ուրանալ փաստը նշանակում է կուրանալ և կուրությամբ չէ, որ պիտի լուծվին բանասիրական կնճիռներ:

Ուրիշ փոխառություններ ևս ունի Խորենացին նույն Սեղբեստրոսի վարքից: Կոստանդիանոս [Մեծի] վերաբերյալ առասպելական տեղեկությունները այստեղից են քաղված:

Խորենացին օգտվել է նաև Սոկրատի «Եկեղեցական պատմության» հայերեն թարգմանությունից, որ կատարված է 696 թվին: Վրաց առաքելուհու Նունեի պատմությունն այնտեղից է առել մեր Պատմահայրը և ինքն է մոռացությունից հանել հին ավանդությունը և պատվաստել հայ գրականության, որտեղից անցել է և վրաց: Մինչև Խորենացին, հայ և վրացի մատենագրությանը անծանոթ էր Նունեի առաքելությունը: Հետևությունը պարզ է. Խորենացին հետ է, քան ոչ միայն 678, այլև 696 թիվը:

Մի ուրիշ պարագա: Խորենացու մեջ աչքի է զարկում նրա թշնամական դիրքը Մամիկոնյանների հանդեպ և ընդհակառակը՝ արտակարգորեն բարյացակամ է Բագրատունիներին: Հայր Վ. Հացունի *խոժոռում է նաև այս դիտողության դեմ, պնդելով, որ Խորենացու մոտ «կան Մամիկոնյանց երկու խումբ. մին՝ սևերու, ինչպես Գնելա դավաճան Վարդանն և ուրացող հայրենադավ Վահանը, զորս Փավստոսեն առավ նույն գույնով և մյուսը՝ լավերու, որոց պատշաճ բաժինը տված է, փայլուն ծագում և մեծ դեր մը անոնց Մամգոն նախահոր, քաջություններ Մուշեղա և Սամուելի, Ս. Սահակա խնդրանոք սպարապետության պատիվն Համազասպա, և տարատելատության՝ անոր որդվոյն Վարդանա, և բարեգութ պաշտոն մը վերջնոյս կնոջ Դստրկան Ս. Սահակա հուղարկման մեջ: Ավելի փարումն առ Բագրատու-*

---

[1] Չորրորդ օրինակը՝ համբերող և համբերողական՝ գեղջելու է, որովհետև Խորենացու քրննական հրատարակության մեջ՝ համբերողական է: Իսկ «և այլն» միանգամայն անտեղի է գնք հատվածին նկատմամբ, ուրիշ տարբերություն չլինելու պատճառավ:

[2] **Հայր Վ. Հացունի**, էջ 30:

Ցիս՝ յուր մեկենաս Սահակա ընտանյաց՝ այո՛, բայց ո՞ւր է հող թշնամությունը Մամիկոնյանց դեմ»[1]:

Կարծում ենք, որ թշնամություն կա և կա այնտեղ ուր պատվական հայրը չի տեսել, և չի՛ տեսել, որովհետև հարցը մոտեն չէ սերտած:

Մամիկոնյան տոհմը կոչվում է Փավստոսի մոտ «Տուն սպարապետութեան»: Ժառանգաբար սպարապետներ են՝ Արտավան և Արտավազդ (Ագաթանգեղոսի մոտ), Վաչե, Արտավազդ, Վասակ, Մուշեղ, Մանուել (Փավստոսի մոտ): Խորենացին զլացել է խոստովանել նրանց այդ մեծ պատիվը: Ավելին կա. հանել է նրանց իրենց բարձր աթոռներից և փոխարեն ընտեցրել Բագրատունիներին: Փավստոսի փայլուն աստղերը՝ Վասակ և Մուշեղ, բոլորովին զրկվել են իրենց լույսից. Վասակ սպարապետ չէ, և ոչ Մուշեղ: Վասակ հասարակ «զինակիր» Արշակ թագավորի (Գ, գլ. ԻԵ). «զինակիր» է նաև նրա ավագ եղբայրը՝ Վարդան (Գ, գլ. ԻՔ). իսկ Մուշեղ այդ էլ չէ, այլ հիշվում է որպես «որդի Վասակայ Մամիկոնենի» (Գ, գլ. ԼԷ):

Շատ Մամիկոնյաններ, և ոչ հասարակ, մնացել են անհիշատակ, ինչպես Արտավան, Արտավազդ և Վաչե սպարապետներ Տրդատի ժամանակ: Արտավանի տեղ երևան է գալիս Արտավազդ Մանդակունի, Վաչեի տեղ՝ Բագարատ Բագրատունի: Տրդատի մահից հետո, որպես թե նրա որդին և հաջորդը Խոսրով նշանակել է մեկի փոխարեն չորս սպարապետ և «առաջին՝ Բագարատ ասպետ»: Մինչդեռ Փավստոսից հայտնի է, որ Խոսրովի սպարապետն էր Վաչե Մամիկոնյան, նա՝ որ հետ մղեց մազքթաց Սանեսան թագավորի արշավանքը: Խորենացին ջնջել է Վաչեին և նրա դերը տվել է Բագարատին, որը, ըստ Փավստոսի, Վաչեի «զինակիցներից» մեկն էր միայն[2]:

Վասակ զիջել է իր տեղը երկու ուրիշ սպարապետների, Վահան Ամատունի և Վաղինակ Սյունի (Գ, գլ. ԾԸ): Մուշեղը չէ Պապ թագավորի սպարապետը, այլ Սմբատ Բագրատունին, որին և վիճակվում է Չիրավի կռվի հաղթության փառքը (Գ, գլ. ԼԷ): Փավստոսի վերջին հերոսը՝ Մանուել Մամիկոնյան անհետացած է և նրա տեղը գրավել է Սմբատ Բագրատունի: Դավաճան Մեհրուժանի խարանողը Մանուելն էր, բայց Խորենացին դեպքը տեղափոխել է Արշակի ժամանակ և վերագրել Սմբատ Բագրատունուն (Գ, գլ. ԼԷ): Փավստոսից գիտենք, որ Արշակ և Վաղարշակ թագավորները ամուսնացան, առաջինը առավ Մանուելի աղջիկը, իսկ Վաղարշակ՝ Բագրատունի ասպետի: Պատմահայրը զրկել է Մանուել Մամիկոնյանին և այս փոքրիկ պատվից և Արշակին կնության է տալիս Սյունյաց իշխան Բաբիկի դուստրը (Գ, գլ. ԽԱ):

---

[1] **Հայր Վ. Հացունի,** էջ 31:

[2] **«Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832,** էջ 17:

Մամիկոնյան հերոսների փավստոսյան հոյակապ պատկերները հյուծվել չքացել են Խորենացու գրչի տակ, թողնելով վտիտ, հազիվ նշմարելի ստվերներ: Ոչ մի ակնարկ Վասակ սպարապետի հաղթական զենքի մասին: Նա մի չնչին արարած է, որ գժտվեց իր եղբոր Վարդանի հետ «վասն աղջկան միոջ հարճի», «և ոչ հեղգացաւ» սպանել նրան «թէպէտ և եղբայր նորա էր» (Գ, գլ. ԻԵ):

Վարդան ևս մաքուր անձ չէ, Տիրիթի «սիրեցեալն» է, քանւ և ննջ, որ գրգռեց Արշակին ընդդեմ Գնելի և հրաման ստացավ սպանել նրան: Տիրիթի հետ Վարդան դավաճանեց Արշակին և փախավ Շապուհ պարսից արքայի մոտ: Արշակի հրամանով երկուսն էլ ընկան նույն Վասակի սրից (Գ, գլ. ԻԳ-ԻԵ):

Մուշեղ, Պապի հռչակավոր սպարապետը, ևս անտեսված է Պատմահոր կողմից ու մի անգամ միայն և այն էլ անցողակի, հիշվում է, որ «Ուռնայր Աղուանից արքայ, խոցոտեալ ի Մուշեղայ որդւոյ Վասակայ Մամիկոնենի» (Գ, գլ. ԼԷ): Դյուցազնի անթիվ քաջագործություններից, այնքան հաավոր և հաղթական կռիվներից միմիայն մի չնչին դեպք, մի ո՛չ մահացու հարված է հիշված: Իսկ ուրացող Վահան, որ արժանի էր մոռացության, Պատմահայրը, իհարկե, անհիշատակ չի թողել: Գեթ խնայեր նրա որդուն Սամուելին, որ հայրասպան լինելով մաքրեց Մամիկոնյան անունը դավաճանության արատից: Խորենացին հաստատ է իր հակամամիկոնյան տրամադրության մեջ և անշեղ: Սամուել ապիկար զորավար է. Արշակ թագավորի գանձերը գողացել էին մի քանի իշխաններ և փախչում էին Խոսրով թագավորի մոտ: Սամուել, Արշակի մտերիմ, հրաման ստացավ հետապնդել գողերին: Սամուել չհաջողեց: Նրա դեմ ելավ Սահակ Բագրատունի, Խոսրով թագավորի սպարապետը, և փրկեց փախստականներին, տանելով նրանց Խոսրովի մոտ (Գ, գլ. ԻԵ):

Պատմահոր բեղուն միտքը հերյուրել է այս միջադեպը Սամուելին վարկաբեկելու նպատակով: Սամուել վերջացնում է իր կյանքն անարգ մատնությամբ, և փախչում կայսեր մոտ (Գ, գլ. ԽԸ):

Մամիկոնյանների նախահոր Մամգոնի դեմքի վրա ևս նկատվում է Խորենացու անճնական կնիքը: Փավստոսի մոտ, Մամիկոնյանց «նախնիք լեալ էին թագաւորք աշխարհին Ճենաց», Խորենացին նրանց դարձնում է Ճենաց թագավորի «դայեկորդիք»: Մամգոն փախչում է իր «չարախօս» եղբոր Բդդոխի երեսից պարսից Շապուհի մոտ: Սա չի ուզում նրան պահել իր մոտ, այլ ուղարկում է Տրդատին: Մամգոն «յոչ կամաց եկեալ յաշխարհս մեր», ապրեց մի տարի «փոփոխելով տեղի ի տեղւոջէ զբովանդակ ամս»: Վերջը ննջգորեն սպանեց Սլկունյաց Սղուկ իշխանին և տիրացավ Տարոնին (Բ, գլ. ՃԱ և ՃԴ):

Առաջին անգամ Ս. Սահակի օրով է և նրա շնորհիվ, որ մի Մամիկոնյան արժանացավ սպարապետության կոչման, և այս անձը Համազասպն է,

Ս. Սահակի փեսան: Բագրատունի «քաջ սպարապետ» Սահակի մահից հետո Ս. Սահակ աղաչեց Խոսրովին, հետո Վռամշապուհին՝ նշանակել Սահակի տեղ Համազասպին: Խնդիրն հասավ մինչև պարսից դուռը և այդքան դժվարությամբ Համազասպ դարձավ սպարապետ, ուրեմն շնորհիվ Ս. Սահակի միջնորդության և ոչ իր անձնական արժանիքի (Գ, գլ. ԾԱ): Մեր Պատմահայրը շատ վերապահ է, անգամ Համազասպի որդի՝ Վարդանի նկատմամբ:

Կորյունի մոտ Վարդան ուսումնասեր է[1], *Խորենացին լուռ է այդ մասին: Վարդան ուղեկցեց Մեսրոպին կայսեր մայրաքաղաքը, ուր ստացավ ստրատելատի պատիվ, հետո ուղեկցեց Սմբատ ասպետին պարսից արքունիքը (Գ, գլ. ԾԷ-ԾԸ):*

Այսպիսով, Խորենացու աչքում Մամիկոնյան տոհմը նորեկ է, գոյություն ունի հազիվ Տրդատի օրերից, և մեծ տեղ չունի Հայոց պատմության մեջ: Բագրատունի տունը ևս եկվոր է, ճիշտ է, բայց շատ հնուց է, Հայկազանց շրջանից, և ծագում է ընտրյալ ազգից: Պատմահոր սիրելի է ուրանալ Մամիկոնյան վաստակները, քարշել վայր Մամիկոնյան կտրիճներին իրենց պատվավոր դիրքերից և բարձրացնել Բագրատունիներին իրենց նվաստությունից: Պատճառը Սահակ ասպետի հովանավորությունը չէ, որին հաճելի տուրք տալ ուզենար երախտագետ գրիչը: Խորենացու տրամադրությունն անձնական հաշիվների շուն չէ, նա մի նշանաբան է գաղափարական: Երկու նշանավոր տոհմերի, հայ պատմության երկու անիվների, հակադրությունը մեկի նվաստացումով, մյուսի փառաբանությամբ, արտահայտում է «Հայոց պատմության» գաղափարախոսությունը և սա հեղինակի անհատական զգացումը չէ միայն, այլ արտացոլում է այն մտայնությունը, որ ընդհանուր էր և տիրական իր դարում՝ ժամանակակից պատասխանատու շրջանների մեջ: Ինչպես ասել ենք ուրիշ անգամ, կրկնում ենք այժմ, որ մեր Պատմահայրը, բարձր մտավորական, դրոշակակիր է Բագրատունյաց քաղաքականության և անհամակիր Մամիկոնյան արկածախնդիր և ըմբոստ ոգուն:

Այս հանգամանքն ինքնին պատմական մի լույս է, որ առաջնորդում է մեզ դեպի Պատմահոր դարը: Այդպիսի համակրանքով և հակակրանքով նա չէր կարող նստել Փավստոսի, Ղազար Փարպեցու և Սեբեոսի կողքին: Չորրորդից մինչև յոթներորդ դարը Հայոց պատմության մեջ քառած են Մամիկոնյան սպարապետներ, անվիճելի և անմրցելի տնօրեններ երկրի բախտին: Միայն յոթներորդ դարու սկզբից է, որ շնորհիվ Սմբատ Վրկանի, Բագրատունի խոհեմ դեմքերը առաջանում են նոր ուժերով դեպի առաջին դիր-

[1] **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Երեւան, 1930, էջ 27:

քերը և հաջորդ դարում արդեն վտանգավոր մրցորդներ են Մամիկոնյան մեծատոհմերին: Ութերորդ դարի ապստամբական շարժումները վերջացան 775 թվի պարտությամբ և Մամիկոնյան դարավոր վարկը թարշամեց ընդմիշտ: Երկիրը հանեց ծանր դրությունից Աշոտ Մսակեր և հիմը դրեց Բագրատունիների իսկական մեծության:

Տեսանք, որ բանասիրական քննությունները հանգեցին այն կետին, որ Խորենացու գործն ուշ է, քան 696 թիվը: Այդ գործի գաղափարախոսությունը հաստատում է այդ կետը և գծում նրա վերջին եզրը մերձավորապես ութերորդ և իններորդ դարերի սահմանագլխին: Պատմահոր բացասական վերաբերումը Մամիկոնյան անցյալին կգտնե իր բնական բացատրությունը, եթե ենթադրենք, որ նա շարժել է իր գրիչը 775 թվի աղետների, Մամիկոնյան այդ վերջին խելացնոր խոյանքի, ազդեցության տակ:

Ամեն պարագայիի՝ վիճելիի 696 թիվը չէ, որ անդրդվելի է: Վեճը վերջին եզրի շուրջն է. մենք կարծում ենք Գ. Խալաթյանցի և հ. Ն. Ակինյանի հետ[1] *որ այդ եզրը ուշ է, քան 775 թ. և առաջ, քան Մսակերի մահը՝ 826 թ.: Հ. Մանանդյան և Յո. Մարկվարտ առաջանում են մինչև իններորդ դարի երկրորդ կեսը:*

Հայր Վ. Հացունի վազում է դեպի V դար: Այդ իր գործն է: Բայց աններելի է նրա արհամարհոտ դիտողությունը մի շարք բանասերների հասցեին՝ Ա. Գուտշմիդ, Գ. Տեր-Մկրտչյան, Մ. Տեր-Մովսիսյան, Ա. Կարիեր, Պ. Վետտեր (Ֆետտեր), Հ. Գելցեր, Մ. Վ. Լա Կրոզ, Գ. Խալաթյանց, Ն. Ադոնց, հ. Ն. Ակինյան, Յո. Մարկվարտ և Հ. Մանանդյան: Այդ բարգավաճ ու քննադատ մտքերը, գիտուն հայր Հացունու կարծիքով «կրնային ավելի օգտակար խնդրոց ներիրել իրենց ժամանակն ու կարողությունը», և «ոչ թե քաշքշել դարե դար ո՛չ Պատմահայրը, այլ անոր ուրվականը, մինչ նա պիտի ժպտի անոնց, կանգնած յուր պատվանդանին վրա՝ ուր զետեղեցին զայն յուր գործն ու դարերը»[2]:

Ախորժակ չունինք խրատներ տալու, մանավանդ ամբարտավան խրատներ: Ինչ վերաբերում է Խորենացու պատվանդանին, կարծում ենք, որ այդ պատվանդանը V դարում ոչինչ արժեք չունի, բայց կանգնած Աշոտ Մսակերի կողքին՝ ստանում է իսկական արձանի փայլ. այդտեղ «**Հայոց պատմությունը**» *դառնում է հայ մտքի, քաղաքական մտքի և երազների մի կոթող, մի սրբազան գիրք, որ ներշնչում է Բագրատունիների նորածիլ*

[1] Տե՛ս հայր Ն. Ակինյանի գործի մեր քննությունը՝ «Վանող և Խորենացի. քննություն հայր Ն. Ակինյանի տեսության»՝ «Հայրենիք», ամսագիր, 1933, № 8, էջ 79-90; № 9, էջ 120-126 (3):

[2] *Հայր Վ. Հացունի*, էջ 77-78:

քաղաքականությունը, բարձրացնում է նրանց հեղինակությունը և ապահովում նրանց հաջողությունը: Եթե գաղափարը երբևիցէ գործ է ստեղծում, ***«Հայոց պատմությունն»*** *այն գաղափարն է, որ ստեղծեց Բագրատունյաց թագավորությունը և Պատմահայրը՝ այդ թագավորության բարոյական հիմնադիրը, ավետավոր Առաքյալն է (4):*

Բ

Սխալը ծնում է սխալ: Հենվելով Խորենացու մասին ունեցած իյուր գաղափարին, հայր Հացունի չէր կարող ճշմարիտ արդյունքի հասնել Կաղանկատվացու խնդրում: Եվ իհարկե, իր նոր գյուտը մի նոր մոլորություն է:

Վենետիկի բանասերը կարդացել է Կաղանկատվացու Ա գիրքը և գտել է, որ նյութերը դասավորված են կարգով, «հատուկ ծրագիրով»: Անցել է Բ գրքին, կարդացել մինչև Թ գլուխը. կարգն այնքան հետևողական չէ գտել, բայց փույթ չէ: Կարևորն այն է, որ Թ գլխի մեջ հեղինակը խոստանում է նկարագրել մի տագնապալից շրջան և այն նկարագրում է հաջորդ Թ-ԺԵ գլուխներում: Տագնապը վերջացել է Վիրո կաթողիկոսի շնորհիվ 628 թվին: Արդ, մեր ուշիմ բանասերը՝ Թ գլուխն այնպես է հասկացել, որ հեղինակը ժամանակակից և ականատես է նկարագրված տագնապին և այս հեղինակն ինքն՝ Կաղանկատվացին է, որ գրել է 628 թվին իր գործին առաջին մասը՝ սկզբից մինչև Բ գրքի ԺԱ գլուխը: Ահա առաջին գյուտը:

Հայր Հացունին նորեն ճեռքն է առել Կաղանկատվացին և շարունակել ընթերցումը մինչև նույն երկրորդ գրքի ԻԸ գլուխը և տեսել է, որ հեղինակը գրել է այս մասը, որ է Ջևանշեր իշխանի պատմությունը, 669 թվին, կամ նոր հոդվածում՝ 665-670 տարիներին ընթացքին: Սա էլ երկրորդ գյուտն է: Մնացածը՝ այսինքն երկրորդ գրքի երկրորդ բաժինը, ԻԹ-ՃԲ գլուխները և ամբողջ երրորդ գիրքը, չէ պատկանում Կաղանկատվացուն, այլ մեկեն ավելի ուրիշ շարունակողների: Այս էլ մի երրորդ առեղծված: Այսպես ուրեմն, այս գյուտերի համաձայն, Կաղանկատվացին հեղինակել է իր անունը կրող գործի միմիայն կեսը և այս կեսը գրել է երկու նվագով, 628 թվին և, երեսուն տարի դադար անելուց հետո, նորեն գործի կպել 669 թվին:

Այս բոլորը ձրի ենթադրություններ են: Այն մասը, որ գրված է համարում հայր Հացունի 628 թվին, ունի իր մեջ Բ գրքի ԺԳ գլուխը: Այս գլուխը վերջանում է հետևյալ տողերով. **«քանզի բառնալոց էր թագաւորութիւնն ի տանէ Սասանականացն և տալոց էր ի ճեռս որդւոց Իսմայէլի»** *(Բ, գլ. ԺԳ):*

Այս տողերը կարող են գրված լինել միմիայն 652 թվից հետո, երբ կործանվեց Սասանյան պետությունը և երկրին տիրացան արաբները: Ահա ու-

րեմն մի և առաջին նետը 628 թվի ճակատին: Կաճ և ուրիշները, ինչպես պիտի տեսնենք, բայց այս էլ բավ է թաղելու մի անգամ ընդմիշտ 628 թիվը որպես գրության տարի:

Առայժմ անցնինք մյուս տարեթվին: Կաղանկատվացու բուն գործը հայր Հացունի վերջացած է համարում Բ գրքի ԻԸ գլխով, ուր հեղինակը երկար կյանք է մաղթում Ջևանշերին: Ուստի և համաձայն չէ Գ. Զարպհանալյանի հետ, որ նույն գրչին է վերագրել նաև հետևյալ գլուխները՝ երկրորդ գրքի վերջը: Համաձայն չէ, որովհետև այնտեղ պատմվում է նաև Ջևանշերի մահը, մինչդեռ հեղինակը, Հացունու կարծիքով, գիտե Ջևանշերին դեռ կենդանի:

Սակայն Ջևանշերի մահը պատմվում է ԼԴ գլխում, իսկ մինչ այդ, այսինքն՝ ԻԹ-ԻԳ, ուրեմն չորս գլուխների գրիչը ևս Ջևանշերին տակավին կենդանի գիտե: Ուրեմն սա ուրիշ գրիչ է, քան Կաղանկատվացին և երկուսն էլ գրել են Ջևանշերի կենդանության: Իսկ սրանց մահից հետո շարունակել են ուրիշները: Ուրեմն քանի՞ գրիչ եղավ: Կաղանկատվացու բուն գործը վերջացած է կարծում Հացունին ԻԸ գլխով, որովհետև հաջորդ գլուխների ենթադրյալ նոր գրիչն որպես թե հայտարարում է իր գործի սկզբում, թե իր նախորդի երկը պակասավոր էր և ինքը պիտի լրացնե և բերում է հետևյալը. «զճշմարտախօս դրուագս բանից (**նախորդին**, *ավելցնում է հայր Հացունի*) *սակաւ ինչ նուազ գտի» և այլն: Հայր Հացունի լավ կաներ չդներ «և այլն» և շարունակեր նախադասությունը, որպեսզի ընթերցողը տեսներ մեր բանաստերի աշխատելու եղանակը:*

ԻԹ գլխի վերնագիրն է՝ «Տեսիլ միանձնացելոյ առն Աստուծոյ Իսրայէլի ի վերայ Մաշտոցի սրբոյ. և նահատակութիւն աշակերտացն. և գիւտ սրբոյ խաչին, որ ի Գիսն էր»: Գլուխն սկսվում է այսպես. «Զճշմարտախօս դրուագս բանից սակաւ ինչ նուազ գտի զմիայնանալոյն Իսրայէլի: Սկիզբն անյայտ իմն էր. այլ զայս և եթ, որ ինչ խորհրդոյս էր իրք, բովանդակեցաք»: Լեզվական մեծ հմտություն չէ հարկավոր այս հասարակ նախադասության իմաստը չթյուրելու համար: Խոսքը նախորդ դրվագի մասին չէ, բնավ, այլ առաջիկա դրվագի, ինչ որ պիտի գրվի Իսրայելի մասին: Գրիչը խոստովանում է, որ շատ բան չգիտե այս միանձնավորի նախկին կյանքի վերաբերյալ: Սա հայտնի էր դարձել շնորհիվ այն «հրաշալի տեսիլ» -ի, որ գրության նյութն է: Իսրայել լեռներում առանձնացած իր ճգնության մեջ, մի օր տեսավ մի տեսիլ, թե այս ինչ տեղ աստվածային գանձ կա թագնված: Հայտնեց այս մասին իր գավառի՝ Մեծկողմանց եպիսկոպոս Դավթին և հարևան Մեծիրանք գավառի եպիսկոպոս Հովելին: Երեքը միասին շտապեցին տեսիլի ակնարկած տեղը, Չղախյան հովիտը, փորեցին մի փայտաշեն մատուռի մեջ «թիզս տասն, գտին կողոփս երկու արծաթեղէնս՝ կապարեայ կնիք ի վերայ եդեալ. զորմէ տախտակ մի ոսկեծոյլ հաստահեղոյս բևեռեալ. և ի նմա գրեալ ասորերէն և

հայերէն գրով»: Կնիքը հանեցին և մեջը գտան «փրկագործ խաչի մասն»: Ոսկեձույլ տախտակի գիրը ևս կարդաց Հովել. «Ես էր գիրն այս եթէ՝ Երուսաղէմեան մասնաւորեալ նշխարք սրբոց են»: Տապանակներից, այսինքն՝ կողովներից, մեկը Հովել եպիսկոպոսը տարավ իր մոտ, մյուսը՝ մնաց Իսրայելի ձեռքին՝ եպիսկոպոս Դավթի թույլտվությամբ: Իսրայել դրավ սրբությունը իր վանքի մեջ, որ է Գլխո վանք նույն Մեծկողմանց (կամ Մեծկուենից) գավառում:

Հովել թուղթ գրեց իր և Դավթի կողմից Աղվանից կաթողիկոս Ուխտանեսին և Ջևանշեր իշխանին հայտնելու չքնաղ գյուտը: Թուղթը բերված է Լ գլխում, և հաջորդ ԼԱ գլխում՝ Ուխտանեսի և Ջևանշերի պատասխանը: Սրանց խնդրելով սրբությունը տարան Պերոժ Կավատ, ժողովուրդի հետ Ուխտանես և Ջևանշեր երկրպագություն տվին և ապա վերադարձան նորեն Գլխո վանքը:

Մի տարի անց՝ Իսրայել դարձյալ մի տեսիլ տեսավ, թե Մաշտոցի խաչը ծածկված է Ուտի գավառի Գիս գյուղի մեջ: Մի քահանայի հետ շտապեց Գիս, փորեց հինգ քիլ մի փոս և «յանկարծակի երևեալ տապան մի արծաթի, ժանգառագոյն, հնացեալ, որ և ունէր առհասարակ հայ, հռոմ և ասորի գիր, և ցուցաներ ի նմա գոլ զմասն կենդանարմատ փայտին» (Բ, գլ. ԼԳ):

Այս գյուտը նկարագրված է երկարորեն և, ինչպես հեղինակն է ասում, «վիպասանմամբ զրուցատրաբար» ԼԳ գլխի մեջ: Կարևոր չեն մանրամասնությունները: Հիշենք միայն, որ լուրը հասավ կաթողիկոսին, Ուխտանեսի հաջորդ Եղիազարին, և Ջևանշեր իշխանին: Կաթողիկոսը գնաց և «առհասնեալ զմասն ի սրբոյ Խաչէն Մաշտոցի» օծեց յուղով օրհնությամբ:

Այսպիսով, երազագետ Իսրայել երկու գյուտ արավ. Մաշտոցի խաչը Գիս գյուղում, և Չղախի խաչը, որ Երուսաղեմի խաչի մասն էր:

Արդ, այս երկու խաչերի մասին մեր պատմագիրը ճառում է իր գործի Ա գրքի մեջ ԻԷ-ԻԹ գլուխներում և բացատրում նրանց ծագումը: Մեսրոպի խաչի մասին պատմում է (գլ. ԻԷ) «վիպասանաբար», իսկ Երուսաղեմյան խաչի՝ «զրուցատրաբար» (գլ. ԻԸ): Հայոց, Աղվանից և Վրաց նշանագիր տալուց հետո Մաշտոց գնում է որպես թե Երուսաղեմ ուխտ: Այնտեղից վերադառնում է «աշակերտօքն և ընդ ինքեան ունելով զխաչն արծաթեղէն ոսկի խաչաց տեսակով, յորում ի տէրունեան խաչէն էր մասնաւորեալ», և գալիս բնակվում է Ուտի գավառի Գիս գյուղում: Այնուհետև Մաշտոց իր աշակերտներով քարոզություն է անում մինչև Չողա պահակը և այն կողմ՝ լեռնականների մոտ: Զգալով որ գազան բռնակալները մտադիր են նրանց սպանել, Մաշտոց «փութացեալ փորէր փոս մի ըստ պիտոյից գործոյն և զաստուածային առեալ գանձէն, որ է խաչն տէրունական եդեալ ի տապանի ծածկէր ի գետնափոր կայանի»: Հետո նորահավատներից մին շինում է

«մատուռն մի հողեղէն չորեքկուսի և տապան տախտակամած արարեալ՝ ամփոփէր զնշխարս նոցա ի տապանի անդ»: Նշխարները Մաշտոցի աշակերտներինն էին, որոնք նահատակվեցին նույն հյուսիսականներից: Հետագայում եկեղեցի շինեցին «ի կայարանի խաչին, զոր Հին եկեղեցի տեղույն անուանէին որում Գիսն կոչեն»:

Մաշտոցի մահից հետո իր աշակերտները վճռեցին գնալ Երուսաղեմ և խնդրել մի առաջնորդ, քանի որ իրենց առաքյալ Եղիշաե Երուսաղեմից էր: Լավ ընդունելություն գտան Երուսաղեմի պատրիարքի կողմից, և վերադարձան «ոսկեղէն և արծաթեղէն սպասիւք և բազում նշխարօք յամենայն սրբութեանցն» և երեք քահանաների ընկերակցությամբ եկան Մեծկուենից գավառը և հաստատվեցին Չղախ հովտում (Ա, գլ. ԻԸ): Հյուսիսական բարբարոս ազգերն արշավեցին և ասպատակեցին Աղվանից, Հայոց և Վրաց աշխարհները: Երբ հրոսակները խուժեցին Մեծկուենից գավառը, «Չղախական գընդին Երուսաղէմեան զաւի հարեալ մեծաւ երկիւղիւ ամապարեալ ի մի վայր ժողովէին զմասունս նշխարացն ամենայն և յերկուս ամփոփեալ արծաթեղէն կողոփս ծածկէին յերկրի» (Ա, գլ. ԻԹ): Զանց անենք անկարևոր մանրամասնությունները:

Այս պատմությունները հերյուրված են ad hoc մեկնելու Գիսի և Չղախի սրբությունների ծագումը և այդ միջոցով հաստատելու նրանց հայտնության փաստը: Երկրորդ գրքի ԻԹ-ԼԳ գլուխները կապված են սերտորեն առաջին գրքի ԻԷ-Լ գլուխներին, գրված են միևնույն ոգով և շնչով և պատկանում են միևնույն գրչին:

Արդ, մեծապես կարևոր է, որ գրիչը խոստովանում է, թե «սակաւ ինչ նուազ գտի» Իսրայելի վերաբերյալ դրվագը: Իսրայել կենդանի էր տակավին 707 թվին և մասնակցեց այդ թվին կայացած եկեղեցական ժողովին[1]: *Նա է, մյուս կողմից, գլխավոր դերակատարն այն բոլոր անցքերի, որ պատմվում են խաչերի գյուտից հետո, հաջորդ գլուխներում և որ վերաբերում են Իսրայելի առաքելության Հոնաց մոտ: Արդ, մեր պատմագիրը չի կարող ժամանակակից լինել Իսրայելի.* **այլ ապրում էր նրանից, ուրեմն 707 թվից, շատ ներուժեր հետո և այնքան հեռու էր ժամանակով Իսրայելից, որ ուրիշ բան չգիտեր նրա մասին, քան ինչ որ գտել էր գրավոր աղբյուրներում:**

Իսրայելի առաքելության ևվիրված գլուխները ևս միևնույն գրչի գործ են: Ուխտանես և Ջևանշեր գրում են Հովել և Դավիթ եպիսկոպոսներին ուղղված Թղթի մեջ ի միջի այլոց. «Եւ մեք թէպէտ հեռի եմք մարմնով, մերձ համարեալ հոգւով յիշեսջիք առաջի նորագիւտ խաչիդ» (Բ, գլ. ԼԱ): Միևնույնը կրկնում են Սահակ կաթողիկոս և Գրիգոր Մամիկոնյան Հոնաց թագավորին ուղղած նամակում. «Եւ արդ՝ մեք և աշխարհս մեր, թէպէտ և մարմնով հեռի եմք, սըր-

[1] Տե՛ս ստորև, էջ 453:

տի սիրով մերով համարիմք թէ յանդիման տեսաք զնեզ» (Բ, գլ. ԽԵ):

Պարզ է, որ միևնույն ձեռքն է գրողը: Ասել է թե Խորայելի ամբողջ դրվագը պատկանում է նույն գրչին, որ գրել է Ա գիրքը և գրված է 707 թվից շատ հետո: Նույն գրչի գործն են և Բ գրքի այն գլուխները, որ նվիրված են Վիրոյին և Ջևաճշերին, ուրեմն և այս մասը չէ կարող գրված լինել ո՛չ 628 և ո՛չ 689 թվին: Հայր Հացունին ո՞րտեղից է հանել այդ տարեթիվները, պետք կա հատուկ քննության:

Գ

Մեր հակառակորդի կարծիքով Կաղանկատվացին գրել է Վիրոյի և Ջևաճշերի հատվածները, ասենք դրվագները, որպես ականատես 628 և 689 թվին: Քննենք նախ Վիրոյի դրվագը:

Տեսանք, որ Վիրոյի պատմությունը գրված է ամեն պարագայի 652 թվականից հետո և ոչ 628 թվին: Բայց մոռանանք այս կետը, ինչպես մոռացել է հայր Հացունի: Ուրիշ կողմեն մոտենանք հարցին:

Նման դեպքերում լավագույն միջոցն է պատմական ստուգումը, այսինքն՝ թե որքա՞ն ճշմարիտ է քննելի պատմությունը. կարելի՞ է վստահել, որ պատմիչն իրոք ականատես ոմն է, թե այնպիսի սխալներ է գործում, այնպիսի շփոթ տեղեկություններ է տալիս, որ մատնում են նրա ոչ ժամանակակից լինելու պարագան:

Արդ, Վիրոյի դրվագը բռնում է Բ գրքի Թ-ից մինչև ԺԶ (ոչ ԺԳ ինչպես հայր Հացունին է հաշվում) գլուխը: Թ գլուխը ներածական է, մի տեսակ նախաբան: Հետևյալ Ժ գլխում պատմվում են Խոսրով Բ Ապրվեզի շահատակությունները և, ի միջի այլոց, հետևյալը.

«Այլ առաւել ևս ոգորէր ընդ ծով և ընդ ցամաք և զգեղեցկաշէն քաղաքս Հռոմայեցւոց բնակչօքն հիրովք հանդերձ խաղացուցանէր ի կողմանս Պարսից վասն տեսչաանաց իւրոց. նմանապէս ճարտարօք ի նոյն ձև օրինակի ետուցանել և անուանել **զոմն առաւել քան զԱնտիոք քաղաք**, *և զայլն ամենայն յիւր անուն՝* **զառաւել** *ի վերայ յաւելեալ» (Գիրք Բ, գլ Ժ):*

Այստեղ մի խոշոր անաքրոնիզմ *կա: Գիտենք Սեբեոսից և այլուստ, որ Խոսրով I Անուշիրվան բյուզանդական հողից գաղթեցրեց ժողովուրդ և հիմնեց մի նոր քաղաք և կոչեց Վեհ-Անջաւոռք*[1]*, այսինքն՝ Veh-az-Antoc, «վավ քան Անտիոք»:*

Մեր պատմագրի **«Առաւել քան զԱնտիոք»** *քաղաքը նույնն է, ինչ որ* **Վեհ-Անջաւոռք***: Իսկ վերջինս հիմնված է 540 թվականին: Պատմագիրը շփոթել է Խոսրով I Խոսրով II-ի հետ և առաջինի գործը վերագրել երկրորդին:*

[1] **Սեբեոս,** Պատմութիւն ի Հերակլ, Ս. Պետերբուրգ, 1879, էջ 28:

Ակներև է, որ այսպիսի չփոթության հեղինակը չէր կարող ժամանակակից լինել Խոսրով II Ապրվեզին և ոչ մանավանդ գրել 628 թվականին: Շփոթությունը կարելի է և պետք է մեկնել նրանով, որ հեղինակը, ընդհակառակը, շատ ուշ է, քան 628 թիվը: ԺԱ գլխում նկարագրում է խազարաց արշավանքը «յամին երեսներորդի ութերորդի, որ ամ էր տագնապի աղէտի սպանմանն Խոսրովու», այսինքն՝ 628 թվին: Իրականին այս արշավանքը տեղի է ունեցել 626 թվին: 628 թվին գրող հեղինակը այսպիսի սխալ չէր կարող գործել և երկու տարի հնություն ունեցող անցքը տեղափոխել իր գրության տարին: Հետևաբար նա 628 թվի գրիչ չէ:

ԺԲ գլխի մեջ մի ուրիշ տեղ կոպիտ սխալ: «Յամին երեսներորդի վեցերորդի Խոսրովու», ուրեմն՝ 626 թվին, Հերակլ կայսր խորհում է, «թէ գիարդ արդեօք կարասցէ բուժիլ յանհնարին տրտմութենէն և ի նախատանացն», և հարաբերության մեջ է մտնում խազարների հետ և նրանց կանչում օգնության: Կատարյալ անհեթեթություն է, 626 թվին սրբել տալ 628 թվին կրած նախատինքը: Հեղինակը լավ չէ սերտել իր ձեռքի տակ գտնված նյութերը: Խազարների արշավանքը տեղի ունեցավ 626 թվին, իսկ 628 թվին վերագրած արշավանքը իսկապես մի ուրիշ նկարագրությունն է նույն 626 թվի արշավանքի: Մի դեպքը վերածելով երկուսի, հեղինակը գործել է ակամայից մի ուրիշ սխալ՝ կարծելով որ 626 թվին խազարները «ճանապարհ կալեալ ընդ աշխարհն Վրաց և Եգերացւոց՝ հատին, անցին ընդ ծովն մեծ մինչև ի պալատն արքունի: Եւ յանդիման լեալ մեծի կայսերն, հաստատեն առ միմեանս զերդմունս» (Ք, գլ. ԺԲ):

Սակայն խազարները երբեք չեն գնացել բյուզանդական մայրաքաղաք բանակցելու կայսեր հետ: Հերակլ կայսրն է, որ եկավ Եգերացվոց աշխարհը և պաշարեց Տփղիսը: Այս քաղաքի առջև տեղի ունեցավ տեսակցություն խազար թագավորի՝ Ջերու խաքանի հետ, որ է **Ձիներ** *Թեոփանես պատմիչի: Կայսրը խոստանում էր տալ իր մատաղահաս հազիվ 17 տարեկան դուստրը, ի տիտուր զինվորական օգնության, խազար իշխանին: Եթե մեր պատմագիրը գրած լիներ 628 թվին, պետք է որ այսքան սխալ տեղեկություն չունենար օրվան եղելության մասին, մանավանդ որ խազարները իջնելով Ճորա կամ Չողա պահակից Աղվանք, այստեղից էին գնացել Տփղիս ներկայանալու կայսեր:*

Ավելորդ չէ հիշել նաև, որ ներածական գլխում (Թ) գործ է ածված Հայկական թվականությունը, որ մեր մատենագրության մեջ առաջին անգամ երևան է գալիս 684 թ. և սովորական է դառնում միմիայն ութերորդ դարու վերջերից հետո[1]:

[1] Հնագույն արձանագրությունն է Թալինի մայր եկեղեցու ՄԼԹ Թ.Հ.= 783: Արիստակես վար-

Այս դիտողություններն ինքնին ապացույց են, որ մեր պատմագիրը ժամանակակից չէ անցքերին և ամեն պարագայի Վիրոյի դրվագը չէր կարող գրված լինել 628 թվին, հակառակ հայր Հացունու:

Պատվական հոր մոլորության աղբյուրն է երկրորդ գրքի Ը-րդ ներածական գլխի սխալ ըմբռնումը: Գլխի վերնագիրն է. «Պատմութիւն յաղագս յառաջման ազգաց բարբարոսաց և պէսպէս տիեզերահեծ տագնապին որ եղև աշխարհաց»: Սա ընդհանուր վերնագիր է, որ վերաբերում է հետևյալ գլուխներին մինչև ԺԳ, թեև սրանցից յուրաքանչյուրն իր հատուկ վերնագիրն ևս ունի, ինչպես որ ԺԴ գլխի վերնագիրն ամփոփում է ոչ միայն ԺԴ, այլև հետևյալ գլուխները մինչև ԺԶ, հակառակ որ իրենց հատուկ վերնագիրն ունին: Ը գլխի վերնագիրը վերաբերում է իսկապես Ը-ից մինչև ԺԶ գլուխների այս երկու հատվածներին: Ճիշտ այդպես Ը գրքի ԻԹ գլխի վերնագիրն ի նկատի ունի ԻԹ-ից մինչև ԼԳ գլուխները, որովհետև այնտեղ նշանակված է «գիւտ սրբոյ Խաչին որ ի Գիսն», իսկ այդ գյուտի մասին խոսվում է ԼԳ գլխում:

Հակառակ վերնագրին, Ը գլուխը տագնապի մասին չէ խոսում, այլ մի տեսակ ներածություն է: Նախքան անցնել տագնապի պատմության, մեր պատմագիրը անճնատուր է լինում տխուր խորհրդածության և գոչում է. «Ո՛վ սքանչելի պատմութեանս, զոր հանդերձեալ եմ հնչեցուցանել ի լսելիս տիեզերաց մօտաւորաց և հեռաւորաց». և շարունակում է արծարծել այս նյութը: Նրան թվում է, որ տիեզերական պատմությունը չգիտե նման տագնապ, որ վիճակվեց Աղվանից աշխարհին, ո՛չ Սուրբ Գիրքը, ո՛չ արտաքին պատմագիրները: Կարծես թե Փրկչի մարգարեությունն էր, որ կատարվեց թե «զսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց և լինել սովուց յաճախութիւն և սուրք և սաստանութիւնք»[1]: *Հանկարծ սթափվում է իր անընդհատ քից. «և արդ քանզի ընկղմեցաք միաք իմ և զբաղեցաք խորհուրդք իմ ի տիեզերական հարուածոցս և* **մոռացայ զկարգ բանիս**, *որ հանդերձեալ էր արկանել հիմն, և սկիզբն առնել ժամանակաց և անցից, որք անցին ընդ աշխարհս Աղվանից, ըստ բանի մարգարէին եթէ՝ «մոռացայ ուտել զհաց իմ ի*

դապետի կարճ արձանագրությունը Անի՝ «չինեցի զեկեղեցիս զայս ի թուականութեան ՀԱ.» վիճելի է. արդյոք Հայո՞ց պիտի կարդալ, թե 71=622: Մի դեպքում արձանագրությունը պետք է թեքի համարել, մյուս դեպքում խնդրական է մնում, թե ինչու չէ նշանակած (Հայոց) ՀԱ: Մատենագիրներից առաջին անգամ Ղևոնդի մոտ է հանդիպում Հայկական թվականությունը, Արծրունի եղբայրների նահատակության տարին՝ ՍԼԳ =784 (ավելի ճիշտ ՍԼԴ): Մենք կարծում ենք, որ «Կայսերաց պատմութեան» (5) վերջ հիշատակած, ՃԼԴ=685 հնագույն գործածությունն է:

[1] **Մատթ.**, ԻԴ, 2:

ձայնէ հեծութեան իմոյ[1]*», սակայն և այժմ առ անգամ մի քաղեալ զահ և զերկիւղ, որ դեռ զմեզս (կարդա՝ **զմիտս**[2]) ունի, ի նոյն կարգն դարձցուք»:*

Արդ, հայր Հացունի այնպես է հասկացել այս տողերը, որպես թե հեղինակն ականատես է եղել տագնապին, կրել բոլոր ծանրությունն ու նեղությունը և սկսել գրել իր պատմական գործը սկզբից ևեթ, գրել «այդ նեղության մեջ իսկ, ոչ թե կանխավ»:

Եթե հեղինակի միտքն այդ լիներ, պետք էր սպասել, որ այդ մասին խոսեր իր ձեռնարկության սկզբին և ոչ թե միջին: Հետո, հայր Հացունի անտեսել է «**մոռացայ զկարգ բանին**» *կարևոր խոսքերը, որ բոլորովին այլ իմաստ են տալիս ամբողջ պարբերության: Պատմագիրը գրել, հասցրել է իր գործը մինչև Բ գրքի Ը գլուխը և պիտի անցներ «տիեզերահռչակ տագնապի» պատմության հետևյալ Թ գլխից: Սակայն փոխանակ անմիջապես նյութին անցնելու, հեղինակի միտքը տարվում է, ընկնում վիճաբանական մտածմունքների մեջ, թե ի՞նչ անհարկի, չտեսնված ու չլսված, պատմություն է, որ պիտի անեն. «միտքը կլանվում է, խոհերը շփոթվում» այս տոսկալի անցքերից և հարվածներից, ո՛չ որպես ականատես, այլ իբրև պատմող, ուստի և պահ մի մոռանում է «զկարգ բանին», այսինքն՝ շեղվում է նյութից: Սակայն որքան և ընկճված ծանր մտքերից, պետք է սթափվել և «ի նոյն կարգ դառնալ», այսինքն՝ շարունակել պատմության թելը, որ ընդհատած էր իր խորհրդածության հետևանքով:*

Եվ խոստանում է պատմել ոչ միայն թշնամիների հարվածները, այլև նրանց պարտությունը, թե ինչպես «մարդասէր աջն Աստուծոյ հաղթեց և թշնամիներն «անկան տապաստ առաջի աչաց մերոց»:

Հաջորդ Ժ գլխից սկսած մինչև ԺԶ, մեր պատմագիրը նկարագրում է տագնապալից շրջան խազարների արշավանքի պատճառով և վերջին գլխում պատմում է թշնամու պարտությունը, թե ինչպես հրաշքով թշնամին իր պատիժը կրեց: Ջերու խաքանը սպանվեց յուրայիններից այն միջոցին, երբ նրա որդին, Չորպան-Թարխան արյունարբու զորավարի առաջնորդությամբ, ասպատակում էր Աղվանք: Խաքանը, դեռ չսպանված, ընտանեկան գժտությունները ծագելուն պես, հետ կանչեց իր որդուն և զորավարին:

Այս առթիվ մեր հեղինակը նորեն ընկնում է խորհրդածության մեջ. «Եւ յուզին միտք իմ զբազում ճառօք ածել օրինակս. միթէ՞ առաւել իցեն քան զընկղմիլն Փարաւոնի» և կամ Ամաղեկի պարտությունը, Գեդեոնի և Հեսուի հաջողությունները և կամ ասորեստանցիներին հասած պատիժը: Փոքրիկ

---

[1] **Սարմ**., ՃԱ, Զ:

[2] Այս սրբագրությունը պատկանում է Ս.Պարոնյան վարդապետին (6), իր ձեռքով նշանակած Կաղանկատվացու իր օրինակի լուսանցքում:

շեղումից հետո վերսկսում է իր պատմությունը, ասելով՝ «Այլ մեք ի նոյն դարձցուք **ի կարգ բանիցն**», և ավարտում դրվագը արձանագրելով արքայորդու և իր զորավարի քաշվիլը Աղվանքից, համաձայն խաքանից ստացած պատվերին: Հեղինակի «մտքի յուզումը» այստեղ նույն կարգի արտահայտություն է, ինչ որ նախաբանի մեջ «մտքի ընկղմումը», և չեն նշանակում, թե պատմագիրն ականատես է տագնապին և գրել է տագնապի մեջ իսկ, «ոչ թէ կանխաւ», 628 թվին: Նախաբանի ակնարկը «անկան տապաստ առաջի աչաց մերոց» վերաբերում է խաքանի անսպասելի վախճանին, որ տեղի ունեցավ մեր հեղինակի հաշվով Կավատի թագավորությունից երկու տարի հետո՝ «Յերկրորդ ամի Արտաշրի» (Բ, գլ. ԺԶ), 629-630 թվին: Ուրեմն, եթե հացուցու պես մտածենք, պատմագիրը պետք է, որ սկսած լինի իր գործը ամեն պարագայիմ ոչ 628 թվի տագնապի մեջ, այլ առնվազն երկու տարուց հետո, երբ «ահ և երկիւղ» անցել էին: Հեղինակի զգացած «ահ և երկիւղը» գրողի զգացում է և ոչ տագնապն իրապես ապրողի սարսուռ:

Ա գրքի մեջ գլ. ԺԱ բերված է Գյուտ եպիսկոպոսի նամակը Վաչեին: Անվավեր գրվածք է, բավականին անճաշակ: Գյուտ ուզում է նկարագրել Վաչե քագավորի առաքինությունը, բայց սոսկում է այդ մտքից. «Ահ անկաւ ինձ, - գոչում է նա, - մեծ և ահագին և բարձրագոյն քան զերկինս երկնից և խորամուխ լինել երկնչիմ, եթէ գուցէ ընկղմիցիմ, որպէս Պետրոս Առաքեալ ի ծով անդնդային» վերջապես հաղթահարում է ահն ու երկյուղ. «Արդ՝ ահա յորմէ երկուցեալս էի ի ձեռս սիրոյ մօտիմ և սկսանիմ ուստի արժանն է սկսանել»: Ստորև բացատրում է. «Այս է, որ զահի հարեալ էի ի սկզբանէ պատմութեանս, որ վեր քան զբան գտանի»:

Այդպիսի դրության մեջ է զգում և մեր պատմագիրը, երբ պատրաստվում է գրել ոչ թե մի առաքինի կյանք, այլ «տիեզերական տագնապ»-ը: Սկսում է հուզմունքով և վերջացնում նույն զգացումով, որպես պատմիչ, կրկնում ենք, և ոչ ականատես:

Ներածական Թ գլխի մեջ պատմագիրը խոստանում է գրել մեծ «տագնապը»-ը, բայց հարկավոր է համարում սկսել նախընթաց անցքերից, ասելով. «Եւ զի անցեալ ժամանակն յետս կոյս զիւրն պահանջէ ի մէնջ պատմել, սկսայց յառաջին տասնեւութ նահանջէն յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մեհեկանի ամսոյ, յերեսուն և հինգ ամէն Խոսրովու Որմզդեան արքայից արքայի, որ եղև»:

Խոսրովի 35-րդ տարին է (590+35)=625, որին համաձայն է և մյուս թվականը, 18 նահանջ՝ հաշված մեհեկանի ամսի Հայտնությունից: Հայկական թվականը սկսվում է 552 թվից, երբ նավասարդի մեկը =11 հուլիսի, և հետևաբար մեհեկանի 1=556 թ. հունվարի 7: Այս է Հայտնության մեհեկանը, որից հաշվելով 18 նահանջ (4x18=) 72 տարի, կստացվի (553+72) 625 թ.:

Պատմագիրն ուրեմն պիտի սկսե իր պատմությունը 625 թվից: Հաջորդ Ժ գլխի վերնագիրը՝ «Ցառաջին տասնևութն ճահանջէն սկիզբն պատմողաբար» հաստատում է նույն խոստումը՝ սկսել առաջին <ամե> հետ 72 տարվո, ուրեմն 625 թվից հետո:

Սակայն, հակառակ խոստման, պատմագիրը սկսում է ոչ թե 625 թվից, այլ 614 թվից, հիշատակում է Երուսաղեմի առումը և խաչափայտի գերությունը, որ տեղի ունեցավ 614 թվին, Հերակլ կայսրի առաջին արշավանքը 622 թվին, հարձակումը Ատրպատականի վերա և առաջանալը մինչև Գայշ ավան քաղաքը, պարսից թագավորների ամարանոցը[1]: *Ատրպատական մտավ կայսրը, ըստ Թեոփանեսի, 20 ապրիլի 623 թվին*[2] *և այնտեղից վերադարձավ ձմերելու Աղվանք: Կաղանկատվացին հիշում է, որ պարսից զորավար Շահրապաղական եկավ Հերակլի դեմ: Թեոփանեսի ասելով, Մարաբլագան զորավարը, որ նույն Շահրապաղականն է (և ոչ Շահրատպաղական, ինչպես տպված է), հիրավի, եկավ Հերակլի դեմ գարնան 624 թվին: Մեր պատմագիրը գիտե, որ «միւս զօրավար» եկավ «ի Հռոմայ», այսինքն՝ Հռոմոց երկրից: Այս զորավարը Խոռեանն էր, որը կոչվում էր նաև Շահր-Վարազ և Ռազմիոզան:*

Հետևյալ ԺԱ գլխում պատմագիրն անցնում է խազարաց արշավին 628 թվին: Խոսրով լսելով, որ խազարները ասպատակում են երկիրը Հերակլի դրդմամբ, մարդ է դրկում հանդիմանելու, եթե նրանց ոսկի էր պետք, ինքն ավելի մեծ նվերներ կարող էր տալ, քան ստացել են կայսրից և սպառնաց հետ կանչել իր քաջամարտիկ զորավարներին, Շահր-Վարազ, Շահեն և Քրտարական[3]*, որ ավերում են կայսերական հողերը և նրանց ուղղել խազարների դեմ: Խազարները իջան Աղվանք, ըստ Թեոփանեսի, հարձակվեցին Ատրպատականի վերա, և վերադարձին գնացին պաշարելու Տփղիս քաղաքը: Կայսրը եկավ զորքով օգնության: Ամեն միջոց գործ դրին քաղաքի դեմ, բայց չկարողացան գրավել: Եկավ Շահր-Վարազ և պաշարողները ստիպված հեռացան:*

---

[1] Տպագիրն ունի Գայշավան: Պետք է զատ գրել **Գայշ** ավան: Պարսից արքաների ամարանոց Ատրպատականի Գանձակ քաղաքն էր, որ բնավ Թավրիզ չէ, այլ այժմյան Թախտ-ի-Սուլեյման: Արաբները կոչում են **Շիզ**, և վկայում են, որ հին ծևն է **Ջիս**, որ իրրև թե **Գազմա** *(= Գանձակ)* արաբական արտասանություն է: Մեզ թվում է, որ **Գայշ** նույնն է այս **Ջիս**-ի հետ, որի պարսկական ծևը պետք է լիներ **Գեզ, Գայս:** Այստեղ էր գտնվում Ատրվշնասպ հռչակավոր հրատը, որ համարվում էր պատերազմական հովանավոր և թագավորները ուխտ էին գալիս և հաջողություն խնդրում պատերազմ գնալիս:

[2] **Theophanis Chronographia**, ed. Bonn, 1839, p. 474.

[3] Տպագիրն ունի Քրտակարին: Սրբագրելի է Քրտարական՝ համաձայն Թեոփանեսի **Kardaragan**-ի:

Հերակլ առաջարկեց Ջերու խաքանին վերադառնալ իր տեղը, քանի որ լեռնականները սովոր չեն հարավային շոգերի, և գալ հետևյալ տարին ավելի հովասուն եղանակի:

Տփղիսի բնակիչները սկսեցին ծաղրել Հոնաց (Խազարաց) թագավորին, ցուցադրեցին պարիսպների վերա նրա ծաղրանկարը՝ գծած մի մեծ դդումի վերա: Անարգեցին նաև«զմիւս թագաւորն», այսինքն՝ Հերակլին, անվանելով նրան «պիղծ և արուազեղծ» (Ք, գլ. ԺԱ)[1]:

Այս բոլորը ճշմարիտ է ընդհանուր առմամբ, սխալ է միայն տարեթիվը: Տեսարանը տեղի ունեցավ 626 թվին և ոչ 628 թվին: Գրչի վրիպակ չէ, որովհետև ասված է՝ «որ ամ էր տագնապի աղետի սպանման Խոսրովու»: Խոսրով սպանվեց 628 թվի փետրվարի 24:

Պատմագիրը ծրագրել էր պատմել 625 թվին հաջորդած անցքերը: Ժ և ԺԱ գլուխները շեղում են ծրագրից: ԺՔ գլխից է սկսվում ծրագրյալը: Այստեղ, 626 թվի տակ, պատմում է, թե ինչպես կայսրը դիմեց խազարների խաքանին, ղրկելով նրա մոտ բանակցության Անդրեաս անունով պաշտոնյային: Խաքանը համաձայնեց և զորքով եկավ կայսեր մոտ:

Անդրեասն հիշել ենք վերև, որ մեր պատմագիրը կարծում է սխալմամբ, որ խաքան գնացել է մայրաքաղաք տեսնելու կայսեր, այնինչ հանդիպումը տեղի է ունեցել Տփղիսի մոտ: Հերակլ կայսրը քաղեց Կ. Պոլիս 623 թվին և մնաց պատերազմի դաշտերում մինչև 628 թիվը՝ Խոսրովի խորտակումն և սպանությունը: 625 թվին Հայաստան էր, երբ խույս տվավ պարսիկ զորավարներից և գրեթե փախավ դեպի Ամիդ և այնտեղից Սեբաստիա ուր և ձմեռեց: Գարնան 626 թվի շարժվեց դեպի Վրաստան, պաշարեց Տփղիսը: Այդ միջոցին հասավ խաքանը զորքով: Թեոփանեսի և Նիկեփոր պատրիարքի ասելով, ընդունելությունը մեծ էր. կայսրը շռայլեց ամեն ուշադրություն, հանեց թագն իր գլխից և դրավ խաքանի գլխին, սարքեց մեծ ճաշկերույթ, և ճաշից հետո բոլոր ոսկի սպասները նվիրեց խազար իշխանին: Եվ ինչ որ անսպասելի էր, կայսրը խոստացավ տալ իր դուստրը Եվդոկիա բարբարոս հեթանոսին կնության՝ փոխան զինակցության: Բարեբախտաբար խաքանի

---

[1] «Վրաց տարեգիրքը» (**M. Brosset**, Histoire de la Géorgie, t. I, SPb., 1842, p. 226) ևս գիտե ծաղոանքի տեսարանը, թեև տարբեր գույներով: Հերակլի հասցեին գռչած են՝ «մորուքդ այծի, վիզդ՝ այծյամի»: Խաքանի ինքնությունը մոռացված է և Ջերու հանդես է գալիս որպես մի վրացի իշխան, զինակից Հերակլի: Խաքանը կոչվում էր, ըստ Թեոփանեսի, **Ziebel**, ըստ Սեբեոսի՝ Ճեմբուխ (էջ 66):

մահը փրկեց մատաղահաս իշխանուհուն անարգ վիճակից: Երևում է, որ Հերակլ չէր կարող պարծենալ իր զենքի հաջողությամբ, և մինչև 626 տարին առավելությունը պարսից կողմն էր:

Խաքանը զորք թողեց Հերակլին և ինքը վերադարձավ: Մեր պատմագրի տեղեկությամբ, խաքանը զորք ղրկեց 627 թվին իր եղբորորդու առաջնորդությամբ, «որոյ ի պատիւ իշխանութեանն իւրեանց Շաբ անուն կարդային»: Շաբ հատուկ անուն չէ, այլ տիտղոս, **išhād** կամ **al-shad**, *ըստ արաբ հեղինակների:*

Շաբ մտավ Աղվանք և Ատրպատական, պատգամ ղրկեց Խոսրովին, պահանջելով որ հետ քաշե իր զորքերը կայսերական հողերից և վերադարձնե խաչափայտը: Հակառակ դեպքում, սպառնաց մեծամեծ չարիքներ հասցնել: Խոսրով ծածկելով իր զայրույթը պատասխանեց, ցավ հայտնելով, որ «իր եղբայր Ջերու խաքան», խախտելով հին բարեկամությունը, խարվել է «իր ծառա հռովմայեցու» խոստումներից: «Տուրկանն դարձաւ յաշխարհ իւր»: Տուրկան հատուկ անուն չէ, այլ գավառական բառ է և նշանակում է պատգամավոր (հմմտ՝. ուզնկան):

Խաքանի և Խոսրովի այս բանակցությունը գրեթե նույնն է, ինչ որ նախորդ գլխում տեսանք: Խոսրով ղրկեց խաքանի դեմ Ռոճվեհ զորավարին[1]: *Պարսից զորքը մեծ ջարդ կրեց 627 թվի դեկտեմբեր 12, որից հետո սկսվեցին խլրտումներ պարսից արքունիքում: Խոսրով գահընկեց եղավ ի նպաստ իր որդու Կավատի:*

ԺԹ գլուխը տալիս է Խոսրովի սպանության մանրամասնությունները: Ուշադրության արժանի է հեղինակի համակրությունը հանդեպ Կավատի, «որ էր բարեխոհն, ողորմած առ ամենայն աշխարհս և առ ծառայս իւր»: Նա արձակեց բանտից կալանավորներին: Ազատ արձակեց և Վիրո կաթողիկոսին, որին նվիրված է հետևյալ ԺԹ գլուխը:

Վիրո կաթողիկոսը, Աղվանից իշխանների ապստամբության միջոցին, «փախստեայ անկանէր ի դուռս արքունի» և արժանանալով թագուհու հովանավորության, փրկվեց մահից: Բայց մնաց կալանավոր պարսից դրան, շարունակելով ստանալ անարգել «զհաս իշխանութեան աթոռոյ»:

Ազատվեց արգելարանից շնորհիվ Կավատի, ուրեմն 628 թվի փետրվարի 24-ից հետո, եկավ հայրենիք, կարոտակեզ «համբուրեց եկեղեցիների դրռնները ու հատակները», և հազիվ սփոփված իր երկարատև վշտից, նոր աղե-

---

[1] Ռոճվեհ, Սեբեոսի մոտ Ռոճվեհան (էջ 94, ն՛չ Ռոճ Վեհան: Էջ 79՝ Ռոռճ Վեհան, կարդալ Ռոճվեհան), Թեոփանեսի մոտ **Razates**, որ աղավաղված է: Ռոճվեհ պարթև ծնն է պարսկերենի՝ Ռոզբեհ, որ նշանակում է բառացի «լավօրյա», այսինքն՝ բարեբախտ:

տի մեջ ընկավ: Ջերու խաքանն իր որդու Շաթի հետ նորեն երևաց Աղվանք և գնաց պաշարեց մի անգամ ևս Տփղիսը: Երկու ամիս նեղելով քաղաքը, վերջապես տիրացավ նրան, սպանեց պարսիկ կառավարչին և մի վրացի իշխանի, նախապես հանեց նրանց աչքերը, «փոխանակ զի կոյր նկարեցին զպատկեր նորա»: Ակնարկ է վերև հիշված ծաղանքին:

Խաքանը թողեց երկրում իր որդուն և ինքը վերադարձավ: Սա պատգամ է ղրկում պարսից մարզպանին և Վիրո կաթողիկոսին գալ հնազանդվել իր իշխանությանը: Վիրո տատանվում էր, մանավանդ որ մարզպանը փախել էր Պարսկաստան, վախենում էր, որ պարսիկները նորեն իրեն պատժեն, եթե Շաթի կողմն անցնի: Ժողովուրդը ապաստանեց ամուր տեղերը: Վիրո ևս քաշվեց Արցախի լեռները: Դրությունը շատ ծանր էր. թշնամու սարսափը և մյուս կողմեն սովը հարկադրում էր մի հնար գտնել դուրս գալու անորոշ վիճակից: Չարաբերդ ամրոցում խորհուրդ արավ երկրի մեծամեծների հետ, ուր որոշվեց, որ կաթողիկոսը գնա անձամբ ներկայանալու խազար իշխանին: Շաթի բանակը Պարտավ քաղաքի մոտ էր: Մեծ նվերներով Վիրո ներկայացավ նրան, հաջողեց ամոքել գազանին և ազատել գերիներին[1]:

ԺԵ գլուխը կրում է Վիրոյի ինքնաձեռն ստորագրությունը, ուր նկարագրում է սովը և սոսկալի ժանտախտը:

ԺԶ գլխում պատմում է, թե խաքանը ղրկեց իր որդուն՝ Շաթին, զորավար Չորպան-Թարխանի առաջնորդությամբ հավաքելու հարկերը, որ տալիս էին աղվանցիք պարսիկներին: Շահր-Վարազ մի գունդ ղրկեց նրանց դեմ, բայց անհաջող: Խազարները հաղթեցին և վճռեցին ճեռք դնել նաև Հայոց երկրի վրա: Այս միջոցին լուր եկավ խաքանից, որ ընտանեկան կռիվներ կան և Շաթը պետք է անմիջապես վերադառնար: Հետաքրքրական է Շահր-Վարազի ճառը կամ հրապարակախոսությունը, ինչպես պատմագիրն է արտահայտվում, ուղղված իր զորքերին, ուր ակնարկում է, թե կարող է կտրել «զշառաւիղս Սասանականին» և ինքը թագավորել: Հիշում է պարծանքով, որ ինքն էր, որ վանեց «զորդին Հռոմելայ», այսինքն՝ կայսեր, և այժմ կարող է փշրել հյուսիսականներին: «Եւ զիա՞րդ ոչ փրկեաց զնոսա դիեցիկն իւրեանց, յոր յուսացեալն էին խաղալիկ ի ձեռին և գգուէին (և ո՛չ թե «գգուեն», ինչպես տպված է) ի գիրկս, որպէս մանուկ ընդոծնի իւրեանց»:

---

[1] Կաթողիկոսին օգնեցին թաքցրած գերիներին որոնելու խաքանի կողմեն նշանակված մարդիկ՝ «արս յայտնիս զորս **քնդիւնս** անուանեն»: Ընդգծած բառս, որքան մեզ հայտնի է, առանց մեկնության է: Մեզ թվում է, որ խազար բառ է և պաշտոնեության կոչում: Ավարաց խաքանի մի ներկայացուցիչը Խերսոն քաղաքում կոչվում էր **toundoumos**, Հուստինիանոս II-ի օրով 710 թվին, ըստ Թեոփանեսի (էջ 579): Մեզ թվում է, որ նույն բառն է, ինչ որ հայացրած քնդյուն, փոխանակ թ(ու)նդուն-ի:

Նիկեփոր պատրիարքը պատմում է, որ Ջերու խաքանը կայսեր ներկայացրեց, 626 թվի տեսակցության միջոցին, իր որդուն, որ շատ մատաղ էր. և կայսրն առավ նրան իր ծնկների վերա և փայփայեց: Թվում է, թե մեր պատմագիրը գիտե այս դեպքը, որին ակնարկում է Շահր-Վարազի բերանով: Խաքանի որդին Շաթն էր, և նրա հասցեին է ուղղված Շահր-Վարազ խոսքերը, թե ի՞նչ օգուտ տվավ կայսեր իր դիեցիկը (*ծծկեր երեխան - Պ. Հ.), որին գգվում էր որպես իր ընդոծնի մանուկ:*

Մեր պատմագիրը գիտե, որ արքայորդին մանուկ էր, ուստի գրում է՝ «Թողեալ զօրս պատերազմողս ի ձեռս որդւոյն իւրոյ Շաթայ հանդերձ դաստիարակօք» (Ը, գլ. ԺԴ):

Գիտե նաև, որ Շահր-Վարազ թագավորել է: Կավատ մեռավ 5 ամսից հետո (ըստ Սեբեոսի՝ 6)[1], *ուրեմն թագավորեց 628 թվի փետրվարի 24-ից մինչև օգոստոս: Նրա հաջորդ Արտաշիր, ըստ Թեոփանեսի*[2], *իշխեց միայն յոթ ամիս, բայց Միքայել Ասորի տալիս է նրան մի տարի և տասն ամիս*[3]*: Մեր պատմագիրն ևս, թվում է, նույն տեղեկությունն ունի: Արտաշրից հետո Շահր-Վարազ գրավեց գահը, թեև երկար չվայելեց և սպանվեց հազիվ երկու ամիս թագավորելուց հետո:*

Շահր-Վարազի «հրապարակախօսութիւնը» Կավատի օրով էր, ուրեմն 628 թվին, երբ նա տակավին չէր որոճում փառասիրական ճգտումներ: Պատմագիրը, անշուշտ, հետին թվով է նրա բերանը դնում, թե կարող է վերջ տալ Սասանյան տան և ինքը թագավորել:

Այսպես, քննած դրվագի, այսինքն՝ երկրորդ գրքի Ը-ԺԶ գլուխների, հիմը միանգամայն պատմական է: Ընտիր տեղեկությունները սակայն ազատ չեն ինչ-ինչ թերություններից: Կան հակաժամանակյա կետեր, կան շփոթություններ: Ակներև է, որ հեղինակը օգտվել է վստահելի աղբյուրներից և թերություններ, թերևս, վերագրելի են իրեն:

Այն կարծիքն էինք հայտնել, որ բուն աղբյուրը հավանորեն Վիրո կաթողիկոսի Հիշատակարանն է: Վենետիկի բանասերը ծառացել է և այս եզրադրության դեմ այն հիմամբ, որ Վիրո չէր կարող իրեն մասին գրել «այր հանճարեղ և իմաստուն»: Առարկություն պարզամիտ է: Օգտվել չի նշանակում արտագրել և մեր մտքից հեռու էր Վիրոյի գրության պատճեն համարել ինչ որ մեզ ավանդում է Կաղանկատվացին:

---

[1] **Սեբեոս**, էջ 20:

[2] **Theophanes**, p. 504.

[3] **Michel le Syrien**, Chronique, Editée pour la premiere fois et traduite en français par J.-B. Chabot, t. II, Paris, 1901, p. 410.

Մենք մնում ենք մեր կարծիքին: Վիրոյի մի Հիշատակարանը հասել է մեզ Կաղանկատվացու ընդօրինակությամբ. «Ես Վիրոյ՝ Աղվանից և Լփնաց և Չողայ կաթողիկոս քաղում ասել» և այլն (Բ, գլ. ԺԵ): Այստեղ Վիրո նկարագրում է սոսկալի սովը և ժանտ ցավը, որպես հետևանք պատերազմների: Վերնագրի մեջ հիշված է և «գերութիւն», բայց այս մասին ոչինչ չկա բնագրում: Հավանորեն Հիշատակարանը քերի է: Վիրո գլխավոր դերակատարն էր խաչանի արշավանքների միջոցին, անճամբ գնաց նորա մոտ և թեթևացրեց երկրի դրությունը: Հնարավո՞ր է, որ նա գրիչ առնե ձեռը ճառելու սովի և հիվանդության մասին, առանց խոսելու իր առաքելության վրա: Ի՞նչ առթիվ պիտի գրած լիներ երեք զորավարների մասին, ինչպես ինքն է արտահայտում՝ «սովն և սուրն և մահն», եթե ոչ խազարների արշավանքների և իր կատարած փրկարար դերի:

Այս դրվագի մեջ Կավատ ներկայացրած է համակրելի գծերով, մինչդեռ արյունարբու մնկն էլ նա էր, որ սպանեց ոչ միայն հորը, այլև բոլոր եղբայրներին, թվով 40: Սակայն Վիրոյի համար Կավատ մեծ բարերար էր, «ողորմած», որպես պատճառ իր ազատության: Կաղանկատվացու աղբյուրն այս կետում Վիրոյի ենթադրյալ գրությունն է:

Տեսանք, որ մեր պատմագիրը խոստանում է սկսել 625 թվից, բայց սկսում է 614 թվից: Մեզ թվում է, որ խոստումն առնված է Վիրոյի Հիշատակարանից: Վիրոյի նպատակն է եղել պատմել ինչ որ ինքն է կատարել 628 թվին խաչանի մոտ, և բնականորեն պետք է տեսել խոսել խազարների առաջին արշավանքի մասին, և սկսել ուրեմն 626 թվից:

Իսկ մեր պատմագիրն իր կողմից ավելացրել է Ժ և ԺԱ գլուխները, որ ծրագրից դուրս են: Այսպես միայն կարելի է մեկնել խոստումի և գործի մեջ եղած անհետևողականությունը:

Ա գրքի ԺԸ գլուխը քաղված է Եղիշեից, բայց մեր պատմագիրն ավելացրել է Վաչեի անունը, որ անճանոթ է Եղիշեին և Ղազարին: Երկրորդ գրքի Գ գլուխը Կորյունից է, բայց վերջին կտորը՝ Խորենացուց: Հետևապես և Վիրոյի Հիշատակարանից քաղած տեղեկություններին կարող էր կցել ուրիշները[1]:

Զարմանալի պիտի չթվե, որ [Կաղանկատվացին] Վիրոյին չէ հիշում որպես աղբյուր: Հիշյալ քաղվածների առթիվ ևս չենք հիշատակվում ո՛չ Եղիշե և ո՛չ Կորյուն: Բ գրքի ԻԹ գլուխը Իսրայելի մասին այլ աղբյուր չունի, քան Հովելի նամակը (գլ. Լ) նույն նյութի վերաբերյալ: Ինքը պատմագիրը՝ այնպես է պատմում, կարծես անկախ է Հովելից, սակայն բավական է համեմատել՝

[1] Կարծում ենք, որ նախարանի մեջ նահանջների հաշիվը և հայկական թվականը ևս մեր հեղինակի գիտուն կցվածքն է: Հաջորդ գլուխներում ժամանակն որոշվում է Խոսրովի և Արտաշրի թագավորության տարիներով:

համոզվելու, որ փաստացի մասն այնտեղից է առնված, միայն գրական համեմն է իրենը: Հովելի նամակը բռնում է երեք էջ, իսկ պատմագիրը նյութը ընդարձակել է գրական թարմատարներով մինչև կրկնակի ծավալը: Հավաոորեն նույն կերպով է վարվել և Վիրոյի Հիշատակարանի հետ: Հայր Հացունի նկատում է, որ որպես Հիշատակարան՝ շատ երկար է: Անշուշտ: Սակայն մեր առաջ Վիրոյի բնագիրը չէ, այլ մի շարադրություն՝ հիմնված Վիրոյի տեղեկություններների վերա:

ԺԵ գլխում, որ կրում է Վիրոյի անունը, ուշագրավ է հետևյալ տեղը. «Այլ օրինակ մերոց փորձութեանցս ոչ կարեմք գտանել, բայց միայն զաւերն Երուսաղէմի ի Վեսպասիանոսէ և ի Տիտոսէ»:

Այս շունչը զգալի է և Թ գլխի բացագանչության մեջ, «ո՜վ սքանչելի պատմութեանս..., որում ո՛չ համեմատ ո՛չ դարուցն առաջնոց նշանագիրք» և այլն, ինչպես և ԺԶ գլխի համանման համեմատության մեջ. «Մի՞թէ առաւել իցեն քան զընկղմիլն Փարաւոնի» և այլն:

Ուշագրավ են նաև Վիրոյի խոսքերը՝ ուղղված Չարաբերդի ժողովականներին. «Արք եղբարք, դուք ինքնին գիտէք **զնաբուածս** *մեծամեծս,* **զան և զդղրդումն** *անյագ և անդորրմ սրոյն, որ վասն մեղաց մերոց առաքեցաւ մեզ և* **ընկղմեաց** *յանկարծակի զանձինս մեր» (գլ. ԺԴ):*

Այս խոսքերը հիշեցնում են նախաբանի այն տողերը, որ քննեցինք վերև, գուցե և ազդել են տողերի հեղինակի վերա, եթե իրոք Վիրոյի Հիշատակարանից են առնված և ո՛չ թե մեր պատմագրի թելադրությունն է:

Խազար իշխանին ներկայանալու տեսարանը նկարագրված է ականատեսի գրչով և կարծում ենք արտագրված է Վիրոյի Հիշատակարանից: Պատմագիրը փոխել է միայն առաջին դեմքը երրորդի, պահելով պատահար սկզբի «տեսաք», եթե միայն սրբագրելու չէ «տեսան»: Այնուհետև ամեն տեղ երրորդ դեմքով է պատմում, ինչպես՝ «և իբրև մուծին զնոսա»..., *«և փոխեալ* **ի նոցանէ***»...,* *«նստել* **նոցա»**..., *«իջուցին* **զնոսա»** *և այլն: Մի տեղ կարդացվում է՝ «զընծայ... բարձեալ ի բազկաց* **մերոց»***: Սխալ ընթերցում է և անիմաստ: Վիրո բերել էր ընծաները՝ դարսած «կահավարից և սայլից» վերա, երբ մտնում են իշխանի մոտ, ընծաները առած բազուկների վերա, և հետո «փոխեալ ի նոցանէ զօժիտսն ի բազուկս* **իւրեանց***», այսինքն՝ ընդունում են ընծաները և միայն կաթողիկոսին ներկայացնում իշխանին: «Բարձեալ ի բազկաց* **մերոց»** *սխալ է. պետք է կարդալ՝ «բարձեալ ի բազկաց* **վերայ»***: Կաղանկատվացու այժմյան հրատարակությունը՝ Պարիզի, թե Մոսկվայի (7), վխտում է նման սխալ ընթերցումներով:*

Մեր տպավորությունն է, որ Կաղանկատվացին ինչ որ գիտե Վիրոյի գործունեության մասին՝ պարտական է Վիրոյի ենթադրյալ Հիշատակարանին: Այս է պատճառը, որ նա չգիտե, թե ե՞րբ և ի՞նչ հետագա պայմանների մեջ

մեռավ Վիրո: Նրա դրվատական խոսքերը կաթողիկոսի հասցեին հատուկ աղբյուր ունենալու պետք չունին: Սովորական գովեստ է. «հանճարեղ իմաստուն, զօրաւոր ի բանս» թե՛ թագավորների հետ խոսելու համար և թե՛ ռամիկների: «Մանաւանդ ի թարգմանութեան լեզուին Պարսից վարժեալ ամս քսան և հինգ ի դիպահաւոջ առ դրանն Խոսրովու». ուզում է ասել, որ պարսկերեն լավ սովորել էր 25 տարի պարսից արքունիքում մնալով: Այս թիվը ըընդունության պետք ունի, գոնե մեզ վստահություն չէ ներշնչում: Կասկածելի ենք համարում նաև, որ Վիրո մասնակցած լիներ Աղվանից իշխանների ապստամբական շարժումներին՝ ընդդեմ Խոսրովի: Թվում է, թե պատմագրի սոսկ ենթադրություն է, թե «յանցական գտաւ ընդ ապստամբողս» աշխարհին Աղվանից, մանավանդ որ ոչինչ չի հայտնում ապստամբության էության և նպատակի վերաբերյալ:

Վիրոյից հետո, Կաղանկատվացին հիշում է Ուխտանես, Եղիազար, Ներսես, Սիմեոն և Միքայել: Իսկ գրքի վերջում հայրապետական ցուցակի համաձայն, Վիրոյից հետո մինչև Ուխտանես հաջորդել են Զաքարիա և ապա Հովհան: Այնտեղ նշանակված են նաև կաթողիկոսության տարիները.

1. Վիրո 34 տարի
2. Զաքարիա 17 կամ 15 տարի[1]
3. Հովհան 25
4. Ուխտանես 12
5. Եղիազար 6
6. Ներսես 17 1/2
7. Սիմեոն 1 1/2
8. Միքայել 35

Այս թվերը ստուգելու համար հաստատուն կռվան ունինք Սիմեոնի կաթողիկոսության տարին: Սորա գումարած ժողովը, որի նպատակն էր «Շեռնարկ», այսինքն՝ դավանաբանական երաշխիք տալ, գումարվեց Հիջրի 85 թ.=704 հունվարի 14-705 հունվար 2 (Գ. գլ, Ը)[2]: Ժողովը գումարված է հավանորեն Սիմեոնի գահակալության տարին, 704 թվին: Այստեղից մեկնելով կստանանք նախորդ կաթողիկոսների համար հետևյալ տարիները մոտավորապես՝

Սիմեոն 704
Ներսես 686-704
Եղիազար 680-686

[1] Ինչպես ունի Կիրակոս Գանձակեցի («Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1858, էջ 114), որ արտագրում է կաթողիկոսների ցուցակը:

[2] Առընթեր տրված է և Հայկական թվական՝ 148–699, որ սխալ է և հետո ավելցրած է. հարազատ է հրոտից ամսվան հիշատակությունը – մայիս 704 թ.:

Ուխտանես 668-680
Հովհան 643-668
Զաքարիա 626-643, ավելի ճիշտ՝ 628-643
Վիրո 594-628:

Վիրոյի նախորդն էր Աբաս, որ գահակալեց 551 թվին և կառավարեց 44 տարի, ուրեմն 551-596 (Բ, գլ. Դ):

Կարծես հետևողական են թվերը: Սակայն Վիրոյի նկատմամբ գոնե ան-ընդունելի, քանի որ գիտենք, որ նա գերությունից դարձավ Կավատի օրով 628 թվին, և կենդանի էր տակավին 630 թվին: Հարկավ, կարելի է ուղղել այս անհարթությունը, հաշվելով Վիրոյի գահակալությունը Աբասից հետո՝ 596 թվից մինչև 630 թիվը:

Սակայն ուրիշ դժվարություն կա: Զաքարիա կաթողիկոսի մասին ցուցակը ունի հետևյալ տեղեկությունը. «Սա **յերաշխի** *առ զմեծ քաղաքն* **Պարտաւ, և աղօթիւք իւրովք զերծոյց** *ի գերութենէ զքաղաքս անձինս:* **Եւ ձեռնադրեաց եպիսկոպոս Սիւնեաց զՎրթանէս ոմն** *անուն յանհաւանութեան հայոց»*[1]:

Արդ, Սյունյաց եպիսկոպոս Վրթանես ապրում էր VI դարու երկրորդ կե-սին, ինչպես երևում է Հովհաննես Գաբեղենացի կաթողիկոսի Թղթից՝ ուղղ-ված այս եպիսկոպոսին[2]: *Հովհաննես կաթողիկոս մեռավ Կ. Պոլիս 574 թվին: Հետևաբար Վրթանես 574 թվին արդեն եպիսկոպոս էր և ուրեմն Զա-քարիա Աղվանից կաթողիկոսն ևս պետք է գահի վերա լիներ այդ ժամանակ-ները, այն ինչ հայտնի է Գաբեղենացու մի ուրիշ Թղթից, որ այդ ժամանակ Աղվանից կաթողիկոսն էր Աբաս*[3]:

Մի ուրիշ անպատեհություն: Կաղանկատվացին Բ գրքի Ժ գլխի մեջ հի-շում է «քահանայ ոմն անուն Զաքարիա, այր սուրբ, որ էր վանական Պար-տաւայ եկեղեցւոյն, հեզ և հանդարտ, որ եղ զանձն իւր ի վերայ նոցա և երդ-մամբ, ազգի ազգի հնարիւք զերծոյց զքաղաքն անձինս քրիստոնէից՝ աղօ-թիւք իւրովք երաշխաւորեալ զնոսա, նաև զՀրէից և զեհեթանոսաց: Ուստի յե-տոյ գովեցաւ գործ նորա և վկայեալ յամենեցուն կարգեցաւ յեպիսկոպոսու-թիւն աթոռոյն Աղվանից»:

Անտարակույս է, որ խոսքը նույն Զաքարիայի մասին է և ցուցակը, տե-ղեկությունը քաղված են այստեղից: Սակայն Պարտավի այս քահանան գործում էր 624 թվին, ըստ մեր պատմագրի, և գերիները Հերակլի բերած գե-

---

[1] Առնված է Մովսես Կաղանկատվացու Գ գրքի ԻԳ գլխից, էջ 73:

[2] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 78:

[3] Անդ, էջ 81 և որտեղից օրինակել է Կաղանկատվացի, Բ գիրք, գլ. Ե:

րիներն էին: Թեոփանես հավատացնում է, որ Հերակլ՝ Ատրպատականի առաջին արշավանքից, 623 թվին, վերադարձավ ճմերելու Աղվանք, բերելով հետը 50 հազար գերի, որոնց մարդասիրաբար ազատ արձակեց[1]: *Հետևաբար Զաքարիայի կաթողիկոսությունը պետք է ավելի ուշ լիներ, Վիրոյից հետո: Այս դեպքում նա չէր կարող Վրթանեսի ճեռնադրողը լինել: Պետք է հրաժարիլ այս տեղեկությունից:*

Պատմության մեջ Զաքարիա և Հովհան քնավ չեն հիշվում և Ուխտանես գահի վերա է Կոստանդի 19-րդ տարին, 660 թվին, այն ինչ ցուցակի տվյալների համաձայն, միայն 668 թվին կարող էր գահակալած լինել: Փորձեր անել հաշտեցնելու հակասական տեղեկությունները անօգուտ է:

Հավանական է, որ Վիրո վախճանած լինի 630 թվի վերջերը կամ 631 թվին, ամեն պարագային Շաթի հեռանալուց քիչ հետո, որով և կբացատրվի, որ իր Հիշատակարանի մեջ ակնարկ չկա 630 թվից հետո կատարված դեպքերի մասին:

Ինչ վերաբերում է Վիրոյի գերության, 25 տարին չափազանցրած է: Պատմագրի հաշվով գերությունը տեղի պիտի ունեցած լինի (628-25=)603 թվին:

Սակայն քաղաքական ընդհանուր կացությունը հիմ չէ տալիս ենթադրելու որևէ ապստամբական շարժում Աղվանքում, ոչ էլ Հայաստանում: Գիտենք, որ Խոսրով գերեց 611 թվին Հովհան կաթողիկոսին, որ Հունական Հայաստանի հովիվ էր: Ի նկատ առնելով, որ Աղվանք այդ միջոցին քաղկեդոնական հակումներ ունեին, թերևս Վիրո ևս տուժած լինի և վիճակված Հովհանի բախտին:

Գ


Անցնենք Ջևանշերի պատմության, որ բռնում է նույն երկրորդ գրքի ԺԷ-ԼԵ գլուխները: Հայր Հացունի կարծում է, որ Կաղանկատվացին սկսել է և վերջացրել իր գործը 628 թվին: Բայց «Ջևանշերի փառքը արծարծել է պատմագրի հոգին», և նա վերստին լծվել է աշխատանքի երեսնամյա դադարից հետո, 670 թվականին, գրելու հերոսի քաջագործությունները: Եվ զարմանալի է, որ «ոգևորված» պատմագիրը վայր է դրել գրիչը, երբ դեռ հերոսը կենդանի էր, և ավարտել իր գովքը, երկար կյանք մաղթելով փառավոր իշխանին: Ի՞նչն էր արգելել տանել հերոսին մինչև գերեզման: Արդյո՞ք պատմագրի մահը, հայր Հացունին այս մասին չէ մտածել:

Այս ավելի քան տարօրինակ կարծիքը ջրելու անվրեպ միջոցն է պատ-

[1] **Theophanes**, p. 475.

մական քննությունը, որին կենքարկենք պատմագրի հաղորդած տեղեկությունները հերոս Ջևանշերի «փառքի» վերաբերյալ:

Ո՞վ էր Ջևանշերը: Հատվածի սկիզբը, ծէ գլխի մեջ, պատմագիրը հայտարարում է, որ գտել է նրա ծագումը «յստոյգ և ի բուն պատմագրաց»: Պատմում է, որ Խոսրով II գահ բարձրանալով կոտորեց իր Բնդո և Վստամ քեռիներին և բոլոր ազգականներին, մոտ 60 հոգի: Միայն մի հոգի, ոմն Միհրան, «առեալ երդս իբրև երեսուն հազար», փախավ Աղվանք, անցնելու Խազարաց աշխարհը: Պարտավ հասած՝ ստացավ թագավորից ներում և թույլտվություն հաստատվելու Աղվանք, փոխանակ գնալու թշնամի խազարների մոտ: Միհրան գնաց Գարդման, շինեց Միհրավան քաղաքը, դավով սպանեց տեղական տասներկու իշխաններին և տիրացավ երկրին: Մեռավ թողնելով մի որդի՝ Արամայել, սրա որդին էր Վարդ, իսկ Վարդի որդին՝ Վարդան Քաջ, շինող Գարդմանա բերդի: Քաջը Վարդան ճաշի կանչեց Եոանշահիկ իշխաններին, սպանեց բոլորին, մոտ 60 հոգի, խնայեց միայն Զառմիհր Եոանշահիկին, որ իր փեսան էր (8): Այս Վարդանի թոռնորդին էր Ջևանշեր.



Խոսրով գահակալեց 590 թվին: Ջևանշեր ծնած պետք է լինի մոտավորապես, ինչպես կտեսնենք, 615 թվին: Մեր պատմագիրը 590-615 թվականներին, ուրեմն 25 տարվան մեջ, հաշվում է յոթն սերունդ, Միհրանից մինչև իր թոռնորդու թոռնորդին Ջևանշեր: Կատարյալ անհեթեթություն:

Առաջին գրքում գլ. ԻԶ կա Աղվանի ժողովի արձանագրությունն, ուր մասնակցողների թվում գտնվում է նաև Գարդմանի տեր՝ Քաջն Վարդան: Ժողովը գումարված է Վաչագան թագավորի հրամանով, իսկ սա գահ էր բարձրա-

ցել, ինչպես պատմագիրն է հայտնում, Վաղարշ թագավորի օրով (484-488): Ասել է թե, 590 թվին Աղվանք ոտ կոխած Միհրան պարսիկի թոռնորդին Քաջը Վարդան ապրում էր գրեթե մի դար առաջ, քան իր նախահայրը: Անհրևակայելի անհեթեթություն:

Եկվոր տոհմը գրավում է երկիրը՝ ոչնչացնելով նախկին տերերին, որոնք սերում էին Առանից և կոչվում Հայկազյանց ազգ Եռանշահիկ (իմա՝ Առանշահիկ): Հիշելով այս պարագան, պատմագիրն ավելացնում է՝ «**զոր վերագոյն գրեցաք ի մատենիս**», *ակնարկելով Ա գրքի ԺԵ գլուխը, ուր թված են Հայկազյանց սերունդի տասն թագավորները: Հետևաբար կասկած չի կարող լինել, որ* **Միհրանի պատմությունը պատկանում է Կաղանկատվացու գրչին**, *այն հեղինակի, որ գրել է Ա գիրքը:*

Արդ, հնարավո՞ր է, որ այս անհեթեթ պատմության հեղինակը լինի ժամանակակից Միհրանի: Խելք կտրելու բա՞ն է, որ 628 թվին ապրող մի հեղինակ այսքան խելար վերաբերում ունենա իր ժամանակակից նորեկ տոհմի ծագման խնդրին: Ուշագրավ է նաև, որ ենթադրյալ ժամանակակից պատմագիրը պետք է ունեցել դիմելու «ստոյգ և բուն» պատմագիրների՝ մեզ հաղորդելու հակատրամաբանական մի առասպել:

Իրավունք ունինք հետևցնելու, որ պատմագիրը ժամանակակից չէ, և չէ գրել իր գործը ո՛չ 628 և ո՛չ 670 թվին: Միայն դարերով հեռու կանգնած գրչին ներելի է մի այդպիսի անգիտակից վերաբերում դեպի անցյալը. մի միջակ հավաքող, որ ընդօրինակել է ձեռքն ընկած նյութերը՝ առանց քննության և քննելու ընդունակության:

ԺԸ գլխի մեջ խոսքը արաբական արշավանքների մասին է: Հազկերտ թագավորին օգնության են վազում հպատակ աշխարհների տերերը: Վարազ-Գրիգոր՝ Ջևանշերի հայրը, ևս պատրաստ է իր նպաստը բերելու, որպես ծնունդ «Արտաշրական տոհմի», այսինքն՝ Սասանյանների նախահոր՝ Արտաշիր Պապականի սերնդի: Հեղինակն ուրեմն նույնն է, որ պատմեց մեզ Միհրանյան ավանդությունը:

Վարազ-Գրիգոր ավելի հարմար է համարում դրկել իր երկրորդ որդուն՝ Ջևանշերին «խրոխտ և սիգաճեմ, չքնաղագեղ ունելով տիպ»: Երեք հազար զորքով Ջևանշեր գնում է ներկայանում Ռոստոմ զորավարին «նախքան զիշխանն Սիւնեաց և զսպարապետն Հայոց» և ընդունվում «իբրև զեղբայր կամ զորդի» և «ըղձալի ամենեցուն»:

Ռոստոմ բոլոր ուժերի գլուխն անցած մեկնում է Հազկերտի մոտ՝ Տիզբոն: Մանուկ Ջևանշերին ներկայացնում թագավորին, որ ձեռքը գլխին դնելով գովեց և կոչեց սպարապետ Աղվանից:

Զորքն անցավ Դկղաք (Տիգրիս) գետը, հասավ Վեհկավատ գավառ և բանակեց «յայնկոյս Մեռեալն ջրոյ»: Թեթև ընդհարումից հետո, մեհեկան

ամսին, Քրիստոսի ծննդյան օրը, Ռոստոմ 30 հազար հեծյալ և 10 հազար հետևակ զորքով ճակատեց Հագարու որդվոց դեմ, որ «եկեալ ի Կատշաձէ» բազմաթիվ հեծյալ և 20 հազար հետևակ զորքով նախահարձակ եղավ պարսից վերա:

Աղվանից սպարապետը երկու հակառակորդ սպանեց, բայց ստացավ երեք վերք և իր ձին՝ չորս խոց, և արյունաշաղախ անցավ գետը և տեսնելով, որ զորքը պարտված է՝ շտապեց արքունի դուռը: Հազկերտ հրամայեց «տալ նմա ապարանս և արքունի բժշկաց կալ առ նմա»: Երբ ողջացավ՝ մտավ թագավորի մոտ. սա ձեռքը դրեց Ջևանշերի գլխին և գովքն արեց բոլորի առաջ և տվավ նրան զորավարական նշանակ և փող, երկու նիզակ ոսկի, երկու վահան ոսկեքանդակ, որ նրա առաջ միշտ չրջեցնեն, այլ և բարձր դասելով բոլորից, կապեց նրա մեջքին «գօտի ոսկի ընդելուզեալ մարգարտով, և սուսեր ոսկեսարայն, ապարանջանս բազկացն, և պսակ ցանկալի ի գլուխ նորա, ոսկեսարեաց եռուն նմա զանկապանս մարգարտով և գումարտակ նոյնգունակ շուրջ զպարանոցաւն, ագուցին նմա արջմաթար ստորս չորիւք դրօշակօք և գրատս սնդոյ, մետաքսառէջս և ոսկեթելան փարուազով»: Թագավորը նրան շնորհեց նաև «գիւղաստանեայս և գետս ձկանց»:

Ջևանշեր գրավում է Խոռազատ զորավարի ուշադրությունը, երբ քաջ միջամտությամբ վերջ է դնում Ատրպատականի և Մայի զորավարների միջև ծագած ընդհարումներին: Արաբները պաշարում են Տիզբոն՝ «ամիսս վեց», Խոռազատ և Ջևանշեր շարժում են նրանց դեմ: Ջևանշեր երեք հազարով հետ է մղում թշնամուն գետի այն կողմ և թույլ չէ տալիս Դկղաք գետն անցնելու «զամիսս վեց», մինչև որ Հազկերտ թագավորին փախցնում են Դաստակերտ և այնտեղից Բեկղադ: Արաբները հետապնդում են, Ջևանշերը քաջությամբ կռվում է և թշնամու գլուխները կտրած՝ բերում ճգում է թագավորի առաջ: Պարսիկները հաղթում են գլխավոր ճակատում: Եվ Ջևանշեր յոթն տարի կռվելուց հետո, «տասն և մի դժնդակ վէրս յանճն առեալ» գալիս է Ատրպատական: Պարսիկ զորավարը առաջարկում է իր դուստրը այնքան հռչակված Ջևանշերին, բայց սա մերժում է «յանօրինացս առնուլ կին» և վերադառնում իր հոր մոտ՝ Աղվանք: Այս առթիվ կռիվ է ծագում իր և պարսիկ զորավարի մեջ, հաղթանակում է Ջևանշեր:

Հազկերտի 20-րդ տարին կործանվում է պարսից պետությունը՝ հագարացվոց տիրապետության երեսուն և մի տարին և Ջևանշերի տասնևհինգ ամ սպարապետության (Բ, գլ. ԺԹ):

Ջտենք պատմական հատիկներն այս վիպական որոմներից: Ռոստոմ և Խոռոխազատ (և ո՛չ Խոռազատ) անունները հայտնի են Սեբեոսի պատմությունից: Ռոստոմ, Ատրպատականի իշխան, գնաց արաբների դեմ՝ Հազկերտի հրամանով: Նրա հետ էին Մուշեղ Մամիկոնյան երեք հազար և Սյունյաց

Գրիգոր իշխանը հազար մարդով: Ճակատամարտը տեղի ունեցավ, ըստ Սեբեոսի, Հերթիճան գյուղի մոտ: Պարսից զորքը պարտվեց և զորավարը սպանվեց, զոհվեցին նաև Մուշեղ և Գրիգոր[1]: *Հույն և արաբ աղբյուրները կոչում են այս ճակատը Կադեսիայի ճակատ: Կադեսիա (**Kadesiya**) գյուղ է այժմյան Կուֆա քաղաքի մոտ և Կադեսիայի հարևան է Հերա գյուղը, որտեղից հետևցնելու է, որ Հերթիճան նույնն է ինչ որ Հերա և որ կռիվը տեղի է ունեցել երկու գյուղերի սահմանում:*

Կադեսիայի հաջողությունից հետո արաբները խուժեցին Տիզբոնի վերա և առան վեցամսյա պաշարումից հետո: Նահանջող պարսիկ ուժերը մի երկրորդ ընդհարում ունեցան Ջալուլա տեղում հետապնդող արաբների հետ: Վճռական ճակատը խմբվեց Նեհավենդի մոտ, որ որոշեց ընդմիշտ Սասանյան պետության բախտը:

Տարաբախտաբար այս երեք գլխավոր մարտերի ժամանակը ճշտիվ հայտնի չէ: Տարաձայնությունները գալիս են հին մատենագիրներից, և նոր պատմաբանները դժվարանում են հաշտեցնել հակասական տեղեկությունները: Հավանորեն, Կադեսիայի կռիվը վերաբերում է 637 թվին, Տիզբոնի պաշարումը և Ջալիլայի ճակատը ևս նույն տարին, իսկ Նեհավենդի պարտությունը՝ 642 թվին[2]:

---

[1] **Սեբեոս**, էջ 107:

[2] Արաբական վկայությամբ, Կադեսիայի կռիվը տեղի ունեցավ Դամասկոսի գրավումից մեկ ամիս հետո: Դամասկոսի գրավումը հետևից Յարմուկի ճակատին, որի համար տակավին Մասուդի (**Macoudi**, Les prairies d'or, texte et trad. par C.Barbier de Meynard et Pavet de Courteille, t. IV, Paris, 1868, p. 224) երեք տարբերիվ գիտե՝ Հիջրի 14, 15 և անգամ 16: Մենք գերադասում ենք 15 Հիջրի, ահա ինչու: Թեոփանես (էջ 518) պատմում է 635 տարվան տակ, որ Վահան (նկատենք, որ սա հայ էր և ոչ պարսիկ, ինչպես կրկնում են գիտնականները կույր հետևությամբ միմյանց) և Թեոդորոս Սիկելլար ընդհարում ունեցան արաբների հետ և պարտվեցին հուլիսի 23, երեքշաբթի օրը, և նույն տարին քիչ հետո հաղթվեցին Յարմուկի մոտ: Թեոփանեսի 635 տարին սխալ է, փոխանակ 636-ի, որովհետև միմիայն 636 թվին է, որ հուլիսի 23-ն ընկնում է երեքշաբթի օր: Ահա մի հաստատում կռվան: Հետևաբար Յարմուկի կռիվը ևս նույն 636 թվին էր: Տաբարի (''Chronique de Abou-Djafar-Mohammed-ben-Djarir-ben-Yezid Tabari'', par H.Zotenberg, t. III, Paris, 1870, գլ. 29) վկայում է, որ Յարմուկի կռիվն եղավ շաբաթ օր, 28 ջումադա ամիս Հիջրի 13:

Տարեթիվը սխալ է, բայց օրն ու ամսաթիվը ճիշտ: Արդարև, 636 թվին 28 ջումադա=է օգոստոսի 10 և շաբաթ օր (635 թվի նույն ամսաթիվը =21 օգոստոսի, որ էր կիրակի և 634 սեպտեմբեր 2, որ էր ուրբաթ): Յարմուկից հետո, ըստ նույն Տաբարիի (գլ. 33), արաբները գնացին Դամասկոսի վերա և առան վեց (ըստ այլոց երկու) ամիս պաշարելուց հետո, հետևապես 637 թ. փետրվարի 10 (կամ 636 թ. հոկտեմբեր 10): Դամասկոսից օգնական զորք ղրկեցին Կադեսիա. զորքը տեղ հասավ Դամասկոսի առումից մի ամիս հետո, ուրեմն մարտի 12, 637 թ. (կամ նոյեմբեր 10, 636 թ.):

Տաբարիի ասելով, Կադեսիա անկավ մուհառամ ամսին (Հիջրի 14 սխալ է): Արդ, 637 թվին մուհառամ սկսում է փետրվար 2 և վերջանում մարտ 4, որ միանգամայն հաստատում է մարտ 12 թվականը: Տարբերությունը չնչին է և հասկանալի:

Այս կռիվների մասին Կաղանկատվացին ցանցառ և շփոթ ծանոթություն ունի: Սեբեոսից գիտե, որ պարսից զորավարը Ռոստոմն էր և նրան զինակից էին Հայոց սպարապետը՝ Մուշեղ և Սյունյաց իշխանը՝ Գրիգոր: Ջևանշեր չէ հիշված, բայց Աղվանից պատմագիրը կուզե, որ նա էլ մասնակից լինի և անգամ ավելի կանուխ գնացած Ռոստոմի մոտ, քան իշխանները: Պատրաստ է հնարել նրա համար քաջության տեսարաններ: Սեբեոս պատմում է, որ արաբները պաշարել էին Տիգրոն, երբ վերա հասավ Ռոստոմ, և արաբները ստիպված նահանջեցին՝ անցնելով Տիգրիսի մյուս ափը: Ռոստոմ հետապընդեց: Արաբները գնացին Հերքիճան, այսինքն՝ անցան նաև Եփրատ և բանակեցին արևմտյան ափին, Կադեսիայի մոտ: Կռիվն սկսվեց և Ռոստոմ, Մուշեղ և Գրիգոր ընկան պատերազմի դաշտում:

Կաղանկատվացու տեղեկությամբ, Ռոստոմ և Ջևանշեր անցան Դկղաք, հասան Վեհկավատ գավառ և բանակեցին «յայնկոյս Մեռեալն ջրոյ»: Ծնընդյան տոնին ճակատեցին ընդդեմ հագարացվոց, որ «եկեալ ի Կատշանէ» նախահարձակ եղան: Պարսիկները պարտվեցին և Ջևանշեր ստացավ «երիս վէրս», իր ձին՝ «չորս վերք», և փութաց Հազկերտ թագավորի մոտ, որ վարձատրեց նորան մեծամեծ, գրեթե առասպելական պատիվներով:

Կարելի էր ընդունիլ, որ «Մեռեալ ջուր» ասելով պատմագիրն հասկանում է Եփրատի ճահճուտները և ոչ Մեռյալ ծով, և որ Կատշան (=Կատիշան) ասորական հնչյուն է Կադեսիայի և ոչ թե Պարսկաստանի՝ Կատաշան կամ Գաղշան գավառն է[1] *(մանավանդ եթե որևէ հիմ լիներ կարդալու՝ Կաշայե որպես ուղղական և ոչ բացառական): Սակայն այս բոլորը կլինեն լոկ ճիգեր պաշտպանելու մեր պատմագրի վարկը: Հունվարի 6 որպես կռվի օր հետաքրքրական ցուցում է, բայց արժեքը նսեմանում է նրանով, որ Ռոստոմ ճակատած համարվում է «ի Կատշանէ եկեալ» զորքի դեմ, որով նենթադրվում է, թե Կադեսիայի ճակատը հունվարի տոնից առաջ է եղել:*

Հազիվ կարիք կա նկատելու, որ Ջևանշերին շռայլած ընծաները վիպական պաճուճանք են՝ զուրկ պատմական ստուգությունից:

Կադեսիայի հաղթությունից հետո զորքը հարձակվեց մայրաքաղաքի՝ Տիգրոնի վերա, և հետապնդեց պարսիկ նահանջող զորքը և բանակը զարկեց Ջալուլա կոչված տեղում (Բաղդադից հյուսիս Դիալա գետի վերա): Տաբարի վկայում է (գլ. 49), որ վճռական բախումը կայացավ վեց ամսից հետո, երբ պարսիկները պարտված փախան դեպի Հոլվան, Հիջրի 16, զուլքադա ամիս՝ նոյեմբերի 23-դեկտեմբերի 23: Վերջին մեծ ճակատի՝ Նեհավենդի տարեթիվը ավելի հաստատ է: Սեբեոս (էջ 112) դնում է Կոստանդի առաջին և Հազկերտի 10-րդ տարին =642 թվականին:

[1] Խորենացու Աշխարհագրության («Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», Վենետիկ, 1881) Կատաշան (էջ 40) և Գաղշան (էջ 42)՝ **Կատիշ** կոչված ժողովրդի անունեն, հավանորեն այժմյան Կաշան:

Խոռոխազատի մասին ևս այլ ասելիք չունի, քան ինչ գիտե Սեբեոսից: Սա ասում է, որ Ռոստոմի մահից հետո «մնացորդք զաւրացն Պարսից յԱտրպատական գումարեալ» ընտրեցին Խոռոխազատ, որ շտապեց գնալ Տիգրոն փրկելու թագավորին, բնակիչներին, նաև պետական գանձը: Սակայն արաբները խուժեցին մայրաքաղաք և հալածեցին պարսիկ զորավարին[1]:

Կաղանկատվացին այլափոխում է դեպքը, Ջևանշերին մի նոր և պատվավոր դեր վերապահելու նպատակով: Որպես թե Ատրպատական երկու պարսիկ զորավար գժտվեցին և Ջևանշեր հաջողեց խռովության վերջ տալ: Խոռոխազատ գոհ՝ առավ հետը Ջևանշերին և գնաց Տիգրոնի վերա, որ պաշարված էր թշնամիներեն[2]: *Ջևանշեր խոյացավ երեք հազար մարդով պաշարողների վերա և վանեց նրանց Տիգրիսի մյուս ափը, թույլ չտվավ նորեն գետն անցնել և հարձակվել քաղաքի վերա, մինչև որ Հազկերտ փախչեր Դաստակերտ և Բեկղաղ:*

Կադեսիայի կռվից հետո զինվորական խորհուրդ կայացավ Տիգրոնում, որի հետևանքով Հազկերտ հեռացավ Հոլվան, իսկ զորքերը քաշվեցին դեպի հյուսիս և Ջալուլա, փորձեցին կասել թշնամու առաջխաղացությունը: Հետևապես, Տիգրոնի պաշտպանությունը, և այն էլ Ջևանշերի օգնությամբ, չի հաստատվում և թվում է, թե արձագանք է Ռոստոմի և իշխանների վերև հիշած դեպքին: Դաստակերտ և Բեկղաղ տեղերի հիշատակությունը ուշագրավ է, բայց երաշխիք չէ պատմվածի ստուգության: Թեոփանեսից հայտնի է, որ Տիգրոնից հյուսիս կային մի շարք դաստակերտներ, այսինքն՝ արքայական դղյակներ, որոնց թվում Թեոփանես հիշում է **Dastagerd և Beklali**[3] *(**Դաստակերտ** հատուկ անուն է, ուրեմն պետք է գրել գլխատառով և ոչ դաստակերտ, ինչպես տպագիրն ունի) և Բեկղաղ: Դաստակերտը Խոսրովի սիրելի նստոցն էր: Մի գուշակության համաձայն, Տիգրոն աղետաբեր էր նրա համար, ուստի արքայից արքան խուսափում էր Տիգրոնից և ապրում էր Դաստակերտ: Հերակլ կայսր 627 թվի արշավանքին մտավ Բեկղաղ և Դաստակերտ. շքեղ պալատներ էին հոյակապ պարտեզներով, լի ամեն տեսակ կենդանիներով՝ փղից մինչև թռչուն: Դեկտեմբեր 25 Դաստակերտ էր կայսրը, լուր առավ, որ Խոսրով փախել է Տիգրոն և այնտեղից Սելևկիա: Այս եր-*

---

[1] **Սեբեոս**, էջ 107:

[2] Ժամանակը մնում է անորոշ՝ թվագիրը աղավաղված լինելով. ձեռագիրն ունի՝ «յութն ամառս Ցազկերտի», հրատարակիչը ուղղել է «յութերորդ ամի», այսինքն՝ 640 թվին: Եթե սրբագրությունն ընդունելի է, պատմագիրը սխալ է: Տիգրոնի պաշարումը եղավ 637 թվին, Կադեսիայի ճակատից անմիջապես հետո:

[3] **Theophanes**, Chronographia, p. 492- 499.

*կու քաղաքները գտնվում էին Տիգրիսի ձախ և աջ ափերին դեմ առ դեմ, ուստի և արաբները անվանում են Մադային («զույգ քաղաք»): Թեոփանես ասում է, որ Սելևկիայի պարսկերեն անունն է **Couedeser**, որ է Սերեոսի և Կաղանկատվացու Վեհ-Արտաշիր (լավ է կարդալ **Bouedeser** կամ լավ ևս **Bourdeser=Beh-Ardašir**): Խոսրով հավաքել էր իր վերջին ուժերը և ղրկել Արբա գետի (որ Տուրնա = Դիալայի մի ճյուղն է հավանորեն) կամուրջները քակել և չթողնել հերակլին անցնել գետը: Հերակլ կողոպտեց Դաստակերտի և Բեկղաղի հարստությունները, փչացրեց կենդանանոցները և հառաջացավ դեպի Տիզբոն: Տեսնելով, որ Արբա գետի կամուրջները քանդված են և գետն անցնելու հնար չկա, հետ դարձավ դեպի Շիարզուր:*

Արդ, մեզ թվում է, որ Կաղանկատվացին գիտե Դաստակերտ և Բեկղաղ հերակլի պատմությունից, թերևս հիշված են եղել մի կերպ Վիրոյի հիշատակարանում: Մեր պատմագիրը օգտվել է այդ տեղեկությունից և հերյուրել մի նոր տեսարան՝ ի փառս հերոս Ջևանշերի: Ստորև կբերենք և մի ուրիշ կարևոր կետ առնված հերակլի կյանքից և վերագրած Կոստանդնի: Այս պարագան է, որ թելադրում է մեզ Դաստակերտ-Բեկղաղի նման բացատրությունը:

Ջևանշեր կռվեց յոթն տարի, ստացավ տասնևմեկ վերք և եկավ Ատրպատական և ապա Աղվանք: Ասել է, թե վերադարձավ (637+7=) 644 թվին: Գուցե պետք է կարդալ (փոխ. զամս եօթն) *ե տարի, ուրեմն մինչև 642, այսինքն՝ Նեհավենդի վճռական ճակատը, որից հետո պարսիկ ուժերը ցրվեցին և Ջևանշերին այլ բան չէր մնում, քան վերադառնալ իր հայրենիք:*

Լուրջ չէ և այն պատճառը, որ հակադրում է Ջևանշերին բաժանվել Խոռոխազատից: Իբրև թե սա առաջարկում է իր քրոջ Ջևանշերին, որ մերժում է, չկամենալով «զոք յանօրինացն առնուլ կին» (9): Լուրջ չենք համարում այս պարագան, որովհետև հետագայում նույն Ջևանշեր հռժարեց առնել կնության ավելի անօրենի՝ Հոնաց իշխանի դուստրը:

Պարսիկ իշխանը վիրավորված՝ զորք է ղրկում «ապստամբ» Ջևանշերի դեմ՝ ոմն Դելմնազգի (ո՛չ Գելմնազգի) զորավարի հրամանատարության ներքո: Ջևանշեր հաղթում է և կողոպուտով վերադառնում պատերազմի դաշտից: Դարձյալ պարսիկները գալիս են, մտնում Պերոզ քաղաքը, այսինքն՝ Պերոզապատ կամ Պարտավ և գերում են Ջևանշերի մորը և եղբորը: Այս անգամ կռիվը տեղի է ունենում Կասպիճան (Կամբեճան) գավառում, որ Կուրի ձախ ափին է, մոտ վրաց սահմաններին: Պատմագիրը չի ուզում խոստովանել, որ թշնամին հալածել էր Աղվանից հերոսին մինչև Կամբեճան: Ջևանշեր վերք է ստանում, ապաստանում վրաց Ատրներսեհ իշխանի մոտ և օգնություն ստանալով՝ վերադառնում է Ուտի գավառը, ուր գտնվում էր Պերոզապատ և կոտորում պարսիկներին: Շակաշեն գավառում, արդի

Գանձակի շրջան, ուրեմն ջարդ է տալիս թշնամուն: Մյուս ջարդերի մասին «անտեղի է ասել», ուրեմն ավելորդ է համարում պատմել: Վրաց իշխանը և Հայոց նախարարները խորհում էին նրան փեսայացնել, բայց Ջևանշեր գերադասում է առնել Սյունյաց իշխանի դուստրը՝ Արուիճան տոհմեն:

Պարսից զորավարը դիմում է Սյունյաց իշխանի միջնորդության և հաշտվում Ջևանշերի հետ, կնքելով սեր և խաղաղություն: Ջևանշեր հետ է ստանում իր գերված մորն ու եղբորը:

Աղվանից իշխանը տեսնելով, որ պարսից պետությունը քայքայվում է և պարսիկ իշխանները ձգտում են անկախության, ինքն ևս խորհում է «արքայական շուք» տալ իր իշխանության: Պարսից զորագլուխը խեթ է նայում Ջևանշերի այս ձգտումի վերա, և ձերբակալում է նենգորեն նորա հորը: Ջևանշեր հարձակվում է խիզախորեն պարսից վերա Պերոզ-Կավատ քաղաքում, հաղթում և ազատում իր հորը:

Հազկերտի քսաներորդ տարին պարսից պետությունը կործանվում է. հագարացվոց տիրապետության երեսուն և մի տարին էր և Ջևանշերի սպարապետության տասնևհինգ:

Այնուհետև տաճիկները ասպատակում են հյուսիսային և արևելյան կողմերը: Ջևանշեր անցնում է գետը (Կուր) և պատերազմում, «զի զիւր զհայրն ի նոցանէ ևս թափեսցէ», բայց հայրը «գնայր կամաւորաբար ի թշնամիսն». Ջևանշեր համաձայն է Հայոց զորավարի հետ՝ անցնելու կայսեր կողմը (Բ, գլ. ԺԹ):

Արաբական ճակատից վերադառնալուց հետո 642 թվին, մինչև Սասանյանների անկումը՝ 652 թիվը, տասն տարվան ընթացքում, Ջևանշերի գործունեությունը ամփոփվում է քանի մի ընդհարումների մեջ Ատրպատականի իշխանի «քաջերի» հետ՝ մի աննշանակ առթիվ: Զորավարների անուն չկա, հիշվում է «Դելմնազգի ոմն հեղինակ», այսինքն՝ Դելումնացի մի զորավար, առանց անունը տալու: Պետք է կարծել, որ սրանք ղրկված են Խոռոխազատի կողմեն: Սակայն այս զորավարը, ինչպես երևում է Սեբեոսից, բաժանվում է Հազկերտից և հնազանդվում է արաբներին. «Եւ իշխանն Մարաց, զորմէ վերագոյն ասացի եթէ գնաց յարևելս առ արքայն իւրեանց, ապստամբեալ ի տեղի մի ամրացաւ և խնդրեաց երդումն յԻսմայէլացւոցն և գնաց յանապատն ի ծառայութիւն Իսմայէլացւոցն[1]»: *Ո՞վ է այս իշխանն մարաց, որի մասին վերագոյն խոսել է պատմագիրը, բայց «վերագոյն» այդ մասին հիշատակություն չկա: Նեհավենդի կռիվը Սեբեոսի մոտ այն կռիվն է, որ նա կոչում է «պատերազմ ի Մարսս գաւառի», ինչպես պարզ հետևում է տարեթվից՝ «յառաջնում ամի Կոստանդեայ» (641+11=) 652 և «յամի տասներորդի*

[1] **Սեբեոս**, էջ 137:

Ցազկերտի» (532+10=) 652, և որը նկարագրված է էջ 112, սակայն վերև՝ խոսելով թե ինչպես Խոռոխազատ փորձեց փրկել Տիզբոնի գանձերը, բայց չկարողացավ, քաղեց ամեն ինչ և փախավ. «փախեաւ և թագաւորն իւրեանց և անկաւ ի զաւրն հարաւոյ»[1]: Հազկերտ փախավ, բայց Նեհավենդի կռվից հետո, և փախաւ Ստահր քաղաքը, Սասանյանների օրրանը: Սերեոս չտապել է հայտնել թագավորի փախուստը նախքան անդրադառնալ Նեհավենդի ճակատին: «Անկաւ ի զաւրն հարաւոյ» ասելով ակնարկում է փախուստը Ստահր: Պարսից պետությունը բաժանված էր չորս մեծ զինվորական շրջանների կամ սպարապետության, որոնցից մեկն էր Քուստի Նեմռոջ, այսինքն՝ կողմն հարավո, ուր գտնվում էր և Ստահր: Հազկերտ ապաստանեց Ստահր, ուրեմն հարավային գնդի մոտ: Այստեղից անցավ արևելք, Խորասան, ուր և սպանվեց: Սերեոսի խոսքերը՝ «գնաց յարևելս» կարծել են տալիս, որ Խոռոխազատ ուղեկցել է Հազկերտին, հետո փորձել է մի վերջին ընդդիմադրություն և ապա զենքը վայր դրել: Արդյո՞ք վերադարձել է նորեն Ատրպատական և ե՞րբ, մնում է անհայտ:

Գիտենք, որ 643 թվին Ատրպատականի իշխանն էր հիշվում Վահրամ Ռ Փառոխզատ: Վերջին անունս նույն Խոռոխազատն է: Սա եղբայր էր Ռոստոմի և երկուսն՝ որդիք էին Խոռխ-Որմիզդի, ծանոթ Սերեոսին[2]: *Խոռոխազատ նշանակում է որդի Խոռոխի: Կարելի է իր բուն անունն Վահրամ էր: Բայց ավելի հավանական է, որ Վահրամ նրա որդին էր: Խոռոխազատ այդ միջոցին պետք է տակավին Հազկերտի հետ լիներ:*

Տաբարին պատմում է, որ Հիջրի 22-ին (=642 թվի նոյեմբեր 30-643 թվի նոյեմբեր 18) արաբական զորքը Բուքայր իրն Արդալլահ զորավարի առաջնորդությամբ հաղթեց հիշյալ Վահրամին, պարտադրեց Ատրպատականին վճարել հարկը, որ չէր ուզում վճարել, հանձնեց երկիրը իր զինակիցներից մեկին, և ինքը գնաց Դերբենդի դեմ: Նույն պատմագիրը նկատում է, որ Ատրպատականը ընդարձակ երկիր է, Համադանից մինչև Դերբենդ, խազարաց սահմանը: Բուքայրի առաջապահ գնդի պետն էր Արդ ալ-Ռահման[3] *իրն Ռաբիա: Դերբենդ գնալիս անցան մի երկրով, որի իշխանն էր Շահրիար: Սա խաղաղություն խնդրեց, առանց հարկ տալու հանձնառության, պատճառելով որ մշտական կռիվ ունի խազարների դեմ և միջոցները սուղ են*[4]:

---

[1] Անդ, էջ 108:

[2] Սերեոս, էջ 107:

[3] Հովհան Մամիկոնյան («Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 57), հիշում է ոմն «Արդռահիմ քեռորդի Մահմետի», որ հարձակվեց Տարոնի վերա Խոսրովի սպանությունից ութ տարի հետո, ուրեմն 640 թվին: Դժվար թե այս անձը պահած լինի Արդ ալ-Ռահմանի հիշատակը:

[4] Tarikh at - Tabari (=Zotenberg), t. III, ch. 47

Շահրիար Աղվանից իշխաններից մեկը պիտի լինի: Ջևանշեր չէ հիշվում: Խոռոխազատի ներկայությունն այդ միջոցներին Ատրպատականում երկբայական է: Կաղանկատվացու պատմվածքը այս կետում ևս խախուտ է: Թերևս մեր պատմագիրը չափազանցրել է թեթև ընդհարումները, որ միշտ հնարավոր են և կապել մեծ զորավարի անվան:

Դելմնազգի հեղինակը, այսինքն՝ զորավարը, ևս անհայտություն է: Ավելորդ չէ հիշել այս առթիվ Սեբեոսի մի միջադեպը: Մարք ապստամբում են արաբների դեմ, չուզենալով վճարել հարկ, և ապավինում են իրենց ամրություններին և լեռնական ցեղերին, ինչպես Գել (Գելանցիք) և Դելումն: Վերջինս ևս մի ցեղ էր, Գելանցիների հարևան, և որոնց հիշատակը մնացել է Դիլաման և Դիլման տեղանունների մեջ: Արաբները չեն հաջողում ընկճել ապստամբներին և «դէմ եղին երթալ ի կողմանս հիւսիսոյ, յազգն, որ ըստ Կասբիական դրացն: Չոգան հասին ի կապանս Ճորայ և անցեալ ընդ ներքս ընդ կապանն՝ աւերեցին զամենայն կողմանս աշխարհին, որ առ լեռնոտամբն»[1]:

Այս դեպքը տեղի է ունեցել, մեր հաշվով, մերձավորապես 654 թվին և ուրեմն չի կարող նույնանալ Բուքայրի արշավի հետ, որ 643 թվին էր և ոչ էլ Դելմնազգի հեղինակի ասպատակություններին, որ 642 թվից հետո էր և 652 թվից առաջ: Կաղանկատվացին հիշում է վրաց իշխան Ատրներսեհին, որ այլուստ հայտնի չէ և կփորձենք ստորև որոշել նրա ինքնությունը:

Ամբողջ ԺԹ գլխի մեջ միակ անվիճելի կետն է Սասանյանների անկման տարին՝ «ի քսաներորդի ամի Յազկերտի», համաձայն Սեբեոսի[2] *և 31 ամի հազարացվոց =651 թվի օգոստոսի 24-652 թվի օգոստոսի 11, փոխան Սեբեոսի ԺԹ իսմայելացվոց, որ հաշվում է Արուրաքրի վերջին տարուց և ոչ Հիջրի թվականությունից:*

Մեր պատմագիրը առանց բացատրելու, թե ե՞րբ և ի՞նչ պայմաններում էր Ջևանշեր ընդունել արաբական տիրապետությունը, և թե ինչու՞ իր հայրը կողմնակից էր այդ տիրապետության, պատմում է, թե ինչպես «բազմիմաստ» Ջևանշեր վճռեց անցնել կայսեր հովանավորության տակ՝ Հայոց զորավարի հետ միասին:

Ջևանշեր դիմում է Թղթով կայսր Կոստանդնին և խնդրում իր հնազանդությունը և պարգևել «պսակաքաղծիկ խոնարհութեանս մերում աստուածաշնորհ բարերարութիւն»:

Կայսրը, հարկավ, ուրախ է և հրամայում է «գրել երդմունս և ունիլ համամիտ խաղաղութիւն»: Շնորհում է նաև մեծամեծ պարգևներ «գահոյս արծաթաքանդակակերպ թիկամբ ոսկեզօծ և հանդերձս ոսկեմանեալս և զիւրոյ

[1] Սեբեոս, էջ 147-148:

[2] Անդ, էջ 137:

անձին մարգարտայեա *պատճիւք սուսեր. և առնէ զնա պռոտոն պատրիկ: Եւ տայր բերել պատրկութեան և հիւպատութեան և ապահիւպարքոսութեան և ստրատելութեան և ելիստութեան հազարերկերիւր արանց պատիւ, զի որում ինքն կամեսցի, շնորհեսցէ և նա զայն: Եւ ի կենդրուտ խաչէն Քրիստոսի մասն, զոր միշտ ի ծոց իւր կրէր, հանեայ յիւրմէ առաքէր նմա» (Բ, գլ. Ի):*

Պատմագիրը բերում է կայսերական հրովարտակի պատճենը, ուր սակայն խոսք չկա նվերների մասին, այլ կայսրը հայտնում է իր ուրախությունը և խոստանում, որ ինքը և իր որդիք սիրով և քաղցրությամբ կվարվեն Ջևանշերի և նրա սերունդի հետ «ազգէ յազգ մինչև յաւիտեան» (Բ, գլ. ԻԱ):

Կայսեր հրովարտակն իր ձևով և բովանդակությամբ վավերական չէ կարող համարվել և ոչ Ջևանշերի Թուղթը: Հների մոտ ընդունված սովորություն է հորինել ճառեր և թղթեր և վերագրել գործող անձերի: Այս կարգի հորինվածներ են և՛ Ջևանշերի և՛ կայսեր նամակները: Առասպելական են մանավանդ կայսերական ընծաները՝ արծաթաքանդակ և ոսկեզօծ գահեր, ոսկեհուռ հանդերձներ, կայսեր անձնական մարգարտահեռ սուսերը, տակավին հասկանալի են նույնիսկ իրենց չափազանցության մեջ, բայց ինչ որ ավելի է քան առասպել, այդ 1200 մարդու հատկացնելի զանազան պատիվներն են՝ պատրիկություն, հյուպատություն, ապհյուպարքոսություն (իմա՝ ապուպարքոսություն), ստրատելություն (իմա՝ ստրատելատություն) և ելիստություն (իմա՝ իլիուստրություն (illustris): Ասել է, թե կայսրը իրավունք էր տվել Աղվանից իշխանին հանճնարարել 1200 մարդ թված պատիվներ ստանալու համար: Ուրիշ խոսքով, եթե լիովին գործադրվեր այդ իրավունքը, Աղվանքը կունենար 1200 պատրիկ, հյուպատոս, ապուեպարքոս, ստրատելատ և իլիուստր:

Պետք է կարծել, որ պատմագիրը լավ չէ հասկացել այն աղբյուրը, որից օգտվել է, քաղելով բյուզանդական պատվանունները աստիճանական ստույգ կարգով: Կայսերական պատիվների սանդուղը հաշվում էր 18 աստիճան, ամենաբարձրը՝ կեսար և ամենեն ստորը՝ ստրատելատ, որին հավասար էր ապուեպարքոս (**apo eparchon**): Հյուպատոս յոթներորդ աստիճանն էր վայրից վերև, իսկ պատրիկ տասներկուերորդ: Մեր պատմագիրը հիշում է այս աստիճանները վերից վայր կարգով՝ պատրիկ, հյուպատ, ապուեպարքոս և ստրատելատ: Ելիստությունը, այսինքն՝ իլիուստրությունը այս կարգին չէ պատկանում: Բոլոր աստիճանները բաժանվում էին երեք դասի՝ **illustris, spectabilis, clarissimus**. թված չորս պատվաստիճանները կարող էին պատկանիլ **իլիուստրիս** *դասին:*

Այս տիտղոսը պատահում է յոթներորդ դարու մի արձանագրության մեջ՝ «Քսան և եւթնեմեայ Հերակղի քարեպաշտ թագաւորի Ներսեհի Շիրակայ և (Ա)րշարունեաց տեառն և Թէոփիլոսի Արշարունեաց եպիսկոպոս(ի) ես

Գրիգոր եղուստր *և Մարիամ իմ կին շինեցաք զսուրբ եկեղեցիս վասն մեր հոգւոց»*[1]*:* Եղուստր *նույն illustris-ն է:*

Հետաքրքրական է պռոտոն պատրիկ տիտղոս, որ շնորհված էր Ջևանշերին: Հազվագյուտ տիտղոս է. ուղիղ ձևն է պրոտոպատրիկ, **protopatrikios**: Մեզ հայտնի է միայն մի դեպք բյուզանդական պատմության մեջ, ուր երևան է գալիս այս տիտղոսը, և ինչ որ զարմանալի է՝ կրողը մի հայ է՝ Վարազ-Բակուր. **Ba<ra>s Bakourios *protopatrikios***[2]*: Նա ապրում էր Հուստինիանոս II-ի օրով, նրա պաշտպանն էր ընդդեմ Վարդան Փիլիպպիկ հայ կայսրի և սպանվեց 711 թվին: Հավանական է, որ Աղվանից իշխաններից լինի, դատելով անունից:*

Ամենեն կարևորը, սակայն, մեր պատմագրի աչքում կենդուռւտ *խաչի նվերն էր: Կաթողիկոսը՝ Ուխտանես, եպիսկոպոսների հետ, դուրս է գալիս խաչի առաջ և օրհնում իշխանին: Ուրախությունը մեծ էր, բայց սովորական ուրախություն չէր. «ոչ լինէր գործ անկարգ խօսից կամ արբեցութիւնք կամ կատակերգութիւնք»: Ջևանշեր զրկելով իրեն քնից՝ գիշերը անցուց «խորհելով զաշխարհին իւրոյ օգուտն»: Եւ առավոտյան հագիվ արուսյակը ծագած, բազմեց գահի վերա և շրջապատված զորականներով, զբաղեց դատական և վարչական գործերով. «Այսպէս ի սահմանացն Վրաց մինչև ի Դրունըս Հռոմոց՝ միահեծան մեծութեամբ եղև տէր և մինչև զգետն Երասխ» (անդ): Այս ևս ներբողեան է և ոչ իսկության, ինչպես կտեսնենք:*

Կոստանդին կայսրը իր թագավորության 19-րդ տարին գալիս է արևելք, գնում Պարսից աշխարհը և մարդ է ղրկում Ջևանշերի հետևից, որ գա իր տեսության: Ջևանշեր շտապով ուղի է ընկնում, «զորոյ զգալն լսելով ընդ առաջ նմա ինքն ելանէր ի Քունգր գիւղ և ողջամբ ընկալեալ զնա»: Կայսրը հրամայում է նրան հանել «տխրական զգեստը», որ հագել էր իր կնոջ մահվան առթիվ, և հագցրին «զարքունական զգեստն»: Ջևանշեր համարձակություն առնելով «խնդրէր ի կայսերէ զմասն յաւիտենից թագաւորին նշանի»: Կայսրը բերել էր մայրաքաղաքից «զճառագայթաւէտ զոյս աշխարհաց»[3]*, այսինքն՝ խաչափայտը:*

---

[1] **Կ. Կոստանդյանց**, Վիմական տաբեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 1, հատուկ անում է կարծել, մինչդեռ հայր Ղևոնդ Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 125, տվել է ճիշտ նշանակությունը:

[2] **Theophanes**, Chronographia, p. 583. Տե՛ս նաև **G. Schlumberger**, Sigillographie de L'Empiere Byzantin, Paris, 1884, էջ 249 և 627, Վարազ-Բակուրի կնիքը, ուր սակայն նա կոչվում է patrikios և comes Օփսիկյան բանակաթեմի:

[3] Քնազքի «կորզեալ ի պիտանեաց զկողմանս աշխարհին», նշանակում է զրկեց Խաչից արևմտյան կողմերը. առնելով հետը Սուրբ նշան Արևելք: Երբ շիտակ է «պիտանեաց» ընթերցումը, նշանակում է, որ կայսրը զրկեց այն կողմի աշխարհը այն բանից, որ ամենապիտանին էր, այսինքն՝ Խաչը: Իսկ եթե պետք է կարդալ՝ «ի տանեաց», թերևս ի նկատի ուներ Ս. Սոփիա տաճարը: Կայսրը կորզեց Ս. տաճարից այն ինչ որ ներկայացնում է ամբողջ աշխարհը՝ Խաչը: Մեր հեղինակը ճարտասանական մեծ հավակնություններ ուներ:

Կայսրը կտրում է մի մասը և տալիս Ջևանշերին: Տեսնելով այս «երկնատր պարգևս», հայ նախարարները և Հայոց զորավար Համազասպ նախանճեցին: Ջևանշեր հրաժեշտ տվավ այնուհետև կայսրին և սա «ոչ իբրև զծառայ ոք, այլ իբրև զեղբայր համագահ՝ յանդիման Պարսից և Արարատեան ազատացն զնա յուղարկեալ»:

Ուխտանես կաթողիկոսը ընդառաջեց ընդունելու իշխանին: Սա հիմն է դնում նոր եկեղեցու Գարդման բերդի մեջ, որպեսզի այնտեղ պահեն «տէրունական նշանը»-ը՝ կայսրից ստացած խաչի մասը:

Գարնանը գնաց Վաղարշապատ նորեն հանդիպելու կայսրին: Արտակարգ շքով ընդունվեց: Կայսրի հրամանով մեծամեծ պալատականներ ընդառաջ ելան, և Ջևանշեր «արքունաբար» մտավ «կայսերական մարզարան»:

Կայսրը նրան ընդունեց «խնդամիտ համբուրիւ» և նստեցրեց ամենեն բարձր տեղը և այնքան պատիվներ շռայլեց, որ «տրապէզիտքն անգամ սոսկացան»: Կայսրն արդեն դրկել էր Ջևանշերին իր անձնական սուսերը: Այս անգամ նրան նվիրում է «զքաջ հաւուն իւրոյ Հերակլիոսի և Նիկետայ՝ հանդյն, զարքունական գօտին», և «զիւրն պատմուճան և դրօշս երկուս և զորդիս նորա առնէր պատրկուսս զտղայականս»:

Պարսից վերջին թագավորը, տեսանք վերև, շնորհել էր Ջևանշերին «գիւղաստանեայս և գետս ձկանց»: Այժմ կայսրը ևս նրան է զիջանում «որ միանգամ առաջին թագաւորացն Աղվանից գիւղաստանեայք և սահմանք լեալ էին»: Ջևանշերի «հանճարեղ խորհրդականութիւնը» հիացում պատճառեց կայսրին. հրաժեշտին՝ ասաց կայսրը. «անձն քո ընդ անձին իմոյ, և սիրտ իմ որպէս զսիրտ քո. երթ ի խաղաղութիւն»: Ջևանշեր վերադարձավ իր աշխարհը և հրամայեց յուրայիններին՝ «շինել, տնկել, վայելել և կեալ ի խաղաղութեան»: Ջևանշերի հռչակը տարածվեց Աղվանից սահմաններից դուրս, Թուրքաստանյայց թագավորից, Ատրպատականից, Վրաց աշխարհից ընծաներ տեղացին. անգամ հեռավոր Հնդկաստանից «գային առ նա լսել և տեսանել»:

Ի՞նչ էր այս հաջողության պատճառը: Պատմագրի հայացքով, միակ պատճառն էր «փայտն կենաց, նա յայտնի արար զանուն նորա ամենայն տիեզերաց» (Ք, գլ. ԻՔ):

Խոսքն այն կենաց փայտի մասին է, որ Ջևանշեր ստացել էր կայսրից և որի համար եկեղեցի էր հիմնել Գարդմանի բերդում: Ջևանշերի պանծացումը այդ կենաց փայտի՝ Գարդմանի այդ սրբության, պանծացումն է: Քարեբախտաբար հնարավորություն կա ստուգելու Ջևանշերի վերագրած հարաբերությունները կայսեր հետ և համոզվելու, որ այստեղ ևս խոսում է ո՛չ պատմագիրը, այլ՝ վիպասանը, ուժ տալով իր անսանձ երևակայության:

Կոստանդնի 19-րդ տարին կաներ (641+19=) 660: Այս թվին Կոստանդինն չէ գտնվել ո՛չ Պարսկաստան և ո՛չ ընդհանրապես Արևելք: Նա եկավ Հայաստան իր թագավորության 12-րդ տարին, համաձայն ճշմարտախոս ժամանակակից պատմիչի՝ Սեբեոսի վկայության[1], *այսինքն՝ 653 թվին: Ըստ Սեբեոսի, Մուավիայի հետ կայսրը դաշն էր կնքել երեք տարով*[2], *ըստ Թեոփանեսի՝ երկու տարով*[3]*: 652 թվին լրացավ պայմանաժամը և Մուավիա մերժեց վերանորոգել դաշինքը և սպառնում էր խաղալ մայրաքաղաքի վերա: Այս միջոցին էր, որ Թեոդորոս Ռշտունի անզոր համարելով կայսեր հովանավորությունը անցավ ավելի ուժեղի՝ խալիփայության կողմը: Կոստանդին կայսրը ժամանեց Դերջան, անցավ Կարին: Նրան ներկայացան բոլոր հայ մեծ նախարարությունները՝ Ներսես Գ կաթողիկոսի հետ: Նրանք տրտունջ հայտնեցին անհեռատեսությամբ Թեոդորոսի դեմ: Սա հրաժարվեց ներկայանալ կայսրին: Նա մենակ չէր իր որդեգրած նոր քաղաքականության մեջ. «ընդ նմա էին,- ասում է Սեբեոս,- միաբան Վրացին և* **Աղուանն** *և Սիւնին, որք ըստ հրամանի նորա գնացին յիւրաքանչիւր աշխարհս և ամրացան ի նմին»*[4]*:*

Կայսրը փորձեց իր կողմը գրավել Ռշտունյաց իշխանին, բայց չհաջողեց: Կարինից գնաց Դվին և այնտեղ ձմեռեց: Մուշեղ Մամիկոնյանին նշանակեց «իշխան Հայոց հեծելոցն և արձակեաց զնա ի կողմն սեփհական գընդին Դ (4) հազարաւք. նոյնպէս արձակեաց ի զաւրաց իւրոց ի Վիրս և **յԱղուանն** *և ի Սիւնիս քակտել զնոսա ի միաբանութենէ բայց* յԱղուանն *և ի Սիւնին և զունդն սեփհական ոչ հնազանդեցան»*[5]*: Պարզ է, որ Աղվանք 652-653 թթ. կայսեր կողմնակից չէր:*

Կայսրը լսելով, որ տաճիկ զորքը, իրավ, ասպատակելով Փոքր Ասիա, հասել է Քաղկեդոն, անմիջապես վերադարձավ մայրաքաղաք, թողնելով Հայաստանում Մավրիանոս զորավարին[6]*: Թեոդորոս Ռշտունի օգնական զորք ստացավ արաբներից, Ջաւակի մոտերքը 653 թվի հարձակվեց Հռոմի վերա և հալածեց մինչև Տայք և այնտեղից Տրապիզոն: Ապա գնաց Մուավիայի մոտ՝ Դամասկոս: «Եւ ետ նմա իշխանն Իսմայէլի,- պատմում է նույն Սեբեոս,- հանդերձս ոսկեղէնս և ոսկեթել և վառ մի նորին օրինակաւն: Եւ*

---

[1] **Սեբեոս**, էջ 139:

[2] Անդ, էջ 118 և 138:

[3] **Theophanes**, Chronographia, p. 527.

[4] **Սեբեոս**, էջ 139:

[5] Անդ, էջ 140:

[6] Անդ, էջ 143: Հմմտ. **Theophanes**, Chronographia, p. 528:

իշխանութիւն ետ նմա զհայս և զՎիրս և զԱղուանս և զՄիւնիս, մինչև ցԿապկոն և ցՊահակն Ճորայ և արձակեաց զնա պատուով»[1]:

Կոստանդին կայսեր հեռանալուց հետո Մուշեղ Մամիկոնյան լքեց հույներին և հարեց Թեոդորոս Ռշտունուն: Թերևս այս միջոցին եկավ արաբ զորավար Հաբիբ իբն Մասլամա: Սեբեոսի ասելով, նա կռիվներ մղեց Մավրիանոսի դեմ, քշեց մինչև «ի Վիրս», պաշարեց և առավ Կարինը: Արդյո՞ք հույն զորավարը նորեն Հայաստան էր եկել Տրապիզոնից, ուր քշել էր նրան Թեոդորոս Ռշտունին, թե Հաբիբին կռիվները նույնն են, ինչ որ վերև ընծայվեց Թեոդորոսին: Հավանական է, որ Հաբիբ լիներ այն արաբ գնդի պետը, որ եկավ Թեոդորոսի օգնության և միասին գործեցին Մավրիանոսի դեմ:

Օթման խալիփայի գահը վտանգի մեջ լինելով, Հաբիբ հետ կոչվեց Հայաստանից, բայց տեղ չհասած, Օթման սպանվեց: Սպանությունը տեղի ունեցավ 656 թվին, հունիսի 17: Հետևաբար, Հաբիբ հեռացած պիտ լիներ Հայաստանից նույն 656 թվին: Գիտենք, որ Թեոդորոս գնաց երկրորդ անգամ Դամասկոս, այնտեղ մեռավ և մարմինը բերին և թաղեցին իր գավառում: Մեզ թվում է, որ նա գնացած պիտի լինի Հաբիբի հետ և նույն նպատակով: Օթմանի մահից հետո սկսվեցին երկու թեկնածուների՝ Մուավիայի և Ալիի միջև կռիվները, որ տևեցին հինգ տարի: Մուավիա պետք ուներ Թեոդորոսի: Անհավանական չէ, որ մնաց այնտեղ՝ մասնակցեց կռիվներին և մեռավ 657 կամ 658 թվին[2]: *Ալիի հակառակությունը հարկադրեց Մուավիային խաղաղություն խնդրել կայսրից, խոստանալով տալ օրական հազար ոսկի, մի ձի և մի ստրուկ: Դաշինքը կնքվեց 659 թվին: Ռշտունին կենդանի չէր, երբ հաջողել էր իր փեսա Համազասպ Մամիկոնյան:*

Հայերն ապստամբեցին արաբների դեմ և անցան կայսեր կողմը: Թվում է, թե այս քաղաքական փոփոխությունը պետք է բացատրել 659 թվի դաշինքի ազդեցությամբ: Դաշինքը մերկացրեց խալիփայի տկարությունը և հայերը հարմար դատեցին թոթափել նրա լուծը: Համազասպ Մամիկոնյան, որ Թեոդորոս Ռշտունու փեսան էր և գաղափարակից, համակերպվեց նոր կացության, ստացավ կայսրից կյուրապաղատության պատիվ, արծաթե գահույք և երկրի իշխանությունը:

---

1 **Սեբեոս**, նույն տեղում:

2 Ներսես Գ կաթողիկոս գնաց 653 թվին կայսեր հետ Կ.Պոլիս և դարձին «դադարեաց ի Տայս մինչև մեռաւ Ռշտունեաց տէրն» և ապա վերադարձավ Վաղարշապատ «յետ վեցերորդի ամի հալածանացն»: Վեցերորդ տարին հաշվելով 653 թվից կգա 658 թիվը: Բայց որովհետև Ներսես կաթողիկոս ներկայացավ կայսեր Կարինում «եկեալ ի Տայոց», հավանական է, որ փախել էր Տայք 652 թվին՝ Թեոդորոսի արաբական հպատակություն ընդունելու տարին: Այս դեպքում հալածանքի վեցերորդ տարին կլինի 657 թիվը:

Այս անգամ Հայոց հետ համերաշխ էին Աղվանք և Սյունիք. «հապճեպ երթևեկելով հնազանդեցաւ ի ծառայութիւն թագաւորին Յունաց՝ հանդերձ միաբանութեամբ իշխանացն և զաւրացն **Աղուանից** *և իշխանացն աշխարհին Սիւնեաց*»[1]:

Համազասպ կառավարեց կյուրապաղատություն ստանալուց հետո երեք տարի և մեռավ, ինչպես վկայում է Հովհաննես Կաթողիկոսը[2], *մեռավ, ուրեմն 661 թվին: Այս թվին Մուավիա հաղթանակեց և հռչակվեց միահեծան տեր (661 թվի մայիս): Իր իշխանության երկրորդ տարին Գրիգոր Մամիկոնյան կարգվեց իշխան Հայոց: Ասել է, թե հայերը նորեն ընկան արաբական իշխանության տակ: Այս դրությունը տևեց երեսուն տարի, մինչև 682 թվականը:*

Ահա քաղաքական անցքերի ստույգ ընթացքը. 652-659 թթ. Աղվանք շարունակեց մնալ արաբական տիրապետության տակ: Հերակլի հաղթությամբ պարսիկները զիջան Հայաստանը՝ Մավրիկիոս կայսեր օրով սահմանված գծով, որով պարսից ձեռքն էր մնում Վասպուրականն, Սյունիք, Աղվանք և Այրարատից՝ Դվինի դաշտը: Արաբները ժառանգեցին պարսիկներից այս հողամասերը: Թեոդորոս Ռշտունին տեր էր այս բաժնի և իրապես հավատարիմ մնաց հին կացության:

Աղվանք և Սյունիք անբաժան էին Թեոդորոսից: Կոստանդին կայսրի Դվին եղած ժամանակ ո՛չ Աղվանից և ո՛չ Սյունյաց իշխան չներկայացավ նրան: Առաջին անգամ Աղվանք և Սյունիք թեքվեցին կայսեր կողմը 659 թվի ապստամբության ժամանակ: Ո՛չ այդ թվին և ո՛չ հետո Կոստանդին կայսրը Հայաստան չի եղել և ուրեմն չէր կարող Աղվանից իշխանին ընդունել Վաղարշապատի մեջ և օժտել արքայական պատիվներով:

Ուշադրության արժանի է Հերակլ պապի և Նիկետաս տատի արքունական գոտին, որ իրրև թե նվեր տված Կոստանդին Ջևանշերին: Կոստանդին կայսրի բուն անունն էր Կոստաս կամ Կոստանդ, բայց անվանվում է նաև Կոստանդին իր հոր՝ Կոստանդինի անունով, որ Հերակլի որդին էր: «Նիկետայ հանուոյն»՝ անգիտության, թե թյուրիմացության արդյունք է: Հերակլի ընտանիքում ծանոթ է մի Նիկետաս, որ Հերակլի հորեղբոր՝ Գրիգորի, որդին էր: Նիկետաս կնոջ անուն չէ և Կոստանդնի հանին չէր կարող այդպես կոչվել և ոչ էլ այնպիսի գոտի ունենալ, որ կարելի լիներ զարդարել Աղվանից իշխանի մեջքը:

Կոստանդին երբեք չէ եղած Մարաց Քուվգր գյուղում, ուրեմն և չէր կարող ո՛չ Ջևանշերին անդ ընդունած լինել և ո՛չ էլ նրա համար կենդանուտ խաչեն մասն հանել:

---

[1] **Մեքենաս**, էջ 152:

[2] **Հովհաննես Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1853, էջ 51:

Կոստանդին չէր կարող նշանակել Ջևանշերին իշխան «ի սահմանաց Վրաց մինչև ի դրունս Հոնաց միահեծան ճոխութեամբ»: Տեսանք, որ Մուսվիան և ո՛չ Կոստանդին տվավ այդ երկիրները մինչև Ճորա պահակ Թեոդորոս Ռշտունուն և ո՛չ Ջևանշերին:

Աղվանից իշխանի պատիվները որպես թե տեսնելով, Համազասպ Մամիկոնյան «ի նախանձ մեծ բրդնեցաւ»: Սրանից հետևում է, որ մեր պատմագիրը ի նկատի ունի 659 թվի քաղաքական փոփոխությունը Համազասպի օրով: Եթե Կոստանդնի առաջին տարին հաշվենք 641 թիվը, երբ գահ բարձրացավ, 19-րդ տարին կգա ուղիղ 659 թիվը: Անտարակոյս, պատմագիրը շփոթել է 652 թվին քակտված դաշինքի և 659 թվին կնքված դաշինքի ազդեցության տակ կատարված իրողությունները: Համազասպ անցնելով կայսրի կողմը՝ ստացավ կյուրապաղատություն: Աղվանք նրա հետ էին և հավանական է, որ միաժամանակ կայսրը պատված պիտի լինի Աղվանից իշխանին պրոտոպատրիկ տիտղոսով: Եվ այս կլինի միակ պատմական կորիզը, որի շուրջ դիզել է պատմագրի երևակայությունը այնքան անհեթեթ զրույցներ խառնաշփոթ հիշողությամբ: Ջևանշերի կրկնակի տեսակցությունը Կոստանդնի կայսրի հետ 659, թե 660 թվին այլ բան չէ եապես, քան խուլ հիշողություն Կարինի և Դվինի կայսերական դիմավորության 652 և 653 թվերին: Միայն Դվինի փոխարինված է Վաղարշապատով և Կարին մոռացված ի նպաստ Մարաց աշխարհի Քունգր գյուղի: Խրատական է մանավանդ վերջինս: Հեղինակի նպատակը չէ միայն վերապահել պատվավոր աթոռ սիրեցյալ իշխանին բոլոր այդ հանդեսների մեջ, այլ փաստաբանել նաև կենեղուտ խաչի բարձր ծագումը: Քունգր արդարև գտնվում է Մարաց աշխարհում և է Կանգվար Համադանի մոտ: Հերակլ կայսր, երբ 627 թվին արշավում էր Տիգրոնի վերա, անցավ Համադանից, ինչպես պատմում է Թեոփանես[1], *անվանելով այս քաղաքը Խամաեթա (Chamaetha), ուր կայսրը դադար առավ հոկտեմբերի 9-ին և մնաց մի շաբաթ: Քունգր առաջին մեծ կայարանն էր Համադանից հետո իր ճանապարհի վերա: Կենեղուտ խաչը կապ չունի Կոստանդնի կայսրի հետ, այլ հավանորեն ավանդությամբ համարվում էր մաս Հերակլի փրկած Երուսաղեմի խաչափայտի: Հայտնի է հացունյաց Ս. Խաչի պատմությունը: Կենեղուտ խաչի ավանդությունը լավագույն դեպքում Աղվանից կրկնակն է հացունյաց խաչի պատմության, ասում ենք՝ լավագույն դեպքում, այսինքն՝ եթե գոյություն է ունեցել որևէ ավանդություն, որից օգտվել է յուրովի մեր պատմագիրը, և չենք ուզում համարել աղջովին պատմագրի անձնական տեսության պտուղ: Մեր հեղինակի հետաքրքրության բուն*

[1] **Theophanes**, Chronographia, p. 488.

առարկան կենդանուտ խաչն է, Գարդմանի սրբությունը: Նրա արժեքը բարձրացնելու համար ի՞նչ ավելի զորեղ միջոց, քան կայսեր և Աղվանից իշխանի անունները:

Կայսրից խաչն ստանալուց երկու տարի հետո, խազարները արշավում են և Ջևանշեր նույն խաչի զորությամբ հետ է մղում մինչև Չողա Դուռը: Անցնում է երկու տարի ևս և Ջևանշեր ավարտում է Գարդմանի տաճարի շինությունը և այնտեղ զետեղում մեծ հանդեսով «կենդանուտ փայտը»: Ծնկաչոք ընկնում է նրա առաջ և աղոթում: «Եթէ ամենայն աշխարհս Աղվանից, - ասում է Ջևանշեր աղոթքի մէջ, -միաբան գայցեն փառաւորել զանուն քո ի տանս յայսմիկ, աստուածընկալ զօրութեամբ խաչիս աղխեսցես զդրունս քշնամեացն և խափանեսցես զմարտիցն հէնս»: Գարդմանի Ս. Խաչը մեծ ապավեն է Աղվանից ապահովության և բարօրության:

Պատմագիրը՝ համակիր քրիստոնյա պետության, բայց գիտե, որ իր հերոսը պիտի դավաճանե և անցնե մուսուլման արաբների կողմը: Այդ ծանր քայլը մի կերպ արդարացնելու համար, Ջևանշերի բերան է դնում մաղթանք՝ «հնազանդ կալ առ ի քէն պսակելոյ կայսերն Յունաց աներկբայաբար», կամենալով ցույց տալ, որ Ջևանշեր երեսը դարձրեց կայսրից հանգամանքների ուժով և ոչ իր բուն ցանկությամբ:

Աղոթքից հետո իջնում է Պերոզ-Կավատ քաղաքը «և զամն ողջոյն յղդ ծալի և ի խաղաղաւէտն անցուցանէ հանգիստ» (Բ, գլ. Իե): Հաջորդ տարին, «ի միւսումն լինէր ծմերնայինն եղանակի հասարակութիւն», ուրեմն կայսեր տեսակցության վեցերորդ տարին, հոները հարձակվում են Աղվանքի վերա, հասնում մինչև Երասխ և քշում տանում են «Արարատեան» գավառից և «Սիւնաստանեաց» աշխարհեն բազմաթիվ հոտեր: Հոնաց թագավորը ցանկություն է հայտնում տեսնել Ջևանշերին: Սա գնում է ներկայանում առանց երկյուղի, մինչդեռ պարսից թագավորներից և ոչ մինը նման խիզախություն չէ ունեցել: Սեր և խաղաղություն են կնքում: Ջևանշեր առնում է հոնաց թագավորի դուստրը կնության: «Կնքեալ զդաւելն», բաժանվում են: Ջևանշերի սպարապետության 28-րդ տարին էր:

Այս հաջողության պատճառը նորեն Գարդմանի Ս. Խաչն էր. նախ քան հոնաց մոտ գնալը, իշխանը «աներկիւղաբար անկեալ առաջի փրկչական խաչին ասէ. Թէպէտ և գնացից ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ, զի դու Տէր, ընդ իս ես»:

Տեսանք, որ Ջևանշեր սպարապետ նշանակվեց Կադեսիայի կռվի տարին՝ 637 թվին: Պարսից թագավորության անկման տարին՝ 652 թվին նրա սպարապետության 15-րդ տարին էր, ինչպես հաշվում է պատմագիրը (Գիրք Բ, գլ. ԺԹ), որ միանգամայն ճիշտ է, 637+15=652: Այժմ հաշվում է 28 տարի, 637+28=665: Այս ևս հաստատվում է հեղինակի մյուս հաշվով. կայս-

ին ներկայացավ 659 թվին և այն օրեն անցել էր վեց տարի, ուրեմն 665 թիվ:

Ժամանակագրական այս հաշիվը խիստ կարևոր է այն մտքով, որ վկայում է **հաստատորեն**, *որ Կոստանդնի 19-րդ տարին հասարակ վրիպակ չէ գրչի, այլ պատկանում է հեղինակին*[1]:

Այնուհետև պատմագիրը ձգտում է բացատրել, թե ի՞նչպես Ջևանշեր վճռեց անցնիլ արաբական ծառայության, թե «որպէս կամ զինչ պատճառ շնորհատուն այն խաչ ծագեաց նմա ի խաւարէ լոյս կամ քաղել ծաղիկ ի հրոյ»:

Պատճառը բարդ չէ: Կար ժամանակ, որ հոռոմոց թագավորներն այնքան զորավոր էին, որ սարսափ էին ազդում աշխարհին: Այժմ տկարացել են, «մինչ զի որ միանգամ ընդ ձեռամբ նորա էին մարդկային անտառք, գնացեալ յարեցան ընդ հովանեաւ» արաբների: «Արևմտեան քօշը» զրկվեց Աստուծո օգնականությունից և «կինճ վայրենի» գազանացավ փշրելու նորա եղջյուրները: Հոռոմոց կայսրը թողեց իր մայրաքաղաքը և գնաց «ի սահմանս հեռաւոր կղզեացն արևմտից»: Իսկ արաբները վեցերորդ տարին է, որ հաստատվել էին նոր մայրաքաղաքում՝ Դամասկոս: Պատմագիրը հնարավոր է գտնում գովելու արաբական տիրապետությունը. «տուաւ նմա անընդդիմակաց զօրութիւն, աշխարհավար իմաստ, երկրավոր քաղցրութիւն և հեզութիւն մարդկային»: Շնորհիվ այս չորս հատկության, արաբները տիրեցին աշխարհին:

Ջևանշեր զգում է, որ արաբները գուցե ասպատակեն իր երկիրը: Թեպետ կարող էր իր խնամի «Թուրքաստանեաց» աշխարհեն զորք հանել բշնամու դեմ, բայց բարվոք համարեց խոնարհիլ արաբների առաջ:

«Հարաւոյ բռնակալն» լսելով իշխանի լավ հարաբերությունը կայսրի հետ և այն, թե ինքն է «երասանակալ Թուրքաստանեացն ազգաց հանել և արգելուլ», պատգամավոր ղրկեց և խնդրեց գալ իր մոտ: Ջևանշեր գնաց նախ Գարդմանի տաճարը, ուր իր սիրելի խաչն էր, աղոթեց և ապա ուղի ընկավ: Հայոց զորավարը դիմավորեց նրան մեծապատիվ շքով, դիմավորեցին նաև Ասորեստանի գավառապետները և քաղաքների պետերը, թագավորի հրամանով, հայթայթելով ճանապարհին ձիեր և օթևաններ և հասավ թագավորի դուռը: Սա հրամայեց իր մերձավոր մեծամեծներին ընդառաջել Աղվանից իշխանին, «ածելով նմա զերիվարս, յորս ինքն թագաւորն հեծանէր»: Ամբոխը թափվում էր ամեն կողմից նրան տեսնելու: Թագավորն վաղ առավոտյան, վեր կենալով սովորական ժամից առաջ, ընդունեց հրճվանքով

[1] **M. Brosset**, Additions et Eclaircissements à L'Histoire de la Géorgie, SPb., 1851, էջ 476, ի թիվս բազմաթիվ սխալների գրում է՝ Կոստանդ եկավ Աղվանք Քուճգր գյուղը, dans la 13e année de son règne, որ իր սրբագրությունն է, համաձայն Սեբեոսի և խորք՝ Կաղանկատվացուն:

քանկագին հյուրն: Շատ ազգերի պետեր կային նրան հնազանդված: Ոչ մեկը չէր արժանացել այն մեծ ուշադրության, որ վիճակվեց Ջևանշերին: Սերտ սիրո երդում կնքեցին և հրաժեշտին թագավորը «տայր նմա և զաջ իւր, որ չէր երբէք լեալ սովորութիւն տիեզերապետ գոռոզին օտարազգւոյ առնել զայս»:

Վերադառնալիս Ջևանշեր հանդիպեց Գրիգոր Մամիկոնյանին՝ Արուճ գյուղաքաղաքում, եկավ նրա տեսության ևան Անաստաս կաթողիկոսը: Հասավ վերջապես իշխանը Գարդման և «իսկ և իսկ մտանէր ի յարկ ապաւինի իւրոյ»: «Գեղագեղիչներ», այսինքն՝ նկարիչներ, գործի լծեց նկարազարդելու շինած տաճարը: Երեք տարի անցավ և թագավորը նորեն հրավիրեց նրան իր մոտ (Բ, գլ. ԻԷ):

Այստեղ էլ ճարտասանությունը խեղդել է պատմությունը: Ջևանշերի Դամասկոս գնալու նկարագրությունը պատմական չէ: Գնալը հավանորեն փաստ է, բայց տարին՝ սխալ է: Պատմագիրը ուզում է հավատացնել, որ Աղվանից իշխանը գնաց խալիփայի մոտ, երբ Դամասկոս վեցերորդ տարին էր, որ մայրաքաղաք էր ճանաչվել: Մուավիա հռչակեց Դամասկոս մայրաքաղաք 662 թվին, վեցերորդ տարին, հաշվելով 662, կլինի 667 թիվը: Պատմագրի ակնարկը, թե նույն տարին հռոմոց կայսրը ամապարեց հեռավոր կղզիներ, ստույգ չէ: Ակնարկը վերաբերում է Կոստանդ կայսրին, որ արդարև իր աթոռը տեղափոխեց Սիկիլիա, բայց այս եղավ 662 թվին և ոչ 667: Երկու թվերից նախընտրելին է պատմագրի տեսակետից 667 թիվը, որովհետև Դամասկոս գնաց Ջևանշեր հռոմոց թագավորի հետ 665 թվին խաղաղություն կնքելուց հետո: 667 թիվը ցույց է տալիս, որ անմիջապես հետո չէ գնացել, այլ երկու տարի անց՝ 665 թվին: Գրիգոր Մամիկոնյան այդ միջոցին իշխան էր Հայոց (662-685), ինչպես և Անաստաս՝ կաթողիկոս (661-668) և ուրեմն նրանց հիշողությունը գեթ ժամանակագրական անպատեհություն չունի:

Չենք կարծում, որ Ջևանշեր Դամասկոս գնացած լինի 667 թվին: Ավելի հավանական ենք համարում պատմագրի մյուս ցուցումը՝ կայսրի Սիկիլիա տեղափոխության տարին, միայն պատմագիրը սխալվել է կարծելով, որ այս դեպքը տեղի ունեցավ Դամասկոսի աթոռանիստ դառնալու վեցերորդ տարին: Դեպքը վերաբերում է 662 թվին և կարծում ենք Աղվանից իշխանը Դամասկոս գնաց սույն՝ այս տարին:

Պատմագրի նկատողությունը, թե կայսրությունը տկարացել էր և խալիփայությունը զորացել, ուստի և Ջևանշեր ընտրեց խալիփայի կողմը, անընդունելի է 667 թվի նկատմամբ: Ոչինչ չէր փոխվել նրանց վիճակի մեջ, որ առիթ տար այդպիսի դատողության: Մինչդեռ 662 տարին ավելի է պատշաճում պատմագրի հայացքին, երբ Մուավիա վերջ տալով քաղաքացիական կռիվներին, և Կոստանդ լքելով մայրաքաղաքը, կարող էին այն տպավորությունը թողնել հանրության վերա, թե ուժի կշիռը հակվում էր արաբների կող-

մը: Հայաստանը անցավ արաբներին 652 թվին և այդպես մնաց մինչև 682 թիվը: Համազասպի ապստամբությունը ժամանակավոր երևույթ էր: Նույն վիճակն ունեցան և Վիրք ու Աղվանք: Մուավիայից, ավելի ճիշտ նրա որդու Եզիդի մահից հետո [683 թ.] նորից սկսվեցին գահակալական կռիվները: Հայերն օգտվելով այս հանգամանքից փորձեցին թոթափել արաբական լուծը: Այս առթիվ Ղևոնդ պատմագիրն ասում է. «Դադարեցին ի հարկատուութենէ նոցա Հայք, Վիրք, Աղուանք, ծառայեալ նոցա ամս Լ»[1]: Ապստամբությունը տևեց երեք տարի, չորրորդ տարին Գիրգոր Մամիկոնյան, շարժման ղեկավարը, ընկավ խազարաց ճակատում 685 թվին: Երեսնամյա ծառայությունը պետք է համարել 652 թվից մինչև 682 թիվը: Պատմագիրը մեծ կշիռ չէ տալիս Համազասպի ապստամբության: Ամեն պարագայիւմ Մուավիա վերականգնեց 662 թվին խախտված դրությունը Հայաստանում: Աղվանք և Վիրք Հայոց հետ համերաշխ էին և հավանորեն նրանք ևս հպատակեցին արաբներին 662 թվին: Եթե Կաղանկատվացին հիմն ունի այդ քաղաքական փոփոխությունը վերագրելու Ջևանշերի ճախածեռնության, այդ պետք է կատարված լինի միաժամանակ հայերի հետ 662 թվին և ոչ թե տարիներ հետո՝ 667 թվին: Դամասկոսի աթոռանիստ լինելու վեցերորդ տարին ճշտիվ պահել է, հակառակ պատմագրի սխալ հաշվին, փոփոխության իսկական թվականը:

Երեք տարուց հետո, ուրեմն 670 թվին, խալիփան նորից հրավիրեց Ջևանշերին ավելի մեծ պատիվներ տալու համար: «Ճոխաք քաղաքին Քիւզանդեայ եկեալ էին յանճն առնուլ զլուծ հարկատուութեան որդւոցն Հագարու», կարծում է մեր պատմագիրը, հիշելով որ Կոստանդին կայսրը սպանվել էր իր թագավորության 30րդ տարին, ուրեմն 670 թվին, նույն տարին, երբ Ջևանշեր գնաց Դամասկոս: Մեծամեծ պատիվների արժանացավ Աղվանից իշխանը. խալիփան «զհարազատ եղբօր իւրոյ ապարանս ի հանգիստ նմա յօրինել հրամայէր և յընթրիս միշտ ընդ իւր նստել ի սեղանն»: Կայսերական պատգամավորները, տեսնելով նրա մերձավորությունը արաբական պետին, դիմեցին նրա բարեխոսության: Խալիփան շնորհեց Ջևանշերին հնդկական մի փիղ և մի պապակ (թութակ): Շնորհեց նաև «առւսեր պողովատիկ, ոսկեպատեան, մարգարտահեծ գեղաշարեալ, պատմուճանս ոսկեհուռս ստաւրակս և դիպակ աստիրերաւն և զուարճատեսիլ ծիրանիս», «յիւսուն և երկուս ձիս երագաքայլս, յորս ինքն թագաւորն նստէր»: Խալիփան հրամայեց «տիկնաց դժխոյին», այսինքն՝ իր առաջին կնոջ, պատրաստել Ջևանշերի կնոջ համար «զթագուհեաց հրաշապաճոյճ գեղազարդութեան մետաքսաւոէջ և ոսկեհիւսեալ զգեստ»: Իշխանի հետևորդներին ևս, որ մոտ 50 հոգի էին, ընծայեց «տիպակս և ճեղենակս»: Ավելին կա: Թագավորը

[1] «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս.Պետերբուրգ, 1887, էջ 15:

նրան տվեց «Միւնաստանեաց իշխանութիւնը» և թախանձեց, որ հանձն առնէ իշխել նաև «յայնկոյս գետոյն Ատրպատականացն»: Բայց Ջևանշեր համեստությամբ հրաժարվեց, չուզենալով «տիեզերական կողմանցն միահեծան իշխանությամբ ճոխանալ» և լավ համարելով «զընտանին խորհել օգուտ»:

Ջևանշեր խնդրեց և ստացավ հարկերի թեթևություն: Հրաժեշտին՝ թագավորը «տայր նմա զաջ իւր» որպես նշան բացառիկ մեծարանքի: Իշխանը դարձավ իր աշխարհը և փութաց գնալ «ի տուն Տեառն», այսինքն՝ Գարդմանի եկեղեցին, և գոհանալ «զանպատում պարգևացն Աստուծոյ»: Հետո իջավ իր ձմերոցը՝ Պերոզ-Կավատ: Անդ եղավ «համաշխարհական ժողով», շարունակում է պատմագիրը, «և տեսանէաք» թագավորական հավը, «տեսանէաք» և վիմահասակ փիղը, «տեսանէաք» և «զերիվարս ածեալս» (Բ, գլ. ԻԸ)*[•]*:

(10) դաշտը, իսկույն երևան է բերում բյուր և շփոթ տեղեկություններ: Այսպես օրինակ, Ջևանշերի երկրորդ այցը Դամասկոս դնում է Կոստանդինի 30-րդ տարին, այսինքն՝ 670 թվին. այդ միջոցին բոլորում էր իշխանի սպարապետության 33 տարին (637+33)=670: Հաշիվը հետևողական է, բայց սխալ հիմնովին: Կոստանդինի կայսրը 670 թվին կենդանի չէր: Նա թագավորեց 27 տարի և ոչ 30, և սպանվեց 668 թվի հուլիս ամսին՝ Սիկիլիա[1]: *Այցի պատմականությունն իսկ կասկածելի է դառնում: Որևէ պետքի համար չէ, որ Աղվանից իշխանը հանձն է առնում հեռավոր ճանապարհորդության և ոչ իր հոժարությամբ, այլ հարավո թագավորն է կանչում «պարգևախոստ հրաւիրանաւ»: Կարծես թե այցը հնարված է այն նպատակով, որ միանգամ ևս ցուցադրվին այն մեծարանքն ու պարգևները, որոնց արժանացավ Աղվանից իշխանը արաբ վեհապետի կողմից: Այստեղ ևս ամեն ինչ այն աստիճան արտառոց չափերի է հասցված, որ իրողությունն անգամ հավատ չի ներշնչում: Թագավորի և թագուհու նվերները Ջևանշերին, իր կնոջը, իր 50 ընկերներին՝ սուսեր ոսկեպատյան, մարգարտահոծ պատմուճաններ, ոսկեհուռ ստավրակներ, 52 ձի, փիղ, պապկա, ոսկեհյուսակ զգեստներ, դիպակ ու ճե-*

• Մեզ տրված [«Ամենիա»-ի] հաջորդ թվով (11):

[1] «Գիրք կայսերաց», էջ 77: Կոստանդինի տալիս է «ամս քսանևինն»: Գրիգոր Մամիկոնյանի արձանագրությունը Արուճի Ս. Գրիգոր եկեղեցու պատի վրա գրված է. «Ի և Ը ամի Կոստանդնի»: Հ. Օրբելի («Надпись 670 г. о построении Аручской церкви», տե՛ս «Христианский Восток», т. II, вып. 1, СПб., 1913, стр. 138-142) իրավունք ունի թևրևս կասկածելու սրա վավերականության, որին համամիտ չէ Գարեգին Սրբազանը (տե՛ս Գ. Հովսեփյան, Գրչության արվեստը հին Հայոց մեջ, մասն Գ, Վաղարշապատ, 1913, էջ 9): Կոստանդին թագավորել է միայն 27 տարի (641-668):

դեմակներ և այլն, չափազանցություններ են պարզամիտ ներքողաբանի: Փիղը՝ անարի կենդանի է, վիմահասակ, գերաճած սրունքներով, «որպէս լեառն ինչ», ահա մեր հեղինակի տեսողության չափոցը:

Կարելի՞ է վստահել, որ Պերոզապատի փիղն ու պապկան իրոք արաբական ընծա լիներ Ջևանշերին: Վերհիշենք, որ Տիզրոնի մոտ՝ Բեկղաղ և Դաստակերտ արքայական դղյակներն ունեին կենդանական պարտեզներ լի ամեն տեսակի անասուններով՝ փասիանից սկսած մինչև ջայլամն ու փիղը: Հերակլ կայսրը կործանեց դղյակները, կողոպտեց պալատների գույքը և ոչնչացրեց կենդանոցները, բաժանելով անասուններին իր զինվորներին: Չորս փիղ էլ ինքը՝ կայսրը, տարավ Կ. Պոլիս, մեծ զվարճություն պատճառելով քաղաքի ամբոխին: Ակամայից միտք է ծագում, արդյո՞ք Պերոզապատի փիղն ու պապկան Բեկղաղի նախկին բնակիչները չէին, որ բաժին էին ընկել Հերակլի բանակի հայ-աղվան զինվորներին և սրանք բերել էին Աղվանք:

Պատմագրի ասելով «համաշխարհական ժողով» է եղել Պերոզապատ հազվագյուտ կենդանիները և ճիները տեսնելու համար: Ուզում է ասել ժողովրդի բազմությունը գալիս էր նայելու: Փղի և պապկայի նկարագրությունը և «տեսանէաք» առաջին դեմքը կարող են կարծել տալ, որ հեղինակը ներկա է եղել ցուցահանդեսին և ուրեմն ժամանակակից մարդ է, մանավանդ որ դիմում է Ջևանշերին և բարեմաղթում երկյուղած երկար կյանք: Այսպես են հասկացել Կ. վ. Շահնազարյանց, Գ. Զարպհանալյան և հայր Վ. Հացունի: Իսկ վերջինս կարծում է, թե Կաղանկատվացին գրել է ճիշտ այդ թվին, որ է 670 և վայր դրել իր գրիչը:

Հարկավ, եթե միայն այս տեղիքը կարդանք, կգանք նույն եզրակացության: Բայց երբ քննում ենք ինչ որ պատմում է մեր հեղինակը Ջևանշերի մասին, համոզվում ենք, որ նա ժամանակակից չէ Ջևանշերին, քանի որ իր տեղեկությունները թերի և թյուր են և այնպիսի սխալներ կան, որ ժամանակակից գրողը չէր կարող գործել: Հետևաբար «տեսանէաք» ասելով հեղինակն ինքն իրեն չի հասկանում, այլ թե մենք ընդհանրապես, մեր երկիրը տեսավ առաջին անգամ մինչև այն մեզ անծանոթ փիղն ու պապկան: Ինչ վերաբերում է վերջաբան խոսքերին՝ ուղղված Ջևանշերին, այդ ևս ապացույց չէ հեղինակի անձնական ծանոթության, այլ գրական ձև է: Ջևանշերի դրվագը վեպ է, քան պատմություն և հեղինակը մի դյուցազներգու, որ երգել է իր հերոսի գործերը արտաքին ճակատում, հաջողությունները չորս աշխարհակալների մոտ, փառավորել անունը ինչպես մի նոր Կոստանդին Մեծ: «Այլևս ի՞նչ է մնում քեզ անելու, ո՛վ տեր իմ Թեոդորոս, - գոչում է նա, - եթե ոչ Աստծուն ծառայել»: Թեոդորոս Ջևանշերի անունը չէ, ինչպես հայր Հացունի է սխալ հասկացել, այլ բառախաղ է, որով ճարտասան հեղինակը ու-

զում է ասել, թե իր տերն Աստվածատուր է կամ **Աստվածաշնորհ**, *ինչպես ասված է կայսրին ուղղված նամակում (Բ, գլ. Ի), բառի ստուգաբանական իմաստով, և միևնույն ժամանակ մի ակնարկ է, թե իր տերը՝ մի նոր մեծն Թեոդորոս է: Հեղինակի բարեմաղթությունը՝ «Սիրել զԱստուած, երկնչել ի նմանէ և գնալ ի ճանապարհս նորա», միայն վերջաբան խոսք չէ, որով փակում է մինչև այն պատմածը, այլ և նախաբան է այն դրվագի, որ պիտի պատմե, մի նախադուռն հետևյալ գլուխների, ուր նկարագրվում է Աղվանից աշխարհի մեծագույն սրբությունների հայտնաբերությունը՝ Մաշտոցի և իր աշակերտների սրբազան ժառանգությունը, Գիսի և Չղախի խաչերը, որ գետնի տակ դարեր մնալով անհայտնության մեջ, երևան են գալիս հրաշքով Ջևանշերի օրով: Եվ շնորհիվ Ջևանշերի եկեղեցիներ են շինում նրանց վերա:*

Երկու հատվածները (Բ գրքի ԺԷ-ԻԸ և ԻԹ-ԼԴ) սերտորեն կապված են միմյանց. առաջինը վերաբերում է Ջևանշերի արտաքին գործունեության և նրա հաջողության բարոյական հիմը Գարդմանա «կենդեղուտ խաչն» է. երկրորդը՝ ամփոփում է նրա սրբակյաց կյանքը, որի արտահայտությունն է Գիսի և Չղախի սրբավայրերի հովանավորությունը: Սխալ է ուրեմն, թե պատմագրի գրիչը կանգ է առած ԻԸ գլխի վերջ և թե հետևյալ գլուխները պատկանում են ուրիշ գրչի: Լեզուն իր հատկանշանական բառամթերքով, ոճն իր դարձվածներով և հորդաբանությամբ մնում են նույնը երկու հատվածների մեջ:

Ջևանշերի մահը նկարագրող գլուխը ևս մեր պատմագրինն է: Գրելու եղանակը չի փոխվում: Բառերի և նախադասությունների կուտակների միջից հազիվ կարելի է հասկանալ բուն եղելությունը: Ջևանշեր հանգստանում էր բարձր լեռների հովտում, երբ ոմն ոճրագործ սուսերահարում է նենգորեն իշխանին և փախչում դեպի «վերնակողմն Արձախունեաց»: Չնայելով, որ իշխանը մենակ չէր, այլ իր մոտն էր «նամեսական գունդը». և իր քեռորդին՝ ոմն պատրիկ «զիւր ամենսական (կարդա՛ նամեսական[1]) *առեալ լեգէոն գնդի յիսնեկան» մահապարտի հետևից է ընկնում, բայց չի հաջողում բռնել: Ո՞վ էր մահապարտը, որոշ չէ. իշխանի մերձավորներիցն էր. «ո՛չ զսէր նորա և ո՛չ զպատիւն հօրն իւրոյ, զօր գտեալ էր ի նմանէ մեծաւ պարգեօք, յիշեալ, այլ մահ խորհեալ ի վերայ նորա»: Թվում է, թե իշխանը զոհ է գնացել դավաղրության՝ «Առեալ չարաբարոյն* **Եննեայ** *դաւաճանողին Վարազոյի, զվաղրն արքունական» ուղեկցում է Ջևանշերին, բայց ինքը չէ մահապարտը, մի ուրիշն է, որ «յետուստ կռմանէ հարկանէր զիշխանն արի»: Եննեա*

---

[1] **Նամեսական և <ն>ամեսական՝ թվում է, թե հունական Nemesis բառն է, և նշանակում է վրեժ, արդարություն խնդրող գունդ, թե endemenoi.**

անունն անծանոթ է: Մեզ թվում է, որ պետք է կարդալ **Եմակա**. *այսպես է կոչում հայտնի Ամակ [Պարթևին] մեր պատմագիրը Ա գրքի ԺԴ գլխում: Դավաճանողը Վարազո է, որին ճմանեցնում է հեղինակը չարագործ Ամակին: Վարազո՝ փաղաքշական ձևը Վարազմանի, Ջևանշերի ազգականն է, և սա է դավադիրը, սպանողը սրա գործիքն է:*

Դավթակ անունով մի քերթող, որ «յոլովիւք աւուրքք ժամանեալ յամէր ի դրան արքունի», մի Ողբ է շարադրում իշխանի մահվան առթիվ: Ողբը բերված է ամբողջովին Բ գրքի ԼԵ գլխում: Առաջին տունը սկսում է Այբ-ով, երկրորդը՝ Բեն-ով և այսպես կարգով մինչև Քէ՝ ընդամենը ուրեմն 36 տուն: Մ. Քրոսսեի օրինակը և Մոսկվայի հրատարակությունը վերջանում են Ճէ տառով, ուր հիշվում է Ջևանշերի անունը: Կարծես, իրոք, մինչև Ճէ է եղել սկզբում և շարունակել է ուրիշը: Թեև անհավանական է, ի նկատի ունենալով, որ այբուբենի վերա է և ուրեմն մինչև վերջին Քէ տառը պիտի հասցրած լիներ հեղինակը: Եթե Ջևանշերի անվան հիշողությունը չլիներ Ճէ տան մեջ, ոչինչից չէր կարելի գուշակել, որ Ողբի առարկան Աղվանից իշխանն է: Փաստացի ակնարկներ չկան: Բայցևայնպես այն տպավորությունն է թողնում, համեմատելով ինչ-որ պատմագիրն է պատմում մահվան վերաբերյալ, որ Ողբը միակ աղբյուրն է պատմագրի տեղեկության: Պատմագրի ասելով, սպանությունը կատարվել է «ի ժամանել բարձրութեան տօնին մեծի Նաւակատեաց խաչին»: Ողբի մեջ ասված է. «զի զօր աւուրս տօնի տէրունեան նշանին դարձուցին մեզ ի սուգ» (Ե տունը): Խէ տան մեջ քերթողը հայտնում է. «Խարդաւանող խորհրդօք տարեալ մեկուսի. և անողորմ խոցոտմամբ վիրաւորեաց զվեհազնն»: Այս խուլ տեղեկությունը մեր պատմագիրն արծարծել է քանի մի էջի վերա: Պատմագրի տեսակետին մոտ է նաև Թ տունը. «Թագաւորն Յունաց և իշխանքն հարաւոյ տեսչաւօք խնդրէին տեսանել զտէրն. և հոգնամեծար ողջունիւ ընդունէին. և փառօք պսակեալ պատուէին մեծապէս»: Հետաքրքրական է Տյուն տունը. «Տիրերական ծոցք Լիբանոս լերամբք յագուրդ առնուին քև ի տես միակի ակամբ կալեալ զօձիսն հողմոյն հիւսիսոյ զքեզ միշտ խնդրեն. առ ոչ երևելդ **տապարաւ Հոնաց զկոտորումն նոցնենեաց առնեն**»: *Ընդգծվածս ցույց է տալիս, որ Ողբը հյուսված է ոչ Ջևանշերի մահից անմիջապես հետո, այլ ուշ, քան մահից հետո տեղի ունեցած Հոնաց, այսինքն՝ խազարաց, մի արշավանք: Ակնարկ կարող է վերաբերել միմիայն 685 թվի արշավանքին, Ջևանշերի հաջորդի՝ Վարազ-Տրդատի և Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի օրով: Պատմագիրն ուրեմն օգտվել է Ողբից ավելի ուշ, քան 685 թիվը: Կարևոր կետ, որ ճորապես հաստատում է մեր տեսակետը, թե խաչերի գյուտի պատմությունը, որ առաջ են Ջևանշերի մահից և Իսրայելի քարոզությունը Հոնաց մոտ Ջևանշերի մահից հետո՝ նրա հաջորդ Վարազ-Տրդատի օրով, գրված են ուշ, քան 707 թիվը:*

Ամփոփենք մեր քննության արդյունքները: Ջևանշերի պատմությունը, մի կողմ թողած վիպական զարդերը՝ անարժեք պատմության համար, հանգում է հետևյալ կետերի.

1. Ջևանշեր ութերորդ սերունդն է 590 թվին Աղվանք գաղթած Միհրան Սասանյանի: Անհերքելի:

2. Ջևանշեր օգնել է Ռոստոմ և Խոռազատ պարսիկ զորավարներին արաբական ճակատում 637-642 թվերին, ինչպես Մուշեղ Մամիկոնյան և Գրիգոր Սյունի:

3. Ջևանշեր մերժում է Խոռազատի խնամության առաջարկը և խույս տալիս Աղվանք և հետ մղում պարսից հարձակումները:

4. 652 թվին անցնում է կայսեր կողմը, որ բացարձակ սխալ է, իրականին Աղվանք դաշնակից էր Թեոդորոս Ռշտունում մինչև սրա մահը:

5. 659 թվի տեսակցությունը Կոստանդին կայսեր հետ Քունգր գյուղում, առասպել է: Ուխտանես այդ միջոցին կաթողիկոս չէր:

6. 665 թվին առնում է խազարաց խաքանի աղջիկը:

7. 667 թվին անցնում է արաբների կողմը: Սխալ է, Աղվանք արաբների հետ էր արդեն 662 թվից, ինչպես Գրիգոր Մամիկոնյան:

8. Ջևանշերի երկրորդ այցը Դամասկոս Կոստանդին կայսրի 30-րդ տարին, ավելի քան կասկածելի է: Կայսրը մեռած էր իր 27–*րդ տարին՝ 668 թվին:*

9. Պատմագիրը չգիտե իր հերոսի մահվան տարին: Սպարապետության 33-րդ տարին Ջևանշեր վայր է դնում զենքը: Աղեքսանդր Մակեդոնացին ևս 33 տարեկան վերջացրեց իր աշխարհակալությունը:

Որքա՜ն աղոտ են ստույգ տեղեկությունները վիպական տարրերով, այնքան ճոխացած պատմության մեջ: Հերոսի իրական պատկերը մնում է մթնշաղի մեջ՝ հակառակ իր ներքողիչի ճարտասանական ճիգերին: Հարևան վրացին նման մի դեմք է ստեղծել Վախտանգ թագավորից: Վառ երևակայությունը այնպիսի առասպելական դրվագներ է շարել նրա անվան շուրջ, որ գրեթե անճանաչելի է դարձել Ղազար Փարպեցու ծանոթ պատմական Վախտանգը:

Ջևանշեր սերում է Խոսրով Ապրվեզի ազգական Միհրանից: Ծննդաբանական շղթան այնքան անհեթեթ է, որ կարծել է տալիս, թե պատմագիրը մի քան շփոթել է: Վախթանգ թագավորը ևս Սասանյան ծագումն ունի՝ համաձայն վրաց ազգային ավանդության: Նրա նախահայրն է Միրիան պարսիկը: Սա Կասրե-Արդաշիրի որդին էր: Վրաց արքայական տիրող տունը հանգած լինելով, պարսից թագավորը ղրկում է իր որդուն՝ Միրիանին, բայց որովհետև Միրիան հազիվ յոթ տարեկան էր, թագավորը նշանակում է նրան դայակ ոմն **Միրվանոսի**: *Միրվանոս Կասրե-Արդաշիրի ազգայիններից էր*

և պետք է կառավարեր երկիրը մինչև Միրիանի հասունանալը: Միրվանոսի առաջին գործն եղավ՝ կռվել խազարների դեմ[1]*:*

Կասրե-Արդաշիր միևնույն անձի զույգանուն չէ. այդպիսի բագավոր ծանոթ չէ: Կասրե արաբական ձևն է՝ ընդունված վրացերենում Խոսրով անվան: Արդաշիր է Արտաշիր՝ Սասանյան հարստության հիմնադիրը: Միրիան վրացի ձևն է Միհրան-ի, իսկ Միրվանոս արաբական Մրվան անունը չէ, այլ հին Միրիրանես պարթևական անուն է: Այսպես էր կոչվում՝ *Meriban-es այն անձը, որ պարսիկները բագավոր կարգեցին Վրաստանի՝ մոտ 361 թվականին, [Հայոց] Արշակ II բագավորի օրով, ինչպես հաղորդում է Ամմիանոս լատին պատմիչը*[2]*:* **Միրիրան** *սասանյան ձևն է պարթև* **Միհրպան**-*ի և* **Միրվան** *հետևագույն հնչյունը Միրիրանի (ինչպես Արտավան և Արտաբան) և նշանակում է «Միհրի պաշտպանյալ»: Ավանդությունը պահել է հին Միրիրանի հիշատակը: Միրիան անչափահաս բագավորը, որի հետ գործում է [Միրվանոս] խազարաց դեմ, բերում է մեզ յոթներորդ դար, հասկացնելով, որ Արդաշիրի հետ զուգորդված Կասրե նույն ինքն Խոսրով Ապրվեզ կամ Փարվեզ պարսից բագավորն է: Արդաշիր ձուլվել է Խոսրովի հետ և կազմել մի դեմք: Արդաշիրի ժամանակակից Միրիրան=Միրվան ընկերակցել է Միրիանի, որ պետք է ժամանակակից լինի Խոսրովի: Պատմական դեպքերի խաչաձևումի մի հետաքրքրական օրինակ:*

Արդ, այս ավանդության արձագանքը գտնում ենք Կաղանկատվացու մոտ: Ջևանշերի նախահայրն է Միհրան (մի այլ անգամ Միհրեան, ինչպես վրաց Միրիան), որ ազգական է Խոսրով Ապրվեզի: Տոհմը կոչվում է այս պատճառով Միհրական: Պատմագիրը հակադրում է Միհրական տոհմը նախնի Հայկազյանց տան, որ իշխել է հնում: Այս տունը տվել է տասն բագավոր.

1. Վաչագան
2. Վաչէ
3. Ուռնայր
4. Վաչագան[3]
5. **Միհրատան**
6. Սատոյ
7. Ասայ
8. Եսուաղէն
9. Վաչէ
10. Վաչագան

---

[1] **M. Brosset,** Historie de la Géorgie, t. I, p. 83. «Համառոտ պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի», Վենետիկ, 1884, էջ 40-41:

[2] **Ammiani Marcellini** Rerum gestarum libri qui supersunt, recensuit notisque selectis instruxit V. Gardthausen, v.2, Lpz., 1875, XXI, 6.

[3] Տպագիրն ունի Յաւչագան (էջ 130), որ սխալագրություն է՝ փոխանակ Վաչագան-ի: Արդարև, Ա գրքի ԺԹ գլխի «Մինչև ցթագաւորութիւնն երրորդ Քարեպաշտ Վաչագանայ» խոսքից երևում է, որ հնդիկնակը հաշվում է երեք Վաչագան:

Անտարակույս է, որ ընդգծված անունը՝ **Միրհավան** *ճիշտ վրաց ավանդության* **Միրվան***-ոսն է, հին Միրիքանը: Մեր պատմագրի ասելով Միհրական տան հիմնադիրը շինում է Գարդմանում մի քաղաք և կոչում իր անունով՝ Միհրավան: Չենք կարծում, որ այդպիսի քաղաք եղած լինի: Միհրական նույն անունն է, ինչ որ Միրհավան, այսինքն՝ Հայկազյանց թագավորը: Պատմագիրը հասկացել է որպես* Միհր *և ավան և այս ստուգաբանությունն է թելադրել համանուն քաղաքի գոյությունը:*

Հինավուրց Միրվան կամ Միրհավան և Միհրան կամ Միրհան Սասանյան շառավիղ են համարված այն իմաստով, որ Սասանյան թագավորների պաշտոնյաներ են եղած, բայց արյունով Սասանյան չեն բնավ: Միհրան, ինչպես և Սուրեն, Կարեն, Սպահապետ, Զիկ՝ պարթևական նշանավոր տոհմեր էին, որոնք պահեցին իրենց առաջնակարգ դիրքը նաև Սասանյանների շրջանում: Միրվան և Միրհան պատկանում են Միհրան մեծ գերդաստանին: Խոսրովի ազգային *կարծված Միհրանը այլ ոք չէ, քան հռչակավոր Վահրամ Չուբին Միհրանյան: Սասանյան պետության վերև հիշված չորս քուստակներից մեկի՝ Կապկոհի մեծ սպարապետն էր: Այս քուստակը կոչվում էր նաև Ատրպատական լայն իմաստով՝ ամփոփելով իր մեջ ոչ միայն բուն Ատրպատականը, այլև Հայաստան, Վրաստան,* **Աղվանք** *և Կասպյան ծովեզրյա սահմանակից երկրները: Վրաց ավանդության Միրհանի և իր դայակի՝ Միրվանի իշխանությունը ևս տարածվում էր ոչ միայն Վրաստանի, այլև Հայաստանի,* **Ռանի** *(Առանի=Աղվանքի), Մովականի և Հերեթի վերա:*

Միրհան բերել է տալիս Պարսկաստանից իր մի ազգականի՝ Փերոզ անունով, ամուսնացնում իր դստեր հետ և նշանակում Ռանի՝ Խունանից մինչև Բարդա, տիրակալ[1]: *Հարց է, արդյո՞ք Պարտավի Պերոզապատ կոչումը կապ չունի այս Պերոզի հետ ավելի, քան Պերոզ թագավորի: Ուրեմն, Փերոժ անունը ընդունված էր Միհրական տոհմի մեջ և կարող էր հին հիշատակ լինել: Պարսկական աղբյուրները Կավատին են վերագրում Բարդայի (=Պարտավի) շինությունը, որտեղից և Փերոժ կամ Պերոզ-Կավատ անունը: Կավատ շինող չէ, այլ վերաշինող և հավանորեն իր նշանավոր զորավարի՝ Զարմիհրի ձեռքով: Սա մեր պատմագիրների Զարմիհր հազարավուխտն է, որ Աղվանքում կռվում էր լեռնականների դեմ, երբ հրաման ստացավ Պերոզից գնալ զսպել Վահանի ապստամբությունը 482 թվին*[2]*: Պերոզի որդու և*

---

[1] **M.Brosset,** Histoire de la Géorgie, t. I, p. 87 և 133. «Համառոտ պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի», էջ 42 և 63:

[2] **Ղազար Փարպեցի,** Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 118: **Th. Nöldeke,** Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden aus der arabischen Chronik des Tabari, Leyden, 1879, p. 120-121.

հաջորդի՝ Կավատի օրով Զարմիհր ավելի ազդեցիկ դիրք ստացավ, բայց հետագայում շնորհազուրկ եղավ և սպանվեց:

Զարմիհր անունն այնքան հազվագյուտ է, որ ենթադրել է տալիս մի ազգակցական կապ պարսից դրանիկի և Աղվանից իշխան Զառմիհրի մեջ: Կաղանկատվացին ասում է, որ Վարդան Միհրականը բնաջինջ արավ հին Հայկազյանց տոհմը, խնայելով միայն Զառմիհրին, որ «իր ցեղի փեսա էր»: Սրանով Զառմիհր նմանում է վրաց ավանդության Փերոզին, որ փեսա էր Միրիան թագավորի: Աղվանից Զառմիհր Միհրական չէր, ուստի և Կաղանկատվացին նրան դասում է Հայկազյանց շարքը: Պարսիկ Զարմիհր Հազարավուխտը ևս Միհրան տոհմից չէր, այլ Կարեն: Աղվանից իշխաններից մեկը կոչվում էր Զարմիհր Վարազ-Քուրդակյան՝ «յազգէ թագաւորաց», 704 թվին: Թագավորական ծագումը նշանակում է, թե պատկանում էր Հայկազյանց ցեղին: Արդյո՞ք Զարմիհր անունը հասարակ հիշատակ է Զարմիհր Հազարվուխտի որպես Աղվանքի երրեմնի կուսակալի, թե նշան է արենակցական առնչության Հազարվուխտի և Աղվանից իշխանական տան մեջ:

Վրաց ավանդությամբ, Վախտանգ Գորգասալի (Գուրգասարի) դարում Ռանի (Առանի) իշխանն էր ոմն Բարզաբռդ[1], *որին հաջորդեց որդին՝ Վարազ-Բակուր: Վախտանգ ամուսնացած էր Բարզաբռդի դստեր, ուրեմն Վարազ-Բակուրի քրոջ հետ: Իր սպարապետը և դայակը կոչվում էր Ջվանշեր և սրա հորեղբայրը՝ Վարազ-Միհր*[2]*: Այն հանգամանքը, որ Ջվանշեր դայակ էր Վախտանգի՝ Աղվանից իշխանուհու զավակի, այլև իր և իր հորեղբոր անունները, գրավական են, որ [նրանք] Աղվանական տանից են:*

Նույն վրացի աղբյուրից տեղեկանում ենք, որ Հերակլ կայսրը Տփղիս գրավելուց հետո գնացել է Գարդաբանի իշխանի՝ Վարազ-Գագելի դեմ, հաղթել Խոզաշեն գյուղի մոտ և մկրտել իր ժողովրդի հետ և հիմնել նույն գյուղում մի հոյակապ եկեղեցի: Անցել է Բերդույ և իր մոտ՝ Լալ [քնակավայր] կանչել Մեծեկվենի իշխաններին, նրանց ևս մկրտել և հեռացել դեպի Բաղդադ[3]:

Գարդաբան՝ Գարդման գավառն է և Վարազ-Գագել պետք է կարդալ Վարազ-Գիգոլ, ինչպես դիտել է արդեն Մ. Բրոսսե և նույնացրել Վարազ-Գրիգորի հետ, Ջևանշերի հայրը: Մեծեկվենի՝ Արցախի Մեծկուենից գավառն է և կապ չունի Լալ-ի հետ: Այս ժամանակները վրաց իշխան է հիշվում Աղարնասե, հավանորեն Մծխեթի արձանագրության Աղարնասե հյուպատը, որի իշխանության տարիները հաշվում են 619-639 թվերին: Կաղան-

[1] **Ջուանշեր**, էջ 73:

[2] **M. Brosset**, Histore de la Géorgie, t. I, p. 146, 149, 170.

[3] Անդ, էջ 228:

կատվացու Ատրներսե վրաց իշխանը, որի օգնությամբ Ջևանշեր վանեց պարսից հարձակումները՝ 642 թվի մոտերքը, կարելի է և պետք է համարել նույնը Ադարնասե հյուպատի հետ, երկարելով նորա իշխանությունը:

Այս Ադարնասեի թոռն՝ Միր (=Միհր, 663-668) յոթ աղջիկ ուներ: Իր մահից հետո եղբայրը՝ Արչիլ, ամուսնացրեց բոլորին: Փեսաների թվում էին Վարազման, որ ծագում էր Բարդայի (=Պարտավի) պարսիկ իշխանից, այսինքն՝ Վախտանգի քեռի Վարազ-Բակուրից և Ջևանշեր Ջևանշերյան, որ Միրհան թագավորի Ռև որդու սերնդից էր[1]:

Աղջիկների թիվը, անշուշտ, առասպելական է, բայց իր պատմական արժեքն ունի այն իմաստով, որ Արչիլ բաժանում է փեսաներին իր եղբոր հողերը: Ներկայացնելով մեզ այս կերպով ժամանակի յոթ իշխանությունները՝ իրենց հողային սահմաններով: Վարազման ստանում է որպես բաժին Կոտմանից մինչև Քուրդիս-խև, իսկ Ջևանշեր՝ Խերկ և Մթնուլեք: Կոտման ապահովապես Գարդմանն է և Վարազման՝ Կաղանկատվացու համանուն իշխանը, Ջևանշերի եղբայրը: Վերջինիս որդին կոչվում էր Վախտանգ[2], *որ նշան է մեր վրացի ծագման:*

Ջևանշեր Ջևանշերյան, թեև ասված է, թե Ռևի սերնդից էր, բայց անունը կարծել է տալիս, որ արյունակից էր Վախտանգ Գորգասալի դայակ և զորավար Ջևանշերին:

Այս հատուկտոր տեղեկությունները, ինչ և լինեն իրենց արժեքը, որ տրամադիր չենք չափազանցնելու, ցույց են տալիս, որ մի շարք անձեր, ինչպես Փերոզ (համմտ. Կաղանկատվացու Վարազ-Պերոժ), Քարզարդ (աղավաղված գուցե Վարազ-Վարդ), Վարազ-Բակուր, Վարազ-Միհր, մի քանի Ջևանշերները՝ իշխել են Աղվանքում ամեն պարագային հառաջ, քան Խոսրով Ապրվեզ: Կաղանկատվացին թվում է ութ սերունդ՝ Միհրական տան հիմնադրից մինչև Ջևանշեր: Հաշվենք սերունդը քսանական տարի, մերձավորապես յոթ սերունդի համար հարկավոր է 140 տարի: Հետևաբար Ջևանշերի նախահայրը պետք է ապրած լինի հինգերորդ դարի կեսերին, այսինքն՝ Վախտանգի ժամանակ:

Մի կարևոր պարագա: Խոսրով Ապրվեզի անկումից հետո, մի շարք անձեր հաջորդեցին կարճատև իշխանությամբ: Նրանցից մեկը, որ գահ բարձրացավ Շահրվարազից (629) հետո կոչվում է Ջևանշեր-Կասրե (= Խոսրով): Արդ, այս Ջևանշեր համարվում էր Վահրամ Չուբինի քեռորդի[3]: *Արդյո՞ք Վահրամ Չուբին իր պաշտոնավարության ատեն խնամացել է Աղվանքում*

[1] **M. Brosset**, էջ 248.

[2] **Մովսես Կաղանկատվացի**, Գիրք Գ, էջ 21, 26, 38:

[3] **Mirhond**, Histoire des rois de Perse de la dynastie des Sassanides, trad. par Silvestre de Sacy, Paris, 1893, p. 411.

տեղական իշխող տան հետ և Միհրական տան նախահայրը՝ Միհրան, որ Չուրինի տոհմական անունն է, չէ՞ անդրադարձնում խնամության կապը:

Խազարները 728 թվին արշավեցին Ատրպատական և պաշարեցին Վարդան(ակերտ) քաղաքը՝ Երասխի աջ ափին: Յազդակ անունով մի իշխան, որ տիրում էր Բայլականի, պաշտպանեց քաղաքը և վանեց թշնամուն: Արդ, Յազդակն իրեն համարում էր Սասանյան ցեղի շառավիղ[1]: *Բայլական Հայոց Փայտակարանն է, Դաշտային Աղվանքի գավառներից մեկը: Թերևս Սասանյան այս տոհմի ազդեցությունն է, որ Պարտավի Միհրական տունը ևս բյուրիմացությամբ Սասանյան է կարծվել, ինչպես տեսնում ենք Կաղանկատվացու մոտ*[2]*: Պարսկական ծագումով ուրիշ տներ էլ են եղել Աղվանքում, որոնց կանդրադառնանք ստորև (12):*

[Ե (13)]

Ջևանշերին հաջորդում է Վարազ-Տրդատ: Սրա իշխանության ճվիրված հատվածը բռնում է տաս գլուխ, երկրորդ գրքի ԼԶ-ԽՉ: Ոճը և ոգին նույնն է, ինչ որ Ջևանշերի պատմության մեջ տեսանք: Ճշգրիտ եղելություններ շատ չեն և եղածները կասկածելի են ու ծավալում մանրամասնությունները, եթե վստահություն ներշնչելու համարին, չեն հասնում նպատակին:

Ջևանշերի մահվան սուգը հազիվ փարատած, Եղիազար կաթողիկոսը և իշխանները խորհրդակցում են և ընտրում «զնախարար ոմն աւագ, որ մեծարեալ էր կայսերական պատուով զպոտիւպատ պատրկութեան ստացեալ պատիւ. որոյ անուն էր Վարազ-Տրդատ՝ որդի Վարազ-Փերոժի՝ եղբօր Ջևանշէրի» (Բ, գլ. ԼԶ):

Նորընտիր իշխանը հակառակորդներ ուներ հանճին «մախայորդոր տոհմակցացն»: Ակնարկը խուլ է և թվում է, թե վերաբերում է Շերոյին, որ Վարազ-Տրդատի մահից հետո խլում է գահը նրա կնոջից, ինչպես կտեսնենք: Զարմանալի է, որ պատմագիրը ոչինչ չունի ասելու Ջևանշերի զավակների մասին, ի՞նչ եղան նրա պատրիկ որդիները և ինչո՞ւ չհաջորդեցին հորը:

Վարազ-Տրդատ, ընտրությունից հետո, աճապարում է Պարտավ, երևի Գարդմանից, որի տոհմական իշխանն էր: Այդ միջոցին Հոնաց մեծ իշխան Ալփ Իլիթվեր գալիս է մեծ զորքով «Աժխուժազնեանն յաշխարհէն Գովգայ»՝ վրեժխնդիր լինելու «արեան Ջևանշէրի»: Հոնաց իշխանը բազմությունը բող-

---

[1] **Tabari,** Chronique, traduite sur la version persane par H. Zotenberg, t. IV, Paris, 1874, p. 278.

[2] **Մովսես Կաղանկատվացի,** հատ. Ա, էջ 286; հատ. Բ, էջ 26, 54, 67:

ցնում է Կապպադոկ գավառում և ինքն իր գնդով անցնում Կուր գետը, ասպատակում Ուտի գավառը և մեծ ավարով հեռանում Լփնաց աշխարհը: Վարազ-Տրդատ ղրկում է նրա մոտ Եղիազար կաթողիկոսին բացատրելու, թե «չէաք մեք հաղորդ սպանմանն Ջևանշէրի. այլ ի ձեռն վատանշան առն միոյ նուազագունի եղեն ոճիրք»: Բանակցությունը հաջողում է: Հոնաց իշխանը մեղմանում է և հավանում «օգնական և թիկունք» լինել Վարազ-Տրդատի իշխանության և քաշվում իր երկիրը (Բ, գլ. ԼԶ):

Աղվանից իշխանն ու կաթողիկոսը տեսնելով, որ ծանր է...

Այս անցքերի ժամանակը պատմագիրը չէ տալիս, բայց դժվար չէ որոշել իր իսկ տվյալների հիման վրա: Վարազ-Տրդատ և Եղիազար, «հարաւայնոյն իշխանութեանն», այսինքն՝ Հիջրի 62-րդ տարին, խորհում են մի եպիսկոպոս ղրկել Հոնաց իշխանի մոտ սեր և խաղաղություն հաստատելու համար: Եպիսկոպոսը ուղի է ընկնում 682 թվի հունվարին: Հետևապես 681 թվականին Վարազ-Տրդատ արդեն իշխան էր: Իր ընտրությանը մասնակից էր Եղիազար: Սա կաթողիկոս էր 680-686 թվականներին: Հետևապես Վարազ-Տրդատ ընտրված պետք է լինի 680 թվականի վերջերը կամ 681 թվականի սկզբները: Հոնաց իշխանի արշավանքը նույն 681 թվին էր, որից հետո Աղվանից իշխանն ու կաթողիկոսը խորհում են միջոց գտնել վերջ տալու կարևոր ասպատակություններին: Եվ որովհետև Հոնաց իշխանի հարձակումը նպատակ ուներ պատժելու իր փեսա Ջևանշերի սպանողներին, ուստի և վերջինիս սպանությունը չէր կարող շատ առաջ կատարված լինել, այլ հավանորեն 680 թվականի վերջերին կամ 681 թվականի սկզբներին:

Պատմագիրս չգիտե կարևոր քաղաքական անցքերը, որ տեղի ունեցան Վարազ-Տրդատի իշխանության շրջանում:

Աղվանքը թոթափեց արաբական լուծը 682 թվին՝ հայոց և վրաց հետ: Երեք տարի անկախ մնացին: Չորրորդ տարին խազարները խուժեցին Աղվանք: Նրանց դեմ ելան երեք երկրները՝ Գրիգոր Մամիկոնյան, վրաց և աղվանից իշխանները և ընկան կռվի մեջ 685 թվի հուլիսի 5-ին[1]:

---

* Մի քանի բառ ջնջված է (Պ. Հ.):

[1] «Անանուն ժամանակագրութիւն» (=«Գիրք կայսերաց»), էջ 80՝ Հուստինիանոս II-ի առաջին տարին **«տիրեցին հիսխատյին ազգն, որ ասին խազիրք** (Հազիրք) Հայոց, Վրաց և Աղուանից, յամսեանն սահմի, որ աւր տասն էր ամսոյն ի ՃԼԴ թուականին Հայոց»: Հմմտ. **Ղևոնդ**, էջ 15-16՝ «Եւ ի ժամանակի պատերազմին որ ի մէջ Տաճկաց՝ դադարեցին ի հարկատուութենէ նոցա Հայք, Վիրք, Աղուանք, ծառայեալ նոցա ամս Լ: Եւ եղեն աւուրք ապստամբութեան նոցա ամք Գ: Եւ ի չորրորդում ամին **տիրեցին ի վերայ աշխարհիս Հայոց հիսխատյին ազգն, որ ասին Խազիրք**, և սպանին ի պատերազմին զիշխանն Գրիգոր և զբազումս ի նախարարացն և զիշխանսն Վրաց և Աղուանից»: Ընդգծված բառերը ցույց են տալիս, որ կամ մեկը մյուսին կախում ունի կամ երկուսն էլ օգտվել են միևնույն աղբյուրից: Ցո. Մարկվարտ «Քազրատունյաց ծագու-

Միևնույն տարին Արդ ալ-Մալիք [խալիփան] խաղաղության դաշն կնքեց Հուստինիանոս II-ի հետ նախկին պայմաններով, այսինքն՝ վճարել հոժարելով օրական հազար ոսկի, մի ձի և մի ստրուկ: Թեոփանեսի վկայությամբ, երկու կողմերը համաձայնել էին նաև իրենց մեջ կիսել Կիպրոսի, Հայաստանի և Վրաստանի հարկերը[1]: *Սակայն Հակովբ Եղեսացին, անցքերին ժամանակակից գրող, ուրիշ բան է ասում. Կիպրոսն անցնում էր տաճիկներին, բայց պիտի հարկ վճարեր նաև կայսրին, իսկ Հայաստան, Ջուրզան (=Վիրք), Արզոն (կարդա՝ Առան) և Ատրպատական պատկանելու էին կայսրության*[2]:

Հուստինիանոսի երկրորդ տարին կայսերական զորքը մտավ Հայաստան, ավերեց երկիրը և ավարառությամբ վերադարձավ, ըստ Ղևոնդի[3]:

Թեոփանես հաղորդում է, որ զորքի հրամանատարն էր Լևոնտիոս, որ ջարդեց արաբներին և կայսերական իշխանության տակ առավ Հայաստան, Վիրք, Աղվանք, ***Boulkakis***, *որ Մովսականն է և Մարք, այսինքն՝ Ատրպատական, այլև հավաքեց հարկերը և առաքեց կայսրին*[4]:

Գրիգոր Մամիկոնյանի մահից հետո և կնքված դաշինքի զորությամբ Հուստինիանոս նշանակել էր Հայոց իշխան Աշոտ պատրիկին՝ նույն 685 թվին: Իր իշխանության չորրորդ տարին՝ 688-689 թվականին, Աշոտ կռիվ ունեցավ արաբների դեմ, և մեռավ ստացած վերքից: Երևում է, որ կնքած դաշինքը տարածայնության տեղիք էր տալիս հողային խնդիրների վերաբերյալ կետում: Լևոնտիոս զորավարի և Աշոտ իշխանի ընդհարումները արաբ զորքերի հետ հետևանք էին այդ տարածայնության:

մը» (Վիեննա, 1913) աշխատության մեջ սխալ է հասկացել և հակասություններ գտել Ղևոնդի ժամանակագրության մեջ (էջ 53): Սակայն խոսքը տաճիկների մասին չէ, այլ հայոց, վրաց և աղվանից ապստամբության. երեք տարի հարկ չեն տալիս, իսկ չորրորդ տարին խազարները ընկճում են նրանց: Ասողիկը («Պատմութիւն տիեզերական», Ս.Պետերբուրգ, 1885, էջ 100) երկու անգամ է հիշում խազարաց արշավանքը: Մի անգամ առնելով Հովհաննես Կաթողիկոսից (**Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 93), մյուս անգամ՝ Անանուն ժամանակագրությունից, որտեղից և գիտե ՃԼԴ թվականը: Առաջին անգամ նշանակում է ՃԼ, որ բացարձակ սխալ է, փոխանակ ՃԼԴ: Ցո. Մարկվարտ կարծում է, որ Ասողիկ ի նկատի ունի ՃԼ թվականին՝ հոնաց արշավանքը, իսկ ՃԼԴ՝ խազարաց (էջ 12): Սակայն, երկու դեպքում էլ հիշատակվում է Գրիգոր Մամիկոնյանի սպանությունը և ուրեմն միևնույն կռվի մասին է իր խոսքը, և այն կռվի, որ եղավ ՃԼԴ=685 թվին, իսկ ՃԼ՝ գրչագրի վրիպակ է:

[1] **Theophanes**, p. 555.

[2] **Michel le Syrien**, t. II, p. 469.

[3] **Ղևոնդ**, էջ 17:

[4] **Theophanes**, p. 556. Ըստ Ասողիկի (էջ 100), կայսերական զորքը «երրորդ ամի (=կարդալ՝ երկրորդ) քանդեց 25 գավառ և գերեց ութ հազար մարդ (**քննադրում երդ է - Պ. Հ.**) և ընթեն եկավ «ի միւս ամին» (ուրեմն երրորդ), ապա «ի գալ չորրորդ ամի», ինքն՝ կայսրը, եկավ:

Կայսրն ինքը եկավ Հայաստան իր չորրորդ տարին՝ «եկն ի կողմն մի Հայոց, ի լեառն, որ կոչի Արարատակ, և յերիս բաժանեալ զզօրս իւր՝ առաքէ ի Հայս, ի Վիրս և յԱղուանս», կոչեց իր մոտ երեք աշխարհների իշխաններին և Սահակ կաթողիկոսին հինգ եպիսկոպոսների հետ և «կացոյց իշխանս աշխարհացն, զՆերսեհ Շիրակայ տէր, կոմս Կապոյտիրոց՝ Հայոց իշխան, և զՎարազդատ (կարդալ՝ Վարազ-Տրդատ) պատրիկ էքսարխոս, որ էր երկրորդ թագաւորին՝ **Աղուանից** *իշխան, և ԼՌ զօր օգնական իշխանացն»*[1]: *Ասողիկի այս քանկագին տողերը հաստատվում են Թեոփանեսի վկայությամբ, որ կայսր Հուստինիանոսն իրոք Հայաստան գնաց 6179= 687-688 թվական*[2]: *Ասողիկի տված տարեթիվը գերադասելի է:*

Կաղանկատվացին անգետ է այդ քաղաքական կարևոր անցուդարձին: Նա, որ այնքան մեծ տեղ է տվել հոնաց արշավանքին, չգիտե ոչինչ խազարաց ճակատի մասին 685 թվի: Չգիտե, որ այդ ճակատում ընկել է, մյուս զոհերի թվում, նաև Աղվանից իշխանը: Նրան անծանոթ է, որ Հուստինիանոս Հայաստան է եկել, զորքի մի գունդ մտել Աղվանք, և որ Վարազ-Տրդատը արժանացել է էքսարխոսի մեծ պատվին և կարգվել Աղվանից իշխան՝ 688-689 թվականներին: Աղվանից պատմիչի հավաստիացումը, թե Վարազ-Տրդատ իշխան ընտրվեց 680-681 թվականներին, չի հաստատվում: Հարկավ, այս հակասությունը հարթելու համար, կարելի է ենթադրել, որ կայսրը միայն վերահաստատել է Վարազ-Տրդատին և ոչ նոր կարգել: Սակայն Ասողիկ ասում է որոշակի՝ «կացոյց իշխանս աշխարհացն» և ինչպես կարգեց Ներսեհ Կամսարականին հաջորդելու Աշոտ Բագրատունուն, որ սպանվել էր նույն տարին, նույնպես և Վարազ-Տրդատ հաջորդ էր իր նախորդի, որ մնում է անհայտ, մի նախորդ, որ իշխել էր Ջևանշերի մահից հետո մինչև 689 թվականը:

Կաղանկատվացին մի ուրիշ տեղեկություն ևս ունի Վարազ-Տրդատի մասին: Երրորդ գրքի ԺԲ գլխում պատմում է, որ Վարազ-Տրդատ հարկ էր տալիս միաժամանակ խազարաց, տաճկաց և հոռոմոց: Խիստ էր հոռոմների վարմունքը: Չերբակալեցին իրեն և իր երկու որդիներին և տարան մայրաքաղաք որպես պատանդ: Վարազ-Տրդատ խորամանկությամբ փախավ հինգ տարուց հետո և անցավ արաբների կողմը և նրանց էր միայն հարկատու: Այս իսկ պատճառով որդիները մնացին բանտարկված տասներկու տարի և ազատ արձակվեցին Վարդան Փիլիպպիկոսի գահակալությամբ:

---

[1] **Ասողիկ**, էջ 100-101:

[2] **Theophanes**, p. 557. Արաբչության տարին ճիշտ չէ. ինչպես նկատել եմ քննադատները մի տարով ավելի է նշվում, այնպես որ 6179=686-687 թվական:

Վարդան Փիլիպպիկոս գահ բարձրացավ 711 թվին: Վարազ-Տրդատի որդիները, ուրեմն, պատանդ էին (712-12=) 699 թվականից, իսկ ինքը Վարազ-Տրդատը ազատված՝ (699+5=) 704 թվին: Այս ժամանակագրությունը սխալ է և հակառակ իր իսկ պատմիչի բերած վավերագրին՝ 704 թվի ժողովի արձանագրության, ուր ներկաների թվում կային նաև Վարազ-Տրդատի որդիները՝ Վարդան և Գագիկ: Թողնենք ուրեմն սխալ ժամանակագրությունը և քննենք իրողությունը:

Ասողիկի վերոհիշյալ հատվածի մեջ ասված է, որ Հուստինիանոս կայսրը «զոմանս յիշխանացս ընդ իւր առեալ, և զոմանց զորդիսն պատանդս խնդրեալ, ընդ որս և զկաթողիկոսն Հայոց զՍահակ հանդերձ Ե եպիսկոպոսօք արգելեալ առ ինքն»[1]: *Սրանց բոլորին կայսր տանում է Կ. Պոլիս, ինչպես հայտնի է և հույն Diegesis փոքրիկ գրվածքից (14), թե Հուստինիանոս կայսրը իր հինգերորդ տարին = 689-690 կանչեց Սահակ կաթողիկոսին մայրաքաղաք դավանաբանական խնդրի առթիվ:*

Հուստինիանոս II կայսրը, որ 685 թվին դաշինք էր կնքել արաբների հետ տասն տարվան ժամանակով, լուծեց ուխտը յոթներորդ տարին՝ 691-692 թվին: Արաբները պատասխանեցին զենքով և Կեսարիայի մոտ ջարդեցին կայսերական զորքը: Հայաստանում Ներսեհ Կամսարականից հետո իշխանության գլուխ էր անցել Սմբատ Բագրատունի: Արաբական հաղթության լուրն ստանալով նա երկիրը հանձնեց արաբներին՝ թողնելով կայսեր ծառայությունը, 692-693 թվին[2]: *Արդ ալ-Մալիք խալիփան նշանակեց իր եղբոր Մահմեդին ոստիկան Հայաստանի Հիջրի 73 թվին=692 մայիս 23-693 մայիս 13, մինչ Սմբատի արաբներին անցած տարին և այս հետևանքով*[3]:

Երկար չտևեց նոր դրությունը: Սմբատ ըմբոստացավ արաբների դեմ կայսրի դրդմամբ և օգնությամբ: Ապստամբությունը պայթեց, ըստ Թեոփանեսի, 701-702 թվին: Նույն տարին ունի և Ղևոնդ՝ «յետ ԺԶ ամի իշխանութեանն Արդլ-Մելիքի» (685+16=) 701-702 թվին[4]: *Շարժումը շարունակվեց մի քանի տարի և վախճան գտավ Նախճվանի և Խրամի մեծ աղետի մեջ՝ 705 թվին: Սմբատ վարժատրվեց կյուրապաղատության պատվով, բայց ստիպվեց թողնել հայրենիք, ապաստանել Փոքի, որտեղից վերադարձավ միայն վեց տարի հետո՝ 712 թվին:*

---

[1] **Ասողիկ**, էջ 101:

[2] **Theophanes**, p. 561. Արաբյագործության 6188 թիվը = 692-693: Դաշինքի լուծման տարին տալիս է Միքայել Ասորին (Chabot, II, ըստ հայերեն թարգմանության՝ **Միքայել Ասորի**, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1870, էջ 470):

[3] **Abul-Faradj**, Chronicum, 116. Ibn al-Athir, Kemel-at-Towarikh, ed. C. J. Tornberg, t. IV, Lugduni Batavorum, 1863, p. 294.

[4] **Theophanes**, p. 561՝ Արաբության տարի 6185, համմա. **Ղևոնդ**, էջ 19:

Աղվանից իշխանները զատ քաղաքական գիծ չունեին, այլ հետևում էին հայերին: Վարազ-Տրդատի քայլը մայրաքաղաքից փախչելուց հետո՝ «ետ զաշխարհս Արևելից ի տաճիկս» (Գ, գլ. ԺՔ), այլ բան չէ նշանակում քան, որ հարել է Սմբատի ապստամբության և անցել արաբական ծառայության 693 թվին: Կ. Պոլսում մնացել էր հինգ տարի, ուրեմն գնացել էր (693-5=) 688-689 թվին: Իսկ և իսկ այն տարին, երբ կայսր Հուստինիանոս II Հայաստան էր և հայ իշխանների և կաթողիկոսի հետ վերադարձավ մայրաքաղաք: Բնական է մտածել, որ այս իշխանների թվում էր նաև Վարազ-Տրդատ, և պատանդների մեջ՝ իր որդիները: Նրանք վերադարձան տասներկու տարուց հետո, ուրեմն (688/689+12=) 700-701 թվին: Խորհրդավոր տարի, Սմբատի հակաարաբական ապստամբության տարին: Ինչպե՞ս չխորհել, որ պատանդները արձակված էին այն նպատակով, որ գնան, խրախուսեն ըմբոստական շարժումը, խաղաղ կայսեր խաղը: Չմոռանանք, որ Վարազ-Տրդատի որդիներից գոնե Վարդանը օժտված էր պատրկության պատվով:

Հուստինիանոս II գահընկեց եղավ և աքսորվեց 695 թվին և նորեն գրավեց գահը 705 թվին: Օժանդակողներից մեկն էր Վարազ-Բակուր պրոտոպատրիկ, որ հավատարիմ մնաց Հուստինիանոսին մինչև վերջ և նրա հետ սպանվեց 711 թվին՝ Վարդան Փիլիպպիկոսի հաղթությամբ: Անունը և տիտղոսը իրավունք են տալիս կարծելու, որ սա Աղվանից իշխաններիցն էր, Վարազ-Տրդատի ուղեկիցներից, որ մնացել էր բյուզանդական ծառայության մեջ:

Վարազ-Տրդատի կյանքի այս կարևոր դեպքը հիշատակվում է պատահաբար մի զրուցախառն պատմության մեջ՝ երրորդ գրքում: Իսկ նրան նվիրված հատվածում՝ Բ գրքի ԼԶ-ԽԶ գլուխներում՝ այս մասին ոչինչ չկա: Գլխավոր նյութը հոնաց քարոզությունն է: Աղվանից իշխանի քաղաքական դիրքը որոշում է անցողակի դիտողությամբ և ընդհանուր խոսքերով, թե «ընդունէր զգերագոյն գահն ի հզօր և յարքայակերպ իշխանէն Տաճկաց սահմանակալ լինել կողմանն արևելեաց, և իշխել ամենայն թագաւորութեանն Աղվանից և Ուտէացւոց գաւառին նուաճեալ ընդ ինքեամբ զամենեսին» (Բ, գլ. ԼԷ): Այդ միջոցին մեռնում է Մեծկուենից եպիսկոպոս Դավիթ և հաջորդ է ընտրվում մեզ արդեն քաջածանոթ Իսրայել վանականը: Անսահման է պատմագրի համակրանքը այս անձի հանդեպ: Ս. Սահակ Պարթևի նման հրաժարվել է ուզում առաջարկված պաշտոնից, բայց վերջը հոժարում է հիշելով «զտեսիլ ցուցակութեան նմա ի սուրբ եկեղեցւոջն ի Վաղարշապատ քաղաքի» (Բ, գլ. ԼԷ): Իրա՞վ է, որ Իսրայել տեսիլ էր ունեցել, թե պատմագրի գյուտն է դրվատելու համար ընտրյալ վանականին, մնում է պատմագրի գաղտնիք:

Իսրայելի անունը սերտորեն կապված է նշխարների գյուտին: Այս ան-

գամ ևս ևս հավատարիմ է իր այդ անխուսափելի կոչման: Վարազ-Տրդատ ևրան դրկում է Հայոց կաթողիկոս Սահակի մոտ՝ «վասն սիրոյ», բայց ևոր եպիսկոպոսի բախտը բերում է. «ի ժամանակս յայնոսիկ բերեալ էր իշխանին՝ մեծ զօրավարին Հայոց ի Թորդանայ, ի Դարանաղեաց գաւառէն, զպատուական նշխարս խոստովանողին Քրիստոսի՝ սրբոյն Գրիգորի բոլորովին ամենայն ոսկերօքն հանդերձ յաշխարհին Հայոց՝ յԱյրարատեան գաւառն ի Վաղարշապատ քաղաք՝ հանգուցեալ ի ևորաշէն յարկս եկեղեցւոյն, զոր մեծին Ներսիսի շինեալ է յանուն սրբոյն Գրիգորի» (Բ, գլ. ԼԸ): Իսրայել խնդրում է նշխարների մի մասը: Կաթողիկոսը դժվարանում է տալ, բայց մեջ են մտնում Գրիգոր Մամիկոնյան և իր կինը՝ Հեղինե, որ «Աղվանից ևահանգէն էր» և հաջողում շնորհել եպիսկոպոսին «մասն յօրէնուսոյց ծնօտէն» Գրիգորի: Իսրայել բերում է փափագելի գանձ և դնում «յիւրում մենաստանին ի Գլխոյ վանսն» (Բ, գլ. ԼԸ):

Հեղինե, իրոք Գրիգորի կինը էր, ինչպես հայտնի է Արուճի արձանագրությունից: Բայց այս դեռ փաստ չէ Իսրայելի զրույցի ճշմարտության: Եթե Գրիգոր Մամիկոնյան բերած լիներ Թորդանից նշխարները, մի մասը կպահեր հավանորեն իր ևորաշեն եկեղեցում: Ղևոնդ գովասանքով է խոսում Գրիգոր իշխանի մասին Արուճի եկեղեցու շինության առթիվ[1] և, *անշուշտ, պատեհ առիթ էր հիշելու նաև նշխարներ բերելը, եթե իրավ Գրիգոր այդ բարեպաշտական գործը կատարած լիներ: Զրույցը ուշ է, քան Ղևոնդ, որ գրում էր 800 թվականի շուրջը: Ներսես շինեց Վաղարշապատի եկեղեցին «յանուն երկնատուր Զուարթնոցն» և ոչ Գրիգորի: Ճշմարիտ է, հանուն այն զվարթնոցների էր, որ երևացել էին Գրիգորի տեսլականն, բայց և այնպես սրբավայրը կրում է Զվարթնոց անունը և ոչ Գրիգորի:*

Հովհաննես Կաթողիկոսն է, որ կարծում է, թե տաճարը շինված էր «ըստ անուանակրութեան Սրբոյն Գրիգորի»[2]*: Նույնը կրկնվում է և Իսրայելի զրույցում՝ «յանուն Սրբոյն Գրիգորի» (Բ, գլ. ԼԸ): Այս կետը ևս ևպաստավոր չէ զրույցի հնության: Հովհաննես Կաթողիկոսի մոտ, Ներսես բաժանում է նշխարները և զետեղում «ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից», որպեսզի երկնավոր գանձը գերիչների ձեռքը չընկնի, միայն «զպատուական գլուխն ոչ ի խորոջ, այլ արտաքոյ ի զզրոցի եդեալ դնէ» աստվածապաշտ ժողովրդի համար*[3]*: Այս պարագան նույնպես ծանոթ է Իսրայելին, ուստի ստանում է «մասն յօրէնուսոյց ծնօտէն», այսինքն՝ զզրոցում պահված գլխից և ոչ թե սյուների տակ թագնված մարմնից: Վարդան արտագրում է կա-*

[1] **Ղևոնդ**, էջ 15:

[2] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 48:

[3] Անդ:

քաղիկոսի տողերը և ավելացնում Իսրայելի զրույցը մի ևոր խմբագրությամբ. «զՍուրբ Գրիգորի ևշխարև, - ասեև, - ի Հայս բերել Գրիգորոյ Մամիկոնոյ, ի գևալ ևորա դեսպան ի Կոստանդևուպօլիս, տուեալ ցևա կին ոմն յաւագաց՝ որ ուևէր առ իւր: Եւ ևորա գաղտ հաևեալ ի ծով և անցեալ գայ բերէ անգիտելի քաղաքին՝ զգաևճև անաևց մեծութեան և զծևօտև տայ Աղուանից ի խևդրոյ Ջուաևշիրի և քեռ իւրոյ, որ էր կին Գրիգորի»[1]:

Իսրայելի զրույցը կերպարանափոխված է: Վարազ-Տրդատի փոխարեև Ջևաևշեր, Գրիգորի կինը՝ Ջևվաևշերի քույրն է: Նշխարները Թորդանից չէ, որ Գրիգոր բերել է տվել, այլ Կ. Պոլսից և բերողն ինք՝ Գրիգորն է, որ ստացել է ազևվական մի կևոջից: Ուշագրավ է հատկապես վերջին կետը, որ մատևում է մի ուրիշ զրույցի ազդեցություև, որ գիտե Վարդան և հիշում է մի ուրիշ առթիվ: Հայոց 325 թվին =876 թ. Աշոտ Բագրատուևու մոտ է գալիս դեսպանությամբ Նիկիտ ևերքինին Վասիլ կայսեր կողմից: Նիկիտ հայտևում է, ի միջի այլոց, որ Ս. Գրիգորի ևշխարները գտևվել են Կ. Պոլսում մեծ պասի հինգերորդ շաբաթում[2]:

Այս զյուտի պատմությունը պահված է շատ ձեռագիրներում, որտեղից և օգտվել է Վարդանը: Այևտեղ ասված է, որ զյուտը տեղի է ուևեցել Միքայել կայսրի († 867) և իր մոր՝ Թեոդորա թագուհու օրոք և որ երկուսն էլ տեսել և երկրպագել են ևշխարներին[3]:

Իսրայելի, Հովհաևևես Կաթողիկոսի, Վարդանի և Նիկիտի տեղեկությունների փոխադարձ հարաբերությունը դյուրին չէ որոշել: Մեզ այևպես է թվում, որ առաջևությունը պատկանում է Նիկիտին և մյուս զրույցները հույևի՝ հայ հակակշիռներն են, որոնց ևպատակն է հայ հողի վրա տեղափոխել ազգային մեծ սրբության զյուտը: Նախ ևշխարները բերվում են Հայաստան Գրիգոր Մամիկոնյանի ձեռքով: Ազևվական կինը, որի մոտ ևշխարները պահված էին, անտարակույս, աղոտացած պատկերն է Թեոդորա թագուհու, որ հայուհի էր և հասկանալի, որ ինքը և որդին բարեպաշտական զգացում ուևեին հանդեպ սրբության: Հովհաևևես Կաթողիկոս խոհեմաբար լռում է, թե Ներսես որտեղից հայթայթեց Ս. Գրիգորի ևշխարները, բայց գիտե, որ ևշխարները տարված են եղել Կ. Պոլիս, գիտե Նիկիտի զրույցից, ուստի և թագցնել է տալիս ևշխարները չորս սյուների տակ՝ ևորաևոր կողոպուտից փրկելու համար: Պահում է միայև գլուխը և ցուցադրում «գզրոցի» մեջ, ինչպես որ Կ.Պոլսում գտել էին «պահարանի» մեջ:

---

[1] «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 67:

[2] Անդ, էջ 85:

[3] Զրույցը հրատարակել է Ղ. Ալիշանը «Հայապատումի» մեջ (մասն Բ, Վենետիկ, 1901, էջ 42-48): Տե՛ս և մեր աշխատությունը «Les fêtes et les saints de L'Eglise Arménienne», «Revue de L'Orient chrétien», t. VI (XXVI), Paris, 1927-1928, № 3 et 4, p. 239.

Իսրայելի մոտ նշխարները Թորդան են և այնտեղից է Գրիգոր Մամիկոնյան փոխադրում Վաղարշապատ: Իսրայել կարծես գիտե Հովհաննես Կաթողիկոսի մոտ պահպանված տեղեկությունը. գիտե, որ նշխարները փոխադրված են «քոլորովին ամենայն ոսկերօքն հանդերձ» և խնդրում է ծնոտի մասը, կարծես գիտենալով, որ միայն գլուխն է մատչելի՝ պահված լինելով գզրոցի մեջ, այնինչ մյուս մասերը թաղված էին սյուների տակ:

Պոլսական զրույցը չի բարգավաճում հայ հողի վրա, այլ առաջ է բերում հակազդեցություն այն ուղղությամբ, թե Ս. Գրիգորի նշխարները հանգչում են տակավին, Գրիգոր Մամիկոնյանի օրերից, Վաղարշապատի մեծ տաճարի սյուների ներքո և ուրեմն անհիմն է Պոլսի զրույցը[1]:

Մեր այս վերլուծությամբ Իսրայելի պատմածը պետք է ավելի ուշ լինի, քան 876 թիվը: Հովհաննես Կաթողիկոսի տեղեկությունը, չենք կարծում, որ իր գյուտը համարվի: Նա բարեխիղճ պատմագիր է և սովոր չէ մտացածին գյուտերի: Հավանական է, որ իր տեղեկությունը նշխարների մասին արդեն կային հրապարակի վրա իրենից առաջ ուստի և Իսրայելի ավանդածը պետք է ծնունդ առած լինի 875 թվից հետո և 930 թվից առաջ[2]:

Հարկավ, Իսրայելի միտքը բեղուն է նշխարներ հայտնաբերելու գործում: Կարելի էր իր մտքի պտուղ համարել ինչ որ պատմում է Թորդանի նշխարների մասին, եթե միայն այս դեպքում ևս իր ուղեցույցը տեսիլը լիներ: Բայց չէ ասված, որ տեսիլ է տեսել: Ամեն պարագայի՛ն, եթե անգամ ընդունենք, որ Իսրայելի զրույցը անկախ է 876 թվի լուրից, այդ զրույցը հորինված է Վևոնդից հետո, որի Պատմությունը հասցված է գրեթե մինչև 800 թվականը:

Իսրայել ասելով հասկանում ենք Կաղանկատվացին: Նորա գործի երկրորդ գրքի ԼԸ գլուխը 800 թվից առաջ չէ, այլ հետո: Այս էլ նրանց համար, որոնք համարում են նրան է դարու հեղինակ (15): Ս. Գրիգորի ծնոտի հիշատակությունը բարեպաշտական հասարակ ցույց չէ միայն: Կենդեղուտ խաչը՝ Գարդմանի սրբությունը, Ջևաձշերի թիկունքն էր: Նույնը պիտի լինի Ս. *Գրիգորի նշխարը Վարազ-Տրդատի և իր գործակցի՝ Իսրայելի համար:*

Հոնաց մեծ իշխան Ալփ Իլիթվեր, ինչպես երևում է, հակառակ Եղիազար կաթողիկոսի միջնորդությամբ կռած հաշտության, սպառնում էր ասպատա-

---

[1] Փարպեցուց հայտնի է, որ Գրիգորի նշխարները Վահանի օրերում պահվում էին Վաղարշապատում (տե՛ս **Ղազար Փարպեցի**, էջ 176):

[2] 830 թվի անցքերը պատմելիս Կաղանկատվացին հիշում է, որ Սերոբ եպիսկոպոս Ամարասից գնացել է Հռոմ և կայսրից նշխար խնդրել: Գրիգորի նշխարների մի մասն իրեն տրվեց, որի համար ասում են, թե Գրիգորի բազուկն է, որով օրհնության յուղն են խնկարկում (Գ, գլ. Ի): «Զարմանք և սոսկալի իրք», ինչ որ պատմում է Գրիգորի մասին... **(այստեղ շարադրանքն ընդհատվում է - Պ. Հ.)**:

կությամբ: Վարազ-Տրդատը փորձում է մշտական բարեկամություն հաստատել նրա հետ և այս պաշտոնը հանձնում է Իսրայել եպիսկոպոսին:

Արաբական 62 տարին, որ է 681 թ. սեպտեմբերի 20-682 թ. սեպտեմբերի 9՝ մեհեկան ամսի 18-ին, Իսրայել ելավ Պերոզ-Կավատից: Հայոց տոմարական մեհեկան 18-ը հավասար է դեկտեմբերի 23-ին[1]:

Տասներկու օրեն Իսրայել հասավ լփնաց քաղաք, ուրեմն մեհեկանի 30-ին=հաջորդ տարի հունվարի 4: Հետևապես մեկնել է 681 թվի դեկտեմբերի 18-ին և հասել լփնաց մոտ 682 թվի հունվարի 4-ին: Աստվածհայտնության տոնը կատարեց և ապա անցավ Ճղրաց աշխարհը: Մեծ դժվարությամբ և միայն շնորհիվ Ս. *Խաչի նշանին, որ եպիսկոպոսի ձեռին էր, քևակոխեցին, ձյունախառն փոթորիկների միջով, Վարդեզրվակ լեռները և Ս. Գրիգորիսի նահատակության դաշտով ժամանեցին Չողայ Դարբանդի մոտ: Այստեղից անցան Վարաչան «հռչակապ քաղաքը» «ի մուտս քառասներորդացն»: Հոնաց մեծ իշխանը ընդառաջեց և ընդունեց Իսրայելին «մեծաւ ուրախութեամբ» (Բ, գլ. ԼԹ):*

Պերոզ-Կավատ, մեր պատմագրի վկայությամբ, Պարտավն է, արդի Բարդա: Հայտնի է նաև Դարբանդը: Պետք է կարծել, որ Իսրայել հետևել է Աղդաշ կամ Նիժ և Խաչմաս ուղին և ճեղքելով Կովկասի շղթան իջել է Կուրքայի դաշտավայրը[2] *և ծովափով հասել Դարբանդ: Հոնաց մայրաքաղաքը՝ Վարաչան ավելի հյուսիս է, Մուլակ գետի մոտերքը ինչպես կտեսնենք քիչ հետո:*

Իսրայել հասավ Վարաչան մեծ պասի մուտքին: Զատիկը նույն տարին մարտի 30-ին էր, ուրեմն մեծ պասի մուտքը՝ փետրվարի 9-ը: Իսրայել ավելի քան կատարեց, քան հանձն էր առել: Բարեկամությունն հաստատելու լավագույն միջոցն էր հեթանոս իշխանին դարձնել քրիստոնյա: Իսրայել դժվարությամբ կատարեց այդ առաքելությունը: Կարճ միջոցում, գրեթե քանի մի օրվան մեջ հաջողեց Ալփ Իլիթվերին ընդունել տալ քրիստոնեություն, իհարկե, իր ժողովրդի հետ միասին, այնպես որ «զարդարէին զանձինս ի պահս քառասներորդացն պահօք և աղօթիւք զցայգ և զցերեկ» (Բ, գլ. ԽԱ):

Ի՞նչ էր հոնաց կրոնը, որ այդպես հեշտությամբ թողին գրեթե Իսրայելի մի քարոզի ազդեցության տակ: Տարաբախտաբար հեղինակի ոճը՝ հավակ-

---

[1] 680-684 քառամյակին, նավասարդի 1-ը, շաբաթական տոմարով, հավասար էր հունիսի 9-ին, մեհեկանի կամ յոթներորդ ամսի 18-ը կգա դեկտեմբերի 23-ը:

[2] Ս. Գրիգորիսի վկայության տեղը՝ Վատենաւ դաշտը, ըստ Փավստոսի (էջ 14) և ըստ Կեղծ Խորենացու («Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 27)՝ Վարդանյան դաշտ: Այս նկարագրությամբ այն նույնանում է Կուրքայի դաշտի հետ, կամ մի մասն է կազմում:

ճոտ, ինչպես նախորդ հատվածներում, ավելի բառեր է թավալում, քան մտքեր արտահայտում: Մանվածապատ դարձվածների, ընդհանուր խոսքերի մեջից հազիվ կարելի է հանել քանի մի էական կետեր: Հոնաց «հեթանոսական պղտոր պաշտամունքը» կազմում են.

1) Չառագրքի (ո՛չ ծառագոթի) մոլորություն, 2) կայծակի զոհերին Քվար աստծուն համարել, 3) ձիեր զոհաբերել Թանգրի խանին՝ նման պարսիկ Ասպանդիատին, 4) թմրուկ և շոհիչ հնչեցնել մեռյալների վրա և սրերով ու դանակներով այտերը և մարմնի մյուս մասերը վիրավորել, 5) մրցություն և ձիարշավներ՝ սուգ, կոծ և ուրախության պարեր, 6) կրակների և ջրերի զոհեր մատուցել, 7) երկրպագել լուսնի և նման արարածների: Այլև սովորություն կար՝ 8) հորակին առնել, կամ երկու եղբայր մի կին ունենալ և կամ բազմակին լինել (Բ, գլ. Խ):

Իսրայել եպիսկոպոսը քարոզ կարդաց: Պատմագիրը բերում է քարոզը ամբողջապես: Աստծո, Աստվածորդու և Երրորդության մասին նախ հասկացողություն է տալիս, ուր հիշատակում է Գրիգոր Լուսավորիչի խոսքերը Ագաթանգեղոսից՝ «հայր յանճնէ որդի ի հօրէ, հոգին սուրբ ի նոցունց էութենէ»[1]: *Ապա հերքում է հոնաց հիշած պաշտամունքը կետ առ կետ. «Զի՞ հարկաւորիք մահացու* **բռչնոյն** *մօտ առնել աղջախտն և ծաղկազարդ ձերոց մտաց անդաստան. ո՞չ գիտէք եթէ նախահայրն մեր Ադամ, սակս սորա ելեալ ի դրախտէն» (Բ, գլ. Խ):* **Թռչնոյն** *սխալ ընթերցված է ակնհայտի:*

Խոսքը օձի մասին է և թերևս ուղղելի է **բռնոյն** *(եթե ոչ աւձոյն): Մտորև նախատում է վիշապ օձի ոսկեղեն կամ արծաթեղեն պատկերը կրելուն համար: Թմրուկ և ամեն կարգի երաժշտական գործիք՝ քնար, փող, տավիղ և դաշնակավոր նվագներ սատանայական գործ է համարում քարոզիչը և «յորդորիչ իգամոլ ախտից»: Երկու կին առնելն ևս՝ սատանայից է: Ասպանդիատ հսկային զոհել ձիեր՝ պիղծ և գարշելի արարք է, ինչպես գարշելի էր հնում Նեբրովդին երկրպագելը: Կայծակ և փայլատակ աստված համարել՝ անմիտ է: Ջմեռվան ցուրտ ամիսները նրանք անհետանում են, չեն համարձակվում երևալ, որովհետև Աստված չեն, այլ արարած Աստծո: Պետք չէ երկրպագել արեգակին և լուսնին, այդպիսիների «բաժինն է հուրն անշեջ», պետք չէ զոհել ջրերին, թե չէ քարի պես ջուրը կընկնին, իսկ ով պաշտե վարսավոր ծառեր, կայրվի փայտի պես (Բ, գլ. Խ):*

Իսրայելի քարոզը զինաթափ արավ: Ալի Իլիքվերին իր բանակով ընդունեց նոր վարդապետությունը և եղավ մի նոր Տրդատ՝ «ասպնջական ցանկա-

---

[1] **Ագաթանգեղոս,** Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, § 362, էջ 181: Հմմտ. **Կաղանկատվացի,** Բ, գլ. Խ:

լի սուրբ հաւատոցն լինելով. յաշխարհածնունդ հայրենեացն որդի գտանելով շնորհացն Աստուծոյ՝ մերձաւոր կենարար կենացն լինելով» (Բ, գլ. ԽԱ)[1]: *Հոնաց իշխանը նոր ուժ զգաց իր մեջ, ինչպես հույները Օլիմպիական խաղերին, մեծ քաջությունններ ցույց տվավ «անդ ի Թուրքաստանսն առ Խազրականին»: Սա իր դուստրը տվեց նորահավատին կնության: Այնուհետև իշխանը ջանաց խափանել մեռելների վրա լացն ու սրակոծությունները և չաստվածներին նվիրատվությունները: Շատ տեղեր եկեղեցիներ շինեց: Կտրել տվեց Ասպանդիատին ձոնված ծառերը: Ասպանդիատին զոհած ճիերի կաշին «արկանէին զոստովք ծառոցն»: Երբ ուզեց կտրել մեծագույն ծառը, քրմապետները և վհուկները ընդդիմացան: Նորահավատ իշխանը և Իսրայել պապանձել տվին նրանց: Քահանաները կտրեցին ծառը փայտատներով, և նրանից պատրաստեցին խաչակերպ պահարան, ուր դրին «խաչ մի արծաթեղէն՝ մասնաւորեալ ի տէրունական խաչէն»:*

Այս բոլորը կատարվեց մեծ պասի ընթացքին: Պասեքին իշխանն իր ժողովրդով պատրաստ էր տոնելու մեծ տոնը: Քրմերը վերջին փորձն արին խանգարելու, բայց Իսրայել հաղթեց տերունական խաչով «զոր միշտ ի ձեռին ուներ»: Քրմերից և կախարդներից շատերը եկան ճշմարիտ հավատի: Մեծ քրմապետին ստիպեցին իր ձեռքով այրել «չոփայիցդ շիրիմք արքունական կոչեցեալ»: Իսրայելի ընկեր՝ Մովսես քանդեց և այրեց մեհյաններ և «զչոփայսն զազիր մորթովն հանդերձ զոհարանացն» (Բ, գլ. ԽԱ):

Հոնաց իշխան խորհուրդ արավ իր մեծամեծների հետ, բացատրեց նրանց, որ Կոստանդին Մեծը ընդունելով քրիստոնեությունը, նոր զորություն ստացավ և հաղթեց թշնամիներին: Հետևապես, ինչո՞ւ չհավատան քրիստոնեից Աստծուն, եթե նրանով կարելի է «փառաւոր և յաղթող լինել»: Խորհուրդը վճռեց՝ խնդրել Իսրայելին մնալ իրենց մոտ որպես մշտական հովիվ: Այս մասին երկու պատգամավոր՝ Ավչի քարխան և Չաթկասար սենեկապետը խոսեցին Իսրայելի հետ և հայտնեցին իշխանի ցանկությունը, որ նա մնա Վարաչան: Իսրայել բացատրեց, որ առանց Եղիազար հայրապետի հաճության չէ կարող լքել սեպհական վիճակը (Բ, գլ. ԽԲ): Ավչի Իլիթվեր երկու մարդ ղրկեց Եղիազար կաթողիկոսի մոտ՝ Զիթգին Խուրսանին և Չաթ Խազրին, հատուկ նամակով և նույն նպատակով: Նամակի պատճենը բերված է Բ գրքի ԽԳ գլխում: Մի ուրիշ նամակ գրեց Հայոց կաթողիկոսին՝ Սահակին և Հայոց զորապետին՝ Գրիգոր Մամիկոնյանին նույն խնդրի առթիվ (Բ, գլ. ԽԴ): Սրանք պատասխանեցին, որ այդ իրենց գործը չէ, այլ պետք է դիմել Եղիազարին: Զիթգին Խուրսանը և Չաթ Խազրը վերադարձան Եղիազարի և Վարազ-Տրդատի մոտ և կրկնեցին իրենց խնդիրը: Սրանք գտան, որ

[1] Կաղանկատվացին քաղում է Ագաթանգեղոսի Ցառաջաբանից, § 13, էջ 10-11:

Իսրայել իր հոտն ունի և քաղցելն այն, ներելի չէ: Բայց քուլլատրում են, որ Իսրայել ժամանակ առ ժամանակ այցելե Հռոմաց աշխարհը՝ մխիթարելու նորահավատ ժողովրդին (Բ, գլ. ԽԲ):

Մենք ներկայացրինք Իսրայելի քարոզչության կմախքը, հանելով ճարտասանության ոլոր մոլոր բավիղներից, ուզենալով չափել պատմվածքի իրական կշիռը (16):

Աշխարհագրական միջավայրին վերաբերող տեղեկությունները ստույգ են: Պարտավից մեկնելով Իսրայել անցավ Լփնաց, Ճորքաց երկրները, Վա<ր>դեգրվակ լեռը, Գրիգորիսի նահատակության տեղը, Չողա դուռը Դարբանդի մոտ և հասավ Վարաչան Հռոմաց քաղաքը:

Լփինք և Ճիղրք ծանոթ են Պլինիոսին՝ Lupeni, Silvi[1], *որոնք ապրում էին Կովկասյան շղթայի հարավային ճակատի վրա, նախ Silvi և ավելի հարավ Lupeni: Իսրայել, մեկնելով Պարտավից, հետևապես պիտի անցներ նախ Լփնաց, ապա Ճորքաց աշխարհը, համաձայն Պլինիոսի: Վարդեգրվակ հայտնի չէ այլուստ: Դարբանդից հյուսիս Հռոմաց աշխարհն էր, իսկ հարավ՝ Մազքթաց, ուր և գտնվում էր Գրիգորիսի վկայության դաշտը՝ Վատենայ, ըստ Փավստոսի, Վատենան, ըստ Խորենացու Պատմության և Վաղանենն (և ոչ Վարդանենան, ինչպես ունի տպագիրը), ըստ Խորենացու Աշխարհագրության: Չողա, ավելի հին ձևը՝ Ճորա, Դերբենդի պահակն է, որ կոչվում է նաև Հռոմաց դուռն:*

Կաղանկատվացու հետ համերաշխ են Խորենացու Աշխարհագրությունը և Ղևոնդ: Ըստ «Աշխարհացոյց»-ի, «ի հիւսիսոյ պահակի թագաւորութիւն Հռոմաց հուպ ի ծով. և ի մտից նորա առ Կաւկասով Վարաչան քաղաք նոցին Հռոմաց և Չունգարս և Մսընդրը»[2]: *Իսկ Հռոմաց հյուսիսայինն հարևաններն են «Սաւիրք մինչև ցԱթլդ (և ոչ ցԹալդ, ինչպես տպագիրն ունի) գետ», որ է Վոլգա, ուրեմն մինչև արդի Աստրախան քաղաքը: Իսկ Դարբանդից հարավ, ըստ «Աշխարհացոյց»-ի, «Մասքութեանց ազգն բնակեալ են ի Վա<ր>դանեան դաշտին»*[3]:

Ղևոնդ ևս գիտե Դարբանդի մոտ հոներին, միայն նրանցից հյուսիս Սավիրք չեն, այլ Խազիրք: Արաբ զորավար Մսլիմ կռվեց 716 թվին «ընդ զօրս Հռոմաց, որ ի Դարբանդ քաղաքի», հալածեց և անցավ «ընդ պահակն Ճորայ, ասպատակ սփռեալ յաշխարհն Հռոմաց և երթեալ բանակէր մերձ առ Թարգու քաղաք Հռոմաց»: Իսկ բնակիչները տեսնելով արաբական խուժումը «ազդ առնէին արքային Խազրաց, որ անուանեալ կոչէր Խաքան»[4]: *Խազ-*

[1] **Plinii Secundi G., Naturalis historiae, vol., VI, Lipsiae, 1909, 29.**

[2] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 27:

[3] Անդ:

[4] **Ղևոնդ**, էջ 40-41:

րաց թագավորի մահից հետո մայրը, «որոյ անունն էր Փարսրիթ՝ հրամանատայր զօրավարին, որ Թարմայ կոչէր» գնալ Հայոց աշխարհի վրա: Թարմայի զորքերը «ելանէին ընդ աշխարհն Հոնաց և ընդ պահակն Ճորայ, ընդ երկիրն Մազքթաց» ասպատակելու Փայտակարան և Ատրպատական: Արաբ զորավար Ջառահ դեմ ելավ, բայց պարտվեց և ընկավ կռվում 722 թվին[1]: Ավելի ուշ, 785 թվին, Օթման, Հայոց ոստիկանը, հայ իշխանների հետ գնաց «ի դրունս Կասպից ի Դարբանդն կոչեցեալ քաղաք, որ է պարիսպ և պատուար ամրութեան շինեալ ընդդէմ զօրացն Հոնաց և Խազրաց»: Կռիվը տեղի ունեցավ Քերան դաշտում, ուր ընկան Տաճատ, Բագրատ և Ներսեհ «ի հնոցածն ապառաժին դաշտի: ...Ի տապախառն օդոյն»[2]:

Թարգու քաղաք, որ մինչև այժմ գոյություն ունի Պետրովսկ քաղաքի մոտ, որոշում է Հոնաց աշխարհի հյուսիսային սահմանները: Տարաբախտաբար Հոնաց մյուս քաղաքների՝ Վարաչանի, Չունգարսի և Մսնդռի դիրքը հայտնի չէ: Վարաչան չէ արաբ հեղինակների Բալանջար, և ո՛չ էլ Չունգարս Ջունդառն է: Մսնդռ (կարդալ Սմնդռ) է Սամանդար, հավանորեն Հոնաց և Խազրաց սահմանագլխին, Սուլակի գետի ստորին հովտում: Վարաչան, մեր կարծիքով, Կոստանդին Ծիրանածինի[3] *ծանոթ* Վրեգան է, *իսկ Չունդարս սրբագրում ենք Չունդան և համեմատում նույն Կոստանդին Ծիրանածինի Կեդոնիա կոչված երկրի հետ*[4]: *Երկուսն էլ փոքր իշխանություններ էին*

---

[1] Ղևոնդ, էջ 101-102:

[2] Անդ, էջ 160-161:

[3] Constantini Porphyrogeniti Imperatoris de Cerimoniis aulae Byzantinae, Bonnae, 1829, p. 688.

[4] Ցո. Մարկվարտ («Osteuropäische und Ostasiatische Streifzüge», Lpz., 1903, p. 17) այն միտքն է պաշտպանում, թե Վարաչան=Բալանջար և Չունգար(ս)=Ջունդառ, բայց հետո հրաժարվեց և նույն աշխատության մեջ (էջ 492) ի նկատի առնելով, որ արաբական Ջունդառ կարդալու է իսկապես Չայդար, փորձում է Չունդարսի մեջ տեսնել Բալանջար, սրբագրելով Չունգարսը Բդունգար=Բալանգար, արաբ<երեն> հնչմամբ՝ Բալանջար: Իսկ Վարաչան մնում է զատ քաղաք: Մարկվարտ կարծում է, որ Սամանդար գտնվում էր Թարգուի մոտերքը, Լավես՝ Սուլակի ստորին հոսանքում: Ֆ. Վեստբերգ ռուս գիտնականը ավելի հավանական է համարում, որ Սամանդար Թերեք գետի մոտ էր, իսկ Բալանջար՝ Սուլակի («Журналъ Министерства народнаго просвещения», 1908, март): Մրվան իրն Մուհամմադը 737 թվին գնաց ալանաց դեմ, այստեղից մտավ Խազրաց երկիրը և անցնելով Բալանջար և Սամանդար քաղաքները հասավ խաքանի մայրաքաղաքը՝ Բայդա Աբլ գետի վրա (Streifzüge, էջ 12): Նույն արշավանքի նկատմամբ Ղևոնդ (գլ. Ի) հաղորդում է, որ Մրվան, Աշոտ իշխանի հետ, ասպատակեցին Հոնաց աշխարհը և «առին զքաղաքն» և ավարով վերադարձան Պարտավ: Անորոշ է, թե ո՞ր քաղաքի մասին է խոսքը, արդյո՞ք խաքանի մայրաքաղաքի: Եթե իրոք Մրվան անցավ Բալանջար և Սամանդար պետք է կարծել, որ Բալանջար ավելի հարավ էր, քան Սամանդար, համաձայն Վեստբերգի և «Աշխարհացոյց»-ի, երբ Չունգարս սրբագրելու լինենք Բդունգար: Այս դեպքում Հոնաց աշխարհի հյուսիսային սահմանները կհասնին մինչև Թերեքի գետաբերանը:

X դարում և հարաբերության մեջ բյուզանդական դրան հետ: Միրաճածին կայսրը հիշում է նաև Սարվան և Խրյուսա («Աշխարհագրության»՝ Շրվան և Խսրվան), ինչպես և քաջածանոթ է Ծաճարք և Մոկան =Մովական՝ մի շարք փոքր իշխանությունների հետ, Կովկասյան շղթայի հյուսիսային և հարավային լանջերում, Ալանաց դռան (=Դարյալի) և Շամախու միջև[1]*:*

Բալանջար և Սամանդար խազարական ցեղեր էին, որոնց անունով և կոչվում էին հիշյալ քաղաքները: Խազիրք գրավել էին այս տեղերը հոններից և գուցե այդ է պատճառը, որ «Աշխարհագրությունը» համարում է Հոնաց աշխարհ[2], *մինչդեռ Իբն ալ-Աթիր անվանում է Խազրաց քաղաքներ՝ Մրվանի 737 թվի արշավանքի պատմության մեջ*[3]:

Ամեն պարագայիև Հոնաց աշխարհը Դերբենդից վերև էր, ինչ և լինի նրա հյուսիսային սահմանը, իսկ Դերբենդից ցած՝ մազքութներն էին: Փավստոսից գիտենք, որ Մազքթաց Սանեսան թագավորը ասպատակեց Հայաստան «Հոնաց բազմութեան» հետ[4]*: Ասել է, թե դեռևս չորրորդ դարուց հոներն ու մազքութները հաստատված էին հռչակավոր պահակի երկու կողմերը:*

Սակայն դժվար է ասել, թե «Աշխարհագրութեան», Կաղանկատվացու և Ղևոնդի հոներն ու մազքութներն արդյո՞ք նույն ցեղերն էին, ինչ որ հիշում է Փավստոս, թե հին անունների տակ ծածկված էին նոր ցեղեր: Ամենայն հավանականությամբ գոնե Հոնաց իշխանական տունը խազարական ծագում ուներ և թերևս սերում էին խաքանի տոհմից, այսինքն՝ վասալական երկիր էր և կառավարվում էր խաքանի կողմեն նշանակված և իր ազգական անձերից: Վարաչանի մեծ իշխանի անունն այս իմաստով խիստ ցուցական է: Ալփ Իլիթվեր, կամ Իլութվել խազարական անուն է: Ալբ կամ Ալփ (ինչպես Ղևոն-

---

[1] **Constantini Porphyrogeniti,** Imperatoris de Cerimoniis, p. 688, հիշում են՝ Albania, Krebatas (?), Kidonia, Tzanaria, Sarvan, Xursan, Vrezan, Mokan, նաև Azia: Կոստանդին Միրաճածինի ժամանակակից արաբ Մասուդի (Macoudi, Les prairies d'or, t. II, Paris, 1864, p. 69) պատմում է՝ Մուհամմադ իբն Եզիդ անուն մի իշխան, որ տեր էր Շիրվանի (Շիրվանշահ էր), հետզհետե գրավեց հարևան Խուրսան, Մուկան և Ջաղան իշխանությունները: Մարկվարտ առաջարկում է վերջին անունը կարդալ Վաղան, առանց բացատրելու, թե ի՞նչ է հասկանում այդ սրբագրությամբ («Die Entstehung und Wiederherstellung der Armenischen nation», Berlin, 1919, p.73): Թվում է, որ սրբագրությունը իրավացի է և խոսքը Վա(ր)դանեան կամ Վատնեան դաշտի մասին է, որ IV դարում կազմում էր առանձին իշխանություն:

[2] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», էջ 27:

[3] **Ibn al-Athir,** Chronicon, Ed. C.J. Tornberg, t.IV, p. 301.

[4] **Փավստոս Բուզանդ,** էջ 14:

դի մոտ՝ Ալփ Թարխան, հետագայում՝ Ալփ Արսլան) նշանակում է «քաջ»: Իլութվել-ի առաջին մասը՝ իլու, նշանակում է «ժողովուրդ», իսկ թվել, երևի՝ «պետ», միասին՝ «ցեղապետ»: Կոստանդին Ծիրանածին[1] *պատմում է, որ հունգարական բազմաթիվ ցեղեր միացան ոմն Արպադի իշխանության տակ և, որ Արպադ հունգար չէր, այլ խազար էր և պատկանում էր խազարական կարար ցեղին: Ըմբռստության հետևանքով կարար ցեղը հեռացավ և ապաստան գտավ հունգարների մոտ: Արդ, այս Արպադի որդին կոչվում էր* ***Tabel-es****, այսինքն՝ Թեվել, որ կարծում ենք նույն ինքն է ինչ որ մեր Թվել կամ Թվեր: **Tabel**-ի որդու անունն էր **Termatzou-s**՝ Թերմազու: Վևոնդի մոտ Խազրաց թագուհու զորավարը, որ հաղթեց Ջառահին 722 թվին, կրում էր միշտ այս Թարմայ անունը*[2]:

Վոլգայի բուլղարների թագավոր Ալմըշ 921 թվին դիմեց Բաղդադ, ցանկություն հայտնելով ընդունել իսլամ: Խալիփան ղրկեց Ահմատ Ֆադլոնին, որը իր ուղևորության նկարագրության մեջ պատմում է ի միջի այլոց, որ Ալմըշ կոչվում էր՝ **milk blthvar**: Մարկվարտի սուր աչքից չի խուսափել, հարկավ, որ **blthvar** հիշեցնում է Կաղանկատվացու Ալփ Իլիթվեր և ավելի մոտեցնելու համար առաջարկում է կարդալ **al-*blthvar***, *այսինքն՝* **alb-*blthvar***, *ենթադրելով, որ արաբ գրիչները* al-ը *ճգել են, արաբական մասնիկ կարծելով*[3]: *Համամիտ չենք այս կետում և ավելի հավանական ենք համարում կարդալ* ***ilthvar*** *փոխանակ* ***blthwar***-*ի, որ հասարակ կետադրության խնդիր է՝* ***ilthvar*** *իլութվեր, իլութվել*[4]:

Նկատենք, որ Ալմըշ կամ Ալմուշ խազարական անուն է: Արպադի հայրը կոչվում էր **Salmoutres**՝ Սալմուչ, որ հունգարագետների կարծիքով նույն Ալմուշ անունն է:

Վերև հիշեցինք խազրաց զորավար «*Թած Թարխան ի գնդէն Խաթիրլիթերայ*»: Խաթիր, կարծես ցեղի անուն է, իսկ Լիթրեր, *թերևս նույն* ***ilthver*** *գավառն է*[5]:

Խազարների դարձի պատմության մեջ ասված է, որ քրիստոնեություն

---

[1] **Constantine Porphyrogeniti,** De Administrando Imperio, Bonnae, 1840, p. 169-175.

[2] **Վևոնդ,** էջ 101:

[3] **J. Markwart,** Osteuropäische und Ostasiatische Streifzüge, p. 114.

[4] Միևնույն անվան, թե տիտղոսի գործածությունը խազարների և բուլղարների մոտ բնական է, ըստ Միքայել Ասորու (կամ ավելի ստույգ ըստ իր աղբյուրի՝ Դիոնիսիոս Տելմահրեցու), Բուլղար և Խազրիկ հարազատ եղբայրներ էին (**Michel le Syrien**, II, p. 363-364):

[5] Կոստանդին Ծիրանածնի մոտ հունգարական ցեղերից մեկը կոչվում է erthi, erthim՝ ուրեմն harthi, որ հիշեցնում է Խաթիր, Խարթի:

ընդունեցին նրանց «Գերագույն իշխան» (=թագավորը)՝ **Իշադ** և զորականներն ու մեծամեծները[1]: Մարկվարտ սրբագրում է **ալ-շադ**:

Թեև մենք տեսնում ենք այստեղ Կաղանկատվացու **Շաբ**, որ Ջերու խաքանի որդու անուն կամ պատվանունն էր, որ Մարկվարտ անտեսել է, բայց և այնպես կողմնակից չենք սրբագրության, այլ գտնում ենք, որ **Իշադ** ավելի հին և ստույգ ձևն է: Խազրական բառ չէ, այլ իրանական: Ֆերգանի կամ Կոկանդի իշխանը արաբական աշխարհակալության շրջանում կոչվում էր **իշխադ**, ինչպես և Սոգդի կամ Բուխարայի իշխանը: Իսկ իշխադ տեղական իրանական բարբառի ձևն է հին **խշայաթիա**՝ «թագավոր» բառի, որտեղից պահլավ **շահր** և պարսիկ **շահ**: Իշադ, շաբ տիտղոս է և ոչ հատուկ անուն, բայց կարող է կիրարկվել որպես հատուկ անուն, ինչպես համախ պատահում է (համմմ. **շահանշահ**= սատրապ, իշխան, թագավոր և այլն):

Ավչի Թարխան և Կաբ Խասար (և ո՛չ Կասար), Երթգին Խուրսանա և Կաբ Խազր անուններից առաջինը հասկանալի է. Ավչի-ն նշանակում է «որսորդ», Թարխան՝ տիտղոս է: Երթգին=եր-Թիգին՝ «երկրի կամ ժողովրդի պետ»: Խուրսանը = Խուրսան, պարսիկ հոգնակի է **խուրս-ի** (ինչպես Մազքուր-ան, փոխանակ հայ Մազկուր-ք), բյուզանդական **Khurza**, կովկասյան ցեղի անուն՝ վերև հիշված: Կաբ Խասար, կարծես թե կարդալու է Կաբ Խուսր (= Խուրս), նման կաբ խազր, այսինքն՝ խուրսական և խազրական կաբ, իսկ վերջինս հավանորեն սրբագրելու է շաբ: Ուշագրավ է նաև **չոփայ** բառը՝ «չոփայիցդ շիրիմք արքունական կոչեցեալ», «վառէր զայրեցումն բարձու մեհենիցն և զչոփայսն զազիր մորթովն հանդերձ զոհարանացն» (Բ, գլ. ԽԱ): Չոփայ-ք տիտղոսավոր անձեր էին և պաշտելի: Հավանորեն թագավորներ կամ հերոսներ դյուցազնացրած: Այս բառը նույնն ենք համարում ինչ որ բյուզանդական հեղինակների մոտ քաջահայտ **ժուպան՝ zoupan**, ցայժմ էլ գործածական բալկանյան ժողովուրդների մեջ: Հին հունգարական արձանագրությանց մեջ **zoupan** նշանակում է «ցեղապետ»[2]: Ավելի հարազատ, քան չոփա պետք է համարել Չորպան Թարխան զորականի անվան մեջ պահված չորպան, կարդա՛ չոպան = **zoupan**:

Եթե կայծակ «մարդոյ դիպեսցի, թէ այլ ինչ նիւթեղինացս, ճօճեալ իմն զնա նուիրեալ **Ջուպ** Աստուծոյ համարէին» (Բ, գլ. Խ), այսինքն՝ մոտավորապես այն սնոտի հավատն էր, որ մեր ժողովրդի մեջ էլ կա, թե կայծակնահար ան-

---

[1] J. **Marквart**, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, p. 24.

[2] J. B. **Bury**, A History of the Eastern Roman Empire, London, 1912, p. 334, note 3. Zupan-ի ծագումը անհայտ է, հնարավոր է, որ այլ բան չէ, քան իրանական čopan հին փոխառությունը հնվիվ pastor-ի:

ծը սուրբ է: «Քուար», ուրեմն, խազարական թե հունական բառ է, նույնանիշ «նվիրեալ»-ի: Հունգարական ցեղերից մեկը կոչվում էր ***Koubiares****, այսինքն՝ քու(վի)ար, որ գրեթե համահնչյուն է քուար-ին*[1]*: Թեոփիլակտոս Սիմոկատա*[2] *հաղորդում է, որ սկյութական, այսինքն՝ թուրքական (=ավարական)* ***Boukolabra*** *հատուկ անունը նշանակում է* ***magos, hiereus****, այսինքն՝ «մոգ», «նվիրակ» (= քահանա): Եթե կարելի է կարդալ* ***Boulo-klabra****, ապա երկրորդ մասի մեջ կունենանք քավրա (= նվիրյալ), նման՝ քուար-ի:*

Թանգրիխան, հոմանիշ է իրանական Սպանդիատին, մեր պատմագրի տեղեկությամբ: Թանգրի նշանակում է «երկինք» և խան, կոչումն է խաքան-ի, ուրեմն՝ «երկնքի տեր»: Այժմ էլ Թանգրի գործածական է կովկասյան թուրքերի մոտ՝ երկինք=Աստված նշանակությամբ (տուն Աստված քանդի=տուն Թանգրի-ն քանդի):

[Զ]

Երկրորդ գրքի վերջին ԽԶ-ԾԲ գլուխները շոշափում են Աղվանից եկեղեցուն հայող խնդիրներ: Ուշագրավ է առանձնապես Աղվանից եկեղեցու դերը պատկերամարտության և քաղկեդոնականության հարցում: Մեր պատմագիրը հայտնում է, որ Ուխտանես և Եղիազար կաթողիկոսների օրով վեճեր կային հունաց և հայոց մեջ և «աշխարհն Աղվանից անվրդով յայսցանէ մնայր»: Լսեցին, թե «ոմանք պատկերս ոչ ընդունին, ոմանք մկրտութիւն ոչ առնեն, ոչ աղ օրհնեն, ոչ պսակ դնեն հարսանեաց. այս պատճառաւ, եթէ քահանայութիւն բարձեալ է յերկրէս» (Բ, գլ. ԽԶ): Այս առիթով Մեծկողմանց եպիսկոպոս Դավիթ հարցում արավ գրով Հովհան վարդապետին և ստացավ պատասխան:

Հիշված անձերը մեզ ծանոթ են: Ուխտանես կաթողիկոս էր 668-680 և Եղիազար իր հաջորդը՝ 680-686: Դավիթ եպիսկոպոսը քաջածանոթ Խոսրայել եպիսկոպոսի նախորդն էր Մեծկողմանց աթոռի վերա և մնաւ 680 թվի շուրջ: Հովհան վարդապետը հռչակավոր Մայրագոմեցին է, ինչպես բացահայտ է գլխի վերնագրեն: Սրա մահվան տարին հայտնի չէ: Եթե հավատանք **Diegesis**-ի վրացի թարգմանության (17), Հովհան մեռած է ՃԼԳ=684 թվին:

Ժամանակագրական տեսակետից արգելք չկա, որ Դավիթ Մեծկողմանց եպիսկոպոսը դիմում անե Հովհան Մայրագոմեցուն այն խռովությունների

---

[1] Անդ:

[2] **Theophylacti Symocattae** Historiarum libri octo, Bonnae, 1838, p. 47.

առթիվ, որ վրդովել են հայ-հռոմ հարաբերությունները Ուխտանեսի և Եղիազարի ժամանակ: Դավթին հետաքրքրում են հատկապես այն աղանդավորները, որ չեն ընդունում պատկերներ, մկրտություն, մատաղ (աղ օրհնել), պսակ և անգամ քահանայություն: Սակայն Հովհան Մայրագոմեցին պատասխանում է միայն մի կետին՝ պատկերների խնդրին: Նրա մեկնությամբ, պատկերամարտությունը երևացել է նախապես հռոմոց մոտ, ժողով է գումարվել Կեսարիայում և ընդունվել՝ պատկերներ նկարել եկեղեցիներում: Այս առիթ է տվել նկարիչներին մեծամտել և իրենց արվեստը ամենից բարձրը համարել, ասելով «մեր արուեստս լոյս է, զի ծերք և տղայք առհասարակ վերծանեն, և զԳիրս սուրբս սակաւք ընթեռնուն» (անդ): Նորից ժողով է գումարվել և այս անգամ որոշել են, թե գրիչները, վերծանողները և մեկնիչները գերադաս են նկարիչներից:

Ամեն պարագային հայերը տեղեկություն չեն ունեցել այս վեճերից մինչև Մովսես [Բ Եղիվարդեցի] կաթողիկոսը: Կարինի Թեոդորոս եպիսկոպոսի հետ, քաղկեդոնական հողի վրա, ընդհարվելուց հետո, Մովսես պատվիրել է՝ «Մի՛ գիրս, մի՛ պատկերս, մի՛ նշխարս ի նոցանէ ընդունիլ» (անդ): Թեոդորոս իր համախոհներով ընտրել է տալիս կաթողիկոս Հովհաննեսին:

Մայրագոմեցին շարունակում է իր պատմությունը հաղորդելով, որ Մովսեսի կողմնակիցներից երեք հոգի՝ Հեսու, Թադեոս և Գրիգոր, գնացել են Սոթից գավառը և քարոզել, թե «զպատկերս, որ յեկեղեցիս են նկարեալ, ի բաց ջնջեցէք և ընդ աշխարհական քահանայս մի՛ հաղորդիք» (անդ): Մովսես կաթողիկոսը կանչել է դրանց իր մոտ խրատելու, բայց նրանք չեն եկել և հեռացել են Արցախ գավառը: Գիտունները բացատրում են Մովսեսին, թե նրանց մոլորությունը եկած է Հռոմոց աշխարհից և կաթողիկոսը հրահանգում է, թե «մի՛ ոք իշխեսցէ խոտել զնկարս, որ յեկեղեցիս է»: Մովսեսի մահից հետո, երբ Աբրահամ [Ա Աղբաթանեցի] գահ բարձրացավ, «պատկերամարտքն, որ իջին յԱղվանս՝ պղտորեցին զերկիրդ ձեր»,- շարունակում է իր խոսքը Մայրագոմեցին, և Գարդմանից իշխանը ձերբակալեց երեք անձերին և ղրկեց իրենց՝ Մայրագոմեցուն: Սա նրանց հարցրեց, թե «յոր պատճառս չընդունիք **զմարմնացեալոյ Աստուծոյ զպատկերն**»: *Պատասխան եղավ, թե չեն ընդունում պատկերը, որովհետև հակառակ է Ս.Գրքին: Հովհան Մայրագոմեցին նրանց հիշեցրեց Մովսիսական խորանի և Սողոմոնյան տաճարի նկարագրությունները և ուղղեց նրանց մոլորությունը (Բ, գլ. ԽԶ):*

Դավիթ եպիսկոպոսի հարցասիրությունը դժվար թե գռհանար Հովհան վարդապետի պատասխանով: Մեծկողմանց եպիսկոպոսը կուզեր հասկանալ, թե ի՞նչ պատճառով մարդիկ չեն ընդունում ոչ միայն պատկերները, այլև մկրտության և պսակի խորհուրդները, նաև մատաղն ու քահանայությունը, եկեղեցական վիճրապետությունը: Իսկ Հովհան խոսում է միմիայն

*պատկերների մասին, և այս խնդիրն ևս մասնավորելով, պաշտպանության է առնում «մարմնացելոյ Աստուծոյ զպատկերն»: Դավիթ եպիսկոպոսը հետաքրքրվում էր իր ժամանակվա աղանդավոր խլրտումներով, ինչ Հովհան ճառում է պատկերամարտության անցյալի մասին: Թվում է, թե Թուղթը լրիվ չէ և Կաղանկատվացին կրճատել է այն, ինչպես նույնն արել է և մի քանի ուրիշ վավերագիրների նկատմամբ: «Մարմնացեալ Աստուծոյ պատկերը» պաշտպանելու դերը ևս խորթ է Մայրագոմեցուն: Հայտնի է, որ պատկերամարտ շարժումը համակրանք էր վայելում հակաքաղկեդոնական շրջաններում: Թեոփանես պատրաստ է «սատանայի արբանյակ» համարելու պատկերների խնդրում նշանավոր Փիլոքսենոս Մաբուկացուն: Իսկ Փիլոքսենոս մեծ հեղինակություն է ճանաչված և՛ մեր եկեղեցական հայրերի կողմից: Մայրագոմեցին առավելն կարող էր չընդհմանալ պատկերապաշտության, բայց ջանք թափել տապալելու պատկերամարտությունը, այդ արդեն չէր ներել իր դավանաբանական տեսակետը: Մայրագոմեցուն վերագրված Թուղթը չէ կարող իր գործը համարվել գեթ այն վիճակում, որ ներկայացնում է Կաղանկատվացին: Թուղթն, անտարակույս, աղճատված է: Դավիթ եպիսկոպոսի հարցումը նախորոշում է պատասխանը, որ իզուր է որոնել այժմյան Թղթի մեջ: Նրա հարցումը կերևա իր բուն լույսի մեջ, եթե վերհիշենք Հովհան Օձնեցու «**Ընդդէմ պատկենաց**», ճառի հետևյալ կարևոր տողերը. «Նախկին մծնեէութեան **պատկենութեան** (տպ. պատկենութեան -Ն.Ա.) խեշերանք. որք խրատեալք, և ոչ իմաստնացեալք, ի **Ներսիսէ կաթողիկոսէ**, զկնի նորում մահուանն խուսեալք չոգան ղօղեցին յոլորտս ուրեք աշխարհիս մերոյ: Եւ ի նոսա հատուածեալք եկին յարեցան կշտամբելքն ի կաթողիկոսացն **Աղուանից պատկերամարտք** ոմանք. զի սիրէ առ համանմանիսն իւր հասանել վրիպեալն ի ճշմարտութիւնէն: Եւ մինչ չև էր նոցա զօրավիգն գտեալ **զկարապետս** դերաքրիստոսին, երկուցեալք և սարսեալք կային յոտղիղ և ի գերապանճ կրօնից քրիստոսականաց. մանաւանդ թէ և ինքն զինքն դատապարտէ անզգամն, յիւրոց տանջեալ խորհրդոց: Իսկ յորժամ **այսմիկ** որպէս մեծագունի ինչ և նորոյ՝ հնացելոյս և աղօտացելոյ՝ հասանել կարծեցին, յայժամ ի դարանամտութեան իւրեանց սողեալ յորջից՝ յաշխարհամէջս և ի ժողովրդարբնակս համարձակեցան յարձակել տեղիս»*[1]:

Ո՞վ էր այս Ներսեսը, որ խրատել է պավլիկյաններին, բայց հաջողություն չէ ունեցել: Ամենայն հավանականությամբ Ներսես Բ կաթողիկոսը, այն որ գումարեց Դվինի ժողովը 21 մարտի 555 թվին: Պավլիկյանների հնագույն հիշատակությունը գտնում ենք այս ժողովի արձանագրության մեջ: Այստեղ ասվում է, որ նեստորականները բույն գրած Դվինում, որսում էին

[1] «Ցովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 39:

հետևորդներ և «պատրեցին ի ժողովրդականաց տգիտաց զարս և զկանայս, հաղորդել հաւատոյ յաղտեղութեան աղաւթից նոցա, տանել հաց ընծայի ի տեղի անաւրէնութեան նոցա. ընդունել ի ձեռաց նոցա հաղորդութիւն՝ իբրև յուխտէ նուիրաց պատուիկենաց, *յանդգնեցան տալ զիւրեանց ջնջագիր կնիք անկնիք մանկաց ժողովրդեան մերոյ*»[1]:

Պավլիկյանների հիշատակությունը դիպվածական չէ: Ներսես կաթողիկոս հալածել է նրանց և թեև չէ կարողացել խելքի բերել, բայց հարվածն այնքան զորեղ է եղել, որ աղանդավորները քաշվել են ասպարեզից և պահվել լռելյայն մինչև դերաքրիստոսի կարապետի երևալը, երբ նորեն հայտնվում են իրենց որջերից և դարաններից: Ո՞վ է այս կարապետը դերաքրիստոսի: Կարծում են, որ ակնարկում է արաբներին[2]: *Պավլիկյան շարժումը նոր և շատ հզոր թափ ստացավ 660 թվականից, երբ Մանանաղի գավառում Կոստանդին Հայը շարժման գլուխն անցավ և հիմք դրեց պավլիկյանների քաղաքական զորության այն աստիճան, որ նրա մերձավոր հաջորդները ի վիճակի էին չափել իրենց ուժերը անավոր Բյուզանդիայի հետ: Եթե դերաքրիստոսի առաջնորդները արաբներն են, նրանցից օգտվողը Կոստանդինն է: Անհավանական չէ դերաքրիստոսի կարապետի անվան տակ հասկանալ իրեն՝ Կոստանդինին, որի գործունեությունն անխոստոհեն պիտի անդրադառնար իր «դարանամուտ» կրոնակիցների վրա և նրանց հրապարակ նետել նոր խանդավառությամբ:*

Ահա աղանդավորական այս զարթոնքի լուրն է, որ խռովել էր Մեծկողմանց Դավիթ եպիսկոպոսին և ստիպել հարցում անել գիտուն Հովհան վարդապետին: Դավիթ ժամանակակից էր Կոստանդնի: Հովհան վարդապետի Թղթի մեջ կարևոր կետ է երեք աղանդավորների անունները՝ Թադեոս, **Հետու** և Գրիգոր: *Սրանք ծանոթ են թվում և՛ Վրթանես Քերթողին, որի «**Ցաղագս պատկերամարտից**» գրության մեջ ասված է, թե Սահակ, Մեսրոպ և իրենց աշակերտներից «ոչ ոք վասն պատկերաց և նկարողաց եկեղեցւոյ բանս ինչ ոչ արար, բայց միայն պիղծն մոլին Թադէոս և **Եսայի** և ընկերք նոցին, որք և զյոլովս ընդ իւրեանս ի հետ կացուցին որպէս զ**Ծեզդ**»*[3]:

---

[1] «Գիրք թղթոց», էջ 73:

[2] Կ. **Տեր-Ակոպյան**, Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien, Leipzig, 1893. Հայերեն թարգմանությունն Ա. Աբեղյանի՝ «Պավլիկյանք Բյուզանդական կայսրության մեջ և մերձավոր հերձվածային երևույթներ Հայաստանի մեջ», Երուսաղեմ, 1938, էջ 77:

[3] Տե՛ս վերջին հրատարակությունն հայր Ե. Դուրյանի՝ «Վրթանես Քերթողի Ցաղագս պատկերամարտից», «Սիոն», 1927, փետրվար, էջ 62:

Վրթանեսի այս գործի ընդօրինակությունը ունինք Էջմիածնի [Մատենադարանում]՝ համար 58 և 102 ձեռագիրներից, ուր կարդացվում են՝ Շմուէլ, Թադէոս և **Եսաւ**: *Սակայն Շմուէլ կարծես բյուր ընթերցում է* **պիղծն մոլիս** *բառերի, որոնք պակասում են հիշյալ ձեռագիրներում:*

Թադեոս և Եսայի կամ Եսավ նույն անձերն են, անտարակույս, ինչ որ Թադեոս և Հեսու: Խնդիր է, ե՞րբ էին ապրում սրանք: Հովհաննավարդապետը Կաղանկատվացու մոտ համարվում է նրանց ժամանակակից, և՛ Մովսես կաթողիկոսի († 604) և՛ իրեն († 684), որ հնարավոր չէ: Երկուսից մեկը միայն կարող է ստույգ լինել: Եթե վստահ լինենք, որ Վրթանես իրոք իր գործի տերն է, խնդիրը կլուծվեր ի նպաստ Մովսես կաթողիկոսի: Գոնե մենք վստահ չենք: Մյուս կողմից Հովհաննավանքի օծնեցու վկայությամբ, Ներսեսի մահից հետո († 556) պավլիկյանները լռության են եղել մատնված մինչև Նեռի երևումը, այսինքն՝ կամ արաբների հաստատվելը Հայաստանում 652 թվին, կամ Կոստանդին Մանանաղցու քարոզությունը 660 թ., և կամ երկուսը միասին: Այս դեպքում երբեք հայ աղանդավորները չէին կարող Մովսեսի ժամանակակից համարվել կամ հետը բախում ունենալ: Մեր պատմագիրներից շատերը շփոթել են, անհասկանալի թյուրիմացությամբ, Ներսեսը Մովսեսի հետ և սրան վերագրել առաջնի գործերը, ինչպես Դվինի ժողովը և Հայկական թվականի հաստատումը: Հնարավոր է, որ սույն կարգի սխալ է Մովսեսի հիշատակությունը երեք աղանդավորների խնդրում, փոխանակ Ներսեսի: Արդարև, Վրթանես որ տեղապահ էր (603-607), երեքին հիշում է որպես անցյալի և ոչ ներկայի անձեր և հանդիմանում նրանց հետևորդներին: Սակայն Հովհաննես Մայրագոմեցին վկայում է, որ ինքը տեսել և խրատել է երեք աղանդավորներին: Հետևապես նրանք չէին կարող ժամանակակից լինել Ներսես Բ կաթողիկոսին: Մայրագոմեցու Թղթից չի հասկացվում, թե ինչ աղերս կար պատկերամարտության և Կարինի Թեոդոր փիլիսոփայապետի ու Մովսես կաթողիկոսի քաղկեդոնական վեճերի միջև: Պակաս բան կա: Կասկած է ծագում, արդյոք հիշատակություն չի՞ եղել, թե աղանդավորական շարժումը ծագում է Կարինի շրջանից, և չարիքի հայրը Կոստանդին Մանանաղցին է, և Թադեոս, Հեսու և Գրիգոր խռովարարները եկել են այնտեղից՝ «Հռոմոց» աշխարհից, այսինքն՝ Բյուզանդական Հայաստանից, և հավանորեն նրանք Կոստանդինի աշակերտներն են: Սրանով կպարզվեր և շոշափելի իմաստ կստանար Կաղանկատվացու խոսքը, թե Ուխտանեսի և Եղիազարի հայրապետության օրով, «խռովութիւնք և **հերձուածք** *բազում», «մարտ և մրցումն լինէր» Հունաց և Հայոց մեջ:*

Այս բոլորը բնական են: Մայրագոմեցին, այս գիտուն և բարեպաշտ վանականը, քավության նոխազ է դարձել իր հակառակորդների և բարեկամների համար: Ամեն ինչ նրան վերագրել, նրա անունով խոսել, գովաբանել թե

ամբաստանել մի տեսակ սովորություն է դարձել հների մոտ: Մայրագոմեցի, թե Մայրավանեցի մի կատարյալ առասպելական պատկեր է: Ոչ ոք կարե երաշխավորել, թե Կաղանկատվացու մոտ նրան անվան Թուղթը որքան վավերական է: Ամեն պարագային Թուղթը հարազատ վիճակի մեջ չէ, այս անտարակույս է[1]:

Դավանաբանական ճառերը հաճախ ենթարկվում են փոփոխության ժամանակի, տեղի և գրչի տրամադրության համաձայն: Խրատական է այս տեսակետեն հաջորդ գլուխը (Բ, գլ. ԽԷ):

Կաղանկատվացին բերում է Աբրահամ կաթողիկոսի **«Շրջագայական» թղթից**[2] *մի հատված, բայց բյուրում է մասամբ իմաստը: Աբրահամ [կաթողիկոսը] գրում էր, որ քաղկեդոնական «քաղկեդը» ճարակել է «մեր սահմանակից և միևնույն վարդապետությամբ լուսավորված վրացիներին և աղվանքներին», ուստի և հարկավոր է համարում գրել. «***Ցառաջագոյն քան զմեզ կացեալքն յաստիճանի կաթուղիկոսութեան՝ յԱղուանս***. *իսկ մեք ի Վիրս առ Կիւրիոն»*[3]*, այսինքն՝ մեր նախորդ կաթողիկոսներն արդեն գրած են աղվանքներին, մենք էլ գրում ենք վրացիներին:*

Կաղանկատվացին այլ կերպ է հասկացել այս խոսքերը: Նրան թվում է, թե Աբրահամ շրջաբերական թղթով «***յառաջագոյն քան զՀայոց աթոռակալութիւն կացեալ Աղվանից աթոռակալութեանն Աղվանից***՝ *ընդ մեզ համաձայն գոլով, և ոնցա կամակցութեամբ նզովեցաք, ընկեցաք զԿիւրիոն ըստ հրամանի հարցն մեր և Աղվանք» (Բ, գլ. ԽԷ):*

Կաղանկատվացին սխալվել է թերևս **bona fide,** անուշադիր ընթերցումի հետևանքով, կարծելով թե ընդգծված նախադասություն նշանակում է, թե մեզնից ավելի հին Աղվանից աթոռակալները և մենք գրեցինք վրացիներին: Սխալը ներելի չէ, մանավանդ որ Աբրահամ հայտարարում է, թե Աղվանք վրացիների հետ էին: Մեր պատմագիրը սակայն հավանել է այն միտքը, որ աղվանները ավելի վաղ են քրիստոնեություն ընդունել, քան հայերը, և աշխատել է փաստել համապատասխան ժամանակագրական հաշվով: Հայերը ընդունել են քրիստոնեությունը հռոմոց 43-րդ տարին, իսկ Աղվանք՝ 270

---

[1] Ծայրահեղ կասկածամտություն չի լինել հայտնել մեր անվստահությունը նաև Վրքանեսի **«Ցաղագս պատկերամարտից»** գրության հանդեպ: Ս. Էջմիածնի ձեռագիրներից քաղած էինք, շատ ժամանակից ի վեր, քանի մի հիշատակարաններ պատկերամարտության վերաբերյալ և մտադրություն ունինք պատեհ առթիվ լույս ընծայելու՝ անդրադառնալով պատկերամարտության մեջ Հայոց եկեղեցու դիրքի խնդրին (18):

[2] **«Թուղթ շրջագայական Տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի»**, տե՛ս **«Գիրք թղթոց»**, էջ 189-195:

[3] Անդ, էջ 193-194:

տարի առաջ: Հռոմոմոց թվականը սկսվում է Հռոմի շինության երկրորդ հազարամյակից, որ է (752 թ. ն. Ք.-1000=) 248 թ. հ. Ք., ուրեմն Հայոց [դարձը] տեղի է ունեցել (248+43=) 291 թվին, իսկ Աղվանիցը՝ (291-270=) 21 թվին: «Ցետ 180 անցանելոյ հաւատալոյն Հայոց», գումարվել է Քաթգենի ժողովը ընդդեմ քաղկեդոնականների, ուրեմն (291+180=) 471 թվին: Վրացիք բաժանվել են մեզնից «յետ 87 ամի անցելոյ», այսինքն՝ (471+87=) 558 թվին:

Ուխտանես արտագրել է Կաղանկատվացու այս հատվածը առանց մեկնության[1]: *Սամուել Երեց ևս ընդունել է իր ժամանակագրության մեջ 291 թիվը՝ որպես Ս. Գրիգորի Վիրապ իջնելու տարի, 471 թիվը (տպագրված է 473) «ժողովն Քաղկեդոնի» սխալ հասկացած լինելով Կաղանկատվացուն և 558 թիվը՝ (տպագրված է 557, ՇԾԷ փոխան ՇԾԸ), «աստ է գրեալ զվրաց բաժանումն»[2]: Սակայն, այս թվերից միայն 291 թիվն է արժանի ուշադրության, մյուս երկուսը բացարձակապես սխալ են (19):*

Մեր պատմագիրն Աղվանից եկեղեցու հիմնադիր է համարում Եղիշա առաքյալին, որ Քրիստոսի համբարձումից հետո գալիս է Աղվանք և կատարում իր առաքելությունը (Ա, գլ. Զ; Գ, գլ. ԽԸ): Եղիշան չէր կարող գալ Աղվանք 21 թվին: Կաղանկատվացին գիտեր, անտարակույս, որ Քրիստոս համբարձավ 31 թվին և ուրեմն դժվար է նրան վերագրել նման կոպիտ սխալ: Մյուս կողմից, նա գիտե Մովսես Խորենացուց[3], *որ Տրդատ [Մեծ] գահակալեց Դիոկղետիանոսի երրորդ տարին՝ 286 թվին: Նույն տարին, ըստ Ագաթանգեղոսի, Լուսավորիչ մտավ Վիրապ և ելավ 15 տարուց հետո, ուրեմն (286+15=) 301 թվին, երբ և տեղի ունեցավ Տրդատի և Հայոց դարձը: Աղվանից ենթադրյալ դարձը 270 տարի առաջ կգա (301-270=) ուղիղ 31 թիվը՝ Քրիստոսի համբարձման տարին: Եթե անգամ անտեսեր Խորենացի և Ագաթանգեղոս, 31 թիվը բավական է Կաղանկատվացուն որոշելու համար Հայոց դարձը (31+270=) 301 թվին: Եվ այս թվականն է, որ համարում է Հռոմոմոց 43-րդ տարի, որից հետևում է, որ Հռոմոմոց թվականը հաշվում է (301-43=) 258 թվեն և ոչ 248, որ է ստույգ: Այս տասնամյա տարբերությունը նկատվում է նաև ուրիշ հիշատակարաններում և նման քննություններում ունինք: Ուշագրավ են հետևյալ երկու դեպքը: Բյուզանդական գործիչ Թոռնիկ Վա-*

---

[1] **Ուխտանես Եպիսկոպոս,** Պատմութիւն բաժանմամբ վրաց և հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 136:

[2] «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 75:

[3] **Մովսես Խորենացի,** Պատմութիւն Հայոց, էջ 224:

ճականի պատվիրած ձեռագիրներից մեկը գրված Կարին գավառում, կրում է Արարչության 6500 և Քրոնիկոնի 201 թիվը[1]*: Արարչության 6500 տարին հավասար է (6500-5508=) 991 սեպ[տեմբեր]-992 սեպ[տեմբեր]: Իսկ Քրոնիկոն այլ բան չէ քան Հռոմոմոց թվականը: Իսկապես Ջատկական մեծ շրջանի, այսպես կոչված 532 ամաց բոլորակի, աճուրդն է: Հետին թվով հաշված 532-ամյա շրջանը սկսվում է 248 թվից և ուրեմն վերջանում (532+248=) 780 թիվ: Վրաց ազգային թվականը հաշվում է 780 թվից, ինչպես մերը՝ 551 թվից: Հետևապես Քրոնիկոնի 201 թիվը կգա (780+201=) 981 թիվը, այսինքն՝ տասն տարով պակաս, քան իր զուգակշիռ արարչության տարին:*

Անվո Մայր տաճարի հայտնի արձանագրությունը, որ պատկանում է Կատրամիդե թագուհուն՝ դրոշմված է Հ[այոց] թ[վականության] 459 և Հռոմոմոց 219 թիվը: Առաջինը հավասար է (459+551=) 1010, երկրորդը՝ (219+780=) 999, դարձյալ տասն, կամ տասնմեկ տարվա տարբերություն: Սրանք, հարկավ, սխալագրություններ չեն, այլ նշանակում են, որ Քրոնիկոն հաշվում է, ոչ թե սովորական 780, այլ 790 թվականից և հետևապես 532 թվի բոլորակի սկիզբը 258 թիվն է և ոչ թե 248 թիվը: Այսպիսով, կրացատրվի Կաղանկատվացու 291 թիվը, համազոր 301 թվի[2]:

---

[1] **N. Adontz**, Tornik le Moine, "Byzantion", t. XIII, 1938, p. 157.

[2] Տասն կամ ավելի ճիշտ տասնմեկ տարվան տարբերությունը կարելի է բացատրել հետևյալ կերպով: «532 ամաց բոլորակը» կամ հինգհարյուրակը բաղկացած է 28 տասնևհինգամյակներից՝ 28x19=532: Դրանից առաջ կար կանոն երկհարյուրակի կամ Անդրեասի կանոն կոչված Ջատկացույցը. սա կազմում էր 10 տասնևհինգյակ և տասն տարի (10x19+10=250), այսինքն՝ պակաս էր 9 օր տասնևհինգյակը լրացնելու համար: Հայոց եկեղեցին ընդունել էր Անդրեասի կանոնը 353 թվին: Կանոնը լրացավ 552 թվին և այնուհետև հաջորդեց հինգհարյուրակը: Արդ, նկատելու է այս պարագան. Անդրեասի կանոնը սկսել էր 353 թվին, տասնևհինգյակի 12-րդ տարուց: Նոր տոմարի մեկնակետը կարելի էր որոշել երկու կերպ. կամ շարունակել հինը ևս տասն տարի մինչև տասնևհինգյակի 12-ը, այսինքն՝ մինչև այն կետը, որտեղից սկսվել էր, ուրեմն հասցնել մինչև 552+10=562 թիվը, և այս համարել նոր տոմարի՝ հինգհարյուրակի սկզբնավորությունը, կամ սկսել 551 թվից, այսինքն՝ իննևտասնյակի առաջին տարվանից, և ոչ 552, որ երկրորդ տարին էր: Այսպիսով, կունենանք երկու սկիզբ նոր տոմարի համար՝ 551 և 562, տասնևմեկ տարվան անջատով: Վրաց քրոնիկոն, որ սկսվում է 780 թվից, ոչ այն ինչ է, եթե ոչ 12 անգամ իննևտասնյակ (12x19=) 228, որ հաշված 551 թվից կտա (551+228=) 779՝ իննևտասնյակի առաջին տարին, իսկ եթե հաշվենք 562 թվից կստանանք (562+228=) 790՝ իննևտասնյակի 12-րդ տարին: Նոր տոմարը՝ հինգհարյուրակը կսկսվի ուրեմն հետևյալ 780 թվից և կամ 791 թվից: Կատրամիդե թագուհին և Թոռնիկ Վանական, անշուշտ, հետևել են այս կիրարկության մեջ հայտնի ավանդության, ընդունված թերևս հայ քաղկեդոնական շրջաններում:

Բարգենի ժողովի և վրաց անջատման թվականները, ինչպես հիշեցինք, սխալ են: Բարգենի ժողովը կայացել է 505-506 թվին, համաձայն ժողովի արձանագրության, պահպանված «Գիրք թղթոց»-ի մեջ[1]: *Կաղանկատվացու 471 թիվը, մեր սրբագրությամբ՝ 481 թվականը, հասկանալի կդառնա, եթե հիշենք, որ Զենոն կայսրը իր հռչակավոր հակաքաղկեդոնական հենոտիկոնը հրատարակել է 482 թվին, իսկ իր հաջորդ Անաստաս կայսրը, որ նույնպես շեշտված հակաքաղկեդոնական էր, նման գրություն էր հռչակել 506 թվին, գրեթե Բարգենի ժողովի տարին: Թվում է, որ թե մեր պատմագիրը, զուգորդության շեղումով, շփոթվել է և Բարգենի ժողովը տեղափոխել 506 թվից 482 (=481):*

Վրաց բաժանման թվականը ևս արհամարհելի չէ, եթե 87 տարվան անջատը հաշվենք Բարգենի ժողովի ստույգ թվականից (505/506+87=) կհանգինք 592-593 թվին: Վրաց պաշտոնական խզումը կատարվեց 609 թվին, բայց շարժումը սկսվել էր 583 թվականից՝ շնորհիվ Մորիկ կայսեր ձախորդ քաղաքականության: Կաղանկատվացին հետևյալ գլխում (Բ, գլ. ԽԸ) պատմում է, թե ինչպես հույները ջանացին գրով և խոսքով մոլորցնել հայերին և ժողովներ գումարեցին մի անգամ՝ Կ.Պոլիս, երկու անգամ՝ Թեոդոսուպոլիս (Կարին): Պարսկա-բյուզանդական կռիվները վերջացան 591 թվի դաշնագրությամբ, որով Պարսկական Հայաստանի մի խոշոր մասն կցվեց Բյուզանդական Հայաստանին: Մուշեղ Մամիկոնյան այդ միջոցին մայրաքաղաք գնաց, բայց փոխան սպասելիք շնորհների, կայսերական դուռը դավանաբանական խնդիրներ դրեց նշանավոր զորավարի առաջ: Այս առթիվ խորհրդակցություններ տեղի ունեցան ապստրված հայ եկեղեցականների հետ, հավանորեն 592-593 թվին: Իսկ Թեոդոսուպոլսի ժողովներն են՝ Թեոդորոս փիլիսոփայապետի գումարածը, երևի 595 թվին և Հերակլ կայսեր 23-րդ տարվանը՝ 633 թվին:

Մորիկի ժողովը և նրան կապակից Կարինի ժողովը նշանակում ենք 593-595 թվականներին, համաձայն Diegesis-ի տեղեկության, թե քաղկեդոնական վեճերը տևեցին 14 տարի՝ մինչև Աբրահամի կաթողիկոսանալը, ուրեմն 607-14=593: Բացի սրանից, Անաստաս կայսեր Թղթի վերջը կա մի կարևոր ծանոթություն, թե Թղթի գրելուց մինչև Մորիկի 13-րդ տարին անցել է 89 տարի[2]: *Մորիկի 13-րդ տարին կլինի 595 թիվը (582+13=595): Հետևաբար, Թուղթը գրված է (595-89=) 506 թվին: Կարծում ենք, որ Անաստասի Թուղթը, ինչպես և Զենոնի հենոտիկոնը թարգմանված են հայերեն 595 թվին՝ սույն տարվան մեջ գումարված ժողովի առթիվ:*

---

[1] «Գիրք թղթոց», էջ 42, հմմտ. էջ 220-221:

[2] Անդ,, էջ 278:

Ինչ վերաբերում է Հերակլի ժողովին, որ գումարվեց Կարինում, տեղեկությունները [թեև] խառնակ են, բայց դյուրին է կարգի բերել: Diegesis տալիս է Հերակլի 23-րդ (610+23=) 633 և Խոսրովի մահվան 4-րդ (628+4=) 632 տարին: «Կայսերաց գիրքը» ժողովը կայացած է համարում Հերակլի ԺԷ-րդ[1], *և կամ ԺԹ (համաձայն ուրիշ օրինակ) տարին, ուրեմն 627-629 թվին: Հերակլ կայսրը Վրաստան և Հայաստան էր 622-628 թթ.: Կայսրը կուզեր հայ և հույն եկեղեցու միջև եղած խորոցը վերացնել ու երկրի համակրությունը ձեռք բերել պարսկական պատերազմների առթիվ: Հաշտությունը դժվար չէր: Ինքը՝ կայսրը, միակամության և մի ներգործության դավանանքի ջերմ պաշտպան էր, համաձայն Հայոց եկեղեցու և հակառակ հույն եկեղեցու վարդապետության: 622 թվից սկսած կայսրը այդ ուղղությամբ փորձեր արեց՝ խոսեց Կարինի Պողոս Միականի կոչված եպիսկոպոսի հետ, 626 թվին համոզեց Փասիսի եպիսկոպոս Կյուրոսին և 631 թվին նրան նշանակեց պատրիարք Աղեքսանդրիո: 633 թվին համաձայնություն արդեն կայացած էր Աղեքսանդրիայում: Կարծում ենք, որ Հայաստանում ևս խնդիրը միանգամից չէ դրվել և լուծվել: Հավանական է, որ 628 թվին Քրիստափոր կաթողիկոսի անկումը կապ է ունեցել օրվան խնդրի հետ, և որ վերջնական վճիռը կայացած է 633 թվին: «Սակս ժողովոց» հիշատակարանի տեղեկությամբ[2], Հերակլ (Հերակլիոս) I իր թագավորության 12-րդ տարում սպանեց պարսից Խոսրով թագավորին և 18 տարի հետո ժողով արավ Կարին քաղաքում: Սակայն Խոսրով սպանվեց, և ո՛չ Հերակլի ձեռքով, 628 թվին: Եվ ուրեմն, ժողով պիտի կայացած լիներ (628+18=) 646 թվին: Հիշատակարանը շփոթել է հայտնապես Հերակլի ժողովը այն ժողովի հետ, որ գումարեց Կոստանդ [II կայսրը] Դվինում: Այս վերջինիս ստույգ թվականն է 649 (չորս տարի առաջ նախքան Կոստանդ կայսեր ժամանումը ի Դվին= 653 թվին), և գումարված է Կոստանդի նշանավոր Տիպոսի (Typos) հետևանքով: Ո՛չ Հերակլ, որ կարինցի հայ ծագում ուներ և ո՛չ իր թոռն Կոստանդ, ոչինչ չեն գործել Հայոց եկեղեցու դեմ, և ո՛չ Եզր Ա կաթողիկոս և անգամ Ներսես Գ Իշխանեցի չեն դրժել իրենց ուխտին: Կայսրերն են համակերպվել և ընդունել Հայոց եկեղեցու տեսակետը և ոչ թե հայերն են զիջել: Հայի խորշանքը և անվստահությունն այնքան մեծ էր հույների հանդեպ, որ ամեն մի հաղորդակցություն, նույնիսկ նպաստավոր, կասկածելի են համարվել: Միակամության և մի ներգործության հողի վրա հաշտություն կնքել, նշանակում է Քաղկեդոնի դեմ գործել և ոչ ի նպաստ: Սեբեոսի մոտ հայոց պատասխան Թուղթը հարազատ չէ[3], այս մասին տեղը չէ երկարել:*

---

[1] «Գիրք կայսերաց», էջ 76:

[2] «Գիրք թղթոց», էջ 221:

[3] **Սեբեոս**, էջ 120-134:

Հունաց «յորդաբաւնութիւն»-ը չօգնեց իրենց հաղթելու հայերին: «Այլ Հայք համբաւէին զՅովհաննու, շարունակում է մեր պատմագիրը,- եթէ ի Յունաց կողմն լեալ, հակառակ բերէր Հայոց. զորոյ զրպարտութեան պատճառ Սողոմոն ոմն միայնակեաց, <որ> յետոյ եղև կաթողիկոս, նորա հարցեալ զվարդապետն իւր Սողոմոն, որ Մաքենոցացն էր հայր, և նա գրով ուսոյց զայս՝ եթէ ոչ պարտեցան Հայք ի հաւատոյ մասին», այլ հաղթվեցան ճվիրապետության խնդրում (Ք, գլ. ԽԸ): Ո՞վ է այս Հովհանը:

Ուխտանես բաց է թողել այս տեղիքը: Իսկ Ստեփանոս Օրբելյան հասկացել է այնպես, թե «ոմանք զրպարտեն զսուրբ հայրն Յովհան Մայրագոմեցի, եթէ նա ասաց, եթէ Հայք պարտաւորեցան ի հաւատոյ մասին. որ և քա՛ւ և մի՛ լիցի»[1]:

Մեզ թվում է, որ ամբաստանության մեջ հոլովված են երկու անձ՝ Հովհան Բագավանցին, որ արդարև «ի Յունաց կողմ էր» և հակաթոռ կաթողիկոս ընտրվեց Մովսես [Ք կաթողիկոսի] ժամանակ՝ 595 թվին, իսկ մյուսը՝ Հովհան Մայրագոմեցին, որ ասել էր, թե «Հայք պարտեցան»՝ 633 թվի ժողովի համար: Ստեփանոս Օրբելյան պատմում է, որ Եզր [կաթողիկոսը] չէր տարել ժողովին ժամանակակից երկու նշանավոր գիտնական վարդապետներին՝ Մաթուսաղա Սյունեցուն և Հովհան Մայրագոմեցուն, այլ բավական էր համարել Մաթուսաղայի աշակերտ՝ Թեոդորոսի ներկայությունը: Սակայն, Թեոդորոս չէր արդարացրել իր վրա դրած հույսերն ու վստահությունը և պաշտպանել էր հունաց տեսակետը: Այս Թեոդորոսը՝ Կոմիտասի եղբորորդին, շփոթված է անտարակույս Կարնո Թեոդոր փիլիսոփայապետի հետ, որ [կաթողիկոս] ընտրել տվեց Հովհան Բագավանցուն:

Diegesis ևս գիտե, որ Մաթուսաղա Սյունեցին և նրա հետ Գարդմանի եպիսկոպոս Ստեփանը բացակա են եղել Եզրի ժողովին և Հովհան Մայրագոմեցին աշխատել է հեռու պահել նրանց Եզրի միությունից, բայց չի հաջողել և երկու եպիսկոպոսները հավանություն են տվել Եզրի քաղաքականության: Հերակլի և Կոստանդ [II]-ի ջանքերը՝ հարթել հայ և հույն եկեղեցիների հարաբերությունները միակամության վարդապետության գետնի վրա և այս խնդրին ճվիրված ժողովների բնավորությունը, շատ շուտով մոռացվել և այլափոխվել է, թերևս 680-681 թվի [Կ.Պոլսի] վեցերորդ տիեզերական ժողովի հետադարձ ստվերի տակ: Այս ժողովը ջնջեց Հերակլի և Կոստանդի միակամ վարդապետության վերա կանգնած քաղաքականությունը և վերադարձավ քաղկեդոնության երկուկամ տեսակետին: Տաս տարի հետո՝ 691 թվին, տեղի ունեցավ Տրուլլոսի *ժողովը, ուր հավանորեն ներկա էին և հայ*

[1] «Պատմութիւն ընդհանրական Սիսական արքեպիսկոպոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», հատ. Ա, Փարիզ, 1859, էջ 144:

*եպիսկոպոսներ: Diegesis հաղորդում է, որ Սահակ Գ Ջորափորեցի [կաթողիկոսը] համակերպվել է ժողովին, բայց վերադառնալով Հայաստան՝ հրաժարվել է և մնացել իր նախկին դավանանքի մեջ: Գուցե այս դեպքերի ազդեցությամբ է, որ «**Սակս ժողովոց**» աններելի մոլորության մեջ է ընկել, հավատացնելով, թե Եզրից մինչև Հովհան Օձնեցին, հայ կաթողիկոսները հետևորդ են եղել քաղկեդոնականության:*

Սողոմոն վարդապետի Թուղթը, գրած իր աշակերտ՝ հետագայում (792 թվին) Հայոց կաթողիկոս Սողոմոն [Ա Գառնեցուն], պահել է մեզ ճշմարիտ հիշողություն 633 թվի Եզրի ժողովի էության «Հայք ոչ պարտեցան ի հաւատոյ» մասին: Արդարև, ընդունել Հերակլի և Կոստանդի՝ առաջնի **էկթեզիս** և *երկրորդի* **տիպոս** *դավանաբանական հրահանգները, նշանակում է հավատարիմ մնալ հակաքաղկեդոնական քրիստոսաբանության:*

Սողոմոն վարդապետի տեղեկությամբ հայերը պարտվել են նվիրապետության հարցում: Հույները գտել են, որ Հայոց եկեղեցին չունի բոլոր իննը աստիճանները եկեղեցական դասի: «Ո՞վ է պատրիարքն ձեր», - հարց են տվել հույները, - «Չի չորք միայն կացին ի վերայ երկրի», այն է՝ Աղեքսանդրիայի, Անտիոքի, Հռովմի և Եփեսոսի պատրիարքական աթոռները, որոնց հիմնադիրներն են Մարկոս, Մատթեոս, Ղուկաս և Հովհաննես առաքյալները: Եփեսոսի աթոռը փոխադրվեց Կ. Պոլիս Հուստինիանոսի ժամանակ, իսկ Մատթեոսի աթոռը՝ Երուսաղեմ: Ենթադրվում է, որ միմիայն առաքելադիր եկեղեցիներին է վերապահված ինքնուրույն և անկախ վարչության իրավունք և ուրեմն հայերն իրենց ինքնուրույնությունն արդարացնելու համար պետք է ցույց տային իրենց եկեղեցու առաքելական ծագումը: Հույներն ասում էին, որ Լուսավորիչ ձեռնադրվեց Կեսարիա և եթե այժմ անկախ ենք համարվում «ցուցէ՛ք զպատրիարքն, ընդ որով դասի արքեպիսկոպոսապետն ձեր, որ մինչև ցայսօր (!) ընդ մեօք էր»: Հույներն իրենց մեծարանությամբ «փոքրկացուցանել ջանային զկայս հանգստեան Թադէոսի առաքելոյ՝ չունել եպիսկոպոսապետ և մետրապօլիտ» (Բ, գլ. ԽԸ): Հայերին դժվար չէր զինաթափ անել հակառակորդին՝ հիշելով որ Հայոց եկեղեցու բուն հիմնադիրն է Թադեոս առաքյալը: Հետևապես և [Հայոց] կաթողիկոսն է նրա աթոռի պատրիարքը, բայց որ արքեպիսկոպոս կամ եպիսկոպոսապետ, և մետրոպոլիտ չունեին, այդ պետք է խոստովանեին: Իրենց պարտությունը, ուրեմն, այս կետումն է:

Բյուզանդական և հայ եկեղեցիների տարբերությունը վարչական կազմի տեսակետից բացատրել ենք պատմական լույսով մեր ռուսերեն աշխատության մեջ[1]: *Բյուզանդականը համակերպվել էր պետական վարչական բա-*

[1] **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, гл. XII—Нахарарство и иерократия.

ժամմունքին, իսկ Հայ եկեղեցին՝ իր երկրի նախարարական պատկերին: Առաջինն ուներ մի շարք մետրոպոլիտաններ՝ ստորադաս եպիսկոպոսներով: Կային և բազմաթիվ քաղաքներ, որոնց եպիսկոպոսը կոչվում էր սկզբում ավտոկեփալ՝ «ինքնագլուխ», իսկ հետագայում՝ արքեպիսկոպոս: Սրանք չունեին ստորադաս եպիսկոպոսներ: Հայ եկեղեցու պետը չուներ ո՛չ մետրոպոլիտներ և ո՛չ արքեպիսկոպոսներ, այլ միայն բազմաթիվ եպիսկոպոսներ:

Ինչ որ Մովսես Կաղանկատվացին պատմում է այս բացատը լրացնելու խնդրի մասին, հետաքրքրական է: Որպես թե հայերը հայտարարել են, թե իրենց արքեպիսկոպոսը Աղվանից կաթողիկոսն է և մետրոպոլիտը՝ վրացը: [Վրաց] Կյուրիոն [կաթողիկոսը] չի ընդունել, ըմբոստացել է և անցել քաղկեդոնականության: Հունական զորավարները պաշտպանել են վրաց գահերեցությունը հանդեպ Աղվանից, բայց սրանք չեն հուժարել, ցույց տալով որ Եղիշա առաքյալը քարոզել է և հիմնել Գիսի եկեղեցին՝ «նախկին քան զՀայք»: Ուստի և չեն ուզեցել անգամ հնազանդվել Հայոց եկեղեցուն:

Այս պատմությունն երկբայելի է[1], *բայց եթե անգամ հնարված է, լավ արտացոլում է պատմական մի իսկություն: Վրաց և աղվանից անջատումը ներշնչված էր ամենեն առաջ ազգային ուրույն եկեղեցի ունենալու ճգտումից: Դավանաբանական խզումը լոկ գաղափարական շղարշ էր արդարացնելու համար վարչական անկախությունը: Նույն հողի վերա է ծագել և Ուխտանեսի մոտ պահված պարզամիտ ավանդությունը: [Հայոց] Աբրահամ [կաթողիկոսի] առաջին տարին վրաց և աղվանից արքեպիսկոպոսները գալիս են ընդընտիր կաթողիկոսին տեսության: Աբրահամը «Ընկալեալ զնոսա մեծաւ պատուով և սիրով հոգւոյն որպէս օրէն է, և նստուցեալ զնոսա յիւրաքանչիւր գահի, որպէս սովորութիւն էր նոցա նստել»: Սեղանի վերա «օրհնեցին և կերան մինչև ի ժամ գինոյ», երբ Աբրահամ կաթողիկոսն առաջարկեց գինու բաժակը նախ Աղվանից արքեպիսկոպոսին և ապա՝ Վրաց: Կյուրիոն նեղացավ, ասելով որ ինքն էր արժանի առաջին բաժակի, քանզի «վիճակաւ վերագոյն եմ քան զդա, և եպիսկոպոսօք ևս առաւել, իսկ հաւատով նախ քան զդա ի սրբոյն Գրիգորէ և այսր»: Աբրահամ չկարողացավ համոզել Կյուրիոնին, որ Աղվանից արքեպիսկոպոսը հասակով ավելի ծեր էր, ուստի և «պատիւ արարի զայն նորա ծերութեանն»: Ահա թե ինչու «փառասէր, մարդադաւան», Կյուրիոնը բաժանվեց «սակս միոյ բաժակի»[2]:*

Վրաց և աղվանից բաժանումից հետո հայերը առաջարկում են մետրոպոլիտության պատիվը Մարդպետական եպիսկոպոսին: Սա պահանջում է

---

[1] Հովհ[աննես] Կաթ[ողիկոս] [Դրասխանակերտցի] գիտե այս պատմությունը (տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց, էջ 41-42):

[2] **Ուխտանես**, գլ. ԿԲ, էջ 118:

ունենալ երկու կամ երեք ստորադաս եպիսկոպոս: Այս հավակնությունը վտանգավոր է համարվում և մետրոպոլիտության տիտղոսը հատկացնում են Սյունյաց եպիսկոպոսին: Սյունեցիք որպես մետրոպոլիտ պարտավոր չէին հիշելու կաթողիկոսին եկեղեցում և իրենց պաշտոնական տիտղոսն էր «հոգևոր տէր»: [Հայոց] Եղիա կաթողիկոս Աղվանք գնալիս (704 թվին), թույլ է տվել իրեն Երիցո վանքում *«խակագործութիւն», որով և ընդունված հարաբերությունները կաթողիկոսարանի և Սյունյաց աթոռի միջև խանգարվել են: Կաղանկատվացին ասում է, թե «Այսպէս զետեղեցին զինն դասս»: Սակայն առանց արքեպիսկոպոսի, ինքը դասը չի լինի, այլ միայն ուր: Պետք է կարծել, որ Մարդպետականը մնում է հաշվի մեջ:*

Այս պատմության մեջ արտահայտվում են Սյունյաց անջատական տրամադրությունները: Պատմությանը հետևում է Հայոց Աբրահամ կաթողիկոսի Թուղթը Ամարասա Մխիթար եպիսկոպոսին (Ք, գլ. ԽԹ), ուր, կաթողիկոսի անունից հետո, առաջին տեղը բռնում է Թեոդորոս Մարդպետական եպիսկոպոսը և երկրորդ՝ Դավիթ Սյունյաց եպիսկոպոս[1]*: Թվում է, թե այստեղից է ծագել այս երկու եպիսկոպոսությանց մետրոպոլիտության արժանի համարվելու միտքը:*

Աբրահամ [կաթողիկոսի] Թուղթը կարևոր վավերագիր է և շատ ավելի ընդարձակ, քան բերում է Կաղանկատվացին, ինչպես երևում է նրա պատճենից՝ «**Գիրք թղթոց**»-ում: *Այստեղ պակաս է միայն վերջին մասը՝ ձեռագրից թերթ ընկած լինելու հետևանքով: Կաղանկատվացին բերում է Թղթի սկիզբը և վերջին մի հատված, որ մասամբ լրացնում է «**Գիրք թղթոց**»-ի պակասը:*

Կաղանկատվացու Պատմության Ծ գլուխը ճշխարների պատմությունն է: Գեղամա գավառի Բրտի այրը անապատից Հովսեփ վանականը տեղափոխվում է Արցախի Ցղերկը գյուղը: Տեղի Միհր եպիսկոպոս ապաստան է տալիս նրան, եկեղեցի են շինում: Միհր մահանում է 12 տարուց հետո և նրան հաջորդում է Անդրեաս [եպիսկոպոսը]: Հովսեփ մտահոգ է, որ նորաշեն եկեղեցին ճշխարներ չունի:

Լսում է, որ Մխիթար անունով մի անապատական բերել է Երուսաղեմից Արցախ Ս. Ստեփանոսի և Ս. Գևորգի ճշխարներից, նույնպես և Տավրոս լեռներից անցնելիս Ս. Անդրեասի վկայարանից հայթայթել այս առաքյալի ճշխարներից մի մաս: Հովսեփ հաջողում է համոզել Մխիթար անապատականին զետեղել բոլոր մասունքները Ցղերկաց եկեղեցում: Հովսեփ ցանկանում է ձեռք բերել նաև Ս. Հովհաննես Մկրտչի ճշխարները, ուստի ուղի է

[1] Կաղանկատվացու մոտ Դավիթ եպիսկոպոսը բռնում է երրորդ տեղ, որ գրչի սխալ է: «**Գիրք թղթոց**»-ում երկրորդ տեղն է (էջ 196):

ընկնում դեպի Երուսաղեմ: Սակայն նա ճեռնունայն վերադառնում է Գեղամա իր հայրենի գավառը և Պուհավանքի մեջ պահված [Հովհաննես] Սկրտչի, Թովմաս առաքյալի և Ստեփանոս Նախավկայի նշխարները փոխադրում է Յողերկը: Այս պատմության մեջ մի կարևոր ակնարկ կա. «Եւ չոգայ,- պատմում է Հովսեփը,- հասի ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և զերկրպագութիւն անդ կատարեալ, մեծաւ տրտմութեամբ դարձայ, **վասն զի ամենեքեան էին ներկեալ և հաւանեալ աշխարհակործան ժողովոյն**. *որոց ողջոյն անգամ ոչ առեալ՝ եկի ի գաւառն իմ Գեղարքունի» (Բ, գլ. Ծ): Ի՞նչ ժողովի մասին է ակնարկը: Հովսեփ հաստատվել է Յողերկը գյուղում Հերակլ կայսրի (610-640) և Հազկերտ III արքայի (632-652), Հայոց կաթողիկոս Եզր Ա Փառաժնակերտցու (630-640), Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի († 637), Սյունյաց Գրիգոր իշխանի († 637), Մաքուսաղայի ուսուցչապետության, Գարդմանի իշխան Վարազ-Գրիգորի օրով, ուրեմն 630-637 թվերի միջոցին: Մնացել է 12 տարի, հետո գնացել է Երուսաղեմ, ուրեմն 642-649 թվերի մոտերքը: Մի կամքի և մի ներգործության վեճերի ժամանակ էր և գիտենք, որ Երուսաղեմի պատրիարք Սոփրոնիոս (634-638) ժողով գումարեց Երուսաղեմ ընդդեմ մի ներգործության դավանանքի: Կարծում ենք այս ժողովն է, որ Հովսեփ որակում է որպես «աշխարհակործան», հայ դավանության հակառակ լինելու պատճառով:*

Երկրորդ գրքի վերջին երկու գլուխները՝ ԾԱ («Վասն որ ի սուրբն Երուսաղէմ եկեղեցւոյ շինուածք թուով և հիմնադրելով. ստոյգն գտցես անդաւօր») և ԾԲ («Անուանք վանորէից, որ յԵրուսաղէմ են շինեալ յԱղվանից աւուն, զոր երանելոյն Անաստասայ առ Վահան Մամիկոնեան՝ ուսաք, այս են») նվիրված են Երուսաղեմ գտնված Աղվանից վանքերին[1]:

[1] Քաղված Անաստաս Վանականի գրություններից, տե՛ս «Անաստասայ վարդապետի վասն վանորէից Հայոց, որ ի Ս. քաղաքն յԵրուսաղէմ», Վենետիկ, 1896:

[«ԱՂՈՒԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»
ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔԸ]

[Է]

Եկեղեցական գործերը մեծ տեղ են բռնում նաև «Աղուանից պատմութեաց» երրորդ գրքում: Այս գիրքը բովանդակում է 23 գլուխ, որոնցից 12-ը՝ Գ-ԺԴ, վերաբերում են եկեղեցական անցուդարձին:

Աղուանից Եղիազար կաթողիկոսին հաջորդեց Գարդմանի եպիսկոպոս Բակուր կամ Ներսես: Աղվանից իշխան Վարազ-Տրդատի մահից հետո, ոմն Շերո գրավեց իշխանությունը, ինչպես երևում է, բռնանալով նրա որդիների վերա: Իսկ կինը՝ Սպրամ, շարունակեց պահել իր բարձր դիրքը և նրա շնորհիվ էր, որ Բակուր արժանացավ հայրապետական աթոռին: Տիկնոջ հովանավորության պատճառն էր Բակուրի քաղկեդոնական հակումը, ինքը՝ տիկինը, լինելով հետևորդ Քաղկեդոնի: Գժտություններ ծագեցին: Մեզ ծանոթ երկու եպիսկոպոսները՝ Հովել և Իսրայել, հրապարակի վրա էին և պատվավոր դերի մեջ: Հովելն է, որ, ուրիշ եպիսկոպոսների հետ, պահանջել էր Ներսես-Բակուրից նզովել Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տոմարը՝ նախքան կրազմներ աթոռի վերա: Հովել ստացել էր «Նզովից գիրը» և դրել պահեստի: *Ներսես պահեց հավատարմությամբ իր ուխտը մինչև որ Հովել կենդանի էր: Երբ սա մեռավ 14 տարուց հետո, Ներսես շտապեց Հովելի եպիսկոպոսարանը Մեծիրանց գավառում, և Զաքարիա անուն մի վանականի ձեռնադրեց եպիսկոպոս և նշանակեց հաջորդ Հովելի, և այդ գնով կորզեց նրանից «Նզովից գիրը»: Այնուհետև սկսեց Սպրամ տիկնոջ գործակցությամբ հայտնապես քարոզել քաղկեդոնական հավատը, անգամ բռնություններ գործելով: Առաջին զոհը եղավ «նշանագործ» Իսրայել [եպիսկոպոսը], որին հալածեց երկրից: Շերո իշխանը և մյուս եպիսկոպոսները ժողով գումարեցին, նզովեցին Ներսեսին և այս մասին հայտնեցին [Հայոց] Եղիա կաթողիկոսին, որ դիմեց Արդ ալ-Մալիք խալիփային և հրաման հանեց Աղուանից հանցապարտ կաթողիկոսին և Տիկնոջ Սպրամին դրկել շղթայակապ արքունի դուռը: Հայոց Եղիա կաթողիկոս գնաց անճամբ Պարտավ, ժողով գումարեց, գահընկեց արավ Ներսեսին և ընտրել տվեց հաջորդ Սամուել եպիսկոպոսին:*

Ժողովը կայացավ «85-րդ ամի տաճկաց և ի հայ թուականին 148, յամսեան Հրոտից»: Տաճկաց թվականն է հիջրի, որի 85 թիվը=է 704 հունվարի:

Հայկական թվականը՝ 148(+551=) 699 թվի հունիս 5-700 թվի հունիս 4, չի համապատասխանում տաճկականին, եթե միայն գրչական վրիպակ չկա: Պետք է կարծել, որ Հայկական թվականը հետո է ավելցրած, բացի, հարկավ, հրոտից ամսից, որ հարազատ ենք համարում: Ժողովը գումարված է ուրեմն 704 թվի հրոտից=մայիս ամսին: Ներսես «կալաւ զաթոռն ուղղափառութեամբ ամս 14 և ի չարափառութեան՝ ամս 3», ուրեմն 686-700 թվերին՝ ուղղափառ և 700-704 թվի մայիս՝ չարափառ:

Ներսես-Բակուրի ձայնը խեղդված էր, այնինչ նա ինքնապաշտպանության հիմքեր ուներ իր խստաբարո դատավորների առաջ: Հիշեցինք վերև, որ Հուստինիանոս II կայսրը Հայաստան էր 689 թվին: Տիկին Սպրամի ամուսնում՝ Վարազ-Տրդատին նա շնորհեց էքսարքոսության բարձր տիտղոսը, Սահակ Ձորափորեցի Հայոց կաթողիկոսին, հինգ եպիսկոպոսների հետ, տարավ իր հետ Կ.Պոլիս, ուր կաթողիկոսը գնթ առերես կատարեց կայսերական պահանջը՝ ընդունելով քաղկեդոնականություն: Ասում ենք «առերես», ավելի ճիշտ կլիներ ասել թեարար: Կայսրն առիթ էր որոնում լուծելու 686 թվի դաշինքը արաբների հետ և լավագույն առիթը միշտ եղել է Հայոց ապստամբությունը: Սահակ կաթողիկոս զիջել է պայմանով՝ ստանալ կայսերական օգնություն անհավատների լուծը թոթափելու: Հուստինիանոս II կայսրը գահընկեց եղավ, բայց նրա հաջորդը (Լեոնտիոսը - Պ. Հ.) շարունակեց նույն քաղաքական խաղերը հայոց հետ: 700 թվին պայթեց պատրաստված ապստամբությունը: Արդ ալ-Մալիք խալիփայի եղբայրը՝ Մուհամմադ եկավ ապստամբ հայ իշխանների դեմ՝ Արդ ալ-Մալիքի 16-րդ տարին՝ 700-701 թվին և վերականգնեց խաղաղությունը: Ճիշտ է, կայսերական օգնությունն հասավ, բայց այնքան չնչին էր, որ շոշափելի արդյունքը միայն պարտությունն եղավ: Մուհամմադ նորեն եկավ 702-703 թվին (=Արդ ալ-Մալիքի 18-րդ տարին): Հայոց Սահակ կաթողիկոս հուսախաբ դիմեց խալիփայի ներողամտության և մեռավ Խառանում: Նրա հետ մեռավ և միության խնդիրը, մեռավ կայսերական խաբուսիկ խոստումների աղետաբեր հետևանքով: Սահակին հաջորդեց Եղիա [Ա Արծիշեցի], որի անձն ու գործը մարմնացած բողոք էր կայսերական նենգ քաղաքականության դեմ և խորշանք կայսերական դավանաբանություններ: Վշտացած Հայրապետը իրավունք ուներ գանգատելու Արդ ալ-Մալիքին, թե «Աղվանից կաթողիկոս նստեալ ի Պարտաւ, խորհուրդ արարեալ ընդ կայսերն Յունաց, զնա քարոզէ յաղօթս» (Գ, գլ. Ե): Այս ամբաստանության մեջ գայթույթի սլաքն ուղղված է նենգամիտ կայսեր դեմ ավելի մեծ չափով, քան Աղվանից թշվառ Ներսես կաթողիկոսի:

Ներսեսի 14 տարի ուղղափառ, այսինքն՝ հայերի հետ, լինելը և 3 1/2 տարի չարափառ, այսինքն՝ հայերից զատվելը, եապես այլ բան չէ նշանակում, քան որ Ներսեսը մնացել էր հավատարիմ Հուստինիանոս II-ի օրեն ծագած

տրամադրություններին: Եվ որովհետև Աղվանք անմասն էին 700-704 թվերի ապստամբական շարժումներին, Ներսես չընդգրկեց հակաքաղկեդոնական խիստ հակադարձ քարոզը, որ սաստկացավ Հայոց մեջ՝ շարժումների ճախորդության հետևանքով:

Ներսեսի «Նզովից գիր» տալը և Հովելի մահից հետո այդ գրի գողանալը եպիսկոպոսությամբ կաշառված Զաքարիա վանականի միջոցով՝ ձրի հերյուրանք են հետին ժամու: Նման գիր չէին տված Ներսեսի ճախորդները՝ Եղիազար, Ուխտանես, Վիրո, և հավանական չէ, որ Ներսես տված լիներ: Աղվանից հայրապետների անջատական ճգտումը հայտնի է, ինչպես և անժխտելի նրանց քաղկեդոնական հակումները, Ներսես քավեց բոլորի մեղքերը: Հայոց Եղիա կաթողիկոս հասավ իր գլխավոր նպատակին՝ ենթարկել Աղվանից հայրապետությունը իր աթոռին, վերապահելով ձեռնադրության արտոնությունը:

Ներսեսին հաջորդ ընտրվեց Սիմեոն, նախապես գրով նզովելով Քաղկեդոնի ժողովը, Լևոնի տոմարը և Մաքսիմոսի վարդապետությունը: Սա *հայտնի եկեղեցական էր, որ դեմ ելավ միակամության ուսման և մեռավ աքսորի մեջ՝ 662 թվին: Պարտավի ժողովը, ուր [կաթողիկոս] ընտրվեց Սիմեոն, արձանագրեց, թե «ի սուղ ինչ ժամանակս կաթողիկոսքս մեր զկարգն յեպիսկոպոսացս մերոց առին, իսկ այժմ զի անփորձ և անընտրող գործով եղև, և հերձուածեցաւ աշխարհս, վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ (Եղիայի) հայրութեանդ, եթէ ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղվանից ի սուրբ Գրիգորի աթոռէն լիցի միաբանութեամբ աշխարհիս» (Գ, գլ. Ը):*

Շերո իշխանն իր ստորադրյալ աշխարհիկ տերերով նմանապես [Թուղթ] գրեցին և Թուղթը տարան Արդ ալ-Մալիքին, որտեղ իշխանների անունները ցուցագրեցին սպառնալով՝ «եթէ զորս ի սոցանէ գտանեն երկարընակ եղեալ, սրով և գերութեամբ սպառեսցեն» (Գ, գլ. Ժ):

Սիմեոն հայրապետական իշխանությունը վարեց մեկուկես տարի, ուրեմն 704-706 թվերին: Աթոռը ժառանգեց Միքայել, որ իր նախորդի նման հավատարմության գիր է տվել ընտրական ժողովին, որ գումարվեց Շամքորի Քերդո վանքում: Իշխանները ևս Շերոյի գլխավորությամբ մի Թուղթ են ստորագրել, որ պակասում է Կաղանկատվացու հրատարակության մեջ, բայց պահված է Էջմիածնի ձեռագրում թիվ 58: Հարկավոր ենք համարում բերել այստեղ այդ հետաքրքրական վավերագիրը՝

«Այլ ի ճոյն գրոց տեառն Վիրոյի Աղուանից կաթուղիկոսի. յառաջաբան պատմութեան աշխարհին Աղուանից: Կանոնք և սահմանադրութիւն ժողովոյն Աղուանից, որ եղև ի ժամանակս Եղիայի Հայոց կաթուղիկոսի, որ էր ԼԱ. աթոռակալ ի սրբոյն Գրիգորէ:

Ի ժամանակին յորում կարգեցաւ ի քահանայապետութիւն Աղուանից

Միքայէլ քահանայ խօսեցաւ աթոռակցօքն իւրովք, որք էին.

(1) *Յովհաննէս Կապաղակու եպիսկոպոս,*
(2) Սահակ Ամարասու եպիսկոպոս,
(3) Եղիազար Հոշոյ եպիսկոպոս,
(4) Իսրայէլ Մեծկուանից եպիսկոպոս,
(5) Զաքարիա Մեծիրանց եպիսկոպոս,
(6) Յովակիմ Գարդմանայ եպիսկոպոս, յաղագս բարեկարգութեան աշխարհիս և ուղղափառութեան հաւատոյս:

(1) Արդ ես Շերոյ ապիհի<պատ> պատրիկ Գարդմանայ տէր և Աղուանից իշխան,
(2) Վարազ-Գրիգոր պատրիկ Աղուանից սպարապետ,
(3) Քաք ի Շահր Փերոզեան,
(4) Ջառմիհր ի Վարազ-Քուրդաքեան,
(5) Թէոդորոս Վստամ Ցարևմանեան,
(6) Ռոստոմ ի Վաչագան ի Վարազաք<ոյ>եան Ցուցսատահեան,
(7) Վահան ի Վարազվահանեան,
(8) Սմբատ ի Քարոյեան,
(9) Մահումատ ի Ղանքարեան,
(10) Գրիգոր ի Ռահատեան,
(11) Պատրիկ ի Քամղիտան,
(12) Արևքո<յ> ի Վարոքեան (=Վար<ազ>ք<ոյ>եան?),
(13) Շերոյ ի Մերդանշահեան,
(14) Վարդիշ ի Թամղիկան հիւպատոս.

ՁԸ քուականնութեանս Հայոց այսպէս կանոնեցաք, թե յորժամ դուք ձեռնարկէք յաղագս քաղկեդոնական աղանդոյն և կամ Մայրագոմեց<ւ>ոյն, եթէ վասն պայլիկեանց և թէ վասն խառն ամուսնութեան և թէ զի՞նչ և իցէ, ոչ ոք կարէ ելանել ըստ ձեր հրամանէ. և եթէ ոք ելանէ յԱստուծոյ դատապարտեալ եղիցի, և դուք իշխան լիջիք ըստ կամաց ձերոց դատել և ոք յիշխանաց չունի իշխանութիւն օգնել և ի պայմանիս զոր կարգեցաք հաստատուն կացցուք:

Եւ կնքեցի զգիրս ես Շերոյ ապահի<պատ> պատրիկ, Գարդմանից տէր և Աղուանից իշխան, հանդերձ ամենայն ազատօք»[1]:

Ուշադրության արժանի է, որ «Աղուանից պատմութիւն»-ը կոչված է այս-

[1] **Սամուել Անեցի**, էջ 286, ծան. 28:

տեղ «Գիրք Վիրոյի Աղուանից կաթողիկոսի յառաջաբան պատմութեան»: Հարկավ, այս չէ նշանակում, թե գիրքը Վիրոյի հեղինակությունն է, այլ որ պատմում է Վիրոյի մասին: Ժողովի արձանագրությունն առնված է [Կաղանկատվացու] *Գ գրքից, իսկ Վիրոյի պատմությունը Բ գրքում է: Ասել է, թե Գ գիրքը կազմում է մասն Բ գրքի և ոչ թե անջատ կամ հավելածո գործ է:*

Ժողովի թվականի մեջ «Հայոց» բառը գրչի վրիպակ է՝ փոխան «Տաճկաց»: Տաճկաց 88 թվականը = է 706 թ. դեկ[տեմբերի] 12-707 թ. նոյ[եմբերի] 30: Ժողովի կանոնք և սահմանադրություն չկան, ընդօրինակողը բաց է թողած: Ինչպես 704 թվի ժողովի առթիվ, այս անգամ ևս Ներս մյուս իշխանների հետ վստահության և համերաշխության Թուղթ է ստորագրել նորընտիր կաթողիկոսին: Շատ տարօրինակ է Մայրագոմեցու անունը քաղկեդոնական աղանդի և պավլիկյանների կողքին: Երևի ժողովն ի նկատի է ունեցել Մայրագոմեցու մի քանի աշակերտներին, որոնց գործունեությունը պախարակելի էր, ինչպես վկայում է Հովհաննես Կաթողիկոսը[1]: *Թերևս Մայրագոմեցու բարի հռչակը խնայելու և անտեղյակներին գայթակղություն չպատճառելու դիտավորությամբ է, որ ժողովի արձանագրությունը հանել են Կաղանկատվացու Պատմության էջերից:*

Աղվանից աթոռը ուներ վեց եպիսկոպոսություն՝ Կապաղակ, Հոշ (Ցոշ), Ամարաս, Գարդման, Մեծկողմանք, Մեծիրանք: Նախորդ՝ 704 թվի ժողովին ներկա էին միայն չորս եպիսկոպոս, Մեծկողմանց Իսրայել եպիսկոպոսն աքսորված և Մեծիրանց աթոռը թափուր լինելով: Վեցերորդ դարում, Աղվանից Աբաս հայրապետի օրով Աղվանք հաշվում էր յոթն եպիսկոպոսական աթոռ, ինչպես թված են Հովհաննես Բ Գաբեղենացու Թղթի մեջ[2], *բերված նաև Կաղանկատվացու մոտ (Բ, գլ. Է)՝ Բաղաեատ (?), Կապաղակ, Ամարաս, Բաղասական, Շաքի, Գարդման և Մեծկողմանք: Շաքի հետագայում անցել է հավանորեն վրաց եկեղեցուն, իսկ Բաղաեատ խանգարված անունը և Բաղասական զուգակշիռ են Հոշո և Մեծիրանց: Հետաքրքրական է, որ Diegesis-ի վրաց թարգմանության մեջ ասված է, թե Կոմիտաս կաթողիկոսը յոթն եպիսկոպոսություն զիջավ աղվաններին, որով նրանց իր կողմը քաշեց և մերժել տվավ Քաղկեդոնի ժողովը*[3]:

704 թվի ժողովին ներկա էին, ուրիշների թվում, նաև Ներս-Միհրի վանաց տանուտեր, Գտո վանաց տանուտեր, Կատարո վանաց տանուտեր և Հով-

---

[1] **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 46:

[2] «Գիրք թղթոց», էջ 81:

[3] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա (Ե-ԺԲ դար), Երևան, 1934, էջ 37-38:

սեփա վանաց տաճուտեր: Նախարարական իրավակարգին համուկ տաճուտեր բառը գործ է ածված այստեղ այն իմաստով, որ ընդունված է եղել հայ քաղկեդոնական միջավայրում, որտեղից և անցել է վրաց մոտ: Հոչակավոր բյուզանդական զորավար Գրիգոր Բակուրյան, որ ծագումով աներկբայ հայ էր, բայց դավանանքով քաղկեդոնական, կառուցել է Բուլղարիա նշանավոր Պետրիցոս վանքը, այժմ Բաչկովո, 1083 թվին: Վանքի կանոնադրությունը հասել է մեզ և այնտեղ Բակուրյան ասում է, որ **kellarites** կոչվում է վրացերեն տաճուտեր[1]: ***Kellarites** կազմված է լատին **cella** («շտեմարան»), **cellarius** («շտեմարանապետ») բառից՝ հունական ածանցով և վանական կյանքի մեջ նշանակում է «տնտեսապետ», որ կարող է լինել երբեմն ինքը՝ վանահայրը: Մի նոր ապացույց, թե որքան հայ եկեղեցին համակերպվել է տիրող իրավակարգին, որի հետևանքով վանական տնտեսությունը այլ բան չէր նկատվում, քան մի նախարարական տաճուտերություն:*

Միքայել կաթողիկոսին է պատկանում Գ գրքի ԺԴ գլուխը, որ մի ճառ կամ քննություն է, թե երբ պետք է տոնել Քրիստոսի ծնունդն ու հայտնությունը: Երկաբնակները տոնում են ծնունդը դեկտեմբերի 25 և հայտնությունը՝ հունվարի 6: Մինչդեռ հայոց և աղվանից եկեղեցին երկու տոնը կատարում է միասին՝ հունվարի 6-ին: Երկու կողմի մեկնակետը Եղիսաբեթի հղիության օրն է: Երկաբնակների հաշվով Զաքարիա կատարեց քավության տոնը, որ [հրեաների] թշրի ամսի *10-ին էր և գնաց տուն և հետևյալ թշրի 11-ին Եղիսաբեթ հղիացավ: Հակառակորդներն առարկում էին, որ Զաքարիա քավության օրը տոնեց թշրի 10-ին, այլև տաղավարահարաց տոնը՝ թշրի 22-ին և ապա մերժեցավ իր կնոջ, ուրեմն հղիությունը պետք է հաշվել ամսի 23-ից, այսինքն՝ 12 օր ուշ, քան երկաբնակներն են հաշվում: Վեց ամսից հետո հրեշտակն ավետեց Մարիամին: Երկաբնակները համարում են, որ դա մարտի 25-ն էր, իսկ հակառակորդները՝ 12 օր ուշ, այսինքն՝ ապրիլի 6-ը: Այս հաշվով երկաբնակների ծնունդը կգա 9-ը ամիս հետո՝ դեկտեմբերի 25-ին, իսկ հակառակորդների հաշվով 12 օր ուշ՝ հունվարի 6-ին: Աղվանից Միքայել հայրապետ հիշում է, որ «**Մարկոս**՝ հայրապետն Երուսաղէմի, որ մի էր ի Նիկիական հարցն, որ յիւրում խրատական Թղթին գրեաց ի Հայս յաղագս մկրտութեանն, եթէ ի միում աւուր ծննդեմք զՅնունդն և զՄկրտութիւնն» (Գ, գլ. ԺԴ): Մարկոս վրիպակ է, փոխան Մակարի, որ իրավամբ Թուղթ է գրել ի հայս[2]: Բայց այս Թղթի մեջ խոսք չկա ծննդյան մասին: Աղվանից կաթողի-*

[1] L. Petit, Typicon de Grégoire Pacourianos pour le monastére de Pétritzos, (Bačkovo) en Bulgarie. Texte original publié par le R. P. Louis Petit, տե՛ս «Византийский временник», 1904, т. XI, прил. I, гл. IV (20).

[2] «Գիրք թղթոց», էջ 407:

կոս Արասիո ուղղված Թղթում Մակարի հաջորդ Հովհաննես հիշատակում է, որ Մակար և Եվտիքոս երկու Թուղթ են գրել՝ «Գիր հաւատոյ» և «<Գիր> կարգաց եկեղեցւոյ»[1]*: Հավանորեն «Գիր հաւատոյ»-ի մեջ է եղել ծննդյան մասին քննությունը: Ամեն պարագայիւ Միքայել [կաթողիկոս] պարտական է այս տեղեկությունը Գրիգոր Արշարունու, որի «Մեկնութիւն ընթերցուածոց» գործի մեջ գտնում ենք նույնը. «Որպէս և Մակար Երուսաղէմի հայրապետն յիւրում խրատական Թղթին ի Հայս յաղագս մկրտութեանն, թե ի միում աւուր տանիմք զծնունդն և զմկրտութիւն»*[2]*:*

Միքայելի վկայությունը, թե «Ծնունդ և Յայտնութիւն և Աւետիքն միւ ոօճ կատարէ եկեղեցի» կարող է տարօրինակ թվել շատերին, բայց ճշմարիտ է: Ավետյաց տոնը մարտի 25, թե ապրիլի 6, հայտնի չէ նախ քան 692 թվի ժողովը: Մեր եկեղեցին գոնե տոնում էր հունվարի 6-ին: Պարիսի Ազգային Մատենադարանի ձեռագիր Տօնապատճառի մեջ ասված է. «Արդ նախ քան զհայտնութիւն Տեառն յունուարի ի Ե(=5-ին) սկսանի եկեղեցի ուղղափառաց ի մէջ գիշերի զերգս աւրհնութեան Աստուածամայր Կուսին և յայտ առնէ զաւետիս գալստեան Քրիստոսի»*[3]*: Կեղծ-կաթողիկոս Սահակ իր ամբաստանագրի մեջ իրավունք ուներ ասել, որ «Հայերը տոնում են Ավետիքը հունվարի 5-ին»*[4]*:*

Միքայել կաթողիկոս գրում է. «**յընթերցուածին** ասէ վասն Դաւթի և Յակոբու եթէ յայլ քաղաքս առնեն զծնունդն Քրիստոսի»: «**Ընթերցուած**»-ը այն եկեղեցական գիրքն է, որ կոչվում էր «Տօնական» և ուր դեկտեմբերի 25 հշանակված է Դավթի և Հակոբու հիշատակը և հետևյալ հկատողությունը՝ «յայլ քաղաքս առնեն զծնունդն»: Այս հկատողության առթիվ է Միքայելի մեկնությունը, թե Ծնունդ տոնում էին 25 դեկտեմբերը հնթաճոսությունից և ո՛չ հրեությունից դարձած քրիստոնյաները, որովհետև «ի հնթաճոսութեանն սովոր էին ծնունդ արեգական կատարել յայնմ աւուր»: Արդարև, դեկտեմբերի 25-ը

---

[1] Հովհաննես եպիսկոպոսի Թուղթը հրատարակել է Կ. Տեր-Մկրտչյան՝ «Այս Թուղթ Յովհաննու Երուսաղեմի եպիսկոպոսի է առ Արաս Աղուանից կաթուղիկոս», տե՛ս «Արարատ», 1896, մայիս, էջ 252-256:

[2] Վենետիկի Մխիթարյան ձեռագրապահոց, ձեռագիր թիվ 475, Թուղթ ԻԲ: Կաղանկատվացու մոտ Մակար դարձել է Մարկոս և ավելացրած սխալ տեղեկություն, «որ մի էր ի Նիկիական հարցն»: Հայր Ն. Ակինյանի («Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի Հայրապետի առ Վրթանես Եպիսկոպոսապետ Սիւնեաց Յաղագս կարգաց եկեղեցւոյ», Վիեննա, 1930) ուշադրությունից սպրդել է Միքայելի Թղթի այս տեղիքը:

[3] Պարիս, Ազգային Մատենադարան, ձեռագիր, թիվ 114, թուղթ 38:

[4] **Migne**, P. G., 132, col. 1228, 1230.

հայոցի էր որպես ***dies natalis Invicti*** *«Օր ծննդեան Անհաղթի», այսինքն՝ Միհրի, որի պաշտամունքը մուտք էր գործել Հռոմի Հելիոգաբալոս կայսրի օրով (218-222): Միհր տեղի էր ավել պարզորեն Քրիստոսին: Այս է դեկտեմբերի 25-ին ծնունդը առնելու սովորության ծագումը: Սուրբգրնեական և կամ լուսնի և արևի տարվան տարբերության վերա հիմնված հաշիվները սքոլաստիկ պատճառաբանություններ են, որոնց միակ արժեքն իրենց սրամտությունն է:*

[Ը]

Կաղանկատվացու Պատմության երրորդ գիրքը սկսվում է Մահմեդի *հակիրճ կենսագրությամբ, որին հետևում է նրա հաջորդների ցանկը և գահակալության տարիները: Ցանկը կանոնավոր է ընդհանուր առմամբ*[1]*: Խալիփաների իշխանության տարեթվերը խանգարված են գլխավորապես ընդօրինակողների գրչի տակ: Օրինակ, Արուբաքր Արուհիյան* **ամս Թ**, *պետք է կարդալ՝* **ամս Բ**: *Մուավիա* **ամս Թ**, *ուղղելի է՝* **ամս ԺԹ** *և այլն: Զբաղելու չենք ցանկի քննությամբ: Մեզ հետաքրքրում է մասնավորապես ցանկի վերջին անունները:*

Արբեհիմ՝ ամս Ժ,

Հարուն Երկրորդ՝ «նստաւ ի Մահմետայ ամիրմումնի և հայ թուականն էր ՔՃՀ» (Գ, գլ. Բ): Արբեհիմ (Արրահամ) այն խալիփան է, որ հիշվում է Ի գլխում. «Այլ յՔՃՅԵ թուականին Հայոց Արրահամ ամիրմումնի գնա զօրու մեծաւ յաշխարհն Հռոմոց և էառ զմեծ քաղաքն զԵմորիայ սրով և գերութեամբ, և անտի դարձաւ ի բնակութիւն իւր: Սա է Արու Սահակն»[2]*:*

Արբեհիմն է ուրեմն Արուսահակ Մուհամմադ ալ-Մութասիմ, որ թագավորեց 833-842 թվերին՝ և Հ[այոց] թ[վականության] 287 թվին =838 թվին, առավ Ամորիա քաղաքը:

Արբեհիմի հաջորդ Հարունն է՝ Արուջաֆար Հարուն ալ-Վասիկ, որ գահ բարձրացավ 842 թվին: Կաղանկատվացու բնագիրը՝ **Հարուն Երկրորդ** *«նստաւ ի Մահմետայ ամիրմումնի», պետք է կարդալ ոչ* **երկրորդ**, *այլ <քսաներորդ> երկրորդ (թերևս, ավելի ճիշտ <քսաներորդ> երրորդ): Արդարև, պատմագրի ներկայացրած ցանկից արդեն երևում է, որ Հարուն 23-րդ գահակալը էր Մահմեդից հետո: Սխալ է նաև Հայոց թվականը՝ 270=821, փոխան ՔՃՂ=290, այսինքն՝ 842 թիվը, Հարունի գահակալության տարին: Հարունի*

---

[1] **Ուրմամ իրն Քամ** կարդալ՝ իրն Ափամ. **Affam**:

[2] Ինչպես կտեսնենք ստորև, այս կտորը պակաս է ներկա երկու հրատարակությանց մեջ:

իշխանության տարիները չեն ճշտակված, որ կարող է կարծել տալ, թե հեղինակը գրել է Հարունի օրով (842-847): Ամեն պարագայում այդ հեղինակը մեր պատմագիրը չէ այն պարզ պատճառով, որ միևնույն գլխի մեջ (Ի) պատմում է ոչ միայն Հարունի օրով կատարված անցքերը, այլև նրա հաջորդների՝ Ջաֆրի, այսինքն՝ Մութավաքիլի, այլև հետևյալ տարիների անցուդարձը: Մեր պատմագիրը ցանկն առել է ուրիշ տեղից: Տեղն կվերադառնանք այս խնդրին:

Ցանկից հետո պատմագիրը տալիս է Արդ ալ-Մալիքի օրով պատահած եկեղեցական գործերի պատմությունը մինչև Գ-ԺԴ գլուխները: Հետևյալ ԺԵ գլ[ուխը] ամփոփում է քանի մի տողի մեջ արաբական առաջին արշավանքները: Հերակլին հաջորդեց Կոստանդին և թագավորեց «ամս Գ: Ի սորա աւուրս տիրեցին Ասորւոց Տաճիկք և արկին ընդ հարկաւ զեկեղեցիս սրբոյ քաղաքին Երուսաղէմի. <և հայ թուականն Չ լիներ>: Իսկ Կոստաս՝ սորին որդի, ամս ԹԹ: Ի սորա **հինգ** *ամին Արաբիոյ կռիւ եղև. և ի վեցն Տաճիկք եկին ի հայս. և առաւ Դուին ի Տաճկաց և որք գերեցան ԼԵՌ»:*

Այս տողերն առնված են **«Անանուն ժամանակագրութիւնից»**, *ուր կարդում ենք. «Կոստանդին՝ ամս երիս: Ի սորա աւուրս տիրեցին Տաճիկք Ասորւոց, և արկին ընդ հարկաւք զեկեղեցիս սրբոյ քաղաքին Երուսաղէմի:*

Կոստանդին՝ որդի Կոստանդնի, թոռն Հերակղի, ամս քսանևինն: Ի սորա երկրորդ ամին առաւ Դուին ի Տաճկաց <ի Ղ թուականին> և եղև համար գերելոցն ԼԵՌ»[1]:

Կաղանկատվացին ընդօրինակել է իր աղբյուրի, նաև թերևս գրչի, սխալները: Հերակլի որդի Կոստանդին թագավորեց ոչ թե երեք տարի, այլ՝ երեք ամիս: Ըստ Թեոփանեսի, Կոստանդին թագավորեց իսկապես չորս ամիս[2]: *Համաձայնական է, որ Անանունի ամս Գ գրչական վրիպակ է՝ փոխան սկզբնական* **ամիսս Դ**:

Արաբները գրավեցին Երուսաղեմ և Ասորիք 637-638 թվերին[3], *Հերակլի օրով և ոչ նրա որդու, ուստի և հայկական թվականը՝ 80=631, որ անծանոթ է Անանունին, պատկանում է Կաղանկատվացուն և իր սխալ հաշվի արդյունք է: Հերակլի թոռի անունն իսկապես Կոստաս էր, բայց կոչվեց իր հոր անունով Կոստանդին*[4]: *Կաղանկատվացին ունի Կոստաս, այնինչ Անանունի մոտ Կոստանդին է: Չենք կարծում, որ մեր պատմագիրն այլ աղբյուր ունի*

---

[1] **«Անանուն ժամանակագրութիւն. խմբագիր յօրինեալ յէ դարու»**, էջ 77:

[2] **Theophanes**, p. 522.

[3] Անդ, էջ 520:

[4] **Սեբեոս**, էջ 112՝ **«զԿոստաս...անուանէ յանուն հաւրն իւրոյ»**:

նույն այս անվան համար, քան Անանուն: Թերևս Անանունի իր օրինակի մեջ եղել է Կոստաս՝ փոխանակ Կոստանդնի: Կաղանկատվացին Անանունից գիտե, որ Կոստաս թագավորել է 29 տարի: Սակայն Կոստաս թագավորել է 27 տարի և ոչ թե 29-ը: Կաղանկատվացին պահել է հավատարմորեն Անանունի սխալը, հակառակ որ Ջևանշերի պատմության մեջ Կոստասին տալիս է 30 տարի:

Սխալ է նաև Կաղանկատվացու տեղեկությունը, թե Արաբիո կռիվ եղավ Կոստասի հինգերորդ տարին և Դվինի առումը՝ վեցերորդ տարին: Անանուն չունի առաջին կռվի հիշատակության, իսկ Դվինի առումը դնում է Կոստասի երկրորդ տարին, համաձայն Ղևոնդի[1]: *Արաբիո կռիվը այն կռիվն է, որ տեղի ունեցավ ի Մարս «յառաջնումն ամի Կոստանդեայ թագաւորին Յունաց»[2]: Հետևապես Կաղանկատվացու՝ «ի սորա Ե ամին» վրիպակ է, սխալ ընթերցում՝ փոխանակ «ի սորա Ա ամին»: Այս հասարակ վրիպակի հետևանքով Դվինի առման տարին, որ է Կոստասի երկրորդ տարին, դարձել է Կոստասի* **վեցերորդ** *տարի (Գ, գլ. ԺԵ): Մեզ թվում է, որ Արաբիո կռվի հիշատակությունը ևս առնված է Անանունից, որ Կաղանկատվացու ծեռքի տակ եղած Անանունի մեջ եղել է այդ հիշատակությունը:*

Անանունը և նրան հետևելով Կաղանկատվացին, շփոթել են արաբական երկու արշավանքները, կամ ավելի ճիշտ՝ ձուլել են: Առաջին արշավն ուղղված էր Դվինի դեմ, երկրորդը՝ Արծափի դեմ: Վերջինս տեղի ունեցավ Կոստասի երկրորդ տարին, հոռի 23՝ կիրակի, որ համապատասխանում է ճիշտ 643 թվի օգոստոսի 10-ին: Իսկ առաջին կամ Դվինի արշավն եղավ Եզր [կաթողիկոսի] վերջին տարին՝ տրե 20, ուրբաթ օրը: Եզրը աթոռակալեց տաս տարի, 630-640 թվերին: Դվինի առումը պետք է տեղի ունեցած լինի 640 և 643 տարիների ընթացքին: Արդ, միմիայն 640 թվին է, որ տրե ամսի 20-ը, որ հավասար է հոկտեմբերի 6-ին, գալիս է ուրբաթ օր, որով և որոշվում է, թե՛ Դվինի առման տարին և թե՛ Եզրի մահվան[3]:

Ո՛չ Անանուն և ո՛չ Կաղանկատվացի չեն հիշում Արծափը և Արծափի առումը, այլ միմիայն Դվինի առումը, որի ժամանակ գերվեցին 35 հազար մարդ և Դվինի առումը դնում են այն տարին, երբ տեղի ունեցավ Արծափի առումը, այն է՝ 643 թվին: Ղևոնդ պատմագիրը ևս Դվինի առումն և 35 հազա-

---

[1] **Ղևոնդ**, էջ 9:

[2] **Սեբեոս**, էջ 112:

[3] Անդ, էջ 108 և 117: **E. Dulaurier**, Recherches sur la Chronologie Arménienne technique et historique, Paris, 1859, pp. 227-232՝ ճիշտ է որոշել Արծափի կռվի տարին, բայց սխալ Դվինի: 642 թվի տրե 20-է 6 հոկտեմբեր, որը չորեքշաբթի է և ոչ ուրբաթ, ուստի անընդունելի է:

րի գերումը նշանակում է Կոստանդնի երկրորդ տարին՝ 643 թվին, իսկ Արծափի կռիվը 10 տարի ուշ՝ 653 թվին, որ բացարձակապես սխալ է[1]:

Ասողիկի մոտ կրկին հիշատակություն կա Դվինի կռվի մասին, մի անգամ ըստ Ղևոնդի[2], *մյուս անգամ համեմատաբար ճիշտ հաշվել է, որ Դվինն առին «ի Ռ ամի թուականութեան <հայոց>», այսինքն՝ 90+551=641 թվին*[3]*: Այսպես, Կաղանկատվացու երրորդ գրքի ԺԵ գլ[ուխը] հարուցանում է մի շարք բանասիրական հարցեր, որոնց վերջնական լուծումը կախում ունի Անանունի կամ «Կայսերաց գրքի» քննական վերահրատարակությունից:*

Նույն՝ ԺԵ գլխում ասված է, որ Կոստասի ԺԹ տարին «նստի կաթողիկոս Հայոց Տէր Ներսէս ամս Ի և հայ թուականն ՃԺԱ»: Կոստասի ԺԹ=(641+19=) 660, իսկ Հայկական թվականը՝ 111 (+551)=662-663: Ինչպես երևում է մեր հեղինակը Կոստանդնին տալիս է իրար երեք տարի՝ 641, 642 և 643 տարիները և կամ 641-644 և Կոստասի գահակալությունը հաշվում է 643 թվից, որով 19-րդ տարին կլինի 662-663 թիվը: Տեսանք, որ Եզր կաթողիկոս մեռավ 640 թվին և նույն տարին ընտրվեց Ներսես[4] *և ուրեմն նրա իշխանության 20-րդ տարին կվերջանա 660 թվին: Կոստասի 19-րդ տարին է ստուգապես 660 թիվը և սա է Ներսեսի մահվան և ոչ թե գահակալության տարին: Ներսես կաթողիկոս 654 թվին կայսեր հետ հեռացավ և թերևս մնաց Տայք և վերադարձավ միայն վեց տարի հետո, երբ մեռավ իր հակառակորդ Թեոդորոս Ռշտունի, այն է 660 թվին: Գուցե այստեղից է ծագում չփոթությունը, որի մեջ ընկել է մեր պատմագիրը:*

Այլուստ հայտնի չէ, որ Քաղաքուդաշտի Սուրբ Գրիգոր, այսինքն՝ հռչակավոր Զվարթնոց շինված է Կոստանդնի կայսրի նյութական օժանդակությամբ: Շատ հավանական է: Իսկ թե կայսր ներկա է եղել տաճարի նավակատիքին, այսինքն՝ օրհնության, և թե շինարարները հրամաև են ստացել գնալ Կ. Պոլիս՝ նույնպիսի տաճար կառուցանելու, սակայն ճարտարապետը ճանապարհին մեռել է՝ զրույցներ են, առանց որևէ հավաստիության: Կոստանդնի կայսրը 654 թվից հետո Հայաստան չէ եղել, իսկ 654 թվին եկեղեցու շենքը տակավին ավարտված չէր և Ներսես [կաթողիկոս] իր վերա-

[1] Ղևոնդ հավանորեն օգտվել է Անանունից: Դվինի առումը 643 թվին և խազարաց արշավանքը 685 թվին հայող տողերը հար և նման են Անանունին:

[2] **Ղևոնդ**, էջ 9:

[3] **Ասողիկ**, էջ 98, 120: Պատմագիրը երրորդ անգամ հիշում է Դվինի առումը (էջ 142), ըստ Անանունի: Ասողիկի հրատարակության մեջ՝ ի ՂԵ, հակառակ ձեռագրական ի Ռ (էջ 98): Ասողիկ հիշում է նաև «առաջին ելք Տաճկաց ի Հայս յՃՉ թուականին», ուրեմն 637 թվին: Հովհան Մամիկոնյանի տեղեկությամբ, արաբական առաջին արշավը տեղի ունեցավ պարսից Խոսրով թագավորի մահվանից ութ տարի անց (էջ 57), որ է 628+8=636: Այստեղից է և Ասողիկի հաշիվը:

[4] **Սեբեոս**, էջ 109:

դարձին՝ 660 թվին «փութայր կատարել զշինուած եկեղեցւոյն», ըստ վկայության ժամանակակից ճշմարտապատում պատմագրի[1]:

Հաջորդ՝ ԺԶ գլխի վերնագիրը՝ «Ապստամբութիւն Հայոց. և Մահմէտին գալ ի Հայս. և առումն Սևանայ. և մահն Մահմէտի», չէ ընդգրկում ամբողջ գլուխը, այլ միայն առաջին մասը: Այստեղ պատմվում է համառոտակի, որ Հ[այոց] թ[վականության] 146 թվին Մուհամմադ եկավ Հայաստան, անցավ Չողա: Հայերն ապստամբեցին, պաշարեցին արաբներին Դվին քաղաքում, կոտորեցին երկու հազար հոգի՝ հոռոմ զորքի օգնությամբ: «Ի նմին ամի, - գրում է մեր պատմագիրը, - եղև զրաւ զարմից սրբոյն Գրիգորի»: Մուհամմադ դարձավ Չողայից, պաշարեց Սևանա բերդը երեք տարի, առավ [բերդը] և գնաց ջարդեց հայ և հոռոմ զորքերը, խաբեությամբ բռնեց հայ նախարարներին և այրեց Նախճավանի եկեղեցում 800 հոգի և Խրամի՝ 400: Այս կորստի պատճառն այն էր, նկատում է պատմագիրը, որ «արհամարհանօք այպն առնէին զհայրապետս և զքահանայս և զկրաւնաւորս ծանծրացուցանէին»: Մուհամմադ ևս իր պատիժը կրեց, յոքն ամիս չարաչար հիվանդությամբ տանջվեց և երբ գերեզման իջավ, «երկիր ոչ ընդունէր զնորա գարշելի մարմինն: Ապա կալեալ շուն մի, շամփրեցին ընդ Մահմետս և այնպէս ծածկեաց երկիր զչարն զայն»:

Մուհամմադ զորավարը Մրվանի որդին է[2] *և Արդ ալ-Մալիքի եղբայրը, և նրա գործունեությունը Հայաստանում հայտնի է Ղևոնդ պատմագրից[3]: Ըստ Կաղանկատվացու, Մուհամմադ եկավ Հ[այկական] թ[վականության] 146 թվին (=697 թվի հունիս 5-698 թվի հունիսի 5) և նրա երեքամյա (կամ ըստ Հովհաննես Կաթողիկոսի երկամյա[4]) գործերը բռնում են 697/698-700/701 տարիները: Այս ժամանակագրությունը չի արդարանում Ղևոնդի վկայությամբ:*

Ըստ Ղևոնդի, Մուհամմադ եկավ Հայք «յետ ԺԶ ամի իշխանութեանն Արդլ-Մելիքի»[5]*: Սա գոհ բարձրացավ Հիջրի 65 թվին, ռամազան ամսին, որ է 685 թվի մայիս, և 16-րդ տարին համապատասխանում է 700-701 թվի մայիսին: «Չկնի Բ ամաց», ուրեմն 701 և 702 տարիներից հետո Մուհամմադ «նիւթէր ի վերայ ուխտին սրբոյն Գրիգորի զմահ», ապա գնաց Ասորիք: Ս. Գրիգորի ավերումը Կաղանկատվացին նշանակում է Մուհամմադի եկած*

---

[1] Անդ, էջ 150-151:

[2] Մուհամմադ իբն Մրվան: Հովհաննես Դրասխանակերտցի (էջ 53)՝ Մրվան=Մուհամմադ իբն Մրվան:

[3] Ղևոնդ, էջ 20-23, 28-32, 35, 37-40, 42:

[4] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 53՝ «չկնի երկեամ մի ամաց»:

[5] Ղևոնդ, էջ 19:

տարին՝ 697 թվին: Ուրեմն, բոլորովին հակառակ Ղևոնդի տեղեկության, որով Մուհամմադի գալն ընկնում է 701 թվի սկզբները, իսկ Ս. Գրիգորի ավետումը՝ երկու տարի անց, ուրեմն 703 թվի սկզբները:

Երբ Մուհամմադ հեռացավ Հայաստանից, հայերը զենք առին նորա փոխանորդի դեմ և երկու հաղթություն տարան: Վարազ-Տիրոցի որդի Սմբատ ջարդեց արաբական մի գունդ Վարդանակերտի մոտ և Սմբատ՝ որդի Աշոտ պատրիկի, կոտորեց մի ուրիշ գունդ Ռշտունյաց Գուկանք (այժմ՝ Գյուգանց) գյուղի մոտ:

Մուհամմադ նորեն եկավ մեծ զորքով «յութուտասաներորդ ամի Արդ-Մելիք իշխանի և զամս Գ հանդարտեալ դադարէր»[1]: *Արդ ալ-Մալիք մեռավ 705 թվի հոկտեմբերի 8-ին և նրան հաջորդեց իր որդի Վլիք: Սորա առաջին տարին, Սմբատ Վարազ-Տիրոցյան, որ Վարդանակերտի հաղթությունից հետո քաշվել էր Տայք և կայսեր կողմեն կյուրապաղատության պատիվ ստացել, հարձակում գործեց, կայսերական օժանդակ գնդի հետ, արաբների վերա՝ Վանանդ գավառում, բայց պարտվեց և հեռացավ Փոյթ (այժմ՝ Փոքի): Վլիք զայրացած խիստ հրամաև ղրկեց Մուհամմադին և սա իր օգնականի միջոցով հայ նախարարներին այրել տվեց Նախճվանի և Խրամի եկեղեցիներում, Վլիքի առաջին տարին՝ 705 թվի հոկտեմբերի 8-706 թվի հոկտեմբերի 8, հավանորեն 706 թվին*[2]:

Այստեղ ժամանակագրական մի անհարթություն կա, եթե չասենք հակասություն: Առաջին անգամ Մուհամմադ եկավ Արդ ալ-Մալիքի 16-րդ տարուց հետո և մնաց երկու տարի, ուրեմն՝ 17-րդ և 18-րդ տարիները Հայաստան էր, մինչդեռ երկրորդ գալը նշանակում է նույն 18-րդ տարին: Այս կերպ ժամանակ չի մնում Վարդանակերտի և Գուկանքի պատերազմական գործողությունների համար, ինչպես նաև Սահակ կաթողիկոսի ճանապարհորդության Խառան՝ ամոքելու բռնավորի կատաղությունը:

Ակներև է, որ թվական մի սխալ կա: Յո. Մարկվարտ նկատել է այս պարագան և կարծում է, որ Մուհամմադի առաջին գալստյան տարին պետք է լինի ԺԳ և ոչ ԺՉ, ինչպես Ղևոնդի մոտ է, իսկ համաձայն Կաղանկատվացու, 697 թվին: Սակայն Հայկական թվականի այնքան շփոթ գործածությունը Կաղանկատվացու մոտ, վստահելի նեցուկ չէ Ղևոնդին սրբագրելու համար, քաղ որ սրբագրությունն ինքը նոր դժվարություն է հարուցանում: Շատ ավելի հիմ կա կարծելու, որ սխալը Մուհամմադի երկրորդ գալստյան տարեթիվն է: Այս երևում է Ղևոնդի՝ իրեն, բնագրից: Իր իսկ խոսքով, Մուհամմադ եկավ և «զամս Գ հանդարտեալ դադարէր», այսինքն՝ ոչինչ չարություն չգործեց մինչև նախարարների այրումը: Այս աղետը տեղի ունեցավ Վլիքի առա-

[1] Ղևոնդ, էջ 31:

[2] Անդ, գլ. Է և Ը:

ջին տարին: Հետևապես, երեք տարի դադարը հաշվելու է Արդ ալ-Մալիքի վերջին երկու տարիները՝ 20 և 21-րդ և Վլիթի առաջին տարին[1]: *Ուրիշ խոսքով, Մուհամմադ եկած է Արդ ալ-Մալիքի 19-րդ տարվա վերջերը և ոչ թե 18-րդ տարին: Նույն այս տարին էին հայոց ապստամբական շարժումն ու կրկնակի հաղթությունը: Արդ ալ-Մալիքի 19-րդ տարին է 703 թիվը: Արտաքին մի կարևոր աղբյուրից[2] գիտենք, որ հայերն ապստամբեցին արաբների դեմ Արարչության 6195 թվին, որ Ալեքսանդրյան ոճով հավասար է (6195-5492)=703 թվին: Գիտենք նաև, որ Մուհամմադ ընդառաջեց Սահակ կաթողիկոս, որ և մեռավ Խառանում: Նրա հաջորդ Եղիա կաթողիկոսն արդեն աթոռի վերա էր 704 թվի մայիս՝ Պարտավի ժողովին: Սահակ կաթողիկոս մեռած պետք է լիներ 703 թվի վերջերը կամ 704 թվի սկիզբները, ըստ Ասողիկի: ՃՕՔ=703 թվին (ոչ ՃՕԹ, ինչպես ունի Ասողիկի տպագրությունը): Այս ևս հաստատում է Մուհամմադի գալը 703 թվի վերջերը[3]: Պետք չէ շփոթել*

---

[1] Ցո. Մարկվարտի առաջարկը՝ սրբագրել Ղևոնդի ԺԶ տարին ԺԳ, բավարար չէ, որովհետև Արդ ալ-Մալիքի ԺԳ տարուց մինչև Վլիթի առաջին տարին կանն 9 տարի: Այնինչ Մուհամմադ մնաց Հայաստանում առաջին գալստյան երկու (և ոչ երեք, ինչպես ունի Կաղանկատվացին հակառակ Հովհաննես Կաթողիկոսի և Ղևոնդի) և երկրորդ գալստյան, մինչև Վլիթի առաջին տարին, երեք տարի, ընդամենը՝ հինգ տարի:

[2] **Theophanes**, p. 570.

[3] **Ասողիկ**, էջ 124-125, Նախճվանի և Խրամի աղետը դնում է ՃՕԳ թվին=704, թվում է, թե ավելի Վահան Գողթնեցու վկայաբանությունից, ուր սկզբում ասված է, որ ճախարաբներին այրեցին «Չե ամի յուրյանց», հետո հիշում է, որ չար խորհուրդը ծրագրվել էր Արդ ալ-Մալիքի ԺԶ տարին, բայց գլուխ բերեց Մուհամմադ «յառաջնումն ամի իշխանութիւնն Վլիթ որդւոյ նորա որ էր թուականն Հայոց ՃՕՔ, յաւուրս տասնի Զատկին. ապա առեալ ածին զքազմութիւն գերւոյն ի մայրաքաղաքն Դուին և զջերմ աւուրս զամենայն յարգելանի պահէին», հետո դրկեցին Դամասկոս: Այս ժամանակագրությունը սխալ է: Վլիթի առաջին տարին չի համապատասխանում Հ[այոց] թ[վականի] 152 թվին: Արաբ 85 թիվը=704 թվի հունվարի 14-705 թվի հունվարի 2, Հայոց 152 թիվը=703 թվի հունիս 4-704 թվի հունիս 4: Զատկի որ Զատկին էր, ուրեմն 704 թվի մարտ 30: Հետևապես այստեղ ևս համաձայնությունը լոկ առերևույթ է. իրապես մի տարվան զանազանություն կա: Ասողիկ անտեսել է Զատկի պարագան և 704 թիվը փոխարկել ճիշտ Հայոց (704-551=) 153 թվով:

Վարդան (էջ 72), քաղել է Ասողիկից նույն ՃՕԵ թիվը: Կիրակոս Գանձակեցի (էջ 36) հաղորդում է, որ Սմբատ Բյուրատյանի 13-րդ տարին Մուհամմադ առավ Սևան և 16-րդ տարին Կամ կոտորեց Վասպուրականի իշխաններին: Սմբատ Բյուրատյան է Սմբատ Կյուրապաղատ, որդի Վարազ-Տիրոցի, որ իշխան եղավ, ըստ Ասողիկի (էջ 101) «ի ՃԽ թուականին»: Կիրակոս, այս հիմամբ, հաշվել է 140+13=153: Ասել է, թե Կիրակոս Գանձակեցի նույն Ասողիկից գիտե 153 թիվը: Միայն հանել է և արտահայտել այլ կերպ: Հետաքրքրական է, որ 153=704 թիվը համարում է Սևանի առումը, իսկ Վասպուրականի, իմա՝ Նախճվանի և Խրամի աղետը՝ Սմբատի 16-րդ, այսինքն՝ 156 թվին, երեք տարի ուշ: Արդյո՞ք Կաղանկատվացու «պաշարէ զՍևան ամս 3» խոսքերի բյուր մնկնությամբ, թե քաղած է անհայտ աղբյուրից, թերևս Վահան Գողթնեցու ավելի վավերական վկայաբանությունից: Այժմյան վկայաբանությունը իր բուն հեղինակի՝ Աբրահամ-Արտավազդի (21), հարազատ գործը ներկայացնելու երևույթը չունի (տե՛ս «Վկայաբանութիւն սրբոյն Վահանայ որդւոյ Խոսրովի Գողթան տեառն», «Մոփերք Հայկականք», ԺԳ, Վենետիկ, 1854, էջ 61-91):

ապստամբության տարին Նախճվանի և Խրամի աղետի տարվան հետ: Իսկապես ապստամբությունը սկսվել էր Արդ ալ-Մալիքի 16-րդ տարուց, որի համար դրկված էր Մուհամմադ: Սևանի պաշարումը ցույց է տալիս, որ շարժումն ծայր էր տվել Սյունյաց իշխանության մեջ: Խաղաղությունը հազիվ վերահաստատված, նորեն ապստամբություն պայթեց 703 թվին և տավ արյունահեղ մակատներ Վարդանակերտ և Գուկանք: Մուհամմադ վերստին եկավ: Այս անգամ կայսերական օժանդակ գունդ եկավ հայերին օգնելու, բայց պարտվեց Վանանդ գավառի Դրաշպետ գյուղում: Այս միջամտությունը ավելի ևս գրգռեց արաբ իշխանությանը և հետևանքը եղավ Նախճվանի և Խրամի սոսկալի խարույկ 706 թվին:

Զարմանալի է, որ Սևանի պաշարման մասին ոչինչ չի հայտնում Ղևոնդ, մինչդեռ դեպքը ծանոթ է Հովհաննես Կաթողիկոսին: Խարույկի զոհերի թիվը՝ 800 և 400 հոգի, ևս ծանոթ չէ Ղևոնդին: Կաղանկատվացին և Հովհաննես Կաթողիկոս հավանորեն օգտված են Վահան Գողթնեցու և Դավիթ Դվնեցու վկայաբանություններից՝ նախնական և առավել ընդարձակ խմբագրությամբ:

Նախճվանի և Խրամի եղեռնով չբավականացան արաբները: Մեծ գերություն հանեցին և դրկեցին Դամասկոս: Կաղանկատվացին ԺԶ գլխի երկրորդ մասում հայտնում է, որ գերիների թվումն էր նաև Աղվանից իշխան Շերո և «թէ հայ թիւն ՃՇԳ էր», այսինքն՝ 704-705 թիվը: Սակայն գիտենք, որ Շերո ներկա էր Պարտավի ժողովին 704 թվին և Շամքորի ժողովին՝ 707 թվին: Շերոյի գերությունը պարզ է, որ չէր կարող առաջ լինել, քան 707 թիվը: Ուրեմն, ՃՇԳ թիվը անպայման սխալ է և չենք կարծում, որ որևէ հարաբերություն ունենա Ասողիկի 153 թվի հետ: Թերևս կարդալու է ՃՇԶ=707 թիվ, կամ ՃՇԵ=706-707 թիվ:

Երկու տարուց հետո Մրվան փորձեց մտնել Գիլան, բայց չկարեցավ: Մրվան նույնն է, ինչ որ մեզ ծանոթ Մուհամմադ որդի Մրվանի: Մրվան է անվանում նրան նաև Հովհաննես Կաթողիկոս, ինչպես հիշեցինք վերև: Նախընթաց տողերում մեր պատմագիրը շտապել էր հայտարարել Մուհամմադի մահը, ուստի և Գիլանի արշավանքը վերագրել է Մրվանին, թերևս անգիտանալով, որ իր աղբյուրի մեջ խոսքը նույն Մուհամմադի մասին է: Վևոնդից հայտնի է, որ Մուհամմադ գնաց Խորասան և այնտեղից Ճենաց Ճենթակուր թագավորի դեմ և ամոթահար հետ դարձավ: Այս պարտության հիշողությունն է հավանորեն, որ արտացոլում է Գիլանի ձախորդ արշավանքը:

Խազրաց թագավորը 80 հազար զորքով եկավ և առավ Աղվանք ՃՇԸ թվին: Եթե Գիլանի արշավանքը տեղի ունեցավ նույն տարին, Շերոյի գերությունը կգա երկու տարի առաջ՝ ՃՇԶ=707 թիվ, ինչպես ենթադրեցինք:

Խազրաց արշավանքից երկու տարի անց, ուրեմն ՃԿ թվին, եկավ Աղ-

վանք Արդ ալ-Ազիզ և ննտավ Պարտավ, 711-712 թվին: Սա Մուհամմադի հաջորդն էր, որ եկավ խաղաղացնելու երկիրը: Սմբատ Կյուրապաղատ, որ Վարդանակերտի կռվից հետո՝ 706 թվին ապաստանել էր Փոյթ քաղաքը, վերադարձավ հայրենիք Արդ ալ-Ազիզի հրավերով, վեց տարի բացակայությունից հետո[1]: *Այս հաշվով Սմբատի վերադարձը կգա (706+6=) 712 թիվը, որով հաստատվում է Արդ ալ-Ազիզի գալստյան տարին: Արդ ալ-Ազիզ նույն տարին «անցավ զԿուր գետով յայն կողմ»: Պետք է կարծել, որ խազրաց դեմ գնաց և հաջողություն չունեցավ: Ուստի «զկնի Գ ամաց եկն Մսլիման, աւերեաց զԴարբանդ և եմուտ ի Խազիրս» (գլ. ԺԵ): Այլուստ գիտենք, որ արդարև Մսլիմ զորավարը գրավեց Դարբանդ, բայց պարտություն կրեց խազարաց խաքանից և կորագլուխ փախավ: Մսլիմ, Մսլիման, արաբական Մասլամա՝ Արդ-ալ Մալիքի որդին է և եղբայր Սուլեյման խալիփայի, և սրա երկրորդ տարին էր Մսլիմի արշավանքը խազարների դեմ*[2]*: Սուլեյման գահ բարձրացավ 715 թվի փետրվարի 23, ուրեմն երկրորդ տարին է 716 թվի փետ[րվարի] 23-717 թվի փետրվար: Կաղանկատվացու «զկնի Գ ամաց» պետք է ուղղել՝ «զկնի Դ ամաց», 712+4=716:*

Մսլիմ փախավ թողնելով իր բանակը Աղվանից իշխան Եռանշահիկ Վաչագան ի Պատրիկյանին, որ կարողացավ դեմ դնել խազարներին և հարկադրել նահանջել: Վաչագան ի Պատրիկյան, այսինքն՝ Պատրիկի որդի, երևում է հաջորդել էր Շերոյին, երբ սրան Դամասկոս գերեցին:

Այնուհետև մեր պատմագիրը հիշում է Հերք աշխարհագրի գալը ՃՀԴ թվին, ծմեռը, այսինքն՝ 725-726 տարին: Հերք եկավ արդարև Հեշմ (Հիշամ) խալիփայի առաջին տարին[3]: *Հիշամ գահ բարձրացավ 724 թվին, հունվար 25՝ ուրեմն Հերք եկավ 725 թվի ծմեռը:*

Հաջորդ ՃՀԵ թվին =726 տարին «Ամեթդուքն սպանին զՋևանշէր իշխան Աղվանից և մեռաւ Սմբատ, Հայոց իշխան» (22): «Ամեթդուք» առեղծվածային անունն ոչ այլ ինչ է, բայց եթե վրացի «մքեռուլի» բառը, որ նշանակում է լեռնական: Պետք է կարդալ «Ամեթդու»-ք՝ հեղհեղված «ամքեռու»-ք ձևից:

Ջևանշեր իշխանն արդյո՞ք Վաչագան Պատրիկյանի հաջորդն էր, թե Շաքիի իշխանը, թվում է մնում է անորոշ: Երեք տարի անց, ուրեմն 178 թվին, արաբ զորավար Ջառահ գնաց խազարների դեմ և հաջորդ տարին՝ 179 թվին, խազրաց տեր **Ատրդին** *սպանեց Ջառահին և ձերբակալվեց Չագիկ իշխանին: Հիշամի օրով, արդարև խազրաց զորավար Թարմաչ ասպատա-*

---

[1] Վանդ, էջ 35:

[2] Անդ, էջ 40:

[3] Անդ, էջ 100:

կեց Աղվանք և Ատրպատական՝ մինչև Արտավետ (այժմ Արդաբիլ) և արար Ջառահ դեմ ելավ, բայց պարտվեց և սպանվեց[1]*: Արաբական տեղեկությամբ, այս դեպքը տեղի ունեցավ Հիջրի 112 թվին =730 թվի մարտ 26-731 թվի մարտ 15*[2]*, որին համապատասխանում է հայկական թվականության 179 թիվը =730-731 թիվը: Խազրաց իշխանի Ասորդին անունը անծանոթ է այլուստ և հավանորեն աղավաղված, արդյո՞ք չի նշանակում «Խազրաց տան որդին»: Թարմաչի արշավանքին խազրաց խաքանը մեռած էր և իր մայրն էր, որի հրամանով Թարմաչ արշավեց: Մոր անունն էր Փարսբիք:*

Հավանական է, որ Չագիկ հաջորդել էր Ջևանշերին, և սա՝ Շերոյին: Հ[այկական] թ[վականության] 180 թվին =731-732, Մսլիման, այսինքն՝ նույն Մասլաման վերանորոգեց Դարբանդ և Աղվանից կաթողիկոսարանը չավերեց, այլ «պեռևս կայ ի նմա»: Ջառահից հետո եկավ Սեթ-Հարաշի, որ քշեց խազարներին և ապա եկավ Մսլիմք[3]:

[Թ]

«Յայսոսիկ ժամանակս», պատմում է Կաղանկատվացին ծէ գլխում, Ստեփանոս Սյունեցի վեճ ունեցավ երկարնակ Սմբատ ասպետի հետ, դըժգոհ թողեց նրան և հեռացավ Հռոմոց երկիր մի ուղղափառ միայնակյացի մոտ: Սմբատ հայտնեց կայսեր, որ Ստեփանոս հերձվածող է: Սակայն Ստեփանոս կայսերական գրատանը մի ոսկեռուփ մատյան գտավ՝ ի նպաստ իր դավանության: Կայսրը ղրկեց նրան Հռոմ բերելու այնտեղից «երիս գիրս համաբարբառս այնմ գրոց», այսինքն՝ նման ոսկեռուփ մատյանի, խոստանալով դարձնել իր երկիրը նույն դավանության: Ստեփանոս Հռոմից, սակայն, գրքերն առնելով չգնաց կայսեր մոտ, այլ վերադարձավ Դվին, ձեռնադրվեց եպիսկոպոս և մի տարուց հետո սպանվեց մի պիղծ կնոջից՝ Մոզաս գավառում և թաղվեց Թանահատից վանքում: Նույն միայնակյացը տեսավ երազում Ստեփանոսին՝ «գոգն արեամբ լի», և Աստված պատժեց երկիրը սոսկալի շարժով, որ 40 օր տևեց և 10 հազար հոգի լափեց, «վասն այնորիկ Վայոց ձոր անուանեցաւ»:

Այստեղ պատմական մեծ բան չկա: Հասարակ զրույց է, շինված այն վավերական կետի շուրջ, որ Ստեփանոս գնացել է Կ. Պոլիս և գնացել է անկախ

---

[1] Վանդ, էջ 102:

[2] J. Markwart, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, s. 11. Garrah E. Abdallah el Hanami.

[3] Վանդ, էջ 102:

*Մմբատ ասպետից: [Ստեփաննոս] գործ է ունեցել ոչ թե կայսեր, այլ Գերմանի(ոս) պատրիարքի հետ, որից դավանաբանական Թուղթ է բերել Դվին և պատասխանը գրել իմքը: Երկու թղթերն էլ հասել են մեզ: Առաջինն է՝ «Թուղթ Հռոմոց ի Հայս, ձայնակից և համախոհ ժողովոյն Քաղկեդոնի և Տոմարի հայհոյութեան Լևոնի, զոր երեր աստուածապատիւ Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս յառաջ քան զեպիսկոպոսութիւնն իւր, որ վասն **Թարգմանութեան** հասեալ ի թագաւորական քաղաքն ի Կոստանդնուպաւլիս. Իսկ նոցին Յաղագս միաբանութեան հաւատոյ՝ ընդ ձեռն նորա գրեալ, և առաքեալ Հայրապետին կապարեայ կնքով, զոր ոչ ընկալեալ զնոցայն հայհոյութիւն մերոյ աշխարհիս, այլ արձանացեալ ի հաւատս Սուրբ Առաքելոցն, և ի խոստովանութիւն երիցս երանելոյ Սրբոյն Գրիգորի, ամենևին անշարժ մնացեալք ոչ եւտուն տեղի դրդուելով ի շաւղաց ուղղափառութեան»[1]: Մմբատի և ոչ էլ միայնակյացի մասին խոսք չկա: Ստեփաննոս գնացել է լոկ թարգմանության համար: Քարեբախտաբար նորա թարգմանական գործերը հասել են մեզ. պահվել են նաև սրանց հիշատակարանները, որտեղից իմանում ենք, որ Ստեփաննոս աշխատել է ոմն Դավիթ Հյուպատոս անունով պաշտոնյայի աջակցությամբ, որ կոչվում է Թագավորական սեղանի կինառ[2]:

[Ստեփաննոս] թարգմանած է՝

Դիոնիսիոս Արիսպագացին[3], *Արարչության 6220 տարին, 14 ինդիկտիոնի՝ Փիլիպպոս թագավորի երկրորդ տարին, 6220-5508=712: Փիլիպպոս է Վարդան Փիլիպպիկոս կայսրը, որ գահ նստեց 711 թվին, ուրեմն՝ երկրորդ տարին կլինի 712 թիվը: Ինդիկտիոնի 14 սխալ է, ուղղելի է 10:*

Կյուրեղ Աղեքսանդրացու Պարապմանց գիրքը՝ *6224 թվին, ինդիկտիոն 14, Անաստասիոս կայսեր* **երկրորդ** *տարին. 6224-5508=716, ինդիկտիոն 14: Անաստասիոս հաջորդեց Վարդանին 713 թվին և վարեց մինչև 715 թիվը, ստիպված լինելով զիջանել գահը Թեոդոսին, որի դեմ ծառացավ Լևոն [Իսավրացին] և գրավեց իշխանությունը՝ թագ կապելով 717 թվի մարտ 25-ին: Ինչպես երևում է, հիշատակարանը ևս չէ ընդունում Թեոդոսի բռնությունը և Անաստասիոսին է համարում կայսր 716 թվին ևս: Այս դեպքում երկրորդ տարին պետք է կարդալ երրորդ, և սա համարել սխալ ընթերցում՝ Գ փոխարեն Դ-ի, որովհետև 716 թիվը է չորրորդ տարին Անաստասիոսի:*

---

[1] «Գիրք թղթոց», էջ 358:

[2] Անտարակույս լատին **cena**, այսինքն՝ «սեղան» բառն է հունական վերջավորությամբ (համմտ. **bucella, buccelarios**):

[3] Արիսպագացի, հավանորեն սխալ ընթերցում է, փոխանակ Արիոպագացի. **Areipagites** հունարեն ծագում է **Areos pagos**՝ «Արեսի բլուր» բառից և, գուցե, հայերեն ձևը հետևություն է և ոչ սխալ:

Մյուս թարգմանությունն է **Նյուսացու «Ցաղագս ընութեան մարդոյ»** *(=Նեմեսիոսի)՝ 6227 թվին, ինդիկտիոն 14, «(ըստ հայումս թուի ՈՒԱ) և յառաջին ամի թագաւորութեան Լեւոնի»: 6227-5508=719, Լեւոնի առաջին տարին է 717 թիվը, 6227 թիվը=է ՉՌԻԷ, կարդալ՝ ՉՌԻԵ= 6225 թվին, ուղիղ 717 թիվը: Ինդիկտիոն պետք է լինի 15 (և ոչ 14): Հայոց թիվը՝ 221=է 772 թվին, օտար ճեռք է ավելացրել, չփոթելով Լեւոն [III] Իսավրացուն (717-741) իր թոռան՝ Լեւոն [IV] Խազարի (775-780) հետ:*

Ստեփանոս, ուրեմն, գտնվել է բյուզանդական մայրաքաղաքում 712-717 տարիները: Ե՞րբ է գնացել և ե՞րբ վերադարձել, մնում է անհայտ: Կարելի է կարծել, որ Ստեփանոս գնաց մայրաքաղաք նույն՝ 712 թվին, երբ Սմբատ [Բագրատունի] վերադարձավ Փոյք քաղաքից, եթե միայն սորա երկարնակ լինելը և Ստեփանոսի հետ վիճաբանությունը որևէ պատմական հիմ ունեցար: Սմբատ Փոյթից հեռանալիս, կողոպտեց քաղաքը և հափշտակեց տեղի եկեղեցիների գույքը: Կայսրը, վշտացած այս ապերախտ վարմունքի համար, կանչեց «զառաջնորդս եկեղեցեաց, զմետրապօլիտն և զարքեպիսկոպոսունս՝ և հրամայէր նոցա նզովս գրել ի մատենի, և ի կատարման ոճին Զատկաց հրամայէր ընթեռնուլ ի վերայ գործողաց ապիրատութեանն: ...Եւ ի նոյն ոճի կարգաւորեցին ամի ամի զնոյն նզովս ընթեռնուլ մինչև ցայսօր. որ և տիրեաց իսկ ի վերայ նոցա, և եղև պատճառ կորստեան նոցա»[1]:

Այս առասպելանման պատմությունը չէ արտոնում ամեն պարագայիև Սմբատ [Բագրատունուն] երկարնակ վկայական տալ, ուստի և նորա դավանաբանական ընդհարումը Ստեփանոսի հետ, ավելի քան երկբայելի է[2]:

Կաղանկատվացին չի հիշում Ստեփանոսի թարգմանական գործերը, թեև ծանոթ է երևում նրանց և նորա մի գրքից [հատված] է բերել ԺԸ գլխում, որին կդառնանք քիչ հետո: Նա չի հիշում նաև Ստեփանոսի մահվան տարին: Նրան հետաքրքրում են գլխավորապես մահվան հարակից տեսիլն ու հրաշագործությունը:

---

[1] **Ղևոնդ**, էջ 36:

[2] **J. Markwart**, Streifzüge, p. 449, կարծում է, որ Սմբատի և Ստեփանոսի վիճաբանությունը տեղի է ունեցել Մանազկերտի ժողովին՝ 726 թվին: Սակայն Ստեփանոս ներկա չէր ժողովին: Միքայել Ասորին բերում է ներկաների ցանկը, ուր կա Սողոմոն Մաքենաց վանահոր անունը, բայց չկա Ստեփանոսինը: Ստեփանոս մայրաքաղաք էր 712-717 տարիներին, ուրեմն, ենթադրյալ վիճաբանությունից տարիներ առաջ: Հետևապես ճիշտ չէ, թե Ստեփանոս գնաց վիճաբանությունից հետո և այդ պատճառով: Ստեփանոսի ընդհարումը Սմբատ [Բագրատունու] հետ, հորինված է բացատրելու համար, թե ի՞նչպես և ի՞նչու Ստեփանոս գնաց Բյուզանդիա: Քանի որ պարզ է, որ նա գնացել էր գրական նպատակներով, ապա և վիճաբանությունը կորցնում է իր գոյության իրավունքը:

Կաղանկատվացու պատմածը Ստեփանոսի մասին անցել է «**Ցայսմաւուրք**»-ի և լրացվել գրական գործերի հիշատակությամբ: *Հայսմավուրքը չորս խմբագրությամբ է հայտնի՝ Տեր Իսրայելի (թերևս Եղիայի), 1247-1249 թիվ. Տեր Կիրակոսի, 1269 թիվ. Անավարզեցու, 1307 թիվ և Ծերենցի († 1425 թիվ): Բոլորի մեջ գտնվում է Ստեփանոսի վարքը, նույն խմբագրությամբ՝ հրատից 17, հուլիսի 23-րդ օրը: Հաստատ չէ միայն, թե Տեր Իսրայելի ժամանակից է, թե Տեր Կիրակոսի: Ստեփանոսի մահվան առթիվ եղած երկրաշարժի մասին ասված է. «և երկիրն առհասարակ ճչեաց մարդկաբար և ասէ վա՜յ. և կոչի մինչև ցայսօր Վայոց ձոր», որ մի փորձ է ավելի հաջող բացատրությունն տալու անվան ծագման, մի փորձ, որ զուրկ է որևէ արժեքից:*

Հայսմավուրք հայտնում է, որ «Բարգէն կաթողիկոս Հայոց ձեռնադրեաց զնա արքեպիսկոպոս մեծ աթոռոյն Սիւնեաց հրամանաւ Քուրդոյի»[1]: *Այս տեղեկությունը բյուրիմացության արդյունք է: Կաղանկատվացին ունի. «Եվ ի Բարգենէ և ի Քուրդոյէ խնդրոյ լինի ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց»: Իմաստն է՝ «Ի խնդրոյ Բարգենի և Քուրդոյ (կամ Քուրդոյ-ի) լինի ձեռնադրեալ»: Սակայն Հայսմավուրքի հորինիչը հասկացել է այնպես, իբրև թե «ի Բարգենէ և ի Քրդոյի»: Այստեղից և Բարգենը նույնացրել է համանուն կաթողիկոսի հետ:*

Կիրակոս Գանձակեցին, որ իր տեղեկությունները Ստեփանոս Սյունեցու մասին պարտական է Կաղանկատվացուն, ուղիղ է ըմբռնել այս տեղիքը. «Եւ ձեռնադրէ զնա տէր Դաւիթ Սիւնեաց եպիսկոպոս ի խնդրոյ Քուրթոյի և Բարգենի իշխանաց»[2]: *Իշխանի անունը Քրդո՞յ էր, թե Քուրդիկ (սեռական Քրդկոյ, սխալագիր Քուղթոյ) կամ Քուրդ, որոշ չէ: Ձեռնադրողը Բարգենը չէ, այլ Դավիթ: Ո՞վ է այս անձը: Կաղանկատվացու գոնե այժմյան հրատարակության մեջ չկա Դավթի հիշատակություն: Բայց իր բնագիրը թելադրում է ուշադիր ընթերցողին այդ անունը: Սյունեցու մասին խոսում է Կաղանկատվացին՝ Դարբանդի վերաշինությունը Հ[այոց] թ[վականության] 180 թվին=731 թվին, հիշելուց հետո: Այդ թվին հայրապետական աթոռի վերա էր Դավիթ [Ա] Արամոնեցին, որ հաջորդեց Հովհան Օձնեցուն 728 թվին: Կիրակոս ուրիշ աղբյուր չունի Ստեփանոս Սյունեցու վարքի համար, քան Կաղանկատվացին և չնչին տարբերությունը, որ նկատվում է, ավելի շուտով գրչական վրիպակներ են*[3]:

---

[1] Հրատից 17, հուլիսի 23. Պարիսի ձեռագրից, որ վերջերս հրատարակվեց «Patrologia Orientalis», t. XXI, p. 767:

[2] **Կիրակոս Գանձակեցի**, էջ 41:

[3] Այսպես, «զնայ ի Հռովմ», փոխանակ՝ «ի Հռոմս», «ասկետիպ», փոխանակ՝ ոսկետուփ, «կազեան», փոխանակ՝ «Արկազան» և այլն:

Կիրակոս սկսել է գրել իր պատմությունը Հ[այկական] թ[վականության] 690 թվին =1241 թվին և նույն տարին է գրել Օձնեցու և Ստեփաննոս Սյունեցու նայող էջերը: Նա ծանոթ չէ և չէր կարող լինել «**Ցայսմաւուրք**»-*ին, որի առաջին խմբագրությունը մի քանի տարով ուշ է, քան 1241 թիվը:*

Ստեփաննոս Օրբելյան ավելի բան չգիտե Ստեփաննոս Սյունեցու մասին, քան տալիս են մեզ ծանոթ աղբյուրները: Ինչ որ նոր է Օրբելյանի մոտ, գրեթե բոլորը, սակավ բացառությամբ, երկբայելի են: Ասում է, որ Սյունեցին Դվինի ավագերեցի որդին էր և աշակերտել էր ոչ միայն Մովսես Սյունեցուն, որ հայտնի է Սյունեցու թարգմանությանց հիշատակարանից, այլ Մաքենոցաց հարանց հայր Սողոմոնին, կամ ինչպես ինքն է կոչում՝ Սաղոմի, նա, որ հորինեց «qSoնականն ի ՃԾ թ[ուին] Հ[այոց]»: Հայտնում է նաև, որ Ստեփաննոս սպանվեց «ամ մի, զոր ոմանք ութ ամ ասին» եպիսկոպոս ծեռնադրվելուց հետո ՃՀԴ թվին «ի հրոտից ի ԺԵ և յուլիսի ԻԱ, յաւուր յիշատակի սրբոյ առաքելոյն Մարգարտայ և Սիմէոնի աղուաշին»[1]:

Վերջերս հայտնի եղավ, որ Օրբելյան այս տեղեկությունները քաղել է Մխիթար Այրիվանեցու «Սառրագրութիւն պատմութեան Ստեփաննոսի Սիւնեաց» գրությունից[2]: *Տոնականը հորինված է ոչ թե 150=701 թվին, այլ Հ[այկական] թ[վականության] 196 թվին=747 թվին, ինչպես հայտնի է Մշո մեծ Տոնականի հիշատակարանից*[3]: *Օրբելյան սխալ է հասկացել Մխիթար Այրիվանեցու խոսքը, թե Ստեփաննոս Սյունեցի «տուաւ ի սուրբ ուխտն Մաքենոց յաշակերտութիւն մեծ հարցն Սողոմովնի, որ կարգեալ էր զՏաւնականն և յետոյ աշակերտացաւ տեառն Մովսեսի Սիւնեցւոյ ի ՃԾ թուին»*[4]: *Հ[այկական] թ[վականության] 150 թիվը=701 թվին, Տոնականի հորինման տարին չէ, այլ Սյունեցու աշակերտության: Այրիվանեցու հիմնական աղբյուրն նույն Կաղանկատվացին է: Սա Ստեփաննոսի ժամանակը որոշում է «յայսոսիկ ժամանակս» ընդհանուր խոսքով, որ վերաբերում է նախընթաց գլխի մեջ պատմած անցքերի շրջանին, Հ[այկական] թ[վականության] 146-180=797-831 թվականներին: Մխիթար Այրիվանեցի Ստեփաննոսի երևումը դնում է Հայոց 180 թվին, երբ կաթողիկոս էր Դավիթ Արամոնեցի, կայսր էր*

---

[1] **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 186:

[2] **Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան**, Մխիթար Այրիվանեցի. նորագյուտ արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931: Նկատենք, որ էջ 18՝ «ստոյգ ուզի» աղավաղ բառը կարդալու է «ստոռոգին», համաձայն Ստեփաննոս Օրբելյանի, հատ. Ա, էջ 182 (այսուհետև՝ Մխիթար Այրիվանեցի):

[3] **Բ. Սարգիսյան**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 437:

[4] **Մխիթար Այրիվանեցի**, էջ 17:

Լևոն, պատրիարք՝ Փլաբիանոս, ամիրմոմին<ին> Սլեման և ապա՝ Շալահեշմ[1]*, և Բաբան պարսիկ՝ ավերիչ Գեղարքունք*[2]*: Փլաբիանոս պատրիարք չկար այդ ժամանակ: Այրիվանեցի կարդացել է Ղևոնդի մոտ «Փլաբիոն Լևոն կայսր»*[3] *և կարծել է, որ առաջին բառը պատրիարքի անունն է: Բաբանի հիշատակումը մեծ անաքրոնիզմ է, սա մի դար ուշ էր և Գեղարքունիք ավերեց Հ[այկական] թ[վականության] 276 թվին =827 թիվ*[4]*:*

Ինչ որ Մխիթար Այրիվանեցին գիտե Սյունեցու մասին Կաղանկատվացուց դուրս, վերաբերում են գլխավորապես նրա գրական գործունեության, Գրիգոր Գոզիկ ընկերոջ և Սահակադուխտ քրոջ: Նրանից է հայտնի նաև, որ Սյունեցին աշակերտել է Մովսես Սյունեցուն 150 թվին =701 թվին և մնռել է 184 թվին =735 թվին, հրոտից ամսի 17-ին[5]: *Որտե՞ղից է առել Այրիվանեցին այս թվերը, դժվար է ստուգել: Սմբատ [Բագրատունու] հետ Ստեփանոս Սյունեցին հակաճառեց «տիռվք դեռևս մանուկ», դրա համար պարտվեց և զնաց կատարելագործելու իր կրթությունը Հռոմոց աշխարհում: Եվ որովհետև 712 թվին արդեն Կ. Պոլիս էր, ուրեմն ավելի քան հավանական է, որ իրոք 702 թվին աշակերտության էր Մովսես Սյունեցու մոտ: Մահվան տարին հավաստի կարելի է համարել, քանի մի հակասական կետեր հարթելուց հետո: Երբ սպանվեց «զմի ամ կալեալ զեպիսկոպոսությունն», նշանակում է եպիսկոպոս եղավ 734 թվին: Սակայն [Կ. Պոլսի] Գերմանոս [պատրիարքի] Թղթի պատասխան «գրեաց տէր Ստեփանոս Սյունեաց* **եպիսկոպոսոս***»: Գերմանոս գահընկեց եղավ 730 թվի հունվարի 7-ին: Պատասխանը գրված պիտի լինի այս թվից առաջ և այդ ժամանակ գրողն արդեն եպիսկոպոս էր, ինչ որ*

---

[1] Շալահեշմ, կարդա՛ Շամահեշմ (**Կիրակոս Գանձակեցի**՝ «Հաւի Հէշմայ», էջ 37), **Ղևոնդ**, էջ 100՝ «Շամ որ է Հեշմ» (**Թովմա Արծրունի**, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 105):

[2] **Մխիթար Այրիվանեցի**, էջ 17:

[3] **Ղևոնդ**, էջ 45:

[4] Երևի, Այրիվանեցու այս սխալ ազդեցությամբ է, որ Ստեփանոս Օրբելյան Բաբանի ասպատակությունը պատմում է 176 թվի տակ (տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, հատ. Ա, էջ 201):

[5] Այրիվանեցու տեղեկությամբ, Սյունեցին մեռավ «ի վերացման Եղիայի Մարգարէի, ի հրոտից ԺԷ և յուլիս ԻԱ, յաւուր յիշատակի սրբոյն Մարգարտայ և Սիմէոնի աղուաշին» (Գ. **Հովսեփյան**, էջ 22): Հայսմավուրքի մեջ Սյունեցու մահվան օրն է ԺԷ հրոտից, հուլիսի 23, Փոկաս եպիսկոպոսի օրը: Կարելի էր կարծել, որ Այրիվանեցու Ժէ ստույգ է, սակայն հուլիսի 21 և Օրբելյանի ԺԵ ցույց են տալիս, որ ԺԷ սխալագրություն է՝ փոխանակ ԺԵ, Սիմեոն աղվաշի օրը: Եղիայի տոնը հրոտից 14 և հուլիսի 20 է և ոչ հրոտից 15: Այրիվանեցին օգտվել է հայսմավուրքից: Հրոտից ԺԷ Ստեփանոսի մահվան տարին 735 թիվը հավասար է շարժական տոմարով, մայիսի 8-ին: Հրոտից ԺԷ =հուլիսի 23, ըստ հաստատուն տոմարի է:

հերքում է 734 թվին եպիսկոպոս ձեռնադրվելու տեղեկությունը: Թերևս, Սյունեցին հետին հաշվով է եպիսկոպոս կոչված, ինչպես Գերմանոս պատրիարքի Թղթի մասին ասված է՝ «երեր Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս», ավելացնելով՝ «յառաջ քան եպիսկոպոսութիւնն իւր»: Այս ավելածո նկատողությունը գուցե բաց է թողված պատասխան-Թղթի վերնագրի մեջ:

Հիմնավոր չէ թվում նաև մյուս կարծիքը, թե Ստեփանոս Սյունեցին ութ տարի էր եպիսկոպոս, երբ մեռավ: Այն պարագան, որ Գերմանոս [պատրիարքի] պատասխանը գրել է Սյունեցին և ոչ ժամանակակից մեծ եկեղեցական, կաթողիկոս Հովհան Օձնեցին, տեղիք է տվել հներին ենթադրելու, որ Օձնեցին մեռած էր արդեն, երբ Ստեփանոս վերադարձավ, և հաջորդ չէր ընտրված: Ասել է, թե վերադարձավ 727 թվին և եպիսկոպոս ձեռնադրվեց: Ուրեմն, եպիսկոպոսական աթոռի վրա մնաց ութ տարի՝ 727-735 թվերին: Մեր կարծիքով, Սյունեցու վերադարձը առաջ էր, քան 726 թիվը: Այս թվին Լևոն [III Իսավրացի] կայսրը հրատարակեց իր հրամանը պատկերապաշտության դեմ, պաշտոնական կերպարանք տալով իր պատկերամարտ քաղաքականության: Գերմանոս պատրիարքը ընդդիմացավ և պայքար սկսվեց կայսեր և իր մեջ, որ վերջացավ իր գահընկեցությամբ: Դրությունն այնպես չէր, որ Գերմանոս մտածեր հայերի մոլորության մասին: Եվ եթե մտածած լիներ 726-729 թվերի միջոցին, կհիշեր իր Թղթի մեջ անպատճառ նաև պատկերների մասին, որպիսի հիշատակության հետքն անգամ չկա Թղթի մեջ: Այս կետը խիստ կարևոր է, թեև մի խոչընդոտ ունի: Եթե Սյունեցին 726 թվից առաջ արդեն Հայաստան էր, ինչո՞ւ չկա իր անունը Մանազկերտի ժողովին մասնակցող հայրերի մեջ: Արդյո՞ք չկա: Նորեն քննենք Միքայել Ասորու մոտ պահված ցանկը, ուր հայ անունները այնպես են խաթարված, որ դժվար է վերականգնել ստույգ ընթերցումը: Մեզ թվում է, որ ցանկի իններորդ անունը՝ Nwzwn Asibw թագցնում է թերևս Ստեփանոս Սյունեցու անունը: Սյունեցին չէր կարող տասնյակ տարիներ բացակայել, մնալ քաղկեդոնական եկեղեցիների մայրաքաղաքում և ներկայանալ ջատագով հակաքաղկեդոնականության: Հավանական է, որ նա 720 թվի մոտերքն արդեն հայրենիք էր:

Մխիթար Այրիվանեցին պահել է այն պապի անունն, որի մոտ գնաց Սյունեցին կայսեր պատվերով՝ ուղղափառ գրքեր բերելու. «երբ ի Հռոմ հրովարտակաւք հրամանաց մերոց առ պապն Ագաթոն և բե՛ր ինձ երիս գիրս»[1]: *Ագաթոն, անտարակույս ուղղելու է Ագաթոն կամ Ագաթոն: Այն հռչակավոր պապն է Ագաթոն, որ դեմ ելավ միակամության՝ ընդդեմ Կոստանդին IV Պոգոնատ կայսեր (668-685): Նա մեռավ 681 թվին, օգոստոսին: Նրա շնորհիվ էր, որ գումարվեց 680-681 թվի ժողովը, որը դատապարտեց մի կամքի և մի*

[1] Մխիթար Այրիվանեցի, էջ 19:

ներգործության վարդապետությունը: Մխիթար Այրիվանեցի շատ լավ աղբյուր է ունեցել իր ձեռքին. հավանաբար նույն Ստեփանոս Սյունեցու գործերից կցած տեղեկություններից է քաղել Ագաթոնի անունը: Այս միակ անունը բավ է, որ Հռոմ գնալու առասպելական պատմությունը գտնե իր պատմական աստառը: Սյունեցին գնաց Բյուզանդիա Վարդան Փիլիպպիկ կայսրի օրով, ոչ ուշ, քան իր առաջին տարին: Վարդանը հայ էր և ջերմ պաշտպան միակամ վարդապետության: Անտարակույս, սա է այն կայսրը, որ համակրում է Սյունեցու դավանությանը, և որ առաջարկում է Հռոմից նույնիմաստ գրքեր բերել: Այս ուրիշ բան չէ նշանակում, քան որ միակամության թշնամին նստած էր Հռովմ Ագաթոնի օրերից և եթե սրա դիմադրությունը չլիներ, Վարդան կայսրը միակամությունը կդարձներ իր աշխարհի դավանանքը: Հիշենք, որ Գերմանոս պատրիարքը՝ ինքը սկզբում համակիր էր Վարդանին, այսինքն՝ հետևորդ էր միակամության, հետո փոխեց իր գույնը: Սյունեցին ծանոթացավ [պատրիարքի] հետ, երբ սա միակամության գետնի վրա էր: Երբ Գերմանոս փոխեց իր համոզումը, փորձեց համոզել նաև Ստեփանոս Սյունեցուն և նրա միջոցով նաև Հայոց եկեղեցին: Ահա և Գերմանոսի Թղթի ծագումը:

Ագաթոն պապի հիշատակությունը Ստեփանոս Սյունեցու գրքերի մեջ զարմանալի պիտի չերևա: Բավական է հիշել, որ «ի գրենսյն Ստեփաննոսի» Կաղանկատվացին գտել է Ղիոն քաղաքի ավերման և Հռոմի շինության պատմությունը: ԺԸ գլխի մեջ Կաղանկատվացին պատմում է, որ Աբդոն դատավորի ժամանակ Ղիոն, այսինքն՝ Տրոյա քաղաքը, սասանվեց: Ղիոն է Իլիոն, Տրոյա կամ Տրովա քաղաքի հնագույն անունը և գտնվում է ոչ թե Փոքր Ասիայում, այլ «Աքայեցւոց երկրին էր հուպ յաշխարհն Պեղոպաննէս յարևմուտս Մակեդոնացւոց, յերկրին Եւրոպիոյ» (Գ, գլ. ԺԸ): Պարիսի դեռում Թեսաղոնիկե քաղաքից մի երիտասարդ է և Մենելաոսի կնոջ՝ «դուստր առն միոյ մեծի»: Աղջկան ծնողները պահանջում են իրենց զավակին և մերժման վերա սկսվում է պատերազմ, որը տևում է 15 տարի (ուրեմն՝ փոխան Տրոյայի 10 տարվան): Իլիոնի դեմ կռվողները շինում են երկու հազար փայտե ձի և...*, *նրանց փորում թագցնում 40 հազար մարդ և իբրև թե նվեր Իլիոնի աստվածներին՝ մտցնում քաղաք: Պահված զինվորները հարձակվում են բնակիչների վերա, այր մարդկանց կոտորում և կանանց գերում: Այնուհետև ճանապարհ են ընկնում դեպի հայրենիք: Սաստիկ հողմերը ձգում են նրանց Իտալիա: Էնեասի անունը չկա, բայց խոսքը նրա մասին է: Շատ ժամանակ է անցնում և նրանց առաջնորդ Հռոմուլոս շինում է Հռոմ քաղաքը՝ Իլիոնի առումից 441 տարի հետո: Երբ Փիլիպպոս թագավորեց <2>44 թվին, հազար*

* Մի բան անընթեռնելի է (Պ. Հ.):

տարին լրացավ Հռովմի շինության: Կոստանդիանոս [Մեծ] փոխեց աթոռը Հռոմից Բյուզանդիա, որ կոչվում է Կոստանդնուպոլիս:

Մակեդոնիայից արևմուտք, Էպիրոսում, Կորփու կղզու հանդեպ հնում կար մի քաղաք, որ արդարև կոչվում էր Իլիոն կամ Տրովա, որ զրույցիս մեջ շփոթված է հռչակավոր Իլիոնի՝ Պրիամոսի քաղաքի հետ: Արդոն (և ոչ Ապդան) դատավորը հայտնի է Ս. Գրքից[1]: *Ասողիկ ևս գիտե Եվսեբիոսի Քրոնիկոնից, որ Արդոնի օրով «Իղիոն քաղաքն առաւ», միայն անունը սխալմամբ տպված է Ղարդոն*[2]: *Ասողիկ, հետևելով Եվսեբիոսին, համարում է Արդոն դատավորից մինչև Սողոմոնյան տաճարի շինությունը 140 տարի, իսկ տաճարի շինությունից մինչև Քրիստոսի խաչելությունը՝ 1012 տարի: Ուրեմն, Արդոն ապրում էր երկոտասաներորդ դարու կեսերին, ինչ-որ համաձայն է Լակեդեմոնական հաշվին, որով Տրոյական պատերազմը տեղի ունեցավ 1183 թվին, իսկ ըստ աթենացիների՝ 1209 թվին*[3]:

Հռովմ հիմնվեց 753 թվին և Հռոմի Փիլիպպոս կայսեր օրով (244-249) լրացավ հազարամյակը՝ 247 թվին: Պատմագրի հաշիվը միանգամայն ճիշտ է, միայն պետք է տպագրի 44 ամն կարդալ 244, ՄԽԴ:

[ժ]

ԺԹ գլխի վերնագիրն է «Որ ինչ յերկերիւր թուականութենէ Հայոց և այսր գործք լեալ ի սահմանս Աղվանից»: Կարելի էր կարծել, թե պատմագրի գործը վերջացած է և այստեղից սկսած մի Անանուն շարունակող է պատմողը: Սակայն, տեսանք, որ երրորդ գրքի առաջին գլխում արաբ խալիփաների հաջորդությունը հասցրած է մինչև Հարուն Բ ալ-Վաթիկ (842-847): Հետևապես ԺԹ գլուխը, ուր պիտի ճառե Հ[այկական] թ[վականության] 200 թվից =751 թվից հետո անցած դեպքերի մասին, պատկանում է նույն հեղինակին: Վերնագիրը չի վերաբերում միայն ԺԹ գլխին, այլ և հետևյալ Ի, ԻԱ գլուխներին, թեև սրանք իրենց հատուկ վերնագիրներն ունեն: Մեր պատմագրի սովորությունն է տալ ընդհանուր վերնագիր մի շարք

---

[1] Դատ., ԺԲ, 13, 15, համմտ. Ա Մնաց., Ը, 25; Թ, 36:

[2] Ասողիկ, Ա, գլ. Ա, էջ 9: Զարմանալի է հայր Կ. Շահնազարյանցի նկատողությունը, թե «Արդոն» դատավոր ոչ ոք հիշատակի առ նախնի մատենագիրս (տե՛ս Մովսես Կաղանկատվացու ծանոթագրությունները, Գ, էջ 111):

[3] E. Curtius, Histoire Greque, t. I, Berlin, 1857, p. 179.

գլուխների և սրանցից յուրաքանչյուրին որոշել զատզատ վերնագիրներով, ինչպես առիթ ունեցանք տեսնելու վերև:

«Ընդ ժամանակս ընդ այնոսիկ», ուրեմն 750 թվի մոտերքը, զորացավ արաբական պետությունը, ընդլայնեց իր սահմանները: Գրավեցին Պարտավ քաղաքը և դարձրին իշխանության կենտրոն, ինչպես երբեմն Դամասկոս: Պատմագրի խուլ ակնարկները շոշափում են Աբբասյան հարստության երևալը 750 թվին և նրա դաժան քաղաքականությունը, մանավանդ Աբու Ջաֆար ալ-Մանսուրի (754-775) երկարատև իշխանության ընթացքին: Հարուն ալ-Ռաշիդ նշանակեց Հայաստանի և հարևան երկրների պետ իր եղբորը՝ Ռվբեղլա, որ է Ուբայիդալլահ, 788 թվին և սա եկավ Պարտավ և նշանակեց փոխանորդ ոմն Սուլեյման չարաբարո անձն, որի մոտ եկավ Հայոց Եսայի կաթողիկոսը՝ խնդրելու հարկերի թեթևության: Խալիփայի եղբոր Պարտավ գալն է առիթ տվել, անտարակույս, մեր պատմագրին ասել «ետուցին ի Պարտաւ կալ արքունեացն»:

Եսայի Ա Եղիպատրուշեցի կաթողիկոս Պարտավում իջավ Վարդանուհի տիկնոջ մոտ, որ Վարազո իշխանի կինն էր և որի ամուսնությունը չհասության *աղագաւ նզովքի տակ էր: Եսայի կաթողիկոս ներեց տիկնոջ: Այս խնդրի առթիվ է, որ Կաղանկատվացին հիշում է Եսայի կաթողիկոսին: Քաղաքական կացությունն ավելի քիչ է հետաքրքրում նրան, քան եկեղեցական խնդիրները և հրաշագործությունները:*

Պատմագիրն անցնում է Մամուն խալիփայի (813-833) օրով կատարված անցքերին՝ սկսված Հ[այկական] թ[վականության] 270 թվից =821 թվին: Չէ հիշում Ամինի և Մամունի գահակալական կռիվները, որոնք արծագանք տվին և Պարտավ, և ստիպեցին Աղվանից Ներսիկ և Արդռահման իշխաններին որոշ դիրք բռնել:

821 թվին Պարտավի արաբները ասպատակեցին Ամարաս գավառը և ավարով ու գերիներով ամրացան Մեծիրանցի սահմանի Շիկաքար տեղում: Սահլ Սմբատյան Եռանշահիկ իր եղբայրների հետ հարձակվեց ավազակների վերա և ազատեց գերիներին: Դժբախտաբար որոշ չէ, թե Սահլ Սմբատյան Ամարասի իշխանն էր, թե Մեծիրանց գավառի. թերևս իր իշխանության մեջ էին և՛ մեկը և՛ մյուսը:

Նույն 821 թվին Սևադա արաբ իշխան մտավ Սյունիք և ամրացավ Շաղատ բերդում: Վասակ Սյունի իշխանը կանչեց Բաբանին և նրա օգնությամբ քշեց «աւառանշան» ասպատակողին: Սևադան հայտնի է մյուս մեր մատենագիրներից: Մանազկերտ հաստատված կայսիկ արաբական ցեղի պետն էր, որդի Արդլմելիքի որդվո Ջահապի: Ի տրիտուր օգնության, Վասակ Սյունի ստիպված էր տալ իր դուստրը Բաբանին կնության: Ինքը մեռավ նույն տարին: Ո՞վ էր այս Վասակը, արդյո՞ք 768 թվի Պարտավի ժողո-

վին ներկա Ատրներսեհ Սյունյաց իշխանի որդին էր: Ամեն պարագային Վասակով սկսվում է Սյունյաց մի նոր և փայլուն իշխանական տուն:

Գարդմանի իշխան Վարազ-Տրդատ Ստեփանոսյան սպանվեց Ներսեհ Փիլիպպյանի կողմեն: Ներսիկ թվում է, թե Բաղքի իշխաններիցն էր: Սպանության հետևանքով է, որ թերևս Բաղաց գավառը[1] *չընդունեց Բաբանի լուծը: Բաբան ավերեց Բաղք և մտավ Գեղարքունիք և այրեց Մաքենոցաց վանքը Հայոց 276 թվին =827 թվին: Բաբան հաղթեց արաբ կուսակալներին՝ Տավուսին 278=829 թվին և Աբրահիմ որդի Ղեթա՝ 830 թվին: Առաջինը հայտնի է արաբական աղբյուրներից՝ Մուհամմադ իբն Հումայիդ ալ-Տուսի*[2]*, երկրորդը մնում է դեռ անծանոթ:*

Ստեփանոս Արլասաղ, որ Բաբանի օգնությամբ հարվածել էր Բաղակացիներին, ընկավ Դավոն և Շապուհ իշխանների թրից: Մահապարտները ըմբոստացան Բաբանի դեմ և ամրացան Գորոզու բերդում: Արլասաղի մերձավորները սպանեցին Դավոնին և Շապուհին և ինչպես երևում է ո՛չ առանց աջակցության, եթե ոչ ձեռքով Եսայի Արումուսեի, որ Արլասաղի քեռորդին էր: Բաղակացի՝ կարծեմ, նույնը պիտի լինի ինչ որ Բաղացի: Արումուսեն Բայլականի, այսինքն՝ Փայտակարանի, իշխանն էր: Թշնամությունն, ուրեմն, Բաղաց գավառի և Բայլականի իշխանների մեջ է: Բաբան եկավ Ամարաս, թողեց իր զորավար Ռոստոմին խաղաղացնելու, իսկ ինքը հեռացավ Ատրպատական: Ռոստոմ «ել տալ պատերազմ ընդ ամրացելոցն ի բերդին», հավաքորեն Գորոզու, ուր սպանված իշխանների մարդիկ շարունակում էին դիմադրել Բաբանին և իր կողմնակից Արումուսին: Պաշարվածները «զխաչս և սրբոց նշխարս ընդդէմ բերեալ» հետ մղեցին Ռոստոմի գունդը: Այս առթիվ պատմագիրը հիշում է, որ Ամարասի եպիսկոպոս Սերոբը կայսրից խնդրել է «մասն ի նշխարաց սրբոց» և ստացել, կարծում ենք, որ դա Ս. Լուսավորչի աջ բազուկն է[3]:

Մամունի թագավորության վերջին գործն է իր իսկ արշավանքը ընդդեմ Բյուզանդիայի Հայոց 280 թվին =831 թիվ: Պատմագիրը չափազանցնում է այս արշավանքի արժեքը, կարծելով որ Մամուն նպատակ ուներ պաշարել Կ. Պոլիս և իբրև թե «կենդանուտ խաչի զօրութեամբ» պարտվեց և իր ուժերը ծովակուլ եղան, ինքն էլ մեռավ: Մամունի արշավանքը, ընդհակառակը, հաջող էր: Նա մտավ Կիլիկիա, հասավ մինչև Պոդոնտա (այժմ՝ Բոզանտի) և

---

[1] **Ստեփանոս Օրբելյանը**, էջ 202՝ կարդում է «Բաղասականայ»:

[2] **J. Markwart**, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, p.459.

[3] Գ գրքի ԺԲ գլխի վերջին այս հատվածը Սկրտիչ Էմինը դուրս է թողել իր հրատարակության մեջ (Մոսկվա, 1860,էջ 264. համմմ. նաև Ղուկասյանի հրատարակությունը, Թիֆլիս, 1912, էջ 377):

հանկարծամահ եղավ 833 թվի օգոստոսին: Կաղանկատվացին Մամունի արշավանքի մասին խոսում է Ի գլխում, որի վերնագիրն է՝ «Երքն Մամունայ՝ իշխանին Տաճկաց, ի Հոռոմս և ի նմին սատակումն. ընդ նմին **զրուցատրութիւնք պէսպէս կարճառաւտ բանիւք**»: *Այդ զրուցատրությունների մեջ են մտնում նախ ինչ որ կատարվել է Աբրահամ Արուսահակ Մութասիմի օրով (833-842): Հայոց 283 թվին =834 թվին եկավ ամիր մումինի հրամանով, այսինքն՝ Մութասիմի, ոմն ամիրա Բադղղի, որ է հասան իբն Ալի ալ-Բադղիսի, հայտնի ալ-Մամունի անունով*[1]: *Բադղղի կարդալու է Բադդղի կամ Բադդսի, որ երևան է գալիս Ասողիկի մոտ Մամունիկ կոչումով*[2]: *Բադդսի մտավ Նախճըվան, ուր նահատակել տվեց Հոռհոմ մանուկ մի, Զատկի մոտերքը՝ 835 թվի ապրիլի 18-ին: Նրա նշխարները «լուսամաճանչ փայլմամբ ահացուցանէր զբշնամիսն», ուստի և անհետացրին գիշեր ժամանակ: Արաբ կուսակալ հիշվում է շնորհիվ Հոռհանի նշխարների հրաշագործության, որ այնքան մոտ է մեր պատմագրի սրտին:*

Այստեղ տպագրության մեջ պակաս կա: «Պսակողին իւրում միայն մնայ յայտնութեան» բառերից հետո Էջմիածնի ձեռագիրն ունի հետևյալ կարևոր տեղեկությունները, որ պետք է ի նկատի ունենալ քննագրի ապագա հրատարակության ժամանակ:

«Իսկ ի միւսում ամին զավուրս Խ եղելոյ սաստիկ անձրևաց, լցաւ ծայրալիր հոսմամբ գետն Կուր, մինչև ԺԵ, երասխ արտաքս ծաւանեալ ընդ եղեալն իւր սահման. և անդուստ յաշխարհական ծովէն Կասբից ելանէ վիշապանման մի անարի նման լերին, և զորսորդաց ճկունս յորովայն իւր ամայէր և սնավաստակ մնալ որսորդացն լինէր: Աստ իմն հնարեալ նաւորդացն, գումարեալք ի մի վայր՝ յօշէն զնա ի տանոյն կողմանէ սրով, մինչև սատակել նմա, և Կուրայ տանել զնա, ուստի եկն: Եւ ապա դիւրաւ լինէր որսորդացըն գիւտ ճկանցն, զի իբրև ի կապարանէ արձակեալ գային:

Ի նոյն ամի տէր Դաւիթ Հայոց կաթողիկոս վախճանեցաւ, և անէծ զյափշտակողսն ի սրբոյն Գրիգորի հողոյն, որք էին այսոքիկ: Արդլմելք Ջահաբայ որդի սրով սատակիւր, և Արդլա Սուրհարճոյ որդի, և Արուջափր Արածացի, ածան ի Պարտաւ և կենդան<ւ>ոյն տիկ հանին զերկոսեանն:

Եւ գիտութիւն իմն զայս ուսաք զԱմիրմումնայ դարաբասին, թէ յաջակողմն դռանն նստի շուրտայաց աւագն, որ է մեծ քան զայլսն դահճապե-

---

[1] **Ասողիկ**, էջ 106, «Մամունիկ ամիրայ»:

[2] **J. Markwart**, Streifzüge, p. 462, սխալվել է՝ աշխատելով նույնացնել Բադդղի Սուլեյման ալ-Ազդի հետ, բայց իր գործի հայերեն թարգմանության մեջ՝ («Քագրատունյաց ծագումը», էջ 54), ուղղել է իր սխալը:

տաց աւագ: Եւ ձախոյ կողմանն դատաւորն և գանձու ամիրայն, որք առնէին իրաւունս և զտիեզերաց հարկաց վճարմունս: Եւ յինն ժամ աւուրն մտանեն առաջի, և զվաղորդայն աւուրն հրաման առնուն և զմարդկան մատակարարեն զօգտակարսն:

Իսկ յերկու ՃՁՁ թուոյն Հայոց ԲԺՌ հնծելոց հանկարծահաս ելեալ ի Բախտատա արշաւէին երկիրս Աղուանից: Անդ ակն ի վերայ հարեալ Սահլի Սմբատեան, որ յարքայից Զառմիհրական տոհմէն էր, գործակից իւր կալեալ զմեծ նահատակն Գէորգիոս, դիմէ ի վերայ որպէս արծուի խոյացեալ ի տկար թռչունս, այսր անդր ցրուեալ տապաստ դաշտացն արկեալ վանէր:

Եւ ի նոյն ամի նոյն տէրն Սահլի Սմբատեան, ձերբակալ արարեալ զապստամբն Բաբան զմարդախողխող, աշխարհաւեր, արիւնարբու գազանըն և ետ ի ձեռս Ամիրմումնայ, և ընդ վաստակոցն առնու յարքունեացն վարձս բարիս, զի առնու իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար:

Այլ յԲՃՁԷ թուականին Հայոց Աբրահամ Ամիրմումնի գնա զօրու մեծաւ յաշխարհն Հոռոմոց և էառ զմեծ քաղաքն զԵմորիայ սրով և գերութեամբ: Եւ անտի դարձաւ ի բնակութիւն իւր: Սա է Արուսահակն:

Ի սոյն ամի տէրացն տէրն Յովաննէս, որ Հայոց, Վրաց և Աղուանից եղև տէր, խնդրեաց յարքունեացն կրկին անգամ զԲուլխար, Խոյտա, Փատգոս, երիցս այսոցիկ աշխարհաց:

Եւ<յ>այնմ ամի ել մարախ ի Խազրաց կուսէ, զարմանալի մեծ, քան զննճղուկ և եկեր զմասն ինչ Աղուանից աշխարհին:

Եւ յետ երկուց ամաց դժնդակ եղեալ կարի ձմեռն կիզեալ հասոյց մահ անասնոց և հովուաց բազմաց:

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եկին հասին **Քաղաքականացիքն**[1] *և արարին վնաս Սիսականորայ և Ամարաս գաւառաց: Եւ ել Եսայի անուանեալն Արձոմուսէ ի վերայ նոցա և կոտորեաց զնոսա»*[2] (23):

Սկզբնագրի շարունակությունն է տպագրի «Յետ այսորիկ անցանելոյ ևս երկուց ամաց եկն Խազր (կարդա՛ Խալը) պատգոս՝ այր շամբշոտ և անողորմ. և ի նմին ամի սատակեցաւ» նախադասությունը: Խոսքը Խալը կամ Խալիդ իբն Եզիդ իբն Մազիադ ալ-Շայբանի կուսակալի մասին է, որ եկավ, ըստ Կաղանկատվացու, Հայոց 291 թվին= 842 թվին, իսկ ըստ Ասողիկի՝ 290 թվին =841-842 թվին և մեռավ Ջավախքի Խոզարեր գյուղում[3]: *Պատգոս կամ փատգոս Կաղանկատվացու մոտ նույն նշանակությունն ունի, ինչ որ ոստիկան, ամիրա:*

---

[1] Կարդա՛ Բաղակացիք: Ստեփանոս Օրբելյան, գլ. ԼԳ, ունի՝ Բաղասականայ:

[2] «Արարատ», 1897, ապրիլ, էջ 161-163, աշխատասիրությամբ Խալիկ վարդապետի:

Խալդից հետո եկավ նորա տեղ իր որդին՝ Մահմեդ, որ վերաշինեց Գանձակ քաղաքը: Գնաց Սյունիք, ավերեց Բաղաց աշխարհը և երբ ուզեց Աղահեջ գավառի Արքունգետ ավանի Ս. Գրիգոր եկեղեցին այրել, եկեղեցուց դուրս ելավ «հեծեալ մի ի ձի ճերմակ», մտավ թշնամու բանակ, շփոթություն ձգեց և փախցրեց դեպի Եղջերիս սարը: Այս ասպատակությունը, ինչպես երևում է, նույնն է, ինչ որ պատմում է Վարդան, առնելով, անշուշտ, Շապուհ Բագրատունուց, որ Ամորիա քաղաքի առման տարիները, ուրեմն 838 թվի մոտերքը, Արլիերք ոմն՝ Ջահապի տանից, չորս հազար մարդով խուժեց Սյունիք, բայց Բարգեն երկուհարյուր մարդով ջարդեց նրան և քշեց[1]: *Թվում է, թե Արղիերքի միջոցով Մահմեդ իրն Խալիդն էր, որ կազմակերպել էր այս ասպատակությունը:*

Մովսես Կաղանկատվացու «զրուցատրութիւնների» մեջ կարևոր է մանավանդ Սահլի մասին տված տեղեկությունը: Սահլ Սմբատյան Զառմիհրական տոհմից էր, ուրեմն Աղվանից կամ ճիշտ ևս Գարդմանի իշխանական տանից, թեև բնավ հայտնի չէ, թե ո՞վ էր նորա հայր Սմբատ և ի՞նչ տեղ էր բռնում իր տոհմի ճյուղագրության մեջ (24): Սահլ հայտնի դարձավ առավելապես նրանով, որ ապստամբ Բաբաքին բռնեց և իր որդու՝ Մուավիայի միջոցով հանձնեց Ափշինին՝ 837 թվին: Ի տրիտուր ստացավ հարյուր հազար դրամ, ըստ Վարդանի[2] և *նշանակվեց իշխան Հայոց, Վրաց և Աղվանից: Զարմանալի է, որ մեր պատմագիրը չգիտե, որ Եսայի Արծրունուն ձերբակալեց իր կողմից Բաբաքի եղբոր Արդալաձին և ղրկեց խալիփային: Եսայի ներկայանում է Թովմա Արծրունու մոտ մարտիկ զորականի անվեհեր նկարագրով*[3], *մինչդեռ Աղվանից պատմագիրը լուռ է այդ մասին:*

Բուլխար Խոյտա, որին փոխարեն (*նույնական - Պ. Հ.*) *կուզեր տեսնել Հովհաննես իշխանը, մասնակցած էր Բաբաքի դեմ վարած կռիվներին Ափշինի բանակում: Անունն է իսկապես Մուհամմադ իրն Խալիդ Բուխարա-խուդա*[4]*: Հովհաննես տեր-տերունց, կարծում եմ, որ Սահլի որդին է, որ կրում էր նաև արաբ Մուավիա անունը: Մեծիրանց վանքի մի արձանագրության մեջ հիշվում է այս իշխանի անունը.*

«ՅԲ թուականութեան Հայոց ի ժամանակս Յովհաննիսի Աղվան<ից> իշխանի ես Սողոմ<ոն> Մեծարանց եպիսկոպոս կանգնեցի զ<այս>...»[5]: *Ար-*

---

[1] **Վարդան**, էջ 80: Բաբգեն նույն անձն է, որ սպանեց Գրիգոր Սուփանին (տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 66) և էր որդի Վասակ († 821) Սյունյաց իշխանի, ըստ Ստեփանոս Օրբելյանի, գլ. ԼԷ, էջ 212:

[2] **Վարդան**, էջ 79:

[3] **Թովմա Արծրունի**, էջ 177, 180, 184-185:

[4] **J. Markwart**, Osteuropäische Ostasiatische Streifzüge, p. 461.

[5] «Արարատ», 1897, ապրիլ, էջ 163:

ձանագրության ժամանակը՝ 302 թիվ=853 թվի, թելադրում է նույնացնել այս անձը Հովհաննես տերանց-տիրոջ հետ: Բուխարա-խոդա նշանակվեց կուսակալ Հայաստանի Ափշինի կողմեն Մութասիմի օրով՝ 838 թվին: Բոլոր հիշյալ «զրուցատրութիւնք» վերաբերում են Աբուսահակ Մութասիմի կառավարության 834-842 թվերին: Միայն Խալիդ իբն Եզիդ կուսակալ եկավ Հարուն Վասիկի (842-847) առաջին տարին, եկավ զսպելու Հայաստանում պայթած ապստամբությունը և նրան նույն տարին հաջորդեց իր որդին:

Հիշենք, որ առաջին գլխի մեջ ամիրամումիների հաջորդական տախտակը հասցրած է մինչև Հարուն II, այսինքն՝ Վասիկի գահակալությունը, առանց նշանակելու, թե քանի տարի իշխեց:

Արդ, հասանք այդ սահմանած կետին և ուրեմն պատմության թելը պիտի կանգ առներ այստեղ, Վասիկի առաջին տարին: Սակայն մեր հեղինակը շարունակում է իր «զրուցատրութիւնքը» և հիշատակում Հայոց 300 թվի =851 թվի անցքերը, երբ Հայոց և Աղվանից իշխանները տարագրվեցին Բաղդադ: Հաջորդ տարին՝ 852 թվին, եկավ Բուղա զորավարը և «զամս երիս կալաւ զՀայս» և չորրորդ տարին նշանակվեց նրա տեղ վերև հիշված Մահմեդ որդի Խալթի (և ոչ Խողթի, ինչպես ունի տպագիրը): Շատերն տկարացան հավատի մեջ, իսկ այնքան նահատակներից հիշվում է միայն «ոմն Շապուհ Արծրունի և միւս այլ այր ընտիր յազատացն Հայոց»: Սրանց ձգեցին Եփրատ գետը, բայց որովհետև երկար ժամանակ «ջահք լուսոյ ի վերայ գետոյն», երևեին, ամիրմումնի հրամայեց հանել [ոսկորները] գետից և այրել: Չհաջողեց: Ամեն անգամ, որ «խորէջք» ջուրն էին մտնում, լույսն աներևութանում էր, և երբ դուրս էին գալիս ջրից, լույսը նորեն երևում էր: Ամիրմումնինի հրամանով Ասորաց եպիսկոպոս Ջափր ջրասուզակներ է իջեցնում Եփրատ՝ երանելիների ոսկորները գտնելու: Ասորաց եպիսկոպոսը հանեց գետից նշխարները և տարավ իր եկեղեցին:

Այս հրաշագործ պատմությունն արդեն ապացույց է, որ գրողը մեր նման պատմությունների անչափ սիրահար հեղինակ է: Թովմա Արծրունուց հայտնի է Շապուհ Երեց և «ոմն ի հայ ազատանոյն» Ապուսահակ, Նախճավանի եպիսկոպոսի եղբայրը[1]: *Բայց սրանք Բաղդադ չեն տարվել: Հավանորեն Հովհաննես Արծրունի եպիսկոպոս և Գրիգոր Արծրունի, որ նահատակվեցին*[2] *Բաղդադ 855 թվին, հոռի 5 (=մայիս 31), չփոթված են Շապուհի և Ապուսահակի հետ*[3]:

«Ապա կոչէ ամիր **ամիրմումնինի զՋափր՝ Ասորեաց եպիսկոպոս»**, *պետք է կարդալ «Ամիրմումնի* **Ջափր զԱսորեաց** *եպիսկոպոս»: Ջափր ամիրմում-*

---

1 **Թովմա Արծրունի**, էջ 128:

2 Անդ, էջ 162:

3 Շապուհի նահատակության պատմությունը մտել է Հայսմավուրքի մեջ, հուլիս 22:

ճի, այսինքն՝ խալիփայի, աճում է և ոչ ասորի եպիսկոպոսի: Իսկ Ջափր՝ Մութավաքիլ խալիփան է (847-861):

Երրորդ գրքի Ի գլուխ վերջանում է երկրաշարժի հիշատակությամբ, որ մեր պատմագիրը դնում է Հայոց 318 թվին =869 թվին, իսկ Ասողիկ[1] դնում է Հայոց 312 թվին =863 թվին: Կ. Պոլսում երկրաշարժ եղավ, 869 թվի հունվար ամսին[2]:

«Ջրուցատրութիւնք» շարունակվում են հետևյալ ԻԱ գլխում, որի վերնագիրը ընդգրկում է միայն գլխի առաջին մասը: Նույն երևույթը, ինչ որ տեսանք վերև՝ ԾՋ գլխի նկատմամբ: Եսայի որդի Շեխա կովի բռնվեց իր գործակալի հետ, որ ապստամբել էր Պարտավում և կոչվում էր Մահմեդ որդի Արլմեհդի Եմենիկ (և ոչ՝ թե Եմենիկ, ինչպես ունի տպագիրն): Այդ միջոցին Աղվանից կաթողիկոս Հովսեփ վախճանվեց և օգտվելով խառն ժամանակից Մեծկողմանց Սամուել եպիսկոպոսը կաթողիկոսական աթոռը գրավեց առանց Հայոց Գևորգ կաթողիկոսի գիտության: Իշխանաց իշխան Աշոտի միջնորդությամբ, Սամուել գնաց Հայոց Գևորգ [Բ Գառնեցի] կաթողիկոսի մոտ՝ ստանալու օրինավոր ձեռնադրություն, Հ[այկական] թ[վականության] 326 թվին =877 թվին:

Եսայի նույն Շայբանի տոհմից էր, Հիսե կամ Իսա իրն շեյխ իրն Խալիդ, եղբորորդի նախորդ կուսակալի՝ Խալիթի (=Խալիդի), նշանակվեց Հայաստան Հիջրի 257 թվի ջումադա Բ ամսին, որ է 871 թվի մայիս[3]: *Սորա գործունեությունը հայտնի է Թովմա Արծրունուց: Կաղանկատվացու Պատմության վերջին՝ ԻԳ գլխի մեջ Հովսեփ Աղվանից կաթողիկոսի մասին ասված է, որ «Ի սորա Գ ամին լցաւ թիւս Հայոց Յ (300)»[4], ուրեմն կաթողիկոս էր ընտրվել Հայոց 298 թվին =849 թիվը: Կաթողիկոսական իշխանությունը վարել է 25 տարի, ուրեմն մինչև 873 թիվը: Սամուելի ապօրինի կաթողիկոսությունն ընկնում է 873-876 տարիների մեջ: Սյունյաց Սողոմոն եպիսկոպոսը[5] և Հայոց Գևորգ կաթողիկոսը վերահաստատեցին հինավուրց կապը շնորհիվ իշխանաց իշխան Աշոտի:*

---

[1] **Ասողիկ**, էջ 110:

[2] **Georgii Monachi Chronicon**, ed. C. de Boor, t. II, Lipsiae, 1904, p. 840; Symeonis Magistri ac Logothetae Annales, In: „Theophanes Continuatus„ Bonnae, 1838, p. 688.

[3] **Ibn Wadhih al-Jaqubi**, Tarikh, ed. M. Th. Houtsma, Lugduni-Batavorom, 1883, p. 621.

[4] Այս կարևոր տողը պակասում է տպագրի մեջ, լրացնում ենք ըստ Կիրակոսի՝ «լցաւ թիւս Հայոց Ց», էջ 115:

[5] Սողոմոն, Ստեփանոս Օրբելյանի տվյալներով (էջ 206) Սյունյաց եպիսկոպոս եղավ Ստեփանոս Սյունեցուց հետո 129 տարի անց, ուրեմն 735+136=871, մինչդեռ իր իսկ՝ Օրբելյանի հիշատակած արձանագրության մեջ Սողոմոն եպիսկոպոս էր 867 թվին (էջ 264):

Միևնույն ԻԱ գլխում, արձանագրված են մի շարք դեպքեր, որոնք չեն նախատեսված գլխի վերնագրի մեջ, Աշոտ Բագրատունին թագ կապեց Հայաստանում, Համամ՝ Աղվանքում: Տաճիկը (իմա՛ Ափշին Սաջիկը) հարձակվեց Հայաստանի վրա, ձերբակալեց Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին, և ապա ազատ արձակեց Համամի բարեխոսությամբ Հայոց 346 թվին =893-894 թիվը:

Չորս տարուց հետո, նոր տարվան, Ջատիկ օրը =16 ապրիլի 898 թվի, Ապու Ալի Աղվանից իշխան Հայկազունին սպանվեց «յիւրմէ հարազատէն Սմբատայ»: Նույն տարին Հայոց Սմբատ թագավորը պարտվեց «Ասորեստանում», կռվում ընկավ Աշոտ իշխան Հայկազունի: Քիչ հետո յուրայիններից սպանվեց Վասպուրականի իշխան Ապումրվան: Ափշին նորեն հարձակվեց: Գևորգ Գառնեցի կաթողիկոս մեռավ 346 թվին = 897-898 թիվը: Հայոց Սմբատ Ա թագավոր սպանվեց 363 թվին = 914-915 թիվը: Այս բոլորը հայտնի են Թովմա Արծրունու[1] *և Հովհաննես Կաթողիկոսի*[2] *երկերից և պետք չենք տեսնում կանգ առնել նրանց քննության վերա, մանավանդ որ այդ արել ենք արդեն Աշոտ Բ Երկաթին նվիրված գործում*[3]: *Անծանոթ է այլուստ Ապու Ալի և Սմբատ եղբայրների աղետալի ընդհարումը: Արաբական իշխանությունը «սպառի» այդ միջոցները և առաջ է գալիս Դելիմիկ (ոչ Գիլիմիկ) ազգը, որի պետը՝ Սալար, տարածում է իր բազուկը Ատրպատականի, Հայոց և Աղվանից վերա:*

Վերջին պատմական դեպքը, որ նկարագրում է մեր պատմագիրը ռուզիկ ժողովրդի, այսինքն՝ ռուսաց, արշավանքն է: Ռուզիկները Կասպից ծովով եկան հյուսիսից և խուժեցին Պարտավ քաղաքը: Սալարը անզոր գտնվեց նրանց հանդեպ: Շնորհիվ Պարտավ քաղաքի կանանց, որոնք «բաժակ մահու արբուցանէին ռուզացն», քաղաքն ազատվեց այս անսպասելի թշնամուց՝ վեց ամիս նրանց ձեռքին մնալուց հետո:

Սալարի բուն անունն է Մուհամմադ իբն Մուսափիր ալ-Մարզպան, որ իրոք տեր դարձավ Ատրպատականի, Հայաստանի և Աղվանքի (941-957): Աբուլ ալ-Կասիմ իբն Հավկալ Հիջրի 336 թվի շավալ ամսի 2-ին=16 ապրիլի 948 թվի, ղրկվեց Բաղդադի իշխանության կողմեն խազարաց խաքանի մոտ դեսպանությամբ: Նա անցավ Հայաստանից, Աղվանքից և պատմում է, որ չորս տարի առաջ, ուրեմն Հիջրի 332 թվին =943-944 թիվը, ռուսները ասպա-

---

[1] **Թովմա Արծրունի,** Դպրությունն Գ, գլ. ԻԲ, ԻԳ և այլն:

[2] **Հովհաննես Դրասխանակերտցի,** էջ 131:

[3] **N. Adontz, Aïot Erkat՝ ou de fer, roi d'Arménie de 913 a 929. „Annauaire de L'Institut de philologie et d'Histoire orientales", t. I (1932-1933), Bruxelles, 1935, p. 13-35.**

տակեցին Աղվանք և մնացին մի տարի Պարտավ: Սալար Մուհամմադ իրն Մուսափիր ալ-Մարզպանը չկարողացավ դեմ առնել: Հետ քաշվեց, նոր զորք հավաքեց թշնամու դեմ, բայց այս միջոցին Միջագետքի Համդանյանները բանակ ղրկեցին գրավելու Ատրպատականը և Սալար ստիպված էր պաշտպանվել այս նոր հակառակորդի դեմ: Սրան հետ մղելուց հետո միայն հաջողեց քշել ռուսներին: Իրն Հաուկալ պատմում է եղելությունը, ինչպես ականջամբ լսել է Սալարի բերանից[1]: *Սալարը, անտարակույս, չափազանցրել է իր իշխանության սահմանները, հավատացրել արաբ ճանապարհորդին, որ ինքը տեր է ոչ միայն Ատրպատականի և Աղվանքի, այլև Հայքի: Ցիրակացի այդ երկրների միայն մի մասի վերա էր իշխում* (25):

[1] M. D'Ohsson, Des peuples do Caucase, pp. 108-115, 249-253.

ՓՂՈՍԿՐՅԱ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Գեղեցիկ աշխատություն՝ նվիրված հայ արվեստի պատմության: Պրոֆ. Ստրժեգովսկին մեծապես գնահատել է Էջմիածնի հռչակավոր Ավետարանի գեղարվեստական արժեքը: Սակայն ինչպես փղոսկրե կազմը, այնպես էլ սկզբի սքանչելի խորանները և նկարները համարում է ոչ հայ արվեստի ծնունդ, այլ ասորական ժառանգություն, հնուց մնացած (1): Պրոֆ. Մակլերը մոտեն քննելով նկարների թուղթը և համեմատելով ձեռագրի թղթի հետ՝ չվարանեց հայտարարելու, որ նկարները կազմում են ձեռագրի հարազատ մասը և ուրեմն հայ ծաղկողի գործ (2):

Օր[իորդ] Տեր-Ներսեսյան, որ արվեստի պատմության մեջ արդեն մասնագետի հռչակ ունի (3), մանրակրկիտ և ուշիմ ուսումնասիրության նյութ է շինել վիճելի նկարները: Համեմատել է մյուս հին Ավետարանների նկարչության հետ, զուգակշռել հին ասորական և հունական համանման գործերի հետ և հանգել այն եզրակացության, որ Էջմիածնի Ավետարանի նկարչությունը բացառիկ երևույթ չէ, այլ ներկայացնում է մի ոճ, որ հատուկ էր հայ արվեստին IX, X և XI դարերում: Ապա ուրեմն ոչ մի հիմք չկա կասկածելու, որ հայ գործ է և ո՛չ ասորական VI դարից հասած պատահական մի ավանդ:

Արդյո՞ք նկարները ժամանակակից են ձեռագրին. հեղինակը, ճշմարիտ է, ուղիղ պատասխան չունի, բայց իր դատողության թելը տանում է այդ կետին, որ նկարները ևս 989 թվից են և հարազատ մասը ձեռագրի: Ահա այստեղ է, որ համամիտ չենք շնորհալի օրիորդին կամ ավելի ճիշտ, որոշ վերապահումի պետք ենք տեսնում:

Ավետարանի հիշատակարանը պահված է (4): Գրքի ստացողը Ստեփանոս քահանան հավակնոտ ոճով պատմում է իր հորեղբոր՝ Ստեփանոս եպիսկոպոսի մասին: Նա էր շինել Նորավանքի եկեղեցին, որին ընծայաբերում է իր պատվիրած Ավետարանը Ստեփանոս քահանան: Հիշում է, որ Ավետարանը գրված է «ստոյգ օրինակէ». կարծե՛ս, պատեհ առիթ էր, որ հասկացնել տար թե Ավետարանը սովորական ձեռագիր չէ, այլ և ծաղկած: Ո՛չ մի ակնարկ: Այս լռությունը արդյո՞ք նշան չէ որ Ավետարանը այդ առավելությունը չուներ:

Բացի սրանից, Եվսեբիոսի առ Կարպիանոս ուղղած թղթի գիրը տարբեր է, քան ձեռագրինը և չէ կարող պատկանել միևնույն գրչին: Հետևապես և խորանը, որի մեջ ամփոփված է թուղթը, ևս խորթ է ձեռագրին:

Ավելի կարևոր հանգամանք: Բուն ձեռագրի մեջ Ավետարանների բնագիրը բաժանված չէ եղել ո՛չ գլուխների, ո՛չ ընթերցվածների և ո՛չ իսկ համաբարբառյան հատվածների: Հետագայում մի օտար ձեռք նշանակել է լուսանցքում բաժանմունքներ և մանավանդ համաբարբառի կանոններ ստորին լուսանցքում և բնագրում համապատասխան տեղը: Պարզ երևում է, որ բնագրի մեջ հետո է ավելացրած տողերի կողքին և երբեմն անհաջող: Մյուս կողմից Եվսեբյան համաբարբառի տախտակները կամ կանոնները գտնվում են ձեռագրի սկզբում, զետեղված վեց երկսյունամար և մի եռասյունամար խորանների մեջ: Արդ եթե այս կանոնները և խորանները ձեռագրի բուն գրչով են գրված, ինչպես բացատրել, որ նույն գրիչը անփույթ է գտնվել նշանակել նույն կանոնները և ձեռագրի մեջ, առանց որի կանոնների տախտակները ո՛չ մի իմաստ չունեն: Բնական է ենթադրել, որ տախտակները և նրանց հետ մյուս նկարները, որ նույն ոճի գործեր են, գրչին անծանոթ են եղել և ավելցրած են հետագայում: Ինչպես երևում է, նրանք անծանոթ են եղել նմանապես այն հին գրչին, որ մտցրել է համաբարբառյան կանոնները ձեռագրի մեջ, եթե դատելու լինենք այն հանգամանքից, որ նրանք երբեմն շեղվում են խորանների տախտակներից և ուրեմն ուրիշ օրինակից են վերցրած և ոչ խորանից: Այսպես՝

Խորանում նշանակված է՝

Մատ.	Մարկ.	Ղուկ.
ճղթ	ճժա	ճհգ.

Իսկ ձեռագրի մեջ ստորին լուսանցքում՝

Մատ.	Մարկ.	Ղուկ.
ճղը ճղթ	ճժա	ճհգ.

Այս դիտողությունները հարկադրում են որոշ խոհեմություն. ընդունելով հանդերձ որ Ավետարանի նկարները հայ արվեստի արդյունք է՝ համաձայն օրինաւորդ] Սիրարփի Տեր-Ներսեսյանի հետազոտության, պետք է առայժմ առկախ թողնել ժամանակի խնդիրը: Մեր կարծիքով նրանք ժամանակակից չեն ձեռագրին, ավելի ճիշտ ասած, նրա մասը չեն կազմած սկզբից ևեթ: Կարելի է հին են, գուցե և ավելի նոր, քան ձեռագիրը, թեև ավելի մեծ հավանականություն կա ավելի հին համարելու, նկատի առնելով գեղարվեստական խոշոր արժեքը: Ով գիտե, գուցե նրանց բախտը կապված է եղել փղոսկրե կազմի հետ: Այդ հրաշալի կազմը արդյո՞ք առաջ, քան ընդգրկելու Էջմիածնի Ավետարանը չէ ամփոփած իր մեջ մի ավելի հին և թերևս ավելի

զմայլելի ծաղկյալ Ավետարան և սրա մնացորդները չեն արդյոք այն խորանները և նկարները, կազմի հետ անցած 989 թվի Ավետարանին:

Օրիորդի գործը մեզ առիթ տվեց զբաղվել Մլքեի Ավետարանի խնդրով: Թվում է թե կարելի է լուծված համարել նորա գրության ժամանակի կնճռոտ հանգույցը հարցին նվիրված մեր հոդվածին մեջ (5):

ՄԼՔԵԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆ

Վենետիկի Մխիթարյանների գրատան զարդը, Մլքե թագուհու հռչակավոր Ավետարանը (1), քե՞ր է գրված, վեճի նյութ է:

Մխիթարյան հայրերը համակարծիք չեն այս խնդրում: Հայր Ալիշան և հայր Հացունի կարծում են, որ Ավետարանը գրված է 902 թվին, հայր Բարսեղ Սարգիսյան պնդում է, որ ձեռագիրն ավելի հին է, գրված 851 թվին և նվիրված Վարագավանքին Մլքե թագուհու կողմեն 922 թվին: Որտեղի՞ց է ծագում այս տարաձայնությունը:

Ավետարանի՝ հիշատակարանում կարդացվում է՝

ՅՕԱ Ֆ. Արաց իզ, բ
Արեգ զ, ե:

Թոլորն էլ համաձայն են վերագրելու այս հիշատակությունը ձեռագրի գրչին: Միայն քե մինչ հ. Ալիշան և հ. Հացունի կարդում են ՅՕԱ = 351, ուրեմն 351+551 =902, հ. Բարսեղ Սարգիսյան տեսնում է՝ ՅՀԱ= 371, ուրեմն 922 և որովհետև ձեռագրի լուսանցքում նկատվում է խոշորաձև մի տառ նման Յ-ի = 300, ենթադրում է, որ այս է գրության տարին 300 + 551 = 851, իսկ 922-ը թագուհու ընծայաբերության տարին է: Ահա խնդրի էությունը:

Որքան մեզ հայտնի է գրաղվողներից և ոչ մեկը ուշ չէ դարձրել և հաշվի չի առել վիճելի տարեթվին հետևող վկայությունը, որ գրիչը սկսել է գրել Արաց ամսի 28-ին, երկուշաբթի օր և վերջացրել Արեգ 6-ին հինգշաբթի օր: Ֆ. Մակլերը Ասողիկի թարգմանության առաջաբանում անդրադարձել է մեզ զբաղեցնող խնդրին և հարցական նշան դրել ամսաթվերից հետո նշանակված բ. և ե. տառերի առաջ: Կարելի է վստահորեն ջնջել հարցականը, քանի որ անտարակույս է, որ $\overline{բ}$ նշանակում է երկուշաբթի և $\overline{ե}$ հինգշաբթի: Գրիչը իրեն գովելի է արել տալով մեզ այդ այլապես աննշան, բայց այս դեպքում արտակարգորեն կարևոր պարագան: Այստեղ է թաքնված վիճելի հարցի ճշմարիտ բանալին:

Նախ ստուգենք գրչի վկայությունը: Արդյո՞ք ճշմարիտ է, որ եթե Արաց 28-ը երկուշաբթի է, Արեգի 6 կլինի հինգշաբթի: Արաց 28-ից մինչև Արեգ 6 կանե 38 օր (Արաց 2+Մեհեկան 30+ Արեգ 6) կամ հինգ լրիվ շաբաթ և երեք օր: Հաշվելով երկուշաբթիից՝ երեք օրերը կգան՝ երեքշաբթի, չորեքշաբթի և

հինգշաբթի: Ուրեմն միանգամայն ճիշտ է, որ եթե Արաց 28-ը երկուշաբթի է Արեգի 6 կընկնի հինգշաբթի: Այժմ հարց է, ո՞րն է այն տարին, որի ընթացքին Արաց 28 երկուշաբթի է և Արեգի 6 հինգշաբթի: Ահա մի հաստատուն միջոց կշռելու առարկելի տարեթվին արժեքը: Առնենք 902 թիվը:

Նավասարդի մեկը համապատասխանում է 902 թվին, ապրիլ 15-ին, և Արաց 28-ը՝ հոկտեմբերի 9-ին: Հաշիվը պարզ է. Նավասարդի 1-ից մինչև Արաց 28-ը կանե 178 օր. հաշվելով ապրիլ 15-ից 178 օր կգանք հոկտեմբերի 9-ը: Շաբաթվան ո՞ր օրն է հոկտեմբերի 9-ը նույն 902 տարին սկսում է ուրբաթով. հունվարի 1-ից մինչև հոկտեմբեր 9-ը = 281 օր է, կամ 40 լրիվ շաբաթ և մի օր: Ուրբաթով սկսված շաբաթները կվերջանան ուրբաթով և հաջորդող մի օր կգա՝ ***շաբաթ:*** Հետևաբար վճռական է, ճեռագիրը չէ գրված 902 թվին, որովհետև այս թվին հոկտեմբերի 9-ը = Արաց 28 շաբաթ էր և ոչ ***երկուշաբթի:*** Սենում է խոնարհել թվականն անսուտ լեզվի առաջ և հրաժարել 902 թվից:

Փորձենք այժմ մյուս տարեթիվը 851 թվականը նույն եղանակով:

851 թվին Նավասարդը սկսում է ապրիլ 28-ին և հետևաբար Արաց 28 ընկնում է հոկտեմբեր 22: Նույն տարին բացվում է հինգշաբթիով. հունվարի մեկից մինչև հոկտեմբեր 22 = 294 օր, կամ 42 շաբաթ, ուրեմն վերջին օրը 22 հոկտեմբերը նույնպես հինգշաբթի է, մինչդեռ սպասելի էր երկուշաբթի: Ապա ուրեմն 851 տարին ևս գրության տարին չէ: Դարձյալ անառարկելի փաստ[1]:

Հայր Բ. Սարգիսյան, տեսանք, որ հնարավոր է համարում ՅԾԱ կարդալ ՅՀԱ = 922: Թերևս կարծողներ լինին, թե այս է գրության տարեթիվը: Բարվոք է ստուգել և այս: Նավասարդ մեկ = ապրիլ 10, և Արաց 28 = հոկտեմբեր 4: Տարին սկսվում է երեքշաբթիով և հոկտեմբեր 4 = ուրբաթ: Հունվարի մեկից մինչև հոկտեմբեր 4 = 276 օր, կամ 39 շաբաթ և 3 օր: Հաշված երեքշաբթիից՝ երրորդ օրը, որ է հոկտեմբեր 4 = Արաց 28 կնե ***ուրբաթ:*** Որոնելի տարին Արաց 28 երկուշաբթի էր և ոչ՝ ուրբաթ: Հետևաբար 922 թիվը նմանապես խոտելի է առանց որևէ հակառակության:

Ե՞րբ է իսկապես գրված Մլքեի Ավետարանը:

Տեսանք, որ ի. Ալիշան և ի. Հացունի կարդում են ՅԾԱ, իսկ հայր Բ. Սարգիսյան, ՅՀԱ: Երեքն էլ հավասարապես քաջավարժ են հայ հնագրության,

---

[1] Ավելորդ չենք համարում հիշել, որ տարվան առաջին օրը մենք անվանում ենք Prof. Hans Lietzmannի գրքից («Zeitrechnung»): Ավելի դյուրին և բոլորին մատչելի միջոց է, գտնել թե զատիկը ե՞րբ է գալիս տվյալ տարին և որովհետև զատիկը միշտ կիրակի օր է ընկնում, ըստ այսմ հաշվել և խնդրելի օրը տարվա մեջ: Այսպես, 851 թ. զատիկ = մարտի 22 կիրակի: Այստեղից մինչև հոկտեմբեր 22 = 214 օր, կամ 30 շաբաթ և 4 օր: Հաշվելով կիրակիից՝ չորրորդ օրը, որ է հոկտեմբեր 22 կգա ***հինգշաբթի***:

որպես երկարամյա մատենադարանապետներ այնքան ճոխ ձեռագրատան: Եվ եթե այնուամենայնիվ տարաճայն են միջին տառի նկատմամբ, նշանակում է, որ տառը իրոք վիճելի կերպարանք ունի ազատորեն գծված լինելու պատճառով, և քանի որ ո՛չ *ծ* է և ո՛չ *հ*, անշուշտ մի ուրիշ տառ է, որ նմանություն ունի երկուսի հետ: Այդպիսին է հարկավ *ժ* տառը: Փորձենք կարդալ յԺա = 311, ուրեմն 862 թ. և տեսնենք հետևանքը ցայժմ կիրարկված մեթոդով:

Նավասարդի մեկ 862 թվին = ապրիլ 25 և Արաց 28 = հոկտեմբերի 19: Տարին սկսվում է հինգշաբթիով և հոկտեմբերի 19 գալիս է ***երկուշաբթի*** օր (հունվարի մեկից մինչև հոկտեմբեր 19 գումարվում է 291 օր, որ կանե 41 շաբաթ և չորս օր. հետևապես վերջին՝ այն է չորրորդ օրը, կգա երկուշաբթի՝ հաշված հինգշաբթիից): Արեգի 6 կհամապատասխանե նոյեմբեր 26, ***հինգշաբթի:***

Այս համաճայն է Ավետարանի հիշատակարանին: ***Սկբ թագուհու Ավետարանը գրված է ո՛չ 851 և ո՛չ 902 կամ 922, այլ 862 թվին, հոկտեմբեր 19-ից մինչև նոյեմբեր 26-ը, սկսված երկուշաբթի և վերջացրած հինգշաբթի օր:***

Սխիթարյան հայրերին է մնում վերստին քննել և զննել հիշատակարանը և իրենց հավանությունը բերել, հաստատելու համար, որ հայ հնագույն ձեռագրի պատիվը այսուհետև անցնում է Լազարյան Ճեմարանի Ավետարանից (2) Սկբ թագուհու Ավետարանին, 25 տարով ավելի ծեր, քան առաջինը:

ՇԱՀՆԱՄԵԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՎԱՆԴԸ

Ֆիրդուսիի ծնունդը Շահնամեի ծնունդն է (1): Լոկ գրական տոն չէ: Մի հանգած, խոշոր քաղաքակրթության հիշատակի պանծացումն է ճիշտ այն ժամանակ, երբ Իրանն ուզում է վերջապես թոթափել աջեմական մեղկությունը և իր անցյալին վայել տեղ բռնել լուսավոր երկիրների շարքին:

Կան երկեր, որ ծնվում են աղմուկով, ապրում վայելչության մեջ, բայց ի վերջո գնում են հանգչելու մոռացության փոշու տակ: Քչերին է վիճակված դեմ տալ ժամանակի քմայքին և մնալ կանգուն որպես մշտնջենական արժեք: Պարսիկ մեծանուն բանաստեղծի գործը երջանիկներիցն է. ճշմարիտ է, որ իրրև պատմություն նա տկար է. իրրև գրականություն՝ տարտամ և միալար, բայց և այնպես հազար տարի է, որ պահել է իր հմայքն ու այժմ փառաբանվում է տոնական հանդիսավորությամբ:

Ֆիրդուսիի գործը ստվար և ծավալուն է. բազմաբովանդակ և բազմերանգ. պատմականն ու առասպելականը, իրականն ու երևակայականը, քնարական հոսուն մրմունջներ, խոր և թախծոտ խորհրդածություններ ամեն առթիվ, դյուցազնական ուրույն դրվագներ, և վերջապես մայրենի հարազատ բարբառ, որ հոսում է մերթ հառաչելով, մերթ քրքջալով, երբեմն զվարթ, երբեմն մելամաղձոտ ալիքներով, մի խոսքով մի անսպառ գանձարան, որ պարունակում է ամեն հասակի և ամեն ճաշակի պատշաճ գոհարներ:

Իր ամբողջության մեջ Շահնամեն կրում է Իրանի, նախամուսուլման Իրանի փառքը, հոշոտված, բայց հարության շունչը պահած:

Արաբական տիրապետությունը կտրել էր պարսից պետական կյանքի թելը՝ բայց ոչ ընդմիշտ: Պարսիկները հավատացած էին, որ արաբական լուծը պիտի տևե ոչ ավելի, քան չորս հարյուր տարի: Ժամանակը լրանում էր XI դարի կեսերին: Ասել է, թե Ֆիրդուսիի մահից մի քանի տասնյակ տարուց հետո Իրանը պիտի վերածնվեր քաղաքականապես: Շահնամեն, լայն ըմբռնումով, ոչ այնքան անհատական ներշնչման և կամ անհատական նախաձեռնության արդյունք էր, որքան ծնունդ մոտալուտ ազատության երազներով խանդավառված հանրային գիտակցության: Եվ միանգամայն գաղափարական ատաղձ էր նոր կանգնելի պետական շենքի:

Ազատագրական ակնկալությունները սին երազներ չէին: Երկրի զանազան մասերում կային արդեն քաղաքական հնոցներ: Արաբական բռնակալությունն այլևս ահարկու չէր: Մի ուժգին թափ և երկիրն ազատված էր:

Սակայն մի բան չէր նախատեսվել, թուրանական արշավանքը, ի դեմս սելջուկների, որ փշրեց վերածննդության բոլոր հույսերը: Ֆիրդուսին սպանել էր տվել Աֆրասիաբին. ասել է թե վտանգ չէր սպասում Թուրանից: Այլև արաբական ծագում էր տվել հրեշավոր Զոհակին, որի ուսերից իժեր էին ելնում և մարդկային ուղեղով կերակրվում, այնինչ սկզբնական վեպում Զոհակը ևս Թուրանի զավակն է, այն Թուրանի, որի կոչումն էր լափել քաղաքակրթություն կոչված ուղեղները...:

Համենայն դեպս Ֆիրդուսիի դարում Իրանի վերածննդության հավատը կենդանի էր: Նա գաղափարախոս եղավ գալիք ազատության և վերակենդանացրեց անցյալը ի սպաս մոտիկ ապագայի: «Ես Հիսուս եմ», - բացականչում է հանդգնորեն բանաստեղծը, որովհետև Ղազարոսյան հարություն տված մեռյալ Իրանին: Իհարկե, Ֆիրդուսին ներկայացնում է անցյալը ոչ հնագետի ստուգությամբ, այլ ինչպես ժողովրդական հիշողությունը պահել է իր գրավոր և անգիր ավանդություններում: Շատ բան մոռացված է: Բավական է հիշել, որ Աքեմենյան և մասամբ Պարթևյան շրջանները անտես են առնված: Սակայն ինչ որ զարմանալի է, պատմության ոգին մանավանդ երկու հիշյալ շրջանների նկատմամբ պատկերացած է հարազատորեն: **Էրաջը**, այսինքն՝ Իրանը, երկու եղբայր ուներ, **Սալմ** և **Թուր**. երկուսն էլ թշնամի **Էրաջին**: Նրանց նենգության զոհ գնաց **Էրաջը**: Սրա սերունդը ի դեմս Մանուչարների և Ռոստոմների կատաղի կռիվ մղեց **Սալմի** և **Թուրի** ժառանգների դեմ: **Սալմ** և **Թուր** անվանակետեր են (էպոնիմ) սարմատական և թուրանական ցեղերի (**Սալմի** հին ձևը **Սարմ** է): Արդարև, Աքեմենյան շրջանում սարմատներ, իսկ պարթևյան և հետագա դարերում Թուրանի կամ թուրանյան ցեղերն ահավոր սպառնալիք են եղել պարսկական պետության: Իրանի պատմական երախտիքն է, որ հետ ժառանգելով Միջագետքի մեծ քաղաքակրթությունը ոչ միայն պահեց և ուռճացրեց իր ստացածը, այլև դարեր շարունակ պաշտպանեց իր և Առաջավոր Ասիայի խաղաղ աշխարհաշինությունը հեռավոր Արևելքից պարբերաբար խուժող վայրենի ցեղերի ավերածություններից դեմ: Ինչ արժանիք և ունենաս արաբները, անպայման պատասխանատու են, որ տապալելով պարսից պետությունը, չկարողացան փոխարինել նրա պահապանի դերը և փրկել քաղաքակիրթ Արևելքը թուրանական Արևելքի վայրենությունից: Այն խորհրդավոր Գայլը՝ թե գայլանման Գազանը, որ առաջնորդում էր իրենց իսկ ավանդությամբ թուրքական ցեղերին՝ դարերե ի վեր ոռնում էր Իրանի սահմանագծի վրա, սովալուկ և արյունռուշտ, պատրաստ լափելու շեն աշխարհները, բայց չէր հանդգնում անցնել պարսիկ նիզակների պատնեշը: Ակներև է, որ եթե իրանական կազմ պետականությունը չքայքայվեր արաբական աշխարհակալությամբ, նա ի

վիճակի պիտի լիներ վանել սելջուկ, մոնղոլ և թաթար հեղեղները դեպի հյուսիսային հեռաստանները, ինչպես վանեց իր ժամանակին հոների ոչ նվազ կործանարար արշավանքը:

Ֆիրդուսին գիտե Իրանի այս դերը, գիտե որ Թուրանը զսպված է եղել դարերի ընթացքում. ուստի և թաթարական վտանգ չէր սպասում: Այս է թերևս պատճառը, որ Սալմին տալիս է թաժին Արևմուտքը, և Զոհակը կամ հռչակավոր Աժդահակը կերպարանափոխվում է արաբի: Սակայն Արևմուտքի ներկայացուցիչ կամ արևմտյան մեծ պետության մարմնացումը Աղեքսանդրն է: Նա քրիստոնյա է ըստ Ֆիրդուսիի, այսինքն՝ բյուզանդական քրիստոնյա պետության դիմառնությունն է: Զարմանալի է, որ Իրանի զավակը և իսլամի հոգևոր ծնունդը ատելություն չունի դեպի Իրանի դարավոր ախոյանը, այլ ընդհակառակը, համակրանք է տածում. արդյո՞ք նրա համար, որ Բյուզանդիան հակառակորդ է ատելի արաբներին: Թերևս: Բայց թվում է, թե այս վերաբերումը մասամբ արձագանք է Իրանի հին ավանդության, Պարթևյան շրջանի արևմտասիրության: Պարթևյան պետությունը կանգնած էր հելլենիստական քաղաքակրթության գետնի վրա: Կռվելով հանդերձ Հռոմի հետ, բնավ չէին խրտնում հելլենիստ լուսավորությունից, պարթև թագակապները պատիվ էին համարում կրել հելլենասեր և նման տիտղոսներ: Այս տեսակետով պարթև հարստությունը առաջադեմ, լուսամիտ և մարդասեր էր ավելի, քան Աքեմենյանը և Սասանյանը:

Սիրել քրիստոնյա արևմուտքը՝ նշանակում է հաղթահարել դարու կրոնական մոլեռանդությունը: Ֆիրդուսին սիրում է իր կրոնը, բայց մոլեռանդ չէ: Հարգանք ունի բոլոր կրոնների հանդեպ, որովհետև այն հայացքը ունի պատմության վերա, որ դեկավար ուժը բանականությունն է և ոչ հավատը, որի նյութը, աստվածությունը, անհաս է և անմատչելի մեր բնության: Շահնամեն խիստ խոշոր գործ է, որպեսզի գաղափարական ներդաշնակություն պահպանված լինի ամենուրեք: Բանաստեղծը, որովհետև բանաստեղծ է, գերի է իր տրամադրությանց և հաճախակի օրորվում է զգացումների ալեկոծության մեջ, երբեմն սավառնում է դեպի բարձունք, երբեմն շրջում ժամանակի նախապաշարումների և ընդհանրացած հասկացողությունների տափաստաններում: Անհետևողականությունը, որ նկատելի է ներհակ հայացքների տարօրինակ ելևէջների մեջ, մասամբ վերագրելի է այն աղբյուրներին, որոնցից օգտվել է: Այլևայլ ժամանակի և այլազան շնչով և ոգով գրված հիշատակարաններ են եղել իր տրամադրության տակ: Բանաստեղծի գործը չէր հարթել հակասությունները և շարել գաղափարական թելի վրա: Այն բարձր թռիչքները, որոնցով նա վերանում է երբեմնակի իր դարու մտավոր մակարդակից շատ վերև քավում

են նորա քուլությունները: Այսպես կրոնական համբերատարությունը Ֆիրդուսիի քանկ զարդերիցն է, «թագավորը պետք է հավատ ունենա, բայց հպատակների կրոնական տարբերությունը քնավ վատ բան չէ»: Նման մի միտք արտահայտված այնպիսի մի դարում, երբ մարդկային խղճի և մտքի վերա ծանր շղթաներ էին կախված, երբ բարեպաշտ կայսրերը չէին հանդուրժում անգամ եկեղեցու այլադավան զավակներին, անտարակույս մեծության շուք է բերում հեղինակին: Հարգել կրոնը, նշանակում է հարգել ազգությունը, որովհետև կրոնն էր այն ժամանակ դրոշակակիր ազգության և ազգային արժեքների, գիտության, արվեստի, հոգևոր հարստության:

Այս ազատամիտ հայացքը ևս կապում է Ֆիրդուսիին գաղափարապես Պարթևյան շրջանին: Պարթևների ժամանակ էր, որ իրանյան և հելլենական աստվածները համարվում էին համազոր և վայելում հավասար պաշտամունք:

Շահնամեի հարուստ գանձարանը պրպտելու նպատակ չունեմ: Շատանանք երկու հիշյալ քանկագին մարգարիտով՝ սեր արևմտյան քաղաքակրթության և հարգանք ազգային սկզբունքի:

Երկու հասարակ ճշմարտություն, որին Արևելքը վաղուց ծարավի է, և որը մեծ բանաստեղծը թողել է սրբազան ավանդ նույն Արևելքին, որպես անհրաժեշտ պայման առաջադիմության և ճշմարիտ երաշխիք ազգերի հավաք և համերաշխ գործակցության: Այս և միայն այս բավական է, որ արևելյան ժողովուրդները, որ ապրել են և ապրում են Առաջավոր Ասիայի երկնքի տակ, երջանիկ, քե բախտազուրկ, գլուխ խոնարհեն պաշտամունքով հազարամյա դամբարանի առաջ, լի հավատով, որ Իրանը և հարևան երկրները պիտի հիմնեն իրենց վերածնունդը այդ սկզբունքների վրա:

Օրվան տոնակատարությունն արդեն գրավական է, որ հույսերը ապարդյուն չեն: Պատահական երևույթ չէ, որ Ֆիրդուսիի հիշատակը տոնված է այժմ և միմիայն այժմ, երբ Իրանի վերածնունդը առաջանում է **պահլավ** դրոշի տակ (2): Ֆիրդուսին ունեցել է ուրիշ տարեդարձեր և ոչ-ոք չէ մտածել վերհիշելու նրա անունը: Բնական է, որ պիտի հիշեր հազարամյա ծերունուն նա, որ այնքան քանկ էր Ֆիրդուսիին: **Պահլավ** և **Պարթև** միևնույն բառերն են, մեկը նոր ձև, մյուսը՝ հին: Պարթև հայերենում հասարակ անուն է դարձել լավագույն իմաստով, իսկ **պահլավ** տվել է Իրանում **փահլևան** բառը, որ նշանակում էր նախապես հերոս: Այդպես են կոչվում Շահնամեի հերոսները: Մի պերճ ապացույց, քե որքան բարձր է գնահատել ժողովուրդը Պարթև տիրապետության ոգին և ազնվացրել իր հիշողության մեջ:

Պահլավի անվան ընտրությունը քվում է, քե գիտակցական է և

խորհրդավոր: Հասարակ տիտղոսի հանգամանք չունի, այլ նշանաբան է, որոշ ծրագիր: Ասել է, թե Պարսկաստանի վերածնությունը խոստանում է պահլավյան ոգի, պարթևյան լավագույն ավանդությունների վերակենդանություն: Եվ այս կլիներ մեծագույն հարգանքը փահլևանների երգչի անմահ հիշատակին:

Ֆիրդուսիի տոնը, որպես քաղաքակրթական հայտնություն, մոտ է հայերիս սրտին (3), որովհետև քաղաքակրթության և լույսի անունով է, որ այնքան արյուն ենք թափել: Բարեկամ ենք և նպաստող ոչ միայն Իրանի, այլև Առաջավոր Ասիայի մյուս երկրների վերածնության: Դարեր շարունակ հալածվել ենք խավարամիտ բռնությունից միմիայն նորա համար, որ երեսներս դարձրել էինք դեպի լուսավոր Արևմուտքը, դեպի քաղաքակրթության լույսը: Այժմ այդ լույսն է, որ գալիս է փարատելու Արևելքի ոճրագործ խավարը: Այստեղ է մեր պայքարի և մարտիրոսության հաղթանակը:

Ֆիրդուսիի տոնը առաջին ցոլքն է այն լուսավոր իրականության, որի մասին երազել ենք մեր կյանքի խավարչտին բանտերից և որը պիտի շաղկապե արևելյան ժողովուրդները ազգային անհատականության և միասնական աշխատակցության և հանուր քաղաքակրթության հողին վերա:

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՑԻ

Ի մասին Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանի «Հոգևոր կեդրոններ և Գլաձորի բարձր դպրոցը» ուսումնասիրության

Գերապատիվ և սրբազան Հա՛յր (1),

Գարեգին արքեպիսկոպոսի աշխատությունը, որ հաճել էիք դրկել ինձ, ստացած եմ իր ժամանակին և մեղապարտ եմ, որ անմիջապես Ձեզ ոչինչ չգրեցի այս մասին, չգրեցի, որովհետև հույս ունեի, թե շուտով և հաճույքով պիտի կարողանայի կատարել Սրբազնությանդ պարտավորիչ պատվերը, մանավանդ որ հայր Գարեգինի գործերն իրենց ինքնահատուկ դրոշմով ինձ մոտեն ծանոթ լինելով՝ դժվար չէր ընավ առաջին ակնարկից նեթ գաղափար կազմել յուր այս նոր աշխատության մասին և արդյունքը Ձեզ հաղորդել: Սակայն ընթացիկ հոգսերը արգիլեցին և միայն այժմ հնարավորություն տվին աչքի անցնել. և ահա՛ ստորև հայտնում եմ Ձեզ տպավորություններս, որոնք Ձեզ համար նորություն չպիտի լինին, քանի որ հորդ հմուտ աչքը արդեն դատած և կշռած է անշուշտ գործի ակնհայտնի արժանիքները:

Հայ մշակույթի պատմության համար մի խոշոր նպաստ է Գարեգին սրբազանի «Թարգմանչաց -Դուրյան» մրցանակին ներկայացրած գործը՝ **«Հոգևոր կեդրոններ և Գլաձորի Բարձր դպրոցը»**: Այս գործը «Խաղ-քակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ» աշխատության շարունակություն լինելով հանդերձ (2), ինքն իրեն մի ամբողջություն է: Սովորական կարծիք է, որ Բագրատունյաց անկումից հետո հայ կյանքը գահավիժում է և մտնում մի խավար շրջան, գրեթե կանգ է առնում դարեր շարունակ կաշկանդված իր գործունեության մեջ՝ շնորհիվ իր շուրջը բռնացող օտարոտի կարգերի: Սակայն, հակառակ այն ծանր կացության, որ ստեղծվել էր Հայաստանում և ամբողջ Առաջավոր Ասիայում հեռվեն խուժած նոր և բարբարոս ժողովուրդների հեղեղումով, անուրանալի է, որ հայ կյանքը չէ մահացել: Հայ հեզ աշխատասիրությունը, շինարար ոգին և արթուն միտքը շարունակել են փայփլել զանազան կենտրոններում, ինչպես մշտավառ ճրագներ, և հավետ կենսունակության ապացույցներ տվել քաղաքակրթական նորանոր ճիգերով և ստեղծագործությամբ:

Արդ Գարեգին սրբազանը նպատակ է դրել ժողովել և ներկայացնել այն գանձերը, որոնք սփռված են անցույս համարված դարերում, հայ արվեստի

և գիտության գանձերը՝ քաղված փլատակների տակ և ճեռագրերի խորքերում: Ջաքարյանների շրջանում և նրանց շնորհիվ երևան են գալիս մի քանի իշխանական գերդաստաններ, որոնք հաջողում են խոհուն քաղաքականությամբ մեղմել ահարկու բռնակալության թափերը և ստեղծել տանելի պայմաններ խաղաղ աշխատանքի համար: Պռոշյան, Օրբելյան, Դոփյան, Ջալալյան, Վաչուտյան և այլն տոհմերը լուսաշող աստղեր են հայ մթին երկնակամարում, որ առաջնորդում են աշխարհաշեն և մտացի ուժերը: Հայր Գարեգինը ծրագրել է պանծացնել նրանց հիշատակը հատկացնելով յուրաքանչյուրին առանձին հատոր, սկսելով Պռոշյաններից: Արցախի Խաղրակյան տոհմի մի շառավիղն են Պռոշյանք, որ տիրացան XII դարի սկզբին Վայոց Ձորին և այն տեղ իշխեցին սերնդե սերունդ մինչև XIV դարը, ի դեմս Վասակի (†1224), Պռոշի († 1284), Պապաքի (†1298), Էալի († 1317), Ամիր Հասանի († 1351), Արղութի († 1385): Այնուհետև հաջորդական գիծը բեկվում է, բայց տունը չէ մարում, այլ առկայծելով հասնում է մինչև Իսրայել Օրին (†1711)՝ Պռոշյան քաջարի տան վերջին զավակը, և մեր նոր հայրենասիրության վերջին երազուն դեմքը: Ժամանակակիցները գնահատել են արժանապես Պռոշյան տան նշանակությունը, անվանելով Պռոշին «զարդ հեծելի, որ զերկաթի դուռն առնէր փոշի, աջու բազուկ Նոր Սիոնի, հիմն հաստատ հայոց հաւատի» (3):

Պռոշյանց գործունեությունը քաղաքական և հասարակական ասպարեզում, նրանց շինարարությունը, կառուցած վանքերն ու բերդերը լուսաբանված են ամեն կողմից այն հատորում, որ Գարեգին սրբազանը լույս է ընծայել 1928 թվին[1]: Ներկա հատորը նվիրված է բացառապես նույն տոհմի հովանավորության ներքո ծաղկած հոգևոր կյանքի, մտավոր հոսանքների, որոնց կենտրոններ հանդիսացան Կեչառիսի, Այրիվանքի և Գլաձորի գիտական մենաստանները:

Այս հատորի և թե արդեն լույս տեսածի ատաղձը, հիմը կազմող փաստացի նյութերը գումարված են առանձին հատորում, կցած աշխատության որպես երրորդ մաս կամ հատոր: Սա բաղկացած է երեք բաժնից. առաջինը պարունակում է մերձավորապես երկու հարյուր արձանագրություն, երկրորդը մոտ հարյուր ճեռագրական հիշատակարան, և երրորդը՝ մի տասնյակ և ավելի մատենագրական նշխարներ: Հատուկ ուշադրության և գնահատանքի արժանի է մանավանդ այս ժողովածուն, որ հեղինակը հավելածական է համարում, բայց գործի ամենից կարևոր և

---

[1] Գ. Հովսեփյան, Խաղրակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ. Պատմահնագիտական ուսումնասիրություն, Վաղարշապատ, 1928:

մնայուն մասն է: Ճշմարիտ է, որ արձանագրությունների և հիշատակարանական քաղվածների մեծագույն մասը նախապես հայտնի էր հայ բանասիրությանը, շնորհիվ Հ. Շահխաթունյանի և Ս. Ջալալյանցի և Ա. Մխիթարյանի գործերին, որոնց լիակատար ամփոփումը տվել է հ. Ալիշան «Սիսական» և «Այրարատ» երկերում, բայց և այնպես հ. Գարեգինի ժողովածուն ունի նորության բոլոր առավելությունները: Անճամբ և տեղի վրա ստուգել է գրեթե բոլոր արձանագրությունները, որ իր նախորդները արտագրել են և ավելացրել նորերը: Շրջել է բազմաթիվ վայրեր և վանքեր շեն թե ավերակ, Բջնիից սկսած մինչև Վայոց Ձոր և Ջահուկ, դիտել և նկարագրել և երբեմն լուսանկարել այցելած վայրերը, շենքերի դիրքը, ներկա վիճակը, նշանակել է հավատարմորեն արձանագրությունների տեղը պատերի վրա, և ո՞ր մասում, թե փլատակների մեջ, մի խոսքով նախատեսել է բոլոր պարագաները, որոնք կարող են որևէ նկատումով պիտանի լինել հետազոտության ժամանակ: Համեմատել է տեղն ու տեղը առաջուց ծանոթ արձանագրությունների պատճենները և սրբագրել ամենայն բարեխղճությամբ և մասնագետի սուր և գիտակ աչքով: Չկա համարյա մի արձանագրություն, ուրիշներից արտագրած, ուր որևէ ուղղում կատարած չլինի, բառ թե տառ, թե ամբողջ նախադասություն և մանավանդ տեղի և անճանց անուններ:

Նույն վերաբերումը նկատելի է և ձեռագրական քաղվածների վերաբերյալ: Նշանակել է ձեռագիրները, նրանց թվականները, եթե հայտնի են, գրության տեղը, գրիչը և մանր հանգամանքներ, որոնք կարող են նպաստել հիշատակության պատմական, թե գրական արժեքը որոշելու:

Ահա այս եղանակով հավաքել է մի կողմից ձեռագրական հիշատակարանների մեջ թաքնված տեղեկությունները, զուգել, դասավորել և կազմել ամբողջական պատկեր այնպիսի խնամքով, այնպիսի սիրով, որ հազվագյուտ է մեր ամեն ինչ ուրացող դարում: «Հոգևոր կեդրոնները» հառնում են իրենց տխուր ավերակներից, քարերը՝ ծանրաբեռնված գրությամբ և պես-պես հիշատակներով սկսում են խոսել: Ձեր առջև են շեն մենաստաններ, որ ծաղկում են վանահայրերի հսկողության տակ, լի վանականներով, որոնք միայն աղոթողներ չեն, այլ վարդապետներ, ուսուցիչներ են, որ «դաս են ասում», ճարտար գրիչներ են, որ արտագրում են հնացած ձեռագիրները կորստից ազատելու համար նախնյաց ժառանգությունը, շնորհալի ծաղկողներ են, որ նկարազարդում են ձեռագիրները, և հմուտ ճարտարապետներ, որ վերականգնում են ավեր շենքերը և կառուցում նորերը: Քարեպաշտ մարդիկ այր թե կին, իշխանավոր թե համեստ աշխատավոր, չեն զլանում իրենց նվերները մեծ հաստատության, գիտնալով, որ այնտեղ են կռվում հայ ժողովրդի գոյության հիմ՝ բարոյական հիմքերը:

Շնորհիվ Պռոշյան տան հովանավորության սկսում է մի մտավոր շարժում, մի իրական վերածնունդ, որ շուտով տալիս է պանծալի դեմքեր՝ Խաչատուր Կեչառեցի, Հովհաննես Գառնեցի, Մխիթար Այրիվանեցի և վերջապես Գլաձորի Գիտուն Կաճառը բոլորված մեծ վարդապետի՝ Եսայի Նչեցու շուրջը:

Հայր Գարեգինը նկարագրել է խանդավառ ոգով այս նոր հոսանքը և նորա բարերար ազդեցությունը հայ արվեստի, գիտության և եկեղեցական քաղաքականության վերա: Առանց խախտելու հին գրականության և լեզվի իրավունքները, այլ ընդհակառակն մշակելով հին հեղինակների վերա իրենց միտքն ու աշխարհայացքը, նրանք սկիզբն դրին նոր և աշխարհիկ բանաստեղծության: Խաչատուր Կեչառեցին, Ֆրիկ, Հովհաննես Երզնկացին միջնադարյան հայ քնարերգության կարապետներն են:

Հանցգում զինչ աշնան քամին, որ քափէ զտերեւն
ի ծառէն,
Հողմով մեղանաց իմոց զրկեցայ յանանց պըտակէն *(4)*:

Ահա մի նմուշ, որ նոր է և՛ լեզվով, և՛ տրամաբանությամբ և մինչև իսկ չափով, որ հետևողություն է բյուզանդական *πολιτικὸς στίχος* կոչված չափածո գրության: Ուշագրավ երևույթ է:

Գառնեցու խրատներն ևս նորություն են իրենց աշխարհային բնավորությամբ. «Մի՛ լինիր կոշտ եւ կոպիտ, անհանճար եւ անիմաստ». «Մի՛ մնասցեն առ քեզ վարձք վարձականաց եւ աշխատութիւնք մշակաց». ***«Մի՛ քակեսցես զցանգ հայրենի եւ կամ արհամարհեսցես զեղեալ կարգս եւ զկանոնս նախահարցն»*** (5): Այս վերջին հրահանգը բնորոշում է լիովին նոր հոսանքի ոգին: Գարեգին Սրբազանը չէ մոռացել հիշել այն խոշոր դերը, որ կատարեցին Գլաձորի մթնոլորտում սնած գիտուն վանականները առնաբար ճակատ դնելով Կիլիկիայի եկեղեցականության թուլամորթ քաղաքականության հանդեպ օտար դավանությունների հավակնալից պահանջների: Պետք էր ավելի շեշտել, քանի որ ամբողջ հոսանքն ինքնին այլ բան չէր, քան հակազդեցություն «արևմտյան վարդապետների» տարտամ և սայթաքուն քաղաքականության: Ներսես Լամբրոնացին, որ կոչված էր նոր Շնորհալի լինելու Հայոց եկեղեցու համար, գերադասեց «մետաքսազգեստ» լինել օտարի նման, քան «խարազանազգեստ» իր նախնիքների հետևությամբ. և հիմը դրեց օտարամոլության. մի ախտավոր երևույթ, որ ավելի թեթևամտություն էր, քան ազատամտություն, և պիտի քայքայեր հայ եկեղեցու դարավոր կանգուն շենքը, եթե չլիներ արևելյան ախոյանների ընդդիմությունը: Գլաձորի դպրոցականների գիտական թե ազգայնական ոգին մի թանկագին ժառանգություն է ավանդած սերնդե սերունդ, ուսուցչից աշակերտ՝ Լամբրոնացու հակառակորդ Չորագետցիներից Գրիգոր

Տուտեորդի և Մխիթար Գոշ - Վանական - Վարդան Պատմիչ - Ներսես Տարոնացի - Եսայի Նչեցի: Գառնեցու խրատը՝ «մի՛ քակեսցես զցանգ հայրենի», ուղղված է տկարամիտ օտարամոլների դեմ: Պետք է ունենալ Ստեփանոս Օրբելյանի գաղափարական քաջությունը հայտարարելու՝ թե «հաւանիմք մեք ընդ հարսն ի դժոխս իջանել եւ ո՛չ ընդ հոռոմոց յերկինս ելանել». ասել է թե անտեղի և աննպատակ համարել վիճաբանությունները: Գլաձորի դպրոցի շարունակությունն է Տաթևի դպրոցը, Հոհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի մեծ հայրերով: Առանց այս դպրոցի՝ Միաբանողների քարոզչությունը շատ ավելի աղետաբեր հետևանքներ պիտի ունենար: Պռոշյանների օրով ստեղծված հաստատությունները պահեցին իրենց բարոյական ազդեցությունը մինչև հայրապետական աթոռի փոխադրությունը Էջմիածին 1441 թվին: Ահա՛ որպիսի նոր և ծավալուն լույս է սփռում Գարեգին Սրբազանի գործը մեր անցյալի մի խոշոր շրջանի վերա: Որպիսի ջանքով հավաքել է ցրված նյութերը, նույնպիսի սիրով մշակել է և սպառել հիմնովին իր հավաքածուն: ***Արձանագրությունների ժողովածուն, կրկնում ենք, մեծ գանձ է հայ բանասիրության՝ համար և անհրաժեշտ է որ հրատարակվի խնամքով. քերևս հիմ ծառայի ապագա*** **Corpus**-ի: Արձանագրությունները եղծվում և կորչում են և պետք է շտապել փրկել ինչ որ դեռ հնարավոր է անել: Հայր Գարեգինը նշանակել է ստորև իր կատարած սրբագրությունները. ցանկալի էր կցել նաև քննական դիտողություններ կամ մեկնություններ, լուսաբանելու համար մութ և շատ անգամ անհասկանալի կետեր: Պետք չէ կարծել, որ ինչ որ քարի վրա գրած է անպատճառ հարազատ է. քարը ևս թղթի նման անճարակ է կեղծիքի դեմ: Օրինակ Կեչառիս վանքի հիմնարկության վերաբերյալ արձանագրական վկայությունները հակասական են և կասկածելի: Սիմեոն կաթողիկոսին ծանոթ է եղել մի արձանագրություն ՆԽԴ = 995 թվից, որի համաձայն վանքի հիմնադիրը Ապիրատ իշխանն է (6): Մի այլ արձանագրություն ՆՁՔ = 1033 թ. այդպիսին համարում է «Գրիգոր Մագիստրոս որդի Հասանայ»՝ Գագիկ [I] թագաւորի և Սարգիս Ա կաթողիկոսի օրով: Մի երրորդ արձանագրական վկայությամբ եկեղեցին շինել է Գրիգոր Մագիստրոսը Կոստանդին [IX] Մոնոմախոս կայսրի հրամանով Ը = 1051 թվին: Վերջապես սույն թվից մի վերջին երկար արձանագրություն հայտնում է, որ Գրիգոր Մագիստրոսը Կոստանդին [IX] կայսրից ոսկի մատանի է բերել, ուրեմն մի քրիսոբուլ, և ազատել եկեղեցին և խնդրել որ «ամենեցայն շարաք աւր զժամն Հասանա արացեն» և նրա մահից հետո «մագիստոսին արացեն»:

Արդ 1033 թվին ո՛չ Գագիկ թագավորը և ո՛չ Սարգիս կաթողիկոս կենդանի չէին, ինչպես նկատել է արդեն հ. Գարեգինը: Գրիգոր Մագիստրոս որդի Հասանա ծանոթ չէ պատմության: Հասանի որդին կոչվում էր Ապիրատ:

Հայր Գարեգինը կարծում է, որ Գրիգոր և Ապիրատ կրկնակի անուններ են միևնույն անձի և որ ՆՃՔ ուղղելու է ՆԾՔ = 1003, բայց Ապիրատ մագիստրոսության պատիվ չուներ: Մեր կարծիքն է, որ արձանագրությունը հարազատ չէ: Պատրոն բառն արդեն մատնում է, որ գիրը Զաքարյան շրջանից հետո է: Մյուս երկու արձանագրությունները ևս վավերական չեն: Կատարյալ անհեթեթություն է ասել, թե եկեղեցին շինված է կայսերական հրամանով և այն էլ Մոնոմախոսի պես մոլեռանդ կայսրի հրամանով: Վերջին արձանագրությունները ոճի գրության տեսակետից չեն կարող ոչ մի կերպ պատկանել Մագիստրոսին: Միակ հարազատ գրությունը պետք է համարվի Սիմեոն կաթողիկոսի հիշատակածը: Վարդան պատմիչը հաստատում է, որ եկեղեցու հիմնադիրը արդարև Ապիրատ իշխանն էր. իսկ Ուռհայեցուց գիտենք, որ նա որդի էր Հասանա և հայր Վասակի: Անհարազատ արձանագրությունների հեղինակները թվում է թե ծանոթ են եղել Ապիրատի գրին, ուր ասված է եղել, թե նա որդի է Հասանա և թե եկեղեցին շինել է Գագիկի և Սարգսի օրով և խնդրում է աղոթել իր հոր «Հասանի համար» և նրա մահից հետո Ապիրատի համար: Գրիգոր Մագիստրոս հիշում է Մարմաշենի վանահոր Սոսթենեսին գրած նամակում, որ ի նպաստ Մարմաշենի ոսկի մատանի է հայթայթել[1]: Այս հասկանալի է, որովհետև Մարմաշեն կառուցել էր իր հորեղբայր Վահրամը: Մագիստրոս անշուշտ կհիշատակեր, եթե նույն արտոնությունը վերապահված լիներ նաև Կեչառիսի վանքին: Կեղծյալ արձանագրությունները ուշ են, քան Վարդան պատմիչը. սա եղել է Կեչառիսում և հարևան վանքերում, և չէր զլանալ հիշել Գրիգոր Մագիստրոսի անունը, որպես վանքի շինող, եթե որևէ արձանագրություն տեսած լիներ: Բջնո Բարսեղ եպիսկոպոսը, որ հիշվում է 1051 թվի արձանագրության մեջ, հավանորեն, այն անձն է, որ մասնակցեց 1295 թվի ժողովին, գումարված Ստեփանոս Օրբելյանի նախաձեռնությամբ ընդդեմ Գրիգոր Անավարզեցու: Վանքերն ևս իրենց գործելակերպն ունեին, երբ խնդիրը հասնում էր վանքի արտոնությունները պաշտպանելուն: Ամեն պարագայի քարերի լեզուն ևս պետք ունի քննության նախ քան ականջ կախել նրանց թելադրությանց:

Թանատի վանքի մի արձանագրություն կարդացվում է այսպես.

Յանուն Այ. ես Բուրայիս բռնես Սամադալիճ որդի
Այնասունայ ես Սարգիս որ տվի Թանատի Վանից Սբ.
Ստեփանոսի զՋաքի հայ վարիճ հաղն նացան հայրենիք

---

[1] Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 103:

Նաքաւ տվին ինձ զայտնութեւ. ե. աւր. ք. խր. աճով, ով Խափանէ յժր. Հայրապետացն ճզովեալ եղիցի[1]:

Հայր Գարեգինը կարևոր սրբագրություններ է արել իր նախորդների արտագրության մեջ: Հիշենք միայն՝ «ջաքճավարին հողնացան հայրենիք անքակ» անիմաստ ընթերցվածը, կամ «զՁատինաց վարին հողենացանի հայրենիքն»: Սամադոլե, Սամադդոլե արաբ[երեն ճշանակում է] աճուշ, [իսկ] Այնասուն՝ կամ Այնասունա՝ հավանորեն պարսիկ Այնասիմա, «մաքուր երես ունեցող»: Սակայն մնում են տակավին մութ կետեր: Ի՞նչ է ճշանակում «զջաթի նայ վարին հողն». արդյո՞ք ճամփի (ճանապարհի) այն վարի հողը: Հայր Գարեգինը հնարավոր է գտնում կարդալ նաև ջատի. գուցե **ջափի** (ճամփի): «Ցայտնութեան Ե. աւր» թվում է, թե պետք է կարդալ Ա. աւր: Տարօրինակ է, որ արձանագրությունը սկսում է Բուրայիս, բայց շարունակում է Սարգիս խոսելով միայն իր անունով, (տվի, նաք (= նոքա) տվին **ինձ**): Հայր Գարեգինը չի ճշանակել թե դրան որ կողմն է գտնվում այս արձանագրությունը: Բայց հաջորդ արձանագրության համար ասված է, որ դրան աջ կողմն է զետեղված և կարդացվում է այսպես.

Կամաւ Այ. ես Բաւրինայ միայրանեցայ Սր. ուխտիս եառւ յիմ հալալ ընչից ընձայ ի Սր. Ստեփաննոս միայրանեցս սահմանեցին ք. աւր պատարագ Սր. խաչին. կատարիչքն աւրենի յԱյ.[2] (7):

Անտարակույս է, որ այս Բորինա նույն անձն է ինչ որ նախորդ արձանագրության մեջ կոչված է Բուրայիս և որի նվիրաբերությունը չէր հիշված, այստեղ պակասը լրացվում է: Արդյո՞ք գրիչն է պատասխանատու այս անկարգ գրության համար: Անձի անունն է իսկապես Բուրա և ոչ Բուրայիս, որ է փոխան ես Բուրայ-ս: Բորինա պետք է կարդալ՝ **Բաւրի նայ միայրանեցայ**, ուր **նայ** ժողովրդական լեզվի մեջ **անա**-ի իմաստ ունի և կարծես թե ակնարկ է թե լրացնում է ինչ որ բաց է թողած նախընթաց արձանագրության մեջ: Առաջին արտագրողները կարդացել են **Բաւրինա**, որ իրավունք է տալիս համարել իսկական ձևը **Բաւրի** և ո՞չ Բորի: Բուրայ անունը հայտնի է Հայր Օհաննավանքի (Նոր-Բայազետի մոտ) մի արձանագրությունից: Բուրա կարող է սղվել Բուրե (հիշենք հին Դատաբա և Դատաբե), որից և Բուրի՞: Կեչառիսի մի արձանագրության մեջ[3] ոմն Հայրածայն գնել է «յԱռինչք յիմ պատրոն Բուպալէն»: Իսկ Բուրայի արձանագրության մեջ ասված է որ նա «ետ առու ինչք զայգին Ոսկեբակայ»

---

[1] Տե՛ս Գարեգին սրբազանի նույն աշխատության հավելված Ա, № 167:

[2] Անդ, № 168:

[3] Անդ, № 42:

և այլն: Առուինչք, հավանորեն, նույն Առինչի գյուղն է: Եթե այս ճիշտ է, այն ժամանակ **Քու պ - ող** սրբագրելու է թերևս **Քուպա յ էն**, նույն Քուբայ անվան մի այլ հնչյունը: Հարկավ անձերը կարող են տարբեր լինել. կա և Քոբա(յ) և Քոբէ, որ կնոջ անուն է: Քիչ չեն արձանագրությունները, որ նման դիտողությանց առիթ են տալիս:

Հատուկ անուններն ուղղելիս՝ լավ կլիներ հիշատակել այլ վկայություններ, եթե կան ի նպաստ նոր ընթերցումի: Օրինակ՝ Թեկղի անվան փոխարեն ի. Գարեգին կարդում է Թէիկ (Հավել., Ա, 163, տե՛ս Աստ, եր. 339): Ի հաստատություն, պետք էր հիշել նույն անունը Թայիկ և Թաիկ գրությամբ պատահում են այլուր (Բագնայր, Հոռոմոս և Հովհաննավանք):

Կան դեպքեր, ուր հնարավոր է ճշտել ընթերցումը: Օրինակ՝ զկաւանոցի նորքն ավելի լավ է կարդալ՝ զկաւանոց ի նորքն: Անծանոթ և անսովոր բառեր պետք է նկատողության առնվին մինչև անգամ, երբ դժվար է մեկնել: Օրինակ՝ **Շինակնատուն**, անշուշտ շինական ա տուն, թեև իրական իմաստը մնում է մութ: **Նավայոտար** = Նաւասարդ, **ասարանոց**, որ ի. Գարեգին կարծում է ուղղել՝ ամարանոց: Թվում է թե պարսիկ hasar = սառոյց բառից է և նշանակում է սառցատուն: Քրդերենում ծանոթ է այդ բառը, թեև հեղաշրջված՝ sahar, և ուրեմն հավանական է, որ մեր ժողովրդի մեջ էլ գործածական լիներ:

Նվիրատուների տալիքը և պայմանները ավելի կարևոր են, քան կարծվում է և պետք է ուշադիր լինել ստույգ ընթերցանությամբ: Օրինակ՝ Մամքուն նվիրում է Ի = 20 դահեկան և պարտավորում երկու ժամ (Հավել., Ա, 83): Սխալ է, պետք է կարդալ Խ = 40 դահեկան: Նկատելի է, որ տարվան մեջ մի ժամ (այսինքն, պատարագ կամ եկեղեցական պաշտոն արժե 20 դահեկան, երկու ժամը՝ 40 դահեկան, երեք ժամը՝ 60, վեց ժամը՝ 120 և այլն), երբ մի այգի նվիրաբերողը պահանջում է 2 ժամ, նշանակում է նորա այգին արժե 2×20 = 40 դահեկան: Եվ ուշագրավ է, որ այգիների խոշոր մասը գնահատված է 2 ժամ, այսինքն՝ 40 դահեկան: Երբ մի խորանի շինության համար պարտադրում է չորս ժամ, նշանակում է շինությունը նստել է 4×20 = 80 դահեկան: Այսպիսով ստանում ենք մի որոշ պատկեր տնտեսական կյանքի վերաբերյալ երևույթների: Ոմն (Հավել., Ա, 33) տալիս է 1000 սպիտակ և խնդրում հինգ ժամ: Հինգ ժամը արժե 5×20 = 100 դահեկան. որի հակակշիռն է հազար սպիտակ, ասել է, թե 10 սպիտակը մի դահեկան է: Մի ուրիշ անգամ տասն հազար սպիտակի դեմ համաձայնում են տալ քառասուն ժամ, ուրեմն 40 × 20 = 800 դահեկան: Տասն հազար սպիտակ = ութ հարյուր դահեկան. հետևաբար՝ մի դահեկան կարժե $12^1/_2$ սպիտակ: Դահեկանն՝ ոսկի դրամ է, սպիտակը՝ արծաթ: Ոսկե և արծաթե դրամների այս հարաբերությունը (1= 10 կամ $12^1/_2$) հաստատվում է ուրիշ աղբյուրներից: Հիշենք նաև, որ 40 դուկատը պարտադրում է 2 ժամ, այսինքն՝ 40 դահեկան,

որից երևում է, որ դուկատը ոսկի դրամ է հավասար դահեկանի: Այս և նման անսպասելի և կարևոր հետևությունները պահանջում են, որ արձանագրությունները որքան հնարավոր է խնամքով հրատարակվեն: Հ[այր] Գարեգինը սովորություն ունի երբեմն նկատողություններ դնել արձանագրությունների բնագրում հարցական նշաններով և կամ մեկնություններ տալով: Կարծում եմ, որ հրատարակության միջոցին, ձեռնպահ պետք է մնա այս ձևից և իր ասելիքը զետեղե բնագրից դուրս ստորև նկատողությանց և ուղղումների բաժնում: Կասկած չունինք, որ հրատարակությունը կպատասխանե ժամանակակից պահանջներին և կդասվի որպես մնայուն գործ ի. Գարեգինի մյուս աշխատությունների շարքին: Պետք է խոստովանիլ, որ սրբազանի գրեթե բոլոր բանասիրական և պատմական վաստակները հարատև լինելու բացառիկ բախտ ունին, սկսած, իր անդրանիկ գործից՝ «**Սասմայ ծռեր**»[1], մինչև **Խաղրակյանք**-ներին նվիրած վերջին աշխատությունը: Գարեգին սրբազանը չէ սիրում շրջել կոխոտած տափերի վերա և ո՛չ եռանդ թափել անլուծելի խնդիրների շուրջը, այլ հետամուտ է եղել միշտ նորություններ բերել հայ բանասիրության: Առաջին երկերն արդեն բնորոշել և նախագծել են նրա հետաքրքրության և նախասիրության դաշտերը ու առավելապես հայ ժողովրդի ստեղծագործության գեղեցիկ արվեստների աշխարհում: Կես դար շարունակ հետևել է միանգամ գծած ուղիին անվրեպ և անշեղ, հետևել է զեղուն սիրով և անընկճելի եռանդով, առանց երբեք թերանալու իր եկեղեցականի ծանր պարտականության մեջ: Գլածորի դպրոցի այսօրվա ուսումնասիրողը, կարելի է ասել առանց չափազանցության, ավելի իրավունք ունի, քան որևէ ուրիշը, համարվել նույն դպրոցի հայրենաշունչ ոգու և նորա շուրջը դեգերող սրբակրոն վանականների հեռավոր ավանդապահը ո՛չ միայն իր գիտական պատրաստությամբ, այլև կրոնավորի անաղարտ վարքով: «Վարդապետ կոչեմ ոչ զայն,-ասում է Գլածորի իմաստությունը,- որ բազում բանս ի բերան առնու, այլ որ մաքուր վարս ստացեալ ունի»: Այս կրկնակի նկատումով «Թարգմանչաց-Դուրեան մրցանակ»-ը ավելի արժանավոր թեկնածու չի կարող ունենալ, քան ներկայացված աշխատության հեղինակ Գարեգին արքեպիսկոպոսը, հայ եկեղեցու և գիտության աննկուն սպասավորը (8):

Խոսքս երկարեցավ, թեև երկարաբանություն պետք չէր, քո՛ղ ներող լինի Ձերդ Սրբազնությունը և ընդունե հարգալիր ողջույններիս հետ բարեկամությանս և պատրաստակամությանս հավաստիքը:

Օրհնություն հայցող և միշտ անձնվեր:

Ն. ԱՂՈՆՑ

---

[1] «Սասմայ ծռեր. Սասունցի Դավիթ», Թիֆլիս, 1892:

«ԴԱՎԻԹ ԲԵԿ» ՎԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄԸ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Պատմական վեպը պատվավոր տեղ է բռնում Րաֆֆու գրականության մեջ: Նրա համար անցյալն իր հիշատակներով լավագույն միջոցն է սթափելու ազգային ինքնագիտակցություն, վառելու հայրենասիրության ոգին. «Քրքրի՛ր մի ազգի հնությունները,- ասում է նա, և մի գիշերվա մեջ կզարթնեն նրա թմրած հոգին»: Այս համոզմամբ է, որ հոբելյարը (1) մեկեն ավելի գործեր է նվիրել պատմական անցյալին:

«Դավիթ Բեկը» նրա պատմական վեպերից լավագույնը չէ արվեստի կողմից, բայց կարևորագույնն է հրապարակախոսի խրոխտ ձայնով: Նյութը՝ մոտիկ անցյալից է, ուստի և ավելի հուզիչ: Դեմքերը ևս մեզ հարազատ են՝ խոսում են, դատում հարցեր, որ այժմեական են, տառապում են ցավերով, որ մերն են, գործում են մեր սրտով: Լեզուն՝ առօրյա, հասարակ, ոճը՝ պարզ, մերկ գրական սեթևեթանքից, շեշտը՝ ազդու և անկեղծ, մտքերը՝ վեհ, քաջության, հայրենասիրության, ազատության գաղափարները՝ հասցրած պաշտամունքի բարձրության. հատկություններ են, որ գրավիչ են, ընդունակ տպավորելու, լարելու պատանի սրտերը վսեմ զգացումներով[1]: Ահա ինչու **«Դավիթ Բեկը»** դեռ չէ փոշոտել և մնում է ընթերցանության սեղանի վրա:

Կես դարուց ավելի է, որ հնչում է փողի նման ազատությո՜ւն, ազատությո՜ւն, որն ազդել է սերունդների վրա: «Դավիթ Բեկի» երեսը դարձած է դեպի անցյալը, բայց խոսում է ներկայի, ապագայի համար:

Տեսնենք ի՞նչ է տեսել անցյալում և ի՞նչ է խոսում մեզ:

«Դավիթ Բեկ» վեպը հիմնված է ամբողջովին մի գրքույկի վրա, որ լույս տեսավ Ս. Էջմիածնի տպարանից 1871 թվին **Արգար Գոլամիրյանցի** ջանքով: Գրքույկի վերնագիրն է՝ **«Դաւիթ Բէկ, պատմութիւն Դաւիթ Բէկին**

---

[1] Թե ի՛նչ տպավորություն է թողել «Դավիթ Բեկը» իր անդրանիկ ընթերցողների վրա, կարելի է դատել հետևյալ օրինակից: Հիշում եմ մի գիրք (կարծեմ, նույն իսկ «Դավիթ Բեկ» վեպն էր), որի վրա Ատրպատականի այժմյան առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս գրել էր իր պատանեկության օրերին, երբ տակավին սան էր Ճեմարանում «Նիկողայոս Մելիք Թանգյան՝ Դավիթ Բեկ Երկրորդ» (2):

եւ պատերազմացն Հայոց Խափանու որք եղեն ընդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722 եւ Հայոց 1171» (3):

Այս հրատարակության առթիվ Րաֆֆին նկատում է, որ «նրա հեղինակը մինչև այսօր մնում է անհայտ, ձեռքից ձեռք անցնելով հեղինակի անունը եղծվել է: Ես անտեղի եմ համարում խոսել այդ մասին, միայն կհիշեցնեմ հայկական առածը՝ «գողը գողից գողացավ, Աստված տեսավ՝ զարմացավ» (**«Խամսայի մելիքությունները»**[1]:

Ափսոս, որ Րաֆֆին գաղտնիք է պահել իր կասկածները: Արդյոք կարծո՞ւմ էր, որ Գուլամիրյանի հրատարակությունը պատկանում է Հասան-Ջալալյանի (4) գրչին: Կարապետ վարդապետ Շահնազարյանցը ևս գրի է առել Դավիթ Բեկի պատմությունը 1840 թվին, երբ Տաթևի վանքի առաջնորդ էր: «Ո՞ր հայը չէ լսել, - գրում է նա, - Դավիթ Բեկ Սյունեցու գովանի գործերը, որ իր ազգի ազատության սիրով վառված՝ փորձեց թոթափել մեր երկիրը օտար լծից: Ես թշվառականս, որ 16 տարի առաջ կոխում էի քաջերի արյունով ոռոգված երկիրը և աչքիս առաջ էին Հալիձորի, Կապանի, Բաղաբերդի ավերակները, որպես ցավագին հիշատակներ մեր նախնյաց աշխարհաշեն ջանքերի և նրանց հանգած փառքի, սիրում էի նստել Պեխ գյուղի ալևոր բնակիչների հովանու տակ և լսել հարյուրամյա Ստեփաննոս ավագ քահանայի պատմածները: Ստեփաննոսը թոռն էր Պալի, Դավթի կտրիճներեն մեկի: Դավթի քաջագործության ստույգ պատմությունը գրի առի և դրի Ս. Էջմիածնի Մատենադարանը Հովհաննես եպսկ. Շահխաթունյանի ձեռքով»: Կարապետ վարդապետը ցավ է հայտնում, որ իր գործը անհետ կորավ Էջմիածնում. «Ահագին զերօ մի եկուլ զայն եւ անհետ արար առ յաւիտեան»[2]:

Րաֆֆու խորհրդավոր ակնարկը գուցե վերաբերում է Կարապետ վարդապետի կորած աշխատության: Եթե այս է նրա կասկածը, անհիմն է: Րաֆֆին ուշադիր չէ եղել Գուլամիրյանի հրատարակության խորագրին՝ ուր ասված է. «Զորս եւտուն գրել, որք ի սկզբանէ մինչև ցվախճան յառաջադէմ լեալք էին յամենայն պատերազմունս և ականատես իրացն եղելոց, այսինքն Ստեփաննոս Վրդանիսեան, որ ի տանէն էր Շահումեան, ի գաւառէն **Փորք Սիւնեաց**, և յաւանէն Եկտաստանաց, և այլ ոմանք ընդ նմա,... **վարդապետի**...»:

Հավանորեն ընդգծած վարդապետ բառն է, որ տեղիք է տվել մեր վիպագրի կասկածանքին: Հայտնի է, որ ծածկանուն վարդապետը հայր

---

[1] **Րաֆֆի**, Խամսայի մելիքությունները, էջ 305-306:

[2] **Ստեփաննոս Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, հատ. 1, Փարիզ, 1859: Առաջաբան, էջ 7-8:

Ղուկաս Ստեփաննեան Սեբաստացին է, Մխիթարի աշակերտը (5): Նա է, որ գրի է առել ինչ որ պատմել է Ստեփաննոս Վրդանիսյան Շահումյանը, Դավիթ Բեկի գործակիցներից մեկը, այն անձը, որին Բաֆֆին խիստ հարգի տեղ է հատկացրել իր վեպի մեջ: Շահումյան ընտանիքը մելիքական ծագում չուներ, հակառակ Բաֆֆու կարծիքին: Առևտրական տուն էր: Ստեփաննոսի հորեղբայրները՝ Ոսկան և Հայրապետ հաստատված էին Վենետիկ 1650 թվականներից ի վեր: Դավիթ Բեկի շարժումից հետո Ստեփաննոսը տեղափոխվում է Վենետիկ և պարապում առևտրով: Վենետիկի Ս. Խաչ եկեղեցու երեսփոխան է եղած 1743 թվին: Ամուսնացել է Ռոզալդա անունով օրիորդի հետ, որ Պոլսի հայ ընտանիքից էր և ունեցել է զավակներ (6), որոնցից վերջինը մեռած է 1783 թվականին: Ստեփաննոսը Վենետիկ է եկել 1734 թվից առաջ: Այս թվին նա արդեն Վենետիկ էր և մասնակցել է մի հանգանակության, ինչպես երևում է Ս. Խաչի դիվանի մի գրությունից: 1757 թվին սնանկացել է և մեռել կարոտության մեջ: Ստեփաննոս իր երկու ազգականների հետ մի խորան է կառուցել Վենետիկ Ս. Ղազարի վանքում և սեղանի առաջ՝ մի դամբարան իրենց տոհմի համար, ուր արձանագրության մեջ կարդացվում է նաև Ստեփաննոս Շահումյանի անունը, ինչպես հայտնում է հայր Ղ. Ալիշան **«Միսակյանի»** մեջ:

Ղուկաս վարդապետը վախճանվել է 1751 թվին (7), ուրեմն պատմությունը գրված է այս թվից առաջ: Ստեփաննոսն արդեն Վենետիկ էր 1734 թվին և հավանորեն թողել էր պատերազմի դաշտը 1730 թվին՝ Մխիթար սպարապետի սպանության տարին, որով վերջացավ շարժումը: Մեզ հասած պատմությունը թելադրված և գրված է հետևապես 1730-1751 տարեշրջանին (8), և առավել սկիզբը, քան վերջը: Այս տեղեկությունները պետք են, քանի որ Ստեփաննոսից է ծագում վեպի պատմական նյութը և սրա արժեքը որոշելու համար կարևոր է ունենալ պատմողի ինքնության վկայագիրը: Շահումյանը հավատացնում է, որ Դավիթ Բեկին մոտիկ և սիրելի անձ էր և ինքն էր՝ Ստեփաննոսը, գործի նախաձեռնողը: Գուլամիրյանի գրքույկը ներկայումս շատ հազվագյուտ է և անմատչելի լայն հասարակության, ուստի ավելորդ չենք համարում տալ նրա ամփոփ բովանդակությունը նախքան նրա քննության անցնելը:

Շահումյանի պատմելով, 1721 թվին լեռնականները ասպատակում են Շամախի և Գանձակ քաղաքները և մեծ վնաս հասցնում ժողովրդին: Լուրը հասնում է Ղափան և շփոթում ազգաբնակչությունը. հայ և պարսիկ (իմա՛ թուրք) կորցնում են փոխադարձ վստահություն, դադարում է երթևեկություն: Ստեփան Շահումյան թողնում է հայրենի Վանք գյուղը և անցնում Սիսական (իմա՛ Սիսիան), մտածելով գնալ Մծխեք՝ վրաց իշխանաց իշխան Շահնավազի (9) մոտ և խնդրել մի առաջնորդ Ղափանի համար: Այս

նպատակով նա հորինում է մի թուղթ, ստորև շարում Ղափանի 50 տանուտերների անունները և կնքում կեղծ կնիքներով:

Ինչո՞ւ էր պետք այս դիմումը: Ստեփան պատասխանում է, որ շարժման գլուխը եթե տեղացի մեկը լիներ, ապստամբ կնկատվեր պարսից կողմից, մինչդեռ Շահնավազ զորավար էր և կարող էր զորագլուխ նշանակել: Շահնավազ հանճնարարում է Սյունեցի Դավիթ Բեկին: Դավիթը գալիս է Ույքեփե, ուր առաջին բախումն է ունենում ղարաչոռլու կոչված թուրքերի հետ և ապա օթուզիքի, այսինքն՝ 32 անունով թուրք ցեղի հետ:

Ույքեփե մի սարահարթ է Գորիսից արևմուտք, Հալիծորի վերևը, հայտնի սոսկալի փոթորիկներով: Աբրահամ Կրետացին[1] քրդական ցեղ է կարծում ղարաչոռլուն: Բայց իսկապես ո՛չ թուրք են և ո՛չ քուրդ, այլ այն ինչ այժմ է կոչվում՝ թարաքյամա, այսինքն՝ թուրքմեն (թարաքյամա արաբական հոգնակի ձևն է թուրքմեն բառի): Ղարաչոռլու և օթուզիքի ցեղերի ձմերոցն է Կուրի դաշտերը, որտեղից ամառը չվում են իրենց հոտերով դեպի Զանգեզուրի և Սիսիանի լեռները և հասնում մինչև Դարալագյազ:

Առաջին հարվածը ուրեմն Դավիթ Բեկ հասցնում է **քոչվորներին**: Հետևյալ տարի նույնպիսի ընդհարում է ունենում այն թարաքյամաների հետ, կամ ինչպես ճիշտ անվանված է մեր աղբյուրներում՝ թուրքմենների հետ, որոնք Բարկուշատի կողմերից բարձրանում են Ղազանգյոլ և Գազրել լեռները անցնելու ամառը:

Այս լեռները պատում են Տաթևը հարավից և որպես հսկայական պատնեշ բաժանում Տաթևի շրջանը Ղափանից: Ուրեմն երկրորդ հարվածը ևս ուղղված էր քոչվորների դեմ, առաջինը՝ Զանգեզուրի, երկրորդը՝ Ղափանի, խաշնարած քոչվորների դեմ, որոնք մինչև այժմ էլ մեծ պատուհաս են հայ ժողովրդի և երկրի համար, քայքայում են տնտեսությունը, վտանգում ապահովությունը որպես ավազակության և ավերածության ահավոր բուծարան:

Ույքեփեից Դավիթը իջնում է Շնհեր, որ Որոտն գետի ափին է, Տաթևի դեմուդեմ:

Տաթև չի գնում, որովհետև տեղի մելիքը, որ նույնպես Դավիթ էր կոչվում, համակիր չէր Դավիթ Բեկին: Տաթևում հնուց ի վեր միայն մի ազնվական տոհմ կա, այդ հռչակավոր Օրբելյան տունն է: Մելիք Դավիթը անտարակույս Օրբելյաններից էր: Դավիթ Բեկին համամիտ չէին նաև Հալիծորի մելիք Փարսադանը, Երիցվանիկի մելիք Ֆոռնգյուլը, Ագուլիսի մելիք Մուսին և ուրիշները, որոնց անունները չեն հիշված:

Մելիք Դավիթն ընկնում է Դավիթ Բեկի ճեռքը և գլխատվում Շնհերում: Մելիք Փարսադանը ևս բռնվում է իր փեսա Տեր Ավետիքի հետ և բանտ

---

[1] **Աբրահամ Կրետացի,** Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նաւթ-շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 75:

նետվում: Ազատվում է մի դիպվածով, որ արժանի է հիշատակության ուրիշ նկատումով: Սղնախից գալիս է Գուգարացվոց պետ Հովհաննեսը 56 հազար զորքով, գալիս է պաշարում Որոտն բերդը, բայց չի կարողանում առնել, թողնում մեկնում է Շնհեր, ուր ազատում է բանտարկյալ մելիք Փարսադանին և Տեր Ավետիքին ու դրկում Դավիթ մոտ: Ինքը մտնում է Տաթև, հափշտակում Դավիթ Բեկի գանձերը (?) և հեռանում:

Դժվար է հասկանալ այս անհեթեթ զրույցի ծագումը: Վրաց աղբյուրները Խամսայի մելիքներին կոչում են սովորաբար Սղնախի մելիքներ: Խամսա անունը նրանց անծանոթ է: **Գուգարացի**՝ Ղուկաս վարդապետի ենթադրությունն է, որ ներել կարելի էր, եթե **Գարգարացի ասեր**, համաձայն Խորենացու գործածության: Թվում է, թե Հովհաննեսն այն Ավանն է, միևնույն չորս կտրիճ երիտասարդներեն, որ զենքով դիմադրեցին լեռնականներին Ջրաբերդում: Հավանական է, որ Ավանը ուղեկցած լինի Դավիթ Բեկին կամ լուրեր տարածված լինեին, թե Խամսայի երկրից օգնություն պիտի գար նրան: Ստեփան Շահումյանը թեթևամիտ է գտնվել հավատալով, որ հայերը 56 հազար զորք կարող էին ունենալ այդ ժամանակները: Րաֆֆին ևս անզգուշությամբ այստեղից այն կլորիկ թիվն է հանել, թե հայերը Գանձակի մոտ 60 հազար մարդ ունեին զենքի տակ, ավելացնելով որ հրամանատարն էր Դավիթ Բեկը: Հայտնի չէ, թե ինչո՞ւ համար է գալիս Հովհաննեսը և ինչո՞ւ է պաշարում Որոտը և ոչ մի ուրիշ ամրոց, ավելի կարևոր և մոտ Դավիթ Բեկին: Զարմանալի է, որ Հովհաննեսը 56 հազարով չի զորում գրավել Որոտն, իսկ հաջորդ տարին Դավիթ Բեկը մի քանի հարյուրակով դյուրավ տիրանում է նույն բերդին:

Վստահելի տեղեկություն չէ, մանավանդ երբ պատմողն ավելացնում է, որ Նախճվանի խանը, լսելով Որոտն բերդի անկումը, արշավում է Դավիթ Բեկի դեմ մեծաքանակ զորքով: Դավիթ Բեկը որպես թե առաջանում է աներկյուղ նրա դեմ, ճակատում Նախճվան գետի ափին, բայց պարտվում է, կորցնում հազար մարդ: Իսկ հաղթող խանը դառնում է իր տեղը առանց օգտվելու իր հաջողությունից և կործանելու ընդմիշտ ըմբոստին: Ստեփան Շահումյանն այս կետում ևս, լավագույն դեպքում, զոհ է անհիմն լուրերի:

Կռվի դաշտը տեղափոխվում է Չավնդուր և Գենուազ: Դավիթ Բեկի զինակիցներից մեկը՝ Թորոսը, հարձակվում է Չավնդուրի մի թուրք իշխողի հոտի վրա, քերփում երկու հազար ոչխար և սպանում հովիվներին: Չավնդուրի տերը՝ ոմն Փաթալի սուլթան, իր եղբոր՝ Աղասի խանի, հետ ուզում են վրեժ առնել և թեև ձեռքի տակ ունեն 12 հազար մարդ, նախքան հարձակվելը, դիմում են հարևան Գենուազի Լեվազ գյուղի տեր Սափի դուլի թուրքին և առաջարկում միասին գործելու: Սա խոհեմությամբ մերժում է: Երկու եղբայրները գնում են Թորոսի վրա: Թորոսը Հիշկիտից 150 հոգի է

առնում, ճանապարհը կտրում և ջարդում 12 հազար զորքը և քշում: Հաջորդ օրը լեվազցի Սափի դուլին գալիս է 300 հոգով Չափնիս գյուղ (որ ակնհայտնի սխալ է փոխանակ երևի Ափկիսի, որովհետև Չափնիս Գենուազում չէ, այլ Ղափանում՝ Ագարակ գյուղի մոտ) և իր կողմից առաջարկ է անում հարևան Կաց գյուղի թուրք տիրոջ՝ Միրզա Սայիլին, որ միասին ավերեն հայ Մանլև գյուղը: Սայիլը չի հուժարում, և Սափի դուլին պարտվում է Թորոսից: Սայիլ լսելով, որ Թորոսը ավերել է երեք թուրք գյուղ, հարձակվում է Մանլևի վրա, բայց Թորոսը սրան ևս փախցնում է: Այս կրկնակի հաղթությունից հետո Թորոսը թողնում է Պապ զորավարին Գենուազ և ինքը գնում է Չավնդուր:

Պարտված Սափի դուլին իր թուրքերի հետ փախչում է Օրդուար (Օրդուրադ) և այնտեղից 500 հոգով գալիս է մի հայ գյուղի վրա և գերիներով դառնում Օրդուար: Փոխարենը Պապը ոչնչացնում է Լեվազի թուրքերին, ավարը ղրկում Զվար գյուղ և ինքը քաշվում Վահրավարա: Դավիթ Բեկը այն միջոցին վերջացնելով Հալիճորի բերդի շինությունը, լսում է, որ Ասլամազ դուլի թուրքը զորք է հավաքում իր դեմ Բուխուրութա լեռների կողմը, ուր Զեվու բերդն է: Դավիթը սլանում է այնտեղ, կանչում Թորոսին և միահամուռ ուժերով, շնորհիվ Տեր Ավետիքի քաջասրտության, գրավում են բերդը, կոտորում չորս հազար թուրք: Բոխուրութ՝ Ստեփաննոս Օրբելյանի պատմությանը կցված հին ցուցակի Բեխորոտ ավանի անունն է՝ Չորք գավառում, որն է բուն Կապանը: Այս լեռը բաժանում է Կապանը (բուն Ղափանը) Մեղրիի շրջանից: Այստեղ է Օխչի գետի ափին Զեվու բերդը:

Մնում էր հարվածել գլխավոր թշնամուն, Չավնդուրի երկու եղբայրներին՝ Փաթալի սուլթանին և Աղասի խանին, որոնք քաշվել էին Բարկուշատ: Դավիթ Բեկին ընկերանում է Երիցվանիկի մելիք Ֆրանգյուլը: Ճակատը տեղի է ունենում Եղվարդ գյուղի մոտ Բարկուշատի գավառում: Դավիթ Բեկը հաղթելու վրա էր, երբ մելիք Ֆրանգյուլը նետից պատրվակը և անցավ թշնամու կողմը: Հայերը՝ պարտվեցին, Թորոսը ընկավ պատերազմում: Նրան հաջորդում է Նուրարը: Հաղթողներն ուզում են մտնել Չավնդուր, բայց չեն հաջողում, հանդիպելով Նուրարի և Պապի դիմադրությանը՝ հետանում են իրենց տեղերը:

Այնուհետև Օրդուար փախած մեզ հայտնի Սափի դուլին, հետն առնելով օրդուարցի Ղազիօղլի Շահիսլամօղլի թուրքերին (10), մտնում է Ալանգյազ լեռների կողմից Գենուազ՝ ուրեմն Մեղրի ծորը: Ութ հազար մարդ ունեին: Պապն ուներ միայն երկու հազար, սիրտ չի անում ճակատելու, նահանջում է: Դավիթ Բեկը զայրացած գալիս է Դաշտուն, 2800 մարդով, հալածում թուրքերին և գլխատում Պապին, որը չէր եկել ներկայանալու իրեն՝ Հիշկիտ գյուղի մոտ: Երբ Դավիթը հեռանում է, նույն թուրքերը մեծ ուժերով, մոտ 12

հազար, ոորեն հարձակում են գործում, նույն Ալանգյազի ճանապարհով մտնում Մեղրու ձորը: Ալանգյազը այն լեռնաշղթան է, որ բաժանում է Մեղրին հարևան Գողթանից կամ Օրդուարի (Օրդուբադի) գավառից: Դավիթ Բեկը վերադառնում է 4000 մարդով, բայց կռվում է առանց հաջողության և հեռանում Հալիձոր: Թուրքերը սիրտ առած ասպատակում են գյուղերը: Գալիս են ուրիշ թուրքեր մինչև անգամ Ղարադաղից մոտ 18 հազար մարդ: Մեղրիցիք քաջապես պաշտպանվում են, և ազատարար է հանդիսանում Ստեփան Շահումյանը, որը սպանված Պապի հաջորդ էր նշանակված: Թուրքերը 11 հազար զոհ են տալիս, մնացածները փախչում են:

Մի տարի անցած (11), երբ Երևանի խանի եղբայրը զորքով գնում էր օգնելու իր եղբորը, որ պաշարված էր Երևանում օսմանցիներից, հասնում է Օրդուար քաղաքը, ուր տեղացի մահմեդականները գանգատվում են մեղրեցիների դեմ: Խանը լսելով, որ օրդուարցիք են եղել նախահարձակ, պատժում է Սափի ղուլի թուրքին իր ընկերներով և անպարտ արձակում հայերին:

Վերջին դրվագը է Խոտանան գյուղի կռիվը Փաթալի սուլթանի դեմ: Մխիթար սպարապետը գժտված լինելով Դավիթ Բեկի հետ, չի մասնակցում կռվին, և հայերը հաղթվում են: Շահումյանը գերի է ընկնում և փրկվում է մի բարեսիրտ թուրքի օգնությամբ: Վիրավորվում է մելիք Փարսադանի որդին՝ Բալին և դժվարությամբ հասնում է Հալիձոր:

Սրանով վերջանում է Դավիթ Բեկի պատմության այն մասը, որը նյութ է ծառայել «**Դավիթ Բեկ**» վեպին: Պատմության երկրորդ մասը վերաբերում է օսմանցիների դեմ վարած կռիվներին, որը մեր խնդրից դուրս է: Րաֆֆին թարգմանել է գրաբարից այդ մասը և դրել իր վեպի վերջը, որպես հավաստի պատմություն: Սրա քննությունը մեր նյութին չի վերաբերում: Շահումյանի պատմածին կցված է մի ցուցակ, որ պարունակում է Դավիթ Բեկի զինակիցների անունները և որը ավելորդ չենք համարում բերել ամբողջապես:

Դավիթ Բեկի զորավարներ՝ Մխիթար, Մեծ Գեորգի, Հովհաննես, Բանդուր, Զաքարիա իշխան, Պայինդուր իշխան, Ավթանդիլ, Փոքր Գեորգի, Ծատուր, Ղարագյոզ, Թադեոս, Եղիազար, Հարություն:

Շնհեր՝ Պայինդուր զորապետ, Պալի զորապետ, Մինաս, Ստեփաննոս և 550 զինվոր:

Տաքն՝ Ղիջի, Այտեմին, Եսայի, Տիրացու, Սիմեոն և 400 զինվոր:

Հալիձոր՝ մելիք Փարսադան՝ 250 զինվոր և Տեր Ավետիք՝ 468 զինվոր:

Չավնդուր՝ Թորոս, Պայինդուր, Նուրար, Վարդան, Փարսադան, Թովմաս, Թուրինջ, Հովհաննես և 2000 զինվոր:

Կալեր՝ Պապ, 700 մարդով, հաջորդը՝ Շահումյան:

Մեղրի՝ Կոստանդին, Հովհաննես, Սարին, Առաքել և 400 (ո՛չ 4000) մարդ:

Որդիք Մաղա Ջուղին Տիլենչի մականվանյալ՝ 400 մարդ:

Սիսականի զորավարը՝ 500: Մելիք Ղուջու և 200 զինվոր:

Ավշարներեց, որ կոչի Գասպար, 250 մարդով:

Պաղաբերդ՝ Ադամ զորավար, 150 մարդով:

Կուլբերդ՝ Ղազար, 110 մարդով:


Շիվանիձոր՝ Սարգիս զորավար, 250 մարդով:

Ստեփանի ավանդած պատմությունը բավականին խառնակ է: Ինքը՝ անվարժ պատմող, Ղուկաս վարդապետը՝ վարժ գրող, միասին աշխատելով շատ բան շփոթել են, չափազանցրել և երբեմն գայլվահանյան գույն տվել՝ խախտելով ընթերցողի վստահությունը:

Ստեփանը Եկդաստա գյուղից էր, որ գտնվում էր Կալեր և Վանք գյուղերի մոտ՝ Մեղրի գետի վերին հովտում: Ուրեմն Ստեփանը մեղրեցի էր, այնինչ իրեն ղափանցի էր համարում: Նա լավ տեղյակ է ինչ որ անցել են իրեն հայրենի Մեղրու շրջանում, բայց բավականին ծանոթ չէ այդ շրջանից դուրս կատարված դեպքերին: Դավթի գործունեության տեղեկագրությունը պետք է գիտենալ, որպեսզի կարելի լինի չափել նրա վարած կռիվների կշիռը: Մեղրու շրջանը կամ մահալը, ինչպես ժողովուրդն է ասում, հին Արևիքն է համանուն գետի հովտում, որի արևելյան լեռնոտ մասը և երբեմն ամբողջ գավառը կոչվում է Գեղուազ: Սրան կից է Չավնդուր՝ Օխչի գետի միջին հովտում հին Կովսական գավառի մի մասը: Նույն Օխչի գետի վերին հովիտը կազմում է բուն Ղափան, հին Կապան, ավելի հին՝ Չորք: Եճամսան գետակից, որ Օխչիի ճյուղն է, մինչև Բարկուշատ գետը հնում կոչվում էր Քաղք, իսկ այժմ այս ևս կրում է Ղափան անունը և հայտնի է հռչակավոր պղնձահանքերով: Բարկուշատ է կոչվում Որոտն գետի ստորին հոսանքը: Ինչ վերաբերում է Զանգեզուր գավառին, այդ Գորիսի շրջանն է, Հալիձոր, Շնհեր, Խնձորեսկ գյուղերով: Անունը հին Չագեձորի թուրքական արտասանությունն է: Սիսիանը՝ Ղափանից արևմուտք, կենտրոն ունենալով այժմյան Սիսիան անունով թուրք գյուղը, Բռնակոթ, Ախլաթիան, Ղարաքիլիսե, բոլորը Որոտն գետի ավազանում: Ռուսները միացրին հիշածս գավառները և մի վարչություն կազմեցին: Եվ որովհետև այս վարչական միության կենտրոնը Չագեձորի Գորիսն է, ուստի և Զանգեզուր կոչեցին ամբողջ միությունը: Սակայն տեղացիները զանազանում են հին

սովորությամբ և չեն շփոթում միմյանց հետ Զանգեզուր, Ղափան, Սիսիան, Մեղրի, Ագուլիս (տե՛ս կից քարտեզը, ուր նշանակված են գլխավոր կետերը կռվի դաշտի):

Գործի նախաձեռնությունը Ստեփանը վերագրում է իրեն: Այս կետը ավելի քան կասկածելի է: Ստեփանը իրեն հանճարարարում է որպես մի անձն, «որ էր սիրելի յայս Դաւթի վասն ազնուականութեան եւ քաջութեան»: Բայց մեծ դեր չունի պատերազմների մեջ և չէ հաշվում նշանավոր զորավարների թվում: Դավիթ Բեկը զորագլուխ է նշանակում Կալեր գյուղի շրջանում, որ Ստեփանի հայրենիքն էր, ոչ թե Ստեփանին, այլ տեղացի մի ուրիշին՝ Պապ անունով: Վերջինս ինչ-ինչ գաղտնի որոգայթների զոհ է գնում, մահվան դատապարտվելով Դավիթ Բեկի կողմից, միայն այն ժամանակ հաջորդ է նշանակվում Ստեփանը: Եթե Ստեփանը լիներ մեծ խորհուրդի հաղացողը, Դավիթ Բեկը նրան իր մոտ կպահեր իբրև մերձավոր գործակից:



Ո՞վ էր Շահնավազ իշխանը և ի՞նչ գործ ուներ նրա մոտ Դավիթ Բեկը: Շահնավազ վերաբերությամբ հայտնի են երեք թագավոր. Վախթանգ V (1658-1676), իր որդին՝ Գեորգի XI (մեռած 1709 թվին), և Բակար, որդի Վախթանգ VI-ի: Վախթանգ ընդունեց իսլամը և նշանակվեց թագավոր Վրաստանի 1716 թվին, ըստ վկայության ժամանակակից պատմագիրների՝ Ս. Օրբելյանի, և Վախուշտի[1]: Բայց շահը նրան կոչեց այլ ծառայության Խորասանի կողմերը և իշխանությունը տվեց Բակարին, որ նույնպես կրոնափոխ եղավ և ընդունեց շահից Շահնավազ անունը նույն 1716 թվին: Բակարը իշխեց միմիայն երկու տարի (1716-1718): Հայրը՝ Վախթանգը վերադարձավ Պարսկաստանից և ստանձնեց իշխանությունը 1719 թվին և մնաց գահի վրա մինչև 1724 թիվը:

Արդ այս երեք շահնավազներից և ոչ մեկը կարող է լինել այն համանուն իշխանը, որին դիմած լիներ Ստեփան Շահումյանը: Դիմումը կատարված է լեզգիների արշավանքից հետո, որը տեղի ունեցավ 1721 թվի օգոստոսի 15-ին և տևեց մինչև աշուն, և նորեն կրկնվեց 1722 թվի գարնան մարտ և ապրիլ ամիսները, և այս անգամ ավերեցին նաև մելիքների հողերը: Նույն 1722 թվականին Դավիթ Բեկն արդեն գործի էր: Հետևապես Ստեփան Շահումյանը պետք է վրաց թագավորին ներկայացած լինի 1721 թ. վերջերը կամ 1722 թ. սկիզբները: Այս պահին Վրաստանի թագավորն էր Վախթանգը, որով Շահումյանի հիշած Շահնավազը չի կարող լինել ո՛չ Գեորգի Շահնավազը, մեռած 1709 թվին, ինչպես սխալմամբ նույնացրել է Բաֆֆին[2] և ո՛չ էլ Բակար Շահնավազը: Բաֆֆին մի ուրիշ տեղ[3] հայտնում է, որ Վախթանգ թագավորը ևս կրում էր Շահնավազ տիտղոսը, որ ծրի ենթադրություն է, Շահումյանի սխալ վկայությունն արդարացնելու համար:

Հարկավ, Բակար Շահնավազը կարող էր Շահումյանին ընդունած լիներ որպես իշխանազն (12): Սակայն ճիշտ 1722 թվին Բակարը ավելի հակամետ էր դեպի պարսիկները, քան իր հայր Վախթանգը՝ իր ռուսական թեքումով: 1722 թվին ավղանները ջարդեցին պարսիկներին Գյուլնաբադի ճակատում և պաշարեցին Սպահանը: Շահի որդին՝ Թահմասպը հազիվ ճողոպրեց և շահ հռչակեց իրեն Ատրպատականում իր հոր սպանությունից հետո: Պարսից շահը պաշարված Սպահանում դիմեց Վախթանգին և Բակարին, մեծ պաշտոններ առաջարկելով, որպեսզի գան օգնության ընդդեմ ավղաններին: Բակարը պատրաստ էր հարգելու շահի խնդիրը, բայց Վախթանգը արգելեց, որովհետև հույս ուներ, որ ռուսները շուտով պիտի

[1] Մ. Բրոսսե, Պատմություն վրաց, Բ, էջ 112-114 (ֆրանսերեն):

[2] Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 28:

[3] Բաֆֆի, Դավիթ Բեկ, էջ 359:

գան և թոթափեն պարսկական լուծը: Վախթանգը գաղտնի հարաբերության մեջ էր Պետերբուրգի արքունիքի հետ: Վերջին թղթով (13) Պետրոս Մեծը խոստացել էր լինել Շամախի 1722 թվի հոկտեմբեր ամսին: Վախթանգը հրաման էր ստացել շահից, ելնել ընդդեմ լեզգիների: 1722 թվի մայիս ամսին լեզգիներն առանց դիմադրության քաշվեցին, և Վախթանգը վերադարձավ Թիֆլիս: Սեպտեմբեր ամսին նորեն եկավ Գանձակ, որպես թե լեռնականների ապստամբությանը վերջ դնելու համար, բայց իրականում գաղտնի հարաբերության մեջ էր Պետերբուրգի արքունիքի հետ և Պետրոս Մեծից հրահանգ էր ստացել պատրաստ լինել դիմավորելու նրան Շամախում հոկտեմբերի սկզբներին: Գանձասարի Եսայի կաթողիկոսը Վախթանգի բանակում էր և տեղյակ նրա ծրագրերին: Ահա ինչ է պատմում Եսային: Վախթանգը պատվիրում է կաթողիկոսին գնալ «յերկիրն մեր Ղարաբաղ, և զհայազուն զօրսն՝ որ գումարեալ կային անդ ի ձեռն մելիքներաց, և չորս գլխաւորք եղեալ երիտասարդացն, որոց անուանքն են Աւան, Շրուան, Շահնի և Սարուխան, որ և սոքա հարիւրապետք և իշխապաշիք կոչէին: Սոքա ընդ մելիքներացն Ղարաբաղու, զկնի առաջին դառնալոյն Վախտանգին և խախտելոյ իշխանութեան Պարսից, միաբանեալ ընդ ինքեանս զամենայն քաջասիրտ և արիական եւ զօրեղ մանկունս եւ երիտասարդս տանս Աղուանից, ըստ ինքեանց կազմեալ էին զօրս բազումս աւելի քան զերկոտասան հազար, եւ ամրացեալք յամուր վայրսն Արցախու: Ես այսպէս բազում արիութիւնս ցուցեալ յերկրիս մերում:...

Այժմս լուեալ սմա զսոցանէ՝ շեշտակի ճեպով յղեաց զմեզ վասն առ ինքն ածելոյ զնոսա կազմ զօրօք: Եւ ըստ հրամանին եկեալ մեր յարդարեցաք զնոսա ըստ օրինի զօրաց իշխանաց, վասն զի անվարժք էին զինւորական սպասաւորութեանց եւ այսպէս բովանդակեալ զամենայն եւ իրրեւ տասն հազար արս ընտիրս եւ սպառազէնս»:

Նույն 1722 թվին գարնանը լեռնականները մտան Մուղանի կողմից Դիզակ գավառը, կողոպուտով անցան Վարանդ, ուր մելիք Բաղիրը ընծաներով ընդառաջեց և ազատ պահեց իր երկիրը ավերումից: Սինչդեռ Խաչենը Դիզակի վիճակն ունեցավ, իսկ Ջրաբերդում՝ ժողովուրդը քաշվեց լեռները և «երիտասարդք ոմանք ընդդիմանային եւս եւ զբաղումս հարին ի թշնամեաց»: Ահա այս երիտասարդների կազմակերպած ընդդիմադրության մասին է Եսայիի ակնարկը, եւ նախաձեռնողները, անտարակույս, նույն չորս երիտասարդներն էին՝ Ավան, Շրվան, Շահին և Սարուխան: Հայ տասն

---

[1] Եսայի Կաթողիկոս Հասան-Ջալալեան, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 47-48:

հազարանոց բանակը ներկայանում է Վախթանգին, որ ընդունում է մեծ սիրով և խրախուսական խոսքերով՝ «Այսուհետեւ զօրասջի՛ք եւ քաջ լերո՛ւք իրրեւ յորդիս զօրութեան. եւ յուստեքէ եւ յումեքէ մի՛ երկնչիցիք, զի ահա հասեալ է ժամանակ փրկութեան քրիստոնէից»:

Ականատես Եսայի կաթողիկոսը վկայում է, որ Վախթանգը բնական սեր ուներ դեպի հայ ազգը «եւ ոչ այնքան հաւատայր ազգին իւրոյ Վրաց, որք միշտ ննջգաւորք եւ խորամանկք են, վասն այն կամէր զայս զօրս՝ մանաւանդ ազգս Հայոց իւրն սեփհականեցուցանել որպէս Տփխիսեցիք», այսինքն՝ որպես Թիֆլիսի հայերը: Բացի դրանից, Վախթանգը, որովհետև սպասում էր Պետրոս Մեծի գալստյան, «կամէր հայ եւ վրաց զօրօք ճոխ եւ շքեղ ընդ առաջ ելանել նմա»: Վրաց թագավորը, իր կշիռը բարձրացնելու համար, ուզում էր ներկայանալ կայսրին որպես տեր երկրի քրիստոնյա տարրին, հայ և վրացի:

Բաֆֆին, որ քաջածանոթ է Եսայի կաթողիկոսի պատմությանը և իր ձեռքին ունեցել է մինչև անգամ ավելի ընդարձակ օրինակը, հնարավոր է գտնում ասել, որ Ղարաբաղի մելիքների խնդրանքով է, որ Գեորգի Շահնավազը ուղարկեց իր ծառայության մեջ գտնվող Դավիթ Բեկին և թե Դավիթ Բեկը եկավ Ղարաբաղ 1722 թվին, ժողովեց 60 հազար զորք, զորապետներ նշանակեց մելիք Ավան խանին և Ավան միրզային և ինքը գնաց Ղափան՝ Չավնդուր կոչված տեղը, որ իր հայրենիքն էր: Քիչ ստորև հայտարարում է, որ հայերը և վրացիները սպասում էին Պետրոս Մեծի գալստյանը, բանակ զարկած Գանձակի մոտ և որ վրաց զորքերի հրամանատարն էր Վախթանգը, իսկ հայոց զորքերի՝ Դավիթ Բեկը[1]: Այս բոլորը հեռու են ստուգությունից: Դավիթ Բեկը Չավնդուրից չէր, և ո՛չ էլ Ստեփան Շահումյանը նրան բերավ Ղարաբաղ, առանց մելիքների որևէ մասնակցության: 60 հազար թիվը առասպել է: Տեսանք, որ հայ զորքը հաշվում էր 10 հազար մարդ և կազմակերպված էր Եսայի կաթողիկոսի միջնորդությամբ և ո՛չ թե Դավիթ Բեկի: Ավանը ո՛չ խան էր և ո՛չ միրզա, այլ այն չորս կտրիճ երիտասարդներից մեկը, որ զենքով լեզգիների դեմ ելան: Ո՞րտեղից է հանել Բաֆֆին 60 հազար թիվը, կտեսնենք ստորև:

Մեր նպատակն է պարզել, հասկանալ Դավիթ Բեկի ապստամբության մերձավոր շարժառիթը: Շահումյանի տված բացատրությունը լուրջ չէ: Լեզգիների արշավը չդիպավ Սյունիքին և չէր կարող որևէ անդրադարձ ունենալ նրա վիճակի վրա:

Դավիթ Բեկի գալուստը հետևանք էր Գանձակի մոտ կանգնած վրացի և հայ զորքերի ակնկալությունների: Ինչպես Եսայի կաթողիկոսն էր

[1] Բաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 28-29:

ուղարկված մելիքների մոտ, նույն առաքելությամբ էլ եկել էր Դավիթ Բեկը Սյունիք՝ Վախթանգի հրահանգով: Վրաց արքան հավատում էր անվերապահորեն կայսերական խոստումներին և պատրաստություն էր տեսնում պատշաճ գործակցություն բերելու ռուսական զենքին: Նա վայելում էր հայերի կատարյալ վստահությունը: Բաֆֆին արդար չէ, երբ Դավիթ Բեկի բերանով շեշտում է հայի և վրացու մեջ բուն դրած դարավոր ատելությունը և անհնար է գտնում երկու ազգերի համերաշխ գործակցությունը, որի հետևանքով Դավիթ Բեկը բաժանվում է Վախթանգից, առանց հայտնելու իր դիտավորությունը[1]:

Վիպագիրը գտնվում է իր ատենի հայ-վրացի հարաբերության լարված դրության ազդեցության տակ: Այդպես չէր մոտիկ անցյալում: Հայ և ռուս հարաբերությանց պատմության վերաբերյալ աշխատությանց մեջ բավականին չէ շեշտված և երբեմն անտես է արված այն դերը, որ կատարել են վրացիները: Սրանք մեզնից դարեր առաջ են սկսել կոխոտել ռուսական դռները, իսկական ջատագովներ հանդիսանալով հյուսիսի միջամտությանը և մեզ էլ քաշելով իրենց հետևից բարի հարևանությամբ: Մեր օրերի վրաց հայրենասերները, որ երազում են անջատվել Ռուսիայից և կշտամբում են հայերիս «ռուսասիրությունը», մոռանում են, որ երեկվան իրենց հայրերն են եղել մեր ռուսասեր ուսուցիչները: Եթե այժմ էլ գտնվեին ազնվամիտ վախթանգներ, դժվար չէր լինի գտնել բարի հարևանության համերաշխ ուղիներ:

Դավիթ Բեկի շարժումը գաղտնի թելերով կապված էր Վախթանգի քաղաքականությանը: Շահումյանը տեղյակ չէ այս թելերին: Դավիթ Բեկը եկել էր շոշափելու հողը, նախապատրաստելու տեղական ուժերը ի նպաստ և ի սպաս ռուսական հույսերի, եկել էր թվում է թե պաշտոնական ճևով և ոչ որպես ապստամբության ղեկավար: Շահումյանը գիտե, լսել է, որ Դավիթը ապստամբ չէ, որովհետև կարգված է «զօրաւոր Շահնաւազի» կողմից: Այս «զօրաւոր» բառը խուլ արձագանք է այն պատմական իրողության, որ Վախթանգը նշանակվեց 1722 թվին շահի հրամանով ընդհանուր պետ Ատրպատականի , Վրաստանի և Հայաստանի: Շահումյանի տարօրինակ մեկնությունը այլ իմաստ չունի, քան այն, որ վրաց թագավորը իրավունք ուներ Սյունիքի վրա և կարող էր ղրկել այնտեղ հայտնապես մի պաշտոնյա որևէ հանձնարարությամբ՝ առանց կասկածի տեղիք տալու: Այս բանը հաստատվում է մի ուրիշ վկայությամբ: Բաֆֆին հրատարակել է **«Վկայագիր Ուռպելեանց»** վերնագրով մի թուղթ 1835 թվակիր, բազմաթիվ ստորագրություններով, որոնց մեջ կան պատկառելի անուններ՝ Սիմեոն

[1]Բաֆֆի, Դավիթ Բեկ, էջ 363:

արքեպիսկոպոս Տաթևի, Քաղդասար մետրոպոլիտ, Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյան, մելիք Մանուչար Ռոսթեյանց Տաթևացի: Դավիթ Բեկի մասին այս թղթի մեջ ասված է. «Բնակիչք Սիւնեաց ի 1722 ամին գրեցին զթուղթ աղաչանց առ Շահնաւազ իշխանն՝ **առաքել զօրաւոր ոք, զի իշխեսցէ ի վերայ գաւառին եւ յանդորրու պահեսցէ զհայս որք ի նմին**»: Ապստամբության մասին խոսք չկա: Թուղթը վկայում է ինչ-ինչ անձերի սերումը Դավիթ Բեկից, երևի, Ռուսաց կառավարությանը ներկայացնելու և այդ անձերի ազնվական ծագումը հաստատելու համար: Ուրեմն տեղն էր հիշել, որ Դավիթ Բեկը արյուն է թափել ռուսների համար կռվելով պարսիկների դեմ: Սակայն, ստորագրողները այդ չեն ասում, որովհետև նրանց գիտությամբ Դավիթ Բեկը եկած էր որպես պաշտոնյա կառավարիչ: Քաղդասար մետրոպոլիտը և Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը քաջ տեղյակ էին Դավիթ Բեկի գործերին, և նրանց ստորագրությունը ուշադրության արժանի է գոնե այս կետում[1]:

Վախթանգը սպասում էր ռուսներին Գանձակում, աշնանը: Եթե ճիշտ է մեր ենթադրությունը, որ Դավիթ Բեկը Գանձակից է եկել Սյունիք, գալուստը պիտի տեղի ունեցած լինի մոտավորապես նույն ժամանակները, և հավանորեն քոչվորները ենթարկվել են նրա հարձակմանը աշնանը՝ սարից իջնելիս: Երևանը ընկավ օսմանցիների ձեռքը 1724 թվի հոկտեմբերի 1-ին (14): Երևանի խանի եղբայրը անցած պետք է լինի Օրդուարից հետևապես այդ միջոցները: Այսպիսով, Դավիթ Բեկի կռիվները տևել են 1722 թվի աշնանից մինչև 1724 թվի աշունը, ուրեմն ուղիղ երկու տարի: Նա կռվել է երկու կարգի թշնամիների դեմ, նախ՝ քոչվոր թարաքյամայի և երկրորդ՝ Չավնդուրի և Գեղուազի շրջանում ապրող մի քանի թուրք պետերի: Սրանցից Ասլամազ Ղուլին և երկու եղբայրներ՝ Փաթալի սուլթանը և Աղասին, նմանապես ցեղապետներ են, այսինքն՝ քոչվորների գլուխ: Ասլամազը զարկվում է Բուխուրութ լերան վրա, ապաստանում է Ջեվու բերդը և պարտվում: Երկու եղբայրները 12 հովիվ ունեին և անհամար հոտ: Նախահարձակը Դավթի զինակիցն է, որ թալանում է սրանց ոչխարները: Պարզ է, որ գործ ուներ խաշնարած ժողովուրդի հետ: Մեր աղբյուրը նրանց անվանում է մերթ Չավնդուրի, մերթ Բարկուշատի իշխեցողներ: Այս նշանակում է, որ նրանք Բարկուշատի դաշտերից, որ իրենց ձմերոցն էր, բարձրանում էին Չավնդուրի լեռները ամառ ժամանակ: Գալով լեվազգի Սափի ղուլիին և Գաց (Կաց) գյուղի Սայիլին՝ դրանք տեղական բեկեր են, թերևս, մեր մելիքների նման մի քանի գյուղի սեփականատեր: Ամեն պարագայի սրանք պետական պատասխանատու պաշտոնյաներ չեն: Երկիրը ենթակա էր

[1] «Ռուսներէնաց վկայագիրքի» և հարակից խնդիրների մասին կխոսենք ուրիշ անգամ (15):

Նախճվանի խանի իրավասության: Սրա անցողակի միջամտությունը անստույգ ենք համարում: Արդարև, եթե նա Դավիթ Բեկի դեմ ելած լիներ և հաղթած, քնավ չէր նահանջի կովի դաշտից՝ առանց զսպելու խռովությունը: Նրա միջամտությունը չենք տեսնում նաև հետագա տարիներին: Երկրի տերն էր և պատասխանատուն և պետք է, որ հետապնդեր խռովարարներին, եթե նրանք իրոք պետության թշնամիներ լինեին: Հաջորդ 1724-1726 տարիները չգիտենք ի՞նչ էր Դավիթ Բեկի վիճակը: Ստեփաննոսն այս մասին լուռ է: Հավանորեն տեղյակ չէ գործին: Երևանի խանի եղբոր դատաստանը, որով պատժում է զանգատավոր թուրքերին և ոչ հայերին, թվում է, թե վերջ է դնում թշնամական ընդհարումներին: Դավիթ Բեկը ևս ստիպված է լինում զենքը վայր դնել և ահա ինչու: Նա եկել էր Վախթանգի և Եսայիի կողմից, պաշտոնապես թե անպաշտոն կերպով: Վերև բացատրեցինք մեր ենթադրություններն այս առթիվ: Եկել էր նախապատրաստելու երկիրը ռուսներին ընդառաջելու ծրագրի ոգով: 1722 թվի վերջերը Վախթանգի և Եսայի կաթողիկոսի հույսերը ի դերև ելան: Պետրոս Մեծը ձգձգում է իր խոստումը, հայտնելով, որ մինչև չտիրանա Կասպից ծովի եզերքին, չի կարող օգնության գալ և խնդրում է Վախթանգին միջնորդել պարսից շահի առաջ՝ զիջանել հիշյալ ծովեզերքը ռուսներին: Վախթանգը հուսահատ վերադառնում է Թիֆլիս, որ գրավված էր իր հակառակորդ վրաց իշխանի կողմից, որ բարեկամ էր պարսից տիրապետությանը (16): Օսմանցիների հարձակումով դրությունը բարդանում է: Ռուսները մի թեթև գունդ են ղրկում պաշտպանելու Վախթանգին ընդդեմ օսմանցիների՝ 1723 թվին: Վախթանգը պարտվում է և հարկադրվում թողնել հայրենիքը և ապաստանել Ռուսիա: 1724 թվի օգոստոս ամսին արդեն հայրենիքից դուրս էր: Հույսերի և ծրագրի խորտակումը կատարյալ էր: Լուրը անտարակույս հասնում է Դավիթ Բեկին և սանձում նրա եռանդը: Ահա ինչու այնուհետև 1724-1726 թթ. նա անգործության է մատնված: Հավանական է, որ լրաբերը նույն Հովհաննես Գուգարացին էր (իմա՛ Ավան Ջրաբերդցին): Ստեփան Շահումյանը տեղյակ չէ Դավիթ Բեկի գաղտնի հարաբերությանը Վախթանգի և Եսայի կաթողիկոսի հետ: Այս է պատճառը, որ Հովհաննեսի գալն ու գնալը առասպելական ձև է ստացել նրան հասած լուրերի մեջ:

Այսպիսով, Դավիթ Բեկը ձեռնամուխ եղավ կատարելու միմիայն նախապատրաստական աշխատություն և առանց ապստամբական ցույցերի: Այդ աշխատությունն էր տնտղել տեղական մելիքների, եկեղեցականների և ազդեցիկ ուժերի տրամադրությունները, այժմեն մեկուսացնել վտանգավոր կամ անվստահելի իշխաններին և մանավանդ մաքրել ռազմագիտական դիրքերը այնտեղ բուն դրած թուրք խաշնարած ցեղերից:

Այս աշխատանքը կատարվեց մի քանի քաջերով առանց երկրի բարձր իշխանության՝ Նախճվանի խանի ուշադրությունը գրավելու, այնպիսի համոզմամբ, որ Երևանի խանի եղբայրը մեղավոր ճանաչեց քանք գանգատողներին, առանց խոժռոտելու հայերի դեմ:

Քոչվորների հետ ընդհարվելը քաղաքական կասկած չէր կարող հարուցանել: Սովորական երևույթ էր հնուց ի վեր: Կար ժամանակ, երբ հայերն իրենց հոտը տանում էին ձմերելու Կուրի և Երասխի դաշտերում և փոխարենը քույլ էին տալիս տեղացիներին անցնելու ամառը Հայոց սարահարթերում: Լեռնականները ասպատակեցին 670-ական թվականներին Կուրի և Երասխի ափերում ճարակող հոտերը, ոչ միայն բնիկների, այլ և որ «յԱյրարատեան գաւառացն եւ ի Սիւնաստանեայց աշխարհէն հօտք եւ անդեայք ի ձմեռնաճաշակ դաշտն եկեալ էին յարօտ»[1]: Իսկ 851 թվին տեղատարափ անձրևը «ութ հարիւր վրան խաշնարածաց տարաւ, որք եկեալ էին ի Կաւկասայ յապուր՝ յատուրս ամարայնոյ» Մեծիրանց գավառ, որ գտնվում էր Խաչենի շրջանում[2]:

Ներկայումս թարաքյամա քոչվորները Կուրի ափերից բարձրանում են Արցախի և Սյունիքի վրայից մինչև Նախճվանի և Դարալագյազի լեռները և շատ հաճախ տեղի են տալիս բախումների, երբեմն արյունահեղ: Սար բարձրանալիս կոխոտում են ու փչացնում կանաչ արտերը և իջնելիս՝ քշում տանում են խառնելով իրենց հոտերին հայ գյուղերի անասունները[3]:

Անցնինք «**Դավիթ Բեկ**» վեպին: Թեև մեր նյութից դուրս է գտնվում գրական քննությունը, բայց նկատելու ենք, որ վեպի շենքը համաչափ չէ և հորինված է, կարծես, առանց մշակված ծրագրի: Գրիչն ընթացել է ոչ մտքի ետևեն, այլ նրա հետ միասին և ստեղծել է հերոսների համար երբեմն դժվար կացություններ, որտեղից հանելու համար ստիպված է եղել շեղվել պատմության թելից, նոր օժանդակ դեմքեր հանդես բերել, անբնական տեսարաններ կերտել: Այս բոլորը խանգարել են երկի ներդաշնակությունը: Վերջին գիրքը ավելի ստվար է, քան առաջին երկուսը: Հեղինակը առանձին փույթ չունի գեղարվեստականի մասին. նրա համար ավելի թանկ է երկի գաղափարախոսությունը, որ արտահայտում է ոչ միայն գործող անձերի բերանը դրած ճառերով, այլև նրանց հերոսական նկարագրով: Առաջին երկու գրքերը նվիրված են ամբողջովին Դավիթ Բեկին և Ստեփաննոս Շահումյանին:

---

[1] **Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Գիրք Բ, գլ. 26:**

[2] Անդ, Գիրք Գ, գլ. 21:

[3] Ուշբեփեն հայտնի է այժմ ևս հայ-քոչվոր կռիվներով, որի մասին խոսք կլինի վերև խոստացած հոդվածում:

Դավիթ Բեկը փրկվում է մահից, փախչում Վրաստան և այնտեղ «առաջին պետական մարդ դառնում»: Ճիշտ ինչպես հնում Տրդատը փախավ Հռոմ և հռչակ ստացավ իր քաջությամբ: Ստեփաննոս էլ գերությունից է ազատվում շնորհիվ իր քեռի Թորոսի: Պատմական քիչ բան կա այս երկարաձիգ պատմության մեջ: Բացի մի քանի անուններից, մնացածը՝ դեմքեր թե տեսարաններ, երևակայության արդյունք են: Ավելի պատմական է երրորդ գիրքը՝ Դավիթ Բեկի գործունեությունը: Հիմը կազմում է Ստեփաննոսի՝ վերևը քննած պատմությունը: Աշխարհագրական քարտեզը և անձերը նույնն են, բացի մի քանի թարմատար դեմքերից: Հարկավ պատմության համեստ գործիչները դարձել են վեպի մեջ հայտնի մեծություններ:

Գործողության դաշտը Սյունիքի յոթն գավառներն են, ուր տիրում են՝

Գողթան, մելիք Մուսին,
Գեղուազ, իշխան Ստեփան Շահումյան,
Ղափան, մելիք Փարսադան,
Չավնդուր, Թորոս իշխան,
Բարկուշատ, մելիք Ֆրանգյուլ,
Սիսիան, իշխան Բայինդուր,
Ջանգեզուր, Մխիթար սպարապետ[1]:

Այս անձերից ոչ ոք գավառատեր չէր, և ոչ էլ Ստեփանը, Թորոսը, Բայինդուրը իշխաններ էին:

Մելիք Փարսադանը «երկաթե սիրտ ունի եւ գայլի խիղճ», Ստեփանը՝ «սատանայի խելք և Ռուստեմի քաջություն», Թորոս իշխանը՝ «փղի ուժ եւ առյուծի սիրտ», Բայինդուրը՝ «սարսափելի հսկա է», Ներսես եպիսկոպոսը՝ «Օմարի եւ Եազիդի նման արյունարբու է, իսկ Հարուն ալ Ռաշիդի նման անողոքելի»[2]: Այս նկարագիրները պատմական չեն և ոչ վիպական, այլ դյուզացներգական, եթե կուզեք: Վիպագրի ցանկությունն է տեսնել նրանց այդպիսի հատկություններով:

Վեպի գլխավոր գործողները վարում են գնդեր՝ գնդապետներ են: Կան և խմբապետներ, որոնք փոքր խումբերի գլուխ անցած շփոթություն են ճգնում թշնամու բանակում՝ հեղակարծ հարձակումներով և ավազակային հափշտակություններով: Սրանց գործերը չեն ներկայացրած, հիշված են միայն խմբապետների անունները՝ Վաղարշապատցի Հարություն տաճուտեր, Գանձակեցի Եղիազար աղա և Թադեոս բեկ, Շուշեցի Զաքարիա

[1] Րաֆֆի, Դավիթ Բեկ, էջ 371:

[2] Անդ, էջ 518, 521:

իշխան (Շուշին գոյություն չուներ այն ժամանակ), Լոռեցի Ավքանդիլ, Երևանցի Օհաննես, Մեղրեցի մելիք Կոստանդին և այլն[1]: Այս անունները պատմական են, առնված են վերևը հիշված ցուցակից, գնդերի թիվը և քանակը ևս այստեղից է[2], բայց տիտղոսները և նրանց գործունեության վայրերը պատկանում են վիպագրին: Կռիվների դաշտը հասցրել է մինչև Դարտլաղյազ և Սևանա լճի ափերը:

Թշնամի բանակի գլխավոր դեմքերը ևս պատմական են, ինչպես Փաթալի և Աղասի եղբայրները, Ասլամազ դուլին և ուրիշները: Հարկավ սրանք էլ են արժանացել ավելի բարձր աստիճանի, քան ունեին: Փաթալին, հասարակ ցեղապետ, դարձել է խան և բռնապետ Փայտակարանի և ձգտում է ձեռք ձգել ամբողջ Ղափանը: Փայտակարանը՝ Ղարադաղը չէ, ինչպես սխալմամբ նույնացրել է Բաֆֆին: Ասլամազ դուլին նմանապես խանի դիրք ունի և տեր է Զեվու բերդին:

Դավիթ Բեկի կռիվներից ճեծ տեղ են բռնում վեպի մեջ Զեվու բերդի պաշարումը և Եղվարդի ճակատը[3]: Պաշարումի երկարաշունչ մանրամասնությունները վառ երևակայության արդյունք են: Ստույգ է միայն, որ Տեր Ավետիքը վճռական դեր է կատարել:

Եղվարդի կռիվը մղված էր ընդդեմ Փաթալի և Աղասի եղբայրների: Թորոսն ընկավ կռվում, բայց Շահումյան գերվեց ոչ այս կռվում, այլ Խոտանանի արշավանքին: Սրա առաջին գերությունը և դարձը շնորհիվ Թորոսի՝ պատմական չեն: Ստեփանոսը Թորոսի քեռորդին չէր:

Երկու հայ մելիքները՝ Դավիթ և Ֆրանգյուլ, հանված են խիստ բանճր գույներով, քան իրավունք է տալիս պատմությունը: Նրանք պետք չուներին սողալու թուրք եղբայրների առաջ: Երկրի խանը նստում էր Նախճվան, որի իրավասության տակ էին հայ մելիքները և թուրք եղբայրները: Սրանք Ղափանի տերերը չէին, ուրեմն և չէին կարող խոստանալ Ղափանը զիջանել փառասեր մելիքին որևէ գնով:

---

[1] Բաֆֆի, Դավիթ Բեկ, էջ 308, 404, 519 և այլուր::

[2] Անդ, էջ 422

[3] Զեվու բերդը գտնվում է Օխչի գետի վերա, հին Քաղաբերդի և Աչաղուի մոտ: Բաֆֆին գիտե այս, բայց չփոթմամբ դնում է Զեվուն Հալիճոր բերդի մոտ, որ սխալ է: Հալիճորը Որոտան գետի ափին է Տաքևի մոտերքը և բավականին հեռու Զեվուից: Աշխարհագրական անճշտություններ պակաս չեն վեպի մեջ: Այսպես Աջրեջ Սիսիանում չէ, այլ հին Աջաբան է (Ստ. Օրբելյանի ցուցակում տպված է՝ Աջարաջ) Ջորք, այսինքն՝ Կապան գավառում: Հիշվիտ գյուղ, ուր գլխատվեց Պապ, թվում է, թե հին Շաշիկետն է, որ ընկնում է Կովսական գավառում, Շիկահող գյուղի շրջանում: Շաշիկետը դարձել է Շշիկետ և Իշկետ: Ափկիս՝ հին Ափկավանք, Արևիքում:

Ընդհանուր առմամբ վեպը հավատարիմ է մնացել իր պատմական վերև քննված աղբյուրին: Սակայն այս միայն վեպի կմախքն է: Արդյո՞ք նրա մարմինը, ամբողջությունը ևս պատմական է: Անգամ պատմությունից առած դեմքերի նկարագիրը հեռու են պատմական իրականությունից: Պատմական լինելու համար անհրաժեշտ չէ ամենևին, որ վեպի դեմքերը և նյութը քաղված լինեն պատմությունից: Գործող անձինք կարող են լինել շինծու, անծանոթ պատմությանը, բայց եթե նրանց նկարագիրը, նրանց ոգին, աշխարհայացքը համապատասխան են ընտրած պատմական միջավայրին, կլինեն պատմական:

«Դավիթ Բեկ» վեպը, չհաշված կմախքը, մյուս մասերով խորթ է Դավիթ Բեկի ժամանակակից իրականությանը: Հեղինակն իսկապես նպատակ էլ չի ունեցել վերակենդանացնել գեղարվեստական պատկերների և տիպար դեմքերի միջոցով անցյալի մի էջը: Անցյալը նրան հետաքրքրել է ոչ անցյալի համար, այլ որպես մի «դասարան» քաղաքական կրթության: Եվ դասարանի մեջ ինքն է նստել և ինքն է խոսում, քարոզում: Հին ռազմիկներին հանել է դարավոր մեռելությունից, բայց նրանց մեջ դրել է իր հոգին, իր միտքը, իր լեզուն: Նրանք սոսկ դիմակներ են, որոնց ետևը կանգնած է հեղինակը և թելադրում է ոչ միայն նրանց ճառերը, խորհուրդները, հուզումները, այլ անգամ գործելու կերպերը: Բոլորեքյան խոսում են հեղինակի բերանով, չէ թե միայն հերոսները՝ Դավիթ Բեկ, Մխիթար, Քայիներուր, Ներսես եպիսկոպոս, Շահումյան, այլ անգամ Փաթալի խանի հարեմի բնակիչները՝ Սյուրիի և Ներքինապետ Ահմեդը, երկուսն էլ կրոնափոխ հայեր են, բայց մնացել են մաքուր, գաղափարական հայրենասերներ, ապրելով հանդերձ տասնյակ տարիներ հարեմական մթնոլորտի մեջ: **«Դավիթ Բեկ»** վեպը մի կենդանի հիշատակարան է հեղինակի անձնական հայացքների, հասարակական և քաղաքական գաղափարների և տրամադրությանց, մանավանդ նրա տեսությունները՝ բռնության դեմ պայքարելու եղանակների, ստրկության լուծը թոթափելու միջոցների վերաբերյալ:

Դավիթ Բեկի ծնողները մի խումբ ուրիշ հայերի հետ իրենց այրել էին խանի դատարանի առաջ, «կամենալով ինքնակամ մահով բողոքել տիրող անարդարության դեմ. իրանք մեռան, բայց անարդարությունը մնաց...»[1]: Դավիթը փրկվել էր բարեսիրտ ներքինապետի ջանքով, խնամվել: Պատանու կյանքը հնարավոր փորձանքից զերծ պահելու համար, ներքինապետը խորհուրդ է տալիս գնալ Վրաստան: Նախքան հեռանալը պատանին այցելում է իր անբախտ ծնողների գերեզմանը, որտում

[1] Րաֆֆի, Դավիթ Բեկ, էջ 157:

արտասուքով նրանց կորուստը և լսում է մի ձայն, թե «դառնության բաժակը լցված է» և ուխտում է «մինչեւ մահ կռվել անարդարության դեմ»[1]: Հրաժեշտի ժամին խանի կինը, որ տեղյակ է պատանու ընտանեկան դժբախտության, և նրա հովանավորը, ողջերթ է մաղթում խրախուսական խոսքերով, որ ինքը «հավատում է Աստծո արդարադատությանը և հույս ունի, որ բոլոր չարիքների հատուցում կլինի, ճեղյալները կվայելեն ազատություն, իսկ ճեղիչները սոսկալի դատապարտություն» (էջ 160): Ներքինապետն իր կողմից հանձնում է պատանուն Սյունյաց աշխարհի մի հզոր թագավորի **թուղթ**, որ հանել է խանի գանձարանից, մի թուղթ, որ միաժամանակ հայ թագավորի հզոր ձեռքում պաշտպանում էր մեր հայրենիքը. «Ծո՛ղ այսուհետեւ այս թուղթը հիշեցնե քեզ նրա ցավալի անկումը, թող ոգևորե քեզ նրա վերականգնման համար գործել»: Ներքինապետն ավելացնում է, որ հորդորիչ խոսքերը «իր գլխից չի ասում, այլ Աստված ինքն է հայտնել նրան մի **տեսիլքի մեջ**, ուստի ինքը հավատում է պատանու **ճակատագրին»** (էջ 165):

Դավիթ Բեկը Վրաստան է: Օտար ծառայության մեջ մոռացել է իր ուխտը: Ահա հասնում են նրան երկու նամակ, մեկը կրում է Սյունյաց աշխարհի հոգևորական և աշխարհիկ մեծամեծների ստորագրությունն ու կնիքը, մյուսը՝ Ստեփան Շահումյանից է: Առաջին նամակի մեջ հայրենիքի վիճակը նկարագրված է շատ տխուր և հուսահատ գույներով՝ կնիկներ, աղջիկներ բռնաբարվում են, վանքերն ու եկեղեցիները ապականվում, խաչերը շների վզից կախված, երեխաներին խլում վաճառում են օտար երկիրներ, մի խոսքով ստրկության լուծը, կյանքի դառնությունը այնքան սաստկացել է, որ ժողովուրդն ուխտել է **«կամ միանգամով կոտորվել և բնաջինջ լինել, կամ բոլորովին ազատվել մահմեդական բռնակալությունից»**: Երկիրն աղերսում է, որ Դավիթը վերադառնա և առաջնորդե ժողովրդին» (էջ 174):

Իսկ Ստեփան Շահումյանը հիշեցնում է իր նամակում Դավիթ Բեկին, թե միասին Հայոց պատմության դասեր են առել Տաթևի վանքում և գիտե, որ հնուց ի վեր հայերը նշանավոր մարդիկ են տվել, որոնք սպասարկել են իրենց հանճարը դրացի ազգերին և մեծ անուն վաստակել, փառքի արժանացել, սակայն նամակագիրը կգերադասեր, որ այդ մարդիկ աշխատեին հայրենի հողի վերա և հայրենիքի համար: Այնուհետև դառնալով Դավիթ Բեկին, գրում է. «Ես գիտեմ քո մեծահոգությունը, դու այն տեսակ մարդիկներից ես, որոնց համար հայրենիք և ազգություն չկա, որոնց հայրենիքը

[1] **Րաֆֆի**, Դավիթ Բեկ, էջ 161 (այսուհետև համապատասխան հղումների էջերը կտրվեն տեքստում):

լայնածավալ աշխարհն է, իսկ ազգությունը՝ ընդհանուր մարդկությունը, սակայն օտարներին կերակրել, երբ մեր զավակները քաղցած են, մեծ առաքինություն չէ» (էջ 179): Դավիթի օգնությունն անհրաժեշտ է համարում Շահումյանը և ուրիշ նկատումով՝ «Մեր ազնվական դասը փչացած է,- գրում է նա,- նրանց վրա հույս դնել չի կարելի: Դարերի ընթացքում, պարսից ազդեցության ներքո, ազնիվ արյունը նրանց երակներում խարդախվեցավ: Այժմ ժողովրդին պետք է փրկե ժողովրդի մարդը, նրա միջից դուրս եկած, նրա հարազատ որդին: Ո՞վ կարող է լինել այդ մարդը բացի քեզանից, Դավի՛թ» (էջ 180):

Պակաս չեն հակազդեցությունները հախուռն տեսությունների մեջ: Շահումյանի բերանով կոսմոպոլիտ է անվանում Դավթին, մի մարդու, որ պատանեկությունից ուխտել էր կռվել հայրենիքի ազատության համար: Այլև ապականված է համարում ազնվական դասը, մոռանալով, որ Դավիթը ազնվական էր, բեկ էր, և, իր իսկ կարծիքով, Տաթևի մելիքների՝ Օրբելյան հռչակավոր տոհմից էր (էջ 287): Դավթի զինակիցների մեծագույն և կարևոր մասը ևս կրում են բեկ, մելիք, յուզբշի, տանուտեր տիտղոսները, որոնցով վիպագիրն ինքն է մեծարել հակառակ պատմական աղբյուրի լռության:

Գուցե ժողովուրդը իրոք ավելի մաքո՞ւր է մնացել, քան իր բարձր դասակարգը: Բայց ահա ի՛նչ ահավոր վկայական է տալիս հայ ժողովրդին: Սյունեցի Բայինդուրը, ազատության այդ զինվորը, «և՛ սիրում է հայերին, և՛ ատում»: Ատելությունից բխած սերը չի կարողանում բացատրել. «Սիրում եմ այդ ազգը որպես մի սիրահար սիրում է մի ցած, բարոյապես ընկած, պոռնիկ կնոջ», թաթախված քարոյական ցեխի մեջ. «մի մեծ պոռնիկ, որի երեսին ամոթի և պատվի մի կաթիլ չի մնացել: Չորս հազար տարի նա պոռնկություն է անում, բայց տակավին չկշտացավ»: Հազարավոր տաքիներ անճնատուր է եղել այդ պոռնիկը հույն, պարսիկ, հռոմայեցի, արաբ, մոնղոլ հռոմանիներին, «իր մարմինը վարակված է հազարավոր հիվանդություններով, մահվան հոտ է փչում», և այլն (էջ 428): Պետք կա՞ ասելու, որ հայ անցյալն ու ժողովուրդը արժանի չեն այսպիսի մի անվայել և անիրավ համեմատության:

Դավիթ Բեկը իր զինակիցներով մտնում է Տաթև: Վաթդանանց տունն էր: Ներսես եպիսկոպոսը հոգեհանգիստ էր կատարում Ավարայրի նահատակների հիշատակին: Սեղանի առաջ դրված էր «մի դագաղ ծածկված ասկեհուռ դիպակներով՝ վրան մի խաչ, մի Ավետարան և մի քանի հատ սուր»: «Դա Վարդանի դագաղն է», - կոչում է քարոզիչ եպիսկոպոսը, «Վարդանը ժողովրդի մարմնացած բողոքն էր: Բողոք՝ բռնության դեմ, բողոք՝ անարդարության դեմ, բողոք՝ անազատության դեմ»: Մեր պատմության նշանավոր մարդիկ՝ Հայկ, Արամ, Տիգրան չեն կարող համեմատվել Վար-

դաճի հետ: Ինչո՞ւ: Եպիսկոպոսի կարծիքով, «այդ քաջերի հետ մնացած էր զորքը, այսինքն՝ վարձկանների մի դասակարգ, որոնց գործ էին ածում աննպատակ աշխարհակալությունների մեջ», միայն իրենց փառքի համար: «Զորքն արյուն էր թափում, իսկ նրանք փառք էին վայելում: Զորքը հողեր էր տիրում, բայց նրա որդիքը քաղցած էին մնում, արդյունքը շռայլում էր զորքի տերը»: Մինչդեռ Վարդանը՝ ինքը ժողովուրդն էր. նրա հետ էր «կղերը՝ մի ձեռքում խաչ, մյուսում՝ սուր: Նրա հետ էր շինականը, մի ձեռքում բահ, մյուսում՝ նիզակ: Նրա հետ էր ազնվականը, քաղաքացին և, որ ամենագլխավորն է, հայ կինը»: Մի քանի օրվա մեջ Արտաշատում հավաքվում է 60 հազարից բաղկացած մի բանակ, որ կատարեց Ավարայրում «այն փառավոր հաղթությունը, որը մեր պատմության մեջ մինչև դարերի վերջը կփայլի որպես մի պայծառ աստղ»: «Այժմ ես այս դագաղից դուրս կկոչեմ Վարդանի հոգին, թող նա խոսե ձեզ», թե ի՞նչ էինք մենք առաջ և ի՞նչ ենք այժմ. համեմատության կետ չկա, մեր ներկան նման չէ անցյալին: Ո՞ւր են այն քաջերը, որ սարսափեցնում էին պարսիկներին, հոներին, արաբներին, թաթարներին: Մեր հայրերի անհարազատ սերունդն ենք. այն հայրերի, որ հարգանք ու պատկառանք էին ազդում օտարներին: Արդ, ինչո՞ւ ենք մենք այս օրին հասել: Քարոզիչը մոռանալով, որ ինքը եկեղեցական է, հայտարարում է, որ մեր խղճության առաջին պատասխանատուն մեր եկեղեցականներն են, որ «թուլացրին ժողովրդի սիրտը, խլեցին նրա քաջությունը, մեռցրին նրա կենսական ուժերը և քրիստոնեության, խոնարհության և համբերության անունով սովորեցրին նրան ստրուկ լինել»: Եկեղեցականները չեն հասկացել, որ «մեր կրոնը անձնապաշտպանության դեմ չէ», որ «սեպհականության իրավունքը սուրբ է Աստծո համար», որ «հայրենասիրությունը, ազգասիրությունը ամեն մի անհատի սուրբ պարտավորություն է, որ Աստված ինքը հրամայեց Իսրայելին կոտորել ոչնչացնել իր թշնամիին»: Քարոզիչը ցավում է, որ «մեր կույր, տգետ, անկիրթ եկեղեցականները» չեն բացատրել, չեն քարոզել, թե Աստծո ընտրյալները՝ Մովսես, Հեսու, Դավիթ որքան միլիոնավոր մարդիկ են կոտորել, որքան ազգեր ոչնչացրել, մինչեւ կարողացել են իրենց ազգը հաստատել իր հայրենական երկրում»: Շատ քչերն են ըմբռնել, որ պետք է (!) «խաչի հետ սուր», որ եկեղեցու շահերը պետք է հաշտեցնել պետության շահերի հետ: Քչերի թվում են Ներսես, Սահակ, Հովսեփ և Ղևոնդ: Քարոզիչը վերջացնում է իր խոսքը հայտնելով, որ մի նոր Վարդան է հանդես եկել, որ կամենում է հայրենիքը փրկել: Այդ Դավիթ Բեկն է, և հրավիրում է ներկաներին մոտենալ և Վարդանի դագաղի վրա երդվել հավատարիմ մնալ նոր Վարդանին (էջ 389-401):

Օրվա հերոսը, Դավիթ Բեկ, խոսք է առնում և հայտնում, որ հայրենիքը

կարոտ էր այս շարժման, որի գլուխն է անցել ինքը, հավատացած լինելով, որ Հայաստանի Աստվածը կօգնե իրենց, ինչպես օգնել է մեր նախնիքներին. «Մենք պիտի կռվենք քոնության, անարդարության և սարկության դեմ»: Հավատքը, անկեղծությունը և անձնազոհությունը գլխավոր պայմանն են հաջողության: Մխիթար սպարապետը, թեև չի հավատում թախտին, բայց հավատում է «Հայաստանի **աստղին»**, հավատում է, որ «կա երկնքում մի **արդար դատավոր,** որը վերջապես կլսե թշվառի ձայնը և նրան ուժ ու զորություն կտա փշրելու ամբարտավան քոնակալի եղջյուրները (էջ 313):

Մեր վիպագիրը՝ նոր Եղիշե, իր հերոսը՝ նոր Վարդան, պետք է որ լինեն և՛ նոր Վասակներ: Եվ կան մելիք Դավիթն է Տաթևացի և մելիք Ֆրանգյուլ Երիցվանենկցի: Սակայն, սրանք մենակ չէին որպես շարժման հակառակորդներ: Բազմաթիվ մելիքներից միայն մելիք Փարսադանն է հարել Դավիթ Բեկին և այն էլ ո՛չ անմիջապես: Շահումյանը խորհուրդ է տալիս կոչ անել տեղական մելիքներին: Դավիթ Բեկը գտնում է, որ «զգույշ, մտածող և, իրենց կարծիքով, խոհեմ պարոններն են, որ իրանց մելիքներ, տանուտերներ ու բեկեր են կոչում, և որոնց յուրաքանչյուրը մի-մի վիճակի տեր է, լոկ խոսքերով չի կարելի համոզել: Նրանք դարձյալ կմնան իրենց **խոհեմության մեջ**, որ մի տեսակ խոհեմ անտարբերություն, խոհեմ մեռելություն է: Նրանց պետք է ցույց տալ շոշափելի փաստ, պետք է ցույց տալ, որ փոքրաթիվ մարդիկներով ևս կարելի է մեծ գործ սկսել» (էջ 369-370):

Գործը սկսվեց: Բայց միայն մելիք Փարսադանն եկավ, մյուսները մնացին իրենց խոհեմության մեջ: Նրանցից երկուսը ժառանգեցին ուրացողի և դավաճանի անուն: Ի՞նչ էր նրանց դավաճանությունը մեր վիպագրի հայացքով: Մելիք Ֆրանգյուլը «բնավորությամբ բարի մարդ էր, բայց սաստիկ **փառասեր**: Իր փառասիրությանը զոհեց նա հայրենական կրոնը և մինչև անգամ իր հարազատ աղջիկը», ուզում էր ամեն գնով «պահպանել իր տոհմային ժառանգությունը»: «Իբրև հայ, նա ցանկանում էր Հայաստանի բարիքը, ցանկանում էր, որ այդ երկիրը ազատ լինի, ցանկանում էր, որ նա ուներա իր հայ իշխանը, բայց այդ իշխողը լինի ոչ այլ ոք բայց միայն **ինքը»** (էջ 680): Բայց մի՞թե հանցանք է, երբ մի բարի և հայրենիքին բարիք ցանկացող անձն ուզում է իշխող լինել: Տեսե՛ք, որ ինքը մելիքը, այլ կերպ է բացատրում իր վարմունքը: «Ես միշտ ծածկված եմ եղել մի կեղծ, խաբուսիկ կեղևով,- մենախոսում է ուրացող մելիքը,- դրսից ներկայացել եմ որպես պաշտոնյա, որպես գործիք օտարի, իսկ ներսից պաշտպանել եմ իմ ազգիս շահերը: Ես հայտնապես վնաս եմ տվել իմ ազգին, բայց գաղտնապես օգնել եմ նրան... ի՞նչ պիտի անես, երբ օտարի, երբ թշնամու ծառայության մեջ ես: Մի պատառ պետք է ձգես նրա բերանը, որ կարողանաս ամբողջը ազատել:

Ես տվեցի Փաթալի խանին մի վանք և դրանով ազատեցի մեր բոլոր վանքերը: Ես տվեցի նրա եղբորը իմ հարազատ աղջիկը և դրանով ազատեցի հազարավոր աղջիկներ մահմեդականի կին լինելուց: Ես ուրացա իմ կրոնը, որ դրանով գրավեմ թշնամու մտերմությունը... և նրան իմ ձեռքում պահեմ» և ցավում է, որ չկարողացավ գլուխ բերել ինչ որ նախասահմանել էր (էջ 682-683): Ուրեմն Ֆրանգյուլն իր կրոնը և աղջիկը զոհել էր ոչ թե ուրայն փառասիրության, այլ երկրի բարօրության համար:

Վիպագիրը հավատարիմ չէ մնացել այս տեսակետին: Տեղական մելիքները չեն հարել Դավիթ Բեկին, որովհետև չեն համակրել: Դավաճաններ չէին, այլ «հայրենիքին բարիք ցանկացող» մարդիկ, որ իրենց գիծը ունեին: «Քիչ ուժերով մեծ գործ կատարելու» ինքնավստահությունը հակառակ էր նրանց փորձառությանը, որ թելադրում էր «քիչ զոհողությամբ» խուսափել մեծ վտանգներից: Վեպը անտարակույս շահած պիտի լիներ, եթե հեղինակը լրջորեն վերաբերեր հակառակորդների տեսակետին և տար երկու հայացքների ներհակ ուղղությունը, նրանց բախումը և համերաշխության միջին ճանապարհը: Բայց նա տարվել է Եղիշեի շունչով, և նրանից փոխ է առել դավաճանի պատրաստ մտացածին պատկերը: Մելիք Փրանգյուլ նենգում է Եղիշեի Վասակի նման:

Թողնենք հերոսների թերի պատմագիտությունը, բյուր են մակերեսայինն դատողությունները հայ անցյալի մասին, անզգույշ՝ հարձակումները հայ եկեղեցու և եկեղեցականության վրա: Առնենք միայն նրանց սեփական և շինիչ հայացքները, որոնց էությունը հետևյալն է. «Հայերի սրտում բոլորովին չի հանգած հայրենասիրության կայծը, բավական է փչել նրա վրա եւ իսկույն կրկրրոքվի: Իսկ բոցավառել, բորբոքել հայրենասիրության սրբազան հուրը կարելի է: Այդ կլինի գործի հաջողակ **սկիզբը**, իսկ **վախճանը Աստծո ձեռքումն է**: Պետք է հավատալ Հայաստանի աստղին, պետք է հավատալ երկնքի արդար դատավորին, որ կլսե թշվառներիս ճայնը և ուժ կտա փշրելու թշնամու եղջյուրները» (էջ 313): Ուխտենք ազգովին ծառայելու այս գործին, ուխտենք կամ քնաջինջ լինել կամ փշրել ստրկության շղթաները: Ո՛վ չգա մեզ հետ դավաճան է, մեր սուրը պետք չէ խնայե այդպիսիներին (էջ 403):

Այս հավատամքը պատշաճ է ավելի մի եկեղեցականի, քան քաղաքական գործիչի և հիշեցնում է Եղիշեի ուխտը, որ տանում է դեպի մարտիրոսական թագը: Եղիշեի համար անտարբեր էր հաղթել, թե հաղթվել, երկու դեպքում էլ Աստծո արքայությունը պատրաստ էր: Իսկ լուրջ քաղաքական գլխում հաշվից դուրս պիտի մնան Աստված, ճակատագիր և արդարություն: Սրանք անտես, աներևույթ և անկշռելի ուժեր են, կարող են գալ և չգալ: Հայրենասիրություն, հույս, հավատ՝ հոգեկան կարևոր ազդակներ են, բայց

քավական չեն քաղաքական հեղաշրջումներ առաջ բերելու համար: Հարկավոր է ամենից առաջ զինվորական կարողություն: Դավիթ Բեկը այնքան միամիտ չէր, որ կարծեր թե մի բուռ քաջերով հնարավոր է պարսից պետությունը խորտակել: Նրան թևավորողը ռուսական օգնության հույսերն էին, որին ակնապիշ սպասում էին Վախթանգ և Եսայի՝ նստած Գանձակում: Երբ հասավ բոթարերը, թե կայսերական խոստումներն արդյունք չտվին, Դավիթ Բեկը սուրը դրավ պատյանի մեջ: Նա Թամարին խոստացել էր, թե նպատակ է «ազատել հայրենիքս, ազատել իմ ազգը և Հայաստանի **թագուհու թագը քո գլխին դնել**» (էջ 329): Այս է վեպի նախնական հանգույցը, որ պիտի լուծվեր Դավթի հաղթանակով՝ պսակված արքայական թագով: Վիպասանը գիտե, որ Դավիթ Բեկը հույս ուներ դրսի օգնության. տեսանք, որ Գանձակում բանակած հայ 60 հազար երևակայական զորքի հրամանատարը, իր կարծիքով, Դավիթ Բեկն էր: Նա անտես է արել վեպի մեջ արտաքին նեցուկը և ակամայից թողել է հերոսին կես ճանապարհին, առանց թագի: Այս զանցառությունը խորհրդավոր է:

«Դավիթ Բեկ» վեպը այսօր մեզ համար պատմական է կրկնակի իմաստով: Նրա հերոսը 1722 թվականի մարդ է, բայց խոսում է 1881 թվի լեզվով: Այդ լեզուն չի պատկանում միմիայն հեղինակին՝ Րաֆֆուն: Այդ այն լեզուն է, որ սեփական էր իր ժամանակակից հայ մտավորականության կամ այն հասարակության մի զորավոր հոսանքի, որ սկսվել էր վաղուց, բայց մի նոր երանգ էր ստացել 1878 թվից հետո: Ազատամիտ հոսանք էր ընդդեմ պահպանողականի: Նա ճոխացրեց իր ազատական գաղափարաբանությունը քաղաքական նոր տրամադրություններով՝ Հայկական հարցի միջազգային փուլի շուրջ ճառագայթած լույսի և հույսի ազդեցության տակ: **«Դավիթ Բեկ»** վեպը հասունացել է այդ մթնոլորտում, ուր այն ժամանակ աշխատում էր հեղինակը: Վեպի մեջ պակաս չեն էջեր և հայացքներ, որոնք հիշեցնում են «Մշակ»-ի հրապարակախոսությունը: Րաֆֆին հաղորդ է նոր տրամադրություններին և հավատարմորեն վերարտադրել է նրանց ոգին իր վեպի մեջ: Սուր աչքով նկատել է և սևեռել է մի մտայնություն, որ հազիվ ծայր էր տվել և միմիայն տասը տարուց հետո պիտի ճևավորվեր և մարմնանար գրեթե այնպես, ինչպես ինքը նախատեսել էր (17): Հարկավ, ազատագրական շարժումը շատ բան է պարտական Րաֆֆուն, բայց սխալ կլիներ կարծել, թե շարժումը նրա զավակն է: Իրապես երկուսն էլ ծնունդ են այն հովերի, որ գալիս էին 16-րդ հոդվածի խոստումներից: Շարժումի կարապետները եղել են նույն միջավայրից, ուր աշխատել է Րաֆֆին: Նրանք չէին որոճում ապստամբական լայն շարժումներ, գիտեին, որ հնար չէ ոտքի հանել մի ժողովուրդ, որի հարյուրից իննսունը հրացան չէ տեսել և դեռ ծանոթ չէ զինվորագրության և ուրեմն չունի զինավարժության և

զինվորական կարգապահության ընտել շարքեր: Նրանք հավատացած էին, որ մեծ պետություններն իրենց հետ են, որ իրենց թիկունք կլինեն նաև ճնշված ազգվածների «պաշտպան» Ընկերվարական Միջազգայնականը և ուրեմն բավական է բողոքել տրտունջի ցույցերով, ըմբոստական պայթյուններով, և խոստացված բարեկորոգումները կիրագործվեն: Այսպես էր մտածում և Րաֆֆին: Երբ իր հերոսի բերանով ասում է թե՝ «Սկսենք գործը, մնացածը Աստծո ձեռքին է, Հայաստանը աստղ ունի, երկնքում արդար դատավոր կա», իսկապես այլ բան չէ հասկանում, քան լուսավոր մարդկության պաշտպանությունը: Բայց և այնպես Րաֆֆին մերժել է հատուկ տեղ տալ իր վեպի մեջ արտաքին գործոնին: Հերոսները գործում են անկախ իրենց հաշվին և՛ պատասխանատվության, և՛ գործում են զենքով: Վիպագիրը նախընտրել է ստեղծել, տալ հայրենասիրության մի տիպ, որ լինի բացարձակ արժեք և պահե իր նշանակությունը բոլոր պայմաններում, կլինի արտաքին օգնություն, թե չէ, կգա դրսեն արդարությունը, թե չի գա: Հայ միջավայրի և դարերով տևաբնկված և զինաթափ մտայնության համար, նրա հայրենասիրությունը նորություն է, անվանենք մի բառով զինյալ հայրենասիրություն: Դավիթ Բեկն իր զինակիցներով մարմնացնում է այդ հայրենասիրության գաղափարը: Վիպագրի տառապող մտքի հորձանքները, զգայուն սրտի անհավասար գալարումները, մերթ խանդավառ, մերթ հուսահատ, գումարվել և քանդակել են զինված հայրենասերի տիպար Դավիթ Բեկին:

Այսօր այդ մեծ քանդակագործի հիշատակն է, որ տոնում է վարատական հայությունը: Նայում ենք մեր շուրջ և ամեն կողմից ճնշող մթության մեջ տեսնում ենք միայն Դավիթ Բեկի ասպետական ուրվականը: Մեծ և փոքր ազգեր միաբերան խոսում են սպառազինված հայրենասիրության մասին, ամեն տեղ միայն զենքի շաչյուն է լսվում: Բոլորը զինվում են, որպես թե խաղաղության համար: Մենք կռվազան չենք և զենք էլ չունենք կռվելու: Բայց սովորենք գոնե զինավարժություն, ծանոթանանք ժամանակակից տեսակ զենքերին, զինվորագրվենք և ոչ թե խուսափենք օտար շարքերում: Օգտվենք պատեհությունից, խոհուն ճակատով և համր բերանով: Ոչ ոք չգիտե, անցքերի թավալգլոր անիվը ո՞ւր է տանում: Պատրաստ և զգաստ լինենք, որպեսզի չկորչենք անփառունակ, կռվողների ոտքերի տակ կոխան: Մեր զգաստությունը կլինի մեծագույն հարգանքը մեծ հայրենասերի հիշատակին:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՎԱԽՃԱՆԸ

Այն մարդը, որ պետք է խաղաղ հանգչեր փառքի թավշյա բարձերի վերա, կորավ անհայտության մեջ: Շատերը փորձեցին լուծել այս խորհրդավոր անհետացումի կնճիռը: Իզուր: Ահա մի նոր փորձ ևս. **«Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը», Ա. Բակունց**[1](1):

Արդյո՞ք հաջողել է Ա. Բակունց պատռել անհայտության քողը: Տարաբախտաբար, ո՛չ: Կարելի է ասել, որ եղած քողի վրա պարզել է մի նոր և բանաստեղծական շղարշ:

Երիտասարդ հեղինակը տրամադրել է նոր և մինչև այժմ անծանոթ նյութեր և եկել է այն օտարոտի եզրակացության, թե Աբովյանի չքացումը գաղտնի կապ է ունեցել 1848 թվի փետրվարյան հեղափոխության հետ (2), այսինքն՝ մեծ ընդվզումի ճայնը հրապուրել է Աբովյանին և ստիպել քողնել տուն-տեղ, ընտանիք և անցնել անխլորեն Երասխը դեպի Տաճկահայաստան և այնտեղից էլ թերևս մի ուրիշ(՞) տեղ:

Այս անհեթեթ գաղափարը կաշկանդել է հեղինակի մտածողությունը և բյուր ու կամայական ուղղություն տվել ամբողջ հետազոտության:

Արտասովոր ներողամտությամբ անպարտ է արձակել պ. Բակունց այն անձերին, որոնք անպայման համարատու են տխուր իրողության, եթե ոչ իսկական մեղավորներ:

Նա անզգույշ է, երբ պնդում է, որ գավառապետն ու ոստիկանապետը (3) այդ երկու ոխերիմներն անբախտ Աբովյանի, կատարել են իրենց պարտականությունը խղճմտորեն, ամիսներ շարունակ, որպես թե որոնել են, և բնավ հանգապարտ չեն, եթե արդյունքի չեն հասել:

Սակայն, փաստերը այլ բան են ասում, այն փաստերը, որ բերում է ինքը՝ Բակունցը:

Աբովյանը դուրս է եկել տանից 1848 թվին, ապրիլի 2-ին և այլևս չի վերադարձել:

Մարտ 9-ից նա արդեն արձակված էր տեսչական պաշտոնից, և մնացել էր դպրոցում որպես պաշտոնակատար տեսչի մինչև նույն ամսի 31-ը: Նոր

---

[1] **Ակսել Բակունց, Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը, Երևան, 1932:**

տեսուչը, նրա փոխանորդը, ոմն Տուրկեստանով (4) ժամանել էր մարտի 30-ին և նույն օրն ևեթ շտապել էր ստանալ դպրոցի դիվանը: Բայց հազիվ կարողացել էր ստուգել նախորդ տարվա գործերը: Զարմանալի է, որ այդքան անհամբեր նոր տեսուչը չէ շարունակել հաշվառությունը հետևյալ՝ մարտի 31-ի և ապրիլի 1-ի օրերը: Այն ինչ մարտի 31-ին Արովյանը թվում է թե եղել է դպրոցում, քանի որ իր ձեռքով կազմած ցուցակը ուսուցչական ռոճիկների վերաբերում է այդ օրվան: Ափսոս, որ Բակունց ավել է միայն Արովյանի ստացականը. արժեր բերել ամբողջ ցուցակը: Հին տեսուչը թեև արդեն պաշտոնաթող էր մարտի 9-ից, բայց շարունակել է վարել դպրոցի գործերը մինչև մարտի 31-ը, և չնայելով այս հանգամանքին, նրա ռոճիկը հաշված է միմիայն մինչև մարտի 9-ը, որ է 9 ռուբլի 33 կոպեկ: Պաշտոնակատարության համար վարձատրություն չեն տվել, մի բան, որ բնորոշում է իշխանության անարդար վերաբերումը դեպի երեկվա տեսուչը:

Միանգամայն բնական է հարցնել, ինչո՞ւ Արովյանի հաջորդը, որ այնպես հապճեպով, իր գալստյան օրն ևեթ ձեռքը դրել էր դպրոցի գործերի վերա, հանկարծ զսպում է իր աշխույժը և չի հետաքրքրվում դպրոցական գործով ո՛չ մարտի 31-ին, ո՛չ ապրիլի մեկին, և ո՛չ երկուսին: Ապրիլի 3-ին լսում է, որ Արովյանը նախորդ օրը տանից դուրս եկել և դեռ չի վերադարձել և հարկ է տեսնում անհապաղ հայտնել գավառապետին: Այլև խնդրում է նրան ղրկել մի պաշտոնական անձ ներկա լինելու դպրոցական հաշիվների քննության, կարծես վստահ էր, որ Արովյանի կորուստը անդառնալի է:

Զարմանալի չէ՞ նոր տեսչի այս նոր փութկոտությունը և այն էլ երեքօրյա քննածությունից հետո: Արովյան կարող էր գիշերած լինել բարեկամի մոտ, գուցե իր հայրենի գյուղն էր գնացել կամ գործով մնացել մի այլ տեղ: Բնական էր սպասել մինչև խնդիրը պարզվեր, արդյոք չքացումը ժամանակավոր է, թե՝ ընդմիշտ: Նոր տեսչի բռնած դիրքը ինքնին կասկած է հարուցանում, կարծես նա գիտեր որ վերադարձը անհույս էր:

Նոր տեսչի երեքօրյա հանգիստը հասկանալու համար, ենթադրեցինք, որ թերևս տոնական օրերն են եղել, որ արգելել են գործը շարունակելու: Մարտի 31-ը արդարև կիրակի օր էր 1848 թվին, մեծ պասի կիրակիներից մեկը, և հետևապես հասկանալի է Տուրկեստանովի դադարը միայն այդ օրվան համար: Հաջորդ երկու օրը, ապրիլի 1-ին և 2-ին տոն չկար և ուրեմն անհասկանալի, որ նա չէր շտապել ստանձնելու դպրոցը:

Մի այլ կնճիռ: Տեսանք, որ Բակունցի հրատարակած վավերագրերից երևում է, որ Արովյան մարտի 31-ին կազմել է ուսուցիչների ռոճիկացուցակը, որի հիմամբ նույն Բակունց ասում է, որ մարտի 31-ին Արովյան վերջին անգամ դուրս է գալիս դպրոցից, առանձնանում իր սենյակում և անհետ կորչում: Սակայն, մարտի 31-ին կիրակի էր, դպրոցը փակ, և Արովյան չէր

կարող ո՛չ դպրոցում լինել, ո՛չ ռոճիկների ցուցակը կազմել ու իր բաժին 9 ռուբլին ստանալ: Ապա ուրեմն Արովյանի ստացականը[1], եթե վավերական է, չէ կարող գրված լինել մարտի 31-ին:

Արովյան ուսուցիչների ռոճիկը պատվիրել էր, բայց մարտ ամսվա արձանագրությունը չէր կազմել և որովհետև, ըստ Բակունցի, առանց այդ արձանագրության չէր կարելի նոր «դրամական գրանցումներ անել մայր մատյանում», ուստի նոր տեսուչը կեղծում է Արովյանի ստորագրությունը և ուսուցիչներին ստորագրել տալիս, այսինքն՝ կազմում է արձանագրությունը և ստորև դնում Արովյանի ձեռքը:

Պետք է խոստովանեմ, որ ո՛չ այս ձևակերպության իմաստը և ո՛չ էլ կեղծարարության անհրաժեշտությունը չեմ հասկանում: Նոր տեսուչը, այլև գավառապետը, որ դպրոցի պատվավոր տեսուչն էր, իրավազոր էին ամեն ինչ գործել դպրոցի նկատմամբ, քննել հաշիվներ, բաշխել ռոճիկներ, կազմել արձանագրություն, առանց պետք ունենալու արձակված տեսչին, քող թե կեղծելու նրա ստորագրությունը:

Կեղծարարությունն ավելի դատապարտելի է, քան արձանագրության վերաբերյալ ձևականությունը: Այս ևս մի տխուր վկայական այն դպրոցական մթնոլորտի բարոյագիտության, որից հեռացավ Արովյան:

Նոր տեսուչը ամսի 3-ին խնդրել էր գավառապետին, որ մի լիազոր նշանակի դպրոցական գործերը քննելու համար: Գավառապետը նշանակել էր ոստիկանապետին: Սրա ներկայության ստուգել էին դրամարկղը, քննել հաշվեմատյանները և ոչ մի զեղծում չէին գտել: Այս քննությունը կատարվել էր ամսի 6-ին: Իսկ սրանից առաջ, հարկ էին տեսել կեղծել Արովյանի ստորագրությունը, երևի առանց ոստիկանապետի մասնակցության: Անհասկանալի վարմունք:

Գավառապետը ապրիլի 8-ին պատվիրում է վերջապես ոստիկանապետին սկսել Արովյանի գործի քննությունը: Ապրիլի 20-ին նույն գավառապետը հաղորդում է փոխարքային (5): Պետք է կարծել, որ 12 օրվա ապարդյուն որոնումներով գավառապետը գործը փակված է համարել և այս մասին հայտնել բարձրագույն իշխանության: Հավանորեն փոխարքայի դիվանեն նոր հրահանգ է գալիս գավառապետին: Մայիսի 17-ին ոստիկանապետը դիմում է դպրոցի տեսչին և հարցնում, արդյոք Արովյան դրամական զեղծումներ չի արել և հարկադրվել փախչել: Ոստիկանապետը ինքը անձամբ ներկա էր եղել դրամարկղի և մատյանների քննության, գիտեր որ ամեն ինչ իր տեղն էր և ուրեմն իր դիմումը միանգամայն ավելորդ էր: Թվում է, որ բարձրագույն իշխանության առաջ արդարանալու համար

[1] **Ակսել Բակունց,** Խաչատուր Արովյանի անհայտ բացակայումը, էջ 51:

գավառապետը և ոստիկանապետը փորձ են անում դրամական վտանգում գտնել և տեսչի անհետացման մի հիմ գտնել, արատավոր հիմ: Ի՞նչ միջոցներ է ձեռք առնում այնուհետև ոստիկանապետը, ի՞նչ խուզումներ կատարում, հայտնի չէ: Հավաստի է միայն, որ այս անգամ ևս գործը փակված է համարվում հունիսի 24-ից առաջ: Նոր տեսչի փոխանորդ Վեքիլովը (6) իր հունիսի 24-ի հաղորդագրության մեջ, հայտնում է Անդրկովկասի դպրոցների վերատեսչին, որ ոստիկանությունը ավարտել է Արովյանի գործի քննությունը և ներկայացրել ուր հարկն է:

Հուլիսի 31-ին Երասխի ափին գտնում են մի կմախք: Ոստիկանությունը գոհ կլիներ, եթե կարելի լիներ ապացուցանել, որ Արովյանի կմախքն է: Սակայն, բժշկական քննությունը ցույց է տալիս, որ մատաղահաս աղջկա ոսկորներ են: Խոր Վիրապի մոտերքը գտնված կոշիկը ևս նույն ցպատակին է ծառայում, բայց դարձյալ անհաջող: Վերջին երկու պարագաները իսկապես կապ չունին Արովյանի գործի հետ, գոնե անմիջական կապ, այսինքն՝ ոստիկանության որոնումների արդյունք չեն, այլ պատահական հայտնություններ քրեական բնավորությամբ:

Արովյանի գործը երկու շրջան է ունեցել, ապրիլի 6-ից մինչև ապրիլի 20-ը և մայիսի 17-ից մինչև նախքան հունիսի 24-ը: Հակառակ Ա. Բակունցի հաստատության, թե ոստիկանապետը և գավառապետը ամեն ջանք գործ են դրել գտնելու Արովյանին, տեսնում ենք, որ ընդհակառակը, այդ երկու պաշտոնյաները շատ անփույթ վերաբերում են ունեցել, ոչ մի լուրջ քայլ չեն արել, ո՛չ մի հարցուփորձ, ո՛չ մի հետախուզություն տեղի չի ունեցել. զլացել են անգամ սուրհանդակներ ղրկել Երևանից դեպի դուրս տանող գլխավոր ուղիները: Ընտանեկան հարցաքննությունն անգամ շատ պակասավոր է: Ընտանիքին վերագրած այն հայտարարությունը, որ վերջին երեք օրը Արովյան անքուն գիշերներ է ունեցել, նույնն է, ինչ որ ասել է ծառան և այս տեղեկությունն ևս չի հաստատվում, եթե մարտի 31-ի թվակիր ստացականը գրված է ապրիլի մեկին, ինչպես հավանական է թվում: Քննությունը չի աշխատել պարզել, թե ինը ռուբլին հանձնե՞լ է Արովյան իր կնոջը, կամ ի՞նչ վիճակի մեջ է թողել իր գրքերը, ձեռագիրները, ինչպե՞ս է բաժանվել իր կնոջից և զավակներից, արդյո՞ք նկատելի էր որևէ նշան հեռագնացության: Եթե Արովյանի անհետանալը նախավճիռ ծրագրի ծնունդ լիներ, անկարելի է, որ այն զգայուն մարդը որևէ կերպով չմատներ իր հոգեկան վիճակը վերջին հրաժեշտին:

Ա. Բակունց երկու նամակ է հրատարակել. երկուսն էլ գրված են Երևանից Թիֆլիս Գեորգ Ակիմյանին: Սա Արովյանի աշակերտն էր և բարեկամը: Իր ուսուցչի կորստյան լուրը առնելուց հետո չի դադարել նամակներ գրել իր մերձավորներին և տեղեկություններ խնդրել: Նամակա-

գիրները անգրագետ մարդիկ են: Առաջին նամակագիրը Արովյանի հեռանալը վերագրում է մի հանցագործության: Մի երկու տարի առաջ Արովյան մի գերմանացու հետ պետք է բարձրանար Մասիսի գագաթը: Նրանց փորձը ձախողել էր, բայց և այնպես, թուղթ էին գրել և հավատացրել իրենց ղրկողներին, որպես թե հաջող ելք են ունեցել: Վերջը քննությունը պարզել էր, որ նրանք իսկապես չեն կարողացել բարձրանալ: Նամակ գրողն այն գաղափարն ունի, որ Մասիսի կատարը ելնելը մի հանճարարարություն էր, որ եթե չկատարեին, պետք է պատժվեին: Նամակագիրը կարծում է, որ գերմանացին գրել էր Արովյանին հետևյալ նախազգուշացումը. «մեկ էլ որ էն ձեմէցն մեկ գիր էր գրել Արովեանի վրէն, թէ ես էս գիրն քեզ գրեցի ես **տեղ գրաց**(?) **ես էսպէս**(՞) մեռա դու ինք քոյ գլխի չարէն տես, բայց որ էն գիրըն երկար չի քաշեց որ ձայ գորաւ»:

Ընդգծած բառերը սխալ են կարդացվում: Նեմեցը չէր կարող գրել թե ես մեռա և մեռած տեղը նամակ գրել: Տեղ գրաց(?) ոչինչ չէ նշանակում, պետք է կարդալ **դէզգէրայ**, օտար բառ է գործածական ժողովրդի բերանում և նշանակում է վկայաթուղթ: Գերմանացին գրում է, թե նամակս քող ծառայե քեզ վկայաթուղթ, որ ասածս ճշմարիտ է: Եվ ի՞նչ է ասում: Փոխանակ՝ ես **էսպէս** մեռայ, առաջարկում ենք կարդալ՝ ես **եայ** մեռայ կամ ես **էաայ** մեռայ: Գերմանացու տողերի իմաստն այն է, թե իրեն արդեն սպառնում է պատիժ և Արովյանին զգուշացնում է, որ իր գլխի ճարը տեսնի: Հայ նամակագրի կարծիքով Արովյան փախել է այս նամակի հետևանքով, վերահաս պատժի երկյուղից, որովհետև որպես թե նամակն ստանալուց քիչ հետո է, որ անհետանում է Արովյան:

Անտարակույս է, որ գերմանացին հայտնի երկրաբան Հ. Արիխն է, որ հիրավի փորձել է բարձրանալ Մասիս՝ ընկերակցությամբ Արովյանի և այս առթիվ գժտություն էր ծագել նրանց մեջ (7): Ա. Բակունց երկու սխալ է գործում, երկու անհիմն ենթադրությամբ: Նախ՝ կարծում է, որ Արովյանի ենթադրական թղթակիցը Արիխը չէ, այլ մի ուրիշ անհայտ գերմանացի: Հետո ենթադրում է, որ նրա նամակի այն տողերը, որ ինքը, ինչպես տեսանք, ուղիղ չէ կարդացել, խուլ ակնարկ են որպես թե փետրվարյան հեղափոխության: Երկու կամայական ենթադրությունից ծագում է մի երրորդը. գերմանացու խորհրդավոր ակնարկը, որպես թե Արովյան հասկացել է և հափշտակված հեղափոխության ավետիսից, թողել է տուն-տեղ և հեռացել, ուղղելով իր քայլերը դեպի կախարդիչ ձայնը:

Գեորգ Ակինյանի Երևանի անգրագետ թղթակիցը գրում է, ի միջի այլոց, որ Արովյանի ձայնը Ղարսից է գալիս, «որ շատ մարդ քոմակ ունի եւ **շատ էլ չալիշ են գալիս**, Գէորգ ջան, դարդ չի անես նորա մասին Աստուած ողորմած է»: Ա. Բակունց կարծում է, որ «չալիշ եկողները» ոստիկանություն է և

Արովյանի ազգականները, այսինքն՝ այն անձինք, որ որոնում էին նրան: Այն ինչ խոսքը նշանց մասին է, որոնք «քոմակ» են անում Արովյանին: Նամակագիրը հայտնում է շրջող լուրերից մեկը, որի համաձայն Արովյան անցել է Կարս և այնտեղ շրջապատված «շատ մարդերով» ինչ-ինչ պատրաստություն է տեսնում գաղտնի նպատակով:

Այս միտքը կրկնվում է նաև երկրորդ նամակում՝ գրված մի ուրիշ անձի կողմից, բայց միևնույն շրջանից: Զանազան լուրեր կային ժողովրդի մեջ Արովյանի կորուստի առթիվ: Ասում էին, որ այս տարի ևս պիտի սարը բարձրանար, վախեցավ թե չկարենա և փախավ, կամ թե տեսել են Զանգվի ափին, ուր հրել ձգել են գետը, տեսել են՝ Գանձակ հնամաշ շորերով, տեսել են՝ Կարս, տեսել են՝ Ակռոի մեկ քարի վրա նստած լալիս:

Այս լուրերը, մեկը մյուսեն անհավանական, պարապ երևակայության արդյունք են: Ա. Բակունց ընդունելի է համարել, որ Արովյան անցած լինի տաճկական սահմանը, ուրեմն մերձավորապես Կարսի լուրը:

Ֆ. Բողենշտեդտի (8) ասելով, Արովյան իր վերջին նամակում գրած է եղել, թե՝ վճռել է թողնել ռուսական ծառայությունը, գնալ Հայաստանի ներքին մասը և այնտեղ պարապել երկրագործությամբ, որովհետև իր չնչին եկամուտները չեն գոհացնում քաղաքի պահանջներին:

Բակունցի այբում Արովյանի հայտարարությունը մի ապացույց է ի նպաստ իր ենթադրության, որ նա կարող էր անցած լինել Երասխը: Սակայն, թվում է, թե Բողենշտեդի ուղղած տողերը այլ բան չեն, քան դառնացած սրտի վայրկենական զեղմունք և սխալ կլիներ այնտեղ ծրագրային խորհուրդ տեսնել: Արովյան այնքան միամիտ չէր և ոչ անտեղյակ հայ գեղջկական կյանքին, որ լրջորեն կարծեր թե հնարավոր էր ավելի ապահով ապրուստ գտնել գյուղում:

Հայաստանի ներքին մասը, ըստ Բակունցի, Տաճկահայաստանն է: Արովյան որպես թե հիասթափված էր ռուսներից և նաև հայ մբռնողորդից, սկսած Ներսես Աշտարակեցուց, ուստի և բարոյապես պատրաստ էր թողնելու Ռուսահայաստանը: Բակունց Արովյանին վերագրում է տաճկական համակրանք, որպես հակազդեցություն ռուսական հուսախաբության: Այստեղ թվում է թե մեղանչում է ճշմարտության դեմ, կամենալով տուրք տալ իր շրջապատում տիրող տրամադրության: Արովյան հոգեկան տարտամ դրության մեջ էր, երբ հասավ փետրվարյան հեղափոխության համբավը, որ կայծակի նման ճեղքեց խավարը և լուսավոր ուղի բաց արեց նրա առաջ: Այսպես է մտածում Ա. Բակունց: Բայց չէ պարզում, թե ի՞նչն է իսկապես քաշում Արովյանին, բրքական լավատեսությո՞ւնը, թե՞ ֆրանսական հեղափոխությունը: Թվում է, թե զկայսերն կայսեր տալու ցանկությամբ աշխատել է լծել խորհրդային արտաքին քաղաքականության

երկու սրավար ճժույգները՝ հեղափոխություն և տաճկական բարեկամություն, Արովյանի՝ հայ վերածնունդի հոր, կաոքին, այն կաոքին, որ պիտի տաներ նրան դեպի խորհրդավոր անհայտություն...

Արովյանի ընկեր Ս. Նազարյանը այն միտքն էր հայտնել, որ Արովյան հուսահատության տխուր ժամին թերևս ինքնասպան է եղել: Արևմտահայ Ստեփան Ոսկանը հավանական է համարում, որ աքսորված լինի Սիբիր: Կան մարդիկ, որոնց վտիտ միտքը ուրիշ պատճառ չէ գտել, քան այն, որ արատավոր սիրո զոհ է եղել: Կարելի է բնավին արհամարհել այս ենթադրությունը, ինչպես վարվել է պ. Բակունց և որ նրան պատիվ է բերում: Արովյանի վերջին ժամերը այնքան տագնապալից են, որ սիրո մարմանջ տեղ չէր կարող ունենալ նրա հուզումնալից հոգու մեջ: Երևանի լոթիների վայել ենթադրություն է, ինչպես որ վերջերս գրչի մի ստահակ անվարժ մարդուկի սանձարձակությամբ փորձեց սմբակահարել նշանավոր հայի հիշատակը, իր հոգեկան հիվանդությունից բաժին հանելով պաշտելի անձին (9):

Ա. Բակունց իրավունք ունի, երբ հետ է մղում սիրային արկածի ենթադրությունը, բայց սխալվում է, կարծելով, որ հայ քաղքենության դեպի խեղճ թուրքերն ունեցած ատելությունից է ծագել այդ վարկածը: Այս պատճառաբանության համեմը ևս ավելորդ է: Բնականն այն է, որ վատ ենթադրությունը բխում է վատ մարդկանցից: Ցայժմ հայտնած բոլոր ենթադրություններից այն, որ պատկանում է Ա. Բակունցին, ամենքեն ավելի է համապատասխանում Արովյանի հոգեկան դրության: Արովյան այն անձերից էր, որ աշխարհ են գալիս խորհուրդը ճակատին և երազները հոգում: Քնության այդպիսի ընտրանիների համար իրականությունը քանկ է այն չափով, որչափ նա հնարավոր դաշտ է ներկայացնում երազների համար: Հակառակ դեպքում, իրականությունը կորցնում է իր արժեքը և երազներն են դառնում տիրական և քաշում դեպի այլ դաշտեր: Ա. Բակունց բանաստեղծ է և ըմբռնել է Արովյանի հոգեբանությունը: Եթե կարողանար հիմնավորել իր ենթադրությունը, մի նոր ծաղիկ ճգած կլիներ անհայտ շիրիմի վրա: Տաճկահայաստան անցնելը, եթե հաստատվեր, մի նոր դափնի կբերեր Արովյանին, որպես նախակարապետի այն գործունեության, որին հետագա սերունդները պետք է կապեին հայության քաղաքական անուրջները:

Սակայն, Ա. Բակունցի ենթադրությունը հեռու է իսկությունից, բանաստեղծական տեսություն է:

Արովյանի կորուստը որոնելու է Երևանում, ո՛չ Երևանից դուրս: Ապրիլ ամսին, երբ անհետացավ Արովյան, Այրարատյան դաշտը, եթե ոչ ամբողջ Հայ երկիրը, փայլում էր գարնան բոլոր պճրանքով: Գարնանացանի ժամանակ է, դաշտերը լի աշխատավոր ձեռքերի հոծ բազմությամբ: Ան-

կարելի է, որ եվրոպական զգեստով մի մարդ անցներ Երևանից դեպի Երասխ, առանց ուշադրություն գրավելու: Հայ գյուղացին դիտող և զննող է: Մեզնից ամեն ոք գիտե անձնական փորձով: Երևանից տանող ճանապարհները անբնակ և խոպան վայրերով չեն անցնում: Միթե հնարավոր է, որ ոչ մի աչք տեսած չլիներ օտարական ուղևորին: Երևանում Արովյան երկու աշկարա թշնամի ուներ. այդ գավառապետն էր և ոստիկանապետը, երկրի զույգ զորավորները: Երկու տարի առաջ, 1846 թվին, հաջողել էին Արովյանին երեքօրյա բանտարկության ենթարկել: Անզգուշություն կլիներ սրանց օձիքը բաց թողնել և պետք է մշտապես կասկածի տակ պահել մինչև խնդրի վերջնական լուծումը: Ստեփան Ոսկանի երկյուղն այնքան էլ անհիմն չէ. հարկավ ոչ աքսորի իմաստով: Արովյան վտանգավոր անձ չէր ճանաչված բարձրագույն իշխանության աչքում, որպեսզի խոսք լիներ Սիբիրի մասին: Սակայն, այլ է բարձրագույն իշխանությունը և ա՛յլ գավառականը: Կովկասյան գավառապետությունն ու ոստիկանությունը երբեք իր բարձրության վրա չեն եղել կանգնած: Հայ-թրքական կոտորածների ժամանակ երևաց նրանց էությունը: Ի՞նչ էին ներկայացնում, որպես մարդ և պաշտոնյա, գավառապետ Բլավացկի և մանավանդ ոստիկանապետ Մորոխովեց: Անշուշտ, ավելի վստահելի տիպեր չէին, քան նրանց հաջորդները մեր օրերում: Արովյան աննշան ոմն չէր. քաղաքի առաջին մտավորականը, տեղական հասարակության աչքը, եվրոպական գիտնական ուղևորների առաջնորդը, օր ցերեկով անհետանում է և ոստիկանությունը չէ կարողանում գտնել: Այս ապիկարությունն ավելի քան կասկածելի է: Երբ ոստիկանապետը, որ անձամբ ներկա էր եղել դրամական հաշիվների քննության և ոչ մի զեղծում չէր գտել, մի ամիս հետո դիմում է դպրոցի տեսչին և հարցնում, արդյոք դրամական վատնում չէ՞ գործել Արովյան, սրանով արդեն մատնում է իր դերասանությունը: Իսկ դերասանությունը գործի մեջ մի վարագույր է, որ սքողում է որոնելի իսկությունը:

Այսպես, Արովյանի դատը մնում է առ այժմ բաց և երկու պաշտոնյաները, որպես միակ մեղադրյալներ, պիտի կրեն պատասխանատվության ծանրությունը՝ մինչև որ նոր փաստեր անպարտ արձակեն կամ դատապարտեն (10):

Ա. Բակունցի աշխատությունը, ամեն պարագայի, մի կարևոր նպաստ է գործին շնորհիվ նոր նյութերի և նոր մեկնաբանության: Չենք կարող չնկատել, որ գիրքն ավելի պիտի շահեր, եթե լեզուն և ոճը խնամված լինեին, ինչ որ սպասելի էր մի վիպագրից:

ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ ԵՎ ԿՑՈՐԴ ԽՆԴԻՐՆԵՐ

Փարիզում մի քանի տարի է, որ գոյություն ունի **Գրական Միությունը** իր **Ակումբով**, որ մի ժամադրավայր է գրական մտավորականության համար (1): Պարբերական դասախոսությունները և հավաքական զրույցները, որ այնտեղ տեղի ունին գրեթե ամեն շաբաթ (2), այլ ևպատակ չեն հետապնդում, քան ստեղծել գաղափարական ներդաշնակություն հայ ցրիվ մտավոր ուժերի մեջ գրական, գիտական, հասարակական և նման հարցերի շուրջը:

Ամեն ազգ ունի իրեն հատուկ հոգեբանություն, մտայնություն: Մերը քայքայված է և շարունակվում է եղծվել օտար ազդեցությունների տակ: Վերմշակել ազգային ուրույն մտայնություն առաջին հոգը պիտի լինի մեր մտավորականության: Մշտական շփումը ակումբների մեջ՝ առ ի չգոյե ուրիշ հաստատության, մեծապես նպաստում է այլասեռ մտքերի հարթման: Բաղձալի է, որ բազմանան նման ժողովարանները գաղութահայության մեջ և մինչիսկ կապվեն միմյանց հետ սերտության օղակներով:

Փարիզի Ակումբը աղանդավոր չէ. նա բաց է բոլորի համար, որոնք հետաքրքրվում են գրական և հասարակական խնդիրների տեսությամբ: Կան գրագետներ, ծեր և երիտասարդ, որ ամենից առաջ այնտեղ պիտի վազեին, բայց գերադասում են դիտել հեռվից և՛ լրատուների, և՛ միջնորդ ականջների միջոցով հետևել թե ի՞նչ է կատարվում այնտեղ: Պետք էր կարծել, որ գոնե այն դեպքում, երբ ասելիք ունին Ակումբի մեջ հայտնված տեսությանց թե մտքերի առթիվ, պատշաճ կհամարեին փարատել իրենց տարակուսանքները հենց նույն Ակումբի ծոցում: Սակայն, այս կարգի հեռակաց գրագետներն ավելի լավ են համարում, գավազանակիր վարդապետների նման, քարոզել ի հրապարակս և ոչ խոսել դեմ հանդիման յուրայինների շրջանում և այս կերպ լուծում որոնել վիճելի խնդիրներին: Այստեղից ծագում են անպատեհություններ, որոնք շաղկապված են քննականորեն բանակովի հետ, և որոնց համար պատասխանատու մենք չենք:

Փարիզի Ակումբը բարի հիշողություն ունեցավ արձանագրելու մեր մոտիկ անցյալի երեք նշանավոր դեմքերի՝ Միք. Նալբանդյանցի, Ռափ. Պատկանյանի և Մկ.Պեշիկթաշլյանի ծննդյան հարյուրամյա տարեդարձը և առանձին դասախոսություններ նվիրեց նրանց կյանքին և գործունեության: Մի համեստ հարգանք նրանց հիշատակին (3):

Նալբանդյանցին և Պատկանյանին ընդհրած խոսքը խաղաղ անցավ, Պեշիկթաշլյանինը՝ աղմուկ հանեց:

Պեշիկթաշլյանի մասին խոսողը պ. Օհան Կարոն էր, մի ուշիմ երիտասարդ, որ սովոր է մտածել նախքան խոսելը: Հակիրճ և խոհուն դասախոսությամբ մը վեր հանեց Պեշիկթաշլյանի քնարի և հասարակական գործունեության հիմնական գծերը, ինչպես և նրա անհատական բարեմասնությունները: Դիտողություններ եղան գլխավորապես բժ. Ամատյանի կողմից պատմական միջավայրի վերաբերյալ, որ ուրվագծել էր դասախոսը:

Մի կարևոր բաց կար դասախոսության մեջ, որը փորձեցի լրացնել փակման ամփոփ խոսքիս մեջ: Այն հարցն էր, թե Պեշիկթաշլյան ի՞նչ տեղ է բռնում հայ նորագույն գրականության պատմության մեջ:

Դասախոսության հաշվետվությունը երևաց Փարիզի «Ցառաջ» թերթում, ուր իմ խոսքերս աղավաղված էին (4): Ուշադրության պարզ սպրդումն էր տեղեկատուի կողմից: «Ցառաջ»-ի անանուն աշխատակիցը, որ դժվարացել էր սևը սպիտակից ջոկելու, հարկ էր համարել նախատինք կարդալ իմ հասցեիս, որ աշակերտության կարծիքներ եմ հայտնում գրական խնդիրներում: Վշտացել էր մանավանդ, որ Պեշիկթաշլյանը որպես թե ստոր էր դասված Նալբանդյանցից: Մոլորության առաջն առնելու համար, պարզեցի խնդրի էությունը խմբագրության ուղղված մի նամակի մեջ, ուր առաջարկում էի անանուն գրչին, ի դեպ եթե դժգոհ մնաց մեկնություններիցս, շնորհ բերե Ակումբ և իր հայեցակետը մեզ պարզե: Նամակս տպվեց ոչ այն ձևով, ինչպես ընդունված է (5):

Ամեն պարագային գիժը գլորել էր գայթակղության քարը: Քարը հասավ մինչև պ. Ա. Չոպանյան: «Ապագա» թերթի մեջ խիստ հոդված գրեց իմ «անհեթեթ» կարծիքիս դեմ (6): Հոդվածը թեև երկու անգամ ավելի երկար էր քան իմ նամակը, բայց և այնպես չգոհացավ դրանով: Խոստանում էր նորեն վերադառնալ նույն խնդրին: Սպասեցի, կարծում էի, որ «Անահիտ»-ը պիտի բերեր նոր հոդվածը: Դիպվածով միայն իմացա, որ սպասելի գրությունը արդեն տպված է Ամերիկայի «Պայքար» թերթում: Ընորհակալ եմ, որ մի բարեկամ անձ բարի եղավ տրամադրելու ինձ, միանգամայն ինքնաբերաբար, հիշյալ թերթի համարները (7):

* * *

Վեճի նյութը Պեշիկթաշլյանի շուրջն է: Բայց հարգելի հակառակորդս սկսում է Ռ. Զարդարյանից, որպես նախերգանք: Նա լսել է, որ մենք որպես թե ասել ենք, որ Զարդարյանի լեզուն **ծանր** է և գրականությունը **հայկական** չէ (8):

Խորհուրդ կտայինք, որ պ. Չոպանյան ավելի խելահաս ականջներ ղրկե Ակումբ: Երկու բառն էլ արտասանված է, բայց ոչ այն կապակցությամբ, ինչ որ դատափետվում է:

Ասել ենք, որ Զարդարյանի լեզուն փարթամ է և գունագեղ: Բառերը ընտրված են խնամքով և ընդելուզած, որպես մի մոզայիկ: Նախադասությունները հղկված, սահուն են անարգել: Ոճը հասցրած է այնպիսի արվեստակյալ կատարելության, որ կարդալիս ավելի լեզվին ես հետևում, քան բովանդակության: Վերջինս նիհար է, պատմության նյութը ծավալուն չէ, դիտողությունները խոր չեն, բանաստեղծի աչքը և միտքը կարծես սահում են առարկաների վրայից, խուսափելով ներս մտնել. մի ժրաջան մեղու, որ թփից թուփ է ցատկում, առնում՝ ինչ որ պետք է համարում և շտապով հեռանում: Երբեմն թվում է, որ լեզուն, որպես եկեղեցական կերպասյա ծածր շուրջառ, **ծանր** է գալիս պատմվածքի վտիտ մարմնին:

Զարդարյանը համարվում է գավառական գրականության ներկայացուցիչ Թլկատինցու հետ: **Հայկական** գյուղից քիչ բան է մնացել նրա մոտ, այնքան տաշվել և զտվել է: Եթե թարգմանենք օտար լեզվով, ոչ ոք կարող է գուշակել նրա հայկական ծագումը ըստ էության:

Երկու բառն էլ գործ ենք ածել, **ծանր** և **հայկական**, բայց առանց կամենալու քերություն համարել հայկականի նսեմությունը: Արձանագրել ենք՝ ինչ որ դիտել ենք:

Ապա ուրեմն իզուր է պ. Չոպանյանը ինձ վերագրում այն միտքը, թե «Հայկական հարցը նյութ առնելը կամ հայ գյուղացու մտայնությամբ ու ոճով գրելը անհրաժեշտ պայման չեն որպեսզի գործ մը հայկական շեշտ ունենա»:

Մեր ասածներից իսպառ այս չէ հետևում, այլ այն, որ Զարդարյանի քննելի հատորը (9) մեզ չէ բերում գյուղական գրականություն, որի մասին այնքան խոսում են, որովհետև գյուղը ներկայացված է բավականին մակերեսային:

Գանք հիմա Պեշիկթաշլյանին:

Արևմտահայ հայրենասիրությունը հուզվել է (10), ենթադրելով որ Պեշիկթաշլյանին համեմատել ենք Արծվյանի և Նալբանդյանցի հետ և իր պատվանդանից վայր ձգել: Ասում են, որ իզուր ենք համեմատել, պետք չէ և չի էլ կարելի միմյանց մոտ բերել, որովհետև **տարբեր** մեծություններ են:

Սակայն, ի՞նչ է մեր համեմատությունը: Թողնենք առայժմ Նալբանդյանցին: Ի՞նչ ենք համեմատել Պեշիկթաշլյանի և Արծվյանի մեջ և ի՞նչ ենք գտել: Ուրիշ ոչինչ, քան այն, որ «Պեշիկթաշլյանի գրականությունը **ետ** է Արծվյանից»: Այս՝ ժամանակագրական հարաբերություն է և անվիճելի:

Չոպանյանը, թեև բերում է սույն խոսքերս, բայց հետո աղավաղում է որոշ տրամադրության ազդեցության տակ, **ժամանակը** փոխելով **որակի** և մեզ վերագրելով այն, ինչ որ չենք ասել, այսինքն՝ որ «Պեշիկթաշլյան **վար** է Արծվյանեն որպես բանաստեղծ»: Այս մասին մենք չենք խոսել, ոնր պիտի անդրադառնանք ստորև:

Զարմանալին այն է, որ մեզ արգելում են համեմատության դնել, բայց ինքը, Չոպանյանը համեմատում է հայտարարելով, թե «Աբովյան, անշուշտ, **ավելի բարդ և հզոր գործ մը** արտադրած է քան Պեշիկթաշլյան»:

Մեր ասածը մի պարզ ճշմարտություն էր, որ Պեշիկթաշլյանը կեղծ-դասական է և հազիվ մոտենում է ռոմանտիկ գրականության:

Մեր արգո հակառակորդը կարծում է, որ կեղծ-դասական տիտղոսը վիրավորական է քանաստեղծի համար և հայտարարում է, որ նա «իսկական դասական է և ոչ կեղծ»: Այսպիսով պ. Չոպանյանի ըմբռնողությունից խուսափում է կեղծ-դասական կոչված խոշոր գրական դպրոցը: Դասականի և ռոմանտիկի մասին այն ընտանի հասկացողությունն ունի, ինչ որ սալոնական մի տիկին, որ իր հյուրերից մեկի քիթն է գտնում դասական, մյուսի խառնվածքը՝ ռոմանտիկ:

Այս առօրյա ըմբռնումով հազիվ թե կարելի է գրական լուրջ քննադատության ձեռնամխել: Մասնագիտական մտածումի նեղ կածանները խորթ են մեր պատվական ընդդիմախոսին, նրան սիրելի և բազմիցս համելի են ազատ մտքի պողոտաները, թերևս իր մեջ խոսում է բանաստեղծն առավել, քան քննադատը: Փոխանակ մեկնելու դասականությունն ու ռոմանտիզմը իրենց պատմական օրրանի մեջ, պ. Չոպանյանը մի ծանր ճանապարհորդություն է հանձն առել դեպի հին և նոր աշխարհների և ազգերի գրականությունները, որպեսզի աջ և ձախ սփռե դասականության և ռոմանտիզմի վկայականները ըստ իր քարի հայեցողության և առանց որևէ շահի ընդհանուր գրականության պատմության համար: Այսպես մեր բանաստեղծը գտնում է, որ գոթական ռոմանտիզմը կա և սա կպարտի Արևելքին իր հիմնական տարրերը. անգլիական, գերմանական, իտալական ռոմանտիզմը որպես թե կրում է հնդիկ, պարսիկ, արաբ, եբրայեցի ազդեցություն: Հառաջ գալով դեպի Արևելք, չափում է պարսիկ հին արվեստը՝ քանդակագործություն ու ճարտարապետություն, և տեսնում է որ այն՝ դասական է, իսկ հնդիկ և ասորի արվեստը, ընդհակառակը, ռոմանտիկ: Անհատներին դառնալով՝ Նարեկացին, Ջալալեդին Ռումի, Ֆիզուլի, արաբ և հնդիկ բանաստեղծներն ամենեքյան ռոմանտիկ են նույն Չոպանյանի կարծիքով: Եվրոպայում՝ Անդրե Շենիե դասական է, իսկա Գյոթեն իր մեջ ունի ռոմանտիկ մը, և՛ դասական մը, Լեոպարդի ռոմանտիկ՝ մտայնությամբ, ձևով՝ դասական, Հյուգո, Լամարթին, Վինիե, Մյուսե՝ ռոմանտիկ են, իսկ Ժերար դը Ներվալ, Մորիս դը Գերեն զգայնությամբ՝ ռոմանտիկ, ձևով՝ դասական, վերջապես Միստրալը՝ նոր հելլեն:

Ճանապարհորդությունը դեռ չէ վերջացած: Պարոն Չոպանյանը այցելում է նաև Բյուզանդիան, որի գրականությունը «ռոմանտիկ է խորապես»: Եզնիկ Կողբացին, թեև այստեղ է սնված, բայց իր ձևով՝

ատտիկյան է, Մովսես Խորենացին՝ ձևով և ոգով ատտիկյան է, Նահապետ Քուչակը ևս՝ ատտիկյան է: Իսկ Պեշիկթաշլյանը իսկական նոր հելլեն մըն է, պատգամում է մեր ուղևորը, հասնելով իր հանգրվանին: «Նոր ժամանակների հայ գրականության լավագույն դասականն է»,- շեշտում է նույնը, - ավելի քան Ալիշան, Նարբեյ, նույնիսկ Թերզյան: Պետրոս Դուրյան և Մեթյան ռոմանտիկ են, Արովյանի մեջ կա քիչ մը ռոմանտիզմ, Գամառ-Քաթիպյան փարսախներով հեռու է քերթողական ճշմարիտ ռոմանտիզմեն, Շահազիզի մեջ կա Բայրոնի ռոմանտիզմի ցոլքը, Հովհաննիսյան, Թումանյան, Իսահակյան և Տերյան ունին ռոմանտիզմի խոր և գեղեցիկ տարրը: Րաֆֆի և Ահարոնյան մեծագույն ռոմանտիկներն են:

Այս պատյտներեն հետո պ. Չոպանյան կրկին մոտենում է Պեշիկթաշլյանին և սխալ է գտնում նրա գործը բաժանել գրաբարի և աշխարհաբարի, երկուսն էլ համարում է ձևով դասական, խորքով՝ ռոմանտիկ: Նրա կարծիքով հայր Բագրատունու **«Հայկ դյուցազնից»** նվազ զորեղ և մեծաշուք չէ Պեշիկթաշլյան, նույնքան ներդաշնակ է, որքան Հյուրմյուզի **«Թուրատտանքը»**, և «երկուքեն ալ ավելի ավելի խորազգաց է, ավելի շնորհալի և հանկուցիչ»:

Եվ եթե հիշենք, որ Պեշիկթաշլյան ինքը համարում էր **«Հայկ դյուցազնը»** «հավասար Վիրգիլիոսի, կամ «զուգակշիռ Հոմերոսի»», ապա ուրեմն պետք է ընդունել, որ Պեշիկթաշլյան «ավելի շնորհալի է, քան Հայկ դյուցազնը», մի քանով ավելի էր Վիրգիլիոսից և Հոմերոսից:

Այս զվարճալի զրոսանքը, որ հանճն է առել մեր բարեկամը, գրական տեսություն չէ իսպառ, այլ կատարյալ բարելոնական խառնակություն: Ցավը միայն այն չէ, որ ուր հասնում է մեր բանաստեղծը, մորթում է բանաստեղծությունը, ինչպես մի ոչխար, և երբեմն մորթն է հայտարարում դասական և միսը՝ ռոմանտիկ, և երբեմն հակառակը: Խորապես ցավալի է, որ դասական և ռոմանտիկ բառերը, որ պատմագրական որոշակի հասկացողություններ են, լողում են ձկների պես անորոշության և շփոթ ըմբռնումների ճապաղ ջրերի մեջ: Գիտեի, որ պ. Չոպանյան իր գրական քննադատության մեջ հետևորդ է իր անհատական տպավորության: Սակայն քննադատության այս եղանակը, ներելի թերևս, ընթացիկ գրախոսականների համար, անընդունելի է գրական վիճաբանության մեջ, ուր պահանջվում են ավելի բանավոր հիմքեր և առարկայական չափոցներ:

* * *

Գրականությունը, որքան էլ ազատ մտքի և զգացումի անկաշկանդ զեղումն լինի, բայց և այնպես չորս հովերին տված երևույթ չէ, այլ ունի իր բարձրադեզ ամբարտակները, որոնց մեջ հոսում են խոշոր գրական գետերը՝

դասական, ռոմանական, կեղծ-դասական և ռոմանտիկ: Սրանք բաժանված են միմյանցից քարերի պատնեշներով և պետք չէ շփոթել, ոտի տալով ժամանակակական հեռանկարները, և կամ ցրել քմահաճաբար Սենայի ափերից մինչև Եփրատ, մինչև Գանգես:

Կեղծ-դասական է կոչվում եվրոպական վերածննդի մեծ շրջանը, որ ծայր տվեց, որպես հակազդեցություն միջնադարյան սքոլաստիկայի, նպատակ ունենալով վերակենդանացնել հին հույն-հռովմեական քաղաքակրթության թաղված ավանդները: Հետևանքը փայլուն էր և ամենատարած:

Ֆրանսական մեծ հեղափոխությամբ վերջ տրվեց կեղծ-դասականության և սկիզբն առավ նոր շարժում, որ հայտնի է ռոմանտիզմ անունով: Սա նայում էր ոչ հույն-հռովմեական աշխարհին այլ ռոմանական միջին դարերին, և ձգտում էր սնվել նույն դարերին հարազատ աշխարհայացքի ոգով: Կեղծ-դասականությունը, ուրեմն, նմանություն էր հին և իսկական դասականության, իսկ ռոմանտիկ ուղղությունը իր հերթին նմանություն էր միջնադարյան ռոմանականության: Կաղապարները խորապես տարբեր էին, ուստի և նմանությունները տարբեր են: Այն արվեստը, որ հատուկ էր հույն-հռովմ աշխարհին, և որը կոչում ենք դասական, արտացոլք էր մի որոշ աշխարհայեցողության, որի մեկնակետն էր բնությունը, բնապաշտությունը: Հին հույնը իրեն նկատում էր որպես բնության մի մասնիկ, մարդը տակավին չէր հակադրում իրեն արտաքին աշխարհին: Նույնն էին և նրա աստվածները, տեսիլների ծնողները: Հույնի համար երկինքը բաժանված չէր երկրից: Երկինքն ամփոփվում էր Օլիմպոս լերան վրա, որտեղից գերագույն էակները իջնում էին և Աթենքի փողոցներում անճնատուր լինում այնպիսի գործերի, որոնց համար այժմ ոստիկանություն կտանեին: Այս ծայրահեղ և հետևողական իրապաշտությունը պետք է ծներ համապատասխան արվեստ, իրական արվեստ, հար և նման բնության ներշնչումներին և ձևերին, այն ինչ որ կոչվում է բնականություն: Գործոնը աչքն է, երևակայությունը անելիք չունի ավելի, քան սոսկ հիշողությունը: Հասկանալի է, որ արվեստն իր գերագույն արտահայտությունը գտնում է ամենից առաջ տեսանելի և շոշափելի քանդակագործության մեջ:

Բոլորովին այլ դռներ են բացվում հաջորդ՝ քրիստոնյա միջնադարում: Նոր և հիմնովին տարբեր աշխարհատեսություն: Մարդը բնության հլու ունկնդիրը չէ: Նա իր ներքին մեծ աշխարհն ունի, որ գերի վերո է համարում արտաքին աշխարհից: Մեծ և բարձր երկինք ունի, լի հրաշագան տեսիլներով և անուրջներով: Այժմ ինքն է ձգտում բարձրանալ այդ անհասանելի Օլիմպոսը և ոչ թե աստվածներն են այնտեղից իջնում երկիր: Երևակայության և երազների անվերջ տեսլարաններ, ուր հրաշքները

մրցում են իրական երևույթների հետ և միտքը ընկճվում է ցնորքների թափի տակ: Քնականից վերև սավառնում է գերբնականը՝ ստեղծելով հրաշակերտ զրույցներ և պատմություններ: Գրականությունը այն օրին է հասնում, որ սրբերի կյանքը գերադասելի են համարվում, քան դասական ողբերգությունները, շնագլուխ Քրիստափորի (11) և կամ Ս. Գեորգ զորավարի վարքը ավելի է կարդացվում, քան Հոմերոսն ու Վիրգիլիոսը:

Նման պայմաններում, բնական է, որ ժողովրդական բանահյուսությունը պետք է հարկադրեր իր իրավունքները: Եվ ահա ժողովրդական ստեղծագործության անկաշկանդ բերքերը՝ քնարերգություն, դյուցազներգություն, պատմական լեգենդաներ և մտացածին զրույցներ և պատմվածներ խուժում, խոնվում են արվեստի աշխարհում:

Սակայն մարդկային տրամադրությունները չեն ընթանում ուղիղ գծով դեպի առաջ: Ուտևորի նման մարդկությունը մերթ մերթ սիրում է ետ նայել, ափսոսալ կարոտով, ինչ որ թողել անցել է, և հրաժարել, տաղտուկ զգալ ունեցածից: Երևակայությունը հոգնելուց հետո մարդ դառնում է ակամայից դեպի միտքը: Միջնադարյան զառանցական գրականությունը պետք է տեղի տար հակազդեցիկ ուղղության, շրջելով ուշադրությունը դեպի հին դարերի բնականությունը: Թողնենք ուրիշ երևույթները, գրական միտքը դարձավ և կանգնեց հին դասականության վրա, աշխատելով ընդօրինակել վաղուց մեռած աշխարհայացքի մեծ վարպետներին: Ծագեց կեղծ-դասականության մեծ դպրոցը: Հիասթափումը անխուսափելի էր վաղ թե ուշ: Դասականությունը ճնի և բովանդակության ներդաշնակություն էր և ներդաշնակությունը պայմանավորված է աշխարհայացքի կենդանությամբ: Հին արվեստը մեռել էր, որովհետև նրա հիմը կազմող հոգեբանությունը չքացել էր: Միջին դարերի մեծ խրամատը կար, որ բաժանում էր նոր աշխարհը Զևսի տիրապետությունից: Կարելի էր, հարկավ, կաղապարել հին ողբերգակ արվեստավորներին, բայց առանց իրենց բնական շնչի:

Մարդկությունը շուտով ճանճրացավ հավակնոտ դասականության մարմարյա սառն երկերից, առանց հոգու և ջերմության, և աչքը սևեռեց հետ դեպի միջնադարյան ռոմանականությունը, որ համապատասխանում էր նոր մարդու քրիստոնեական երազականության: Ահա ինչո՞ւ Շատոբրիանը գրում է Genie du Christianisme և կամ Martyrs, որով ծնվում է ռոմանտիզմը և ավետվում աշխարհին:

Գերման ռոմանտիզմը մերձ երեսուն տարով ավելի հասակավոր է: Նա երևան եկավ XVIII դարու վերջերին և նախապատրաստեց **Sturme und Drang**-ի շրջանը: Նույն դարու վերջերն էր հռչակավոր **Հերդեր** գիտնականը, որ առաջին անգամ ուրվագծեց այն հիմերը, որոնց վրա պիտի հանգչի գրականության պատմությունը որպես գիտական մարզ: Նա էր, որ ցույց

տվեց, որ բոլոր կիրք ազգերը անցնում են միևնույն և կամ նման գրական հանգրվաններ, ունեն իրենց դասական, ռոմանական, կեղծ-դասական և ռոմանտիկ շրջանները: Թողնենք պարսիկ, ասորի, հնդիկ, արաբ գրականությունները, որ մեր խնդրին չեն վերաբերում և առնենք հայ գրականությունը:

* * *

Չնայելով հայ պատմական կյանքի խեցգետնակ վիճակին, մեր գրականությունը պահել է որոշ չափի կանոնավորություն կամ հաջորդականություն իր զարգացման ընթացքին: Կարելի է ասել, եվրոպականին համընթաց է: Ունի հին շրջան, միջին տաղասացիկ շրջան, կեղծ-դասականություն և ռոմանտիզմ:

Հայ միջնադարը զարմանալի ընդհանուր գծեր ունի եվրոպականի հետ: Ամենեն առաջ ընդգծելու է նոր լեզուների ծնունդը: Արևմուտքը նետեց լատին լեզվի բեռը և սկսեց մշակել ազգային լեզուներ: Գրեթե միաժամանակ և մեր գրաբարը տեղի տվեց աշխարհիկ լեզվին, որ գրական իրավունքներ ձեռք բերեց Կիլիկյան արքունիքում և աշխարհային տաղասացության մեջ: Մոռանալու չէ, որ հայ անդրանիկ տաղասացները ժամանակակից էին Դանթեի և Պետրարկայի: Գրաբարը մնաց, լատիներենի նման, եկեղեցականության գանձ առավելապես:

Եվրոպական կեղծ-դասականությունն այն մեծ արժանիքն ունի, որ նա չխոնարհեց հույն կամ լատին լեզվի առաջ, այլ պահեց, սնեց և աճեցրեց մայրենի լեզուները և հասցրեց գրական բարձր կատարելության: Ֆրանսերենը, իտալերենը, անգլերեն և գերմաներեն, որ խանճարուրքի մեջ էին XII-XIII դարերում, XVII-XVIII դարերում հանգեցին դասական բարձրության: Այս է պատճառը, որ ֆրանսացիք, երբեմն և մյուսները, դասական են անվանում կեղծ-դասական շրջանը, ի նկատի ունենալով լեզվի կատարելությունը:

Հայ կեղծ-դասականությունը այս կետում զանազանվում է եվրոպականից, որովհետև իր լեզուն գրաբարն է և ոչ աշխարհաբարը: Մխիթար Աբբահայրը 1724 թվին կազմել է աշխարհաբար քերականություն (12): Եթե այդ վայրկյանին, մի գերագույն ներշնչումով, ընդուներ աշխարհաբարը որպես գրական լեզու, այսօր մենք չէինք տառապիլ լեզվական երկվությունից և կունենայինք մի և հառաջացած լեզու և ճոխ գրականություն:

Սակայն, դասական լեզվի ավանդական հրապույրը դեռ զորեղ էր և անպարտելի: Մխիթարյանները կոչված չէին գրականություն մշակելու: Նրանց անմիջական նպատակն էր՝ կենդանացնել հնության հիշատակները և նրանց հետ միասին շունչ տալ հին լեզվին: Երբ հետագայում Վենետիկը

դարձավ կեղծ-դասական գրականության հնոց, բնական է, որ հարմարագույն լեզուն «Հայկ դյուցազնի» և նման գրության պիտի համարվեր գրաբարը: Այսպես թե այնպես աշխարհաբարը մնաց իրավազուրկ:

Հաջորդ մեծ գրական դպրոցին, ռոմանտիզմին, էր վերապահված կատարել այն մեծ հեղաշրջումը, որ է աշխարհաբարի հաղթանակը: Այդ խոշոր և խիզախ երևույթը պարտական ենք Խ. Արովյանին, իսկ Արովյանը իր հաղացումը պարտավոր է գերման կրթության, գերման ռոմանտիզմի շնչին: Թե որքան գիտակցական էր նորա խիզախ քայլը, և որպիսի ծանր մտորումների արդյունք էր, կարելի է դատել այն հուզիչ և խորիմաստ համեմատությունից, ուր աշխարհաբարը նմանեցնում է Կրեսոս թագավորի համր որդուն, որի լեզվի կապանքներն արձակվում են, երբ տեսնում է թշնամու սուրը շողշողալիս իր հոր գլխին: Աշխարհաբարի նկատմամբ գերման ռոմանտիզմն է այն փայլուն սուրը, որ կտրում է նրա կապերը: Նոր լեզուն աղաղակում է հայի «Վերք»-երը, թաթավում է հայ միտքը ռոմանտիզմի ավազանում և ստեղծում նոր գրականություն:

Քիչ հետո նույն բանը կատարում է արևմտյան հայության մեջ ի. Ալիշանը: Այս մասին ևս խոսել եմ Ակումբում, բայց «Ցառաջ»-ին ուղղած նամակումս չեմ հիշած, որովհետև վեճին չէր վերաբերում:

Նահապետի «Նվագներին» երևումը կարծես մի փայլատակում է խավարած երկնքում, մի երկնառաք հրաշք, մանավանդ այնպիսի մի ժամանակ, երբ պաշտամունքի սեղանի վրա էին «Հայկ դյուցազն»-ի նման քերթվածներ: Արդյո՞ք հակազդեցության բնական թելադրանքն էր: Տակավին երեսուն տարի առաջ ինձ զրաղեցնում էր այս հրաշքը և ուզում էի իմանալ պատճառը իր իսկ Նահապետի բերանից (13): Պատասխանը հակիրճ էր և ոչ անթերի: Որպես թե դպրոցական տղաներին ընթերցանության նյութ տալու համար էր, որ գրել էր աշխարհիկ «Նռաագներ»-ը: Արովյանի լեզուն բացել էր ժողովուրդը, Ալիշանինը՝ այդ ժողովրդի մի բեկորը Մուրատյան և Ռափայելյան դպրոցներում:

Սակայն թվում է, որ Ալիշան ուրիշ հիմք էլ ուներ, ինչպես ցույց են տալիս նույն «Նռաագներ»-ը: Նահապետի երգերը ի՞նչ են, եթե ոչ փունջ ծաղիկներ, հավաքված մեր միջնադարյան քնարերգության դաշտերից, և ուռճացրած, փարթամացրած իր հոգու վեհ ջերմանոցում: Ասել է, թե Նահապետը ընթացել է նույն չափով, ինչ որ եվրոպական ռոմանտիզմի հիմնադիրները: Սրանք քաղել են իրենց հույզերը միջնադարյան ռոմանականությունից. ճիշտ այդպես է վարվել և մեր Նահապետը, դիմելով հայրենի միջին դարերին, և այնտեղի ծաղիկներից է քամել իր հյութը: Այսպես է վարվել միանգամայն անկախ եվրոպացիներից, հանճարի հատուկ ինքնաբուխ թափով: Արովյանի ռոմանտիզմը նորասաեղծ է օտար ազդեցության տակ,

Ալիշանինը՝ բուն հայացի է, իջած պատմության խորքից: Առաջինը երկունքն է տեսել, ծանր երկունք, երկրորդը՝ բնական ծննդյան է: Տարբեր են ծագումով, բայց էությամբ՝ նույն, միմյանց լրացնում են. մեկը քաց է անում հայ երկրի **«Վերքերը»**, մյուսը՝ արցունք է թափում նրանց վրա, հայ երկնքի բարձունքից:

Այս հանգամանքը, այսինքն՝ մեր գրականության երկճեղ սկզբնավորությունը, կանխորոշել է այն տարբեր ուղիները, որով պիտի ընթանար գրական ստեղծագործությունը արևելյան և արևմտյան հատվածներում: Բնորոշել այդ ուղիները դուրս է մեր նպատակից: Չմոռանանք, որ մեզ հետաքրքրողը Պեշիկթաշլյանն է:

«Վերք Հայաստանի» և **«Նուագք»** հիմնաքարերից հետո գալիս են Պեշիկթաշլյանի **«Տաղեր»**-ը: Ի՞նչ են բերում սրանք հայ նորածին գրականության: Արովյան և Ալիշան անպայման մեծություններ են: Արդյո՞ք Պեշիկթաշլյանն ևս մեծություն է որևէ նկատումով: Մեր պատասխանը հայտնի է: Պեշիկթաշլյանը մեծություն չէ, այլ միջակ անվան բանաստեղծ է, համեստ հասարակական գործիչ և բարեկիրթ, և բարեհամբավ, առաքինի անձը: Մեզ առարկում են, որ մենք ստորագնահատում ենք, բայց զլանում են ցույց տալ, թե ո՞վ է և երբ անվանել նրան մեծ բանաստեղծ:

Եթե մեզ առարկեին, որ մեծ, միջակ, և նման որակումները գիտական չափեր չեն, ուստի և անհանճարարելի քննադատության մեջ, մենք կհասկանայինք: Եթե հարցնեին, թե ո՞րն է մեր չափորը՝ մեծություններ կշռելու, դարձյալ կհասկանայինք, մանավանդ, երբ մեր հակառակորդները իրենց չափերը հրապարակեին: Առարկայական չափեր, և ոչ հոռի տեսակի տպավորականության աղաղակներ և կամ ճարտասանական վարկպարազի ճիչեր:

Պետք է թողնել, վանել, լուրջ քննադատությունից «զմայլելի, սքանչելի, հանկուցիչ, վսեմ, նրբին, խորին» և նման անհյութ և անգայտ որակումները անորոշ և խուսափուկ ճաշակի: Պետք է որոնել ավելի հաստատուն դիտանոցներ գեղարվեստական երևույթները զննելու համար:

Պեշիկթաշլյանի գրական անունը հանգչում է այն փոքր հատորի վրա, որ հրատարակվել է իր մահից հետո 1870 թվին, և այնուհետև երկու հրատարակություն է տեսել, 1902 թվին Թիֆլիսում, և 1904 թվին՝ Փարիզում:

Հատորը հաստափոր չէ: Ով ուզում է ծանոթանալ և ուսումնասիրել բանաստեղծին, իր տրամադրության տակ ունի հիմնական աղբյուրը: Կարող է անթերի և անկաշկանդ կարծիք կազմել նրա ստեղծագործության մասին:

Քննելի հատորը ամփոփում է ոչ ավելի քան 60 կտոր բան, չհաշված այլևայլ մանրուք: Սրանից միայն մի քառորդն է գրված աշխարհաբարով,

մյուսները գրաբար են: Հետևապես մեր բանաստեղծը ներկայանում է հայ նոր գրականության սեղանին գրեթե մի տասնյակ ոտանավորով:

Արդ, ինչ և լինի այդ ոտանավորների արժանիքը, հասկանալի է, որ այդքան թեթև բեռով չի կարելի հավակնել մեծության: Մեծությունը, վերջապես, միայն որակ չէ, այլև քանակ է:

Գրաբար քերթվածները պատկանում են նախորդ շրջանին, այն է կեղծ-դասականության: Իրավունք ունինք ասելու, որ մեր բանաստեղծը հետ է ոչ միայն Արովյանից, այլև Ալիշանից, քանի որ մշակում է հին ոճի գրականություն, երբ նորի հիմն է դրված:

Գուցե գրաբար քերթվածները մեծ տեղ են ապահովում հեղինակին նախորդ շրջանում, կհարցնեն ընթերցողը: Պարոն Չոպանյան գտնում է, որ այս քերթվածները ավելի շնորհալի են, քան **«Հայկ դյուցազն»**-ը, կեղծ-դասականության կոթողը: Իրողությունն այն է, որ Պեշիկթաշլյանի գրաբար բանաստեղծություններուն մեջ ևս ընտրելի են հազիվ 10-15 և ներկայանալի գրական ատյանին: Մնացած հոծ մեծամասնությունը անճաշակելի պատուղներ են, ուղերձներ և ներբողներ և կամ ողբեր, ցվիրված մասնավոր անձերի թե պատմական դեմքերի: Մի մասը աշակերտական երախտագիտության տուրք են հոգևոր ծնողներին և կամ բարեկամներին, մի տեսակ փորձեր, ուր պատրաստում է բանաստեղծն իր գրիչն ու թանաքը իսկական ստեղծագործության համար:

Այսպես՝ նրա քնարի նյութ են դարձել՝ Գեորգ վարդապետի ընտրությունը արքահայր, Երվանդ Հյուրմուզի ճեռնադրությունը եպիսկոպոս, հայր Ա. Բագրատունի երկիցս անգամ, հայր Ալիշան, Շեքյան, ողբեր՝ ի մահ Ոսկյան պատանվո, ի մահ Գաբրիելի Երամյան, ի նահատակություն Վարդանանց, ի մահ Խոսրովու Մեծի, ի մահ Հիսուսի, ողբ մանկան ի թռչնիկն վաղամեռիկ. այլև՝ հրավեր ի մարտ Խոսրովու, Զրոսանք Արտաշեսի, քերթողական ոգի Հայաստանի և նման դյուցազներգություններ: Մերձ երկու տասնյակ ոտանավորներ ցվիրված են նման նյութերի, ոճը բարձրաթռիչ, բովանդակությունը աղքատ, ծանրաբեռնված կեղծ-դասական ճարտասանության հատուկ բոլոր արդուզարդով: Հյուրմուզի ընտրության առթիվ, օր. բանաստեղծը հնաբավոր է գտնում գոչելու. օ՜ Հայրենիք, առ քո ճեռը ուրախության երգի ոսկի քնարը, և դուք, ծնունդք պերճ դյուցազանց, ելեք պար բռնեցեք, և դո՛ւ, մուսայդ անմահ, դուրս եկ և երգե՛ թե ինչպես Ոգի Հայաստանյաց որ միշտ այդ նստած դառն արցունք էր ցողում, այժմ հրաժարվեց սուգից, երբ լսեց Գեորգի փառաց պերճ համբավը և այլն:

Այսպիսի քերթվածներից դուրս՝ համարելու է մոտ 10-15 ոտանավորներ, որոնք կազմում են մեր բանաստեղծի գրաբարյան պաշարը. ինչպես՝ **Գիշեր, Քնար եւ շիրիմ, Արտասուք կուսիկ, Վերադարձ, Ցեսիկ հառաչք, Գնացեք**

իմ տաղը, Ցիշեա՛ զիս կոյս, Ներեա՛ ինձ կոյս, Ծոյլ տաք, Մերձ ի մահում եթերերգեալ, Մերձ ի մահ գրաւած, Ուստի՞ ծագէ այս լոյս:

Գրեթե նույնչափ և աշխարհաբար ոտանավորներ, որոնք միասին բոլորում են Պեշիկթաշլյանի գրական պսակը:

Որ այդ ոտանավորները փոխանցական են կեղծ-դասականությունից դեպի ռոմանտիզմ, երևում է ոչ միայն լեզվական խտրոցից, այլև այն ներքին հատկանիշներից, որոնց վերլուծման կուզենք դառնալ:

* * *

Ի՞նչ է Պեշիկթաշլյանի քնարը և ի՞նչ են նրա լարերը:

Քնարը բնավ բազմաղի չէ: Զարմանալի է, որ պ. Չոպանյան կարծում է, որ Արտվյանը գյուղական մտայնություն ունի, իսկ Պեշիկթաշլյանը՝ մեծ քաղաքի մարդու հոգեբանություն, և բերել է որպես թե «բարձր քաղաքակրթական արվեստ», «տիեզերական կյանքն արտահայտող գործեր»:

Կատարյալ մոլորություն: Չոպանյան, ինչպես և պոլսահայ գրագետները միշտ տեսել են գրաբարագետի մեջ մեծ իմաստություն, և սովորական է լսել, թե այսինչ մարդը զարգացած ոմն է, որովհետև հրաշալի գրաբար գիտե: Պեշիկթաշլյանը վարպետ է գրաբար լեզվի և այս բավական է, որ պ. Չոպանյան նրան վերագրե բարձր մտավոր կարողություններ կամ համարե նրան տիեզերական կյանքի արտահայտիչ:

Որքան որ կարելի է դատել նրա երկերից, մեր բանաստեղծն իրականին շատ անճոռնի հորիզոն ունի մտավոր: Ոչնչից չի երևում, որ մեծ քաղաքի բնակչի տեսություն ունի: Քաղաքի բարդ կյանքը և իր պատճառած հուզումները իսպառ անծանոթ են մեր բանաստեղծին: Նա ավելի Ալեմդաղի բնակիչ է, քան քաղաքի (14): Այնտեղից է նա դիտում աշխարհն ու բնությունը և այնտեղ է հավաքում իր քնարի հիմնական տարրերը: Սրանք ևս բարդ չեն: Զեփյուռը կամ հովիկը, ծաղիկն ու վարդը, թիթեռնիկը, վտակը, սոխակը և հեռվեն ծածանող կույսի խոպոպոքը, ահա այն բանաստեղծի սրտին ընտանի թավշյա թելերը, որից սիրում է հյուսել իր քնարերգական բանվածքները: Հովվերգական տեսարան է և ոչ քաղաքային: Բանաստեղծի ընտրողությունը գիտակցական է և համաձայն կեղծ-դասական ոճին:

Խնդիրը միայն քնարի նյութը չէ, այլև բանաստեղծի **մերձեցումը** նյութին: Կեղծ-դասականը այդ կետում լիովին զանազանվում է ռոմանտիկից: Մեկի մերձեցումը, այսպես ասենք, լուսանկարչական է, մյուսինը՝ նկարչական: Կեղծ-դասականը տալիս է բնությունը ինչպես կա, ինչպես տեսնում ենք բոլորեքյանս: Ապա լուսանկարկաչ առվակը, փափկաթև զեփյուռը, ոսկեթև

քիքեռնիկը, գոհար վարդը, սիրակեզ սոխակը, ոսկեհուռճ մարգերը, վարսագեղ ծառերը, երկնաճեմ աստղերը, ամպերը, արծաթափայլ լուսին և այլն, ամեն մեկը պատկերավոր շրջանակի մեջ:

Այլ է ռոմանտիզմի աչքը: Բնության հրաշալիքների մեջ նա որոնում է և տեսնում իր հոգեկան ներքին հույզերը, նկարագրում է և զբաղվում նրանցով որքան որ նրանք թվում են թե մարմնացնում են իր ներսուն ապրումներն ու տրամադրությունները: Գերման նշանավոր բանաստեղծի մի նախադասությունը՝ **«Ինչո՞ւ ծաղիկները այդպես տխուր են այսօր»** (Heine), արդեն մատնում է նրա ռոմանտիկ ոգին: Նույնը մեր Ա. Իսահակյանի երգը.

Աշնան ծաղիկնե՞ր,
Դալո՛ւկ ու տխո՛ւր,
Դողդոջում եք հեզ
Դաշտերում թափուր:
Ձեր աչքերի մեջ
Արցունք կա տրտում,
Ուշացած երազ
Ձեր քնքուշ սրտում...

Այսպես չէ Պեշիկթաշլյանի վերաբերումը: Հիմը կեղծ-դասական է, ռոմանտիկ պատահական շերտերով և շեղումներով: Բանաստեղծը, չնայած իր համախական հառաչներին և ողբերին, իրապես հետաքրքրվում է ավելի արտաքին աշխարհով, քան իր ներքին ապրումներով: Լուսանկարչի անկողմնապահությամբ շարում է մեր առաջ պատկերներ, նկարագրություններ բնությունից թե պատմությունից, առանց թաթավելու նախապես այդ պատկերներն իր հոգու ջրերում, առանց հոգեպես ձուլվելու նրանց հետ:

Այսպես են իր գրեթե բոլոր հայրենասիրական երգերը, որ պատմական ներքողներ են: Ահա Վարդանանց երգը.

«Դըժոխք ի մարտ արշաւեն
Գոռ բանակաւ սեւագունդ» և այլն:

Ահավասիկ Խոսրով Մեծի երգը.

«Ի գահոյս Արամեան,
Պերճ առիւծ սիգախրոխտ» և այլն:

Ահա և Զրոսանք Արտաշեսի.

«Ելէ՛ք ի դաշտ, սէգ իմ կորիւնիք դռոյթ առ՛ք
խաղից յասպարէզ,
Գոռ հըսկայից գոչէր հրաւէր հըսկայազօրն
Արտաշէս» ... և այլն:

Համեմատենք այժմ այս կեղծ-դասական սառնամանիքը միջնադարյան հետևյալ ջերմ տաղի հետ (15), որ նույնպես հայրենասիրական է և կտեսնենք մերձեցման տարբերությունը.

«Սուտ եւ անցաւոր աշխարհ, ո՞ւր են մեր
իշխանքն ամենայն,
Հզօր մեծ Տրդատ արքայն, պարոնայքն եւ իւր
գովական.
Զարթի՛ր եւ տեսէր զմեզ, խեղճ եւ ողորմն
կսկծական.
Ամենայն ազգ իւրեանց վիճակն եւ եղեալ եմք
մեք ցիրուցան,
Գերի եմք ողորմելի եւ ամենայն ազգաց եմք
կոխան.
Ոչ ունիմք մեք քաղաւոր, ո՛չ հզօր զինուոր
զօրական,
Ո՞ւր են առաջին իշխանքն, քաջ Մուշեղ և Գայլ
Վահան» և այլն:

Միջնադարյան տաղի հետ ենք համեմատում, որովհետև, ինչպես բացատրեցինք վերև, արդի ռոմանտիզմի պատմական ենթահողն է:

Նկատելի է նմանապես, որ Պեշիկթաշլյանը երբեմն կարծես սայթաքում է իր շավղից, և իր երգերին կցում է հավելվածական խոհեր և խորհրդածություններ, որոնք անջատ են երգերից՝ մի շեղում, որ կարծես ծառայում է կամուրջ լինելու դեպի ռոմանտիկ տրամադրությունը:

Այսպես, **«Գիշեր»** ընտիր նկարագրությունը վերջանում է անսպասելի շեղումով.

«Ո՞վ իմ Հայոց չքքնաղ երկիր դրախտավայր,
Տես զի՛ որդւոցքդ դիւցազանց վենից պար
Երկնապարիկ յեթերս աստեղք քազմահոյլ,
Ոսկեծըղի փայլեն յաւէժ 'ի ցըշոյլ»:

Այս շեղումը խիստ բնորոշ է: Լուսանկարիչը դեն է ձգում իր գործիքը և առնում է ձեռքը արվեստավորի վրձինը իր ես-ի այս կամ այն գիծը դնելու լուսանկարի մեջ:

Այս փոխանցումն է դեպի ռոմանտիկ ըմբռնումը և վերաբերումը:

«Ո՞հ, ի՛նչ անուշ» չքնաղ մեղեդին մի քայլ հառաջանում է նույն ըմբռնումի մեջ: Ճշմարիտ է, երգիչը չի ուզում իր մրմունջով վրդովել հովիկը, որ ծաղկանց վրա գուրգուրում է, թռչնիկը, որ երգում է ծառերի մեջ, և ոչ ականակիտ վտակի խոխոջը: Բայց նա հանում է իր սրտից ուրիշ հովիկ, որ ավերակների վրա է շրջում, ուրիշ վտակ, որ պղտոր է և ոսկիների մեջ է սողում, և նրանց հետ է ձուլում իր սրտի հառաչը:

«Ծերն Վանայ» երգի մեջ բանաստեղծի քնարը հասնում է ռոմանտիկ բարձրության: Գիշերը հանդիսանում է որպես մի մասն նրա սրտի մթությանն, որ թխացնում է անգամ ծովի մշտափրփուր ալիքները և լցնում տխուր հառաչանքով: Հույսի արշալույսը նույնանում է աստղերի արշալույսի հետ: Սիրտ երգը փարում է Թորգոմա աղետներին: Ոսկիները հնծում են փոթորկի գոռոցից, հնծում են մեռած ոգիների փոխան: Վանա կոհակները ողբում են հին ցավեր...

Ահա քնարական մի գոհար, հուզիչ հղացումով և վսեմ պարզությամբ:

Այսպիսի մրմունջներ բացառիկ երևույթ են: Բանաստեղծը ձգտում չունի մերկանալու իր ներքինը: **«Մերձ ի մահ»** երգերի մեջ փորձում է ամփոփվել իր մեջ, լսվում են շշունջներ ներսից, թե այնտեղ անդունդ կա լի երազոք, հույսեր կան թաղված, ոսկյակ անուրջք, լուռ ցավեր, սոսկադեմ թշվառություն, բայց բոլորը խեղդվում են լռության մեջ, չեն հայտնաբերվում: Թվում է, թե փափկաթև հույզեր են, նման մեղմ զեփյուռի, անընդունակ կամ անուժ հողմ դառնալու, փոթորկելու զգացողությունը: Ցավի և կսկիծի պալարներ են, որոնք սակայն չեն պայթում, որ վերջեր գոյացնեն և տեղորեն քնարը ներքին հրայրքով...

Սերն անգամ, որ «ծագել է որպես լույս» նորա սրտի խավարում ներս է սողոսկում ոսկեթև թիթեռնիկի մեղմությամբ, ներս է մտնում ինչպես մի հրեշտակ-կույս, գեղաշնորհ մանուկ, ճակատը՝ պարկեշտ, այտերը՝ մանկունի, գեղահույլ խոպոպներով, հրաշատեսիկ մի երևույթ, որ լցնում է բանաստեղծի ողջ էությունը և մոռանալ տալիս բնության հրաշալիքները. «Ոչ ևս սիրէ գծաղիկ, ոչ զզեփիւռ, ոչ ցօղատարափ պարտէզք, ոչ երկինք ճշուլազարդ, ոչ աղաւնեակ, ոչ սոխակ»: Մթության մեջ կարկառում են դողդոջ բազուկները, հազիվ շշնջում է **քոյլ տուր**, բայց զգում է իրեն «աղերսահայց ուխտավոր, ցրտահար և փետրաթափ ճնճղուկ», որ գթության պետք ունի, «անճշան միջատ», որ չի կարող թևել դեպի երկինք: Աղերսում է **Նեռեա՛ իմձ, կո՛յս**, արկ զբեհեզ գթութեանդ, որ ծածկեսցէ զյանցանս իմ,

ուղղում է նրան **Ցեղին հատաչքը**, խնդրում՝ **Ցիշեա՜ զի՛ս, կո՛յս**, երբ կտեսնես վայրի ծաղիկ մենավոր գերեզմանիս հսկիչ:

Մեր բանաստեղծի ներքին ջերմոցն այն հատկությունն ունի, որ սերն իսկ չի աճում, որ կիրք դառնա, խռովահույզ կիրք, սերը մնում է կոկոնի մեջ, չի բացվում վարդի նման: Ընդհանրապես բուռն խռովք, մրրիկ չունի սրտում: Աննճանոթ է նրան ընդվզող տրտունջը, որ ծառանում է բախտի դեմ, երկրի դեմ, աննճանոթ աննեծը, որ սլանում է դեպի երկինք, ընդդեմ «ոխերիմ աստուծու»: Մի մեղմություն, որ մոտ է թուլության և որ չէ պրկում քնարը մեծ լարվածքով: Մեր բանաստեղծը այն չէ, ինչ որ ասում է միջնադարյան երգիչը աննման տողերով.

«Գլուխս ամպերն ի վեր իջեր ի սըրտիս լեռներուն
վըրայ,
Մաղձըն սըրտիս մըշուշ կապեր, արեան արցունքս
կու ցօղայ» (16):

Այո՛, նրա գլխում ամպեր չկան, սրտում լեռներ, ո՛չ մաղձի մշուշ և ո՛չ արյան արցունք: Նրա քնարը հնչ ու խոնարհ է, քնքուշ է հեքաթար, բրթոում պատանեկան աշխույժով և ողջախոհությամբ: Կարծես թե կանգ է առել նորափթիթ արրունքի մեջ, չի ճաշակել երիտասարդական և առնական հասակների վայելքը, անգետ մնալով մեկի թավալգլոր ճախրանքի, մյուսի կազդուրիչ կորովի: Արդ՝ ուր չկա հասունություն, չկա և մեծություն: Պեշիկթաշլյանի մուզան մեծ չէ, այլ սիրելի, համեմի, ինչպես անուշ է մի դեռատի արարած, որ անմեղ է և միամիտ, ողջախոհ և պարկեշտ:

Նրա ստեղծագործության ո՛չ քանակը և ո՛չ որակը հիմ չեն տալիս դասելու մեծությունների շարքը, եթե միայն չենք ուզում փոքրացնել մեծության գաղափարը: Ինչ որ հանում է նրան փոքրերի թվից և դնում ավելի բարձր պատվանդանի վրա. **միջինների շարքում**, այդ իր նվագների անուշությունն ու մատաղ քարմությունն է:

Հարկավ, բացարձակ մեծություններ չկան և ոչ միջակություններ: Ամեն ինչ հարաբերական է տեղի և ժամանակի պայմաններում: Յուրաքանչյուր գրականություն իր չափն ունի: Ո՞րն է մեր չափը մեծն ու փոքրը որոշելու համար մեր գրականության մեջ: Այս դեպքում մեր չափը Արովյան և Ալիշան են, ոչ միայն որ նորածին գրականության հայրերն են, այլև որ ավագ ժամանակակիցներն են քննելի բանաստեղծին: Հետնորդին չափել նախորդով պետք է և կարելի է: Ի՞նչ է Պեշիկթաշլյանը նրանց համեմատությամբ: Արովյանը ներկայանում է մեզ որպես ռոմանտիզմի մի հրարուխ, որ Մասիսի նման և միաժամանակ, ժայթքում է աեեղ որոտումով և քնդյունով Արարատյան դաշտի մեջ և կրակ ու բոց ցրում շուրջը, հրակնեզ լավայով մաքրում գրաբարի ազազուն քարուտները նոր մշակության համար...

Պեշիկթաշլյանը հին և նոր գրականության սահմանագլխում վառվող մի խարույկ է, որ ծխում է, բայց չի հրդեհում, տաքացնում է, բայց չի այրում, երբեմն կայծկլտում է և լուսապայծառ շողեր արձակում...

Ալիշանի հետ ուրիշներն ևս համեմատել՝ Մ. Չերազ և Վարուժան: Երկուսի աչքում էլ Ալիշանը **արծիվ** է բանաստեղծության, Պեշիկթաշլյանը՝ **աղավնի:**

«Ալիշանի երգը գոռում, Պեշիկթաշլյանինը՝ ճլուզլյում է,- ասում է Չերազ,- մի **ջրվեժ** է Ալիշան, որ ոռնալով ժայռեն վար կենտվի, փրփուր և կռհակ կժայթքե դեպի երկին, և քարերը ծեծելով, խութերու վրայե ցատկելով կվազե ահեղամռունչ, կարծես մի հավիտենական խռչընդոտի դեմ կռվելով. հայհոյելով բարձրեն վար կ'ոստնու, ավելի վեր թռչելու համար... Պեշիկթաշլյան մի **առվակ** է, որ խոտին տակ գաղտնելով կսահի, չի հոսիր՝ կծավալի մերթ հոս, մերթ հոն, մի արևու ճաճանչ կհավքե իր ծոցին մեջ և դարձյալ մարգերու տակ կթաքչի անձնշան, և մի ոլորուն ստվերի պես՝ հեզաշարժ բնկրկնկներ հորինելով՝ ինքզ իր մեջ կխայտա»:

Այս հրաշալի և ճշգրիտ համեմատությունը պետք է բանա կույր և կանխակալ մտքերը: Եթե **արծիվը** մեծություն է, աղավնին գոնե միջակություն է, որովհետև ավելի փոքր թռչուններ կան: Եթե **ջրվեժը** մեծություն է, **առվակը** մինչև իսկ միջակություն չէ, որովհետև հոսուն ջուր չէ, այլ միայն սահող:

Արդ՝ ինչո՞վ է տարբերվում այս կարծիքը մերից: Թերևս նրանով, որ **աղավնի** և **առվակ** հնչում են աղվոր, իսկ **միջակը** դուրեկան չէ հայրենասեր ականջներին:

Պարոն Չոպանյանը իր ժամանակին չի բողոքել Չերազի դեմ իր բարեկամների հորդորով: Ինչո՞ւ: Որովհետև Չերազը թրքահայ է, իսկ մենք՝ կովկասահայ: Արգո գրագետը մեծ համարում չունի կովկասահայերի մասին: «Սրանք,- նրա կարծիքով,- ընդունակ են միայն գաղջ և սխալ բաներին», մի միտք, որ պատիվ չէ բերում ոչ մի գրագետի:

* * *

Վեճը դեռ չէ վերջացել: Պեշիկթաշլյանը միայն բանաստեղծ չէր, այլև հասարակական գործիչ, այլև առաքինի անհատ: Մեր դասախոսը պ. Օհան Կարոն ուշադրության էր առել թե՛ մեկը թե՛ մյուսը: Անհատական բարեմասնությունները կասկածի ներքո չեն և պետք չենք զգում կանգ առնել նրանց վրա: Մի դիտողություն անենք միայն մասնավոր բնավորության:

Պարոն դասախոսի կարծիքով Պեշիկթաշլյանը «մեղմ և ամաչկոտ» էր այնքան, որ համարձակություն չգտավ իր մեջ բանալ իր սիրած աղջկան: Պարոն Չոպանյան հակառակ կարծիքն ունի: Մենք ավելի համամիտ ենք, պ. դասախոսին: Բայց կարևորը այդ չէ:

Դասախոսի ենթադրության առթիվ դիտել էինք, որ ամոթխածությունը կարելի է վերագրել մասամբ Մխիթարյան կրթության: Ս. Էջմիածնի ճեմարանի աշակերտները ևս հայտնի էին, գոնե առաջինները, այդ հատկությամբ: Որոշ չափով գիշերօթիկ փակ դպրոցների պայմանների արդյունք է:

«Ցառաջ» թերթի մեջ մի հողմավար գլուխ մեր անմեղ դիտողությունը շտապել էր համարել՝ մի քար որ նետում ենք մխիթարյաններին ոխակալությունից: Ծանծաղամտության այդ «քարը» այս անգամ սակայն մուտք է գտել և պ. Չոպանյանի մոտ: Զայրացել է, որ Պեշիկթաշլյանին համարում եմ ամաչկոտ և Մխիթարյաններին ամաչկոտության դաստիարակ: Օ՜, զարմանք: Կարծեմ, ամոթխածության զգացումը երբեք ախտավոր բան չի նկատվել: Տակավին հռչակավոր Թեոփրաստեսը երեսուն գովելի հատկությունների մեջ հիշում է նաև ամոթխածությունը: Նույն տեսակետն ունի և այժմյան մարդկությունը: Ոչ ոքի համար վիրավորական չէ ամաչկոտ լինել և կամ ամաչկոտություն պատվաստել: Պեշիկթաշլյանը և Մխիթարյանները, ուրեմն, կարող են հանգիստ մնալ, որ խոցված չեն:

Սակայն պ. Չոպանյանի մեջ միշտ արթուն է բարեսիրտ փաստաբանը: Առիթ է որոնում պաշտպանելու Մխիթարյաններին: Զարմանում է, որ մենք անտեղյակ ենք, որ այն վարժարանը, ուր սովորել է Պեշիկթաշլյան, վանական հաստատություն չէ, այլ աշխարհիկ է և վարդապետների կից և օտար ուսուցիչներ ունի, և դաստիարակությունը «ճգնավորական» չէ կամ «թուլացուցիչ», և որ վարժարանը մինչև անգամ հեղափոխականներ է տվել:

Ցավալի է, որ պ. Չոպանյանը շփոթում է ամոթխածությունը ճգնավորական և թուլացուցիչ ոգու հետ: Կարծեք, զանազանություն կա: Մխիթարյան վարժարանի մասին մենք ևս հասկացողություն ունենք: Ի՞նչպես են դաստիարակում ներկայումս սաներին պ. Չոպանյանի գաղափարակից հայրերը, ինչպես հայր Փեչիկյան, չգիտեմ, բայց կարող եմ վստահեցնել, որ Պեշիկթաշլյանի օրով հայր Ալիշանի պես ուսուցիչներ, որ մինչև ծերությունը մնաց ամոթխածության տիպար, ներշնչում էին նույն բարեմասնություններն աշակերտներին:

Անցնենք բուն նյութին, Պեշիկթաշլյանի գործունեության:

Մենք դժբախտություն էինք ունեցել համեմատելու Պեշիկթաշլյանին իր հասակակից Նալբանդյանցի հետ: Սա ռուսահայ է, ուստի բրքահայ Չոպանյանը գրգռվել է և ուզում է ցույց տալ, մեկ սալին խփելով մեկ մուրճին, որ Պեշիկթաշլյանն իբրև գործիչ ոչնչով պակաս չէ Նալբանդյանցից, այլև քաղաքական առավելություններ ունի:

Նախ՝ տալիս է Պեշիկթաշլյանի հասարակական ծառայության ցուցակը: 1846 թվին, երբ նա 17 տարեկան պատանի էր, մասնակցել է

Համազգաց անուն ընկերության, որ հիմնվել է Մխիթարյան մի վարդապետի նախաձեռնությամբ: Մասնակցել է նաև **Քարեգործական** ընկերության, երաժշտական ընկերության, դերասանություն է արել սիրողների բեմի վրա, ուսուցչություն է արել, կրոնական համերաշխություն է քարոզել:

Տարաբախտաբար այս ընկերությունների մեծ մասը դեռ չծնված արդեն մեռած էր: Կարելի է ասել՝ անունը կար, ամանումը չկար: Քայլեր են, որ վկայում են Պեշիկթաշլյանի և իր ընկերների քաղաքացիական գիտակցությունը, բայց գործեր չեն, հաշվենկշիռ ունեցող գործեր չեն:

Ուսուցչությունը մանկավարժական գործունեություն է և ոչ բուն հասարակական: Նալբանդյանցը պատրաստվում էր հայագիտական ամբիոնը ստանձնելու Պետերբուրգի համալսարանում, հարկավոր քննությունները տվել էր: Մեր համեմատությունը չի շոշափել այս կետը:

Ինչ վերաբերում է կրոնական համերաշխության, թվում է թե պ. Չոպանյան, ուրիշների նման, գերագնահատում է Պեշիկթաշլյանի դերն այս խընդրում: Պատճառը «**Եղբայր ենք մեք**» գրությունն է: Գրի մարդիկ սովորություն ունին չափազանցնելու գրության ազդեցությունը իրական կյանքի վրա:

Պարոն Չոպանյանի խանդավառությունը այնքան հեռուն է գնում, որ հիշյալ գրությունը համեմատում է «Մարսելիեզի» հետ, ազգային «Մարսելիեզ» է համարում: Այս համեմատությունից, հարկավ, տուժում է ֆրանսական հռչակավոր երգը: Կրոնական խրամատը կար Պեշիկթաշլյանից առաջ և մնաց նրանից հետո: Նրա հետ էին Մխիթարյան սաները, որոնք քարոզի առանձին պետք չունեին: Մյուս տարրերից ոչ ոք գլուխ չխոնարհեց համերաշխության առաջ: Ոչնչից չի երևում, որ Պեշիկթաշլյան «ոսկի օղակ է հանդիսացել կաթոլիկների և լուսավորչականների մեջ»: Բավական է հիշել, որ կաթոլիկ քահանաները չէին ուզում մահամերձ հիվանդին հաղորդել և վերջին օծումը տալ: Ո՞ւր է համերաշխությունն ու եղբայրությունը:

Կարևորն այս խնդրում պ. Չոպանյանի դատողություններն են, որոնց մասին կուզեի երկու խոսք ասել: Ոչինչ այնքան տաղտկալի չէ, քան այն տափակ ճշմարտության քարոզը, թե կրոն ու ազգ տարբեր բաներ են: Ներկա պայմաններում ուղղակի հանցանք է: Ամեն կողմից շրջապատված ենք հավատորսակներով, որոնք ճգտում են քայքայել հայության կրոնական-եկեղեցական շղթան: Երբ գայլերը մտնում են հոտի մեջ, եղբայրության աղերսներն անիմաստ են գայլի բերանում և եղկելի՝ ոչխարի բերանում, որ ուրիշ կերպ չէ հասկացվում, քան «եկ և կե՛ր ինձ»:

Պետք է վերջապես թոթափել արժան ազատամտության հրապույրը և արհամարհել հետադեմ երևալու երկյուղը: Պետք է ուժգին դիմագրավում բոլոր նրանց դեմ, որոնք հոշոտում են մեր ազգային միությունն որևէ կողմից, որևէ մտքով: Մեր ժողովրդի գիտակցության մեջ ազգն ու կրոնն ոչ միայն

տարբեր չեն, այլ սերտիվ կապված են: Եվ այդ գիտակցությունը հանել է իր պատմական անցյալից և ոչ թե տեսական հաշիվներից: Մտավորականն է, որ անջատում է կրոնն ու ազգը և անջատում է տեսականորեն, պաշտպանելով լեզուն և հայրենիքը, որպես ազգության գործոններ: Սակայն, եթե ճշմարիտ է, որ տարակրոն հայը կարող է հայ մնալ և հայրենասեր, նույնը կարելի է ասել և տարալեզու հայի համար, այլև՝ տարաշխարհիկ հայի համար: Ուրեմն, լեզուն և հայրենիքը նույն վիճակի մեջ են, ինչ որ կրոնը: Հարվածը ուղղվում է միմիայն կրոնի դեմ այն թերի դատումով, թե կրոնը անհատական խղճի գործ է: Թերի ենք անվանում, որովհետև հասարակությունը, խմբական կյանքը ծագում է այն օրից, երբ անհատականը համայնանում է: Բոլոր հասարակական գործոնները ելած են անհատի ներքին աշխարհից: Պատմական հիշողությունները՝ գրականություն, արվեստ, բոլորը անհատական զգացողություններ են ընդհանրացած: Երբ որևէ երևույթ մարդու ներսից դուրս է գալիս տեսանելի հրապարակը, շոշափելի և բոլորովին մատչելի ձև և մարմին ստանում, այն դառնում է հասարակական գործոն: Կրոնական զգացումը, երբ մարմին է ստանում եկեղեցու ձևով, այլևս կորցնում է անհատական բնավորությունը և դառնում է ընդհանրական ինչք, հանրությունը շաղկապող օղակ:

Հարկավ, եկեղեցին այսօր այն չէ ինչ որ երեկ էր, բոլոր ազգերի մոտ: Ամենուրեք նա ոչ միայն խղճի սրբարան էր, այլև՛ հովանավոր, և՛ գանձարան գիտության և արվեստի: Ներկայումս եկեղեցին զրկվել է իր նախկին շատ կարողություններից: Ազատ միտքը դադարեցրել է կրոնական բռնությունը, բայց չի կարելի ասել, որ վերացրել է կրոնական պատնեշները: Եվրոպական պետությունները, չնայելով հսկայական կարելիություններին պահպանելու իրենց ժողովրդի ուրույն գոյությունը, մնում են կառչած ազգային եկեղեցիներին: Ռուսիան ուղղափառ է, Գերմանիան՝ բողոքական, Անգլիան՝ անգլիկական, Ֆրանսիա՝ կաթոլիկ, Իտալիա ևս կաթոլիկ: Ֆրանսիայի հակակրոն ճիգերը ուրիշ բան չեն եթե ոչ արտահայտություն ազգային բնազդի՝ ազատագրվելու Հռովմի պապականությունից, նման Գերմանիայի և Անգլիայի:

Արդ՝ եթե մեծ ազգերը դեռևս ավելորդ բան չեն համարում սեփական կրոն ունենալ, որքան ավելի նա կարևոր է փոքր և անուժ ժողովուրդների համար: Ոչ մի բանավոր հիմ չկա կարծելու, որ Հայ եկեղեցին այլևս ազգային գործոն չէ: Նա եղել է և մնում է ամրակուռ գոտի հայության մեջքին: Եթե հայ ժողովուրդը այդ համոզումը չունենար, չէր ներկել եկեղեցու ամեն մի քարը արյունով, մարտիրոսական սուրբ արյունով:

Նրանք, որ հեռանում են այդ կարմիր փարախից, մի քանով ավելի են վտանգում իրենց ազգային գոյությունը, ավելի են մոտենում գիշատիչ

գայլերին: Նրանց պարտքն է քարոզել, որ կրոն ու ազգ տարբեր բաներ են, որպեսզի տարակրոնությունը ազգության խնդրոց չծառայե և թույլ տա կորուստը փոխարինել, ուժ տալով մյուս գործոններին: Պեշիկթաշլյանը այլակրոն էր և համերաշխության երգերն ու քարոզները նրա բերանում իր տեղն են և պատվաբեր: Բայց՝ երբ նույն քարոզը, թե կրոնն ու ազգը տարբեր են, կրկնում են Չոպանյանները, իմաստը փոխվում է: Պեշիկթաշլյանի գործը շինարար է, Չոպանյաններինը՝ քայքայիչ. նա անջատվածներին է բերում, սա կարող է նոր պառակտումներ առաջ բերել: Տարակրոն հայը նման է մի մարդու, որ կտրել է մի մատը և ստիպված է աշխատել, չորս մատով: Նրան վայել է և հասկանալի ասել, որ հնարավոր է բավականանալ չորս մատով: Բայց անպատշաճ է նույնը կրկնել հինգմատ ունեցող Չոպանյանին. վա՜յ թե միամիտ մեկը ավելորդ ծանրություն համարե հինգերորդ մատը և կտրե, և, թերևս, վաճառելու համար...

Այս հարցը սերտորեն կապված է վիճաբանության նյութի հետ: Տարակրոն հայությունը, հայ կաթոլիկությունը, արդեն ճեղք է բացել հայ քաղաքական գիտակցության մեջ, փարելով տարաշխարհիկ հայրենասիրության Կիլիկիայում և ոչ Մայր հայրենիքում: Սրա ետևից է գնում և Չոպանյանի «լուսավորչական» հայրենասիրությունը...

Նալբանդյանցը քանկ է հայության համար երկու մեծ գաղափարով՝ համազգային քաղաքացիական (իմա՛ գրական) լեզու, և համայն հայրենիք, գաղափարներ, որ ցայժմ էլ մնում են մեր ընդհանրական ձգտումների այնքան փափագելի հեռակետերը: Այս տեսակետից Նալբանդյանցին բարձր էինք դասել Պեշիկթաշլյանից:

* * *

Պարոն Չոպանյանը ուզում է ցույց տալ, որ Պեշիկթաշլյանը ևս մեծ քաղաքական ծրագրեր է ունեցել Կիլիկիայի նկատմամբ և թե «ապագան պիտի ցույց տա», որ այս ծրագրերը ավելի կենսունակ են: Լսենք նախ այս նոր քարոզը:

Նալբանդյանցը, Չոպանյանի կարծիքով, ըմբոստ ոգի ուներ, տարված էր համամարդկային հեղափոխական երազներով, ընկերական հարցը տիրում էր նրա մտքին մեջ ազգային հարցերին, և սրանց լուծումը ենթարկում էր առաջնի լուծումին: Պարոն Չոպանյանը վիճելի է համարում այս տեսությունը, ուզում է կարծես Նալբանդյանցին նախահայր համարել հետագա հեղափոխական գործունեության, բայց կանգ է առնում և ենթադրում, որ եթե նա կենդանի մնար, չպիտի հավաներ ինչ որ կովկասահայ մարքսիստների ղեկավարությամբ կատարվեց թուրքական հայ նահանգներում: Եթե մի քիչ ավելի ապրեր Նալբանդյանց և տեսներ

Խորհրդային իշխանության հաստատվելը, իբր ընկերվարական ազգասեր հայ որպես թե պիտի վարվեր Մյասնիկյանների նման և ոչ թե ինչպես վարվում են «Ահարոնյան մը և Ադոնց մը»:

Եթե բարեկամիս գրությունը չափածո լիներ, պետք է կարծեի, որ անունս հիշված է ոտի թե չափի համար: Ինչպես երևում է, այդ հիշատակությունը մի ընծայաբերություն է Խորհրդային իր ենթադրյալ բարեկամներին, որպես վկայական իր հավատարմության:

Նալբանդյանցի քաղաքական հայացքների և համոզումների մասին շատ խառնակ և անճիշտ տեղեկություն ունի պ. Չոպանյանը: «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկասիրության հեղինակի հայացքները բոլորովին տարբերվում են գործարանական ծխի մեջ մշակված ընկերավարական վարդապետությունից: Նալբանդյանց գործնական ուղեգիծ չէ թողել և ոչ մի բանից չի երևում, որ ազգային հարցը դներ համաշխարհային հեղափոխության անիվների վրա:

Արդյոք ի՞նչ դիրք կբռներ Նալբանդյանցը Խորհրդային իշխանության հանդեպ, ձրի ենթադրություններ են: Չեմ կարծում, որ նա Չոպանյանի հետ քևնցուկ պար բռներ Մյասնիկյանների շուրջը: Ավելի հավանական է, որ լռեր, ինչպես հրամայում է արժանապատվության զգացումը, և չխոսեր այն մարդկանց հետ, որոնք լսելու ցանկություն չունին: Մեր կողմից բարեկամական խորհուրդ կտայինք պ. Չոպանյանին, որ նա ևս հրաժարի վերջապես առաջարկելու իր ծառայությունը նրանց, որոնք մերժում են ընդունել:

Պեշիկթաշլյանը ուրիշ և Նալբանդյանցին հակառակ հայացք ուներ, ըստ Չոպանյանի: Նա հայրենասեր էր «դասական ըմբռնումով», որ եվրոպական առաջացած ժողովուրդների ըմբռնումն է: Համամարդկային ընկերական հարցում «չափավոր ազատամիտ ռամկավարականների» հայացքն է ունեցել և նրա հետ չի կապել ազգի հարության խնդիրը: Պեշիկթաշլյանի մտասևեռումն է եղել՝ հաստատել ինքնավար հայրենիք Կիլիկիայում, Նապոլեոն III-ի օգնությամբ, որովհետև հույս չուներ ո՛չ կովկասյան և ո՛չ թրքական Հայաստանի քաղաքական ապագայի վրա: Միակ կարելիությունը գտել էր Կիլիկիայում: Միջերկրական ազգ դառնալ՝ «փոքր, բայց ամուր և տևական ազգային տուն» ապահովել: Այս ծրագիրը որպես թե կատարվելու վրա էր մեծ պատերազմից հետո, բայց արգելք եղավ Երևանի կառավարությունը, որ ավելի մեծ Հայաստան ստեղծելու երազներ ուներ Ամերիկայի հովանու տակ: Ֆրանսիան վշտացավ և ծրագիրը ջուրն ընկավ:

Որքա՜ն պարզունակ միամտություն կա պատմվածքի մեջ: Չոպանյանին, երևում է, դեռ հայտնի չէ 1916 թվի գաղտնի դաշինքն իր քստմնելի մանրամասնությամբ (17): Բանաստեղծական մեծ ջանք է անում պ. Չոպանյանը տեսնելու իր պատկերը Պեշիկթաշլյանի մեջ: Ձեյթունի խեղճ Մովսես

քահանան (18), որ եկել էր մայրաքաղաք յուրայինների գլխի ճարը տեսնելու, դժվար թե օրորվեր ինքնավար Կիլիկիայի երազով: Իսկ Կ. Պոլսի ազգասերների դեսպանությունը Փարիզ մի օդային թռիչք էր. և երևակայություն է հարկավոր պնդելու, որ Նապոլեոնը մտադիր էր Նոր Լիքանան ստեղծելու այն ժամանակ, թե ապագայում «պատեհ առթիվ»...

* * *

Պետք է ասել, որ Կիլիկիայի հարցը քաղաքական մի մշուշ է, մի կարգ լևանտացի հայերի գլխում, ուր դյուրությամբ զետեղվում է 300-ամյա մի գաղութ, բայց ոչ 3000-ամյա մի հայրենիք: Կիլիկիա եղել է և է հայի համար գաղութ, և ոչ հայրենիք, և եթե այնտեղ ծածանվել է հայ դրոշակը, ծածանվել է այնպիսի ծանր պայմանների հետևանքով, որոնց կրկնությունը ցանկալի չէ: Թո՛ղ չզարմանան և չվրդովվին կիլիկյան հայրենասերները:

Տարածված կարծիք է, որ Ռուսիան ուզում էր ունենալ «Հայաստանը առանց հայերի»: Չգիտեմ, որքան ստույգ է այս չարաշուք խոսքը: Բայց հաստատ է, որ հնում, Ռուսիայի դերը կատարող Բյուզանդիան բոլորովին հակառակ և նույնչափ չարաղետ ճգտում ուներ՝ ունենալ «հայերը առանց Հայաստանի»:

Երբ սելջուկները կոխեցին Հայաստանի սահմանները, քրիստոնյա կայսրերը, ի տես վերահաս վտանգի, լավ համարեցին զոհել Հայաստանը, հուսալով այդ գնով փրկել կայսրությունը: Հայ արքայական տները բոնի տեղափոխեցին Եփրատի այն կողմը, նոր պատվար կանգնելու պետության երկու մեծ և բաց դռների առաջ, Մալաթիա-Սեբաստիա և Մարաշ-Կեսարիա գծերի վրա, որտեղից թշնամին խուժում էր ներս: Հանգան հայ քաղաքական ջահերը, որ այնպիսի ջանքերով վառվել էին: Արքայազուն իշխաններին հետևեցին ուրիշները: Հայերը զորացան և Մարաշի ուղղությամբ զենքի հաջողություն ունեցան, շուտով անկախության դրոշակ պարզեցին Կիլիկիայում: «Ազգային տունը» կազմվեց և քաշեց դեպի իրեն մայր հայրենիքի կենսատու հյութերը: Կաթողիկոսությունն անգամ, անսպասելի կարճատեսությամբ, լքեց անտեր անտիրական ժողովուրդը և փութաց Կիլիկիա:

Մնացին հավատարիմ հայ հողին հյուսիսային Հայաստանի մի քանի իշխանական տներ: Անցան սելջուկների, մոնղոլների սարսափները, փոթորիկը դադարեց, գորշ ամպերը քաշվեցին: Սույն այս իշխանները իջան իրենց ամրոցներից, տիրանալու իրենց կալվածներին և եռանդ դարմանելու երկրի վերքերը: Ջաքարյանների առաջնորդությամբ, նեցուկ ունենալով հարևան Վրաստանը, մաքրեցին Երասխի ամբողջ հովիտը օտար պետերից Կարինից մինչև Մուղան:

Կիլիկիայում Լևոն II նոր էր զարդարել իր գլուխը արևմուտքից ստացած

քագով, երբ Զաքարյաններն իջան դեպի հարավ, հասան Վանա ծովի եզերքը, հասան Մշո դաշտը: Վանում նստած էր մի քյուրտ իշխան, Խլաթում՝ Արմենշահ մուսուլման տունը: Ազգային զորության և ոչ մի կռվան: Հյուսիսից եկած զորքերը պարտվեցին և հետ դարձան: Կիլիկիայի խաղովակը քամել տարել էր եղած ուժերը:

Վրաստանը, որ անհամեմատ փոքր էր, քան Հայաստանը, և որ նույն արհավիրքները տեսավ, սելջուկ մոնղոլ-թաթար հարվածները կրեց, կարողացավ ի վերջո հառնել ավերակների միջից, պաշտպանել իր անկախությունը, և պահել պահպանել մինչև XIX դար: Պատճառն այն էր, որ իշխանական ղեկավար ուժերը մնացել էին երկրում: Մինչդեռ մեզանում Երասխից հարավ ոչ մի հետք չկար նախկին տոհմիկ պետերից: Հայ ֆեոդալական ավանդները վերացել էին, վերջին բեկորները «գաղթել էին», հոսել դեպի «ազգային նոր տունը»:

Ռուբինյան դրոշակ, անշուշտ, մեծ պարծանք է հայության համար, մի լուսավոր դրվագ: Բայց նրա փայլը և բերած երջանկությունը պղտորվում է մասամբ այն ստվերով, որ նա ձգեց մայր հայրենիքի վրա...

Այս տեսակետից, այն «դասական» հայրենասերները, որոնք փարել էին Կիլիկիային [XIX դարի] 60-ական թվականներին, դժվար թե «դասական» համարվեն: Ազգասերներ են ավելի, քան հայրենասերներ: Ազգասիրությունը հատուկ է գաղթահայության և իր կերտած բառն է, որ ուրիշ լեզվում չկա և որ, թերևս, ջնջվելու է հայ քաղաքական բառարանից: Նա քայքայում է հայրենասիրության գաղափարը: Կիլիկիան լևանտացի հայության «ազգային տունն» է:

Թողնենք Կիլիկյան հարցի նորագույն փուլը, որի լուսաբանությունը, պ. Չոպանյանի մոտ, շատ հեռու է «դասական» լինելուց: Մեզ զբաղեցնողը [XIX դարի] 60-ական թվականներն են և Պեշիկթաշլյանի դիրքը Կիլիկիայի հանդեպ:

Պարոն Չոպանյանը երում է մեր բանաստեղծին Կիլիկյան ազգասերների շարքը: Մեծ ծառայություն չի մատուցանում: Մենք ենթադրել էինք, որ Պեշիկթաշլյանի երազները հածում էին Հայաստանի շուրջը, ինչպես և Նալբանդյանցի: Վերջինս բարձր էինք դասել նրանով, որ իր հայրենասիրությունը ճգտում էր մարմնանալ գործով, մինչդեռ Պեշիկթաշլյանինը մի զգացմունք էր խոսքի և քարոզի սահմաններում: Մեկը պայքարող էր, մյուսը՝ խոսող: Նալբանդյանցը ընդունակ էր Հայաստան գալ, ինչպես և փորձեց, Պեշիկթաշլյան, մյուս պոլսական մտավորականների նման, չէր կարող հեռանալ մայրաքաղաքից դեպի «գավառները»:

Եթե ընդունենք պ. Չոպանյանի կարծիքը, որ մեր բանաստեղծը կիլիկյան հայրենասեր էր, ստիպված կլինինք մի բանով ևս վար համարել Նալ-

բանդյանցից: Սակայն, մենք համամիտ չենք այս կարծիքին: Զեյթունի երգերը բավականին հին չեն: Տիկին Երիցյանից (19) գիտենք, թե ի՞նչ պայմաններում են գրված հիշյալ երգերը: Մովսես քահանայի սրտաճմլիկ պատմություններն էին, որ հուզել և ոգևորել էին բանաստեղծին: Անշուշտ, նա համակրում էր Զեյթունի հերոսներին և կուզեր, որ իրենց ազատությունը պահպանեն: Բայց որ Զեյթունի դատի հետ կապում էր Կիլիկիայի անցյալ փառքի վերահաստատումի մեծ ծրագիրը, տեսական ենթադրություն է: Նա քաղաքական գործիչ չէր և չուներ ո՛չ սերտած ծրագիր և ո՛չ գծած գործելակերպ:

Եթե երգերով դատենք, ավելի իրավունք ունինք տանելու նրան Հայաստան, քան Կիլիկիա: Ապացույց **«Ծերն Վանայ»** և **«Մինչդեռ յուսոյ»**: Բնորոշ է մանավանդ վերջինս: Հայտնի է, որ նույն երգի մի ուրիշ հայացումը պատկանում է Ռուսինյանին: Սա երգում է.

«Երբամ տեսնեմ զիմ Կիլիկիա»:

Մինչդեռ Պեշիկթաշլյանն ունի.

«Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան»:

Մեր հայացքով գոնե, Հայաստանը ավելի թանկ է, քան Կիլիկիան և ապա ուրեմն Պեշիկթաշլյան ավելի բարձր է, քան Ռուսինյան, քան կաթոլիկ համայնքը, որ կիլիկյան ծրագրի ջերմ կողմնակիցն է և հոգևոր ծնողը, բարձր է, քան Պոլսի այն լուսավորչական մտավորականները, որոնց մտավոր ճառագայթները հասնում են մինչև Կիլիկիա, բայց չեն զորում անցնել մայր հայրենիք:

Ինչ և լինի մեր բանաստեղծի «մտասևեռումը», դեպի Կիլիկիա, թե Հայաստան, քաղաքական **մեծ** գործ չէ: Հայ քաղաքական գործունեությունը այն հասակի մեջ չէր այն ժամանակ, որ հայրենասիրական խոյանքը համարվի քաղաքական մեծ գործ: Պեշիկթաշլյանի եռևը, XVIII դարու սկզբում և վերջում կանգնած էին այնպիսի պատկառելի դեմքեր, որպիսիք են Իսրայել Օրի, Հովսեփ Արղության:

Համեստությունը մեծացնել՝ նշանակում է մեծությունը նվաստացնել: Թանկ է մեզ համար բանաստեղծի, հասարակական գործիչի անունը, բայց ավելի թանկ է հայ բանաստեղծության և հայ քաղաքական գործչի վարկը (20):

Խ Ո Ս Ք

ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ազնիվ հանդիսականներ, սիրելի հայրենակիցներ,

Գիտության և գրականության այս տաճարը, որ ընդունել է իր պերճ հարկի տակ մեր հայության հանդեսը, մի պարտք է դնում մեր վերա:

Երբ չարաբախտ բերումով ստիպված եղանք ելնել մեր հայրենի հողից և թափառել օտարության անծանոթ ուղիների վերա, այս երկիրը միևն էր նրանցից, որ բացավ իր դռները մեր առաջ և կատարեց իր մարդասիրական պարտքը: Հնարավորություն տվավ մեզ աշխատելու և թոթափելու ճանապարհների փոշին և ահա ի վիճակի ենք հրապարակ գալու տոնական հանգամանքներով: Մեր շնորհակալությունը ֆրանսիական մեծ հանրապետության այս բարեհաճ հյուրընկալության համար:

* * *

Հանրային մեծարանքի բեմի վերա է Ա. Ահարոնյանը, 40 տարվա գրական ծանրությունը մեջքին (1): Ազգային ինքնակոչումի չափերից միևն է անշուշտ այն վերաբերումը, որ ցույց է տալիս հասարակությունը իր աշխատանքներին: Ինքնակոչումը ինքը մի թել է, որի վերա շարված են անհատական մեծություններ: Հարգել, տոնել վաստակավոր անհատը նշանակում է ճշտել նրա տեղը այդ թելի վերա: Քառասուն տարին հուզումնալից շրջան էր, բացվեց հույսերի և հույզերի արշալույսով, բերեց ամպամած և արևի օրեր, և ընկղմվեց գիշերային խավարի մեջ: Հորելյարը այդ շրջանի երգիչն է: Ի՞նչ է նա բերում մեր ինքնագիտակցության, ի՞նչ ավանդ է թողնում հետևորդ սերունդներին:

Ա. Ահարոնյանը, ինչպես ամեն մի անհատ, ամեն մի ազգություն, ապրել է երկու կյանքով՝ իրական և երազական: Մեկը տեսանելի և շոշափելի կյանքն է՝ ինչպես որ կա, մյուսը՝ գաղափարների ու երազների աշխարհը, այն որ պետք է լինի: Նրա գրականությունը այս երկու ապրումների դաշնակումն է:

Հայ իրականությունը ծանոթ է նրան իր հայրենի տնից: Հայրը երկրա-

գործ էր, հետո արհեստավոր: Հայ շինականի հարազատ տիպար, առաքինի, հանդարտաբարո, զիջող, աշխատասեր, սիրում էր իր տունն ու ընտանիքը, խոփն ու արտը, եզն ու գոմը: Այգին դրախտանմաև էր, ծառը, ճյուղը սիրելի էր նրան զավակի նման: Երկրագործը դարձավ դարբին, պահելով նույն առաքինի հատկությունները:

Ընտանեկան կյանքի այս պատկերը խորապես դրոշմվել է մանուկ Ավետիսի հոգու մեջ: Նրան թվում էր, որ գյուղի բոլոր տները նման էին իրենց տանը, բոլոր հայրերը նման են իր հորը, բոլոր հայ գյուղերը նման էին իրենց գյուղին: Հայաստանն իրենց գյուղն է հսկայական ծավալով, իրենց դարբնոցը, իրենց այգին, տարբեր միայն մեծությամբ:

Այս անօրինակ լավատեսությունը մնում է Ահարոնյանի մեջ ցայսօր: Հայ գյուղը, գյուղականը, երկիրը այսպես իդեալականացված:

Սակայն հրաշակերտ պատկերն ուներ և ինչ-ինչ թծեր: Գյուղում դիտում էր ճակատագրական մի հլություն, խոնարհություն: Ոչ մի նշույլ բողոքի, ցասումի, ըմբոստության, ընդվզումի: Ստրկական ոգին էր տիրական: Ահա մտրակը ճոճոաց և շառաչյունով իջավ մի խեղճ գյուղացու մեջքին: Լուռ է տուժողը, մունջ ողջ գյուղը, մարդիկ դարձել են եզներ, որ քաշում են անմռունչ աշխատանքի լուծը, բախտի գծած ակոսներով: Գյուղում երկու հոգի կային, որ առնական կորով ունեին: Երկու երիտասարդ, երբ ձի հեծած, սուրը կողքից կախ, սալասմբակ երևում էին փողոցներում, բոլորիքյան հրճվում էին: Հարս ու աղջիկ դուրս էին թափվում նայելու զմայլանքով: Այր մարդիկ ժպտում էին կարծես արգիլված մի հաճույքով և միմյանց շշնջում էին, թե ինչպես նրանցից մեկը ուխտավորների կարավանը առաջնորդել էր դեպի Ս. Կարապետ և ինչպես ճանապարհին սպանել էր մի կատաղի քուրդ այնպիսի պայմաններում, որ հերոսի հռչակ էր ստացել: Այս կտրիճների պատկերը ևս տպավորիչ էր մանուկ Ավետիսի հիշողության մեջ:

Ա. Ահարոնյանի համար մի բախտ էր, որ ընկավ Ս. Էջմիածնի ճեմարանը (2): Սովորական դպրոց չէ, որ միայն գիտելիքներ է տալիս իր սաներին: Ազգային դաստիարակության հնոց է, մի գաղափարական աշխարհ ուրույն ոգով: Ճեմարանին ինքը պարտ է Ահարոնյանը (3): Այնտեղից տարավ իր հետ հայ լեզվի հիմնովին գիտությունը, այն լեզվի, որ Ահարոնյանի գրականության կեսն է: Երբ մեռած լեզուն կենդանանում է, ինչպես գրաբարը ճեմարանում, նա կենդանացնում է մեռած, սպանված գաղափարների մի աշխարհ: Ոչ մի բան այնքան ստույգ պատկեր չէ տալիս մեր պատմական թշվառության, որքան նոր գեղջուկ բարբառի համեմատությունը հոյակապ գրաբարի հետ: Բառերի մահը գաղափարների մահ է:

Քսան տարեկան էր, երբ նա թողեց ճեմարանը և եկավ իր գյուղը գաղափարական պաշարով: Տասը տարի ուսուցչություն արավ: Ստուգեց իր

մանկական տպավորությունները և օծեց նրանց նոր գաղափարների ազնվությամբ: Հասան տառապանքի օրերը: Սահմանի այն կողմեն հորդած աղետի հորձանքը ազատեց Ահարոնյանի լեզվի կապանքները: Սարսռաց տեսնելով, որ գութանի վերա մեջքը ծռաց Հայը կարոտ էր **փշուր ըմ հացի, պուտ ըմ կաթի** և որոնում էր իր գողացած եզը՝ **Քաշոն**:

Առաջին պատկերները, որ գրեց Ահարոնյանը թուրքահայ կյանքից, ցնցեցին խռոված հայությունը: Անունը հռչակվեց: Գնաց արտասահման կատարելագործելու իր տաղանդը (4): Այստեղ նա հարեց ազատագրական կուսակցության և եղավ նրա նշանավոր գաղափարախոսը:

Ազատությունը՝ կախարդական շունչ է բանաստեղծական սրտի և քնարի համար: Բանաստեղծությունը ինքը մի վեհ ազատություն է, որ ատում է ստրկությունը: Տակավին Հոմերոսը, մարդկության առաջին բանաստեղծը ասել է. ստրուկը ազատությունը կորցնելու առաջին օրից կորցնում է իր առաքինությունների կեսը: Հրապարակում եղած հասարակական հոսանքները առաջադեմ և հետադեմ անունների տակ, հետևություն էին ռուսական կուսակցության և մեր կյանքի համար մեծ արժեք չէին ներկայացնում: Այդ հատվածումները քաղաքականապես ազատ ազգերի համար են: Առաջադիմությունը, եթե նշանակում է եվրոպականացում, օգուտեն ավելի վնաս է բերում մեզ, ապաազգայնացումի կորստաբեր հետևանքներով: Քաղաքակրթական գործը հնարավոր է ազգային գետնի վերա՝ միմիայն քաղաքական անկախության պայմանով և նրա շրջանակում:

Նման խոհերի արդյունք էր Նալբանդյանի «Ազատն Աստվածը», որով նա որոշեց իր դիրքը երկու պայքարող հոսանքների հանդեպ, ձեռք քաշելով երկուսից էլ: Այդ գծի վերա էին կանգնած Արովյան և Րաֆֆի: Ա. Ահարոնյանը գալիս էր երկարելու նույն գիծը: Անպայման քաղաքակրթության կողմնակից չէ. ուզում է, որ նա ազգային լինի, իսկ ազգային կարող է լինել միայն քաղաքական ազատությամբ: Այս հասկացողությամբ է, որ նա փարեց Դաշնակցության և սպասարկեց իր գրիչը նրա գործին: Ինչ և լինեին հայի առաքինությունները, Ահարոնյանի դիտողությամբ, նրանք շարժուն վիճակի մեջ չէին, քմրած կաշկանդված էին ստրկական մտածումի շղթաներով:

Այն պետք է քակել, ներշնչելով ըմբոստության ոգին, պատրաստել այնպիսի խիզախներ, որպիսիք էին գյուղի այն երկու կտրիճները, որոնց պատկերը մնացել էր Ահարոնյանի անջինջ հոգում:

Ահարոնյանի գրիչը ներշնչված է այս քարոզին, անտարակույս, արվեստի և արվեստագետի կոչվածը հեռու է մարտական կուսակցությունների, հեռու է նաև քարոզի բեմերից: Արվեստագետ Ահարոնյանի կողմից մի զոհո-

ղությունն էր ստանձնել այդ դերը, ուր արվեստագետը դառնալու էր հրապարակախոս և պարզ, վճիտ խոսքը ստիպողաբար հագնելու էր ճարտասանության շողշողուն զրահները: Առավելությունն այն էր, որ ազատության անձնվիրության բարձր գաղափարների կոչը պահելու էր լեզուն և՛ ոճը և՛ քնարի լարվածքը համապատասխան բարձրության վերա:

Այս պայմանները ստեղծեցին Ահարոնյանի միանգամայն ինքնատիպ և միմիայն իրեն հատուկ գրականության սեռը: Նրա բովանդակությունն է պաշտամունք հայ ժողովրդի և Հայ Հայրենիքի, փառաբանության վսեմ և ազնիվ գաղափարների, ամենեն առաջ **ազատության, արդարության, ճշմարտության, անձնվիրության**: Մի գրականություն, որ պիտի մնա մեր պատանեկության սեղանի վրա ընդմիշտ, իբրև բարձր մտքերի և մաքուր զգացմունքների շնչարան, Ահարոնյանի հատորները պիտի կրթեն և ազնվացնեն սերունդները՝ պատվաստելով ասպետական ոգի, հանուն հայրենիքի բարօրության, ներշնչելով սեր դեպի հայ ժողովուրդը, Հայ Հայրենիքը և նրա հրաշակերտ բնությունը:

Ա. Ահարոնյանի երկերը պիտի մնան անթառամ, որպես հայ լեզվի և ոճի ականակիր աղբյուր: Ազատության երգչին մի բան է մնում, ապրել արևշատությամբ և տեսանել իր լավագույն երազի իրականացումը՝ ամայացած հայրենիքի վերակենդանությունը:

ԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

ԴԵԿԱԴԱՆՍ ԵՎ ՍԻՄԲՈԼԻԶՄ

Souvent dans l'être obscur habite un Dieu caché;
Et comme un œil naissant couvert par ses paupières,
Un pur Esprit s'accroit sous l'écorce des pierres!

Gerard de Nerval

Մութ գոյի մեջ համախ Աստված կա քողարկված,
Եվ ծնվող աչքերը փակվող կոպի հանգույն
Քարի կեղևի տակ Մաքուր Միտքն է ծագում:

Ժերար դե Ներվալ (1)

Նորագիտական դարի վերջին քսանամյակում հայտնված գրական-գեղարվեստական հովերը երկար վիճաբանությանց նյութ են եղել, և մինչև այժմ էլ դեռ որոշ և հաստատուն գնահատություն չեն ստացել ընդհանուր հասարակական գիտակցության մեջ, շնորհիվ այլևայլ քեր և դեմ ու հեղինակավոր կարծիքների:

Նորությունները վատաբախտ են, և ինչպես միշտ, այս անգամ ևս սկզբից շատ քչերի հավանությանն արժանացան: Տիրող գրականության խոշոր ներկայացուցիչները բարձրահայաց քամահրանքով վերաբերվեցին, իսկ ի պաշտոնե փութկոտ քննադատների լեզուն տակավին խիստ է և բշնամական: Ռուսիայում ոչ միայն Նիկ. Միխայլովսկին, այլև Վլ. Սոլովյովն ու Լ. Տոլստոյը նոր շարժման ընդդեմ խոսեցին: Նվազ աննպաստ չէին և ֆրանսիական հեղինակների կարծիքները, ինչպես ցույց տվեց Ժ. Հյուրեի հարցանքը 1891 թվին[1]: Բացի շարժման մոտիկ անձերից, մյուսները նորածին գրականությունը երևակայության ծամածուռ նազանք էին համարում, կամ պատանեկության ժամանակավոր խաղ: Հոչակավոր Ռընանի կարծիքը կարճ և հատու, լավ բնորոշում է գրական բարձր շրջանների հայացքը նորերի վրա: Հյուրեի հարցին՝ թե ի՞նչ է կարծում նորերի մասին, նշանավոր փիլիսոփան և գիտնականը պատասխանեց. **«Ce sont des enfants qui se soucent le pouce»**՝ «Երեխաներ են, որ ծծում են իրենց մատը»:

---

[1] **Jules Huret**, Enquêtes sur L'Évolution litteraire, Paris, 1891.

Այս և նման վճիռների առթիվ՝ ներելի է հիշել Ա. Ֆրանսի նուրբ նկատողությունը. «Նորերի վերա դառնությամբ խոսող հները մի կարգ ծերունիների տպավորություն են թողնում, որոնց թվում է, թե այն օրվանից, երբ իրենք թողել են երիտասարդությունը, կանայք այլևս առաջվա պես գեղեցիկ չեն. ուստի պաշտումի և մեծարանքի ամբողջ գանձը պահում են իրենց ժամանակվա մատաղ աղջիկների համար»:

Քարեբախտաբար, ո՛չ վաղաժամ ու շտապ եպերանքը, ո՛չ աչառու գովասանությունը չեն փոխում իրերի բնական ընթացքը: Նրանց ազդեցությունն աննշան է և անցուկ: Գոնե արվեստի աշխարհում երևույթը պահել է ինքն իր բախտը վճռելու թանկ արտոնությունը: Հակառակ քննադատների վստահ գուշակությանց, «դեկադենտությունը» ո՛չ միայն չի վերանում, այլ ընդհակառակը՝ զորանալով լայն ծավալ է ստանում: Գիտակ մարդիկ նույնիսկ խոստովանում են, որ ներկայումս երկու կարգ գրողներ կան՝ քանքարավոր, որ են սիմբոլիստները և անշնորհ՝ մյուսները[1]: Պետք է ենթադրել, որ միայն բախտախնդիրների քմայքը չէ ծնել այդ շարժումը, այլ անշուշտ ժամանակակից կյանքի մեջ կան պայմաններ, որոնք կարելի են դարձնում նրա բարգավաճումը: Այսպիսի պարագայում խնդիրը պահանջում է հայտնի զգուշություն և զգաստ վերաբերում:

* * *

Նոր գրական շարժման ավետավորը համարվում է Շարլ Բոդլերը: Նրա հռչակավոր «Չարի ծաղիկները»՝ **«Les Fleurs du mal»** (1857 թ.) սփոթցին գրական մթնոլորտում մի ինքնօրինակ բույր, որ հետզհետե խտացավ: Ութսունական թվականներին «ծաղիկները» վերընձյուղեցին և սկիզբ դրին նշանավոր և այնքա՜ն աղմկալի հոսանքի:

Գործի վարիչները մի խումբ երիտասարդներ էին, որոնք հավաքվելով [Փարիզի] Լատին թաղի սրճարաններից մեկում, խոսում ու վիճաբանում էին գրականության և գեղարվեստի մասին: Անհայտ, անտերունչ մարդիկ էին առանց որևէ դրական զբաղմունքի. և ինչպես վկայում են բանիմացները, մի առանձին գիտություն էլ չունեին, ու ընդհանրապես զուրկ էին գրական լուրջ պատրաստությունից: Բայց գեղարվեստի բարձր սիրո հետ ունենալով և նուրբ սիրտ, խորապես զգում էին, որ թագավորող գրական ճաշակները չեն համապատասխանում իրենց ոգուն, իրենց ներքին պահանջներին: Այդ երիտասարդների պարագլուխ է հանդիսանում Պոլ Վերլեն: Ընդհանուր դժգոհությունը ամելով՝ փոխվում է բողոքի: Չեն հապաղում երևալ և հանդեսներ, իրրև օրգան նոր հայացքների ու տրտունջի. անդրանիկն է «La

[1] **R. de Gourmont,** Le chemin de Velours, p. 207.

Nouvelle Rive Gauche» («Նոր ձախ ափը»), որ քիչ հետո 1883 թվին, սկսեց անվանվել «Lutèce»: Երիտասարդ շրջանը կամաց-կամաց մեծանում էր, գալիս էին թարմ մարդիկ, մշակվում, պարզվում էին նոր հայացքներ: Այսպիսով կազմակերպվեց մի զորեղ շարժում բազմաթիվ օրգաններով[1], որոնց ղեկավարներն էին մի շարք տաղանդավոր գրողներ Պ. Վերլեն, Ս. Մալարմե, Մորիս Բարես, Էդուարդ Ռոդ, Պոլ Մարգերիտ, Ժան Մորեաս, Շարլ Մորիս, Լորան Տայհադ և ուրիշներ:

Շարժումը հախուռն էր և դեռ պարզ չէր որոշվել նրա սկզբունքներն ու նույնիսկ էությունը, երբ մամուլի թեթևագիր քննադատները ծաղրի ու ծանակի նյութ շինեցին՝ քմծիծաղելով շարժման բացասական երևույթները: Թերթերն ավելի սրախոսությամբ էին զբաղված, քան լուրջ քննությամբ, այնպես որ նույնիսկ Բրյունետիերը, ֆրանսիական գրական ավանդների հավատարիմ պահողը, չվարանեց նրանց «հեգնությունը մի տեսակ անհասկացողություն» համարել:

Մամուլի աշխատավորներից մեկը՝ ոմն Շամսոր (Champsaur) հեգնորեն և առաջին անգամ անվանեց նոր գրողներին «decadent»[2]: Շարժման տաք ժամանակ, 1885 թվին, երկու պարոն Գաբրիել Վիկեր՝ (Gabriel Vicaire) բանաստեղծ ու Անրի Բոկլեր՝ (Henri Beauclair)՝ մամուլական, միասին հրատարակեցին Ադորե Ֆլուպետ (Adoré Floupette) կեղծ անվան տակ «Թալկացումներ» վերնագրով մի գրություն: Ոտանավորների փոքրիկ ժողովածու էր, մի սրամիտ և խիստ կծու պարոդիա նոր բանաստեղծների վերա: «Թալկացումները» («Les Deliquescences») կազմված են այնպիսի տաղանդով, որ գործին անտեղյակները կարող են իրոք իսկական բնագիր գրության տեղ ընդունել: Մեծ հաջողություն ունեցան և չնայելով կրկին հրատարակության՝ այժմ սպառված և հազվագյուտ գիրք է[3]:

Այստեղ ևս նոր դպրոցին նույն «դեկադենտ» անվանարկ կոչումն էր տված: Քննադատության վերաբերմունքը խլրտում ճգնց նորերի մեջ, որի հետևանքն եղավ պառակտում: Մի մասն անջատվեց և թշնամանող քննադատների, ինչպես կասեն, Ջիգրու, ընդունեց իր վերա «դեկադենտ» կոչը և սկսեց հրատարակել «Le décadent» անուն հանդեսը: Շուտով հետևեցին և ուրիշ նման թերթեր՝ «La Revue décadente» («Դեկադենտյան հանդես»), «La Décadence», մյուսները հիմնեցին այլ հանդեսներ: Տարածայ-

---

[1] Նշանավորներն են՝ «La Revue contemporaine» (1885), «La Revue indépendente» (1885-1899), «Revue Wagnerienne» (1885), «Le Décadent» (1886), «La Vogue» (1886), «Le Scapin» (1886) և այլն:

[2] **Anatole Baju**, L'école décadent, p. 12.

[3] **«Poetes d' Aujourd'hue (1880-1890)»**, p. 406.

նություններ ծագեցին, ընդհանուր հոսանքը բաժանվեց մանր ուխտերի, իսկ կենտրոնական ուժերը տաղանդավոր կարապետների համերաշխությամբ, շարունակեցին գործը: 1886 թ. բանաստեղծ Ժան Մորեասը առաջարկեց նետել դեկադենտ անհարիր անունը և կոչել նոր գրականությունը սիմբոլիզմ, որ իր իմաստով ավելի էր պատշաճում նոր գրական դավանանքներին[1]:

Այսպիսով, դեկադենտ անվան գրական ծագումը պատահական է՝ մի վիրավորական բառ՝ ուղղված նորերի հասցեին: Գրականության մեջ, հարկավ, չէր հաստատվի այդ կոչումը, եթե պատմականորեն իրավացի չլիներ այս կամ այն մտքով, նոր ուղղության մեջ անշուշտ կային դեկադանսի նշաններ: Դեկադանս, որ նշանակում է անկումն, հատուկ է պատմության որոշ շրջանների և նրանց իսկական անունն է, ինչպես ուսուցանում են պատմաբանները: Այդ այն շրջաններն են, երբ վարպետներին հաջորդում են հասարակ արհեստավորներ, կամ հմուտներին՝ համրակներ, ոգեշունչ ստեղծագործությանց անկենդան ընդօրինակություններ և այլն:

Թերևս ավելի ճիշտ լիներ՝ անկման գաղափարը պատմությունից վերացնել, որովհետև յուրաքանչյուր անկում միևնույն ժամանակ սկիզբ է մի նոր մեծության... Մարդու միտքը իր մշտնջենական որոնումների մեջ երբեմն հասնում է որոշակի բարձրության. տարիների ջանքն ու ճգտումները հանգում են այնպիսի ընդհանուր աշխարհահայեցողության, որ անպայման դավանանքի ուժ է ստանում և իշխանորեն վարում է ո՛չ միայն տեսական, այլ երբեմն և՛ գործնական կյանքը: Հետո գալիս է ժամանակ, երբ այդ հայացքները սկսում են խախտվել, անկարող այլևս գոհացնել մարդու: Ծնունդ է առնում նոր շրջան, նոր թափառումներ, որոնք որքան էլ մութ և մոլոր, գուցե երբեմն և ծաղրալի, իրենց հետ մաս են ածում կենսաբեր սկզբունք, ապագա խոշոր երևույթի սաղմ: Անորոշության այնպիսի մի շրջան, իր նախընթացի հետ համեմատած, թերևս անկումն է, բայց ա՛յդ չէ ապագայի հանդեպ, որի համար նա միայն երկունք է:

Անկումն սկսվում է այնտեղ, երբ մարդիկ ընդունելով հանդերձ որևէ սկզբունքի ճշմարտություն, գործով, շեղվում են նրանից: Նորագույն հոսանքների և տեսությունների հեղինակները ո՛չ թե տկարությունից, գրական շնորհքի պակասությունից խոտորեցին տիրող գրական ուղղություններից, այլ իրենց ներքին պահանջներին գոհացում տալու համար՝ Բոդլերի, Վերլենի, կամ Մալարմեի խոշոր տաղանդը, գեղասիրական ճիրքերը ամեն տարակուսից վեր են: Նրանք անկյալներ չեն, այլ հոժարակամ անջատականներ. ավելի արդար կլիներ անվանել secedent (նահանջող) և ոչ decadent:

[1] J. Moreas, Manifeste, տե՛ս «Figaro», 1886, sept.

Պատմության մեջ այսպիսի երևույթներ հազվագյուտ չեն. միշտ եղել են մարդիկ, որոնք բարոյապես անջատվելով հասարակությունից, այլ աստվածներ են պաշտել: Բայց այս անգամ նման շարժումը՝ դեկադենտությունը, այնքան աղմուկ ու շշուկ հանեց և հանում է, որովհետև ժխտումը տարածվում է շատ հեռուն՝ չխնայելով այնպիսի սկզբունքներ, որոնք բարոյական կյանքի սրբություն են համարվում և հասարակական կազմի հիմք:

* * *

Գրական շարժումները սերտ կապ ունին փիլիսոփայական մտքի վիճակի հետ: Նախընթաց դարում գերիշխող աշխարհահայեցողությունը սկզբում գերմանական բնազանցական փիլիսոփայությունն էր, հետո ֆրանսիական պոզիտիվիզմը: Առաջինը հառաջ բերեց գրականության մեջ ռոմանտիզմ, երկրորդը՝ նատուրալիզմ: Դրական աշխարհահայացքը բնական և գործնական գիտությունների վիթխարի զարգացումից թև առած՝ խարխլեց իդեալականությունը, կտրեց այն թելերը, որոնք կապում էին մարդուն «երկնքի» հետ, համոզված, որ ո՛չ միայն մարմնի, այլև հոգու իսկական բնակավայրը աշխարհն է, և որ առողջ բանականությունը գործ չունի վերհայաց բնազանցական հարցերի հետ: Սակայն կան խնդիրներ, որոնք թեև անլուծելի են, և գուցե հավիտյան գաղտնիք մնան բանականության համար, բայց որոնք գոհացում ու պատասխանում են պահանջում, որպեսզի կյանքը իմաստավորվի, խորհուրդ ու միտք ստանա: Պոզիտիվիզմը այս հարցերին տալիք պատասխան չունի և ընդհանրապես անկարելի է համարում որևէ պատասխան, որովհետև գիտությունը սահմանափակ և հարաբերական լինելով չէ կարող վճռել բացարձակ բնավորության խնդիրներ: Այսպես՝ ապավարկելով մետաֆիզիկան և ոչինչ համարելով նրա տված լուծումները, պոզիտիվիզմը բաց է անում մարդու առաջ մի վիհ, անգոհունակության խորխորատ: Բանականությունն ինքը ծնում, մեր առաջն է դնում մի շարք բարդ խնդիրներ. ինչ է կյանքը, նորա նպատակը, մահը, ընդհանրապես աշխարհն իր օրենքներով, և ինքն էլ հրաժարվում է որևէ վճիռ տալ, զգալով իր անկարողությունը: Ինքնակոծությունը, այն էլ բանականության, ամենասոսկալին և հուսահատականն է: Եթե կյանքը բանական, տրամաբանական հիմք չունի, ապա ուրեմն ինչպես արդարացնել այն բոլոր սկզբունքները, որոնք կյանքի բովանդակությունն են կազմում. բարոյականություն, առաքինություն, սեր, հավատ, պարտք, իդեալ ու մյուս նման զարդեր: Բանականության առաջ նրանք իրենց հակադրությամբ մի կարգի երևույթներ են... եթե կյանքը անխորհուրդ բան է: Այս դեպքում, երբ մետաֆիզիկան համոզկեր չէ և պոզիտիվիզմը՝ ապիկար, ասպարեզը մնում է տրամադրության, այն անգիտակցական ուժին, որ

ստիպում է մեզ գերադասել երբեմն այս, երբեմն այն նույնիսկ ներհակ երևույթներն ու դրույթները:

Ահա այս անտարբերության կամ տրամադրության ոգին է դեկադենտ մարդու և գրականության բնորոշ հատկանիշը և այն ընդհանուր հողը, որի վրա սկիզբ է առել շարժումը: Այս այն **քանն** է, որը երգում է բանաստեղծը. «Մեծ ու սև քուն, որ պատել է նրա կյանքը, մեռցրել հույսեր և իղձեր: Ուրիշ էլ ոչինչ չէ տեսնում, կորցրել է չարի ու բարու գիտակցությունը, և իբրև մի որորան ճոճվում է ստորերկրյա խոռոչում, անհայտ ձեռքով»[1]...

Չարի և բարվո գիտակցությունը կորցնելուց հետո բնական է, որ կարելի է երգել և ներբողել ոչ միայն առաքինությունն ու սերը, այլև արատն ու զեխությունը, բուրմունքն ու գարշահոտությունն, գեղեցկություն տեսնել և՛ ծաղիկների, և՛ ճեխության մեջ, հրապուրվել և՛ եղեմի, և՛ դժոխքի հարստությամբ: Ախտավոր կյանքի բոլոր կողմերը, ապականության ճողկանքը, բացասական որակության հիվանդոտ, սպանիչ հրապույրն ու սարսափը, կրքի տառապանքը, հուսահատության հեկեկանքը, աղոթքն ու նզովը՝ ահա՛ Բողլերի քնարի թելերը: Դեմոնական, դիվական տարրեր են «Չարի ծաղիկները», որոնց բույրից արբեցած՝ փառաբանում է դևին: Դևը «հրեշտակ է և այն ամենից գիտուն ու գեղեցիկը». նա «հմուտ քիմիկոս է, որ հալում ու շոգիացնում է մեր կամքի փարթամ մետաղը ու երկա՜ր օրորով քննցնում մեր հոգին չարի բարձի վրա, ու քարշում դեպի դժոխքը»: «Փառք քեզ, սատանա,- աղոթում է բանաստեղծը,- որ երկնքի բարձունքից հաղթված գահավիժեցիր դժոխքի անդունդը, ուր երազում ես լռության մեջ, հուսամ, որ մի օր հոգիս կհանգչի քեզ մոտ Գիտության ծառի տակ, այն ժամանակ, երբ նրա ճյուղերը կփռվին և հովանի կլինեն ճակատիդ, որպես մի նոր Տաճարի»[2]:

---

[1] Un grand sommeil noir
Tombe sur ma vie:
Dormez, tout espoir,
Dormez, tout envie!

Je ne vois plus rien,
Je perds la mémoire
Du mal et du bien...
O la triste histoire!

Je suis un berceau
Q'une main balance
Au creux d'un caveau:
Silence, silence!

P. Verlaine, «Sagesse» (2)

[2] Gloire et louange à toi, Satan dans les hauteurs
Du ciel, où tu regnas, et dans les profondeurs
De L' Enfer, où vaincu, tu rêves en silence!
Fais que mon âme un jour, sous l'Arbre de Science
Près de toi se repose, à l'heure où sur ton front
Comme un Temple nouveau ses rameaux s'épandront!

«Les fleurs du mal» (3)

Այս «աղոթքը» լքված հոգու հուսահատ աղաղակ է, ուժգին բողոք ընդդեմ մարդկային ազատությունը կաշկանդող ու խեղդող «աստվածային» դարավոր կապերի՝ ներքին թե արտաքին աշխարհում: «Դողդոջուն մարմնիս մեջ ո՛չ մի ոյարդ չկա,- հնչում է երգչի անհույս ձայնը, որ չաղաղակեր,- օ՜, Քեղվերուղ, քեզ պաշտում եմ»: Կա արտումջ, որ մնում է բանականության, մտածողության շրջանում, այսինքն՝ վարակում է միայն մարդու միտքը: Եվ կա՛ արտումջ, որ սաստկանալով մտքից անցնում է զգացողության աշխարհը, ողողում է ողջ էությունը. այս դեպքում ապահով չէ վտանգից իրականության համակերպ մտածելու կարողությունը՝ տրամաբանությունը: Ժամանակակից դեկադենտությունը անգոհունակության այս տեսակիցն է, որով և բացատրվում են այն անհնորմալ երևույթները դեկադենտների թե՛ մասնավոր և թե՛ հասարակական կյանքից, որոնց հիմամբ մարդիկ աշխատում են ամբողջ շարժման ախտաբանական բնավորություն տալ:

Ներքին աշխարհի անհաղթությունը կամ դատարկությունը և ուղի է, որ տանում է շիտակ դեպի կորուստ և միևնույն ժամանակ մի զորեղ խթան՝ հոգու համար նոր բովանդակություն գտնելու: Գրականության մեջ սիմբոլիզմը դեկադանսից ելնելու փորձ է: Այս երկու տարբեր գաղափարները հաճախ շփոթում են միմյանց հետ և բյուրիմացությամբ գործ են ածում մեկը մյուսի տեղ: Դեկադենտությունը բացարձակ ժխտական շարժում է, առանց որևէ որոշ դիմագծի և ո՛չ միայն գրական, այլ ընդհանուր հասարակական-սոցիալական երևույթ է: Նիցշեն, իբրև բարոյագետ, կամ Հարտման, իբրև փիլիսոփա, նույն տիպարի մարդիկ են, որպիսի Բոդլեր և Վերլենը գրականներ: Եթե դեկադենտությունն անվանենք մի հրոսակություն, որ միայն ավերումների է ընդունակ և ձեռնամուխ, սիմբոլիզմը ավերումների վերա նոր շենք կանգնելու ձգտումն է: Եթե առաջինը մի աղջամուղջ է, կամ ինչպես հավատացնում են անկման վերջալույսի մթություն, երկրորդը՝ անտարակույս արշալուսային շառագում է:

* * *

Պոզիտիվիզմի վարկը ցնցմանալուց հետո, բնականորեն պիտի հառներ և ուժ ստանար նրա ոսոխ աշխարհահայեցողությունը՝ իդեալիզմը:

Այս փիլիսոփայությունն արտաքին աշխարհը համարում է մի անծև նյութ, որ ձև ու կյանք է ստանում մեր ուղեղում: Տեսանելի անհուն աշխարհը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր մտապատկերը: Այնպես, ինչպես մեզ երևում է, և այն չափով, որ չափով մեզ իմանալի և մատչելի է մեր իմացական կարողության, մեր հոգու սոսկ ստեղծագործությունն է: Առարկան որոշ հատկությանց գումար է. հատկությունները՝ որպես քանակ՝ մեծություն կամ փոքրություն,

որակ՝ կարծրություն, փափկություն, ջերմություն, գույն, ծայն և այլն, ո՛չ թե անկախ գոյացություններ են կամ իրերի սեփականություն, ինչպես թվում են, այլ մեր գիտակցության ստորոգելիք են և մեր մտքից դուրս՝ գոյություն չունին բնության մեջ: Եթե գոյություն էլ ունեն, համենայն դեպս մենք գաղափար չունենք այդ ինքնափակ գոյության մասին, կամ, խոսած փիլիսոփայական լեզվով՝ «իրն ինքնին», «իրն ինքյան» մեզ համար անիմանալի է: Այսպես՝ գիտաբանական տեսակետից ամեն մի գոյացություն երկու կողմ ունի՝ իմանալի և անիմանալի և ըստ այսմ տիեզերքի մեջ որոշելու ֆենոմեններ, կամ երևույթների աշխարհ և նոումեն, կամ իրնինքնություն:

Այս փիլիսոփայական հայեցողությունն է ահա՛, որ խմորել է նորագույն սիմբոլիստական գեղարանական տեսությունները: Քանի որ աշխարհը մեզ հայտնի է իր ֆենոմեններով, որ լոկ մեր գիտակցության արտաքին արտահայտությունն է, ուրեմն նկարագրում ենք այդ աշխարհը, մենք իսկապես մեզ ենք նկարում: Մեր մեջ են, ասել է թե այն էակները, որոնց ձեռք ենք կարկառում, այն իրերը, որոնք ցրված են մեր շուրջը: Մեր մեջ է ծաղկի անուշահոտությունը, առվի կարկաչյունը, վաղորդյան հովի թարմությունը: Այն բոլոր բավիղներն ու անորոշ ուղիները, ուր թափառում է մեր բախտը, տանում է ի վերջո դեպի մեր հոգին... Այսպիսով աշխարհը, իրոք, մի խառնուսիկ երազ է, մի սքանչելի իլյուզիա, մի հայելի, որ միայն մեր պատկերն է ցույց տալիս, մեր լացն ու ժպիտը, վիշտն ու բերկրությունը[1]:

Մեր ժամանակները՝ գաղափարներն ու հայացքները այնքա՜ն շփոթել, խառնակվել են, որ շիտակն ու սուտը, բարին ու չարը միմյանցից որոշելու չափն ու ուղեցույցները՝ իրենք դեռևս քննության կարոտ են: Քննականաբար ամեն մի փորձ, որ հավակնում է նորության՝ մանավանդ արվեստի բարդ և նուրբ աշխարհում, հիմնավոր գործ լինելու համար պետք է շատ հեռվից սկսե և ելակետ ունենա իմացաբանական տեսություններ: Այս դեպքում միստիկականություն որոշ չափով անխուսափելի է, որ իր ամբողջ վսեմությամբ, դժբախտաբար իրականության հարվածների հանդեպ լոկ անզոր քող լինելու է դատապարտված: Սիմբոլիստական տեսությունը համակված է ժամանակակից փիլիսոփայական աշխարհահայեցողությամբ՝ որի հիմքը Շոպենհաուերի իմացաբանությունն է: Այս տեսության բանաստեղծական լուսաբանությունն է Անդրե Ժիդի փոքրիկ պատկերը «Նարկիսի պատմությունը»[2], որ կլասիկ համանում միֆի մշակումն է, և սիմբոլիզմի թեորիան:

---

[1] cf. René Doumic, Les jeuns, p. 189.

[2] André Gide, Le traité du Narcisse (théorie du symbole), Paris, 1899.

* * *

Նարկիսը հույն պատանի էր, չնաշխարհիկ գեղեցկությամբ: Ողջախոհ և զգաստ՝ նա խորշում էր գեղանի հավերժահարսներից, որովհետև ինքն իր վերա էր սիրահարված: Ամբողջ ժամանակ նստած ջրի ափին, դիտում էր նրա մեջ իր չքնաղ պատկերը և հիանում:

Նարկիսը մենակ էր քնության մեջ՝ չկար ո՛չ թուփ, ո՛չ ծառ, ո՛չ խրոխտ լեռներ, ո՛չ անուշ ծաղիկներ, մենավոր պատանին սուզված էր անուրջների ծովում: Ժամերը սահում էին միօրինակ. տաղտուկը պաշարում է նրան, ուզում է իմանալ վերջապես՝ «ի՞նչ ճև ունի իր հոգին», և զգում է, որ դողդոջուն ելևէջների նայած՝ նա պիտի լինի անչափ պաշտելի: Պատանին անտարակույս է, որ իր հոգու պատկերը կա մի տեղ, վեր է կենում ու գնում որոնելու ըղձալի բոլորշիներ (contours) իր մեծ հոգին ծրարելու համար: Նա կանգ է առնում ժամանակի գետի հովտում՝ գետ օրհասական և երևութիկ, ուր սրընթաց գլորվում էին տարիները: Ափերն անպատույր էին, ջուրը գորշ և շրջակայից նրանով էր զանազանվում, որ հոսում էր: Հեռվից Նարկիսը գետը ճանապարհ կարծեց և որովհետև ճանճրանում էր մենակ այս համակ գորշության մեջ, մոտեցավ անցորդներին մտիկ տալու: Հենց որ նայեց գետին, ջուրն իսկույն երագնավորվեց վտիտ, նուրբ պատկերներով: Ափերի կանաչ ծաղիկները, հաստաբուն ծառերը, կապուտակ երկինքը, մի ամբողջ շար պատկերներ կարծես նրան էին սպասում, որ կյանք ստանան. և իսկույն գունավորվեցին նրա հայացքի տակ: Բացվեցան նմանապես բլուրները, սարավանդների անտառները, և ճոճվում էին հոսանուտ ջրի մեջ:

Նարկիս հրաշացած նայում էր, բայց չէր կարողանում պարզել, արդյո՞ք իր հոգին էր, որ վանում էր ալիքները, թե ընդհակառակը. երկուսն էլ հավասարապես երերուն էին:

Այնտեղ, ուր հառած էին Նարկիսի աչերը, Ներկան էր, քիչ հեռու, որտեղ թաքստի ուժեր կյանքի էին կոչում՝ Ապագան: Նարկիսը դիտում էր. նրանք մոտենում էին, հետո կորչում, կրկին մոտենում, կրկին անհետանում: Ի՞նչ էր կրկնության պատճառը, մտածում էր նա, անշուշտ անկատարելությունը, որ ստիպում է նրանց ճգտել ու միշտ ճգտել անընկուճ եռանդով մի բանի... իրենց նախկին՝ կորցրած ճևին, եդեմական և բյուրեղավոր կաղապարին:

Նարկիսը երազում էր դրախտի մասին:

Դրախտը մեծ չէր, ամեն բան այնտեղ կատարյալ էր և ծաղկում էր միայն մի անգամ, ամեն ինչ իր որոշյալ ճևն ու կերպն ուներ, որ երբեք չէր փոխվում և չէր շարժվում, որովհետև իրենց կատարելությամբ՝ առավել բարվոքելու խղճ չունեին: Եդեմը իդեաների կուսական պարտեզ էր, ուր ամեն իր այն էր՝

ինչ որ երևում էր, երգանույշ սյուքը ոլորվում էր սահմանված գալարներով, երկինքը ծավալում էր լուրթը մարգագետինների վերա հավասարորեն, հարաբերությունները ներդաշնակ էին և պարտեզի վերա հածում էր միօրինակ համերգություն:

Դրախտի կենտրոնում կանգնած էր Իգդրասիլ՝ կյանքի ծառը, կենսաբուխ արմատները թաղված էին գետնի տակ, իսկ շրջանակի դալարի վերա թանձր ստվեր էր շաղում սաղարթներից, ուր լողում էր թևատարած մենավոր գիշերը: Խավարի մեջ ծառի բնին հենված էր Խորհրդավորության Միստերի գիրքը, որ պարունակում էր իր մեջ իմանալի ճշմարտություն: Սուլիչ քամին գուրգուրում էր ծառի տերևները, բաց էր անում գրքի թերթերը և աշխատում էր մեհենագրերը մեկնել:

Ադամը դեռևս անկողակից, դրախտի միակ բնակիչն էր, որ մեծ ծառի ստվերում բազմած դիտում էր: Այն սքանչելի տեսարանները նրա համար էին, նա էր կենտրոն այն բոլոր դյութական պատկերների: Բայց և այնպես դիտողությունը նրան տաղտկալի է, քանի որ ինքն այնտեղ գործուն դեր չունի: Իրավ է, ինքը հզոր է, որովհետև ստեղծող ուժ է և ողջ աշխարհը կախված է նրանից, բայց ի՞նչ օգուտ, երբ փորձով կամ գործնականորեն համոզված չէ այդ զորության: Երկար նայելուց՝ արդեն կորցրել է իրերը միմյանցից զատելու ընդունակությունը: Կատարյալ տարկություն է, եթե մարդը չի կարող խիզախել ամենաթեթև շարժման, առանց ընդհանուր հարմոնիան խանգարելու: Վերջապես այդ ներդաշնակությունն իսկ գրգռում է նրան, ուզում է ազատ լինել, ինքնաբուխ շարժումներ գործել, եթե դրանով մինչև անգամ տարնվագ առաջ բերեր: Մեկնում է ձեռքը համարձակ, բռնում Իգդրասիլի ճյուղը և կոտրում...

Վիրավոր ծառը սկսում է թառամել, դեղնում է և ընկնում ճարճատյունով: Տերևները՝ ուր զեփյուռն էր խաղում, ահռելի փոթորիկների գերի՝ հալածվում են հեռու, հեռու, դեպի գիշերային անծանոթ երկինք ու վտանգալից վայրեր, որտեղ վտարվում են նույնպես մեծ Սրբազան գրքի ցիրուցան թերթերը:

Չքանում է եդեմն իր բոլոր հրապույրներով:

Մարդը սարսափահար սփոփանք է գտնում սիրո մեջ... Նրա սերունդը աճում և ցրվում է այս «մթնշաղի և աղոթքների երկրում» և անձուկով երազում է կորսված դրախտը, որտնում ամենուրեք:

Նրա մխիթարության համար՝ ծնվում են մարգարեներ և բանաստեղծներ, որոնք հիշելով դրախտը, սրբությամբ ժողովում են Միստերի գրքի պատռտած թերթերը, ուր գտնվում են ըմբռնելի ճշմարտություններ: Ո՞վ է բանաստեղծը. նա՛, որի հոգևոր աչքերը խորասույզ հայեցողությամբ ընդունակ են տեսնել եդեմը: Եդեմն ամեն տեղ է և մեզ հետ, թաքնված իրերի արտաքին պատկերի, երևութիկ կերպարանքի ներքո: Ինչպես ամեն աղ

կրում է իր բյուրեղի նախատիպը, այնպես էլ յուրաքանչյուր իր ունի յուր գաղտնի, անձյուր կորիզն, որը նրա էության ներքին հարմոնիան է: Արտաքին տեսքը իր թերությամբ չի արտահայտում ներքին ճշմարտությունը՝ նա միայն թոթովանք է իր մեջ ղողուն, ծածկված իսկություններին:

Սովորական աչքը կանգ է առնում իրերի կեղևի վրա, իսկ բանաստեղծականը ներս է թափանցում, իջնում է իրերի խորունկը, ըմբռնում է իդեան, էությունը և հետո մեկուսացնելով նրան արտաքին անցավոր ձևից, աշխատում է տալ հավիտենական կերպարանք, որ և իր եղեմական և բյուրեղյա ձևն է:

Այսպիսով, արվեստի երկը մի բյուրեղ է, մի մասնավոր դրախտ, ուր իդեան վերածաղկում է իր վերին անարատության, ուր՝ ինչպես կորուսյալ եդեմում, թագավորում է բնական և անհրաժեշտ կարգ, որը բոլոր ձևերի մեջ փոխադարձ և ներդաշնակ կախում է հաստատում: Խոսքի պերճությունը այնտեղ չի վարագուրում միտքը, դաշնակավոր, և վեհ խոսքերն ու նախադասությունները միմիայն հստակ և թափանցիկ նշաններ են, որոնց մեջ ճշմարվում են անաղարտ իդեաներ:

Առարկաների արտաքին ձևը, նրանց երևում կերպարանքը՝ լոկ սիմբոլներ են, այսինքն՝ նշանակներ, որոնց ետևը թաքնված, հաստատված է ճշմարիտ էությունը: «Tout phénoméne est le symbole d'une vérite»՝ «Յուրաքանչյուր երևույթ մի ճշմարտության նշանակ է» (**թարգմանությունը՝ հեղինակի- Պ. Հ.**): Նրա կոչումն է թարգման լինել ճշմարտության և մեղանչում է, երբ իրեն նախամեծար համարելով, փոխարինում է ճշմարտության: Այն, որ լոկ հայտարար, մուենետիկ է իդեայի, ձգտում է գերադաս լինել, քան իդեան, որն երևակում է. «**Tout représentant de l'idée tend á se préférer á l'idée qu'il manifeste. Se préférer - voila la faute**» («Գաղափարի ցանկացած ներկայացուցիչ հակում ունի իր արտահայտած գաղափարից ինքն իրեն գերադասելու: Ինքն իրեն գերադասելը՝ ահա սխալը»):

Մարդիկ շփոթմամբ թե մոլորությամբ նշանակները էության տեղ են ընդունում և կյանքի նպատակ շինում, որտեղից ծագում է հուսախաբություն և հիասթափություն: Նրանք նման են Նարկիսին, որը պիշ-պիշ նայելով ջրի մեջ հրաշանում է իր պատկերից. մենավոր և մանկամիտ պատանին սիրաբորբոք սիրտը զովացնելու համար, խոնարհում է գետակի վերա՝ փաղաքշանքով, համբույրը շրթունքին: Բայց խոնարհած ատենը՝ հանկարծ չքանում է հրապույրը. շրթունքների դեմ նա տեսնում է իր շրթունքները, աչքերի դեմ՝ իր աչքերը, հասկանում է, որ ինքն է, իր պատկերը՝ իր հանդեպ կանգնած, ինքը մենակ է, ինքը սիրահարված է ի՛ր պատկերի վերա: Վեր է կենում, ետ է կանգնում ջրից. ջրի մակարդակը նորից երանգավորվում է և

տեսիլը ոտքից ներկայանում: Նարկիսը գգում է, համբույրն անկարելի է, պետք չէ ցանկալ պատկերի. շարժվել՝ նրան տիրանալու համար, նշանակում է անէացնել նրան: Նարկիսը մենակ է՝ ի՞նչ անել:

- Մտահայել, խորին էությանը վերահասու լինելու համար[1]:

* * *

Անդրէ Ժիդի այս տեսությունը անշուշտ փոխ է առնուած հռչակավոր բանաստեղծ-երաժիշտ Ռ. Վագներից, որն է իսկապես սիմբոլիստական տեսության և արվեստի հրաշակերտ վարպետը: Թեթհովենին նվիրած գրության մեջ նա արծարծում է սույն միտքը: Աստվածային մոգը խուլ է, եղկելի, արհամարհված և լի վշտով: Երկար խորհելով նա թափանցում է իրերը և նրանց արտաքին տեսքի տակ տեսնում է էությունը: Այս տեսիլը անհուն բերկրության աղբյուր է դառնում նրա համար՝ «իրերի էությունը մերկանում է նրան, հայտ գալով իր գեղեցկության լուսապայծառ փայլով»:

Վագների հայացքով **էությունը** մարդու «ես»-ն է, նրա անահատական կամքն ու հոգին, որ ստեղծում է երևութական աշխարհը: Առանց նրան իրականություն չկա, ինքն է, որ իր հավերժական ստեղծագործ զորությամբ՝ ծնում է իրեր, կերպավորելով իր էությունը դրսի ոչնչության մեջ՝ անվերջ և անհամար պատկերներով:

Առօրյա կյանքի շշուկից քաշված, երբ մարդ խորհում է սուզված մտքի անհունության մեջ, լուծում է մի մեծ առեղծված՝ քանի որ ինքն է արտաքին աշխարհի պատճառը, ուրեմն ինքը կարող է և հրաժարիլ այդ աշխարհից և իր խղճանքից կերտել մի նոր՝ արվեստի և գեղեցկության անդորր աշխարհ, հրաշազարդուած ազատ ու անհոդեղեն անուրջներից: Աշխարհային կյանքը՝ նույնիսկ իր լավագույն արտահայտությամբ, մեր պահանջներին գոհացում տալու տակր է: Հիասթափությունը լոկ զգացված հիացումն է՝ և ընդհակառակը՝ հափշտակությունը դեռևս չճաշակված հափրանք: Ո՞րն է այն կենսավետ զորությունը, որ հուսախաբության սև օրերին պահում է մարդուս անկումից՝ սուրբ անուրջներն են, որ զերծ երկրային ոտնձգությունից՝ իրրև անկապտելի ուժ կազդուրում է կյանքի ու ապագայի հավատով: Նրանք թարմացնում են մեր բարոյական կյանքն այնպես, ինչպես քունը՝ նյութական:

Մեր երազները հոգու տենչանք են, որ ձգտում են մարմնանալ, նյութապես կերպավորվել կյանքում և, տեղի ու ժամանակի պայմանների համաձայն, նրանք արտահայտվում են այս կամ այն եղանակով:

---

[1] «Il ne faut pas désirer une image; un deste pour la posséder la déchire. Il est seul. Que faire? Contempler». Ibid., p. 89 (4).

Պայմանները որոշ անհրաժեշտ օրենքների են ենթարկված, և շատ անգամ մարդս անզոր է խորշել նրանց անտեղությունից: Քայց կարելի է երևակայության թևերով հաստատել առընթեր տեսանելի աշխարհին մի այլ անտես, բայց զգալի աշխարհ՝ երազական՝ ուր գաղափարը, իդեաները մարմին կստանան անկախ աշխարհի բռնաբարող պայմաններից, և միմիայն այնպես՝ որպես կթելադրե իրենց էությունն ու մարդու ցանկությունը:

Մյուս կողմից, թեև տեսանելի աշխարհն էլ մեր ստեղծագործությունն է, նա էլ մեր հոգու ինչքն է, սակայն սովորությունը սպանում է այդ գիտակցությունը. և մեր հաղթական Ես-ը խոնարհում է իր ծնած երևույթների առաջ, մոռանալով նոցա իսկական ծագումը: Այս հանգամանքը զրկում է մարդուն մի մեծ բերկրությունից, որ է ստեղծելու գիտակցության վսեմ և խոր վայելքը: Արդ՝ քանի որ մեր ստեղծած աշխարհը կորցրել է մեզ համար իր նախնական բնավորությունը, պետք է այս անհավատարիմ և խաբուսիկ աշխարհից դուրս և նրանից վերև մի այլ աշխարհ հաստատել՝ Արվեստի աշխարհ՝ Au-dessus de l'univers présent, batir un nouvel univers («Ներկա տիեզերքի վերևում մի նոր տիեզերք ստեղծել»)[1]:

Այս հայեցողությունն առաջին անգամից տարօրինակ է թվում, բայց մի՞թե նույն կերպ չէ վարվում իրականության հետ և գիտությունը: Գիտության մեջ աշխարհն այն պատկերն ու կազմությունը չունի, ինչ որ տալիս է իրականությունը, մեր անմիջական զգացողությունը: Գիտական մտքի հիմքը պատճառականության օրենքն է, մի սկզբունք, որ միտքը բնությունից չէ վերցնում, այլ իր սեփական ձևն է. այդ օրենքով՝ գիտությունը չի ընդունում երևույթների հաջորդականությունը, կամ փոխադարձ կարգն ու հարաբերությունները այնպես, ինչպես բնության մեջ հանդիսանում են մեր զգացողության. միտքը վեր է լուծում երևույթները, նոր դասավորություն է մուծանում նրանց մեջ, որով վերստեղծում է մի նոր աշխարհ: Այս իմաստով՝ գիտությունը արվեստին հար և նման գործ է կատարում: Զանազանությունն այն է, որ գիտությունը զննում է երևույթներն իրենց հաջորդականությամբ, հետաքրքրվում և զբաղվում է նրանց՝ միմյանց հետևող վայրկյանների կապով, այնինչ արվեստը գործ ունի գլխավորապես վայրկյանների հետ, և վայրկյաններ է ուզում արտահայտել ու հավերժացնել[2]:

Ինչպես և կատարն արվեստն իր խնդիրը, համենայն դեպս նրա ստեղծած աշխարհը պետք է ավելի բարձր կյանք ունենա, քան իրականը: Եթե նա պիտի լինի լոկ կույր ընդօրինակություն տեսանելի աշխարհի, այն

[1] **Teodor de Wyzewe**, Nos Maîtres, p. 5.

[2] cf. «Le savant recherche l'archétyre des choses et les lois de leur succession; il recompose un monde enfin, idealement simple, où tout s'ordanne normalement». Le traité du Narcisse, p. 86 (5).

ժամանակ անհրաժեշտ է նրա ջանքը, որովհետև նախ՝ հենց այդ աշխարհից խուսափելու համար է, որ դիմում ենք արվեստին, երկրորդ՝ իրականությունը մեր առջև փոված է իր ամբողջ շքով, տեսնում ենք, շոշափում, զգում, ի՞նչ կարիք և իմաստ կա նրան վերարտադրել արվեստի միջոցով: «Քանի որ ծաղիկը գոյություն ունի,- ասում է Շարլ Մորիսը, - ի՞նչ օգուտ ջանալ խոսքերի միջոցով վերստեղծել նրա նման ուրիշը. այդ նշանակում է, ճանապարհի մի ափից խիճ հավաքել և մյուս ափն ածել, ուրայն վաստակ»[1]: Արվեստի կոչումն ավելի վսեմ է: Նրա հիմն է ստեղծագործությունը: Ստեղծել՝ նշանակում է բերել այնպիսի բան, որ բնությունն ինքնին չի տալիս: Բնության մեջ սքողված են իրերի և երևույթների ներքին հարաբերություններ, և ոչ իրենք առարկաները: Արվեստն այն աչքն է, որով տեսնում ենք այդ աննյութ կապերը: «Գրականությունը մինչև այժմ տղայամտությամբ կարծում էր,- երգիծաբանում է Ս. Մալարմե,- որ որոշ թվով բանկագին քարեր ընտրել և նրանց անունը գրի առնել, ասել է թե բանկագին քար չինել»: «Ո՛չ թե իրերը պետք է ստեղծենք,- շարունակում է նույն հեղինակը, - այլ լոկ իրերի հարաբերությունը ըմբռնենք. այս հարաբերությանց թելերն են, որ հյուսում են բանաստեղծություն ու երաժշտությունը»[2]:

Դպրոցի փիլիսոփայական հայացքների համաձայն՝ հարաբերությունները ուրիշ բան չեն, եթե ոչ մեր հոգու դրություններ: Հետևաբար՝ ըմբռնել իրերի հարաբերությունները, նշանակում է դրոշմել հոգեկան կյանքի այլևայլ վիճակներ, նրա վայրկյանները: Հոգին հարուստ է ներքին կյանքով, եթե արվեստի կոչումն է ներկայացնել նրա դրությունները, ապա ուրեմն այնչափ ավելի բարձր են և կատարյալ պիտի նկատվի, որչափ ավելի բարդ հոգեկան ելևէջների թարգման լինի:

Մարդու ներքին աշխարհն իր գործունեության մեջ երեք զորեղ մոմենտ ունի զգալ, խորհել և հուզվել: Զգացողությամբ ընդունում ենք արտաքին աշխարհից տպավորություններ. մտածական կարողությունը տնտղում է այդ հոգեկան մթերքը, դասդասում, նոր խմբակցությունների է վերածում և մշակում է ընդհանուր գաղափարներ: Զգացումների և գաղափարների նուրբ, մեծ մասամբ անհասկանալի խառնուրդը առաջ է բերում այն հոգեկան վիճակը, որ կոչվում է հուզում: Արվեստը պետք է աշխատե հանել հոգուց այդ երեք հուժկու հորձանքները և հավերժացնել գույների, գծերի, բառերի և հնչյունների միջոցով: Հույզերը հոգու ամենից փափուկ ու նուրբ տարրերն են, թեև զորավոր են և ցնցող, բայց կարծես անորոշ և դժվար արտահայտելի: Բանաստեղծներն իրավամբ սրբազան դող են անվանում հուզումը, որ հոգեկան կյանքի վսեմ և երանավետ րոպեն է: Երաժշտությունը

[1] J. Huret, Enquêtes, p. 85.

[2] Ibid., pp. 63, 64.

առավելապես այդ հոգեկան դրությունն է արտահայտում, ուստի ևս ամենաանուրջ արվեստն է:

Նոր գեղարվեստական տեսությամբ՝ բանաստեղծությունը մինչև այժմ աշխատել է նմանել նկարչության և նորա հետևությամբ՝ նկարել բառերի օգնությամբ բնությունը, վերստեղծել պատկերներ. հիմիկ նկարչության հետ միասին պետք է ձգտե մոտենալ երաժշտության, և նպատակ ունենալ նույնպես հույզեր առաջ բերել: Այսուհետև բանաստեղծությունը բառերի երաժշտությունն է, ինչպես և նկարչությունը՝ գույների և գծերի:

Բանաստեղծության էվոլյուցիայի՝ հետզհետեական զարգացման մեջ մի հետաքրքրական երևույթ է նկատվում: Տասնյոթերորդ դարում գրականությունը այսպես ասած, ճարտարապետական բնավորություն ուներ: Հեղինակներն առաջնորդվում էին այնպիսի սկզբունքներով, որ կարծես շենք են կառուցանում, այսպես ուշադիր էին նյութի հմուտ բաշխման, մասերի համաչափության ու ներդաշնակության, ամբողջ երկի հիմնագծին: Քննադատներն էլ որոնում և պահանջում էին, որ աշխատությունը կամ նախադասությունը լավ **հորինված** լինի, հաջող **ծրագիր** ունենա, հարկավոր էին համարում **նախադասը** և այլն:

Հետևյալ տասնութերորդ դարում՝ գրական աշխատությունը չէր նկատվում այլևս իբրև շենք, այլ՝ նկար: Գովում էին, որովհետև երկը **գունեղ** (coloris) է, և վատաբանում էին պատկերի **չորությունը**, ցամաքությունը և հրճվում նկարի ոճով, գեղանկար դարձվածքով և այլն[1]:

Իսկ մեր ժամանակներում այն միտքն է արծարծվում, որ գրականությունը պիտի հարե երաժշտության: Անգլիացի Կարլայլը բանաստեղծությունն անվանում է երաժշտական միտք, կամ մտքի երաժշտություն: Ամեն մի բառ, խոսք, որովհետև հնչյուն է, ուստի և որոշ մտքով երաժշտություն: Ռոմանտիկ և պառնասական գրականները արտաքին չափն ու ձևը, ոճի հղկումը, բառերի ընտրությունը հասցրել էին այնպիսի կատարելության, որ հիրավի նրանց երկերը երաժշտության էին նմանում: Սակայն սիմբոլիստների հասկացողությամբ, բանաստեղծությունը ո՛չ թե արտաքին հատկություններով պետք է երաժշտության հետ մրցե, այլ ներքին՝ երաժշտական զգացողություն՝ հույզեր հարուցանելով:

Հույզը մի զգացություն է, որ չի ենթարկվում վերլուծության և ո՛չ իսկ վերծանության, մի բարդություն է, որ չի կարելի տարկազմել, քակել ու նկարագրել: Սպինոզան կարծում էր, որ մի բան որոշել նշանակում է ժխտել[2]: Հույզերի վերաբերմամբ ճիշտ է, որ նկարագրությունը հոմանիշ է

---

[1] F. Brunetière, «Revue des deux Mondes», 1888, novembre.

[2] «Omnis determinatio est negatio».

ոչնչացման: «Անվանել հույզը,- ասում է Ս. Մալարմե,- նշանակում է չիք դարձնել քաղցրությունը, անուշության գոնե երեք քառորդը հապավել»: Երաժշտությունը հենց նրանով է բարձր մյուս արվեստներից, որ իրն իր անունով չէ կոչում և միմիայն հնչյունների անմեկին վետերով, անորոշ բարդվածներով է առաջ բերում սրբազան երեր, առանց ուղղակի շեշտելու նրա էությունը: Նվագը հիշեցնում է ինչ-ինչ զգացված հույզեր ու մտքեր, արթնացնում է նրանց՝ մեր սրտում քողած հետքերը, որ ամեն մարդու մեջ կենդանանում և յուրովի պատկեր է ստանում, համաձայն անհատի սրտի փորձառության և զգացական ունակության: Ճիշտ այսպես է վարելու և բանաստեղծությունը: Նրա հիմը պիտի լինի suggestion (առաջարկ)՝ թելադրություն, շշունջ: Այս համգամանքը շեշտում է մանավանդ Ս. Մալարմե. «Սիմբոլիստ, դեկադենտ, կամ միստիկ՝ ինչպես կուզեք անվանեցեք, դպրոցները իդեալական ելակետից ժխտում են նյութը. ուստի և նրան պարզ անվանել՝ համարում են կոպտություն. հարկավոր է միայն թելադրել, ներշնչել»[1]: Բանաստեղծը աշխատելու է ոչ այնքան ասել, որքան թելադրել և ընթերցողը՝ ավելի գուշակել, քան հասկանալ[2]:

Նկարագրական դպրոցի բանաստեղծությունը ներկայանում է ընթերցողին իբրև ավարտած, պատրաստ նկար, և նա ստիպված է ընդունել այնպես, ինչպես տրվում է: Նոր դպրոցի բանաստեղծը առաջարկում է ո՛չ այնքան իրեն ասելիքի նկարը, որքան թեթև արուճանակը (esquisse) և ընթերցողին թողնում է որոշ ազատություն ըմբռնել իր կարողության և հակումների համաձայն՝ այսպես թե այնպես:

Այլապես ասած՝ նկարագրությունն ու պարզախոսությունը տեղի են տալիս ակնարկների:

Մանրակրկիտ պատկերներն իրենց որոշականությամբ բռնադատում են ընթերցողի միտքը, կաշկանդում երևակայությունը: Միտքը խոնարհում է նրանց որպես մի անխուսափ անհրաժեշտության, ստիպողականության առաջ: Մինչդեռ անգայտ, անոսր մթությամբ սքողված արտահայտությունները չեն ծանրանում մեզ վերա: Ընթերցողն ազատ է, երգիչը նրան չի հրամայում, այլ միայն շշնջում է ականջին, թելադրում որոշ հույզեր, նա էլ աշխատում է ակնարկներից գուշակել թելադրության էությունը, երգի իմաստը:

---

[1] «Symboliste, Decadente ou Mystique les écoles se déclarant ou étiquetées en hâte par notre presse d'information, adoptent le point d'un idéalisme, qui refuse lesmatériaux naturels et, comme brutale, une pensée directe les ordonant, pour ne garder de rien que la suggestion».

[2] H. de Regnier, Figures et caractères, p. 332.

Այս պարագան ծնում է մի խորհրդավորություն, երևակայությունն ու սիրտը պարուրում է մի տեսակ լուսացնիկ մթությամբ՝ առանց նրանց ճկունությունը ճնշելու: Երգչի շնջոցն խոսքերը հոսանուտ և մեղմասյուք հորձերով օրորվում են սրտի անհունության մեջ, ինչպես նրբահնչյուն նվագներ, որ կամաց-կամաց չքանում, կորչում են հեռաստանում: «Եթե առաջ բանաստեղծությունը երգում էր, այժմ հմայորեն նվագում է, առաջ ձայնական էր, այժմ երաժշտական է: Ահա՛ այս փափագը՝ ավելի թելադրական, քան վճռական ու հատու լինել, կազմում է նորագույն բանաստեղծության խոշոր գյուտը և գլխավոր շնորհիքը»[1]: Այս սկզբունքն է միևնույն ժամանակ այն դուռը, որ տանում է դեպի սիմբոլների խորհրդավոր ու մթագին աշխարհը:

* * *

Սիմբոլ բառը զանազան կիրառություն ունի. իսկական նշանակության հասու լինելու համար, պետք է հիշել մի բան:

Հոգեկան և նյութական երևույթները՝ իրենց փոխադարձ հարաբերությունների մեջ, հակառակ մտքի դարավոր ջանքերին, տակավին գաղտնիք են մնում: Որ նրանք բնությամբ բնավին տարբեր էություններ են՝ անժխտելի է. անուրանալի է նաև, որ նոցա մեջ ներքին սերտ կապ կա, մեկը պայմանավորված է մյուսով: Բայց թե ի՞նչ է այդ կապի իսկական բնավորությունը և կամ ինչպե՞ս կարող է միտքը նյութի հետ շաղկապվել, բնության խորհրդավոր և անվերծանելի գաղտնիքներից մեկն է: Ի՞նչ ներքին աղերս կա, օրինակ՝ լեզվի և մտքի, կամ բառի և գաղափարի մեջ: Գիտենք միայն, որ նրանք միմյանց հետ զուգորդված են, որ բառը զարթեցնում է գաղափար և ընդհակառակը, գաղափարը ծնում է բառ: Այս էլ սովորության հետևանք է: Եթե բառի և գաղափարի կապը անհրաժեշտ և բնական բնավորություն ունենար, բոլոր մարդիկ միմյանց կհասկանային, ինչ լեզվով էլ որ խոսեին:

Այս տեսակետից բառը սոսկ նշանակ է, մի սիմբոլ, որ ներկայացնում է մեզ և ուրիշներին որոշ գաղափար, բոլորովին այլ բան է էությամբ, քան ինքն է: Նշանակներ են նմանապես և գույները, գծերը, հնչյունները, նվագները, որոնցով թարգմանում ենք ինչ-ինչ հոգեկան կացություններ: «Մարդու ամբողջ կյանքը սիմբոլների մեջ է,- ասում է Կարլայլ,- միայն սիմբոլների միջնորդությամբ է, որ մենք գիտակցաբար թե անգիտակցաբար ապրում

[1] **H. de Regnier**, ibid., p. 333.

ենք, գործում ու կանք աշխարհումս»[1]: Նույն միտքն է հայտնված և Բողկերի «Լծորդություններ» ոտանավորի մեջ.

Բնությունը մի տաճար է, ուր սյուները կենդանի
Արձակում են երբեմն անմեկին ու մութ խոսքեր,
Մարդն անցնում է այնտեղ սիմբոլների անտառից,
Որոնք նրան դիտում են մտերմական հայացքով:

Հոգեկան պարզ տարրերն արտահայտում ենք բառով, ավելի բարդը համապատասխան բառերի միավորությամբ: Սակայն կան բարդություններ, ինչպես հույզերը, որոնք վերլուծության չեն ենթարկվում. բառերով արտահայտել հույզը՝ նշանակում է կազմալույծ անել նրան, ուրեմն և ոչնչացնել: Պետք է արտահայտության այլ միջոց գտնել: Հույզերն արտահայտելի է նշանակներով, սիմբոլներով, այսինքն՝ պետք է ընտրել կամ ստեղծել այնպիսի պատկերներ և դրություններ և նկարագրել այնպես, որ ընթերցողի մեջ զարթնեն ցանկալի հույզը:

Սիմբոլը այլաբանության նման է: Էական տարբերությունը նրանց ծագման կամ ստեղծման եղանակի մեջ է: Այլաբանությունը ենթադրում է մի միտք, մի խրատ և նրա համար որոնում է պատշաճավոր պատկեր, որ հաճախ ինքն իրեն ոչ մի բանաստեղծական արժեք չունի: Այնինչ սիմբոլի առթած վայելքը կրկնակի է. նախ՝ բանաստեղծական պատկերը և երկրորդ՝ իդեան, որ արտահայտում է: Այլաբանության մեջ իմաստը խրատական է և ակնհայտնի, սիմբոլում լոկ ենթադրական, որ թաքնված է այնպես, ինչպես «ծառը իր հունդի մէջ կրում է ապագա պտուղները»:

«Սիմբոլն իրոք մի համեմատություն է, - ասում է Հաների դը Ռենիե, - վերացականի և թանձրունակի՝ կոնկրետի նույնություն, համեմատություն, որի անդամներից մեկը մնում է ենթադրելի»: Այդ գուշակելի անդամը ներքին իմաստն է, որ այնպես հմտորեն հալված է արտաքին պատկերի մեջ, որ կազմում է անքակտելի միություն: Փույթ չէ, եթե սիմբոլը այլազան մեկնություններ տեղիք է տալիս. մինչև անգամ եթե ընթերցողը ուրիշ կերպ հասկանա, քան հեղինակը, ա՛յլ իմաստ որոնե նրա ստեղծագործության մեջ:

Հունական առասպելների անթարշամ բանաստեղծական ոգին հենց այն դյուրաթեք ճկունության մեջ է, որը ներում է ամեն տեսակ մեկնություն ու բացատրություն: Սիմբոլիստները հաճախ դիմում են հին դիցաբանության,

[1] «It is in and through symbols that man, consciously or unconsciously lives, works, und has his being». A. Simons, The symb. mouvement.

այնտեղից քաղում նյութեր՝ ու իրենց հայացքի համեմատ մշակում: «Առասպելը ժամանակի ավազուտում այն ժժմակներից մեկն է, ուր լսվում է մարդկային ծովի աղմուկը: Միֆը խդեայի պերճհնչակ խխունջն է»[1]:

Մարդուս ընկալական ունակությունները հետզհետե զարգանում ու ընդարձակվում են: Ներելի է հուսալ, որ ականջ դնելով այդ տարօրինակ խխունջներին, միշտ կարող կլինենք նոր շշունջներ լսել և հին հնչյուններին նորանոր մեկնություններ տալ: Սիմբոլն իր լավագույն իմաստով՝ այդպիսի մի խխունջ է. նորա գաղափարական ողնաշյուղը պետք է վեր լինի ժամանակի և տեղի պայմանների ազդեցությունից. որովհե՛տև միայն այդ կերպ կարող է հարատև նշանակություն ու հավերժական կյանք ունենալ: Պատմության ամեն մի շրջան բերում է նոր մթերք, նոր տարրեր քաղաքական և կուլտուրական, որ փոխվում կամ կորչում է հաջորդ շրջանում: Գեղարվեստական երկը տևական լինելու համար, պետք է ձեռնթափ լինի և զերծ մնա քաղաքակրթական պատահարներից, խույս տա անմիջական իրականության հպումից: Երգելու է մշտնջենական զգացմունքների վիշտն ու բերկրությունը՝ սեր, խանդ, սրամտություն, հիացում և այլն: Սրանք են Հոմերոսի վեհության հիմը և անմահության ճշմարիտ հավատչեն:

Ռոմանտիկ բանաստեղծներն ևս երգում էին հուզական աշխարհ. բայց նեղ անհատականության և անձնական գույն էին տալիս զգացմունքներին, կանգ էին առնում մասնավոր արկածների վերա և շեշտում էին այնպիսի կողմեր, որոնք բացառիկ և անսովոր բնավորությամբ հատուկ էին այս կամ այն մարդու զգացմունքին և ոչ զգացմունքին ընդհանրապես: Նոր բանաստեղծներն ընդհակառակը ներքողում են զգացումի բացարձականը, անկախ նրա մասնավոր արտահայտությունից, ուստի նրանց երգերը ընդհանրության սեփականություն է: Նա չի խոսում եզական դեպքից ծնունդ առած վշտի մասին, այլ գեղգեղում է այն տրտունջը, որ դարեր է տեսել, որ նույնչափ հին է, որքան աշխարհը և արգասիք է «ապրելու չարիքի»...

* * *

Երբ Մետերլինկը[2] հափշտակությամբ մեկնում էր սիմբոլիստ բանաստեղծության այս հատկանիշը, նրա զրուցընկերը, ինչպես պատմում է Հյուրեն, առարկություն արեց, թե ճշմարիտ գրականությունը պետք է ո՛չ թե խոր-

[1] **H. de Regnier**, ibid., p. 336.

[2] **J. Huret**, ibid., p. 173.

չե կյանքից, այլ ընդհակառակը նրանով պիտի զբաղվի: Նա պիտի ցոլացնե առտնին կյանքը, հասարակական խոշոր երևույթները, ժամանակի ոգին և պահանջները: Նույն բանը ասաց Հյուրեին և է. Զոլան[1]: Սա բացեիբաց ժխտում էր սիմբոլիզմի նշանակությունը, իբրև մի հոսանքի, որ ո՛չ մի հասարակական շարժման թարգման չէ, և թե՛ դեմոկրատ, և թե՛ բուրժուա դասը ընդդեմ ե՛ն, այնինչ ապագան նրանն է, ով որ կըմբռնե նորակազմ հասարակության ոգին: Ներկայիս գունավոր արտահայտությունը սոցիալիզմն է, մի համաշխարհային շարժում, որ կարող է վաղը հիմն ի վեր տապալել կանգուն քաղաքակրթությունը, փոխել աշխարհի պատկերը: Մի գրականություն, ասում են, որ անտես կառնե այսպիսի կարևոր և կենսական խնդիր, չի կարող անմեղապարտ ճանաչվել և հաջողություն ունենալ:

Այս է սովորական և հաճախ կրկնվող առարկությունն ու միակ լուրջ կշտամբանքն՝ ուղղված նորերին:

Սակայն խնդիրն այն է, որ գրականությունը, մանավանդ նորերի գրականությունը, գործ ունի ո՛չ թե երևույթների, այլ նրանց ստեղծող ոգու հետ: Ճշմարիտ է, աշխատանքի առաքելականությունն է ներկայի ամենաթանկ նշանը, բայց անուրանալի է նաև, որ նորագույն գրականությունն այն տարօրինակ ոգու ցոլքն է, որ արտադրել է այդ շարժումը: Դրական գիտության տեսակետից սոցիալիզմը՝ իբրև սիստեմ, նույնպիսի դեկադենտություն է համարվում, որպիսի սիմբոլիզմը՝ գրականության մեջ: Մեկը բողոք է կյանքի կոնկրետ երևույթներին, մյուսը՝ նույն երևույթների ծանրության տակ հառաչող ոգուն: «Արդի ոգին»՝ նշանակալից ոգի է՝ վիշտն ու ուրախությունը, իրենց երանգներով, հույսն ու հուսահատությունը՝ հիացումն ու հիասթափությունն այնպիսի արագությամբ են միմյանց հետևում, որ կորչում է հոգեկան ուժերի համաչափությունը, հավասարակշռությունը: «Աջակողմյան» և «ձախակողմյան» հույզերը այժմ հոգու մեջ այնպես մոտ են, որպես իրականության մեջ երանություն ու թշվառություն, աղքատություն ու հարստություն, հեծյուն ու քրքիջ: Սոցա նեղ փեղկերի մեջ տրորվում է հոգին, ելք չգտնելով գալարվում է հուսահատ ու թեկված «pleine de larmes et sans cris» («արցունքաթաթավ և առանց տագնապի»): Աշխարհում աննեցուկ՝ հածում է աստանդական բնության անհունության մեջ, հառաչում հողմերի հետ, անձրևի հետ լալիս, թափված տերևների հետ տխրում...

Աշխարհիս անօրեն, դժնյա կացության հանդեպ՝ մարդու համար միակ անխաթ սփոփանքը մնում է իր ներքին աշխարհը, սեփական հոգին իր անուրջներով:

---

[1] J. Huret, ibid., p. 121.

Նա անդորր է որոնում երազական աշխարհում, որպես մի ջերմ հանգրվանում, որ նրանից ոչ ոք չի կարող կապտել, ուր զերծ ճնշումից, մարդ ազատ է ապրելու և շնչելու իր ցանկության համաձայն: Այնտեղ, անրջական եթերում թափում է իր վիշտն ու տառապանքն և նորա թարմությամբ թաթավված ոգին այնուհետև կիջնե երկիր լի խոհուն վճռականությամբ՝ իրական աշխարհում ևս տնօրինել իր բախտը այնպես, ինչպես երազների մեջ...

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՇՏՈՑ ԵՎ ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԸՍՏ ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

(էջ 7)

Գրված է 1925 թ. Փարիզում: Լույս է տեսել «Հանդես ամսօրյա»-ում՝ «Աճծաճոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից ըստ օտար աղբյուրների» վերտառությամբ ներքո (տե՛ս «Հանդես ամսօրյա», ամսագիր, Վիեննա, 1925, № 5-6, էջ 193-200, № 7-8, էջ 321-328, № 9-10, էջ 435-441, № 11-12, էջ 531-539): Նույն թվականին, նույն վայրում լույս է տեսել նաև առանձին գրքով, սակայն այլ խորագրի ներքո՝ «Մաշտոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների» (Վիեննա, 1925, Ազգային մատենադարան, ՃԺԱ, 56 էջ): Երրորդ անգամ լույս է տեսել «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածուում (Երևան, 1962, ՀԳԱ ակադեմիայի հրատ., էջ 199-241): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Փոտ պատրիարքի ամբողջական երկերը հրատարակել է Ց. Պ. Միճը (տե՛ս J. P. Migne, Patrologia Graeca, t. 102-104): - Էջ 7:

2. Ն. Ադոնցի «Քննական նշմարներ եզնիկի մասին» աշխատությունը լույս է տեսել «Բազմավեպ»-ում (1925, էջ 196-200, 294-298, 366-371: 1926, էջ 12-17, 69-72, 108-113): Տե՛ս նաև աստ, էջ 131-168: - Էջ 9, ծան. 1:

3. Ն. Ադոնցի այս դիպուկ նկատողությունը առարկությունների տեղիք է տվել Ե. Տեր-Միքայելյանի մոտ (տե՛ս Ե. Տեր-Միքայելյան, Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մասին, «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 38-45), սակայն այժմ այն հայագիտության մեջ քաղաքացիություն ստացած արժեք է: - Էջ 10:

4. Խոսքը Կարապետ Տեր-Մկրտչյանի հրատարակած «Կնիք հաւատոյ ընդհանուր Սուրբ եկեղեցւոյ» (Ս. Էջմիածին, 1914) գրքի մասին է: - Էջ 16:

5. Նկատի ունի Ա. Վարդանյանի հրատարակած «Թուղթ Պրոկղյա եպիսկոպոսի առ Ս. Սահակ հայրապետ Հայոց և առ Ս. Մաժդոց» թեզիսը (տե՛ս «Հանդես

ամսօրյա», 1921, էջ 1-26): - Էջ 16:

6. Ն. Ադոնցի սույն տեսակետը Հ. Մանանդյանն անվանում է «Նոր ու հետաքրքրիր լուսաբանություն, արժանի հատուկ ուշադրության» և համերաշխվելով նրա հետ՝ գրերի գյուտի ժամանակը առարկայացնում է 391-392 թթ. միջև (տե՛ս **Հ. Մանանդյան,** Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը, «Տեղեկագիր», ՀԳԱ ակադեմիայի, 1952, № 7): Խնդրին և Մեսրոպ Մաշտոցին նվիրված վերջին լավագույն աշխատություններից տե՛ս **Ա. Ա. Մարտիրոսյան,** Մաշտոց, Երևան, 1982: - Էջ 27:

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
(Էջ 35)

Գրված է 1932 թ. օգոստոսին Բրյուսելում: Լույս է տեսել «Հայ մշակույթի օր» ժողովածուում (Փարիզ, 1932, հրատարակություն «Հայ գրական ակումբի», էջ 33-40): Երկրորդ անգամ լույս է տեսել Ադոնցի՝ «Հայաստանի ոսկեհանքը». Փոքր ուսումնասիրություններ, ժողովածուում (կազմել և ներածությունը գրել է Պ. Հ. Հովհաննիսյանը, Երևան, 2006, էջ 62-70) Արտատպվում է առաջին հրատարակությունից:

1. Հայագետները վաղուց են մատնանշել Կորյունի քնագրի զանազան մասերի և մասնավորապես վերջաբանի ժամանակագրական հատվածի ակնհայտ հակասությունները, թերասացություններն ու անորոշությունները: Դրանք բացահայտելու և ճշտելու գործում մեծ է Ա. Ս. Մաթևոսյանի վաստակը [տե՛ս **Ա. Ս. Մաթևոսյան,** Կորյունի Մեսրոպ Մաշտոցի պատմության ձեռագրի մի թղթի տեղափոխություն, Վեներտիկ, 1990, տե՛ս նաև «Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի» քնագրի և դրա տարբերակների Ա. Մաթևոսյանի իրականացրած հրատարակությունը (Երևան, 1994)]: Տարակուսելի է, որ Ա. Մաթևոսյանին, թերևս, անծանոթ է մնացել Ադոնցի «Հայ մշակույթի՝ սկզբնավորությունը» աշխատությունը, որն առաջին և հաջողված փորձերից մեկն էր խնդիրը հստակեցնելու գործում: - Էջ 37:

ՀԱՅԱՑԱԾ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ԱՆՈՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ
(Էջ 43)

Գրված է 1934-1935 թթ. Բրյուսելում: Որպես զեկուցում ընթերցվել է 1936 թ. մարտի 29-ին Սորբոնի համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում: Այս զեկուցումը, որ կարդացվել է ֆրանսերեն, նախ լույս է տեսել հայերեն

թարգմանությամբ (տե՛ս «Անահիտ», 1936, № 3, ապրիլ-մայիս, էջ 16-23), ապա՝ ֆրանսերենով (**N. Adontz**, La Bible Arménienne et sa portée historique, տե՛ս «Célébration solennelle du quinzième centenaire de la traduction Arménienne **De La Bible**», Paris, 1938, p. 47-63) և ռումիներեն թարգմանությամբ («Biblia armeană şi însemnătatea sa istorică», տե՛ս «Ani», Bucureşti, vol. 1, 1941, p. 90-100): Հայերեն թարգմանությունը երկրորդ անգամ լույս է տեսել «Հուշարձան» ժողովածուում (Երուսաղեմ, 1938, էջ 318-329): Երրորդ անգամ վերահրատարակել ենք մենք (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 2001, № 3, էջ 3-11): Այնուհետև վերահրատարակվել է 2002 (տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 2002, Բ-Գ, էջ 95-103), 2005 (տե՛ս «Աստվածաշնչական Հայաստան», Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 2005, էջ 527-533) և 2006 (տե՛ս **Ն. Ադոնց, Հայաստանի ոսկեհանքը**, էջ 71-81) թվականներին: Արտատպվում է «Անահիտ»-ի հրատարակությունից:

1. 1934 թ. լրացավ Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը: Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը մեծ ջանքեր է թափում պատմական այդ կարևորագույն թվականը հանդիսավորելու համահայկական հոբելյանով: Սակայն ստեղծված իրադրությունը հնարավոր չէր դարձնում նման մի կարևոր միջոցառումի Հայաստանում կազմակերպելը: Ուստի, 1934 թ. հոկտեմբերի 1-ի № 1076 հայրապետական կոնդակով Երուսաղեմի Հայոց պատրիարք Թորգոմ արքեպ. Գուշակյանը կարգվում է կաթողիկոսական ներկայացուցիչ և «զղեկավար կազմակերպութեան գործոյս» (տե՛ս «Հուշարձան», էջ 538-547): 1935 թ. ընթացքում հոբելյանական ձիստեր են գումարվում հայկական գրեթե բոլոր գաղթավայրերում (մանրամասները տե՛ս «Սիոն», 1935, № 12): Ամփոփիչ ձիստը տեղի ունեցավ 1936 թ. մարտի 29-ին Սորբոնի համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում: Այս ձիստին է, որ Ն. Ադոնցը կարդացել է սույն «ճմտալից ու շահեկան» («Անահիտ», 1936, № 3, էջ 2) զեկուցումը: - Էջ 43:

2. Նկատի ունի Եվսեբիոս Կեսարացուն: - Էջ 47:

3. Այսինքն՝ Պրոկոպիոս Կեսարացին: - Էջ 48:

4. Ակնարկում է Ա. Վոկքին: - Էջ 50:

5. Մեջբերված հատվածի հեղինակը ֆրանսիացի պատմաբան Ալֆրեդ Ռամբոն (1842-1905) է: - Էջ 50:

6. Ընդգծվածը դուրս է մնացել «Հուշարձան» ժողովածուի հրատարակությունից: «Անահիտ» հանդեսի խմբագրական ծանոթությունը լույս է սփռում նման կրճատման հանգամանքների վրա: - Էջ 52:

ԿՈՐՅՈՒՆԻ ՄԱՍԻՆ
(Պարոն Գ. Ֆնտզլյանի նկատողությունների առթիվ)
(Էջ 53)

Գրված է 1927 թ. Փարիզում: Լույս է տեսել «Հանդես ամսօրյա»-ում (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1927, № 5, էջ 273-284, № 7, էջ 395-405): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Նկատի ունի Գ. Ֆնտզլյանի՝ «Նկատողություններ Մաշտոց-Մեսրովբ անվան և Կորյան բնագրի և ժամանակի մասին» ուսումնասիրությունը (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1926, № 5-6, էջ 268-276: Նույնը՝ տե՛ս Գ. Ֆնտզլյանի աշխատասիրած «Վարք Մաշտոցի» բնագրի ներածական բաժնում): - Էջ 53:

2. Տե՛ս **Գ. Փասմաճ** (Գ. Ֆնտզլյան), Մաշտոց վարդապետ: Գտիչ այբուբենի, թարգմանիչ, ավետարանող և մատենագիր («Անահիտ», 1905, ապրիլ-դեկտեմբեր): - Էջ 53:

3. Վերչին տասնամյակներին Մեսրոպ Մաշտոցի անձի ու գործի վերաբերյալ ստեղծված բազմաթիվ ուսումնասիրությունների տվյալներն իմի է բերել Ա. Ա. Մարտիրոսյանը [տե՛ս «Մաշտոց». (Պատմա-քննական տեսություն), Երևան, 1982, գրքում]: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Հ. Մ. Բարթիկյանի՝ «Թեոդորոս Սոպսուեստացու *Μαστούβιος* -ի և բյուզանդական Մաշտոցյան տոհմի մասին» ուսումնասիրությունը (տե՛ս «Լրաբեր», ՀԳԱ ակադեմիա, 1984, № 7, էջ 74-76):- Էջ 56:

4. Նկատի ունի իր «Հին Հայոց աշխարհայացքը» ուսումնասիրությունը (տե՛ս **Ն. Ադոնց,** Երկեր, Ա, Երևան, 2006, էջ 13-78): - Էջ 56:

5. Արդյո՞ք ակնարկում է Սերեոսի և Անանուն առեղծվածին նվիրված Ն. Ակինյանի, Ա. Մատիկյանի և Բ. Սարգիսյանի ուսումնասիրությունները: - Էջ 63:

6. Նկատի ունի Ղազար Փարպեցու Պատմության Վենետիկի 1793 թ. հրատարակության՝ «Ս[ուր]բ Մաշտոց վարդապետ» հատվածը: - Էջ 63:

7. Ակնարկում է Ն. Մառի՝ «Крещение Армян, грузин, абхазов, аланов святым Григорием (Арабская версия), СПб., 1905, ուսումնասիրությունը, տե՛ս նաև սույնի հայերեն թարգմանությունը, Վաղարշապատ, 1911:- Էջ 64:

8. Վասակ Սյունեցու պատմական գնահատման առնչյան տեսակետների քննությունը տե՛ս **Պ. Հ. Հովհաննիսյան,** Մարզպան Վասակ Սյունեցու գործունեության վերագնահատման Նիկողայոս Ադոնցի տեսությունը, «Ավարայրի խորհուրդը», ժողովածու, Երևան, 2003, էջ 65-72: - Էջ 65:

ԴԱՐՁՅԱԼ ԿՈՐՅՈՒՆԻ ՇՈՒՐՋԸ
(էջ 71)

Գրված է 1928 թ. Փարիզում: Լույս է տեսել «Հանդես ամսօրյա»-ում (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1928, № 1-2, էջ 76-94): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս **Գ. Ֆինոգլյան,** Պատասխանս պրոֆ. Ն. Ադոնցին, «Հանդես ամսօրյա», 1927, № 9, էջ 529-541: - Էջ 71:

2. Նկատի ունի հայր Արսեն Բագրատունու «Տարերք հայերեն քերականության, դպրատաց տղոց համար», դասագիրքը (Վենետիկ, 1848, 1850 և այլն) : - Էջ 77:

3. Տե՛ս **F. C. Conybeare,** The Date of Euthalus, «Zeitschrift für die Neutestamentliche», Yahrg, 1904, s. 39-52. - Էջ 84:

4. 1920-ական թվականներին Ա. Վարդանյանը «Հանդես ամսօրյա»-ում տպագրել է մի շարք ուսումնասիրություններ՝ «Եվթաղյան հատակագրություններ», «Եվթաղականք», «Եվթաղի մատենագրությունք», խորագրերի ներքո, որոնք ամփոփվեցին «Մատենագրութիւնք Եւթաղի. Քննություն և բնագիր» մենագրության մեջ (Վիեննա, 1930): - Էջ 84:

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԻՉ
(էջ 87)

Գրված է 1901-1918 թթ. ընթացքում Մյունխենում և Ս. Պետերբուրգում (Պետրոգրադ): Լույս է տեսել «Христианский Восток» հանդեսում (т. VI, вып. 3, Петроград, 1922, стр. 235-272): Հայերեն թարգմանությունը (Վ. Ա. Դիլոյան) կատարվել է այս առաջին տպագրությունից:

1. Ն. Ադոնցի կողմից այստեղ և այլուր «Բյուզանդիա», «հույներ», «Հունաց կայսր» և նման այլ անվանումներ տուրք են հայ պատմական գրականության ավանդույթին, որը, ինչպես հայտնի է, նման անվանումներով օգտագործում էր «Հռոմեական կայսրություն», «հռոմեացիներ» տերմինների փոխարեն: - Էջ 88:

2. Ս. Տ. Երեմյանի կարծիքով Զինքա ամրոցը այժմյան Զինվի-շեյխ վայրն է, որ տեղադրվում է Զարասպ լեռնանցքից (այժմ՝ Կելիշին) դեպի հարավ (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. II, Երևան, 1984, էջ 146): - Էջ 99:

3. Այդ և հունա-լատինական այլ սկզբնաղբյուրներից կատարված Ադոնցի թարգմանությունները տե՛ս նրա արխիվում (Համազգայինի Բեյրութի գրական

պահոց, պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գզրոց Բ, թղթածրար 3; պահարան I, գզրոց Ժ, թղթածրար Ա-8 և այլն): -Էջ 118, ծան. 1:

4. Փավստոսն ընդհանրապես Ն. Ադոնցի նախասիրած պատմիչն է, որի առեղծվածները նրան հուզել են իր գիտական գործունեության ամբողջ ընթացքում՝ 1900 թվականից մինչև 1930-ական թվականների վերջերը: Փավստոսի թեման աղերսվում էր մի այլ՝ առեղծվածներով լեցուն բնագրի՝ Անանունի պատմության, հետ, որոնց լուծմանն էլ նվիրել է հայագետն իր ստեղծագործական զարմանալի եռանդը: Դեռևս 1900 թ. նոյեմբերի 18-ին Ն. Մառին հղված նամակում Ադոնցը հավաստում է, որ Փավստոսի վերաբերյալ սկսել է նյութեր կուտակել (տե՛ս **Պ. Հ. Հակոբյան,** Նիկողայոս Ադոնցի նամակներից (1895-1902), «Լրաբեր» ՀԳԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1975, № 11, էջ 97-98): 1902 թ. հունվարին Լոնդոնից գրված նամակներից մեկում ուսուցչապետին տեղեկացնում է, որ Փավստոսի մասին նյութերը պատրաստ են (անդ, էջ 105): Կատարված նախնական աշխատանքների վերաբերյալ 1906 թ. նա զեկուցում է ներկայացնում Ռուսական կայսերական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի նիստում (տե՛ս «Записки Восточного отделения императорского русского археологического общества», 1906, т. 17, стр. XL-XLIII): **«Ծրագրված մեծ աշխատանքի»** (Ադոնցի խոսքերն են) մի մասը տպագրության է հանձնվում Ն. Մառի կողմից նոր հիմնադրված «Христианский Восток» -ին: Հետաքրքիր է, որ հանդեսի 2-րդ տարվա շապիկի վրա զետեղված է ծանուցում այն մասին, որ առաջիկա հատորներից մեկում լույս է տեսնելու Ն. Ադոնցի «Փավստոս Բուզանդը որպես պատմիչ» ուսումնասիրությունը (1913, т. II, вып. 3): Իրերի բերումով Ադոնցի աշխատանքը լույս տեսավ հանդեսի վերջին՝ 1922 թ. համարում, որից հետո հանդեսի հրատարակությունն արգելվեց: Այժմ հաստատապես որևէ բան հնարավոր չէ ասել, թե Ադոնցը ավարտել է արդյոք ծրագրված աշխատանքն ամբողջությամբ, թե ոչ: Համենայն դեպս հանդեսի խմբագրության ծանուցումը, թե **«Շարունակությունը հետևում է»**, այսինքն՝ աշխատանքի երկրորդ մասը լույս է տեսնելու հանդեսի առաջիկա համարներից մեկում, հուշում է, որ այն պետք է որ պատրաստ լիներ, եթե ոչ ամբողջությամբ, ապա՝ մասամբ: Փաստորեն տեխնիկական, ծավալային նկատառումներով է, որ աշխատանքը հնարավոր չի եղել տպագրել ամբողջությամբ (տպագրված հատվածը կազմում է շուրջ 40 մեծադիր էջ), և ինչպես սովորաբար լինում է նման դեպքերում, շարունակությունը տեղափոխվել է: Բայց խմբագրության փակման և նյութերի ցաքուցրիվ լինելու պայմաններում Ադոնցի աշխատանքի հետագա ճակատագիրը դառնում է անհայտ: Կարծում ենք, որ հավանականություն կա այն գտնելու Ռուսաստանի ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Պետրոգրադի բաժանմունքի արխիվում:

Այնուհանդերձ, Փավստոսի թեման չի լքել Ադոնցին: Արդեն Փարիզյան տարագրության տարիներին՝ ավելի ճիշտ 1921 թ. դեկտեմբերին, Ն. Ակինյանին

ողված ձամակում Ադոնցը խնդրում է իրեն ուղարկել Փավստոս Բուզանդին ձվիրված Յո. Մարկվարտի, Հ. Գելցերի և Գ. Տեր-Պողոսյանի ուսումնասիրությունները (տե՛ս Վիեննայի Մխիթարյան միաբանության դիվան, Ն. Ադոնցի ձամակները Մխիթարյան հայրերին): Բացի այդ, Ադոնցի թողուձի տարբեր թղթածրարներում առկա են Փավստոսի բնագրից քաղված մեծ թվով հատվածներ, որոնք թեև մեկնաբանված չեն, սակայն վերաբերում են 370-ական թվականների իրադարձություններին, և որոնք հասկանալի պատճառներով տպագրված հատվածում բացակայում են, քանզի այնտեղ շարադրանքն ավարտվում է 363 թ. դեպքերի ձկարագրությամբ: Ձգնեւսաքրքիր չէ ձաև այն փաստը, որ Ադոնցի այդ ձույն թողուձում առկա է «Փավստոս Բուզանդ» խորագիրը կրող հայերեն ձավարտ մի ուսումնասիրություն՝ ընդամենը 5 էջ (տե՛ս Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գզրոց Բ, թղթածրար Ա-8): Ձկասկած է, որ հայագետը ծրագրել էր մի ձոր աշխատանք, որը սակայն իրադարձությունների կտրուկ փոփոխության պատճառով հնարավոր չեղավ իրականություն դարձնել: - Էջ 130:

ՔՆՆԱԿԱՆ ՆԾՄԱՐՆԵՐ ԵՋՆԻԿԻ ՄԱՍԻՆ
(Լ. Մարիեսի աշխատության առթիվ)
(Էջ 131)

Գրված է 1925-1926 թվականներին Փարիզում: Լույս է տեսել «Բազմավեպ»-ում (1925, № 7, էջ 196-200, № 10, էջ 294-298, № 12, էջ 366-371: 1926, № 1, էջ 12-17, № 3, էջ 69-72, № 4, էջ 108-113): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Խոսքը ֆրանսիացի հայագետ Լուի Մարիեսի (1876-1958)՝ Եզնիկ Կողբացուն ձվիրված աշխատության մասին է (տե՛ս **L. Maries**, Le de Deo d'Eznik de Kolb, **Paris**, 1924: Սույնի ամփոփումը տե՛ս **Գ. Նահապետյան**, «Բազմավեպ», 1925, էջ 161 և հտ.): Տարիներ ձաց (1959) Լ. Մարիեսը իրականացրեց ձաև Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի ֆրանսերեն ձոր թարգմանությունը (տե՛ս «Patrologia orientalis», t. XXVIII, p. 555-776): - Էջ 131:

2. Նկատի ունի Եզնիկին վերաբերող Նորայր Բյուզանդացու դիտողությունները (տե՛ս **Նորայր Բյուզանդացի**, Եզնըկայ Կողբացւոյ երկու հատուածք սրբագրեալ, «Քննասէր», Ստոքհոլմ, 1887, պրակ Ա, էջ 8-11): - Էջ 131:

3. Տե՛ս **Հր. Աճառյան**, Քննություն և համեմատություն Եզնկա ձորագյուտ ձեռագրին, Վիեննա, 1904 (Ազգային մատենադարան, ԽԸ): - Էջ 131:

4. Տե՛ս **S. Weber**, Abfassungszeit und Echtheit des Schrift Ezniks, «Theologische Quartalschrift», Tübingen, 1897, t. 79. Տե՛ս ձաև ձույնի հայերեն թարգմանությունը՝

Ս. Վերեր, Եզնկա «Եղծ աղանդոց» գրքի ժամանակն և վավերականությունն, «Բազմավեպ», 1897, դեկտեմբեր, հավելված, էջ 1-6: 1898, էջ 147-151, 261-266: Հմմտ. «Հանդես ամսօրյա», 1898, էջ 22-25, 110-113, 201-206: - Էջ 131:

5. «Գիրք ընդդիմութեանց արարեալ ի Սրբոյ Եզնկայ Կողբացւոյ Հայոց վարդապետէ», Զմյուռնիա, 1762-1763, հրատարակիչ՝ Աբրահամ վարդապետ Ամատապատեցի: - Էջ 134:

6. «Եզնկայ Կողբացւոյ Քագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826, հրատարակիչ՝ Արսեն վարդապետ Քագրատունի: - Էջ 134:

7. Վալենտինիանոսը Գնոստիկյան դպրոցի առաջին ուսուցիչներից էր, որը 140-165 թթ. գործում էր Հռոմում: - Էջ 135:

8. Տե՛ս **Գ. Գալեմքեարյան,** Նորագույն աղբերք Եզնկա Կողբացվո ընդդեմ աղանդոց մատենիճ, Վիեննա, 1919: - Էջ 135:

9. Եզնիկի քննական բնագրի հրատարակիչ Մ. Մինասյանը մասամբ է հետևել Ադոնցի ցուցումին, երկը խորագրելով՝ «Ճառք ընդդէմ աղանդոց» (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1990, էջ 79-125: 1991, էջ 127-193: 1992, էջ 139-187, տե՛ս նաև առանձին հրատարակությամբ՝ Ժնև, 1992): - Էջ 137:

10. Քնագրում ոչ թե «կատարյալ **գիտությամբ**», այլ՝ «**կարծիքի**»: - Էջ 138:

11. Նկատի ունի իր «Le questionnaire de S. Grégore Illuminateur et ses rapports avec Eznik» ֆրանսերեն ուսումնասիրությունը, տե՛ս նաև սույնի հայերեն տարբերակը («Հայրենիք», 1928, 6-րդ տարի, № 7, էջ 72-81, նաև աստ՝ էջ 169-183): - Էջ 143:

12. Տարիներ անց «Հարցմունք Գրիգորի» հիշատակարանի նոր հետազոտող Լ. Ստ. Խաչիկյանը Ադոնցի հարցադրմանը պատասխանում է՝ «Այո, կարելի է, ավելին՝ այն **կարող է զետեղվել միայն և միայն հայ դպրության սկզբնավորման առաջին տասնամյակներին, և հանդիսանում է հայ ինքնության մատենագրության ցարդ հայտնի հնագույն հուշարձանը**» [տե՛ս **Լ. Խաչիկյան,** Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք, «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 310-311; նոր հրատարակությունը՝ **Լ. Խաչիկյան,** Աշխատություններ, հատ. Ա, Երևան, 1995, էջ 66 (ընդգծումը Լ. Խաչիկյանինն է - **Պ. Հ.**)]: - Էջ 151:

ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՎԻ ՀԱՐՑԱՐԱՆԸ ԵՎ ԵԶՆԻԿ
(Էջ 169)

Նախապես գրված է եղել ֆրանսերեն՝ 1925 թ. Փարիզում: Լույս է տեսել «La Revue de L'Orient Chrétien» հանդեսում (տե՛ս **N. Adontz,** La questionnaire de S. Grégoire Illuminateur et ses rapports aves Eznik, t. V(XXV), № 3, 4, Paris, 1925-1926, p. 309-357): 1927 թ. սույն ուսումնասիրությունը, առանց «Հարցումն և պատասխանիք» բնագրի, հեղինակի իսկ կողմից թարգմանվել է հայերեն («Հայրենիք»-ի հրատարակությունում սխալմամբ՝ 1924 թվականին) և տպագրվել «Հայրենիք» ամսագրում (1928, 6-րդ տարի, № 7, էջ 72-81): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ինչպես արդեն նշել ենք, «Հարցումն և պատասխանիք» բնագիրը լույս է տեսել ուսումնասիրության ֆրանսերեն տարբերակին կից: - Էջ 169:

2. Հայտնի է, որ Ն. Ադոնցը ձեռքի տակ է ունեցել Հարցարանի չորս ձեռագրերի ընդօրինակությունները, որ նրան էր տրամադրել **Գ. Տեր-Մկրտչյանը**: Այժմ հայտնի են Հարցարանի ևս երկու օրինակներ [տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 9298, էջ 302ա-306բ (շրջանառության մեջ է դրել Լ. Խաչիկյանը վերը նշված հոդվածում): Երկրորդը՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի Մատենադարան, ձեռ. № 1912 (շրջանառության մեջ է դրել Ն. Պողարյանը, տե՛ս «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Սրբոց Հակոբյանց», հատ. Ջ, Երուսաղեմ, 1972, էջ 346-347)]: - Էջ 177:

3. Տե՛ս **Н. Марр,** Из летной поездки в Армению, "Записки Восточного отделения императорского русского археологического общества", т. V, СПб., 1891, стр. 9: - Էջ 180:

4. Սույն բնագիրը թեականորեն վերագրվել է ոմն Վարդանի (Ն. Մառ), Վարդանանց պատմության հեղինակ Եղիշեին (Ն. Ակինյան), XIII դարի նշանավոր մտածող Վահրամ Րաբունուն (Ղ. Ալիշան) և այլն: Այժմ կարելի է ապացուցված համարել այն, որ հեղինակը Վահրամ Րաբունին է (տե՛ս **Լ. Խաչիկյան,** նշվ. աշխ., էջ 311): - Էջ 181:

5. Ն. Ադոնցից հետո սույն բնագրի ուսումնասիրությամբ 1964 թ. զբաղվել է Լ. Խաչիկյանը, որը վերահրատարակել է այն՝ ձեռագրերի հիման վրա կատարելով մի քանի ճշտումներ (տե՛ս **Լ. Խաչիկյան,** նշվ. աշխ.): «Բանբեր Մատենադարանի» հրատարակության շնորհիվ է, որ Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» հայտնի դարձավ հայագիտական լայն շրջաններին, քանզի, ինչպես նշում է Լ. Խաչիկյանը, «Revue de L'Orient chretien» պարբերականի այն համարից, որտեղ տպագրվել էր Ադոնցի հոդվածը, Հայաստանում գեթ մի օրինակ չկար: - Էջ 183:

6. Հավանաբար խոսքը Եղիշեի «Մեկնութիւն արարածոց» քնագրի մասին է (տե՛ս նշված քնագրի Հ. Քյոսեյանի հրատարակության հավելվածի ծանոթագրությունների բաժինը՝ «Մատենագիրք Հայոց», Ա հատոր, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 929): - Էջ 183:

ՆՇԱՆԱԳԻՐ ԿԱՐԳԱՑ ՔԱՆԻՑ ԵՋՆԿԱՆ ԵՐԻՑՈՒ
(Էջ 184)

Գրված է 1938 թ. Քրյուսելում: Լույս է տեսել Երուսաղեմի Ս. Հակոբյանց մայրավանքի «Սիոն» պարբերականում (1938, № 5, էջ 147-153, № 6, էջ 180-185): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս «Սամուէլ քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», առաջաբանով, համեմատությամբ, հավելվածներով և ծանոթագրություններով Ա. Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, էջ 266-268: - Էջ 186:

2. Տե՛ս «Նկարագիր կարգաց ի բանից եզնկացւոյ Երիցու», հրատ. Ն. Ակինյան, առաջաբան և քնագիր: - Էջ 186, ծան. 1:

3. Տե՛ս **Sukias Baronian**, Catalogue des munuscritis arméniens de la Bibliothèque Nationale, Paris, 1867 (անտիպ, գտնվում է Փարիզի Ազգային գրադարանի հայկական ձեռագրերի բաժնում, № 298): - Էջ 187:

4. Տե՛ս **I.-P. Martin**, Catalogue des manuscritis arméniens de la Bibliothèque Nationale de Paris, vol. I-II, Paris, 1878 (անտիպ, գտնվում է Փարիզի Ազգային գրադարանի հայկական ձեռագրերի բաժնում, № 300, 301): - Էջ 187:

5. **V. Langlois,** Collection des historiens anciens et modernes de L'Arménie, tome premier, Paris, 1867, p. 101, 103.- Էջ 187:

6. Այնուհանդերձ, հայագիտական գրականության մեջ շարունակում է տիրապետել այն կարծիքը, թե Վրթանես Քերթողը գործել է նաև Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի (615-628) գահակալության օրոք [տե՛ս **Ն. Պողարյան,** Հայ գրողներ (Ե-ԺԷ դար), Երուսաղեմ, 1971, էջ 55; **Կ. Ջիվարյան**, Պատմություն, հայ հին գրականության, Վենետիկ, 1992, էջ 215 և այլն]: - Էջ 197:

7. «Համառօտ պատմութիւն ընտիր ոճով վասն շինութեան վկայարանի Հռիփսիմեանց ի Կոմիտասայ կաթողիկոսէ» (տե՛ս «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Ա, Վենետիկ, 1836, էջ 19): Բացի այդ, ժամանակին Գ. Տեր-Մկրտչյանը հավաստիացնում էր, թե Էջմիածնի ձեռագրերի մեջ հայտնաբերել է Վրթանես Քերթողին վերագրվող «Գիւտ ճշխարաց Հռիփսիմեանց» խորագիրը կրող մի երկասիրություն (տե՛ս «Շողակաթ», ժողովածու, Ս. Էջմիածին, 1913, էջ 172):

Անտարակույս, երկու դեպքում էլ խոսքը գնում է նույն երկասիրության մասին, սակայն թե՛ մեկը, և թե՛ մյուսը ցայսօր անտիպ են ու չուսումնասիրված, իսկ դրանց հեղինակային պատկանելության հարցը մնում է առկախ: - Էջ 197:

8. Գ. Հովսեփյանցը, որ նույնպես հրատարակել է Նշանագիրը, իր հրատարակությունից դուրս է թողել կաթողիկոսների ցանկը՝ գտնելով, որ այն չի պատկանում Եզնիկ Երեցի հեղինակությանը (տե՛ս **Գ. Հովսեփյան,** Հիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 25, ծան. 3): - Էջ 201:

9. Տարիներ անց, Ն. Ակինյանը անհրաժեշտ է համարել դարձյալ անդրադառնալ այս քննագրի քննությանը (տե՛ս **Ն. Ակինյան,** Նկարագիր կարգաց բանից Եզնկա Երիցու. վերահայաց մը, «Հանդես ամսօրյա», 1962, էջ 9-22): - Էջ 201:

ՀԱՑՐ Ն. ԱԿԻՆՑԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ
(Էջ 202)

Գրված է 1938 թվականին, Բրյուսելում: Լույս է տեսել «Սիոն»-ում (1938, № 11, էջ 330-337, № 12, էջ 381-383: 1939, № 1, էջ 10-15): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս նախորդ հոդվածը՝ աստ, էջ 184-201: - Էջ 202:

2. **Ն. Ակինյան,** Դարձյալ Նկարագիր, («Նշանագիր») կարգաց ի բանից Եզնկաց երիցու, տե՛ս «Հանդես ամսօրյա», 1938, № 4-8, էջ 238-259: - Էջ 202:

3. Թերապեվտների համայնքը, որը նկարագրում է Փիլոնը, գտնվում էր ոչ թե Հռոմում, այլ Եգիպտոսում՝ Ալեքսանդրիայի արվարձաններում՝ Մարեա լճի ափին: - Էջ 215:

4. **Ե. Դուրյան,** Նկատողություններ Եզնիկի Աստվածաշնչական վկայությունների մասին, տե՛ս «Ամբողջական երկեր Եղիշե պատրիարք Դուրյանի». Զ. Ուսումնասիրություններ և քննադատություններ, Երուսաղեմ, 1935: - Էջ 222, ծան. 1:

5. Հմմտ. աստ, էջ 197, տե՛ս նաև էջ 598, ծան. 6: -Էջ 230:

ԱՄՊԵԼԻՈՍ՝ ՔԵՐՍՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ
(Հայկական «Գիրք թղթոցի» քննադատության շուրջ)
(Էջ 232)

Գրված է 1913 թ. Ս. Պետերբուրգում: Լույս է տեսել «Христианский Восток» հանդեսում (т. II, СПб., 1913, стр. 175-186): Հայերեն թարգ-

մանուկյանը (Վ. Ա. Դիլբյան) կատարվել է այս առաջին տպագրությունից:

1. Տե՛ս «Գիրք թղթոց». մատենագրութիւնք նախնեաց, Թիֆլիս, 1901, տե՛ս նաև նոր՝ երկրորդ, բարեփոխված և լրացված հրատարակությունը՝ «Գիրք թղթոց», աշխատասիրությամբ Նորայր արքեպ. Պողարյանի, Երուսաղեմ, 1994: - Էջ 232:

2. Ժամանակին «Գիրք թղթոց»-ի վերաբերյալ լույս տեսած մատենախոսականներից տե՛ս Հ. Գյուլխանդանյանի («Գիրք թղթոց»-ի պակասները և նրանից դուրս մնացած թղթերը Մայր Աթոռի «Գիրք թղթոց» ձեռագիրների մեջ, «Արարատ», 1902, էջ 560-569, 748-753) և Ն. Ակինյանի («Թղթոց գրքին» հավաքիչն ու հավաքման ժամանակը», «Հանդես ամսօրյա», 1907, էջ 371-374) գրախոսականները: - Էջ 232:

3. Թե ինչ ազդեցություն է ունեցել Տիմոթեոսը հայ դավանաբանական մտքի վրա կարելի է գաղափար կազմել Ն. Ակինյանի՝ «Տիմոթեոս Կուզ հայ մատենագրության մեջ» (Վիեննա, 1909) ուսումնասիրության միջոցով: - Էջ 236:

4. Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Տիմոթեոս Կուզի Հակաճառության հայ թարգմանության ժամանակը և Սուրբ Գրքի երրորդ կամ «Նորաբեր» հայ թարգմանությունը, Վաղարշապատ, 1908, տե՛ս նաև նորագույն հրատարակությունը՝ Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Բ, Ս. Էջմիածին, 1998, էջ 290-312: Դեռևս 1908 թ. սեպտեմբերի 27-ին Գ. Տեր-Մկրտչյանին ուղղված նամակում Ն. Ադոնցը Միաբանի ուշադրությունը հրավիրում է չափազանց կարևոր տոմարական մի ուղղումի վրա, որ կարող էր օգտակար լինել Տիմոթեոս Կուզի թարգմանության ժամանակը որոշելիս՝ «Առաջին անգամից Ձեր եզրակացությունը ինձ շփոթեց, բայց չուտով ինձ համար միանգամայն պարզվեց, որ մի թեթև ձեռագրական <վրիպակի> զոհ եք եղել: Կարդալով Ձեր այն տողերը, որ քննում եք Դիոսկորոսի մահվան տարին 454 թ.- այն է՝ «452-455 քառամյակին Նավասարդի մեկը հանդիպում է օգոստոսի 5-ին, ուրեմն՝ սեպտեմբերի 2-ը ընկնում էր Նավասարդի 29-ին, մինչդեռ **Հոռի վեցը** հանդիպում էր **սեպտեմբերի 9-ին**, ուրեմն՝ անհնարին է սեպ[տեմբերի] 2 = Հոռի 6» (էջ 12) , - կարդալով այս տողերը, կրկնում եմ, ակամայից գոչեցի. «Հեր օրհնած, կնշանակե ձեռագրի սեպ[տեմբերի] 2 պետք է կարդալ 9». սեպ[տեմբերի] Բ, փոխանակ Թ: Զարմանալին այն է, որ Դուք հարց եք բարձրացնում Հոռի ընթերցման անաղարտության վերաբերյալ, բայց նույն հարցը չեք տալիս սեպ[տեմբերի] 2-ի նկատմամբ: Այլապես հարցը Ձեր համար կպարզվեր, և այնպիսի շփոթ չէիք առաջացնի բոլոր մասնագետների մտքերի մեջ» (տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Բ, էջ 643-644): - Էջ 240:

«ՀԱՅՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» ՍԵԲԵՈՍԻ ԵՐԿՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱՂԵՐՍՆԵՐԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՎ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
(էջ 243)

Գրված է 1899-1900 թթ. ընթացքում Ս. Պետերբուրգում և Մյունխենում: Շարադրանքն ավարտել է 1900 թ. հունվարի 23-ին Մյունխենում: Հենց նույն օրը Ն. Մառին հղված նամակում Ադոնցը շտապում է տեղեկացնել «հոդվածիկը», ինչպես ինքն է համեստորեն nրակում, ավարտելու և այն Ս. Պետերբուրգ՝ Մառին ուղարկելու մասին. «Այսօր Ձեզ եմ ուղարկում Անանունի մասին հոդվածը... Խնդրում եմ Ձեզ լինել սիրալիր, ծանոթանալ դրա հետ, ոճական ու տրամաբանական անհարթությունները մաքրել, շտկել և տեղավորել «Византийский временник»-ում, կամ ուր որ հարկ կհամարեք (տե՛ս **Պ. Հ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 87): Հոդվածը տպագրվել է «Византийский временник» հանդեսում (т. VIII, отд. 1, СПб., 1901, стр. 64-105): Լույս է տեսել նաև առանձին հրատարակությամբ (СПб., 1901, стр. 42): Հայերեն թարգմանությունը (**Վ. Ա. Դիլոյան**) կատարվել է առաջին տպագրությունից:

1. Ն. Ադոնցից ավելի վաղ Անանունի խնդրին անդրադարձել էին բազմաթիվ ուսումնասիրողներ, որոնցից կարելի է առանձնացնել Ն. Մառի («О начальной истории Армении Анонима. К вопросу об источниках Истории Моисея Хоренского. По поводу критических статей проф. Cariére, «Византийский временник», т. I, вып. 2, СПб., 1894, стр. 263-306. Տե՛ս նաև սույնի հայերեն թարգմանությունը՝ «Անանունի Հայոց նախնական պատմության մասին»: Մովսես Խորենացու Պատմության աղբյուրներուն հարցի վերաբերմամբ. պրոֆ. Ս. Կարիերի քննական հոդվածների առթիվ, «Հանդես ամսօրյա»,1895, էջ 18, 54, 108, 195, 277), Գր. Խալաթյանցի («Անանունը որպես ուշ ապոկրիֆ», տե՛ս **Гр. Халатянц**, Армянский эпос в Истории Армении М. Хоренского, стр. 58-105: Նույնի՝ «Մարաբա Մծուրնացի և կեղծ Սեբեոս», Վենետիկ, 1898), Մտ. Մալխասյանցի («Սեբեոսի պատմությունը և Մովսես Խորենացի», Թիֆլիս, 1899) հետազոտությունները: - էջ 243:

2. Ջ. Պատկանյանը Անանունի խնդրին անդրադարձել է ինչպես Սեբեոսի երկասիրության ռուսերեն թարգմանության (СПб., 1862) ու հայերեն բնագրի (Ս. Պետերբուրգ, 1879) հրատարակությունների առաջաբաններում և ծանոթագրություններում, այնպես էլ իր «Ванские надписи и значение их для истории Передней Азии» (СПб., 1881) մենագրության մեջ: - էջ 243:

3. Տե՛ս «Պատմութիւն Սերէոսի Եպիսկոպոսի ի Հերակլն» երկասիրության (Կոստանդնուպոլիս, 1851) հրատարակիչ Թադեոս Միհրդատյանցի ծանոթագրությունները: Տե՛ս նաև **Ա. Գաբրագաշյան**, Քննադատություն Մարիբասյան պատմության («Քննական պատմություն Հայոց», մասն Ա, Թիֆլիս, 1895, էջ 124-202): - Էջ 244:

4. Բնագրի այս հատվածում թերթերի պոկված-կորած լինելու հանգամանքը ընդունում են նաև այլ ուսումնասիրողներ (Ստ. Մալխասյանց, Գ. Արգարյան և այլն): - Էջ 246:

5. Տպագրական վրիպակ է, պետք է լինի՝ 255: - Էջ 249:

6. «Հինգ թագավորներ» արտահայտությունը բուռն մեկնաբանությունների տեղիք է տվել: Դրան անդրադարձել են Ջ. Պատկանյանը, Ն. Մառը, Բ. Գևորգյան-Ճուղուրյանը, Ն. Ակինյանը, Ստ. Մալխասյանցը, Պ. Անանյանը, Լ. Շահինյանը, Գ. Արգարյանը և շատ ուրիշներ: Գ. Արգարյանը համեմատելով Ջ. Պատկանյանի հետ «Հինգ թագաւորացն» արտահայտությունը սրբագրում է «հին թագաւորացն» [տե՛ս **Գ. Արգարյան**, Հինգ թագավորների առեղծվածը, «Լրաբեր», ՀԳԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1981, № 3, էջ 78-92]: - Էջ 255, ծան. 2:

7. 1900 թ. փետրվարին Ն. Մառին ուղղված նամակում Ադոնցը խնդրել է այս հղումը փոխարինել մեկ այլ՝ ավելի էական հղումով. «Խնդրում եմ Գուտշմիդին հղումը փոխարինել կամ Ֆ. Ցուստիի «Iranisches Namensbuch» (Marburg, 1895) ուսումնասիրությունով կամ Ա. Գաբրագաշյանով (տե՛ս **Պ. Հ. Հակոբյան**, Նշվ. աշխ., էջ 88): Սակայն, ինչպես նշում է նաև Պ. Հ. Հակոբյանը, այս ուղղումը չի կատարվել: - Էջ 258, ծան. 1:

8. Մովսես Խորենացու ժամանակագրական աղյուսակի վերականգնման ուղղությամբ Ադոնցի կատարած այս փորձը կարևոր նշանակություն ունեցավ խնդրի հետագա ուսումնասիրության գործում: Այս բնագավառում նշանակալից երևույթ է հատկապես Գ. Խ. Սարգսյանի աշխատանքը (տե՛ս «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը», Երևան, 1965): - Էջ 275:

9. Ն. Մառին հղված վերոբերված նամակում (տե՛ս **Պ. Հ. Հակոբյան**, Նշվ. աշխ., էջ 88) Ադոնցը խնդրել է Մովսես Խորենացու «Ճեմբակուր-պատիւ թագաւորութեանն» հատվածը լրացնել նաև նրան վերագրվող «Աշխարհացոյց»-ի համապատասխան հատվածով: Բայց, այդ լրացումը ևս չի կատարվել: - Էջ 277:

10. «Հայոց նախնական պատմությանը» նվիրված Ն. Ադոնցի այս երկասիրությունը, որն իրավամբ համարվում է «փայլուն աշխատություն» (Գ. Արգարյան), շրջադարձային նշանակություն ձեռք բերեց հիմնախնդրի հետագա ուսումնասիրության գործում: Այս բնագավառում զբաղված հետազոտողներից կարելի է առանձնացնել Ա. Մատիկյանի, Բ. Սարգիսյանի, Գր. Տեր-Պողոսյանի, Ն. Ակինյանի, Հ. Մանանդյանի, Պ. Անանյանի, Խ. Թորոսյանի, Մ. Գրիգորյանի

համապատասխան ուսումնասիրությունները և մասնավորապես Գ. Արգարյանի հետազոտությունների շարքը, որն ամփոփված է նրա «Սերեոսի պատմությունը» և «Անանունի առեղծվածը» հանգամանալից մենագրության և նրա իրականացրած Սերեոսի Պատմության քննական բնագրի (Երևան, 1979) ծանոթագրությունների մեջ: - Էջ 293:

ԳՐ. ԽԱԼԱԹՅԱՆՑ, ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ: ՄՈՍԿՎԱ, 1903

(Էջ 294)

Գրված է 1903 թ. Ս. Պետերբուրգում: Լույս է տեսել «Записки восточного отделения императорского русского археологического общества» պարբերականում (СПб., 1904, № 16, стр. 0145-0161): Հայերեն թարգմանությունը (**Վ. Ա. Դիլոյան**) կատարվել է այս առաջին տպագրությունից:

1. Իր գիտական գործունեության ամբողջ ընթացքում Գր. Խալաթյանցը շարունակաբար անդրադարձել է Մովսես Խորենացու խնդրին՝ դրան նվիրելով շուրջ 40 աշուն ուսումնասիրություններ: Այդ աշխատությունների մի զգալի մասը ծեռագիր վիճակում գտնվում է նրա անձնական թողնում (տե՛ս Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան, Գր. Խալաթյանցի ֆոնդ, 69, բաժին I և II):- Էջ 294:

2. Ա. Գուտշմիդի աշխատության հայերեն թարգմանությունը տե՛ս (**Ա. Գուտշմիդ, Թե Մովսես Խորենացվո Պատմության որչափ հավատք պետք է ընծայել, «Բազմավեպ», 1877, էջ 43-51, 110-116, 213-222, 289-302**): - Էջ 294:

3. Տե՛ս **Ա. Կարիեր,** Նորագույն աղբերք Մովսիսի Խորենացվո. Քննադատական ուսումնասիրություն, հատ. Ա, Վիեննա, 1893, հատ. Բ, Վիեննա, 1894: - Էջ 294:

4. Այս խնդրին Գր. Խալաթյանցն անդրադարձել է նաև առանձին հոդվածով (տե՛ս **Gr. Chalathianz,** War Artases von Armenien der Besieger des Kröses?, «Zeitschrift für die Kunde des Morgenlandes», Wien, 1903, VIII, 1, p. 37-46, տե՛ս նաև սույնի հայերեն թարգմանությունը («Հանդես ամսօրյա», 1903, №12, էջ 353-358): - Էջ 299:

5. Հետագայում՝ 1938 թ., Ն. Ադոնցը հրատարակել է այդ բնագիրը (տե՛ս **Ն. Ադոնց,** Նշանագիր կարգաց բանից Եզնկաւն Երիցու, ասա, էջ 184-201): - Էջ 309:

6. Կյանքի վերջին տարիներին Գր. Խալաթյանցը ծեռնամուխ է եղել խորենացիագիտական իր պրպտումների արդյունքների ամփոփմանը, որին էր նվիրված

«Համեմատական ուսումնասիրությունք Մովսես Խորենացվո «Պատմութիւն Հայոց»-ի» աշխատանքը, որը սակայն մնացել է անավարտ (տե՛ս Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան, Գր. Խալաթյանցի ֆոնդ, 69, բաժին I, № 4, 119 ձեռագիր էջ): - Էջ 312:

7. Նույն 1904 թ. Ն. Ադոնցը մատենագիտական բռուցիկ ակնարկով անդրադարձել է նաև Մ. Աբեղյանի՝ «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ» (Վաղարշապատ, 1901) մենագրությունը, որն ուղղված էր Գր. Խալաթյանցի «Հայկական էպոսը Խորենացու պատմության մեջ» (Մոսկվա, 1896) մենագրության հիմնական դրույթների դեմ: Անհրաժեշտ ենք համարում հայերեն թարգմանությամբ ներկայացնել նաև Ադոնցի այդ մատենախոսականը.

«Էջմիածնի Հոգևոր ճեմարանի հայկական բանասիրության ուսուցիչ Մ. Աբեղյանի ներկա գրախոսության շարժառիթը պ[արոն] Գր. Խալաթյանցի «Հայկական էպոսը Խորենացու պատմության մեջ» մագիստրոսական աշխատանքն է:

Հեղինակը իր առջև դրել է երկու խնդիր. մի կողմից փորձում է ապացուցել Գր. Խալաթյանցի ուսումնասիրության մեթոդի ու եզրակացությունների սնանկությունը, մյուս կողմից առաջարկում է հարցի սեփական լուսաբանությունը:

Այն ամենը, որ վերաբերում է պ. Գր. Խալաթյանցի գրքին՝ ըստ էության ավելորդ է, քանի որ, եթե հեղինակը շարադրում է իր հայացքները, դրանով էլ դրսևորում է իր վերաբերմունքը Խալաթյանցի աշխատանքի նկատմամբ: Այդպիսի շարադրանքի հետևանքով Աբեղյանի աշխատանքը ծավալով նշանակալիորեն մեծացել է ի վնաս ծրագրված համեստ աշխատանքի կուռ կառուցվածքի:

Հեղինակը Խալաթյանցի հետ բանավեճը վարում է համեմատական մեթոդոլոգիայի հողի վրա: Խորենացու տերմինաբանությունը քննարկելիս, որով նշվում են ժողովրդական ստեղծագործությունների տարբեր ձևերը, և դրանց նկատմամբ պատմիչի վերաբերմունքը պարզելիս, պ. Աբեղյանը «Պատմութիւն Հայոց»-ի մեջ եղած էպիկական նյութերը բաժանում է երկու մասի՝ դիցաբանական կամ դյուցազնական և պատմական կամ պատմա-առասպելական: Առաջինին նա հատկացնում է Հայկի ու Բելի, Արայի ու Շամիրամի, Վահագնի ու Արտավազդի մասին զրույցները, ինչպես նաև այն բոլորը, ինչ վերաբերում է Վիշապազունքին: Այդ զրույցների հիմնական մոտիվները տարերային ուժերի ու երևույթների՝ որոտի ու կայծակի, ամպի ու փոթորկի կերպարների պայքարի մարմնավորումն է պատմական հիշողության շերտանստվածքների հետ:

Պատմա-առասպելական զրույցների շարքն ընդգրկում է 252 տարվա ժամանակաշրջան՝ Արտաշատի հիմնադիր (Ք. ա. 180 թ.) Արտաշեսից ընդհուպ մինչև ալաններին հաղթող Արշակունի Տրդատ I-ը (Ք. հ. 72 թ.): Դրանք խմբավորված են երկու անուների՝ Տիգրանի ու Արտաշեսի շուրջը: Տիգրան Հայկյանի մասին Խորենացու զրույցները պատմիչը քաղել է, ինչպես ենթադրում է Աբեղյանը, ինչ-որ

գրավոր աղբյուրից՝ «Հիւսումն պիտոյից», բայց այդ աղբյուրն՝ ինքը, ստեղծվել է ժողովրդական էրգերի հիման վրա: Դրանց մեջ Տիգրանի անվան ներքո ենթադրվում է ոչ թե Հայկյան Տիգրանը, այլ Տիգրան Մեծը՝ Հռոմի նշանավոր հակառակորդը: Տիգրանի աղմկալից թագավորությունը՝ լի փայլով ու հաղթանակներով, ժողովրդի հիշողության մեջ պետք է որ խորը հետք թողնեին: Նրա մասին հյուսված երգերը Խորենացու օրոք համապատասխանեցվել են Տիգրան Հայկյանի ավելի հեռավոր ժամանակներին: Տիգրանին տված Խորենացու բնութագրության մեջ պ. Արեղյանը նկատում է գծեր, որոնք, ինչպես ինքն է կարծում, համապատասխանում են պատմության արժանահավատ տվյալներին: Ինչ վերաբերում է Արտաշեսի մասին զրույցներին, ապա դրանք փաստորեն ժողովրդական հիշողություններ են Արտաշես I-ի և II -ի ու Տրդատ I -ի մասին: Խնամքով առանձնացնելով պատմական հատիկը առասպելականից՝ պ. Արեղյանը քննության է առնում էպիկական մոտիվները, ընդ որում, լայնորեն օգտվում է ժամանակակից ժողովրդական բանահյուսությունից: Հեղինակին հիանալի ծանոթ այդ բնագավառի վերաբերյալ էքսկուրսներն աշխատանքի լավագույն էջերն են» (տե՛ս «Византийский временник», 1904, № 11, стр. 316-317): - Էջ 312:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՎՈ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

(Պարոն Հաճս Լեվիի մեկ հոդվածին առթիվ)

(Էջ 313)

Գրված է 1936 թ. Բրյուսելում: Լույս է տեսել «Byzantion» հանդեսում (տե՛ս **N. Adontz,** Sur la date de L'Histoire de L'Arménie de Moïse de Chorène», «Byzantion», t. XI, fasc. 1, Bruxelles, 1936, p. 97-100): Արևմտահայերեն թարգմանությամբ տպագրվել է «Սիոն» պաշտոնաթերթում («Սիոն», 1936, № 10, էջ 335-336): Լույս է տեսել նաև արևելահայերեն թարգմանությամբ (տե՛ս **Ն. Ադոնց,** Հայաստանի ոսկեհանքը. Փոքր ուսումնասիրություններ, էջ 93-96): Արտատպվում է «Սիոն»-ի հրատարակությունից:

1. Հաճս Լեվին (1901-1945) գերմանական հայագիտության նշանավոր ներկայացուցիչներից է, աշակերտել է Յո. Մարկվարտին: Հրատարակել է Կեղծ Փիլոնի «Ցաղագս Ցովնանու» երկասիրության հայերեն բնագիրը: - Էջ 313:

2. Տե՛ս **H. Lewy,** The date and purpose of Moses of Choren's History, «Byzantion», t. XI, fasc. 1, Bruxelles, 1936, p. 81-96: - Էջ 313:

3. Տե՛ս **Մովսես Խորենացի,** Պատմութիւն Հայոց (քննական), Գիրք Գ, գլ. 65, էջ 352: - Էջ 313:

4. Ակնարկում է իր «Армения в эпоху Юстиниана» մենագրության 10-րդ գլխում զետեղված նյութը: - Էջ 313:

5. Տե՛ս **Կազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց (քննական), էջ 170: - Էջ 314:

6. Անդ, էջ 175: -Էջ 314:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՊԱՐՈՆ ԼԵՎԻԻ ՆՈԹԻՆ ՄԱՍԻՆ
(էջ 316)

Գրված է 1936 թ. Բրյուսելում: Լույս է տեսել «Byzantion» հանդեսում (տե՛ս **N. Adontz**, A propos de la note de M. Lewy sur Moïse de Chorène», «Byzantion», t. XI, fasc. 2, Bruxelles, 1936, p. 597-599): Արևմտահայ բարգմանությամբ տպագրվել է «Սիոն» ամսագրում (տե՛ս «Սիոն», 1937, № 7, հուլիս, էջ 224-225): Լույս է տեսել նաև արևելահայերեն բարգմանությամբ (տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանի ոսկեհանքը. Փոքր ուսումնասիրություններ, էջ 97-99): Արտատպվում է «Սիոն»-ի հրատարակությունից:

1. Տե՛ս **H. Lewy**, An additional note on the date of Moses of Chorene, «Byzantion», t. XI, fasc. 2, Bruxelles, 1936, p. 593-596: - Էջ 316:

2. **Ն. Ադոնց**, Վասիլ Հայազն (Մենագործ կայսր. 867-886), տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, Ա, էջ 433: - Էջ 316:

3. Տե՛ս նույն տեղում, ծանոթագրությունների բաժին, էջ 584, ծան. 7: - Էջ 316:

4. Ակնարկում է Աշոտ I Բագրատունուն: - Էջ 316:

ԽՈՐԵՆԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ ՀԱՑՐ ՎԱՐԴԱՆ ՀԱՑՈՒՆԻ
(Էջ 319)

Գրված է 1938 թ. Բրյուսելում: Առաջին անգամ լույս է տեսել 1938 թ. «Անահիտ» հանդեսում (տե՛ս «Անահիտ», 1938, № 1-3, էջ 85-87): Ապա վերահրատարակել ենք մենք (տե՛ս **Ն. Ադոնց**, Քննություն Մովսես Կաղանկատվացու, աշխատասիրել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պ. Հ. Հովհաննիսյանը, Ս. Էջմիածին, 2005, հավելված 2, էջ 159-163): Երրորդ անգամ լույս է տեսել Ն. Ադոնցի՝ «Հայաստանի ոսկեհանքը»

ժողովածուում (էջ 100-104): Արտատպվում է «Անահիտ»-ի հրատարակությունից:

1. Սույն գրության առիթ է ծառայել հետևյալը: «Անահիտ» ամսագրի խմբագիր Ա. Չոպանյանը հատուկ ուշադրությամբ դիմել է Ադոնցին կարծիք հայտնելու Մովսես Կաղանկատվացու խնդրին նվիրված Մխիթարյան միաբան Վ. Հացունու տեսակետների վերաբերյալ: Ադոնցը Չոպանյանին պատասխանել է սույն գրությամբ, որը լույս տեսավ «Անահիտ»-ում: Վ. Հացունին հանդես եկավ «Կաղանկատվացիին կապերը է դարուն» (տե՛ս «Բազմավեպ», 1938, № 10-12, էջ 268-277) ընդդիմախոսականով: Այդ հոդվածի առիթով է, որ Ն. Ադոնցը գրել է իր «Քննություն Մովսես Կաղանկատվացու» ուսումնասիրությունը: - էջ 319:

ՂԵՎՈՆԴ ԵՎ ԽՈՐԵՆԱՑԻ
(Քննություն հայր Ն. Ակինյանի տեսության)
(էջ 323)

Գրված է 1933 թ. Բրյուսելում: Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1933, 11-րդ տարի, № 8, էջ 79-90, № 9, էջ 120-126): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ղևոնդի Պատմության խորագրի հարցը շարունակում է մնալ խնդրական: Պատմության առաջին հրատարակիչ Կ. Շահնազարյանցը այն խորագրել է «Արշավանք արաբաց ի Հայս» (Փարիզ, 1857, նույնը և ֆրանսերեն թարգմանությամբ, Paris, 1856), Զ. Պատկանյանը՝ «Խալիֆների պատմություն» (ռուսերեն թարգմանություն, Ս. Պետերբուրգ, 1862), Մտ. Մալխասյանցը՝ «Պատմութիւն Ղևոնդեայ Մնձի վարդապետի Հայոց» (Ս. Պետերբուրգ, 1887), Ա. Տեր-Ղևոնդյանը (աշխարհաբար թարգմանություն, Երևան, 1982) և Զ. Արզումանյանը (անգլերեն թարգմանություն, Philadelphia, 1982)՝ «Պատմություն»: Կարծում ենք, որ Ադոնցի առաջարկած տարբերակը՝ «Վարդապետի Ղևոնդի ժամանակագիրք տանս Թորգոմայ», արժանի է առավել լուրջ ուշադրության: - էջ 326:

2. Այնուհանդերձ, ուսումնասիրողները շարունակում են մնալ այն կարծիքին, որ Ղևոնդի Պատմության սկիզբը վնասված է (տե՛ս **Ղևոնդ**, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 11): - էջ 328:

3. Ակնարկում է Հռոմի կայսր Տրայանոսի կարգադրությամբ, Հայոց թագավոր Պարթամասիրի սպանությունը (114 թ.): - էջ 330:

4. «Ոդր»-ի վերջին լավագույն վերլուծությունը պատկանում է Գ. Խ.

Սարգսյանին (տե՛ս **Գ. Խ. Սարգսյան**, Մովսես Խորենացու Ողբը նոր մեկնաբանությամբ, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, №1, էջ 119-130): - Էջ 341:

5. Այլ կապակցությամբ արդեն նշել ենք, որ Ն. Ադոնցը վերջնական չէր համարում իր այս տեսակետը և գտնում էր, որ ապագայում Խորենացու բնագրի ավելի մանրամասն քննությունը կարող է նոր մեկնաբանությունների ու եզրակացությունների տեղիք տալ: - Էջ 351:

ՓՈՔՐ ՍՈԿՐԱՏԻ ՀԵՂԻՆԱԿԸ
(Էջ 352)

Գրված է 1936 թ. Բրյուսելում: Լույս է տեսել «Սիոն» պաշտոնաթերթում (տե՛ս «Սիոն», 1936, № 10, էջ 300-304): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Թերևս ակնարկում է 1931 թ. Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանի վերաբերյալ «Ցառաջ» և մամուլի այլ օրգաններում տպագրված վարկաբեկիչ հոդվածները: Հոդվածներում շեշտվում էր այն հանգամանքը, թե իբր Մեսրոպ սրբազանը խորհրդային գաղտնի ծառայությունների գործակալ է: Հայտնի է, որ այս, ինչպես նաև այլ կեղծ մեղադրանքների հիման վրա, պարսկական իշխանությունները 1931 թ. հոկտեմբերի 30-ին Մեսրոպ սրբազանին վտարել են Պարսկաստանից, որով թեմը զրկվեց իր բարեխնամ առաջնորդից (տե՛ս «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», Գիրք Բ. Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոս Ամենայն Հայոց, կազմեց Ս. Քեհրուզյան, Երևան, 1996, էջ 313-315): - Էջ 352:

2. Գագիկ II-ի ատենաբանության լրիվ բնագիրը («Հարկ եղև մեզ և ի խնդիր») բերել է Մատթեոս Ուռհայեցին (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, էջ 163-178): - Էջ 353:

3. Փոքր Սոկրատի բնագրի թարգմանության ժամանակի և հարակից խնդիրների մասին հետաքրքրական են Նորայր Բյուզանդացու («Տեղեկութիւնք ի Մեծ և ի Փոքր Սոկրատայ Պատմութիւնս Եկեղեցւոյ», հրատ. Մ. Մինասյան, «Հանդես ամսօրյա», 1983, էջ 369-374), Ն. Ակինյանի («Փոքր Սոկրատ և Մովսես Խորենացի», «Հանդես ամսօրյա», 1948, № 3-6, էջ 173-190), «The Armenian Adaptation of the Ecclesiastical History of Socrates Scholasticus [commonly known as «the Shorter Socrates»]. Translation of the Armenian Text and Commentary by Robert W. Thomson. Peeters: Hebrew University, Armenian Studies 3» (Leuven-Paris-Sterling, VA 2001), М. Ширинян, Краткая редакция древнеармянского перевода Церковной истории Сократа Схоластика. [«Византийский временник», 43 (1982), стр. 231-241] ուսումնասիրությունները: - Էջ 359:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑՈՒ
(էջ 360)

Գրված է 1938-1940 թթ., Բրյուսելում: Աշխատանքի առաջին մասը (աստ, էջ 360-409) լույս է տեսել «Անահիտ» հանդեսում («Անահիտ», Փարիզ, 1939, № 3, էջ 69-77, № 4-5, էջ 22-31, № 6, էջ 4-9: 1940, № 1-3, էջ 21-29): Երկրորդ մասը (աստ, էջ 409-418) լույս չի տեսել՝ Փարիզի գերմանական ռազմակալման պայմաններում «Անահիտ» ամսագրի ընդհատման պատճառով: Լույս չտեսած հատվածը պահպանվում է «Անահիտ»-ի արխիվում, որն այժմ գտնվում է Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի Ա. Չոպանյանի ֆոնդում (տե՛ս ՉԳԱԹ, Արշակ Չոպանյանի ֆոնդ, VI, «Անահիտ»-ի, բաժին, II մաս, № 6): Երրորդ մասը (աստ, էջ 418-483) գտնվում է Համազգայինի Քեյրութի գրական պահոցի Ն. Աղոնցի թղթուճում (տե՛ս Ն. Աղոնցի ֆոնդ, պահարան I, գզրոց Բ, թղթածրար 1, թ. 72-144): Աշխատությունն առաջին անգամ ամբողջությամբ հրատարակել ենք մենք (տե՛ս **Ն. Աղոնց, Քննություն Մովսես Կաղանկատվացու, Ս. Էջմիածին, 2005**): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Տե՛ս նաև սույն հատորը, էջ 319-322 : - Էջ 360, ծան. 2:

2. Տե՛ս «Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն և Պատմութիւն վարուց Սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսի Հռոմայ», հատ. Ա-Բ, աշխատասիրությամբ՝ Մեսրովպ վ. Տեր-Մովսիսյանի, Վաղարշապատ, 1897: - Էջ 363:

3. Հոդվածում սխալմամբ նշված է 1932: Աղոնցի այդ աշխատությունը տե՛ս նաև սույն հատորում, էջ 323-351: - Էջ 368, ծան. 1:

4. Մովսես Խորենացու ժամանակի և գործի վերաբերյալ Ն. Աղոնցի տեսակետների քննությունը տե՛ս մեր «Մովսես Խորենացի և Նիկողայոս Աղոնց» ուսումնասիրությունը, «Հայոց պատմության հարցեր», Գիտական հոդվածների ժողովածու, № 6, Երևան, 2005, էջ 307-316: - Էջ 369:

5. Խոսքը Բ. Սարգիսյանի աշխատասիրությամբ լույս տեսած «Անանուն ժամանակագրութիւն». խմբագիր յօրինեալ յէ դարու» (Վենետիկ, 1904) բնագրի մասին է, որը հայագիտության մեջ հայտնի է նաև «Գիրք կայսերաց» վերտառությամբ: - Էջ 375, ծան.:

6. Ակնարկում է հայագետ Սուքիաս վարդապետ Պարոնյանին (1831-1903): Ս. Պարոնյանը հայտնի է Մովսես Խորենացուն նվիրված իր ուսումնասիրություններով և հատկապես «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. ուղ-

ղագրեալ և ծանոթագրեալ» հոդվածաշարով (տե՛ս «Բանասեր», ամսագիր, Փարիզ, 1899, հատ. Ա, պրակ 1-4: 1900, հատ. Բ, պրակ 4: 1903, հատ. Ե, պրակ 6-7): - Էջ 376, ծան. 2:

7. Նկատի ունի Կարապետ վարդապետ Շահնազարյանցի (Փարիզ, 1860) և Սկրտիչ Էմինի (Մոսկվա, 1860) հրատարակությունները: - Էջ 384:

8. Այլ կապակցությամբ Ն. Ադոնցն իրավացիորեն տարակուսում է. «Ի՞նչ եղավ Զառմիհրի սերունդը, հայտնի չէ» (տե՛ս **Ն. Ադոնց,** Երկեր, Ա, էջ 509):- Էջ 388:

9. Ավելի վերև (աստ, էջ 390) ակնարկը պարսիկ զորավարի ոչ թե քրոջ, այլ դստեր մասին է: Մովսես Կաղանկատվացու մոտ խոսքը գնում է զորավարի քրոջ մասին (տե՛ս **Մովսես Կաղանկատվացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 176): - Էջ 394:

10. Բնագրի այս էջի մոտ կեսը չի պահպանվել: - Էջ 409:

11. «Մնացյալը», որ նվիրված էր Կաղանկատվացու Պատմության Բ գրքի ԻԹ-ԼԵ գլուխների վերլուծությանը (Ադոնցի ձեռագրով 15 էջ) 1940 թ. «Անահիտ»-ի ընդհատման պատճառով լույս չի տեսել: Բարեբախտաբար այն պահպանվել է «Անահիտ» ամսագրի արխիվում (տե՛ս Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան, Արշակ Չոպանյանի ֆոնդ, VI, «Անահիտ»-ի թաժին, II մաս, № 6): - Էջ 409:

12. Այստեղ ավարտվում է Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանում պահպանվող հատվածը: - Էջ 418:

13. Այստեղից սկսվող հետագա ամբողջ շարադրանքը 1992 թ. հայտնաբերել ենք մենք Համազգայինի Բեյրութի գրական պահոցի Ն. Ադոնցի թղթոնում (տե՛ս Պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գզրոց Բ, թղթածրար 1, թ. 72-144): Այս և հետագա գլխահամարակալումները պատկանում են մեզ՝ հետևելով Ն. Ադոնցին, որ նախորդ չորս հատվածները համարակալել էր՝ Ա, Բ, Գ, Դ: - Էջ 418:

14. Խոսքը անանուն «Narratio de rebus Armeniae» («Պատմություն Հայաստանի իրադարձությունների մասին», հայ-քաղկեդոնական փոքրաթվավալ երկասիրության մասին է (տե՛ս աստ, էջ 607, ծան. 3): - Էջ 422:

15. Ակնարկն ուղղված է հ. Վ. Հացունուն: - Էջ 426:

16. Հյուսիսային Կովկասի ժողովուրդների (հոների, խազարների) հետ հայերի որդեգրած հարաբերությունների վերաբերյալ հետագա ուսումնասիրություններից անդրադարձել է մասնավորապես U. S. Երեմյանը (տե՛ս **С. Т. Еремян**, Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу, «Записки института востоковедения АН СССР», Л., 1939, т. 7, стр. 129-155): - Էջ 430:

17. Տե՛ս **Լ. Ալիքսան-Քեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա (Ե-ԺՔ դար), Երևան, 1934, էջ 47: Հմմտ. **Migne**, PG., t. 132, col. 1253: - Էջ 435:

18. Հետաքրքիր է նշել, որ Վրթանես Քերթողի «Ցաղագս պատկերամարտաց» բնագրի այդ հատվածների ընդօրինակությունները պահպանվում են Աղոնցի բեյրության թղթոնում (տե՛ս պահարան Ա, գզրոց Բ, թղթածրար Ա/Ա 8, թ. 1-10): - Էջ 440, ծան. 1:

19. Ե. Սմբատյանի կարծիքով, այս աղավաղումը հետևանք է ոչ թե կեղծիքի կամ դիտավորյալ միջամտության, այլ՝ գրչական սխալի (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1, էջ 187): - Էջ 441:

20. Գրիգոր Բակուրյանի «Տիպիկոն»-ի ռուսերեն նոր թարգմանությունը ծանոթագրություններով և ուսումնասիրությամբ տե՛ս «Типик Григория Пакуриана», введение, перевод и комментарий В. В. Арутюновой-Фиданян, Ереван, 1978: - Էջ 455, ծան. 1:

21. Խոսքը VIII դ. կեսերին ապրած Երաշխավոր վանքի վանահայր Արտավազդի (Աբրահամ) մասին է, որը հյուրընկալեց Վահան Գողթնեցուն նրա թափառումների ժամանակ: Վահանի նահատակությունից յոթ տարի անց Արտավազդը հեղինակեց նրա վկայաբանությունը: - Էջ 463, ծան. 3:

22. Այլ կապակցությամբ Ն. Ադոնցը Սմբատ Բագրատունու մահվան թվական է համարում 727 թվականը (տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, Ա, էջ 289):- Էջ 465:

23. Իրոք, այս հատվածը տեղ է գտել Վ. Առաքելյանի պատրաստած Կաղանկատվացու 1983 թ. քննական հրատարակության համապատասխան բաժնում (էջ 329-331):- Էջ 478:

24. Մեկ այլ առիթով Ն. Ադոնցը հստակորեն մատնանշում է Սահլ Սմբատյանի Բագրատունյաց ծագումը. «Կաղանկատվացու խոսքը, թե Սահլ Եռանշահիկ և կամ Ջառմիհրական տոհմից էր, արժեք չունի: Սահլի հոր Սմբատ անունը, որ զուտ Բագրատունի է, հաստատում է նրա ծագումը» (տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, Ա, էջ 509): - Էջ 479:

25. Չեռագիրն այստեղ ընդհատվում է. ենթադրում ենք, որ Ն. Ադոնցն հասել է Քննության ծրագրված եզրին: Պատմաբանի թղթոնի թղթածրարներից մեկում (պահարան I, գզրոց Բ, թղթածրար 1) առկա է Մովսես Կաղանկատվացու Պատմության Առաջին գրքի Ա-Գ գլուխների քննությանը նվիրված սևագիր-աճավարտ մի ուսումնասիրության սկիզբ (ընդամենը վեց էջ): Այդ հատվածը տե՛ս **Ն. Ադոնց**, Քննություն Մովսես Կաղանկատվացու, էջ 149-158: - Էջ 483:

ՓՂՈՍԿՐՅԱ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ
(էջ 484)

Գրված է 1936 թ. Քրյուսելում: Լույս է տեսել Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության «Սիոն» պաշտոնաթերթում (տե՛ս «Սիոն», 1936, № 9, էջ 273-274):

Գրության շարժառիթ է ծառայել արվեստաբան Սիրարփի Տեր-Ներսեսյանի հոդվածը՝ նվիրված 989 թ. Էջմիածնի Ավետարանի մանրանկարների թվականի խնդրին (տե՛ս «The date of the intial Miniatures of the Etchmiadzin gospel», «Art Bulletin», 1933, vol. XV, № 4, տե՛ս նաև սույնի հայերեն թարգմանությունը՝ **Ս. Տեր-Ներսեսյան,** Հայ արվեստը միջնադարում, ժողովածու, Երևան, 1975, էջ 31-55):

Արտատպվում է «Սիոնի» հրատարակությունից:

Սույն գրությունը «Սիոն»-ում Ադոնցի տպագրած առաջին աշխատությունն էր, ուստի խմբագրությունն այդ ուրախառիթ հանգամանքի կապակցությամբ հոդվածի սկզբում կատարել է հետևյալ ծանոթությունը. «Սիոն» ինքզինքը պատվված կզգա՝ հյուրընկալելով բազմահմուտ պրոֆ. Ն. Ադոնցի հետևյալ արժեքավոր էջերը և հույս կտածե, թե այսուհետև իր հայագիտական բաժինը նոր փայլ մը պիտի ստանա մեծանուն բանասերին ուսումնասիրություններով, րուն իսկ իր կողմե հայերեն գրված կամ իր՝ ուրիշ լեզուներով գրվածներեն հայերենի վերածված»: Ինչպես կանխատեսել էր խմբագրությունը, Ն. Ադոնցը գործուն աշխատակցություն ցուցաբերեց «Սիոն»-ին՝ 1936-1939 թթ. այստեղ տպագրելով 10 ուսումնասիրություններ:

1. Ցո. Ստրժիգովսկին խնդրո առարկա Ավետարանի գրության թվականին անդրադարձել է «Das Etschmiadzin-Evangeliar. Beiträge zur Geschichte der armenischen, ravennatischen und syro-ägyptischen Kunst», տե՛ս «Byzantinische Denkmäler», I, Wien, 1891, ուսումնասիրության մեջ: - Էջ 484:

2. Տե՛ս **F. Macler,** L'Evangile arménien. Edition phototypique du manuscrit № 299 de la bibliothèque d'Etchmiadzin, Paris, 1920. - Էջ 484:

3. Ն. Ադոնցը գրախոսել է նաև Ս. Տեր-Ներսեսյանի՝ «Manuscrits arménien iliustrés des XII^{e}, XIII^{e} et XIV^{e} siécles de la bibliothéque des pers Mekhitaristes de Venice», Paris, 1937, ուսումնասիրությունը, որը սակայն մնացել է անտիպ (տե՛ս Համազգայինի Թեյրութի գրական պահոց, Պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան Բ/Ա 8, թ. 1-4): - Էջ 484:

4. Հիշատակարանները տե՛ս Գ. Հովսեփյանց, Հիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, էջ 155-156: - Էջ 484:

5. Տե՛ս ատտ, էջ 487-489:- Էջ 486:

ՄԼՔԵԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆ
(Էջ 487)

Գրված է 1936 թ. Բրյուսելում: Լույս է տեսել Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության «Սիոն» պաշտոնաթերթում («Սիոն», 1936, № 9, էջ 274-275): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու (908-943) կնոջ՝ Մլքե թագուհու Ավետարանի մասին մանրամասն տե՛ս «Զարդանկարք Աւետարանի Մլքէ թագուհւոյ», հրատարակությունը (Վենետիկ, 1902): Ձեռագրի հիշատակարանները տե՛ս **Գ. Հովսեփյանց,** Ցուցակ ձեռագրաց, հատ. Ա, էջ 109-110: - Էջ 487:

2. Լազարյան ճեմարանի Ավետարանը հատակ թվագրվում է 887 թվականով (տե՛ս **Ա. Մաթևոսյան,** Լազարյան ճեմարանի հնագույն ձեռագիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1, էջ 123-132): Արդի հայագիտությունը ավետարանը համերաշխվում է Ն. Առոնցի տեսակետի հետ և ընդունում, որ Մլքե թագուհու Ավետարանը գրված է 862 թվականին: - Էջ 489:

ՇԱՀՆԱՍԵԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՎԱՆԴԸ
(Էջ 490)

Գրված է 1935 թ. Բրյուսելում: Տպագրվել է «Ցուսաբեր» օրաթերթում (տե՛ս «Ցուսաբեր», օրաթերթ քաղաքական, հասարակական, գրական, Կահիրե, 1935, 6 հուլիսի, № 81, էջ 3): Վերահրատարակել ենք մենք (տե՛ս «Իրան Նամե»), Գիտամշակութային, հասարակական-քաղաքական հանդես, Երևան, 1994, № 1, էջ 4-5): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. 1935 թ. լրացավ պարսիկ ականավոր բանաստեղծ Արուլ Ղասըմ Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակը: Ֆիրդուսին ծնվել է մոտ 935 թ. Խորասանի Թուս քաղաքում: Ճանաչված բանաստեղծ էր, երբ 976 թ. պատվեր ստացավ հանգերգելու արձակ Շահնամեն («Գիրք թագավորաց»): Ֆիրդուսին աշխատանքն ավարտել է 1010 թ., որից քիչ անց՝ 1020 թվականին, մահացել է Թուս քաղաքում: Համաշխարհային գրական հասարակայնությունը հարգանքի տուրք մատուցելով մեծ գրողի հիշատակին՝

պատշաճ հանդիսավորությամբ նշեց նրա ծննդյան 1000-ամյակը: - Էջ 490:

2. Խոսելով իր օրերի Իրանի Փահլավիների թագավորական հարստության մասին, Ադոնցը բնավ նպատակ չի հետապնդել գովերգելու շահական վարչակարգը, այլ դրսևորել է կոնցեպտուալ պատմական մոտեցում, ընդգծելով ի դեմս այդ հարստության, որ կրում էր Փահլավի անունը, իրանականության զարթոնքը երկրում, իրանական պատմական և մշակութային արժեքների վերծանումը XX դարի սկզբին: Ականավոր պատմաբանը խորհում էր պատմական կատեգորիաներով, երբեք տուրք չտալով ժամանակի կոնյունկտուրային: - Էջ 493:

3. Հայ իրականությունը ևս լայնորեն արձագանքել է այդ իրադարձությանը: 1934 թ. Երևանում Կուլտուրայի պատմության ինստիտուտը լույս ընծայեց բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված հատուկ ժողովածու, որն ամփոփում էր վեց ուսումնասիրություն: Լույս տեսան նաև Ռ. Աբրահամյանի («Ֆերդովսին և իր Շահնամեն», Թեհրան, 1934), Ա. Սարուխանի («Ֆիրդուսի և Մովսես Խորենացի», Վիեննա, 1936) և այլոց ուսումնասիրությունները, կատարվեցին նոր թարգմանություններ (Ս. Տարոնցի, Մ. Թիրաքյան), կազմակերպվեցին գրական երեկոներ և այլն: - Էջ 494:

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՑԻ

Ի մասին Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանի «Հոգևոր կեղրոններ և Գլաձորի բարձր դպրոցը» ուսումնասիրության

(Էջ 495)

Գրված է 1936 թ. հուլիսի 18-ին Բրյուսելում: Առաջին անգամ լույս է տեսել «Սիոն» պաշտոնաթերթում (տե՛ս «Սիոն», 1936, № 12, էջ 366-372): Այնուհետև հրատարակվել է Գ. Հովսեփյանցի՝ «Խաղրակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ» ուսումնասիրության Գ հատորում (Նյու-Յորք, 1942-1943, էջ ԺԵ-ԻԴ): Երրորդ անգամ լույս է տեսել «Խաղրակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ» ուսումնասիրության երկրորդ, ամբողջական հրատարակության մեջ (Անթիլիաս-Բեյրութ, 1969, էջ 462-466): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ն. Ադոնցի Տեղեկագիրն ուղղված է Երուսաղեմի Հայոց պատրիարք Թորգոմ արքեպ. Գուշակյանին (1874-1939)՝ ի պատասխան վերջինիս հանձնարարության: Ն. Ադոնցի և Թ. Գուշակյանի հարաբերությունների մասին որոշ պատկերացում կարող է տալ մեր հետևյալ հրապարակումը (Պ. Հ. Հովհաննիսյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան և պրոֆեսոր Նիկողայոս Ադոնց, տե՛ս, «Հասկ-հայագիտական տարեգիրք», հատ. Է-Ը, Բեյրութ, 1995 -1996, էջ 467-477): - Էջ 495:

2. «Խաղրակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ» ուսումնասիրությունը բաղկացած է երեք մասերից, որոնցից առաջինը լույս է տեսել Վաղարշապատում (1928), երկրորդը՝ Երուսաղեմում (1944), երրորդը՝ Նյու-Յորքում (1942-1943): Այստեղ խոսքը գնում է երրորդ մասի ձեռագրի վերաբերյալ, որը ժամանակին ներկայացվել է «Թարգմանչաց-Դուրյան» մրցանակին (1935-1936 թվականների համար) և որը Թորգոմ պատրիարքը ուղարկել է Ն. Ադոնցին՝ կարծիքի: Այս «Քննական տեղեկագիրը» հենց Ն. Ադոնցի կարծիքն է Գ. Հովսեփյանցի խնդրո առարկա աշխատության վերաբերյալ: Հատկանշական է, որ Գ. Հովսեփյանցի աշխատության վերաբերյալ երկրորդ Տեղեկագիրը գրել է ինքը՝ Թորգոմ պատրիարքը: - Էջ 495:

3. Խաչատուր Կեչառեցի, Ողբ վասն աւերման Տաճս Արեւելեաց, տե՛ս **Մ. Ֆ. Ակդոնթեզյան,** Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958, էջ 131-132: - Էջ 496:

4. Տե՛ս «Ողբ եւ մաղթանք ի Խաչատուր Կեչառեցոյ ասացեալ», անդ, էջ 141: - Էջ 498:

5. Հովհաննես վարդապետ Գառնեցու (մոտ 1180-1245) Խրատները հիմնականում անտիպ են և գտնվում են Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի տարբեր ժողովածուներում: Բերված հատվածը քաղված է «Խրատ հոգեշահ ամենայն մարդոյ, մանաւանդ ժամարարի, ի խնդրոյ Սարգիս քահանայի» ընագրից (Տե՛ս **Գ. Հովսեփյան,** նշվ. աշխ., Անթիլիաս-Բեյրութ, էջ 207): - Էջ 498:

6. Տե՛ս **Սիմեոն Երևանցի,** Ճամբո, Վաղարշապատ, 1873, էջ 283: - Էջ 499:

7. Այս արձանագրությունների նորագույն հրատարակությունը տե՛ս «Դիվան հայ վիմագրության», հատ. III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 82: - Էջ 501:

8. Ն. Ադոնցն ու Գ. Հովսեփյանցը հոգեհարազատությամբ էին կապված միմյանց դեռևս Գևորգյան ճեմարանում համատեղ սովորելու տարիներից (1882-1891): Նրանց հարաբերությունների մասին տե՛ս մեր հրապարակումը (**Պ. Հ. Հովհաննիսյան,** Երկու գագաթ. Գարեգին արքեպ. Հովսեփյանց և պրոֆ. Նիկողայոս Ադոնց, տե՛ս «Հասկ-հայագիտական տարեգիրք», Ջ տարի, Բեյրութ, 1994, էջ 339-352): - Էջ 503:

«ԴԱՎԻԹ ԲԵԿ» ՎԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄԸ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

(Էջ 504)

Գրված է 1937 թ. Բրյուսելում: Առաջին անգամ տպագրվել է «Րաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան). Կյանքը, գրականությունը, հիշողություններ» ժողովածուում (Փարիզ, 1937, էջ 122-148): Երկրորդ անգամ լույս է տեսել

Ն. Ադոնցի՝ «Հայկական հարց» ժողովածուում (Երևան, 1996, էջ 180-201): Արտատպվում է առաջին հրատարակությունից:

1. Ակնարկում է Րաֆֆու ծննդյան 100-ամյակը, որը լրացել էր 1935 թ.: Ա. Չոպանյանի գլխավորությամբ Փարիզում ստեղծվել է Կենտրոնական հոբելյանական հանձնաժողով, որը 1937 թ. հոկտեմբերի 31-ին կազմակերպել է մեծաշուք հանդես, ստաշրջան և քիչ ուշ՝ հրատարակել հատուկ ժողովածու: Ադոնցի հոդվածը գրվել է այդ առթիվ: Տե՛ս նաև Ադոնցի սույն հոդվածի գրախոսականը (**Ա. Աբեղյան**, «Հայրենիք», ամսագիր,1938, մարտ, № 5, էջ 172-173): - Էջ 504:

2. Խոսքը ազգային-եկեղեցական գործիչ, բանասեր Ներսես արքեպ. Մելիք-Թանգյանի (1866-1948) մասին է: Եղել է Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ (1912-1948): Ն. Մելիք-Թանգյանը Ադոնցի հայրենակիցն էր. հատկանշական է, որ նրանք միաժամանակ են սովորել և՛ Գևորգյան ճեմարանում և՛ Պետերբուրգի համալսարանում: - Էջ 504, ծան. 1:

3. Երկասիրության խորագիրը տրված է փոքր-ինչ եղծված. ճիշտն է՝ «Դաւիթ Բէգ. Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին, եւ պատերազմացն Հայոցն Խափանու որք եղեն ընդդէմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722, եւ Հայոց 1171» : - Էջ 505:

4. Արդյո՞ք ակնարկում է հայ ազատագրական շարժման ակաճավոր գործիչ, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանին, որն, ինչպես հայտնի է, որևէ աղերս չունի «Ընտիր պատմութեան» հեղինակի հետ: - Էջ 505:

5. Ղուկաս Սեբաստացու և ընդհանրապես «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին» երկասիրության բնագրի, հեղինակի և հարակից պարագաների մասին ընդարձակորեն տե՛ս **Ե. Փեշիկյան**, «Դավիթ Բեկ»-ի պատմության աղբյուրները և Մխիթարյանը («Բազմավեպ», 1938, № 6-9, էջ 172-187): **Մ. Աբեմյան**, «Դավիթ Բեկ կամ «Պատմութիւն Վաչիանցւոց» («Բազմավեպ», 1972, № 2-3, էջ 232-259: 1977, № 1-2, էջ 298-324: Նույնի՝ «Դավիթ Բեկի պատմության հեղինակ ի. Ղուկաս Սեբաստացի Ստեփանյան (1709-1752)», տե՛ս «Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Վաչիանցւոց», Վենետիկ, 1978, էջ 183-193: **Մ. Աբեմյան**, Հ. Ղուկաս Սեբաստացի (1709-1752) հեղինակ Դավիթ Բեկի պատմության («Բազմավեպ», 1972, № 4, էջ 491-501) և այլն: - Էջ 506:

6. Ըստ Ղ. Ալիշանի, Ստեփաննոս Շահումյանը և Ռոզալդա Մարիամ-Վարվառեն ունեցել են որդի՝ Հովհաննես-Աստոն (ծն. 1748 թ.) և դուստր՝ Մարթա (ծն. 1749 թ.) (տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 301): - Էջ 506:

7. Ակնհայտ վրիպակ է: Ն. Ադոնցը այս թվականը բերում է հետևելով Ղ. Ալիշանին (տե՛ս **Ղ. Ալիշան**, անդ, էջ 301): Սակայն ավելի վաղ Մ. Ավգերյանը Ս. Ղազարի Մեծ ժամանակագրության մեջ (հատ. Ա, էջ 88) ճշտել է, որ Ղուկաս

Սեբաստացին մահացել է 1752 թ. սեպտեմբերի սկզբներին՝ Տիգրանակերտից ոչ հեռու՝ Առիճ գյուղի մոտ: - Էջ 506:

8. Այս թվականը ևս վրիպակ է: Ս. Արամյանի ուսումնասիրությունից ակներև է, որ Ղուկաս Սեբաստացին Շահումյանի և մյուս ականատեսների պատմությունները վերջնականապես խմբագրել է 1736-1737 թվականներին (տե՛ս «Պատմութիւն Ղափանցւոց», էջ 186): - Էջ 506:

9. Ինչպես վաղուց նկատել են ուսումնասիրողները, «շահնավազը» ոչ թե անձնանուն է, այլ տիտղոս, որ տրվում էր պարսից շահի կողմից վրաց թագավորին և թառացի թարգմանությամբ նշանակում էր «Ընդհանուր զորահրամանատար»: - Էջ 506:

10. Ա. Գյուլամիրյանցի մոտ այլ կերպ է՝ «Եւ յետ քանի աւուրց Սափիխուլին՝ Ղազա որդին Օրդուվարեցի, եւ որդին Շահիսլամին» (տե՛ս **Ա. Գյուլամիրյանց**, էջ 26, հմմտ. նաև **Ս. Արամյան**, էջ 126): Ուրեմն Սափի Ղուլին օրդուարցի Ղազու որդին էր և ոչ թե մեկ ուրիշը, ինչպես ներկայացնում է Ն. Ադոնցը: - Էջ 509:

11. «Մի տարի անցած», այսինքն՝ 1725 թվին: Իրականում, սակայն, օսմանցիները Երևանը պաշարել են մեկ տարի առաջ՝ 1724 թվին: - Էջ 510:

12. Պատմագրության մեջ այն կարծիքն է տիրապետում, թե ավյալ կոնտեքստում խոսքն իրոք վերաբերում է Վախթանգ VI -ի (1716-1724) որդի արքայազն Բակարին: Որ Բակարը կոչվել է «շահնավազ» ակներև է Աղվանից Եսայի և Ներսես կաթողիկոսների՝ ռուսաց արքունիկին հղված 1725 թ. հուլիսի 25-ի գրությունից. «Ապա Վախտանկ խանին եւ կամ իւր որդի Շահնաւազ խանին հրամաւ լինի զօրօք գալ ի Շամախի» (տե՛ս **Г. Эзов**, Сношение Петра Великого с армянским народом, СПб., 1898, стр. 423): Թեև կարծիք կա նաև, որ Դավիթ Բեկին Սյունիք ուղարկողը նղել է հենց Վախթանգ VI -ը (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հատ. 4, Երևան, 1972, էջ 164 և այլն): - Էջ 513:

13. Ակնարկում է Պետրոս Մեծի բանագնաց իշխան Տուրկեստանովի միջոցով Վախթանգ VI -ին հղված նամակը (տե՛ս «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, ч. II, Ереван, 1967, վավ. 165, էջ 7-13): - Էջ 514:

14. Վրիպակ է՝ պաշարված Երևանը օսմանցիներին անձնատուր է եղել 1724 թ. սեպտեմբերի 26-ին (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 4, էջ 157): - Էջ 517:

15. Տե՛ս **Ն. Ադոնց**, Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը, «Հայրենիք», ամսագիր, 1937, № 2, էջ 66-72: Նույնը տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, Ա, էջ 547-555: - Էջ 517, ծան. 1:

16. Խոսքը Կախեթի թագավոր Մամադկուլիխանի (Կոստանդինե) մասին է: - Էջ 518:

17. Ակնարկը վերաբերում է ֆիդայական-հայդուկային շարժմանը: - Էջ 528:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՎԱԽՃԱՆԸ
(Էջ 530)

Գրված է 1933 թ. ամռանը Բրյուսելում: Առաջին անգամ տպագրվել է «Վեմ» հանդեսում (տե՛ս «Վեմ», հանդես մշակույթի և պատմության, Գիրք Ա, սեպտեմբեր-հոկտեմբեր, Փարիզ, 1933, էջ 5-13): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Ա. Բակունցի գրքի լրիվ վերնագիրն է՝ «Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը»: Արխիվային նոր վավերագրերի և անհայտ նամակների հիման վրա գրեց Ակսել Բակունց: Պետական հրատարակություն, Երևան, 1932»: - Էջ 530:

2. Ակնարկում է 1848 թ. Փետրվարյան ֆրանսիական հեղափոխությունը: - Էջ 530:

3. Խոսքը Երևանի գավառապետ Ն. Վ. Թլավատսկու և ոստիկանապետ Մորոխովցի մասին է: - Էջ 530:

4. Նկատի ունի Խ. Աբովյանի հաջորդին՝ Երևանի գավառական դպրոցի տեսչի ժամանակավոր պաշտոնատար Ի. Դ. Տուրկեստանովին: - Էջ 531:

5. Այդ ժամանակ Կովկասի փոխարքան էր կոմս Մ. Ս. Վորոնցովը: - Էջ 532:

6. Աբովյանագետները մեծ գրողի կյանքում բավականին բացասական դեր են հատկացնում Ստ. Դ. Վեքիլովին (1810-1859): Կան նաև փաստեր, որ վերջինս ծածկաբար յուրացրել էր Աբովյանի ունեցվածքը: - Էջ 533:

7. Իրոք, Հ. Արիխն (1806-1886) ու Խ. Աբովյանը 1844 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին երեք փորձ են կատարել բարձրանալ Մասիսի գագաթը, սակայն չեն կարողացել: Արիխը, առանց Աբովյանի ուղեկցության, Մասիսի գագաթը հաղթահարել է 1845 թ. հուլիսի 29-ին: Իսկ Աբովյանը, անգլիացի Հ. Սեյմուրի ուղեկցությամբ, լեռան կատարն է հասել 1846 թ. սեպտեմբերի 18-ին (տե՛ս «Դիվան Խաչատուր Աբովյանի», հատ. I, Երևան, 1940, էջ 170-171): Աբովյանի ձեռնարկած Մասիսի վերելքների մասին մանրամասն տե՛ս Պ. Հ. Հակոբյանի՝ «Վերելք» ուսումնասիրությունը (Երևան, 1982): - Էջ 534:

8. Գերմանացի գրող Ֆ. Բոդենշտեդտը (1819-1892) դասավանդել է Թիֆլիսի ուսումնական հաստատություններում (1844-1845), շրջագայել Անդրկովկասում: Մտերմացել է Աբովյանի հետ և վերջինիս օգնությամբ գերմաներեն թարգմանել հայկական ժողովրդական մի քանի երգեր: Աբովյանն ու Բոդենշտեդտը ունեցել են նամակագրական կապ: Հետաքրքրությունից զուրկ չեն Ֆ. Բոդենշտեդտի հուշերը Խ. Աբովյանի մասին (տե՛ս **Ֆրիդրիխ Բոդենշտեդտ,** Խաչատուր Աբովյանի մասին,

«Հայրենիք», ամսագիր, Բոստոն,1927, № 5): - Էջ 535:

9. Արովյանի անհետացման այս վարկածը չափազանց տարածված է եղել և շարունակում է մնալ: Դեռևս Ադոնցի հոդվածի տպագրության օրերին՝ «X» ծածկանունով մեկը նույն «Վեմ»-ում լույս ընծայեց «Արովյանի մահվան շուրջ» հոդվածը, որտեղ նշում է, թե Արովյանը սիրային կապերի մեջ է եղել մահմեդական մի կնոջ հետ, որի «ամուսին ազդեցիկ խանը զրկում է նրան կյանքից, մարմինն ամփոփում իր պարտեզի ծառի տակ» (տե՛ս «Վեմ», 1934, Գիրք Դ, մարտ-ապրիլ, էջ 123-124): Արովյանի անհետացման վերաբերյալ փաստերի քննությունը տե՛ս Վլ. Ղազարյան, Խաչատուր Արովյան, Երևան, 1979, էջ 178-281: - Էջ 536:

10. Ժխտելով Ադոնցի առաջարկած սույն վարկածը՝ Ա. Չոպանյանը պատմաբանի հոդվածին ներփակած իր գրախոսականում (տե՛ս «Անահիտ», 1933, № 3-4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 85-86) համերաշխվում է նույն շրջանում լույս տեսած Աշոտ Հովհաննիսյանի «Արովյան» մենագրությունում (Երևան, 1933) պաշտպանված տեսակետին, որ գրողը ինքնասպանությամբ է վերջ տվել իր կյանքին. «Այս է ճշդագույն բացատրությունը Արովյանի անհայտացման, և այդ բացատրությունը, Աշոտ Հովհաննիսյան՝ այս հարցը (ինչպես և Արովյանի ամբողջ կյանքը, նկարագիրն ու գործը) հոյակապորեն լուսաբանող ու նյութը գրեթե սպառող իր մեծարժեք գրքով վերջնապես ապացուցած է»: Վերջում Չոպանյանը համոզմունք է արտահայտում, որ «Եթե Ադոնց տեսած ըլլար Աշոտ Հովհաննիսյանի գիրքը, այդ հոդվածը ապահովապես պիտի չգրեր կամ գեթ այդ ձևով պիտի չգրեր» (անդ, էջ 86): Ջուր համոզմունք է, քանզի արովյանագետները Ադոնցի առաջադրած վարկածը շարունակում են դիտել հնարավորներից ու քննարկման արժանի վարկածներից մեկը: Արովյանի կյանքի այս և բազում այլ առեղծվածների լուսաբանմանը նվիրված վերջին ուսումնասիրություններից տե՛ս **Պ. Հ. Հակոբյան,** Խաչատուր Արովյանի կենսագրության առեղծվածները, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997: - Էջ 537:

ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ ԵՎ ԿՅՈՐԴ ԽՆԴԻՐՆԵՐ
(Էջ 538)

Գրված է 1931 թ. Փարիզում: Բնագիրը պահվում է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի արխիվում: Տպագրվել է «Հայրենիք» ամսագրում (1931, 9-րդ տարի, № 6, էջ 79-94): Արտատպվում է այս հրատարակությունից:

1. Փարիզի «Հայ գրական ակումբը» ստեղծվել է 1928 թ. դեկտեմբերին: Այդ կապակցությամբ «Ցառաջ» օրաթերթը տպագրել է հետևյալ տեղեկատվությունը. «Պրոֆ. Ն. Ադոնց, իշխան Հ. Արղության, Ա. Վաչյան, Մ. Տեր-Պետերյան և Լ. Շանթ նախաձեռնություն ունեցած են վերջերս հայ գրասերներու ակումբ մը հաստատելու:

1928 թ. դեկտեմբերի 1-ին փարիզահայ մտավորականներու նախնական խորհրդակցության ժամանակ ստեղծվեց «Հայ գրական ակումբ»», որի առաջին նախագահ ընտրվեց պրոֆ. Ն. Ադոնցը, ատենապետ՝ Վ. Թորգոմյանը, խորհրդական Ռ. Քերբերյանը» (տե՛ս «Ցառաջ», 1928, 5 դեկտեմբերի): - Էջ 538:

2. Ն. Ադոնցը «Հայ գրական ակումբի» նիստերին պարբերաբար հանդես է եկել զեկուցումներով, ինչպես օրինակ՝ «Պռոշյան իշխանական տունը և Իսրայել Օրին», «Նոր տարին և Նավասարդի տոնակատարությունները հայոց մեջ», «Հայ հեռավոր անցյալի մեծագույն դեմքը. Մովսես Խորենացի», «Հայ հայտնի ախոյաններ անցյալում» և այլն: - Էջ 538:

3. Ն. Ադոնցը Փարիզի «Հայ գրական միության» անունից հատուկ շրջաբերականով դիմել է հայ հասարակությանը՝ ոգեկոչելու ծննդյան 100-ամյակը Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի.

«Փարիզի Հայ գրական միությունը պարտք է համարում հիշեցնել հայ հասարակության, որ հոկտեմբերի 27-ին լրանում է Միքայել Նալբանդյանի և նոյեմբերի 8-ին Գամառ Քաթիպայի (Ռ. Պատկանյան) ծննդյան հարյուրամյակը:

Հայությունը պարտաճանաչ չէր լինի, եթե մոռացության տար այս ցվիրակած օրերը: Երկուսն էլ, Նալբանդյան և Գամառ Քաթիպա, ոգեշունչ երգիչներ են մեր երեկվան երազների՝ երազներ, որ տակավին կենդանի են, մեր ցոր և վերածնյալ կյանքի հառաջավոր կարապետներն են:

Երկուսն էլ գաղութահայ զավակներ են, ծնված Նոր Նախիջևանում, անզուգական դեմքեր, որ խրախուսիչ օրինակներ են մանավանդ ներկա պայմաններում տարաշխարհիկ հայության համար, մշտական ջահեր՝ նրա գիտակցությունն ու գործունեությունը պահելու և առաջնորդելու հայրենի ուղիների վրա:

Հայ գրական միությունը նախածեռնել է տոնել երկու մեծ հայրենասերների երևման հարյուրամյա տարեդարձը, հատուկ և հանդիսավոր երեկույթ ցվիրելով նրանց կյանքին և գործերին: Եվ այսու հրավիրում ենք բոլոր նրանց, որոնց համար թանգ են Նալբանդյանի և Գամառ Քաթիպայի հայրենասիրական ավանդները, գալ հարգելու նրանց հիշատակը:

Հայ գրական միության վարչության կողմից՝

Ն. ԱԴՈՆՑ»

(տե՛ս «Ցառաջ», 1930, 26 հոկտեմբերի): - Էջ 538:

4. Տե՛ս «Ցառաջ», 1930, 21 նոյեմբերի, էջ 3: - Էջ 539:

5. Տե՛ս **Ն. Ադոնց**, Մ. Պեշիկթաշլյանի մասին, «Ցառաջ», 1930, 27 նոյեմբերի, էջ 2-3: - Էջ 539:

6. Տե՛ս **Ա. Չոպանյան**, Ճշմարտության թշնամիները, «Ապագա», օրաթերթ, Փարիզ, 1931, 18 փետրվարի, էջ 2: - Էջ 539:

7. Տե՛ս **Ա. Չոպանյան**, Մկրտիչ Պեշիկթաշլյան և պրոֆ. Ն. Ադոնց, «Պայքար», օրաթերթ, Բոստոն, 1931, 9, 10, 13, 14, 15, 16, 18 հունվարի: - Էջ 539:

8. Ռ. Զարդարյանի գրականությանը նվիրված «Գրական ակումբի» նիստում Ն. Ադոնցի եզրափակիչ խոսքը տե՛ս «Ցառաջ», 1930, 13 նոյեմբերի, էջ 2-3: - Էջ 539:

9. Խոսքը Ռ. Զարդարյանի՝ «Ամրողջական երկեր. Ա. Արծակ էջեր և հնքիաթներ, Փարիզ, 1930, 215 էջ» հատորի մասին է: - Էջ 540:

10. Նկատի ունի այն, որ Մ. Պեշիկթաշլյանի վերաբերյալ իր տեսակետները տեղիք են տվել բուռն վիճաբանությունների և որի արդյունքում տպագրվել են բազմաթիվ գրախոսականներ՝ Ե. Փեշիկյան («Բազմավեպ», 1930, № 12, էջ 524-531), Ս. Ջ. («Ցառաջ», 1930, 21 նոյեմբերի), Անստորագիր (անդ, 1930, 23 նոյեմբերի), Անստորագիր (անդ, 27 նոյեմբեր), Խմբագրական («Ազդարար» 1931, 2 փետրվարի), Ա. Չոպանյան («Ապագա», 1931, 18 փետրվարի), Խմբագրական («Ազդարար», 1931, 2 մարտի) և այլն: - Էջ 540:

11. Քրիստափոր Շնագլխի մասին տե՛ս «Ցայսմավուրք», մայիս Թ, մարերի Բ, Կ. Պոլիս, 1834, էջ 208-209: - Էջ 544:

12. Ակներև տպագրական վրիպակ է: Մխիթար Սեբաստացու արևմտահայ աշխարհաբարի առաջին քերականությունը («Դուռն քերականութեան») լույս է տեսել 1727 թվականին: - Էջ 545:

13. Ն. Ադոնցը Ղ. Ալիշանին հանդիպել է 1898 թ. օգոստոսին, երբ գիտական պրպտումներ էր կատարում Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանում: Ի դեպ, այդ օրերին (10 օգոստոսի, 1898 թ.) Ն. Մառին գրած նամակում Ադոնցը շեշտում է. «Սուրբ հայրերը, բացառությամբ Ղ. Ալիշանի և Գ. Զարբհանալյանի, ընդհանրապես քիչ հետաքրքրական են» [տե՛ս **Պ. Հ. Հակոբյան,** Նիկողայոս Ադոնցի նամակներից, «Լրաբեր», ՀԳԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 1975, № 11, էջ 84]: - Էջ 546:

14. Ակնարկում է Կ. Պոլսի շրջակայքում գտնվող Ալեմդաղ լեռան այն հիասքանչ նկարագրությունը, որ տալիս է Մ. Պեշիկթաշլյանը «Առ զեփյուռն Ալեմտաղիի» քնրթվածում: - Էջ 549:

15. Հատվածը քաղված է «Տաղ արարածոց» քնրթվածից, որը վերագրվում է Կարապետ Քաղիշեցուն (մոտ 1490-1540): Կարապետ Քաղիշեցու մասին մանրամասն տե՛ս նրան նվիրված Ն. Ակինյանի հոդվածում («Հանդես ամսօրյա», 1937, էջ 318-328) - Էջ 551:

16. Խոսքը Հովհաննես Թլկուրանցու՝ «Վասն սիրոյ» տաղի մասին է (տե՛ս **Հովհաննես Թլկուրանցի,** Տաղեր, աշխատասիրությամբ՝ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 217): - Էջ 553:

17. «1916 թ. գաղտնի դաշինքը» - Նկատի ունի 1916 թ. մայիսին Լոնդոնում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև կնքված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագիրը, որով Արևմտյան Հայաստանի տարածքների զգալի մասն անցնելու էր Ռուսաստանին: - Էջ 559:

18. Խոսքը Զեյթունի Մովսես քահանայի մասին է, որը 1863 թ. ձմռանը Կ. Պոլսում Զեյթունի հայտնի իրադարձությունների վերաբերյալ թարմ և հավաստի տեղեկություններ էր փոխանցում պոլսահայ մտավորականներին: - Էջ 560:

19. Տե՛ս **Սրբոհի Երիցյան**, Իմ ծանոթությունը Մկրտիչ Պեշիկթաշլյանի հետ, «Փորձ», ամսագիր, Թիֆլիս 1887, № 4: - Էջ 562:

20. Մ. Պեշիկթաշլյանի կյանքին և գրական ժառանգությանը վերաբերող հարցերի մանրամասն ուսումնասիրությունը տե՛ս **Վ. Մաֆթարյան**, Մկրտիչ Պեշիկթաշլյան, Երևան, 1972: - Էջ 562:

ԽՈՍՔ ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՑԱՆԻ ՄԱՍԻՆ
(Էջ 563)

Գրված է 1930 թ. մայիսին Փարիզում: Քնագիրը պահվում է Համազգայինի Քեյրութի գրական արխիվի պրոֆ. Ն. Ադոնցի ֆոնդում (պահարան I, գզրոց Ե/Ա-8): Առաջին անգամ հրատարակել ենք մենք (տե՛ս «Գրական թերթ», 2000, 1 սեպտեմբերի, № 11-12, էջ 1-2): Տպագրվում է ինքնագրից:

1. Ն. Ադոնցի սույն խոսքն ասվել է հայ ականավոր գրողի, հասարակական-պետական գործչի գրական 40-ամյա հոբելյանի առթիվ հրավիրված նիստին: Դեռևս 1928 թ. փետրվարին Փարիզում գործող Սանասարյան համալսարանի և նրա հետ կապված հայ գրողների «Հարդգող» ընկերության նախաձեռնությամբ հրավիրված խորհրդակցության ժամանակ որոշում էր կայացվել հավուր պատշաճի նշել այդ կարևոր իրադարձությունը: Ն. Ադոնցի գլխավորությամբ ստեղծվեց նախաձեռնող խումբ (տե՛ս «Ցառաջ», օրաթերթ, Փարիզ, 1928, 7 փետրվարի): Ավելի ուշ՝ հոբելյանական հանձնաժողով, որի գործադիր մարմնի ատենապետ ընտրվեց Ն. Ադոնցը (տե՛ս «Հայրենիք», ամսագիր, 1929, № 6, ապրիլ, էջ 175): Նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո տարբեր երկրների հայկական գաղթավայրերում սկսվեցին հոբելյանական միջոցառումներ, հրավիրվեցին գրական երեկոներ, ճառաշրջաններ, տպագրվեցին գրողի ստեղծագործությունները: Ի վերջո, 1930 թ. մայիսի 10-ին Սորբոնի համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում տեղի ունեցավ գլխավոր միջոցառումը: Ֆրանսիայի գրական ողջ ընտրանին, քաղաքական ու պետական շատ գործիչներ, հասարակայնության

ներկայացուցիչներ (ֆրանսիացի և հայ) մասնակիցը դարձան վտարանդի, ազատանդական գրողի մեծարանքի այդ հիասքանչ ցույցին: Նիստը բացեց Ն. Ադոնցը, այնուհետև ելույթներ ունեցան ֆրանսիացի և հայ բազմաթիվ բանասացներ (Ն. Ադոնցի խոսքն ու նիստի մանրամասները տե՛ս «Ցառաջ», 1930, 14 մայիսի, էջ 2-3; 18 մայիսի, էջ 2: Հոբելյանական նյութերը զետեղված են «Հոբելյան Ավետիս Ահարոնյանի քառասնամյա գրական գործունեության. 1890-1930, Փարիզ, 1930» գրքում): - Էջ 563:

2. Ա. Ահարոնյանը Գևորգյան ճեմարանում սովորել է 1881-1885 թթ.: Ճիշտ այդ տարիներին, մի դասարան ցածր, ճեմարանում սովորում էր նաև Ն. Ադոնցը: - Էջ 564:

3. Տարիներ անց, «Իմ գիրքը» հուշապատումում Ա. Ահարոնյանը ևս խոստովանում է. «Գևորգյան ճեմարանում հասունացած ու զարգացած աշակերտը խորապես զգում ու գիտակցում էր, որ ինքն այլևս այսինչ գյուղի, այսինչ գյուղացու զավակը չէ, այլ ազգի զավակը, որ ծանր ու գեղեցիկ պարտք ունի հանդեպ հայ հանրության» (տե՛ս Ա. Ահարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 9, Բոստոն, 1948, էջ 400-406): - Էջ 564:

4. Ա. Ահարոնյանը սովորել է Լոզանի համալսարանի պատմափիլիսոփայական (1898-1901) և Սորբոնի համալսարանի գրականության (1901-1902) ֆակուլտետներում: - Էջ 565:

ԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

ԴԵԿԱԴԱՆՍ ԵՎ ՍԻՄԲՈԼԻԶՄ

(Էջ 567)

Գրված է 1903 թ. Ս. Պետերբուրգում: Առաջին անգամ տպագրվել է իր իսկ կողմից հրատարակված «Քանքեր գրականության և արվեստի» հանդեսում (Գիրք Ա, Ս. Պետերբուրգ, 1903, էջ 153-173)»: Երկրորդ անգամ լույս է տեսել Գր. Հակոբյանի աշխատակցությամբ [տե՛ս «Գրականագիտական հանդես» (հոդվածների ժողովածու), հատ. Ա, Երևան, 2004, էջ 215-234]: Արտատպվում է վերջին հրատարակությունից:

1. Թարգմանությունը՝ Գ. Գասպարյանի: - Էջ 567:

2. *Մի երազ է սև*
Կյանքիս իջել
Քնեք, հույսեր իմ,
Քնեք, տենչեր

Չեմ հիշում արդեն
Թե լավ, թե վատ...
Ես կույր եմ հիմա,
Տխուր հեքիաթ:

Ես օրորոց եմ
Ու ճեռք մի թույլ
Ինձ օրորում է
Տխո՜ւր, տխո՜ւր:

Պ. Վեռլեն, Տխրություն

Թարգմանությունը՝ Գ. Գասպարյանի: - Էջ 572, ծան. 1:

3. *Փա՜ռք քեզ, ո՜վ մեծ սատանա, բարձրումներում երկնքի,*
Որ իշխել ես երբևէ, և խորքերում Դժոխքի,
Ուր պարտված, տապալված երազում ես լո՜ւռ, մենակ,
Այնպե՜ս արա, որ հոգիս Իմաստության ծառի տակ
Հանգստանա քո կողքին, երբ ինչպես ճոր Տաճարում՝
Տարածի քո ճակատին ճա ոստերն իր դալարում:

Շ. Բոդլեր, Հարասություններ սատանային

Թարգմանությունը՝ Հ. Թախչինյանի: - Էջ 572, ծան. 2:

4. «Պատկերը ցանկանալ չի կարելի, այն տիրելու ամեն մի շարժում նրան ցավ է պատճառում: Նա միակն է: Ի՞նչ անել: Խորհրդածել» (**Ա. Ժիդ,** Տրակտատ Նարցիզի մասին, տե՛ս **Ա. Ժիդ,** Նեղ դուռը, Երևան, 1994, էջ 182, թարգմանությունը՝ Ա. Հակոբյանի և Վ. Նալբանդյանի): - Էջ 578, ծան. 1:

5. «Նա [գիտնականը] նույնպես որոնում է երևույթների նախատեսակը և նրանց հաջորդականության օրենքները, նա վերակազմում է մի աշխարհ, իվերջո՝ կատարելապես պարզ, ուր ամեն բան կարգավորում է բնականոն ճևով» (անդ, թարգմանությունը՝ Ա. Հակոբյանի և Վ. Նալբանդյանի): - Էջ 579, ծան. 2:

Ցանկեր*

* Կազմեց Օլգա Վարդազարյանը:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ

Աբաս, Աղվանից կաթողիկոս - 386, 454, 456
Աբբասյան հարստություն - 475
Աբգար, Հայոց ավանդական թագավոր – 258, 261, 265, 291
Աբգար V Ուխհամա, Եդեսիայի թագավոր - 258, 260, 261, 291
Աբգար IX, Եդեսիայի թագավոր - 258, 260, 261, 267
Աբգարյան Գ. - 602, 603
Աբդ ալ-Ազիզ, ոստիկան - 465
Աբդ ալ-Մալիք, խալիփա - 420, 422, 450-452, 458, 461-465
Աբդ Ալ-Ռահման իբն Ռաբիա, զորավար - 396
Աբդա, եպիսկոպոս - 228
Աբդալլահ, Թաբանի եղբայր - 479
Աբդիշո, եպիսկոպոս - 228
Աբդլա, ամիրապետ - 332
Աբդլա - 189, 197, 226, 228, 229, տե՛ս Աբրահամ, Աբդլահա
Աբդլա, Սուրհաբճո որդի - 477
Աբդլահա- 228, տե՛ս Աբդլա
Աբդլմելք, Ջահաբի որդի - 477
Աբդոն, դատավոր - 473, 474
Աբդռահիմ, Մահմետի քեռորդի - 396
Աբդռահման, Աղվանից իշխան - 475
Աբեղյան Ա. - 616
Աբեղյան Մ. - 604, 605
Աբերիոս, երեց - 11, 13, 29, տե՛ս նաև Կոբյուն
Աբիխ Հ. - 534, 618
Աբիկուրա, քարոզիչ - 349
Աբիսողոմ, վարդապետ - 574
Աբլաբիոս, պրետորիայի պրեֆեկտ - 125
Աբլիերք, Ջահապի ազգական - 479
Աբովյան Խ. - 530-537, 540-542, 546-549, 553, 565, 618, 619
Աբրահամ, Աստվածաշնչ. - 167, 256
Աբրահամ- 226, 228, 229, տե՛ս Աբդլա
Աբրահամ - 228, տե՛ս նաև Աբիսողոմ
Աբրահամ, կաթողիկեի վանահայր - 197
Աբրահամ Արուսեռակ Մուքասիմ, ամիրմումին - 477, 478, 480
Աբրահամ Աստապատեցի - 134, 135, 141, 596
Աբրահամ Խոստովանող - 32
Աբրահամ Ա Աղբաթանեցի, Հայոց կաթողիկոս - 9, 54, 190, 197, 229, 241, 436, 440, 443, 447, 448
Աբրահամ Գ Կրետացի, Հայոց կաթողիկոս - 507
Աբրահամյան Ռ. - 614
Աբրահիմ, արաբ կուսակալ - 476
Աբրեհիմ- 457, տե՛ս Աբուսահակ Մուհամմադ ալ-Մուքասիմ, խալիփա
Աբուբաքր, խալիփա - 328, 397, 457
Աբու Ջաֆար ալ-Մանսուր, խալիփա - 475
Աբուլ ալ-Կասիմ իբն Հավկալ, պատմագիր - 482, 483
Աբուջափր Արածացի, ապստամբ - 477
Աբուջաֆար Հարուն ալ-Վասիկ, խալիփա - 457
Ագաթոս - 472, տե՛ս Ագաթոն
Ագաթանգեղոս - 58, 59, 63, 64, 71, 72, 75, 78, 80, 81, 86, 131, 161, 184-187, 193, 195, 196, 209, 211-213, 218, 220, 224, 227, 254-257, 259, 260, 267, 283, 284, 289, 308, 321, 326, 341, 342, 365, 428, 429, 441
Ագաթիաս, մատենագիր - 36, 297
Ագաթոն, Հռոմի պապ - 472, 473, տե՛ս Ագաթոս
Ադամ, Աստվածաշնչ. - 152-154, 428, 576
Ադամ, Դավիթ Բեկի զորավար - 511
Ադամանտիոս, մատենագիր - 138-142, 145, 146, 162,164
Ադարնասե, վրաց իշխան - 416, 417
Ադոնիս, դից. - 56
Ադոնց Ն. - 5, 6, 37, 150, 204, 230, 322, 344

348, 360, 495, 503, 559, 589, 590-597, 600-617, 619-622, 623
Ադոբն Ֆլուպետ, գրական կեղծանուն - 569
Աղքիանն, գրիչ - 321
Աթանագինես, Ներսես Մեծի հայր - 188, 189, 192
Աթանասիոս, սբ. - 153, 239
Ածդահակ, դից. - 492
Ալեքսանդր, առասպել. - 177, 181
Ալեքսանդր Մակեդոնացի - 257, 280, 281, 296, 297, 299, 351, 413, 492
Ալեքսանդր Սևերոս, Հռոմի կայսր - 280, 281
Ալեքսանդր Տքնող, կրոնավոր - 66
Ալեքսիոս – Մուսելես (Մուշեղ), կեսար - 49, 317
Ալի, խալիփա - 402
Ալիշան Ղ. - 182, 296, 399, 425, 487, 488, 497, 506, 542, 546-548, 553-555, 597, 616, 621
Ալմըշ (Ալմուշ), Վոլգայի բուլղարների թագավոր - 433
Ալփ Արսլան -433
Ալփ Թարխան - 433
Ալփ Իլիթվեր (Իլութվել), հռնաց իշխան - 418, 426-429, 432, 433
Ակակիոս, Ամիդի եպիսկոպոս - 22, 26, 38-40
Ակակիոս, Կոստանդնուպոլսի պատրիարք - 237
Ակակիոս, Մելիտինի եպիսկոպոս - 11-13, 15, 18-20, 23, 25, 26, 31
Ակիմյան Գ. - 533, 534
Ակինյան Ն. - 6, 186, 187, 191, 193, 195, 196, 198, 202-206, 209-212, 214-220, 222-230, 319, 322-339, 341-344, 346-351, 362, 368, 456, 592, 594, 597, 598, 600, 602, 607, 608, 621
Ահարոնյան Ա. - 542, 559, 563-566, 622, 623
Ահմատ Ֆադլուն, մատենագիր – 433
Ահմեդ, ներքինապետ - 522
Ահրիման (Ահրմն, Խարաման, Հարիման), դից. - 146, 151, 324
Ահուրա-Մազդա, դից. - 147
Աղասի խան, Փաթալի սուլթանի եղբայր - 508, 509, 517, 521
Աղթիանոս, եպիսկոպոս - 188, 192
Աղվանական տոհմ - 416
Ամատյան Հր. - 131, 595
Ամատյան, բժիշկ - 539
Ամատունիների տոհմ, Ամատունիք - 313, 314, 341
Ամբրոսիոս Մեղիողացի, մատենագիր - 239
Ամին, խալիփա - 475
Ամիր Հասան Պռոշյան - 496
Ամմիանոս Մարկելլինոս, պատմագիր - 88, 108, 114, 115, 117, 118, 123-125, 129, 130, 414
Ամպելիոս (Ամպեղիս), Քերսոնի եպիսկոպոս - 232-242, 599
Ամր, Արուրաքրի հաջորդ - 328
Ամր (Եմրան, Ամրան, Եման, Օմար), զորավար - 327
Այնասուն (Այնասունա, Այնասիմա), անձնանուն - 500, 501
Այտեմին, Դավիթ Բեկի զինակից - 510
Անակ Պարթև - 412
Անանիա Ա Մոկացի, Հայոց կաթողիկոս - 322
Անանիա Շիրակացի - 300
Անանիաս, Սյունյաց եպիսկոպոս - 206
Անանյան Պ. - 602
Անանուն պատմիչ - 63, 243, 244, 246, 248, 254-256, 259-263, 266-268, 270, 292, 296-298, 360, 420, 458-460, 592, 594, 601, 603
Անաստաս Ա Ակոռեցի, Հայոց կաթողիկոս – 190, 357, 407
Անաստաս Վանական - 449
Անաստասիոս, կայսր - 33, 251, 443, 467
Անաստոլիոս, զորավար - 350
Անաստոլիոս, Տիմոթեոս Կուզի եղբայր - 234, 236-240, 242
Անգեղ Հայկազնյան (Հայկազուն-Թագքաստունի), Հայոց ավանդական

թագավոր - 287
Անդովկ, Սյունյաց իշխան - 93, 948
Անդրեաս, սբ. - 448
Անդրեաս, Արցախի եպիսկոպոս - 448
Անդրեաս, Հերակլ կայսրի պաշտոնյա - 379
Անդրեաս, Սամոսատի եպիսկոպոս - 31
Անդրեաս, տոմարագետ - 442
Անթեմիոս, Բյուզանդիայի կայսր - 251, 252
Անմն, երեց - 20
Անհիբալիանոս, կայսերակից - 104
Անտեղիս, եպիսկոպոս - 237, 238
Անտեղիս (Anatolius), Տիմոթեոս Կուզի եղբայր - 237, 238
Անտիոքոս I Սոտեր - 255
Անտիոքոս II Թեոս - 255
Անտիոքոս III Մեծ - 296
Անտոնինոս, վաճառական - 108, 122-124
Անուշավան (Անուշռվան), ցահապետ - 56
Աշգանյաններ, առասպել. - 298
Աշխեն, Խոսրով Կոտակի մայր - 305
Աշկաններ, թագավորական հարստություն - 298
Աշնաշ, պարթև թագավոր - 264
Աշոտ, Շապուհ Բագրատունու որդի - 317
Աշոտ, Սահակ Բագրատունու որդի - 349
Աշոտ, Վասակի որդի - 346
Աշոտ Բագրատունի, Հայոց իշխան (VII դ. վերջ) - 325, 345, 357, 420
Աշոտ Բագրատունի, Հայոց իշխան (750 թ.) – 344, 345, 347
Աշոտ I, Հայոց թագավոր - 344, 481, 482
Աշոտ II Երկաթ, Հայոց թագավոր - 321, 344, 421, 425, 431, 482
Աշոտ Հայկազունի, իշխան - 482
Աշոտ Մսակեր - 314-317, 349, 368, 606
Ապիրատ, իշխան - 499, 500
Ապողինար (Ապոլինար) Լավոդիկեցի - 14, 27, 28
Ապու Ալի Հայկազունի, Աղվանից իշխան - 482
Ապումրվան, Վասպուրականի իշխան - 482
Ապուսահակ, Նախճավանի եպիսկոպոսի եղբայր - 480
Առաքել, Դավիթ Բեկի զինակից - 511
Առաքելյան Վ. - 611
Ասա, Աղվանից թագավոր - 414
Ասլամազ ղուլի - 509, 517, 521
Աստղիկ (Սահփանոս Տարոնեցի) - 244, 246-248, 268, 269, 326, 327, 331, 355-357, 359, 420-422, 460, 463, 464, 474, 477, 478, 481, 487
Աստղիճ, խազրաց իշխան - 465, 466
Ասպանդիատ (Սպանդիատ), դից. - 428, 429, 435
Ասպուրակես Ա, Հայոց կաթողիկոս - 188-190, 192, 196, 199
Ավան խան, զորապետ - 515
Ավան միրզա, զորապետ - 515
Ավան Ջրաբերդցի – 514, 518, տես նաև Հովհաննես Գուգարացի
Ավգերյան Մ. - 616
Ավդալբեգյան Մ. Թ. - 615
Ավթանդիլ, Դավիթ Բեկի զորավար - 510
Ավթանդիլ Լոռեցի - 521
Ավչի Թարխան - 429
Ավրելիանոս, Հռոմի կայսր - 249, 252, 270, 271
Ավրելիոս Վիկտոր, պատմագիր - 89
Աստիկոս, Կոստանդնուպոլսի պատրիարք - 22, 23, 239
Աստիկոս, Մոկաց եպիսկոպոս - 25
Աստներսեհ, Սյունյաց իշխան - 476
Աստներսեհ, վրաց իշխան - 394, 397, 417
Արա Գեղեցիկ - 282, 604
Արամ, Թեոդորոս Մոպսուեստացու հակառակորդ - 154, 155

Արամ, Հայոց ավանդական թագավոր - 361, 524
Արամազդ, դից. - 57
Արամայել, Միհրանի որդի - 388
Արամայիս, Նահապետ - 282
Արամենակի ազգ - 282
Արամյան Ս. - 616, 617
Արբոկ Ճենրակուր, Չինաստանի կայսր - 276, 277, 464
Արդաշիր - 414, տե՛ս Արտաշիր Պապական
Արես, դից. - 467
Արզումանյան Զ. - 607
Արիոս, աղանդավոր - 14, 27, 224
Արիստակես (Ռստակես) Ա Պարթև, Հայոց կաթողիկոս - 169, 190, 199, 239
Արիստիդես Աթենացի, մատենագիր - 138
Արիստոտել, փիլիսոփա - 146
Արխանետես, պարսից մեծատոհմիկ - 98
Արծրունի եղբայրներ - 375
Արծրունիների տոհմ - 321, 323, 325
Արկաղիոս, կայսր - 250, 253, 272
Արծաճ, Սահակի և Մաշտոցի աշակերտ - 189, 198, 225, 226
Արղուէ Պռոշյան - 496
Արղության Հ. - 562, 619
Արմենակ, առասպել. - 256
Արմենշահ, տուն – 561
Արշակ, Հայոց ավանդական թագավոր – 246, 256, 260, 265-267, 280, 281, 283, 287, 288
Արշակ, Պարթևաց թագավոր, Դարեհի որդի – 264, 269
Արշակ II, Հայոց թագավոր - 62, 94, 96, 110, 112-117, 124-130, 188, 199, 249, 250, 272, 365, 366, 414
Արշակ (Աշակ) III, Հայոց թագավոր – 188, 193, 199, 249, 272-274, 365, 366
Արշակ I, Պարթևաց թագավոր - 261, 263, 264, 265, 269, 281
Արշակ II, Պարթևաց թագավոր - 261, 262, 264, 265, 269, 281
Արշակ Մեծ, Պարթևաց թագավոր - 246, 248, 255, 266, 269
Արշակ Փոքր, Պարթևաց թագավոր – 255-257, 264, 265, 269
Արշակ Քաջ, Պարթևաց թագավոր - 263, 264, 296
Արշակաց, Պարթևաց թագավոր - 261, 262, 263, 264, 269
Արշակունիներ (ընդհանուր) - 256, 257, 262, 266-268, 270, 285-287, 290, 293
Արշակունիներ (հայ) - 99, 109, 129, 196, 212, 245, 254, 257, 258, 261, 263, 270, 281, 293-297, 307, 308, 309, 313, 316, 323, 330, 336, 603
Արշակունիներ (պարթև) - 245, 247, 248, 266, 280, 282, 283, 313, 314
Արշամ, Եդեսիայի թագավոր - 246, 257, 258, 260, 261, 265, 268
Արշանակ, Պարթևաց թագավոր - 264, 268, 269
Արշավիր, Հայոց ավանդական թագավոր - 265
Արշավիր (Արսաքեր), Հովհաննես Քերականի եղբայր - 49, 50
Արշավիր, Պարթևաց թագավոր – 260-262, 264, 267-269
Արշավիր (Արսաքես), Փոտ պատրիարքի մորեղբայր – 7, 49, 50
Արշավիր Կամսարական, Արշարունյաց իշխան - 93-95
Արշեն, Պարթևաց թագավոր - 264
Արշես (Արշեզ), Պարթևաց թագավոր - 264, 268, 269
Արչիլ, Միրի եղբայր - 417

Արծաղ, խազար իշխան - 433
Արվանդ (Արտանդ) - 177
Արտաբան, անձնանուն - 414
Արտակ, անձնանուն - 201
Արտաշահր, եպիսկոպոս - 25, 33
Արտաշես I, Հայոց թագավոր - 95, 261, 265, 287, 290, 336, 548, 550, 551, 605
Արտաշես II, Հայոց թագավոր - 265, 266, 605
Արտաշես III, Հայոց թագավոր – 23, 118, 193, 195, 196, 198, 199, 272
Արտաշես, Պարթևաց թագավոր – 261, 263, 264, 268, 269, 272
Արտաշիր, Պարթևաց թագավոր - 269
Արտաշիր I Սասանյան - 249, 250, 252, 253, 261, 263, 266, 270, 272, 275, 276, 306, 389
Արտաշիր II Սասանյան - 249, 250, 272, 274, 313, 314
Արտաշիր III Սասանյան - 251, 255, 377, 382, 383
Արտաշրական տոհմ - 389
Արտավազդ, առասպել. - 177, 181, 604
Արտավազդ (Աբբահամ), Երաշխավոր վանքի վանահայր - 463, 611
Արտավազդ I, Հայոց թագավոր – 261, 265, 266, 268
Արտավազդ Հայ, Լևոն III կայսեր փեսա - 49
Արտավազդ Մամիկոնյան, Գրիգորի Մամիկոնյանի որդի - 306, 346, 365
Արտավազդ Մամիկոնյան, Հմայակ Մամիկոնյանի որդի - 346
Արտավազդ Մանդակունի - 306, 365
Արտավան, անձնանուն – 56, 414
Արտավան, Հայոց ավանդական թագավոր – 261, 265, 266, 268
Արտավան V, Պարթևաց թագավոր - 245, 260, 264, 266, 267, 269, 270, 276
Արտավան Մամիկոնյան - 365
Արտաքսերքսես (Կյուրոս, Արտաշես), պարսից թագավոր - 299
Արտեն, անձնանուն - 201
Արտոռմիզդ, պարսից պաշտոնյա - 62
Արտուճան տոհմ - 395
Արևքո ի Վարոջյան (Վարազքոյան), աղվան իշխան - 453
Ափշին Սաջիկ - 479, 480, 482
Ափոց - 55, տե՛ս Ձափիկ
Ափրաադ (Զգոն), մատենագիր - 44
Աքիլլևս, ապստամբ - 88, 89
Աֆրասիաբ, առասպել. - 491
Աֆֆարրանես, պարսից դիվանագետ – 96-98

Քաջ ի Շահր Փերոզյան - 453
Քաբան պարսիկ - 471, 475, 476, 478, 479
Քարգնե, Սյունյաց իշխան (VIII դ.) – 469
Քարգնե, Սյունյաց իշխան (IX դ.) - 479
Քարկնե Ա Որմսեցի, Հայոց կաթողիկոս - 33, 190, 233, 240-243, 441, 443, 469
Քարիլաս - 22, 38, 39, տե՛ս Ռաբուլաս
Քարիկ, Սյունյաց իշխան - 365
Քարոց, անձնանուն - 10, 53, 55
Քագարատ Բագրատունի, իշխանաց իշխան - 315
Քագարատ Բագրատունի, Հայոց սպարապետ (IV դ.) - 365
Քագարատ Կյուրապաղատ, Կղարջքի իշխան - 317
Քագրատ, աստղաբաշխ - 50
Քագրատ, Հայոց իշխան (VIII դ.) - 431
Քագրատունի Ա. - 77, 134, 186, 542, 548, 593, 596
Քագրատունյաց տոհմ - 46, 55, 278, 287, 292, 310, 314, 315, 317, 318, 321, 343, 344, 347, 364, 365, 367-369, 495, 611
Քաղդղի (Հասան իբն Ալի ալ-Քաղդղիսի ալ-Մամուն) - 477

Բալի, մելիք Փարսադանի որդի - 510
Բախչինյան Հ. - 624
Բակար Շահնավազ, վրաց թագավոր - 513, 617
Բակոր, անծննաւնուն - 277
Բակունց Ա. - 530, 531-537, 618
Բակուր, անծննաւնուն - 289
Բակուր, Աղծնիքի բդեշխ - 106, 305
Բակուր (Ներսես-Բակուր), Գարդմանի կաթողիկոս – 450-452
Բահրամ, պարսից արքա - 273
Բաղդասար, մետրոպոլիտ - 517
Բաղիր, Վարաձդայի մելիք - 514
Բայրոն Ջ. Գ. - 542
Բայինդուր Սյունեցի, իշխան - 520, 522, 524
Բանդուր, Դավիթ Բենի զորավար - 510
Բասարա, արաբ զորավար - 356
Բարես Մ. - 569
Բարզաբոյ (Վարազ-Վարդ), Աղվանից իշխան - 416, 417
Բարթիկյան Հ. Մ. - 592
Բարթողոմե Կ. - 68, 69
Բարխուդարյան Ս. Գ. - 615
Բարծումա - 33
Բարսեղ, եպիսկոպոս - 500
Բարսեղ Կեսարացի - 44, 132, 136, 138, 144, 148, 149, 157, 171, 173, 174, 178, 179, 239, 362
Բբոր, պարսից արքա - 251
Բեթհովեն Լ. վան - 578
Բել, առասպել. - 604
Բենկեր Ի. - 258
Բենիրուդյան Ս. - 608
Բեղզեթուր - 573
Բերբերյան Ռ. - 620
Բլավատսկի Ն.Վ., գավառապետ - 537, 618
Բղդոխ, Մամգոնի եղբայր - 276, 366
Բնդռ, պարսից Խոսրով II արքայի մորեղբայր - 388
Բոբինա (Բուրի, Բուրա, Բուրե, Բորա, Բոբե, Բուպա, Բուրաիս) – 500-502
Բողենշտեդտ Ֆ. - 535, 618
Բողկեր Շ. - 568, 570, 572, 573, 584, 624
Բոկլեր Ա. - 569
Բրյուներհեր Ֆ.- 569
Բրոսսե Մ. - 412, 416, 513
Բրքիչո, աթոռակալ- 228
Բուլխար Խոյտա, փատգոս, տե՛ս Մուհամմադ իբն Խալիդ Բուխարա-խոդա
Բուղդար, առասպել. - 433
Բուխարա-խոդա- 480, տե՛ս Բուլխար Խոյտա
Բուղա, արաբ զորավար - 317, 480
Բուպալե, մեծատոհմիկ - 501, 502
Բուքայր իբն Արդալլահ - 396, 397

Գագիկ I, Հայոց թագավոր - 499
Գագիկ II, Հայոց թագավոր – 10, 54, 353, 608
Գագիկ, Վարազ-Տրդատի որդի - 422
Գագիկ Արծրունի, Վասպուրականի թագավոր - 613
Գադ (Գյուտ), Հայոց հայրապետ - 190
Գաթըրճյան Հ. - 186, 197, 227, 291
Գալեմքեարյան Գ. - 135, 156, 163, 596
Գալերիանոս (Գալիանոս), կայսր – 123, 249, 250, 252, 279
Գալերիոս Մաքսիմիանոս, կայսր - 88-91, 94, 96, 97, 98, 101, 109, 249
Գալիենոս, կայսր - 267
Գալլոս, կեսար - 114
Գամառ Քաթիպա (Ռ. Պատկանյան) - 542, 620
Գայանե, սր. – 189
Գայլ Վահան - 551
Գասպար Ավշարներց, Դավիթ Բենի զինակից - 511
Գասպարյան Գ. - 623, 624
Գարագաշյան Ա. - 244, 296, 602

Գեղեոմ, Աստվածաշնչ. - 181, 376
Գելցեր Հ. 186, 368, 595
Գեննադիոս, Կոստանդնուպոլսի պատրիարք - 235
Գեորգի XI, վրաց թագավոր - 513, 515
Գեորգի Մեծ, Դավիթ Բեկի զորավար - 510
Գեորգի Փոքր, Դավիթ Բեկի զորավար - 510
Գեորգիոս, Ճահատակ - 478
Գերմանոս, Կոստանդնուպոլի պատրիարք - 467, 471-473
Գյոթե Ի.Վ. - 541
Գյուլամիրյանց (Գուլամիրյան) Ա. - 504-505, 617
Գյուլխանդանյան Հ. - 600
Գյուտ Ա Արահեզացի, Հայոց կաթողիկոս - 32, 377
Գնադիս, Գնադիոս (Gennadius), եպիսկոպոս - 237, 238
Գնել, սեպուհ - 364, 366
Գնիթ, եպիսկոպոս - 22
Գնունյաց տոհմ - 62
Գոմեր, Աստվածաշնչ. - 277
Գրատիանոս, կայսր - 250, 252, 272
Գրիգոր. աղանդավոր - 436, 438
Գրիգոր, Հերակլ կայսրի հորեղբայր - 403
Գրիգոր, Մուշեղ Մամիկոնյանի որդի - 346
Գրիգոր, Սահակ Սևադայի որդի - 321
Գրիգոր, Սյունյաց իշխան - 390, 392, 413, 449
Գրիգոր Ա Լուսավորիչ - 44, 83, 87, 143, 144, 151, 157, 169-171, 185, 188-192, 196-200, 205, 218, 227, 259, 284, 302, 305, 307, 308, 326, 336, 337, 424-426, 428, 441, 446, 447, 452, 461, 467, 476, 477, 596, 597
Գրիգոր Բ Վկայասեր, Հայոց կաթողիկոս - 233
Գրիգոր Է Անձավարզեցի, Հայոց կաթողիկոս - 469, 500
Գրիգոր Արծրունի - 480
Գրիգոր Քակուրյան, զորավար - 455, 611
Գրիգոր Գզրիկ, Սահմանցոց Սյունեցու ընկեր - 471
Գրիգոր եղուստր (illustris) - 399
Գրիգոր Երեց - 223
Գրիգոր ի Ռահատյան - 453
Գրիգոր Ծերենց - 469
Գրիգոր Չորափորեցի Սրասուն, թարգմանիչ – 354-357, 359
Գրիգոր Մագիստրոս - 499, 500
Գրիգոր Մամիկոնյան – 320, 325, 344-347, 357, 372, 403, 407-409, 412, 413, 419, 420, 424-426, 429
Գրիգոր Նարեկացի - 541
Գրիգոր Նազիանզացի - 239, 310, 337, 339, 340
Գրիգոր Նյուսացի - 239, 300, 468
Գրիգոր Սուփան - 479
Գրիգոր Տաթևացի - 499
Գրիգոր Տուտեռդի - 499
Գրիգորիս, Աղվանից կաթողիկոս - 190, 427, 430
Գրիգորիս Արշարունի – 359, 456
Գրիգորիոս Հրաշագործ, մատենագիր - 239
Գրիգորիսյաններ, Գրիգոր Լուսավորչի տոհմ - 316
Գրիգորյան Մ. – 602
Գրումբատես, խիոնիտների թագավոր - 123
Գուշակյան Թ. – 591, 614, 615, 618
Գուտշմիդ Ա. ֆոն - 288, 294, 299, 362, 368, 602, 603
Գուրգուաս (Գուրգեն) ընտանիք - 49
Գևորգ սր. - 448, 544
Գևորգ վարդապետ - 458
Գևորգ Բ Գառնեցի, Հայոց կաթողիկոս - 481, 482
Գևորգյան-Ճուղուրյան Բ. - 602

Պալմատիոս, Կոստանդնիանոս Մեծի եղբորորդի - 104
Դակիանոս, հյուպատոս - 117
Դամասկիոս, մատենագիր - 146, 158,
Դանքն Ալիգիերի - 545
Դանիել, Աղձնյաց եպիսկոպոս - 25
Դանիել, քահանա - 191
Դանիել Ասորի - 41, 206
Դավթակ Քերթող - 412
Դավիթ, Աստվածաշնչ. 160, 177, 456, 525
Դավիթ, Մեծկողմանց եպիսկոպոս – 370-372, 423, 435-438
Դավիթ, Մուշեղ Մամիկոնյանի որդի - 346
Դավիթ, Սյունյաց եպիսկոպոս - 448, 469
Դավիթ, Տաթևի մելիք - 507, 508, 521, 526
Դավիթ Ա Արամոնեցի, Հայոց կաթողիկոս – 185, 190, 469, 470, 477
Դավիթ Բ Կակաղեցի, Հայոց կաթողիկոս - 185
Դավիթ Անհաղթ - 312
Դավիթ Բեկ – 504-513, 515-520, 522-529, 615, 617
Դավիթ Դվինեցի, վկա - 464
Դավիթ Հյուպատոս, Ստեփանոս Սյունեցու աշխատակից - 467
Դավիթ Մամիկոնյան - 344-347
Դավոն, իշխան - 476
Դատաբա, անձնանուն - 501
Դատարէ Բզնունի, իշխան - 95, 96, 100, 501
Դարեհ, պարսից թագավոր - 262, 264, 266, 267, 269
Դելիմիկ, ազգ - 482
Դելմնազգի հրամանատար - 394, 395, 397
Դեղշապուհ - 117, 122, 124
Դիդիմոս Կույր, մատենագիր - 153
Դիզաբուլոս, Հիրկանիայի թագավոր - 277
Դիլոյան Վ. Ա. - 593, 600, 601, 603
Դիոդորոս Սիկիլիացի, մատենագիր - 281
Դիոդորոս Տարսոնացի - 11, 20, 26, 137, 146, 234
Դիոկղետիանոս, կայսր - 88-91, 98, 249, 252, 266, 267, 275, 279, 441
Դիոն Կասսիոս, մատենագիր - 258
Դիոնիսիոս Արիսպագացի - 467
Դիոնիսիոս Տելմահրեցի - 334, 348, 349, 433
Դիոնիսիոս Թրակացի – 208
Դիոսկորոս Ալեքսանդրացի – 235-238, 600
Դիոսկորոս Սանահնեցի, Հայոց կաթողիկոս - 354
Դիսմոն, պարսից արքա - 36
Դյուլորիե Է. - 36
Դոփյան տոհմ - 496
Ղստրիկ Մամիկոնյան - 364
Դրոսերիոս, գնոստիկյան - 140
Դուրյան Ե. - 222, 438, 599
Դուրյան Պ. - 542

Եզեկիել, Աստվածաշնչ. - 213
Եզիդ (Եազիդ) I, խալիփա – 408, 520
Եզնիկ Երեց - 6, 184, 186-188, 190, 191, 193, 195-198, 201-205, 211, 212, 217-220, 223-229, 308, 309, 598, 599, 603
Եզնիկ Կողբացի - 5, 17, 19, 23, 24, 30, 33, 41, 74, 131-151, 154, 156-167, 169, 170-183, 186-189, 198, 201, 203, 204, 211, 218, 220-222, 225, 226, 541, 589, 595-597, 599
Եզր Ա Փառաժնակերտցի, Հայոց կաթողիկոս – 190, 444-446, 449, 459, 460
Եզրաս, Աստվածաշնչ. - 220
Եղիա, Աստվածաշնչ. - 181, 471
Եղիա Ա Արծիշեցի, Հայոց կաթողիկոս - 190, 448, 450-452, 463
Եղիազար, Դավիթ Բեկի զորավար - 510
Եղիազար, Աղվանից կաթողիկոս - 371, 385, 418, 419, 426, 429, 435, 436, 439, 450, 452
Եղիազար, Հոշո եպիսկոպոս - 453

Եղիազար Գանձակեցի - 520
Եղիշա, Աղվանից առաքյալ – 183, 372, 441, 447
Եղիշե, Ամատունյաց եպիսկոպոս - 133
Եղիշե, պատմագիր - 32, 62, 65, 132, 133, 161, 211, 212, 216, 217, 321, 383, 526, 527, 597, 598
Եղիսաբեթ, Աստվածաշնչ. - 455
Եմաճ (Եմրաճ, Ամրաճ, Ամբ, Օմաբ) - 327, 345
Եճակ (Ածակ) - 412, տե՛ս Եճեր
Եճեր - 411
Եճովք, Աստվածաշնչ. - 181
Եպիփան Կիպրացի - 136, 157, 296, 300
Երամշահիկ (Առամշահիկ) Հայկազյանց, ազգատոհմ - 388, 611
Եսայի, Աստվածաշնչ. 182, 213, 214, 217
Եսայի, Դավիթ Բեկի զինակից - 510
Եսայի, որդի Շեխա- 481, տե՛ս Հիսե (Իսա) իբն շեյխ իբն Խալիդ
Եսայի (Եսավ), պավլիկյան շարժման առաջնորդ - 438, 439
Եսայի Ա Եղիպատրուշեցի, Հայոց կաթողիկոս - 190, 324-326, 335, 336, 475
Եսայի Արուճուսե - 476, 478, 479
Եսայի Հասան-Ջալալյան, կաթողիկոս Աղվանից – 505, 514, 515, 518, 528, 616, 617
Եսայի Նչեցի - 498, 499
Եսուաղեճ, Աղվանից թագավոր - 414
Եվագրոս, պատմիչ - 299, 300
Եվդեմոս Ռոդոսացի, մատենագիր - 146
Եվդոկիա, Հերակլ կայսեր դուստր - 379
Եվթաղ Ալեքսանդրացի, մատենագիր - 83-86, 593
Եվնոմիոս, հերձվածող - 14, 27
Եվսեբիոս, սենեկապետ - 123
Եվսեբիոս Կեսարացի - 44, 100, 101, 195, 209, 215, 216, 255-257, 271, 283, 288, 290, 296, 341, 474, 484, 591
Եվստաթիոս, փիլիսոփա - 121
Եվտիքոս, հերձվածող - 234, 456
Եվտրոպիոս, դատավոր - 140
Եվտրոպիոս, պատմագիր - 89, 90, 105, 108
Երամյան Գ. - 548
Երեմիա, Աստվածաշնչ. - 339, 340
Երեմյան U. S. 593, 610
Երթգին Խուրսանա, խազար իշխան - 434
Երիցյան U. 562, 622
Երվանդ, առասպել. 181, 182
Երվանդ, Հայոց ավանդական թագավոր - 262, 265, 267
Եփրեմ Խուրի Ասորի - 44, 145, 193-195, 198, 210, 218-221, 225, 227

Ջառմիհր Երաճշահիկ – 388, 416
Ջառմիհրական տոհմ - 478, 611
Ջավեն Ա Մանազկերտցի, Հայոց կաթողիկոս – 192, 199
Ջարադ - 8, 147, 148, տե՛ս նաև Զրադաշտ
Ջարբհանալյան Գ. – 319, 320, 322, 360, 361, 370, 410, 621
Ջարդարյան Ռ. - 539, 540, 621
Ջարեհ Հայկյան - 286, 290
Ջարմիհր, Աղվանից իշխան - 416
Ջարմիհր, անձնանուն - 416
Ջարմիհր Հազարավուխտ - 415, 416, 610
Ջարմիհր Վաթազ-Ջուրդակյան – 416, 453
Ջաքարիա, Աղվանից կաթողիկոս – 385-387
Ջաքարիա, Աստվածաշնչ. – 339, 455
Ջաքարիա, Դավիթ Բեկի զորավար - 510
Ջաքարիա, Մեծքրանց եպիսկոպոս - 450, 452, 453
Ջաքարիա Հռետոր, Միտիլենացի, պատմագիր - 15, 237, 239

Զաքարիա Շուշեցի - 520
Զաքարիաս, Աստվածաշնչ. – 339, 445
Զաքարյաններ, տոհմ - 560, 561
Զենոբ Գլակ - 208
Զենոն, կայսր - 33, 234, 238, 239, 251, 253
Զիքգին Խուրսան, խազար դեսպան - 429
Զիկ, տոհմ - 415
Զոլա Է. - 586
Զոհակ, առասպել. - 491, 492
Զոհրապ Հ. - 83
Զորաբաբել, Աստվածաշնչ. – 336
Զորեն (Զորակ, Զորա) - 188, 190, տե՛ս Զավեն
Զրադաշտ (Զարադուստրա), դից. - 41, 70, 148, 297
Զրվան, դից. - 8, 146, 147, 148
Զևս, դից. - 544

Ըաչ Պռոշյան - 496
Էմիլիանոս, կայսր - 270, 271
Էմին Մ. - 301, 302, 476, 610
Էնեաս, առասպել. - 473
Էպիկտետոս, Աթանասիոսի հասցեատեր - 239
Էրաջ, առասպել. - 491

Թադեոս, Դավիթ Քեկի զորավար - 510, 520
Թադեոս, հերձվածող - 436, 438, 439
Թադեոս Առաքյալ - 258, 284, 291, 301-303, 446
Թահմասպ, պարսից շահ - 513
Թամար, վրաց թագուհի - 528
Թանգրի, դից. - 435
Թանգրիխաճ, դից. - 428, 435
Թարմաչ, խազար զորավար - 431, 433, 465, 466
Թեկղի, աննճանում - 502
Թեոդոսիոս, Երուսաղեմի եպիսկոպոս - 237, 238
Թեոդոսիոս I, կայսր - 250
Թեոդոսիոս II, կայսր - 22, 66, 76, 199, 251, 253, 273, 274, 279, 350
Թեոդոսիոս III, կայսր - 467
Թեոդոսիոս Սիկելլար, զորավար - 391
Թեոդորա, կայսրուհի - 49, 50, 315, 425
Թեոդորետոս - 12, 26, 31, 154, 234
Թեոդորոս, անճանում - 410, 411
Թեոդորոս, Կարինի եպիսկոպոս - 436
Թեոդորոս, Կարնո փիլիսոփայապետ - 439, 443, 445
Թեոդորոս, հյուպատոս - 26
Թեոդորոս, Մաթուսաղա Սյունեցու աշակերտ - 445
Թեոդորոս, Մարդպետական եպիսկոպոս - 448
Թեոդորոս (Թեոդոսիոս), սարկավագ - 11, 13
Թեոդորոս Թոռնիկ - 51
Թեոդորոս Մոպսուեստացի (Մամուեստացի, Անտիոքացի, Երեց,
Թեոդիոս Հռոմի) - 8-15, 17-21, 25-31, 37, 39-41, 146-150, 154, 155, 592
Թեոդորոս Ռշտունի – 401-404, 413, 460
Թեոդորոս Վստամ Յարևմանյան - 453
Թեոփանես, ժամանակագիր - 49, 105, 106, 109, 331, 374, 378-382, 387, 391, 393, 394, 401, 404, 420, 422, 437, 458,
Թեոփիլակտոս Սիմոկատտա, պատմագիր - 435
Թեոփիլոս, Արշարունյաց եպիսկոպոս - 398
Թեոփիլոս, կայսր - 317
Թեոփիլոս, Ղուկաս Ավետարանչի հասցեատեր - 81
Թեոփիլոս Ալեքսանդրացի - 239
Թեոփիլոս Անտիոքացի, մատենագիր - 156, 157

Թեոփրաստես, մատենագիր - 555
Թևվել (Թվել, Թվեր), Արպաղի որդի - 433
Թերզյան Թ. - 542
Թերմազու - 433, տե՛ս Թարմաչ
Թեիկ (Թայիկ, Թաիկ), անձնանուն - 502
Թիրաս, Աստվածաշնչ. - 277
Թիրաքյան Մ. - 614
Թլկատինցի Հ. - 540
Թոռնիկ, ընտանիք - 51
Թոռնիկ Վանական - 441, 442
Թովմա, դպիր - 354, 356
Թովմա Արծրունի - 76, 195, 218, 311, 321, 323, 349, 471, 479-482
Թովմաս, Դավիթ Բեկի զինակից - 510
Թովմաս Առաքյալ - 449
Թորգոմ, Աստվածաշնչ. - 326, 341, 607
Թորգոմյան Վ - 620
Թորոս, Դավիթ Բեկի զինակից – 508-510, 520, 521
Թորոսյան Խ. - 157, 159, 160, 602
Թումանյան Հ. - 542
Թուր, առասպել. - 491
Թուրինջ, Դավիթ Բեկի զինակից - 510

Ժնեարար դը Ներվալ - 541
Ժիդ Ա. - 574, 578, 624
Ժորդանիա Թ. - 307

Իբրաս, հերձվածող - 12, 32
Իբն ալ-Աթիր - 432
Իգնատիոս, մատենագիր - 210, 239
Իշաղ, իշխան - 434
Իսահակյան Ա. - 542, 550
Իսմայել, Աստվածաշնչ. - 369
Իսմայել, իշխան - 345
Իսրայել (*Տղին*) - 307, 469, տե՛ս Իսրայել Ա
Իսրայել, Մենծկուենի եպիսկոպոս - 453, 454
Իսրայել Ա Որմսեցի, Հայոց կաթողիկոս - 356, 357
Իսրայել, միաճճավոր, Աղվանից եպիսկոպոս - 321, 370-373, 383, 412, 423, 424-429, 431, 435, 450
Իսրաել Օրի - 496, 562, 620
Իրինն, Փոտ պատրիարքի մայր - 50
Իրինեոս Լուգդունացի - 145, 168

Լա Կրոզ Մ. Վ. - 368
Լաբուբնա, մատենագիր - 284, 289
Լակտանտիոս, մատենագիր - 88
Լամաթքին Ա. - 541
Լեկապենոս, ընտանիք - 49
Լեոնտիոս, կայսր – 355, 451
Լեոպարդի Ջ. - 541
Լեվի Հ. - 313, 316-318, 605, 606
Լիբերատուս, մատենագիր - 12, 24, 25, 28-30
Լևոն I, կայսր – 237, 238, 251
Լևոն II, կայսր - 252
Լևոն III Իսավրացի, կայսր - 49, 76, 326, 328, 329, 331, 467, 468, 471, 472
Լևոն IV Խազար, կայսր - 468
Լևոն V Հայազն, կայսր - 49, 317
Լևոն Ա, Հռոմի պապ - 239, 241, 450, 452, 467
Լևոն II Ռուրիկյան - 560
Լևոն Իմաստասեր, գիտնական – 50
Լևոնտիոս, զորավար - 420

Խազրիկ, խազարների անվանադիր նախնի - 433
Խազրական, ցեղանուն - 429
Խալաթյանց Գ.բ. - 244, 255, 278, 294-302, 304-307, 309-312, 323, 324, 337, 341, 351, 368, 601, 603, 604
Խալթ, Խազր, Խալիդ իբն Եզիդ իբն Մազիադ ալ-Շայբանի - 478-480
Խալիդ, Մահմետի զորավար - 327, տե՛ս Քաղբթ, Քաղաբթ
Խաղբակյանք, տոհմ - 495, 496, 503, 614, 615

Խաճղիոճ, առասպել. 177
Խաչատուր Կեչառեցի - 498, 615
Խաչիկ վարդապետ - 478
Խաչիկյան Լ. Ս. - 596, 597
Խոռազատ, Խոռոխազատ, պարսից զորավար - 390, 393-397, 413
Խոռոնաճ, պարսից զորավար - 378, տե՛ս նաև Շահր-Վարազ, Ռազմիռազան
Խոռոյամ, պարսից արքա - 251
Խոռոխրուտ, մատենագիր - 224
Խոսրով II Մեծ, Հայոց թագավոր - 195, 245, 249, 252-254, 260, 262, 266, 267, 270-272, 306, 548, 550
Խոսրով III Կոտակ, Հայոց թագավոր – 95, 96, 100, 188, 192, 199, 249, 272, 304-306, 365
Խոսրով IV, Հայոց թագավոր – 188, 192, 193, 196, 199, 249, 272, 274, 325, 336, 367
Խոսրով I Նուշիրվան, պարսից թագավոր - 56, 251, 373
Խոսրով II Ապրվեզ (Փարվեզ), պարսից թագավոր – 190, 197, 226, 229, 251, 255, 278, 298, 308, 373, 374, 377-380, 385, 387, 388, 393, 394, 396, 413, 414, 417, 444, 460
Խորեն Ա Մուրադրեկյան, Հայոց կաթողիկոս - 591, 608
Խռոխ-Որմիզդ (Խրոխ-Որմիզդ) - 224, 396
Խուրս, իշխան - 59

Ծառուր, Դավիթ Բենկի զորավար - 510

Ղազմոս, առասպել. - 282
Կաթ Խազր, խազար իշխան - 434
Կաթ Խասար, խազար իշխան - 434
Կալիսթենես, պատմագիր - 300
Կամիշո (Կամ-յեշո) - 197, 227
Կամովեղ, Հռիփսիմեի վանահայր - 197, 226
Կամսարականներ, տոհմ - 313, 314, 354, 356, 359
Կամուել, Աստվածաշնչ. - 227
Կայեն, Աստվածաշնչ. - 175
Կապոյտիրոց, կոմս - 421
Կասմ, արաբ զորավար - 463
Կասրե-Արդաշիր - 413, 414
Կատիշք, ցեղ - 392
Կատրամիդե, Հայոց թագուհի - 442
Կատուլինոս, հյուպատոս - 105
Կարակալլա, կայսր - 258
Կարեն, Կարենյանց տոհմ - 415, 416
Կարլայլ Թ - 581, 583
Կարոս, կայսր - 245, 249, 275
Կարպիանոս, Եվսեբիոսի հաստեատներ - 484
Կարրիեր Ա. - 294, 352, 368, 601, 603
Կավատ I, պարսից արքա - 33, 251, 253
Կավատ II, պարսից արքա - 251, 255, 377, 380, 382, 383, 386, 415, 416
Կարապետ Քաղիշեցի - 621
Կելեստինոս, Հռոմի պապ - 151
Կելեստիոս, աղանդավոր - 152
Կեղծ Փիլոն - 605
Կիպերտ Ռ. - 110
Կիրակոս, քահանա - 469
Կիրակոս, Տայոց եպիսկոպոս - 225
Կիրակոս Գանձակեցի - 326, 385, 463, 469-471, 481
Կիրակոս Ճգնավոր - 302
Կյուրեղ Ալեքսանդրացի - 11, 12, 14, 22-25, 28-31, 153, 163, 234, 239, 467
Կյուրիոն, վրաց կաթողիկոս - 9, 229, 241, 440, 447
Կյուրոս (Արտաքսերքսես, Արտաշես), պարսից թագավոր - 290, 299
Կյուրոս, Փասիսի եպիսկոպոս - 444
Կոմբեֆիս Ֆ. - 307
Կոմիտաս Ա Աղցեցի, Հայոց կաթողիկոս - 19, 186, 187, 189, 190, 197, 201, 203, 216,

217, 223, 227-230, 232, 233, 308, 309, 445, 454, 598
Կոճակ (Կոռճակ), Մամիկոնյան տոհմի նահապետ - 245, 247, 275, 276
Կոճիբեր Ֆ.Կ. - 84, 85
Կոռճակ, Խոսրով արքայի զորավար - 245, 275, 276
Կոստանդ, Կոստանդին Մեծի հայր – 252
Կոստանդ I, կայսր – 96, 105, 249
Կոստանդ (Կոստաս, Կոստանդին) II, կայսր – 251, 387, 392, 394, 395, 397, 399, 401-404, 406, 444-446, 458-460
Կոստանդին, Դավիթ Քեկի զինակից - 511
Կոստանդին (Կոստանդինոս) II Մեծ, կայսր – 96, 100, 101, 104, 105, 129, 199, 249, 252, 271, 279, 364, 410, 429, 474
Կոստանդին (Կոստանդինոս) Փոքր, կայսր – 105, 249
Կոստանդին III,կայսր – 251-253, 403, 458-460
Կոստանդին IV Պոգոնատ, կայսր – 458, 459, 472
Կոստանդին VI Ծիրանածին, կայսր - 46, 76, 431-433
Կոստանդին IX Մոնոմախոս, կայսր - 499, 500
Կոստանդին X Դուկաս, կայսր - 353
Կոստանդին Բաբուցիկ - 49
Կոստանդին Հայ, պավլիկյաններին առաջնորդ - 438, 439
Կոստանդին Մեղրեցի - 521
Կոստանդինե Մամադկոպիխան, Կախեթի թագավոր - 617
Կոստանդիոս, կայսր – 96, 102, 103, 107-111, 114-116, 119, 121, 123-126, 249, 273
Կոստանյանց Կ. - 399
Կոստաս, կայսերակից - 96, 105, 109, 110, 125, 249
Կոտյուն - 5, 7, 9, 10, 20-25, 29-40, 53, 56, 58-67, 71-75, 77-84, 86, 187, 189, 196, 198, 205-208, 212, 218, 224, 226, 312, 342, 367, 383, 590, 592, 593
Կրեսոս, թագավոր - 298, 299, 546
Կրմաճ, պարսից թագավոր - 35-37
Կուլակովսկի Ցու. Ա.- 118

Քաբել, իշխան - 73, 206
Քաբիր իբն Մասլամա, արաբ զորավար - 402
Քագար, Աստվածաշնչ. - 390
Քազկերտ I, պարսից թագավոր – 21, 35-38, 251, 253, 255, 272, 275
Քազկերտ II, պարսից թագավոր - 31, 32, 35, 37, 38, 132, 196, 249, 251, 272, 274, 314, 389, 390, 392, 393, 395- 397
Քազկերտ III, պարսից թագավոր - 251, 252, 277, 449
Քակոր, Աստվածաշնչ. - 456
Քակոր (Քակովը) Եդեսացի - 420
Քակոր Մծբնեցի - 173, 174
Քակոր Ուռհայեցի (Քարապնեցի, Սանահնեցի) – 353-355, 357, 359
Քակոբյան Ա. - 624
Քակոբյան Գր. - 623
Քակոբյան Պ. Հ. - 594, 601, 602, 618, 619, 621
Քակոբոս, Տեառնեղբայր - 73
Քակոբոս Առաքյալ - 77
Քամազասպ Մամիկոնյան, Թեոդորոս Ռշտունու փեսա (VII դ.) - 400, 402, 403, 408
Քամազասպ Մամիկոնյան, Վարդան Մամիկոնյանի հայր (V դ.) - 364, 366, 367, 404
Քամամ, Աղվանից թագավոր - 482
Քամամ Ամատունի - 315
Քամդանյաններ - 483
Քայկ Նահապետ - 278, 288, 347, 524, 542,

546, 548, 604
Հայկազյանց, տոհմ - 367, 414-416
Հայկազնյաց թագավորներ - 287, 292
Հայկյաններ - 256, 282, 286, 288
Հայրածայն, ոմն - 501
Հասան-Ջալալյան Սարգիս, արքեպիսկոպոս - 517
Հասան, Ապիրատի հայր - 499, 500
Հասան իբն Ալի ալ-Քաղղիսի (Քաղղոլի, ալ-Մամուն, Մամունիկ) - 477
Հասունյան Ա. - 187
Հարտման Կ. Ռ. Է. ֆոն - 573
Հարութիւն, Դավիթ Բեկի զորավար - 510
Հարութիւն Վաղարշապատցի - 520
Հարուն ալ Ռաշիդ, խալիփա - 475, 520
Հարուն ալ Վալիդ (Վասիկ), խալիփա - 457, 458, 474, 480
Հացունի Վ. - 319, 320, 322, 360-365, 368-370, 373, 375-377, 384, 387, 410, 487, 488, 606, 607, 610
Հեզուտ- Խոսրով, Աղվանից իշխան - 388
Հելիոգաբալ, կայսր - 457
Հեղինե, Գրիգոր Մամիկոնյանի կին - 424
Հեսիոդոս, մատենագիր - 167
Հեսու, Աստվածաշնչ. - 376, 525
Հեսու, հերծվածող - 436, 438, 439
Հերակլ (Հերակլիոս), կայսր - 49, 50, 245, 251, 252, 278, 292, 327, 328, 373, 374, 378-380, 386, 387, 393, 394, 398, 400, 403, 410, 416, 443-446, 449, 458, 602,
Հերակլեոն, կայսր - 251
Հերդեր Ի. Գ. - 544
Հերք, աշխարհագիր - 465
Հերմոգենես, հռոմեական կառավարիչ - 122
Հերոդոտոս - 288
Հերոնիմոս, սր. - 43, 116, 155
Հերովդես, հրեից թագավոր - 222
Հիշամ (Հեշամ, Հեշմ), խալիփա - 330, 331, 345, 465
Հիպպոլիտոս - 143, 151, 156, 157, 171, 173
Հիսե (Իսա) իբն շեյխ իբն Խալիդ – 481, տե՛ս Եսայի, Շեխի որդի
Հիսուս Քրիստոս - 13, 41, 47, 58, 59, 61, 82, 148, 153, 197, 210, 213, 214, 222, 227, 234, 239, 267, 291, 331, 336, 337, 339, 347, 353-355, 357, 377, 390, 398, 424, 441, 455-457, 474, 491, 548
Հմայակ Մամիկոնյան, Արտավազդ Մամիկոնյանի որդի - 60, 61, 346
Հյուրշման Հ. - 225
Հյուզո Վ. - 541
Հյուրի Ժ. - 567, 585
Հյուրկանոս, հրեից քահանայապետ - 300
Հյուրմուզ Երվանդ, եպիսկոպոս - 452, 458
Հոհան Մանուկ - 477
Հոհանիկ, կաթողիկեի վանահայր - 190, 228, 229
Հոմերոս - 167, 542, 544, 565, 585
Հոն, երից - 20
Հոնորիոս, կայսր – 250-253, 272
Հովակիմ, Գարդմանի եպիսկոպոս - 453
Հովել, Մեծիրացց եպիսկոպոս - 321, 370-372, 383, 384, 450, 452
Հովինհաւոս, սատրապ - 123
Հովհան, Աղվանից կաթողիկոս– 385-387
Հովհան, Թղթի հեղինակ - 233
Հովհան, Վարդանի որդի - 191
Հովհան Բագավանցի, հակաթոռ կաթողիկոս – 436, 445
Հովհան Մամիկոնյան - 209, 229, 396, 460
Հովհան Մայրագոմեցի (Մայրավանեցի) – 435-440, 445, 453, 454
Հովհան Մանդակունի, Հայոց կաթողիկոս - 32, 66, 182, 183, 190, 302, 303
Հովհան Ոսկեբերան - 19, 27, 44, 208, 209-213, 216, 217, 220-222, 227, 239
Հովհան Որոտնեցի - 499

Հովհաւ Օձնեցի, Հայոց կաթողիկոս - 9, 437, 439, 446, 469, 470, 472
Հովհաննես, Դավիթ Բեկի զորավար - 510
Հովհաննես, եպիսկոպոս – 191
Հովհաննես, Երուսաղեմի հայրապետ - 456
Հովհաննես (Ավան), զորավար - 508, 518
Հովհաննես, Կապաղակի եպիսկոպոս - 453
Հովհաննես, Կոստանդնուպոլսի պատրիարք - 22
Հովհաննես (Մուավիա), տեր տերանց - 478-480
Հովհաննես Բ Գաբեղենացի, Հայոց կաթողիկոս – 190, 386, 454
Հովհաննես Ե Դրասխանակերտցի, Հայոց կաթողիկոս - 76, 207, 218, 228, 302, 308, 311, 321, 356, 357, 403, 420, 424-426, 447, 454, 461, 463, 464, 479, 482
Հովհաննես Ավետարանիչ - 191, 446
Հովհաննես Անտիոքացի - 11-14, 30, 31
Հովհաննես Արծրունի, եպիսկոպոս - 480
Հովհաննես Գառնեցի - 498, 499, 615
Հովհաննես Երզնկացի - 498
Հովհաննես Թլկուրանցի - 621
Հովհաննես Մալալա, պատմագիր – 300, 310
Հովհաննես Մեղրեցի, Դավիթ Բեկի զինակից – 511
Հովհաննես Մկրտիչ, սբ. - 448, 449
Հովհաննես Չավնդուրցի, Դավիթ Բեկի զինակից - 510
Հովհաննես Չմշկիկ, կայսր - 50
Հովհաննես Սենեքերիմ, Աղվանից թագավոր - 321
Հովհաննես Քերական, Կոստանդնուպոլսի պատրիարք - 50
Հովհաննիսյան Ա. - 619
Հովհաննիսյան Հ. - 542
Հովհաննիսյան Պ. Հ. - 590, 592, 606, 614, 615
Հովնան Խոստովանող - 32, 60, 66
Հովսեփ, Աղվանից կաթողիկոս – 481
Հովսեփ, վանական - 448, 449
Հովսեփ Պաղնացի - 23, 24, 30, 31, 33, 60, 66, 335, 525
Հովսեփոս Փլավիոս - 299-301
Հովսեփյանց (Հովսեփյան) Գ. – 5, 6, 228, 409, 470, 471, 495-503, 599, 613-615
Հոիփսիմե, Արծրունյաց տիկին - 323
Հոիփսիմե, սբ. - 189, 197, 213, 227, 308
Հոիփսիմյանք, սբ. - 196, 223, 226, 228, 598
Հոռոմոս, առասպել. - 473
Հոռփաեոս (Հոռփաեոս), գրիչ - 21, 27, 31, 38, 40, 41
Հրահատ IV, Պարթևաց թագավոր - 300
Հրունիք, տոհմանուն - 341
Հուդիք, Աստվածաշնչ. - 220
Հուլիաեոս, աղանդավոր - 152
Հուլիաեոս, կայսր - 102, 104-106, 109, 111, 112, 116, 124-127, 129, 130, 249, 279
Հուլիաեոս, հյուպատոս - 211
Հուլիոս Հռոմեացի - 239
Հուսիկ Ա Պարթև, Հայոց կաթողիկոս - 188, 190, 192, 199, 201, 224, 225
Հուստինիաեոս I, կայսր - 47, 48, 87, 195, 244, 247, 277, 361-363, 446
Հուստինիաեոս II, կայսր - 251, 355, 356, 381, 399, 419, 420, 421-423, 450, 451
Հուստինոս II, կայսր - 251
Հուստինոս Վկա, մատենագիր - 156

Ջագիկ, իշխան - 466
Ջափիկ, Մոկաց եպիսկոպոս - 55

Ղազար, Դավիթ Բեկի զինակից - 511
Ղազար Փարպեցի - 9, 10, 21, 31, 32, 38, 41, 56, 63, 64, 67, 68, 132, 133, 196, 204, 207, 212, 284, 285, 291, 292, 311, 315, 316, 341, 367, 383, 415, 426, 592, 606

Ղազարյան Վ. – 619
Ղազիօղլի, Սափի դուլիի զինակից - 509
Ղաբագյոզ, Դավիթ Բեկի զորավար - 510
Ղիջի, Դավիթ Բեկի զինակից - 510
Ղևոն, կայսր - 354, տե՛ս Լեոն Իսաւրացի
Ղևոնդ (Ղևոնդես, Ղևոնդեոս), Մեսրոպ Մաշտոցի աշակերտ- 11, 13, 22-24, 30, 34, 189, 225, 226
Ղևոնդ, պատմիչ - 6, 76, 278, 302, 310, 323-333, 335, 336, 338, 341-351, 357, 368, 375, 408, 419, 420, 422, 424, 426, 430-432, 459-464, 466, 468, 471, 607
Ղևոնդ Ա Երասխեցի, Հայոց կաթողիկոս -190
Ղևոնդ Երեց – 24, 525
Ղուկաս Ավետարանիչ - 81, 82, 208, 446
Ղուկաս Սեբաստացի Ստեփանյան - 506, 508, 511, 616, 617
Ղուջու մելիք, Դավիթ Բեկի զինակից - 511

Ճեմբուխ (Ճեպհառխ), խազար զորավար - 276, 379
Ճեմճեմյան Ս. - 616
Ճենբակուր, առասպել. - 277, 341, 602

Մագնենտիոս, զորավար - 109, 110, 115
Մաթուսաղա Սյունեցի, ուսուցչապետ - 445, 449
Մաթևոսյան Ա.Ս. - 590, 613
Մազդակ, անձնանուն - 54
Մալարմե Ս. - 569, 570, 580, 582
Մալխասյանց Ստ. - 36, 243, 244, 247, 248, 250, 254, 255, 267, 268, 274, 279, 601, 602, 607
Մակարայեցիք, Աստվածաշնչ. - 217
Մակար, Երուսաղեմի հայրապետ - 455, 456
Մակեդոն, հերձվածող - 19, 27, 199
Մակլեր Ֆ. - 484, 487
Մահի, Խուռամյան աղանդի առաջնորդ - 348
Մահմեդ, Աբլմենդի Եմենիկի որդի - 481
Մահմեդ (Մահմեդ իբն Խալիդ) Խալիդի (Խալթի) որդի - 479, 480
Մահմետ, ամիրմումին - 457
Մահմետ, զորավար - 329, 330
Մահմետ, Հայաստանի ոստիկան - 422
Մահմետ, Մահմեդ մարգարե - 327, 328, 331, 457
Մահումատ ի Ղանքաբյան - 453
Մաղա Ջուղին Տիլեմչի, Դավիթ Բեկի զինակից - 511
Մամակ (Մամգոն) - 276
Մամբրե Վերծանող - 312
Մամգոն (Մամգուն, Մամկուն, Մամիկ), Մամիկոնյան տոհմի նախահայր - 245, 247, 276, 277, 364, 366
Մամիկոնյանների տոհմ - 32, 244, 245, 247, 275-278, 292, 306, 313-315, 343-345, 347, 364-366, 368
Մամուն, խալիփա - 475-477
Մամունիկ (Բաղդադի, Հասան իբն Ալի ալ-Բաղդիսի ալ-Մամուն) - 477
Մանակ, անձնանուն - 201
Մանանդյան Հ. - 368, 590, 602
Մանավազյաններ, նախարարական տոհմ - 305
Մանեն, անձնանուն - 201
Մանի, աղանդավոր - 158
Մանուել, Աստվածաշնչ. - 181
Մանուել Մամիկոնյան (IV դ.) - 365
Մանուել Մամիկոնյան (IX դ.), զորավար - 49, 315
Մանուչար, առասպել. – 491
Մանուչար մելիք Ուռպելյանց Տաթևացի - 517
Մամբու, նվիրատու - 502
Մաշթոց (Մաստուրիոս, Մաժդոց, Մազդոց, Մաշտոց) Մեսրոպ (Մեսրովբ, Մեսրոպ) - 7-

10, 17, 19-23, 26-28, 30-32, 34-44, 46, 52-63, 65-67, 72, 74, 75, 79, 82, 84, 147, 150, 187, 189, 196, 206, 207, 224-226, 284, 309, 311, 336, 367, 370-372, 438, 589, 590, 592
Մաշդոց, Խորխոռունյաց եպիսկոպոս - 10
Մառ Ն. - 64, 69, 180, 255, 267, 592, 594, 597, 601, 602, 621
Մասուղի, պատմիչ - 297, 391, 432
Մավրիանոս, զորավար - 401, 402
Մավրիկիոս (Մորիկ), կայսր - 251, 252, 403, 443
Մատթեոս, եպիսկոպոս - 230
Մատթեոս Ավետարանիչ - 191, 208, 209, 213, 214, 221, 375, 446, 485
Մատթեոս Ուռհայեցի - 223, 353, 354, 500, 608
Մատիկյան Ա. - 592, 602
Մարաբաս, Մարաբա Մծուրնացի, Մարիքաս, Մար Աբաս Կատինա - 63, 255, 280-283, 285-292, 601
Մարաթոն, Նիկոմեդիայի եպիսկոպոս - 19
Մարգարիտ, սր. - 470, 471
Մարգըրիտ Պ. – 569
Մարդպետական տոհմ – 447, 448
Մարիամ, Գրիգոր Եղուստրի կին - 399
Մարիամ Աստվածածին - 239, 455
Մարիես Լ. - 9, 131, 133-140, 145-147, 149, 157, 162-168, 595
Մարինոս, գնոստիկյան - 140
Մարինոս Մամիկոնյան, պատրիկ - 49
Մարկելլինոս, հերձվածող - 152
Մարկիանոս, կայսր - 237, 251
Մարկիոնոս, գնոստիկյան - 136, 137, 140, 142, 145, 146, 150, 166-168
Մարկոս, հերձվածող - 140
Մարկոս (Մակար), Երուսաղեմի հայրապետ - 455
Մարկոս Ավետարանիչ - 446, 485
Մարկվարտ Ցո. - 315, 319, 350, 368, 419, 431-434, 462, 463, 595, 605
Մարս, դից. - 127
Մար-Սերովբ - 56, տե՛ս Մաշքոց
Մարսյակ, առասպել. - 256, 281, 282
Մարտիրոսյան Ա. Ա. - 590, 592
Մաքսիմիանոս, կայսր - 249, 252
Մաքսիմինոս, կայսր - 249
Մաքսիմիլիանոս, կայսր - 249, 250, 252
Մաքսիմոս, հերձվածող - 452
Մեգեթիոս, հերձվածող - 140
Մեթոդիոս Պատրացի կամ Օլիմպիացի, մատենագիր - 138, 140-142, 145, 146, 150, 162-164, 166, 170, 171, 173
Մեհրաբ (Մերաբ), անճնանուն - 57
Մելիք-Թանգյան Ն. - 504, 520, 522, 524, 616
Մելիքսեթ-Բեկ Լ. - 454, 611
Մեծկվելի, իշխաններ - 416
Մենելաոս, առասպել. - 473
Մենեղավոս, Աստվածաշնչ. - 74
Մետեռլինկ Մ. - 585
Մերիքանես, վրաց թագավոր - 126
Մերոզ, առասպել. - 277
Մերուժան Արծրունի - 365
Միխայլովսկի Ն. - 567
Միհր, դից. - 57, 457
Միհր, եպիսկոպոս - 448
Միհրական, տոհմ – 414-418
Միհրան, Միհրեան, պարսից Խոսրով II թագավորի ազգական - 388, 389, 413, 414
Միհրավան, Աղվանից թագավոր - 414, 415
Միհրդատյանց Թ 174, 244, 602
Միհրներսեհ, պարսից հազարապետ - 132
Միմ Ժ.-Պ. - 589
Մինաս, Դավիթ Բեկի զինակից - 510
Մինասյան Մ. - 956, 608
Միստրալ Գ. - 541
Միր (Միհր), Աղարճասեի թոռ - 417

Միրիամ, Միհրան, Կասրե-Արդաշիրի որդի - 413, 414, 417
Միրհոնդ (Մոհամմեդ իբն Հավանդշահ Միրհոնդ, Միրհովենդ), պատմագիր - 297
Միրվանոս (Միհրավան, Միհրպան, Միրիրանես) - 413-415
Միտր, դից. - 57
Միքայել, Աղվանից կաթողիկոս - 385, 452, 455, 456
Միքայել, քահանա - 453
Միքայել II Թլվատ, կայսր – 49
Միքայել III, կայսր - 425
Միքայել Ասորի - 333, 350, 382, 422, 433, 468, 472
Մլեհ, իշխան - 57
Մլքե, թագուհի - 6, 486-489, 613
Մխիթար, անապատական - 448
Մխիթար, Ամարասի եպիսկոպոս - 448
Մխիթար Այրիվանեցի - 353, 354, 470-472, 498, 499
Մխիթար Անեցի - 327
Մխիթար Հերացի - 223
Մխիթար Սեբաստացի - 545, 621
Մխիթար Սպարապետ - 506, 510, 520, 522, 526
Մխիթարյան Ա. - 497
Մհեր, անձնանուն - 57
Մյասնիկյան Ա. - 559
Մյուռն Ա. դր - 541
Մաղեստոս, Կոմիտաս կաթողիկոսի հաւցնատեր - 197, 216
Մոնազոն - 343
Մորդտմանն Ա.Դ. - 253
Մորեաս Ժ. - 569, 570
Մորիս Շ. - 569, 580
Մորիս դր Գերեն - 541
Մորոխովեց, Երևանի ոստիկանապետ - 537, 618
Մովսես, ասավածաբան - 233
Մովսես, Ասավածաշնչ. - 436, 525
Մովսես, եպիսկոպոս - 33
Մովսես, քահանա - 429
Մովսես Բ Եղիվարդեցի, Հայոց կաթողիկոս – 190, 229, 436, 439, 445
Մովսես Զեյթունցի, քահանա - 559, 562, 622
Մովսես Խորենացի - 5, 6, 9, 27, 38, 56, 63, 67, 76, 95, 96, 131, 136, 195, 201, 207, 208, 218, 224, 243-248, 258, 260-263, 266, 268, 269, 271-282, 285-292, 294-296, 298-307, 309-316, 318, 319, 321-325, 332, 333, 335-338, 340-344, 347, 348, 350-354, 360-369, 383, 392, 427, 430, 432, 441, 508, 542, 601-609, 614, 620
Մովսես Կաղանկատվացի - 5, 195, 207, 211, 224, 319-322, 360, 361, 369, 370, 373, 376, 378, 382-387, 389, 392-394, 397, 406, 408, 410, 414, 416-418, 421, 426, 428-430, 432, 433, 437, 439, 440-443, 447, 448, 452, 454, 456-466, 468, 469, 471, 473-475, 477-479, 606, 607, 609-611
Մովսես Սյունեցի - 470, 471
Մովսես Փիլիսոփա - 292, 311, տե՛ս Մովսես Խորենացի
Մովսիսյան (Մովսես Խորենացի) - 344
Մոլիմա (Մասլամա), զորավար - 329, 331, 430, 465, 466
Մրվան - 345, 414, 464, տե՛ս Մոհամմադ իբն Մրվան
Մրվան իբն Մուհամմադ - 431, 432, 461
Մուավիա, Բաբաքի որդի - 479
Մուավիա, խալիփա - 328, 357, 401-404, 407, 408, 457
Մութավաքիլ, խալիփա - 458, 481, տե՛ս Ջափր ամիրմումնի
Մուհամմադ իբն Եզիդ Շիբվանշահ - 432
Մուհամմադ իբն Խալիդ Բուխարա-խոդա -

479, 480, տե՛ս նաև Քուլխար Խոյաս, փառգոս
Մուհամմադ իբն Հումայիդ ալ-Տուսի - 476
Մուհամմադ իբն Մրվան, Արդ ալ-Մալիք խալիփայի եղբայր - 451, 461-465
Մուհամմադ իբն Մուսափիր ալ-Մարզպան (Սալար Դելիմիկ) - 482
Մուշե Ա Այլաբերցի, Հայոց կաթողիկոս - 190
Մուշեղ, Գրիգոր Մամիկոնյանի որդի - 346
Մուշեղ, Մուշեղ Մամիկոնյանի որդի - 346
Մուշեղ Մամիկոնյան (IV դ.), սպարապետ - 278, 303, 364, 366, 551
Մուշեղ Մամիկոնյան (591թ.) - 443
Մուշեղ Մամիկոնյան (VII դ.) - 390-392, 413, 449
Մուշեղ Մամիկոնյան, Թեոդորոս Ռշտունու զինակից – 401, 402
Մուսա, խուռամյան աղանդավոր - 334
Մուսի, Ագուլիսի մելիք - 507, 520
Մուտենիաննոս, պրեֆեկտ - 117, 122

Յազդակ, իշխան - 418
Յեզդ, աղանդավոր - 438
Յովաթամ, Աստվածաշնչ. - 160
Յովննան, Աստվածաշնչ. - 605
Յուստ Ֆ. - 602

Ֆարուգոդրոնոսոր, թագավոր - 286

Նազարյան Ս. - 536
Նալբանդյան Մ. – 538-540, 555, 556, 558, 559, 565, 620
Նալբանդյան Վ. - 624
Նահապետ Քուչակ - 542
Նահապետյան Գ. - 595
Նանա, ասորի սարկավագ - 349
Նապոլեոն III - 559, 560
Նարբեյ Խ. - 542
Նարգիզ (Նարկիս), դից. - 574, 575, 577, 578, 624
Նարկեսոս, կայսր – 251-253
Նարսեհ, Շապուհի պատվիրակ - 117
Նարսեհ, պարսից թագաժառանգ - 107-110
Ներքովդ, Աստվածաշնչ. - 428
Նեռ - 439
Ներոն, կայսր – 281, 330
Նեստոր (Նեստորիոս) - 9-12, 15, 17-20, 25, 39, 40, 148, 163, 234
Ներսեհ (VIII դ.), Հայոց իշխան - 431
Ներսեհ (Նարսեհ), պարսից թագավոր - 88-99, 109, 249, 272
Ներսեհ, Սոմխեթիի իշխան - 354, 356, 358, 359
Ներսեհ Կամսարական (VII դ. վերջ.), Հայոց իշխան – 421, 422
Ներսեհ (Ներսիկ) Փիլիպպյան, իշխան - 476
Ներսես (Ներսես-Քակուր), Աղվանից կաթողիկոս – 385, 450-452
Ներսես (XVIII դ.), Աղվանից կաթողիկոս - 617
Ներսես, եպիսկոպոս - 520, 522, 524
Ներսես, Շիրակի և Արշարունիքի տեր - 397
Ներսես Ա Մեծ, Հայոց կաթողիկոս - 87, 112, 113, 118, 190, 192, 199, 306, 307, 309, 525
Ներսես Բ Բագրևանդեցի, Հայոց կաթողիկոս - 10, 190, 240, 242, 437-439
Ներսես Գ Իշխանեցի, Հայոց կաթողիկոս - 190, 303, 357, 401, 402, 424, 425, 444, 460
Ներսես Դ Շնորհալի, Հայոց կաթողիկոս - 498
Ներսես Ե Աշտարակեցի, Հայոց կաթողիկոս - 535
Ներսես Լամբրոնացի - 498
Ներսես Տարոնացի - 499
Ներսիկ, Աղվանից իշխան - 475
Ներվալ Ժերար դե - 541, 567
Նեքտանեբոս, թագավոր - 299
Նիքոգ Հ. Ս. - 195

Նիկետաս, Հերակլ կայսեր զարմիկ - 400, 403
Նիկեփոր, պատրիարք - 379, 382
Նիկիտա, ներքինի - 425
Նիցշե Ֆ. - 573
Նյոլդեքե Թ. - 253
Նոխոդար (Նահոդար), պարսից զորավար - 115, 124
Նորայր Բյուզանդացի - 131, 180, 352, 595, 608
Նուրբար, Դավիթ Քեկի զինակից - 509, 510
Նունե, Վրաց առաքելուհի - 364

Շաք, իշխան - 320, 321, 380
Շաք, Ջերու խաչքանի որդի - 381, 382, 387, 434
Շալահեշմ (Շամահեշմ), խալիփա - 471
Շահազիզ Ս. - 542
Շահակ, անճնանուն - 201, 224, 225
Շահակ Ա Մանազկերտցի, Հայոց կաթողիկոս - 188, 190, 192, 199
Շահապ, անճնանուն - 225
Շահապ - 225, տե՛ս Կիրակոս եպիսկոպոս Տայոց
Շահեն, անճնանուն – 225
Շահեն, պարսից զորավար - 378
Շահիկ, անճնանուն – 225
Շահիճ, հայ զորական - 514
Շահինյան Լ. - 602
Շահիսլամօղլի, Սափի ղուլիի զինակից - 509
Շահխաթունյան Հ. - 496, 505
Շահնազարյանց Կ. - 360, 361, 410, 474, 505, 607, 610
Շահնավազ, վրաց իշխան - 506, 507, 513
Շահր-Վարազ, պարսից զորավար - 378, 381, 382, 417, տե՛ս նաև Խոռեամ, Ռազմիռազմ
Շահրակ, անճնանուն - 201
Շահրապահական (Սարաբլագան) - 378
Շահրեն, անճնանուն - 201
Շահրեստանի, մատենագիր - 146, 148
Շահրիար, Աղվանից իշխան - 396, 397
Շահրիար, արաբ զորավար - 327
Շահրիկ, անճնանուն - 201, 225
Շահումյան Հ.-Ա. - 616
Շահումյան Հ. - 506
Շահումյան Մ. - 616
Շահումյան Ո. - 506
Շահումյան, ընտանիք - 505, 506
Շամիրամ, թագուհի - 282, 286, 604
Շամսոր Ֆ., լրագրող - 569
Շանթ Լ. - 619
Շայբանի, տոհմ – 481
Շապուհ, Աղվանից իշխան - 476
Շապուհ, Աշոտ Մսակերի եղբայր - 317
Շապուհ Ամատունի, իշխան - 315, 326
Շապուհ Արծրունի, նահատակ - 480
Շապուհ Բագրատունի, Վևոնդի պատմության պատվիրատու - 326, 327, 335, 341, 350, 479
Շապուհ Երեց - 480
Շապուհ Պարսիկ, Հայոց թագավոր - 196, 199, 272, 274
Շապուհ I, պարսից թագավոր - 88, 249, 272, 275, 306, 366
Շապուհ II Երկարակյաց, պարսից թագավոր - 41, 90, 95, 100, 101, 106, 108, 110-117, 119, 121-124, 249, 250, 253, 270, 272, 274, 366
Շապուհ III, պարսից թագավոր - 21, 38
Շատորբրիան Ֆ. դե- 544
Շարին, պարսից թագավոր - 273
Շենին Ա. - 541
Շերո, Աղվանից իշխան - 418, 450, 452-454, 464-466
Շերո ի Մերդաճշահյան, իշխան - 453
Շեքյան Միքայել, վարդապետ - 548
Շմավոն (Symeon), վանահայր - 237, 238

Շմուել, աղանդավոր - 439
Շմուել, ասորի հոգևորական - 228
Շոպենհաուեր Ա. - 574
Շրուան, հայ զորական - 514
Շուշիկ, Վարազ-Գրիգորի քույր - 388

Ձգիա, Աստվածաշնչ. - 160
Ոլիմպիոդորոս, մատենագիր - 218
Ոսկյան, Պ., նկարիչ - 548
Ոսկյան Հ. - 16
Ովքեղլա, (Ուրայիդալլահ), Հարուն ալ-Ռաշիդի եղբայր - 475
Որդուձիներ, նախարարական տոհմ - 305
Որմիզդ, դից. - 8, 146-148, 324
Որմիզդ, պարսից թագավոր – 90, 190, 249, 251, 255, 272
Որոգինես (Որիգինես) - 27, 137, 149

Ջաք Խազր, խազար իշխան - 429
Չաքկասար, սենեկապետ - 429
Չամչյան Մ. - 24, 38, 291
Չարենց Ե. - 603, 604, 609, 610
Չերազ Մ. - 554
Չխենիձե Ս., վրաց պատմիչ - 513
Չմշկիկ, ընտանիք - 49
Չոպանյան Ա. - 319, 539-542, 548, 549, 554-556, 558-561, 607, 609, 610, 616, 619-621
Չորպան-Թարխան, խազարների զորավար - 376, 381, 434

Վալի, Դավիթ Բեկի զինակից - 505, 510
Պահլավ, տոհմ - 493
Պաղինոս, հյուպատոս - 211
Պայինդուր, Դավիթ Բեկի զորավար - 510
Պայինդուր (Չավնդուրից), Դավիթ Բեկի զինակից - 510
Պայինդուր (Շնհերից) Դավիթ Բեկի զինակից - 510
Պապ, Դավիթ Բեկի զորավար– 509-512, 521
Պապ, Հայոց թագավոր - 55, 188, 192, 199, 246, 249, 272, 307, 365, 366
Պապակ Պռոշյան - 496
Պասքամ, Հայոց նահապետ - 287
Պավղոսակ, գրիչ 191
Պատկանյան Ռ. (Գամառ Քաթիպա) – 538, 539, 620
Պատկանյան (Պատկանով) Ք. - 243, 244, 247, 344, 601, 602, 607
Պատրիկ ի Քամղիտան, Աղվանից իշխան - 453
Պարթամասիր, Հայոց թագավոր - 607
Պարթև, տոհմ - 493
Պարիս, առասպել. - 473
Պարույր, Հայոց թագավոր- 286, 290
Պարոնյան Ս.- 187, 376, 609
Պեգասոս, առասպել. - 95
Պելագիոս, հերձվածող - 27, 152, 154-157
Պեղիճ, եպիսկոպոս - 237, 238
Պեշիկթաշլյան Մ. – 538-542, 547-551, 553-556, 559, 561, 619-622
Պետրարկա - 545
Պետրոնաս Մամիկոնյան - 49, 315
Պետրոս, Ալեքսանդրիայի պատրիարք - 237, 238
Պետրոս Առաքյալ - 377
Պետրոս Մեծ - 514, 515, 518, 617
Պետրոս Պատրիկիոս - 96, 101
Պերոզ, պարսից արքա - 32, 33, 251-253, 261-264, 266, 268, 269, 314, 415
Պերսիդիոս, հերձվածող - 152
Պիկո Ժ. Ֆ., դիվանագետ - 622
Պիվազյան Էմ. - 621
Պլինիոս Կրտսեր - 430
Պղատոն - 168
Պոլիկրատես, պատմիչ - 299
Պողարյան Ն. - 597, 598, 600

Պողոս Առաքյալ - 59, 73, 74, 84, 85, 210, 220, 226,
Պողոս Միակաճ, Կարինի եպիսկոպոս - 444
Պողոս Սամոսատցի, աղանդավոր - 234
Պողոքերա (Pulcheria), կայսրուհի - 237, 238
Պորփյուր, փիլիսոփա - 311
Պռոշ Պռոշյան, իշխան - 496
Պռոշյանց տոհմ - 495, 496, 498, 499, 614, 615, 620
Պրիամոս, առասպել. - 474
Պրոբոս, կայսր - 249
Պրոկղ, եպիսկոպոս - 9, 589
Պրոկղ, պատրիարք Կոստանդնուպոլսի - 11-19, 24-26, 28, 29, 54, 56, 156, 163, 233, 239
Պրոկոպիոս, զորավար - 129
Պրոկոպիոս Կեսարացի - 87, 257, 267, 280, 281, 288, 291, 296, 297, 591
Պրոսպերիուս, կոմիտ - 121

Ջալալյան, տոհմ - 496
Ջալալեդին Ռումի - 541
Ջալալյանց Ս. - 497
Ջակսոն Ա. Վ. Վ. - 68-70
Ջահապ, արաբ իշխանավոր - 349, 479
Ջամասպ, պարսից թագավոր - 251, 253, 254
Ջառահ, արաբ զորավար - 431, 433, 465
Ջափր, ամիրմումնի - 458, 480
Ջափր, Ասորաց եպիսկոպոս - 480
Ջեբու (Ջիներել), խաքան - 374, 375, 379-382
Ջնդոյան Ն. - 17
Ջվանշեր, Վախտանգ Գորգասալի դայակ - 416
Ջուանշեր, Աղվանից պատմիչ – 414-416
Ջևանշեր, Աղվանից իշխան - 360, 361, 369-373, 387-390, 392-395, 397, 398-400, 403-414, 416-419, 421, 425, 459, 465, 466
Ջևանշեր-Կասրե (Խոսրով), պարսից թագավոր - 417
Ջևանշեր Ջևանշերյան, Միր իշխանի փեսա - 417

Ռաբուլաս (Ռաբիլաս, Բաբիլաս), Եդեսիայի եպիսկոպոս - 11, 13, 20, 22, 25, 26, 28, 31, 32, 39
Ռազմիռազան (Շահր-Վարազ, Խոռեական), պարսից զորավար - 378
Ռամբո Ա. - 49, 591
Ռաուլինսոն Հ. 109
Ռենիե Ա. դը - 584
Ռընան Է. - 567
Ռիխտեր Կ. Ֆ. - 253
Ռոդ Է. - 569
Ռոզալբա Մարիամ-Վարվառե Շահումյան 506, 616
Ռոճվեհ, Ռոճվեհան (Ռոզբեհ), պարսից զորավար - 380
Ռոմանոս, կայսր - 10
Ռոստոմ, զորավար - 389, 390, 392, 393, 396, 413, 491
Ռոստոմ, Բարանի զորավար - 476
Ռոստոմ ի Վաչագան ի Վարազքոյան Ցունսատահյան, Աղվանից իշխան - 453
Ռստակես (Արիստակես) - 190
Ռուբեն, զորավար -51
Ռուբինյան տուն - 561
Ռուսինյան Ն. - 562
Ռուստեմ, Դավիթ Բեկի զինակից - 520
Ռուփինոս Ասորի - 27, 155
Ռուֆոս Փեստոս - 89, 91, 108, 109, 116
Ռև, Միքիաս թագավորի որդի - 417

Վաբինհաուս, զորավար - 123
Սաքենիկ, Հայոց թագուհի - 290
Սալար Դելիմիկ - 482, 483, տե՛ս Մուհամմադ իբն Մուսափիր ալ-Մարզպան
Սալմ (Սաբմ), առասպել. - 491, 492

Սալմուէլ, Արպադի հայր - 433
Սահակ, անձնանուն - 224, 225
Սահակ, Ամարասի եպիսկոպոս - 453
Սահակ, Աշոտ Մսակերի որդի - 349, 350
Սահակ, Գողթնի իշխան - 325
Սահակ, կնոջ կաթողիկոս - 456
Սահակ Բագրատունի, Աշոտ Սահակյանի որդի - 349
Սահակ Բագրատունի (IV դ.), Հայոց սպարապետ – 365-367
Սահակ Բագրատունի, Մովսես Խորենացու մեկենաս - 335, 341, 343, 348-350, 367
Սահակ Ա Պարթև, Հայոց կաթողիկոս - 17-20, 23, 32, 38, 40-43, 52, 54, 56, 58, 60-62, 72, 75, 187, 189, 190, 196, 197, 201, 222, 226-229, 233, 274, 311, 313-316, 325, 336, 350, 364-367, 372, 423, 438, 525, 589
Սահակ Բ Ուղղեցի, Հայոց կաթողիկոս - 190
Սահակ Գ Ջորափորեցի, Հայոց կաթողիկոս – 190, 199, 201, 307, 308, 316, 320, 355-357, 421, 422, 424, 429, 445, 451, 462, 463
Սահակ Սևադա, Աղվանից իշխան - 321
Սահակադուխտ, Սահփանոս Սյունեցու քույր - 471
Սահլ Սմբատյան Եռաճշահիկ - 478, 479, 611
Սամադոլե, ճվիքաւոր - 500, 501
Սամուել, Աղվանից կաթողիկոս - 450
Սամուել, Հռիփսիմեի վանահայր - 190, 197, 226, 227, տե՛ս նաև Կամսվեղ
Սամուել, Մեծկողմանց եպիսկոպոս - 481
Սամուել, քահանա - 302
Սամուել Անեցի - 327, 441, 453, 598
Սամուել Ա Արծրունի, Հայոց կաթողիկոս - 190
Սամուել Մամիկոնյան - 364, 366
Սայիլ Միրզա, Կաց (Գաց) գյուղի տեր - 509, 517
Սայրս Մ., դիվանագետ - 622
Սամոսատուկ, Հայոց թագավոր - 246, 258-263, 265, 283, 285, 290, 291, 301
Սանդուխտ, Սամոսատուկ թագավորի դուստր - 301-303
Սանհոսագ, մագքութների թագավոր – 365, 432
Սապիր (Սպեր), ցեղանուն - 55
Սասանյան (Սասանականք), տոհմ- 92, 196, 244, 253, 254, 275, 277, 297, 313, 369, 381, 389, 391, 395-397, 413-415, 418
Սարգիս, Դավիթ Բեկի զինակից - 511
Սարգիս, Քանահատ վանքի ճվիքաւոր - 500, 501
Սարգիս, քահանա - 615
Սարգիս Ա Սևացի, Հայոց կաթողիկոս - 327, 499
Սարգիսյան Բ. - 186, 187, 352, 471, 487, 488, 592, 602, 609
Սարգսյան Գ. Խ. - 602, 608
Սարդանապալ, թագավոր - 286
Սարին, Դավիթ Բեկի զինակից - 511
Սարհանգ Հայկազուն - 287
Սարուխան Ա. - 614
Սարուխան, հայ զորակոչ - 514
Սատո, Աղվանից թագավոր - 414
Սափի ղուլի, Լեվազ գյուղի տեր - 508-510, 517
Սաֆարյան Վ. - 622
Սեբեոս - 63, 96, 174, 197, 224, 226, 227, 229, 243-248, 254-256, 266, 270, 271, 276-282, 284, 286-289, 291, 292, 296, 301-303, 306, 309, 310, 327, 328, 357, 367, 373, 379, 380, 382, 390-397, 401-403, 406, 444, 458-460, 592, 601-603
Սեղբիո, պատմաբան - 253
Սեր-Հաթաշի, տրած զորավար - 466
Սեբյան Հ. - 542
Սելևկյաններ, թագավորական տոհմ - 255
Սելևկոս, թագավոր - 255
Սեպուհսարոս, Հռոմի եպիսկոպոս - 279, 309,

310, 319, 354, 356, 359, 363, 364, 609
Մեյմուր Հ. - 618
Մենեքերիմ, թագավոր - 286
Մեծ-Մարքեն Ա. - 49
Մեվերիանոս, մատենագիր - 213
Մերոբ, Ամարասի եպիսկոպոս - 426, 476
Միլվանոս, ինքնակոչ կայսր - 123
Միկորիոս Պրոբոս - 98, 99
Միմեոն, Աղվանից կաթողիկոս - 385, 452
Միմեոն, Դավիթ Բեկի զինակից - 510
Միմեոն, հակորիկյան նենց - 234
Միմեոն, Տաթևի արքեպիսկոպոս - 517
Միմեոն, քահանա - 191
Միմեոն Աղուաշ, սր. - 470, 471
Միմեոն Ա Երևանցի, Հայոց կաթողիկոս - 499, 500, 615
Մինեսիոս Կյուրենացի - 94
Սիոն Ա Բալովնեցի, Հայոց կաթողիկոս - 190, 335, 336
Սիսինաքիոս, Լևոն III կայսրի զարմիկ - 49
Սիրաք, անճնանուն - 277
Սիրաք, Աստվածաշնչ. - 179
Սլեման, ամիրմումնի - 471
Սկամանդրոս, պատմիչ - 299
Սկլիռոս, ընտանիք – 49
Սղուկ, Սլկունյաց իշխան - 366
Սմբատ, Աղվանից իշխան - 482
Սմբատ, Աշոտ պատրիկի որդի - 462
Սմբատ, Ապու Ալիի զարմիկ – 482
Սմբատ, Սահլ Սմբատյանի հայր - 611
Սմբատ I, Հայոց թագավոր – 321, 482
Սմբատ Բագրատունի (IV դ.), Հայոց սպարապետ – 365, 367
Սմբատ Բագրատունի (V դ.), տոպետ – 367
Սմբատ Բագրատունի (607 թ.) – 226, 229
Սմբատ Բագրատունի († 705 թ.) – 345
Սմբատ Բագրատունի (750 թ.) – 344-347
Սմբատ Բագրատունի († 775 թ.) – 423, 462, 611
Սմբատ Բագրատունի, Բագմահաղթ (Խոսրով Շում) – 276, 367
Սմբատ Բագրատունի, Բյուրատյան – 350, 359, 422, 456, 463, 466-68, 471
Սմբատ Բագրատունի, Խոստովանող – 315, 325, 349, 350
Սմբատ ի Քարբյան, Աղվանից իշխան – 453
Սմբատ Մամիկոնյան – 345
Սմբատ Սպարապետ, Գունդստաբլ – 223, 224
Սմբատյան Շ. - 611
Սյունի, Փաթալի խանի հարճ - 522
Սոկրատ, իմաստասեր - 337
Սոկրատ Սքոլաստիկոս (Փոքր Սոկրատ, Մեծ Սոկրատ) - 6, 19, 22, 211, 279, 309, 310, 319, 352-359, 364, 608, 609
Սոլովյով Վլ. - 567
Սողոմոն, Աստվածաշնչ. - 160, 436, 474
Սողոմոն, Մաքենոցաց վարդապետ - 445, 446, 468, 470
Սողոմոն, Մեծիքաձոր եպիսկոպոս - 479
Սողոմոն, Սյունյաց եպիսկոպոս - 481
Սողոմոն Ա Գառնեցի, Հայոց կաթողիկոս - 446
Սոսթենես, Մարմաշենի վանահայր - 500
Սոփրոնիոս, Երուսաղեմի պատրիարք - 449
Սպահապետ, Սպահապետյանց առհմ - 415
Սպանդիատ - 435, տե՛ս նաև Ասպանդիատ
Սպենկուտոս, արիքում և նոտար - 121
Սպինոզա Բ. - 581
Սպրամ, Վարազ-Տրդատի տիկին - 450, 451
Ստեփամ Ոսկան – 536, 537
Ստեփանոս, սր. - 448, 500, 501
Ստեփանոս, ավագ քահանա - 505
Ստեփանոս, Գարդմանի եպիսկոպոս - 445
Ստեփաննոս, Դավիթ Բեկի զինակից - 510
Ստեփանոս, եպիսկոպոս - 484

Ստեփանոս, Մեսրոպ Մաշտոցի աշակերտ - 247
Ստեփանոս, քահանա - 484
Ստեփանոս, քահանա - 191
Ստեփանոս Ա Դվինեցի, Հայոց կաթողիկոս - 185, 190, 223, 308, 325, 326
Ստեփանոս Արլասաղ - 476
Ստեփանոս Նախավկա - 449
Ստեփանոս Սյունեցի – 163, 466-472, 473, 481
Ստեփանոս Վրդանիսյան Շահումյան – 506-508, 510-513, 515, 516, 518-524, 526, 616
Ստեփանոս Օրբելյան - 445, 470, 471, 476, 478, 479, 481, 499, 500, 509, 521
Սարժիգովսկի Ցո. - 484, 612
Սառուդիոս, կրոնավոր - 66
Սուլեյման, խալիփա - 465
Սուլեյման, Ուրայիդալլահի փոխառնորդ - 475
Սուրեն, մարզպան - 192
Սուրեն, Սուրենյաններ, տոհմ - 101, 415
Սուքիասյանք - 290
Սևադա, արաբ իշխան - 475
Սևադա II Իշխանիկ, Աղվանից թագավոր - 321

Վ

Վագներ Ռ. - 578
Վալենտիանոս կայսր – 252, 253
Վալենտիանոս, հյուպատոս - 26
Վալենտինիանոս, գնոստիկյան - 135, 140-142, 145, 146, 167, 596
Վալենտինիանոս I, կայսր – 249
Վալենտինոս, կայսր - 251, 253
Վալենտոս, գնոստիկյան - 140
Վալենտոս (Վաղես), կայսր – 94, 96, 113, 249, 362
Վալերիանոս, կայսր – 97, 267
Վախտանգ, Վարազմանի որդի - 417
Վախտանգ Գորգասալ, վրաց թագավոր – 413, 416, 417
Վախթանգ V Շահնավազ, վրաց թագավոր - 513
Վախթանգ VI Շահնավազ, վրաց թագավոր – 513-518, 528, 617
Վախուշտի, վրաց պատմիչ - 513
Վահագն, առասպել. - 290, 604
Վահան, Բյուզանդական զորավար - 391
Վահան, Հայոց մարզպան - 55, 314, 415, 426, 551
Վահան Ամատունի, Հայոց հազարապետ - 32, 38, 58-62, 66, 71-73, 75, 78, 79
Վահան Ամատունի, սպարապետ - 365
Վահան Գողթնեցի, - 325, 331, 463, 464, 611
Վահան ի Վարազվահանյան, Աղվանից իշխան – 453
Վահան Մամիկոնյան (VII դ.) - 449
Վահան Մամիկոնյան, ուրացող - 364, 366
Վահրամ, Գրիգոր Մագիստրոսի հորեղբայր - 500
Վահրամ Գուրգեն Միհրանյան - 415, 417, 418
Վահրամ Իարթունի - 597
Վահրամ II Փառոխզատ, Ատրպատականի իշխան - 396
Վաղարշ, Հայոց թագավոր – 258, 260, 262, 265, 270
Վաղարշ, Պարթևաց թագավոր - 264
Վաղարշ, պարսից թագավոր, Պերոզի եղբայր - 33, 251, 269, 314, 389
Վաղարշակ, Հայոց ավանդական թագավոր - 246, 263, 265, 281-283, 285, 287, 350
Վաղարշակ, Հայոց թագավոր, Արշակ III-ի զահակից - 249, 272, 273, 365
Վաղես, կայսր, տե՛ս Վալենտոս
Վաղինակ Սյունի - 365
Վանական Վարդապետ - 499
Վաչագան I, Աղվանից թագավոր– 388, 414
Վաչագան II, Աղվանից թագավոր - 414

Վաչագան III, Աղվանից թագավոր - 414
Վաչագան ի Պատրիկյան, Աղվանից իշխան - 465
Վաչե I, Աղվանից թագավոր - 377, 383, 414
Վաչե II, Աղվանից թագավոր - 414
Վաչե Մամիկոնյան - 365
Վայյան Ա. - 619
Վայոտյան, տոհմ - 496
Վասակ, Ասլիբատի որդի - 500
Վասակ, Սմբատ Բագրատունու եղբայր - 346
Վասակ Մամիկոնյան (IV դ.) - 365, 366
Վասակ Պռոշյան - 496
Վասակ Սյունի, Հայոց մարզպան - 31, 32, 55, 60, 64, 65, 196, 526, 527, 592
Վասակ Սյունի (†821) - 475, 476, 479
Վասիլ I Հայ, կայսր – 46, 49-51, 313, 314, 316, 425, 606
Վասիլ (Բարսեղ), սարկավագ - 12, 14, 17, 28
Վաթազ-Թակուր, պռոտոպատրիկ - 399, 416, 417, 423
Վաթազ-Գագել (Վաթազ-Գիգոլ) - 416
Վաթազ-Գրիգոր, Աղվանից սպաթապետ - 453
Վաթազ-Գրիգոր, Գաբդմանի իշխան - 449
Վաթազ-Գրիգոր, Ջևանշերի հայր - 388, 389, 416
Վաթազ-Միհր, Աղվանից իշխան - 417
Վաթազ-Շապուհ, Աթրպատականի կառավարիչ - 92, 93, 100, 101
Վաթազ-Տիրոց, իշխան - 462, 463
Վաթազ-Տրդատ, Աղվանից թագավոր - 412, 418, 419, 421-427, 429, 450
Վաթազ-Տրդատ Սահինաճատյան, Գաբդմանի իշխան - 476
Վաթազ-Փերոժ, Ջևանշերի եղբայր - 417, 418
Վաթազդատ (Վաթազտրդատ), Հայոց թագավոր - 188, 192, 199, 249, 272, 274
Վաթազդատ, Աղվանից իշխան – 421, տե՛ս Վաթազ-Տրդատ,
Վաթազմամ, ամճնանուն - 412
Վաթազմամ, Բարդայի (Պարտավի) իշխան - 417
Վաթազմամ, Վարդի որդի - 388, 412
Վաթազմամ, Վաթազ-Գրիգորի որդի - 388
Վաթազո, իշխան - 411, 412, 475
Վաթրակես, Մաթաց թագավոր - 290
Վաթդ, Արամայելի որդի - 388
Վաթդ (Վարդաս, Բարդաս), կնեաթ - 49, 315
Վարդ, Ջաջ Վարդանի որդի - 388
Վարդան, Դավիթ Բեկի զինակից - 510
Վարդան, հիշատակարանի հեղինակ – 180-184, 191, 212, 223, 597
Վարդան, պատմիչ - 349, 424, 425, 463, 479, 499, 500
Վարդան, Վաթազ-Տրդատի որդի - 422
Վարդան Մամիկոնյան (IV դ.), Վասակ սպաթապետի եղբայր – 364-366
Վարդան Մամիկոնյան (†451) - 60, 217, 335, 336, 364, 367, 524-526
Վարդան Միհրական, Աղվանից իշխան - 416
Վարդան Փիլիպպիկոս (Փիլիպպոս), կայսր - 399, 421-423, 467, 473
Վարդան Ջաջ, Վարդի որդի - 388, 389
Վարդանանց տոհմ - 53, 524, 548, 550
Վարդանյան Ա. - 16, 17, 19, 34, 589, 593
Վարդանուհի, Վաթազո իշխանի տիկին - 475
Վարդիշ ի Թամղիկան, հյուպատոս - 453
Վարսավարս, պարսից պաշտաձյու - 98
Վարուժան Դ. - 554
Վեհեր Ս. - 131, 132, 596
Վեհիկ, տեսիլի հեղինակ - 321
Վեսպասիանոս, կայսր - 384
Վետ, իրանագետ - 70
Վեստերգ Տ. - 431
Վետտեր (Ֆետտեր) Պ. - 368
Վերնե Պ. – 568-570, 573, 624

Վեքիլով Ս.Դ. - 533, 618
Վիկեր Գ. - 569
Վինին Ա. գր - 541
Վիշապազունք, տոհմ, առասպել. - 604
Վիրգիլիոս - 542, 544
Վիրո, Աղվանից կաթողիկոս - 320, 321, 360, 369, 373, 375, 380, 381-387, 394, 452, 454
Վիք Արդ ալ-Մալիքի որդի - 462, 463
Վշտասպ, առասպել. - 70
Վոկր Ա. - 591
Վորոնցով Մ. Ս., Կովկասի փոխարքա - 618
Վոռմ, պարսից թագավոր - 22, 35, 36, 38, 249, 251, 253, 272, 313, 314
Վոռմշապուհ, Հայոց թագավոր - 21, 38, 188, 193, 195, 196, 198, 199, 249, 271-273, 275, 367
Վոսփինոս (Փոսրիկոնոս), կայսր – 251, 253
Վոտամ, պարսից Խոսրով Բ թագավորի մորեղբայր - 388
Վրթանես, Սյունյաց եպիսկոպոս - 386, 387, 456
Վրթանես Ա, Հայոց կաթողիկոս - 188, 190, 191, 199, 305, 306
Վրթանես Քերթող - 197, 229, 230, 241, 438-440, 598, 611
Վրթանիայաց Ս. - 505

Տարաթի, ժառանգավոր - 278, 391, 392, 396
Տայիայդ Լ., գրող - 569
Տամատ, Հայոց իշխան - 431
Տաշյան Հ. - 302
Տավրոս, քվեստոր - 114, 115
Տավուս, արար կառավարչ - 476
Տարոնցի Ս. - 614
Տերյան Վ. - 542
Տեր Ավետիք, Դավիթ Բեկի գործակից – 507-510, 521, 617
Տերեմոխոս, կայսր - 249
Տեր-Վասդյան Ա. - 607
Տեր-Ներսեսյան Ս. - 484, 485, 612
Տեր-Միքելյան Ա. - 186, 598
Տեր-Սկրտչյան Գ. (Միաբան) - 240, 286, 368, 597, 598, 600
Տեր-Սկրտչյան Կ. - 438, 456, 589
Տեր-Միհասյան Ե. - 233, 236, 240, 589
Տեր-Մովսիսյան Մ. (Մագիստրոս) – 16, 352, 359, 368, 608, 609
Տեր-Պետերյան Մ. - 619
Տեր-Պողոսյան Գ. - 595, 602
Տիբերիոս, կայսր - 251
Տիգրան, Հայոց ավանդական թագավոր - 265, 287
Տիգրան Երկարակյաց, տե՛ս Տիգրան II Մեծ
Տիգրան Երվանդյան, Հայկազնյան, Հայոց թագավոր - 290, 604, 605
Տիգրան II Մեծ – 246, 257, 258, 261, 262, 265, 268, 287, 290, 295, 296, 300, 301, 524, 605
Տիգրանյաններ, Հայոց թագավորական հարստություն - 295, 296
Տիմոթեոս, Աստվածաշնչ. - 220
Տիմոթեոս Կուզ, Ալեքսանդրիայի եպիսկոպոս - 235, 236-240, 242, 600
Տիտոս, կայսր - 384
Տիտոս Բոստրացի - 171, 179
Տիրան, Հայոց թագավոր, Արտաշես I-ի որդի - 95, 246, 261, 262, 265, 266
Տիրան, Հայոց թագավոր, Խոսրով Կոտակի որդի - 92-96, 100, 101, 104, 106, 109, 110, 112, 188, 192, 199, 249, 250, 272
Տիրացու, Դավիթ Բեկի զինակից - 510
Տիրիք, արքայազն - 366
Տիրոց Թագրատունի - 10, 53, 55
Տոլստոյ Լ. - 567
Տրայանոս, կայսր - 330, 607
Տրդատ I, Հայոց թագավոր – 604, 605
Տրդատ III, Հայոց թագավոր - 59, 72, 75, 79,

87, 100, 188, 192, 196, 198, 199, 249, 250, 253-255, 259, 260, 266, 270-272, 285, 291, 306, 308, 336, 340, 365-367, 428, 441, 520, 551
Տղայատ Բ Դասնավորեցի, Հայոց կաթողիկոս – 185, 190
Տրուն, իշխաններ - 325
Տուրկեստանով Ի. Դ. - 531, 617, 618

Քաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան) – 504-506, 508, 510, 513, 515, 516, 521, 528, 529, 542, 565, 615, 616

Քերեալիոս, հյուպատոս - 117

Քաջայիդալյան (Ովրեդյա), Հարուն ալ-Ռաշիդի եղբայր - 475
Ուրման իրն Քան (Իրն Ափան) - 457
Ուխտանես, Աղվանից կաթողիկոս - 371, 372, 385-387, 399, 400, 413, 435, 436, 439, 445, 447, 452
Ուռնայր, Աղվանից թագավոր - 366, 414
Ուռպելեանք, առհմ - 516, 517
Ուրզիցինոս, հռոմեական կառավարիչ – 122-124

Փաթալի, Չավնդուրի սուլթան – 508-510, 517, 521, 522, 527
Փահլավիներ, առհմ - 614
Փառանձեմ, անձնանուն - 224
Փառավազ, անձնանուն - 224
Փառեն, անձնանուն - 224
Փառեն (Փառներսեհ) Ա Աշտիշատցի, Հայոց կաթողիկոս - 188, 190, 192, 199, 201, 224
Փառոխ, Մարսյակի որդի - 256
Փավստոս Բուզանդ - 5, 62, 63, 68, 87-89, 92, 94-96, 99-101, 104-106, 109, 110, 112-117, 121, 161, 191, 193, 196, 198, 204, 205, 209, 218-220, 224, 225, 243, 258, 277-281, 284, 285, 288-292, 296, 297, 300, 303-306, 341, 364-367, 427, 430, 432, 593-595, 601
Փարսադան, Հալիձորի մելիք - 507, 508, 510, 520, 526
Փարսադան Չավնդուրից, Դավիթ Բեկի զինակից - 51
Փարսքիթ, խազրաց խաքանի մայր - 431, 466
Փեչիկյան Ե. - 555, 616, 621
Փերոզ, Միհրանի ազգական – 415-417
Փիլիպպոս, կայսր - 266, 267, 473, 474
Փիլոն Ալեքսանդրացի - 133, 215, 300, 599
Փիլոն Տիբակացի - 352-359
Փիլոքսենոս Մաբբուգացի - 437
Փիլարտոս Վարաժնունի - 51
Փլաբիանոս, պատրիարք - 471
Փլաբիոն Լևոն, կայսր – 471
Փլաբիոս, կայսր – 251, 252
Փլեգոն, պատմիչ - 299, 300
Փլորոս, աղանդավոր - 152
Փոկաս, եպիսկոպոս - 471
Փոկաս, ընտանիք - 49
Փոկաս, կայսր - 50, 251
Փոտ, Կոստանդնուպոլսի պատրիարք - 7, 8, 27, 37, 50, 146-149, 154, 316, 317, 589
Փոքր Թեոդոսիոս, կայսր, տե՛ս Թեոդոսիոս II

Քաղբ (Քաղարբ, Խալիդ), արաբ զորավար - 327
Քիպարյան Կ. - 598
Քյոսեյան Հ. - 598
Քոր, երեց - 20
Քսերքսես, պարսից թագավոր - 55
Քսիսուրթես, Նոյ Նահապետ - 218
Քվար, դից. - 428, 434
Քրիստափոր Ա, Հայոց կաթողիկոս - 190, 444
Քրիստափոր Բ, Հայոց կաթողիկոս - 190
Քրիստափոր Շնագլուխ, սր. – 544, 621

Քրտարակաճ, պարսից զորավար - 378
Քուրդո, Սյունյաց իշխան - 469

Ոզոստինոս, սր. - 152, 155
Օթման, խալիփա - 328, 402
Օթման, ոստիկան - 431
Օլիմպիա, Հայոց թագուհի - 125
Օլիմպիոս, կայսր - 251, 252
Օհան Կարո - 539, 554
Օհաննես Երևանցի - 521
Օմար (Եմրան, Եման, Ամր, Ամրան), արար զորավար - 327
Օմար I, խալիփա - 328
Օմար II, խալիփա - 76, 326, 328-331, 520
Օսման, խալիփա - 328
Օրբելի Հ. - 409
Օրբելյան, տոհմ - 496, 524
Օրնոսիոս, հնրձվածող - 152

Ֆիզուլի, բանաստեղծ - 541
Ֆիրդուսի (Ֆերդովսի) Արուլ Ղասըմ – 490-494, 613, 614
Ֆնոգլյան (Փառնակ) Գ. - 37, 53-56, 58-65, 68-81, 83, 592, 593
Ֆռանգյուլ (Ֆրանգյուլ), Երիցվանիկի մկիք - 507, 509, 520, 521, 526, 527
Ֆրանս Ա. - 568
Ֆրիկ - 498

Abgar IX - 258
Aberius presbyter (Աբրահամ) - 13, 24
Abdallah el Hanami - 466
Ablabius - 125
Abul-Faradj - 422
Acacius Metilenensis - 13
Adam - 154, 155, 157
Adontz N. - 442, 482, 591, 597, 605, 606
Adore Floupette - 569
Ahrens K. - 15
Ahriman - 146
Albinus consul - 110
Amantius consul - 110
Ammianus Marcellinus - 88, 108, 114, 115, 117, 120-127, 129, 130, 414
Anatolius - 238
Apollinarius - 14
Arbandus (Երվանդ) - 43
Arius - 14
Arsaces – 125-127, 129, 130
Artases - 603
Ašot Erkat' - 482
Aucher J.B. - 256
Aurelius Victor - 88

Baju A. - 569
Baras Bakourios, protopatrikios - 399
Barbier de Meynard C. - 391
Baronian S. - 598
Basilius Diaconus - 14
Baxhuysen, Van de Sande W. H.- 140
Beauclair H. - 569
Boor C.de - 481
Boukolabra - 435
Brooks F. W. - 15
Brosset M. - 379, 406, 414-417
Brunetiére F. - 581
Bury J. B. - 434

Carriér A. - 288, 601
Casartelli L.Ch. - 146, 147
Catulinus - 105
Chabot J.B. - 22, 25, 155, 333, 382, 422
Chalathianz Gr. - 603
Champsaur F. - 569
Christus - 13
Constans - 105, 125

Constantinus I - 100, 101
Constantinus II - 105
Constantinus Porphyrogenitus - 431
Constantius - 105, 108, 110, 116, 119, 120, 125
Conybeare F.C. - 593
Curtius E. - 474
Cyrillus archiep. Alexandrinus - 14, 29

Damascius - 158
Darmesteter J. – 146-148
Dhorme E. - 219
Diocletianus Jovius Valerius - 89-91
Dioscorus - 237
D'Ohsson M. - 483
Doumie R. - 574
Dulaurier E. - 459

Epiphanius - 132
Eunomius - 14
Eutropius - 88, 105, 108
Eznik de Kolb, Eznik von Kolb - 134, 146, 147, 149, 595, 596, 597

Farrux-Sapuh - 224
Flavianus - 238

Galerius Maximianus - 89-91
Garrah E. - 466
Gennadius - 238
Georgius Monachus - 481
Gide A. - 574
Grégore Illuminateur - 596, 597
Grégore Pacourianos - 455
Gutschmid A. von - 258, 288, 297

Hamilton F. W. - 15
Harnack A. - 22
Hefele C.J. - 155
Heine H. - 550
Hoffman G. - 101, 225
Hormizdas - 90
Huret J. - 567, 580, 585, 586
Houtsma M.Th. - 481

Ibn al-Athir - 422, 432
Ibn Wadhih al-Jakubi - 481
Ishaq - 201

Joannes Antiochenus - 13, 14
Julianus imperator - 103, 104, 107, 108, 112, 128
Justi F. - 101, 225, 276
Justinianus imperator - 105, 110, 111

Kemel-at-Towarikh - 422
Kiepert R. - 110
Kopp J. - 158
Kröses - 603
Krüger G. - 15, 105
Kühner R. - 268

Labourt J.D.R. - 22
Lactantius - 88
Langlois V. - 187, 598
Leontius presbyter - 13
Lewy H. - 313, 314, 605, 606
Liberatus diaconus - 12
Lietzmann H. - 488

Macler F. - 612
Macoudi - 391, 432
Mansi J. D. - 11, 15, 28
Maries L. - 149
Mars - 91
Martin L.-P. - 187, 598
Marquart (Markwart) Jo. - 225, 434, 466, 468,

476, 477, 479
Masistus - 55
Mastoubios - 9
Mazdak - 10
Mesrob - 57
Meribanes - 126, 414
Michel le Syrien - 333, 334, 382, 420, 433
Migne J.P. - 8, 9, 12, 15, 19, 29, 30, 132, 173, 179, 213-215, 307, 611
Mihrab (Mehrab) - 57
Mirhond - 417
Mitra (Midra, Mihr, Meh, Mer/Mel) - 57
Moïse de Chorène - 605, 606
Mordtmann A.D. - 253
Moreas J. - 570
Moses of Choren - 605, 606

Narseus rex - 88-91
Narseus - 108
Nemesianus comes
Nerval, Gerard de - 567
Nestorius - 12, 14, 29
Neumann K. F. - 276
Niebuhr B. G. - 280
Nohodares - 115
Nyberg H.S. – 195
Nöldeke Th. - 415

Ohrmazd - 146, 148
Olympias - 125

Pavet de Couteille - 391
Pelagius - 152
Petit L. - 455
Petrus Patricius - 97, 99
Pettazoni K. - 146
Photius 8, - 154
Plato, Platon - 168
Plinius Secundus G. - 430
Polemius consul - 105
Polyhistor - 26
Proclus archiep. Constantinopolitanus - 13, 14, 29
Procopius Caesariensis - 280, 288, 291
Pulcheria - 238

Rabula, episc. Edessae - 13
Rawlinson H. - 101
Razatses - 380
Regnier H. de - 582, 583, 585
Richthofen F. - 276
Rufus Festus - 92, 108, 116
Runze G. - 152

Sacy, Silvestre de - 417
Salmoutres - 433
Sapor - 90, 108, 119, 120
Sassaniden - 253, 417
Schanz M. - 92
Schlumberger G. - 399
Schmid J.M. - 146
Shahak - 225
Shahpuhr - 225
Shahrak - 225
Shahrên - 201
Simeon - 238
Simons A. - 584
Socrates Scholasticus - 608
Spiegel F. - 146
Stephanos - 325
Symeon Magister ac Logothetes - 481
Synesius Cyrenensis - 94

Tabari Abou-Djafar-Mohammed-ben-Djarir-ben-Yezid - 391, 396, 415, 418
Tabeles - 433

Taurus questor - 114
Termatzous - 433
Theodorus consul - 26
Theodorus (Theodosius) diaconus - 13
Theodorus Mopsuestenus - 13, 14, 29, 30
Theophanes - 378, 382, 387, 393, 399, 401, 404, 420-422, 458, 463
Theophanes Continuatus - 481
Theophilactus Simocatta - 435
Theophilus Antiochenus - 157
Thomson R.W. - 608
Tixeront J. 149, 152-155
Tornberg C.J. - 422, 432
Tornik le Moine - 442

Ursus consul -105

Valentinianus consul - 26
Varlaine P. - 572
Vicaire G. - 569

Weber S. - 595
Wyzewe, Th. de - 579

Zacharias Rhetor (Zachariah of Mitylene) - 15, 235
Zarathustra - 146
Ziebel - 379
Zosime - 104
Zotenberg H. - 391, 396, 418

Адонц Н. — 446
Аноним — 259, 601
Аршакиды Армянские — 295, 323
Арутюнова-Фиданян В. В. — 611
Вараз-Трдат, албанский князь — 610

Григорий Пакурианн - 611

Еремян С. Т. — 610

Алп-Илитвер, хазарский хакан — 610

Марр Н. — 259, 281-284, 592, 597
Моисей Каланкатуйский — 610
Моисей Хоренский — 295, 302, 323, 601
Петр Великий — 617
Сандухт — 302
Сократ Схоластик — 608
Халатянц Гр. — 295, 323, 601
Ширинян М. — 608
Эзов Г. — 617
Эмин Н. О. — 302
Юстиниан, имп. — 362, 446, 606

Ἀδάμ—154
Ἀκάκιος —23
Ἀλέξανδρος ὁ Μακεδὼν — 280
Ἀλέξανδρος ὁ Μαμαίας — 280
Ἀράμ —154
Ἄριος— 19
Ἀρσάκης — 128
Ἀρσακίδης —180, 181
Ἀρταχέτζης — 199
Ἀσάκ— 199
Ἀφφάρβα, Ἀφφαρβάνης— 101
Βαρζάνης — 281
Βαρσαβώρσης —101
Γρηγόριος, ἅγιος— 200
Ευνόμιος —19
Ζαράδης — 8
Ζουρουάμ— 8
Θεόδωρος Ἀντιοχέως, πρεσβύτερος

Μοψουεστίας — 8, 9, 26, 154
'Ιουλιανός
'Ισαάκ— 201
Κελέστινος— 151
Κωνσταντῖνος — 105
Μαρκελλίνος — 152
Μάσιστος —55
Μαστούβιος (Μαστώβιος, Μαστούζιος, Μαστούτζιος, Μαστίτζη, Μαστή(ν)τζη) —8, 9, 21, 31, 150, 592
Μελίας— 57
Μαραδώνιος— 19
Νεστόριος— 9, 27
'Ορέντιος —152
'Ορμίσδας —8
Πελάγιος —151
Περσίδιος— 151
Σαπώρις— 106
Σατανᾶς —8
Συρένης— 101
Τύχη— 8
Φαρανδάτης —224
Φαρνάβαζος— 224
Φαρνάσιτης— 224
Φλώρος —151

ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ

Ազարակ, գյուղ - 509
Ագուլիս - 507, 512
Ազատ, լեռ - 283
Աքեմք - 543
Աքլ (Վոլգա), գետ - 430
Ալանաց դուռ - 432, տե՛ս Դարբյալ
Ալանգյազ, լեռներ - 509, 510
Ալեմդաղ, լեռ - 549, 621
Ալեքսանդրիա (Աղեքսանդրիա) - 11, 12, 14, 28, 29, 89, 237, 238, 355, 444, 446, 599
Ալկի, ավան - 350
Ախալքիա, գյուղ – 511
Ակամսիս, գետ - 326
Ակոռի, գյուղ - 535
Աղահեջ, գավառ - 479
Աղդաշ, բնակավայր - 427
Աղճնիք, Աղճնյաց աշխարհ - 98, 100, 113
Աղվանք, Աղվանից աշխարհ - 7, 123, 319-322, 360, 361, 371, 372, 374-378, 380, 381, 385-390, 392, 394, 397-413, 415-421, 423-425, 435-437, 440, 441, 447-455, 464-466, 474, 475, 478, 479, 481-483, 514, 610, 617
Ամարաս, գավառ - 426, 448, 454, 475, 476, 478
Ամերիկա - 539, 559
Ամիդ - 21-23, 26, 30, 31, 38, 59, 123-125, 379
Ամորիա, քաղաք - 457, 478, 479, տե՛ս նաև Եմորիա
Ամուդիում, բնակավայր - 123
Այբարատյաց գավառ - 23, 403, 424, 519
Այբարատյաց դաշտ – 536
Այբարատյաց մարզ - 282
Այբիվանք - 496
Ամավարզա, քաղաք - 11
Անգեղ տուն (Անգեղտուն) - 98, 99, 287, 362, տե՛ս նաև Անգելեանք
Անգելեանք - 98, 99
Անգլիա - 557
Անդրկովկաս - 533, 618
Անի, Խաղբյանի ափիճ - 46, 375, 442
Անի, Եփրատի ափիճ - 258
Անձիք, գավառ - 362
Անձևացյաց երկիր - 350
Անկյուրիա, քաղաք - 113, 116
Անտիոք - 11, 12, 25, 27, 30, 51, 105, 124-126, 154, 373, 446
Աշտիշատ, գյուղ - 192, 199
Աչաղու, բնակավայր - 521
Աջարան (Աջարաջ), գյուղ - 521
Աջրեջ, գյուղ - 521
Առան, երկիր - 322, 389, տե՛ս նաև Աղվանք
Առաջավոր Ասիա - 256, 491, 493-495
Առաջին Հայք - 361, 362
Առիճճ, գյուղ - 617
Առիճչի (Առուիճչք), գյուղ - 501, 502
Ասիա տերություն - 47
Ասորիք, Ասորեստան - 25, 38, 66, 103-105, 111, 123, 129, 148, 283, 296, 406, 458, 461
Ասպրոդիա, գետ - 98
Աստաբախան, քաղաք - 430
Ավարայր - 524, 525, 592
Աստղատունական - 92, 93, 99-101, 114, 378, 380, 387, 390, 393-397, 400, 409, 415, 418, 420, 431, 466, 476, 482, 483, 504, 513, 516, 616,
Արտիոս տերություն - 47, 458, 459
Արամի կողմ - 22
Արարադյան սարահարթ – 282

Արաբատ, լեռ - 52
Արաբատյան գավառ - 405
Արաբատյան դաշտ - 553
Արաբատակ, լեռ – 421, տե՛ս Արաբատ, լեռ
Արաքս, գետ - 310
Արբա (Տուրճա), գետ - 394
Արբելա, քաղաք - 258
Արգամնեն - 98, 99, 100, տե՛ս նաև Աղձնիք
Արզոն (Առան) - 420
Արծափ, գյուղ - 459, 460
Արկազան - 469
Արծախ – 411, տե՛ս նաև Աբցախ
Արճեշ - 343, 344
Արմավիր - 282
Արվաստան, երկրամաս - 113
Արտազ - 258, 301, 302
Արտաշատ - 31, 60, 131-133, 525, 604
Արտավետ (Արդաբիլ) - 466
Արցախ - 319, 321, 381, 436, 448, 496, 514, 519
Արուճ, գյուղաքաղաք - 407, 409, 424
Արքուգետ, ավան - 479
Արևիք, գետ - 511
Արևիք, շրջան - 511, 521
Ափկավանք, գյուղ - 521
Ափկիս, գյուղ – 509, 521

Քարկոտ - 282
Քաղցայր, վանք - 502
Քալբևանդ - 133, 343
Քալահովիտ - 362
Քալաճջար, քաղաք - 431, 432
Քաղաքերդ - 505, 521
Քաղահեռս, եպիսկոպոսանիստ - 454
Քաղաստակոճ, գավառ - 454
Քաղցադ - 392, 416, 433, 478, 480, 482
Քաղք, Քաղաց գավառ - 476, 479, 511
Քայքա, խոզքաց ժայռաքաղաք - 431
Քայլակոճ - 418, 476, տե՛ս Փայտակարան
Քալչովո, մենաստան - 455
Քասեն, գավառ - 93, 94, 96
Քարդա - 415, 417, տե՛ս Պարտավ
Քարկուշատ, գավառ - 507, 509, 511, 517, 520
Քարկուշատ, գետ - 511
Քաթծք Հայք - 362, տե՛ս Ներքին Հայք
Քեզարդի, ամրություն - 124, 125, տե՛ս Փենիկ, Ջեզիրի-իբն-Օմար
Քերոնեմ - 221, 222
Քեր-Քարդու (Քեր-Քաբենիու)- 350
Քեխոռոք (Քուխուրուք, Քեխուրուք), ավան - 509
Քեկդաղ, ձոյակ - 390, 393, 394, 410
Քեյրուք - 6, 593, 609, 610, 612, 622
Քեղռո վանք - 452
Քեղռուջ, բնակավայր - 416
Քզճուճյաց ծով - 100, տե՛ս Վանա լիճ
Քյուզանդական Հայաստան - 439
Քյուզանդիա (Քյուզանդիոն) - 39, 44, 46-51, 88, 315, 317, 326, 337, 338, 408, 438, 468, 473, 474, 476, 492, 541, 560, 593
Քնարեղ, ամրոց - 106
Քոհաան, գավառ - 350
Քոստոմ - 607, 619
Քջնի - 497, 500
Քոճակոթ, գյուղ - 511
Քրյուսել - 590, 598, 599, 605-609, 612-615, 618
Քրտի այրք, սենապատ - 448
Քուխարք, երկրամաս - 478
Քուղեարիա - 455
Քեխարտ - 434
Քուխուրուք, լեռ - 509, 517

Ղազքեն, լեռ - 507
Ղազճա - 378, տե՛ս նաև Գանձակ, Շիզ, Ջիս, Գեա, Գայս, Գայշ

Գալիա (Գաղիա) - 43, 110, 111, 122
Գալատիա - 48, 111
Գամիրք - 113, տե՛ս Կապպադովկիա
Գայլշ, քաղաք - 378, տե՛ս Գազնա, Գանձակ, Շիզ, Ջիս, Գես, Գայս
Գանգրա, քաղաք - 235, 237, 238
Գանգես, գետ - 542
Գանձակ - 99, 378, 479, 506, 508, 514, 515, 517, 528, 535, տե՛ս նաև Շիզ, Ջիս, Գազնա, Գես, Գայս, Գայլշ
Գանձակ, շրջան - 395
Գանձասար - 514, 616
Գարդարան, գավառ - 416
Գարդման - 388, 404, 406, 407, 409, 411, 415, 416, 418, 426, 436, 445, 449, 450, 453, 454, 476, 479
Գարդմանի բերդ - 388, 400
Գեղամա գավառ - 448, 449
Գեղարքունիք - 449, 476
Գեհուազ, շրջան - 508, 509, 511, 517, 520
Գերմանիա - 557
Գերմանիկե - 49, տե՛ս Մարաշ
Գերմանիկոպոլիս (Էրմենեք) - 49
Գիլան, երկրամաս - 464
Գիս, գյուղ - 370, 372, 375, 411, 447
Գլաձոր - 6, 495, 496, 498, 499, 503, 614
Գլխո վանք - 371, 424
Գյուլնաբադ, տեղավայր - 513
Գողթն, Գողթան գավառ- 310, 325, 341, 509, 520, տե՛ս նաև Օրդուար, Օրդուբադ
Գոռոզու բերդ - 476
Գովգա աշխարհ - 418
Գորիս - 507, 511
Գառ վանք - 454
Գուգարք - 356, 359
Գուկանք (Գյուգանց), գյուղ - 462, 464
Սբ. Գրիգոր եկեղեցի (Զվարթնոց) - 301- 304, 461, 462
Սբ. Գրիգոր եկեղեցի, Արքունական ավանում - 479

Դակիա, երկիր - 91
Դամասկոս - 391, 401, 402, 406-408, 413, 463-465, 475
Դաշտաուն, բնակավայր - 509
Դաստակերտ, դղյակ - 390, 393, 394, 410
Դարա, քաղաք - 124
Դարալագյազ - 507, 519, 521
Դարանաղյաց գավառ - 283, 424
Դարբյալ, կիրճ - 432
Դարոյնք, ամրոց - 305, 317, տե՛ս նաև Պայազիտ
Դերբենդ (Դարբանդ) - 396, 427, 430-432, 465, 466, 469
Դերջան, գավառ - 22, 46, 401
Դիալա, գետ - 392, 394
Դիզակ, գավառ - 514
Դիլաման (Դիլման) վայր - 397
Դվին - 233, 240, 241, 401, 404, 437, 439, 444, 458-461, 463, 466, 467, 470
Դվինի դաշտ - 403
Դրաշպետ, գյուղ - 464

Եահրալաւ, բնակավայր - 22
Եգեերացվոց աշխարհ - 374
Եգիպտոս - 47, 88, 90, 599
Եղեսիա - 11, 13, 20-24, 26, 30-32, 38-40, 115, 125, 126, 148, 258, 260
Եկեղատա (Եկեսատան), գյուղ - 505, 511
Եկեղյաց գավառ - 39, 46, 283
Եղջերիս, սար - 479
Եղվարդ, գյուղ - 509, 521
Եճմսան, գետ - 511
Եմորիա, քաղաք - 478, տե՛ս Ամորիա
Եվբոյա, երկրամաս - 299
Եվրոպա - 50, 473

Երաշխավոր, վանք - 611
Երասխ - 399, 405, 418, 477, 519, 530, 533, 535, 537, 560, 561
Երզնկայի շրջան - 362
Երիցո վանք - 448
Երիցվանիկ - 507, 509
Երիքով, քաղաք - 216
Երկրորդ Հայք – 361-363
Երրորդ Հայք – 361-363
Երուսաղեմ - 216, 222, 230, 237, 238, 354, 371, 372, 378, 384, 404, 446, 448, 449, 458, 548, 591, 597, 598, 612-615
Երևան - 226, 510, 517-519, 533, 534, 536, 537, 559, 614, 617, 618
Եփեսոս - 10, 12, 19, 22, 24-26, 28, 34, 151, 155, 156, 236, 446
Եփրատ - 123, 125, 258, 259, 283, 392, 480, 542, 560

Զարդիկեան - 98, 99, տե՛ս Ծավդեք
Զադան, իշխանություն - 432
Զանգեզուր, գավառ - 507, 511, 512, 520
Զանգու, գետ - 535
Զարագետ - 498
Զարասպ լեռնանցք - 593, տե՛ս Կելիշին
Զարեվանդ, գավառ - 100
Զեյթուն - 559, 562, 622
Զեվու, բերդ - 509, 517, 521
Զինթա, ամրոց - 98, 99, 593
Զինջան, բնակավայր - 99
Զինվի-շեյխ, վայր - 593
Զվար, գյուղ - 509
Զվարթնոց - 302, 424

Էլամ, երկիր - 296
Էպիրոս, երկրամաս - 474
Էջմիածին - 16, 180, 186, 210, 236, 240, 303, 439, 440, 452, 477, 484, 485, 499, 504, 505, 555, 564, 598, 604, 612
Էրզրում - 49, տե՛ս Թեոդոսուպոլիս

Ընալին - 374
Թախթ-ի-Սուլեյման - 99, 378
Թանահատի վանք (Սբ.Ստեփանոս) - 466, 500, 501
Թավրիզ - 378
Թարգու, հոնաց քաղաք - 430, 431
Թեհրան - 210
Թեոդոսուպոլիս - 49, 199, 443, տե՛ս Էրզրում
Թեսաղոնիկե, քաղաք - 473
Թեսալիա, երկրամաս - 246
Թերեկ, գետ - 431
Թիֆլիս (Թիփլիս, Թփխիս, Տփղիս) - 374, 378, 379, 381, 416, 514, 515, 518, 533, 547, 618
Թորդան, գյուղ – 424-426
Թուս, քաղաք - 613
Թուրան, երկիր - 491, 492
Թուրքաստան - 400, 406, 429

Ընթերիա - 98, 99, 126
Իլիոն - 474, տե՛ս Տրովա
Իլլիրիա, երկրամաս - 88-90, 110, 111
Իսավրիա, երկրամաս - 48, 49
Իսրայելի թագավորություն - 177
Իտալիա - 123, 184, 473, 557
Իրան - 47, 57, 277, 490-494, 614

Լալ, բնակավայր - 416
Լավես, գետ - 431
Լավոդիկե, քաղաք - 105
Լեվազ, գյուղ - 508, 509
Լիքաոնաց - 560
Լիքաոնս, լեռ - 412
Լյուդիա, երկիր - 48
Լոզանցոց, քաղաք - 623

Լոնդոն - 594, 622
Լփինք, Լփնաց աշխարհ, երկիր - 320, 383, 419, 430

Խազարաց աշխարհ - 388
Խամսա - 505, 508
Սբ. Խաչ եկեղեցի (Վենետիկ) - 506
Խաչեն, գավառ - 514, 519
Խաչմաս, քաղաք - 427
Խառռան, քաղաք - 88, 90, 129, 451, 462, 463
Խերկ, գավառ - 417
Խիլհակոմ, երկրամաս - 129
Խլաթ, քաղաք - 561
Խնձորեսկ, գյուղ - 511
Խոզարեր, գյուղ - 478
Խոզաշեն, գյուղ - 416
Խոյաս, աշխարհ - 478
Խոշակունիք, ավան - 310, 341
Խոտանան, գյուղ - 510, 521
Խոր Վիրապ - 199, 441, 533
Խորասան - 333, 334, 396, 464, 513, 613
Խորձյան, գավառ - 39, 46
Խրամ, ավան - 310, 341, 422, 461-464
Խրյուսա (Խրսվան), իշխանություն - 432
Խուճան, քաղաք - 415
Խուրսան, իշխանություն - 432

Ճանարք, իշխանություն - 432
Ծավդեք - 98, տե՛ս Զաբդիկեեն
Ծոփք, Ծոփաց ճահանգ - 98, 106, 362, տե՛ս Սոփենե
Ծոփք Շահուճյաց - 362

Վաղեսիա, քաղաք - 391-393, 405
Կալեր, գյուղ - 511, 512
Կալիճիկում, քաղաք - 88, 90
Կախեք, երկրամաս - 617
Կապադոկ, գավառ - 419, 454
Կապան (Վափան, Խափան) – 505-507, 509, 511, 512, 515, 520, 521, 616
Կապիճան, Կամբեճան, գավառ - 394
Կապկոհ, լեռներ - 402, 415
Կապպադովկիա - 48, 113, 125, 362, տե՛ս Գամիրք
Կասպիական (Կասպից) Դուռ - 397, 431
Կասպից ծով - 415, 477, 482, 518
Կաճզվար - 404, տե՛ս Քուճզր
Կամզուտա, ավան - 350
Կաշայե, գավառ - 392
Կատաշան (Գաշշան, Կաշան), գավառ - 392
Կատարո վանք - 454
Կատաշան, Կատիշան - 390, 392, տե՛ս Կաշեսիա
Սբ. Կարապետ, վանք - 564
Կարբաղեն - 12
Կարին - 334, 356, 362, 401, 402, 404, 436, 439, 442-444, 560
Կարմիր ծով - 181
Կաց (Գաց), գյուղ - 509, 517
Կելիշին - 593, տե՛ս Քարասպ
Կեճառիճ, շրջան - 356
Կեչառիս, վանք – 496, 499-501
Կեսարիա Կապպադովկիական - 47, 124, 422, 436, 446, 560, տե՛ս Մազակաց
Կիլիկիա - 11, 13, 26, 51, 148, 246, 476, 498, 558-562
Կիպրոս - 420
Կղաթրզք - 317
Կռիակոզ - 434
Կող, տեղամաս - 326
Կողբ, գյուղ - 23, 131
Կոստանդնուպոլիս - 10, 11, 13, 14, 17, 23, 24, 28-30, 47, 50, 51, 66, 126, 199, 235, 326, 329, 331, 354-356, 359, 379, 386, 402, 410, 422, 423, 425, 426, 443, 445, 446, 451, 460, 466, 467, 471, 474, 476, 481, 506, 560, 562,

621, 622
Կովկաս - 519, 618
Կովկասյան լեռնաշղթա - 427, 430, 432
Կովսական, գավառ - 511, 521
Կոտման - 417, տե՛ս Գաբդման
Կորդուք (Կորդուենք) - 98, 99, 123, 129, 334, 348
Կորճայք - 192, 225
Կորփու, կղզի - 474
Կտեսիփոն (Տիզբոն) - 314
Կուրայի դաշտավայր - 427
Կուլթեր, ավան - 511
Կուր, գետ - 394, 395, 419, 465, 477, 507, 519
Կուֆա, քաղաք - 391

Ձալիծոր, Ձալիծորի թերդ - 505, 507, 509-511, 521
Ս. Ձակոբյանց միաբանություն - 612, 613, 615
Ձամադոն (Խամանթա) - 396, 404
Հայաստան, Հայոց աշխարհ, Հայոց երկիր, Հայք - 7, 8, 10, 14, 20-23, 25, 26, 33, 39, 40, 43-48, 52, 55, 58, 87-89, 92-94, 96, 98-99, 100, 104, 106, 112-115, 118, 119, 121, 124, 126, 127, 129, 150, 195, 199, 200, 206, 208, 245, 246, 256, 258, 259, 263, 274, 278, 280, 282, 283, 286, 288, 290, 292, 295, 296, 298, 300, 305, 306, 310, 317, 330, 334, 335, 341, 355, 356, 372, 379, 381, 387, 401-403, 408, 415, 419-425, 432, 438, 439, 443-445, 451, 454, 460-463, 472, 475, 478-483, 495, 516, 526-529, 535, 548, 559-562, 564, 591, 606, 611, 622
Հայր Օհանավանք, տեղամաս – 501
Հաշտյանք, գավառ - 362
Հարք, գավառ - 282
Հելադա (Եղլադա) – 50, 299
Հեռավոր Արևելք - 491
Հեր, գավառ - 100
Հերա, գյուղ - 391
Հերհեր, գավառ - 415
Հերթիճան, գյուղ - 391, 392
Հիլեա, դաշտ - 108, 110
Հիշկիա, գյուղ - 508, 509, 521
Հիրկանիա, երկիր - 277
Հյուսիսային Կովկաս - 610
Հնդկաստան, Հնդկաց աշխարհ - 181, 182, 400
Հոլվան, քաղաք - 392, 393
Հոնաց դուռ - 399, 404, 430
Հոնաց աշխարհ – 430-432
Հոշ, գավառ - 454
Հոռոմոս, վանք - 502
Հոռոմոց (Հոռոմոց) երկիր, աշխարհ - 378, 436, 439, 466, 471, տե՛ս նաև Բյուզանդիա
Հովհաննավանք - 502
Հովհաննու մատուռ - 188
Հովսեփավանք - 455
Հռոմ (Հռովմ) - 27, 50, 155, 177, 181, 215, 216, 279, 378, 426, 441, 446, 457, 466, 469, 472, 473, 474, 492, 520, 557, 596, 599, 605, 607
Սբ. Հռիփսիմեի վանք - 186, 187, 189, 190, 196, 197, 308,
Հրեաստան - 222
Հուդայի երկիր - 194
Հունական Հայաստան - 387

Ձագեձոր, գավառ - 511
Ձիրավ, դաշտ - 365
Ձորափոր - 356
Ձորք, գավառ - 509, 511, 521

Ղազանճյոլ, լիճ - 507
Ս. Ղազար կղզի, վանք - 506, 616
Ղարաբաղ - 514, 515
Ղարադաղ - 510, 521
Ղարս (Կարս) - 534, 535

Վարաքիլիսե, գյուղ - 511
Վիռո (Իլիռո, Տրոյա, Տրովա), քաղաք - 473

Քենաց աշխարհ - 366
Ճղրաց աշխարհ - 427, 430
Ճորա (Չողա) պահակ - 397, 402, 404, 431

Մադա, քաղաք - 394
Մաղրաս - 306
Մազակա, տե՛ս Կեսարիա Կապպադովկիական - 124
Մազքթաց աշխարհ - 430, 431
Մալաթիա - 560
Մալաթիայի շրջան - 362
Մակեդոնիա - 474
Մակեդոնիայի տերություն - 47
Մամուեստիա (Մամուեստա, Մոպսուեստիա), քաղաք - 10, 20, 26, 28, 147, 154
Մայ, երկրամաս - 390
Մանազկերտ - 468, 472, 475
Մանանաղի գավառ - 438
Մանլև, գյուղ - 509
Մասիս, լեռ - 181, 534, 553, 618
Մավրերի ամրոց - 123
Մարաղա, քաղաք - 99
Մարաշ - 49, 560, տե՛ս Գերմանիկե
Մարաստան, Մարք, Մարաց աշխարհ - 98, 296, 395, 404, 420, 459
Մարդին, քաղաք - 106
Մարեա, լիճ - 599
Մարմաշեն, վանք - 500
Մաքենոց (Մաքենոցաց) վանք - 325, 470, 476
Մեդիա, երկիր – 129, տե՛ս նաև Մարաստան
Մեղիոլան, քաղաք - 110
Մելիտինե (Մելիտենե) - 11, 15, 18, 20, 23, 24, 26, 30, 31, 51, 124, 125
Մեծ Բրիտանիա - 622
Մեծ Ծովք - 362
Մեծ Հայք - 90, 91, 189, 199, 280, 362
Մեծիրացց գավառ - 370, 450, 454, 475, 519
Մեծիրացց վանք - 479
Մեծկողմանց (Մեծկուենից) գավառ – 370-372, 416, 423, 436, 438, 454
Մեհենա, գյուղ - 188
Մեղրի, ավան – 509-512
Մեղրի, գետ - 511
Մեյակարիրի, քնակավայր - 123
Մեռյալ ջուր, գետ - 389, 392
Մթնուլեք, գավառ - 417
Միզիա, երկիր - 90
Միհրավան, քաղաք - 388, 415
Միջագետք - 88-91, 106, 113, 115, 117-119, 122, 123, 285, 483, 491
Մծբին - 98, 99, 106, 109-114, 116, 121-124, 126, 128, 283-285, 334
Մծխեք, քաղաք - 416, 506
Մծուրք - 258, 259, 283, 284
Մյունխեն - 593, 601
Մշո դաշտ - 561
Մոզան, գավառ - 466
Մոկք, Մոկաց աշխարհ - 25, 129, 349, 350
Մոսկվա - 294, 324, 384, 412
Մովական (Մոկան), իշխանություն – 415, 420, 432
Մոփսուկրենե, իջևան - 126
Մռուղի դաշտ - 95
Մսնդրը (Սմնդո), քաղաք - 430, 431
Մուկան, իշխանություն - 432
Մուտան, դաշտ – 514, 560
Մուշ - 470

Յարմուկ, գետ - 391
Յղնքք, գյուղ - 448, 449

Վաստրմալիս, քնակավայր - 129

Նախճավան (Նախճվան), քաղաք - 310, 422, 461-464, 477, 508, 518, 519, 521
Նախճվան, գետ - 508
Նեհավենդ - 391, 392, 394-396
Ներս-Միհրի վանք - 454
Ներքին Հայք - 362, տե՛ս Բարձր Հայք
Նիժ, գյուղ - 427
Նիկեա, քաղաք - 169, 199, 234
Նիկոմիդիա, քաղաք - 105
Նորավանք - 484
Նոր Բայազետ - 501
Նոր Նախիջևան - 620
Նոր Քաղաք - 38
Նյու-Յորք - 615

Շակաշեն, գավառ - 394
Շահապիվան, ավան - 63
Շաղատ, բերդ - 475
Շամախի, քաղաք - 432, 506, 514, 617
Շամքոր, քաղաք - 452, 464
Շաշիկետ (Շշկետ, Իշկետ), գյուղ - 521
Շավարշան, գավառ - 258, 301, 302
Շաքի, գավառ - 454, 465
Շիարզուր, բնակավայր - 394
Շիզ - 378, տե՛ս Գազճա, Գանձակ, Ջիս, Գես, Գայս, Գայշ
Շիկահող, գյուղ - 521
Շիկաքար, գյուղ - 475
Շիվանիձոր, շրջան - 511
Շիրակ - 317, 397, 399
Շիրվան, նահանգ - 432
Շնհեր, գյուղ - 507, 508, 510, 511

Ճախա, գյուղ - 93, 94, 96
Ոսկեբակ, գյուղ - 501
Որոտն, բերդ - 508
Որոտն, գետ - 507, 511, 521

Ջայդար (Ջունդառ), քաղաք - 431
Ջավնդուր – 508-511, 515, 517, 520
Ջարաբերդ, ամրոց - 381, 384
Ջափնիս, գյուղ - 509
Ջինաստան - 277, 278
Ջղախ, բնակավայր - 411
Ջղախյան հովիտ - 370, 372
Ջոլա (Ճորա) դուռ, պահակակետ - 320, 371, 374, 383, 405, 427, 430, 461
Ջորբորդ Հայք – 361-363
Ջուդաճ - 431, տե՛ս Կեդռոնիա
Ջունգարս, հոնաց քաղաք - 430, 431

Ղաղարեթդ - 511
Ղաղիճակաց, գավառ - 39, 46
Ղաղեստին - 47, 290
Ղայազիտ - 317, տե՛ս Դարբոյնք ամրոց
Ղայոնիա, երկրամաս - 102-105
Ղատարա, երկրամաս - 138
Ղարսկա-Հնդկական թեմ - 608
Ղարսկաստան, Ղարսից հող, Ղարսք - 8, 32, 44, 88, 94, 95, 98, 122, 226, 229, 246, 256, 258, 277, 280, 296, 381, 392, 399, 401, 415, 494, 513, 608
Ղարաղավ (Ղերղզ քաղաք, Ղերղզապատ, Ղերղզ-Կավատ, Քարդա) -325, 336, 381, 386, 388, 394, 410, 415, 417, 418, 427, 430, 431, 450-452, 463-465, 475, 477, 481-483
Ղափլաղոնիա, երկրամաս - 48
Ղելոպոնեսոս, երկրամաս - 473
Ղեխ, գյուղ - 505
Ղեսարիցոս, վանք - 455
Ղեսրովսկ, քաղաք - 431
Ղերղզ-Կավատ (Ղերղժ-Կավատ), քաղաք - 371, 395, 405, 409, 415, 427, տե՛ս Ղարաղավ
Ղիսիդիա, երկրամաս - 48
Ղոդոնտա (Ռոզանտի), երկրամաս - 476
Ղուհավանք - 449

Ջահուկ, գավառ - 497
Ջալուկա, վայր – 391-393
Ջավախք, երկրամաս - 478
Ջեզիրե-իբն-Օմար, ամրություն - 124, տե՛ս Բեզաբդե, Փեռնիկ
Ջիս (Գազնա, Գանձակ, Գես, Գայս, Գայշ, Շիզ), քաղաք - 378
Ջրաբերդ - 508, 514
Ջուղա, քաղաք - 310
Ջուղաո (Չայդար), քաղաք - 431
Ջուրզան (Վրաստան) - 420

Ճան (Առան, Աղվանք) - 415, 416
Ճենիմենե, գավառ - 99
Ճիմ (Հռոմ) - 191
Ճշտունիք, գավառ - 462
Ճուսահայաստան - 535
Ճուսաստան (Ճուսիա) - 515, 518, 557, 560, 567, 622

Ռամանդար, քաղաք - 431, 432
Սամոսատ, քաղաք - 21, 26, 30, 31, 38, 40, 124
Սանահին, վանք - 354
Սարվան (Շրվան), իշխանություն - 432
Սարդիկա, քաղաք - 113
Սատաղ, քաղաք - 93
Ս.Պետերբուրգ (Պետրոգրադ) - 134, 514, 556, 593, 594, 599, 601, 603, 616, 623
Սերաստիա, քաղաք - 379, 560
Սերաստիայի շրջան - 362
Սելևկիա, քաղաք - 393, 394
Սենա, գետ - 543
Սիբիր - 536, 537
Սիկիլիա, կղզի - 407, 409
Սինգարա (Սինջարա), բնակավայր - 107-112, 116, 124
Սիսանձոր - 478
Սիսարա, բնակավայր - 123
Սիսիան (Սիսական), գավառ - 506, 507, 511, 512, 520, 521
Սիսիան, գյուղ - 511
Սիրմիա, քաղաք – 105-107
Սղնախ, ամրություն - 508
Սյունիք, Սյունյաց աշխարհ - 101, 401-403, 405, 409, 448, 464, 475, 479, 515-517, 519, 520, 523, 617
Սոգդ, երկիր - 434
Սոթից, գավառ - 436
Սոմխեթի - 356
Սբ. Սոփիա, եկեղեցի - 354
Սոֆենե - 98, 99, տե՛ս Ծոփք
Սպահան - 513
Սպեր - 517
Ստահր, քաղաք - 396
Ստրիմոն, գետ - 118
Ստուդիոն, մենաստան - 66
Սրմեն, բնակավայր - 344
Սուլակ, գետ - 427, 431
Սումիա, երկիր - 98
Սուրիո տերություն - 47
Սևանա բերդ - 461, 463, 464
Սևանա լիճ - 461, 521

Վաղդան, դաշտ - 432
Վաղարշապատ - 189, 190, 228, 303, 305, 400, 402-404, 423, 424, 426, 615
Վահրավարա, գյուղ - 509
Վայոց Ձոր - 466, 469, 496, 497
Վան - 561, 562
Վանա լիճ - 100, 317, 561, տե՛ս նաև Քզնունյաց ծով
Վանանդ, գավառ - 462, 464
Վանք, գյուղ - 506, 511
Վասպուրական (Ասպրակաց երկիր) - 199, 345, 403, 463, 613

Վատճյան դաշտ - 427, 432
Վարագավանք - 487
Վարաձոր, գավառ - 514
Վարաչան, քաղաք - 427, 429-432
Վարդանակերտ - 343, 418, 462, 464, 465
Վարդանյան դաշտ - 427
Վարդեզրվակ, լեռներ - 427, 430
Վեհ-Աճջատոզ, քաղաք - 373
Վեհ-Արդաշիր- 394, տե՛ս Սելևկիա
Վեհկավատ, գավառ - 389, 392
Վենետիկ - 134, 237, 360, 361, 369, 382, 456, 470, 487, 506, 545, 621
Վիեննա - 595
Վոլգա - 430, 433
Վրաստան (Վրաց աշխարհ, Վիրք) - 7, 356, 372, 374, 379, 399-402, 404, 408, 414, 415, 419-421, 440, 444, 478, 479, 513, 516, 520, 522, 523, 560, 561
Վրնզաձ, քաղաք - 431

Տաթև - 499, 505, 507, 508, 510, 521, 523, 524
Տաճկահայաստան - 530, 535, 536
Տայք - 131, 317, 401, 402, 460, 462
Տավրոսի լեռներ - 51, 448
Տարոն - 39, 46, 188, 192, 349, 350, 366, 396
Տարսոն, քաղաք - 126
Տիբեր - 277
Տիբերական ծոց - 412
Տիգրանակերտ - 617
Տիգրիս (Դկղատ), գետ - 98, 99, 101, 106, 124, 126, 129, 280, 333, 334, 389, 390, 392-394
Տիզրոն - 25, 32, 66, 114, 121, 129, 230, 389-394, 396, 404, 410
Տմորիք, երկրամաս - 350
Տրապիզոն - 362, 401, 402
Տրովա, քաղաք - 474, տե՛ս Իլիոն

Ուռհա - 241, 353, 354
Ուտի, գավառ - 371, 394, 419, 423
Ուրմիա, լիճ - 99

Փայտակարան - 418, 431, 521
Փասիս, գետ - 444
Փատգոս, աշխարհ - 478
Փարիզ (Պարիս, Պարիզ) - 156, 184, 186, 187, 202, 307, 308, 384, 456, 469, 538, 539, 547, 560, 568, 589, 592, 593, 595, 597, 598, 609, 616, 619, 620, 622
Փոքի, քաղաք - 422, 462, տե՛ս Փոյք
Փոյք - 462, 465, 468, տե՛ս Փոքի
Փեճիկ - 124, տե՛ս Թեզարդե, Չեզիբե-իբն-Օմար
Փոքր Ասիա - 48, 401, 473
Փոքր Հայք - 125, 362
Փոքր Սյունիք - 505
Փոյուգիա - 48

Քաղաքուղաշտի Սուրբ Գրիգոր (Զվարթնոց) - 460
Քաղկեդոն - 234, 236, 239, 241, 401, 441, 444, 450, 452, 454, 467
Քերաձ, դաշտ - 431
Քերսոն, Խերսոն – 232-235, 238, 381
Քուձք, գյուղ - 399, 403, 404, 406, 413
Քուստի Նեմռոջ, սպարապետություն - 396
Քուրդիս-խև, տեղավայր - 417

Օլիմպոս, լեռ - 543
Օխչի, գետ - 509, 511, 521
Օշական, բերդ - 303
Օշական, գյուղ - 75
Օրդուար (Օրդուբադ), շրջաձ - 509, 510, 517
Օփսիկյան թաձակաբեմ - 399

Ֆերգաձա, երկրամաս - 434

Ծրաճախ - 557, 559, 622

Alexandria - 14, 89
Albania - 432
Armenia, Arménie - 13, 14, 88, 114, 115, 119-121, 125-127, 482
Armenia Major – 28, 90, 91
Armenia Minor - 125
Azia - 432

Bačkovo - 455
Beclali - 393
Bibases - 124
Bouedeser, Bourdeser, Beh-Ardašir - 394, **տե՛ս Սելևկիա**
Boulkakia - 420
Boulgaria (Boulgarie) - 455

Callinicum - 90
Cappadocia - 125
Carrae - 90
Caucase – 483
Chamaetha - 396, 404
Charcha - 124
Chiliocomus - 129
Cilicia - 13, 29
Corduena - 129
Couedeser- 394, **տե՛ս Սելևկիա**

Dacia - 91
Dastagerd - 393

Etchmiadzin, Etschmiadzin - 612
Edessa - 22, 125
Ephesus - 29
Euphrates - 125

Géorgie - 379, 406, 414-416

Harren - 124
Hibernia - 126
Hileia (Eleia) - 108

Illyricum - 90

Iran - 258

Kadesiya - 391
Kidonia - 432
Krebatas - 432

Lacotena - 125

Macedonia (Macedonicae fines) - 119
Maiacarire - 124
Mazaka - 124
Media - 129
Melitina - 125
Mesopotamia - 89, 91, 105, 115, 119, 120, 121
Moesia - 90
Mokan - 432
Moxoena - 129

Nicomedia - 105
Nisibis (Nizibis) - 110

Osroena - 258

Persis (Perse) - 28, 417
Pétritzos - 255
Phoenica - 124

Samosata - 125
Sarvan - 432
Singara (Singarena) - 108, 116
Sirmium - 105
Syria - 29

Strymon - 119

Tepe-Hil - 110
Tzanaria - 432

Veh-az-Antoc - 373
Venice - 612
Vrezan - 432

Xursan - 432

Армения - 259, 295, 302, 323, 362, 446, 601, 606
Артаз - 302
Аруч - 409

Малая Азия - 601

Шаваршанская область - 302

Αγγηληνή - 98
Αρμενία - 8, 98, 281
Ἀρμενία Μεγάλη - 9, 280
Αρζανηνή - 98
Ασπράκων [χώρα] - 199
Ἀστισάτ - 199
Γαλατία - 111
Ζαβδικήνη - 98
Ζίνθα - 98
Ἰβηρία - 98
Καρδουηναί - 98
Μελιτηνή - 23
Μεσοποταμία - 106
Μηδικὴ χώρα - 98
Νικομήδεια - 105
Νίσιβις - 98, 106, 128
Παιονί 102
Περσίς - 8
Σίγγαραι - 107
Σοφήνη - 98
Σύμιον - 101
Συρία - 111
Τίγρις - 98, 280

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ (Գ. Հ. Հովհաննիսյան) 5

Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների 7

Հայ մշակույթի սկզբնավորությունը 35

Հայոցյաց Առաքելաշխույթ և անոր պատմական արժեքությունը 43

Կորյունի մասին 53

Դարձյալ Կորյունի չուրջը 71

Փավստոս Բուզանդը որպես պատմիչ 87

Քննական ճշտաբերներ Եզնիկի մասին 131

Գրիգոր Պարթևի Հարցաբանը և Եզնիկ 169

Նշանագրեր հայոց թանգից Եզնկան երիցս 184

Հայր Ն. Ակինյանի պատասխանին պատասխան 202

Ամպելիոս՝ Քերսոնի եպիսկոպոս 232

«Հայոց նախնական պատմությունը» Սերեոսի երկում և
դրա աղերսները Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի
երկասիրությունների հետ 243

Գր. Խալաթյանց, Հայ Արշակունիները Մովսես Խորենացու
«Հայոց պատմության մեջ»: Մոսկվա, 1903 294

Մովսես Խորենացվո «Հայոց պատմության» թվականի մասին 313

Մովսես Խորենացու վերաբերմունքը արտաքին նորերի մասին 316

Խորենացիական հարցն ու հայր Վարդան Հացունի 319

Վկանք և խորենացի 323

Փորր Սոկրատի հեղինակը 352

Քննություն Մովսես Կաղանկատվացու 360

Փղոսկրյա Ավետարանի արվեստը 484

Մշոկի Ավետարանի գրության տարին 487

Շահնամեի բառարանական ակունքը 490

Քննական տեղեկագիր պրոֆ. Ն. Ադոնցի 495
«Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմը
և գաղափարախոսական ոգեշնչը 504
Խաչատուր Աբովյանի վախճանը 530
Պեշիկթաշլյան և կցորդ խնդիրներ 538
Խոսք Ավետիս Ահարոնյանի մասին 563
Գրական նշմարներ. դեկադանս և սիմբոլիզմ 567
ՏԱՆՕԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 589
ՑԱՆԿԵՐ 625

ՆԽՀՊՎԱԾՈՍ ԱՂՈՆՑ

Ե Ր Կ Ե Ր

Հատոր Բ

Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ

Կազմի ճևավորումը՝ Գ. Վ. Մարիկյան
Տեխնիկական խմբագիր՝ Վ. Ձ. Թոդյան
Սրբագրիչ Վ. Վ. Դեբճյան
Համակարգչային
շարվածքը և ճևավորումը՝ Մ. Ա. Գասպարյանի

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Հրատ. 36.5 մամուլ, տպագր. 42.5 մամուլի +1 ներդիր = 39.53 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 15:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արովյան 52

Գավառամշակութային հիմնարկությանն հովանավորությամբ
Երևանի համալսարանի հրատարակչությունը
լույս է ընծայել հետևյալ գրքերը

1. **Ե. Հակոբյան, Սա. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, 1998:
2. **Ե. Հակոբյան, Սա. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, 1998:
3. **Ե. Հակոբյան, Սա. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, 2001: (Բառարանը 2002 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մատենագիտական գործունեության համար»):
4. **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.:
5. **Հրաչյա Աճառյան** - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.:
6. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայերենի հոլովները, 2000 թ.:
7. Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Հրաչեա Թամրազյանի, եր., 2001 թ.:
8. Շարական (ժողովածու) - Աշխարհաբարի վերածեցին **Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը**, 2001 թ.:
9. **Հրաչյա Միրզոյան** - Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, 2001 թ.:
10. **Ռուբեն Ղազարյան** - Միջին գրական հայերենի բառապաշարը, 2001 թ.:
11. **Բաբկեն Հարությունյան** - Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», 2001 թ.:
12. **Վարդան Արևելցի** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.:
13. **Գևորգ Մադոյան** - Գրիգոր Աճեմյանցին շարականագիր, 2001 թ.:
14. **Գևորգ Արզումյան** - Հայ տպագրության նախապատմություն, 2001 թ.:
15. **Փայլակ Աբրահամյան** - Հովհաննես սարկավագ Իմաստասեր, 2001 թ.:
16. **Յոզեֆ Կարստ** - Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.:
17. **Ռաֆայել Մաքսոյան** - Կուբան ապագայի որոնումներում. իրադարձություններ և դեմքեր, 2001 թ.:
18. **Խաչիկ Բադիկյան** - Ռուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.:
19. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.:
20. **Էդուարդ Աղայան** - Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.:

21. **Արտակ Մովսիսյան** - Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, 2003 թ.:
22. **Հրաչյա Աճառյան** - Քննություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.:
23. **Պիոն Հակոբյան** - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.:
24. **Աշոտ Սուքիասյան** - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ծեռք բերված նվաճումների համար»), 2003 թ.:
25. **Երջանիկ Գևորգյան** - Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան (Շարժութարան), 2003 թ.:
26. **Հայնրիխ Հյուբշման** - Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն, 2003 թ.:
27. **Հայնրիխ Հյուբշման** - Հայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.:
28. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայոց լեզվի քերականություն (Շևաբանություն) 2004 թ.:
29. **Ռամազ Գորգաձե** - Հայերեն-վրացերեն զրուցարան, 2004 թ.:
30. «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն, 2004 թ. (ռուսերեն):
31. **Հրաչյա Աճառյան** Հայոց պատմություն, հյուսված ընդհանուր պատմության հետ, 2004 թ.:
32. **Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէր** - Լուծմունք «Սահմանաց գրոց», 2004 թ.:
33. **Սանդրո Սարդարյան** - Հայաստանը քաղաքակրթության օրրան, 2004 թ.:
34. **Կարէն Իւզբաշեան** Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, 2005 թ.:
35. **Հարություն Դելլալյան** - Ժողովածու, 2005 թ.:
36. **Բախտիար Հովակիմյան** - Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.:
37. **Գառնիկ Անանյան** Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, 2005 թ.:
38. **Վահան Տեր–Ղևոնդյան** – Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145-1226 թթ.), 2005 թ. (ֆրանսերեն):
39. **Գառնիկ Ստեփանյան** – Երզնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը), 2005 թ.:
40. **Հրաչյա Աճառյան** - Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների. Իմաստաբանություն, Բառաքննություն, Շարահյուսություն, 2005 թ.:
41. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 16-րդ հատոր: Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից թարգմանությունները **Արամ Տեր-Ղևոնդյանի**, 2005 թ.:
42. **Սահակ Բազյան** - Խաչատուր Աբովյանը առակախոս-բանաստեղծ և դրամատուրգ, 2005 թ.:

43. **Ռամազ Գորգածե** - Վրացերեն-հայերեն բառարան, 2005 թ.:
44. **Պավել Շարաբխանյան** - Հանգաբանություն, 2005 թ.:
45. **Ռուբէն Ղազարեան** - Գրաբարի հոմանիշների բառարան, 2006 թ.:
46. Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում: Աշխատասիրութեամբ **Ալբերտ Շարուրեանի**, 2006 թ.:
47. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, 2006 թ:
48. **Հ. Պօղոս Գոճանեան** - Ուղեցոյց դասական ուղղագրութեան, 2006 թ.:
49. **Հայկազ Ժամկոչյան** - Հայ ժողովրդի պատմություն, 2006 թ.:
50. Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ: Աշխատությամբ **Ս. Հարությունյանի,** 2006 թ.:
51. **Սաթենիկ Գեջյան -** Անի: Մատենագիտություն, 2006 թ.:
52. **Հարություն Մ. Վենետիկյան, Ջերալդ Ա. Ուորֆիլդ** Համաշխարհային առևտրի ֆինանսավորում, 2006 թ.:
53. **Շահէ Արքեպիսկոպոս Մճէմեան,** Հայերէն Աստուածաշունչը, 2006 թ.:
54. LA MINIATURE ARMENIENNE Collection du Matenadaran, 2006 թ., «Նաիրի» հրատարակչության հետ համատեղ
54. Արևելագիտության հարցեր (Հոդվածների ժողովածու, հատոր VI), 2006 թ.:
55. **Հակոբ Սիմոնյան** Վերին նավեր, գիրք Ա, (1976-1990 թթ. պեղումների արդյունքները), 2006 թ.:
56. **Նիկողայոս Ադոնց** - Երկեր, հինգ հատորով, հատոր Բ, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, 2006 թ: